alb- 10-59 p.

529

Գրախտարանի բոլոր իրավունքներ, միացյալ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՍՈՒՐԽԱԹԵԱՆ

ԳՐԱԿԱՆ ԳՈՏԱՐԵԼԵՐ

ԷՊՈՍ ԲՆԱՐԵՐԳՈՒԹԻՒՆ ԴՐԱՄԱ

ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹԻՒՆ—№ 15.

ԵՐԵՎԱՆ
4-ի Տպարան փող. Տնտես. Խորհրդի, Պուշկ. փ. № 3.
1922

15 ռ.

ԹԻՖԼԻՍ
Տպարան Ժող. Տնտես. Խորհրդի, Պուշկ. փ. № 3,
1922

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Ներկայ հատորը կազմելիս առաջնորդուել եմ հետևեալ սկզբունքով. նախ նկատի ունենալով բովանդակութեամբ հարուստ քրեսթոմաթիի կամ բանաստեղծութիւնների մի ամփոփ ժողովածուի անհրաժեշտութիւնը, մի հատորի մէջ եմ զետեղել գրական-գեղարուեստական խոշոր նիւթ առանձին ընտրութեամբ։ Ապա նիւթը դասաւորել-եմ ըստ գրական տեսակների կամ ձևերի, որ գրական տեսութիւն անցնելիս՝ կարելի լինի օգտագործել այն իբրև օժանդակ ձեռնարկ։

Տեղ չեմ տուել ոչ-գեղարուեստական արձակին և ժամանակակից բոմանին, որովհետև դա մեծ տեղ կը բռնէր, մանաւանդ գրական բոլոր ուղղութիւնների բացատրութիւններով։ Դա առանձին հատորի նիւթ է։

Նիւթերի ընտրութիւնն անելիս նկատի եմ ունեցել նրանց գեղարուեստական, ուրեմն և սոցիալական արժէքը։ Շովինիզմի կամ որևէ տենդենցիայի տարրեր պարունակող նիւթերը տեղ չունեն գրքում։

Ներկայ մեծ յեղափոխութեան իդէալներով տոգորուած դասատուն կամ ընթերցողը բազմաթիւ էջեր կը գտնեն սոյն հատորի մէջ, ուր պայծառ անդրադարձումն են գտել տարբեր դասակարգերի հոգեկան աշխարհը, պայքար, ըմբոստութիւն, նոր աշխարհի կարօտ, համամարդկային տենչեր ու յոյզեր, հին աշխարհի սոցիալական հակասութիւնների խտացած պատկերներ, աշխատանքի մոտիւներ, յեղափոխական պոէզիայի թռիչք և այլն։

Հայ բանաստեղծութեան նմուշներ վերցուած են հնագոյն ժամանակների ստեղծագործութիւններից մինչև մեր օրերինը, օրինակ՝ հեթանոսական, միջնադարեան, նորագոյն, հարկաւ միմիայն աշխարհիկ։ Կարելի է ասել, որ գրեթէ ամբողջ հայ բանաստեղծութիւնն ամփոփուած է այստեղ իր լաւագոյն նմուշներով։

Գրական ուղղութիւններից գլխաւորները՝ դասական, կեղծդասական, բոմանտիկ, ռէալիստական և սիմվոլական տեղ ունեն գրքում՝ լաւագոյն հատուածների մէջ, ինչպէս օրինակ՝ Անուխպոնէ, Հայկ Դիւցազն, Էնէական, Դև, Հարճը, Աբու Լալա Մահարի, Համլէտ, Պէպո, Անուշ, Խորասուզած Զանգ և ուրիշ գրուածքներում։

Գրքի վերջին բաժնում զետեղված են արուեստին վերաբերող յօդուածներ և հատուածներ, նաև ցուցմունքներ ոճաբանութեան և տաղաչափութեան գանազան բաժիններից՝ ընդհանուր ծանօթութեան համար։

Գիրքը կարող է պիտանի լինել նաև լայն ժողովրդական ընթերցանութեան համար։

ՍՈՒՐԽԱԹԵԱՆ

6 ապրիլի 1922 թ
Թիֆլիս

ԱՌԱՋԻՆ ԲԱԺԻՆ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՀԻՍՈՒԹԻՆ

ԴԻՑԱԲԱՆԱԿԱՆ ԵՐԳ

ՎԱՀԱԳՆԻ ԾՆՈՒՆԴԸ

Երկնէր երկին, երկնէր երկիր,
Երկնէր և ծովն ծիրանի.
Երկն ի ծովուն ունէր
Եւ զկարմրիկն եղեգնիկ.
Ընդ եղեգան փող ծուխ ելանէր,
Ընդ եղեգան փող բոց ելանէր.
Եւ ի բոցոյն վազէր խարտեաշ պատանեկիկ.
Նա հուր հեր ունէր,
Ապա թէ բոց ունէր մօրուս,
Եւ աչկունքն էին արեգակունք։

Աշխարհաբար

Երկնում էր երկինքը, երկնում էր երկիրը,
Երկնում էր և ծովը ծիրանի.
Երկունքը ծովում բռնել էր
Եւ կարմրիկ եղեգնիկին.
Ծուխ էր դուրս գալիս եղեգնի փողից,
Բոց էր դուրս գալիս եղեգնի փողից.
Բոցի մէջ վազում էր խարտեաշ պատանին.
Կրակէ մազեր ունէր պատանին,
Ապա թէ ունէր բոցավառ մօրուք,
Եւ աչքերն էին զոյգ արեգակունք։

ՎԱՀԱԳՆԻ ԾՆՈՒՆԴԸ

Բալլադ

Երկնեց երկին և երկիր,
Երկնեց և ծով ծիրանի,
Եւ եղեգնիկը կարմիր
Երկնեց ծովում ծիրանի։
Ծուխ է դուրս գալիս եղեգան փողից,
Բոց է դուրս գալիս եղեգան փողից.
Բոց է պատել կարմիր եղեգնիկ,
Բոց է դարձել և ծով ծիրանի.
Կարմիր բոցիցն ահա մի մանկիկ,
Վահագն ահա՝ մանուկ գեղանի։
Բոց մօրուքով,
Հուր շրթունքով.
Հուր հեր գլխին՝ հրեղէն պսակ
Եւ աչերն են զոյգ արեգակ։
Ալեծուփ ծովի ծիրանի ալիք
Գնում են գալիս, ծեծում են ափունք.
Անեղամոռնչ գոռում է մանկիկ,
Սարսում են ալեացն հրավառ շրթունք։
Վահագն ծնաւ, լռեցէք, ալիք.
Դու ծովահալած գաղար առ, մրրիկ.
Թևերն ոսկեհուռ, հրահեր բաշով
Նժոյգը տակին՝ սլացաւ վերև.
Երեսդ ծածկիր համեստ շղարշով,
Տես, ով է գալիս, և դու, հուր-արև։
Գլուխդ ալևոր, քաջածին Մասիս,
Դու էլ խոնարհիր, Վահագն է գալիս։
Երկինք ու երկիր և ծիրանի ծով
Աւետում են քեզ, ցաւերի դու ծով.
Ցնծա, բիւրվիշապ Հայաստան աշխարհ,
Փրկութեան արև Վահագնիդ տեսար։

Ցով. Ցովհաննիսեան

ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑԻ

Հայոց կլասիկ գրականութեան մէջ մեծ հռչակ է վայելում պատմագիր Մովսէս Խորենացին։ Հինգերորդ դարի այդ նշանաւոր հայ հեղինակը իր բարձրագոյն կրթութիւնն ստացել է ժամանակի կուլտուրական երկու կենտրոններում՝ Աղէքսանդրիայում և Աթէնքում։

Ինչպէս իր ժամանակակից գրեթէ բոլոր օտար և հայ հեղինակները՝ Մովսէս Խորենացին եղել է հեղինակ պալատական մինչավայրի և հոգևոր նուիրապետութեան։ Ապրել է Բագրատունեաց տոհմի շառաւիղ Սահակ Բագրատունու հովանաւորութեան տակ, գրել նրա առաջարկութեամբ, հռչակ ու փայլ հաղորդելով իշխանին ու տոհմին։

Իր հոգեբանութեամբ ու աշխարհայեացքով կողմնակից տիրող բացարձակ միապետութեան՝ իրեն յատուկ տաղանդով, պատկերաւոր զօրեղ ոճով Մովսէս Խորենացին նկարագրել է իշխողների ոյժն ու փառքը, անցեալ մեծագործութիւնը և դառնօրէն ողբացել նրանց տիրապետութեան թուլացումը։ Նոյն դառնութեամբ ու ցաւումով ողբացել է աշխարհիկ տէրերի հոգևոր նեցուկ՝ նուիրապետութեան քայքայումն ու անկումը։

Հայոց հին մատենագրութեան և գեղարուեստական գրականութեան պատմութեան համար Մովսէս Խորենացին մատուցել է անգուգական ծառայութիւն։ Գաստիարակուած մեծ մասամբ յունական կլասիկ հեղինակների գեղարուեստական ստեղծագործութիւններով՝ նա կարևոր է համարել իր Հայոց պատմութեան մէջ գետեղելու հայկական առասպելներ, զրոյցներ, գուսանական երգեր, թէև սակաւաթիւ։ Խորենացու շնորհիւ է, որ մենք ի վիճակի ենք որոշ գաղափար կազմելու մեր հնագոյն ժամանակների բանաւոր ստեղծագործութեան մասին, որի մի քանի նմուշները դնում ենք թարգմանաբար։

Սուրխաթեան

ԱՌԱՍՊԵԼ

Նախնական մարդու այն զրոյցները, որոնց մէջ բնութեան երևոյթներն ու ոյժերը պատկերացւում են իբրև աստուածային կենդանի էակներ, կոչւում են առասպել։ Առասպել են նաև այն զրոյցները, որոնց մէջ նախնական մարդը իր նախնիքներին պատկերացնում էր իբրև հզօր տիտաններ կամ աստուածային ծագում ունեցող էակներ, որոնք իրենց գերմարդկային ոյժերով ընդունակ էին համարւում կռիւ մղելու ճնշող, սարկացնող կամ խանգարող նոյնքան հսկայ օտար ոյժերի դէմ (օր. Հայկ և Բէլ)։ Առասպելների մէջ աստուածներն ու տիտանները հեռաւոր անցեալի նշանաւոր ցեղապետների և թագաւորների ֆանտաստիկ պատկերացումն են հանդիսանում։

ՀԱՅԿ ԵՒ ԲԷԼ

Զարհուրելի ու երևելի էին առաջին աստուածները, աշխարհի մեծամեծ բարիքների պատճառը, աշխարհի և բազմամարդութեան սկիզբը։ Ահա սրանցից սկսւեց այլանդակ, հաստամարմին և վիթխարի հսկաների ցեղը. հսկաներ, որոնք ամբարտաւանութեամբ յղացած՝ ծնեցին աշտարակաշինութեան ամբարիշտ խորհուրդը և ձեռնարկեցին կանգնելու այն։ Փչեց աստուածների բարկութեան սաստկագոյն հողմը և ցրեց աշտարակը։ Եւ աստուածները մեծ շփոթ ձգեցին նրանց մէջ, բաշխելով իւրաքանչիւրին մինչև այդ չը լսուած լեզուներ։ Սրանցից մէկն էր և Յապետոսթեան Հայկը՝ անւանի ու քաջ նահապետը, որ քաջ նետաձիգ էր և հաստ աղեղ կրող։

Գեղեցիկ, վայելչակազմ և հաստաբազուկ էր այս Հայկը՝ գանգրահեր և զւարթ աչքերով։ Սա հսկաների մէջ լինելով քաջ ու երևելի, ընդդիմանում էր այն ամենքին, որոնք ձեռք էին բարձրացնում հսկաների ու դիւցազների վրայ՝ նրանց տիրապետելու համար։ Սա խրոխտալով ձեռք բարձրացրեց Տիտանեան Բէլի բռնակալութեան դէմ։

Որովհետև այս ժամանակ իւրաքանչիւր մարդ կատաղած՝ սուրը կոխում էր իր ընկերոջ գոտը, աշխատելով մէկը միւսին տիրել, այստեղ բախտը յաջողում է Բէլին երկիրներ նուաճելու և տիրելու։ Հայկը չը կամենալով հնազանդուել նրան, իր Արմենակ որդուն Բաբելոնում ծնելուց յետոյ, եկաւ գնաց դէպի Արարատեան երկիրը, որ գտնւում է հիւսիսային կողմը, իր բոլոր որդիներով, դուստրներով և որդոց որդիներով, որոնք

գօրեղ մարդիկ էին՝ մօտ երեք հարիւր հոգի, իր սպասաւորներով և ուրիշ զանազան մարդկանցով, որոնք միացել էին նրան իրենց բոլոր տուն ու տեղով։

Նա գալիս բնակւում է մի սարի ստորոտի մօտ՝ դաշտավայրում, որտեղ արդէն աւելի առաջ ցրւածներից բնակւում էին սակաւաթիւ մարդիկ։ Սրանց հնազանդեցնելով իրեն, Հայկն այնտեղ շինում է բնակութեան տներ և տալիս է ժառանգութիւն Կադմոսին՝ Արմենակի որդուն։

Իսկ ինքը մնացած մարդկանց հետ գնում է դէպի հիւսիս-արևմուտք և բնակութիւն հաստատում մի լեռնադաշտի մէջ, որի անունը դնում է Հարք, այսինքն այստեղ բնակւողները Թորգոմեան տան ազգի-նախահայրերն են։ Հարքում նա շինում է մի գիւղ, որ իր անունով կոչում է Հայկաշէն։ Այս դաշտի հարաւային կողմում, մի երկայնանիստ սարի մօտ, աւելի առաջ բնակութիւն հաստատած սակաւաթիւ մարդիկ ինքնակամ հնազանդութիւն են յայտնում դիւցազնին։

Տիտանեան Բէլը, իր տիրապետութիւնն ամենքի վրայ տարածելուց յետոյ, իր որդիներից մէկին հաւատարիմ մարդկանց հետ ուղարկում է հիւսիսային կողմը՝ Հայկի մօտ, որ նա հնազանդէ իրեն և ապրէ խաղաղութեամբ։ «Գու բնակեցար,— ասում է նա,—սառնամանիքի ցրտերում, բայց տաքացրու և մեղմացրու քո սառած հպարտ բարքի ցրտութիւնը և, հնազանդելով ինձ, ապրիր ու բնակիր հնազանդութեամբ, որտեղ հաճելի կը լինի քեզ իմ երկրում»։

Բայց Հայկը խստութեամբ պատասխանելով՝ յետ է դարձնում Բէլի պատգամաւորներին։

Այն ժամանակ Տիտանեան Բէլը ժողովում է մի զօրագունդ Հայկի դէմ, գալիս հասնում է հիւսիս, մինչև Արարատեան երկիրը՝ Կադմոսի կալւածքի մօտ։

Կադմոսը փախչում է Հայկի մօտ, բայց իրենից առաջ ուղարկում է սուրհանդակ, յայտնելով. «Իմացիր,—ասում է,—ով մեծդ դիւցազներից, որ Բէլը գալիս է քեզ վրայ իր անհամար քաջերով ու բարձրահասակ հսկաներով։ Եւ ես իմանալով նրա իմ երկրին մօտ լինելը, փախայ և անա գալիս եմ շտապով։ Ուրեմն շտապիր և գու, ինչ անելու ես՝ արա»։

Իսկ Բէլը իր յանդուգն և անձնուէր զօրքով, գաւիթայլ վազող ջրի նման՝ շտապում է հասնել Հայկի բնակութեան սահմանները, իր ամբողջ յոյսը դնելով հզօր մարդկանց արտի ու մարմնի վրայ։ Այստեղ ուշիմ և խոհեմ հսկան, գանգրահեր, գարշ աչքերով, արագութեամբ հաւաքում է իր որդիներին և թոռներին, քաջ և ազնիւ մարդկանց, որ շատ փառք էին թողել, և իր ձեռքի տակ եղած ուրիշներին էլ, և հասնում մի ծովակի ափը, որի ջուրն ապի է և ունի մանր ձկներ։ Ապա կանչում է իր զօրքերին ու ասում. «Երբ մենք գուրս կը գանք Բէլի զօր-

քի դէմ, աշխատենք հասնել այն տեղին, ուր կանգնած է Բէլը քաջերի բազմութեան մէջ, որ կամ մեռնենք, և մեր բոլոր գերդաստանը Բէլին ծառայ դառնայ, կամ ցոյց տալով մեր մատների աջողութիւնը նրա վրայ, ցրենք նրա ամբոխը և յաղթութիւն տանենք»։ Եւ բաւական ապարէպ առաջ գնալով, հասնում են մի դաշտաձև տեղ՝ բարձր սարերի մէջ, ուր ջրերի աջ կողմը, մի բարձրադիր տեղ, գնում են իրենց բանակը։ Երբ նրանք իրենց գլուխը բարձրացրին, տեսան Բէլի զօրքի անկարգ բազմութիւնը, որ յանդգնաբար ցիր ու ցան շարժւում էր երկրի երեսին. իսկ ինքը Բէլը՝ անխռով ու հանգիստ՝ կանգնած էր ջրերի ձախ կողմը մեծ գնդով և դիտում մի փոքրիկ բլրի վրայից, իբրև դիտանոցից։ Հայկը ճանաչեց սպառազինուած գունդը, որի հետ շարժւեց Բէլը իր ամբոխի առաջ՝ մի քանի ընտիր մարդկանցով. նրա և բլրի վրայ մնացած ամբոխի միջև երկար տարածութիւն կար։ Նա գլխին դրած ունէր երկաթեայ գլխանոց՝ նշաններ կրող ծայրերով, թիկունքին և լանջին ունէր պղնձեայ տախտակներ, բարձերի և բազուկների վրայ՝ պահպանակներ, մէջքին՝ գօտի. ձախ կողքին կապած ունէր երկայրի սուր, աջ ձեռքին՝ կուռ նիզակ, ձախ ձեռքին վահան, ինքը շրջապատուած ընտիր քաջերով։ Հայկը տեսնելով Տիտանեանին զինուած ու շրջապատուած ընտիր քաջերով, աջ կողմը կանգնեցնում է Արմենակին՝ երկու եղբայրներով և ձախ կողմը՝ Կադմոսին ու իր որդիներից երկուսին, որովհետև սրանք աղեղ և սուսեր գործածելու մէջ փորձառու էին։ Ինքը կանգնում է առաջ և մնացած զօրքը դասաւորում իր յետև եռանկիւնի ձևով և այնպէս հանդարտ շարժւում է առաջ։

Երբ հակառները երկու կողմից հասան միմեանց մօտ, ահռելի դղրդիւն բարձրացրին երկրի վրայ ու սարսափելի ահ ձգեցին միմեանց մէջ իրենց յարձակումով։ Քիչ չը կործանուեցան այստեղ զօրաւոր հակառներ երկու կողմից՝ հանդիպելով սրի բերանին, սակայն պատերազմը վճռական չեղաւ և ոչ մի կողմի համար։ Տեսնելով այսպիսի անակնկալելի վիճակ, Տիտանեան թագաւորը զարհուրեցաւ տարակուսանքի մէջ, յետ քաշւելով՝ սկսեց վերադառնալ նոյն բլուրը, որտեղից վայր էր իջել, որովհետև մտածում էր ամրանալ իր ամբոխի մէջ, մինչև կը հասնէր բոլոր զօրքը, որ նորից սկսէր կռիւը։

Աղեղնաւոր Հայկն, իմանալով այս, առաջ է ձգում իրեն, մօտենում թագաւորին և պինդ քարշելով իր լայն աղեղը, զարնում Բէլի կրծքի տախտակին՝ իր երեքթևեանն նետը, որ թափանցելով անցնում է նրա թիկունքի միջով և խրւում գետին։

Այսպէս կործանուում է հպարտ Տիտանեան Բէլը և վայր ընկնելով՝ փչում հոգին։ Իսկ նրա գունդն ու ամբոխը, տեսնելով քաջութեան այսպիսի զարհուրելի գործ, սարսափով բռնուած փախչում են աջ ու ձախ։

Իսկ Հայկը պատերազմի տեղում շինութիւններ է կանգնում և անունը դնում Հայք՝ ի նշան յաղթութեան։ Այս պատճառով այժմ այն դաւառը Հայոց-ձոր է կոչւում։ Իսկ այն բլուրը, որտեղ ընկաւ Բէլը իր քաջ զինուորներով, Հայկն անուանեց «Գերեզմանք», որ մինչև օրս էլ կոչւում է այդպէս։ Բէլի դիակը գտնելով, Հայկը հրաժայում է տանել Հարք և թաղել մի բարձր տեղ, որ տեսնեն նրա կանայքն ու որդիները։ Իսկ մեր աշխարհը մեր նախահայր Հայկի անունով կոչւում է Հայք։

ՏՈՐՔ ԱՆԳԵՂ *)

Հայկակի Պասքամ Թոռան որդին էր Տորքը։

Խոժոռ դէմքով, բարձրահասակ, կոպիտ, տափակաքիթ, խոր աչքերով, դժնեայ հայեացքով մարդ էր Տորքը, որին խիստ տգեղութեան համար Անգեղեայ էին ասում։ Հասակով և ուժով վիթխարի այդ մարդուն Վաղարշակը հաստատում է արևմուտքի կուսակալ։ Դէմքի անպիտանութեան պատճառով նրա ազգի անունն անգամ Անգեղեայ տուն է կոչւում։ Շատ անհաւատալի բաներ էին երգում վիպասանները նրա քաջութեան մասին։ Այդ զրոյցները ոչ Սամսոնին, ոչ Հերակլեսին և ոչ էլ Սոդճկին են յարմարում։ Երգում էին նրա մասին, իբր թէ նա ձեռներով բռնում էր կարծր պինդ քարեր, որոնց վրայ ոչ մի պատուածք չը կար, ճեղքում էր ուղածին պէս՝ մեծ ու փոքր, քերում եղունգներով, յղկում տախտակի նման և նոյնպէս եղունգներով փորագրում՝ արծիւներ ու նման այլ բաներ։ Պոնտոս ծովի ափին հանդիպել է թշնամիների նաւերին, յարձակուել նրանց վրայ, և երբ նաւերն ութ ասպարէզ ծովի ներսն են գնացել, և Տորքը չի հասել նրանց, պոկել է բլրաձև ժայռեր ու ձգել նրանց յետևից։ Զրերի պատառումից սակաւ նաւեր չեն ընկղմուել, իսկ բարձրացած ալիքները մնացած նաւերին քշել են շատ մղոններ։

ԶՐՈՅՑ

ԱՐԱ ԳԵՂԵՑԻԿ ԵՒ ՇԱՄԻՐԱՄ

Նինոսի վախճանուելուց մի քանի տարի առաջ Արան սկսեց իր հայրենիքի վրայ իշխել, արժանանալով Նինոսից նոյն շնորհին, ինչպէս և նրա հայրն Արամը։

Բայց այն վաւաշոտ ու տուփոտ Շամիրամը, շատ տարիներ լսած լինելով նրա գեղեցկութիւնը, ցանկանում էր տեսնել նրան, սակայն յայտնապէս ոչինչ չէր համարձակւում անել։

---

*) Դժբախտաբար Մովսէս Խորենացին տալիս է միայն համառօտութիւնը առասպելի, որ յիշեցնում է յունական Պոլիֆէմ կիկլոպի առասպելը։

Իսկ Նինոսի մահից յետոյ Շամիրամը, հատարձակ պաշտելով իր կիրքը, պատգամաւորներ է ուղարկում Արա Գեղեցկի մօտ ընծաներով, շատ մեծ աղաչանքով և զանազան պարգևների խոստմամբ, որ գայ իր մօտ Նինուէ կամ ամուսնանայ ու թագաւորէ ամեն տեղերի վրայ, որոնց տիրում էր Նինոսը, կամ կատարէ նրա տենչանքը և դառնայ իր տեղը մեծ խաղաղութեամբ ու մեծ պարգևներով։ Պատգամաւորների բազմիցս ապարդիւն երթևեկութիւնից յետոյ, Շամիրամը սաստիկ զայրացած՝ վերցնում է զօրքերի մի մեծ բազմութիւն և շտապով գնում Հայոց երկիրը Արայի վրայ։

Բայց ըստ երևոյթին նա շտապում էր ոչ այնքան Արային սպանելու կամ հալածելու, որքան նուաճելու, ձեռք ձգելու նրան, որ կատարէ իր տենչանքը, որովհետև սիրային մոլեգնութեան մէջ՝ Արայի մասին խօսք եղած միջոցին՝ նա վառւում էր մոլի ցանկութեամբ, կարծես իր առջև տեսնում էր նրան։ Շամիրամն շտապով գալիս հասնում է Արայի դաշտը, որ նրա անունով Այրարատ էր կոչւում։ Ճակատամարտի մէջ Շամիրամը հրամայում է զօրապետներին կենդանի բռնել Արային։ Բայց կռուի մէջ ջարդւում է Արայի զօրքը, և պատերազմի մէջ Արան մեռնում է Շամիրամի զինւորներից։ Յաղթութիւնից յետոյ տիկինը դիակապուտներ է ուղարկում ճակատամարտի վայրը, որ ընկած դիակների մէջ գտնեն իր փափագած տարփածուին։ Արային գտնում են քաջ զինւորների շարքում մեռած։ Շամիրամը հրամայում է դնել նրան իր ապարանքի վերնատանը։

Բայց երբ միւս անգամ հայերի զօրքերը պատերազմի դրգռեցան Շամիրամի դէմ՝ Արայի մահուան համար վրէժխնդիր լինելու, Շամիրամն ասում է նրանց. «Իմ աստուածներին հրամայեցի, որ լիզեն նրա վէրքերը, և նա կը կենդանանայ»։

Ցնորուած իր տուփական ցանկութիւնից, նա մեծ յոյս ունէր Արային կենդանացնելու իր կախարդութեամբ։ Բայց երբ դիակը հոտեց, նա հրամայեց ձգել նրան մեծ փոսի մէջ ու ծածկել, և իր սիրեկաններից մէկին ծածուկ զարդարելով, այսպիսի համբաւ հանեց նրա մասին. «Աստուածները լիզելով Արային և կենդանացնելով նրան, կատարեցին մեր փափագն ու ցանկութիւնը։ Դրա համար էլ այսուհետև նրանք առաւել պաշտելի ու փառաբանելի են մեզնից, որպէս մեզ զարճացնողներ և մեր կամքը կատարողներ»։ Նա դևերի անունով շինում է մի նոր կուռք և պատւում նրան մեծամեծ զոհերով՝ ցոյց տալու համար ամենքին, թէ աստուածների զօրութիւնը կենդանացրեց Արային։

Այսպիսի համբաւներ տարածելով հայոց երկրում, Շամիրամը դադարեցնում է պատերազմը։

ԳՈՒՍԱՆԱԿԱՆ ԶՐՈՅՑ ԵՐԳԱԽԱՌՆ

ԱՐՏԱՇԷՍ ԵՒ ԱՐՑԱՒԱԶԴ

Արտաշէսի գործերը պատմում ու երգում էին վիպասանները. քաղաքի շինութիւնը, Ալանների հետ խնամութիւնը, Սաթենիկի տուփական սէրը դէպի վիշապագունները՝ Աժդահակի սերունդները, Արտաշէսի որդիների նախանձը և այլն, և այլն։

Երբ Արտաշէսը հաստատել էր իր իշխանութիւնը, Ալանները միանալով բոլոր լեռնականների հետ և իրենց կողմը ձգելով վրաց աշխարհի կէսը, մեծ բազմութեամբ թափուեցին Հայոց աշխարհը։ Արտաշէսն ևս ժողովում է իր բազմաթիւ զօրքերը, և սկսւում է մեր երկրի մէջ երկու քաջ ու աղեղ բանեցնող ազգերի պատերազմը։ Ալանների ազգը յետ է քաշւում փոքր ինչ և գնում անցնում է Կուր մեծ գետը և բանակում գետի հիւսիսային ափը։ Արտաշէսն ևս հասնում բանակում է հարաւից, և գետը բաժանում է նրանց։

Բայց որովհետև հայկական զօրքերը Ալանների թագաւորի որդուն գերի բռնելով Արտաշէսի մօտ բերին, ուստի Ալանների թագաւորը խաղաղութիւն էր խնդրում, խոստանալով տալ Արտաշէսին ինչ որ նա խնդրէ, և մշտնջենաւոր երդմունք ու դաշն հաստատել, որ Ալան պատանիներն այլևս ասպատակելու չը գան հայկական աշխարհը։

Երբ Արտաշէս յանձն չառաւ պատանուն տալու, գալիս է պատանու քոյրը գետի ափը՝ մի մեծ բարձրադիր տեղ և թարգմանների միջոցով ձայն է տալիս դէպի Արտաշէսի բանակը.

«Թեզ ասեմ, այր քաջ Արտաշէս,
Որ յաղթեցեր բաջ ազգին Ալանաց.
Եկ հաւանեաց բանից աչագեղոյ դստերս Ալանաց՝
Տալ զպատանիդ.
Զի վասն միոյ քինու ոչ է օրէն դիւցազանց՝
Զայլոց դիւցազանց
Զարմից բառնալ զկենդանութիւն,
Կամ ծառայեցուցանելով ի ստրկաց կարդի պահել,
Եւ թշնամութիւն յաւիտենական
Ի մէջ երկոցունց ազգաց քաջաց հաստատել»։

Աշխարհաբար

«Թեզ եմ ասում, քաջ Արտաշէս, որ յաղթեցիր Ալանների քաջ ազգին. եկ համաձայնիր Ալանների գեղաչեայ դստերս խօսքերին, տուր այդ պատանուն, որովհետև օրէնք չէ դիւցազուններին մի վրէժի հայդ պատանուն, որովհետև

մաը ուրիշ ազգերի գիւշատունների կեանքը խլել, կամ ծառայեցնել նրանց և տարուէների կարգում պահել ու յաւիտենական թշնամութիւն հաստատել երկու քաջ ազգերի մէջ»։

Արտաշէսն այսպիսի իմաստուն խօսքեր լսելով, գնաց գեստրիը և, տեսնելով գեղեցիկ կոյսին ու լսելով նրանից իմաստուն խօսքեր, սիրեց կոյսին։ Եւ կանչելով իր դայեակ Սմբատին, յայտնում է նրան իր սրտի ցանկութիւնը՝ օրիորդին իրեն կին տանել, դաշն և ուխտ կապել քաջ ազգի հետ և պատանուն արձակել խաղաղութեամբ։ Սմբատն այս հաւանելով, Ալանների թագաւորին մարդ է ուղարկում, որ Ալանների օրիորդ Սաթենիկին կին տան Արտաշէսին։

Եւ Ալանների թագաւորն ասում է.

«Եւ ուստի տացէ քաջն Արտաշէս
Հազարս ի հազարաց և բիւրս ի բիւրուց
Ընդ քաջազգւոյ կոյս օրիորդիս Ալանաց»։

Աւիտահաւար

«Եւ որոնեցի զիրտ տայ քաջն Արտաշէս հազարներից հազարներ և բիւրներից բիւրեր Ալանների այս ազնուազարմ կոյս օրիորդի փոխարէն»։

Այն ժամանակ՝

«Հնձաւ արի արքայն Արտաշէս ի սեաւն գեղեցիկ,
Եւ հանեալ զոսկէօղ շիկափոկ պարանն,
Եւ անցեալ որպէս զարծիւ սրաթիւ ընդ դեան,
Եւ ձգեալ զոսկէօղ շիկափոկ պարանն՝
Ընկէց ի մէջ օրիորդին Ալանաց,
Եւ շատ ցաւեցոյց զմէջք փափուկ օրիորդին,
Արագ հաւաստանելով ի բանական խրատ»։

Աւիտահաւար

«Հնձաւ քաջ թագաւորն Արտաշէս իր գեղեցիկ սև ձին,
Եւ հանեց ոսկէօղ կարմիր կաշէ պարանը,
Եւ անցաւ գետի միջով սրաթիւ արծիւ նման,
Եւ հանեց ոսկէօղ կարմիր կաշէ պարանը,
Ձգեց Ալանների օրիորդի մէջքին,
Եւ շատ ցաւեցրեց փափուկ օրիորդի մէջքը,
Արագ հասցնելով նրան իր բանականը»։

Այնուհետև կատարւում է Արտաշէսի և Սաթենիկի հարսանիքը։

«Տեղ ոսկի տեղայը է փեսայութեանն Արտաշէսի.
Տեղայը մարգարիտ է հարսնութեան Սաթենիկանն»։

Աշխարհաբար

«Տեղով ոսկի էր տեղում Արտաշէսի փեսայութեան ժամանակ.
Մարգարիտ էր տեղում Սաթենիկի հարսնութեան ժամանակ»։

Եւ Սաթենիկը առաջինը լինելով Արտաշէսի կանանցից, ծնում է Արտաւազդին և շատ ուրիշ որդիներ։

Սիրելի էր Արտաշէսը ամենքի համար, և երբ մեռաւ Արտաշէսը, մեռան նաև շատ մարդիկ այդ ժամանակ՝ պիտակի կանայք, հարճեր ու մտերիմ ծառաներ։ Եւ թնչպիսի բազմաստեղ պատիւներ արին ի յարգանս նրա դիակի՝ քաղաքացիաբար կարգելով և ոչ բարբարոսների նման։ Դագաղը ոսկեղէն էր, գազն ու անկողինը՝ բեհեզից, գլխատը՝ ոսկեթել, գլխին կապած ոսնէլթապ, և ոսկեղէն թուրը առաջն էր դրուած, նրա գահի շուրջն էին իր որդիներն ու բազմաթիւ ազգականները, քաջի արանցից գինուորական պաշտօնեաներ, նամակակիրներ ու նախարարների գնդեր և միանգամայն գողգեղի խմբեր, բոլորը գինուած, կարծես թէ պատերազմի էին գնում։ Առջևից գնում էին պղնձէ փողեր, ետևից գնում էին լալիան կոչանքը՝ սև գրիչոտով, ոսկեայ կամոյք, իսկ դրանցից յետոյ՝ ոսկեղէն գաւազանները բազմութիւնը։ Եւ ոչխար տարան թաղելու։ Եւ նրա գերեզմանի շուրջը շատ կոստուր մանեք դրին։ Եւ նա ոչխարներ սիրելի դարձաւ։ Նոյնպէս ուշիարնին, թագաւորելով քառասուն և մէկ տարի։

Արտաշէսն ասորութեան մէջ մեռնելիս,— Պարսկաստանում շատերի ժամանակ,— յիշում է հոյակներին, հոյակների ձայնը, օջախը։

«Ո՞ տայր թեռ գնուր ձիւռեր*)
Եւ գաստատն նաստատրգի,
Զվարդին հպանց և զվարդին ձգիքուտց.
Մեր փոց հարուտ և թանգի հարգանէտ.
Որպէս արէն է թագաւորաց»։

Աշխարհաբար

«Ո՞վ թեռ հնար գտար ոսկեղէն հոյակներիս ձիւնագոյներիս ձայնը և նաստատրգի աստուած, ճգնիներիս թանգագանը և ճգնիներիս վարդը, երբ մենք փոց էինք փչում և թանգի գարնում, թնչպէս արէնը է թագաւորներին»։

*) Այս հատուածը գաստատան մի հին երգի մասունք է։ Ար չոգ է Գրիգոր Պարխարաց ասանմէնիարաց գարում։

Արտաշէսի մահը խոր վիշտ էր պատճառել շատերին, և այդ հանգամանքը խիստ վրդովել էր նրա որդուն՝ Արտաւազդին, որը նեղացած՝ կշտամբանքով դիմում է հօրը և ասում.

«Մինչ դու գնացեր, և զերկիրս ամենայն ընդ քեզ տարար,
Ես աւերակաց հրպէս թագաւորեմ»։

Ուխտահարար

«Դու գնացիր և ամբողջ երկիրը քեզ հետ տարար,
Ես աւերակների վրայ ինչպէս թագաւորեմ»։

Այդ առթիւ մեռած հայրն անիծելով նախանձոտ որդուն՝ Արտաւազդին, ասում է.

«Եթէ դու յորս հեծցիս
Յազատն ի վեր ի Մասիս,
Զքեզ կալցին քաջք, տարցին
Յազատն ի վեր ի Մասիս.
Անդ կայցես և զլոյս մի տեսցես»։

Ուխտահարար

«Եթէ դու որսի գնաս
Դէպի ազատ Մասիսն ի վեր,
Ոգիները թող քեզ բռնեն,
Տանեն ազատ Մասիսն ի վեր.
Այնտեղ մնաս և լոյս չը տեսնես»։

Եւ Արտաւազդը, հօր գահը ժառանգելուց յետոյ շատ չանցած, երբ Արտաշատ քաղաքի կամուրջով անցնում էր՝ կինճ և վայրի էշ որսալու, Գինի ակների մօտերքը խելագարութեան ցնորքներից շփոթելով՝ ձիու հետ վայր է գլորուում մի անդունդ և անհետանում։

Պառաւները նրա մասին պատմում են, թէ նա բանտարկուած է մի այրի մէջ՝ երկաթեայ շղթաներով կապուած, և թէ երկու շուն միշտ կրծում են նրա շղթաները, և նա աշխատում է դուրս գալ ու վերջ տալ աշխարհին, բայց դարբինների մուրճի հարուածների ձայնից զօրանում են նրա կապանքները։

ԱՐՏԱՒԱԶԴ

Բալլադ

Զարկեցէք, դարբիններ, կռանը սալին,
Զարկեցէք կռանը—շղթայքն ամրանան,
Անիծեալ արքայի կապանքն ամրանան։
Զարկեցէք, դարբիններ, կռանը սալին։
Ահարկու ամպերը եկան ժողեցան,
Ծեր մասեաց ճակատին սև բոլ փաթթեցին,
Գոռում է փոթորիկ գազանի նման,
Հառաչում, սուլում է կատաղած քամին։

Զարկեցէք կռանը. խորունկ քարայրից
Ահա չար հողմի հետ հասնում են ձայներ...
Ցոլացաւ փայլակ—արքայի աչքից
Դէպի վեր թռչում են բարկութեան կայծեր։
Կամի նա ելանել վրէժխնդիր հոգով՝
Իր անվերջ տանջանքի թոյնը մահաբեր
Աշխարհի չորս կողմը շաղ տալու մտքով,
Բայց ամուր են նրա ծանր շղթաներ։

Մտերիմ գամփռները կրծում են կապանք,
Կրծում են անդադար կապանքն արքայի...
Արտաւազդ, վերջ չունի հոգուդ տառապանք,
Եւ դեռ շատ հեռու է վախճանն աշխարհի։
Եւ անզօր չարութեան բո կուռ հարուածներ
Դեռ պիտի փշրին մեր մուրճի տակին.
Մենք սպասում ենք դեռ ևս գեղեցիկ օրեր,
Դեռ հաշտ է երկինքը մեղսոտ աշխարհին։

Բայց եթէ քարացած՝ մենք չենք լսելու
Նոր կեանքի կոչն հուժկու, և վերածնութեան
Արբաբաբ աւազան մեզ չէ փրկելու,—
Արտաւազդ, փշրի թող մեր կուռ կռան.
Մենք էլ չենք զարկելու երկաթի սալին,
Թող կրծեն գամփռներդ ոսքիդ շղթաներ,
Արձակին բազուկներդ, և դու աշխարհին
Դուրս արի բերելու կատարած, աւետ...

Բայց ոչ. հաւատում ենք դեռ մենք փրկութեան,
Մեզ մի նոր երկնքից նոր լոյս կը բացուի,
Եւ տեսնում ենք ահա արդէն ծիածան
Մենք ազնիւ, լուսաւոր մի նոր վիճակի...
Զարկեցէք, դարբիններ, կռանը սալին,
Զարկեցէք կռանը—շղթայքն ամրանան.
Անիծեալ արքայի կապանքն ամրանան.
Զարկեցէք, դարբիններ, կռանը սալին։

Գ. Բաֆֆաֆիխանեան

A III 6087

ՀԷՔԻԱԹ

Հէքիաթը մի պատմուածք է, որի էական յատկանիշներն են հրաշալին ու զարմանականը։

Հէքիաթի ծագումը նոյնքան հին է, որքան և հերոսական երգերինը, որոնց մէջ պատկերացուած են պատմական խոշոր անցքերի շուրջը հիւսուած աւանդութիւններ իդէալականացրած տիպերով ու հերոսներով։ Հէքիաթը սակայն աւելի է տարածուած և լայն ժողովրդականութիւն վայելում շնորհիւ իր մատչելի լինելուն։ Հերոսական երգերի համար պահանջւում են յատուկ երգիչներ, մինչդեռ հէքիաթը կարող է պատմել ամեն մէկը։

Հէքիաթի նիւթը կազմում է զանազան դասակարգերի ու ժողովուրդների կեանքը, որի հիւսուածքը շատ յաճախ արձագանք թափառիկ սիւժէների վերամշակումն է կազմում՝ տեղի և ժամանակի պայմանների համեմատ։ Հէքիաթները լինում են՝ առասպելական, ուր արտայայտուած է կռիւը բնութեան տարերային ոյժերի՝ ի դէմս ֆանտաստիկ հերոսների. կենցաղական, ուր հանդէս են բերում հասարակական կամ ընտանեկան կեանքի տարբեր կողմերը. երգիծաբանական, ուր ծաղրւում են սոցիալական կեանքի պակասաւոր երևոյթները։ Հէքիաթի նիւթը յաճախ վերցուած է լինում նաև կենդանական աշխարհից, որտեղ երևում է նախնական մարդու ունեցած միամիտ հայեացքը կենդանական աշխարհի վրայ։

Հէքիաթների հեղինակը ինքը ժողովուրդն է, թէև նորագոյն ազգականութեան մէջ կան այսպէս կոչուած արուեստական հէքիաթներ՝ մշակուած կամ գրուած առանձին հեղինակների ձեռքով։

Հէքիաթների մեծ մասը արձակ է լինում, իսկ չափականը սակաւաթիւ։

ՄԱՐԴ ԻՐԱ ԵՕՐՂԱՆՈՒ ԳԵՕՐԱ ՊՏԻ ՈՏԸ ՄԵԿՆԻ

Մի թագաւոր իրա երկրումը ինչքան դերձիկ կար՝ կանչել ա տալի, հրամայում որ իրա համար մի էն թաւուր եօրդան կարեն, որ բոյովը մին ընի՝ ոնչ երկէն, ոնչ կարճ։ Համա ոչ մի դերձիկ չի կարում նրա հրամանը կատարի՝ քամքի գլխներն էլ կտրել ա տալի։ Եդի վերջը մի դերձիկ ա գալի.

— Թագաւորն ապրած կենայ, ասում ա. ես քու ուզած եօրդանը կը կարեմ, որ ոնչ երկէն ընի, ոնչ կարճ. թէ կը հրամայես՝ կարեմ։

— Լաւ, կարա, ասում ա թագաւորը. համա որ մի պուճուր երկէն էլաւ եա կարճ, իմաց կաց՝ քեզ քեալա կանեմ. տես, աղաքուց ասում եմ, հա։

— Ղաբուլ եմ, թագաւորն ապրած կենայ. թէ չկարացի՝ գլուխս կտրիլ տու։

Էս մեր խելօք դերձիկն ա. էթում ա մի լաւ եօրդան կարում, դաստի էլ եօրդանը մի պուճուր կարճ ա անում։ Վեր ա ունում տանում թագաւորի աղաքին վէր դնում, փէշի տակին էլ թաքուն մի դամշի ա պահած ընում։

— Թագաւորն ապրած կենայ, ասում ա դերձիկը, հրեսիկ քու ուզած եօրդանը կարել եմ. տես հաւան կը կենես։

— Տենանք, բոյով մին ա, թէ՝ աւել-պակաս ա, ասում ա թագաւորը։

Թագաւորը պառկում ա, եօրդանը քաշում վրէն՝ ոտները բաց ա մնում։ Դերձիկը էն սնաթը փէշի տակիցը հանում ա դամշին, մի լաւ շեպում ոտներին թէ չէ՝ ալբեալը թագաւորը ոտները իրան ա քաշում, եօրդանի տակովը անում։

— Թագաւորն ապրած կենայ, ասում ա դերձիկը. եօրդանուդ գեօրա ոտդ մեկնա։

Թագաւորը որ լսում ա դերձիկի էս խելօք ջուղաբը՝ էլ ըսկի ձէն-ծպտուն չի հանում. գեռ հլա մենծ փոդ էլ ա բախշում նրան ու ընենց ճամբու դնում։

Շատ դրուստ ա ասած, որ մարդ իրա եօրդանու գեօրա պտի ոտը մեկնի։

ՍՈՒՏ-ԱՍԱՆ

Ընում ա չի ընում մի թագաւոր։ Էս թագաւորը ապ իրա երկրումը դալալ ա կանչել տալի թէ՝ ով կտրենայ մի էնթաւուր լաւ տուա ասի, որ ինքը հաւան կենայ՝ նրան մի ոսկէ ինձոր կը տայ։

Գալիս են, ամեն գնից վեր են կենում գալիս՝ էլ թագաւորի տղայ, էլ նազրի տղայ, էլ վեզրի տղայ, մախրաս ով ա-

սես գալիս ա, սուտ ասում, թագաւորը ոչ մինին էլա չի հաւանում։

Վերջը գալիս ա մի խեղճ քեսախը, օրէն հացի մուրացկան. մի եքայ բղուղ վեր ա ունում, գալի թագաւորի կուշտը։

— Այ մարդ, խի՞ ես էկէ, հարցնում ա թագաւորը։

— Թագաւո՛ր ապրած կենայ, ասում ա, էկել եմ փորս ուզեմ.—էս բղղովը մին ոսկի ես պարտ՝ տու։

— Սուտ ես ասում, ասում ա թագաւորը. ես քեզ պատ չեմ տալու։

— Սուտ եմ ասում՝ ոսկէ խնձորը տու, ոնց որ խոստացել եա։

Թագաւորը նոր ա գլխի ընկնում, թէ բանը ընչումն ա, խօսքը փոխում ա.

— Չէ, գրքի՞ ես ասում, ասում ա։

— Գրքի՞ եմ ասում՝ մի բղուղ ոսկիս տու։

Թագաւորը տենում ա որ չէ, սուտ-ասանը տարաւ, էլ ձէն-ծպտուն չէ հանում, սուս ու փուս վեր ա ունում ոսկէ խնձորը տալի ներան։

ԻՄԱՍՏՈՒՆ ՋՈՒԼՋԱԿ

Թագաւոր մը վեր աթոռքին նստած էր, հեռու աշխարհէ եկեր էր, առանց խօսելու, թագաւորի աթոռքի բոլոր կողերը քաշեց, բերան խփեց ու նստաւ։ Թագաւոր բան մը չը հասկցաւ, իշխաններեր կանչեց, բան մը չը հասկցան։ Մեծ ամօթ էր թագաւորի մը, որ այնքան խելացի մէկը չը գտնէր իր երկրի մէջ՝ այս բանն իմանալու համար։ Խիստ հրաման հանեց, որ եթէ մէկը չը գտնի որ գիտնայ, ամենքն ալ կոպանեն։ Ինկան խմաստուն մարդ փնտռել, և պատահեցան տան մը, ներս մտան տեսան, որ տղան օրօրոցի մէջը, և մէկը չկայ տուն, ու օրօրոց կօրօրի։ Գոմի տունը մտան, նոյնպէս օրօրոցը կօրօրի, և մարդ չկայ։ Երան տանիք՝ տեսան ցորեն լացած փռած է, եղէգ մը կայ տնկուած՝ որ առանց հովի կերերայ էդեղ էնդեղ, ու ճնճղուկները կը թողնէ որ ցորեն չուտեն։ Զարմանք կը բռնէ գիրենք, ու կիջնեն տակի տունը, կը տեսնան որ Ջուլհակ մը կտաւ կը գործէ. թել մի կայ կապած մքուքի մէկ ծայրը, թել մի ալ՝ մէկալ ծայրը, թել մի ալ տանրին կապած. կտաւը գործելու հետ՝ թելերը կը շարժին, և երկու օրօրոց ու տանիքի եղէգն կերերան։ Արդարև Ջուլհակ, բայց ըրածը գիտունի բան էր։

Կը պատմեն իրեն, թէ մէկն էկաւ, թագաւորի աթոռքի բոլոր եռ մը քաշեց, ու մէկը չը կրցաւ իմանալ թէ ինչ ըսել կուզէ։ Ե՛լ երթանք, թէ դու դիտցար, մեծ պարգևներ կուտայ քեզ թագաւոր։ Ջուլհակ քիչ մը կը մտածէ, ապա կառնէ հր-

կու ճան (վէզ) և մէկ վառեկ ու կուգայ։ Կը հանէ երկու ճանը, կը ձգէ Ելշինն առջև։ Ելշին կը հանէ ծոցէն և կը ցինէ գետնի վրայ ճանկ մի կորեկ։ Ջուլհակը կը ձգէ վառեկը, որ հետ հետոյն կորեկներ կոցեց։ Ելշին աւոր վրայ իր արեխներ հաղաւ գնաց։

Հարցուցին Ջուլհակին, թէ ինչ էր այդ։ Ասաց. այդ մարդ եկեր էր թէ՝ մեր թագաւոր կուգայ պաշարելու և կրուելու քեզի հետ. պիտի խոնարհիս, թէ ճակատ պիտի տաս։ Էս ճաներ դրի իրեն առաջ, դուք տղայի տեղ էք մեր առջև, գնացէք ճան խաղցէք, դուն ուր, մեզ հետ կուել ուր։ Ցանած կորեկով հասկցուց թէ՝ անթիւ անհամար են մեր զօրքեր։ Էս վառեկ մի հանի, որ կերաւ ամենը, թէ՝ մեր մէկը ձեր բիւրը կը ջարդէ։

Թագաւոր շատ մեծութիւն տուաւ Ջուլհակին և ուզեց որ վաղիր ընէ զինքն, քիչ մը բան առաւ Ջուլհակ, և խնդրեց որ ինքն Ջուլհակ մնայ։ Միայն կապաշեամ, ասաց, ով թագաւոր, որ չը մոռնաս թէ՝ քո վաղիրներէն աւելի խելացի մարդ կը գտնուի քո ծառաներու մէջը, Ջուլհակն ու կօշկակարն ալ մարդու տեղ դնես։

ՀԱՋԱՐԱՆ ԲՈՒԼԲՈՒԼ

Ժամանակով թագաւորի մէկ՝ եկեղեցի մը շինել կուտայ. եօթն տարի կը շինեն, կօծեն. թագաւոր կերթայ որ աղօթք անի, կը տխրնայ որ բուք կրնի, քիչ կը մնայ թագաւոր պիտի խեղդի. մէկ էլ ինչ տխրնայ. ճգնաւոր մը կայնե ուր առջև, կասի. թագաւոր, ապրած կենաս. խօրօտիկ եկեղեցի շինեցիր. ամա մէկ բան պակսի իսոր։ Բուք կը խոտի, ճգնաւոր ներսեցիթ կըլնի։

Թագաւոր քակել կուտայ եկեղեցին. եօթն տարի կը շինեն, վէր առաջուան էլ ադէկ։ Կօծեն. թագաւոր կերթայ աղօթք անի. անասելի բուք մը կէլնի. էլմ էն ճգնաւոր կերևայ թագաւորին, կասի. թագաւոր, ապրած կենաս. շատ պոծաս եկեղեցի մ'ես շինե. ամա բան մը պակաս ի.

Մէկ էլ քակել կուտայ թագաւոր. էսա դրիս՝ ինն տարի աշխատէք, կասի, ըսկուն շինէք, որ ջիհանի իրես նման չը գտնի։ Կը շինեն, կօծեն։ Թագաւոր կերթայ աղօթք անելու. բուք կէլնի, ճգնաւոր կը մնի առջև. կասի. թագաւոր, ապրած կենաս, ամենան ի քո շինած եկեղեցին, ամոս որ մէկ բան պակաս ի։ Հետ հետուն թագաւոր ձեռ կը թալի ճրագնաւորի փողպատ կը բռնի։ Դէ ասա մէջ խեմ՝ իմ եկեղեցուս պակասն ինչ ի. էսա իրեք դիր տես քակել կուտամ։— Էսա ե-

կեղեցւոյն Հազարան բուլբուլ պիտի, որ վայելէ։ Ճգնաւորն աներևոյթ եղաւ։ Թագաւորն էկաւ տուն։

Իրեք լաճ ունէր էս թագաւոր. լաճեր տիսան որ ուրենց հէր գարդ մ'ունի. հարցուցին.— Բաբօ, ի՞նչ դարդ ունես։

— Կը մէզեմ որ, ասաց, ես հալւորեր եմ. ժամու համար Հազարան բուլբուլ պէտք է, ես ի՞նչխ էրթամ պիրեմ։

— Մենք կերթանք պիրենք, ասին տղէյներ։ Ելան իրեքն էլ ձիան հեծան գնացին, մէկ ամսուց էտքը տեղ մը հասան. տիսան որ ճամբան իրեք ճուղի ի. շիւարան կայնան։

Ճգնաւորն ռաստ էկաւ իսոնց, հարցուց.— Դո՞ր կերթաք, կտրիճներ։— Կերթանք Հազարան բուլբուլ պիրենք. չենք գիտե ո՞ր ճամբան երթանք։

Ճգնաւորն ասաց.— Էս լէն ճամբան երթացող կը գառնայ. միչին ճամբան երթացող՝ եա գառնայ եա չը գառնայ. ցածրի ճամբան երթացող՝ ումուտ չը կայ որ գառնայ։— Ինչի։— Կերթաս ասաց, գետ մը կայ, Հազարան բուլբուլի տէր էնի, արե (կախարդութեամբ) ադու, չի խմե. տիս պիտի խմես, ասես. Օ՛խ, անմահութենի ջուր ի։ Գետ կրնցնես, մէկ պրտակ կուգայ.. էն արե չարփուշ, իրիսանց խսկե. տիս պիտի քաղես, հատատաս, ասես. Օ՛խ, արքայութենի ծաղիկ ի։ Պրտակ կրնցնես, կը տիանաս մէյ դեռ դէլ կապուկ, մէյ դեռ գառն. գէրս ուզի խատ, գառու ուզի միս. պիտի վերցնես միս գնես գէրս ուզի, խատը՝ գառու ուզի։

Կրնցնես կերթաս, կը հասնես ճոչ գուռ մը, մէկ փեղկը փակ, մէկ փեղկը բաց. փակ փեղկը պիտի բանաս, բացը՝ փակես։ Ներս կը մտնես կը տեսնաս որ Հազարան բուլբուլի տէրն քներ է. եօթն օր կը քնի, եօթն օր արթուն կը մնայ. թէ որ կարցար ասածներս արեր, Հազարան բուլբուլ կը պիրես, թէ չէ՞ ոչ կարնաս երթալ, ոչ կարնաս գառնալ։

Ճոչ ադրէր լէն ճամբով գնաց. գնաց գնաց հատաւ քաշի ու ասրէ մը. ասաց. Ինչի՞ պիտի երթամ ապանեմ. կը մտնեմ էտ տուն, ծառայութենն կանեմ, կապրիմ։

Մի քիչնեկ ասրէրն էլ միչին ճամբով գնաց, գնաց ասրն բնցաւ էն երես, տեսաւ ասրէ մը ճրպի պէս կը փառէր Ինչաւ, Ձին կապեց, գնաց խատ բաղչէն, կանանչ սիսառ մը կէր, ինոր վերէն հատաւ. տեսաւ մէկ ան տրար մէջ երկինք մէջ գետին կուգայ. էկաւ, հատաւ, խոր ճարեմ՝ խրտի, գարձաւ կրար քար մը, կրաւաւ սիսառ տակ։

Գանք դեռ պատեկ ասրէրս։ Պատեկ ասրէրս ձին հեծաւ, ցածրի ճամբան բռնեց գնաց. խոսէ խոսէ ռաստ էկան գետ, ագրակ, գէր, գառն, գուռն, Ճգնաւորն ասածներ բոլն էլ ատաց։ Ներս մտաւ ասրաւ, որ ֆէնդան մարդ ադ ֆիկ մը պատկե. Հազարան բուլբուլ ուր փանդրկեց իչաւ էկաւ. վեր ադ ֆիկան արտին հազար լեզուով կը ճրլրէր. կը ըրլրէր. ադ ֆիկան քուն ատրաւ,

տղէն էլաւ Հապարան բուլբուլն առեց, աղջկան իրեանի վէրէն էլ ուր պուկներով նշանամ՝ իդիր, ետ դարձաւ ուր ճամբան։

Աղջիկ քնուց արթնցաւ տիսաւ, որ Հապարան բլբուլ չկայ. գիտցաւ որ տարեր են, բօռաց.—Գուռ, բանէ։ Գուռն ասաց. Ասուած հեռն ըլնի, իմ բաց փեղկ փակեց, փակ փեղկն իսլաց։

Բօռաց. գէլ, գանն, բանէք։

Ախին. Ասուած ուր հեռն ըլնի. խոտ գառուս խառ. միա՝ գէլուս։

Բօռաց. Գրակ, բանի։

Ասաց. Ասուած ուր հեռն ըլնի. ախ ձիկ արեր չարփուշ, էն արբայութիւնի ծապիկ արաց։

Բօռաց. Գնա, ախ պանի։

Ասաց. Ինչի պանեմ. ախ գիկ արեր ապու պանի, էնի արաց անմանութիւնի չարք. թող երթիս, Ասուած ուր հեռն ըլնի։

Աղջիկ անճար մնաց. երաւ ուր ձին հեծաւ։ Թող մնաց վէր ձիուն։

Լաճն էկաւ հասաւ ձգնաւորի մօտ. բարի խառ. ասաց գօ, քե Հապարան բլբուլ։

Ախարքներն հարցուց. ասաց. Չեմ քիր։ Հապարան բլբուլ խառ ճգնաւորին պան. ինք գնաց գեհ չէն ճանիրան։ Ձոչ քարզար մի հասաս, գնաց կերտակուլ իրիդի մի մնաւ՝ հաց ուտելու. արաս որ ուր ճոչ արարէր էնտեղ մնաց ի. գարգանի մանչարարեն թեն խառ. ասեց կա գարձաս. իրիր մնաս ճգնաւորը. ինք գնաց գեհ մրջնեկ արարէր։ Գնաց, ասրիր շատ ասեց էն իրանարաս՝ քաշկ ասրեկ մի ճրարի ոչ. իրաս ճին գարեկ. գնաց խառ բարշէն, կանանչ արեր վէրէն հասաս. ան արարեր էն գեհէն էկաս, բաց. Էյ, էգա ասր ասեցէր ի, որ ինձի հասեր հա։ Վերաց ճգաց արիր գարձէր. փարայ ասրէն էլ ճարարեկ էլաս. իրեց արարաս. Ձեաց ճգաց, իրարեկ, ինար. էն գանն ինեն արարար գարձաս բար։ Տրէն ուրն ուր ասաց. Գաց չգաց. իմ արարէր բասեկ հօր են արեր։ Ձեաց ճգարով էն գօրան բարեկաց իրարեկ, ասաս բարեր բանէն գարձան մարդ. էլաս էլ փարեն։ Իրիշկեց որ ուր արարէր մէջեր չի. ասաս արեր ասեցէն էլ բար մի էլէր, ճգարով իրարեկ. էլաս որ ուր արարէրն ի. էլ փարիր կանչեց իրիեն. արարէր մի փարեն. ես քա արարէրն եմ Գարձաս որ՝ հա։ Մէլասեկ էկան մնաս ճգնաւորը։

Հապարան բլբուլն ասրեն, իրեր արարէր մէջանի գարգան. Դարբրեր են, հասան հարի մի բերան, պատրիկ արարէր իշուրեն որ ջուր հանի. ջուր քաշիրեն, արարէր մարդն մէջ հարեն ճրեն։ արարէր մէջմէկաս ասրեն. էն որ հեռ մի բրեր, մեր հար ասրեն մեր իշ իրեսով էլնեն։ Ուրեն Հապարան բլբուլ գնացրեն. Հասան ասեր, հարն ասրեն. մեր պատրիկ արարէր ասաս։ Հապարան

բան բլբուլ մենք առինք պիրինք։ Հազարան բլբուլ կախեցին ժամու մէջ, բսկի ոչ ձէն կածի, ոչ շունչ։

Աղջիկն ուր ձիով հասաւ մօտ թագաւորը, ասաց. էն կլաբիճ ով ի որ իմ Հազարան բլբուլ պիրեր ի։ Երկու ախպէրն ասին. մենք ենք։—Ի՞նչ տեսաք վէր ճամբին։—Բան մը չտեսանք։ Պիրող դուք չէք. դուք գող էք, ասաց։ Բռնեց իդիր բռնատուն, թագաւորն էլ, երկու լաճն էլ, ինք գաւթեց քաղաք նստաւ.—Զուտ Հազարան բլբուլ պիրող չի գայ, ձև ապատել չկայ։

Իսանք թող մնան բստայ, մենք երթանք դեհ տղէն։

Գարի քաղող կնիկներ տղէն հորից հաներ են, էն մէկ պատաւ արև ուր հոգեգաւակ։ Քանիմ՝ շաբաթ ընցաւ, ձէն ձէնոց ինկաւ գուս. էկաւ հասաւ չուտ տղին թէ՝ Հազարան բլբուլ պիրողն իկեր ի, տէրն էլ խոխէն իկեր ի։ Մէկ օր պատուց իզին առեց տղէն, ասաց. երթամ քաղաք, նոր ժամմ՝ են շինե, թամաշայ անեմ։ Գնաց. գնաց ուրենց տուն, տեսաւ, որ ոչ հէր կայ, ոչ ախպէրներ։ Հարցուց. ուր են։ Ասին. Հազարան բլբուլի տէրն իկե, բռնե գրե բռնատուն։ Տղէն գնաց բռնատնից իհան հէրն ու ախպէրներն։ Աղջիկն ասաց. ես Հազարան բլբուլի տէրն եմ. ախ ձիգնէ չե՞ս վախենայ։ Տղէն ասաց. ես Հազարան բլբուլի պիրողն եմ, չեմ վախենայ։

Աղջիկ հարցուց. վէր ճամբին ինչ ։՝ ինչ տեսար։

Տղէն պատմեց. գետ, պրակ, գէլ, գառ, դուռ, ինչ որ արեր էր, ինչ որ տիսեր էր։—Թէ որ իսանց չես ուատայ, վէր իրեսիդ էլ նշան մը կայ, իմ նշանածն ես ախ։—Հալալ ըլնի քե, ասաց աղջիկ։

Հարսնիս կազմեցին, գնացին ժամ փսակելու։ Հազարան բլբուլ առեց ճըլճըլատալ. հազար հազար եղանակներով ձէն կը հանէր. տէլալայ կը ճըլ-ըլա՜,, տէլալայ կը ճըլ-ըլա՜։

Երկնուց իրեք ինձոր ինկաւ։

ՔԱՋ ՆԱԶԱՐԸ

(Հէքիաթ)

1.

Լինում է չի լինում մի խեղճ մարդ՝ անունը Նազար։ Էս Նազարը մի անշնորհք ու ալարկոտ մարդ է լինում. Էնքան էլ վախկոտ, Էնքան էլ վախկոտ, որ մենակ ոսաբ ոսի առաջ չէր գնիլ, թէկուզ սպանէիր։ Օրը մինչև իրիկուն ինգայ կողքը կտրած՝ Նրա հետ դուրս գնալիս դուրս էր գնում, տուն գալիս՝ տուն գալիս։ Դրա համար էլ անունը դնում են Վախկոտ Նազար։

Էս Վախկոտ Նազարը մի գիշեր կնդայ հետ շեմքն է դուրս գալիս։ Որ շեմքն է դուրս գալիս՝ տեսնում է ճրըքճրըքան լուս-լուսնեակ գիշեր՝ ասում է.

— Ա՛յ կնիկ, ինչ քարան կտրելու գիշեր է... Սիրաս ասում է՝ վեր կաց գնա Հնդրատանից եկող Շահի քարվանը կտրի բեր տունը լցրու...»

Կնիկը թէ.

— Ձէնդ կտրի, տեղդ նստի, քարան կտրողիս մտիկ արա...»

Նազարը թէ.

— Ա՛նզգաստ կնիկ, ինչու չես թող անում ես գնամ քարան կտրեմ բերեմ տունը-լցնեմ։ Էլ ի՞նչ տղամարդ եմ ես, էլ ինչու եմ դդակ ծածկում, որ դու համարձակւում ես իմ առաջը խօսես»։

Որ շատ կռւում է՝ կնիկը տուն է մտնում, դուռը փակում։

— Հոգեմ էդ վախկոտ դլուխդ, դէ հիմի գնա քարան կտրի»։

Էս Նազարս մնում է դռանը։ Վախից լեզապատառ է լինում։ Ինչքան ողաչում-պաղատում է, որ կնիկը դուռը բաց անի, չի լինում, բաց չի անում։ Ճարը կտրած գնում է մի պատի տակի կուչ է գալիս, դողալով գիշերն անց է կացնում մինչև լուսը բացւում է։ Նազարը խռռված պատի տակին արևկող արած ապասում է, որ կնիկը դայ տուն տանի ու միտք է անում։ Ամառւայ շոգ ցր՝ գազազած ճանճեր. ինքն էլ էնքան ալարկոտ, որ ալարում է քիթը սրբի — ճանճերը գալիս են տրա քիթ ու պռունգին վէր գալի, լցւում։ Որ շատ նեղացնում են՝ ձեռը տանում է երեսին զարկում։ Որ երեսին զարկում է՝ ճանճերը ջարդւում են, առաջին վէր թափում։

— Վա՛հ, էս ինչ էր...» մնում է զարմացած։

Ուզում է համրի թէ մի զարկով քանիսն սպանեց՝ չի կարողանում։ Մտածում է, որ հազարից պակաս չի լինիլ։

— Վա՛հ, ասում է, ես էսպէս տղամարդ եմ էլէլ ու մինչև էսօր չեմ իմացել... Ես, որ մի զարկով կարող եմ հազար շունչ կենդանի ջարդել, էլ ինչ եմ էս անպիտան կնդայ կողքին վէր ընկել...»

Էստեղից վեր է կենում, ուղիղ գնում իրենց գիւղի տէրտէրի մօտ։

— Տէրտէր, օրհնեա ի տէր։

— Աստուած օրհնի, որդի։

— Տէրտէր, բա չես ասիլ էսպէս էսպէս բան։

Պատմում է իր քաջագործութիւնը ու հետն էլ յայտնում է, որ պէտք է իր կնդանից կորչի, միայն խնդրում է՝ իր ապրածը տէրտէրը գրի, որ անյայտ չը մնայ, ամենքն էլ կարդան

իմանան։ Տէրտէրն էլ, կատակի համար, մի փալասի կտորի վրայ գրում է.

Անյաղթ հերոս Քաջըն Նազար,
Որ մին զարկի ջարդի հազար,

Ու տալիս է իրեն։

Նազարս էս փալասի կտորը մի փէտի ծէրի ամրացնում է, մի ժանգոտած թրի կտոր կապում մէջքը, իրենց հարևանի իշին նստում ու գիւղից հեռանում։

2.

Իրենց գիւղից դուրս է գալի մի ճամփայ է ընկնում ու գնում։ Ինքն էլ չի իմանում թէ էդ ճամփէն ուր է տանում։

Գնում է գնում, մին էլ ետ է նայում, տեսնում է գիւղից հեռացել է։ Էստեղ սիրտն ան է ընկնում։ Իրեն սիրտտալու համար սկսում է քթի տակին մրմռալ, երգել, իրեն իրեն խօսել, իշի վրայ բարկանալ։ Քանի հեռանում է՝ էնքան վախը սաստկանում է, քանի վախը սաստկանում է՝ էնքան ձէնը բարձրացնում է, սկսում է գոռգոռալ, հարայ-հրոց անել, հետն էլ միւս կողմից էշն է սկսում գռալ... Էս ոգմուկից ու աղաղակից թռչունները մօտիկ ծառերից են թռչում, նապաստակները թփերից են փախչում, գորտերը կանտուչիցն են ջուրը թափում...

Նազարը ձէնն աւելի է գլուխը գցում. իսկ որ մոնում է անտառը—թւում է՝ թէ ամեն մի ծառի տակից, ամեն մի թփի միջից, ամեն մի քարի ետևից՝ որտեղ որ է՝ գազան է յարձակւելու կամ աւազակ. սարսափած սկսում է գոռգոռալ, ոնց գոռգոռալ՝ ականջդ ոչ լրսի։

Դու մի ասել հենց էս ժամանակ մի գիւղացի ձին քաշելով անտառում միամիտ գալիս է։ Էս զարհուրելի ձէնը ականջն է ընկնում թէ չէ՝ կանգնում է.

— Վա՛յ, ասում է, ոնց թէ իմն էլ էստեղ էր հասնի. կայ-չկայ էս աւազակներ են...»

Ձին թողնում է, ընկնում է ճամբի տակի անտառն ու՝ երկու ոտն ունէր, երկուսն էլ փոխ է առնում՝ փախչում։

Բախտդ սիրեմ Քաջ Նազար. գոռգոռալով գալիս է տեսնում մի թամքած ձի ճամբի մէջ տեղը կանգնած իրեն է սպասում։ Իշիցը վեր է գալիս էս, թամքած ձիուն նստում ու շարունակում իր ճամփէն։

3.

Շատ է գնում, քիչ է գնում, շատն ու քիչն էլ ինքը կիմանար, գնում է ընկնում մի գիւղ. ինքը գիւղին անծանօթ,

գիւղն իրեն։ Ո՞ւր գնայ, ո՞ւր չը գնայ։ Մի տանից դուռնի ձէն է լսում. ձին քշում է էս ձէնի վրայ, գնում է ընկնում մի հարսանքատուն։

— Բարի օր ձեզ։

— Ա՛յ Աստծու բարին քեզ, բարով հազար բարի եկար։

Համեցէք, հա, համեցէք. դէ դոնախն Աստուծնն է. սրան տանում են իր դրօշակով ասուփրի վերի ծէրին բազմեցնում։ Աչքդ էն բարին տեսնի, ինչ որ լցնում են առաջը՝ թէ ուտելիք, թէ խմելիք։

Հարսանքաւորները հետաքրքրւում են իմանան, թէ ո՞վ է էս տարօրինակ անծանօթը։ Ներքի ծէրից մինը բռթում է իր կողքի նստածին ու հարցնում, սա էլ իր կողքի նստածին է բռթում, էսպէս հերթով իրար բռթելով ու հարցնելով բանը հասնում է վերի ծէրին նստած տէրտէրին։ Տէրտէրը մի կերպով դոնախի դրօշակի վրայ կարդում է.

Անյաղթ հերոս Քաջըն Նազար,
Որ մին զարկի՝ ջարդի հազար։

Կարդում է ու զարհուրած յայտնում է իր կողքի նստածին, սա էլ իր կողքի նստածին, սա էլ երրորդին, երրորդը չորրորդին. էսպէսով հասնում է մինչև դուռն տակը ու ամբողջ հարսանքատունը դրրմբում է թէ՝ բա՜ չէս ասիլ նորեկ դոնախն է ինքը՝

Անյաղթ հերոս Քաջըն Նազար,
Որ մին զարկի՝ ջարդի հազար։

— Քաջ Նազարն է հա... բացականչում է պարծենկոտի մինը. ինչքան է փոխւել. միանգամից լաւ չը ճանաչեցի...»

Եւ մարդիկ են գտնւում, որ պատմում են նրա արած քաջագործութիւնները, հին ծանօթութիւնն ու միասին անցկացրած օրերը։

— Հապա ինչպէս է, որ էսպէս մարդը հետը ոչ մի ծառայ չունի, զարմանքով հարցնում են անծանօթները։

— Էդպէս է դրա սովորութիւնը, ծառաներով մարդ չի սիրում։ Մի անգամ ես հարցրի, ասաւ՝ ծառան ինչ եմ անում, ամբողջ աշխարհքն իմ ծառան է ու իմ ծառան։

— Հապա ինչպէս է, որ մի կարգին թուր չունի, էս ժանգոտ երկաթի կտորն է մէջքին կապել։

— Շնորհքն էլ հենց դրա մէջն է, որ էս ժանգոտ երկաթի կտորով մին զարկես ջարդես հազար, թէ չէ լաւ թրով, ինչ կայ որ, սովորական քաջերն էլ են ջարդում։

Ու ապշած ժողովուրդը ոտի է կանգնում, խմում է Քաջ Նազարի կենացը։ Իրենց մի մի խելօքն էլ դուրս է գալի ճառ է ասում Նազարի առաջ. ասում է՝ մենք վաղուց էինք լսել քո մեծ հռչակը, կարօտ էինք երեսդ տեսնելու և ահա էսօր բախտաւոր ենք, որ քեզ տեսնում ենք մեր մէջ։ Նազարը հա-

ռաչում է ու ձեռքը թափ է տալիս։ Ժողովրդականները խորհրդաւոր իրար աչքով են մնում, հասկանում են, թէ էդ հառաչանքն ու ձեռքի թափ տալը ինչքան բան կը նշանակէր...

Ու ցրուելով հարբած հարսանեաւորները տարածում են ամեն տեղ, թէ գալիս է

Անյաղթ հերոս Քաջըն Նազար,
Որ մին զարկի՝ ջարդի հազար։

Պատմում են նրա զարմանալի քաջագործութիւնները, նկարագրում են նրա ահռելի կերպարանքը։ Ու ամեն տեղ իրենց նորածին երեխաների անունը դնում են Քաջ Նազար։

4.

Հարսանքատանից հեռանում է Նազարն ու շարունակում է իր ճամփէն։ Գնում է հասնում մի կանանչ դաշտ։ Էս կանանչ դաշտում ձին թողնում է արածի, դրօշակը տնկում է, ինքն էլ դրօշակի շւաքումը պառկում քնում։

Դու մի ասիլ օխտը հսկայ եղբայրներ կան, օխտը աւազակապետ, էս տեղերը նրանցն են, իրենց ամրոցն էլ մօտիկ սարի գլխին է։ Էս հսկաները վերևից մտիկ են տալիս՝ որ մի մարդ եկել է իրենց հանդում վէր է եկել։ Շատ են զարմանում, թէ էս ինչ սրտի տէր մարդ պէտք է լինի, քանի գլխանի, որ առանց քաշւելու եկել է իրենց հանդում հանգիստ վէր եկել ու ձին էլ բաց թողել։ Ամեն մինը մի գուրզ ունէր քառասուն լդրանոց։ Էս քառասուն լդրանոց գուրզները վերցնում են գալիս։ Գալիս են ի՞նչ են տեսնում. հրէս մի ձի արածում է, մի մարդ կողքին քնած, գլխավերևը մի դրօշակ տնկած, դրօշակի վրէն գրած.

Անյաղթ հերոս Քաջըն Նազար,
Որ մին զարկի՝ ջարդի հազար։

Վա՛յ, Քաջ Նազարն է... Մատները կծում են հսկաները ու մնում են տեղները սառած։ Դու մի ասիլ հարբած հարսանքաւորների տարածած լուրը որանց էլ է լինում հասած։ Էսպէս թուքները ցամաքած, չորացած սպասում են, մինչև Նազարն իր քունն առնում է ու զարթնում. որ զարթնում է, աչքերը բաց է անում տեսնում գլխավերևը քառասուն լդրանոց գուրզները ուսներին օխտն ահռելի հսկաներ կանգնած՝ էլ փորումը սիրտ չի մնում։ Մտնում է իր դրօշակի տակն ու սկսում է դողալ, ոնց որ աշունքւայ տերևը կը դողայ։ Էս հսկաները որ տեսնում են սա գունատուեց ու սկսեց դողալ, ասում են՝ բարկացաւ, հիմի որտեղ որ է մի գարկով օխտիս էլ կը սպանի, առաջին գետին են փռւում ու խնդրում են.

Անյաղթ հերոս Քաջըդ Նազար,
Որ մին զարկես՝ ջարդես հազար,

—Մենք լսել էինք քո ահաւոր անունը, տեսութեանդ էինք փափագում. այժմ բախտաւոր ենք, որ քո ոտով ես եկել մեր հողը։ Մենք, քո խոնարհ ծառաներդ՝ օխտն ախպէր ենք, ահա մեր ամրոցն էլ էն սարի գլխին է՝ մէջը մեր գեղեցիկ քոյրը։ Աղաչում ենք շնորհ անես՝ գաս մեր հացը կտրես...»

Էստեղ Նազարի շունչը տեղն է գալի, նստում է իր ձին, նրանք էլ դրօշակն առած՝ առաջ են ընկնում ու հանդիսաւոր տանում են իրենց ամրոցը։ Տանում են ամրոցում պահում, պատւում թագաւորին վայել պատւով ու էնքան են խօսում նրա քաջագործութիւններից, էնքան են գովում, որ իրենց գեղեցիկ քոյրը սիրահարւում է վրէն։ Ինչ ասել կուզի՝ յարգն ու պատիւն էլ հետն աւելանում է։

5.

Էս ժամանակ մի վագր է լուս ընկնում էս երկրում ու սարսափ է գցում ժողովրդի վրայ։ Ո՞վ կը սպանի վագրին, ո՞վ չի սպանիլ։ Իհարկէ Քաջ Նազարը կը սպանի։ Էլ ո՞վ սիրտ կանի վագրի դէմ գնայ։ Ամենքն էլ Նազարի երեսին են մտիկ տալի. վերևը մի Աստուած, ներքևը մի Քաջ Նազար։

Վագրի անունը լսելուն պէս Նազարը վախից դուրս է վազում, ուզում է փախչի ետ գնայ իրենց տունը, իսկ կանգնածները կարծում են թէ վազում էր, որ գնայ վագրին սպանի։ Նշանածը բռնում է կանգնեցնում, թէ՝ ո՞ւր ես վազում էդպէս առանց զէնքի, զէնք առ հետդ էնպէս գնա։ Զէնք է բերում տալիս իրեն, որ գնայ իր փառքի վրայ մի քաջութիւն էլ աւելացնի։ Նազարը զէնքն առնում է դուրս գնում։ Գնում է անտառում մի ծառի բարձրանում, վրէն տոպ անում, որ ոչ ինքը վագրին պատահի, ոչ վագրը իրեն։ Ծառի վրայ կուչ է գալի ու Նազարն ո՞վ կը ասայ—հոգին դառել է կորկի հատ։ Հակառակի նման անտէր վագրն էլ գալիս է հենց էս ծառի տակին պառկում։ Նազարը որ վագրին չի տեսնում՝ լեզին ջուր է կտրում, աչքերը ուռանում են, ձեռն ու ոտը թուլանում են ու թրը՛մի, ծառից ընկնում է գազանի վրայ։ Վագրը սարսափած տեղից վեր է թռչում, Նազարն էլ վախից կպչում է սրա մէջքին։ Էսպէս զարհուրած Նազարը մէջքին կպած էս խրտնած վագրը փախչում է, ոնց է փախչում, էլ ոտը ու ձորը, քարը ու քօր չի հարցնում։

Մարդիկ մին էլ տեսնում են, վա՜հ, Քաջ Նազարը վագրին նստած քշում է։

— Հայ-հարայ, եկէք հա, եկէք, Քաջ Նազարը վագրին ձի է շինել հեծել... ուէք հա ուէք...» Սրաւորւում են, ամենքը մի կողմից հարայ-հրոցով, հրհրոցով յարձակւում են՝ խանչալով, թրով, թուանքով, քարով, փէտով տալիս են ապանում։

Նապարը որ ուշքի է գալիս, լեզուն բացում է՝ ափսոս ասում է, ընչի սպանեցիք, գոնով մի ձի էլ շինել նստել... Էնքան պէտք է քշէլ որ...»

Լուրը գնում է, հասնում է ամբոցը։ Մարդ, կին, մեծ, պստիկ՝ ժողովուրդը դուրս է թափում Նապարին ընդունելու։ Վրէն երդ են կապում ու երգում։

Ու պսակեցին Քաջ Նապարին հսկանների գեղեցիկ քրոջ հետ, օխտն օր, օխտը գիշեր հարսանիք արին, երգելով գովեցին թագաւորին ու թագուհուն։

6.

Դու մի ասիլ էս աղջկանը ուզած է լինում հարեւան երկրի թագաւորը։ Որ իմանում է իրեն չեն ուել՝ ուրիշի հետ են ամուսնացրել՝ գորք է կապում պատերազմով գալիս է օխտն տիպօր վրայ։

Էս օխտը հսկան գնում են Քաջ Նապարի մօտ, պատերազմի լուրը յայտնում են, գլուխ են տալի, առաջը կանգնում՝ հրաման են խնդրում։

Պատերազմի անունը որ լսում է՝ սարսափում է Նապարը, դուրս է գրծնում, որ փախչի ետ գնայ իրենց գիւղը։ Մարդիկ կարծում են՝ ուզում էր խակոյն դուրս վազել յարձակուել թշնամու բանակի վրայ։ Առաջն են ընկնում, բռնում են խնդրում, թէ ախր առանց զէնքի ու գրահի մենակ ո՞ւր ես գնում, ի՞նչ ես անում, գլխիցդ ձեռք ես վերցրել, ի՞նչ է...

Բերում են զէնք ու գրահ են տալի, կնիկն էլ եղբայրներին խնդրում է, որ չը թողնեն Նապարին իր քաջութիւնից տարուած մենակ յարձակուի թշնամու գորքի վրայ։ Եւ լուրը գնում տարածուում է գորքի ու ժողովրդի մէջ, լրտեսների միջոցով էլ հասնում է թշնամուն, թէ Քաջ Նապարը մենակ առանց զէնքի թռչում էր դէպի պատերազմի դաշտը, հոգիս են կորոգացել գապել ու շրջապատած բերում են...

Պատերազմի դաշտում մի ամեհի նժոյգ ձի են բերում, Նապարին նստեցնում վրէն։ Ոգևորուած գորքն էլ հետը վեր է կենում անագին աղմուկով,—կեցցէ Քաջն Նապար... մեռ թշնամուն...

Նապարի տակի նժոյգը, որ տեսնում է վրէն ինչ ամպէտքի մէնն է նստած՝ խրխնջում է, գլուխն առնում ու թռչում առաջ, ուզիդ դէպի թշնամու բանակը։ Գորքերը կարծում են Քաջ Նապարը յարձակուեց, ուռռա են կանչում ու իրենք էլ ետևից յարձակուում ամենայն առատութեամբ։ Նապարը որ տեսնում է չի կարողանում իր ձիու գլուխը պահի, քիշ է մնում վէր ընկնի, ձեռը գցում է, ուզում է մի ծառից փաթաթուի, դու մի ասիլ ծառը փթած է, մի գերանաչափ

ճիւղը պոկ է գալիս մնում ձեռին։ Թշնամու զօրքերը, որ առաջուց համբաւը լսել էին ու ահը սրտներումն էր, էս էլ որ իրենց աչքով տեսնում են՝ էլ փորներումը սիրտ չի մնում. երես են շուռ տալիս,—փախի, որ փախի, թէ մարդ ես գըլուխդ պրծացրու, որ Քաջ Նազարը ծառերն արմատանան առնելով գալիս է...

Էդ օրը թշնամուց ինչքան կոտրուում է կոտրուում, մնացածները թուրները դնում են Քաջ Նազարի ոտի տակին, յայտնում են իրենց հպատակութիւնն ու հնազանդութիւնը։

Ու պատերազմի ահեղ դաշտից Քաջ Նազարը հսկաների ամրոցն է վերադառնում։ Ժողովուրդը յաղթական կամարներ է կապում, աննկարագրելի ոգևորութեամբ, ուռաներով և կեցցէներով, երգով ու երաժշտութիւնով, աղջիկներով ու ծաղիկներով, պատգամաւորութիւններով ու ճառերով առաջն է դուրս գալի, էնպէս մի փառք ու պատիւ, որ Նազարը մնացել էր ապշած շըշկլուած։

Էսպէս առջով-փառքով էլ բերում, հրատարակում են իրենց թագաւոր ու բարձրացնում են թագաւորի թախտին։ Քաջ Նազարը դառնում է թագաւոր, էն հսկաներից ամեն մէկին էլ մի պաշտօն է տալիս։ Մին էլ տեսնում է աշխարհքը իր բըռան մէջ։

Առում են մինչև էսօր էլ գեռ ապրում ու թագաւորում է Քաջ Նազարը։ Ու՝ երբ քաջութիւնից, խելքից, հանճարից ծոռը խօսք են գցում՝ ծիծաղում է, ասում է.

— Ինչ քաջութիւն, ինչ խելք, ինչ հանճար. գաստրկ բաներ են բոլորը։ Բանը մարդուս բախտն է։ Բախտ ունես՝ քէֆ արա...»

Եւ ասում են, մինչև էսօր էլ քէֆ է անում Քաջ Նազարը ու ծիծաղում է աշխարհքի վրայ։

Յով. Թումանեան

ԱՂԱ ՆԱԶԱՐ

(Հէքիաթ)

Նազարը մի փոքրիկ գիւղի գլխը էր։

Շատ ապքաստ ու անշնորհք մարդու մէկն էր, ծոյլ ու անճարակ. թուքը անապատ վազում էր բերանից. դրա համար էլ գիւղում նրան «փայինքոտ Նազար» էին կոչում։

Հասակով ու կարճ էր հասակով, հատ գոտի էր կապում, որի մի կողմից միշտ քաշ էր ընկած կարմիր մեծ թաշկինակը, իսկ միւս կողմը միշտ խրած կար գրիչ-մելանը։ Ոբուանից էր, ինչպէս էր եկել, այր ու բէնը խրատուց գատել էր սովորել նա, և այդ պատճառով էլ գիւղի միակ «գիտնական մարդն» էր համարում իրեն։

Մի աչքաբաց կնիկ ունէր, որ օր ու գիշեր հարևանների դրանը աշխատում էր, հաց էր թխում, կով կթում և դրանով տունը պահում։ Նազարն իր աշխատած չնչին բանը տալիս էր ծխախոտի և օղիի. տան համար օգուտ չունէր. դեռ լաւ էր, որ ցնրնկն էլ փորը դուրս էր քցում այս ու այն հարևանի կամ ուէսի տանը։

Ո՛չ տղայ ունէին, ո՛չ աղջիկ. մենակ մի սև էշ ունէին, շորս հաւ և մի աքլոր։ Գիւղի եղերքին էլ մի երկաչքանի փլուփլուկած խրճիթ ունէին. մի աչքում մարդ ու կնիկ էին պառկում, միւսումն էլ էշն ու աքլորի ընտանիքը։ Այնպէս փլուփլուկած էր խրճիթը, որ երբ հաւերը երդիքը քշուշ էին անում, հողը մաղւում էր անձրևի պէս, իսկ վայ թէ էշը իր փողը փչէր— ողջ խրճիթը կը դողդողար։ Եւ երբ քամի էր լինում, մաղ էր ճուում, որ տունը բրդուճ անէր, տանէր։

— Ա՛յ մարդ,—գանգատւում էր կնիկը,—ո՛չ բարով ես էլ աշխարքը մտայ, մարդ առայ, էսպէս էլ ծը կը լինի, էսպէս էլ ապրուստ կը լինի, որ մենք ենք անում։

— Ի՞նչ անեմ, ա՛յ կնիկ.—ասում էր Նազարը,—ես էլ գիտեմ, որ գէշ է, ճարս ի՞նչ է. մարդս պիտի բախտ ունենայ, բախտ. խելք ու կտրիճութիւն դարտակ բաներ են, թէ չէ, ի՞նչ է դու ասա, ես հո խելառ չեմ, պատճառն ի՞նչ է, որ աղքատ եմ։

— Խելառ չես, բայց խելօքի պէս էլ չես. ախր, ա՛յ մարդ, բախտս ո՞ւր է, հո նստածդ տեղը պուտուկով ոսկի չպիտի գըտնես. գնա,—խրատում էր խեղճ կնիկը, գնա, գլուխդ տուր քարին, քարը տուր գլխիդ, տնա, փող չենս վատակի, յեռոյ խաղութ բռնց, որ մենք էլ մարդու շարք մտնենք, օր տեսնենք։

— Կնիկ, դու կնիկ ես, հէչ կը խօսես. ասել եմ ու էլի կ՚ասեմ թէ՝ բախտն է բանը. բախտը որ տայ մարդուս, նստած տեղը թոնիրով լիքը ոսկի կուտայ։ Ի՞նչ է, ես ումից պակաս տղամարդ եմ որ, ողջ գեղի գիտունը ես եմ, բայց աբի տես որ, բախտ չունիմ։ Ինչն ի՞նչ է իմ քոմս, Տէրտէրանց Գօրոս աղան ի՞նչ է իմ քոմս, նրանց ես մի բրդուճ կանեմ կուտեմ, թէ խելքի, թէ կտրիճութեան կողմից. բայց տես որ, նրանք բախտ ունին ու գումշի տակով ոսկի։

— Հա՛, դու էլ պակաս՝ նրանց չհաւնելու,—ծաղրում էր կինը, հլա մէկ քիթ ու բերանդ արիր, նոր խօսիր։

— Գապանաձևիր,—գոռում էր Նազարը,—կնիկն ի՞նչ է, որ իր մարդու, իր գլխաւորի վրայ էսպէս ամբարտաւան բերան բանայ... ախ, բախտ չունիմ, բախտ որ ունենայի. թագաւորի աղջիկը կնիկս կը լինէր, չէ թէ քեզ պէս անզգամը։

Ու զայրացած դուրս էր թռչում, դուռը բարկացած գոցում խեղճ կնկայ երեսին, նստում էր սև էշը, մէկ ձեռքը երկայն մտրակը բռնած, մէկէլով գաստակը ժանգոտ թքի, որ երբեմն

գլխը կապել էր մէջքին և չօ-չօ հրամայելով ու ասպանդակելով՝ էշը քշում էր գիւղամէջ, բերնին դրած շիբուխը, որից ծուխը բարձրանում էր թոնրի պէս։

Գիւղի երեխաները վազ էին տալիս նրա ետևից ու բղաւում։

— Բարով տեսանք, փալինքոտ Նազար, էդ հրեղէն ձիով աւագակները բռնելու կերթաս, բարի յաջողում։

Կատաղում էր Նազարը, երկայն մահակով հարուածում էր ամէն ընկած շարաճճիներին ու խրատում։

— Ջէներ դ, լակոտներ. ես ձեր հօր տեղն եմ, ձեր հօրեղբից մեծ մարդ եմ, ես Ադա Նազար եմ, սուսէք, թէ չէ էս թուրով ականջներդ կը կտրեմ։

— Մեղա, մեղա, Ադա Նազար, Ադա Նազար. բարով եկար, բարով եկար։

— Ապրիք, ձագուկներս, էդպէս ասէք՝ Ադա Նազար։

Եւ դոհ ու զարթ գնում էր Նազարը, ոէսի դրած կանգնում. ոէսի հրամանները տանում էր այս տունից այն տունը ու մի տեղ մածուն էր ուտում, մի տեղ մի օղի վայելում, մի ուրիշ տեղ մի հաւկիթ կուլ տալիս։

Օրը մթնում էր, և Ադա Նազարը կուշտ ու հաբրած՝ իր իշու հետ դառնում էր տուն։

Մի երեկոյ խեղճ կնիկը վառել էր օճախը, վրան դրել էր ջրով լի մի կաւէ աման, մէջն էլ մի քանի կարտոֆիլ տակ։

Նազարը ոտայի նման թիկն էր տալ խոտի վրայ, ամէն օրւայ պէս այսօր էլ գլուխը տաք էր, ատրանքի կաթ կար փորի մէջ. հա՛, թիկն էր տալ, շիբուխը վառել ու մրտաք էր անում։

— Ա՜յ կնիկ, միտք եմ անում աշխարքի բանը, մեր գնդը խնձոյց խելօք, բանդէտ ու կտրիճ մէկը չկայ. էս օր ոէսին ու գեղի իշխաններին, կուզեմ ասել, իշխաններին էնպէս խմատուն բաներ ասի, որ բերանները բաց մնային, հրմա, օգուտն ինչ. մարդ պիտի բախտաւոր ատոդի տակ ծնուած լինի։

Կիներ լաւ էք. սիրտ չունէք խօսելու. այսօր խեղճը տատուսից մինչև երեկոյ ոտքի վրայ էր եղել, հարևանի բուրդն էր լացել գետի մէջ ու ատոդիկ յոգնել էր։

— Կնիկ, ասել է ատոդը թէ՝ բախտը որ կայ, ոսկի հաւկիթ ածող մի կոյր հաւ է, որ անարժանների գոգի մէջն է իր ընկալը գնում. ինչ խմատուն խօսք...

Ադա Նազարը, քէֆը տեղը, խօսում էր ու խօսում, առանց պատասխան առնելու։

Հաց կերան, պրծան, պատրաստեցին քնելու. սովորոյթ էր, որ քնելուց առաջ միշտ իրար հետ երգում էին, իշուն նայում, խոտ տալիս ու դառնում. ինչ սովորոյթ. ճշմարիտն այն էր, որ Նազարը վախենում էր դիշերը մինակ դուրս գալ և դրա համար էլ ամեն անգամ ասում էր կնկանը թէ՝ կնիկ, դու ճրագը բռնէ, լոյս արա, ես տեսնեմ իշու առաջը բան կայ, թէ չէ։

Կինը ճրագը բռնել էր, Նազարը դուռը բացեց. ամառուայ երկնքի երեսին շողին էին տալիս ոսկի աստղերը։

— Կնիկ, այ կնիկ, թէ որ բախտ ունենամ, մեծ մարդ կը դառնամ ու էս աստղերի համբանքի չափ ոսկի կունենամ։

— Դուն իշուն նայէ, քեզնից քեզ պէս հէչ մարդ դուրս գալն էլ շատ էր. էդ էլ մեծ բախտ էր...

— Ի՞նչ կասես. թէ որ բախտը ուզենայ, ինձնից մեծ մարդ չի՞ կարող դուրս գայ։

— Հա՛, հա՛, թէ որ բախտն էլ ուզենայ, էլի քեզնից մարդ դուրս չի գայ, ուր մնաց մեծ մարդ։

— Հաստատ, վիրաւորուած հարցրեց Ագա Նազարը։

— Հաստատ ու հաստատ, փսլինքոտ։

— Ջէնդ կտրէ, դոռաց Նազարը։

— Կորի, գնա, հերիք մեծ-մեծ խօսիս, հոգիս հանեցիր, հարբած փսլինքոտ, ասաւ կինը, իսկոյն տուն մտաւ ու դուռը ամուր փակեց։

Խեղճ Նազարը մնաց դուրսը, վախից դողում էր։

— Էս էլ իմ քօռ բախտից. ո՞ր տեղ է տեսնուած, որ կնիկը մարդուն դուրս անէ։

— Քեզ պէս մարդը չունենամ էլ, կը լինի,— ձայնեց ներսից կինը,— ահա՛, սու թուրդ, սու մահակդ ու հայդէ, էլ աչքիս չերևաս. և պատի ծակից դուրս ձգեց Ագա Նազարի «զէնքերը»։

— Կնիկ ջան, ես ու՞ր գնամ էս կէս գիշերին,— աղաչեց Նազարը։

— Գլոդի ծոցը, ո՞ւր կուզես գնա, հոգիս ազատուի քեզնից։

Նազարը աղաչեց, պաղատեց, հնար չեղաւ։

— Ա՜յ քեզ բախտ. ճիշտ որ խելք ու կարիճութիւն դարտակ բաներ են եղած, տխուր տխուր ինքնիրեն խօսեց Նազարը ու իշու կողքին, շոր ադրի վրայ պառկեց ու չիմացաւ թէ ինչպէս քնեց։

Արևը դեռ չէր ծագել, երբ Նազարը խայթուածի պէս դարթնեց. իշաճանճերը թռչուել, լցուել էին նրա քիթ ու բերանի վրայ, ուտում ու կծում էին խեղճ Նազարին։

Նաղարը զայրացած, քնաթաթախ՝ տարաւ-բերաւ, ափով ամուր մէկ հատ զարկաւ իրեն քիթ ու բերնին։ Ու մէկ էլ ինչ տեսաւ—ճանճեր, ճանճեր, ամենքը սատկած, ջարդ ու փշուր եղած ճանճեր իրար վրայ թափուեցին գետին։

— Տօ, ես տղամարդ եմ եղել, մէկ զարկով հազարը սպանեցի...

Ու մէկէն ուրքի ելաւ, կարմիր մեծ թաշկինակը փռեց, մատները թաթխեց մելանի մէջ ու մեծ տառերով գրեց.

Աղա Նաղար, Աղա Նաղար,
Որ մէկ զարկով ջարդէ հազար։

Դրօշակի պէս թաշկինակը կապեց մահակի ծայրից, թուրը կախեց մէջքին, նստաւ իշուն, չիբուխը դրեց բերանը ու ծուխը ամպի նման բաց թողնելով ասաւ.

— Հողը էն տղամարդու գլխին, որ կնկայ անուն կուտայ։

Ու Նաղար, դո՛ւ Աղա՛ Նաղար, էշը քշեց, ընկաւ մեծ ճամբան, ու գնաց դրօշակը ձեռքին, թուրը մէջքին, չիբուխը բերնին, գլուխը՝ բարձր, փափախը՝ ծոծրակին, հպարտ ու աղավայել...

Անցորդները, թէ ոտաւոր թէ ձիաւոր, տեսնում էին Աղա Նաղարին, էշն ու թուրը, կարդում էին դրօշակը և վախից դողում էին։

Ամա՛ն, Աղա Նաղա՛ր, ոտքդ պագենք, խղճա՛ մեզի, խեղճ մարդիկ ենք, աղաչում էին ճամբորդները։

— Գնացէք ձեր ճամբան,—հրամայում էր Աղա Նաղարը. և ամենքից մի քիչ հարկ էր վերցնում, որից հաց ու ծխախոտ, որից օղի և չամիչ, որից արմաւ, նուշ և ուրիշ մանր-մունր բաներ։

— Սրանց դիմաց խելք ու կարիճութիւն բանեցնելը ինչ հարկաւոր է, ա՛յ Աղա Նաղար, խօսում էր Նաղարը ինքն իրեն հետ. բախտն է բերում սրանց իմ դուռը, թէ որ բախտն ուզենայ, ոսկու բարուաններ կը բերէ, առջևս կը թափէ։

Ու գնաց Աղա Նաղարը. շատ գնաց թէ քիչ՝ ճամբան գիտէ. մէկ էլ տեսաւ, որ սարի վերջերով փոշի է բարձրանում ու փոշու միջից զը՛նգ հա զը՛նգ, զը՛նգ հա զը՛նգ օրօրւելով, շորորւելով մի քարւան է գալիս. էն էլ ինչ քարւան, գլուխը սարի տակն է, պոչը սարի գագաթի ամպերի միջից նոր է ծայը տալիս։

— Թէ որ բախտ ունենամ, էս քարւանը իմս կը լինի, ասաւ Աղա Նաղարը։

Մօտեցաւ քարւանը. Աղա Նաղարը քարւանապետի կևռ թուրն ու երկայն նիզակը տեսաւ թէ չէ՝ վախից ճանապարհի կողքին մի ժայռի տակ կուչ եկաւ։

Քարանը եկաւ, հասաւ ժայռի դիմացը. մէկ էլ յանկարծ քարանապետի աչքին դիպան իշու սուրուլիկ ականջները ու դրօշակի ծայրը, և գոռաց.

— Ո՞վ ես, ո՞վ կայ էդտեղ, մարդ թէ սատանայ...

Լսեց Աղա Նազարը. մաղ մնաց լեղին պատռէր. «Էս տեղ խելքի ու կարիճութեան տեղ չէ, բախտ է հարկաւոր», — ասաւ ու դուրս թռաւ քարի տակից, ցցւեց քարանի առաջը.

— Ես եմ, ես՝

Աղա Նազար, Աղա Նազար,
Որ մէկ գարկով ջարդեմ հազար։

Քարանի գլխաւորը տեսաւ դրօշակը, կարդաց, լսեց աղա Նազարի ահռելի խօսքերը, զարմացաւ-վախեցաւ, դլուխը կորցրեց ու մէ՛կ էլ ուղտի վրայից իրեն վայր ձգեց Աղա Նազարի ոտքերի տակը։

— Աղա՛ Նազար, Աղա՛ Նազար, փէշդ եմ ընկել, քարանս քեզ լինի, իմ ու ընկերներիս կեանքը բաշխէ։

— Բաշխեցէ՛, — խրոխտ ձայնով ասաւ Աղա Նազարը, — գուր արունք անել չէ իմ ուզածը։

Քարանապետի ընկերները եկան, խոնարհ գլուխ տուին Աղա Նազարին ու քարանը բեռներով յանձնեցին իրեն։

Աղա՛ Նազար, հիմա հասատա որ Աղա՛ Նազար, էշը նստած անցաւ քարանի գլուխն ու մէն-մենակ ետևից քաշեց քարանը, կուշտ-կուր ծիսելով չիբուխը ու հետն էլ բարձրբարձր խօսելով.

— Ես ասում էլ չէ՞, թէ խելք ու կտրիճութիւն դարտակ բաներ են, մարդուս բախտ է հարկաւոր, բախտ. հիմի քարանս տանիմ քաղաք, ծախեմ, ինձի համար մէկ քէօշք ու սարայ շինեմ, ընկնիմ կողքիս, առքով-վաճառքով զբաղիմ։

Գնաց, գնաց Աղա Նազարը ու մտաւ մի ուրիշ մեծաւորի հողը։ Դու մի ասիր՝ այդ տեղերը աւազականոց է. Աղա Նազարն էլ միամիտ միամիտի պէս

Աւազակները ճանապարհի եզերքներին որսկան շների պէս դարան մտած, աչք էին պահում անցորդի. հենց որ տեսան Աղա Նազարին մէն-մենակ, դրօշակը, անծայր քարանը ծանր բեռների տակ, առանց մարդ ու պահապանի, վրաները սառը ջուր մաղեց։

Երկար ու բարակ խորհուրդ արին, վերջը աւազակապետը ասաւ թէ՝ դեմ ուժ կունենայ էդ մարդը, որ մէն-մենակ առել է հարուստ քարանը, ընկել է ոտ ու ձեռ. կարել անցել է հազար ճամբայ, հազար շար ու բարի է յաղթել. չէ՞, լաւն էն է, որ

երթանք, մեր թրերը դնենք Աղա Նազարի ոտքերի տակ, խընդրենք որ դառնայ մեր պետը, նրա անունով աշխարհ կը տիրենք։

Ամենքը մէկ խօսք եղան, ու քառասուն հոգին մէկ մարդու պէս եկան գլուխ տուին ու թրերը դրին Աղա Նազարի իշու ոտքերի առջև։

Աղա Նազարը դեռ գլխի չէր ընկել, երբ աւազակապետը ասաւ.

— Աղա՛ Նազար, Աղա՛ Նազար, մենք ամենքս էսուհետ քու ծառան ենք. էս կտրիճների պետն եմ ես. հիմի կը տեսնեմ, որ դու ես միակ արժանաւորը՝ մեր գլուխ-գլխաւորը լինելու։

— Ապրի՛ք, տղերք, ասաւ Աղա Նազարը հպարտ-հպարտ ու թուքը սրբելով.— ես, որ մենակ մէկ զարկով հազարը կը ջարդեմ, ձեզ հետ մէկտեղ՝ հարուր հազարը չեղածի պէս, մեր դէմ էլ աշխարհ չի կարող կանգնի։

Ու Աղա Նազարին վերցրին, տարան իրենց բերդը, որ արծուի պէս թառել էր հեռու սարի գլխին, աչքերը ամէն կողմ սրած։

Նստեցրին նրան փառքով օճախի գլուխը, հագեցրին խաս չիբուխը ու բարև բռնած կանգնեցին ոտքի։

«Էս անգամին էլ խելքս ու կտրիճութիւնս ինձի բանի պէտք չեկաւ. մարդս պէտք է բախտ ունենայ, բախտաւոր լինի, թէ չէ ուժով-զօռով, խելքով բան դուրս չի գայ».— մտածում էր Աղա Նազարը։

Աւազակները ասին.

— Աղա՛ Նազար, դու քու ազայութեանդ վայել հանգիստ նստիր, քու անունը մեզ վրայ լինի, հերիք է։

Ու քառասուն աւազակները Աղա Նազարի անունով զարկում էին քոչ ու քարուանն, արշաւում էին գեղ ու քաղաքներ, կտրում, թափում, ջարդում, աւար անում ու հարկ դնում վրանները։

Ժողովուրդները ահ ու սարսափի մէջ էին. Աղա Նազարի անունը հերիք էր մինակ գեղ ու քաղաք լեղապատառ անելու։

Ու հաւաքեցին գիւղ ու քաղաք. գնացին թագաւորի մօտ գանգատ թէ՝ չը գիտենք ո՞վ է մեր թագաւորը, ո՞ւմ պիտի հարկ տանք, երկու թագաւորի հարկ չենք կարող տալ, մենանք, մենանք. կամ դու եղիր հաստատ թագաւոր, կամ երթանք Աղա Նազարի դուռը։

Թագաւորն էլ դարձ հաւաքեց ու եկաւ, մի գիշեր բանակ

դրեց Աղա Նազարի բերդի դիմացը։ Առաւօտ աւազակները տեսան զօրքը և եկան ասին Աղա Նազարին.

— Աղա Նազար, Աղա Նազար,
Որ մէկ զարկով ջարդես հազար.

Դուն էս մեծ օրւայ համար էիր մնում, որ փառքդ շատնայ, անունդ ծովերն անցնի. թագաւորն եկել, անթիւ, անհամար վրան է զարկել, կռիւ կուզէ։

Վախից Աղա Նազարի սիրտն սկսաւ դողալ ու չիբուխի ծուխը բերնից զօռով քշելով՝ ասաւ.

— Շատ լաւ, պատրաստւինք, երթանք։

Ու իրեն մտքում խօսում էր նորից Աղա Նազարը. «Ես գիտեմ որ էստեղ էլ խելք ու կտրիճութիւն դարտակ բաներ են, քանի՞ գլուխ ունիս թագաւորի զօրքի դէմ ելնելու, բայց բախտն է բանը. թէ որ բախտ ունենամ, թագաւորին կը յաղթեմ, տեղը կը նստիմ»։

Թագաւորի զօրքը իրար անցաւ թէ՝ ինչպէս դուրս գանք Աղա Նազարի դէմ, որ մէկ զարկով հազար կը ջարդէ. մեզ համար մէկ է, ով ուզում է լինի թագաւոր. դուրս գան, կուլին իրար հետ, ով որ յաղթեց, թող նա լինի թագաւոր։

Եւ զօրքը բոլորով մէկ յայտնեցին թագաւորին թէ՝ թող ինքը մենակ երթայ Աղա Նազարի դէմ, Աղա Նազարն էլ մենակ գայ թագաւորի դէմ. թագը քաջին կը վայելէ, դուր արիւն թափելու ինչ հարկ կայ։

Եւ դրկեցին պատգամաւորներ այս մտքով Աղա Նազարի մօտ։

— Շատ լաւ, թող էդպէս լինի, հաշիւը մէկ է,—պատասխանեց կտրիճ Աղա Նազարը։

Թագաւորն էր. հրեղէն ձին նստած, թուրը քաշած, եկաւ կանգնեց դաշտի մէջին, Աղա Նազարն էլ սև էշը նստած, մէկ ձեռքին դրօշակը, միւսին ժանգոտ թուրը՝ եկաւ կանգնեց թագաւորի դէմ։

Թագաւորը տեսաւ Աղա Նազարի կերպարանքը, էշն ու թուրը, մտածեց. «Հը՛մ, հասկացանք, Աղա Նազարի կտրիճութիւնը իր խելքի մէջն է. էստեղ ուժի տեղ չէ, պէտք է նայեմ, ինչ որ նա է անում, էն էլ ես կանեմ»։

— Դո՞ւ ես Աղա Նազարը,—հարցում արաւ թագաւորը։

— Աղա Նազարի նման չե՞մ, ինչ է, չե՞ս տեսնում, կարդա՛ դրօշակս.—ասաւ Աղա Նազարը, ծնկները դողացին, ու վախից գլուխը թեքեց, պահեց իշու պարանոցի տակը.—«Հիմի կը զարկէ—մտածում էր Աղա Նազարը, խելք ու կտրիճութիւն էստեղ ինչացու է. մինակ բանը մնացել է բախտին»։

Այնինչ թագաւորն էլ Ադա Նազարի պէս գլուխը պահել էր ձիու պարանոցի տակ ու սպասում էր։ Ադա Նազարը տեսաւ, որ զարկը ուշացաւ, ուզեց իմանալ թէ ինչ կայ. տեսաւ, որ թագաւորը իրեն պէս վախեցել է... ու մէկ էլ աչք չթարթած՝ թռաւ գետին ու տուր թէ կուտաս՝ ժանգոտ թրով մի հատ թագաւորի գլխին, թագաւորը ժամանակ չունեցաւ գլուխը վեր բարձրացնելու, Ադա Նազարը զարկում էր հա զարկում, թագաւորը թուլացած ընկաւ գետին, պատռած գլխից արիւնը բղխում էր աղբիւրի պէս...

Ադա Նազարը վերցրեց թագաւորի թուրը, կտրեց գլուխը ու թագը վրան՝ բռնեց բարձր, զօրքին ու իր աւազակներին ցոյց տուաւ։

— Ապրած կենայ մեր նոր թագաւորը, Ադա Նազարը,—որոտաց զօրքը, և թմբուկներն ու փողերը թնդացրին լեռ ու ձոր։

— Ապրած կենայ մեր մեծը, մեր թագաւորը, Ադա Նազարը,—ուրախ-ուրախ գոչեցին աւազակները։

Եւ զօրքն ու աւազակները վազեցին դէպի Ադա Նազարը։

Զինուորները զէնքերը դրին Ադա Նազարի ոտքերի տակ, գլուխները խոնարհեցին գետին, հպատակութեան երդում տուին։ Յետոյ թագաւորի թագը դրին Ադա Նազարի գլուխը, ծիրանին ձգեցին ուսերի վրայ, հեծցրին թագաւորի նժոյգը, ու երգով, պարով, թմբուկներով, հազար փառքով տարան քաղաք։

«Ես ասի ու կ'ասեմ, որ բախտն է բանը», մտածում էր Ադա Նազարը՝ թագը գլխին ու թագաւորի վայել բարև էր առնում, բարև տալիս։

Ժողովուրդը, մայր ու մանուկ, տղայ ու աղջիկ, ծեր ու երիտասարդ, հարուստ ու աղքատ, առաջ էին եկել Ադա Նազարին. մեծամեծները ոսկէ մատուցարանի վրայ քաղաքի բանալիները աղ ու հացի հետ մէկտեղ ներկայացրին Ադա Նազարին։

Ու ամէնքը մէկտեղ ծունկ իջան և զօրքի պէս հպատակութեան երդում տուին։

Մեծ հանդէսներով, յաղթական ու ծաղկեպսակ կամարների տակով տարան Ադա Նազարին Քէօշք ու Սարայը։

Լողացրին վարդաջրով, անուշաբոյր իւղերով օծեցին ոտքից-գլուխը, փղոսկրէ սանտրով մազերը սանտրեցին, հագցրին գոհարազարդ արքայական զգեստներ և խնդրեցին գահ բարձրանալ։

Դրօշակը տարան Քէօշք ու Սարայի դարբասի ճակատին բարձր կանգնեցրին, որ յաղթական ծածանի՝ հպատակների վրայ՝ որպէս հովանի, թշնամիների վրայ՝ որպէս սարսափ։

Թուրը կախեցին գահի վերև նախկին թագաւորների սրխրագործ թուրերի մէջ տեղը։

Ազնիւ էշն էլ, որ Աղա Նազարի ամէն քաջութիւնների մէջ իր համեստ բաժինն ունէր, փաթաթեցին ոսկեթել ծածկոցներով, տարան արքայական ախոռը, տեղ տուին նժոյգների վերևը ու մսուրքի մէջ անպարպելի գարի՝ ընտիր, հատ-հատ մաքրած։

Աղա Նազար բազմեց ոսկի գահի վրայ. յաղթեալ թագաւորի նազելի և չքնաղ թագուհին եկաւ, խոնարհ գլուխ վէր բերաւ նոր թագաւորին ու ասաւ.

— Շնորհաւոր լինի թագդ, Աղա՛ Նազար, դո՛ւ իմ թագաւոր, դո՛ւ իմ անյաղթ ամուսին։

Եւ Աղա Նազարը թագաւոր-ամուսնու պէս գրկեց թագուհու նազուկ մէջքից ու տեղ հրամցրեց իր աջ կողքին։

Տէրութեան ամբողջ ժողովուրդն ընկաւ մեծ խրախճանքի մէջ, այսպիսի խելօք ու հզօր թագաւոր ունենալու համար։

Աղա Նազարն էլ իր աւագակներին կարգեց մէկին վէզիր, միւսին նազիր, մէկին դահճապետ, միւսին գանձապետ, մէկէլներին զօրապետներ ու նահանգապետներ։

Աղա Նազարը նստել, հանդիստ թագաւորում է, վէզիրը ու նազիրը կառավարում են երկիրը և օրէնքներ հնարում, դահճապետը գլխատում է օրինազանցներին, իսկ գանձապետը Աղա Նազարի պատկերով փող է կարում։

Զօրապետները նոր հողեր են կցում Աղա Նազարի հին հողերին, նահանգապետները գանձերի վրայ գանձեր դիզում։

Աշխարքով մէկ տարածւել է Աղա Նազարի մեծ անունը, ամէն բերան նրա գովքն է երգում։

Աղա Նազարի հին կնիկն էլ լսեց նրա համբաւը, եկաւ կարօտով գրկեց թագաւոր ամուսնուն, գովեց նրա խելքն ու շնորքը և թագաւորական հրամանով նստեց նրա ձախ կողքին։

Եւ տարին բոլոր հազար ու մէկ ջահերով վառած էին Աղա Նազարի Քէօշք ու Սարայները, տարին բոլոր խնջոյք կար մարմարէ կամարների տակ։

Դուրսը թնդում էին զօրքի կեցցէները, և թմբուկները որոտում թագաւորի փառքի համար։

Բազմել էր Աղա Նազարը գահի վրայ, թագը գլխին, ծիրանին ուսերին, չքնաղ թագուհին աջ կողքին և իրեն կնիկը ձախ կողքին։

Ոտքերի տակ շարուել էին տէրութեան մեծամեծները և նրանց սիրուն կնիկները։ Իմաստուններն ու գուսանները գարմանում էին ու փառաբանում Աղա Նազարի խելքն ու կարիճութիւնը։

Մեռաքսէ բարակ քօղերի մէջ մշուշած սիրուն աղջիկները և ոսկեգանգուր մանկլաւիկները պարում էին ու երգում։

Հազարան վարդերի անուշ հոտով ու հազարան բլբուլների անուշ երգերով հարբած էին ամենքը։

Աղա Նազարը ծխում էր մարգարտէ չիբուխը ու խմում հարիւր տարեայ գինին։

Խմում էր գինին ու թուքը սրբելով շոյում էր նազելի թագուհու այտերը ու մեղմիկ ասում ականջին.

— Տեսա՞ր, թագուհիս, ես ի՞նչ խելօք ու կտրիճ մարդ եմ, գլիր տեղից ելայ, յաղթեցի թագաւորին, սիրուն կնիկը առայ, դառայ թագաւոր. աշխարքիս երեսին, ասել եմ, էլի կասեմ, բախտ-մախտ գաւառակ բաներ են, խելք ու կտրիճութիւն է մենակ պէտք։

Ու թագուհին մանրիկ ժպտում էր ու թուշը դէմ անում Աղա Նազարին. քաջ ու կտրիճ Աղա Նազարն էլ անուշ պաչ էր անում ու խմում հարիւր տարեայ գինին։

Խմում էր ու դառնում իր կնկանը, բռթում էր նրա կողքը ու փսփսում ականջին։

— Տեսա՞ր, կնիկ, ես չէ՞ի ասում թէ խելք ու կտրիճութիւնը դարտակ բաներ են աշխարքիս երեսին. մարդս բախտ պէտք է ունենայ , մենակ բախտ... Ծիծաղում էր կնիկը ու կարմիր թուշը դէմ անում Աղա Նազարին, բախտաւոր Աղա Նազարն էլ գլիրի իրեն հին սովորութեան պէս կծում էր կնկայ թուշն ու խմում հարիւր տարեայ գինին։

Յետոյ թիկն էր տալիս գահի բեհեզեայ բարձերին, ծխում էր մարգարտէ չիբուխը, և միտք էր անում աշխարքի բանը ու քան-քան ծիծաղում։

Եւ մինչև այսօր էլ կայ ու կենդանի է Աղա Նազարը, նստել է գահի վրայ, ծխում է մարգարտէ չիբուխը, և միտք է անում աշխարքի բանը ու քան-քան ծիծաղում...

Ա. Խաչատրեան

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՔՆԱՐԵՐԳՈՒԹԻՒՆ

Ժողովրդական քնարերգութիւնը ժամանակակից քնարական բանաստեղծութեան նախնական ձևն է։ Քնարերգութիւնը, լինելով մարդու անհատական ապրումների արտայայտութիւնը, մեծ տեղ է բռնում ժողովրդական ստեղծագործութեան մէջ։ Մարդս ապրում է իր վշտերով և ուրախութիւններով, ուստի և ժողովրդի երգիչները երգում են իրենց ժամանակի մարդու ապրած զգացմունքները։

Ժողովրդական քնարերգութիւնը՝ դա պարզ, անարուեստ արտայայտութիւն է ժողովրդի զգացմունքների, ցանկութիւնների, մտքերի։

Ժողովրդական երգի ներքին առանձնայատկութիւնը զգացմունքի անկեղծութիւնն ու խորութիւնն է, քնքշութիւնն ու մեղմութիւնը։ Արտաքին առանձնայատկութիւնը՝ պատկերաւոր լեզուն է և յատուկ մակդիրները։ Ժողովրդական երգերի նմանողութեամբ գրել են մեր բանաստեղծներից մի քանիսը մեծ վարպետութեամբ, օրինակ՝ Յով. Յովհաննիսեան և Աւ. Իսահակեան։

Ժողովրդական քնարական բանաստեղծութիւնը շատ յաճախ արդիւնք է լինում հաւաքական ստեղծագործութեան. գիւղական հաւաքոյթներում մէկի յօրինած երգի երկրորդ կամ երրորդ տունը յաճախ յօրինում է մի ուրիշը, ապա երգը դառնալով շատերի սեփականութիւն՝ բերնէ բերան անցնելով աւելի կոկւում, յղկւում է, իսկ սերնդէ սերունդ երգւելով՝ ստանում է տեղի ու ժամանակի համապատասխան գունաւորում։

Ժողովրդական քնարերգութեան գերիշխող տարրը սէրն է և սիրոյ ողբերգութիւնը։ Սէրը օրհներգւում է և երջանկաբեր համարւում, երբ բաւարարւած է, հակառակ դէպքում նա մահաբոյն է յայտարարւում, դառնալով աղբիւր լքման ու յուսահատութեան։ Սէրը երգւում է առաւելապէս պատկերաւոր համեմատութիւններով։ Սիրոյ զգացմունքին նուիրւած ժողովրդական երգերի թիւը հայ բանաստեղծութեան մէջ շատ մեծ է։

Երկրորդ տեղը բռնում են աշխատանքի երգերը, որոնց մէջ ժողովուրդը դնում է իր աշխատանքի ուրոյն գրոշմը. դա հողագործութիւնն է և նրա հետ կապւած գութանը, եզները, գոմէշները, արտը, հողագործի յոյսերը ևն։

Ապա նշանաւոր տեղ են գրաւում պանդխտի երգերը։ Տնտեսական ու քաղաքական ծանր կացութեան հետևանքով հայը դատապարտուած է եղել թափառիկ կեանքի ու աքսորի։ Իր վիճակի դառնութիւնը՝ անհրապոյր օտարութիւնը, հայրենիքի, սեփական օջախի և իւրայինների կարօտը նա ամփոփել է այդ երգերի մէջ՝ համակուած վշտով ու թախիծով։

Բնութեան նուիրուած երգերն ևս հազուագիւտ չեն, ուր կամ բնութեան գովքն է արւում, կամ գարնան կարօտն է երգւում։

Որոշ տեղ են բռնում նաև հարսանեկան, օրօրոցի և թաղման երգերը, որոնց մէջ տարբեր երանգաւորումներով արտայայտւում են ամուսնութեան, մանկան օրօրի և մերձաւորի կորուստի համապատասխան զգացմունքները։

Ժողովրդական քնարական գործերի մէջ հանդիպում ենք նաև երգիծական ու ռազմական կտորների. վերջինների թիւը սակայն շատ սակաւ է համեմատաբար։

Սուրխաթեան

ՍԷՐՈՑ ԵՐԳԵՐ

ԵՍ ՍԱՐԷՆ ԿՈՒԳԱՅԻ

Ես սարէն կուգայի, դուն դուռը բացիր,
Ջեռդ ծոցդ տարար, ամի արիր լացիր։

Ես մի պինդ պաղ էի, դու մրմուռ լայիր,
Քո հրեղէն արցունքով ինձի հալեցիր։

Ես մի չոր ծառ էի, դու գարնան արև,
Քո սիրով ծաղկեցաւ իմ ճիւղն ու տերև։

Թէ ինձ չէիր առնի, ինչու՞ սիրեցիր.
Մի բուռ կրակ եղար, սիրաս էրեցիր։

ՀԱԲԸՐԲԱՆ

Տղա

Հաբբրբան։

Աղջիկ

Ջանէ ջան։

Տղա

Սիրել եմ՝ սէրն երեսին,
Անթառամ թերն երեսին.
Ով իմ սիրածն ինձ չի տայ,
Ատծու կերն երեսին։

Աղջիկ

Հաբբրբան։

Տղա

Ջանէ ջան։

Աղջիկ

Սարի թրթընջուկ թռչա,
Մեղրն ու շաքար քեզ մաղա.
Ինձ պէս նազանի աղջիկ
Քեզ պէս տղին ինց սազ ա։

Տղա

Պզտիկ աղջիկ, համ ունիս,
Զորեքդիմաց ծամ ունիս.
Խունջիկ-մունջիկ մի անի,
Ինձ առնելու կամ ունիս։

Աղջիկ

Դուխանդ հոլա, հոլա,
Դուխանիդ տակը քոլ ա.
Քանի դժուխիւն անես,
Քեզի առնողը տոլ ա։

Տղա

Ձեր տան տակին վար կանեմ,
Ձար ագռաւին քար կանեմ.
Թող իմ սիրածն ինձի տան,
Դժուխիւնս թարկ անեմ։

Աղջիկ

Ջուրը իր ճամբով կերթայ,
Ցողածը վարդի թերթ ա.
Ինձ սիրող կըտրիճ տղէն
Հաղարի մէջ մի բերդ ա։

Տղա

Բուսել ես բաղի մէջին,
Շամամի թաղի մէջին.
Դիշեր ցերեկ միալար
Դու ես իմ խաղի մէջին։

Աղջիկ

Աշուղի պէս խաղ ասա,
Բլբուլի պէս տաղ ասա.
Ինչքան որ գովես՝ արժեմ,
Իմ ժոր գովական փեսայ։

ԷՍ ՕՐ ՆՈՐԸ ՆՈՐԵԼ Է

Էս օր նորը նորել է
Նորել է, բոլորել է.
Ճար, քո լուսնակ երեսից
Իմ սիրտը մոլորել է։

Քան լուսինն ամպի տակով
Դու ջուր կերթաս դըրակով.
Հոգիս քեզ մատաղ լինի,
Սիրտս կէրես կըրակով։

Ջուրն իմ տան տակից բըխար,
Էրված սիրտս լուանար.
Ճար, քո տված խոցերը
Քո ձեռներով լաւանար։

ԱՆՏՈՒՆԻ ՍԻՐԱՀԱՐԱԿԱՆ

1.

Աղուոր մի սիրեր իմ ես
Լոյս երեսն երեք պէնկ ունի։
Երեսն է վարդի տերև,
Ով տեսնէ խելաց կու թափի։
Բերանն է շէքրով ի լի,
Պուկլենեն ի վար կու թափի։
Իր բերնին քաղցրութենէն
Բանկեր սրտիկս ու կէրի։

Ատ երեսդ ով արուներց։
—Ես ասոր պախճան իշայ,
Վարդենուոյն փշիկն արուներց։
—Զորնայ ան վարդին փուշը,
Ուր լուս երեսդ չարուներ։
—Մ՚ասներ, մ՚ասիծեր, մարիկ,
Մէկ աղուոր կըտրիճ մի պաղաւ.
Պաղաւ թը առնէ մուրատ,
Կանիծես, կելնէ պէ մուրատ։

2.

Բարի լուսուն դուրս ելայ,
Ես աղուոր կտրիճ մի տեսայ։
Աղուոր կտրիճ մի տեսայ,
Զարկաւ իմ երեսն արուներց։
Մարիկն ալ հարցմունք արաւ,

3.

Ես աս գիշեր դուրս ելայ,
Մութ գիշեր՝ չիկար լուսնակայ.
Իմ եարն ալ ըռատ եկաւ,
Ձեռքը կար ոսկուն մաշալա։
(Ջան՝)
Թեկս բռնեց տուն տարաւ,

Դուռ դրաւ, ախիկն ի վրան։
Ջգեց խուշ թիւյի գլօշէր,
Սէրէսէր բարձերն ի վրան։
Սազեր ոսկունքէն սեղան,
Հաւ խորուած, կաքաւն ի վրան։
Եմէ ուր ըսիմ անուշ,
Ես մէվզա բռնեմ քեզի նուշ։
Սէրը սիրողին վայլէ,
Աւ գինին անուշ խմողին։
Ինչեխ անտունի մ'ըսիմ,
Ուր թնդայ խատեռն ի ափիդ։
Խատեռն ի ափիդ թնդայ,
Ոսկեթել պեխերդ երեսիդ։
Սէր կայ մարդն ի քուն կանէ,
Սէր կայ մարդն արթուն կու պահէ,
Սէր կայ մարդն ի ժամ տանի,
Անաղօթք ի տուն կու բերէ։

4.

Երեսդ է արևի պէս,
Փէրչէմդ սումա թել նման.
Թուխ աչքդ ու բէման ընդ իդ,
Թարթինչուիդ հայ-օխի նման։
Պուկունքդ ալ քիրաղի,
Մէնէմշէ պէխերն ի վրան.
Եկուր նստինք միասին,
Սէր անինք անուշ խօսքերով։

* * *

Սէրն ինչ է, սեվդան ինչ է.
Թուղթն ինչ է, խալէմն ինչ է։
—Բարձր ծառ, անուշ պտուղ,
Ձեմ հասնիր, ֆայդան ինչ է։

ՎԱՐԴՆ Ի ՊԱՑԻԵ

(Վանեցոց բարբառով)

Վարդն ի պացւե Վանայ քեաղքի էկէյստաբ,
Աստուած սիրես մէկ օրօխկի ձիկը տար.
Թեա նազերով, քեա խօրօտիկ, տիւ վիրն ես.
Աշխար գիտի, ալամ գիտի, տիւ իմն ես։

Վարդն ի պացւե առաւտման խաւ-խուսոց,
Իմ եար բախչէն կայնե էրկու ձեռն ի ծոց.
Վարդն ի պացւե առաւտման շաղերով,
Իմ եար բախչէն վարդ կը քաղի մաղերով։

Վարդն ի պացւե Վարդիվերի կիրակին,
Բո սէրն ինդե մէջն իմ սրտի պրակին.
Թեա նազերով, քեա խօրօտիկ, տիւ վիրն ես.
Աշխար գիտի, ալամ գիտի, տիւ իմն ես։

ՍԻՐՏԴ ՏԱՔ ԱՐԱ

Սիրտդ տանք արա, տղա, մի պաղեր.
Բուռ մի մաղ իմ ծամիցն եմ կտրեր պահեր.
Նախշուն աղլուխի ճոթին եմ կապեր,
Իմ տալաս կապայի ծոցի ջորն եմ ծալեր դրեր.

Կապէս ի Վան քաղաք պահ եմ տեր.
Թէ մարդ իրեն՝ հետ կը ճամբեմ,
Թէ հաւք իրեն՝ թևը կը կապեմ։
Էկար ու ընցար, գիշեր չը մնացիր,
Շալդ ու շապիկդ թողիր դնացիր.
Լաւմ լաւմ չիստըկի.
Վարդի ջրով կիստըկի։
Բերնիս փուքով փոշին հանեմ,
Շուռ տամ ու ծալծալ անեմ։

ԽԱԼՏԵՑԱՅ, ԽԱԼԱՏ Մ'ԸՐԻ

Խալտեցայ, խալատ մ'ըրի,
Իմ ծոցում բազան թուցի.
Ելայ ետևէն գըցի
Կէս ճամբէն պագիկ մ'առի։
Ան պագին քաղցրութենէն
Բռնկեր իմ սիրտս ու կէրի.
Իմ սիրտս սիրուդ կ'էրի.
Ինձ կուտան շէրպէթ՝ թը խըմէ,
Ես ան շէրպէթն ինչ ընեմ,
Իմ վառած կրակն է քենէ...

Խալտեցայ, խալատ մ'ըրի
Գէշէն պագիկ մ'ուզեցի։
Ան գէշն ալ ի նազն ելաւ.
— Չեմ ի տար, անունըս կա-
ւըրի...
Աղուոր մի նեռսէն ի դուրս.
— Ի՞նչ մինէթ կընես ատ գի-
շուն.
Պագիկն աղուորէն ուզէ,
Ան գիտէ խահրը կտրիճին...

ՍԻԱՄԱՆԴՈՆ ԵՒ ԽԸՋԷՋԱՐԷՆ *)

(Պ ո է մ)

Սիամանդոն երազով էր Խըջէզարէին։
Երազի մէջ իւր մատնին փոխանակեր էր Խըջէզարէի մատնիկին։
Նոյն բանը պատահեր էր Խըջէզարէին ալ միևնոյն գիշերին։
Աղօթքան էր, կանուխ քան զառաւօտ արթնցաւ Սիամանդոն,
Հեծաւ իւր աշխոյժ ու հաւատարիմ ձին.
Գլուխն ուղղեց, արշաւեց դէհ Զըրընգացւոց էլին,**)
Իջաւ, հիւրընկալուեցաւ մի պատաւոյ կնոջ տակը։
Դամբ դամբի և զառնոցի ձայնը կը դղրդէր ողջոյն էլը.
—Ինչի՞ է այս ուրախութիւնը. և որո՞յ համար այս հանդէսը, ո՞ մամիկ։
Պատասխանեց պառաւն.
—Խըջէզարէի հարսանիքն է, ո՞ որդի, անոր հարսնառն էկեր է.
Այս եղաւ երեք գիշեր ու երեք ցերեկ այս ուրախութիւնը կը կատարուի։

---

*) Լեռնագաւառացի քրդաբնակ հայերի և քրդերի ստեղծագործութիւն։ Սիամանդո՝ հայ տղայի անուն է, Խըջէզարէ՝ քուրդ աղջկայ։

**) Ցեղ։

Սիամանդօն արտասուալից աղերսեց, խնդրեց պառաւէն,
Որ նշան մը իրմէն տանէ հասցունէ Խըջէզարէին։
Եւ հանելով մատնէն այն երազային մատանին, յանձնեց պառաւին։
Պառաւ յանձն առաւ, պատրաստեց նախշուն թաշկինակ մի,
Մէջը լից անկուտ չամիչ, անոնց հետ խառնեց մատանին։
Գնաց ի տես 'ւաչքի լոյս հարսնութեան Խըջէզարէին։
Խըջէզարէն կընդունի ընծայն, կը բանայ ու մատի ծայրով կը
խառնէ, կը խաղայ.
Եւ ահա չամիչներու կարգին մատանին կը հանդիպի աչքին։ Կը ճանչնայ։
Կը հառաչէ խորին։ Կուշաթափի. աչքեր կը մթնին. կը թուլնայ.
կիյնայ։
Կը թռնի պառաւն. մէկ ձեռքը կը դնէ Խըջէզարէի աչերուն,
Մէկալ ձեռքով կը շտկէ կախ ինկած գլուխն և կըսէ մորմոքալից.
— Քոռնան թող իմ աչքեր։ Խըջէզարէ, ուշդ գլուխդ բեր։
Բաց արա բիբերդ։ Բաց արա շրթներդ։ Ի՞նչ եղար։ Ի՞նչ տեսար։
Ի՞նչ բանի զարնուեցար...
Պառաւոյ պաղուկ ափէն, կարեկից ձայնէն սթափեցաւ Խըջէզարէն.
Ասաց.
— Մամիկ, Խըջէզարէն քեզ մատաղ. գիտե՞ս այս մատնիկին տէրն ուր է։
— Այդ մատնիկի տէրը իմ տունը իջևանած է։
— Կը տեսնաս որ, կրկնեց Խըջէզարէն, իմ հարսնխուր էկած է.
Երեք օր, երեք գիշեր լրացաւ. ալ ինձ ճար ու միջոց չը մնաց.
Գնա, մամիկ. գնա Սիամանդօին ասա, մէկ օր կայ ու մէկ հնարք.
Վաղ առաւօտ մօրս գերեզմանին վրայ կերթամ յուխտ. մինակ կերթամ.
Թող այն տեղը գայ Սիամանդօն. այն տեղը գիս կը գտնէ։ Գնա։

Դարձաւ պառաւն, Սիամանդօին ասաց իր տեսածն ու լսածը։
Գիշերանց եկաւ Սիամանդօն, այն գիշերը քուն չէր եղեր.
Էլաւ ու գնաց Խըջէզարէի մօրը գուսրէթէն ներս մտաւ.
Աչքեր ծանրցան, երկար արան իր գլուխը քաշեց, քունը գինքն
էկաւ Խըջէզարէն, գմբէթի մէջն անցաւ. կոխեց։
Շատ կայնեցաւ, շատ նայեցաւ, ինայեց.
Ձեռք չը պպցուց, ձայն չը հանեց.
Բայց Սիամանդօն կը քնանար։
Աչքերը անթարթ խոր կը քնանար։
Դարձաւ դառնց, մեղդրեց Խըջէզարէն զՍիամանդօն։
Եւ ջուխտակ մի ոսկիէ ճան իր ջորէն հանեց անոր ջորը դրեց.
Պառկը Սիամանդօին դարձուց ու երեսը իր հօր տունը։ Նա եկաւ։
Արևն կէսօրը նըշներ էր, Սիամանդօն իր աչքերը բաց արաց։
Չորս կողմն նայեցաւ, գլուխը ծեծեց ու պառաւոյ կոնը դարձաւ.
Ցըխուր կուգար Սիամանդօն։
— Մամիկ, ես գնացի ոչ ոք դտայ.
Քունը բռներ էր գիս. արթնցայ, մէկը չը տեսայ։
— Որդի, դու շատ միամիտ ես։ Քո ծոցն ու ջորը սրոներ ես,
ասաց պառաւն։

Որոնեց Սիամանդօն և ջուխտակ ոսկիէ ճանները գտաւ։
— Ահա, վրա բերաւ պառաւն, Խըջէզարէն քեզի թողած նշանը։
— Բայց այս բանը ի՞նչ խորհուրդ ունի։
— Քեզ հասկըցուցեր է թէ՝ դու դեռ մանուկ ես, սիրոյ մարդ չես։
Գնա մանուկներու հետ ճան խաղա. դու այս գործոյն մարդը չես։
Ամըչցաւ ու լալով աղերսեց զպառաւն Սիամանդօն,
Թէ՝ վերջին անգամ մ'ալ գնա, թող Խըջէզարէն վերջին խօսք մ'
ըսէ, ու ընեմ։
Գնաց ու պատասխան բերաւ պառաւն Խըջէզարէն.
— Եթէ Սիամանդօն մարդ է, եթէ սէր ընել գիտէ,
Ահա վաղը հանդիսով կը տանին զիս, թող հասնի,
Իր նժոյգը հեծած, նետն ու անեղը ուսին, գայ կենայ ճամբուն վրայ,
Արծուոյ նմանակ սրանայ, խուռն հեծելոց մէջէն յափշտակէ զիս,
Դնէ իր ձիոյն վրայ, քշենք զոյգ Սիփանայ գլուխը.
Այն տեղ հանգչինք, այն տեղ սէր անենք,
Ծածկուինք մըժ ու դումանի մէջը։

Մէկալ օր առաւօտ կուգար հարսն ու հարսնառն, ձիաւորեալ
սպառազէն.
Սիամանդօն իր նժոյգին վրայ կսպասէր,
Ինկաւ կէծակի նման ձիաւորաց մէջը,
Մէկ ձեռքով բռնեց Խըջէզարէի կակուղ մէջքէն,
Դրաւ իր կռնակը, ու երեքօրեայ գնացքը քշեցին մէկ լար։
Նոյն թավով կը քշէին ետևէն վազողները։
Եւ քան զամենքն աւելի կը մօտէր հէշէնբօղ ձիոյ հեծեալն։
—Ո՞վ է սա, հարցուց Սիամանդօն Խըջէզարէն.
Ո՞վ է սա, որ զինքն ու իր նժոյգը վտանգի է դրեր։
— Դա է նա, յորմէ դու իրեն մէկ տարուան նշանածն ես խլեր.
Սիրտն էրուկ է, Սիամանդօ, զինքն մի մեղադրեր։

Իջաւ Սիամանդօն, իր արան չորստակեց, Խըջէզարէն վրան
նստեցուց.
Հեծաւ, ետ դարձաւ, յիսուն ձի ու ձիաւոր վըր իրերաց թափեց.
Էկաւ, վերուց Խըջէզարէն, Սիփանայ գլուխը դէմ դիմեց։
Հանդչեցան ապահով։ Երանութեամբ կը ննջէր Սիամանդօն.
Խըջէզարէի ծնկաբարձին վրայ իր խոնջեալ գլուխը դրած,
Յանկարծ կոստնու Խըջէզարէի շարժումէն ու սարսռումէն.
— Ի՞նչ տեսար, ի՞նչ ունիս, աչքիս լոյս Խըջէզարէ,
Ըսէ, շուտ ըսէ. ինչու կը դողդղաս, ինչու կը սարսռիս։
— Զարմանալիք մի տեսայ այս անասուն վայրը.
Քառասուն վայրի եղներ էկան ջուր խմելու.
Մի կով և եթ կար այդ քառասունին հետը.
Ճակատամարտ բացին եղներ, և մէկը միայն՝ հէշէնբօղ եղն՝
Յաղթեց քառասունին, խլեց կովն իրենն։
Յիշեցի զքեզ, Սիամանդօ, յիշեցի զիս, ու մեր դիպուածը,

Տիշեցի քո սպանված յիսուն կարիճները...
Այս քանը դիս շարժեց, դողացի, ու սարսուռ դիս բռնեց։

Ջը համբերեց Սիամանդօն, էլաւ առաւ նետն ու աղեղն,
Տեսաւ, հասաւ հէշէնբօպ եզին, զարկաւ նետը,
Գլորեցաւ հէշէնբօպ եզն քարէն ի վար.
Առաւ դանակն ու վազեց վրան Սիամանդօն։
Վէրու եզն կատաղի ուժով կոտոշները ժաժեց,
Մրոտաց։ Ու զՍիամանդօն զընարէն ի վայր հոլովեց։
Ինկաւ Սիամանդօն կարնուոյ կտրոնի վրայ՝ կռնակէն.
Ինկաւ, և չորս թիզ կտրոնն ի դուրս ցցեցաւ կուրծքէն։

Եըջէզարէն կերթար Սիամանդօի հետոց ետևէն.
Արձանացաւ, կեցաւ զընարի գլուխը.
Այն տեղէն տեսաւ զարնուած եզին վիճակը,
Այն տեղը դրպաւ իր ականջին Սիամանդօի ցաւէն տքալու ձայնը,
Այն տեղը ձգուած գտաւ Սիամանդօի նետն ու աղեղը.
Վերցուց, խոնարհեցաւ, Սիամանդօին նայեցաւ ու այս ողբը լացաւ.
— Աղաչանք, հազար աղաչանք.
Սիամանդօի նետն ու աղեղը կուռ արծաթ է.
Սիամանդօ, քեզ ինչ պիտէր երթալ վէրու եզին ետևէ.
Ա՜խ, մի տքար, իմ Սիամանդօ, մի տքար...
— Մի լար, իմ Եըջէզարէ, մի լար...
Քո լացը ինձ աւելի ցաւ է... մի՛ լար...
— Կը տքաս, Սիամանդօ, ինչպէս չը լամ, խորին կը տքաս...
Ինչո՞ւ չանսացիր ինձի,
Թող երթան իրարու հետ սէր անեն, ապրին։
Մի՛ երթար
Վէրու եզն, վէրու եզն, անաւոր ու անգութ եզն։
Քո կոտոշներ երկաթի նման ամուր և դու սոսկալի.
Սիփանայ սարի գլուխը՝ սիրածն սիրողէն բաժնեցիր։
Սիփանայ սարի գլուխը գուման ու մրջ է,
Սիամանդօի նետն ու աղեղը խրժախրժ է։
Ժամանակէ հետէ ով լսեր է որսն զորսորդն սպաննէ...
Սիփանայ սարի գլուխը ժայռու ժայռ է.
Քամի մը կը փչէ, քամի մահաբեր ու սառն է։
Սիամանդօ, ինձ համբա մի տուր քովդ գալու։
Համբա մի ցոյց տուր, գամ քեզի հետ հոգի տալու։
Փայտատ ու թի բերէք, բերէք պալեր ու զընարներ շրջեցէք,
Եըջէզարէն ու Սիամանդօն մէկտեղ քարերուն տակ թաղեցէք...

Այս կըսէ ու աչքերը կը խփէ. զինքն ի վայր կը հոսէ.
Մէկ անգամ միայն կաւաղէ.
— Իմ Սիամանդօ...

Եւ Սիամանդօն հազիւ արձագանք մի կը տայ
— Ի՜մ Խըջէզարէ...

Եւ երկրքեանն մէկանց կը լռեն...
Կը մեռնին...
Հո՞ն են...

Այն տեղը երկու ծաղիկներ կը բուսնին համանման ամեն գարնան,
Եւ երկու թիթեռնիկներ կուգան, կը թառին
Ու կը թըուրուան այդ խորհրդաւոր ծաղկանց շուրջն ու վրան...

Մշակեց Գ. Սուտենեան

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԳԵՐ

ԳՈՒԹԱՆԻ ԵՐԳ

Զիգ տու, քաշի, ա՛յ եզը,
Ա՛բա, հօ, հօ, ա՛բա, հօ.
Լուծդ մաշի, ա՛յ եզը.
Ա՛բա հօ, հօ, ա՛բա, հօ.
Աստուած պահէ քու տէրը,
Ա՛բա հօ, հօ, ա՛բա, հօ.
Մինն էլ տաշի, ա՛յ եզը.
Ա՛բա, հօ, հօ, ա՛բա, հօ։

Մեր գութանը օղած ա,
Եզանց ուսը նօթած ա.
Վարէ վարը, ա՛յ գութան,
Հազիւ խոփը զօղած ա։

Շողքն ընկաւ ծմակին,
Աստուած կը տայ մշակին.
Սուր գութանը ծիր գնաց,
Տէր մշակը քամակին։

Սերմէ, սերմէ, ա՛յ մշակ,
Սո՛ւրբ ա, սուրբ ա քու փեշակ.
Մինը հազար տուր, Ա՛ստուած,
Քեզ ձէն կը տան տէր-մշակ։

ԳՈՒԹԱՆԻ ԵՐԳ

Լուսը լուսացաւ,
Բարին շատացաւ.
Աղօթարան բացուաւ,
Մեր ժամը լըցուաւ։

Եղնտրած քնի,
Գութանը բանի.
Գալիս, գալիս է,
Ակը լալիս է։

Մանկալը մանին,
Օղերն ականջին.
Հօտագն է լալիս։
Միջակն է գալիս։

Վարենք՝ շատանայ,
Տէրն ուրախանայ.
Թանի տուր՝ թե ա՛բա,
Շուռ տուր՝ սև ա՛բա։

Զօրանոս, հօտագ,
Ես քեզի մատաղ.
Վարենք՝ արտ անենք,
Զարիգ գարդ անենք։

Եկաւ ու գնաց,
Մեծ եզը մնաց.
Թևին գործ դնենք,
Շուտ գլուխ հանենք։

Շալակ ես առել,
Շալակդ առաւել.
Ծիր տուր, հա՛ ծրենք,
Հացն եկաւ՝ ուտենք։

Հողը սեւանայ,
Ու�դ հովանայ.
Հորիքն եկաւ,
Առաւելն եկաւ։

Կերանք կշտացանք,
Աստուած գոհացանք։
Մաճկա՛լ ջան, վարէ,
Արտը շատ քար է։

Սև հերկին աշէք,
Ա՜յ եզներ, քաշէք։
Ա՜յ առաւել ա,
Շալակդ առաւել ա։

Ա՜յ պապիս գութան,
Ակօսիդ դուրպան.
Դէ՛, գոմշի ճուտ ես,
Ա՜յ, ճիպոտ կուտես։

Շալակդ ծանր ա,
Քէլքդ շատ մանր ա.
Դարձէք աջ թևին,
Զօռ արէք Սևին։

Ակը խորին է,
Զարի փորին է.
Վէր քաշի, հօտաղ,—
Ենչալուդ մատաղ։

Ետակը լծենք,
Միջակը լցենք։
Միջակը հանենք,
Գութանից պրծնենք։

Ոիգնահովին է,
Գոմշի գովին է.
Ամպը հով արաւ,
Ցօղը ծով արաւ։

Ապրի հօտաղը,
Մորթենք մատաղը.
Հոռովելը տանք,
Առաւել դուրս գանք։

Վարենք մատաղի,
Զարկամ կատաղի.
Ակօսն ոսկի ա,
Մաճկալ խօսքի ա։

Հոռովել տէք,
Զարկամ փախցրէք.
Ելա՛ւ, հա՛, ելա՛ւ,
Գութանը եկաւ։

Սարին հովել է,
Տէրը գովել է.
Աստծուն փառք տանք,
Գութանը թող տանք։

Օրհնեալ ես, Աստուած,
Յիշեալ ես Աստուած.
Օրհնի՛ մեր գութան,
Օրհնեա՛լ է մեր բան։

ԳՈՒԹԱՆԻ ԵՐԳ

Վարենք վարելով.
Սև ակօսներ շարելով,
Հոռովէլ հո՛...

Հովեց՝ հովն էր անուշ,
Կարմիր թուշ՝ պաղն էր անուշ,
Հոռովէլ հո՛...
Եզներ, եզներ, կարմիր եզներ,
Մուալիկ գիշեր ուր գին գաղեր.
Գութնի թուղէն կախ դուղէր.
Հոռովէլ հո՛...
Հաց կերանք կշտացանք,
Մալը նստաւ գինջացաւ.
Մուալիկն առաւ զօրացաւ,
Հոռովէլ հո՛...
Վարենք, վարենք վար էնենք,
Դիւշմանի սրտին դարտ էնենք,
Հոռովել հո՛...

ՀՆՁՈՒՐԻ ԵՐԳ

Հով արա, Լեղւաբ, հով քամի,
Մեր մշակը հով կամի.
Մեր մշակը շոքել ա,
Որձ գոմշի պէս շոգել ա։

Լեղւաբ, ամպէ, ցօղ արա,
Էսօր քիչ ամպշող արա.
Շոքն ու տօթը թող արա,
Մի քիչ մեզ բանթող արա։

Արևը ինձ դաղում ա,
Ուշք ու միտքս շաղում ա.
Ծովինարը խաղում ա,
Բարակ անձրև մաղում ա։

ՔԱՂՀԱՆ ԱՆՈՂ ԳԵՂՋԿՈՒՀՈՒ ԵՐԳԸ

Քաղհան եմ անում մօտ սարին,
Մատաղ ըլիմ իմ եարին.
Մէջքին էրծաթ քամար ա,
Մեռնիմ ունքի կամարին։

Ուրաքս սարքած սրած,
Մաշիկս սաղրուց կարած.
Էս իմ կարմիր էրեսս,
Էրեսս էրեսին դրած։

Քաղհանում եմ կնջիթը,
Հագած եմ լաւ խաս չիթը.
Էրնէկ կըտամ էն օրին,
Որ կընկնեմ եարիս ճիտը։

Ճիտս եմ քցել իմ վզնոցը,
Թող կտրի սրտիս խոցը.
Էրնէկ կըտամ էն օրին,
Եարս մտնի իմ ծոցը։

Բաղ ու բաղչին բար պտի,
Վարդի ծառի խար պտի.
Ինձ պէս սիրուն աղջկան
Մի լաւ սիրուն եար պտի։

ՍԱՆՏԻ ԵՐԳ

Էն ով իկէ սանտի վրայ
Խազար բարին բաժին ի բաժնի վրայ,
Լաճին փոի, նստի վրայ։
Տակդ բուռի դաստէ ուէհան,
Զուր եփ, Խանէ, գուր եփ, Շանէ,
Աման պիրէք, խուս խանէք.
Դեղ ու դեղրանք վրէն ցանենք։

ԹՈՅԼ ՀՆԶՈՂՔ

Ալէքսան
ու իր տրսնևին փեսան,
քսան գերնդի
քառասուն յէսան.
Նստեն
սրեն,
ուտեն,
պառկեն,
քաղեն,
փոցխեն,
կապեն,
բարձեն.
Յետին անգամ համբեն, տեսան
Բարդէն պակաս էր քսան։

ԲՆՈՒԹԵԱՆ ԵՐԳԵՐ

ԳԻՇԵՐԵՐԳ

Լուսնակն անուշ, հովն անուշ,
Շինականի քունն անուշ։
Ծագեց լուսնակ երկնուց,
Հովի փողն էր անուշ։
Հօտաղ եզներ կարածայ,
Մաճկալ պառկեր՝ քունն անուշ.
Զըղզղուն քամին կը փչէ,
Ծովային հովն էր անուշ։
Դաշտեր ձորեր մեջեր են,
Ջրեր գլգլան՝ ձէնն անուշ։
Հաւքեր թառան իրենց բուն,
Բլբուլի տաղն էր առաջ։
Անմահական հոտ բուրէր,
Քաֆուր վարդի հոտն անուշ։

ԱՐԱԳԻԼ

Արագիլ, բարով եկիր,
Դուն, արագիլ, բարով եկիր.
Ըժեն գարնան նշան բերիր,
Դու մեր սրտիկ զարթ արիր։

Արագիլ, մեգի իջիր,
Դուն, արագիլ, մեր տուն իջիր.
Մեր խացի ծառին բունիր,
Դու մեր սիրուն...

Արագիլ, քե գանգըտիմ,
Հայ, արագիլ, քե գանգըտիմ.
Իմ հազարՁցաւերս ասիմ,
Սրտիս ցաւեր հազար ցաւեր։

Արագիլ, երբ գնացիր,
Դու մեր ծառէն երբ գնացիր.
Զուլումաթ հովեր արին,
Ծըծդուն ծըղկներս չորցուցին։

Պսպղուն երկինքն է մթներ,
Էն պսպղուն երկինք մթներ.
Մեր վերէն ձներ բըղեր,
Ծաղկաթափ ձմեռն հասեր։

Վարագայ սարէն բռնած,
Էն Վարագայ սարէն բռնած.
Ձիւն իջնէր ըմեն ծածկեր,
Կանաչ դաշտիկս ցուրտ աներ։

Արագիլ, մեր դրախտին,
Ձիւնիկ պատեր է մեր դրախտին.
Կանաչուն մեր վարդենիս
Ցամքեր պաղեր է ձըմըռէն։

ՏԱՂ ԳԱՐՆԱՆ, ԱՄՐԱՆ, ԱՇՆԱՆ ԵՒ ՁՄՐԱՆ

Գ ա ր ն ա

Ալ վայ եկին ան հաւերն,
Նոլ վայ եկին ան հաւերն,
կենէ եկին ան հաւերն.
Որ ամեն գարուն կուգային։
Հագեր են կանաչ կապայ,
Հագեր են կանաչ կապայ,
Հագեր են կանաչ կապայ.
Ի վերայ կանչին շուրջ կուգայ։
Երգէ, բլբուլիկ, երգէ,
Երգէ, խատուտիկ, երգէ,
Երգէ, քաղցրախօս, երգէ.
Ես քո ձայնիդ խև եղայ,
Քո ստեղծողիդ եմ ծառայ։

Ա մ ա ռ

Ալ վայ եկին ան հաւերն,
Նոլ վայ եկին ան հաւերն,
կենէ եկին ան հաւերն,
Որ ամեն ամառ կուգային։
Հագեր են կարմիր կապայ,
Հագեր են կարմիր կապայ,
Հագեր են կարմիր կապայ,
Ի վրայ վարդին շուրջ կուգայ։

Երգէ, բլբուլիկ, երգէ,
Երգէ, խատուտիկ, երգէ,
Երգէ, քաղցրախօս, երգէ.
Ես քո ձայնիդ խև եղայ,
Քո ստեղծողիդ եմ ծառայ։

Ա շ ո ն ա

Ալ վայ եկին ան հաւերն,
Նոլ վայ եկին ան հաւերն,
Կենէ եկին ան հաւերն,
Որ ամեն աշուն կուգային։
Հագեր են դեղին կապայ,
Հագեր են դեղին կապայ,
Հագեր են դեղին կապայ,
Ի վրայ ղէզալին շուրջ կուգայ։
Երգէ, բլբուլիկ, երգէ,
Երգէ, խատուտիկ, երգէ,
Երգէ, քաղցրախօս, երգէ.
Ես քո ձայնիդ խև եղայ,
Քո ստեղծողիդ եմ ծառայ։

Զ մ ե ռ

Ալ վայ եկին ան հաւերն,
Նոլ վայ եկին ան հաւերն,
Կենէ եկին ան հաւերն,
Որ ամեն ձմեռ կուգային։
Հագեր են ճերմակ կապայ,
Հագեր են ճերմակ կապայ,
Հագեր են ճերմակ կապայ,
Ի վրայ պաղին շուրջ կուգայ։
Երգէ, բլբուլիկ, երգէ,
Երգէ, խատուտիկ, երգէ,
Երգէ, քաղցրախօս, երգէ.
Ես քո ձայնիդ խև եղայ,
Քո ստեղծողիդ եմ ծառայ։

ՊԷՆԴԻՈՏԻ ԵՐԳԵՐ

ԿԻՆԸ ԻՐ ՊԱՆԴՈՒԽՏ ԱՄՈՒՍՆՈՒՆ

Գիշեր ցերեկ հէչ չես ելլեր մտացս,
Գլուխս բարձ դնիմ՝ կուգաս երազս.
Հէրամ արիր կերած հացս խմածս,
Աշխարքին չեմ փոխիր իմին սիրածս։
Անապ օր տի լայ առնիմ մուրատս։

Խալէմքէր պիտէի, քէսվէթտ[1]) առնէի,
Քանի կարօտնայի, վրատ նայէի.
Պէլքի ես ալ քենէ արզուս[2]) առնէի։

Գարնան պիլպուլի պէս պաղճան կլիջնէանք,
Թև թևի կուտայանք, չիֆթ ժուռ կուգայանք.
Երկիր կու հաւասէր, զատիլ չունէանք։

Զարկիր կրակ տուիր, կէրիմ կու վառիմ,
Ջրի պէս ծարուրցեր՝ ճամբատ կու նայիմ։

ԿՌՈՒՆԿ

Կռունկ, ուստի՞ կուգաս, ծառայ եմ ձայնիդ,
Կռունկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունի՞ս։
Մի վազիր երամիդ՝ շուտով կը հասնիս,
Կռունկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունի՞ս։

Թողեր եմ ու եկեր մլքերս ու այգիս,
Քանի որ ամ կանեմ, կու քաղի հոգիս։
Կռունկ, պահ մի կացիր, ձայնիկդ ի հոգիս.
Կռունկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունի՞ս։

Քեզ խապար հարցնողին չես տանիր տալապ,
Ձայնիկդ անուշ կուգայ քան զՋրի տոլապ։
Կռունկ, Պաղտատ իջնուս կամ թէ ի Հալապ,
Կռունկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունի՞ս։

Սրտերնիս կամեցաւ, ելանք գնացանք,
Այս սուտ աստնուորիս դէրդերն իմացանք.
Աղուհացկեր մարդկանց կարօտ մնացանք.
Կռունկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունի՞ս։

---

[1]) Պատկեր։
[2]) Փոփոգ։

Ոչ գլուր օրն գիտեմ, ոչ գկիրակին,
Զարկած է գիս շամփուրն, բռնած կրակին.
Այրիլս չեմ հոգար, ձեղնէ կարօտ եմ.
Կռունկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունի՞ս։

Պաղատատու կուգաս, կերթաս ի սէհրատ,
Թղթիկ մի գրեմ, տամ քեզ ամանաթ։
Ատուած թող վկայ լինի, քո վրադ.
Տարեալ հասուցես զայդ իմ սիրելեաց։

Գրեր եմ մէջ թղթիս, թէ հոս մնացի,
Օրիկ մի օրեր գաչերս չը բացի.
Սիրելիք ձեղանէ կարօտ մնացի.
Կռունկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունի՞ս։

Աշունն է մօտեցեր, գնալու ես թէտպիր,
Երամ ես ժողովեր հազարներ ու բիւր.
Ինձ պատասխան չը տուիր, ելար գնացիր.
Կռունկ, մեր աշխարհէն գնա, հեռացիր։

ԿԱՐԻՔ ԵՄ

Կարիք եմ ձեր դուռն եմ իկե,
Ձեր խուգիւ խատար դեխ ձիկ իրիշկէք.
Օրէն խաց մ' Ջրայ կտրեցէք,
Թէ որ էլ ուգեմ, ձիգ քեարկոծեցէք։

Որ չը մեռայ, ձեր նամէլ կանեմ,
Որ մեռայ, ձիկ տարէք թաղեցէք.
Նալիկ առղրմա պիրէք,
Լէշիկս ինե դրեցէք։

Տարէք իմ եարոջ դռնէն ընցուցէք,
Դուռ տփէք, եար տիւս խանէք.
Ծովծուան աչեր լացուցէք.
Զավրէս ծոցէս խանեցէք,
Ինոր ծովծուան աչերն սրբէք։

ԱՆՑՈՒՆԻ ՂԱՐԻՊԻ ՎՐԱՅ

Այ իմ սարերու հովիկ,
Վար իջեր դռնակն է զարկեր.
Արթնցայ ու վեր ինկայ,
Գիտցայ թէ խարիպս է եկեր։
Նորուկ ջահելուկ հարսնուկ,
Ուր իջեր դռնակն է բացեր։
Տեսեր ուր իր եարը չէ,
Տխրել է ու ներս է գացեր։
Կեսրակն ալ հարցմունք արեր.
—Հարսնուկ, քու ո՞ր տեղդ է
ցաւեր։
—Մարիկ, քու որդուդ սիրուն,
Իմ ամեն տեղիկս է ցաւեր։
—Մի լար, մի խառդիր[1]), հարսնուկ,
Գիր կանեմ որդիս կու բերեմ։
—Գիր անես, որդիդ բերես,
Աստուծու լուսուն տիրանաս։
Գիր չանես ու չի բերես,
Կանիծեմ ուր քար կու դառնաս։

ՀԱՐՍՆ ԱՌ ԼՈՒՍԻՆԸ

Ատ ո՞վ, ատ երդիքդ եկեր,
Ատ օտար հողը կու կոխէ.
Թը մարդ ես նը՝ վար եկու,
Թը շուշան ծաղկիկ գնալու։
—Ուչ մարդ իմ ի վար գալու,
Ուչ շուշան ծաղիկ՝ գնալու։
Պիւլպիւլ իմ ու ժուռ գալու,
Շատ երամ ունիմ գնալու։
Երթամ շատ երկիր ոնիմ,[2])
Շատ գարիպ տեսնիմ մէն ի քուն։
Ամենուն խարիպն է քուն,
Իմ ու քու խարիպն է արթուն։
—Խարիպս ո՞ր ճամբով կերթայ,
Ես անոր ճամբեկ պիտէի։
Որ աղբիր ուր ջուր խմէ,
Ան ջրին ակնեկ պիտէի։
Ցածնար ան ջրէն խմէր,
Ես ալ իմ մուրատն առնէի,
Երթար որ քաղաք իջնէր,
Ան քաղքին խանճի պիտէի։
Ուր գար ու խանը իջնէր,
Իմ էզիզ օտան տանէի։
Թևիկս ալ շլին ձգեմ,
Մանտրտիկ հետը խորբթիմ։

* * *

Գնամ ու գնամ կըսիմ,
Ես կերթամ, բարով մնացէք.
Ծաղիկ մ՝ ամանէթ կուտամ,
Վարդերուն մէջը պահեցէք։
Ամենքդ հաւասար նստէք,
Իմ տեղս ալ խոռ[1]) պահեցէք.
Ամենուդ խմածն անուշ,
Իմը՝ իմ տեղը վաթեցէք։

ԿԱՐՕՏԱԿԷՋ ՀԱՐՍՆ ԱՌ ԼՈՒՍԻՆՆ

Լուսիկ մի փրթաւ քարէն,
Կէսն է խոռ ու կէսն է բոլոր.
Քիչ քիչ ալ ի վեր եկաւ,
Բոլորէր զընոր թագաւոր։
Լուսիկ, դուն լուսով կենաս,
Թը կենաս պահիկ մը հուտա։
Երկու խօսք գանգատ ունիմ,
Այն գանգտիմ, դուն, նորէն
գնա.
Գնա խարիպիս ըսէ,
Չի կենայ ու ելլէ ու գայ։
—Խօսքունքդ ի գլխուս վրայ,
Զը գիտիմ դուռը խարիպիդ,
—Եկուր, նշանով ցոյց տամ,
Ուր գտնես դուռը խարիպիս։
Իմ եարն է շէքեր խանին,
Նուշ դրեր, շէքէր կու ծախէ,
Աչուին, թերաղու արեր,
Ունեցովը վեր կու քաշէ.
Էմմէնուն ամուն ամուն,
Իս տեսեր նը սուղ կու ծախէ։

---

[1]) Մի յուսահատիր։
[2]) Անցնիմ։

[1]) Պակաս, թերի.

*
* *

Պիւլպիւլը կու կանչէ պաղչէն պարի պէս,
Մէյ մաղ չի դար՝ խաղաղ բնէն խարիպէս.
Ինչնիս իմ կարօտցէր հայվա նարի պէս։

Պիւլպիւլը կու կանչէ ասօր գարուն է,
Մի խօսիք մարկինէր, սրտիկս արուն է.
Սիրական եար մ՚ունիմ, ան ալ հեռուն է։

---

*
* *

Ցածցի լեռներ, ցածցի քարեր վրայէդ անցնիմ,
Նազու եարս խուրպէթ կնրթայ՝ եաւէն հասնիմ,
Ամսապ օր ալ տ՚իլլի՞ որ ես եարս տեսնիմ։

ԿՐԿՐՈՒՆԻՆ ԵՐԳԵՐ

ՕՐՕՐ

Օրօր, օրօր, քուն ունիս,
Պէշիկաթաշը տուն ունիս.
Մարդրտէ եօրղան ունիս,
Ջևահիրէ բարձ ունիս։

Ոսկի օրրոց, կապ ունիս,
Շարուգընար շոր ունիս.
Օրօր կապեմ կախ օրրան,
Ծառէ ծառ շուքեր վրան...

Բաղչայիդ բաղչպանն եմ ես,
Բաց դռնակդ ուր մտնամ ես.
Մտնամ վարդ ու նուռ քաղեմ,
Արմդան դրկեմ դարիրիս։

Օրօր իմ, ատլաս ու խաս...
Դու քուն չես ու այբիս ես.
Լահուռ շալի լայբիս ես,
Երես երէք պէնկ ունիս,
Թագաւորի լայբիս ես։

Բիւլբիւլն ի վարդի շրջոյն,
Կուտ կուտէ, արցունք կու թափէ.
Կուտ կուտէ, արցունք կու թափէ,
Իր ընիկն ու տեղիկ կուզէ։

Օրօր, օրօր քներ ես,
Ծածկեր եմ՞ քրտներ ես.
Երեսիդ շարը դէն տանիմ,
Վարդի նման բացւեր ես։
Վարդերու անույշ հոտոյն,
Պառկէ, եղիր անույշ քուն։

ՕՐՕՐ

Օրօր կանչեմ իմանաս,
Պառկիս անուշ քնանաս.
Քնանաս ու մեծանաս,
Մեծնաս ու մեծ մի լընիս,
Բոլորիս ու գեղ մի լընիս.

Ան գեղն ուր մեծ չի կենայ,
Ան գեղին մեծը դուն լընիս։
Դուն լընիս անտառ մորուն,
Զարնես քօքիկդ խորուն։
Քօքիկդ խորուն զարնես,
Ծառդ շուք անէ ճեղերուն։
Ծառ շքեր, վրայ եկէք,
Շուք արէք մեր պիւլպիւլներուն։

Օրօր օրօր, այրիս ես,
Լանուռ շալի լայրիս ես.
Լանուռ շալն ուր ինչ կանին,
Թագաւորի լայրիս ես։

Օրօր օրօր եղներն ին եկեր,
Եղներն ին եկեր, լեռներն ին իջեր.
Քեզ ալ անուշ ընիկ ին բերեր.
Բերեր քու ծով աչերդ ին լցեր.
Անուշ քընովդ ին քնացուցեր,
Քաղցր կաթնովն ին կշտացուցեր։

Օրօր օրօր քուն ունիս,
Պեշիկին մէջ տուն ունիս.
Ոսկիէ որրան ունիս,
Մարգրտէ եօրղան ունիս.
Ճէվայիրեն բարձ ունիս,
Շար ու շամաթի*) շոր ունիս։

ՀԱՐՍԱՆԵՔԱՆ

ԺԱՄԷՆ ԿՈՒԳԱՅ ՋՈՒԽՏ ՄԻ ՖԻՏԱՆ

Ժամէն կուգայ ջուխտ մի ֆիտան,
Եղնենք տեսնենք մի՞ը կուգան,
Առնենք եղնենք վերը օտան։
Բարով եկիր դուն ի մերը.
Առջիդ քաշեմ սերն ու մեղրը։
Քալէ, հարսնուկ, քալէ, հարսնուկ,
Վրայ խալուն քալէ, հարսնուկ,
Քալէ ու մանտրտիկ քալէ,
Ալուկ փեշերդ վեր ծալէ։
Թագաւորի մաբ, դուն դուրս էկուր.

*) Բարակ.

Քու թագուոր որդիդ էկեր է,
Քեզի կաքուու ձագ բերիր է,
Թէդ գնացեր, ջուխտ էկեր է։
Թագուոր, գովեմ գլխուդ ի վար,
Էռաջ ես քո բոյիկդ ըսեմ.
Ուր սէլվիի ծառ կու նմանի։
Անկէց ես քու երեսդ ըսեմ,
Ուր լուսընկի կալ կու նմանի։
Անկեց ես քու բարշամդ ըսեմ,
Ուր սրմայի թել կու նմանի,
Հայ իմ հայ աննըման աղուոր։
Աղուոր, քեզ որ մարն է բերեր,
Ան թուխ աչեր մարն է բերեր,
Մարն է բերեր մեզի համար,
Մենք ենք եկեր քեզի համար։

—

Ինամի, տունդ շէն կենայ,
Այս դռնակդ բաց մնայ.
Ջուխտակ որդիքդ ապրած կենայ։

—

Մի լար, մարիկ, մի լար, ես ալա տի գամ.
աշխի, նայ նայ նայ.
Ութ օրն ուր լմննայ, ընկերովս տի գամ.
աշխի, նայ նայ նայ.
Տարին ուր լմննայ, գրկովս տի գամ.
աշխի, նայ նայ նայ։

—

Մի լար, մարիկ, մի լար, ես ալի տի գամ,
Ասկէ տասն հինգ օր էրկովս տի գամ։
Աղջիկ մի կու տանին լալով ու լալով,
Գլոխը փաթթեր են լահուռի շալով,
Ծամերը հուսեր են սրմայի թելով։

—

*
* *

Առաւօտուն կելլես՝ երեսդ վըլա,
Էպիշում մաղերդ դրեր ես հինա.
Ատ աղուոր երեսէդ պաղ մի տուր հըլա։
Ծածկէ թոռ զիլիֆդ, մարդը կէրես դուն,
Ճերմակ ճէվահիր ես, անդին քար ես դուն։

Եկուր, աղուոր աղջիկ, հարս եղար մեզի,
Եաղութ, զմրութ, անդին քար եղար մեզի։

Արի, ծով ծով աչեր, դիս մի լացըներ,
Ձիս շատ է լացուցած, դուն մի լացըներ։

Առաւօտուն կելլես, արև կու ցաթէ,
Բերանդ ուր կու բանաս, մեղրը կու կաթէ.
Եկուր նստինք, անուշ անուշ խորատէ.
Եկուր աղուոր աղջիկ, հարս եղար մեզի,
Եախութ, զմրուխտ, անգին քար եղար մեզի։

Առաւօտուն կելլես պաղ պաղ հովերուն,
Պիւլպիւլ չատրը զարկեր՝ վարդին բոլորուն.
Ո՛ր վարդէն կառնէ, ո՛ր քովերուն...

Վերէն ի վար կուկաս, բարակ ձանով ես,
Հետս չես խորրթեր, խախմ քէնով ես.
Աղուորին սոյէն ես այա[1]) խռով ես։

Նազ արէ, նազ արէ, նազդ վերցնիմ,
Այա քեզի նուշ ու շէքէր կերցնիմ.
Հագցնիմ, կապցնիմ, մարոնցդ խրկիմ.
Մի լար, աղուոր աղջիկ, աչուխդ կաւրրի,
Քեզ պզտիկ կարգողին տնակն աւրրի։

ՓԵՍԱՅԻՆ ՀԱԳՑՆԵԼԻՍ

Ան բարձր լեռներն ի վար, մեզի բարկ արև մին է ցաթեր,
Ըմմէնուն երդիքն ի վար, մեզի դուռն ի ներս է ճառագեր.
Ըմմէնդ ի վրայ եկէք, թագաւորին կապան կարեցէք,
Լուսնկան աստառ արէք, արեգակն երես ձևեցէք,
Ան մոյ[2]) ու խոշոր աստղեր թևերուն տիւկմէ[3]) կարեցէք,
Հայ իմ պատիկ թագուոր, կլորեր ես մեծ ծամերուն,
Ծովերդ ի երդիքն ելեր, կախեր է խոշոր ճիղերուն,

ՀԱՐՍԻՆ

Հաբանուկ, քե խրատ մի տամ,
Թէ ուզելէթ ունիս նը մրուէ,
Զրտ ականջտ իս արէ,
Զինչ ըսիմ նը ան արէ.
Ուր գան ու հազար ըսին,
Հազրէն մի խօսք քունկ մի խօսէ։
Ան ալ՝ չը գիտիմ ըսէ,
Դուն հազար չարէն խալիսէ։
Մեր տունն Աստուծու շինած,
Աստուծու շինած ու օրհնած.
Հայը Աբրահամի քարուկը
Մեր տան թէմէլն է դրած։

---

[1]) Միշտ. [2]) Մանր. [3]) կոճակ.

ՊԵՏԵՐԳ

ՄՕՐ ՄԱՀԵՐԳԸ

Ծամբորդ կուգայ, ինչ գումաշ ու բեռներ կայ,
Արանիս ալ ինչ ծովեր ու լեռներ կայ։
Տուն էկուր, տուն էկուր, տղաս, տուն էկուր,
Աշխարհս ոչինչ է, մեզի ալ մեռնիլ կայ։

Հաներ ես կարմիր, հագեր ես ալըդ,
Ես քենէ կարօտ եմ, ինչ անեմ մալըդ.
Սաղլըդով չէր բերեր քու բերող մարըդ.
Զարկիր, կրակ տուիր, կէրիմ, կու վառիմ.
Ջրի պէս ծարուեր եմ, ճամփուդ կու նայիմ...

Ղարիբ մեռար, դարիբ թաղեցին,
Ղարիբ լցին հողիկն ի վրադ.
Եկին օտար մարեր ի վրադ.
Եկին օտար քուրեր ի վրադ։

Եկին ու վայ բերին ծնողին,
Վայ բերողին, վայ մեծցնողին.
Վայ լուսալուս արթուն կեցողին,
Մաղկատը սրտին, ծիծը տուողին։

— Եամանն, եամանն, իս Ուսկուտար անցուցէք,
Սև ծովը ճեղքեցէք, ճամբան ցըցուցէք,
Տարէք իմ մօրս դունակ, վար դրէք, պօհ մի լացէք.
Եարուկս ալ վար իջուցէք, հիւսած ծամեր քակեցէք,
Քուրուկս ալ վար բերէք, ծարուրած աչքն լացուցէք,

Զըկան... չեն գար...

Եկու որդեակ, զիս մի լացուներ, ես շատ եմ լացեր, ալ մի լացուներ.
Իմ դարդու սրտիկս մի թնդացուներ...
Նուրին ու Թուրին կըսեն. անի մեր բախչան լինի.
Նուրին ու Թուրին կոտրտեցաւ, պաղուկ ջրիկ վոթըթեցաւ.
Ալ չեմ երթար բախչան վարդենուոյն տակը.
Ինկեր է մատնիս ջէւահիր ակը։
Ա՜հա, ինչ դժուար ցաւ է էօլիմին խակը...

Պառկեր է որդիկս կու կանչէ եամանն.
Եամանն մարիկ, եամանն, զիս ասկէց վերցուցէք,
Աջ ու ձախ դիուս, կողերուս բարձիկներ դրէք։
Ջուխտակ աղաւնու նման էր երեսիդ բէնկը.
Ոչ Հայաղգուոյն մէջ կար, ոչ Տաճիկն ունէր, ոչ Ֆրէնկը.
Ղալամքնար չէի, որ հանէի աննման ռանպդ։

Լամ, դահերու վրայ հերկ անեմ.
Արցունքովս ցօղեմ, ցաւերով ցանեմ։
Սուրբ Աստուածածնայ ծոցէն մարգրիտ մի ինկեր, գին չունի,
Երնէկ գտնողին. վայ էկեր կորուսողին։

ՔՈՅՐՆ Ի ՄԱՀ ԵՂԲՕՐՆ

Աղբարն է քրոջ սրտին կրակը,
Անուշ խօսք մ'ուր խօսի՝ կառնէ մուրտարը։
Եկուր, ա՛ղբար, եկուր, իմ աղբիւրի ջուր,
Սիրուդ չիմ կշտացեր, ո՞ւր գնացիր դուն։
Սիրուդ մութն իմ նատեր, լուս մին արէ դուն,
Սիրուդ պատն է փլեր, եկո՛ւ շարէ դուն։

ՄԵՌԱԾ ՂԱՐԻՊԸ

Եկին ու բերին խապար,
Զէօլ խուրպէթ մանուկ մ'է մեռեր.
Մեռեր, մարդ չի իմացեր,
Իրեք օր խանն է մնացեր.
Հարկի պազիրկան մ'է եկեր,
Այն խանին դռնակն է բացեր,
Բացեր ու ներս է գացեր,
Մօրը մէկ մանուկ մ'է մեռեր։
Համայնքերուն ձան տուեր,
Առեր ծովեզերն է իջեր,
Ծովէն ալ ջրիկ առեր,
Մանուկին բոյն է լըւացեր։
Դլխուն փոշին վար առեր,
Սև բոյին պատէնք է ձևեր.
Փէրչէմէն մազիկ առեր,
Խարիպին պատէնքն է կարեր։
Եկին օտար մարերն ի վրան,
Եկին օտար քուրերն ի վրան.
Եկին ու վայ բերին բերողին,
Վայ բերողին, վայ անցունողին։

ԻՍԱԽԵՆ ՄՕՏԻԿԵՆԵՔ

ԱՐՏՈՒՏԻԿ

Արտուտիկ
Նախշուն տօտիկ.
Իջնեն կալեր,
Գողտիկ մողտիկ,
Ընտրեն քարեր,
Ուտեն կուտիկ,
Կը ծըլուլան
Կըլթիկ կըլթիկ։

ԲԵԿՈՒԱԾ ՍԻՐՏ

Սիրտս նման է էն փլած տներ,—
Կոտրեր գերաններ, խախտեր է աներ.
Բուն պիտի դնեն մէջ վայրի հաւքեր.
Երթամ՝ ձի թալեմ էն դարձնան դեռեր
Ընիմ ձկներու ձակերացն կեր։

Սև ծով մ'եմ տեսե, սիպտակն էր բոլոր.
Ալին կը դարձնէր, չէր խառնի յիրար.
Էն ո՞ր է տեսե մէկ ծովն երկթաւոր,—
Անտունի սիրտն է պղտոր ու մոլոր.
Ա՜խ, իսկի մի ընիք սրտիկ սեւաւոր։

ԼԱԳԼԱԳ

— Լաղլագո, հաճի Բէգո,
Յուստէ՞ կիգաս։
— Սև սարերուց։
— Ի՞նչ ես բերեր։
— Թուղթ մը սապոն։
— Ո՞ւր կը տանես։
— Սուկայ Մամուն։
— Որ ի՞նչ անի։
— Լաչիկ լըւայ,
Թալի գլխուն
Ելնէ գարուն։

ԱՂԻԷՍ

Յօրէս եկաւ մէկ մէկ ուտի,
Աղէսն էկաւ լանճիկ լանճիկ,
Ոտեր ունէր կարճիկ կարճիկ,
Սիրտը ուզեց հաւի քարճիկ։

Ո՜ւյ իմ չալբք-մալիկ, չալմալալիր,
Զալմ պտորիկ, չալմաալրպիկ, տոբշտանոտ,
Ծրմպլաճակատ, խաշխատրպիկ, տուղիկ ճուտեր։

Աղէսն պառկեց աղբի տակին,
Աչքեր ձգեց չաղ հաւի ձագին,
Նետով կը տամ աչքի տակին։

Ես մի բատուկ գաբկած պահեմ,
Ելլեմ երթամ ձագերս հանեմ,
Ես էն աղէսն կու սպանանեմ։

Ի ՎԵՐԱՅ ԱՂԻԷՍԻՆ

Աղէ՛ն կուգար լեռնէն ի վայր,
Եւ գայր, իջնոյր երկիրքն ի վայր,
Ինձ մեծ-մեծ հաւ պիտի ու դէր.
Սիրո՛ւն աղէս, ագին ծաղի՛կ։

Աղէ՛ն նստեր քարին անխոս,
Ուսայ եղայ մարմնով պիրոս,
Ինձ կուպիտի կարմիր խօրոզ.
Սիրո՛ւն աղէս, ագին ծաղի՛կ։

Աղէ՛ն հագեր լուրջ ու դեղին,
Ի շուրջ կուգայ շուրջը գեղին,
Աչք է դրեր մամկայ եղին,
Սիրո՛ւն աղէս, ագին ծաղի՛կ։

Աղէ՛ն նստեր վերայ դիզին,
Ջագին կուեր վերայ վգին,
Աչք է դրեր մամկայ ընկլզին.
Սիրո՛ւն աղէս, ագին ծաղի՛կ։

Աղէ՛ն հագեր բուրքով մուշտակ,
Ուսայ եղայ մարմնով հրեշտակ,
Ինձ կուպիտի ժամի շուշտակ.
Սիրո՛ւն աղէս, ագին ծաղի՛կ։

Աղէ՛ն ասաց վարդապետին,
Ձքեզ տի հանեմ վերայ փայտին,
Անցուցանեմ այնդին դետնին.
Սիրո՛ւն աղէս, ագին ծաղի՛կ։

Ո՛վ աղէսուկ, փոքրիկ դաղան,
Ոտերդ կարճ ու խիստ վաղան,
Շներն ամեն քեզ չը հասան.
Սիրո՛ւն աղէս, ագին ծաղի՛կ։

ԳԻՆԵՄՈԼԻՆ

Դուն խմէ երկու հատիկ,
Ուր գառնաս նուան հատիկ։
Մի խմեր իրեք հատիկ,
Ուր դպնիս պատէ պատիկ։

ՄԱՅՐԸ

Մարիկն ինձի կուգեմ,
Ես լամ նը՝ ան նուտի։
Ի՞նչ անեմ օտար մարիկն,
Ես լամ նը՝ ան ծիծաղի։

ՀԻՆ ԵՐԳԵՐ

Ուստի կուգաս, վարի եգուն,
Կոզ մի խաւոզ առի գոդուն.
Պագիկ մի տուր, մօրկանդ հոգուն։
Աղուր նանՕյ, նանՕյ, նանՕյ,
Ես կու սիրեմ քեզ էմմէն օր։

Ուշիկ ուշիկ, կլոր թուշիկ,
Կլոր թուշիկ, պագդ անուշիկ,
Ծերմկուկ ես գեղ և՛ անուշիկ։
Աղուր նանՕյ, նանՕյ, նանՕյ,
Ես կու սիրեմ քեզ էմմէն օր։

Ուստի կուգաս դուն կալերուն,
Զըլլա ըռաստ գաս գալերուն.
Քու մարդդ քեզ ինձի չի տար,
Թող դընէ ներքև սալերուն։
Աղուր նանՕյ, նանՕյ, նանՕյ,
Ես կու սիրեմ քեզ էմմէն օր։

Գեղին վերի հերկին ներքև,
Շապկեկըս սիրմէն իմ ներկեր.
Սիրեր իմ չիմ կրնար թարկեր։
Աղուր նանՕյ, նանՕյ, նանՕյ,
Ես կու սիրեմ քեզ էմմէն օր։

Աղջիկ, քու անունդ է խասեր,
Եկուր երթանք թութն է հասեր.
Պագեկ մ՚ալ տուր, մօրդ մի ըսեր։
Աղուր նանՕյ, նանՕյ, նանՕյ.
Ես կու սիրեմ քեզ էմմէն օր։

Աղջիկ, քու անունդ է Եախութ,
Քենէ պաղ ուզելն է վախուտ.
Երեկ գողցայ ես քու չախուդ։
Աղուր նանՕյ, նանՕյ նանՕյ։
Ես կու սիրեմ քեզ էմմէն օր։

---

* * *

Քիչ մը պարբս դարձնիմ, կիւլիւմ եար,
Էրթամ եարբս հարցընիմ, կիւլիւմ եար։

Էկուր երթանք պախճան ի վար, պատի հարս,
Ես վարդ քաղիմ, դուն ըռահան, պատի հարս։

Ատլաս Ֆիսատան մոռ փոշի,
Օրը սիրաս կու մաշի.
Քու մէկ պագդ չեմ ի տար
Հարուր հազար դուրուշի։

Մառնուս ակը մաւի է.
Աս ի՞նչ գիժար տարի է։
Շատն աղջիներ, բան բանեցէք,
Կարգըւելու տարի է։

ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ

ԷՊՈՍ

Գրական տեսակների մէջ էպոսը հնագոյնն է, որ ունի գլխաւորապէս դիւցազներգական բնոյթ։ Դա գրական այն տեսակն է, որի ծագման աղբիւրը պիտի որոնել նահապետական կենցաղի մէջ, երբ միապաղաղ, միատարր ժողովրդի կեանքում տիրողները թագաւորներն ու իշխաններն են, երբ դորշ մասսայի վրայ բարձրանում են նրանց առանձնակի կերպարանքները։ Առաւելապէս հովուական և երկրագործ կենցաղի շրջանում ժողովուրդը ապրում է միալար կեանքով, ըստ որում տիրողների բարոյական ու հասարակական ինքնագիտակցութիւնը արդար ու բնական համարելով՝ ժողովուրդը իշխող դրութեան դէմ՝ ոչ ըմբոստացում և ոչ էլ քննադատական վերաբերմունք է ցոյց տալիս։ Այդպիսի պատմական շրջանի գրական ձևը, տեսակը առաւելապէս դիւցազներգական վէպն է, որի մէջ երգչի անհատականութիւնը գրեթէ բացակայում է, իսկ բանաստեղծութեան առարկան իշխող հերոսն է կամ պատմական մի խոշոր էպոպէա։

Դիւցազներգական վէպերի մէջ յայտնի են Հոմերոսի *Իլիականն* ու *Ոդիսականը*, հնդկական *Մահաբարատան* և *Ռամայանը*, ռուսական *Բըլինաները՝ Սվեատոգորի*, *Իլիա Մուրոմեցի* և այլն, ֆրանսիական *Ռոլանդի երգը*, գերմանական *Նիբելունգների երգը*, ֆիննական *Կալէվալան*, հայկական *Սասունցի Դաւիթը* և այլն։

Դիւցազներգութիւնների մէջ հանդէս են գալիս գլխաւորապէս պատմական կամ մոտացածին անձնաւորութիւններ, որոնք անպատճառ թագաւորներ և իշխաններ են։ Ըստ որում համընթաց նկարագրւում է տիրող դասի կեանքը, թագաւորների պալատը, զինուորական բարձր դասի կենցաղը կամ նոյն դասերի ընտանեկան կեանքն ու սովորոյթները։ Սակայն այդ հերոսները հանդէս են գալիս պատմական որևէ խոշոր անցքի ֆոնի վրայ, որը յաճախ պատմւում է ուանդաբար, և այդ պատճառով պատմական ճշմարիտ անցքը հիւսւում է լեգենդար, առասպելական գրոյցների հետ։

Իլիականի մէջ պատմւում են Տրոյայի տասնամեայ պատերազմի վերջին ամիսների անցքերը։ Շանսոնայի մէջ՝ Իրանի և Թուրանի պատերազմները։ Ռոլանդի երգի մէջ՝ Կարլոս մեծի զօրքերի և նրանց հրամանատար ասպետ Ռոլանդի կրած պարտութիւնը արաբների կողմից, Սասունցի Դաւթի մէջ՝ Մսրա-Մելիքի և Դաւթի միջև եղած մենամարտը և վերջինիս տարած վճռական յաղթանակը։

Դիւցազներգական էպոսի գլխաւոր յատկութիւններն են պատմողական ձևը, գեղարուեստական պարզութիւնը և այսպէս կոչուած էպիթական սառնասրտութիւնը։ Պատմելու եղանակը հարթ է, յաճախ վեհ, հանդիստ, միամիտ։ Հերոսները սիրում են երկար ճառել, յաճախ վերամբարձ ոճով, յաճախակի կրկնութիւններով, համեմատութիւններով, երբեմն էլ անցքերի ու դէպքերի աւելորդ մանրամասնութիւններով։

Էպոսի էական տարրն է նաև չափազանցութիւնը, հիպերբոլիզմը, գերբնականը և հրաշալին ի դէմս աստուածների, յաւերժահարների, սրբերի, չար և բարի ոգիների, հերոսների ֆանտաստիկ կերպարանքների, նրանց ահռելի ոյժերի և այլն։ Եւ էականը այդ ամենի մէջ այն է, որ պատմող կամ երգող բանաստեղծը ինքը հաւատում է իր երևակայած գերբնական ոյժերին ու հրաշալիքներին։ Նրա միւս յատկութիւնն է՝ չափական ձևը, որ դանդաղ է ու ծանր։ Հին յունական և նրան հետևող հռոմէական դիւցազներգութիւնները երգւել են հեքսամետրներով՝ վեցչափեան ոտանաւորներով։

Դիւցազներգական վէպը, որ միևնոյն ժամանակ հերոսական է կոչւում, ժողովրդական բանաստեղծութիւն չէ։ Դա բարձր, տիրող դասակարգի, ռազմական արիստոկրատիայի բանաստեղծութիւն է, ուր երգւել է նրա փառքը, մեծութիւնը, ձգտումներն ու հերոսութիւնը, և ուր արտայայտութիւն է գտել նրա սանձարձակութիւնը, տիրողի անզուսպ իշխելասիրութիւնը, ընչաքաղցութիւնը, գիշատիչի վայրագ բնազդը, բարքերի կոպտութիւնը, ամեն մի ըմբոստացում ճնշելու և մատաներ շահագործելու անզուսպ տենչը։

Դիւցազներգութիւնները քնարի, տաւիղի կամ բամբիռի նուագակցութեամբ երգւում էին պալատներում՝ խնջոյքներին ու խրախճանքներին, ուր Բաքոսեան հեղուկը հոսում էր վայելքի ու մեղկութեան մէջ։

Դիւցազներգութեան հեղինակը անյայտ էր մնում, որովհետև իւրաքանչիւրը այդ ստեղծագործութիւններից բաղկացած է առանձին երգերից ու երգախառն զրոյցներից՝ երգւած զանազան ժամանակներում, որոնց հեղինակները բնականաբար բազմաթիւ էին լինում։ Բացի այդ, գրի առնւած չլինելով, նրանք սերունդէ սերունդ անցնում էին բերանացի, ենթարկւելով բազմաթիւ փոփոխութիւնների, երբեմն նորանոր յաւելումների՝ գեղեցիկ զարդարանքներով կամ ապաւորումներով։ Գրի առնւելուց և վերջնական մշակման ենթարկւելուց յետոյ՝ նման ստեղծագործութիւնները այլ ևս փոփոխութեան չեն ենթարկւում։

Դիւցազներգական վէպը պիտի բաժանել մի քանի տեսակների ըստ նրանց ստեղծագործական բնոյթի։

Հաւաքական ստեղծագործութիւն է, երբ հեղինակները բազմա-

թիւ են և առանձին մասերը վերջնական մշակման ու ամփոփման չեն ենթարկուած որև է գեղարուեստական հանճարի կողմից, ինչպէս հայկական էպոսը իր ամբողջութեամբ (Սասունցի Դաւիթը միայն գեղարուեստօրէն վերամշակել ու ամփոփել է մեր տաղանդաւոր էպիկ Յովհաննէս Թումանեանը, որի այդ գործը զետեղում ենք ներկայ հատորի մէջ), ռուսական բըլինաները և այլն։

Հաւաքական-անհատական խառն ստեղծագործութիւն է, երբ մշակուած ու ամբողջացրած է, ինչպէս Իլիականը, Ոդիսականը, Շահնամեան, Մահաբարատան, Ռոլանդի ու Նիբելունգների երգերը, Յով. Թումանեանի Սասունցի Դաւիթը։

Անհատական ստեղծագործութիւն է, երբ հեղինակը որոշ է ու մէկը, ինչպէս հռոմէական բանաստեղծ Վէրգիլիոսի Էնէականը, վրացական Շոթա Ռուսթավելիի Ընծեղեաւորը, նոյն և Աբա. Բագրատունու Հայկ Դիւցազնը, որը ստրկական նմանողութեամբ (յունականի և լատինականի) գրուած լինելով՝ կեղծ-դասական է իր թէ ներքին և թէ արտաքին կողմերով։

Սուրիաբեան

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՒԻԹ ԵՒ ՄՀԵՐ

(Մոկաց բարբառ)

ԴԱՒԻԹ

Ա.

«Դառնամ զողորմին [1]) տը [2]) տամ Աբամելիքին,
Դառնամ զողորմին տը տամ Սանասարին,
Դառնամ զողորմին տը տամ Բաղդասարին,
Դառնամ զողորմին տը տամ Մելքսէթ քհանին,
Դառնամ զողորմին տը տամ Զէնով-Յովանին,
Դառնամ զողորմին տը տամ Ցռան-Վերգոյին,
Դառնամ զողորմին տը տամ Թոլան-Դաւթին,
Դառնամ զողորմին տը տամ ականջ էրողի հայրի-մայրինց։

Դաւթի խէր [3]) կը մեռնի,
Մէր կը գնայ զԱբրամելիք կառնի,
Դաւիթ կը մնայ հէթը՛մ։ [4])
Խրոզքէրներ կը կեան, իրարու կ՚ասեն.
Զէնով-Յովան կ՚ասի.
. . . . Վերգо, տի՞ւ [5]) կը տանես զԴաւիթ,
Եօխտա [6]) ես կը տանեմ։
. . . . Վերգо կ՚ասի.—Ես որդի ունեմ,
Տիւ տար, պահէ, էրէ քե որդի։
Էնի կը տանի, կը պահի զԴաւիթ,
Կ՚անի իրան հոգեզաւակ։

---

[1]) Պատմողը երգով դառնում, անցեալ նշանաւոր հերոսներին ողորմի է տալիս, որ նոր իր պատմութիւնն անի։ Նրա ասելով ողորմիի մէջ յիշւում են բոլոր նախորդ նշանաւոր հերոսների անունները, բայց ինքը բոլորը չի մտաբերում։ [2]) տը, տ՚—պիտի, կը (մասնիկ)։ [3]) Ի տառը և այլ երկբարբառը սովորաբար ի և է են փոխւում։ [4]) որբ. [5]) ի՞ւ երբեմն հնչում է իբրև Ֆրանս ու։ [6]) թէ.

Մէ ամիս կը մնայ, մօր սիրտ կրար [1]) չի տայ.
Կը խրկի, զիրան տղան տանի մօտ յինք։
Որ զերեխէն կը տանի մօտ [2]) յինք,
Մարամելիք ըմեն օր կ'երթայ գեորգ [3]) խաղալու։
Մէր կ'ասի Մարամելքին.
— Իմ էրեխէն տար խեստդ։
Մարամելիք կ'ասի.— Ես չեմ տանի,
Որ տանեմ, գեորգ կը դպնի, կը սպանի,
Խալխը-մարդիկ տ'ասեն՝ մախսուգ [4]) զար սպանեց։
— Տիւ տար, իմ էրեխէն չլայ, թը [5]) սպանուի։
Մարամելիք զտղան առեց տարաւ,
Տարաւ, եղի զատը [6]) տեղ, մընչ [7]) դաշտին.
Էնոնք՝ փէհլուընքտեր՝ գնացին գեորգ խաղալու։
Մարամելիք հընչ [8]) զիւր գեորգ եղար,
Դաւիթ էլաւ, կայնաւ,
Ձեռ եռուր, զէնոր գեորգ բռնեց։
Մարամելիք շատ ըռըկաւ, [9]) ասաց.
— Վերջին տիր [10]) էսա տ'ելնի, խետ ձի [11]) կոխ անի։
Ըռիկ էրաւ [12]), էկաւ տան.
Մաղդէն կախեց, [13]) էլ չխօսաց։
Կնիկ խաբցրեց, ասաց.
— Մարամելիք, տիւ ինչու էսօր, չըս խօսայ։
Ասաց.—Ցիոնչ տը խօսամ.
Քեռ տղէն ձի շատ ամօթով էրաւ մընչ խալխին։
Կնիկ ասաց.—Ցիոնչ էրաւ։—
— Ես իմ գեորգ որ չարզեցի [14]),
Ձեռ եռուր, զիմ գեորգ բռնեց։
— Բան չկայ, տղայ է, ասաց, խելք բան չը կտրի։
Մարամելիք ասաց.
— Որ էն տղայ է, խելք բան չը կտրի,
Բերենք, մէկ սէնի [15]) ոսկի դնենք էռջև,
Մէկ սէնի լէ [16]) կրակ դնենք էռջև.
Թը էն տղայ է, խելք բան չը կտրի,
Ձեռ կը տայ տախ [17]) կրակը, չի տայ տախ ոսկին։

Մէկ սէնի կրակ, մէկ սէնի ոսկի,
Բերին, դրին յէռջև Դաւթին։
Դաւիթ ձեռ եռու տը տանէր տախ ոսկին.
Ասծու հրամանքիւ՝ հրեշտակ ձեռ կանեց [18]), եռու կրակին։
Էնու մատ էրիցաւ, կրակ կպաւ մատին.

---

[1]) դադար. [2]) նախդիրները սովորաբար նախադաս են դրուում. [3]) գուրգ, լախտ. [4]) կամաւ. [5]) թը, թըն—թող. թը—թէ, եթէ [6]) հեռու [7]) մընչ, մրչ—մէջ. [8]) հընչ, ինչ—երբոր [9]) զայրացաւ. [10]) անգամ [11]) ձի, ձը—ինձ. ձի, ձիր—ձեր, ձի ձիզ—ձեզ։ [12]) զայրացաւ [13]) նօթերը կիտեց. [14]) ձգեցի. [15]) սինի, ափսէ. [16]) էլ. [17]) դէպի [18]) շուռ տուաւ, դարձրեց։

Եռու լեզուին՝ լեզուն էլ էրիցաւ
Որ լեզուն էրիցաւ՝ լալ էլաւ քիչ,—
Անուն դրին Թլօր [1]) Դաւիթ։

Բ.

Մարամելիք էլ չպախեց զԴաւիթ.
Էնու մէր ճամբեց, էկաւ մօտ խրօղբէր։
Խրօղբէր մէկ պողվըտէ սօլ [2]) եռու կարել,
Մէկ էլ պողվըտէ կօռ [3]) եռու շինել,
Էլաւ զԴաւիթ էրաւ գառնարած։
Դաւիթ էլաւ զպողվըտէ սօլ խաղաւ,
Չպողվըտէ կօռ բռնեց ձեռ,
Գառներ արեց յէռջև, տարաւ դաշտ։
Գառներ եթող մընչ դաշտին,
Ընցկուն [4]) աղէս կէր [5]), լպստրակ, գէլ,
Էն տեսակ-տեսակ ջանաւարներ
Երեր, ըլից մընչ գառներուն,
Արեց յէռջև, յիրկուն երեր քաղաք։
Գաղբցիք՝ որ տեսան՝ վախացան,
Դռներ փակեցին, տիւրս չելան։
Դաւիթ լէ գլոխ եդի գետին,
Գնաւ Էնտեղ՝ քաղբու քամակ՝ մընչ հանդին։
Խլիսուն [6]) Ջէնով-Յովան գնաց մօտ Դաւիթ.
Տեսաւ՝ ընցկուն մանն էկի սարեր,
Էն պողվըտէ սօլ կտրտւիր ի,
Էն պողվըտէ կօռ լէ մաշւիր ի։
Ասաց.—Դաւիթ, քեռ բան ինչպէսն ի.
Ասաց.—Խրօղբէր, էն սիւ [7]) ուլեր օխնած ին,
Էն բօզբաչակ [8]) ուլեր անիծած ին,
Էնոնք ձի շատ կը չարչրեն։
Խրօղբէր ասաց.—Էն բօզերի յետև մի էրթայ.
Էնոնք անիծած ին,
Որ մէ կը մնայ՝ էն բի։
Մէկ'լօր խրօղբէր զԴաւիթ արեց նախրորդ։
Դաւիթ էլ ըմ գնաց սար.
Ընցկուն արջ կէր, շէր [9]), պլընկ [10]), գէլ,
Երեր, ըլից, մընչ նախրին,
Արեց յէռջև, յիրկուն երեր քաղաք։
Գաղբցիք վախեցան, տիւռ չբացին։

---

[1]) Թլատ. [2]) կօշիկ. [3]) հովւական ցուպ. [4]) այնքան, ինչքան, այնպէս, ինչպէս. [5]) կար. [6]) լուսադէմին. [7]) սև. [8]) գորշագոյն ուլեր, այսինքն նապաստակներ. [9]) շէր (շիր՞.) առիւծ. [10]) պլընկ (փալանգ՞.) վագր։

Դաւիթ գլուխ եդի, քնաւ չուր [1]) խլիսուն։
Խլիսուն քաղքցիք գնացին մօտ Զէնով-Յովան,
Ասացին.—Զէնով-Յովան.
Քեռ տղէն մեր քաղաք աւրեց,
Մենք կը վախնանք էսա գէլերաց,
Արջերաց, լպտրակնեբաց։
Որ էնպէսն ի, ասաց Զէնով-Յովան,—
Կ'երթամ, զԴաւիթ բերեմ տան։
Գնաց մօտ Դաւիթ, առեց երի տան։
Խացի բաղնիս, կերակրի բաղնիս,
Եռու Դաւիթին, ասաց.
—Ինչ մէյվան [2]) կըկեայ՝ [3]) իրաց կը տաս.
Կ'ուտի՝ ճամբու կը դնես։

Գ.

Մէկ ամիս վրայ ընցաւ ընցկուն, էրկու.
Զասես Զէնով-Յովանի կնիկ՝ Սառիէն—
Դաւիթ շատ սիրուն-խօրօտ [4]) տղայ էր—
Գեղոտիկ աչք եդի Դաւիթին, ասաց.
— Տը կեաս խետ իմ ձեռաց։
Դաւիթ ասաց.—Խրճղբօր կնիկ,
Տիւն իմ մէրն իս, ես էլ քեռ որդին իմ։
Խրօղբօր կնիկ ասաց՝ Տանեմ, գլուխ լաւ,
Դաւիթ կեայ ճիւր լցի վար [5]) իմ գլխուն,
Որ Դաւիթ իմ լէշ [6]) տեսնայ,
Էնու սիրտ մեղաւորնայ,
Կեայ խետ իմ ձեռաց։
Էլաւ ճիւր առեց, տարաւ.
ԶԴաւիթ կանչեց, որ կեայ ճիւր լցի։
Դաւիթ գիւր աչքեր բռնեց,
Որ խրօղբօր կնիկ չտեսնէր, սիրտ մեղաւորնէր.
Ու ընցկուն ճիւր ըլից խրօղբօր կնկան գլխուն։
Խրօղբօր կնիկ որ գգլուխ լաց,
Էլաւ, իրիշկեց [7]), տեսաւ,
Որ Դաւիթ գիւր աչքեր պինդ բռնիրի.
Էլաց, էտու գլխուն, իւր իրես արբնեց,
Մազեր քրքրեց վար գլխուն,
Գնաց յիւր տան նստաւ,
Զուր էնու մարդ Զէնով-Յովան էկաւ։
Ասաց.—Հէ կնիկ, ինչ էլի [8]) քեղ։
Կնիկ ասաց,—Յիրնչ տ'ելնի.

---

[1]) Մինչև. [2]) հիւր. [3]) կը գայ. [4]) գեղեցիկ. [5]) վրայ. [6]) մարմին, գէշ. [7]) նայեց. [8]) ինչ է եղել։

[illegible]

[illegible]

[illegible]

Ասաց.—Դաւիթ, գրողս քեզ տանի.
Եան եմ, էստա մէկ ապտ կորնկ.
Տիւն իմ ապրուստ կորնցիր.
Որ տիւ կորնճ ես՝ ապի, գնա.
Մարամնէքի էշին, անուն Կոզբադին,
Էկի, քնա խոր խզինէն չարի, տանի.
Դաւիթ ասաց.—Պատա, որտեղին է, ձի տար շանք տուր [1]

Պատաս առնց, տարաս զԴաւիթ.
Թող էստա էնտեղ, էկաս Դաւիթ տնաս.
Որ Կոզբադին խզինէն կը չարի, տանի
Որ Դաւիթ տնաս,
Բարկուքինէ ապիւն լցաս աչքեր.
Խերատաս [2], ասաց.
— Կոզբադին, իրի վիր, ես չարիմ։
Կոզբադին չկայնաս։
Դաւիթ ձեռ եաս, զէնաս ձիս [3] քանց,
Էնտեղէն քցնց շուր գնաս։
Նստաս գշարի կործնց [4] գնտին.
Զվոսկին ըրէց վար չափաս տուն.
Փէտ եաս վար չափաս տուն.
Զվոսկին ըրէց գնտին.
Մէկը չիմացաց վար չափին։
Դարտակ չարի եիմալ մըշ չնալին, ասաց՝ էս մէկ։
Կոզբադին ասաց.
— Զէնով-Ցովան, էստա տղէն տարէք գէն։
Կը տաս՝ տուր օրտը տարուն խարջ.
Թը չես խարջ, կ՝ելիմամ Մարամնէքին կ՝ասիմ.
Կըկեայ, Սասմայ քաղաք աբի, տանի.
Մարայ քաղքի քամակ նոր քաղաք իմ շինի։
Դաւիթ լէ խերատանց, կայնաս.
Չարի եղար Կոզբադնի ճանկաս, գլուխ կտրաս։
Կոզբադնի պուկտեր [5] կտրնց,
Առաքներ լէ քաշնց, բռնանց [6] ճանկաս ասաց.
— Գնաս Ջուհարի [7] տուր քնա Մարամնէքին.
Ինչ կանի, թլուխ անի։

Ա.

Կոզբադին էլաս.
Մաղդէն էնելով գնաց մտաս Մարամնէքի։
Կնկտեր զատն տեղաց տեսան զԿոզբադին.

---

[1]) Ցույց տուր. [2]) բարկացաս. [3]) քիմ. [4]) շատ տաս. [5]) շրխունքներ. [6]) բռնանց, մխեց. [7]) պատասխան։

[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
— [illegible]
[illegible]
— [illegible]
[illegible]
[illegible]
— [illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[

Ես կ՚երթամ կռիւ անեմ խրիստոնն։
Խրոշբոր կնիկ չանայ նստու Դաւիթին, ասաց.
— Դաւիթ, որ կնրթաս կռիւ անես,
ԶՄարամելքի ապանես,
Էնու ձախ. . . քի անենք մեր աշխդ դնդ։

Զ.

Ընցկուն Դաւիթի հէրս էկաւ,
Էլ գլիր էնոր քուն չտարաւ։
Ելխուն էլաւ գիւր նետ ու անող առեց, գնաց։
Որ էլաւ գնայ, պատուս ասաց.—
— Դաւիթ, յոնր տնրթաս։ Դաւիթ ասաց.
— Տնրթամ Մարամելքի կռիւ անեմ։
— Տիւ ինչ ունիս, նետ ու անեղով տ՚երթաս,
Մարամելքի կռիւ անես։
— Հրապա ինչ անեմ, ձի չունիմ, թուր չունիմ։
Պառաւ ասաց.—Դրոպս քե տանի,
Ախոս չէր տիւ էն խոր տղէն ըլնես։
Քեռ խէր ունէր «Գուռկիկ-Ջալալին,
«Թուր-կէծակին,
«Գլխու գեօտին,
«Կապէն-խաբուկին,
«Քամարն ի մէջքին,
«Մարութայ բանձրիկ Աստուարածին,
«Ծաչ-պատարագին, ինչ վար աջ թեւին»։
Դաւիթ ասաց.—Պառաւ, որտեղն ի։
—Քեռ տուն աւրի, քեռ խրոշբոր մօտն ի։
Համա խրոշբէր խաթրով չի տայ էն բաներ։
Կ՚երթաս քեռ խրոշբոր փոդպատ կը բռնես,
Կայնես զօրովէն կ՚առնես։
Դաւիթ գնաց մօտ իւր խրոշբէր,
Զձեռ եթալ, խրոշբոր փոդպատ բռնեց,
Թափ էտու՝ ոտքեր գետնուց կտրաւ։
Ասաց.—Խրոշբէր, կուզեմ քեզնէ
«Մարութայ բանձրիկ Աստուարածին,
«Իմ խոր Ծաչ-պատարագին, ինչ վար աջ թեւին.
«Գուռկիկ-Ջալալին
«Թուր-կէծակին,
«Գլխու գեօտին,
«Քամարն ի մէջքին,
«Կապէն-խաբուկին»,
Կը տաս՝ խաթրով տուր,
Չես ի տայ՝ կայնեմ զօրովէն կառնեմ։
Խրոշբէր ասաց.—Դաւիթ, քեռ բերան կտրէր.

Էն քեռ գիտցած բաներ չի, քի ուստայ կայ.
Էն տարին, որ քեռ խէր մեռիր,
ԶԲուռկիկ-Զալալին տիրա չեմ իմանիր,
Մարամելքի յախուն մեացիր մինչ դոմին։
Մարամելքի յախուն տիւռ շարիր եմ,
Էնու խոտ, յարդ, գարին լէ յերդիսու եմ տի։
Կ'երթաս, որ արժան ես՝ կարող ես,
Տիւռ վար քեզ կը բացի։
Դաւիթ գնաց քացու մ' եղար պատին, դպատ քանդեց,
Գնաց ձեռ տը տէր ձիան քամկին,
Զին աքուց մ' եռու, չառեց Դաւթին,
Առեց պատին՝ պատ շրջաւ։
Դաւիթ ելաց, գոռաց, ասաց.
— Ես ինչ անեմ, Բուռկիկ-Զալալին,
Ես գիտէր՝ որ տիւ ձիս ադատէր էսա կուռուց,
Աստու հրամանքիւ ձին լեզու էկաւ, ասաց.
— Դաւիթ, որ էնպէս ի, ես քի՝ տիւ ձը տես։
Ինչ քեռ խէր մեռիր ի,
Բեռ խրօղբէրքեր ձի չի պախած,
Զը դուսադի [1]) պէս ի պախած.
Կ'երնես, լաւ թիմար բմ կը տաս ձիս։
Դաւիթ էլաւ, ձեռ եռու ձիու քամակին,
Մէկ թիզ ծերա էր բռնի Բուռկիկ-Զալալի քամկին։

Էլաւ, ձին քաշեց, խնծաւ,
Էրեր, խրօղբօր դռան կաշնեցցուց։
Խրօղբէր գնաց, էրի գԴլխու գեօտին,
Բամարն ի մէջքին,
Կապէն-խարուկին,
Թուրն ի կէնտակին.
Ասաց.—Դաւիթ Խաչ-պատարագին,
Կեռ [2]) ամեդդի միջին։
Կ'երթաս յէռջև ամեդդին,
Բեռ չոքեր [3]) կը գարկես գեռին,
Բեռ Աստած կը կանչես.
Թը տիւ լէ քեռ խօր պէս արդար մարդ ես,
Կ'էլնայ, կրկնայ վար քեռ թևին
Կը կանի Խաչ-պատարագին։
Դաւիթ գնաց, չոքեր եղար գեռին, ելաց, գոռաց։
Աստու հրամանքիւ Խաչ պատարագին
Թռաւ էկաւ Դաւթի վար աջ թևին։

Խնծաւ գԲուռկիկ-Զալալին,
Գլուխ եղի գլխու գեօտին,

---

[1]) Բանտարկեալ. [2]) ահա. [3]) ծունկեր։

Խաղաւ զկապէն-խաբուկին,
Կապեց թուրն ի կէծակին,
Քամարն ի մէջքին։
Էնու քամար բառուն փաթ էկաւ բոլոր [1]) մէջքին.
Թուր-կէծակին իջաւ գետնու քէշ [2]) կ՚երթէր։
Գլխու գեօտին ընցկուն մեծ էկաւ,
Որ քառուն լիտր բամբակ եղի մէջ,
Նոր էն գնաց գլխուն։
Էլաւ, տան քամկին կայնալ,
Ականջ էրաւ, ասաց.
— Նայինք՝ խրօղբէր ինչ տ՚ասի։
Խրօղբէր ասաց.

«Ափսո՜ս, խազմը ափսոս
Մըր Քուռիկ-Ջալալին.
«Ափսո՜ս, խազմը ափսոս
Մըր Գլխու գեօտին.
«Ափսո՜ս, խազմը ափսոս
Մըր կապէն-խաբուկին.
«Ափսո՜ս, խազմը ափսոս
Մըր Քամարն ի մէջքին.
«Ափսո՜ս, խազմը ափսոս
Մըր Թուր-կէծակին։
«Ափսո՜ս, խազմը ափսոս
Մըր Խաչ-պատարագին.
«Ափսո՜ս, խազմը ափսոս
Մըր Նորալիւկ [3]) մէկ տակ [4]) մանուկին [5])»։

— Խրօղբէր քեռ բերան կոտրէր, տիւ ձի չյիշէր.
Որ տիւ ձի չէր յիշացեր,
Յառաջ ես քե տը սպանէր, նոր երթէր կուռուն։

Է.

Ասաց, քշեց, գնաց մըչ դաշտին։
Ասծու հրամանքիւ ձին լեզու էկաւ, ասաց.
— Դաւիթ, կ՚երթաս՝ քեռ խօր կաթնաղբուր կայ,
Որտեխ ես կայնեմ՝ վէ կըկեաս իմ քամկէն։—
Գնաց, կայնաւ վար կաթնաղբրին։
Դաւիթ մոռացիր էր՝ վէ չեկաւ.
Գիտցաւ թը ձին դադրաւ.
Զանգուն [6]) եղար, ձիու կողաշար կոտրուեց։
Ձին ըռըկաւ, ասաց.

---

[1]) Շուրջ. [2]) գետնի հետ բարշ. [3]) Նորելուկ, մատաղահաս. [4]) մի հատիկ. [5]) այս կտորն երգ է. [6]) ասպանդակ։

— Կարամ գքեզ ասամ էրիքական՝ էրիցիս [2]).
Ինչպէսնը տիւ իմ խօսք շիւտ մոռացար—
Համա քեզ խօր խաթրին չեմ ի սայ։
Որ էստեղէն կ'երթաս,
Էրկրթէ սուն մը լէ կայ մընչ դաշտին տնկուած.
Թեզ թուր կը քաշես, էն սեան կը զարնես։
Թը քեզ թուր էն սուն կտրեց՝ կ'երթաս կռիւ,
Թը չկտրեց՝ յիտ կը դառնաս։

Դաւիթ լէ վէր էկաւ,
Էն կաթնաղբրի ճիւր եռու ձիւռ կոդաշար՝ լուացաւ։
Էտեղէ ճիւր խմաւ, խաց կերաւ,
Ընկաւ վար էն կաթնաղբրին քնաւ։
Մէկ սհաթ քնաւ, էլաւ, տեսաւ,—
Տեսաւ էնպէսն ի լցի,
Էնպէսն ի խաստացի,
Էնպէս ի զօրութիւն, ոժ [2]) առի,
Որ չափալամիշ ի եղի։
Էլաւ, իւր գլխու գեօտին՝
Էն բառսուն լիտր բամբակ, որ դրիր էր մէջ,
Տիւռ էթալ, նոր էն գնաց գլխուն.
Թուր-կէնճակին՝ գետնուց քէշ կ'երթէր՝
Կապեց, խաստաւ խետ չոքերուն.
Բամարն ի մէջքին՝ որ քառսուն փաթ կըկէր մէջքին՝
Կապեց, մէկ փաթ էկաւ։
Էլաւ, զձին խեծաւ, քշեց, գնաց ի սեան մօտ.
Թուր քաշեց, եզար էն սեան,—թուր սուն կտրեց,
Կալամ վըր կալամին [3]) կայնաւ,
Շուռ չառեց՝ որ իյնէր գետին։
Դաւիթ էլաց, ասաց.

«Զեռնի՜կ, տիւ կոտուր կենէր,
Որ զարկեցի, թուր չը կտրեց.
«Աչքի՜կ, տիւ խաւար կենէր,
Որ էսա բաներ ես չը տեսնէր [4])»։

Ասաց,—ձեռ կոտրաւ, աչք խաւարաւ։
Ասծու հրամանքիւ ձին լեզու էկաւ, ասաց.
— Թեզ բերան կոտրի, տէր իմ,
Բամի մ' ուզէ Ասծուց։
Դաւիթ երգեց, ասաց.

---

[1]) Արեգակն՝ որ այրիս. [2]) ոյժ. [3]) շերտ շերտի վրայ. [4]) երդ են։

«Օրհնեալ, բարերար Աստած,
Քեզ հրամանքն էր շատ.
«Հրամանք էնես հարաւ-բամին (ԵՐ)[1]) իջնէր,
Էսա սուն լէ յէրարուց կտոր էնէր»։

Աստու հրամանքիւ հարաւ-քամին՝ որ էկաւ,
Սուն շուռ եառուր, մէ կտոր էատեխ ընկաւ,
Մէ կտոր էնտեխ ընկաւ։ Ասաց.

«Զեռնիկ, տիւ կանաչ էլնէր,
«Աչքիկ, տիւ լուսով էլնէր[2])»։

Աստու հրամանքիւ ձեռ սաղացաւ,
Աչքեր լէ լուսաւորուան։

Ը.

Զին խեծաւ, քշեց, գնաց,
Էլաւ լեռայ սարի գլոխ։
Ի՞նչ կը տեսնայ,—իրիշկեց՝
Որ քանի մ' աստղ երկինք կայ,
Մարամելիք ընցկուն չադը՛ր-խևաթ ածի մընչ դաշտին։
Դաւիթ որ տեսաւ՝ վախացաւ, ասաց.

«Օրհնեալ, բարերար Աստած,
Քեզ հրամանքն էր շատ.
Ես ի՞նչըխ[3]) անեմ։
«Էնոնք էլնեն բամբակ (ԵՐ),
Ես լէ էլնեմ կրակ (ԵՐ),
Չեմ կարայ զանոնք էրեցըցի.
«Էնոնք էլնեն գարնան մատղաշ գառները,
Ես լէ էլնեմ գարնան քաղցած գէլերը,
Չեմ կարայ զանոնք կտրեցըցի»։

Զին ասաց.—Դաւիթ, մի՛ վախենայ.
Քանի մ' քեզ թուր կտրայ,
Ընցկուն իմ պոչով տը կտրեմ զանոնք.
Քանի մ' քեզ թուր կտրայ,
Ընցկուն լէ իմ աքուց տը կտրի զանոնք.
Տիւ իմ քամկից վէ չկեաս, չխաբուիս։
Դաւիթ լէ ասաց՝—Ի՞նչխ անեմ, թը գեաղտիկ էրթամ,
Տ'ասեն Դաւիթ գեող էկաւ, գեող գնաց.
Թը գեաղտիկ չերթամ, ես էնոնց մօտէն կը վախենամ։
Կանչեց ասաց.

---

[1]) Ե՛Ր-բացագանչութիւն երգի մէջ. [2]) երգ. [3]) ինչպէս.

«Վով քնիր էք՝ յարթուն կացէք.
«Վով յարթուն էք՝ ելէք, կայնեցէք.
«Վով կայնիր էք՝ ձի ճակեր [1]) կապեցէք.
«Վով ձի ճակեր կապիր էք՝ ձի ձիանք թամքեցէք.
«Վով ձի ձիանք թամքիր էք՝ ելէք խեծեցէք,
«Զասէք՝ Դաւիթ գեղղ էկաւ, գեղղ գնաց [2])»։

Ասաց, քշեց, գնաց մընչ ասքըրին։
Էրկու գլոխ գնաց, էկաւ,—
Արնէ խեղեղ էլաւ, էնոնց լէշեր տարաւ։
Բանի մը Դաւիթ սպանեց,
Ընցկուն Դաւթի ձիու յէոջև կոտորուան։

Մէկ մեծ, փիր, ախտիար խալւոր [3]) ըմ կէր մէջքեր [4]).
Ասաց՝ ճամբախ տուէք էրթամ յէոջև Դաւթին,
Մէ խօսք ասեմ, էսա ասքեար աղատեմ կուուց։
Գնաց յէոջև Դաւթին, ասաց՝ «Դաւիթ փոշտ, փոշտ»։
Դաւիթ բարկացաւ, ասաց.—Փոշտ տիւ իս, խալւոր։
Տել [5]) ես տաս տարուան տղայ եմ.
Ի՞նչ փշտութիւն եմ արի՝ տու ձի փոշտ կ՚ասես։
Ասաց.—Դաւիթ, խոգուդ՝ արևուդ մեռնեմ.
Ես քե չեմ ասի փուշտ.
Մեր լեզուն թարս ի՝ ես կ՚ասեմ փոշտ,
Հանի ճամբախ տուէք, Դաւիթ տեսնամ, խօսեմ խետ։
Դաւիթ լէ ասաց.—Դէ խօսի։
— Դաւիթ, տիւ ընչո՞ւ էսա մարդեր կը սպանես,
Ամեն մօր մէկ են.
Մարամելիք զօրով ի բերի։
Որ տիւ կտրիճ ես՝
Գնա, խետ Մարամելքին կռիւ արա։
Դաւիթ ասաց.—Ո՞ր մէկն ի էնու չադը՛ր։
Խալւոր ասաց.—Էնա ճուչ [6]) կանաչ չադը՛ր։

Թ.

Գնաց, Մարամելքի չադրի ախուռ դադրաւ [7]), ասաց.
— Մարամելիք կանչէք՝ իկեայ կռիւ անենք.
Անմախ ի՝ էնու մախ եմ բերի.
Անգրող ի՝ էնու գրող եմ բերի։
Դաւթի մէր էլաւ, ասաց.
— Մարամելիք քնած ի,
Եօթ օր կը քնի, տել էսա իրեք օր ի քնի։
Ասաց.—Չեմ դիտի. տը խանէք վի՝ կռիւ անենք։
Էլան շիշ [8]) քցեցին կրակին,

[1]) Զրահներ. [2]) երգ է. [3]) ալեոր. [4]) մէջը. [5]) գեռ. [6]) մեծ. [7]) կանգնեց. [8]) շամփուր։

Տէրն Մարամելքի ոտաց.
Մարամելիք մըչ քնուն կանչեց, ասաց։
— Օ՜խ, շան դէլեր, իմ տեխ էսօր խօրօտ չիք շինի.
Լիւ կէր՝ ձիս կը կծեն։
Դաւիթ՝—Իլի վիր, ասաց,—լիւ չի, ես իմ։
Մարամելիք վիր չելաւ, էլ ըմ քնաւ։
Դոր [1]) գիւթնի խոփ կրակացցին,
Տէրն Մարամելքի ոտաց։
Մարամելիք ասաց.
— Օ՜խ, շան դէլեր, իմ տեխ խօրօտ չիք շինի.
Լիւեր ձի կը կծեն։
Դաւիթ կանչեց, ասաց.
— Մարամելիք, իլի վիր, ես տիւ կռիւ անենք։
Մարամելիք իլաւ վիր։
Որ զԴաւիթ տեսաւ, փչեց—
Էնու մոքէ Դաւիթ տը թոնէր—ասաց.
— Դաւիթ, արի նատի՝ խաց ուտենք,
Խաբար տանք, նուր էլենք կռիւ անենք։—
Դաւիթ էրաւ ձիուց իջնէր՝ ձին կը փախնէր.
Զին իմաստուն էր, գիտէր՝
Մարամելիք գեաղտիկ քառասուն նիտ [2]) խուր [3]) էր փորի,
Երկըթէ թոռ քցի վար բերնուն,
Թաղիաներ [4]) փռի վար խորուն,
Որ Դաւիթ գէր, նատէր, ընկնէր մըչ խորուն։—
ԶԴաւիթ խաբեցին, ձիուց բերին վէ.
Զին ըռիկ էրաւ, փախաւ,
Գնաց, էլաւ սարի գլոխ։
ԶԴաւիթ նստեցուցին վար խորուն,
Ընկաւ մըչ խորուն, երկըթէ թոռ էկաւ յիրուր։
Մարամելիք ասաց.
— Է՞ն էր, ինչ տը խեռ ձի կռիւ էնէր.
Թըխ կենայ էնտեխ, չուր ոսկորքեր փտի։

Ժ.

Զէնով-Յովան գիշեր էրազ տեսաւ.
Մարայ աստղ պայծառ էր,
Սասմայ աստղ մժդաւիր էր [5])։
Քնուց էլաւ վիր, ասաց.—Կնիկ, իլի վիր.
Ես տեսայ Մարայ աստղ պայծառ էր,
Սասմայ աստղ մժդաւիր էր,—
Դաւիթ ձեռաց գնաց։
Կնիկ ասաց.—Աստած քեռ տուն աւրի.

[1]) Այս անգամ. [2]) Նետ, նետաշափ. [3]) հոր. [4]) Թաղիք. [5]) մռայլ մշուշապատ։

Քիւն քն կը քնես, էրազ հալդին [1]) կը տեսնաս։
Զէնով-Յովան էլ ըմ քնաւ.
Դոր էրազ տեսաւ՝ Մսրայ աստղ շատ պայծառ էր,
Սասմայ աստղ մժդաւիր էր, կեսխն էր [2]), անցնէր։
Էլաւ վիր, ասաց.—Կնիկ, իլի վիր.
Ես տեսայ Մսրայ աստղ շատ պայծառ,
Սասմայ աստղ կեսխն էր անցնէր։
Կնիկ ասաց.—Քո տուն աւրի,
Տիւ ընչու չես քնայ.
Տիւ էսօր չը Թողիր ես քնէր։—
Զէնով-Յովան էլ ըմ քնաւ, դոր էրազ տեսաւ՝
Մսրայ աստղ էկաւ, Սասմայ աստղ ետու կուլ։
Ասաց.—Կնիկ, իլի վիր, Դաւիթ սպանեցին։
Կնիկ ասաց.—Օ՛խ, տիւ ընչու չես քնայ.
Ով գիտի վիր [3]) կնկան ծոց պառկի, քէֆ կանի։—
Զէնով-Յովան ըռբկաւ.
Քացու մը եզար կնկան.
Կնիկ էլաւ, ճրագ կպուց։
Զէնով-Յովան ասաց.
— Իմ ասպարներ [4]) ըմ։—Կնիկ եր։
Զէնով-Յովան խաղաւ,
Գնաց գոմի տիւռ եբաց,
Ձեռ ետու վար Սուտակ ձիու քամկին—
Սուտակ ձին փոր ետու գետին։
Ասաց.—Սուտակ ձին, յէ՞փ ձի կը տանես,
Դաւիթի կուռուն խաացնես։
Ձին ասաց.—Զուր խլխուն։
Զէնով-Յովան ասաց.
— Հարամ ըլնի էնա իմ եմ [5]), որ տուիր եմ քեզ։
Գնաց ձեռ ետու Կարմիր ձիու քամկին—
Կարմիր ձին էլ փոր ետու գետին։
Ասաց.—Կարմիր ձին, յէ՞փ ձի կը տանես,
Դաւիթի կուռուն խաացնես։
Ասաց.—Զուր սնաթ ըմ։
— Հարամ ըլնի իմ պախելը, որ քեզ պախիր եմ։
Դոր գնաց, ձեռ ետու Սև ձիու քամկին—
Սև ձին փոր չետու գետին։
Զէնով-Յովան Սև ձիու գլուխ պաղնեց,
Ասաց.—Սև ձին, յէ՞փ ձի կը տանես,
Դաւիթի կուռուն խաացնես։
Ասաց.—Որ տու կարաս քեզ վար իմ քամկին բռնես,

---

[1]) Պալիս, ուրիշ մարդիկ. [2]) քիչ էր մնացել. [3]) ում. [4]) գէնք ու զրահ. [5]) կեր, ուտելիք.

Ոտդ թլես զանգուն,
Զուր մէկ էլ ոտդ շուռ տաս մըկ էլ զանգուն,
Ես քե կը խաացնեմ Դաւթի կռուն։

Զէնով-Յովան էլաւ, Սև ձին խեծաւ,
Ոտ եդիր զանգուն,
Զուր մէկ էլ ոտ շուռ եառուր մէկ էլ զանգուն—
Սև ձին խրեղէն էր—
Էլաւ՝ լեռայ սարի գլոխ կայնաւ։
Ֆուռկիկ-Զալալին Զէնով-Յովան տեսաւ,
Խրինջալաւ էկաւ մօտ։
Զէնով վախացաւ,—ասաց.
— Դաւիթ սպանած ի, ձին փարիի, էկի էստեխ։
Զէնով-Յովան կանչեց—
Զէն ընկաւ սար ու ձոր—
Ասաց.—Դաւիթ, յո՞ւստն իս,
Յիշա՝ Մարութայ բանձր Աստուարածին,
Խաչ-պատարագին՝ ինչ վար բեռ աջ թևին։
Կանչեց՝ ձէն ընկաւ Դաւթի ականջ։
(Զասես՝ Դաւիթ տղայ էր,
Զիտէր [1]) էնու զօրութիւն)։
Դաւիթ լսաւ, կանչեց, ասաց.
— Եա՝ Մարութայ բանձր Աստուարածին,
Խաչ-պատարագին՝ ինչ վար իմ աջ թևին։
Ասաց, դիր ըմ [2]) զինք թափ եառուր,
Ասծով զինջլի [3]) կտորքեր եբկնուց էկան տակ։
Դաւիթ էլաւ, թռաւ, խորու բերան.
Մարամելիք էլ չը գիտցաւ մտնալ։
Զէնով-Յովան կանչեց.—Դաւիթ, արի էստեխ։
Դաւիթ էնու կանչելով գնաց մօտ խրոզբէր,
Համա ձին ըռըկեր էր՝ չէր իկեայ ձեռ։
Զէնով-Յովան եահլամիշ անելաւ [4]) գնաց, եբի։
Դաւիթ խեծաւ, ասաց.
— Խրոզբէր, տիւ գնա տախ քաղաք,
Ես էրթամ Մարամելքի կռիւ։

ԺԱ.

Գնաց, խասաւ մօտ Մարամելիք, ասաց.
— Մարամելիք, էն տիր ձի խափեցիր,
Մկայ էլ ի՞նչ ո՛անեաս
Մարամելիք ասաց.—Դ՝ արի [5]), նստի։
Ասաց.—Ես չեմ նստի, կռիւ անենք։

---

[1]) Զը գիտեր. [2]) մի անգամ. [3]) շղթայ. [4]) շոյելով. [5]) գէ՛ արի։

Մարամելիք ասաց.
— Կոխ զօրով, թը հօրթով[1] իր։
Դաւիթ ասաց.—Հօրթով իր։
— Որ հօրթով իր, հորաթ վիրն իր, ճուշ ես եմ, թը տիր։
Դաւիթ ասաց.—Հօրաթ քեռին իր։
Դաւիթ գնաց մէյդուռ միջին կայնաւ։
Մարամելիք գնաց, էկաւ, գիւր գեորդ եղար—
Թող դադրաւ[2] վար Դաւիթին,
Էրիքանան իրեա քոնեց—
Ասաց.—Դաւիթ խոդ էր, խոդ դարձաւ։
Դաւիթ ասաց.—Մարամելիք, տել ես էտեխին եմ.
Գետա էլ ըմ դար քո դարբ։
Մարամելիք իրեք տիր եղար,
Թող եաու վար Դաւիթին,
Ասաց՝ Դաւիթ խոդ էր, խոդ դարձաւ։
Որ թող իշաւ գետին, Դաւիթ ասաց.
—Մարամելիք, կեռ ես էտեխին եմ.
Դոր հօրաթ խասաւ ձի։
Մարամելիք ասաց.
— Դաւիթ. ես մոնդաթ[3] կ՚ուզեմ քեզնէ։
Դաւիթ ասաց.—Ցինչ կուզես։
— Կ՚ուզեմ, որ քառասուն գեաղ խուր փորեմ։
Դաւիթ ասաց՝ Փորի։
Մարամելիք ասաց.
— Ես էրթամ, ընկնեմ մըչ խորուն,
Քառասուն ջաղցի քար քաշեմ վար իմ,
Քառասուն դրդած գոմշի կաշի լէ առնեմ.
Բցեմ վար ջաղցի քարին։
Դաւիթ ասաց.—Բցի.
Ընցկուն կ՚ուզես՝ արա։
Մարամելիք լէ ընցկուն ասաց՝ արեց։

Դաւիթ գնաց, էկաւ՝ որ գիւր գեորդ դարձէր,
Դաւիթի մէր էկաւ յէռջև, ասաց.
— Զէ՞ քեզ ծէծ[4] եմ տուի,
Էդ մէկ դարբ ձի խաթեր։
Դաւիթ խաթը արեց։
Մէկ էլ գնաց էկաւ՝ տը դարձէր,
Դոր Մարամելքի բուր էկաւ յէռջև, ասաց.
Դաւիթ, ինչ տիւ տղայ էր,
Ես քեզ ընցկուն շկիր եմ վար իմ քամկին.
Էդ մէկ դարբ ձի խաթեր։
Դաւիթ խաթը արեց։

---

[1]) Հերթով. [2]) փոշին կանգնեց. [3]) միջոց. [4]) ծիծ։

Դաւիթ մնաց, Աստած, էն մէկ դարը։
Գնաց, որ էկաւ՝ տը զարնէը,
Մարամելքի քուր էլ ըմ էկաւ յէռջև, ասաց.
— Դաւիթ, էդ մէկ դարը լէ տաս ձի խաթեր։
Ասաց.—Գնա դէն, փուշտ գաղը.
Էն եմ, Աստած, էսա մէկ դարը։

Դաւիթ գնաց, էկաւ,
Աստու անուն ետու,
Յիշեց զՄարութայ բանձրիկ Աստուարածին,
Խաչ-պատարագին՝ ինչ վար իւր աջ թևին,
Զիւր մէկ գեորդ եզար։
Որ եզար, Աստու հրամանքիւ,
Զքառասուն գոմշու կաշին կտրեց,
Քառասուն ջաղցի քար լէ կտրեց,
Մարամելքի գլխու զագաթ լէ կտրեց։
Մարամելիք կանչեց, ասաց.
— Դաւիթ, կեռ ես տել էստեխն եմ։
Դաւիթ ասաց.—Մարամելիք, քե թափ տուր մէկ։
Ինչ Մարամելիք զինք թափ ետուր,
Մէկ կտոր ընկաւ էստեխ, մէկ էնտեխ։
Դաւիթ զՄարամելքի ձախ . . . առեց
Եբեր, ետու խրոզբոր կնկան, ասաց.
— Խրոզբոր կնիկ, տիւ ձի չանայ տիր էն օր.
Ա.ռ, կեռ բերիր եմ . . .
Կ՚անես աչից դեղ, ինչ կանես՝ արաւ
Զէնով-Յովան շատ ուրախացաւ,
Էնի կը սիրէր զԴաւիթ։

ԺԲ.

Մէկ տարի մ՚վրայ անցաւ,
Զէնով-Յովան ասաց.
— Դաւիթ, տիւ զմե ազատեցիր Մարամելքի ձեռէն.
Տ՚երթամ, քե կնիկ ուզեմ։
Գնաց Զմշկիկ (Զմուցկիկ) Սուլթան ուզեց Դաւթի խամար։
Զմշկիկ Սուլթան լէ շատ գեղալ [1]) փէհլուան էր.
Տել չէր պատկիւ։
Համա էրկու կաղոզան [2]) էկան,
Խանդութ խաթուն Դաւթի խամար գեռվացին։
Ասաց՝

---

[1]) Գեղեցիկ. [2]) կաղոզան--գուռան, թէ՞ կաղզուանցի, որովհետև հ. Սբ. վար. Խանդութ խաթունը կաղզուանում է նստում։

« Թ՚էնուր սիպկութեն կը խաբցնես,
Քանց գարնան ձիւն սատակ է, լգճ [1]), սատակ է.
« Թ՚էնուր կակղութեն կը խաբցնես,
Քանց բամբակ կակուղ է, լգճ, կակուղ է.
« Թ՚էնուր ընքներ կը խաբցնես,
Ղալամով քաշիր ին, լգճ, քաշիր ին.
« Թ՚էնուր աչքեր կը խաբցնես։
Չէնու կթխէներ [2]), լգճ, չէնու կթխէներ.
« Թ՚էնուր ճակատ լէնութ կը խաբցնես,
Եօթ ակիւմ է, տել մէկ յաւել է, լաճգօ, տել մէկ յաւել է»։

Դաւիթ էսա երգ լսեց, ասաց.
— Խրօղբէր, էլ չեմ էրթայ տախ Զմշկիկ Սուլթան,
Տ՚երթամ տախ Խանդութ խաթուն։
— Խրօղբէր ասաց.—Դաւիթ, էսա եօթ տարի էլաւ,
Քառասուն փէհլիւան նստած ին յէոջև էնու տիւռ.
Տիւ լէ կ՚երթաս յէոջև էնու փանջարին.
Թը քե ադիա եսու՝ կ՚երթաս,
Թը չեսու՝ կը դառնաս, կըկեաս։

ԺԳ.

Դաւիթ գիւր ձին խնծաւ,
Գշեց, գնաց, յէոջև Խանդութ խաթնի փանջարին [3])։
Խանդութ խաթուն՝ որ աչք ընկաւ,
ԶԴաւիթ տեսաւ՝ ուրախացաւ.
Ուրախութենէ խնձոր մ՚ եզար Դաւթին։
Դաւիթ զինձոր բռնեց վար ձիուն։
Խնդացաւ վար խնձորին։
Առեց, քշեց, գնաց մօտ էնու դռնապանին։
Դռնապանի անուն Համտօլ էր.
Մէկ պռուկ կախիր էր սրտին։
Դաւիթ՝ որ տեսաւ, վախացաւ.—
Ինչ մօրէն ելիր էր, մարդու բարև չէր տի,
Յախու բարև եսու Համտօլին։
Համտօլ լէ քառասուն տարի
Էնտեխ դռնպանութեն էր արի,
Էնօր զԴաւիթ որ տեսաւ,
Վախացաւ, յախու զբարև առեց։
Դաւիթ ասաց.

---

[1]) Բացագանչութիւն երգի մէջ. [2]) չինի կթխայ-բաժակ. [3]) պատուհան։

« Ինչ մարէն մեկնիր իմ,
Մարդու բարև չեմ տուի.
« Էսօր զՀամտօլն եմ տեսի,
Յախուց բարև եմ տուի,
Լգճ, յախուց բարև եմ տուի [1]»:

Համտոլ ասաց.

« Քառասուն տարի գոնպանութեն եմ արի [2],
Մարդու բարև չեմ առի.
« Էսօր զԴաւիթն եմ տեսի,
Յախուց բարևն եմ առի,
Լգճ, յախուց բարևն եմ առի»:

Դաւիթ ասաց.—Օրհնալ է Աստած,
Զէ՞ տիւ լէ յախուց իմ բարև առար,
Թըխ ես լէ յախու քիզ բարև տամ:
Որ տիւ յախուց իմ բարև չառնէր,
Տ'ելնէր կեօլ [3]), ընկնէր իմ սիրտ, ձի ապանէր:

Ընցկուն ասաց, քշեց գնաց.
Ասասաւ էն քառասուն փէհլիւանի մօտ:
Էն քառասուն փէհլիւան, Խանդութ խաթուն ապով,
Օխտը տարի էնտեխ նստիր ին.
Խանդութ խաթուն մարդու խօսք չէր տուի:
Որ Դաւիթ գնաց, Խանդութ խաթուն խնձոր եզար Դաւթին,
Էնոնք շատ ըռըկան, ասացին,
— Մենք եօթ տարի էստեխ ենք,
Մզի ադիա չետու.
Սասմայ շաղկմակեր [4]) Դաւիթ նուր էկաւ էստեխ,
Տել չի՛ տեսի՝ խնձոր եզար էնոր վար ձիուն:
Դաւիթ գնաց, էնտեխ նստաւ:
Բերին խաց քցին՝ որ ուտեն:—
Էնոնք գեաղտիկ սուֆրէն [5]) պատրաստիր են,
Ամեն մէկ գիւր թուր քցիր ի սուֆրի տակ:—
Եօթ տարեան նռան գինին բերին, դրին, խմեն:
Էնոնց թաս լէ քանց ճուչ տաշտ էր:
Մէկ լցին, տուին Դաւթին,—խմաւ,
Մէկ էլ լցին, տուին,—Դաւիթ ասաց.
— Աղբէրներ, էդպէս չը՛նի,
Բերենք սրով [6]) խմենք.
Վով կը սարխոշնայ՝ [7]) թըխ պառկի,
Վով չը սարխոշնայ՝ թըխ քէֆ անի:—

---

[1]) Երգ է. [2]) երգ է. [3]) վիշտ, դարդ. [4]) շաղկամ ուտող. [5]) հացի սփռոց.
[6]) կարգով. [7]) հարբել.

Հրդեհ էնտեղ կարմիր խնա Դաւթի դիմեր խմեն,
Եօթը տարուան ճանան դիմեին,
Ամեն, ամեն մէկ տարիներուն,
Իրանց տեղեր պատկան։
Դաւթի իւր խղճաթիւրութիւն [1]) ասաց.
— Էլի, էստա տուիրէն վիրու,
Մեզի էստա խաղեր կոխեն։
Մատէն էլաւ, տուիրէն վիրուց.
Տեսաւ ամէն փէհլուանի յէտին թուր տիպրատած,
Դրան տուիրի տակին։
Դաւթի ձեռ եաւ, թրեր ամեն ժողովեց,
Եաւ ծնգան, կոտրուեց,
Ինչ որ մարդ բիւս ամ քիրիթի կոտրէ,
Եաւ իւր ծառին, ասաց.
— Տար, թող մեր ձիու խուրջին.
Էլաւ պողվատ-դամուր է,
Էնենք մեր ձիու նալ-բդմար [2]) լաւ է։

ԺԴ.

Դաւթի գշեր էլաւ, գնաց Ամանդուի խաթնի տուն,
Էնոր կշտին պատկաւ շուր խլխուն։
Ալխուն էլաւ վիր՝ ա՛ներթէր, լացէր.
Ամանդուի խաթուն ճիւր տարաւ, ըլլեց Դաւթի ձեռաց։
Դաւթի գրկեց զԱմանդուի խաթուն՝ որ պաղնէր։
Ամանդուի խաթուն չեթող պաղնէր.
Բանցքի մ՝ եղար Դաւթի բերան,
Արուն-արնաճիւր բերնէն եթալ տիւս։
Դաւթի ասաց.—Ամանդուի խաթուն, կանչիր եմ Աւաած,
Զուր խլխուն, քանի մ՝ ասաղ երկինք կայ,
Ընցկուն շաղը՛ր-խեաթ բուլուր [3]) քեռ քաղքին զարնեն,
Ցըմեն քեռ խոր գլխու դուշման էլնեն։
Ինչ մրրաղ [4]) էրաւ, Աւաած կատարեց։
Էն ժամանակ արդար մարդ ին,
Ինչ մրաղ էնին՝ Աւաած կը կատարէր։—

Զուր խլխուն, քանի մ՝ ասաղ երկինք կայ,
Ընցկուն շաղը՛ր-խեաթ բռնեցին
Բուլուր Ամանդուի խաթնի խոր քաղքին,
Ցըմեն Ամանդուի խաթնի խոր դուշման։
Ալխուն Ամանդուի խաթուն ասաց.
— Վիվ ա՛ներթայ կռիւ։
Էն քառուն փէհլուան ասացին.

---

[1]) Ատաց. [2]) պայտ ու գամ. [3]) շուրջ. [4]) իդձ։

— Վո՛ւյ տ՛երթայ կռի՞ւ.
Ադիէն վիր տուիր ես՝ էն տ՛երթայ կռիւ։
Թը կ՛ուզես խաբար մի՛ տուր, մենք էրթանք կռիւ։
Դաւիթ խլիսուն էլաւ։
Ջիրուկիկ-Ջալալին խեծաւ, գնաց կռիւ։
Աջու եղար, ձախու եղար, կէս ասքար ջարդեց,
Յիրկուն էկաւ մօտ Խանդութ խաթուն։
Մէկ ՛լ օր էլ ըմ գնաց կռիւ։
Զը կրցան Դաւթի կռիւ անեն։
Դուշմաններ խորհուրդ արին,
Հալաբայ թագաւուր հրոդկեցին [1]) Սասմայ քաղաք,
Մօտ Զէնով-Յովան,
Ասացին.—Մենք յիմացիր ենք՝
Սասմայ քաղաք շատ կտրիճ փէհլեան կայ.
Մէկ փէհլեան ճամբիսես իկեայ էստեխ,
Իսա տեխ մարդ ըմ կայ՝ շատ կտրիճ ի,
Էնոր սպանի՝ մենք քեզ հօթ քաղաք փէշքէշ [2]) կը տանք։

. . . . Վերգոն մէկ տղայ կէր,
Անուն Պարոն-Աստղիկ։
Պարոն-Աստղիկ ձին խրեղէն խեծաւ,
Զին թեաւոր էր, մըչ երկինք, մըչ գետինք,
Թռաւ, գնաց, խաստաւ կռուն։
Դաւիթ յիմացաւ, ճանաչեց զՊարոն-Աստղիկ.
Յիրկուն էկաւ, Խանդութ խաթնին ասաց.
— Ես վաղ չեմ էրթայ կռիւ։
Խանդութ խաթուն լէ ասաց.
— Որ տիւ չես ամաչի, ես կ՛երթամ կռիւ։
Դաւիթ ասաց.—Դէ տիւ յերդըւցի [3]),
Որ ես էրթամ կռիւ՝ տիւրս չելնես,
Տիւռ չը բանաս, յերդիս [4]) չը բանաս,
Նուր ես կ՛երթամ կռիւ։
Խանդութ խաթուն ասաց
— Լաւ, ես չեմ էլնի տիւրս, իմ տիւռ կը շինեմ,
Նատեմ էստեխ, իմ քեարդան քաշեմ։
Խլիսուն Դաւիթ էլաւ, գնաց կռիւ։

Դաւիթ գնաց, կռիւ արեց չուր կէսօրին,
Կռիւ արեց խետ Պարոն-Աստղկան,
Թրէ շառաւիղը [5]) եղար մըչ յերդիսին։
Խանդութ խաթուն տեսաւ՝
Լիւս էկաւ մըչ էնու յօդին [6]),
Ասաց.—Էս ինչ բան ի.

---

[1]) Ուղարկեցին. [2]) ընծայ. [3]) երդիւր. [4]) երդիկ. [5]) ճառագայթները, ցոլք. [6]) սենեակ։

Ամպ չի՝ անձրև չի կեայ.
Դշեր չի՝ կէծակ չի տայ։
Խանդութ խաթուն չը գիմացաւ,
Էլաւ, փանջարէն եբաց, իրիշկեց.
Տեսաւ՝ մէկ մը ձին խրեղէն խեծի,
Վար Դաւթի գլխուն ինի կը գոռայ,
ԶՀաւլունի թուր կը շարժէ,
Կրակ կը թափի վար Դաւթի գլխուն։
Խանդութ խաթուն իմաստուն կարդացող էր.
Դիրք եդի էնտեղ, գիրք կարդաց.
Տեսաւ՝ Դաւթի խրօղրօր ազէն էր,
Ինչ թուր կը շարժէր վար Դաւթի գլխուն,
Կրակ կը լցէր վար Դաւթին, կ'երթէր յանդունդք,
Դաւիթ էնոր բան չէր անի։
Խանդութ խաթուն երդեց, ասաց.

«Խրօղբէր, տիւ եկիր բարով, խաղար բարով.
«Կրակ թափեցիր վար մեր Դաւթի գլխուն,
«(Լա՜) Տուն աւրեցիր Խանդութ խանմուն»։

Դաւիթ էնոր ձէն առեց, ասաց.
— Վա՜յ, քեռ էնկան բախտ կտրի.
Ես գիտէր՝ տիւ չը մնար տուն ինի։
Դաւիթ ըռըկաւ,
Զիւր նետ-անկեղ դէմ էրաւ
Պարոն-Աստղկան ձիու փորուն,
Զիւ փոր ծակեց,
Պարոն-Աստղկան գլխու գազաթ վեր տիւս էտու։
Պարոն-Աստղիկ ընկաւ գետին, ձէն ետուր, ասաց.
— Ա՜խ, էս մեր ազգակնի դարբերն ի՝ ձի խասաւ։—
(Էնի չէր ճանաչի զԴաւիթ)։
Դաւիթ ասաց.—Տիւ վոյ իս։
— Ես Պարոն-Աստղիկ, Յոան-Վերդ ազէն եմ։
Դաւիթ ասաց.
— Ես իմ աչքեր բոցուցի.
Մեր ազաթ էն ի, վով մեռնի,
Գլոխ դնի վար ազգակնի ծնղան,
Խոգին տայ Աստուն։
Դաւիթ զՊարոն-Աստղկան
Գլոխ եդի վար իւր ծնգան։
Պարոն-Աստղիկ քոուց ընկաւ, խոգին ետու։
Որ Պարոն-Աստղիկ խոգին ետու,
Դաւթի յաշ [1]) գնաց.
Աստեար էկան զԴաւիթ բռնին։

---

[1]) Ուշք։

Դաւթի ձին՝ Բուռկիկ-Զալալին՝
Բուլուր Դաւթին կայնիր,
Ձեթող զԴաւիթ բոնին,
Զուր Դաւթի յաշ էկաւ գլխուն,
Էլաւ զձին խեծաւ, զօշուն [1]) ցրեց։

ԺԵ.

Էնօր յիրկուն Դաւիթ չեկաւ մօտ Խանդութ խաթուն։
Խանդութ խաթուն գիտցաւ, որ Դաւիթ սպանիր են.
Ելիսուն էլաւ, մարդու շորեր խաղաւ,
Զիւր ձին խեծաւ, զիւր սիլախներ [2]) կապեց, ասաց.
— Էրթամ Դաւթի ջանդակ[3]) ջոկեմ, բերեմ թաղեմ։
Խանդութ խաթուն գնաց,
Զըռ մ՝ կը զարնէր, լէշեր վերուցէր,
Որ Խաչ-պատարագին տեսնէր,
Դաւթի լէշ ճանաչէր։
Դաւիթ էնտեղէն՝ շորեր փոխիր՝ էկաւ։
Էն զԽանդութ խաթուն կը ճանաչէր.
Խանդութ խաթուն զԴաւիթ չէր ճանաչէ։
Դաւիթ ասաց.—Օ՜, վի՞ր յետև կան կըկեաս [4]).
Էն մարդ՝ ինչ տիւ կան կըկեաս,
Էն ես սպանիր եմ։
Խանդութ խաթուն ասաց.
— Որ տիւ զէն մարդ սպանիր ես,
Ես տիւ կռիւ տ՝ անենք.
Եա ես զքեզ տը սպանեմ էնու տեղ,
Եա տիւ ձի էլ սպաննես։
Էրկուս խասան յիրուր, կուան։
Դաւիթ զԽանդութ խաթուն եզար գետին.
Զոքեր եզար վար սրտին։
Խանդութ խաթուն ասաց.
— Ամեն, ձի մը՝ սպանի, ես կնիկ յարմատ եմ։
Դաւիթ ասաց.—Ես գիտեմ տիւ կնիկ յարմատ ես,
Էսիկ էն աւուր թիրէն,
Ինչ տիւ էն բռունցքին զարկիր իմ բերան,
Արուն-արնճիւր էկաւ տիւս։
Խանդութ խաթուն ասաց.—Դաւիթ, տի՞ւ իս։
Դաւիթ ասաց.—Այո, եան իմ։
— Որ ընցկուն ի, ձիս թող։
Տեսար, Դաւիթ, քառասուն փէհլիւան.
Եօթ տարի կայ՝ էնտեղ նստած,
Մարդու ադիա չը տի.

---

[1]) Զօրք. [2]) զրահ. [3]) գիտակ. [4]) ման կը գաս։

Մեզ տար եկար՝ քեզ տար
Դաւիթ, ձի թաց տար։
Դար ես քեզ վերին տար ձի ելիր
Դաւիթ թաց եղար։

Էլաւ, էկաւ Մանդուխտ խաթուն տարին՝
Մանդուխտ խաթուն ասաց։
— Դաւիթ, իրաւնք Տուանք, ասանք, խոսանք, քէֆ անանք։
Դաւիթ ասաց։— Չէ, ես չ Մասունց քաղքի տէրն եմ։
Չէ, ա՛ երթանք Մասունց քաղաք։—
Մեզ կնք, չկնք, քաղաք ծախեց։
Մի բան քարեան կապեց, էկաւ տարի Մասունց քաղաք։

Ջմշկիկ Սուլթան էլաւ,
էկաւ յեղջի Դաւիթին, ասաց։
— Դաւիթ, ընչու, ես խոտաս չէք,
Ձի ուզեցիս քեզ, տես ձի չէ խաւնաք,
Վար ձի գնացիր, Մանդուխտ խաթուն գերեցիր։
Դէ ար՝ ես տես կրես անանք,
Ես ես քեզ ար սպանեմ,
Ես չ, Մանդուխտ խաթուն չ Մասունք որբացարի։
Ես տես ձի սպանես,
Նուր էրթաս Մանդուխտ խաթնի ծոց պառկես։
Դաւիթ ասաց։
— Ջմշկիկ Սուլթան, հրաբ [1]) կ՚էնեմ քեզ մոտէն։
Մեկ յարմաս կաց խեսա ձի։
Թաց ես էրթամ իմ տուն,
Ընչուր ուզ որ լմանաց,
Ես կըկեամ քեզ կռիւ անեմ։
Ջմշկիկ Սուլթան ասաց։
— Դէ յերդիցի Մարուխայ բանձր Աստուածին,
Հաչ-պատարագին՝ ինչ վար քեզ աջ թևին,
Ինչ ուզ որ լմանաց՝ ես կըկեամ քեզ կռիւ,—
Որ թողնեմ տես էրթաս։
Դաւիթ ասաց։
— Մարուխայ բանձր Աստուածին,
Հաչ-պատարագին,
Ինչ ուզ որ լմանաց՝ ես կըկեամ քեզ կռիւ անեմ։
Ասաց, տանց գՀանդուխտ խաթուն,
Էկաւ Մասունց քաղաք։
Ինչ Հանդուխտ խաթնի ծոց պառկաւ,
Հաչ-պատարագին, որ յերդում էր արի,
Մոռցաւ,—գնաց ուզ տարի։

---

[1]) Գալու։ [2]) Խնդիրը։

Մ Հ Ե Ր

Ա.

Ինչ տարին թմբմաւ [1],
Ասած տղէ մ՚ ետու Դաւթին,
Անուն եդի Մհեր։
Ինչ խալխի տղէք տարով կը մեծանին՝ Մհեր օրով,
Ինչ ամսով՝ Մհեր սնաթով։
Տարին որ թմբմաւ,
Մհեր էլաւ, գնաց մըչ քաղքին կան կը գէր.
Զբաբտի ծառեր կը կոռէր,
Քաղքի տղէք կը խեծուցէր,
Կը շարէր վար բարդու ծառին,
Ծառու ծէր կը թորկէր [2]։
Ինչ ծառը ծէր կը բարձրացնէր,
Քաղքի տղէք, ամեն մէկ ճիժ [3],
Մէկ մահլայ [4] կը թլէր։
Քաղքցիք էկան մօտ Դաւիթ, ասացին.
— Քեռ տղէն թամբեհ արա [5],
Զմե տղից կտրեց։
Դաւիթ խրատեց, Մհեր խօր ականջ չետուր։
Ճուչ գետ ըմ Սասմայ քաղքի յէռջևից կ՚երթէր.
Մհեր ութ ըլից՝ կարմունջ կապեց վար էն գետուն։
Որ մարդիկ կ՚երթէն՝ վար կարմնջին ինի կ՚երթէն,
Մհեր կ՚երթէր, մարդեր կը տփէր [6], կ՚ասէր.
— . . . որդիք, ես կարմունջ կապիր եմ,
Չի՞ խամար եմ կապի.
Ընչու վար իմ կամրջին ինի կ՚երթէք։
Մարդիկ կը դառնան, գին [7],
Զարկին, ջրով ընցնին.
Մհեր կ՚երթէր, կը տփէր, կ՚ասէր.
— . . . որդիք, ես կարմունջ կապիր եմ,
Չի խամար եմ կապի,
Տիւք ընչու կըտէք ջրուն,
Ճիւր գձե տանի, մեղք ընկնի իմ վիզ։
Քաղքցիք էլ մ՚ էկան մօտ Դաւիթ գանգատ։

---

[1]) Հրացաւ. [2]) բաց կը թողնէր. [3]) երեխայ. [4]) թաղ. [5]) խրատիր. [6]) կը ծծծէր.
[7]) դային։

Բ.

Դաւիթ գնաց զՄհեր տփեց,
Մէկ ճլխտի մ'եզար Մհերին։
Տղէն էլաւ Դաւթի փողպատ [1]),
Խէր, տղէն առան յիրուր,
Զարկեցին յիրարու։
Էնպէս կռիւ արին,
Թող էլաւ, էնոնք բռնեց.
Մընչ արընին կարմրցան։

Զուհալ տուին Խանդութ խաթնին, ասացին.
— Խանդութ խաթուն, իլի վիր.
Դաւիթ Մհեր յիրար առած՝ սպանեցին։
Խանդութ խաթուն էլաւ, իրիշկեց,—
Ի՞նչ իրիշկեց, տեսաւ.
Տեսաւ՝ որ ինչ էրկու սար
Կ'երթան, կըկեան, դիպնին յիրար,
Էնպէս ի Դաւիթ, Մհեր առած յիրար։
Մարդ չէր կարայ մօտենայ.
Խանդութ խաթուն առեց կանչի, ասաց.

«Դաւի՛թ, տիւ մը՛ զարնէ [2]),
«Դաւի՛թ, տիւ մը՛ զարնէ,
«Միր Նորալիւկ մէկ տակ մանուկին»։

Դաւիթ չը՛ զարնէ,
Համա ընկի յիւր խոգու բառաւանչէն,
Յիւր ախու կը զարնէ Մհերին։
Խանդութ խաթուն դոր ասաց.

«Մհե՛ր, տիւ մը՛ զարնէ [2]),
«Մհե՛ր, տիւ մը՛ զարնէ
«Միր թուխ մօրուս Դաւթին»։

Մհեր իսկի չը լսաւ։
Խանդութ խաթուն դոր էրգեց.

«Օրհնա՛լ, բարերա՛ր Աւուած,
Քեռ հրամանքն էր շատ.
«Հրաման էնես՝ Գաբրէլ հրեշտակ վէր իջնէր,
Խէր, տղեկ մէմէկիս յիտ կտրէր»։

---

[1]) Եախիս բռնեց. [2]) երդ են։

Աստու հրամանքիւ Գաբրէլ հրեշտակ վէր իջաւ,
Չեռ եռու, գիսէր, տղէն յիտ կտրեց իրարուց,
Ինչ որ էրկու դիք [1]) կուին,
Մէկ էրթայ յիտ կտրայ։
Դաւիթ կանչեց, ասաց.
— Մհեր, որ տիւ խետ ձի կռիւ արիր,
Զի ամանչըցրիր մընչ խալխին,
Կանչիր եմ քաղցրիկ Աստած,
Թեռ մտէն ժառանգ չընկնի տիւրս,
Թե մախ չընի, չուր Քրիստոս կեայ դատաստան։
Աստու հրամանքիւ
Հրեշտակ Մհերի միջաց էրակ քաշեց,
Որ էնու մտէն ժառանդ չընկնի տիւրս մընչ աշխարքին։

Գ.

Էս անէծք եռու, էլաւ, էկաւ տուն։
Ինչ կռիւ արին խետ Մհերին,
Մընչ արընին կարմրցիր էր.
Ասաց.—Ամանդութ խաթուն, ճիւր բի լացիմ։
Դաւիթ գիւր շորեր եխան՝ տը լացէր,
Աչք առեց վար իւր աջ թևին,
Աչ-պատարագին սևացիր էր վար աջ թևին։
Ասաց.—Ամանդութ խաթուն,
Էն չէր Մհերի դարբեր՝ կը գէր վար իմ գլխուն,
Էն Աչ-պատարագին էր, ձի կը գարնէր։
Կնիկ, ես տ'երթամ տախ Զմշկիկ Սուլթան,
Յերդում արի ութ օր՝ գնաց ութ տարի։
Կնիկ, ես գնացի. . .

Ասաց, էլաւ, խնծաւ գՔուռկիկ-Զալալին,
Գնաց, խասաւ յէռջև Զմշկիկ Սուլթանի սարին [2])։
Զմշկիկ Սուլթան տեսաւ,
Որ Դաւիթ գնաց յէռջև էնու սարին,—
Մտաւ, քիրէն [3]) վառեց,
Գիւթնի խոտ եքից կրակին։
Դաւիթ մտաւ Զմշկիկ Սուլթանի բախչէն.
Զիւր խալաւքեր [4]) եխան,
Մտաւ, մընչ հաւուզին [5]) լոդացաւ։
Էլաւ տիւրս, իւր խալաւքեր տը խագնէր,
Զմշկիկ Սուլթան փանջարէն ինի
Զգիւթնի խոտ ֆռացրեց,
Եզար վար Դաւթի քամկին,

---

[1]) Աքլոր. [2]) ապարանք. [3]) բուրայ. [4]) շորեր. [5]) աւազան։

Սրտէն ինի եռու տիւրս։
Դաւիթ—տիւ, քեռ անուշ Ջան սաղ ըլնի—մեռաւ։
Ջուհաւի բերին Խանդութ խաթնին՝
Դաւիթ սպանաւ առանց կռիւ։
Խանդութ խաթուն լէ մէկ թաս զէհիր [1]) խմաւ,
Դաւթի կսկծու Խանդութ խաթուն լէ մեռաւ։

Դ.

Մհեր ճնաց հեթը՛մ։
Զէնով-Ցովան զՄհեր տփեց,
Էլ չպախեց, ասաց.
— Մհեր, կոնդ ես, խեռ քեռ խէր կռիւ արիր,
Իլի՛, գնա՛ միր քաղքէն,
Մը դա՛դրի միր քաղաք։
Մհեր էլաւ գնաց, վար խօր գերեզմնին կայնաւ.
Ելաց, ասաց.

«Խէրի՛կ վ՚ի՞նչխ անեմ [2]),
«Խէրի՛կ, վ՚ի՞նչխ անեմ,
«Ասօր ձի Սասմայ քաղքէն
«Բեհբար ի խանած [3])»։

Ասծու հրամանքիւ ձէն ընկաւ խօր գերեզման,
Գերեզմնից ձէն էլաւ, ասաց.

«Որդի՛, վ՚ի՞նչխ անեմ [2]),
Գացիր մէջալն [4]) ի ձեռնէս.
Գացիր մէջալն ի ձեռնէս,
Թափիր մաղերն երեսէս։
Գնա՛ Հալաբայ քաղաք,
Լա՛, քեռ խաց թխուկ է,
Լա՛, քեռ խաց թխուկ է,
Քեռ կերակուր եփուկ է»։

Մհեր էնքան էլաց,
Էլ ձէն չելաւ խօր գերեզմնէն։
Դոր գնաց վար մօր գերեզմնին.
Ելաց, ասաց.

«Մէրի՛կ, վ՚ի՞նչխ անեմ [2]),
«Մէրի՛կ, վ՚ի՞նչխ անեմ,
«Ասօր ձի Սասմայ քաղքէն
«Բեհբար ի խանած»։

---

[1]) Թոյն. [2]) երդեր են. [3]) աքսորած են [4]) ժամանակ։

Աստու հրամանքիւ ձէն ընկաւ մօր գերեզման,
Գերեզմնէն ձէն էլաւ, ասաց.

«Որդի՛, վ՚ինչխ անեմ[1]),
Գացիր դաւրանը ձեռնէս,
Գացիր դաւրանը ձեռնէս,
Թափիր մազերն ի գլխէս։
Գնա՛ Հալարայ քաղաք,
Լա՛, քեռ յոդէն աւլուկ է.
Լա՛, քեռ յոդէն աւլուկ է,
Քեռ շորեր փոռուկ է»։

Էնքան էլաց, էլ ձէն չելաւ գերեզմնէն,
Էդա մէկ խօսք էլաւ։
Սասմայ քաղքէն ուրուս էլաւ, գնաց, ասաց.

«Ողորմած, բարերար Աստուծ[1]),
Ես չեմ գիտի Հալարայ քաղաք,
Ես չեմ գիտի Հալարայ քաղաք,
Ես տել տղայ եմ, ես յո՞ւր երթամ»։

Ն.

Գնաց խասաւ մէկ ճամբէն միջին,
Տեսաւ՝ պառաւ մածնի շերեփ բռնի ձեռ, էկաւ։
Մհեր ասաց.—Պառաւ, յո՞ւր ո՛երթաս։
Պառաւ ասաց.—Յո՞ւր տերթամ.
Ես լսիր իմ Դաւիթ սպանած ին,
Դաւիթ եօթ տղայ ձի սպանիր ի,
Ես լսիր իմ Դաւթին մէկ տղայ կայ՝ անուն Մհեր,—տ՚երթամ՝
էրկու էսա մածնու շերեփով դարկեմ վար Մհերի գլխուն, սպանեմ, որ
իմ սիրտ խոշնայ։
Մհեր էլաւ զպառաւ բռնեց,
Ոտ եդի վար ուռաց,
Զպառաւ ճղեց, էրաւ էրկու կտոր,
Եթալ էնտեղ, գնաց։

Գնաց, տեսաւ մէկ տեղաց մուխ ըմ կ՚ելնի։
Յէրի [2]) տակ էր. գնաց էն յէրի տակ։
Տեսաւ՝ մէկ պառաւ նստի, խաց կը թխի.
Ծծեր թալիր վար թեքերուն,
Ծծեր ինչխ շան լակոտ յիրար կառնուն։
Մհեր վախացաւ, ասաց.
Թը գեղտիկ թլլեմ, էնու ծծեր բռնեմ,

---

[1]) Երգեր են. [2]) այր, քարայր։

Տ'ելնի կեօլ, ընկնի մըչ իմ սրտին.
Թ'աշքեարայ անեմ, վախենամ էնի ձի յաղթի։
Քամկի տեխէն գեաղտիկ թլլեց,
Պառու ծծեր բռնեց, քամեց.
Արուն, արնճիւր էկաւ տիւս ծծերաց։
Պառաւ ասաց.

— Ա՜խ, ես յիմացիր էր՝ Դաւիթ սպանիր են, էս Դաւթի զարմի գարբերին ի ձի խասաւ։—Ասաց.—Իմ ծծեր թուղ տուր, մէկ աղջիկ ունիմ, անուն Գոհար խաթուն, եօթ տարի էլաւ՝ Հալաբայ թագաւորի թրի վրայ ի՝ չեմ ի տայ էնոր. թուղ տուր, իմ աղջիկ տամ քե։

Մհեր թուղ ետու։ Խարցրեց Հալաբայ քաղաք. գնաց քաղաք, էլաւ տէրտէրուչ մշակ։ Խինգ-վեց օր մնաց, դօշում կը հաւաքեն. նօրաթ բերին վար տէրտէրուչ։ Տէրտէր ասաց.

— Ես տէրտէր եմ, ես ի՞նչխ էրթամ կոխ։—Մհեր ասաց.

— Տէրտէր, ես կ'երթամ։—Տէրտէր ասաց.

Որդի, տիւ պզտիկ ես, տիւ կոխ գնաս, զքե սպանեն, քեռ մեղք ընկնի իմ վի՞զ։

Խլիսուն Մհեր էլաւ վիր. մէկ անթաբոց մ'եթալ յիւր թև, էլաւ, գնաց կոխ։ Չի չկար. տեսաւ, որ մէկ մեծաւոր էնտեխէն էկաւ։ Մհեր ասաց՝ ես Մհեր ըլնիմ, ձի չունի՞մ։ Էդար էն մեծաւոր ձիուց երի տակ. էնու ձին խեծաւ, քշեց կուու յառաջ։

Գոհար խաթուն՝ որ աչք ընկաւ, զՄհեր տեսաւ, ուրախութենէ փախաւ յէռջն, գնաց, մտաւ յիւր սարէն։ Մհեր լէ գնաց, մտաւ էնտեխ։ Կերան, խմեն, իրանց քէֆ արին չուր Խլիսուն։

Խլիսուն Գոհար խաթուն ասաց.

— Մհեր, գնա՛, Հալաբայ թագաւորին ասա՝ Գոհար եկի ռայիդ. Գոհար խաթուն կ'ասէր՝ Ինչքան մարդ էնու քաղաք կայ, կեան իմ խել. վով կարայ քթէլ վերուցի, չմնայ քաղաք։ Որ ով կարայ քթէլ վերուցի՝ չկեայ, ես չեմ իկեայ։

Մհեր գնաց, ասաց Հալաբայ թագաւորին, էկաւ մօտ Գոհար խաթուն։

Հալաբայ թագաւորի տալալ ընկաւ քաղաք, կանչեց, ասաց.

— Հայ հէյ, վով կարայ քթէլ վերուցի, կենայ թագաւորի խել։

Գոհար խաթուն Մհերին ասաց.

— Ինչուր էնու խելու հիտ [1]) քաղքէն կտրի, տիւ գնա՛, յետեանց գա՛ր, կտրի, ես լէ յառջեանց գարկեմ, կտրեմ։

Մհեր գնաց։ Որ խելին հիտ քաղքէն կտրաւ, մախասոյգ մնաց յիտուց, առնց սպանել։ Գոհար խաթուն յէռջեուց սպանեց, չուր Գոհար խաթուն Մհեր առան յիրար։ Ասքեար ըմեն կոտորեցին, գնացին, մտան Գոհար խաթնի սարէն։

Մհեր եօթ օր, եօթ գիշեր զիւր խարանխ էրաւ։

---

[1]) Հետ։

Զ.

Քառասուն տարի անցաւ, Գոհար խաթուն մեռաւ։ Մհեր էլաւ զիւր ձին խեծաւ, գնաց նէճիր անէր։ Նէճիրուանքտեր զՄհեր բռնեցին, տարան թլեցին խուր վէ։

Մէկ շիւար պառուն բան չկէր, մէկ աղջիկ կէր։ Պառաւ ասաց՝ Իմ աղջիկ տանեմ, քցեմ խուր վէ մօտ Մհեր, որ իմ աղջկան մօտէն տղէ մ' ելնի փէհլեւանութիւն անի, մենք լէ ապրինք։ Պառաւ առաւ զիւր աղջիկ, տարաւ, եթալ խուր վէ մօտ Մհեր։ Մհեր զաղջիկ ճղեց, էրաւ էրկու կտոր, թալ վեր։ Էլաւ զշրիդ [1]) պառուս աղջկան մէջքէն արձըկեց, կապեց յիւր մէջք, ասաց՝ Մարէ [2]) ձի քաշէ տիւրս։ Մհեր շատ ծանդր էր. պառաւ չէր գիտի-Մհերն էր, ասաց՝ Մհեր, քեռ շնորհ-քին մեռնեմ, ինչի իմ աղջիկ շուտով ընցկուն ծանդրացաւ։ Քաշեց, եկան խորու բերան, տեսաւ՝ Մհերն էր, ճանկւերով էկաւ տախ Մհեր, ուզէր թլէր մինչ խորուն զՄհեր,—չկրցաւ թլել։ Մհեր էլաւ զպառաւ լէ եթալ մընչ խորուն, սալ եղի վար բերնին։

Մհեր էլաւ, կ'ուզէր որ գնայ,
Որ զոտքեր կը թլէր՝ կ'երթէր մընչ խոզուն,
Խոզ յէոջև թուլացիր էր,
Չէր դադրի յէոջև Մհերին։
Գնաց մտաւ Խլաթայ յէրի տակ։
Քանի մ' օր անցաւ, մէկ մարդ ձիաւոր իրի [3]).
Մհեր գնաց էնու ձին խլեց.
Էլաւ, զձին խեծաւ,
Կ'ուզէր էլ ըմ փէհլեւանութիւն անէր։
Զին խեծաւ, քշեց մընչ դաշտին,
Գետին յէոջև թուլացիր էր.
Զին կը խրէր մընչ խոզին,
Խոզ չէր դադրի յէոջև Մհերին։

Մհեր բան տարի Խլաթայ յէրի տակ աղօթ էրաւ, ասաց.

«Ո՜վ Տէր Աւուած,
Իմ խօր անէծք ձի խասիր ի,
Իմ միջաց էրակ քաշիր ի,
Իմ մօտէն ժառանգ չընկաւ մըչ աշխարքին.
Զի էլ մախ չկայ, չուր Քրիստոս կեայ դատաստան։
Ո՜վ Տէր Աւուած, զքիդ եմ կանչիր.
Տիւ ընցկուն էնես, ձի ձգես Վանայ քար,
Զուր Քրիստոս կեայ դատաստան,
Իմ խոզու ճարը էնիս։

---

[1]) Պարան. [2]) մայրիկ. [3]) եկաւ։

Աւած հրամանք էրաւ,
Զէնիկ մարմնաւոր եթալ Վանայ քար,
Զուր Քրիստոս կեայ դատաստան։

Կ'ասեն՝ ամեն խամբարձման գիշեր Մհերի քարի տիւռ կը բացւի. մարդ չի՛ տեսնէ, հրամանք չկայ մարդ տեսնայ։ Մէկ տարուան խարս ի տեսի։ Էն խարս կով բերի նախիր, որթիկ փախիր, յիտև որթիկան գացիր, ընկիր էն քար։ Քարի տիւռ բացւի, Մհեր քարի միջէն ելիր ի։ Խարս էկի տուն խաբար տի. չուր գացած ի էնտեղ, տիւռ փակւիր ի։

Էլ հրամանք չկայ մարդ տեսնայ,
Զուր Քրիստոս կեայ դատաստան։

Գրի առաւ՝ Մ. Աբեղեան

ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՒԻԹ

(Վարիանտներից մէկը)

ՀԱՏԻՒՆ

Հռոմայի նկեաւ մէջ էտ էլին, զրմէն էլ քաշեց տուր։ Մենակ մէկ Թօփալ կճէ [1]) մը, որ գնացեր էր վեր գետին, ապատաւ, գնաց մօտ Մարայ Մէլիքն, ճչալով խապար տուեց թէ, քեռ էլն զրմէն թրէ ընցուց Սասունայ գեաւուրն։

Մարայ թագաւոր մէճլիս արաց, խէլացի մարդեր ժողուեց, ընտնցմէ խորհուրդ խարցուց, որ ուր ճամպախ մը նշանց ատն Սասնայ գեաւուրի կեանքը երկրէն վերցնելու, որ ուր թագաւորութեն չը կործանի։

Էն ժողովքի մէջ Կոզ Պախտին անունով մէկ կտրիճ փահլեան մը կէր, ասաց թագաւորին թէ. «Քե լայեխ [2]) չեմ տեսնայ, որ տիւ խեծել անես, էրթաս վեր գեաւուրի մը։ Չիկ քառասուն հատ ֆէհրըզ փահլեան տուր, էրթամ Սասնայ քեաղաք՝ թալան անեմ բերեմ քե խամար։

Քառասուն հատ էրկէն կընկտեր բերեմ, որ քեռ ըզտեր բառնան.
Քառասուն կօլօտ կնիկ բերեմ, որ էրկանք աղան.
Քառասուն ազապ լաճ բերեմ, հէօլ խաղան.
Քառասուն ազապ աղջիկ բերեմ քե արմաղան։
Քառասուն հատ աջառ, քառասուն հատ էրինջ բերեմ.
Քառասուն չափ սիւտակ առծաթ, քառասուն չափ տեղին ոսկի բերեմ քե խառջ։

Թագաւոր ինոր կամք կատարեց։ Կոզ Պախտին տուեց քառասուն փահլեան, քշեց վեր Սասնոյ քեաղքին. ուր ասած կընկտեր, մարդեր, տաւարներ հրմէն բռնեց, ջոկ ջոկ տներու մէջ դրեց, դռներ փակեց։ Զափն առեց գնաց տեխ բերդ։

---

[1]) Թուրքի, քրդի աղջիկ, կին. [2]) Վայել։

Տաւիթ որ սար նէճիրուԹնի գնացեր էր, էկաւ քաղաք տէսաւ, որ կորեկի առաի տէր պառաւ նատե Տաւիթին կանիծի ԹէՀ, քեռ պառաճառաւ Մարայ Մէլիք իմ ախջիկն էլ խեռ մէկալոնց բռնեց տարաւ էսիր։—Տաւիթն ասաց. տիւ արե խեռ ձիկ էն տուռ, որ ախջկներ նեբա լցեր են, ձիկ նշանց տուր, քեռ ախջիկ կաղատեմ։ Պառաւ զըմէն դրոներ Տաւիթին նշանց իտուր։ Տաւիթ տոներ կոտուռեց, էսիրներ ազատեց, քշեց գնաց բերդ, տէսաւ որ Կոզ Պախտինի քառասուն փահլեաններ Թրեր չլտած [1]) կէտն մէկ կողմը, կէտն մէկ էլ նստեր են։

Տաւիթն ինոնց բարև իտուր, հարցուց. «Ահապայ խօրօխպէրներ ի՞նչ կանեն բերդի մէջ»։—Ճուղապ տուին ԹէՀ, ինչի՞ կը խարցուցես։—Ասաց էրԹամ ինոնց օգնեմ։—Փահլեաններ ասին՝ ինոնք ի՞նչ արին, որ տիւ ինչ պիտի անես։ Էս խօսքի վէրէն Տաւիթ բարկացաւ, բռնեց էն քառասունի վիզն էլ իրենց փորից տիւրա քեաշեց, ինչի որ մարդ մը խաւու վիզ տիւրս քեաշի. գնաց մօտ խօրօխպէրքեր ասաց. «Ծօ, ինչ կանէք՝ շոտ արէք, Մարայ Մէլիքի խեծել մեր քեաղաքն աւիրեց»։

Խօրօխպէրներ, որ չափ ուրենց ձեռ բռնած, քառասուն չափ սիւտակ առծաԹ չափեր ին, ինոնց ձեռքէն առեց ասաց. «Տէէք որ ոսկին էլ ես չափեմ»։ Զափն առեց կոռձեց գետին, քեանի մը խաա ոսկի լցեց վեր ոռքին, փէտն առեց որ չափ սրբէ։

Կոզ Պախտին որ ինոր ծաղր անելն տէսաւ, բարկացաւ, կիւռզն առեց որ Տաւիթին զարնէր։ Տաւիթն ասաց. «Ինչի՞ կը զարնես, խեծել քեաղաքն աւիրեր ի, ինոր խատար ես էլ շաշըրԹմիշ արեր եմ»։ Ասելուն պէս չափն վէրուց իզարկ մէջ Կոզ Պախտինի գլխուն, բռնեց լեզուն բերնէն քեաշեց տուրս, կարեց. բերնիցն էլ էրկու ատամ քեակեց, լեզուն իտի վեր Կոզ Պախտինի ճակատին. էն ատմեներով բիրռեց [2]) վէրէն. յետոյ Կոզ Պախտին իտեառջև խէծուց վեր ձիուն, ձեռքեր կապեց իտեանց. ոտքեր կապեց ձիու փորի տակը, ձին քշեց տեխ Մարայ քեաղաք, ասաց. «Էսայ խօրօտ նմուշով էրԹաս կայնես քեռ Թագաւորու առջև»։

Զին որ Մարայ ճամպախ կիտէր, շիտակ գնաց, չուտ խատան Մարայ գետի բերան. էն տեղ կնկտիք նստած լաց կանէին, դառձան՝

Տեխ Կոզ Պախտին շակշայ բերան.
Մուրուս բռնեմ խնչեմ բերան.
«Տիւ կասիր տի էրԹամ Սասուն բերեմ Թալան»։
— Ծօ անամօԹ կնկտիք, ընչի ըսկուն կասէք.
Ես գիտցայ դաշտ էր մէյդան,
Ես չը գիտցայ քեաբ էր կապան։
Ինոնց սլաքներն էր խոփական,
Կը զարնին մարդ կը խանին պատուխան։
Հալայ ես էկայ... բերան,
Գարնան գետ կուգայ
Ձեր իրկներաց...
Կը բիրի ձե եզ չորԹան։

---

[1]) Մերկացրած. [2]) Մեխեց։

Կոզ Պախտին քշեց ուր ձին, գնաց Մարայ Մէլիքի չատրի առջև կայնաւ։ Մէլիք սր տէսաւ, ասաց ուր մշակներաց. «Ասծու սիրուն էտայ տարէք զատ, ես իտոր նմուշ չը տեսնամ»։ Ետոյ բերաւ թաշտ մը, տրեց ուր առջև. առծլի մը պարկեց ուր ճակատ, արուն թափաւ, թաշտ լցուց. բերեց մէկ կէօլէօն [1]) թուղթ, էն արունով գրեց, օրօխկեց մէկն արևելեան թագաւորուն, մէկն արևմտեան, մէկն հիւսիսին, մէկն հարաւին, որ եօթ փաշայ իրենց խեծելով գեան հիմատատ [2])։ Մարայ Մէլիք տէսաւ, որ չորս կողմէն ուր հիմատատներ կը խատնեն. ձէնով էս խաղն ասաց.

«Էկան որ էկան լոտրիկ [3]) ճհէլներ, էկան կէօ խարիր խազար խամար.
Էկան որ էկան թատ պեղ ճհէլներ, կէօ էկան խարիր խազար խամար.
Էկան որ էկան մուրուս կնատուկներ, էկան կէօ խարիր խազար խամար.
Էկան որ էկան ծաղ [4]) մուրուսաւորներ, էկան կէօ խարիր խազար խամար.
Էկան որ էկան կըրկզուկներ [5]), էկան կէօ խարիր խազար խամար.
Էկան որ էկան զուռնայ փչողներ, էկան կէօ խարիր խազար խամար.
Էկան որ էկան նազարայ զարկողներ, էկան կէօ խարիր խազար խամար.
Էկան որ էկան փող փչողներ, էկան կեօ խարիր խազար խամար.
Էկան որ էկան տուտուկ փչողներ, էկան կէօ խարիր խազար խամար.
Էկան որ էկան շաւեռ [6]) քեաշողներ. էկան կէօ խարիր խազար խամար.
Էկան որ էկան տիւֆ զարկողներ, էկան կէօ խարիր խազար խամար.
Էկան որ էկան եօն փաշութեն, չորս կողմ աշխրէն.
Էկան որ էկան իմ սէֆիլ [7]) հիմատատ։ Ժարէ, Մէլիք, որ ժարէ [8])»։

Ըսկում ունթիւ անխամար խեծել էկան, որ Խոշապայ գետ խասած ժամանակ՝ առջի էկողներ չրի կէսն խմեցին, մինչին էկողներ մնացած չիւրն թամամ խմեցին. իտուի էկողներ գետի քէօռեր [9]) լիզեցին, մնացած խեծելն էլ ծարաւ մնացին։ Էկան խասան Պշէրկայ դաշտ, վրան զարկին։ Էրկնուց աստղերաց խիտապ կէր, չատրներաց չկէր։ Ջիւապ կոզօրկեն Մէլիքին. «Մեր տիւշման վրով ի, որ խետ ինոր կոիւ տի անենք»։

Էն գիշեր Մարայ Մէլիքի մէր իրեք էրազ տէսաւ։ Քուն որ խուտնաւ, էլաւ էկաւ Մէլիքի բառձի վերև նստաւ, ասաց. «Ո՛րդի, ես կէս գիշերին էրազ մը տէսայ. Մարայ աստղն մութն խաւար էր, Սասնայ աստղն լոյսն պայծառ էր։ Մէկ տիր էլ էրազ տէսայ. Սասնայ ձին կիւզէր, կը զարնէր Մարայ ձիու մէջք կը կոտրէր։ Մէկ տիր էլ տէսայ, որ Սասնայ խոյ կուզէր կը զարնէր, Մարայ խոյի վիզ կը կոտրէր, կը տանէր յանախնտ, կը կորսցուցէր։ Արե մ'էրթայ վեր էն գեաւուրին, իմ խօսքին ականջ արա»։

— Մէրիկ, ասաց Մէլիք, Սասնու վէրէն չէրթամ կէլնի՞. էսայ եօթն փաշէք ուրենց խեծելով իկեր են. ես ինչ ջիւղապ տամ ուրենց։— Մէր ասաց. էս կօլայն է, որդի։ Տիւ պե ինոնց խլղաթի ճամբի, ուրենց ասքրով էրթան ուրենց տեղը։ Երբ քե կը խարցուցեն, թէ մե կանչելու պատճառն ինչ էր. տիւ ասա, ես չէի գիտեր, ձիկ ըսկնէմ ասքեար կէր. մկայ ձե կանչեցի իմացայ. ըստիւց որայ երբ կռալ [10]) մը խետ ձիկ թշնամութեն անի, գայ վէրէս, ես էս կարողութենով ինոնց կանամ յաղթե։ Տէ, էրթաք բարով. ձեր տեղ գնացէք։

---

[1]) կոյտ. [2]) օգնութիւն. [3]) անմօրուք. [4]) ծաղկած. [5]) ալեոր. [6]) ջութակ. [7]) խեղճ. [8]) տկար. [9]) Ցեխեր. [10]) թագաւոր։

Եռոյ ասքեար որ քիչ մը զատացաւ, փաշէքտեկաց մէջէն մէկն ասաց մէկալոնց. «Տիւք իմացա՞ք մեր եռ օղօրկելու պատճառն ինչ էր։ —Չէ, ասին։ Պատմեց ինոնց թէ, Սասուն մէկ գեաւուր մը կայ. մէկ պլուլիկ գեաւուր մը ի։ Ինոր վէրէն կռիւ տի էրթայինք՝ Մէլիք չիշիցաւ. ինոր խամար մե եռ կը ճամիխ։

Էս խօսք որ Մէլիքի ականճ խասաւ, զինք չը կուորելու խամար ասքեար եռ կանչեց, ասաց. «Իմ կռիւ կռիւ է։ Ձեր տեղ նատեցէք, որ կուի էրթանք։ Եռոյ Ջիւաղ խրկեց Սասնոյ գեաւուրին թէ, կու գեանս կռիւի, չէ թէ, ես կուգեամ քեռ քեաղաք Ջրով Ջրհեղեղով կընցուցեմ»։

Զէնով Յովան էս բան որ լսեց, գնաց մօտ Տաւիթն, պատմեց ու ասաց. «Մեր ձեռքէն չի գայ, որ ինոր խետ կուենք. ինչխ որ փխացուցիր, ըսկուն էլ թամիզցուր»։ Տաւիթն ասաց. «Ես ոչ ձի ունիմ, ոչ սիլախ. ձիկ սիլախ ու ձի տուէք, որ կուի էրթամ»։ Զէնով Յովհան ասաց. «Գնա փակխի [1]) ձիերուց ձի մը, յօղի թրերուց էլ թուր մը ջոկի, որն որ կուգես»։ Տաւիթ մտաւ փակախ. որ ձիու քեամկի վէրէն որ ձեռ դրեց, ձիու պոռան ասեց գէտին։ Էն տեղ մէկ կոռտ [2]) քիւռակ մը կէր. ձեռք վէրէն տրելուն պէս չիֆթէմ [3]) զարկեց պատին. կրակ մէնէն թռաւ։ Էն ձին ընտրեց, թրերաց մէջէն էլ շանկռոտ թուր մը։

Երբ որ տիւրս խանեց, կորկի առտի տէր խալիւորը, որ տէսաւ, ասաց. «Տաւիթ, որդի, էտ ինչ պիտի անես»։—Ասաց կէրթամ վեր Մարայ Մէլիքին կռիւ։—Ասաց, որդի, խոռնցմով ի՞նչ կանաս անի Մէլիքի անթիւ խեծելին։ Քեռ խօր կայ քիւռկու Ջալալին, թամքն սատաֆին, քամար ֆէհրսին [4]), թուրն կէծակին, խօտէն զրին [5]) խաչն պատարագին, որ տնես վեր աջ թեւիտ, տրուպն [6]) քե չառնի։

Տաւիթն ասաց. խօրօխպէրս չի տայ։ Ես ի՞նչխ ինոր մօտէն տի առնեմ։—Խալիւորն ասաց. գնա քեաղաք եօթ տիկ եօթ տարեան գինի առ, բեր խմցուր քեռ խօրօխպէրներաց. երբ կը սարիսշնան, ասա ինոնց, որ տան, որ չը տին խաթրով, ասա կառնեմ իմ զօռով։ Տաւիթ խալիւորի խրատ կատարեց, պատիւ տուեց ինոնց։

Երբ սարիսշցան, զէօվքով ասաց ինոնց. «Օրհնեա՛լ բարերար Աստուած, խնամք շատ էր մեծ թագաւորուն. խօրօխպէր, ասաց Տաւիթ, իմ խօր կայ քիւռկու Ջալալին, թուրն կէծակին, խաչն պատարագին, կուտաս քեռ խաթրով, չէ կառնեմ զօռով»։

Յովան ագիտաւ [7]) ասաց. «Տաւիթ, քեռ բերան կուորէր, տիւ էտայ չասիր ձիկ»։ Եռոյ տառձաւ ասաց.

«Տաւիթ, չունեմ եմ մէջաց որդին, որ քեմ [8]) կէնայ պէհն [9]) Մէլիքին։
Չունեմ եմ քիւրոջ որդին, որ քեմ կէնայ պէհն Մէլիքին։
Չունեմ եմ ախպօր որդին, որ քեմ կէնայ պէհն Մէլիքին։

---

[1]) Ախոռ, [2]) անպէտք, բոսոտ. [3]) աքացի. [4]) կտրիճ. [5]) գլխի զրահ. [6]) հարուածը. [7]) զարթնել, ուշքի գալ. [8]) դէմ. [9]) Նէֆէսի տակ։

Տաւիթ վէրցուց ասաց.

«Օրհնեա՛լ բարեբար Աստուած,
Անամք շատ էր մեծ թագաւորուն։
Խօրօխպէր խամ[1]) մի անե.
Ես եմ քեռ մէջաց որդին, որ քեմ կէնամ պէհն Մէլիքին.
Ես եմ քեռ քիւրոջ որդին, որ քեմ կէնամ պէհն Մէլիքին.
Ես եմ քեռ ախպօր որդին, որ քեմ կէնամ պէհն Մէլիքին»։

Խօրօխպէրն առաւտուն էլաւ, ձին թախըմով Տաւիթի բոլոր ուզածներով տուեց, ասաց. «Ա՛ռ կընայ ես քե չը տեսնամ. ինչխ գիտես՝ ըսկուն արա»։ Տաւիթ առեց ձին, գնաց գետի բերան. Զէնով Յովան էլ գեախտիկ էրկու մարդ իտուէն ճամխեց, ասաց. «Գնացէք տեսէք, թէ որ Տաւիթ ձիուն կօլան[2]) քաշելու ժամանակ՝ ձիու չորս ոտ գէտնէն կը կտրցուցի իսայ, կանայ էն ձին զաւթէ»։ Ղորդ որ, Տաւիթ երբ ձին գետի մէջ լուաց, թամքն տրեց վեր ձիուն, կօլան կքեց, ըսկուն քեաշեց, որ ձիու չորս ոտ չորս թիզ գետնէն կտրաւ, խասաւ չում ուր ծնկեր։

Մարդեր գնացին, իրենց տեսած պատմեցին Զէնով Յովանին։ Մէր որ մեռեր էր՝ Զէնով Յովան չում էն օր սուգ կապեր էր. էս բան որ լսեց, նաղարէք զարնել տուեց, արին ուրախութեն, արին տօնախըմբութեն, շատ ուրախացան։

Մարդ մը վազեց գնաց վեր Տաւթի մօր Սինամ Խաթունի էրտին, ակընջկլայ[3]) տուեց, ասաց. «Սինամ Խաթուն, տիւ ինչի՞ մռեր ես հօթոտանի մէջ. էլի տես որ Տաւիթ ուր խօր չափին խասեր է. ուր խօր քիւռակ խէծե, թուրը կապե, տի էրթայ վեր Մարայ Մէլիքին կոխ»։ Տաւիթի մէր որ լսեց, թողեց ուր սուգն, էլաւ տիւրս Տաւիթն տեսնալու։ Իմացուցին Տաւիթին ուր մօր գալն. Տաւիթն ձիուց վար թռաւ, վազեց ուր մօր դիրքն ինկեաւ. մէրն էլ ուր բերնով օրհնեց Տաւիթ ու Մարայ ասքեարն անիծեց։

Տաւիթ ուր պատրաստութեն որ տեսաւ, քանի մը խալիւոր մարդ ժողվեցին, Տաւիթին ինկեր տին, ճամխեցին։ Տաւիթն էն խալիւորներուն վէրէն խղճաց, ասաց. «Տիւք գնացէք Ծովասարու Մարութի բանձր Աստուածածին, ձիկ խամար աղօթք արէք։ Ես կերթամ կուռիլու»։

Տաւիթ գնաց խասաւ մէկ բարակ առու մը, ձին չուզեց ընցնել էն առից. քիւնչի Մէրն երբ էնտեղ խասնէր, խանք[4]) կառնէր։ Տաւիթ տէսաւ, որ ձին չանցնե, իջաւ քնաւ։ Ձին էլ կայնաւ արևու դէմ, խով արեց վէրէն։ Մարութի վանքի պատարագ որ պռձան, խրեշտակն էկաւ իմացուց ձիուն, ձին էլ Տաւթին։ Տաւիթն որ էլաւ նստաւ, մէկ խատ փոընքտաց, ուր մէջ քեամար ֆէհրսին, որ քառասուն կիսոր բամբակ տրեր էր մէջ, կապեր էր, անջախ կէլնէր ուր մէջկով, փոընքտալուն պէս քեամար կտուռաւ. ինքն քիւնչի տհա[5]) պատիկ էր, էն գեախ ճոճացաւ, լցաւ, էլաւ չանց[6]) ուր խէր։

Էլաւ թռաւ վեր ձիուն, Աստծու անուն տուեց, քշեց խասաւ Ծովասարու մօտ, էն քեարերուց, ախպրներուց, սարերուց խալալութեն ուզեց։ Մնաք բարով ասաց ու սկսեց.

---

[1]) Հոգ. [2]) փորքաշ. [3]) աչքալոյս՝ [4]) հանդիպում. [5]) գեռ ես, [6]) քանց։

«Օրհնեալ բարերար Աստուած, խնամք շատ էր մեծ թագաւորուն.
Ծովասարու պաղ պաղ ախալրները, մնացէք բարով, բարի մնացէք։
Ես կերթամ կռիւ, կը ծարւնամ, տիւք կարօտ մնացէք։
Ծովասարու պաղ պաղ քեամիքն էլ մնացէք բարով, բարի մնացէք։
Ես կերթամ կռիւ, կը շոգանամ, տիւք խով մնացէք»։

Ասաց ու քշեց գնաց խեծլի դիմաց. տէսաւ որ երկնուց աստղին խիստապ կէր, ինոնց վրանին խիստապ չկէր։ Էնտեղ իջաւ նստաւ, մէղեց վեր ուր հալին։ Տարթլանմիշ եղաւ, ասեց.

«Օրհնեալ բարերար Աստուած, խնամք շատ էր մեծ թագաւորուն.
Ես էլնեմ գեարնան գէլ, ինոնք էլնեն գեարնան գեառ, չեմ կանայ արնոտե։
Ինոնք էլնեն բամբակ, ես էլնեմ կրակ, չեմ կանայ մշախարե։
Ինոնք էլնեն փուշն փալախ [1]), չոր ցախ, ես էլնեմ բոց ու կրակ, չեմ կանայ վառե։
Ինոնք էլնեն կրակ, ես էլնեմ գեարնան գեառ, չեմ կանայ ընցուցե»։

Էս խօսքի վէրէն Աստծու խնամքով ձին սկսեց խօսել ու ասաց.

«Օրհնեալ բարերար Աստուած,
Խնամք շատ էր մեծ թագաւորուն։
Տաւիթ խամ մի աներ։
Ըսկում որ տիւ տի սպանես քեռ խօր կէծակի թրովը, ես տի սպանեմ իմ ոտաց սմերով։
Ըսկում որ տիւ սպանես քեռ կոռգերով, ես տը սպանեմ իմ պոչի մազերով։
Ըսկում որ տիւ սպանես քեռ սմերով, ես տի սպանեմ իմ քթի շնչով»։

Տաւիթի սիրտ ձիու խօսքերով պնդեցաւ կանչեց.
«Օրհնեալ բարերար Աստուած, ասաց, խնամք շատ էր մեծ թագաւորուն»։ Կանչեց խեծլին. «Որ ինչ արթիւն էք, ձիանք թամքեցէք, որ ինչ քիւն՝ արթիւն մնացէք, ձեր ճարը տեսէք, չասէք Տաւիթ գող էր, գողութնով էկաւ վեր մեզ»։

«Ջոչանց սուն», Ս. Կանայեան

---

[1]) Սպիտակ խոտ։

ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՒԻԹԸ

I

Առիւծ-Մհերը, զարմով դիւցազուն,
Բառասուն տարի իշխում էր Սասուն.
Իշխում էր ահեղ ու նրա օրով
Հաւքն էլ չէր անցնում
Սասմայ սարերով։
Սասմայ սարերից շատ ու շատ հեռու
Թնդում էր նրա հռչակն ահարկու,
Խօսւում էր իր փառքն,
արարքն անվեհեր,
Հազար բերան էր՝ մի Առիւծ Մհեր,

II

Էսպէս ահաւոր առիւծի նման
Սասմայ սարերում նստած էր իշխան
Բառասուն տարի։ Բառասուն տարում
«Ախ» չէր քաշել նա
դեռ իրեն օրում.
Բայց հիմի, երբ որ եկաւ ծերացաւ,
Էն անահ սիրտը ներս սողաց մի ցաւ։
Սկսաւ մտածել դիւցազուն ծերը.
—Հասել են կեանքիս աշնան օրերը,
Շուտով սև հողին կերթամ ես գերի,
Կանցնի ծխի պէս փառքը Մհերի,
Կանցնեն՝ և՝ անուն, և՝ սարսափ, և՝ ահ.
Իմ անտէր ու որբ աշխարքի վրայ
Ոտի կը կանգնեն հազար քաջ ու դև...
Մի ժառանգ չունեմ՝ իմ անցման ետև՝
Իմ թուրը կապի, Սասուն պահպանի...»
Ու միտք էր անում հսկան ծերունի։

III

Մի օր էլ էն գորշ յօնքերը կիտած
Երբ միտք էր անում,
երկնքից յանկարծ
Մի հուր-հրեղէն յայտնուեց քաջին,
Ոտները ամպոտ՝ կանգնեց առաջին։
—Ողջո՛յն մեծազօր
Սատանայ հսկային.
Քու ձէնը հասաւ Աստծու գահին,
Ու շուտով նա քեզ մի զաւակ կը տայ։
Բայց լաւ իմանաս, լեռների արքայ,
Ո՛ր օրը որ քեզ ժառանգ է տուել,
Էն օր կը մեռնէք՝ քու կինն էլ, դու էլ։
—Իր կամքը լինի,—ասաւ Մահերը.—
Մենք մահինն ենք միշտ
ու մահը մերը.
Բայց որ աշխարքում
ժառանգ ունենանք,
Մենք էլ նրանով անմահ կը մնանք»։
Հրեշտակն էստեղ
ցոլացաւ նորից,
Ու էս երջանիկ աւետման օրից
Երբ ինն ամիս, ինը ժամն անցաւ,
Առիւծ Մահերը զաւակ ունեցաւ։
Դաւիթ անուանեց իրեն կորիւնին,
Կանչեց իր եղբայր Զէնով Օհանին,
Երկիրն ու որդին աւանդեց նրան,
Ու կինն էլ, ինքն էլ էն օրը մեռան։

IV

Էս դարում Մսրը անյաղթ ու հզօր
Մսրայ-Մելիքն էր նստած թագաւոր։
Հենց որ իմացաւ էլ Մահեր չը կայ,
Վեր կացաւ կռուով Սասունի վրայ։
Զէնով Օհանը ահից սարսափած՝
Թշնամու առաջն ելաւ գլխաբաց,
Աղաչանք արաւ, ընկաւ ոտները.
—Դու եղիր, ասաւ, մեր գլխի տէրը,
Ու քու շաբում քանի որ մենք կանք,
Քու ծառան լինենք,
քու խարջը միշտ տանք,
Միայն մեր երկիրը քարուքանդ չանես,
Ու քաղցը աչքով մեզ մտիկ պանես։

—Չէ, ասաւ Մելիք,
քու ամբողջ ազգով
Անց պիտի կենաս իմ թրի տակով,
Որ էգուց-էլօր ինչ էլ որ անեմ,
Ոչ մի սասունցի թուր չառնի իմ դէմ։
Ու գնաց Օհան, բոլոր բովանդակ
Սասունը բերաւ, քաշեց թրի տակ.
Մենակ Դաւիթը, ինչ արին, չարին,
Մօտ չեկաւ դուշման Մելիքի թրին։
Եկան քաշեցին, թէ զօրով տանեն,
Թափ տուաւ մարդկանց
ձգեց դէս ու դէն։
Փոքրիկ ճկոյթը մի քարի տուաւ,
Ապառաժ քարից կրակ դուրս թռաւ։
—Պէտք է ըսպանեմ
էս փոքրիկ ծուռին,—
Ասաւ թագաւորն իրեն մեծերին։
—Թագաւոր, ասին, դու էսքան հզօր,
Թրիդ տակին է ողջ Սասունն էսօր,
Ի՞նչ պէտք է անի քեզ մի երեխայ,
Թէկուզ իր տեղով
հենց կրակ դառնայ։
—Դուք գիտէք,—ասաւ
Մսրայ թագաւոր,—
Բայց թէ իմ գլխին
փորձանք գայ մի օր,
Էս օրը վկայ,
Սրանից կը գայ։

V

Էս որ պատահեց,
մեր Դաւիթ հսկան
Մի մանուկ էր դեռ
եօթ ութ տարեկան.
Մանուկ եմ ասում, բայց էնքան ուժեղ,
Որ նրա համար թէ մարդ, թէ մժեղ։
Վայ է խեղճ որբին աշխարքի վրայ,
Թէկուզ Առիւծի կորիւն լինի նա։
Զէնով Օհանին ունէր մի չար կին։
Մին երկու լռեց, մի օր էլ կարդին
Իրեն մարդու հետ սկսեց կռուել.
—Ես մենակ հոգի, հաղար ցաւի տէր,
Ի՞նչ ես ուրիշի եթիմը բերել,

Նստեցրել գլխիս
պարապ հացակեր...
Հողեմ գլուխը... ես գերի հո չեմ,
Ամենքի քէֆի ետևից թռչեմ...
Մի կուռ կոբցըրու, կարգիր մի բանի,
Գնայ իր համար աշխատանք անի...»
Ու հետն սկսաւ ողբալ ու կոծել,
Իր օրը սգալ, իր բախտն անիծել,
Թէ անբախտ եղաւ աշխարքի միջում,
Ո՛չ մի տէր ունի,
ոչ մարդն է խղճում...
Ու գնաց Օհան երեխի ոտի
Մի զոյգ ոտնաման բերաւ երկաթի,
Երկաթի մի կոռ շալակին դրած,
Ու արաւ Սասմայ
քաղքի գառնարած։

VI

Քշեց գառները մեր հովիւ հսկան,
Ելաւ Սասունի սարերն աննման.
—Է՛յ, ջան սարեր,
Սասմա՛ն սարեր...
Որ կանչեց, նրա ձէնից ահաւոր
Դղորդ-դըմբդըմբոցն
ընկաւ սար ու ձոր,
Վայրի գազաններ բներից փախան,
Քարէքար ընկան, դադարկուն եղան։
Դաւիթը ընկաւ նրանց ետևից,
Որին մի սարից, որին մի ձորից
Աղէս, նապաստակ,
գէլ, եղնիկ բռնեց,
Հաւաքեց բերաւ, գառներին խառնեց,
Իրիկուան քշեց ողջ Սասմայ քաղաք։
Կաղկանձ ու ոռնոց,
աղմուկ, աղաղակ.
Քաղքցիք յանկարծ մին էլ էն տեսան,
Գալիս են հրէս անհամար գազան։
—Վա՛յ, հարա՛յ, փախէ՛ք...»
Մեծեր, երեխէք
Սրտաճաք եղած, գործները թողած,
Ո՛րը տուն ընկաւ,
ո՛րը ժամ, խանութ,
Ու ամուր փակեց
Դուռն ու լուսամուտ։

Դաւիթը եկաւ կանգնեց մէյդանում.
—Վա՜հ, էս մարդիկը
ինչ վաղ են քնում։
Հէյ ուլատէր, հէյ գառնատէր,
Ելէք շուտով բացէք դռներ.
Ով մինն ունէր, տասն եմ բերել,
Ով տասն ունէր քսան արել...
Շուտով ելէք, եկէք տարէք,
Ձեր գառն ու ուլ դոմերն արէք»։
Տեսաւ՝ չեն գալի,
դուռ չեն բաց անում,
Ինքն էլ մեկնըւեց քաղքի մէյդանում,
Գլուխը դրաւ մի քարի, մնաց,
Ու մուշ-մուշ քնեց մինչև լուսաբաց։
Լուսին իշխաններ եկան միասին,
Գնացին Ձէնով Օհանին ասին.
—Ամա՜ն, քեզ մատաղ,
այ Օհան ախպէր,
Մեր գառն ու մեր ուլ
թող մնան անտէր,
Միայն սրանից ազատ արա մեզ.
Ո՛չ գառն է ջոկում,
ոչ գէլն ու աղուէս,
Էս քաղքի գլխին փորձանք կը բերի,
Գէլերոց կանի, կը տայ կաւերի։

VII

Եկաւ Դաւթի մօտ գնաց Օհանը։
—Հը՜, Դաւիթ, ասաւ,
ինչ է քո բանը։
—Հօրեղբայր Օհան,
շատ է դժար բան.
Էն կարմիր, անպոչ գառները որ կան,
Խելօք են, ամա պոչաւոր գառներ
Ցրուեցին, փախան
ողջ սարերն ի վեր,
Էնքան վաղեցի, որ եկաւ հոգիս,
Էլ իսկի տրեխս չը մնաց հագիս։
—Դաւի՛թ ջան, ասաւ,
էդ շատ է դժուար.
Արի նետ-աղեղ շինեմ քեզ համար,
Նետ-աղեղդ առ, գնա որս արա,
Մանր արի ազատ սարերի վրայ։
Նետ-աղեղն առաւ Դաւիթ Օհանից,

Հեռացաւ քաղքից, քաղքի սահմանից
Ու դառաւ որսկան։
Գնաց մի կորկում
Լոր էր սպանում,
Ճնճղուկ էր զարկում,
Մթանը գնում իրան հոր ծանօթ
Աղքատ, անորդի մի ծեր կնկայ մօտ,
Վիշապի նման երկար, ահագին
Մեկնւում, քնում կրակի կողքին։
Մի օր էլ, երբոր իր որսից դարձաւ,
Պառաւը վրէն սաստիկ բարկացաւ.
—Վայ Դաւիթ, ասաւ,
մահս տանի քեզ,
Դու պէտք է էն հոր զաւակը լինես։
Ձեռից ու ոտից ընկած մի ծեր կին,
Ես եմ ու էն արտն Աստրծու տակին,
Ինչու ես գնում տափում, տրորում,
Իմ ամբողջ տարեայ,
ապրուստը կտրում։
Թէ որսկան ես դու, նետ աղեղդ ա՛ռ,
Ծծմակայ գլխից մինչև Սեղանսար
Քու հէրը ձեռին մի աշխարհ ունէր,
Որսով մէջը լի որսի սար ունէր.
Եղնիկ կայ էնտեղ,
Այծեամ ու պախրայ.
Կարող ես, գնա՛ էնտեղ որս արա։
—Ի՞նչ ես, ա՛յ պառաւ,
էլ ինձ անիծում,
Ես ջահել եմ դեռ, ես նոր եմ լսում.
Ո՞րտեղ է հապա սարը մեր որսի...
—Գնա՛, հօրեղբայրդ՝ Օհանը կասի։

VIII

Հօրեղբօր շէնքում միւս օրը ծէգին
Դաւիթը կանգնեց աղեղը ձեռքին։
—Հօրեղբա՛յր Օհան,
ինչո՞ւ չես ասել,
Իմ հէրը որսի սար է ունեցել,
Այծեամ կայ էնտեղ,
եղջերու, կխտար.
Վէր կաց, հօրեղբայր,
Տա՛ր ինձ որսասար։
—Վա՛յ, կանչեց Օհան,
էդ քո խօսքը չէր,

Իդ մի քնդ տուաւ,
Ինքնէն դարձանէէր։
Էն տարբ, ուրդի գնաց մեր հեռից,
Էն տարբ որմն էլ գնաց էն տարից։
Էլ չը կամ տեսնում, եղբներս, կիրառար,
Քանի լուսեղէն քոս հերը դեռ կար,
Էդ դիդի տրեր, դրանդ էր կրքեր։
Ես չատ եմ էնտեղ որդի մեր կեր...
Քոս հերը մեռաւ. Ամուսնի խոսքից
Մարայ Թադաւոր դրքեր ժողովեց,
Երբաւ մեր երիտ քարուքանդ տրաւ,
Էն տարբ որմն էլ Թալանեց, տարաւ,
Երգնիկը գնաց, եղբներս գնաց...
Մեր դերն էլ հալբարթ Լուսէն էր դրած,
Ասցնէ է, ուրդի, քոս բանին գնա,
Մարայ Թադաւոր հէնդ կիմանաց...
—Մարայ Թադաւոր
Քեզ թնչ կանի որ...
Ես թնչ եմ հարցնում
Մարայ Թադաւոր...
Մարայ Թադաւոր Թող Մարը կենաց,
Իմ հոր տարերում թնչ գործ ունի նա...
Վեր կաց, հերեղբայր, նեռ-ադեղդ առ,
Կապարճդ կապիր,
գնանք որսատար։
Երաւ Օհանը ճարը կտրած,
Գնացին տեսան՝ էլ թնչ որսատար-
Անտառը ջարդած, պարիսպն աւերած,
Բուրգերը արած գետնին հաւասար...

IX

Դիշերը հասաւ, մնացին էնտեղ։
Զէնով Օհանն էր՝ իր նեռն ու ադեղ
Դրաւ գլխի տակ,
հանգիստ խոժոց։
Դաւիթը մնաց մտքի ծովը ընկած։
Մին էլ նկատեց, որ մութը հեռում
Մի թէժ, փայլփլուն կրակ է վառում։
Էն լուսը բռնած
Վեր կացաւ գնաց,
Գնաց ու գնաց, բարձրացաւ մի սար,
Բարձրացաւ, տեսաւ,
մի մեծ մարմար քար՝
Դիսից պատուած

Ու մթից վառած
Բխում է լուսը պարզ, քուլա-քուլա,
Բարձրանում, իջնում ետ քարի վրայ։
Վար իջաւ Դաւիթ էնտեղից կրկին,
Վար իջաւ, կանչեց Զէնով Օհանին։
—Ել, հօրեղբայր, քանի քնես,
Ել, էն պայծառ լուսը մի տես։
Լուս է իջել բարձր սարին,
Բարձր սարին, մարմար քարին.
Ել հօրեղբայր, անուշ քնից,
Էն ինչ լուս է բխում քարից։
Ելաւ խաչ քաշեց Օհանն երեսին։
—Է՛յ, որդի, ասաւ,—
մեռնեմ իր լուսին,
Էն մեր Մարութայ սարն է զօրաւոր։
Էն լուսի տեղը կանգնած էր մի օր
Սասայ ապաւէն, Սասայ պահապան,
Մեր սուրբ Տիրամօր
վանքը Զարխափան։
Մշտական, երբ որ կռիւ էր գնում,
Էնտեղ էր քո հէրն իր աղօթքն անում։
Քո հէրը մեռաւ, Աստուած խռովեց,
Սրբայ թագաւոր զօրքեր ժողովեց,
Մեր վանքն էլ եկաւ
քանդեց էն սարում,
Բայց դեռ սեղանից
լուս է բարձրանում...

X

Դաւիթը էս էլ երբ որ իմացաւ,
—Անուշ հօրեղբայր,
հօրեղբայր, ասաւ.
Որ եմ ու անտէր աշխարքի վրայ,
Հէր չունեմ՝ դու ինձ հէրութիւն արա։
Էլ չեմ իջնի ես Մարութայ սարից,
Մինչև չը շինեմ մեր վանքը նորից։
Քեզանից կուզեմ
հինգ հարիւր վարպետ,
Հինգ հազար բանուոր
մշակ նրանց հետ,
Որ դան՝ էս շարաթ
կանգնեն ու բանեն,
Առաջեան կարգով մեր վանքը շինեն։
Գնաց Օհանը ու բերաւ իր հետ

Հինգ հազար բանուոր,
Հինգ հարիւր վարպետ։
Վարպետ ու բանուոր եկան կանգնեցին,
Զբրբ՛խկ հա թբրբխկ, նորից շինեցին,
Առաջուան կարգով փառքով փառաւոր
Բարձր Մարութայ վանքը Տիրամօր։
Ցրուած միաբանք եւ նորից եկան,
Նորից թնդացին աղօթք, շարական.
Ու երբ շէն արաւ հօր վանքը նորից,
Ցած իջաւ Դաւիթ
Մարութայ սարից։

XI

Համբաւը տարան Մարայ Մելիքին.
—Հապա՞ չես ասիլ՝ Դաւիթը կրկին
Հօր վանքը շինել, իշխան է դառել,
Դու օխտը տարուան խարջը չես առել։
Մելիք զայրացաւ։
—Գնացէք, ասաւ,
Բաղին, Կոզբադին,
Սիւդին, Զարխադին,
Սասմայ քար ու հող
տակն ու վեր արէք,
Իմ օխտը տարուան խարաջը բերէք։
Քառասուն կոյս աղջիկ
բերէք արմաղան,
Քառասուն կարճ կնիկ,
որ երկանք ապան,
Քառասունն էլ երկար,
որ ուղտեր բառնան,
Իմ տանն ու դռան զարուաշ դառնան,
Ու Կոզբադին առաւ զօրքեր.
—Գլխիս վրայ, ասաւ, իմ տէր.
Գնամ հիմի քանդեմ Սասուն,
Կանայք բերեմ քառասուն-քառասուն,
Քառասուն բեռնով դեղին ոսկի,
Տեղը ջնջեմ Հայոց աղգի։
Ասաւ, Մարայ աղջիկ ու կին
Պար բռնեցին ու երգեցին։
—Մեր Կոզբադին գնաց Սասուն,
Կանայք բերի քառասուն-քառասուն,
Քառասուն բեռնով ոսկի բերի,
Մեր ճակատին շարան շարի,
Կարմիր կովեր բերի կթան՝

Գարնան շինենք եղ ու չորթան։
Ջան Կոզբադին, քաջ Կոզբադին,
Սասմայ Դաւթին զարկեց գետին...»
Ու Կոզբադին փքւած, ուռած,
—Շնորհակալ եմ, քոյրեր, գոռաց,
Մինչև գալս դեռ համբերէք,
Էն ժամանակ պիտի պարէք...»

XII

Էսպէս երգով,
Զօրով զօրքով
Գոռ Կոզբադին մտաւ Սասուն.
Օհան լսեց, կապւեց լեզուն։
Աղ ու հացով,
Լաց ու թացով
Առաջն ելաւ,
Խնդիրք արաւ։
—Ինչ որ կուզես՝
առ տար, ամէն,
Վարդ աղջիկներ,
Կանայք Սասման,
Դուռը դաղած դեղին ոսկին,
Միայն թէ դթայ մեր խեղճ ազգին,
Մի կոտորի, մի տալ մահու,
Վերն՝ Ասուած, ներքեր՝ դու...
Ասաւ, բերաւ շարան-շարան
Վարդ աղջիկներ, կանայք Սասման։
Ու Կոզբադին կանգնեց, ջոկեց,
Մարագն առաւ դուռը փակեց,
Քառասուն կոյս աղջիկ,
սիրուն արմաղան,
Քառասուն կարճ կնիկ,
որ երկանք աղան,
Քառասուն էլ երկար,
որ ուղտեր բառնան,
Մարայ Մելիքին զարաւաշ դառնան,
Դէզ-դէզ կիտեց դեղին ոսկին,
Սև սուգ կալաւ Հայոց ազգին։

XIII

Հէյ, ճար ես, Դաւիթ,
Հայոց պահապան,
Քարը պատուի,
դուրս արի մէյդան։

Բանդած հոր վանքը որ շինեց Նորից,
Ցած իջաւ Դաւիթ
Մըսրայ սարից,
Ժանգոտած, անկոթ
մի շեղբիկ դուռ,
Դնաց պատուի շաղգամը մտաւ։
Պատուն էր, եկաւ՝ անէծք, ապաշակ։
—Վա՛յ, խեղճո Դաւիթ,
շաղգամի տեղակ
Դու կրակ ուտես ցաւ, ուտես, սատ,
Քո աչքն աշխարքում
մենակ ինձ տեսաւ։
Կորեկս արիր գետնին հաւասար,
Էս էր մնացել ձմռան պաշար,
Էս էլ կտրում ես,
Էլ ոնց ապրեմ ես։
Թէ կտրիճ ես դու, աղեղդ առ, գնա,
Քո հոր գանձը կեր
Թողել ես անտէր,
Մսրայ Թագաւոր գրկել է տանի։
—Էլ ինչ ես վրէս բարկանում, նանի,
Էդ ինչ ես ասում,
ես չեմ հասկանում,
Մսրայ Թագաւոր մեր ինչն է տանում։
—Մսրայ Թագաւոր
մեր ինչն է տանում...
Մսրայ Թագաւոր քո աչքն է հանում,
Դանդալոշ Դաւիթ. գրկել է հրէն,
Եկել են Սասմայ քաղաքի վրէն
Բաղին, Կոզբաղին,
Սիւղին, Զարխաղին,
Թալան են տալիս բոլանդակ Սասուն.
Քառասուն բեռ ոսկի
խարաջ են ուզում,
Քառասուն կոյս աղջիկ
սիրուն, արմաղան,
Քառասուն կարճ կընիկ,
որ երկանք ապան,
Քառասուն էլ երկար,
որ ուղտեր բառնան,
Մսրայ Մելիքին զարաւաշ գառնան։
—Ինչ ես, ա՛յ պառու,
էլ ինձ անիծում.
Ցոյց տուր մի տեսնեմ,
ո՞ւրտեղ են ուզում։

—Ո՞ւրտեղ են ուզում...
Մահս տանի քեզ.
Դու պէտք է էն հոր զաւակը լինես...
Եկել ես՝ էստեղ շաղգամ ես լափում...
Ոսկին Կոզբադին ձեր տանն է չափում,
Աղջիկներ փլեկ մարագն են լցրած։
Շաղգամը թողեց Դաւիթը՝ գնաց։
Տեսաւ՝ Կոզբադին իրենց տան միջին
Չափում է ոսկին թեղած առաջին,
Սիւդին, Զարխադին
պարկերն են բռնել,
Զէնով Օհանն էլ շլինքը ծռել,
Կանգնել է հեռու, ձեռները ծոցին։
Տեսաւ, աչքերը արնով լցուեցին։
—Վէր կաց, Կոզբադին,
հեռու կանգնիր դու,
Իմ հոր ոսկին է, ես եմ չափելու։
Կոզբադին ասաւ.—Է՛յ, Զէնով Օհան,
Կը տաս՝ տուր խարջը
էս օխտը տարեան,
Թէ չէ՝ կը գնամ, միրուքս վկայ,
Մարայ Մելիքին կը պատմեմ, կը գայ,
Ձեր Սասմայ երկիր քարուքանդ կանի,
Տեղը կը վարի, բոստան կը ցանի։
—Կորէք, գնացէք,
դուք Մարայ շներ,
Որոտաց Դաւիթ, ասես ամպ լինէր.
Մեռած էք կարծում
դուք մեզ, թէ՞ չաք,
Եկել էք Սասուն գնէք խարջի տակ...
Ասաւ, չափն առաւ էնպէս շպրտեց,
Տաւ Կոզբադնի գլուխը ջարդեց,
Չափի փշրանքը պատն անցաւ, գնաց,
Մինչև օրս էլ դեռ գնում է թռած։
Ու եկան՝ թափած ոսկին թողեցին,
Հայոց աշխարքից փախան գնացին՝
Բադին, Կոզբադին,
Սիւդին, Զարխադին։

XIV

—Վայ, վայ, հօրեղբայր,
ինչ ասում ես քեզ.
Մենք ունենք էստեղ դեղին ոսկու դէզ,
Դու արել ես ինձ քաղաքի ծառան,

Դու թողել ես ինձ օտարի դռան...
Հօրեղբայրն ասաւ.—
Ա՛յ խենթ, խելագար,
Ոսկին պահել եմ Մելիքի համար,
Որ քաղցր լինի աչքը մեզ վրայ։
Զը տուիր՝ հիմի
որ զօրք առնի գայ,
Սասմայ քար ու հող հեղեղի, տանի,
Ո՞վ դէմը կերթայ, ո՞վ կռիւ կանի։
—Դու կնց, հօրեղբայր,
թող գայ, ես կերթամ,
Կերթամ ես նրան
պատասխան կը տամ։
Ու մութ մարագի դռանը զարկեց,
Փակած աղջիկներ հանեց, արձակեց.
—Գնացէք, ասաւ, ազատ ապրեցէք,
Սասունցի Դաւթին արեւ խնդրեցէք։

XV

Էսպէս ջարդուած, արիւնլուայ
Փախան ընկան հողը Մարայ
Բաղին, Կոզբաղին,
Սիւդին, Զարխաղին։
Մարայ կանայք հեռից տեսան,
Հեռից տեսան՝ ուրախացան
Ու ծափ տին կտուրներին.
—Եկան, եկան, բերին, բերին...
Մեր Կոզբաղին գնաց Սասուն,
Կանայք բերաւ քառասուն-քառասուն,
Կարմիր կովեր բերաւ կթան,
Գարնան շինենք եղ ու չորթան...»
Հենց մօտեցան, նկատեցին,
Ծափ ու խնդում ընդհատեցին,
Քըրքըջացին
Ու կանչեցին։
—Է՛յ, Կոզբաղին մեծարերան,
Էդ ո՞ւտեղից լերան-լերան,
Լերան-լերան կը գաս փախած,
Հասա գլուխդ կխլից ճղած։
Էն դու չասիր՝ գնամ Սասուն,
Կանայք բերիմ քառասուն-քառասուն,
Քառասուն բեռնով ոսկի հանեմ,
Հայոց երկիր աւեր անեմ։
Գացիր Սասուն քանց գէլ գազան,

Եւ ես գալիս քանց շուն վազան...
Ու Կողբադին խիստ բարկացաւ.
—Սուս կացէք դուք, լրբեր, ասաւ.
Ձեր մարդիկն էք տեսել դուք դեռ,
Դուք չէք տեսել Սասմայ ծռեր։
Սասմայ ծռեր լերան-լարան,
Նետեր ունին մի-մի գերան.
Սասմայ երկիր քար ու կապան,
Դժար սարեր, ձոր ու ծապան.
Նրանց խոտեր, ինչպէս կեռ թուր,
Զօրք ջարդեցին երեք հարիւր...
Ասաւ ու էլ չառաւ դադար,
Վռազ-վռազ, դէխապատառ
Վազեց իրեն թագաւորին.
Խնդաց թագաւորն իր աթոռին։
—Ապրես, ապրես, քաջ Կողբադին,
Արժէ կախեմ ես քո ճտին
Մեր զուզունի մեծ նշանը՝
Պարգև էդ մեծ յաղթութեանը։
Ո՞ւր են հապա, առաջս բեր
Սասմայ ոսկին ու աղջիկներ։
Ասաւ Մելիք, ու Կողբադին
Գլուխ տուաւ մինչև գետին.
—Ապրած կենաս, մեծ թագաւոր,
Զօռով փախայ ես ձիաւոր,
Ո՞նց բերէի Սասմայ ոսկին։
Մի խենթ ծնուեց Հայոց ազգին,
Ո՛չ ահ գիտի, ոչ տէր ու մեծ,
Գլուխս էապէս տուաւ, ջարդեց։
—Ձեմ տայ, ասաւ, իմ հօր ոսկին,
Ձեմ տայ կանայք իմ Հայ ազգին,
Սասմայ երկիր ձեզ բան չը կայ...
Քո թագաւոր, ասաւ, թող գայ։
Թող գայ ինձ հետ կռիւ անի,
Թէ կտրիճ է՝ զօռով տանի։
Կատաղեց, փըրփըրեց
Մարայ թագաւոր.
—Կանչեցէք, ասաւ, իմ զօրքը բոլոր.
Հազար հազար մարդ նորելուկ մանուկ,
Հազար հազար մարդ անբեղ, անմօրուք,
Հազար հազար մարդ բեղը նոր ծլած,
Հազար հազար մարդ
Նոր թախտից ելած,
Հազար հազար մարդ
Թուխ միրուքաւոր,

Հազար հազար մարդ
սիպտակ ալևոր,
Հազար հազար մարդ
որ փողեր հնչեն,
Հազար հազար մարդ
որ թմբուկ զարկեն...
Կանչեցէք, թող գան,
հագնեն զէնք, զրահ,
Կռիւ տի գնամ ես Դաւթի վրայ,
Սասունն աւերեմ,
Հեղեղեմ, բերեմ։

XVI

Էսպէս անհամար զօրքեր հաւաքեց,
Եկաւ Սասմայ դաշտ բանակը զարկեց
Ու ծանր նստեց Մարայ Թագաւոր։
Էնքան ահագին բազմութիւնն էն օր
Բաթմանայ ջրին եկաւ ու չոքեց,
Ով եկաւ, խմեց, գետը ցամաքեց,
Սասմայ քաղաքում մնացին ծարաւ։
Զէնով Օհանին զարմանքը տարաւ։
Քուրքը ուսն առաւ,
սարը բարձրացաւ,
Սարը բարձրացաւ,
տեսաւ, ի՞նչ տեսաւ.
Հերմակ վրանից դաշտը ճերմակել,
Ասես էն գիշեր ձմեռը եկել
Սպիտակ ձիւնով պատել էր Սասուն։
Լեղին ջուր կտրեց,
կապ ընկաւ լեզուն,
Հարայ կանչելով,
փախաւ, տուն ընկաւ,
—Վայ, փախէ՛ք, եկա՜ւ...
հայ հարայ, եկա՜ւ...
—Ի՞նչը, հօրեղբայր,
ի՞նչը, ի՞նչն եկաւ...
—Ցաւն ու կրակը
Դաւթի պինչն եկաւ.
Մարայ Թագաւոր եկել է, եկել,
Եկել մեր դաշտում բանակ է զարկել.
Թիւ կայ աստղերին,
Թիւ չը կայ զօրքին...
Վայ մեր արևին,
վայ մեր աշխարքին...

Ե՛կ ոսկին տանենք,
աղջիկներ տանենք,
Զոքենք առաջին, պաղատանք անենք,
Դուցէ թէ գթայ,
Մեզ սրի չը տայ...
—Դու կա՛ց, հօրեղբայր,
դու դարդ մի անիր,
Գնա՛ բու օդում դու հանդիստ քնիր,
Հիմի ես կելնեմ,
Սասմայ դաշտ կերթամ,
Մարայ Մելիքին պատասխան կը տամ։
Ու գնաց Դաւիթ ծանօթ պառաւին.
—Նանի ջան, ասա՛,
ժանգոտած ու հին
Երկաթի կտոր, անթարոց, շամփուր,
Ինչ ունես չունես
հաւաքիր, ինձ տուր,
Մի էշ էլ գտիր, որ վրէն նստեմ,
Կռիւ եմ գնում Մարայ զօրքի դէմ։
—Վա՛յ, Դաւի՛թ, ասա՛,
մահս տանի՞ քեզ,
Դու՞ պէտք է էն հօր դաւակը լինես...
Բո հէրն ունէր կռի՞ համար
Զրահ շապիկ, ոսկի՞ քամար,
Անգին կապայ, հրեղէն ձի,
Իր աջ թևին խաչ պատրաստի,
Կուռ սաղաւարտ, կայծակի-թուր,
Իսկ դու կուզես էշ ու շամփուր...
—Ամա՛ն, նանի՛, չեմ լսել դեռ,
Ո՞ւր են հիմի իմ հօր զէնքեր։
—Հօրեղբօրդ գնա հարցուր.
Ո՞ւր են, ասա, հանի՛, բեր տո՛ւր.
Բան է, թէ որ չը տայ սիրով,
Աչքը հանի՛, խլի՛ զօռով։

XVII

Դաւիթ գնաց հօրեղբօր մօտ։
—Է՛յ, հօրեղբայր, կանչեց ցասկոտ,
Իմ հէրն ունէր կռի՞ համար
Զրահ շապիկ, ոսկի՞ քամար,
Անգին կապայ, հրեղէն ձի,
Իր աջ թևին խաչ պատրաստի,
Կուռ սաղաւարտ, կայծակի-թուր.
Էր ասա, բեր տո՛ւր...

[illegible]

XVIII

[illegible]

—Սիրելիս, [illegible]
[illegible]
Ա՛խ, [illegible]
Սիրելիս, [illegible]
[illegible]
Ա՛խ, [illegible]
Սիրելիս [illegible]
[illegible]
Ա՛խ, որ հոգին տարաւ...
Դաւիթ բարկացաւ,
Ձին քշեց, դարձաւ,
Օհանը վախեց,
Իր երդը փոխեց.
«Սիրելիս, նորելուկ Դաւիթս կորաւ,
Ա՛խ, Դաւիթս կորաւ»,
Էս որ խնացաւ,
Դաւիթ մեղմացաւ,
Իջաւ Օհանի ձեռքը համբուրեց,
Ձէնամ Օհանն էլ, ինչպէս հէր ու մեծ,
Օրհնեց, խրատեց նրան հայրաբար,
Դէպի Սասունց դաշտ
դրաւ ճանապարհ։

XIX

Սասունցի Դաւիթ ունէր մի քեռի,
Անունը Թորոս, ահեղ ամրոցում
Սա էլ խնացաւ համբաւը կուռ,

Մի բարդի ուսին գալիս է անա։
Գալիս է հեռից բարձր գոռալով.
—Ի՞նչ էք վեր եկել էս դաշտի մեջում,
Քանի գլխանի մարդ էք դուք կամ ով,
Սասունցի Դաւթին
որ չէք ճանաչում...
Բա չէք իմանում, որ էսաեղ է նա
Դալու խաղացնի իր ձին թեւաւոր.
Հեռացէք, հիմի ուր որ է՝ կը գայ,
Եկել եմ արքեմ մէյդանը էսօր։
Ասաւ ու քաշեց իր ուսի բարդին,
Սրբեց բանակից մի քսան վրան...
Դաւիթն էլ անա սարի գագաթին
Կանգնած գոռում է վիշապի նման.
—Ով քնած էք՝ արթուն կացէք,
Ով արթուն էք՝ ելէք, կեցէք,
Ով կեցեր էք՝ ղէնք կապեցէք,
Ձէնք էք կապել՝ ձի թամբեցէք,
Ձի էք թամբել՝ ելէք, հեծէք.
Յետոյ չասէք, թէ մենք քնած՝
Դաւիթ գող-գող եկաւ, գնաց...»
Էսպէս կանչեց, ասպանդակեց,
Ու ինչ, տմպի կայծակ զարկի,
Մարայ զօրքի մէջտեղ զարկեց,
Շողացնելով թուր կայծակին։
Ջարդեց, փշրեց մինչև կէսօր.
Կէսօր արինն ելաւ հեղեղ,
Բշեց տարաւ հաղարաւոր
Մարդ ու դիակ ողջ միատեղ։
Կար զօրքի մէջ մի ալեոր,
Աշխարքը տեսած ու բանագէտ.
—Տղէք, ասաւ, ճամբա տուէք,
Գնամ խօսեմ ես Դաւթի հետ։
Գնաց կանգնեց Դաւթի առաջ,
Էսպէս խօսեց էն ծերունին։
—Դալար կենայ կուռդ, ով քաջ,
Սուրդ կտրուկ միշտ քու ձեռքն։
Մի ծերունուս խօսքին մտիկ,
Տես, քու խելքը ինչ է կտրում.
Ի՞նչ են արել քեզ էս մարդիկ,
Հէ՞ր ես սրանց դու կոտորում։
Ամեն մինը մի մօր որդի,
Ամեն մինը մի տան ճրագ,
Որը կինն է թողել էնտեղ
Աչքը ճամբին, խեղճ ու կրակ,

Որք մի տուն մեք մտնենք,
Որք ճոպ ապրատ ու ծեք,
Որք լսեմ, քանի երթանք
Նորատապատ ջանիկ նորքանք...
Թագաւորը գոռով թրով
Հաւարեալ է նստեալ բերդիկ,
Խնդ մարդիկ մեք պատկաս տրամ,
Մեմք բեղ ելեալ թանկ մեք ապրիկ։
Թագաւորն է քա թշնամին,
Կոխ ունեալ, իր հետ տրա,
Հէր նա քաշում թուր-կապտանկին
Էս անեծարակ խաղին վրայ։
—Լաւ նա սատ դաս, ծերունի,
Ասաս Դաւիթն ազատին,
Բայց թագաւորն ուր է հիմի,
Որ սև կապեմ նրա տրին։
—Մեծ վրանում քնած է նա։
Էն՞ն, որ միջից ծուխը կելնի։
Էն ծուխն էլ հա ծուխ չէ, որ կայ,
Դոլորշին է իր բերանին։
Ասին՝ դէպի մեծ վրանը
Ասպանդակից Դաւիթն իր ձին,
Թշնդ, գնաց ու դռանը
Դուռայ կանգնած աբաբներին։
—Ո՞ւր է, աստ, ինչ է կորել,
Դուրս կանչեցէք, գայ ասպարէզ,
Թէ մահ չունի՝ մահ եմ բերել,
Դրոշ չունի՝ գրոշն եմ ես...
—Մելիքն, ասին, քուն է մտել,
Օխտը օրով պէտք է քնի.
Երեք օրն է դեռ անց կացել
Չորս օր էլ կայ՝ քունը առնի։
—Ինչ, բերել է աղքատ ու խեղճ
Խալխին լցրել ծուղն արիւնի,
Ինքը մտել վրանի մէջ
Օխտը օրով հանգիստ քնի...
Քնել-Մնել չեմ հասկանում.
Վեր կացրէք շուտ,
զուրս գայ մէյդան.
Էնպէս գրան ես քնեցնեմ,
Որ չը զարթնի էլ յաւիտեան»։
Ելան մարդիկ հարահատուած,
Շամփուր դրին թէժ կրակին
Ու զարկեցին խոր մրափած
Մարալ-Մելքի բաց կրնկին։

—Օ՜ֆ, էլ հանդիստ
քուն չունի մարդ
էս անիծված լուի ձեռից,
Որ մոնչաց հսկան հանդարտ
Ու շուռ եկաւ, քնեց նորից։
Ելան բերին մեծ դուքանի
Սափը դրին թէժ կրակին,
Ու կաս-կարմիր, կէծկծալի
Շիկնած աւին մերկ թիկունքին։
—Օ՜ֆ, էլ հանդիստ քուն չունի մարդ
էս անիրաւ մոծակներից.
Աչքը բացաւ հսկան հանդարտ,
Ուզում էր եւ քնել նորից,
Տեսաւ Դաւիթն։ Գլուխն ահեղ
Վեր բարձրացրեց մոնչալով,
Փչեց վրէն, որ թոցնի
էն ածդահին մի փչելով։
Տեսաւ տեղից ժաժ չի գալի.
Զարմանք ու ահ պատեց հոգին.
Արնոտ աչքերն սպառնալի
Յառեց խոժոռ Դաւթի աչքին։
Նայեց թէ չէ՝ զգաց իր մէջ՝
Տասը գոմշի ուժ պակասեց։
Պառկած տեղից վրայ նստեց
Ու ժպտալով հետը խօսեց.
—Բարով, Դաւիթ, յոգնած ես դու.
Է՛կ, մի նստիր, խօսենք կարգին,
Յետոյ դարձեալ կռիւ կանենք,
Եթէ կռիւ ուզես կրկին...
Իր վրանում բռնակալը
Բառուն գաղ խոր հոր էր փորել,
Յանցով ծածկել մութ բերանը,
Վրէն փափուկ խալի փռել։
Ում որ յաղթել չէր կարենում,
Շողոմելով կանչում էր նա,
Նստեցնում էր իր վրանում
էն կորստեան հորի վրայ։
Իջաւ Դաւիթ ձիուցը ցած,
Գնաց, նստեց... ընկաւ հորը։
—Հա՛, հա՛, հա՛, հա՛, քահ-քահ խնդաց
Մարդ դաժան թագաւորը։
—Դէ, թող հիմի գնայ խաւար
Հորում փթի, էնքան մնայ։
Ու ահագին մի ջաղացքար
Բերաւ, դրաւ հորի վրայ։

XX

Գնաց էն գիշեր Զէնով Օհանը։
Գիշերն երազում երևաց ծերին՝
Մարայ երկնքում արև ճառագած,
Սև ամպ էր պատել Սասմայ սարերին։
Սասուկ վախեցած
Վեր թռաւ տեղից.
—Վայ, կնիկ, ասաւ, մի ճրագ արա,
Գնաց մեր անփորձ Դաւիթը ձեռից,
Սև ամպ էր իջել Սասունի վրայ։
—Հողեմ գլուխդ, ասաւ կնիկը,
Ով գիտի Դաւիթն ուր է քէֆ անում...
Դու էլ քեզ համար քու տանը ընած՝
Ուրիշի համար երազ ես տեսնում։
Գնաց Օհանը։
Վեր կացաւ դարձեալ.
—Կնիկ, Դաւիթը նեղ տեղն է ընկած.
Մարայ վառ աստղը
Շողում էր պայծառ,
Մեր աստղը հիւանդ
Ցոլքում դալկացած։
—Ի՞նչ եղաւ քեզ, մարդ,
Գիշերուան կիսին,
Բարկացաւ վրէն կնիկն աղմուկով.
Ինչ քաշեց էլ ետ Օհանն երեսին,
Շուռ եկաւ ընեց խռոված հոգով։
Մի ուրիշ պատկեր աւելի ահեղ.
Տեսաւ երկնքի բարձր կամարում
Վառուում էր Մարայ աստղը փառահեղ,
Սասմայ աստղիկը տուգեց խաւարում։
Զարթնեց վախեցած։
—Տունդ քանդի, կին,
Ես ինչ լսեցի քո էդ կարճ խելքին.
Կորաւ մեն մենակ
Մեր Զահէլն անտէր,
Վեր կաց, շուտ արա,
Զէնքերս մի բեր...»։

XXI

Ելաւ Օհանն, դռամը մտաւ,
Զարկեց ճերմակ ձիու մէջքին.
—Էյ ճերմակ ձի, մինչ ի՞րը, ասաւ,

Կը հասցնես Դաւթի կուին։
—Մինչև լուսը կը հասցնեմ.
Ու ձին տաւ փորը գետին։
—Մէջքդ կոտրի, լուսն ինչ անեմ,
Լաշին հասնեմ ես, թէ նաշին։
Կարմիր ձիու մէջքին զարկեց.
Սա էլ երեսը փորը գետին։
—Ջան, կարմիր ձի, մինչ երբ դու ինձ
Կը հասցնես Դաւթի կուին։
—Մի ժամի մէջ, կարմիրն ասաւ,
Կը հասցնեմ Դաւթի կուին։
—Լեղի դառնայ, սև մահ ու ցաւ,
Ինչ տուել եմ քեզ էն գարին։
Հերթը եկաւ, սևին հասաւ.
Գետին չերեսը փորը սև ձին։
—Է՛յ, ջան Սևուկ, մինչ ե՞րբ, ասաւ,
Կը հասցնես Դաւթի կուին։
—Եթէ ամուր՝ մէջքիս մնաս,
Ոտդ դնես ասպանդակին,
Մինչև մէկէլ ոտդ շուռ տաս,
Կը հասցնեմ, ասաւ սև ձին։

XXII

Սև ձին քաշեց Զէնով Օհան,
Զախը դրաւ ասպանդակին,
Աջն էլ մինչև շուռ տար վրան՝
Կանգնեց Սասմայ սարի գլխին։
Տեսաւ՝ Դաւթի նժոյգն՝ անտէր
Սարերն ընկած խրխնջալով,
Ներքև Մարայ գորքը շրջած,
Ինչպէս անծէր ծփուն մի ծով։
Օխտը դոմշի կաշի հագաւ,
Որ չը պատռի իրեն զօրից,
Կանգնեց Օհան, ամպի նման
Դուռաց Սասմայ սարի ծէրից։
—Դաւի՛թ, դուռաց, ո՞ւրտեղ ես դու.
Յիշի՛ր խաչը քո աջ թևի,
Սուրբ Տիրամօր անունը տո՛ւր,
Դուրս եկ աշխարհը, լոյսն արևի՛...»
Զէնը գնաց դըմբդըմբալով,
Դաւթի ականջն ընկաւ հորում.
—Հայ-հա՛յ, ասաւ, հօրեղբայրս է,
Սասմայ սարից ինձ է գոռում։
Ո՞վ Մարութայ Աստուածածին,

Ով գորաւոր թաչ պատրաստի,
Զնչ եմ կանչել, համէք Դաւիթն...
Կանչեց, տեղից ե�տրի,
Էնպէս զարկեց ջաղացքարին,
Քարը եղաւ հազար կտոր,
Կտորները երկինք թռան,
Ու գնում են մինչև էսօր։
Ելաւ դռից կանգնեց առեղ.
Սարսափ կալաւ զև Մելիքին.
—Դաւիթ ախպէր, էկ գնա էստեղ,
Սենդան նստենք, խօսենք կարգին...
—Էլ չեմ նստել ես քո հացին,
Դու տմարդի, վախկոտ ու նենդ.
Շուտ, գէնքդ առ, հեծիր քո ձին,
Դուրս էկ մէջտեղ, կռիւ անենք։
—Կռիւ անենք, ասաւ Մելիքը,
Իմն է մեայն զարկն առաջին։
—Քոնն է, զարկիր, կանչեց Դաւիթ,
Գնաց կեցաւ դաշտի մէջին։
Ելաւ կանգնեց Մարայ-Մելիքը,
Իր գուրզն առաւ, հեծաւ իր ձին,
Քշեց, գնաց մինչ Դիարբեքիր
Ու էնտեղից եկաւ կրկին։
Երեք հազար լիդր էր քաշում
Հսկայական իր մկունդը։
Եկաւ, զարկեց, կորաւ փոշում
Ու երերաց երկրի դունդը։
Երկիր քանդուեց կամ ժամք եղաւ,
Ասին մարդիկ շատ աշխարքում։
—Չէ, ասացին, արնի ծարաւ
Հսկաներն են իրար զարկում։
—Մեռաւ Դաւիթ էս մի զարկից.
Ասաւ Մելիք իրեն զօրքին։
—Կենդանի եմ, ամպի տակից
Գոռաց Դաւիթ Մարայ-Մելքին։
—Հայ-հայ, մօտիկ տեղից եկայ,
Տէս, ճրտեղից հիմի կը գամ։
Ու վեր կացաւ, կանգնեց հսկան,
Իր ձին հեծաւ երկրորդ անգամ։
Երկրորդ անգամ քշեց Հալաբ
Ու բաց թողեց ձին Հալաբից.
Բուք վեր կացաւ, տեղ ու տարափ,
Արար-աշխարհ դողաց թափից։
Եկաւ զարկեց, դարձի ձէնից
Մօտիկ մարդիկ ոչ խլացան։

—Գնաց Դաւիթ Սասմայ տանից,
Գուժեց գոռոզ Մարայ արքան։
—Կենդանի՞ եմ, կանչեց Դաւիթ,
Մին էլ արի՛, հերթն ինձ հասաւ։
—Հայ-հայ, մսոտիկ տեղից եկայ,
Կանչեց Մելիք ու վեր կացաւ։
Երրորդ անգամ հեծաւ իր ձին,
Գնաց մինչև հողը Մարայ,
Ու էնտեղից, դուրգը ձեռին
Քշեց, եկաւ Դաւթի վրայ։
Եկաւ, զարկեց բոլոր ուժով,
Ծանր զարկով հսկայական.
Փոշին եկաւ Սասմայ դաշտից,
Բռնեց երեսն արեգական։
Երեք գիշեր ու երեք-օր
Փոշին կանգնեց ամպի նման,
Երեք գիշեր ու երեք օր
Բօթը տուին Դաւթի մահուան։
Երբ որ անցաւ երեք օրը,
Էն ամպի պէս կանգնած փոշում
Կանգնեց Դաւիթ ինչպէս սարը՝
Գրգուռ սարը մէգ-մշուշում։
—Մելիք, ասաւ, ումն է հերթը։
Սարսափ կալաւ գոռ Մելիքին.
Մահուան դողը ընկաւ սիրտը
Ու տապ արաւ գոռոզ հոգին։
Գնաց, խորունկ մի հոր փորեց,
Իջաւ մտաւ վիհն էն խաւար,
Վրէն քաշեց քառասուն կաշի
Ու քառասուն ջաղացի քար։
Մոնչալով եկաւ տեղից
Էն սոխուծի սոխուծ որդին,
Իր ձին հեծաւ ու փոթորկեց,
Խաղաց, շողաց թուր-կայծակին։
Առաջ վազեց մագերն արձակ
Մելքի պառաւ մայրը ջադու.
—Դաւի՛թ, մազս մտ ոտիդ տակ,
Էդ մի զարկը ինձ բախշիր դու։
Երկրորդ անգամ թուրը քաշեց,
Էս անգամ էլ եկաւ քուրը.
—Դաւի՛թ, եթէ կուզես, կանչեց,
Իմ սրտին զարկ երկրորդ թուրը...
Վերջին զարկի ժամը հասաւ,
Եկաւ Դաւիթ երրորդ անգամ.
—Էս մի զարկն ու Աստուած, ասաւ,

Էլ մարդ չը գայ, պէտք է որ տամ,
Ասաւ, եկաւ ու փոթորկեց,
Թռաւ, գոլաց Դաւթի հոր ձին,
Ձին փոթորկեց, փայլատակեց,
Ու ցած իջաւ Թուր-Կայծակին։
Անցաւ բառատն գոմշի կաշին,
Անցաւ բառատն քարերը ցած,
Միջից կտրեց ժանտ հրէշին,
Օխտը գազ էլ դէնը գնաց։
—Կենդանի եմ, մին էլ ասի՛,
Դռաց Մելիք հորի տակից։
Դաւթի լսեց, շատ զարմացաւ
Իրեն զարկից, Թուր-Կայծակից...
—Մելիք, ասաւ, թափ տուր մի քեզ։
Ու թափ տուաւ Մելիքն իրեն,
Միջից եկաւ ճիշտ երկու կէս,
Մինն ընկաւ դէս ու միւսը դէն։
Էս որ տեսաւ Մարայ բանակ,
Ջուր կտրեց ահ ու վախից,
Դաւթի կանչեց. Մի՛ վախենաք,
Ակնոնջ ասէք հալա գեռ ինձ։
Դուք ոանչպար մարդիկ, ասաւ,
Ձուրկ ու խաւար, քաղցած ու մերկ,
Հազար ու մի կրակ ու ցաւ,
Հազար ու մի հոգսեր ունէք.
Ի՞նչ էք առել նետ ու աղեղ,
Եկել թափել օտար դաշտեր.
Չէ՞ որ մենք էլ ունենք տուն տեղ,
Մենք էլ ունենք մանուկ ու ծեր...
Զանձրացել էք խաղաղ ու հաշտ
Հողագործի օր ու կեանքից,
Թէ՞ գզուել էք ձեր հանդ ու դաշտ,
Ձեր հունձ ու փունջ վար ու ցանքից...
Դարձէք եկած ճանապարհով
Ձեր հայրենի հողը Մարայ.
Բայց թէ մին էլ գէնք ու զօռով
Վեր էք կացել դուք մեզ վրայ,
Հարում լինեն բառատն գազ խոր,
Թէ ջաղացի քարի տակին,
Կելնեն ձեր դէմ, ինչպէս էսօր,
Սատմայ Դաւիթ, Թուր-Կայծակին։
Էն ժամանակ, Աստուած գիտի,
Ով մեզանից կըլնի փոշման.
Մենք, որ կելնենք ահեղ մարտի,
Թէ դուք, որ մեզ արիք դուշման...»։

Յով. Թումանեան

ՄՈՒՐՈՄՑԻ ԻԼԻԱՆ ԿՌԻՌԻՄ Է ՎԼԱԴԻՄԻՐ ԻՇԽԱՆԻ ՀԵՏ *)

Գնում է ծերուկն արձակ դաշտերով,
Գնում է ծերուկն երկար ժամանակ։
Մաշել է հագի շորերը նախշուն,
Հատել է արդէն իր գանձը ոսկի,
Ու Իլիան ինքնին խօսում է էսպէս.
— «Եղել եմ հիմի ամբողջ Լիտվայում,
Եղել եմ հիմի ողջ օրդանեբում,
Մենակ Կիևում չեմ եղել վաղուց։
Կիև գնամ մի, գնամ մի տեսնեմ՝
Ի՞նչ է կատարում էնտեղ՝ Կիևում»։
Հասնում է Իլիան Կիև քաղաքը մայր.
Քէֆ-ինջոյք ունի Իշխան Վլադիմիրը.
Սեղան են բազմած հզօր հսկաներ
Ու պայազատներ մինչև երեսուն։
Մտնում է ծերուկն ապարանքը ներս,
Կանգնում է, կենում սրահի շեմքին,
Խաչ քաշում դէմքին, ինչպէս օրէնքն է,
Ողջոյն է տալի ընդունուած կարգով
Արև Իշխանին ու տիկնոջն էլ ջոկ։
— «Ապրած կենաս, տէր, Իշխան Վլադիմիր,
Հաց ու ջուր կը տա՞ս եկւոր քաջերին։
Քեզ ուզիղ սրտով եկել եմ ծառայ.
Չեմ վախում դաշտում հազար թաթարից,
Չեմ վախում, թէկուզ միւս հազարն էլ գայ,
Չեմ փախչիլ, թող գայ երրորդ հազարն էլ,
Ու օգնութեան էլ հարկաւոր չեն ինձ՝
Երեսուն ազգաւն իրենց ճուտերով»։
Ո՞վ էր՝ չիմացաւ Իշխանը հիւրին։
— Ուսկի՞ց ես, ո՞վ քաջ, ի՞նչ ազգ ու տակից.
Քեզ ի՞նչ անունով կանչենք, մեծարենք,
Կամ ի՞նչ հայրական կոչումով յարգենք»։

---

*) Մուրոմցի Իլիան—Ռուսական առասպելներում ժողովրդական ոյժի գաղափարն է։ Թարգմանութեան մէջ մի քանի ռուսական բառեր—կաբակ, փէչ, բոհար—պահել եմ անփոփոխ։

— Ի՞նչպես եմ ես Զաուլեշանին։
— «Ամ, դու Նիկիտա Զաուլեշանին։
Էկ։ Դատ, մեզ հետ հաց ուտող տղա,
Մի ուրիշ կոյ գոտարկ Կառեզ, ներքևում,
Սեղանի ծայրին, բազմոցի վերջին։
Ընտան են ուրիշ տեղերը բոլորս։

Ու կունենն ընկան մարդիկն իշխանի
Ստրան Իլիային ծայրը ներքևի,
Նստեցրին Կառեզ՝ ներքևի ծայրին։
Ու Էսպէս խասեց Իլիան ներքևից.

— Ամ դու Վլադիմիրս, մայր Դիմի տէր։
Վայել չի ուժին, ոչ ստիպանին
Հերն ու պատիվը, որ տալիս ես դու։
Ինքդ նստում ես ազատների հետ,
Ինձ տեղ ես տալիս հասարակների։

Ասա, կանչցու տեղը դրան։
Զարդասեղ շուրջը կանգնի բազմոցներ,
Ալոցեղ բիրերն ամրոցի երկաթի,
Սեղմեց հիւրերին անկիւնը վերին։

Դուր չեկու էս բանն Արև իշխանին։
Տեղիցը ոտքի էլաւ նա ոտի,
Մթնեց, աշուղուց գիշերի նման,
Ամնչաց, ինչպէս կատաղի գազան։

— Ի՞նչպէս, Նիկիտա Զաուլեշանին,
Խառնե՞ս տեղերը դու իմ սահմանում,
Ծռես բիրերը համայն երկաթի...
Մէն մի հակայի արանքումը ես
Բիրեր եմ գարկել ամուր երկաթի,
Որ ինչոյքներին, որքան էլ խմեն,
Որքան էլ հարբեն, չը գիտենն իրար։
Հէյ դուք, մեծազօր ռուս հակառներ,
Լաւած է որ ձեզ, էդ հակառներիդ
Ապառներ կանչի մինը ու ճուտեր։
Դուրս եկէք ձեզնից երեք լաւերդ,
Շպրտեցէք գետը՝ արահից վերդ։

Դուրս եկան ընտիր երեք հակառներ,
Սկսան Նիկիտին քաշել, քաշքշել,
Սկսան Նիկիտին հրել, հրմշտկել.
Կանգնած է Նիկիտն ու ժաժ չի գալիս,
Չի շարժուում նոյնիսկ գլխարկը գլխին։

— Թէ կուզես, իշխան, դու զարճանաս,
Թող գան սրանց հետ երեք հակայ էլ։
Դուրս եկան ուրիշ երեք հակայ էլ,
Սկսան Նիկիտին քաշել, քաշքշել,
Սկսան Նիկիտին հրել հրմշտկել.
Կանգնած է Նիկիտն ու ժաժ չի գալիս,
Չի շարժուում նոյն իսկ գլխարկը գլխին։

— Թէ կուզես, իշխան, դու զարճանաս,
Թող դուրս գան գոնէ երեք հակայ էլ։
Դուրս եկան երրորդ երեք հակառ էլ,
Քան չը կարացին առնեն Նիկիտին։
Ու էսպէս խասեց Նիկիտը այնժամ.

— Իշխան Վլադիմիր, մայր Կիևի տէր,
Ախորժակ ունիս անշուշտ խնդալու.
Համեցէք, հիմի մոխիկ արա ինձ
Ու ախորժակդ կանցնի խնդալու։
Ու Նիկիտը ինքն սկսաւ խնդալ,
Սկսաւ սեղմել, զարկել, տրորել
Ուժեղ ու հզօր էն հակառներին.
Սողում են սրահում հակառներն ամեն,
Չի կարում կանգնի ոչ մինը ոտքի։
Դուրս եկաւ Նիկիտն ապա սրահից,
Դռները զարկեց՝ շրջանակն ընկաւ,
Դարպասը զարկեց՝ սիւները թռան,
Ջարդ-փշուր եղան ճագերը քաշած։
Իշխանը մտաւ ետևը փէշի,
Սամուր մուշտակը քաշեց իր գլխին.
— Վա՛յ, կամաց, տղերք, ժամ չը գար տեղից,
Չը լսի Նիկիտ Զաօլէշանին,
Թէ չէ ետ կը դայ Ջարդ-փշուր կանի,
Ոչ մնած կը թողնի, ոչ փոքր մեղնից,
Ժառանգ չի թողնիլ ինձ՝ Վլադիմիրից...
Դուրս եկաւ Իլիան դարպասն ընդարձակ
Ու լարեց ճայթուն իր ագեղը գիլ,
Սուր, միսած նետը դրաւ աղեղում,
Էսպէս ինքնիրեն խօսեց նետի հետ.
— «Սլացի, իմ նետ, տանիքը ոսկի,
Վէր բեր ոսկեզօծ գմբէթները ցած»։
Ընկան ոսկեզօծ գմբէթները ցած,
Ու կանչեց Իլիան կոկորդովը մին.
— Հէյ, դուք կարակի մերկ ու տկլորներ,
Հէյ, կամաւորներ Արև Իշխանի,
Վազեցէք, եկէք դարպասն Իշխանի,
Առէք ոսկեզօծ գմբէթները թանգ.
Կրեցէք, տարէք, կարակն արքունի,
Արագ խմեցէք էնտեղ կուշտ ու պինդ։
Վազեցին, եկան տկլորներն ամեն,
Կամաւորները Արև Իշխանի,
Տարան, կրեցին գմբէթներն ոսկի.
— Ո՞վ դու մեր պաշտպան, մեր ծնող, մեր հայր...
Ու Իլիայի հետ եղան, գնացին,
Խմեցին բոլոր գմբէթներն ոսկի,
Խմեցին մինչև վերջինը միասին։
Ու երկիրդ ընկաւ սիրտները էստեղ.
Ի՞նչ կանի մեզ հետ Իշխանը հիմի,
Ի՞նչ պատիժ կը տայ, ով գիտի, հիմի,
Խմեցինք նրա գմբէթները ոգջ։

Ու Իլիան էապէս խօսեց նրանց հետ.
— «Եմէք, ակլորներս, դուք մի փախնեք,
Ես եմ վազումից իշխան Կիևում,
Իսկ դուք ամենից մեծ պիտի լինիք»։
Անցաւ երկիւղը, սկսան խմել,
Տէրից սկսան կեանք խնդրել քաջին,
Իսկ իշխանական խնջոյքի վրայ
Դնաց հարցուր Արև իշխանին.
— Ո՞վ Արև իշխան, մայր Կիևի տէր,
Չես ասիլ՝ Նիկիտա Զաոլէշանին
Քու էս յարկերից, ոսկի յարկերից,
Չգեց ոսկէզօծ գմբէթները ցած,
Կանչեց կարակի ողջ ակլորներին,
Եմեց նրանց հետ գմբէթներն ոսկի»։
Նստած էր էնտեղ խնճոյքի միջին
Ջահիլ Դոբրինեան Նիկիտիչ հսկան,
Էապէս ասաւ նա Արև իշխանին.
— «Իշխան Վլադիմիր, մեր Կարմիր Արև,
Նիկիտան չի նա Զաոլէշանին,
Այլ իմ խաչախապէրն *)—Իլիան Մուրոմից»։
Ասաւ իշխանը մտքի տուն ընկաւ,
Իր հետ անուանի ազատներն ամեն
Եւ հսկաները ուժեղ ու հզօր,
Թէ ինչպէս անի՝ հաշուի ծերի հետ։
— «Միտք արէք, տղերք, խորը միտք արէք,
Խելք-խելքի տուէք, մի հնար գտէք,
Ո՞ւմ ղրկենք արդեօք ծերի ետևից,
Որ կանչի նրան յարգինքի սեղան։
Ես ինքս գնամ՝ չեմ ուզում գնամ,
Ապրակսին ղրկեմ՝ վայել չի նրան»։
Ամենքը էստեղ մտքի մէջ ընկան.
— «Ո՞ւմ ղրկենք արդեօք ծերի ետևից...
Է՛կ ղրկենք գնայ Ջահիլ Դոբրինեան,
Չէ՞ որ Իլիայի խաչախապէրն է նա.
Նրան կը լսի Իլիան՝ թէ լսի»։
Սեղանը անցաւ Վլադիմիր իշխանն,
Էկաւ ու կանգնեց Դոբրինեայի դէմ
Ու էապէս խօսեց Դոբրինեայի հետ.
— Աբի, էլ, կտրիճ, Ջահիլ Դոբրինեա,
Ծերուկ Մուրոմցու մօտ գնա մեղնից,
Երկիրը պագի, խոնարհ ողջունի,
Խոնարհի մինչև յատակն ադիւսի,
Խոնարհի մինչև էն գետինը ցած

*) Հնում սովորութիւն կար՝ խաչերը փոխում էին իրար հետ ու դառնում խաչախապէր։

Ու էապէս ասա նրան մեր կողմից.
— «Ուղարկել է ինձ Վլադիմիր իշխանն
Ու մայր տիկինը՝ Ապրակսիան իր հետ,
Խնդրում են, որ գաս ուրախ յարգինքի։
Նա չի ճանաչել քեզ, կորիճ բաջիդ,
Նստեցրել է ցած, ներքևի ծայրին։
Խնդրում է հիմի, լիասիրտ խնդրում,
Խնդրում լիասիրտ ու մեծ ցնծութեամբ,
Խնդրում է մոռնաս՝ ինչ անց է կացել»։
Գնում է ահա ջահիլ Դոբրինեան,
Գնում է ճամբով ու միտք է անում.
— «Արդեօք վաղաժամ մահի՞ս չեմ գնում...
Բայց թէ չը լսեմ Արև իշխանին
Փորձանք է գալու անշուշտ նրանից»։
Ու գնում է նա կարակն արքունի,
Մտնում է ահա կարակն արքունի.
Նստած է էնտեղ ծերուկ Մուրոմցին,
Խմում, քէֆ անում տկլորների հետ։
Ու միտք է անում ջահիլ Դոբրինեան,
Ո՞ր կողմից արդեօք նրան մօտենայ.
— Առջևից գնամ՝ դուր չը գամ գուցէ.
Լաւ է թիկունքի կողմից մօտենամ։
Եկաւ, մօտեցաւ թիկունքի կողմից,
Բռնեց Իլիայի ուժեղ ուսերից
Ու էապէս մեղմով խօսեց նրա հետ.
— Ո՞վ իմ խաչախպէր, իմ սիրելի ազգ,
Ո՞վ դու իմ սիրելի, ծերուկ Մուրոմցի,
Քեզ պահի առժամ ձեռներդ ճերմակ,
Բռնի ու զսպի սիրտդ կրակոտ.
Չէ՞ որ բանբերին չեն կապում, կախում։
Մենք էլ հօ մեր մէջ ուխտ ունենք արած,
Ուխտ ունենք արած մեծ ու անուր,
Որ փոքր սիրելը լսի իր մեծին,
Մեծն էլ իր փոքրին ականջ անի միշտ,
Ու էապէս կանգնենք մէկ-մէկի համար։
Դեսպան է դրկել քեզ մօտ ինձ էսօր
Վլադիմիր իշխանն իրեն տիկնոջ հետ,
Քեզ՝ հզօր քաջիդ նա չի ճանաչել,
Նստեցրել է ցած, ներքևի ծայրին։
Խնդրում է հիմի նա քեզ ցնծութեամբ,
Խնդրում լիասիրտ մեծ խրախճանքի,
Թողնես, ասում է, ինչ անց է կացել»։
Եռ է շուռ գալիս Իլէյկօն էստեղ.
— «Հէյ դու, Դոբրինեա ջահել Նիկիտիչ,
Քու բախտը բանեց՝ եռեից եկար,

Թէ չի ասիցեմ զարմի, Եւրոպիանոս,
Զոր ես ունիցեալ զանձն ոչխար ասորոյ
Հրամբ, արագութեամբ, ձիոց չեմ ասորոյ թեզ
Կարող ես, արիութեամբ ոչինչ չի մնացեալ
Քան զարմի, ասա Ինձ խղճալիորեն,
Թէ ոչ ինչ Հանար, Քան, զարմի Հանար
Ուրեմն ասասցուք ասասցուք Երանեալս,
Ուրոյ Երեսն էր ոչ ոչ զարմի
Եւ Ներսիսեանցն Հանեալքս ասեն Հրամանս,
Որ արքունական կարգադրեցք ապի
Ամենեքեան երեք որ ես երեք դիշեր,
Ուրեմն ասեցեալ ասեն զարմի խրատ,
Մի չի կարելիոյ որ ասպարեզ խրատ,
Թայ Հան զարմիցաւ խրատ Հարցանեցուք,
Մի որ չի ուզիլ զարմիցաւ խրատ,
Թայ Հան մեղադրեցաւ խրատ բարդարարեալ,
Որ ոչի խնդանեալ, Երեկ ի մեկ
Ասորոյնքն Ներսէսն Երեսն Եմանուելիցն
Հաշ Հանար էլ Թայ էր զարմի Հանար
Ինչպէս բայ անեալ Հոգ մեղադրեցաւ.
Նայեալ Ինձ չի անեալ Հաշ ասորոյ Հանար,
Ոչ զարմի ես Ինձ Հանեալ Հրամանս,
Ուրեմն Ներսիսեան զարմանալի Հրամանս
Ես ասպարեզ Հանեալ Հրամանս.
Հանեալ ասեն Ինձ Հանեալ Հրամանս,
Թէ ոչի երեք որ ես երեք դիշեր
Բայց պէտք է մեր կարգեալ արքունի,
Դայ, ասպարեզ խրատ ժողովուրդն ամենն,
Ամենքն, քէֆ անելն զարմանալ, անմեղաբ,
Որ ոչի խնդանան Երեսն է մեկ
Ասորոյնքն Ներսէսն Երեսն Եմանուելիցն.
Ես ինքս բայեցայ յարգելոցն սեղան,
Կանչեցի Հաւարեցի խշիան ու բռնաբ,
Ասացայ բոլոր մեծ Հայրենիքին
Ինչպէս քաջարի կանանց գիւղացուն.
Բայց մարդ չի գնում կարգեալ արքունի,
Ամենքն խշիանի պարտուն են մարդում,
Ոչ ֆիր ու խանութի ոչ ունկս Հանար,
Վարում են ամենքն անվնահեր քաջերս,
Ամենքն Ասորոյնքի էն ձեր Երեսին.
Հաստատում են ոչի պարտական խշիանի

Մանուկն ու կառքդ ուրուրանքդ նեղար
Ու ձեր Մուրադիկն գալիս է անա,
Գալիս՝ կարտէի ակլորներին հետ,
Գալիս է, մանուկն արանք ոլորտաս,
Աչք հանուկն դէմքին, ինչպէս որկնքն է,
Ողջոյն է տալիս ընդունուած կարգով,
Երկրպագում է շատ կողմք խոնարհ,
Արև իշխանին ու տիկնոջն էլ ցոկը։
Վերկացաս խսկոյն իշխանը առոյգ
Առաս Իլիայի ճերմակ ձեռներից,
Համբուրեց նրա շրթունքը շատրար,
Ապա թէ էսպէս խոսեց շողոքոր։
— «Մի դու ծերունի, Իլիա Մուրադի,
Ցած եղաս թէ էլ քու տեղն ամենից,
Այժմ ամենից վերև կը լինի։
Հէյ, դուք ծառաներ իմ հաւատարիմ,
Տարէք ծերունուն բարձր ամենից»։
Բայց նա չը նստեց ամենից վերև,
Դնաց ու նստեց մէջ տեղն ամենի,
Հետը նստեցրեց մերկ ակլորներին
Ու էսպէս դարձաս Արև իշխանին.
— «Մի՞վ դու Վլադիմիր, մայր Կիևի տէր,
Լաւ ես իմացել՝ ում դրկես ինձ մօտ.
Զինէր Դոբրինեան՝ իմ ախպէրացուն,
Զէի լսելու էստեղ ոչորի,
Ու մտքումս արդէն դրել էի ես,
Լարել էս ճայթուն իմ ապեղը գիլ,
Արձակել դէպի սրահդ շքեղ,
Սպանել և քեզ, իշխան Վլադիմիր,
Եւ քու տիկնոջը՝ քու Ապրակսիային։
Բայց էս անգամը Աստուած քեզ ների
Քու էդ յանցանքը, էդ յանցանքը մեծ։
Էստեղ անուշներ բերին հիւրերին,
Քաղցր մեղրաջուր խմիչքներ բերին,
Բերին ամենին դրին մի-մի թաս
Ու էսպէս խօսեց Իլիան իշխանին.
— Ա՛յ դու Վլադիմիր, մայր Կիևի տէր,
Սրանով ես դու պատուում հիւրերիս,
Սրանով ես դու յարգանք ցոյց տալի.
Էս ակլորներին միայն մի-մի թաս...
Դուք չեկաւ էս խօսքն Արև իշխանին,
Էսպէս ծերունուն տուաւ պատասխան։
— Ամենքի համար խոր նկուղներում
Արաղ ունեմ ես, ինչքան կամենան,
Մարդը մի տակառ քաշաուն չափանց։

Թէ հերիք չանի՝ ինչ որ կայ էստեղ,
Թող իջնեն իրենք նկուղներն իմ խոր։

— «Ա՛յ դու Վլադիմիր, իշխան Կիևի,
Էդպէ՞ս են պատուում քեզ մօտ հիւրերին,
Էդպէ՞ս են քեզ մօտ յարգում քաջերին,
Որ իրենք գտնեն ուտեստ ու խմիչք...
Տեսնում եմ՝ տանտէրն ես եմ լինելու»։
Ասաւ ծերունին ու ոտքի ելաւ,
Էլ հարցմունք չարաւ նկուղի ճամբէն,
Էլ նկուղների բանալիք չուզեց,
Թափ իջաւ դէպի նկուղները խոր,
Դռները արաւ ողջ կրնկահան,
Պոկեց կողպէնքներն առանց բանալի,
Ներս մտաւ ինքը նկուղներն էն խոր։
Առած մի տակառն էս մի կռանտակ
Ու միւս տակառը՝ մեկէլ կռանտակ,
Երբորդը ոտով գլորում է դուրս.
Ու դուրս գլորեց դարպասն իշխանի,
Գոռաց ու կանչեց կոկորդովը մին.

— Հէյ դուք կարակի մերկ ու տկլորներ,
Դուրս եկէք էստեղ՝ դարպասն իշխանի,
Եկէք ամենքիդ արաղ խմեցնեմ»։

Ու իջաւ կրկին նկուղները ցած։
Զը տարաւ իշխանն ու Թունդ ելաւ խիստ,
Որոտաց ուժգին իր հնչուն ձայնով.

— «Հէյ հաւատարիմ դուք իմ ծառաներ,
Շո՛ւտ, եկէք, հասէք արաղ ու արաղ,
Արաղ ու արաղ, ճեպով հապճեպով,
Վէր դրէք քաջին խորունկ նկուղում,
Շուրջը քաշեցէք երկաթի ցանցով,
Կաղնի կոճղերով կապեցէք չորս դին,
Թաղեցէք գեղին աւազի տակին,
Սովամահ արէք խորունկ նկուղում։

Վազեցին, հասան ծառաներն արաղ,
Արաղ ու արաղ, ճեպով հապճեպով
Վէր դրին ծերին խորունկ նկուղում,
Շուրջը քաշեցին երկաթի ցանցով,
Կաղնի կոճղերով կապեցին չորս դին,
Թաղեցին գեղին աւազի տակին։

Ու ցաւ դառաւ էս միւս հակառներին,
Վէր կացան կիսատ քէֆի սեղանից,
Ելան, դուրս եկան դարպասն ընդարձակ,
Իրենց ամենի ձիանքը հեծան,
Դէս դէն ցրուեցին էն արձակ դաշտում,
Էն լայն ու ազատ տարածութեան մէջ.

— «Էլ չենք մնալ մենք էստեղ՝ Կիևում,
Էլ չենք ծառայել Արև իշխանին»։
Ու էլ Վլադիմիր իշխանի մօտին
Հակայ չը մնաց Կիև էն օրից։

Թարգմ. Յով. Թումանեան

ՀՈՄԵՐՈՍ

Ո՞վ էր Հոմերոսը՝ երկու սքանչելի պոէմների ստեղծագործողը։ Աւելի քան մէկ ու կէս դար կատարուած մանրազնին հետախուզութիւնները, գիտնականների գործ դրած ջանքերը չեն կարողացել բաց անել այն շղարշը, որով ծածկուած է հեռու դարերի ծալքերում հանդիսող հանճարեղ բանաստեղծի դէմքը։ Հոմերոսը հանդիսանում է արդեօք իրական կամ պատմական մի անձնաւորութիւն, թէ՞ հեղինակի անունը յետագայ սերունդների վառ երևակայութիւնն է ստեղծել։

Եւ մինչդեռ մեր ժամանակներում շատ կասկածներ են յայտնուել Հոմերոսի անձնաւորութեան մասին, հին Յունաստանում՝ առանց վերապահումների՝ Հոմերոսին են վերագրել այդ երկու հանճարեղ պոէմների ստեղծագործութիւնը՝ Ոլիսականի և Ողիսականի։

Յունական տրագիցիան, բանաստեղծին պատկերացրել է որպէս մի կոյր երգչի, որ թափառել է քաղաքից քաղաք, գիւղից գիւղ, ձեռքին ունենալով իր անբաժան կիֆարը։

Այնքան մեծ, այնքան բացարձակ է եղել Հոմերոսի նշանակութիւնը հին Յունաստանում, որ յետագայ ժամանակներում յունական եօթը քաղաք վիճել են իրար հետ՝ իւրաքանչիւրը իր քաղաքացին համարելով երգչին։ «Վիճում էին Զմիւռնիան, Ռոդոսը, Կոլոֆոնը, Սալամինը, Քիոսը, Արգոսը և Աթէնքը՝ Հոմերոսի ծննդավայրը համարելու պատուի համար»,—ասում է յայտնի աւանդութիւնը։ Մինչև այժմ էլ ճշգրիտ չէ պարզուած, թէ ո՞րտեղ և ե՞րբ է ծնուել բոլոր ժամանակների այդ մեծագոյն բանաստեղծներից մէկը։

Գիտնականները այն կարծիքն են յայտնել, թէ Հոմերոսը ծնուած պիտի լինի փոքրասիական գաղութներից մէկում X կամ IX դարում Ք. ծ. առաջ, այսինքն Տրոյայի պատերազմից մօտ երկու դար յետոյ։ Մի շրջան, երբ յունական փոքրասիական գաղութները իրենց ծաղկման բարձր գագաթնակէտին էին հասել։ Գիտնականներից մէկը այդ ենթադրութիւնը համարում է ճշմարտութեան մօտ առաւելապէս այն պատճառով, որ Հոմերոսը յիշում է ի միջի այլոց եգիպտական Թեբէի հարստութեան և ծաղկման մասին, իսկ այդ շրջանում ճիշտ որ թագաւորել է քսաներկրորդ դինաստիայի հիմնադիր Շաշանկ առաջինը՝ 966 թ. Քր. ծ. առաջ։

Կցկտուր ու աղօտ տեղեկութիւնները Հոմերոսի կեանքի մասին աւելի էին բազմանում, և մեծ ծաւալ էին գտնում նրա անուան շուրջը

հիւսած լեգենդները։ Հոմերոսի անձնաւորութիւնը, նրա անունը յոյների համար դարձել էր պաշտամունքի առարկայ։ Հոմերոսը նրանց աչքում միայն բանաստեղծ չէր, այլև փիլիսոփա, պատմաբան, օրէնսդիր։ Պոէմների վրայ նրանք նայում էին որպէս սուրբ գրքի վրայ։

Թէպէտ համաժողովրդական էին Հոմերոսի պոէմները, սակայն նրանց ստեղծագործողը ժամանակի յոյն արիստոկրատիայի երգիչն է եղել։ Նա երգել է իշխաններին ու թագաւորներին։ Նրա բոլոր հերոսները տիրող դասակարգին են պատկանում։ Քաղաքակրթութեան արշալոյսին հանդէս եկած այդ վաղեմի ստեղծագործութեան մէջ բանաստեղծը ցայտուն էջերով պատկերացրել է այն հասարակական բուրգի գոյութիւնը, որի պատուանդանը կազմել է ժողովրդական զորշ զանգուածը, իսկ գագաթին բազմել է հանգիստ ու անխռով վայելող արտօնեալ փոքրամասնութիւնը։

Դիտեցէք հոմերական բովանդակ իրականութիւնը, նրա պատկերաւոր նկարագրութիւնների հեռանկարը, որի տիրական տարրերն են բացարձակ թագաւորները ու իշխանները, պալատական արիստոկրատիան և կազմակերպուած ֆիզիքական ոյժի վայելուն ներկայացուցիչները։ Ահա Հոմերոսի իրականութեան տէրերի գալլերէան. Ագամեմնոն, Մենելաւոս, Ոդիսևս, Աքիլլէս, Ալքինոյ, Դիոմէդ, Նեստոր և այլն։ Բոլորի ծագումն էլ ուղղակի աստուածներից է, իսկ նրանց աստուածընտիր իշխանութեան աղբիւրը՝ Ոլիմպոսի անմահների գերագոյն կամքը։

Նկարագրելով Տրոյայի պատերազմի հետ կապուած սոցիալական խոշոր ընդհարումը, հոգեբանութեամբ ու աշխարհայեացքով արիստոկրատ Հոմերոսը անկարող է եղել պահպանել իր սառնասրտութիւնը հակառակորդ դասակարգի բողոքող ներկայացուցչի հանդէպ։ Համարձակ կարելի է ասել, որ բանաստեղծը ոչ որի նկատմամբ այնքան աշառու չէ եղել, որքան, օրինակ, բողոքող Թերսիդէսի։ Բացասական նկարագրի աւելի մեղմ գոյներ է գործածել նա թշնամի բանակի տրոյացի ռազմիկների վրայ, քան յոյն Թերսիդէսի։ Ինչու էր այդպէս։ Որովհետև Թերսիդէսը, ինչպէս ասում է բանաստեղծը, յանդուգն լեզուով խօսում էր արքաների դէմ այն ժամանակ, երբ ամենքը լուռ ու հնազանդ բոլորում էին իրենց իշխանների շուրջը։ Արքաների հարուածների տակ կորացած Թերսիդէսի յանդուգն լեզու գործածելը բաւական էր, որ արքայասէր բանաստեղծը նկարագրէր նրան ամենամութ գոյներով։

Մի աչքը չիկ, մի ոտը կաղ, ման էր գալիս ընդընդալէն,
Մէջքը սապատ, ուսերը ծուռ, կուրծքը փլած ընկած էր ներս.
Սրագագաթ իր կոնդ գլխին հազիւ ունէր քանի մի մազ...
Թշնամի էր նա ոխերիմ Աքիլլէսին և Ոդիսին,
Եւ շարունակ հանդէսի մէջ պարսաւում էր նա երկուսին։

Հստ բանաստեղծի՝ իսկ խորհրդներով լի է եղել ըմբոստ ստրուկի խելապատակը միմիայն այն պատճառով, որ նա յանդգնել է լեզուարկել իրեն ստրկացնողների դէմ և բողոքել արքաների ագահութեան, եսասիրութեան և դաժանութեան դէմ։

Սակայն երբեմն մեղմ ու քնքույշ վերաբերմունք ունի Հոմերոսը դէպի խոզապան Էումէոսը, որի ցոյց տուած սրտկական հաւատարմութիւնը իր տիրոջը՝ հոմակրանքի ջերմ զգացմունքներ է ստեղծում բանաստեղծի մէջ։ Էումէոսին նա «աստուածատիպ խոզապան» է անուանում։

Տիրողների միջավայրը՝ իր միջավայրն է, որի հրաշալի պատկերացումն է տուել նա առանձնապէս Իլիականի մէջ։ Նրանց հոգեկան կեանքի բոլոր խորշերն է թափանցում նա։ Ուրախանում և տխրում նրանց հետ, պաշտպանմունքի առարկայ դարձնում իր ամենասիրած հերոսներին, ինչպէս Աքիլլէսին և Ոդիսևսին։

Եւ ուրեմն արիստոկրատ միջավայրի երգիչը կարող էր երգել «խուժանի» տենչերն ու ձգտումները, ըղձքն ու ցաստումը, երբ այդ խուժանը կարգին ժողովուրդ էլ չէր՝ նրա աչքում։ Արիստոկրատ երգիչների համար մասսան միշտ էլ արհամարելի մեծութիւն է եղել, անհասկացող, բութ, իներտ, ապաշնորհ խուժան։

Ժողովրդական մասսան հոմերական դիւցազներգութեան մէջ բացակայում է որպէս դրական ոյժ։ Եւ եթէ երկու ընդարձակ պոէմների մէջ մի քանի տող այնուամենայնիւ նուիրել է նա «խուժանին» ու նրա ըմբոստ ներկայացուցիչ Թերսիդէսին, ապա դա իր սիրած ուժեղների պատկերն աւելի վառ դնելու համար է արել, զուցէ և անգիտակցաբար։

Աւագների առջև այդ խուժանը ինչ որ մի անկերպարան զանգուած էր. նա շարժւում էր աղմկող ճանճերի նման. նրա ոտների տրտփիւնից յուզւում էր հրապարակը, հողը տնքում էր, թնդում։ Խուժանը խուլ գոռոց ու աղաղակ էր բարձրացնում, իսկ դիւցազն արքաների հլու սպասաւորները գաւազանով սանձահարում էին նրան՝

Ամուր փականք էլ դնելով այդ լրբախօս ժանտ բերանին...

Մեծ էր գաւազանի ոյժը որպէս սիմվոլ բռնակալների տիրապետութեան, և սորուկ ամբոխը պատկառանքով խոնարհւում էր նրա ամենազօր կերպարանքի առջև։

Ընդգծելով Հոմերոսի հողային-ռազմիկ արիստոկրատ դասի բանաստեղծ լինելը, այնուամենայնիւ մենք բարձր պիտի գնահատենք նրա անմահ ստեղծագործութիւնը, քանի որ իր հանճարի լուսով լուսաւորել է մարդկային կեանքի մի ամբողջ էպոխա, որը կազմում է ժամանակակից քաղաքակրթութեան վաղեմի արշալոյսը։ Պատկերացրել է կեանքի նոյն հակասութիւնները, նոյն դասակարգային, սոցիալական ընդհարումները, որպիսիք գոյութիւն ունեն այժմ։ Ուր մի կողմից՝ վայելողների անսանձ էգոիզմը, միւս կողմից՝ զրկուածների դառն տանջանքներն ու ցաստումը պիտի նախապատրաստէին յունական արիստոկրատիայի տխուր մայրամուտն ու անկումը, ինչպէս դա տեղի ունեցաւ այդ էպոխային յաջորդող հետեւեալ դարում։

Պրոլետարական տեսակէտը մեզ թելադրում է՝ մինչ այժմեան կուլտուրայի բոլոր արժէքներին մօտենալ յեղափոխական մարքսիզ-

մի քննադատական չափանիշով և ընդունելի համարել այն ամենը, ինչ իր մէջ կը պարունակի համամարդկային բովանդակութիւն։

Հոմերոսի պոէմները վերջին կարգի ստեղծագործութիւններից են, որոնց մէջ բանաստեղծը իր հանճարեղ վրձինով յաւիտենական շունչ ու կենդանութիւն է տուել իր հոգեբանութեանը հարազատ հերոսական շրջանին, լիամիտի անդրադարձնելով իր ժամանակի մարդկութեան տենչերն ու յոյսերը, մտորումներն ու հոգեկան ընդհարումները։

Սուրխաբեան

ՀԱՅԿԱԶԵՆՅԱՆ-ԱՆՀԱՅՏԱՅԻՆ

ԻՍԱՔ ՍՏԵՓԱՆՈՍԻ-ՈՒՐՔԻԱՆ

ԻԼԻԱԿԱՆ

Բովանդակութիւն

Իլիականի մէջ Հոմերոսը մեծ ոգևորութեամբ երգում է Աքիլլէսի բուռն զայրոյթը և սրա հետևանքով առաջ եկած բազմաթիւ աղէտներն ու սարսափները։ Հոմերոսը նպատակ չէ ունեցել նկարագրելու ամբողջ Տրոյական պատերազմը։ Իլիականն ընդգրկում է տասնամեայ պատերազմի վերջին տարուայ մի կարճ շրջան, տալով յիսուն և մէկ կամ յիսուներկու օրուայ անցքերի անդրադարձումը։ Աքիլլէսի զայրոյթը առաջ էր եկել նրանից, որ դոռոզ ու ընչաքաղց արքայապետ Ագամեմնոնը բռնութեամբ իր վրանն էր տարել Աքիլլէսին բաժին ընկած տարկուհի Բրիսանոյշին։ Ծանր էր հերոսին հասած անպատուութիւնը, և նա զայրացած վճռում է այլևս չը մասնակցել պատերազմին։ Այսպիսով ռազմիկներից մէկը հեռանում է յունական բանակից, կուի ասպարէզից դուրս բերելով նաև իր միրմիդեան զօրքը։ Այս հանգամանքն աղէտալի հետևանք ունեցաւ յոյների համար, որովհետև Աքիլլէսի բացակայութիւնը զօրքի մէջ՝ միայն պարտութիւն էր բերում տասնամեայ կռիւներում յոգնած յոյն բանակին։

Աքիլլէսը, խորապէս վիրաւորուած, դիմում է իր դիցուհի մօրը՝ Թեղիսին, աղերսում նրան, որ նա լինի վրէժխնդիր դոռոզ Ագամեմնոնից։ Թեղիսը արարշաւ սլանում է Ոլիմպ ու Զևսին համոզում պաշտպան կանգնել իր որդուն, արժանի պատիժ տալ Ագամեմնոնին, պարտութիւն տեղալ յոյների դլխին, յաղթանակը շնորհելով տրոյացիներին։ Զևսի կամքով «բախտի անիւը» դառնում է. տրոյացիք սկսում են յաղթել։ Տեղի են ունենում կռիւների մէջ մենամարտեր։ Կռիւն ստանում է կատաղի ընոյթ։ Կուին միջամտում են նաև Ոլիմպոսի անմահները։ Նրանք բաժանուում են երկու հակառակ բանակների. մէկը յոյներին է օգնում, միւսը տրոյացիներին։

Եթէ յոյների կողմից աչքի էր ընկնում Աքիլլէսը, ապա տրոյացոց դլխաւոր հերոսը Հեկտորն էր, որ իր անձնուրաց անվեհերութեամբ փախուստի էր դարձնում յոյների բանակը։ Աքիլլէսի չը մասնակցելը

աղէտների մեծ դուռ էր բացել յոյների համար, լքումն ու յուսահատութիւն բերել նրանց։ Բանակի մէջ աճում էր խուլ դժգոհութիւն Ագամեմնոնի դէմ, որ իր անհեռատես քայլով մեկուսացրել էր բանակից Աքիլլէսին։ Այժմ Ագամեմնոնը պատրաստ է մեծամեծ դիջումներ անել նրան, վերադարձնել Բրիսանոյշին, տալ առատ ոսկի, նոյն իսկ իր հարազատ աղջկան ու բազմաթիւ ընծաներ։ Սակայն Աքիլլէսի զայրոյթը մեծ էր, վիրաւորանքը՝ խոր։ Նա խօսել անգամ չէ կամենում Ագամեմնոնի հետ, մերժելով նրա ընծաները։ Ուղարկուած պատգիրակները վերադառնում են ձեռնունայն։

Մինչդեռ պատերազմը աւելի ու աւելի կատաղի ընոյթ է ստանում, իսկ յոյների վիճակը դառնում յուսահատական։ Հեկտորը հալածելով նրանց, հասնում է մինչև ծովափ և փորձում է հրդեհել յոյների նաւերը, ծանր կորուստներ պատճառելով նրանց։ Այս ողբերգական վիճակի հանդէպ անտարբեր չէ մնում Աքիլլէսի մտերիմ ընկեր Պատրոկլէսը։ Ջերմ աղերսանքով թախանձում է նա Աքիլլէսին՝ մոռանալ անձնական վիրաւորանքը, քանի այնքան մեծ է յոյն բանակին հասած հարուածը։ Պատրոկլէսի դառն արցունքները շարժում են հերոսի սիրտը, բայց նա չէ կամենում մոռանալ Ագամեմնոնի հասցրած վիրաւորանքը։ Ուստի համաձայն է տալ Պատրոկլէսին իր սպառազինութիւնը, իսկ միրմիդեան զինուորներին ուղարկել պատերազմի դաշտ։ Աքիլլի սպառազինութեամբ Պատրոկլէսի հանդէս գալը սարսափ է տարածում թշնամու բանակում, և նրան աջողւում է տրոյացիներին հալածել մինչև իրենց պարիսպները. սակայն այդ ծանր կռւում ինքն ևս ընկնում է Հեկտորի նիզակի մահաբեր հարուածից։

Պատրոկլէսի եղերական մահը խորապէս ցնցում է Աքիլլէսին։ Նա ողբում է ընկերոջ կորուստը, որի պատճառը իր անվոյթ վերաբերմունքն ու յանցաւոր անգործութիւնն է համարում։ Աքիլլէսն անիծում է իր զայրոյթը, տառապում անպատմելի ցաւից, մռնչում առիւծի պէս, դեռնատարած պոկոտում գլխի մազերը։ Երկար չէ տևում սակայն նրա այդ հոգեկան՝ վիճակը։ Վիշտը փոխւում է անզուսպ վրէժխնդրութեան. նա անդառնալի կերպով վճռել է սրախողխող անել տրոյացիներից շատերին և մանաւանդ Հեկտորին, որ Պատրոկլէսին սպանելուց յետոյ՝ կողոպտել էր Աքիլլի սպառազինութիւնը։ Լցւած բուռն վրիժառութեամբ՝ նա դուրս է գալիս կռւի դաշտ։ Նա դարձել է մի մռնչող առիւծ և ընկել կռւի ամենակատաղի տեղը։ Կռիւն ստանում է անասելի չափեր. ռազմի դաշտը դառնում է մի կատաբեալ ժխոր։ Զևսը այլևս չէ արգելում աստուածներին միջամտել պատերազմին. մասնակցում են աստուածները, մասնակցում է բնութիւնը, մասնակցում է ամբողջ տիեզերքը։ Մի անօրինակ մղումով աստուածները սլանում են Ոլիմպոսից ռազմի դոռ դաշտը, կատաղի վայրագութեամբ լցնելով մարտնչող կողմերի սիրտը։ Որոտում է երկինքը, ցնցւում երկիրը, դարնւում են աստուածներն ու հսկաները, իրար դէմ ծառանում հերոսները և մի խելագար պարի մէջ գալարւում է շրջապատը՝ և՛ սրբազան Իլիոնը, և՛ աքայեցոց նաւատորմը, և՛ Իդա գետը՝ մռայլ ու խաւար տարտարոսի հետ միասին։

Սոսկալի ջարդ ու կոտորած է սփռում իր շուրջը հզօր Աքիլլէսը. մեռնում են բազմաթիւ տրոյացիներ, ընկնում են Պրիամոսի որդիները։ Տրոյացիք դիմում են փախուստի, պատսպարւում Իլիոնի պարիսպների մէջ, և կատաղի Աքիլլէսի հանդէպ դուրս է գալիս միմիայն Հեկտորը։ Իզուր էին թախանձում նրան իր կին Անդրոմաքէն, ծերունի Պրիամոսն ու մայրը, որոնց նախազգացումը կորուստ էր գուշակում Հեկտորին։ Եւ ահա բռնւում են իրար հետ երկու մեծագոյն հերոսներ։

Յամառ ու կատաղի կռիւը վերջանում է Հեկտորի ստացած մահացու վէրքով։ Աստուածների զարթեցրած վայրագութիւնը Աքիլլի մէջ՝ չը շիջաւ սակայն Հեկտորի մահւան տագնապով։ Իր անշնչացած զոհի դիակը Աքիլլը ենթարկում է ծանր անարգանքի, կապում է նրան անւակառքին և թաւալգլոր քարշ տալիս Իլիոնի պարիսպների շուրջը։ Ահեղ պատկերը ցնցում է տրոյացիներին. պարիսպների ներսը բարձրանում է անասելի ողբ ու կոծ. «այնպէս էր ճիշտ այն տեսարանն՝ ասես Իլիոնն անվեհեր պէտք է հիմքից հրդեհակէզ ոչնչանար, աւերւէր»։ Խորապէս վշտացած Պրիամը գալիս է Աքիլլէսի բանակը և թախանձում յանձնել իրեն որդու դիակը։ Աքիլլէսը զղացւում է և դիակը յանձնում վշտաբեկ ծերունուն։ Ողբ ու աղաղակով տրոյացիք դիմաւորում են հերոսաբար ընկած Հեկտորի դիակը և ապա հանդիսաւոր յանձնում այն խարոյկին։

Թաղման այս հանդիսաւոր ծէսով էլ վերջանում է Իլիականը։

Իլիականը բաղկացած է քսանչորս երգից։ Գեղարուեստական տեսակէտից աւելի բարձր արժէք ունի, քան Ողիսականը։

Սուրխաբեան, «Հին յունական գրականութիւն»

ԻԼԻԱԿԱՆ

Հատուածներ

ԴԻՄՈՒՄՆ ՄՈՒՍԱՅԻՆ

Երգիր քէնը, ով դիցուհի, Պելիսածին Աքիլլէսի,
Որ բիւր ցաւեր ազետաւոր բերեց այնքան Աքայեցոց.
Որ շատ կորով դիւցազնների գահավիժեց դժոխքն ի վայր,
Ու գէշերը նրանց ձգեց կեր շներին և բիւր թռչնոց։
Կատարուեց կամքն Արամազդի, և դժուեցին իրարու հետ
Ատրիդէսը՝ քաջանց արքան և Աքիլլէսն աստուածազարմ։

ԹԵՐՍԻԴԷՍԻ ԸՄԲՈՍՏԱՑՈՒՄԸ

Այսպէս կարդաց նա հրաման իշխանաբար իրա զօրքին.
Ու վեր կացան զօրքերն համայն՝ վրաններից ու նաւերից,
Խուճապեցին դէպի արքան խառնագոչով, որոտագին,
Որպէս ահեղ, յաւերժագոչ ծովի ալիք շրընդալից,
Որ ճողփում է ժէռուտ ափին, թնդում անդունդն ամենաձայն։
Ու վերջապէս նստոտեցին, բոլորեցին շուրջ հանդիպի.
Թերսիդէսն էր այնտեղ միայն, որ փընթփընթում անդուռ-բերան՝
Շաղ էր տալիս մտքում պահած իր խօսքերը խառնիճաղանճ՝
Արքաներին դէմ հակառակ, ափեղցփեղ խակ մարդու պէս,
Որ ծիծաղն էր շարժում միայն Աքայեցոց հանդիսատես։
Չէր տեսնուած Իլիոնում մարդ մի այդքան տգեղադէմ.
Մի աչքը շիլ, մի ոտը կաղ, ման էր գալիս լընգլընգալէն։
Մէջքը սապատ, ուսերը ծուռ, կուրծքը փլած ընկած էր ներս,
Սրագագաթ իր կոնդ գլխին հազիւ ունէր քանի մի մազ։
Թշնամի էր նա ոխերիմ Աքիլլէսին և Ոդիսին,
Եւ շարունակ հանդէսի մէջ պարսաւում էր նա երկուսին։
Եւ արդ ահա վեր կացաւ նա Ագամեմնոն դիւցազնի դէմ
Ու ճղաւեց նրա վրայ, թունդ դիպչելով նրան արդէն...
Թէպէտ և անդ Աքայեցիք լուռ զայրացան նրա վրայ՝
Բայց նա այսպէս թունդ դոռգոռաց Ագամեմնոն դիւցազնի դէմ.—
«Ո՜վ Ատրիդէս, ինչդ է պակաս, ինչ ես դժգոհ դու տրտնջում,

Վրանները՝ լեռը պղինձ, վրանները՝ ընտիր կանայք,
Եւ ընտիրն էլ այդ կանանցից՝ նախ և առաջ քեզ մեք բերում
Ամեն անգամ Աքայ՛ցիքս, երբ մտնում մեք մի նոր քաղաք։
Ոսկու մէջն է աչքդ էլ, որ քեզ մի մարդ ձիահանում
Բերէ նէր Իլիոնից իբրև փրկանք իր զաւակին,
Որ կապելով մատդ բերէր՝ ես կամ այլ ոք այս քաջերից։
Թէ մանկամարդ կին ես ունենում, որ նրա հետ սէր անես դուք,
Որ առաջնեակը պղնձե նրան, դու գողանք մեզանից հեռու։
Զէ ապագան իշխան մարդուդ, գորագլխիդ այդպիսի քան,
Աքայագարմ այս զորքերիս գլխին բերել շարիք այսքան։
Է՛յ, վախկոտներ, ամօթ է ձեզ, Աքայուհիք, ոչ Աքայցիք,
Եկէք նստենք նաւերը մեր և տուն դառնանք այժմ և իսկ։
Թողնենք սրան բաղմահարուստ իր աւարը թող վայելի,
Որ հասկանայ՝ արդեօք իրեն անպէտ ենք մենք, թէ պիտանի։
Նոր հենց հիմա դա անարգեց երկնից վեհագոյն Աքիլլէսին,
Այդ քաջագոյն մարդու պատիւն յափշտակելով իրա համար։
Բայց անհոգ է Աքիլլէսը և չունի մտադիր դա իր սրտում.—
Ապա թէ ոչ՝ ո՞վ Ատրիդէս, լրբութիւնդ վերջ կունենար։
Այսպէս ձայնեց Թերսիդէսը Ագամեմնոն ազգապետին։
Բայց վեր կացաւ Թերսիդի դէմ Ոդիսևսը աստուածային,
Դնաց մօտը, նայեց խոժոռ ու սաստելով թնդաց վրան.—
«Է՛յ, Թերսիդէս դու լեզուազար, ճամբարակոր հզաւաճոյն,
Բաշիր լեզուդ, չը յանդգնես արքաների հետ մտնել վէճ.
Դիպցած լինիս, Ատրիդեանց հետ այստեղ եկած բաջերի մէջ
Ու ոչ մէկը քեզնից աւել չէ սինլիրար ու անիրաւ։
Եւ քեզ կասեմ՝ դրա համար, երբ բացում է այսպէս առնան,
Դա բանը չէ արքաներին բերան առնել, ճամբարակել.
Սանձիր լեզուդ, չը յանդգնես գարշելի մասին այստեղ խօսել,
Քանի ատյդ դեռ չը գիտենք այս ամենի փոխանն ու վերջ՝
Անփոքր պիտի Հելլենները գառնանք մեր տուն, թէ վտանգուած։
Ի՞նչ ես այժմէն դու պարսաւում Ագամեմնոն ազգավարին,
Թէ քաջերը Դանայեցոց շատ պարգևներ նրան բերին,
Որի համար, լիրդ զրեց, բռնաբարում ես առնանի մէջ։
Բայց քեզ կասեմ, խարդ նշան, այսուհետև եթէ էլի
Դու գլխիցդ ափեցցիս դուրս տաս այնպէս, ինչպէս հիմի՝
Թող գլուխս չը մնայ էլ կուռ ուսերին Ոդիսևսիս,
Եւ այն օրը ինձ այնուհետև չը կոչեն հայր Տելեմաքիս՝
Թէ չը ձեռնամ պատառ-պատառ վերարկուդ մինչև շապիկ.
Ամաթանքիդ ծածկոյթն անգամ, և առնանից լացացնելով՝
Դէպի տարմիդ քեզ չը ճամբեմ, խարդ-խոյտառակ ձայնել տալով։
Ասաց ու իր գաւազանով նրա կուզին այնպէս զարկեց,
Որ Թերսիդէս կծիկ դառաւ, շիլ աչքերից արցունք թափեց։
Խակոյն և եթէ այն ոսկեղէն գաւազանի կուռ հարուածից
Նրա մէջքին ուռոյց ելաւ կապուտակած և արիւնալից։
Ահաբեկուեց, նստեց Թերսիդ և արցունքն էր սրբում միայն,

Ապուշհայեաց ու այլանդակ աչեր չունս դէմս պտտելով։
Թէ սիրտ չը կար, բայց Աքա՛յցիք լաւ իմացին նրա վրան,
Այսպէս ասին մէկմէկու ամենքն իրար մտիկ տալով.
«Ցիրաւի որ, ով ասուածներ, մեր Ոդիսևս լաւ բան բռնեց,
Որ թէ խելօք իսորհուրդ տուեց, թէ պատերազմ նա յարդարեց։
Իսկ հիմա էլ մեզ յոյներիս գործ ցոյց տուեց մի ամենամն
Եւ մի ամուր սանձ էլ դրեց լրբախօսին այս ժանտերանն.
Էլ այսուհետ սիրտ չի անի արքաներին հետ հաւասար
Վէճի մտնել ու նախատել նրանց խօսքովն իր լեզուագար»։

ՀԵԿՏՈՐԻ ՀՐԱԺԵՇՏԸ ԱՆԴՐՈՄԱՔԷԻՆ

Հասաւ Հեկտոր կորդակաճօճն ապարանքը իր գեղեցիկ,
Պորեց իր տունն ու չը գտաւ Անդրոմաքին լուսածղիկ.
Չի նա առած իր քօղազարդ նաժիշտի հետ իր մանկիկին՝
Աղիողորմ կոծ էր անում այն քաղաքի բարձր բուրգին։
Կանգնեց Հեկտոր իր տան դռան ու հարցրեց իր աղախնոց.
«Ձեզ եմ, լսէք, աղախիններ, ասոյգ տուէք ինձ պատասխան,
Ո՞ւր է մեկնել ապարանքից Անդրոմաքէն իմ լուսացայտ.
Արդեօք իրա տալերի մօտ, ներերի մօտ իր քօղազարդ,
Եւ կամ տաճարն Աթենասի, ուր և ուրիշ Տրովուհիք
Ողորում են հիմա ահեղ մեծ դիցուհուն վարսագեղիկ»։
Արդ պատասխան տուեց նրան հազարապետ կինը իր տան.
«Թէ զօրում ես իրաւն ասեմ՝ ահա որ քեզ ասեմ իրաւն՝
Արդ իմացիր. ոչ քօղազարդ ներերի մօտ, ոչ տալերի,—
Այլ նա գնաց դէպ բարձրաբերձ աշտարակը Իլիոնի։
Իմանալով որ Տրովեանք Աքայեցոց թափիցն ուժգին
Սորտակուել են ու նեղն են խիստ՝ պարիսպ վազեց նա խենթի պէս.
Եւ դայեակն էլ հետը գնաց՝ վերցնելով քո մանկիկին»։
Այսպէս խօսեց տան տնտուն, և Հեկտորը թռաւ տանից,
Անցաւ կրկին նոյն բարեշէն պողոտաներն ու նոյն ճամբան,
Մեծ ոստանից արագավազ հասաւ դռներն Սկէական,
Չի նրանցից պիտի դուրս գար դէպի դաշտը բանակի դէմ։
Ատ ընդառաջ վազեց իր դէմ ամուսինը իր անձկալի,
Էտիոնի դուստրը նազիկ՝ Անդրոմաքէն լուսածղի։
Բնակուում էր Էտիոն այս անտառուտում Իպոպլակ,
Եւ թերէում Իպոպլաքեան, անդ Կիլիկեանց նոր կապեց թագ.
Ահա սրա օրիորդն էր կինն Հեկտորի պղինձագէն,
Որ անդ նրան ընդառաջեց, նաժիշտին էլ հետն առնելով,
Եւ բերում էր նաժիշտն ահա՝ իր գրկի մէջ գուրգուրելով
Գողտր մանկիկը Հեկտորի՝ աստղի նման ճաճանչավառ.
«Իսկամանտրիկ» կոչում էր միշտ իր մանկիկին Հեկտորն-հայր,
Ուրիշները «Ոստան իշխանս», բանզի Հեկտորն էր միմիայն,

Որ վտանգված Իլիոնը պաշտպանում էր միանգամայն։
Նայեց Հեկտոր իր մանկիկին ու լուռ ժպտաց նա հեզագին.
Մոտը եկաւ Անդրոմաքէն, քովը կանգնեց արտասուագին,
Բռնեց ապա ձեռը նրա, տուեց անունն ու այս ասաց.
«Քաջ սիրելիս, քաջութիւնդ կը կործանի քեզ անպատճառ.
Չե՞ս մեղքանում մատաղ տղիդ, չե՞ս մեղքանում թշուառիս՝ ինձ,
Որ պիտ անշուշտ վաղաժամիկ այրիանամ ես քեզանից,
Քանի որ պիտ վրադ խուժեն, քեզ սպանեն աքայեցիք։
Զի թէ այսօր անշնչացած դու տարածուես իմ յանդիման՝
Ի՞նչ սփոփանք էլ ինձ համար,—ինձ կը մնայ ցաւ անվախճան։
Ո՜հ, չունի՛մ հայր, ոչ էլ ունիմ ես աղեկէպ փարելի մայր,
Քանզի հօրս գետին գլորեց Աքիլլէսը աստուածազարմ,
Քանդեց Թեբէն բարձրադուռն Կիլիկեցոց ոստանն աւրեց։
Բայց Էտոշէին սպանելով՝ զէնքը չառաւ, նա պատկառեց,
Եւ զէնքերովն հրաշակերտ նրան խարոյկ բարձրացրեց։
Տուեց նրան նաև դամբան մի վայելուչ, որի բոլոր
Նշդարիներ տնկեցին ողջ Զևսի դստերքն յաւերժական։
Եօթն թուով դաս մի եղբարց իմ պալատում կար գեղապար.
Մի օրուան մէջ նրանք ամենքն իջան մռայլ դժոխքն ի վայր,
Զի սպանեց նրանց Աքիլլն աստուածային և երագոտն
Զիւնաթոյրիկ ոչխարների և յամրընթաց եզների մօտ։
Իսկ իմ մօրը, որ կենում էր անտառախիտն իր Իպոպլար՝
Քշեց այստեղ իր գոյքերով, իբրև գերի մի հասարակ,
Բայց և ապա ձգեց ազատ՝ փրկանք անբաւ վերցնելով.
Նրան էլ զարկեց հօրս տան մէջ Արտեմիսը ազեղնաձիգ։
Հիմա, Հեկտո՛ր, դու ես ինձ հայր, դու ես և իմ մայր խնկելին,
Դու ես եղբայր, դու ես նաև ծաղկափթիթ իմ ամուսին.
Արդ գթա՛ ինձ, մնա այստեղ բուրգի վրայ մեր դղեակի,
Մի թողնի որբ քո մանկիկին և մի այրի՝ քո ամուսնուն.
Դասաւորիր քո զօրքերը թզենու մօտ այն վայրենի,
Ուր քաղաքն է դիւրամատոյց և ուր պարիսպն է դիւրառիկ.
Քաջերն արդէն անդ փորձեցին իրենց գրոհը երեք հետ՝
Այասները, Ատրիդները, Իդոմէն ու քաջ Դիոմէդ.
Թերևս այստեղ մի գուշակող յարձակումն է մատնանշել,
Կամ սեփական իրենց ոգին է գրոհներն այդ ներշնչել։

Պատասխանեց կորդակաճօճ մեծն Հեկտոր և ասաց.
Այդ ամենը, իմ սիրելի, մտածում եմ ինքս ինձ,
Բայց ես սաստիկ ամաչում եմ տրոյներից վեհապանծ,
Ամաչում եմ երկայնազգեստ տրոյուհի կանանցից՝
Եթէ ռազմից փախչեմ հիմա մի վատանուն վատի պէս,
Նաև սիրտս դէմ է դրան, զի այդպէս եմ սովրել ես՝
Անցնել-գլուխ Տրոյներին ու դէմ դնել թշնամուն,
Պահել քարձր հօրս փառքը, նաև փառքը իմ կանգուն։
Լաւ գիտեմ ես, իմ հոգու մէջ նախազգում եմ նաև այն,

Որ կը գայ օր, կը կործանուի Իլիոնը սրբազան,
Կը կործանուի իր ցեղի հետ Պրիամոսը քաջագէտ.
Բայց ոչ այնքան խռովում է ինձ այդ վիշտը Տրոյի,
Ո՛չ էլ վիշտը Պրիամոսի, ոչ էլ իմ մօրն Հեկաբի.
Ո՛չ էլ վիշտը եղբայրներիս, իրենց խմբով քաջխիզախ,
Որ թշնամու սուսերներից պիտի ընկնեն փոշեթաղ,—
Որքան քո վիշտն, Անդրոմաքէ, երբ որ մի օր չարաղէտ
Կողոպտելով ազատութիւնդ ու քաշ տալով իրա հետ
Թեզ՝ լալագին՝ պիտի տանի պղնձազգեստ Աքայ՛ցին։
Անդ Արգոսում պիտի հինես օտար կնոջ ձեռի տակ,
Ջուր պիտ կրես Մեսսէիսի կամ Հիպերի աղբիւրից՝
Բռնադատուած տաժանելի և անողորմ կարիքից.
Գուցէ մէկն էլ ասէ այնտեղ քո արցունքը տեսնելով.
«Դա է ահա կինն Հեկտորի, ամենից քաջ մարտիկի
Տրոյացոց հերոսներից ահեղ ռազմում Իլիոնի»։
Այսպէս կասէ, և պիտ խոցիս մի նոր ցաւով աղեկէզ
Եւ ամուսնուդ պիտի յիշես, որ կարող էր փրկել քեզ.
Բայց թող մեռնեմ, թող առաջուց մտնեմ շիրմի ծածկի տակ,
Նախ քան լացդ ես կը լսեմ, քեզ կը տեսնեմ առևանգ։
Այսպէս ասաց շքեղն Հեկտոր իր ամուսնուն գորոված
Եւ իր ձեռքը պարզեց մանկան՝ գիրկն հայրական իր բացած։
Բայց հօր ահեղ կերպարանից մանուկն այնպէս զարհուրեց,
Որ ճչալով ստնտուի ծոցում երեան իր պահեց.
Վախեց մանուկն իր հօր տեսքից, զէն ու զրահից ահռելի
Եւ փնջիցը սաղաւարտի, որ ճօճում էր կատարին։
Ժպտաց Հեկտոր, ժպտաց նաև մանկան մայրը մեծարոյ։
Իսկոյն հանեց շքեղն Հեկտոր փայլակնացայտ իր կորդակ,
Դրեց գետին, գրկեց որդուն և ձեռքի մէջ ճօճելով՝
Դարձաւ այսպէս մաղթեց Զևսին, անմահներին ասելով.
Ո՛վ Արամազդ, և դուք, ո՛վ այլ բոլոր անմահ աստուածներ,
Արէք այնպէս՝ տղաս ինձպէս դառնայ փառքը Տրոյի
Եւ ինձ նման իր քաջութեամբ թագաւորէ միշտ նրան.
Ունենայ իմ զօրութիւնս, և որ վրան նայելով,—
Երբ ամենի պատերազմից նա յաղթական դառնայ տուն,
Ասանելով ախոյեանին, բերէ աւարն արիւնոտ,
Որ տեսնելով մայրը նրան՝ ուրախանայ իր սրտում։
Ասաց Հեկտոր և իր մանկան կնոջ գիրկը դրեց յետ,
Ժպտաց մայրը արտասուախառն՝ տղան ծոցում բուրաւէտ.
Ցուզուց Հեկտոր տեսնելով այս, գորովեց իր ամուսնուն
Եւ շոյելով նրան ձեռով, ասաց՝ տալով իր անունն.—
«Մի՛, նազելի, մի՛ տխրութեամբ սիրտդ ինձ համար համակի,
Չըկայ մարդ որ՝ նախ քան օրհասն՝ ինձ դժոխքը ուղարկի.
Չի կարող մարդ երբէք փախչիլ, երբ օրհասը մօտենայ,
Ո՛չ վախկոտը և ոչ քաջը՝ երբ ծնեալ է մօրից նա։
Տուն դարձիր դու, տուր աղախնոց գրաղեցնեն իմ մանկան,

Դու էլ նատիր, իլիկ պըտտիր, հանդիսա գործիր քո ատաստն։
Իսկ ռազմական գործը բոլոր՝ թող որ հոգսը լինի այդ՝
Իլիոնում ծնուած մարդոց և իմ հոգսը մանաւանդ։
Ասաց, դրեց սաղաւարտը, իսկ Անդրոմաք գնաց տուն՝
Յետ նայելով համբին տխուր և ջերմ արցունք թափելով։
Եւ Հեկտորի հրաշակերտ տունը հասաւ նա արագ,
Իսկ աղախնոց բազմութիւնը խմբուած գտաւ յարկի տակ.
Բարձրացրեց սուգ ու կսկիծ, լացացրեց ամենին,—
Ողջը Հեկտորն էին ազում՝ մինչ նա կենդան տակաւին.
Այնքան նրանք յոյս չունէին, որ յետ դառնար այն մարտից,
Ոչ էլ փրկուէր աքայեցոց անվանելի բազուկից։

ՅԵՐՈՒՆԻ ՊՐԻԱՄՈՍԸ ԱՔԻԼԼԷՍԻ ՄՕՏ

Եւ Պրիամոսն իջաւ կառքից,
Թողեց այնտեղ Իտէոսին, որ պահպանէ նժոյգներին.
Ու մտաւ ներս օթեանը, որտեղ գտուած ընկերներից՝
Գտաւ նստած Աքիլլէսին, Արամազդի սիրելիին.
Երկու հոգի քովը կային պատրաստ նրա ծառայութեան՝
Մինը քաջն Աւտոմէդն էր, միւսն Ալկիմն հերոսական։
Եւ ընթրիքն էլ վերջանում էր, դեռ սեղանը մնում էր բաց,
Որ Պրիամոս այնտեղ մտաւ ներս՝ աննկատ աչքից նրանց,
Փարուեց ծնկանն Աքիլլէսի, բռնեց աջը արիւնալի,—
Աջն ահաւոր՝ դահիճն ահեղ իրա բազում որդիների։
Ինչպէս մի մարդ իր երկրի մէջ մի օր դառնայ արենապարտ
Եւ ստիպուած ու ահարեկ փախչի երթայ օտար աշխարհ,
Ցանկարծ մտնի ճոխ մարդու մօտ, զարմանք բերէ տեսնողներին,
Այնպէս ապշեց Աքիլլէսը, երբ տեսաւ վեհ Պրիամոսին։
Միւսներն էլ շատ ապշեցին ու նայեցին մէկմէկին.
Իսկ Պրիամը Աքիլլէսին այսպէս խօսեց պաղատագին.—
«Ո՜վ Աքիլլէս աստուածատիպ, յիշիր հայրդ իմ հասակի,
Եւ ինձ նման զառամութեան դաժան շեմքին կանգնած հիմա.
Գուցէ նա էլ շրջապատուած ասոխներից իր դրացի՝
Զուսի անձին մի զօրաւիդ, որ յետ վանէ աղէտն ու մահ.
Բայց լսելով, որ դու ողջ ես՝ պիտի խնդայ ձերի հոգին.
Եւ պիտ յուսայ տեսնել որդուն, երբ Տրոյից դառնայ կրկին։
Բայց աւադ ինձ, որ Իլիոնում քաջ զաւակաց էի ես հայր.
Յիսուն էին նրանք թուով, երբ աքայցիք եկան այս վայր,
Տասն և ինը մէկ մօրից էր, միւսները այլ կանանցից,
Նրանց շատի ծունկը ծալեց Արէսը այն բռնավայրագ.
Միայն մէկը մնում էր ինձ, պաշտպանը մեր ու քաղաքին,
Այն մէկին էլ դու զարկեցիր, հայրենիքի այն մարտիկին.
Ահա այդ իմ Հեկտոր քաջիս համար եմ ես եկել հիմա,
Նրա փրկանք անբաւ ընծան բերել եմ քեզ արդէն ահա.

Մոխիկ արա աստուածներին, յիշիր հօրդ և ինձ գթա.
Նրանից շատ թշուառ եմ ես, և կրեցի այնպէս վշտեր,
Որ ոչ մի մարդ մահկանացու այս աշխարհում չէր տեսել դեռ.
Տես ձեռն անգամ համբուրեցի, որ սպանեց իմ զաւակին»։
Ասաց և հօր յիշատակով լացացրեց Աքիլլէսին։
Բռնեց Աքիլլ՝ նրա ձեռը և քաղցրութեամբ հեռացրեց։
Եւ երկուսը լալիս էին.—ծերն յիշելով իր Հեկտորին՝
Լաց էր լինում թաւալելով ոտների մօտ Աքիլլէսի,
Իսկ Աքիլլէս հօրն էր ողբում, ողբում մահը Պատրոկլէսի։
Եւ վրանի յարկը թնդաց նրանց ողբից կսկանալիր.
Եւ երբ որ շատ լացեց Աքիլլ ու հանդարտուեց լիք սիրտը իր՝
Ցատկեց տեղից և իր ձեռքով բարձրացրեց հէգ ծերուկին,
Գթաց նրա ճերմակ գլխին և ալեոր նրա միրքին,
Եւ այս խօսքերն ասաց նրան՝ արդ՝հառալից իրա ձայնով.—
«Հէգ ծերունի, ճշմարիտ որ տառապեցիր բիւր վշտերով
Եւ ինչպէս դու սիրտ արիր գալ դէպի նաւերն աքայեցոց,
Այն մարդու մօտ, որ սպանեց քո բազմաթիւ կորով որդոց.
Երկաթի սիրտ ունիս անշուշտ, բայց էլ նստիր այս աթոռին,
Թէև ցաւած սիրտ ունինք մենք, սակայն հանենք ցաւը սրտից,
Չի ինչ օգուտ դառն ու անեղ կանանցածին այս ողբերից։
Թշուառական մարդոց ճակտին այս են գրել անմահ դիք մեր,
Որ միշտ մարդիկ ցաւով ապրեն, իսկ անցաւ են միշտ աստուածներ։
Քանզի Զևսի շեմքի վրայ կարասներ կան երկու հիմա,
Երկու կարաս այն տուրքերի, որի միջից բաշխում է նա.
Մէկի միջին բարիքներ են և չարիքներ միւսի մէջ։
Երբ տալիս է Զևսն այնտեղից մէկին խառն չարն ու բարին,
Մերթ բարուն է մարդ հանդիպում, մերթ էլ չարին այս աշխարհի։
Իսկ ում չարուց է տալիս նա՝ ցաւերի է սա միշտ բաժին,
Շրջում է յար աստուածներից ու մարդկանցից արհամարհուած։
Այսպէս Պելին իր ծննդից բիւր պարգևով լիացրին,
Թագաւորեց Միրմիդացոց փառք ու շուքով նա ճոխացած։
Թէպէտ ինքն էր մահկանցու՝ առաւ իրեն կին դիցուհի,
Սակայն Զևսը պարգևատուն հանդիպեցրեց նրան չարի.
Չի չունեցաւ նա զաւակներ՝ ժառանգ իրա իշխանութեան,
Այլ մի զաւակ ծնեց նրան, նա էլ եղաւ բաժին մահուան.
Եւ ես ահա անկարող եմ ծերութիւնը իր խնամել,
Քանզի ահա Իլիոնում հայրենիքից հեռու այստեղ՝
Ե՛ւ քեզ և՛ քո զաւակներին պատուհաս եմ նստած անեղ։
Եւ լսեցինք, ով ծեր, երբեմն ճոխ էիր դու աշխարհներով
Եւ Լեսբոսից մինչև Փռիգ, ուր Մակարն էր երբեմն իշխում՝
Մինչև անծայր Հելլեսպոնտոս իշխանութիւնդ էր տարածում։
Եւ ճոխ էիր ու բարգաւաճ որդիներով ու ինչքերով։
Բայց երբ երկնի աստուածները գլխիդ բերին այս մեծ աղէտ՝
Միշտ արիւն է ու պատերազմ քո քաղաքի շուրջն այսուհետ։
Բայց համբերիր, և մի անվերջ հեծիր այսպէս հառաչելով,

Քանի որ դու օգուտ չունիս քո զաւակին միշտ ողբալով.
Եւ ոչ նրան այդ ողբերով կենդանացնել կարող ես դու,
Ու թերևս հասնեն գլխիդ աղէտներ նոր և ահարկու։

ՊՐԻԱՄՈՍԸ ԻԼԻՈՆ Է ՏԱՆՈՒՄ ՀԵԿՏՈՐԻ ԴԻԱԿԸ ՏՐՈՅԱՑԻՆԵՐԻ ՈՂԲԸ

Քրքջնազդեստ առաւօտը լոյս էր սփռում աշխարհին,
Որ Պրիամը լաց ու կոծով քշեց ձիերն Իլիոն,
Ջորիներն էլ տանում էին դիակն ընկած Հեկտորի։
Չէր իմացել նրանց գալը դեռ ոչ մի մարդ, ոչ մի կին
Կասանդրից շուտ, որ նման է ոսկեղենիկ Աստղիկին։
Հենց Պերգամի բարձունքներից տեսաւ հօրը կառքի մէջ
Մուներակի հետ, որ գոռում էր դիակն յետքից բերելով՝
Ճիչ արձակեց ու ձայն ձգեց փողոցներում Իլիոնի.—
«Ո՞վ տրոյացիք, տրոյուհիք, արիք տեսէք Հեկտորին,
Որին՝ ռազմից յետ դառնալիս՝ ուրախ գնում էիք դէմ,
Քանի որ նա խնդութիւն էր քաղաքին և բանակին»։
Կոծեց, գլխին ժողվեց ուստանն, ոչ մարդ մնաց և ոչ կին—
Ողջ տներից դուրս վազեցին մեռելների հանդիսին։
Նախ նազելի ամուսինը և մայրն արդոյ Հէկաբէն
Ընկան սայլին, ճիչ բառնալով դիի գլուխը գրկեցին
Ու փետեցին ծամերն իրենց, արտասուեց և ժողովուրդն։
Ու այսպէս էլ ամբողջ օրը մինչ արևը մտաւ մուտ՝
Անշուշտ քաղքի դռների մօտ պիտի լային ողբաձայն,
Թէ չը գոչէր այն ամբոխին կառքից այսպէս Պրիամ.—
«Ճամբայ տուէք, կառքը անցնի, դին հասցնեմ ես մեր տուն,
Ապա այնտեղ ինչքան կուզէք դուք ողբացէք իմ որդուն»։
Այս որ ասաց՝ լսեց ամբոխն ու սայլակից յետ քաշուեց։
Ու տարան դին պերճ արքունիք, քանդակ մահիճ դրեցին,
Շուրջը բերին ողբերգուներ՝ եղերամայր կանանց հետ,
Ողբ ասացին ողբասացներն ու կանայք էլ կրկնեցին։
Անդրոմաքէն ձիւնածղին սկիզբ դրեց մեծ կոծին՝
Իր ձեռքերով գիրկընդխառն ընկած գլխին Հեկտորի։
«Վաղ արևդ հանգաւ, ով քաջ, ու թողիր տանդ ինձ այրի,
Ի՞նչ կը լինի վերջն այս մանկան, որին կեանք ենք տուել մենք։
Անշուշտ հասակ չի առնի սա. նախ կը քանդուի Իլիոնն,
Որովհետև ընկար, ով քաջ, դու որ միշտ մեր քաղաքի
Պաշտպանն էիր, մանուկների, նաև պարկեշտ մեր կանանց։
Քաշ կը տրուին դէպի նաւերն ու նրանց հետ նաև նա։
Եւ դու, մանկիկ, ինձ հետ պիտի երթաս երկիրն ուսոխ,
Ուր բռնադատ աշխատանքներ պիտի տան քեզ անարժան,

Ուր ակամայ պիտի շոյեմ բռնակալին այն դաժան։
Կամ թէ բուրգից քեզ զայրագին մի յոյն պիտի գլորի՝
Դառն մահի քեզ մատնելով ի վրէժ արեան Հեկտորի,
Որի ձեռքով սպանուել է եղբայրն, հայրը կամ որդին,—
Զի քո հայրը շատ յոյների կրծել տուեց սև գետին.
Զէ՞ որ հայրդ էլ քաջ ահեղ էր պայքարի մէջ այս ռազմի,
Որի համար ժողովուրդներ սուգ են անում դեռ հիմի։
Աւաղ, Հեկտոր, ծնողներիդ դու ձգեցիր սուգի մէջ,
Իսկ առաւել ինձ եղար ցաւ, ինձ, անբախտս եղկելի.
Զը մեկնեցիր քո ձեռը ինձ քո սև մահուան մահիճից,
Ոչ էլ խելօք, բարի մի խօսք կտակեցիր ինձ քեզնից։
Որ արցունքով գիշեր-ցերեկ գոնէ ես միտ բերէի»։
Այսպէս ողբաց ու լաց եղաւ, կանայք ողբը կրկնեցին,
Եւ Հեկաբէն նրա ողբին կցեց ողբը տխրագին.—
«Հեկտոր, որդի, որդիներիս դու ամենից սիրելի,
Որ դեռ կենդան՝ դու թանգ էիր աստուածներին Ոլիմպի,
Որ մահուանդ օրերին էլ դարձեալ պաշտպան եղան քեզ.
Թէև գերեց եղբայրներիդ արագոտն Աքիլլէս
Եւ տանելով կղզիները՝ այնտեղ ծախեց բոլորին,
Տարաւ Իմբրոս, տարաւ Սամոս, մինչև Լեմնէն անմատոյց,—
Միայն նա քո հոգին քաղեց սուր սլաքովն ահռելի,
Ու քաշ տուեց դամբանի շուրջ քո սպանած Պատրոկլի,
Որին երբէք այդ բանով էլ նա չը տուեց յարութիւն։
Հիմա դու չես դեռ քայքայուած, ասես նոր ես զարկուած դուն.
Պառկել ես դու ապարանքում, Ֆեբոսն ասես քաջաղեղ
Վրադ հասել՝ խոցել է քեզ դիւր խոցելի իր նետով»։
Ողբաց այսպէս, և ամենքը ձայնակցեցին մեծ ողբով,
Ապա երրորդն առաջ եկաւ, տխուր ողբով Հեղինէն.
«Աւաղ, Հեկտոր, իմ տագրերի դու թանկագինն ամենէն,
Ինչու համար Աղէքսանդրի ես հարսն անբախտ, լինէի,
Որ նա բերէր ինձ Տրոյա. լաւ չէ՞ր ես վաղ մեռնէի։
Քսան տարի եկել եմ ես, թողել իմ տունն հայրենի,
Եւ քեզանից չեմ լսել դեռ մի խօսք դառը և կամ վատ.
Թէ տագրերէս ու տալերէս կշտամբել է մինը ինձ
Կամ կիսուրս,—քանի կեսարս ինձ հետ քաղցր էր հօրս պէս՝
Դու աղգեցում էիր նրանց քո խելացի խօսքերով։
Ահա ինչու քո վրայ ես լաց եմ լինում մորմոքով։
Հիմա ինձ ոչ Իլիոնում չը մնաց քեզ պէս բարեկամ.
Հիմա բոլոր տրովացոց նշաւակ պիտ ես դառնամ»։
Այսպէս ասաց նա ողբալով, և ժողովուրդն հառաչեց։
Ապա Պրիամ ժողովրդին դարձաւ՝ այսպէս ձայն տուեց.—
«Դէ, գնացէք, տրովացիք, ու փայտ բերէք խարոյկի.
Մի վախենաք ամենևին դարաններից յոյների.—
Աքիլլէսը մեզ ճամբելիս խօսք է տուել նա ինձ մօտ,
Որ չի կռուի՝ մինչև ծագէ տասներեքու առաւօտ»։

ՀԵԿՏՈՐԻ ԹԱՂՈՒՄԸ

Ասաց, իսկոյն քաղաքի մօտ եղ ու ջորի լծեցին
Ու գնացին, փայտ կտրեցին անտառներում, դիզեցին,
Եւ տաներորդ երբ լուսաբեր առաւօտը ծէգծէգեց՝
Արտասուելով վերցրին դին քաջամարտիկ Հեկտորի,
Բարձր խարոյկ պատրաստեցին, բոցը եկաւ մինչ երկինք։
Հագիւ ծագեց առաւօտեան վարդամատն արշալոյս՝
Դէպ Հեկտորի խարոյկը մեծ ամբոխ եկաւ տրտմայոյզ
Եւ խմբուելով՝ այրեցեալին սև գինիով օծեցին,
Հուրն հանգցրին և կրակից մնացածը մաքրեցին.
Ապա եկան ընկերները և եղբայրներն Հեկտորի,
Հաւաքեցին ցաւած սրտով նշխարները հերոսի,
Արտասուելով ամփոփեցին ողջը ոսկի սափորում
Ու վրան էլ ծիրանեգոյն քնքոյշ մի բօղ ձգեցին.
Ապա սափորն իր աճիւնով դրին խորունկ մի փոսում
Ու վրան էլ յետոյ բերին ծանր վէմեր քաշեցին.
Ապա շիրիմ կանգնեցրին, շուրջը դրին պահակներ,
Որ աքայցիք չը յարձակուեն՝ ժամանակը չանցած դեռ.
Շուրջը շեղջեր բերին լցրին ու յետո դարձան տրոյցիք։
Եւ քաղաքում կազմ ու կարգով հոգեհացի նստեցին
Պերճ պալատում Պրիամոսի, Զեւսից կարգուած արքայի,—
Այսպէս շքով պատկեցին թաղումը քաջ Հեկտորի։

Գրաբարից աշխարհաբարի վերածեց՝ Դ. Դեմիրճեան

ՈԴԻՍԱԿԱՆ

Բովանդակութիւն

Հոմերի այս դիւցազներգութիւնը բաղկացած է քսանչորս երգից, սկսւում է բանաստեղծի դիմումով առ մուսան, հայցում նրա օգնութիւնը, որ կարողանայ երգել Իթակէի թագաւոր Ոդիսևսի փորձութիւններով լի վերադարձը Տրոյայից հայրենիք։

Ամբողջ տասը տարի մարտնչել է նա Իլիոնի պարիսպների տակ, իր խելքով ու հնարագիտութեամբ վերջ տուել պատերազմին, կործանել Տրոյան, ապա կատարել է նաև իր «հերոսական պարտքը աստուածների հանդէպ», և չը նայած դրան՝ այնուամենայնիւ չէ կարողանում հանգիստ ու անխռով վերադառնալ իր «տենչալի» հայրենիքը։

Իթակէում Ոդիսևսին ապասում են նրա հաւատարիմ կինը՝ Պենելոպէն ու պատանի որդին՝ Տելեմաքը։ Ոդիսևսին մեռած են համարում շատերը, ուստի և գեղեցիկ ու համբերող Պենելոպէի շուրջը վրխ-

տում են աղնաատոհմ կտրիճներ՝ հոմանիներ, ցանկանալով ամուսնանալ նրա հետ։ Մեծ էր դայթակղությունը Պենելոպէի համար, սակայն նա ամբողջ քսան տարի կարողաց սպասել է իր ետենչալի ամուսնուն։ Մինչդեռ Պոսէյդոնը, ծովի աստուածը, զայրացած Ոդեսևսի վրայ՝ Պոլիֆէմ ցիկլոպ որդուն կուրացնելու համար, անթիւ դժբաղդութիւններ է բերում նրա գլխին, կատաղի ալիքների մատնելով նրա նաւատորմը։ Ոդիսևսն ընկնում է Օգիգի կոչուած կղզին, ուր յաւերժահարս Կալիպսէն իր հմայքի ոյժով պահում էր Ոդիսևսին իր խորունկ քարայրում, նրան իր ամուսինը դարձնելու զուր յոյսը փայփայելով, որովհետև աստուածները հակառակ են եղել դրան։

Ոդիսևսի օջախի տէր Աթենաս Պալլասի խորհրդով Տելեմաքը ճամբայ է ընկնում՝ փնտռելու իր հօրը։ Նա այցելում է Տրոյայից վերադարձած հերոսներին, ինչպէս օրինակ Փիլոսի ծերունազարդ Նեստորին, ապա Մենելաւոսին, սակայն որոշ ոչինչ չէ կարողանում իմանալ։

«Աստուածների կամքով» Կալիպսէն արձակում է Ոդիսևսին։ Սակայն Պոսէյդոնը, խորտակելով նրա նաւերը, ձգում է նրան մի անծանօթ ծովափ։ Դա Թէաքիան էր՝ Ալքինոյ թագաւորի երկիրը։ Թագաւորի աղջիկը՝ Նաւսիկէն հանդիպում է Ոդիսևսին ծովափին, դրեթէ մերկանգամ, և զգեստներ տալով՝ բերում է նրան պալատ։ Ճոխ և էպիկուրեան պալատում դրկաբաց ընդունելութիւն է գտնում Ոդիսևսը, ուր միևնոյն վայելքն ու պերճանքն էին թագաւորում։ Հենց այստեղ խնջույքի ժամանակ Ոդիսևսը լսում է պալատական երգիչ Դեմոդոկին, որը այնքան սրտառուչ երգում էր Տրոյայի պատերազմի հերոսներին, յիշելով նաև Ոդիսևսի անունը։ Երգը յուզում է Ոդիսևսին, և նրա աչքերը լցւում են արցունքով։ Նկատելով այդ՝ Ալքինոյը և պալատականները ստիպում են Ոդիսևսին յայտնել իր ով լինելը։

Ոդիսևսը պատմում է իր գլխով անցածը։ Զարմանալի երկիրներ ու մարդիկ է տեսել նա ճանապարհին և բաղում արկածների ենթարկուել։ Կախարդական աշխարհների, հրէշաւոր արարածների պատկերները յաջորդում են իրար։ Եւ եթէ անակնկալ վտանգից ու կորստից յաճախ ազատուել են Ոդիսևսն ու իր ուղեկիցները, դա իր անսահման խորամանկութեան շնորհիւ է եղել։ Երբ, օրինակ, Ոդիսն իր ընկերներով մտնում է Պոլիֆէմ ցիկլոպի քարայրը, ուր մի ահնանի հսկան ուտելով եկւորներից երկուսին, քարայրի անցքը փակում է մի հսկայական քարով, Ոդիսևսը չի կորցնում իր պաղարիւնութիւնը. քնած Պոլիֆէմին նա չի սպանում, որովհետև քարայրի անցքը բաց անող այլևս չի լինելու, և իրենք բոլորը պիտի դատապարտուեն սովամահութեան։ Ոդիսը կուրացնում է հսկային, որ նա չը գտնի եկւորներին։ Կատաղած հսկան բաց է անում անցքը և նստում դռանը, որ փախչելու փորձ անողներին բռնի։ Նա մէկ-մէկ դուրս է թողնում իր ոչխարներին, զգուշօրէն շօշափելով նրանց, որ չը փախցնի եկւորներին։ Ոդիսը սակայն գտնում է միջոց. ոչխարներին երեքական իրար հետ կապում է, նրանց տակին ամրացնում իւրայիններին և ազատում ու ազատուում անխուսափելի կորստից։

Ինքնամենարիկ հետաքրքրությունն է նաև նրա այցելությունը մեռածների, ուր նա հանդիպում է Աքիլլեսի սուերին և երանելի տարիս, որ նա ստորգրկրյա թագավորության մեջ ևս իշխող է սուերների վրայ։ Աքիլլես սակայն իրական կեանքի կարոտն է քաշում և Ոդիսին պատասխանում է, թէ այն աշխարհում լաւ է լինել ազքատ մարդու վարձուր, քան թէ բոլոր մեռելների լինել հզօր թագաւոր։ Նա պատմում է և մինչև այլոց Տրոյայի մի քանի հերոսների վախճանի մասին, ինչպէս Ագամեմնոնի, որին կինը սպանել էր իր սիրեկանի օգնութեամբ և այլն։

Ոդիսևսի պատմությունը մեծ հետաքրքրություն է զարթեցնում Ալքինոյի պալատում։ Բոլորը համակրանքով են վերաբերում հերոսին և իրենց նաւերով հասցնում նրան Իթակէ։

Ոդիսը սակայն անմիջապէս չի գնում պալատ։ Նա ծպտեալ, մուրացկանի կերպարանքով, գնում է իր «սատուածանման խոզապան» Էումէոսի մօտ, ուր ապարդիւն ճանապարհորդությունից վերադառնում է նաև Տելեմաքը։ Այստեղ բացւում է Ոդիսևսը, միասին կազմում են գործելու ծրագիր վատշուր հոմանիների դէմ, որոնք լրջօրէն վատնում էին Ոդիսևսի հարստությունը ու խնջոյքներ սարքում նրա յարկի տակ, օգտուելով տիրոջ բացակայությունից։ Ոդիսը կազմակերպում է յարձակումը, սպանում բոլորին, խաղաղացնում նաև քաղաքի ապստամբներին՝ հոմանիների մերձաւորներին, ապա կրկին ընտանեկան անգորը կեանքով ապրում իր Պենելոպէի հետ։

Սուրխաբեան, «Հին յունական գրականություն»

ՈԴԻՍԱԿԱՆ

Հատուածներ

ԴԻՄՈՒՄՆ ՄՈՒՍԱՅԻՆ

Երգիր, Մուսա, այն մեծ մարդուն՝ խորագէտին բազմահնար,
Որ Իլիոնը քանդելուց յետ թափառական շրջեց երկար,
Որ այց գնաց շատ քաղաքներ, տեսաւ մարդկանց վարքերն ու բարք,
Որ վշտերում և ծովերում կրեց բազում նա տառապանք,
Որ իր և իր ընկերների դէպ հայրենի դարձը հոգաց,
Բայց զուր եղաւ հոգսը նրա, չը յաջողեց փրկել նրանց,
Քանզի նրանք երկար ճամբին ոչնչացան բոլորովին։
Անմիտներ՝ ճաշակեցին վեհ Արեգի աստուածներին.
Սա զայրացաւ, անհետացրեց օրը նրանց վերադարձի։
Արդ այս մասին ասա՛ մեզ բան, դուստր Զևսի, ով դիցուհի.
Ինչո՞ւ համար ուրիշները մահից այդպէս ազատուեցին,
Ողջ և՛ կռուից, և՛ ծովերից, վերադարձան հայրենի տուն,
Սա՛ միմիայն բազմաթափառ տենչաց դարձին և ամուսնուն։

ՆԱՒՍԻԿԷ

Գնաց հօր մօտ Նաւսիկայան և ժպտագէմ ասաց նրան.
«Հայրիկ, ասա, որ բարձրագահ, արագանիւ կառքդ ինձ տան.
Շատ լացք է տանը կիսուած, տանեմ գետը լուանալու.
Մեծիդ մաքուր կը վայելէ մեծերի մօտ երևալու։
Հինգ որդիքդ՝ երկուս զուգած, երեքն պոռոգ ու անպակ,
Ցանկանում են պարի գնալ շորեր հագած ջինջ ու ճերմակ.—
Այդ եմ հոգում միայն, ասաց և իր հօրից քաշուեց նա՝ շատ
Խօսել իրա հարսանիքից. սակայն հայրը հասկացաւ այդ։
«Գնա՛, ասաւ, չեմ խնայում քեզ ոչ ջորի և ոչ այլ բան.
Կասեմ իսկոյն ծառաներին, որ մեր շքեղ կառքը բառնան։
Ասաց, կանչեց, ծառաները բերին կառքը արագանիւ
Ու լծեցին, և աղջիկը բերեց շորերն ընտիր, ազնիւ,
Բարձեց կառքին. մայրն էլ դրեց զամբիւղը մեծ կերակրով լի,
Լիքը լցրեց այծի տիկը գինին անուշ, հրաշալի։

Եվ աչքը կարքի վրայ, դրեց ոսկի իր եղամանն
Անուշ իւղով՝ որով օծէ նաժիշտներին, նաև իրան,
Առաւ մորակն, առաւ սանձերն, ձաղկեց գաշտում ջորիներին,—
Վազում, գոփում ու տանում են ձորձ ու նաժիշտ, հետն էլ կոյսին։
Հասան գետի յորդ հոսանքին, ուր կան անթիւ լոգարաններ,
Ուր ջրերը արագահոս լանում են ամեն կեղտեր։
Տեղ հասնելով, յորդ գետի մօտ արձակեցին ջորիներին,
Որ արածեն սէգը անուշ։ Ձորձը կարքից իջեցրին
Եւ ձգեցին փոսերի մէջ ու արոտեցին ոտների տակ,
Մինչև մաքուր լանալով՝ պերճ փռեցին կարգով յատակ
Ծովի ափին, ուր խիճերը ողորկւում են ծովաջրում։
Լացուելով, իւղ օծուելով գետի ափին ճաշ նստեցին,
Ձորձերն ամեն ցամաքեցին արևի բարկ վառ շողերից։
Ու կոյսը իր նաժիշտներով երբ լիակուշտ ճաշակեցին՝
Գնդակիսաղի ելան ապա՝ քօղն հանելով գլուխներից.
Եւ Նաւսիկէն լուսածղի կցեց ապա երգն այնուհետ՝
Ինչպէս հետքից Երի-մանթի կամ դէպ դժուար լեռն Տայգետ
Գնաց որսի լեռնախաղաց Արտեմիսը ոսկեփքին,
Որսաց նետով վարազներին, արագավազ եղնիկներին։
Նրանց չորս դին խայտում էին յաւերժ՝հարսներն անտառների,
Եւ Լետոնը գիտելով այդ՝ հրճւում էր այն կոյսի պարից,
Որ իր գլխով և ճակատով բարձրահասակ էր ամենից,
Նաև իրա գեղումը էր վեհ նաժիշտներից իր սիրունիկ.
Այսպէս աշխոյժ, անեման էր նաժիշտների միջին Նաւսիկ։

ԱԼՔԻՆՈՅԻ ԱՊԱՐԱՆՔԸ

Մտաւ տունը Երեքթէի, նրա պալատն այն ամրաշէն.
Մինչ Ոդիսևս մօտենում էր Ալքինոյի ապարանքին.
Ու հեռացաւ դեռ չը հասած նրա շեմքին պղնձեղէն—
Այնպէս տունը ճաճանչում էր նման լուսնին, արեգակին։
Շեմքից դէպի խորքը նրա պղինձ էին պատերն աստ-անդ.
Ոսկի դռներ դուռը փակում, արծաթ էին դրսի դռներ,
Վերի շեմն էր արծաթաշէն, և ոսկի էր մանեակի զարդն,
Գահակներ կան այստեղ ու անդ. ոսկի, արծաթ ձոյլ դամփռներ,
Հրաշակերտ Հեփեստոսի ձեռքով կերտած բոլոր բաներ։
Շները այս պաշտօն ունին՝ հսկել տունը Ալքինոյի,
Եւ ամենքը էին անմահ, չեն ծերանում ամենևին.
Եւ պատերի շուրջ երկայնքով այստեղ ու անդ գահեր կռած
Կանանց ճարտար ձեռագործի՝ ծածկոցներ կան վրան փռած։
Փեկացիներն ականաւոր անդ են նստում խրախճանքի
Եւ ձեռներին ջահ բոցավառ պատանիներ կային ոսկի,
Որ գիշերը ճոխ սեղանին վառ լոյս սփռեն վերնայարկից։

Յիսուն էին աղախիններն. ոմն աղում էր ոսկի ցորեն
Երկանքներով, ոմը ջուլհակ, ոմն էլ լոքն էր պտուտ տալիս.
Պտտւում են, դողում արագ՝ ինչ տերևներ կաղամախի,
Իսկ ոստայնը այնպէս էր պինդ՝ որ չէր ծծի կաթիլն իւղի։
Որչափ հմուտ՝ Փեկեանները ծովի մէջ են արագանաւ,
Այնչափ Պալլաս նրանց կանանց տան գործի մէջ հանճար տուաւ։
Դուրսը, մօտիկ արքունիքին, կար մի պարտէզ սքանչելի,
Չորս օրավար, ցանկապատով ամուր պատած շուրջանակի,
Բարձր ծառեր դալարագեղ՝ կրում էին՝ նուռն ու տանձեր,
Զբնաղ խնձոր, քաղցրիկ թուզեր, հմուտ տնկած ձիթենիներ.
Չէ պակասում, չէ նւազում նրանց պտուղն յաւերժելով՝
Ո՛չ ձմռանը, ո՛չ էլ ամռան. միշտ փչում է զեփիւռը հով,
Անդուլ շնչում, կէսը եփում, կէսը հասցնում է հետզհետ,
Ծերանում է տանձ տանձից յետ և խնձորը՝ խնձորից յետ,
Խաղողից յետ խաղող դալիս, հետևում է թուզը թզին։
Հենց նոյն տեղն էլ այգի մի կայ բաղմապտուղ և գինեէտ,
Ողկոյզների կէսն արևկող՝ չորանում է արևի տակ,
Կայ որ այգեկութի համար, ոմն հնձանի մէջն են կոխում,
Ո՛ն էլ մատաղաշ, ատամ առնող, և հասնում են այլ տեսակներ՝
Մեծածաղիկ և դոյնդգոյն։ Կայրն կրկին և աղբիւրներ,
Մին ծաւալում պարտէզի մէջ, իսկ միւսը դաւթի տակով
Ջինջ հոսում էր մինչ ապարանք, որտեղից ջուր էին առնում։—
Այսպէս էին աստուածները սարքել տունը Ալքինոյի։

ՈԴԻՍԵԻՍ ԵՒ ԻՐ ԽՈՋԱՊԱՆ ԷՒՄԷՈՍԸ

Այնժամ Ոդիս թողեց ափերն ու շիտակըւեց դէպ առապար
Ու գնում էր թաւ անտառով՝ եղած դէպի լեռներ ու դար.
Ուր ասելովն Աթենասի՝ աստուածատիպն իր խոզարած
Ապրում էր ու հօտն էր հսկում Ոդիսևսին հաւատարիմ։
Գտաւ նրան բարձր արձակ իր դաւթի մէջ դուռն նստած.
Տունն էր անդորը ու գեղաշէն, որ չորս կողմից երևում էր։
Եւ դա շինեց խոզի համար, և արքան էլ այդ չը գիտէր.
Բան չը խնդրեց ո՛չ թագուհուց և ո՛չ էլ ծեր Լայերտոսից.
Ժայռեր կտրեց, ինքը կերտեց, հիւսեց մի ցանկ սուր փշերից,
Շուրջանակի դաւթում տնկեց կաղնիների խիտ-խիտ ցցեր.
Խշտի շինեց իրար կողքի, տասնևերկու խոզարներ,
Ամեն մէկում էգ յիսուն խոզ պառակ-պառակ էին հանգչում,
Իսկ դրսերը գեռնախշտի արու խոզերն հանգիստ ննջում.
Թւով սակաւ էին դրանք (որ հոմանիք ծախում էին),
Եւ խոզապանն ստիպւած էր ընտիրներից ղրկել նրանց։
Երեք հարիւր յիսուն գլուխ այդ խոզերից միայն ճնաց։
Գազանատիպ չորս գամփռներ երամակին հսկում էին,

Եւ շարքին էլ խոզաբուծը լաւ մնում էր մինչև ասանձին։
Գունեկ եղան մորթուց նաև տրեխներ էր ամառով շինում.
Երբեք հովիւ ժողովում էին խոզը ցրուած այստեղ ու անդ,
Իսկ շարբարդին մեծ խոզաբուծն մնալն էր ունել մի խոզ պարարտ,
Որ ասնի ապայ հանձնելին վայելելու թնջոյլներում։
Հենց որ տեսան Ոդիսևսին, շներն հաջով դէմը եկան,
Իսկ Ոդիսևս զգուշացած՝ ցուպը ձգեց գետնի վրան.
Եւ քիչ մնաց իր կալուածքում ողորմ վախճան պիտի գտնէր,
Բայց հովիւը վրայ հասաւ վայր ձգելով իր տրեխներ.
Կանչեց սաստով գամփռներին և դէս ու դէն խուսեց նրանց,
Քարեր նետեց նրանց վրայ, և իր տիրոջն այսպէս ասաց.—
«Քիչ էր ցաւս, ով ծերունի, այս շներն էլ մաղ մնաց որ
Ճաւ բարդէին ցաւիս վրայ, այստեղ և եթ բեղ յօշելով.
Ես հենց նստած լաց եմ լինում իմ տիրոջը ասուածատիպ,
Խորթ ու օտար մարդոց համար խոզերը այս պարարելով.
Իսկ նա թափառ օտար աշխարհ կարօտ է մի կտոր հացի,
Եւ ով գիտէ, կամ տակաւին և տեսնում է լոյսն արևի։
Բայց մտնենք ներս, ով ծերունի, կըմպես մի քիչ, կուտես դու հաց.
Եւ կը պատմես՝ որտեղից ես, ինչ բաներ են պլխովդ անցածդ։
Այս ասելով ընկաւ առաջ խոզաբուծը այն հիւրասէր,
Մտաւ ներքև, բերեց փռեց գետնի վրայ վափուկ ոստեր,
Ապա փռեց նրա վրան և մի մորթի վայրի այծի,
Եւ անկողին փռեց՝ բազմոց թանձր և՛ լայն և՛ հեշտալի։
Մնդաց Ոդիս այս վարմունքից, ապա ասաց հիւրընկալին.
«Ես կաղօթեմ Արամազդին և մեծ խմբին ասուածների,
Քեզ հիւր դրկեն ուր որ կուզես, երբ ինձ այսպէս ընդունեցիր»։
Պատասխանեց Եումէն այսպէս. «Հիւր, երբէք ինձ չի վայելի՝
Թէկուզ քեզնից վատն էլ հիւր դայ՝ իմ յարկի տակ անշուք լինի.
Քանզի բոլոր հիւր և աղքատ Արամազդից են գալիս մեզ,
Եւ հիւրոյթը թէկուզ չնչին՝ սիրելի է մեզ մեծապէս.
Բախտից լքած ծառաներիս միշտ էլ այսպէս վիճակն է հէգ,
Միշտ թաքթաքուն գործ են անում, երբ պատանի տէրեր ունենք.
Ասուածները, աւաղ, մեզնից կողոպտեցին տիրոջը մեր.
Նա սերա սիրով սիրում էր ինձ ու միշտ լիքն էր պահում իմ ձեռն։
Ինչպէս Զևսը, որ բարեխիղճ խնամում է իր ծառային,
Տալիս է տուն և կարասի, տալիս է և վարելի էլին,
Որի քիրտը Տիրոջ համար ինքն օրհնում է մեծն Զևս.
Ինչպէս և իմ քիրտն օրհնեց և ասա հովիւ կարդեց այսպէս,—
Անշուշտ իմ էլ այդպէս կըլնէր՝ թէ ծերանար նա այս տան մէջ,
Աւաղ, կորաւ. թող կուրանայ Հեղինէի զարմը էրնէկ,
Շատ քաջերի ծունկը ծալեց, և իմ տիրոջ, որը շրով
Ագամեմնոնի տանից գնաց՝ Տրոյի ռազմի լուրն առնելով»։
Ասաց, իսկոյն պնդեց գօտով իրա հագած կապան տակի,
Եկաւ ապա ու գնաց դուրս օթևանը երամակի.
Մորթեց երկու խոզաձագեր, խանձեց, յօշեց, ապա շամփրեց,

Լաւ խորովեց ու հենց տաք-տաք շամփուրներով առաջ բերեց,
Տուեց խորտիկն Ոդիսևսին, լաւ համեմեց ճերմակ ալրով,
Խառնեց ապա փայտէ տաշտում անուշ գինին իր բաժակով։
Նստեց հանդէպ. Ո՛վ հիւր, ասաց, կեր, ծառայիդ այս խորտիկից,
Քանի որ այս պարարտ խոզերն հոմանիներն են միշտ խժռում։
Ո՛հ, չը կայ գութ այդ որկորին, ոչ էլ երկիւղ աստուածներից.
Բայց դիրն արդար չարիքն ատում և բարին են մարդկանց սիրում.
Դեռ Հէներն էլ օտար երկրում Զևսի կամքով երբ կողոպտում
Ու նաւերը իրենց աւարն երբոր լցրած դառնում են տուն՝
Նրանք էլ դեռ երկիւղ ունեն իրենց գործի խիստ վրէժից։
Անշուշտ այդ գոռ սեղեխները մի լուր առան ինչ որ տեղից,
Լուրն իմ տիրոջ սև օրհասի, կամ թէ ինքը Զևսը յայտնեց,
Որ տարփում են նրա կնոջ և չեն գնում տներն իրենց,
Այլ որկրամոլ՝ նրա գոյքն են ծախում հանգիստ շռայլաբար
Եւ օրէնը մի կամ երկու մորթած խոզով բաւական չեն։
Բաժակներ են քամում անչափ, քանի տէրս բազմահամբաւ
Կարողութիւն և կայք ունէր, որչափ քսան դիւցազ չունեն՝
Ո՛չ ցամաքում, ոչ Իթակում, որի՞ թիւը ես քեզ ասեմ։
Տասնևերկու նախիր կայ անդ, նոյնչափ և թիւն է հօտերի,
Նոյնչափ խոզեր՝ արօտներում, նոյնչափ է և հօտն այծերի.
Արածում են սրանք ձեռքով վարձու և տան հովիւների։
Աստ տասնևմէկ փարախներ կան, ողջն այծերի համար միայն.
Կղզու ծայրից արօտներն են և կան մարդիկ քաջ պահապան.
Եւ նրանցից ամեն մինը ուղարկում է օրը մի այծ,—
Լաւ ընտիրներն իրենց հօտից՝ հոմաններին վայելելու։
Իսկ ես այստեղ վերակացու պահպանում եմ խոզերը այս
Ու մեր խոզի երամակից ընտիրներն եմ ղրկում նրանց։
Մինչ պատմում էր՝ Ոդիսն անուշ ուտում էր ու խմում լռիկ
Եւ նիւթում էր իր սրտի մէջ հոմանների ոխն ու չարիք։

ՊԵՆԵԼՈՊԷՆ ԵՒ ՀՈՄԱՆԻՆԵՐԸ

Դուստրն Զևսի, լուսակն Աթեն ազդեց այնպէս Պենելոպին,
Որ սա խաղ մի սարքէ մրցման՝ օղ ու ազեղ ու երկաթի.
Եւ սարքեց նա հոմաններին մահահրաւէր խաղ մի մրցման
Եւ օրհասի սկիզբ դրեց նրանց համար Ոդիսի տան։
Սանդուխն ելաւ բարձրաստիճան Պենելոպէն իր տաճն յարկի
Եւ գիրգ ձեռով վեր կալաւ նա ամուր դռան մեծ բռնակին։
Վարպետօրէն ու գեղեցիկ նա պղնձից էր ճարտարած,
Նաև զամակ ունէր սիրուն փղոսկրից վրան հագած։
Արդ գնաց իր նամիջոնները, առաջատար իրա մտաւ,
Ուր մթերած պահած կային Ոդիսևսի գանձերն անթաւ՝
Ոսկի, պղինձ բազմապատիկ, և՝ երկաթի ճարտար գործեր,

Եւ լայնալիճ մեծ ագեղներ և փքինով լի կապարճներ։
Արդ երբ հասաւ ներա առաջատն Պենելոպէն գեղեցկափառ,
Ելաւ կանգնեց կաղնու սեմին, որ կերտել էր հիւսնը ճարտար,
Ոգորկել էր և հաստատել ուղղակշիռ, ճշգրտագեղ
Ու գրել էր բարաւորներ, դրանդիներ նաև շրեղ։
Արդ մօտեցաւ Պենելոպէն, քանդեց լարը պինդ մանեակի,
Դրեց մէջը կուռ բանալին, հրեց նիգը մեծ փականքի.
Ու այն դուռն դրանդիներն այնպէս ճռինչ արձակեցին,
Կարծես դաշտում նախիրի մէջ ցուլերը զիլ բառաչեցին։
Ու երբ բացուեց դուռը հսկայ բանալիի թափը առած՝
Դժխոյն շքեղ ու հոյակապ՝ վերնայարկը ելաւ գնաց,
Ուր զգեստի դարաններում կային ծածուկ պինդ դարաններ,
Ու նրանց մէջ պահուած էին անուշաբոյր պատմուճաններ։
Մեկնեց ձեռը Պենելոպէն, պոկեց սեպից աղեղը մեծ
Ու պատեանը նաև նրա լուսաճաճանչ նա վերցրեց,
Նստեց այնտեղ, ծնկան դրաւ յիշատակներն այդ դիւրալի
Ու լաց եղաւ՝ մերկացնելով լայնալիճը իր արքայի։
Ու երբ յագուրդ առաւ դժխոյն իր կոծերից արտասուագին՝
Իջաւ դէպի հոմանները, որ երևայ նրանց աչքին։
Բռնած ունէր դժխոյն ձեռին աղեղը կուռ և լայնալիճ,
Հետը նրա և կապարճը՝ լի փքինով մահաթռիչ.
Յետևից էլ նաժիշտները տանում էին իրենց ուսին
Ոակառը լի երկաթ-պղինձ, մրցանքները մեծ Ոդիսի։
Արդ երբ հասաւ չքնաղ դժխոյն սրահը լայն հոմանների,
Կանգնեց այնպէս պահ մի շեմքին հրաշակերտ այն սրահի,
Քօղազարդուած էին տիկնոջ այտերը վառ մի շարոցքով,
Եւ կողքերին երկու նաժիշտ փայլում էին նրա շքով։
Զայն արձակեց Պենելոպէն. «Լսեցէք ինձ, հոմաններ,
Որ իմ տանը դուք ամեն օր ձեռնարկում էք դառնալու տէր,
Որ օրինիքուն ձեզ ուել էք ինչոյքներին մեծահանդէս,—
Լաւ լիացէք իմ յարկի տակ, քանզի չը կայ էլ Ոդիսևս։
Ձեր բռնութեան համար չը կայ այլ պատուակ մի գեղեցիկ,
Քան որ խլել մէկզմէկուց դուք ուզում էք իմ հարսանիք։
Ահա տեսէք, եկաւ հասաւ օրը մրցման ձեր բաղձալի.
Ես դնում եմ ձեզ մրցելու աղեղը մեծ Ոդիսևսի։
Ով որ ձեզնից հեշտ կը լարէ աղեղն ահա այս լայնալիճ
Եւ քաջաձիգ բաղկի ուժով դնէ փքին մահաթռիչ՝
Եւ շեշտելով կանցկացնէ տասնևերկու օղի միջից՝
Նրան փեսայ ինձ առնելով՝ ես կը մեկնեմ այս պալատից,
Իմ այս տանից, ուր հարս էի, այս մէկ տանից իմ հացալի,
Որ և քնած պիտի յիշեմ երազի մէջ կարօտալի»։
Ասաւ դժխոյն և նոյն ձայնով հրամայեց քաջ Եումէին,
Որ լայնալիճ նետն ու օղեր տանի և տայ հոմաններին։
Առաւ Եումէն, ուեց նրանց,—բայց լալիս էր արտասուալի,
Լաց էր լինում և Փեյիտոս, տեսնելով զէնքն իր արքայի։

Ապուշ կտրեց Պենելոպէն և վերստին դարձաւ նա յետ
Վերև ելաւ նաժիշտներով, իր Ոդիսին ողբաց թաքուն,
Մինչ Պալլասը իր աչքերին բաշխեց հանգիստ անուշ մի քուն։

ԵՒՄԷՈՍԻ ՀԱՒԱՏԱՐՄՈՒԹԻՒՆԸ

Ասաց, փռեց կրակի մօտ հիւրի համար անկողին
Եւ ոչխարի-այծի մորթում պառկեցրեց Ոդիսին.
Նաև ձգեց ծերի վրան իր վերարկուն հաստաքուրջ,
Այն որ նաև ինքն էր հագնում ձմրան բուքին դառնաշունչ։
Հանգիստ առաւ այսպէս Ոդիս, և նրա շուրջն հովիւներ,
Միայն ծերուկ Եւմէոսն էր, որ չը պառկեց քնելու.
Զգուշացաւ և շուտափոյթ վեր կալաւ նա իր ղէնքեր
Ու պատրաստուեց որ դաշտ գնայ՝ երամակը հսկելու։
Ուրախացաւ, երբ որ աչքով տեսաւ արդէն Ոդիսևս,
Ինչպէս իրան՝ բացակային հաւատարիմ է Եւմէս։
Կախեց սուրը խոզարածը իր ամրակուռ ուսերից,
Հագաւ և թաւ իր վերարկուն՝ մենակ պաշտպանն հողմերից։
Դրեց գլխին երկարամազ իր թաւաբուրդ այծենին,
Առաւ սլաքն իր սայրասուր՝ ահարկողը գողերին,—
Ու գնաց այնտեղ, ուր քնել էր իր խոզերի երամակ՝
Հիւսիսային Բօրեան քամուց պատսպարուած ժայռի տակ։

ԱՔԻԼԼԷՍ

Միգում կորաւ Իդա [1]) սարը,
Մոայլեցաւ Տրովադան,
Լուռ է ռազմի հարթավայրը,
Ընած բանակն Ատրիդեան։ [2])
Խաղաղ են շուրջ։ Առկայծում են
Խարոյկները բանակի,
Երկար ու ձիգ ձայնարկում են
Պահնորդները մէկմէկի։

Ծագեց պայծառ լուսնեղջիւրը
Ծովի վրայ Էգէյեան,
Բարձր ափերն ու աստղերը
Ծովի խորքում ցոլացան։
Դատարկ դաշտում երևում է
Մենակ կառքը Պրիամի.
Տանում է իր Հեկտորի դին
Գոռ բանակից յոյների։

Ահա կանգնեց ծովի ափին
Աքիլլէսը ահարկու.
—Ընկաւ, ծերուկ, քո Հեկտորը,
Հանգաւ լոյսը քո հոգու։

---

[1]) Իդա սարը գտնւում է Տրոյայի մօտ։ [2]) Ատրիդ՝ Ատրէի որդի՝ Ագամեմնոնը, յոյն բանակի պետը։

Անգրամարքն ու Հեկաբէն
Գարդանեակում անպարար
Մնում են մեռած... գարձիր բոցէն
Կիանդ ու մահ է նրանց համար։

Եւ սիրտերիս արշալուսին
Դը բուրէ թունակ հաշտարար,
Թագման երգով կը հեծեծեն
Ամեն մի տուն ու տաճար։
Հայր, մայր, այրի մաղթանքներով
Սափոր կածեն թանգ փոշին,
Ու գժոխքում ազօթքներով
Հանգիստ կտան հերոսին։

Թէ՞զ ալեոր, խոնարհեցիր
Գլուխդ իմ առաջին,
Եւ այս ձեռքը համբուրեցիր,
Որ լաց ուտա քո աչքին...
Որդուդ մասին էր քո ապերս.
Օ՜, մի տրտմիլ, ալեզարդ,
Մի բաղդ վճռեց երկինքը մեզ,—
Ինձ էլ ընկճեց Աբամաղդ։

Մօտ է ժամը. պատրաստած է
Նեռը անգութ օրհասի,
Եւ պարկուհին [1]) ընդհատել է
Արդէն օրերն իմ կեանքի։
Ճռնչում է գժոխքի դուռը,
Գուժում է ձայնն անուելի.
—Վերջացած է, հանգաւ ջահը
Պելիդէսի [2]) օրերի...

Ո՜հ, այս ափից ետ չի գալու
Եւ քու որդին անվնաս.
Շուտով, շուտով պիտի և դու,
Ով Պելէոս, որբանաս։
Կանցնի ռազմի արհաւիրքը,
Աքիլլէսիդ կը սպասես,
Կը գարգաբես արքունիքը—
Շուք ու փառքով ընդունես։

Մոխիր կանես դատարկ ծոցին
Ամենց սխուր ու տրտում,
Թէ չէն գալիս արդեօք նաւեր,
Առագաստ չի երևում...
Նաւեր կը գան Իլիոնից,
Ես չեմ լինի ոչ մէկում,
Ես չեմ գարթնի մահուան քնից,
Ու կը մնամ այս հոգում...

Իգուր վերջին տարդնապի մէջ
Դու քո որդուն կը խնդրես
Ու կարկամող բազուկներով
Երան կողքիդ կը փնտռես։
Սիրած երկրից ժամն անջատման
Չի քաղցրացնել նա այն օր,
Ու մինչ ամենն մոռացութեան
Չի տարածի ձայնը հօր։

Իմ հայրենիք, վճիտ ջրեր,
Զքնաղ վայրեր հարազատ,
Եւ ձիթենիք ու դափնիներ,
Հովիտներիդ շուք ու զարդ,
Ձոխ ծաղկեցէք ու փթթեցէք,
Ինչպէս առաջ, անմահն,
Ինչպէս առաջ—միշտ թնդացէք
Միայն ձայնով խնդութեան։

Բայց Աքիլլէս ու Պատրոկլէս
Էլ չէք տեսնի դուք բնաւ...
Սպերքի [3]) ջրեր, բազուկս ձեզ
Գլխիցս մաղ խոստացաւ,
Բայց գլուխս փոթորկալի
Պատերազմում ահագին
Պարտոկլէսին ես զոհեցի,—
Էլ չը սպասէք իմ տուրքին։

Պատրաստել է նեռը արդէն
Ապոլլոնը անողոք,
Սպասում է նոր եկուորին

---

[1]) Պարկուհի՝ հաչուողքի գիցուհի։ Պարկուհիների թիւը երեք էր, որոնցից մինչը մանում էր մարդային կեանքի թելը, միւսը՝ ձգում, երրորդը՝ կարում։ [2]) Պելիդ կամ Պելիդէս՝ Պելէյի որդի՝ Աքիլլէսը։ [3]) Սպերք՝ գետ Թէսալիայում։

Բարոնը սև Ատիքսի [1]) մօտ,
Եւ ափերից մոռացութեան,
Պատրոկլէսը գիշերով
Եկաւ ինձ մօտ թեթև՛, անձայն,
Որպէս երազ թոչելով։

Որպէս շունչը մեղմ զեփիւռի
Նա շշնջաց ինձ վրայ,
Նրա ձայնը ես լսեցի,
Վեր նայեցի ու տեսայ՝
Քնքոյշ դէմքին հետք արտօսրի
Եւ անջատման խորին ցաւ...
Ձեռքս իրեն տարածեցի...
Դատարկ մթնում չքացաւ...

Սկիւրոսից Նէոպտոլէմ
Դէպի հեռու կը լողայ,
Մի անծանօթ ափ կը տեսնի՝
Կանաչ բլրակն իր վրայ։
Նաւավարը այնժամ կասի՝
Դարձած կողմը բլրակի.
—Ահա շիրիմն Աքիլլէսի,
Այն էլ տեղն է բանակի...

—Այնտե՛ղ, պարսպից նա գիշերով
Երևում էր մեզ ահեղ,
Անտանելի հուրն աչքերում,
Սաղաւարտով ճաճանչեղ.
Եւ, եռակի որոտալով,
Ահ էր ազդում քաղաքին,
Ու Տրոյացին գունատ դէմքով
Ձէնքը ձգում էր գետին։

—Այնտե՛ղ ձեռքը Ատրիդէսին
Տալով դաշը հաստատեց...
Այնտե՛ղ կատաղով նա մոլեգին
Բաղքի վրայ յարձակուեց...
Այնտե՛ղ հոդում իր եռեից
Քարշ տուաւ դին Հեկտորի,
Յառեց աչքերն սպառնալից
Վրան լքած Տրոյի...

Ու իր նաւից Նէոպտոլէմ
Կիջնի ափը սրբազան,
Որ միայնակ բլրի վրայ
Դնի և՛ առաւ, և՛ վահան։
Շուրջը արդէն դատարկուել է...
Խաղող Սիմոյս ու Քսանտ [2]),
Բաղեղ ու փուշ պատատել են
Տրոյային քարուքանդ։

Կանցնես դաշտը պատերազմի,
Ուր Աքիլլէսն է կռուած,
Կտեսնես հօրանն երէնների
Շիրմաց շուրջը մոռացած.
Ու քեզանից վերև յանկարծ
Կը լսես ձայն թևերի...
Մենք կը լինենք,—թև-թև տուած
Ընկերներս հին օրերի...

Այնժամ յիշիր Աքիլլէսին.
Երկրից արագ նա անցաւ.
Բախտը նրան անփառունակ
Այստեղ մի դաշ խոստացաւ.
Բայց, մերժելով դատարկ կեանքը,
Փառքի բոպէն ընտրեց նա,
Ու ընկերի համար մեռաւ,
Հաւատարիմ մինչև մահ։

Լռեց Աքիլլ... Մութն է իջան,
Իլիոնը դեռ տխուր,
Ինած բանակը Ատրիդեան,
Պատերազմի դաշտը լուռ։
Ու ծխալով առկայծում են
Խարոյկները բանակի,
Երկաթ ու ձիգ ձայնարկում են
Պահնորդները մէկմէկի։

Թարգմ. Յով. Թումանեան

---

[1]) Բարոն՝ առասպելական ծերունի, մեռնողների սուերները Ատիքս գետով տարուելիս տարտարոս փոխադրողը։ [2]) Քսանտ ու Սիմոյս՝ գետեր Տրոյայի շրջանում։

ՖԻՐԴՈՒՍԻ

ԱԲՈՒԼ-ԳԱՍԻՄ-ՄԱՆՍՈՒՐ

940—1020 թ.

Պարսիկ պալատական միջավայրը երգող Ֆիրդուսին ծնել է Խորասանի Թուս քաղաքում։ Նա յատկապես ուսումնասիրել է արաբական լեզուն ու գրականությունը, հին պարսկերենը և պահլաւերենը։ Այդ ժամանակները արաբական լծից ազատած միապետական Պարսկաստանն սկսել էր հետաքրքրվել իր պատմական անցեալով. ուստի և Պարսկաստանի աթաբեգները (առանձնապես Ղազնևան հարստության Մահմադ շահը) գահը փառքով ու փայլով շրջապատելու համար իրենց շուրջն են հաւաքում գրական գործիչներին։ Այսպես Ֆիրդուսուն սկզբնական շրջանում հովանաւորում է Թուս քաղաքի կառավարիչ Աբու-Մանսուրը։

Ֆիրդուսին որոշում է շարունակել իրենից առաջ եղած մի քանի պարսիկ բանաստեղծների սկսած գործը. այսինքն՝ ժողովել, մշակել ու լրացնել պարսից պատմությունը համաձայն հին դիցաբանական վեպի։

Մահմադ շահը պատվիրում է Ֆիրդուսուն գրել պարսից վեպը, խոստանալով բանաստեղծին իւրաքանչիւր տողի համար վճարել մեկ ոսկի։ Մօտ երեսուն տարի Ֆիրդուսին աշխատում է այս գործի վրայ և գլուխ բերում գեղարվեստական բարձր արժեք ունեցող իր Շահ-Նամանը։ Շահն «աքանչանում էր», սակայն 30,000 ոսկու փոխարէն վճարում է 30,000 արծաթ։ Ֆիրդուսին շահի այս վարմունքից վիրաւորուած՝ նրա հացէին մի գրուածք է ուղղում և, վրէժխնդրությունից խուսափելու համար, փախչում Բաղդադ, որտեղ արաբական խալիֆան սիրով ընդունում է արդէն մեծ հռչակ ստացած բանաստեղծին։

Ըստ աւանդության՝ շահը իրը թէ վերջը զղջում է իր արածը, բերել է տալիս պանդխտության մէջ ծերացած, հիւծուած բանաստեղծին և ուղարկում իր պարտքը՝ 30,000 ոսկին. բայց ուշ էր արդէն, որովհետև երբ Թուս քաղաքի մի դռնով ներս է մտնում շահի պատգամաւորը՝ Ֆիրդուսուն յանձնելու ընծաները ու ինքնաձեռագիր նամակը, որով Մահմադ շահը «ներողություն էր խնդրում» իր գործած «սխալի» համար, քաղաքի միւս դռնով դուրս էին տանում բանաստեղծի դիակը։

ՇԱՀ-ՆԱՄԱ

Պարսից հին առասպելները, դիւցազնական վէպը ժողովելու և ամբողջացնելու միտքը ծագել է Ֆրդուսուց շատ առաջ։ Եւ որովհետև այդ վէպերի մէջ դեր խաղացողները միմիայն թագաւորներն ու ռազմիկ ազնուականներն էին, այդ պատճառով պատմական աւանդութիւնների ու առասպելների հաւաքման գործը առանձնապէս շահագրգռում էր շահնշահերին։ Իրենց նախորդների ռազմական գործերի ու յաղթանակների մէջ նրանք տեսնում էին սեփական գոյութեան և փառքի ամուր պատուանդանը։ Ուստի նման վէպերի հաւաքումն ու մշակումը կատարւում էր շահերի յատուկ հրամաններով։

Դեռ Սասանեանների ժամանակ գրի են առնում պարսից հին հերոսների գործերը և կազմում Խուդայի-Նամա պատմական ժողովածուն։ Դանիշվեր բանաստեղծը լրացնում ու մշակում է այս գործը։ Արաբների արշաւանքի ժամանակ այս գրուածքը թէև կորչում է, բայց առանձին հատուածներ մնում են, մինչև որ երկու նշանաւոր բանաստեղծ Աբու-Մանսուր Դաղիղ և Ունսարի (կոչւում է նաև բանաստեղծների թագաւոր) որոշում են անպայման լրացնել պարսից պատմութեան նիւթերի պակասը, և Ունսարին հաւաքում է դիւցազնական վէպի բոլոր մասերը ճանապարհի խմբագրութիւններով և վարիանտներով։

Այս բոլորից յետոյ պէտք էր գտնել մի հանճարեղ բանաստեղծ, որ ժողոված նիւթերը դասաւորելով մշակէր և կազմէր դիւցազնական ամբողջական վէպ, որի մէջ մտնէր պարսից պատմութիւնը՝ սկսած ամենահին ժամանակներից։ Այս պատասխանատու գործը եղաւ համբերութեամբ և յաջողութեամբ գլուխ է բերում Աբուլ-Գասիմ Ֆրդուսին, գրելով իր Շահ-Նաման*)։ Շահ-Նաման, Ֆրդուսու այդ նշանաւոր գործը համարժէք լինելով Հոմերոսին՝ հեղինակին անմահացրել է. գործ, որ ներկայացնում է պարսից հին առասպելների, դիւցազնական վէպերի բանաստեղծական մշակումը։ Ցաւոնի է, որ այս առասպելները ամենահին ժամանակներից սկսած յօրինուել ու պահուել են կալուածատէր ազնուականների պալատներում և, բերանէ բերան անցնելով, հասել Դաղիղին, Ունսարին և Ֆրդուսուն։

Շահ-Նաման ընդգրկում է պարսից թագաւորների և իշխանների

*) Շահ-Նամա նշանակում է թագաւորների գիրք. նամա՝ մեր նամակ բառից։

ամբողջ պատմութիւնը՝ ամենահին ժամանակներից մինչև Սասունցոց պետութեան անկումը և արաբական լուծը։

Բովանդակութեան կողմից գրուածքը կարելի է բաժանել երկու մասի. առաջինը՝ առասպելական դիցազնական շրջան, որտեղ գլխաւոր հերոսը Զալի որդի Ռոստամն է իր հերոսական կռիւներով Թուրանի դէմ և երկրորդը՝ կիսապատմական շրջան, որտեղ հանդէս են գալիս պատմական անձնաւորութիւններ։ Գեղարուեստօրէն լաւ մշակուած է գրուածքի առաջին մասը, որի համեմատութեամբ երկրորդը աւելի թոյլ է։

Լեզուի կողմից Ֆրդուսու գրուածքը մի հազուագիւտ երեւոյթ է այդ շրջանի համար։ Այն ժամանակ, երբ ֆարսերէնը ազատագրել ու այլանդակել էր արաբների ազդեցութեան տակ, Ֆրդուսին գրում է Շահ-Նամեն՝ մաքուր, անխառն դասական պարսկերէնով։

Շ Ա Հ - Ն Ա Մ Ա

Հատուածներ

ԱՐԵԳԱԿԻ ԹԱԳՈՒՄԸ

Երբ արեգը վեր բարձրացրեց իր վահանը ոսկեղէն՝
Գիշերը սև ձեռը գլխին պահեց նրա երկիւղէն.
Նա վար ձգեց իր շապիկը թուխ սեւագոյն բէշկ-մուշկի,
Եւ կապոյտ և դեղնայակինթ դարձաւ գոյնը աշխարհքի։
Արևն ապա իր կապուտակ սուտակագոյն խորանում
Նորից հագաւ դեղնաոսկի զառ դիպակն արբեշում.
Դուրս եկաւ նա և ցոյց տուեց երեսը իր լուսեղէն
Ու ծով-ցամաք լցրեց համակ իր սիրովը հրեղէն։
Երբ բարձրացաւ մինչև Խոյ-բուրգ՝ գլխին դրեց ոսկէ թագ,
Արևելքից մինչ արևմուտք ցնծաց երկինք և ցամաք.
Սար-ձոր լցրեց որոտների մի ահաւոր գոչումով
Եւ ջրաւէտ մարմանդները—կակաչներով, նարգիսով—
Լիքն ահաբեկ նարգիսներով, երկչոտ պուտ ու կակաչով,
Լիքը թագչող յակինթներով և զարդ ծաղկով պերճ նուռն։
Ջրով լցրեց սրտին ամպի, լցրեց աչքը ջրով ջինջ,
Թռաւ գոռաց լի բարկութեամբ՝ կուլ նետագ երգելով։
Երբ երկնքից ջուրն է յորդում. հուրն է թափւում դեռնի վրայ՝
Ջէնն աղմկոտ վեր է հանում քնած մարդուն ոտքի վրայ.
Տես, ասում է, աշխարհն ինչպէս կարծես դիպակ է դառել,

Ասես նրան չին նկարիչ Մանին է մեծ նկարել.
Երբ որ երկիրն արևի տակ այդպէս փայլում, շողշողում,
Եւ նա տեսնում է կակաչի թշերը վառ թաց շաղում
Ժպտում, ասում է. ով խայտակ ծաղիկ ծաւի աչքերով,
Ես քո սիրուցդ եմ լաց լինում, ոչ դայրոյթիցդ՝ լի ցաւով։

ՌՈՍՏԱՄԻ ԾՆՈՒՆԴԸ

Նա մի մանուկ էր ճիշտ նման առիւծի ձագ կորիւնին,
Հասակով թէ կերպարանքով աքանչացնում էր ամենքին.
Մազերն ամբողջ հրաշէկ-կարմիր և երեսը լիարիւն,
Երբ դուրս եկաւ՝ արևի պէս շողշողում էր, վառվռում։
Ձոյգ ձեռքերը արիւնով լի մանուկն եկաւ լոյս աշխարհ.
Այդպիսի հրաշք դեռ եղած չէր, բանի կենդանն ու մարդը կար։
Մանկան վրայ մարդ ու կենդանի աչք-բերանը մնաց բաց.
Ո՞վ էր տեսել հակայ մանուկ, երբ էր նման բան լսած։
Օր ու գիշեր մանկան մայրը չէր արթնանում խոր քնից
Եւ թմբիրն ու նիրհը կարծես հոգին պոկել էր մարմնից.
Երբ կարեցին ճեղքն ասեղով և դեղերով բուժեցին՝
Անցան նրա բոլոր ցաւերն ու դեղնութիւնն երեսից։
Ու սթափուելով իր խոր քնից՝ զարթնեց, բացաւ աչքերն իր
Եւ իր ասած խօսքն առաջին նա մօրն ուղղեց սիրալիր.
Իսկոյն վրան զարդ փռեցին ականակուռ ոսկեղէն
Եւ Աբարչին վառ ուեցին մօր ազատման փոխարէն։
Շտապ վազեցին, բերին տղան, մօրն աչքալոյս ուեցին
Եւ գովելով, բարձրացնելով՝ մինչև երկինք հանեցին։
Մի օրական էլ դեռ չը կար՝ կարծես լինէր տարեկան.
Մի կոյտ ճերմակ շուշան ծաղկի և կակաչի էր նման։
Ուրախացաւ, ցնծաց մայրը, գարձաւ նախկին թարմ նոճին,
Երբ մանկան մէջ քէյանակուն վառը ընկաւ իր աչքին։
Եւ հենց տեսաւ իր թանկագին հարազատին մերկացեալ՝
Ասեց. «Ռոստամ—ազատեցի»—և մօր ասած էդ խօսքից
Իր գաւակի անունն էլ Ռոստամ դրին այդ օրից։
Ուրախ եղաւ իր հայր Զալը, նոյնպէս և տատն իր Սինդուխտ
Եւ դեռ կային խակ չը ճաշակած՝ բերին մեռաքս դառ հաղուստ.
Թաւ-թաւ տամոյը խարտեաշ մազեր շուտով գլխին լցուեցին,
Հուր-արեգակ, լոյս-արուսեակ Ծայիդ նայեց երեսին։
Բազուկները գարձան երկու երկար ու դէր վիշապներ,
Եւ ձեռները առիւծի պէս հազան սուր-սուր ճիրաններ։
Շուտ զարդացաւ, երբ ժրութեամբ նիզակ ճօճել սովորեց
Եւ մէկով ասնձ ու միւս ձեռքով կոպալ շարժել վարժուեց՝
Նստեցրին նրան հրաղոյն բաշը ձգած նժոյգ ձին
Եւ շուրջն առան տան բազմաթիւ ծառաները ընդոծին։

ՄԱՆՈՒԿ ՌՈՍՏԱՄԸ

Ու Ռոստամին կաթն էր տալիս տասը դայեակ միասին,
Եւ հազիւ էր դեռ կշտանում այդ կորիւնը նորածին.
Երբ կտրեցին նրան կաթից և սկսեցին մեծի պէս
Սովորական կեր տալ նրան՝ նա բոլորին ապշեցրեց.
Օրն իբրև թէ չորս-հինգ մորթած կենդանի էր կլանում,
Այնքան մեծ էր ախորժակն իր ու դեռ չէր էլ կշտանում,
Մինչև որ բոյ-հասակ քաշեց և դարձաւ ութ տարեկան՝
Տեսնողն այնպէս էր իմանում, թէ նոճի է աննման։
Այնպէս դառաւ նա վերջապէս, որ շողշողաց աստղի պէս,
Եւ հիանում էր աշխարքը, տեսնելով նրա լոյս երես։
Կարծես թէ նա ուրքով-գլխով իր քաջակազմ պապն էր Սամ,
Բոյով, խելքով, տեսք ու մտքով և արտաքին իր ազնուական։
Տեղով հնար էր, ողջ հանճար և ինքնավարժ ուսուցիչ.
Ինքնագլուխ էր, չը կար մէկը ղեկավարող և ուղղիչ։
Ուրախութեան նոր աւետիք հասաւ կրկին քաջ Սամին.
«Դէստան-Զալի որդին, ասին, նման է յաղթ առիւծին.
Աշխարհքի մէջ այդ մանկան պէս առիւծասիրտ և հսկայ
Մարմնի տէր մանուկ ոչ որ դեռ չէր տեսած և չը կայ»։

ՌՈՍՏԱՄԻ ԱՌԱՋԻՆ ԿՌԻՒԸ ԹՈՒՐԱՆԻ ԴԷՄ ԵՒ ԻՐ ՅԱՂԹԱՆԱԿԸ

Միւս օրը միանգամից գօրքը շարժուեց իր տեղից,
Գոսը գոռաց, հնչեց փողը մեծն Շահի վրանից։
Հագաւ Ռոստամն զէնք ու զրահ, դարձաւ մի փիղ ահագին,
Հեծաւ բաշխ-ձին և փոթորկեց փոշու ամպեր դէպ երկին։
Իրանական գօրքը շարուեց, շտապ կազմեց իր ճակատ,
Ողջ գօտեպնդ, սպառազինուած կանգնեց ամուր ու հաստատ...
Եւ ճակատի առջև ծփաց Գաւեան դրօշը եռագոյն,
Ծածանելով կարմիր, գեղին, մանուշակի կապոյտ գոյն։
Շարժուեց տեղից դափը հանգիստ, երերում է սասանուում,
Նաւն է կարծես Զինի ծովում ալեկոծուում, տատանուում։
Մեծագէ դաշտ էին կազմել վահան, սուսեր կիպ-կապած,
Եւ սրերի փայլն էր փռում ճրագավառ բոց ու կայծ։
Հարիւր հազար զէնք ու զրահի ճրագալոյցը բոցավառ՝
Ճերմակափայլ լուսով պատեց երկիրն ամբողջ ծայրէծայր.
Եւ փղերի բղաւոցից, գօրքի գոռուն-գոչիւնից
Արևն ասես՝ ճամբէն կորցրեց, շեղուեց իր հին ուղիից։
Երկրորդ կողմում մի նոր ճակատ Աֆրասեաբն իր քաջերով
Կազմեց Ջրի արագութեամբ, լի բարկութեան կրակով։
Նա երկու քաջ մենամարտող գօրագլուխներ ունեանի՝
Էջնասին և Աւէսինին կարգեց գլուխ այդ գնդի։

Թունոտ սլաքով տիգաւորներ Շիմասաս և Կերսոսին
Աջ և ձախում նշանակեց, որ կուռ կերպ ասն բանակին։
Իսկ ճակատում եկաւ կանգնեց Շահ-սպարապետն Թուրանի՝
Իր մօտն առած հռչակաւոր թիկնապահներ մի քանի։
Եւ փոշու թուխ ամպը ահա վեր բարձրացաւ կպրաղոյն,
Ու երկնքում խաւարեցին թէ հրատ, թէ փայլածուն։
Երկու զօրքն էլ մէկէն, ասես, խօսք մէկ արած դուրս եկան.
Չէր տեսնւում ոչ սկիզբը, ոչ էլ վերջը բազմութեան։
Որոտաձայն գոչեց, գոռաց փողն էլ, գոռն էլ զոյգ զօրքի,
Երկրի օդն էլ թռաւ համբոյր հասցրեց օդին երկնքի.
Պողպատապայտ, ծանրասմբակ ձիերի խրոխտ դոփիւնից
Գետինն, ասես, շրջւող երկինք, շարժւել ուզեց իր տեղից։
Ասպեր էին թռչում, շողում նիզակների ծայրերից,
Այրող տապ և բորբոք թափւում սուր սայրերից թրերի։
Ախուծն անգամ չէր ապատւի էդ թրերից քաջերի,
Որոնց թափած տաք արիւնից հողն յագեցաւ ծարաւից։
Պարանն հոգի էր առանում իրեն նետող հակայից
Ու հոգին նոր ոգի առնում, կենդանանում հառնդից։
Երբ ռազմավար արագաշարժ Կարէնը քաջ այդ տեսաւ,
Գոռաց, ասես ժանիքաբաց առիւծ քաղցած ու ծարաւ.
Եկաւ կանգնեց ճակատների մէջտեղ իբրև մի առիւծ
Եւ մաւնչով իր դիւակաս նետերն հանեց խուրձախուրձ.
Զինեց ազեղն իր՝ ուրուրի ճանկ յիշեցնող սլաքներով
Եւ հունարն իր բազուկների կորովազօր ցոյց տալով՝
Կանչեց. «Ես իմ զօրքի պաշտպանն եմ՝ նման մի վահանի,
Ես եմ նոյնպէս և պահլաւան մարդկանցից մէկն Իրանի.
Ձեզանից մէկ ձիաւոր եմ ուզում կտրիճ, անւանի,
Որ գայ մրցենք՝ մեզանից ով յաղթանակը կը տանի»։
Բայց նրա դէմ հանդէս չեկաւ և ոչ մի քաջ կամ ուժով,
Որ գլխակոր անի նրան իր պահլեւան պայքարով։
Աֆրասեաբի սիրտն ու հոգին լցւեց վրէժի բարկութեամբ,
Արեան հոսանք զարկեց գլխին՝ գէնքը լարեց ժրութեամբ
Եւ սրընթաց քշեց իր ձին, քշեց դէպի թշնամին,
Ու փոթորկւած փոշուց կարծես հանգան արևն ու լուսին։
Մերթ նա դէպի աջ կողմ դիմեց ու մերթ դէպի ձախ դարձաւ,
Ոլոր-մոլոր պտըտւելով վրիժառու նա եղաւ.
Գերի վարեց մի քանի խումբ, իսկ Կարէնն էլ քաջ, անվախ,
Էդ խմբերից զարկեց, ջարդեց տասնեակներով մարդ խիզախ
Եւ միշտ յաղթող դուրս ելնելով իր կորովի բազուկով,
Իր սուր սրով, ծանր գուրզով և իր երկար նիզակով՝
Գետինն ամբողջ դերբուկ դարձրեց դիակներով էն տապաստ,
Եւ թուրք քաջերն էդ օրւանից դարձան իր մօտ մի գրաստ։

ՌՈՍՏԱՄ ԵՒ ՍՈՀՐԱԲ

Հատուածներ

ՌՈՍՏԱՄ ԵՒ ՍՈՀՐԱԲ ՎԷՊԻ ՆԱԽԵՐԳԱՆՔԸ

Էս աշխարհը կարծես լինի պանդխտութեան մի սրահ,
Մէկն ուրախ է ապրում այստեղ, միւսը կրում վիշտ ցմահ.
Շատ էդ տեսակ ձեռնախաղեր ունի կախարդն մեր աշխարհ,
Ամեն կարգի հրապոյր, հնարքներ և խաբուսիկ ներկ, նկար։
Ո՞չ պէտք է մենք լիութեան օրն անհոգ անցնենք աշխարհքից,
Ո՞չ էլ թշուառ կարիքի դէմ յուսահատուենք նրանից։
Լաւն էլ, վատն էլ անցնող է միշտ՝ վերջ կունենայ, կանցկենայ,
Ուրեմն, խոնարհ մարդն էլ ինչո՞ւ պէտք է տխրի, վշտանայ։
Էս խօսքերիս իբր օրինակ՝ քեզ էն զրոյցն անպաճոյճ,
Որին վերի պատմածներս եղան փաստ և ապացոյց։
Այժմ էլ կռիւն ես կը պատմեմ քաջ Սոհրաբի, ունկն դիր.
Մխաներ՝ արդէն քեզ պատմեցի, այս էլ կասեմ, լա՛ւ լսիր։
Մի զրոյց է այս խիստ սրտաշարժ. ով որ լսի՝ կարտաւի։
Եւ Ռոստամի վրայ սիրտը կը դայրանայ, կը յուզի։
Բայց ով կարայ նախատեսել Աստծու ձեռքով պատրաստած՝
Մի օր իրեն հասանելի նման դէպքը յեղակարծ։
Եթէ սաստիկ հոգմ բարձրանայ աշխարհքի մէկ անկիւնից՝
Նա կը պոկի, ցած կը ձգէ նարինջն անդամ խակ՝ ծառից։
Ողջ չեն մնայ էլ ոչ աղէս ու ոչ առիւծ գիշատիչ,
Ո՞չ մի մարդուկ թոյլ, վատասիրտ, կամ տգամարդ մի կարիճ։
Թէկուզ արդար անդամ լինի՝ մենք անիրաւ կը կոչենք,
Թէկուզ անոլէտք և անհանճար՝ հանճարի տէր կանուանենք։
Եթէ մահը դատ, այսինքն արդարութիւն է կոչուում,
Ինչու՞ նրան՝ ամ անարդար կամ անիրաւ են կոչում։
Թէ որ մահն է արդարութիւն և ոչ զրկանք անողոք՝
Ինչու՞ նրա դէմ ելնելով բարձրացնում են ձիչ, բողոք։
Քո հոգին չէ տեղնակ մահուան այդ գաղանիքին միշտ արդար՝
Դու չունես էդ վարագոյրի տակ մտնելու ճանապարհ։
Ամենքն էլ էդ ցանկութեամբ նրա դուռը գնացին,
Բայց չը բացուեց էդ գաղանիքի փակած դուռը ոչ մէկին։
Դուցէ գնալով արժանանաս դու ուրիշ լաւ տեղի,
Երբ որ կերթաս հանդիսատ ասնել օթևանում նոր կեանքի։

Թէ որ մէկի մահին մի օր մի քաջ և մեծ մարդ յաղթէր,
Նա աշխարհում ձեր թէ ծծկեր ողջ մի օրում կը ջնջէր։
Թէ հուր վառես ու մարդ այրի՝ էդ ինչ զարմանք այրելուն,
Կայրի դիպածն ոնց ճիւղն է նոր՝ հին արմատից ընձիւղում։
Եւ մահուան շունչն, ինչպէս հողմից կրակ ու բոց բորբոքւած՝
Չի վախենում ոչ կտրիճից ու ոչ ծերից զառամած։
Էս աշխարհում ջահէլների ինչին է պէտք երգ, նւագ,
Որ մահուան փող պիտի դառնայ իր ծերութեան ժամանակ.
Գնալու տեղն այն պեղը չէ, ուր երթալը ուշացի,
Երբ փորձանքի ձիու վրայ մահը մարդուն պիտ քաշի։
Արդարութիւնն է, լաւ գիտցիր, չը համարես զրկանք դա.
Հրամանն եկաւ. էլ բողոքի ոչ խօսք, ոչ էլ տեղիք կայ։
Խաղաղութիւն թէ ուզում ես օրհասն եկած վայրկեանում՝
Թէ մարդկութիւն, թէ ծերութիւն՝ դու մէկ հաշւիր քո կեանքում...

Այժմ էլ կռիւը Սոհրաբի թող ճշմարտութեամբ քեզ պատմեմ.
Էն քէնն ու ոխն, անգիտութեամբ, որ նա վարեց իր հօր դէմ։
Մի վէպ է սա խիստ ցաւալի, լի դառնաղի արցունքով,
Լի Ռոստամի զգայուն սրտի վառւող անզուսպ զայրոյթով։

ԹԷՀՄԻՆԷ ԳԵՂԵՑԿՈՒՀԻՆ

Եւ ահա մի ստրուկ աղջիկ՝ ճրագը ձեռին՝ ներս մտաւ
Եւ ուղղակի դէպ Ռոստամի բազմած բարձին մօտեցաւ։
Իսկ ետևից՝ քաղցր նազով մէկ կոյս լուանից էլ շքեղ,
Գոյնը՝ վարդի, տեսքն՝ արևի, բուրմունքն ասես վարդի եղ.
Ցօնքերը զոյգ՝ լարած աղեղ, վարսերն հիւսքեր հենց ասես,
Ու հասակը բարձր և ուղիղ՝ մատաղատունկ նոճու պէս.
Երկու կարմիր վարդ թշերը, երկու շուշան՝ կարմրաներկ,
Երկու շիմշատ կոներն ասես ամբրոսարեր դրախտից էր։
Լեղուն որպէս գազպէ-մանան, շրթունքն անուշ շաքրեղէն,
Բերանն ասես ընդելուզած մարգարտաշար գոհարէն։
Երկու զուգորդ գոհար գինդեր արևափայլ լուսեղէն՝
Շողշողում են ականջներին՝ օղակներով ոսկեղէն։
Մի ասող էր նա՝ պահւած երկնի մեծ ստրգիոն ակնի տակ,
Կարծես նրան ընկեր եկաւ աշնայինը արուսեակ։
Ակնքով խոհեմ, մարմնով մաքուր, հոգով էր նա հրեղէն,
Կարծես չունէր նա իրեն մէջ ոչ մի մասնիկ հողեղէն,
Նրա վրայ ասուծասիրտ Ռոստամն ինոց հիացած...

ՍՈՀՐԱԲԸ

Երբ ինն լուսին շահի դստեր գլխին ծնուեց, բոլորեց,
Լուսնի նման մի լուսափայլ տղայ աշխարհ նա բերեց։
Կարծես թէ դա Ռոստամն լինէր՝ իր հօրն այնքան էր նման,
Կամ թէ առիւծ Սամը լինէր, կամ հենց ինքը Նարիման։
Մեծանալով՝ քաղցը ժպտով նրա դէմքը օժտուեց,
Մայրն իր ուժեղ առոյգ, կայտառ որդուն Սոհրաբ անուանեց։

Երբ նա դարձաւ մէկ ամսական՝ կարծես լինէր տարեկան,
Կուրծքը նրա Ռոստամ-Զալի լանջին էր յար և նման։
Իսկ երբ դարձաւ տաս տարեկան՝ էլ այն երկրում մարդ չը կար,
Որ նրա դէմ կռիւ անելու փորձն անել կարենար.
Մարմնով փղի էր նմանում, դէմքը արեան ունէր գոյն,
Բազուկներից ամեն մէկը ասես լինէր կարծր սիւն։
Դուրս թռչելով հասնում էր նա առիւծների նախճիրին,
Իր խաղալիքն արել էր նա նրանց կռիւն ահագին.
Ապա արագ սլանալով՝ հասնում էր ձիանց ետևից
Եւ կանգնեցնում նրանց վաղքը՝ բռնած կարծր պոչերից։

Մի օր Սոհրաբն յուզած սրտով ուղղեց իր մօրն խօսքերն այս.
«Մի հարց ունեմ քեզ անելու, ինձ պատասխան պիտի տաս.
Տեսնում եմ ես, որ հասակով բարձր եմ քան իմ կաթնկերք,
Գլուխս էլ օրըստօրէ վեր բարձրանում դէպ երկինք։
Ես ո՞ւմ տոհմի սերունդից եմ, ո՞ր թանգագին գոհարից,
Ես ի՞նչ ասեմ, երբ իմ հօրը անունն հարցնեն ինձանից։
Եթէ ինձնից կը ծածկես դա, քեզ ասում եմ ես հիմա,
Որ քեզ համար էլ աշխարհումս ես կենդանի չեմ մնայ»։

Երբ այդ վճիռն երիտասարդ որդուց լսեց Թեհմինէն,
Երկիւղ կրեց հոչակաւոր պահլաւանի խօսքերէն։
Պատասխանեց մայրը նրան. «Ո՛վ իմ որդեակ, ինձ լսիր
Եւ ուրախ կաց, մի՛ խռովիր հոգիդ այդպէս, մի՛ յուզւիր.
Դու քաջարի և յաղթանդամ Ռոստամ-Զալի զաւակն ես,
Սամեան Դեստան-Զալ-Զերի և Նարիմանի զարմիցն ես։
Նրա՛ համար է քո դլուխը աճում, դնում դէպ երկինք,
Որ դու քաջանց հոչակաւոր ծանր ազգի մեծ տոհմիկ։
Տիեզերքի ստեղծագործման օրից մինչև այսօր էլ
Ռոստամի պէս մի ձիաւոր դեռ աշխարհը չէ տեսել.
Առիւծի սիրտ ունի նա մեծ, փղի մարմին մի հսկայ,
Նեղոս գետից դուրս կը բերի նա նահանգներ և ընդդայ»...

Պատասխանեց Սոհրաբն այսպէս. «Աշխարհումս մարդ չը կայ,
Որ այդպիսի մի խօսք ու գործ թագուն պահի իր մէջ նա։
Եւ ինչի՞ դու ցայժմ ինձանից թագցրել ես իմ ազգուսեռ,

Օրինաւոր ծնունդն իմ և իմ հօրը՝ ողջից վեր։
Վեհ պանծալի նախնեաց գործը պատմող կորով մեծերի՝
Բոլոր զրոյցն է այժմ միմիայն Ռոստամ-Զալը ամեհի։
Երբ ես այդպէս քաջամարտիկ զաւակն եմ պահլաւի,
Ինչու համար պէտք է այդպէս ինձնից ծածուկ դա պահւի։
Ես կը ժողովեմ հիմա ձեռիս տակ կուտելու ընդունակ
Բաջ թուրքերից և կը կազմեմ զօրքի թեթև մի բանակ,
Ու կը վարեմ ես ամենքին վրէժխնդիր դէպ Իրան,
Վեր կը հանեմ քինաւորութեան փոշին լուսնի բարձրութեան,
Վայր կը ձգեմ ես Քաւուսին իր շահութեան աթոռից,
Կտրեմ-ջնջեմ Թուսի ոտը և իր ցեղը Իրանից։
Ու Ռոստամին տամ Իրանի գահ ու գանձ, թագ, մատանին,
Ապա նրան բազմեցնեմ Քէյ Քաւուսի աթոռին։
Եւ Իրանից իմ զօրքերով նորէն Թուրան յետ դառնամ՝
Գամ շահին էլ ես դուրս բերեմ, դէմը կանգնեմ կռիւ տամ,
Էն Ա.Ֆրասեաբ շահին էլ ես վայր գլորեմ իր գահից,
Տէգիս ծայրը վեր բարձրանայ, դէնը անցնի արևից.
Ու քեզ անեմ ես Իրանի տիկնանց տիկին—թագուհի,
Առիւծների գործ կատարեմ կռիւներումն աշխարհի։
Երբ Ռոստամի պէս մարդ ինձ հայր ունեմ, ես էլ իր որդին,
Չի մնալ մի այլ անւանի ամբողջ երկրի երեսին.
Երբ շողշողում են լոյս դէմքով ջինջ լուսին, վառ արեգակ,
Ի՞նչպէս կարող է իր գլխին աստղը դնել թագ-պսակ»։

ՍՈՀՐԱԲԻ ՍԻՐԱՀԱՐՈՒԹԻՒՆԸ

Երբ արևն իր բոցը ոսկէ հանեց լեռան ետևից՝
Թուրանական զօրքը զինուած՝ գրոհի դիմեց իր տեղից։
Սպարապետ Սոհրաբը սէգ երկար նիզակն իր ձեռին՝
Հեծած ամուր և սրընթաց իր ամեհի նժոյգ ձին՝
Թռաւ դէպի բերդն ու գերուած զօրքերն հենց այդ առաւօտ,
Որ բոլորին էլ կապել տայ՝ ոչխարների որպէս հօտ։
Մէկ նա ձայնեց, կանչեց, սակայն բերդում ոչ-ոք չերևաց,
Յետոյ դարձաւ ահեղաձայն առիւծի պէս մռնչաց
Եւ մօտեցաւ բերդին՝ բացին նրա առաջ դուռն իսկոյն,
Բայց դիմադրող ոչ ոք չեղաւ, էլ մարդ չը կար նրանում։
Գնացել էին Գեժդեհեմի հետ ամենքն էլ գիշերով՝
Թէ բերդապահ ձիաւորները, թէ բերդապան այդ ճամբով։
Իսկ Սոհրաբն երբ բերդը հասաւ իր քաջարի բանակով
Ու չը գտաւ այդ բերդի մէջ Գեժդեհեմին իր զօրքով,
Ամենքն, ով որ դեռ կար բերդում՝ զինուորական, թէ ազատ՝
Առաջն եկան իր հրամանով՝ սոսկական, թէ պայազատ,
Իրենց կեանքի փրկութեան ճարն իրենց խելքով գտնելու։

Իսկ Սոհրաբն էլ Գուրդաֆրիդին էր տրոնում անդադար,
Զը գտնելով՝ խորը խայթեց իր ջերմ սիրտը սիրահար,
Եւ այնուհետ ասում էր միշտ սրտումն. «Ափսոս, շատ ափսոս,
Որ թուխպի մէջ կորաւ, մարեց իմ լուսնեակը՝ աչքիս լոյս.
Կարծես աչքիս զարմանալի մի զարկ դիպաւ, կուրացաւ,
Որ էնպիսի որսը չընաղ՝ իմ ձեռքիցը դուրս պրծաւ։
Էն ինչ սիրուն եղնիկ էր այդ, իմ ձեռն ընկաւ իր ոտով,
Իմ պարանի կապից պրծաւ, բայց ինձ կապեց իր կապով։
Փէրի՞ էր նա, ինչ էր արդեօք՝ աչքիս յանկարծ երևաց,
Խելքս առաւ գլխէս, տարաւ, սիրտս թողից բոբրոբուած։
Աներևոյթ եղաւ յանկարծ էն սրտակէզն աննման,
Սիրոյ կրակով դաղեց սիրտս, դարձայ նրա ստրուկ-ծառան։
Ինձ չը տուեց աչք թարթելու գոնէ ազատ մի վայրկեան,
Իր հրապոյրի սրով սիրտս խոցեց, հանեց գետ արեան։
Եւ մի կաթ ցող կաթեց սրտիս, կեանքս դառնացաւ էն շաղէն,
Ինձ կաշկանդեց, գերեց իր մէկ պատասխանով քաղցրեղէն։
Զը գիտեմ՝ էն վհուկ-կախարդն ինձ ինչ արեց ծածկաբար,
Որ յանկարծ ու մէկ անդամից կապեց խօսքիս ճանապարհ։
Էլ չեմ տեսնի ես էնպիսի սիրուն փէրի լուսեղէն,
Լեզուով անուշ, տեսքով չքնաղ, իսկ որ հուրի հրեղէն։
Ամեն անդամ երբ ես նրա խօսքն եմ յիշում մեղրանուշ՝
Աւելի թունդ սիրտս այրում, խորը ծակում ցաւիս փուշ։
Ինչքան թանդ ինձ նատեց նրա հեռանալը ինձանից,
Ի՞նչ ցաւ է մեծ, որ չը գիտեմ, ո՞վ էր նա և ո՞ր երկրից։
Ասում, այրում էր Սոհրաբը տխրութիւնից անդադար,
Եւ չէր ուզում, որ մէկն ու մէկ իր գաղտնի ցաւն իմանար։
Բայց չի մնայ սէրը ծածուկ, որ այլ մարդու չը հասնի,
Որ գաղտնիքը խորհրդաւոր ցաւի արցունք չը հանի.
Նա իր խորքից դուրս կը բերի հոգու ձէնն ու հառաչանք,
Թէկուզ լինեն սիրահարներն զգուշ մի դև խորամանկ։
Էնքան խորն էր չքնաղ աղջկայ սէրը խոցում էն խեղճին,
Որ չը մնաց էլ գոյն ու գիծ Սոհրաբի թարմ երեսին։

ՌՈՍՏԱՄԻ ԵՒ ՍՈՀՐԱԲԻ ՄԵՆԱՄԱՐՏԸ

Երբ Ռոստամը իր ջուր խմած տեղից նորից դաշտ գնաց,
Հոգս ու վշտով սիրտը լիքը, դէմքը գունատ ու դեղնած,—
Սոհրաբը սէգ քշում էր ձին, գալիս որպէս հարբած փիղ,
Կռնից կախած գալարուն թոկ, ձեռին բռնած իր աղեղ,
Վարազի պէս սուր ընթացքով, առիւծային մռնչով,
Եւ երկիրներ չափող, ամբողջ աշխարհ քանդող իր ձիով։
Տեսաւ Ռոստամն էն մարդու կերպն ու շատ նայից շւարուն։
Եւ չիմացաւ՝ հետը կռի՞, թէ անկռիւ դառնայ տուն։

Իսկ Սոհրաբը երբ որ հեռից կրկին տեսաւ Ռոստամին,
Սրտում փչեց եռանդայոյզ ջահէլութեան պինդ քամին,
Եւ մօտ եկաւ ու մի հայեացք ձգեց վրան լի ուշքով.
Ու նկատեց, որ նա նախկինն է իր փառքով և ուժով։
Ասաց նրան. «Ո՛վ առիւծի մագիլներից ազատուած,
Ինչպէս կրկին սիրտ արեցիր, առջևս եկար անկասկած.
Դու որ դէպի ճշմարտութիւն երեսը քո չես դարձնում,
Աւա՜, ինչո՞ւ այսօր նորից գալիս առջևս ես կանգնում.
Երկու անգամ կուի գործից ես քեզ տի ամանակ,
Ծերութեանդ խընայելով՝ բաց թողի իմ յաղթանակ»։
—Ո՛վ քաջ, ասաց Ռոստամն, էդպէս քաջերն երբէք չեն խօսում,
Ջահէլութիւնն է քեզ անշուշտ գիժ գետի պէս հոսեցնում։
Աչքովդ այժմ դու կը տեսնես, թէ քո ասած ծեր քաջից
Քեզ ինչ կը գայ. քեզ, որ անգամ ուժեղ ես դու առիւծից.
Վա՜յ է, թէ որ շարժի իր մեծ բարկութիւնը բախտը չար.
Նրա առաջ մոմ կը դառնայ ապառաժն իսկ որձաքար։
Այնուհետև երկրորդ անգամ ձիերը պինդ կապեցին,
Եւ չարակամ բախտը ձախող պտոյտ եկաւ գլխներին։
Գոտեմարտել սկսեցին՝ գլուխ-գլխի, ձեռք-ձեռքի,
Մէկզմէկու կաշէ գոտուց եկան ամուր բռնեցին։
Բայց այս անգամ սպարապետ և կորովի Սոհրաբին
Կարծես կապեց բարձրում շրջող ճախարակը երկնային,
Եւ այդ ժամից մինչև արևն երկար սուեր արձակեց,
Ամեն մէկը իր մէջ թագցրած հզօր ուժը ողջ թափեց,
Այնքան, որքան որ գրգռեց ձախորդ բախտը չարաբաստ,
Որ մի փափուկ մոմի նման դառաւ լեռը կուռ պողպատ։
Տխրեց Ռոստամ, բացեց, մեկնեց, ձգեց ճանկն իր կորովի,
Բռնեց ընձի նման կուռդ վիզն ու գլուխը Սոհրաբի.
Ու ոլորեց, կռացրեց մէջքը կարիճ պատանու,
Ճգնաժամի օրհասն հասաւ, ուժ չը թողեց տոկալու։
Եւ առիւծի պէս Ռոստամը գետին գարկեց Սոհրաբին,
Նստեց վրան, իմանալով, որ չի մնայ իր տակին,
Իսկոյն թեթև դաշոյնը սուր մէջքից առաւ, պլոկեց
Եւ քաջարի որդու կողը անդթօրէն պատառեց։
Շրջեց Սոհրաբն և իր ճնշած սրտից մի խոր ախ քաշեց.
Զար ու բարի բանի մասին մոռածելուց դադարեց։
Եւ Ռոստամին ասաց. «Ինձնից ինձի հասաւ այդ չարիք,
Ժամանակը յանձնեցի քեզ՝ կեանքիս դռան բանալիք.
Անմեղ ես դու, որ էդ կռած կուզ երկաթը սուր, հատու,
Դէպքն իմ կրծքին բարձրացրեց և տուեց վերջ մահացու.
Խաղ կը կապեն, ապա կերգեն իմ տարեկից ընկերներ,
Որ հող մտաւ մի էսպիսի պարանոցը բարձր ու վեր.
Մայրս նշան էր ինձ տուել՝ փնտռեմ, գտնեմ իմ հօրը,
Կեանքս զոհեց նրա սիրոյն՝ խաւարեց իմ խեղճ օրը.
Փնտռում էի առանց դադրում՝ աչքովս տեսնեմ իր երես,

Ու փափագիս կիսահամբին զոհ եմ գնում ես այսպէս։
Ափսոս կրած իմ վշտերին, ափսոս, այնքան զուր անցան,
Զէ՞ որ հօրս ես չը տեսայ, ամ, չը տեսայ և սակայն՝
Թէ ձուկ դառնաս, պաղ ջրերի ուզես լողալ խորքերում,
Կամ գիշերուայ պէս սևաթոյր և մութն ու խոր խաւարում,
Թէկուզ անգամ փորձես դառնալ մի սառ սառղիկ երկնքում,
Գետնից կտրեց սուրբ արևի սէրը, լոյսն ու ջերմութիւն,—
Մնդրէ պիտի իմ հայրն ես քեզնից իմ քէնն ամեն տեղ,
Եթէ տեսնի, որ իմ բարձս հողի մէկ կոյտ է այստեղ։
Այնքան, որքան ծարաւեցիր դու խմելու իմ արիւն,
Թաթախեցիր և յագեցրիր կեռ դաշոյնդ իմ արնում,—
Ժամանակը կը ծարաւի քո արիւնը խմելու,
Քո անդամի մաղն իսկ դաշոյն կը դառնայ քեզ խոցելու։
Այ, մէկն ու մէկն էն մեծանուն և սիգապերճ քաջերից՝
Բօթն ու նշանն իմ կը տանի Ռոստամի մօտն այստեղից.
Կասի՝ Սոհրաբն այստեղ սպանուեց և ընկած է դին թշուառ,
Նա, որ անվերջ յուզուած սրտով քեզ էր փնտռում, քեզ, ով հայրս։

Ռոստամն էս խօսքն երբ որ լսեց՝ գլուխը դարձաւ մռայլ լեռ.
Աշխարհքն աչքին խաւար կտրեց, սեցաւ ինչպէս մի գիշեր.
Նեղեց, արագ ուժահատեց, ուշքը կորցրեց, անզգայ
Վայր տապալուեց գետնին, ասես, շնչասպառուած կիսամահ։
Վերջ ի վերջոյ, երբ որ գլխին ուշքն հաւաքեց, սթափուեց,
Լաց ու կոծով, վայնասունով հէգ Սոհրաբին հարց տուեց.
«Կարճ ասա՛ ինձ, տեսնեմ դու ինչ նշան ունես Ռոստամից,
Ա՜խ, թող կարճի անունս անհետ էս աշխարհի երեսից,
Որովհետև Ռոստամը ես եմ,—անունս չիք թող դառնայ,
Սամի որդին թող ողբասաց նստեցնի գլխիս լայ։
Ասաց, զոռաց դառն ցաւից, փետեց գլխիցն իր մազեր,
Ու բորբացաւ կրակ սրտի, արիւնն եռաց տակնուվերը։
Երբ Ռոստամին Սոհրաբն այսպէս խոր տանջանքի մէջ տեսաւ՝
Ուժը քաշուեց, ուշքը թռաւ, մէկէն գետին նա ընկաւ։
«Ա՜խ, Ռոստամը մի՞թէ դու ես,—Սոհրաբն ասաց նուաղած.
Ինձ սպանեցիր քո վատ բարքի չար դրդումով վերահաս.
Քեզ ցոյց տուի ամեն ճամբայ, որ վերջապէս ինձ բացես,
Բայց քո սէրը մաղի չափով չը շարժուեց քարի պէս։
Այժմ դրահիս կապը լուծիր, բաց, տես ինչ կայ նրա տակ,
Նայիր նոյնպէս իմ մերկ մարմնին լուսապայծառ, սպիտակ։
Բազկիս վրայ ինքնանկար մերակը քո կը տեսնես,
Նայիր, տես ինչ տեսաւ հիմա հօրից աչքոնին իր դաւակ։
Երբ որ զօրքիս դափի ձայնը վեր բարձրացաւ իմ դռնից՝
Մայրս առջևս եկաւ իսկոյն՝ զոյգ այտերն արնալից.
Նրա հոգին իմ էս գալուն յոժար չեղաւ՝ խռոված
Նա մի մերակ կապեց իմ էս աջ բազուկին և ասաց.—
Ահա, Սոհրաբ. առ քեզ պահիր՝ յիշատակ է հօրդ սա,
Տես երբ, որտեղ և ինչ բանի քեզ հարկաւոր պէտք կը դայ.—

Այժմ էդ բանը պայքար դարձաւ, պայքարն իմ վատ վերջացաւ,
Որդին իր հօր աչքի առաջ թշւառացաւ, մահացաւ»։

ՌոստաՀն երբոր բացեց դրահը՝ մհրակն աչքով իր տեսաւ,
Որդու վրայի զգեստն ամբողջ պատռեց, կոծեց ու լացաւ.
Ողբաց, կանչեց... «Օ՜, իմ որդիս, հօրդ ձեռքով սպանուած,
Կարիճ, սրտոտ Սոհրաբ՝ բոլոր զօրքերի մէջ միշտ գովուած».
Ասում էր և արիւն-արցունք թափում, մազերն էր փետում,
Գլխին ցանում էր հող, մոխիր, արցունքով դէմքն ողողում,
«Աւելի վատ, ասաց Սոհրաբ, այդպէս դառը կոծել, լալ,
Պէտք չէ երեսն երկու աչքի աղի ջրով լուանալ.
Ո՞ւմն ինչ օգուտ այժմ էդպէս տանջանք տալուց քեզ այսքան.
Երևի, ինձ վիճակուած էր դառնակակիծ այս վախճանն»։

Պարսկերէնից թարգմանեց՝ Ս. Գիւլզադեան

ԱՆՀԱՅՏԱԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

ՎԻՐԳԻԼԻՈՍ

Հռովմէական արիստոկրատիայի նշանաւոր բանաստեղծ Վիրգիլիոսը ծնուել է Մանտուայի մօտ գտնուող Անդէս գիւղում Ք. ծ. 65 տարի առաջ։ Կրէմոնում և Միլանում ուսումնասիրում է յունական և լատինական գրականութիւնն ու ժամանակակից գիտութիւնը, սովորում բժշկութիւն։ Գալով Հռոմ՝ շփման մէջ է մտնում գեղարուեստը հովանաւորող Մեկենասի և պալատական շրջանների հետ ու դառնում նրանց երգիչը։ Իր գրուածքների մէջ ամենանշանաւորն է Էնէականը, որ անմահացրեց Վիրգիլիոսին։ Իր հերթին այդ պոէմով բանաստեղծն անմահացրել է Հռոմի կայսրներին, նրանց ծագումը աստուածային համարելով։ Ներքոգական տողերի համար պալատական միջավայրը առատ ոսկով վարձատրել է պոէտին։ Մեռել է 56 տարեկան հասակում։

ԷՆԷԱԿԱՆ

Վիրգիլիոսի Էնէականը բաժանուած է երկու մասի և բաղկացած տասներկու գրքից։ Առաջին մասում բանաստեղծը պատմում է Էնէասի արկածալից ճանապարհորդութիւնը Տրոյայի ափերից մինչև Լատիում, իսկ երկրորդում՝ նրա սխրագործութիւններն ու յաղթութիւնը լատինական երկրում։

Էնէականը գրելիս՝ Վիրգիլիոսը գտնուում էր յունական էպոսի

զորեղ ազդեցութեան տակ։ Եթէ այս պոէմը համեմատենք Ոդիսական-ի հետ՝ կը գտնենք բազմաթիւ նմանութիւններ թէ ըստ բովանդակութեան և թէ ըստ ձևի։ Ոդիսևսը Տրոյայից վերադառնում է հայրենիք և ենթարկւում նաւարեկութիւնների, արկածների, վտանգաւոր պատահարների։ Էնէասը փախչում է Տրոյայից և նոյնպէս ընկնում նման արկածների մէջ ու ենթարկւում նաւարեկութիւնների։ Ոդիսևսը հազիւ ազատուելով ծովի կատաղի ալիքներից՝ գալիս է Ալքինոյի պալատը և իր արկածալից վերադարձի պատմութիւնն անում։ Էնէասին ծովի կատաղի ալիքները ձգում են Կարթագէն, և այստեղ Դիդոնէի պալատում նա իր նոյնանման արկածներն ու Տրոյայի անկումն է պատմում։ Ոդիսևսը իջնում է դժոխք և այնտեղ խօսում Աքիլլէսի, իր մօր և այլոց ստուերների հետ։ Էնէասը նոյնպէս իջնում է դժոխք և խօսում իր հօր՝ Անքիզէսի ստուերի հետ։ Վերջապէս Լատիում գալով՝ Էնէասը կռիւ է բռնում Տուրնոսի հետ, յաղթում ու ինքը դառնում երկրի տէրը, ինչպէս Ոդիսը ջարդելով հոմանիներին ու ապստամբ իթակէցիներին՝ նորից իր ձեռքն է առնում երկրի ղեկը։ Էնէասի և Տուրնոսի միջև եղած կռիւն միջամտում են աստուածները, որոնք յունական աստուածների նման բաժանուում են երկու հակառակ բանակների. մէկն օգնում է տրոյացիներին, միւսը տեղացիներին։

Նմանութիւնների այս շարքն է եղել պատճառ և Հոմերոսի անմիջական զօրեղ ազդեցութիւնը, որ աւարտելուց յետոյ իր Էնէականը՝ Վիրգիլիոսը կամեցել է այրել, ոչնչացնել իր տասներկու տարուայ գործը։

Սակայն մի՞թէ լոկ ազդեցութեամբ դրուած գործը կարող է դիմանալ դարերի գրական դատաստանին։ Հարկաւ՝ ոչ։ Էնէականը Ոդիսականի խոր ազդեցութեան կնիքը կրելով հանդերձ, մի շարք հատուածների մէջ պարունակում է գեղարուեստական խօսքի գոհարներ, որով բանաստեղծը ցուցահանել է պատկերելու մեծ շնորհք, տալով հարազատ ու բուռն նկարագրութիւններ։ Բացի այդ, մեծ արժանիք պիտի համարել պոէմի պատմական հեռանկարը՝ հռոմէական պետութեան անցեալի և ապագայի նկատմամբ։

Առանձնապէս աչքի է ընկնում հոգեբանական տեսակէտից պոէմի չորրորդ գիրքը, ուր Դիդոնէի բուռն սիրոյ նկարագրութիւնն է անում բանաստեղծը։ Այստեղ միանգամայն ինքնուրոյն է Վիրգիլիոսը Դիդոնէի դժբաղդ սէրը նկարագրելու մէջ։ Որպէս նուրբ հոգեբան՝ նա թափանցում է հերոսուհու հոգեկան զօրեղ ապրումների աշխարհը և անդրադարձնում այն։ Կարթագէնի թագուհին, Դիդոնէն, ապրում է ծանր ողբերգութիւն։ Ծայրայեղ յուսահատութեան մատնուելով՝ անձնասպանութեամբ վերջ է տալիս իր կեանքին։ Խարոյկի ծուխն ու բոցերը հեռից տեսնում էին դանդաղ հեռացող նաւերից Էնէասն ու իր տրոյացիք։

Էնէականը հարուստ է նաև բնաբական գեղումներով. լեզուն իր ներդաշնակ ու կանոնաւոր կառուցուածքով հասել է կլասիկ մաքրութեան։ Պոէմի այս յատկութիւնները նպաստել են նրա հռչակմանը դարերի ընթացքում։ Էնէականը դեռ հեղինակի կենդանութեան օրով և ապա (նոյն իսկ միջին դարերում)՝ դարձել է դպրոցական անհրաժեշտ գրքերից մէկը և յետագայ բանաստեղծներից շատերի համար եղել ոգեորութեան աղբիւր։

Սուրիաբեան

Է Ն Է Ա Կ Ա Ն

Հատուածներ

Ա. ԳԻՐՔ

ԷՆԷԱՍԻ ԱՐՇԱՒԱՆՔԸ ԵՒ ՆԱՒԱԲԵԿՈՒԹԻՒՆԸ

Բանաստեղծը դիմումն է անում Մուսային, ապա սկսում Էնէասի արշաւանքի պատմութիւնը։ Երբ տրոյացիք Սիկիլիայից նաւեցին դէպ Իտալիա՝ Հերան, Զևսի կինը, որ թշնամի էր տրոյացիներին, աղերսեց քամիների աստուած Էոլոսին՝ փոթորկել ծովը և խորտակել Էնէասի նաւատորմը։

Ես որ երբեմն նրբաշէն եղէգնով
Գեղգեղեցի դայլայլները հովական
Եւ ելնելով անտառներից ստիպեցի,
Որ ենթարկուեն արտերն ագահ մշակին՝
Երկրագործին հաճելի երկ ստեղծելով,—
Այժմ էլ ահա ռազմական և ահաւոր
Զէնքն ու մարդն եմ երգում, որ նախ Տրոյայի
Սահմաններից փախաւ մինչև Իտալիա
Եւ ափերը Լաւինիայի տարագիր.
Ապա երկար ծփաց հողի, ծովի վրայ
Աստուածների ձեռքից և շար Հերայի
Քինախնդիր սև բարկութեան պատճառով.
Կուի դաշտումն էլ նա կրեց շատ վշտեր,
Մինչև ապա հիմքը դրեց մի քաղքի
Եւ Լատիոնում աստուածները զետեղեց,
Որից յետոյ նախահայրերն Ուալբեցի՝
Լատին ցեղն առաջացրին, և որտեղ
Շքեղ Հռոմի պատերը պերճ բարձրացան։
Ո՞վ Մուսա, դու ինձ պատճառներն յիշեցրու՝
Թէ ո՞ր աստծու զժգոհութեան երեսից
Իր հաւատքով այնքան յայտնի դիւցազունն
Արաւ տխուր արկածների խաղալիք.
Կամ դիցամայրն ինչու այնքան բարկացաւ
Եւ կամ միթէ կանչ երկնաբնակ սրտերում
Քէն ու ոխի այդքան խորունկ մի զգացում։

Մի հին քաղաք կար Կարքեդոն անունով,
Որ գաղթավայրն էր տիւրացոց, դէմ առ դէմ
Իտալիային և հեռու
Մեծափարթամ ու կուաշատ Տիբրոսի
Բերաններից, և որին իրը թէ Հերան
Ամեն երկրից շատ աւելի էր սիրում,
Նոյն իսկ Սամոսից։
Այնտեղ զէնքեր, այնտեղ իր կառքն ունէր նա.
Ու դիցուհին հոգս էր տանում ամեն կերպ,
Որ թէ բախտն իրեն ժպտար՝ դարձնէր այն
Մայր քաղաքը երկրի բոլոր ազգերի։
Բայց լսել էր, որ տրոյական ծագումով
Մէկը մի օր հիմքից պէտք է կործանէր
Տիւրական պերճ ամրոցները, և նրանից
Մի ազգ պէտք է առաջանար խրոխտ ու քաջ՝
Զորս հողմերին միահեծան գերիշխող,
Ու հիմն ի վեր պիտի քանդէր Լիբիան։
Այսպէս էին մանել իրենք պարկուհիք.
Կռոնոսի դուստր Հերան սրանից էր վախում
Ու մտքի մէջ դեռ բորբոքում էր էն հին
Պատերազմը, որ Տրոյայի դէմ մղեց
Յոգուտ ցեղին իր սիրելի Արգիական,
Ու դեռ մտքից չէին ելնում պատճառներ
Իր բարկութեան և իր կսկիծը կիզող։
Դեռ սիրտն այրում է Պարիսի դատաստանն—
Իր անարգուած գեղեցկութեան նախատինք
Եւ տրոյացոց ազգն ատելի և պատիւն
Յափշտակուած՝ Գանիմեդէս պատանու։
Եւ դիցուհին այս մտքերով բոցավառ՝
Անագորոյն Աքիլլէսի և յունաց
Զեռքից պրծած այն մի քանի տրոյացոց,
Որոնց ալիքն աջից ահեակ էր քշում,—
Հալածում էր Լատիոնից, և նրանք
Շատ տարիներ շրջում էին ծովէծով՝
Հալածական բարկութիւնից գոռ բախտի։
— Այսքան ծանր էր ծնունդը Հռոմ ազգութեան...

Զարկեց Էոլն իր գալարուն նիզակով
Անձաւաշատ լեռան կողքին. քամիներ
Էն ճեղքուածքից դուրս վազեցին գունդագունդ
Եւ երկրի վրայ փոթորկացին, մրրկացին։
Էւրոս, Նոտոս և հողմաշատ Աֆրիկեան
Միանգամից ծովի վրայ թափուեցին
Եւ յուզելով ջուրը տակից մինչիվեր՝
Ցաղթ ալիքներ գլորեցին դէպի ափ։
Պարանների ճարճատիւնին, ճրռինչին

Մարդկանց ճիչերն ու կանչերը խառնուեցին.
Ամպերն խսկոյն խլեցին լոյսն ու երկինք
Էնէասի և իր մարդկանց աչքերից.
Աղջամղջուտ դիշեր փուեց ծովի վրայ,
Զոյգ բևեռներն որոտացին, եթերի
Մէջ փայլակներ յաճախ շողալ սկսեցին,
Եւ ամեն ինչ մարդկանց աչքին այդ ժամին
Առաւ մահուան ահեղագոյն կերպարանք։

Էնէասեանք յոգնած, դադրած՝ ջանում են
Շուտով հասնել մօտ երևցող ծովեզրին
Եւ դառնում են դէպի ափերն Աֆրիկեան։
Խոր ու երկար մի խորշի մէջ մի տեղ կայ,
Ուր նաւերին հանգրուան է գոյացնում
Մի կղզի՝ իր հանդիպակաց ափերով.
Ամեն ալիք, որ բաց ծովից կարշաւէ,
Զարկրւում է սրանց և յետ խուսափում՝
Երկու ճեղքուած ոլորապտոյտ ծփանքով։
Կան երկու կողմն երկու սարեր լայնանիստ,
Եւ զոյգ ժայռեր են կոթողւում դէպ երկինք,
Որոնց փէշի տակ ջուրն հանդարտ է ու լուռ։
Վերն հովանոց կայ ճօճացող ծառերի
Եւ մութ անտառ, որի ստուերն այն ահաւոր
Նաւակայքի վրայ են կախուում վրանաձև։
Նրա հանդէպ մի քարայր կայ սեպացած
Ժայռերի մէջ և քաղցր ջուր ունի նա
Ու բազմոցներ որձաքարէ՝ օթևան
Եւ առանձնոցն յաւերժական հարսների։
Ոչ մի չեան իր նաւն այդտեղ չի կապի,
Ոչ էլ խարիսխն իր կեռ ճանկը կը մեկնի։
Աստ Էնէասն ամրացաւ իր եօթ նաւով,
Որ մնացել էին իր մեծ տորմիղից։
Ցամաքի մեծ կարօտով դուրս թափուեցին
Եւ կաթկաթող աղի ջրով թրջուած՝
Այնտեղ դիւրեկ աւազի վրայ փուեցին։
Ու նախ Աքատն, իր կայծքարից հուր հանեց,
Տերևների վրայ կրակը բորբոքեց
Եւ չոր նիւթեր նրա շուրջը դարսելով՝
Մեծացրեց բոցն ու կոճղեր բռնկեցրեց։
Յետոյ ջրից վնասուած ցորենն հանեցին
Նաւերից դուրս և Դեմետրեան անօթներ
Ու թէև խոնջ՝ գտած ցորենն բովեցին
Եւ քարի տակ սկսեցին մանրացնել։
Իսկ Էնէասն ելած մի ցից ժայռի գլուխ՝
Աչքը բանի որ կը կտրէր՝ դիտում էր

Ծովի վրայ շուրջանակի՝ թէ արդեօք
Հողմածածան Անթէոսին պիտ տեսնի՞
Որևէ տեղ և փոխուգական երկթիեր
Եւ կամ Կապիս, Կայեկոսին կամ զէնքեր՝
Իր նաւի ցից քթի վրայ երկարուն։
Նաւի ատերն իսկ չը կար. բայց թէ ծովափին
Երեք թափառ եղջերուներ է տեսնում
Եւ եռներն հօտերի ձիգ մի շարան,
Որ արածում էին հովտում խառներում։
Կանգնեց, աղեղն և սլաքներն առաւ սուր,
Որ մտերիմ իր Աքատէսն էր բերում.—
Գետին փռեց առաջնորդներն էն հօտի,
Որոնք իրենց գլխի վրայ բարձրաբերձ
Ոստախիտ և խառն եղջիւրներ ունէին։
Յետոյ եկաւ ռամիկ խուժանն հալածեց
Հովանաւոր խորքն անտառի նետերով
Ու կանգ չառաւ՝ մինչև գետին չը փռեց
Յաղթողի պէս եօթը թոյլ ու գիրուկ որս—
Զուգաթիւը իր ունեցած նաւերի։
Յետոյ եկաւ նաւահանգիստ ու բոլոր
Ընկերներին որսն հաւասար բաժանեց.
Ապա գինին, որ Ակէատէսն էր տուել
Քաջ ու ազնիւ—սափորներով լեփ-լեցուն,
Երբ Սիկուլեան մեկնում էին ափերից,—
Նոյնպէս բաժնեց...

ԷՆԷԱՍԸ ՓՈՐՁՈՒՄ Է ԴԻՏԵԼ ԱՆԾԱՆՕԹ ԱՓԵՐԸ

Բայց այդ գիշեր Էնէասը բարեպաշտ
Ինքն իր հետ շատ մտածումներ ունեցաւ.
Ու կենսատու լոյսն հազիւ էր ծագած,
Երբ որոշեց վայրն անծանօթ լրտեսել,
Տեսնել թէ ինչ ափ է քշել հողմն իրեն,
Եւ այնտեղ մարդ, թէ գազան է բնակւում,
Որովհետև երկիրն այն կոշտ էր, խոպան—
Ու բերել իր ընկերներին մի ճիշտ լուր։
Նաւատորմն իր տարաւ խորքն անտառի
Ու թաքցրեց լայնախոռոչ ժայռի տակ,
Որ պատած էր խիտ ծառ ու թանձր ատերով։
Եւ Աքատին միայն իր հետն առնելով՝
Ճամբայ ընկաւ, ճօճելով իր ձեռքի մէջ
Սրասլաք և լայներկաթ զոյգ նիզակ։

ԷՆԵԱՍԸ ԴԻԴՈՆԷԻ ԱՊԱՐԱՆՔՈՒՄ

Դիդոնէն), Կարքեթոնի թագուհին, իր ապարանքն է տանում Էնէասին.*

... Եւ շտապով իր ապարանքն է տանում
Էնէասին և հրամայում է նէրներ,
Զոհեր դրկել աստուածների տաճարին.
Էնէասի ընկերներին, իր հերթին,
Դէպի ծովափ քսան հատ եզն է դրկում,
Հարիւր մաղեղ խոզ, հարիւր գէր գառնուկներ
Մայրերի հետ և Բաքոսի ցնծութիւն
Ու պարգևներ։ Իսկ իր տան ներսն արքունի՝
Շքեղութեամբ են զարդարում փառահեղ
Ու լայն սրահի մէջը սեղան են բացում.
Որմերը ողջ վառվռում են ծիրանի՝
Զարդակուտակ ճարտարագործ զորգերով.
Սեղանի վրայ անթիւ արծաթ անօթներ,
Որ շողշողում են ոսկեզարդ վաղեմի
Ազգատոհմի սկզբից երկար, կուռ շարքով
Անթիւ դէպքեր՝ իր պապերի, հայրերի
Քաջութիւններն ու վեհ գործերը չքնաղ։

ՄԵՐՁԵՑՈՒՄ

Երբ որ դադար տուին նախկին հրաէրքին
Եւ սեղաններն հաւաքեցին, բերեցին
Մեծ բաժակներ և գինիով պատկեցին.
Ու բարձրացան ուրախութեան գոչիւններ,
Թնդացնելով յարկէ յարկ մեծ սրահներ.
Ոսկեզարդած ձեղուններից կախեցին
Վառ կանթեղներ, ու գիշերին յաղթեցին
Ջահերն իրենց պայծառալոյս շողիւնով։
Այն ժամանակ ուզեց Դիդէ թագուհին
Սկանակուս ծանր բաժակն իր ոսկէ,
Որով ինքը Էէն էր խմում սերնդով,
Լցրեց բաժակն այն փրփրալից գինիով։
Տունը լռեց խլոյն. Դիդէն ասաց.
«Ո՛վ Զևս, քանզի դու ես, ինչպէս պատմում են,
Հիւրամեծար օրէնքների հեղինակ,

---

*) Նոյն և Դիդէ։

Մեզ տիւրացոցս և տրոյացի հիւրերին
Այսօրն առ միշտ դու բարեբաստ դարձրու,
Եւ մեր թոռներն այսօրը թող միշտ յիշեն։
Ուրախութեան պարգևատու Դիոնիս
Եւ հաշտ Հերան լինեն մեզնից անբաժան,
Եւ դուք, շուտ, ճ տիւրացիներ, ծափ դարկէք,
Ու գովեցէք հանդիպումն այս համախումբ»։

ԴԻԴՈՆԷԻ ՍԷՐԸ

... Իսկ հէք Դիդէն չը նայած
տարժամելուն գիշերի,
Էնէասի հետն էր խօսում շարունակ
Եւ արբում էր անգիտակից մի սիրով.
Ստէպ հարցնում էր Պրիամից, Հեկտորից,
Ապա թէ ինչ զէնքերով էր զինուորված
Արշալոյսի զաւակն և կամ թէ ձիերն
Ի՞նչպէս էին Դիոմէդի կամ ի՞նչպէս
Մարդ էր ահեղ և անողոք Աքիլլէս.
Եւ ժանաւանդ, պատմիր, ասում էր, ով հիւր,
Բուն սկզբից դանայեցոց դարանները
Ու քո ազգի արկածները և նոյնպէս
Պատմիր ինձ քո դեգերումներն անձնական,
Որովհետև այս եօթներորդ ամառն է,
Որ դու անվերջ ծովափերից ծովափեր
Եւ ծովից ծով թափառում ես անկայան։

Դ. ԳԻՐԲ

ԴԻԴՈՆԷՆ ԻՐ ՍԻՐԱՀԱՐԻԱԾ ԼԻՆԵԼԸ ՅԱՅՏՆՈՒՄ Է ՔՐՈՋԸ՝ ԱՆՆԱՅԻՆ

Բայց թագուհին սիրոյ սլաքով խոցուած՝
Երակների մէջ մի խոր ցաւ էր կրում,
Եւ կոյր թախծից սիրտը մխում, սպառում.
Ստէպ-ստէպ մտքի առջև դիւցազնի
Տոհմի փառքն ու քաջութիւնն էր նկարում.
Դրոշմուել են իր հոգիի մէջն անջինջ
Դէմքն ու խօսքերն, և տագնապներն իր սրտին
Զեն թողնում, որ մի անուշ քուն վայելի։

Հետևեալ օրն արշալոյսը երբ կանուխ
Փերեան ջահով աշխարհին լոյս էր բերում,
Թաց ստուերներ էր ցանցնում երկնքից,
Իր սրտակից բրոջը Դիդէն խնդալով
Այսպէս ասաց. «Քոյր իմ Աննա, ինչ են այս
Ցաղնապներն իմ, ոչ քուն ունիմ, ոչ հանգիստ.
Ո՞վ է այս հիւրն, որ մեր տունը ուրբ գրաւ.
Ի՞նչ սիրուն դէմք, ինչ քաջութիւն, ինչ կորով.
Հաւատում եմ, և անսերկմիտ հաւատքով—
Որ զարմիցն է աստուածների նա անշուշտ։
Սինլբորին վատագի՝ վախն է մատնում.
Բայց սա ի՞նչ դառն գրկանքներ է կրել.
Ի՞նչ սոսկալի պատերազմներ է պատմում։
Թէ որոշած չը լինէի ես հաստատ՝
Ոչ ոքի հետ ամուսնութեամբ կապուելու,
Այն օրից, երբ մահն իմ հին սէրը պատրեց—
Թէ Հիմենէն ինձ չը լինէր ասելի
Առագաստումն և ջահովը իր վաղուց—
Գուցէ միայն սրան տեղի տայի ես։
Պէտք է քեզի խոստովանեմ, իմ Աննա,
Որ այն օրից, երբ վատաբախտ Սիքէոս
Իմ ամուսնուն սպանեց եղբայրս հարազատ
Եւ ժանտ ձեռքով արիւնոտեց կուռքն իմ տան,—
Սա է միայն, որ զգացմունքներն իմ շարժեց
Եւ անյողդողդ սիրտս յուզեց, բորբոքեց։
Սիրտս այրող բոցն ես լաւ եմ ճանաչում,
Բայց թող երկիրն ինձ իր վիհերը բանայ,
Ամենակալ հայրն ինձի թող շանթ՝հարէ,
Դժոխքի դժգոյն ստուերների մօտ գլորէ,
Սուզէ մթին խաւարի մէջ, քան թէ ես
Ոեզ ուխտադրուժ գտնուեմ, օ զգաստութիւն,
Եւ ոտնակոխ անեմ պարկեշտ օրէնքներ։
Ո՞վ առաջին անգամ կապեց ինձ իրեն՝
Նա իմ սէրը տարաւ իր հետ. թող տանի,
Թող իմ սէրը ննջէ նրա շիրմի մէջ»։
Ասաց ու ծոցն ողողեց յորդ արցունքով։
Նրան այսպէս պատասխանեց քոյրն Աննան.
— Ո՞վ քոյր, լոյսից առաւել ինձ սիրելի,
Մենակ ու լուռ մի՞թէ կուզես սպառել
Տրտում-տխուր քո տարիներն այդ ծաղիկ.
Ինչո՞ւ քաղցրիկ մայր անունը չը լսես,
Չը ճաշակես և պարգևներն Ատղիկի.
Դու կարծում ես թէ դա հոգս է դառնալու
Ստուերներին կամ թէ թաղուած ամիւնին։

ԴԻԴՈՆԷԻ ՆԱԽԱՊՈՒՄԸ

Աստուածների հրամանով Էնէասը պէտք է մեկնէր Իտալիա, ուստի մերժում է Դիդոնէի սէրը։

Մինչդեռ վախից շփոթ, շտապ Էնէաս,
Ուզում էր դեռ ուրիշ բառեր էլ ասել,
Խեղճ թագուհուն առնում, տանում են իսկոյն
Իր կճապարդ ննջարանը և այնտեղ
Մահճի վրայ պառկեցնում, որ հանդչի։

ԴԻԴՈՆԷԻ ՏԱՆՋԱՆՔԸ

Այժմ Դիդէն ընկճուած իր սուր ցաւերից
Եւ անձնատուր բարկութեանը՝ վճռում է
Մեռնել։ Ժամը որոշում է նախապէս,
Ու չար խորհուրդն իր մտքի մէջ ծածկելով
Ճակատն յոյսի ժպիտներով է պճնում։

ԴԻԴՈՆԷՆ ՄՏՈՐՈՒՄ Է ԻՆՔՆԱՍՊԱՆՈՒԹԵԱՄԲ ՎԵՐՋ ՏԱԼ ԻՐ ԿԵԱՆՔԻՆ

Բայց ներկւում է դէմքը մահուան գալկութեամբ,
Սակայն Աննան չէր կասկածում, թէ Դիդէն
Այդ նոր զոհի երևոյթով ծածկում էր
Իր մահն. անգամ իրա մտքով չէր անցնում,
Թէ նրա սիրտն այնքան մոլուցք ունենար,
Որ ինչ որ չէր համարձակւել անելու
Սիքէոսի մահուան օրով՝ այժմ անէր։
Ուստի տրուած հրամանն ի գործ է դնում.
Բայց երկնքի տակ ներքևը պալատի՝
Վայրի կաղնու և խէժառատ փայտերի՝
Երբ խարոյկն էր մեծաձաւալ բորբոքւել,
Տեղը դշխոյն դրասանդներով է պճնում
Եւ կախում է թաղման պատշաճ պատկներ.
Խարոյկի մօտ անկողնի վրայ է դնում
Էնէասի սուրն, զգեստներն ու պատկեր,
Լաւ գիտնալով իր անելիքն ապագայ.
Բագիններն են շարուած շուրջը խարոյկի,

Եւ քրմուհին գիսախուռ բարձրաձայն
Երեք հարիւր աստուածների է կանչում։

Ինքը Դիդէն իր բարեպաշտ ձեռքերով
Ալիւրն առած, բագիններին մօտենում,
Մի ոսքը բոկ, հագուստն արձակ, անդօտի,
Իր այդ վերջին ժամին վկայ է կանչում
Աստուածներին, պարն և բոյլերն աստղերի,
Դիտակից իր ճակատագրին և ապա
Թէ տարաբախտ սիրահարների համար
Կայ մի աստուած՝ հոգատար ու խնամածու՝
Նրանից վրէժ և արդարութիւն է հայցում։
Գիշեր էր։ Խոնջ վաստակաբեկ մարմիններ
Երկրի վրայ ննջում էին քաղցրաբուն.
Հանգչում էին մրրկոտ ծովեր, անտառներ,
Աստղերն իրենց ընթացքն էին մեղմացրել,
Դաշտերի վրայ խոր լռութիւն էր տիրում.
Հօտն ու նախիրն և փետրագեղ թռչուններ
Ու բնակիչներն հեռու ծփուն լճերի
Եւ մացառոտ ու փշալից դաշտերի՝
Ննջում էին լուռ գիշերի մէջ հանդարտ,
Մոռցած իրենց սրտի տագնապն ու հոգսեր։
Միայն դժբախտ Դիդէն դժգոյն յուսահատ,
Նրա աչքին քուն չէր գալիս անուշիկ.
Եւ չունէին գիշեր սիրտն ու աչքերը,
Սաստիկ էին տանջում ցաւերն սոսկալի,
Եւ ծոցի մէջ սէրը նորից արթնացած՝
Զայրոյթի բուռն յորձքով եռում, բորբոքւում.
Իսկ նա ծփուն մոլեգնութեան մրրկով՝
Զառանցում էր և ինքն իրեն շշնջում։

ԷՆԷԱՍԻ ՆԱՒԱՏՈՐՄԸ ՇԱՐԺՒՈՒՄ Է ԴԷՊԻ ԲԱՑ ԾՈՎԸ

Իսկ Էնէաս իր մեկնումն որոշած
Եւ պատրաստած պատշաճ օրին ամեն բան՝
Իր նաւի դիք կայմի վրայ քնած էր։
Եւ ահա իր երազի մէջն երևաց
Պատկերն իրեն նախածանօթ աստծու՝
Ամեն ինչով նման տեսքին Հերմէսի—
Դէմքով, ձայնով, գոյնով, խարտեաշ մազերով
Եւ ժրագեղ անդամներով շնորհաշուք—
Եւ նա կրկին իրեն այսպէս հրամայեց.

«Աստուածորդի, ինչպէս ես դու կարենում
Այսպիսի մի ժամին քնել, չե՞ս տեսնում,
Անմիտ, թէ ինչ փորձանքներ են քեզ սպասում
Ամեն կողմից. և չե՞ս լսում թէ ինչպէս
Կանչում է քեզ զեփիւռի շունչն աջողակ.
Այ, Դիդէն էլ իր մահն արդէն որոշած՝
Դաւ է նիւթում քո դէմ ու մի ժանտ ոճիր՝
Զայրոյթի վէտ-վէտ ծփանքով ալեկոծ։
Է՞ր չես փախչում տագնապալի հապճեպով՝
Քանի ուշ չէ նաւիս անփորձ անխռով։
Յետոյ պիտի տեսնես ինչպէս ծովն յուզած՝
Ծփալ սկսի հեծաններով հրացայտ
Հրդեհագործ ջահեր վառած, և ափը
Բոցերի բուռն յորձանքներից շողշողայ,
Եթէ մինչ լոյս այս կողմերում դու մնաս։
Արթնացիր, շո՛ւտ, դանդաղանքիդ արդ վերջ տուր,
Չի երերուն, յեղափոխուկ է կինը»։
Յանկարծահաս այս տեսիլքից ահաբեկ՝
Ասաց ու թուխ դիշերի մէջ սուզեցաւ։
Էնէասն իր գլխից քունը թօթափեց,
Եւ հրամայեց իր մարդկանցը. «Արթնացէք,
Ելէք շուտով և նաւերին նստեցէք
Ու պարզեցէք առագաստներն շտապով։
Ահա դրկւած բարձր երթերից մի աստուած՝
Կրկին մեզի յորդորում է շուտ փախչել,
Խզել, կտրել պարանները ոլորուն։
Օ՜ վեհափառ աստուած, ով էլ որ լինես՝
Հետևում ենք քեզ և ուրախ ու զարթ
Այսօր կրկին հնազանդում ենք հրամանիդ.
Օգնիր դու մեզ ու հաշտ աչքով մեզ նայիր—
Եւ երկնքում մեզի համար ծագեցրու
Գոհարափայլ աստղեր պայծառ ուղեկից։
Խօսքը բերնին էր դեռ՝ քաշեց պատանիից
Փայլակնացայտ սուրն և պարանը կտրեց.
Բոլորն էլ նոյն շանթ-եռանդով վառուեցին
Եւ թողնելով ափն շտապով նաւ մտան։
Նաւատորմիղն իր տակն առաւ ծովն հանդարտ,
Թիակների մրցումից ջուրն փրփրեց,
Նրանց առջև ճեղքուեց դաշտը կապոյտ։

ԴԻԴՈՆԷԻ ՀՈԳԵԿԱՆ ՏԱԳՆԱՊԸ

Եւ առաւօտն ահա ելաւ Տիրոնի
Քրքում հագած իր անկողնից, ափռելով
Երկրի վրայ նոր լոյս.—Դիդէն երբ տեսաւ
Դիտանոցի ծայրից լոյսի ճերմակիլն
Եւ տորմիզը, որ հողմուռոյց վազում էր,
Նաւահանգիստն ու ծովափը ողջ դատարկ
Նաւորդներից. ձեռքով երեք չորս անգամ
Ծեծեց կուրծքն իր գեղեցիկ և դեղձան
Խոպոպիկներն պոկոտելով իր գլխից՝
Կանչեց... օ հայր Զևէս, մի՞թէ պիտ երթայ
Օտարականն վատահոգի, որ եկաւ
Ինձ իմ երկրում խայտառակեց, անարգեց.
Եւ ժողովուրդն իմ չպէ՞տք է զէնք վերցնի,
Պիտ չը գնա՞յ արշաւն ամբողջ քաղաքով
Եւ ուրիշներն էլ նաւեր պիտ չը հանե՞ն։
Ուրեմն ելէք, թռէք, տարէք հուր և բոց,
Բացէք կտաւներն և թիերին ոյժ տուէք...
Ի՞նչ եմ խօսում, ցնորուե՞լ եմ ես՝ յիմարս.
Թշւառական Դիդէ, ո՞ւր ես դեռ սոսկում
Զարագործի էն յանցաւոր արարքից.
Ի՞նչպէս եղաւ, որ չիմացար, երբ տուիր
Գաւազանդ նրան, իբրև քո հիւրին։

ԻՆՔՆԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ

Սակայն Դիդէն իր մահաբոյր մտքերից
Խելակորոյս, մոլեգնոտած, կատաղած՝
Արնածարաւ իր աչքերն է թաւալում.
Բծաւորւել են այտերը իր դողդոջ,
Եւ մօտալուտ մահուան ահից գժգունած՝
Ներս է վազում իր սեփական պալատը
Եւ մոլեգին խարոյկից վեր է թռչում
Եւ պատեանից հանում է սուրն իր գաւազան,
Որ իրեն այլ նպատակով էր տուած։
Այնտեղ զգեստներն իլիական տեսնելով
Եւ անկողինն իր հին ծանօթ, նա մի պահ
Կանգ առնելով՝ արտասւելով մտածեց
Եւ ընկնելով անկողնի վրայ շշնջաց.
«Ո՞վ նշխարներ, որ քաղցր էք միշտ ինձ համար,
Առէք հոգիս, փրկէք ինձ իմ վշտերից.

Ողբերգի մա. ինձ վիճակված ընթացքը
Վատարկցի. այժմ էլ պատիվներն իմ սիրուն
Մանդաքսանոս պէտք է ինձնից...

Ապա նրանց իր անկողնի մէջ թաղած՝
Հարուածակից. «Ուրեմն անվրէժ պիտ մեռնենք.
— Այո, մեռնենք. քաղցր է այսպէս ինձ երթալ
Սուերների մօտ. թող արոյացին էն անգութ՝
Մովից տեսնի հուրն այն և հետը տանի
Դէպ հմայքներն իմ չարաղուժ մահացման։
Իր խօսքն հազիւ էր աւարտել, երբ տեսան
Նաժիշտները նրան ընկած արի վրայ.
Տեսան սուրը՝ ծածկած արեան փրփուրով
Եւ իր ձեռքերն արիւնաներկ. Աղբունիք
Անեղանայն վայնասունով է թնդում,
Ամբողջ քաղաքն է դղրդում այդ լուրից,
Ամեն. տնից բարձր ձայնով հնչում են՝
Ողբեր, կոծեր և կանչերը կանացի։
Օդն որոտում է սոսկալի ճիչերից,
Կարծես ամբողջ ու բովանդակ Կարթեգոն
Ու հին Տիւրոսն, ընկած ձեռքը թշնամու,
Հրդեհավառ կործանւում են հիմնիվեր,
Եւ յորձանքը մոլեգնոտած բոցերի,
Ատուածների և մարդկերանց տների՝
Յարկերն ի վեր է բարձրանում ճախրելով*)։

---

*) Բնագրից թարգմանեց Ա. Ղազիկեան, արևելահայ բարբառի վերածեց Աբշ. Մոնդկարեան։

ՇՈԹԱ ՌՈՒՍԹԱՎԵԼԻ

Վրաց հռչակաւոր բանաստեղծ Շոթա Ռուսթաւելին ծնուել է Ա-խալցխայի մօտ գտնուող Ռուսթաւի գիւղում տասներկուերորդ դարում։ Գրագիտութիւն սովորել է Տբիլիսի վանքում։ Ապա նրան տարել են Կա-խէթի Գրեմ քաղաքի արքունիքը, ուր նա մնացել է հինգ տարի։ Կա-տարելագործելու համար գնացել է Աթէնք։ Թամարի տարեկան հա-սակում վերադառնում է Վրաստան։ Մնթադրում են, որ Աթէնքում նա ուսումնասիրած պիտի լինէր աստուածաբանութիւն, փիլիսոփայութիւն, ապա պարսկական և արաբական լեզուները։

Ռուսթաւելին ապրել է Թամար թագուհու օրով, երբ Վրաստանը գտնուում էր համեմատաբար խաղաղ պայմաններում։ Վրաց պատմու-թեան մէջ ֆէոդալիզմի այդ շրջանը ամենն տեսակէտից համարւում է ոսկեդարեան։ Ռուսթաւելին եղել է Թամարի պալատական բանաս-տեղծը։ Իր «Ընձեռնաւոր» պոէմի մէջ պատկերացրել է ժամանակի վր-բացական ազնուական դասակարգի կենցաղը, երգել է թագուհու գեղեց-կութիւնն ու իմաստութիւնը, նրա պալատական գործիչների քաջու-թիւնն ու ձգտումները։ Չը կամենալով իր հերոսների անունները տալ, պոէմի գործողութիւնների վայրը փոխադրում է Արաբիա, փոխելով դրուածքի հերոսների անունները։

ԸՆՁԵՆԱՒՈՐԸ

Բովանդակութիւն

Արաբիայում ապրում էր Ռոստևան թագաւորը, որն ունէր Թինա-թին անունով մի գեղեցիկ աղջիկ։ Ծերութեան հասակում Ռոստևանը, չունենալով այլ ժառանգ, թագաւորական գահը յանձնում է Թինաթի-նին։ Թագաւորի մերձաւորները տխրում են, բայց ուրախ էր Ռոս-տևանի որդեգրած Աւթանդիլ զօրավարը, որ սիրում էր թագուհուն։ Իր թագը աղջկան յանձնելիս՝ թագաւորը հետևեալ պատգամը տուեց Թի-նաթինին. «Կառավարիր ժողովուրդդ ազնուութեամբ. կերուխումի յետևից մի ընկնի, դրանից օգուտ չկայ. ինչ ողորմութիւն որ տաս՝ իմացիր,

այդ տաճարն է միայն քանը. մնացածը կորած է. և ինչպէս արեւը միակերպ տաքացնում է թէ վարդին և թէ ագռին, դու էլ, ազգիկս, հաւասար դատիր և խղճայ մեծ ու փոքրին։ Թինաթինը շատ փող բաժանեց հպատակներին և նրանց համար ճոխ խնջոյք սարքեց։ Տխուր էր սակայն Ռոսանանը, որովհետև իրենից յետոյ երկիրը դուրկ էր մնալու կարող ու պաշտպան ձեռքից։ Բայց նրա տխրութիւնը փարատուեց, երբ Աւթանդիլը նեստաձգութեան և այլ զօրախաղերի մէջ ապացուցեց իր վարպետութիւնն ու ձիրքը։ Թագաւորն ուրախ էր, որ իր որդեկիրը բաջութեան և կռուի գործում յետ չը պիտի մնայ իրենից։

Որա ու նեստաձգութիւնից յետոյ Ռոսանանը և Աւթանդիլը հանդիպում են ջրի ափին նստած մի երիտասարդի, որ հագած էր ընձու մորթի և գլխին կրում նոյն մորթուց գլխարկ, իսկ ձեռքին՝ բազուկի հաստութեամբ մի մտրակ։ Նա գառնագին լալիս էր։ Ռոսանանի ուղարկած սպասաւորների հարցին չը պատասխանեց երիտասարդը։ Երկրորդ անգամ ուղարկուած զինեալ սպասաւորներին, որոնք բռնութեամբ պիտի տանէին նրան, ընձենաւորը կատաղի հարուածով սպանում է ու ոչնչացնում։

Ընձենաւորն անհետանում է խսկոյն, և դա չափազանց տխրեցնում է թագաւորին։ Նա վճռում է ամեն կողմ խնդրակներ ուղարկել, ընձենաւորին գտնելու, բայց իզուր։ Եւ միայն Աւթանդիլը, իր սիրուց մղուած ու կամենալով Թինաթինի սիրտը գրաւել, նրա դրդմամբ ճանապարհ է ընկնում գտնելու այդ խորհրդաւոր ընձենաւորին և իմանալու նրա պատմութեան գաղտնիքը։

Երկար թափառելուց յետոյ՝ վերջապէս Աւթանդիլը գտնում է ընձենաւորի հետքը։ Դա Տարիէլ անունով մի քաջ էր, Հնդկաստանի Սարիտոն թագաւորի որդին։ Ծերութեան պատճառով Սարիտոնը իր թագաւորութիւնը յանձնում է հզօր Փարսադան թագաւորին և ինքը դառնում նրա ամիր-սպասալարը, այսինքն ընդհանուր զօրավարը։ Աւթանդիլն ու Տարիէլն ընկերանում, մտերմանում են։

Փարսադանի ժառանգը նրա միակ դուստրը՝ անմման գեղեցկուհի Նեստան-Դարեջանն էր, որի մանկութեան ընկերն էր Տարիէլը։ Վերջինս մեծանալով՝ սառանձնում է իր հօր պաշտօնը, բայց նրանից անջատում են Նեստան-Դարեջանին ու առանձնացնում բարձր, անմատչելի աշտարակներից մէկում։ Սէրը սակայն վաղուց էր խոցել երկուսի սիրտը, բայց և այնպէս Փարսադան թագաւորը որոշել էր իր ազգիկը տալ Խաբազմատանի արքայազնին։ Տարիէլը, անկարող լինելով տանել այդ հարուածը, դաւադրութեամբ սպանում է իր ախոյեանին։ Զայրանում է թագաւորը, վճռում է մահապատիժ տալ Տարիէլին ու Նեստանի դայեակին, որը նպաստել է սիրահարների տեսակցութեանը։

Վրէժխնդիր դայեակը մի նաւակով ստրուկների միջոցով Նեստանին փախցնել է տալիս մի անծանօթ աշխարհ, իսկ ինքն անձնասպան լինում։ Սիրուհու կորուստը շանթահար է անում Տարիէլին, որ ընկնում է աշխարհէ աշխարհ՝ գտնելու իր կորցրած թանկագին գանձը։

Նա ապրում է մի քարայրում բեկված սրտով և անվերջ թափառելով, փնտռում սիրուհուն։

Աբթանդիլը վերադառնալով՝ թինաթինին պատմում է ընձեռնաւորի մասին, բայց իրաւունք է ստանում իր թագուհի հարսնացուից ետ դառնալ Տարիէլի մօտ, որ օգնէ ընկերոջը՝ թանգ կորուստը գտնելու համար։

Երկար թափառումներից յետոյ Աբթանդիլը գտնում է Նեստան-Դարեջանի հետքը։ Զքնաղ գեղեցկուհուն տարել էին Քաջասատան, որ ամուսնացնեն քաջերից մէկի հետ։ Հմայած նրա անմման գեղեցկութեամբ՝ նրան տեղաւորել էին բարձրաբերձ ամրոցում, ուր թշուառ աղջիկը տոչորւում էր կարօտակէզ Տարիէլի սիրով և վճռել էր կենդանի անձնատուր չը լինել ոչ ոքի։

Աբթանդիլը կազմակերպում է մի հսկայական արշաւանք անպարտելի համարուած հսկաների դէմ։ Նա անմիջապէս բերում է անապատ եռանդով լցուած Տարիէլին, ուրի է հանում նրա բարեկամ Փրխոսն թագաւորին իր զօրքերով ու հաբիկութեամբ մօտենալով Քաջասատանի դռներին՝ միահամուռ ոյժերով յանկարծակի գրոհ են տալիս, խորտակում դռները, ներխուժում բերդը, ոչնչացնում թշնամիներին և ազատում գերութիւնից սքանչելի գեղեցկուհուն՝ Նեստան-Դարեջանին։

Վերադառնում են ամենքն անբաւ գանձերով. Տարիէլն ամուսնանում է Նեստանի հետ, Աբթանդիլը՝ թինաթինին։ Տարիէլը դառնում է Հնդկաստանի թագաւոր, Աբթանդիլը՝ Արարիայի։ Ապրում են սիրով ու խաղաղութեամբ և կառավարում իրենց երկրները, «անձնիրութիւնը, ընկերասիրութիւնն ու ողորմածութիւնը գարձնելով իրենց գլխաւոր առաքինութիւնը»։

Ռուսթաւելու «Ընձեռնաւորը» էպիկական պոէմ է ու գեղարուեստական բարձրարժէք մի երկ։ Եւ որովհետև Ռուսթաւելին պալատական պաշտօնեայ էր ու բանաստեղծ, այդ պատճառով էլ նրա հոգեբանութիւնն ու աշխարհայեացքը արիստոկրատական է, հետևաբար և պատկերացրել է վրացական բարձր դասակարգի կենցաղը, ազնուական հերոսների գործերն ու ձգտումները, երգելով գործերի գրականը, լռելով բացասականի մասին։ Սիրահարուած լինելով թամար թագուհու վրայ՝ երգել է նրա գեղեցկութիւնն ու խմաստութիւնը։

Սուրխանեան

ԸՆՁԵՆԱՒՈՐԸ

Շոթա Ռուսթաւելիի

ՌՈՍՏԵՒԱՆ ԵՒ ԹԻՆԱԹԻՆ

Արաբիայի թագաւորն էր Ռոսաւանը խիստ բախտաւոր,
Արդարադատ, խոնարհ, բացսիրտ և չափից դուրս էլ փառաւոր։
Ճորտերն ասես՝ անթիւ էին, զօրքն էլ՝ ինչ խօսք՝ հաշիւ չունէր.
Ամեն շիտակ մարդու գանգատ համբերատար նա լսում էր.
Գովւած էր իր վարուղութեամբ, ողորմած էր՝ ամենքին հէր,
Մեծ ու փոքր ճնշւածներին հոգով-սրտով նա օգնում էր.
Թշնամու դէմ ռազմերի մէջ անօրինակ կռիւ մղում,
Ու երբ պէտք էր սիրտ տալ զօրքին՝ ճարտար լեզուով էր նա խօսում։
Տղայ չունէր Ռոստեւանը, դուստրն էր միակ իր յոյսն ու ճար,
Շողք էր կաթում նրա դէմքից, արևի պէս շափաղ կուտար։
Ով մէկ անգամ մտիկ անէր լուսաթաթախ նրա դէմքին,
Կը թռցնէր խելքը գլխից, կը տոչորուէր սիրտն ու հոգին։
Թինաթին էր անուն նրա, թէ չիմանաք՝ ամօթ է ձեզ,
Գամաց-կամաց մեծանալով՝ բոյ էր քաշում չինարի պէս։
Թէ արևը յիշեցնենք՝ այդ սիգաճեմ ճամբորդն երկնի,
Թինաթինին հանդիպելիս՝ քիչ կը մնար անհետ կորչի։
Ռոստեւանը հրաման տուաւ՝ գալ ու բաղմել վեզիրներին.
Ծանր ու հանդարտ մեծ մարդու տեսք պատշաճում էր նրա դէմքին։
Երբ հրամայեց իր մօտ էապէս նստել երկրի խելօքներին,
Թագաւորը խօսք բաց արաւ, բաղմականներն ականջ դրին։

ՌՈՍՏԵՒԱՆԸ ԻՐ ՄԵԾԱՄԵԾՆԵՐԻՆ

Տարիքս արդէն անց են կացել, խոր ծերութեամբ յաղթւած եմ ես,
Ծերութիւնն էլ ծանր ցաւ է, դէ ինչ ասեմ, յայտնի է ձեզ։
Էսօր թէ վաղ, միևնոյն է, մահն իմ կեանքը պիտի գողնայ,
Ով անմահ է էս աշխարհքում, թող նա գնայ ու պարծենայ։
Այժմ և եթ եկէք կարգենք իմ աղջկան մեզ թագուհի,
Էնտեղ ուր նա երևում է, արևն այլևս հարկաւոր չի։

ԹԻՆԱԹԻՆԸ ԹԱԳՈՒՀԻ

Եկան բոլոր արաբները, զօրքն էլ եկաւ՝ զէնքը սարքին,
Գեղեցկադէմ Աւթանդիլը՝ գլուխն անցած ամբողջ զօրքին։
Պալատական վերահսկիչ՝ հաւատարիմ Սոկրատ ծառան՝
Մի էն տեսակ գահ պատրաստեց, որ աշխարհքը մնաց հաւան։
Իր աղջկան մէջտեղ բերաւ Ռոստեւանը՝ ժպիտ դէմքին,
Նստեցրեց ու իր ձեռով դրաւ թագը նրա գլխին։
Արքայական գաւազանը հէրն աղջկայ ձեռքն էր տալի,
Ճոխ ծիրանին նազուք ուսին՝ ամեն կողմից սաղ էր գալի։
Թագաւորն ու իր զօրքն ամբողջ յետ քաշելով գլուխ տուին
Եւ օրհնութեամբ գահի վրայ բազմեցնելով՝ պատիւ արին։
Թմբուկներն ու ծընծղանները քաղցրահնչիւն ձէն են տալի,
Բայց Թինաթինն արտասուում է, թուխ մազերը շաղ են գալի։
Իրեն արժան չի համարում, որ հայրական գահին նստէ,
Աչքից թափուող արցունքն առատ մի վարդանոց հեշտ կը ցողէ։
— Լաց մի լինի, ինչ որ ասեմ՝ ականջ կախիր ալևորիս,
Էս օրանից արաբների դու թագուհին պիտի լինիս։
Արաբիայի տէրութիւնը նրա համար քեզ տուի ես,
Որ հեզ, խոնարհ և իմաստուն քո աշխարհքը փառաւորես։
Վարդն ու հողը միօրինակ՝ լոյս արևով են ողողուած,
Դու էլ էդպէս՝ մեծին, փոքրին պիտի նայես միշտ ողորմած։
Լաւ իմացիր, ինչ որ կը տաս՝ էն է մենակ, որ դու ունես,
Ինչ որ չես տայ՝ էն է կորած, ինչքան էլ որ պինդ պահպանես։

ՌՈՍՏԵՒԱՆԻ ՈՐԴԵԳԻՐ ԱՒԹԱՆԴԻԼԸ

Աւթանդիլը թագ կապելու երբ լուրն առաւ Թինաթինի,
Սիրտը բացուեց, ինդութիւնից չէր իմանում, թէ ինչ անի։
«Լաւ է գնում գործս էս անգամ»,— Աւթանդիլը մրտմրտում էր.—
Նա թագուհի դարձաւ թէ չէ՝ կունենամ ես հանդիպումներ.
Եւ գուցէ թէ այս կերպով էլ դարման գտնեմ հալ ու մաշիս.
Էլ ինչ կուզեմ էս աշխարհից, երբ կարենամ տեսնել վարդիս։

ՌՈՍՏԵՒԱՆԻ ԵՒ ԱՒԹԱՆԴԻԼԻ ՄՐՑՈՒԹԻՒՆԸ

Արշալոյսը նոր էր ծագում՝ յետ քաշելով քողը մթան,
Թագաւորի դրան առջև բուսաւ ինչպէս բացուած շուշան։
Փայլում էր դէմքն յակինթի պէս, շուշան՝ հագած վառ ծիրանի.

Ոտքից գլուխ սպառազէն, ու ոսկեկար չալման գլխի։
Աջբիրանջում էր իր նժոյգը և փորփրում ոտքով գետին,
Միտն էր ձգում Ռոստևանի, թէ հասել է ժամը վերջին։
Թագաւորը հեծաւ իր ձին, ետ մնացին շէն ու գեղեր,
Շուրջը փռուած գաշտն աչք ածեց՝ պարփակելով որսի տեղեր...
Բարձրանում էր ծխի նման՝ ոտքի փոշին ձիաների,
Խաւարեցնում թուխ ամպի պէս՝ փայլն ու շողքը արեգակի։
Որսորդները ծայրէ ի ծայր տափն անցկացան ողջ չափէչափ,
Մրբրկաբշաւ նժոյգներին կալաւ, բռնեց քրտինքն ու քափ։
Աչքը բռնած գազաններին կոտորեցին ու ջարդեցին,
Մինչև նրանց բոսոր արնից հագուստները թաթախուեցին,
Մինչև նրանց յորդ արիւնից կարմիր ներկուեց դաշտը բոլոր,
Ու գայրացաւ նրանց վրայ իր բարձունքից Հայրն Երկնաւոր։
Տափն անցկացան՝ ջուր էր հոսում, ջրի էն կողմ՝ ժայռ ահագին,
Ողջ գազաններն ընկան անտառ, ուր չափ ընկնել չէր կարող ձին։
Փողը հնչեց. արնոտ որսին դադար տուին, ձեռ վեր կալան,
Ռոստևանն ու Աւթանդիլը ձիաներից յոգնած իջան։
Նստոտեցին ծառերի տակ, ուրախ-զուարթ կատակ արին,
Կատակ արին ու պատմեցին՝ ոնց անց կացաւ չարն ու բարին։
Մի-ծաղկով, հանաքներով, ինչպէս ընկեր մի հասակի՝
Ասում էին մէկմէկու՝ մին սա, մին նա. «Ես յաղթեցի»։
Եկան որսի վկայ մարդիկ։—Անվերապահ՝ ճիշտն ասացէք,—
Դարձաւ նրանց արքան էսպէս,—ոչ մէկիս կողմ դուք չը պահէք։
Մարդկանցից մինն առաջ գալով՝ արքա,—ասաւ,—ձեռը կրծքին,—
Հշմարտութիւն ստի փոխել ինչ կարող է ոտքիդ փոշին։
Ամեն մի բան չի պատմի, ձեզ պէս մարդկանց հեշտ չէ դատել...
Բայց դրա հետ նետ ձգելում՝ դու չես կարող համեմատուել։
Էլ ինչ ճար կայ, թէ որ գիտնանք՝ մեզ ամենքիս մաս-մաս կանես,
Մի մազի չափ մեր խօսքերը չեն օգնելու, պէտք չեն գայ քեզ։
Աւթանդիլդ ցցում էր նետն իր նշանի ուղիղ թեքին.
Ոչ թէ որսը, դեռ էլ խակի չէր դիմանայ նրա զարկին։
Երկուսդ մէկտեղ քան հարիւր գազաններ էք գետին փռել.
Իսկ քանով Աւթանդիլդ սպանել է քեզնից աւել։
Ինչքան որ դու նետ ձգեցիր՝ Աստուած քեզ տայ էնքան տարի,
Բայց թէ գետնից շատ ենք վերցրել փոշոտներից քո նետերի։
Էս գործն, ինչպէս մի խաղ նարդու, Ռոստևանին դուր էր գալի,
Սիրում էր նա քաջութիւնը իր մեծցրրած Աւթանդիլի։
Էն զովաշունչ ծառերի տակ էսպէս նրանք խօսում էին,
Ցաղթ-կորովի զինուորները խումբ-խումբ կանգնած նրանց չորս դին։

ԸՆՁԵՆԱՒՈՐԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՌՈՍՏԵՒԱՆԻՆ

Մի անճանաչ մարդու տեսան՝ ջրի ափին նստած լալիս.
Էս աժդահան թեք էր ընկել՝ առուծի պէս լուռ հանգչելիս։
Սանձից ունէր բռնած սև ձի, նախշուն սանձից լոկ ոսկեկար,
Թամբն ու պախուրց, սանձն ու կրծկալ՝ մարգարտայեռ ողջ շաբուէշար։
Լաց էր լինում հեծկլտալէն, ծով էր յորդում աչքը նրա,
Արտասուքը ցող էր դրել նոր բաց էլած վարդի վրայ։
Ուսն էր ձգել վերարկուի տեղ՝ գեղեցկատես ընձու մորթին,
Նոյն մորթուց էլ գդակ ունէր էն արմաղան ազամորդին։
Ոսկեկոթ էր իր մտրակը՝ հաստ ու նման մարդու բազկին,
Տեսան թէ չէ՝ էլ մօտիկից նրան տեսնել փափագեցին։
Խնդրակն էդտեղ անճանաչին թագաւորի կամքը յայտնեց,
Անճանաչն էլ մէկէն փրղձկաց, նոր եկողին ականջ չարեց։
Գլուխը քաշ արտասուելով՝ գետնի վրայ գուբ էր արել,
Դառն արցունքը խլել էր ողջ լոյսն աչքերի, սրբել տարել։
Մօտեցաւ էդ մարդը նորեկ, նա մնջի պէս մնաց անխօս,
Ջրբյորդաններն էն գիշերայ լալիս էին անձրևահոս։
Տէր, խնդրակիդ ինչ որ ասիր՝ իզուր անցաւ, լսել չուզեց.
Մինչև վերջն էլ նա լուռ մնաց, թէև սիրտը ահ չը պատեց։
Յետոյ մի ոտքն առաջ դրաւ, ազդարարեց. «Շուտ հասէ՛հաս՝
Իմ տիրոջից հրաման ունիմ՝ պէտք է հիմա նրա մօտ գնաս»։
Բայց նա մնաց խուլ ու համր, անչափ լալուց ցնորուել էր.
Հագուստ նրա, հողն ու մարմինն արտասուքից թրջուել էր։
Ջրի այն կողմ վրաններից՝ ականջ խայթող ձիչ է հասնում,
Բայց էն ափին մարդ կա՞յ, թէ ոչ՝ խեղճը կարծես չի էլ լսում։
Ա՜խ է քաշում մըղկըտալէն, սիրտը տրոփում՝ կրակով վառ,
Փըլքըլում է ինչպէս գրից՝ արտասուքը արիւնախառ։
Ուշքն ու միտքը անճանաչի՝ էլ չեն թողնում երկինք ու ծով,
Որ չը թռչեն կամ չը սուզուեն, ինչ է՝ սրտին զարնէ մէկ հով։
Բայց որպէսզի՝ կիսակատար չմնայ պատուէրն Ռոստեանի,
Խնդրակն էլի դիմեց նրան՝ իմանալու կամք լացողի։
Դուք ողջ մնաք. անճանաչն իր լաց ու ողբին վերջ չը տուաւ,
Կոկոն վարդն իր շրթունքների մախմուր ծալքը չը բաց արաւ.
Երբ որ խնդրակն անհետացաւ ու անխռով բռնեց ճամփէն,
«Տեսայ, ասաւ Ռոստեանին, - նա չի ուզում ոչինչ քեզմէն։
Ինչպէս շողքը արեգակի զարնէ մարդու, անէ ցնդած,
Էնպէս էլ ես նրա շողքից կորուցի խելքս, դարձայ գժուած։
Զաջողուեց ինձ ոչ մի բանով՝ հասկացնել կամքդ նրան.
Ա՜յ թէ ինչու կորցրի ես երկար ժամեր այնտեղ էսքան»։
Զարմանք կալաւ թագաւորին, զայրացաւ նա, հետն էլ յուզուեց,
Մարդ կասէր թէ՝ ջուխտ աչքերից ցայտում էին կրակ ու պէծ։
Իր մօտ կանգնած զինուորներից ձայն արձակեց տասներկուսին.
«Վեր առէք շուտ ղէնք ու զրահ, էստեղ բերէք անճանաչին»։
Զինուորները վայրկենապէս եկան հասան անծանօթին,

Նրանց գինքի շաչ ու շառաչն ազդարարեց կուի մասին։
Արցունքի ծով ծփանքի մէջ թէպէտ նա դեռ լող էր տալի,
Բայց երբ բանը հասաւ էգտեղ, իսկոյն և եթ կանգնեց ոտքի։
Պառկած տեղ այս ու այն կողմ սև աչքերը՝ ինչպէս գիշեր,
Երբ գօրք տեսաւ իր մօտ գալիս, ալ գոյն հապան նրա թշեր։
—Վա՛յ ինձ,—գոչեց. էլ ուրիշ ձէն նրա բերանից չը լսուեցաւ,
Աչքերիցը քամեց ձեռով տաք-տաք արցունքն ինչպէս սէլաւ։
Թուրն ու կապարձն ամրացրեց, պատրաստուեցաւ շտապ կարգով,
Հեծաւ իր ձին, գլուխը շրջեց, մէկ ուրիշ կողմ արշաւելով։
Էն կողմն, ուսկից գօրքն էր գալիս, աչք չածեց նա, մտիկ չարաւ.
Տիրոջ սրտին էս անգամ էլ դեղ ու դարման չը ճարուեցաւ։
Մինչև գալը գինուորների՝ մեր անձանաչն անհոգ մնաց,
Բաւինչ արաւ ամեն մէկին, ով որ իր դէմ կուի գնաց։
Հէյ գինուորներ, եթէ ուզէք էդ քաջ մարդուն բռնել գերի,
Եռեզմ թշուառներ, դրա ճանկից Աստուած անգամ ձեզ չի թափի։
Զարկին զարկուան, կոտորուեցին, նրանց փրկութեան չեղաւ հնար,
Թշնամին էլ այս որ տեսնէր, ցաւած սրտով կը մեղքանար։
Ում վրայ որ մտրակ շարժեց՝ մինչև կուրծքը թէ կէս անի,
Հազար վա՛յ է, ում որ դիպաւ, մահը նրան պիտի տանի։
Թագաւորը խիստ վրդովուեց, ինքն իրենից դուրս եկաւ նա,
Ո՞նց թէ կորցնի էնքան հոգի ու մէկ մարդուց յաղթուած մնայ։
Էն մի մարդը...ինչպէս տեսաւ դառաստանը էնքան հոգու...
Ափսո՛ս, ափսո՛ս. ով կան, չը կան, ողջն էլ կերթան գիրկը մահու։
Իրար վրայ շրպրտեց նա՝ մեծ թէ փոքր հանդիպողին,
Ռոստեանը՝ բեկուած սրտով՝ շատ վայ տուաւ իրա գլխին։
Յետոյ արդէն ինքն Աւթանդիլ հեծաւ իր ձին, եռեն ընկաւ,
Բայց թէ նրա նազ ու տուգին ոա էլ իսկի արդելք չեղաւ։
Գետնին փռուած շողն արևու հետքից ասես վազ էր տալի,
Տափն էր դոփում մեղմ նազանքով իր տակի ձին ճիշտ էս հանգի։
Երբ տեսաւ մեր անձանաչը, որ արքան էլ ձին չափ գցեց,
Իսկոյն և եթ իր մտրակով ձիու կողքին մի դաղ քաշեց։
Թալիսմ ունէր. յանկարծակի նրանց աչքից անյայտացաւ,
Էլ չերևաց—Թուաւ երկինք, թէ գն նրան չանթեց տարաւ։
Էլ չը մնաց քունջ ու պուճախ, որ չը փընտռեն հետքն ապարդիւն.
Երբ չը գտան, խիստ զարմացած՝ վերնին ծուռ յետ դարձան տուն։
Արևն ապիր մեռածների գործն ու գինուոր շատ սգացին.
Ով ինչ կարաց՝ դարման արաւ խեղճ մայրերի բերածներին։
Իր ննջարան մտաւ արքան՝ վիշտն ու թախիծ հակտին գրոշմած,
Անց կենալիս՝ մեղմ էր, հանդարտ—գոյգ ձեռները կրծքին խաչած։
Նրա ետքից մտաւ մենակ Աւթանդիլը առանձնակի.
Առանց սրտի՝ նա կեանք չունէր, ինչպէս նաւը՝ առանց դեկի։
Հոր մօտն եկաւ թինաթինը իր բայլածքով՝ պատշաճ կոյսին,
Դէմքը ասես քաշած պատկեր՝ նմանում էր լման լուսնին։
—«Որդի,—ասաց Ռոստեանը,—ինչքան էլ որ վիշտ ունենամ,
Երբ տեսնեմ քեզ ուրախ-զարթ, էլ հոգս ու ցաւ մնց կունենամ,

Մէջդ ունես մի այնպէս հով, որ իմ սրտին անդորր տաւ,
Ինչպէս պաղ ջուր տապ օրերին զովացնում է մարդուս ծարաւ։
Թէ իմանաս էն պատճառը, որ իմ սրտից արիւն քամեց,
Արդարամիտ դառնալով, կասես՝ հայր իմ, ցաւդ է խիստ մեծ։
Մենք անճանաչ մի մարդ տեսանք, կերպարանքը չնաշխարհիկ.
Նրա դէմքի հաւր շողերից փայլ կուտային երկինք-գետինք։
Ի՞նչ էր լալիս, ու�ն էր սղում, ես ոչ մի կերպ գլխի չընկայ.
Երբ կանչեցի, ինձ տես չեկաւ, դաղաղելով ետքիցն ընկայ։
Ինձ որ տեսաւ, հեծաւ իւր ձին, արցունքն աչքի ձեռով սրբեց.
Հրաման տուի բռնել նրան, զինուորներիս կեանքը կորզեց։
Ինչպէս մի դև՝ կորաւ աչքիցս, չունէր ոչ մի մարդկային կապ,
Մինչև օրս էլ չէ իմացուում՝ երևոյթ էր, թէ աչքակապ։
Իմ Աստուածը՝ շնորհն անհաս,—վերջը էսպէս լեզուն փոխեց,—
Լաւ օրերս, որ ունէի,—էլ չը կա՜ն այժմ,—դառնացրեց։
Հիմա վայն ինձ եկաւ տարաւ, էլ ո՞վ ինձի երնէկ կուտայ.
Այսուհետև ո՞րքան ապրեմ, խնդութիւնս էլ յետ չի գայ։
—«Ո՛վ թագաւոր, խօսքս անմիտ թէ որ կշիռ, գին ունենայ,
Ո՛չ Աստծուց և ո՛չ բախտից սիրտդ երբէք չի վշտանայ։
Ով եղել է բարի ու քաղցր, վատ օր նրան չի հանդիպի.
Արածդ բոլոր լաւութեան տեղ՝ քեզ վատութիւն ոնց կը գիպչի։
Թէ յիրաւի անճանաչը հողեղէն էր ու մարդածին,
Նրա տեղը մեզ ցոյց կը տայ, ո՞վ տեսել է անծանօթին։
Ապա թէ ոչ՝ դև էր տեսածդ—ներհակ ու հեռ քո խնդութեան.
Մի կոտրուի, ո՞վ է լսել, որ շահ լինի մէջ տխրութեան։
Խօսքս էն է, թէ արքայ ես, և արքաներ ծառայ կան քեզ,
Թէ հրաման տաս, հնոտախոյզներդ կերթան հեռու՝ ինչքան ասես։
Մարդիկ դրկիր երկրիդ չորս կողմ՝ բոլոր վայրեր քոդ աչք ածեն
Եւ լուր բերեն—անճանաչը ատտանայ էր, թէ՞ հողեղէն»։
Զիաւորներն-պատրաստուեցան՝ պըտըտելու անճանաչին,
Վայրկեան չանցած՝ գումարտակներ երկրի չորս կողմն ուղարկուեցին...

Թիֆլիսի բաբբառից գրաբարի վերածեց՝ Գ. Մելոյեան

ԱՐՍԷՆ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

(1790—1866)

Մխիթարեան միաբաններից է, հայագէտ, յայտնի իր թարգմանութիւններով օտար կլասիկ գրականութիւնից, յայտնի և մի գրաբար պոէմով, որ Հայկ Դիւցազն է կոչւում։ Գեղարուեստական գրականութեան տեսակէտից նրա նշանաւոր գործը Իլիականի սքանչելի թարգմանութիւնն է, որը սակայն գրաբար լինելու պատճառով միանգամայն անմատչելի է ժամանակակից ընթերցողին։ Մի գանձ, որ պատմական լեզուի քանձը ժշուշով է քօղարկուած, անըմբռնելի, անհասկանալի շատերի համար։

Բագրատունին, ինչպէս իր ժամանակի բոլոր մխիթարեանները, կրել է կեղծ-դասական ուղղութեան զօրեղ ազդեցութիւնը։ Հետևողութիւնը կլասիկ հեղինակներին՝ եղել է ըստ ամենայնի ստրկական, երբ Բագրատունին ձեռք է զարկել գրելու իր Հայկ Դիւցազն պոէմը։ Նման հետևողութիւնը և սխոլաստիկ վերաբերմունքը դէպի հին գրականը՝ Բագրատունուն զրկել է ստեղծագործական պաթոսից։ Նա իրեն դրել է շափազանց նեղ, սեղմ շրջանակի մէջ։ Ոճաի և գրուածքը դուրս է եկել օժտուած կեղծ-դասական գրուածքներին յատուկ բոլոր կողմերով, թէև պոէմը տեղ-տեղ դուրկ չէ գեղարուեստական կտորներից։

Հայկ Դիւցազն-ից հատուածներ դնում ենք այստեղ իբրև լաւագոյն հայկական նմուշ կեղծ-դասական գրական ուղղութեան։

Սուրխաթեան

ՀԱՅԿ ԴԻՒՑԱԶՆ

Բովանդակութիւն

Հայկ Դիւցազնը բաժանուած է քսան գրքի և պարունակում է 22,210 տող հայկական չափով։ Այստեղ պատմում է Հայկ Նահապետի գործը և հայ ազգի հիմնարկութիւնը։

Նաւասարդի գիշերն էր, երբ աստուածային հրամանով Հայկը որոշում է կռիւ մղել Բէլի դէմ. վտտամը, որ Հայաստանի հին բնիկներից էր, համաձայն չէ կռիւ որոշման։ Տնական ուրախութեանց միջոցին

գալիս է Բէլի պատգամաւորը և առաջարկելով իր պայմանները, պահանջում է հնազանդութիւն։ Հայկ արհամարհում է պատգամաւորին (Դրւագ Ա.) և իսկոյն բանակը յարդարելով՝ ճանապարհ է ընկնում։ Սահմանապահ Կադմոսը փախչելով Հայկի մօտ՝ յայտնում է թէ Բէլը գալիս է ահեղ բանակով։ Երկնքում ժողով է կազմւում առաջիկայ մեծ կռուի համար. Աստուած իր հրեշտակներով Հայկի կողմն է, իսկ դժոխքն ու տարտարոսի բոլոր սատանաները պաշտպան են կանգնած Բէլին։ Դեների ներշնչմամբ Վստամը ապստամբում է Հայկի դէմ և սկսում է դրդռել ժողովուրդը նրա դէմ։ Բէլի բանակն առաջանում է և Թուխ գետակի մօտ ճակատում. Վստամը առանց հրամանի ինքնագլուխ ճակատ է յարդարում և ջախջախում նրանց առաջապահ գունդը (Բ.)։

Հետևեալ օրը Բէլը մեծ ոյժերով առաջանում է Հայկի վրայ. Հայոց կողմից Վստամ մենամարտութեան է գնում Բէլի բանակը և իր ախոյեանի հետ երկար մենամարտութիւնից յետոյ՝ երկու կողմերն էլ անպարտելի մնում (Դ.)։ Բէլ ուղարկում է նոր պատգամաւոր, որ և առաջարկում է հաշտութիւն երեք պայմանով. ճանաչել Բէլի իշխանութիւնը, պաշտել նրան իբրև աստուած, տալ Հայկի դուստր Հայկանոյշին Բէլին կնութեան։ Պատգամաւորը Հայոց բանակը գալով՝ մանրամասն քարոզում է իրեն կլօնը. Հայկը մերժում է, և Նոյ նահապետը պատմելով ամբողջ աստուածային մեծագործութիւնը՝ յորդորում է կռուել Բէլի հետ (Դ.)։ Հայկ պատմում է Սենաարի գաղթը, աշտարակաշինութիւնը, լեզուների խառնակութիւնը, Բէլի ըմբոստութիւնը և իր հեռանալը Բէլից։ Վստամ յայտնապէս ապստամբում է Հայկի դէմ, և Հայկը սաստիկ երդումներով թողնում Վստամին առանձին կռուել Բէլի հետ, պայմանով որ եթէ յաղթէ՝ Հայկը թողնէ Հայաստանը և հեռանայ (Ե.)։

Վստամ ընդունում է և ճակատ յարդարում, բայց տեղատարափ անձրևը խանգարում է նրանց (Զ.). միւս օրն սկսւում է սոսկալի ճակատամարտը. Վստամի կողմը տկարանում է. Արմայիս, Ֆոռ և Արմենակ մոռանալով Հայկի նզովքը, խառնւում են կռուի. բայց նրանք ևս վտանգի մէջ են. Հայկ ուզում է միջամտել, բայց մի բանակ ուղարկւում է իր դէմ իր վրանում բռնելու համար իրեն։ Հայկ խորտակում է այդ բանակը (Է.)։ Արմենակի կողմը յաղթւում է, Հայկի որդի Հայկակ ընկնում է կռւում և նրա մարմնի վրայ մեծ սուգ է լինում. վտանգալից կացութեան մէջ ժողովուրդն ապրում է Հայկին ու Վստամին հաշտել միմեանց հետ և միացեալ ոյժով ջախջախել Բէլի ոյժը։ Բայց Հայկ ու Վստամ անողոք են. հօթնօրեայ գիշերազարի ժամանակ թողում են գիտակները. հանդիսաւոր նկարագրւում է մանաւանդ Հայկակի յուղարկաւորութիւնը և մեռելահացի խնջոյքը։ Դուի երկիրից պաշարւած Բէլը նոր պատգամաւոր է ուղարկում Հայկին և պահանջներից մէկը կրճատելով՝ առաջարկում է միայն հնազանդութիւն և խնամութիւն։

Հայկ մարդ է ուղարկում Կովկաս և Ապահունիք օգնութիւն կանչելու իր եղբայրներին և իր խռովեալ Ապահ որդուն (Ը.)։ Կովկասեանների ահեղ բանակը միանալով Ապահի գնդին, գիշերանց պատահում

է Բէլի ուղարկած բանակին, որ ուզում էր թիկունքից հարուածել Հայկին։ Ահռելի պատերազմի մէջ Բէլեանք խորտակւում են խստաս (Թ.)։ Արճէշում նաև են նստում Հայերը՝ դիմաց անցնելու համար. սանդարամիտների հանած ահեղ ալիկոծութիւնը խռովում է նրանց։ Բէլի զօրքերը լսելով՝ խուժում են ծովեզրը, արգելելու համար Հայոց դուրս գալ. տեղի է ունենում մեծ նաւամարտ (ժ.)։ Հայկը վրայ է հասնում, Հայերը ցամաք են իջնում և երկու կողմից ջախջախում Բէլի բանակը։ Հայկ յաղթական, բայց վիրաւոր դառնում է (ԺԱ.)։ Բէլի պահնորդները դաս են նրանք՝ վիրաւոր Հայկին սպանելու համար իր վրանում (ԺԲ.)։ Հայկանոյշ վրայ է հասնում և քաջաբար կռուելով՝ գերի է ընկնում (ԺԳ.)։ Բէլը նրան իր առաջն է կանչում և ամեն հնարք գործ է դնում հրապուրելու նրան, բայց զուր։ Նորից դիմում է Հայկին և հաշտութեան իրր միակ պայման՝ խնդրում է Հայկանոյշի ձեռքը։ Հայկ իր աղջկանը մահուան է նրանում ու մերժում Բէլի պատգամաւորներին։ Վատամ, որ մինչև այն ժամանակ թագուն աշխատում էր Հայկի հակառակ, նրա ազնուութիւնն ու մեծանձնութիւնը տեսնելով՝ զղջում է և իր բանակով նրան հնազանդութիւն յայտնում։

Վատամ և Հրանտ գնում են Բէլի բանակի վրայ՝ գերի Հայկանոյշին ազատելու (ԺԴ.). բայց Հրանտն էլ գերի է ընկնում և Բէլի հրամանով մահուան դատապարտւում։ Ասուած, որ բարկացել էր Հայկանոյշի մի անարժան արարքի համար, հաշտւում է Հայոց հետ, բախտը շրջում է Հայկի կողմը, բժշկում է նրան իր վէրքերից (ԺԵ.) և յայտնում նրան իր յաւիտենական ազնուութիւնները (ԺԶ.)։

Կռիւն սկսւում է. Հայկ ու Բէլ քանիցս իրար են փնտռում, բայց նրանց հանդիպումը խափանւում է. երեկոն և Բէլեանց գիշերին կացութիւնը վերջ են դնում կռիւն (ԺԷ.). Բէլեանք լաստեր են գցում գետի վրայ՝ թագուն պաշարելու համար Հայկի բանակը. բայց նոյի աղօթքով հեղեղ է բարձրանում և լաստերը քշում։ Բիւրատպը հաճելու համար աստուածներին՝ մարդապոհ է անում, ուր գոհել է ուզում նաև Հայկանոյշին, բայց նա հրաշքով ազատւում է (ԺԸ.)։ Դիմոխքը զարթեցած մարդապոհի բուրումով դուրս է գալիս Հայկի դէմ։ Երկինքն էլ հանում է աղդարների դունդը. սոսկալի պատերազմի մէջ Բէլեանք յաղթւում են (ԺԹ.)։ Երկրորդ օրը նոր փորձ է կատարում Բէլ, և երկու բանակներն իրար են խառնւում. Հայկ ճեղքելով թշնամիների դունդը, Բէլի վրայ է գնում և իր լայնալիճ ապեղով գետին փռելով նրան, վերջ է տալիս ահեղ հակառամարտին (Ի.)։ Արքունով էլ վերջանում է Բագրատունու այս դիցազներգութիւնը։

(Հր. Աճառեան, «Պատմ. Հայ Նոր Գրական.»)

ՀԱՅԿ ԴԻՒՑԱԶՆ

Հատուածներ

ՄՈՒՍԱՅԻՆ

Հուր սիրոյ հակայազօր հօր վեհազին վառէ զաշխոյժս՝
Քառասուն գարուց ամաց գլուխեան հանել վրէժ,
Ի հեռուստ ի յաւիտեանցն ի գլուխ զսկայն մեսեալ ողջոյն։
Եւ որմէմ հօր երախտեաց փանդռունք ի դէպ շնորհակալուք։
Կարկեցաւ շուրթն հայհոյիչ՝ աշխարհաւեր բռանց գուսան,
Ամբեցան ի գլուխ նոցա ւ՛ի քնարս երգոց հիւսք սարդենի։
Սիսակեան դատերք պարուց, արիք զարթիք իմ զօրութիւն
Գողթնացի նւագողաց բամբռամք զկնի ճեմոց՝ տաղիցս
Զլերանցն հայոց նիրհեալ խոր արձագանգս յարուցանել՝
Ընդ մեզ զուգաբարբառ հնչել զհայրն պարծանաց,
Զկրկին զարթ կենացս անմահ արև կենդանարար,
Որպէս անդ ուրեմն ի թիւդ կայթից ոտից յաղթանակին
Յօրհնութիւնս Աստուծոյ և դիւցազնին յաղթող բազկի,
Որ ի շուրնդն հզօրին հաստ աղեղան պարուեցաւ մահ,
Յանդնդոց սանդարամետս ընկլան բղխեալքն անդուստ ի վեր
Կարապետք դժոխոց, նենգ անօրէն, աջ բռնակալ,
Մահ ոգւոց և մարմնոց, խաւար մտաց, լուծ գերութեան։

ՏԵՂԱՏԱՐԱՓ

Մթացան երկինք, և հողմք չարից ծագաց ասեան ի կռիւ,
Քարանձաւք հեծէին, ճարճատէին լերանց մայրիք,
Եւ անդունդք Վասպուրականն սոսկահարար զաղմնացեալ
Գոչէր վիշապաձայն, և մինչ ի գլուխս պարեխաց
Իբրև զունդ յարդի մղեղեալ հասեալ զվերփուր ծովուն սրակէր։
Գոռաց երկինք որոտիւք ի ծոց ամպոց անագնացայտ,
Եւ ճայթմունք փայլատականց ծագաց մինչև ի ծագս երկնից
Պատառեալ զխոր աղջամուղջ խաւարին զաշս շլացուցին։
Փոշին ելեալ ծառացեալ և դիզացեալ յիրկին կոյր։

Զոքնգնէրս ծածկէր յաչաց, գնրանգս ի մի թաթաւէր թոյր։
Զէր յոտին կալ կանգուն և յաղթանգամ սկայից անգամ.
Ելր ի վրանս իւր անկաւ՝ գապուանդակսն պնդելով։

Հոտը հորանք անդնայր խուճապ խիտ բառաչմամբ իջեալ ի դիւր,
Ի հովիտս ի խորշ տեղիս մակաղէին կուռ առ միմիամբք.
Բիւր ի լերանց արձագանգք խօսին ազգի ազգի ձայնիւբ։
Իբրև վայր մի լուութիւն գայր փոթորկին ասպատակաց,
Որոտայր անգրէն երկին բոցաշաւիղ փայլատակմամբ,
Եւ շառաչք անձրևաց անկան յերկիր տեղատարափ,
Մոնչեցին ամենայն ծործորք. եմակք, ձորք և խոխոմք...

ՈՐՍՈՐԴՈՒԹԻՒՆ

Վարսագեղ այն ինչ սփռեալ առաւօտին ծայրք արևուն
Վարդագոյն ծաւալէին զգագաթամբք լերանցն Հայոց,
Փեռեկէին զթանձրութիւն մայրեաց՝ զհաւս զարթուցանել
Յերգ յողջոյն վաղորդայնին այգորելոյ լուսոյն ծագման,
Ի մորեաց զէրէ վայրի՝ խնդրել իւրեանց զկերակուրս
Հասին ի խորս անտառին՝ ուր ցելոյր ռահ յԱպահունիս...
Յոտնատրոփ սալամբակ դրընդմանէն յօդս եռայր փոշին.
Գնան ծածկին ի մրբիկն, ի մառախուղ սուզեալ լերանց։

Հայկեան ցրուեալ ի մայրիսն յայսկոյս յայնկոյս յառաջս առաջս,
Ի հաջել հետազօտել շանց՝ ի դղորդից ասպանդակին
Դոստուցեալ բոյլք էրէոց վագեն վարդին ի վեր ի վայր։
Անդ քառատրոփ դռոյթ անդ դոռ, անդ ոան ի դոփ, մկունդ ի կոփ.
Թունդ առ անտառ բոմբ ի բոմբիւն թումբ ի թմբիւն զանդք արձանաց։
Անդ թորգոմեան լայնալիճն տասն իրանս վիթխարիս
Եղջերուաց, տասն այծեմանց և յամուրաց քոշից վայրի
Մի զհետ միոյ հարեալ նետիւ և կործանէր տապալ յերկիր,
Եւ աշաէիւ զիաթաւալ զասատկանդամ ցիռս և զոմէշս...
Մէն մի զունդ ասպատակեալ կոտորէին նախճիրս բազում,
Այլք եղեզանց զուրակաց թաւուտ շամբից հարեալ հրդեհ,
Ջժանեալ և զթաւաստեղ շրտուցանեն կնճիցն ջոկ։
Իսկ յաղջկանց դաս Հայկանոյշ արիացեալ և յաջողէր
Ոնն զամենայն օրիորդս և քան զհոլով քաջաց բազուկ.
Ամենայն շկահիւն լարին ոսկիափոկ պինդ ապեղան
Նոյնքանիս տայր արձակել մահու թառանչ յերէոց բոյլս...
Ահա ցլիկ մի վայրի խոցեալ նետիւ յոյժ զառնաշունչ,
Դիւահոտ զազանութեամբ խոզանատեր դիզեալ ի կոնս,
Արիւնուշտ աչք բոցավառ, կամակոր ոգն ապեղնաձև,
Վրիժակք ի գլուխն խոնարհեալ, հուպ առ երկրաւ քերեալ պատրաստ,

Ոլորեալ կանգնեալ ադին գալարաձև զերդ խարազան,
Փռնչէր գայր արշաւասոյր, սրընթացիւք շանց վոհմակ զհետ,
Մրրիկ փոշւոյն պտուտկեալ՝ ղէրէ և գայր շոպէր յաչաց։

ԱԼԵԿՈԺՈՒԹԻՒՆ ՄԵԾ

Արեգակն ընդ հայ լերինսն ծաւալէր ծայրակարմիր....
Ըսկսաւ խաղալ ոգին ի սեաւ վհին խոր մռնչմամբ,
Գալով գայր այսն մրրկոտ և ցոլանայր տակաւ յերկինս։
Շարժէին ծայրք և դիտակք մայրեաց բարձանց և հեծէին,
Ծուխ և մէգ, մրրկախառն զգլուխ լերին պատէին ամպք։
Գեղեցիկ այգն ի մռայլ ի մութ զդէմսն ներկանէր,
Ի հարաւ կուսէ երկինք խոժոռէին լրթատեսիլ։
Ի ծայրից ծփանացն թեւս հանեալ սաւառնաձայն՝
Փախչէին հողամաղք կարկաչելով ի ցամաք կոյս։
Եւ ահա դիմեալ անդէն դևն յանդնդոց փոթորկաքեր,
Դիւահոտ չըղջից ի դուրս փչեալ ճչիւք մթին խուժան,
Ընթանայր մրրկելով զերկին զերկիր միահաղոյն։
Անդուստ անդրէն փոթորկելով ասպատակէր ի ծովն ահեղ,
Վարելով թուխս յառաջոյ թուխ և զկնի յորդորել ամպ։
Նախ քամեալ կապուտակէր գեղածիծաղ ծովուն ծփանք,
Յանդնդոց անտի ապա խռովեալ յամբոխ մրրատեսիլ,
Ալիս զալեօք լեռնաձևս կուտակեալ կանգնէր դիզան,
Փրփուր աղի, խճախառն աւազ ընդդէմ ժայթքեալ երկնից։
Սահէին անցանէին լեռնակարկառ երկայն կոհակք
Տըւեալ այսուն ղթիկունս կորաքամակ, և քիւ առեալ,
Թաւալեալ բախէին երթեալ յափունսն բարաժեռս,
Եւ զցնցուղսն շամանդաղ մինչև յաստեղս սրսկէին։
Ծովեզերք, խութք և կղզիք գոչեն մռունչ որոտաձայն.
Նա մոլէր մրրկէր զերկին և զօդ, զերկիր և զծով,
Վեր ի վայր ընդ տիեզերս հարեալ վրդով և աղճատեալ։
Ճչեաց այն ի կայմ նաւուցն և յառագաստս զոյժ մահու,
Սուլեցին զուգաձայն սրաշրինչ ճղուղք և ճախարակք,
Ճչեցին և առասանք և ուժգնապիրկ պարանաց լարք.
Նաւապետք ի նաւազին կան գոչեն ունկն անլուր հրամանս...
Ընդ յուսոյն նաւուղիղք և զարհուրեալ հնար կորուսեալ,
Թողին զկարկուրէից զերասանակս վարչութեան
Յուպէտ յուկամ ըստ բախտի գեղեալ գնալ ի կեանս ի մահ։
Ասարեցան և Լրկինք, կորեաւ լուսին և արեգակն,
Յարհաւիրս ծովուն խառնեալ էջ սեաւ առակումն և սարսափ.
Գունտ երկնից որոտալիր գոռաց յամպոց կուտակմանէ,
Եւ հրացան բարկութեանց պատուհասի փայլատակունք

Սկսան եռալ գեռալ և յամպրոպաց շանթել ի ծոց,
Շառաչմամբ կայծակնաթափ տեղեալ յերկիր բոց բարկաճայթ՝
Հարկանել զբարձունս լերանց և զլեռնացեալ ծովուն անդունդս։
Շողան շանթք նաւացն ի կայմս զաչս արանց շլացուցին,
Մրրկատարափ կուռ կարկուտ կռփէր կոծեալ ի կառափունս։
Որ յառաջն միախուռն ընթանային նաւք միաչու
Աղաւնեաց պար ձագախառն ի ծաղկաճեմ թռուցեալ ի մարգ,
Յոր յանկարծ խոյանայցէ յամպոց երկնից կորճ աւազակ,
Խուճապեալ ցրուին, և այր զընկերի հետս ոչ իմացաւ,
Այսպէս օձտեալ ցնդեցան ի մոայլ երեսս անհուն ծովուն.
Ոչ մնացին երկուք ի մի, զոր խուրթք առին, զոր խիստ ծանծաղք,
Որ յափունս հեռաստանեայս, որ ի կղզիս սահեալ անկան,
Ի տանջանս առհասարակ վայրենամիտ կոծեալ ալեաց...

Հ. Ա. Բագրատունի

ՎԻՊԵՐԳ

(Լիրիքական պոէմ)

Վիպերգը էպիքական-պատմողական գրուածք է, որի մէջ յաճախ տեղ է բռնում քնարական տարրը։

Վիպերգի մէջ բանաստեղծը գեղարուեստական առարկայնութեանը միացնում է իր քնարական զեղումները, արտայայտելով անհատական մտքերն ու զգացմունքները։

Վիպերգների մեծ մասը չափական է։ Նիւթը պատմական կամ ժամանակակից։

Ստորև գնում ենք հետևեալ լիրիքական պոէմները. Անուշ, Աբու Լալա Մահարի, Դև, Հարճը, Նոր Առաւօտ, Ամբոխները խելագարուած և Ամենապոէմ։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆ

(*Ծնե.* **1869** *թ.*)

Յովհաննէս Թումանեանը ամենախոշոր դէմքն է հայ նորագոյն գրականութեան մէջ։ Նրա քնարը անդրադարձրել է մեր կուլտուրական կեանքի մինչ-կապիտալիստական շրջանը, յաւերժացնելով նահապետական կեանքի կենդանի հերոսներին ու նրանց կենցաղը։

Յով. Թումանեանը գրական ասպարէզ ի իջել այն ժամանակ, երբ հայ նահապետական կեանքը բաւի բովանդակ իմաստով մօտեցել էր իր շրջափակին, որից այն կողմը սկսւում էր նրա թեքումը դէպի քաղաքային բուրժուական հասարակակարգը։

Իր հոգեկան բովանդակ կառուցուածքով՝ հոգեբանութեամբ ու մտածողութիւններով Յով. Թումանեանը պատկանում է իր հայրենի նահապետական երկրին, ուստի և քաղաքի այն կեանքը, ուր նա անցկացրել է իր պատանեկութիւնն ու մեծացած տարիները, չէ պատուաստել նրա մէջ արդիւնաբերող մեծ քաղաքի խորթ զգացումներ ու պատկերացումներ։ Ընդհակառակը, մնալով հաւատարիմ իր իդէալականացրած աշխարհին, աւելի ևս ուժգին համակուել է հայրենի երկրի կաթոտով։

Քաղաքը ստեղծագործութեան աղբիւր չէ եղել բանաստեղծի համար. ոչ տիրող բուրժուական դասակարգի կեանքը, և ոչ էլ վերջինիս ախոյեան նոր զարթնող պրոլետարական տարրը։

Իբրև էպիկ նա գրել է մի շարք լիրիքական պոէմներ, որոնց մէջ իրեն յատուկ գեղարուեստական առարկայնութեամբ պատկերել է հայ ժողովրդի մինչ-բուրժուական, մինչ-կապիտալիստական աշխարհը։ Թէպէտ նահապետական գիւղական կեանքը տակաւին հաղորդակից չէր կապիտալիզմի բերած հասարակական կարգերին, սակայն նրան խորթ չեն եղել ներքին սոցիալական հակասութիւնները։ Բացի այդ՝ յատկապէս Լոռին, մօտ գտնուելով մեծ քաղաքին, պիտի զգար իր աստիճանական կախումը քաղաքում հաստատուած նոր կարգերից, որոնց շօշափուկները հետզհետէ հասնում էին գիւղական կուսական միջավայրին։

Նահապետական կենցաղը կազմալուծող քաղաքի նոր ազդակներն ևս չեն վրիպել Յով. Թումանեանի դիտողութեան դաշտից, որոնց տխուր պատկերները նա տուել է իր գլուածքներում առանց ծրագրային միտումների, աշխատանքն ու չարքաշ հոգագործին դարձնելով իր ստեղծագործութեան առաջնակարգ օբիեկտը։

Նրա պոէմների ու լեգենդների մէջ պատկերացել է ոչ միայն նրան հարազատ Լոռին իր ուրոյն կենցաղով, դարերով սրբագործուած սովորոյթ ու հասկացողութիւններով, այլ և նահապետական կուսական ժողովրդի երևակայութեամբ շնչաւորուած բնութեան երևոյթները, որոնք նոյն կուսական կերպարանքով բեկուել են բանաստեղծի հոգեբանութեան մէջ՝ իրենց վեհ ու խորհրդաւոր, գաղտնի ու դիւթիչ ոյժերով։

Բանաստեղծի մեծութիւնը սակայն միմիայն լիրիքական պոէմների մէջ չէ։ Նրա մեծութեան զօրեղ յենարաններից մէկն էլ նրա լեգենդներն ու հէքիաթներն են, որտեղ հրապուրիչ պարզութեամբ մերկանում է նահապետական ժողովրդի ոգին։

Եւ եթէ նրա վիպերգները, պոէմներն ընդգրկում են ըստ մեծի մասին հայրենի երկիրը՝ Լոռին, ապա նրա լեգենդներն ու հէքիաթներն ընդգրկում են ամբողջ հայ նահապետական ժողովրդի հոգեկան աշխարհն ու փիլիսոփայութիւնը։

Իր բանաստեղծական հիւսուածքների ծաղիկները նա քաղել է ժողովրդական այն ծաղկոցից, որի թարմաշունչ գոյներն ու բուրմունքը յիշեցնում են բնական տնտեսութեան շրջանը մաշող երկրագործ ժողովրդի պատկերը։ Ուստի և Յովհ. Թումանեանի գրական գործերը իրենց բոլոր տեսակներով կազմում են համադումարը այն գանձերի, որոնք բանաստեղծի տաղանդի ոյժով լոյս աշխարհ են հանուած նահապետական ժողովրդի հոգեկան գաղտնարանից։

Նրա գրուածքները խորը հետք են թողել հայ գրականութեան մէջ։ Յով. Թումանեանի ընթերցողների թիւը աւելի մեծ է, քան հայ միւս գրողների, պատճառ, որ նրա գրուածքներով է դաստիարակուում հայ մանուկ սերունդը, նրանցով սովորում հայ լեզուն, որը բանաստեղծի կողմից իդէալական պարզութեան ու յստակութեան է հասցուած։

Բանաստեղծի գրական գործերը հանդէս են բերում նաև նրա աշխարհայեացքը. բանաստեղծը ջատագով է հաւասարութեան. ի զուր չէ, որ նրա հերոս թռչուններից մէկը՝ գիշատիչ աղէսի ձեռքից տանջուող թշուառ կկուն՝ բացականչում է. «Սարն ամենքինս է հաւասար»,—աղէսին, որը սար ու անտառի սեփականատէր էր յայտարարել իրեն, մէկ-մէկ տանել-ուտելով կկուի ձագուկներին։

Բանաստեղծի խոշոր արժանիքներից մէկը նրա իրայատուկ հումորն է, որը նրա գրուածքներին հաղորդում է մի առանձին գրաւչութիւն, ինչպէս Քաջ Նազարը, Շունն ու Կատուն և այլն։

Յով. Թումանեանի քնարը արձագանքել է նաև հայ նացիոնալիստական մանր-բուրժուական շարժմանը։ Բայց դրա դրդապատճառը աւելի շուտ ժողովրդական մասսայի (Տաճկաստանում) տառապանքներն են եղել, քան մի քանի հայ գրողների ցուցադրած թունաւոր և ագրեսիւ ազգայնամոլութիւնը։

Խոշոր գործ է նաև բանաստեղծի Սասունցի Դաւիթը։ Որպէս միակ էպիկը հայ բանաստեղծների մէջ, միմիայն Յով. Թումանեանն ընդունակ էր գեղարուեստօրէն վերարտադրելու հայկական էպոսի հա-

ւաքական ստեղծագործութիւնը։ Բանաստեղծը այս գործում մեծ շնորհք է ցուցադրել. պոէմի մէջ չը կայ մի խորթ, անհարազատ պատկեր, որ նսեմացնի դարերի ընթացքում կերտուած հերոսների և միջավայրի կենդանի պատկերը, բացի մի քանի յապաւումներից, որ պիտի լրացնի բանաստեղծը։ Սա ապացոյց է, որ հայկական ամբողջ էպոսի գեղարուեստական լրիւ վերարտադրութեան և ամփոփման գործը բնականաբար պէտք է ընկնի Յով. Թումանեանի վրայ։

Գեղարուեստական մեծ արժէք ունեն նաև բանաստեղծի թարգմանական գործերը, որոնք օրիգինալին հաւասար, երբեմն էլ աւելի արժէք ունեն։

Ներկայ հատորի մէջ զետեղուած են բանաստեղծի ինքնուրոյն և թարգմանական գործերից լրիւ նմուշներ։

Սուրխաթեան

ԱՆՈՒՇ

ՆԱԽԵՐԳԱՆՔ

(Համբարձման գիշեր)

Բազմած լուսնի նուրբ շողերին,
Հովի թևին՝ թռչելով
Փէրիները սարի գլխին
Հաւաքուեցին գիշերով։

—«Եկէք, քոյրե՛ր, սէգ սարերի
Զքնաղագեղ ոգիներ,
Եկէք, ջահել սիրահարի
Սէրը ողբանք վաղամեռ։

Օխտն աղբիւրից ջուր է առել
Կոյս սափորով, լուռ ու մունջ,
Օխտը ծաղկից ծաղիկ քաղել,
Կապել սիրոյ ծաղկեփունջ։

Ջուրն ու ծաղիկ աստղունք գրել,
Խնդիրք արել աստղերին,
Փափագ սրտով խնդիրք արել՝
Բարի ժպտան իր սէրին...

Ափսոս, Անուշ, սարի ծաղիկ,
Ափսոս իգիթ քու եարին.
Ափսոս բոյիդ թելիկ-մելիկ,
Ափսոս էդ ծով աչքերին...»

Ու նրանց հետ՝ ցող-արցունքով
Լցված սրտերն ու աչեր՝
Սարի ծաղկունք տխուր սիւքով
Հառաչեցին էն գիշեր։

«Վուշ-վուշ, Անուշ, վուշ-վուշ, քուրիկ,
Վուշ քո սէրին, քու եարին...
Վուշ-վուշ, Սարոճ, վուշ-վուշ, իգիթ,
Վուշ քու սիրած սարերին...»

—Եկէք, քոյրեր, սէգ սարերի
Զքնաղագեղ ոգիներ...»
Ու փէրիներն էապէս տխուր
Երգում էին ողջ գիշեր։

Կանչում էին հրաշալի
Հնչիւններով դիւթական.
Ու հենց շողաց ցոլքն արևի՝
Անտես անհետ չքացան։

Խոր սուզեցին ակն աղբիւրի,
Մտան կաղնին հաստաբուն,
Ու լեռնային վտակների
Ալիքները պաղպաջուն։

ԵՐԵՔԱՆ ԵՐԳ

I

Կանչում է կրկին, կանչում անդադար
Էն չքնաղ երկրի կարօտը անքուն,
Ու թևերն ահեղ փռած տիրաբար՝
Թռչում է հոգիս, թռչում դէպի տուն։
Ուր որ հայրենի օջախի առաջ
Վաղուց կարօտով սպասում են ինձ,

Ու ձմեռան երկար գիշերը նստած՝
Նստում եմ և լուռ հին-հին քաջերի։

Ինչպե՞ս են սարերը, որ վէր, վիթխարի,
Հարյուրամեայ շարքերով լոռնած շուրջպատի,
Հանկարծ շուրջպատի լոռնած երգիչներում,
Հրամայում են, ասես են մեծ հարբանչում
Պերճ Աշտարակի նազելի գլուխը,
Որ Գա-Մեր, Գա-Բէջի և այլ հսկաներ,
Ամբ-ամբ հսկաներ հնոց աշխարհի,
Փաչեցրին բերին անասելի հոսի։

II

Է՛յ հին ժանօթներ, Է՛յ կանաչ սարեր,
Ահա ձեզ տեսայ ու միտս ընկան,
Առաջս եկան երջանիկ օրեր,
Պիրքելի գէմքեր, որ հիմի չը կան։
Ինչքի են, ոնց որ ծաղկունքը պէս-պէս,
Որ անցած գարնան կայրին ձեր լանջում.
Ինչքա՛ ձեր գլխի հերուան ձիւնի պէս,
Բայց եկել եմ ես՝ նրանց եմ կանչում։
Ողջո՛յն ձեզ, կեանքիս անդրանիկ յուշեր,
Որբացած հոգիս ողջունում է ձեզ,
Թռչուն կարօտով փնտռում ձոր ու լեռ,
Դիւթական ձայնով կանչում է հանդէս։
Դուրս եկէք կրկին շիրմից, խաւարից,
Դուրս եկէք տեսնեմ, շոշափեմ, լսեմ,
Կեանքով շնչեցէ՛ք, ապրեցէ՛ք նորից,
Լցրէ՛ք պոէտի հաճոյքը վսեմ...

III

Եւ ծուխ այրերից մամռոտ ժայռերի,
Թաւուտ ծմակի լռին խորքերից
Մանուկ հասակիս հնչուն ծիծաղի
Արձագանգն ահա լսում եմ նորից։
Թնդում է զարթ աղմուկը բինի,
Բարձրանում է ծուխն իմ ծանօթ ուրթից,
Ու բոլորն ահա, նորից կենդանի
Երևում են աշխոյժ վաղորդեան մութից,
Ու թաքմ, ցօղապատ լեռների լանջում...
Սրեա... ականջ արա,—հովիւն է կանչում...

IV

—Աղջի՛կ, անուշաբուրած, նստիր վրանում,
Ի՞նչ ես դուրս գալիս, խելքամաղ անում,
Աշուղ ես շինել, չեմ հանգստանում,
Մատներս կապելով,
Զոլերս չափելով,
Ոչխարս անտէր,
Ընկել եմ հանդեր։

Ամեն, էրեցիր սիրուս քու սիրով,
Ոտս կապեցիր թել-թել մազերով.
Էլ չեմ դիմանալ. կը փախցնեմ զոռով,
Ա՛յ սարի աղջիկ,
Ա՛յ սիրուն աղջիկ,
Ա՛յ դու կարմրաթուշ,
Թուխամազ Անուշ։

Քու հէրն ու մէրը թէ որ ինձ չը տան,
Արին կը թափեմ ես դեռի Նեման.
Սարերը կընկնեմ կորչեմ անգիւման,
Ա՛յ սև աչքերով,
Ա՛յ ծով աչքերով,
Ունքերդ կամար
Աղջիկ, քեզ համար։

V

Երգում է Սարօն, ու չի կարենում
Աղջիկը հանգիստ նստի վրանում։
—Էն ո՞վ էր, նանի, որ կանչում էր մեզ,
Դու չե՞ս իմանում... ականջ արա, ասա...
—Հերիք է, Անուշ, ներս արի գագէն,
Քանի դուրս թռչես, նայես գէս ու գէն.
Տեսնողն էլ կասի—ինչ աղջիկ է սա...
Հազար մարդի մօտ կերթայ էր իրաւայ։
—Մտիկ տուր, նանի, էն սարի լանջին.
Ինչքան աւլուկ է տալիս կանանչին...
Նանի, թող գնամ քաղեմ ու հիւանմ,
Էն սարի լանջին «Ջան գիւղումն» ասեմ։
—Հանգիստ կաց, Անուշ, դու հասած աղջիկ՝
Ի՞նչ ունիս ջանել չորքանների մօտ.
Նստիր վրանում, քու գործին մտիկ,
Պարկեշտ կաց, աղջիկ, ամօթ է, ամօթ։

—Ա՜խ, սիրտս, նանի, չը գիտեմ ընչի,
Մին լաց է լինում սևակնած, տխուր,
Մին թև է առնում, ուզում է թռչի,
Չը գիտեմ՝ թէ ուր, չը գիտեմ՝ թէ ուր...
Նանի ջան, նանի, ես ինչպէս անեմ,
Ի՞նչ անի անքուն, անհանգիստ բալէդ,
Նանի ջան, նանի, կուժը թող առնեմ՝
Աղբիւրը գնամ աղջիկների հետ...»

VI

Գժերն ուսած՝ թըրուրալով
Ջուրն են իջնում աղջիկներ,
Խնդում իրար ուսի տալով,
Երգը գնգում սարն ի վեր։

—Ամպի տակից ջուր էր գալի,
Դօշ է տալի, փըրփըրում.
Էն ում եարն է նստած լալի
Հանգուր-հանգուր էն սարում։

Ա՛յ պաղ ջրեր, գուլալ ջրեր,
Որ գալիս էք սարերից,
Գալիս՝ անցնում հանդ ու չոլեր,
Եարս էլ խմեց էդ ջրից։

Եարաք խմեց, եարաք հովցաւ՝
Վառուած սիրտը էն եարի,
Եարաք հովցաւ, եարաք անցաւ
Անքուն ցաւը ջիգեարի...

—Աղջի՛, քու եարն եկաւ անցաւ
Վառուած, տարուած քու սիրով,
Էրուած ջիգեարն՝ եկաւ անցաւ,
Չը հովացաւ պաղ ջրով...»

Ամպի տակից ջուր է գալի,
Դօշ է տալի, փըրփըրում.
Ա՜խ, իմ ազիզ եարն է լալի
Հանգուր-հանգուր էն սարում։

VII

Ու պառաւ Նանի սրտի մէջ յանկարծ
Զէն տուաւ թաքուն մի խաւար կասկած.

—Էն ե՞րբ էր՝ Անուշն իր կուժը առաւ,
Աղբիւրը գնաց ու ետ չը դառաւ...
Ամպերն եկել են սարերը պատել,
Ձորերը լցուել, իրար փաթաթուել,
Հազար չար ու շառ, հազար հարամի,
Հազար ջահելներ վխտում են հիմի...»
Ու ելաւ տեղից պառաւը յանկարծ.
—Ո՞ւր կորաւ, Անո՛ւշ, ա՛յ մադդ կտրած...»
Ու ձորի գլխին, ձեռքը ճակատին,
Կանչում է, կանչում անսահ զաւակին։
—Աղջի՛, սևասի՛րտ, քու ահը կտրի,
Աղջիկը մենակ ձո՛ր կը մտնի։
Ամպը կոխել է, աշխարքը մթնել,
Ի՞նչ ես կորցրել, չես կարում գտնել...
Աղջի, հէ՛յ Անուշ, ա՛յ աղջի՛, Անո՛ւշ...»
Ծնկանը զարկում, հառաչում է «վո՛ւշ».
Ու ձորի գլխին մոլորուած կանգնած՝
Նայում է ներքև սիրտը սեակնած։
Ամպերն եկել են, սարերը պատել,
Ձորերը լցուել, իրար փաթաթուել,
Հազար չար ու շառ, հազար հարամի,
Հազար ջահելներ վխտում են հիմի։

VIII

—Թո՛ղ, կանչում են ինձ... մէրս կիմանայ...»
—Չէ՛, Անուշ, քի՛չ էլ, մի քի՛չ էլ մնա...
—Չէ՛, թող ես գնամ... ա՛խ, ի՞նչ խենթ եմ ես...
Դու ինձ չես սիրում, չես սիրում ինձ պէս.
Հենց ես եմ մենակ լալիս ու տանջւում,
Դու սարի լանջին խաղերը ես կանչում...
Վաղո՛ւց, վաղուց ես դու ինձ մոռացել...
Ես ե՞րբ եմ եկել էստեղ քարացել
Ու մնում եմ քեզ, մնո՛ւմ, անիրա՛ւ,
Էնքան մնացի աչքս ջուր դառաւ.
Ինձ չես լսում,
Չես ափսոսում,
Էլ չես ասում՝
Ի՞նչ կըլնեմ ես...
Ես կը վառւեմ,
Հուր կը դառնամ,
Ես կը հալւեմ,
Ջուր կը դառնամ,
Ես չը գիտեմ՝
Ի՞նչ կը դառնամ,

Թէ որ մին էլ
Էսպէս մնաց...
Ասում են՝ ուռին
Աղջիկ էր ինձ պէս,
Մնում էր եարին,
Ու չեկաւ նա տես։
Խեղճը դողալով
Անյոյս կռացաւ,
Դարդից չորացաւ,
Ուռենի դարձաւ։
Ջրերի վրա
Գլուխը կախած՝
Դեռ դողում է նա
Ու լալիս կամաց.
Ու ամբողջ տարին
Մի միտք է անում,
Թէ եարը եարին
Ո՞նց է մոռանում...

—Ա՜խ, Անուշ, Անուշ էդ ի՞նչ ես ասում.
Բա դու չե՞ս լսում.
Էն՝ որ լանջերին խաղեր եմ ասում,
Ո՞ւմ հետ եմ խօսում...
Էն՝ որ գիշերով շընոու եմ փչում,
Էն ո՞ւմ եմ կանչում...
Էն՝ որ մոլորուած նստած եմ մնում,
Ո՞ւմ հետ եմ լինում...
Էն՝ որ հառաչում ու ախ եմ քաշում,
Էն ո՞ւմ եմ յիշում...
Ա՜խ, Անուշ, Անուշ, անասունած Անուշ...»
Արբեցած, անուժ
Հառաչեց հովիւն ու սրտին ընկաւ,
Հալուեցաւ, հանգաւ...

IX

—Անուշ, ա՛յ աղջի, Անուշ, տուն արի...»
Կանչում է մէրը, հառաչում, կանչում։
—Գալիս եմ, գալի՜ս, գալիս եմ, նանի՛...»
Ջրից աղջկայ ձէնն է զոռանում։
Ու մայրն անկարգ տուած թիկունքով
Ու ցրուած շիկնած այտերի վրան,
Դուրս եկաւ թեթև ամպերի տակից
Անուշը՝ փախած եղնիկի նման։
Նա կուժը դատարկ ետ բերաւ կրկին,

Իսկ ուսին տարած ուսաշոր չը կայ,
Թողել է էն էլ ջրի եզերքին...
Ա՜խ, անհոգութիւն ջահել աղջկայ...
—Նանի՛, վախեցի, գանգատւում է նա,
Եւ ուզում է լալ, չի կարողանում.
—Նանի՛, ներքևում ես մարդիկ տեսայ,
Կարծեցի՝ թուրքեր էին լողանում...»
Անիծում է ծեր մէրը բարկացած
Իրեն մոռացկոտ, վախկոտ Անուշին,
Ու անէծք տալով իջնում է նա ցած՝
Դատարկ ետ բերած հին կուժը ուսին։

ԵՐԿՐՈՐԴ ԵՐԳ

X

(Համբարձման առաւօտը)

Համբարձումն եկաւ, ծաղկունքը ալւան
Զուգել են հանդեր նախշուն գորգերով։
Փունջ-փունջ աղջիկներ սարերը ելան՝
Վիճակ հանելու աշխոյժ երգերով։

«Համբարձում, եայլա,
Եայլա ջան, եայլա,
Սև սարեր, եայլա,
Եայլա ջան, եայլա։

Երգ ու բոյր խառնած,
Թև-թևի բռնած
Զուգում են լեռներ,
Ծաղիկ են քաղում,
Ծաղկի հետ խաղում,
Ինչպէս թիթեռներ։

Համբարձում, եայլա,
Եայլա ջան, եայլա,
Լաւ օրեր, եայլա,
Եայլա ջան, եայլա։

Եկաւ համբարձում՝
Ծաղկով զարդարուած,

Մեր բախտին հարցնում,
—Ո՞վ է մեզ գրած։
—Ա՛յ ջան տղայ, շորան տղայ, ձեռն ես դու։
—Աստուած գիտի, աշխարհ գիտի՝ ինձն ես դու։

Դէ հանիր, աղջի,
Վիճակն 'ի բարին,
Երգերով գովենք
Էն խզիթ եարին։
Բեղը ծիլ-ծիլ, բուլը թիլ-թիլ էն եարի,
Ի՞նչ գարդ ունեմ քանի նա կայ աշխարհի։

Համբարձում, եա՛յլա,
Եա՛յլա ջան, եա՛յլա,
Հուր սրտեր, եա՛յլա,
Եա՛յլա ջան, եա՛յլա։

Թնդում են երգեր, խնդում են սրտեր,
Ու շուրջ բոլորած վիճակ են հանում.
Ելնում է մէկին իր երաշն ու սէր,
Միւսի մուրազը սրտումն է մնում։

XI

Գտոյտ է տալի վիճակը նորից՝
Քուշուշքը գլխին ծաղիկ ծաղկամէջ,
Թնդում «ջան գիւլում» մատաղ սրտերից,
Հետը գըգըում էն ծաղկոտ սարեր։
«Ա՛յ թուխ մազաւոր աղջիկ,
Ա՛յ սարի սովոր աղջիկ,
Ջիգեարին գիւլա դիպչի,
Ով որ քեզ սիրի, աղջիկ։

—Ո՞հ, ինչ սև վիճակ քեզ բաժին ընկաւ,
Սևաթախտ քուրիկ, նազելի Անուշ.
Քու ձեռը կոտրի, ով որ հանեցիր...»
Ու ողջ մնացին մոլորուած, ապուշ։

—Սուտ բան է, քուրիկ, դու մի հաւատար,
Լոկ պատահական մի չար խօսք է սա.
Սիրտդ մի կոտրի սուտ բանի համար,
Քու խաղդ խաղան, ջան գիւլում սա։
—Ա՜խ, չէ, ես գիտեմ, որ ես բախտ չունեմ.
Ես երբէք, երբէք բախտ չեմ ունեցել...
Ես միշտ էլ էապէս անբախտ կը լինեմ.

Մանուկ օրից են դեռ ինձ անիծել...
Ասում են՝ մի օր, ես օրօրոցում,
Մի պառաւ դարուիշ մեր դուռն է գալիս,
Իր խաղն ասում է ու բաժին ուզում,
Իմ նանը նրան բաժին չի տալիս.
—Կորի՛, ասում է, կորի՛ մեր դռնից,
Երեխաս ճաքեց, հեռացի՛ր, գնա՛...»
Ու դարուիշն էնտեղ անիծում է ինձ,
Թէ՝ դրա օրը լացով անց կենայ...
Ա՜խ, էն դարուիշի անէծքին անգութ
Ու էս վիճակին տեղեակ է Աստուած.
Սիրտս էլ միշտ փակ, սիրտս էլ միշտ մո՛ւթ,
Ի՞նչ կայ, չը գիտեմ, իմ առջև պահուած...
—Մի տրտմիր, Անո՛ւշ, մի լինիր յամառ,
Մեր ձեռքով հանած մի անմիտ վիճակ,
Մի խելառ դարուիշ, մի անէծք յիմար,
Ու լալիս ես դու էդպէս սրտաճաք...
Հանգի՛ստ կաց, քուրի՛կ, մի վախիր էդքան,
Գեանքը քեզ համար վառ գարուն է դեռ,
Էդ քո նորահաս մատաղ կուսութեան
Առաջև դեռ կան երջանիկ օրեր։
Սուտ բան է, քուրի՛կ, դու մի հաւատար,
Լոկ պատահական մի չար խօսք է սա.
Սիրտդ մի՛ կոտրի սուտ բանի համար,
Քու խաղդ խաղա, ջան գիւլում ասա։

(Նումքը երգում է)

Աղջի բախտաւո՛ր,
Երնէկ քու սէրին,
Քու սարի սովոր
Սև-սև աչերին։

Համբարձում, եա՛յլա,
Եա՛յլա, ջան, եա՛յլա,
Սէր-օրեր, եա՛յլա,
Եա՛յլա ջան, եա՛յլա։

Մեռնեմ գարունքիդ,
Մաղկած գարուն ես,
Սարի պէս մէջքիդ
Կանգնած եար ունես։

Համբարձում, եա՛յլա.
Եա՛յլա ջան, եա՛յլա,
Սար-եարեր, եա՛յլա,
Եա՛յլա ջան, եա՛յլա։

(Անուշ մենակ)

Ա՜խ, իմ բախտը կանչում է ինձ,
Ջեմ հասկանում դէպի ուր...
Դոզում է պաղ նրա ձէնից
Իմ սիրտը սև՝ ու տխուր։

Դուք էլ, սարի սիրուն ծաղկունք,
Թաքուն մի ցաւ ունիք լուռ,
Աչիկներդ լիքն է արցունք,
Սիրտներդ սև ու տխուր։

Ա՜խ, ծաղիկներն էս աշխարհքում
Տանջւում են միշտ էսպէս դուր,
Տրորւում են ու թառամում
Սիրտները սև՝ ու տխուր։

(Խումբը հեռից)

Համբարձում, եայլա,
Եայլա ջան, եայլա,
Վառ ցաւեր, եայլա
Եայլա ջան, եայլա։

ԵՐԲՈՐԴ ԵՐԳ

XII

Զմրան մի գիշեր կար մի հարսանիք,
Հրճւում էր անգուսպ ամբոխը գիւղի.
Գիւղն էին իջել հովիւ պատանիք՝
Աղջիկ տեսնելու, պարի ու կոխի։
Ու պարից յետոյ լէն հրապարակ
Բաց արին մէջ տեղն արձակ գլխատան,
Զուռնաչին փչեց կոխի եղանակ,
Ահել ու Զահել իրարով անցան։
Հարայ են տալի—«քաշի՜ հա, քաշի՜...»
Ու դուրս քաշեցին զօռով երկուսին.
Մինը մեր Սարօն, իսկ միւսն Անուշի
Անդրանիկ եղբայրն՝ դառնարած Մօսին։

Ողջ գիւղը կանգնեց պարսպի նման,
Ջոկուեց, բաժանուեց երկու բանակի,
Ամեն մի բանակն ընտրեց փահլևան,
Կանգնեց թիկունքին տղերանց մէկի։
Գոռում են, գոչում երկու բանակից.
—Սրտապինդ կացէք, մի՛ վախէք, տղե՛ր։
Իսկ նորեկ հարսի փարդի քամակից
Նայում են կանգնած հարսն ու աղջկերք։
Ու տաքանում են տղերքը սաստիկ,
Փէշերը հաւաք խրում են գոտին,
Գետին են զարկում ձեռքերը հաստլիկ,
Իրար են հասնում թափով մոլեգին...
Աղաթ կայ սակայն էն մութ ձորերում,
Ու միշտ հնազանդ հնոց աղաթին,
Ամբոխի առջև իգիթն իր օրում
Գետին չի զարկիլ ընկեր իգիթին։
Ու իրար բռնած Սարօն ու Մօսին՝
Գաշում են, ընկնում խոզապարկուկի.
Ընկնում են գետին, ելնում միասին,
Դժւար է իբրև յաղթել մէկ-մէկի։
Իզուր է գոռում ամբոխը հարբած,
Զուր սրտատրոփ նայում աղջիկները,
Եւ զուր է Անուշն իր շունչը կտրած,
Սառել ու կանգնել ինչպէս մի պատկեր։
Անուշը կանգնած... Սարօն նկատեց,
Թունդ առաւ սիրտը ու զարկեց արագ.
Աչքերի առջև մըլարը պատեց,
Մոռացաւ ընկեր, աղաթ ու աշխարք։
Ու մինչդեռ Մօսին ընկերախաղի,
Կատակի տալով թողած էր իրեն,
Այժ արաւ Սարօն, ծնկեց կատաղի,
Գետնեց ընկերին ու չոքեց վրէն։
Ամբոխը թափուեց հարա-հրոցով,
Վեր թոցրեց ջահել փահլևաններին,
Եւ ուրախութեան աղմուկ գոռոցով
Յաղթողին փեսի թախտի մօտ բերին։
Ցնծութեան ձայնից, ծափերի զարկից
Շարժւում են դողում պատեր ու օճրք.
Իսկ նորեկ հարսի փարդի քամակից
Նայում են կանգնած հարսն ու աղջկերք։

XIII

Վեր կացաւ Մօսին. իրեն կտրատում,
—Թող գա՛յ, գոռում է, որ բռնենք նորից,
Թէ չէ նամարդը, արեւ եմ երդւում,

էլ չի պրծնելու երբէք իմ ձեռից։
Վէր չի գցել ինձ... ինձ խաբել է նա...
Մէյդան բաց արէք, թող մին էլ մէջ դայ...»
Ու ամեն կողմից ուրախ հըրհըռում,
Թունալի ծաղրով կանչում են, գոռում.

—Չէլաւ, էդ չէլաւ,
Վէր չի գցել դեռ,
Մօսին թօլ էլաւ—
Խողապարկուկ էր...
Հա՛, հա՛, հա՛, տղերք,
Շատ էլ լաւ կանի.
Մէջքը թափ տուէք,
Թող մին էլ բռնի...
Հա՛, հա՛, հա՛, տղերք,
Մէջքը թա՛փ տուէք...»

XIV

Եւ աղմկալի հարսանքի տանից
Դուրս եկաւ Մօսին սաստիկ վիրաւոր.
Արիւն է կաթում սեակնած սրտից,
Դնում է շտապ, քայլերը մոլոր։
—Ամօթ քեզ, Մօսի, թուք ու նախատինք,
Ամօթ քեզ նման գոված իգիթին,
Մի անունդ յիշիր, մի բոյիդ մտիկ.
Դեռ քու թիկունքը չէր տեսել գետին։
Ի՞նչպէս վէր ընկար դու տարի նման,
Երբոր նայում էր ողջ գիւղը կանգնած...։
Դո՜ւ... կուչ գաս տակին Սարօի ծնկան,
Նրանից յետոյ երեսս կանանց...
Եկած էր էս բանն խակի քու գլխին...
Ծաղրատեղ դառար բովանդակ գեղին...
Դէ մեռիր էլի, գետինը մտիր,
Տանը վէր ընկիր, իլիկ պըտըտիր...»

XV

—Վա՜յ, վա՜յ, Մօսի ջան, ինձ մի սպանիր,
Սրանից յետոյ չեմ սիրիլ նրան...
Վախենում եմ ես... դամէդ տեղը դիր...
Սիրտս դողում է տերևի նման...»
Խնդրում էր լալով եղբօր առաջին
Անզօր ու դալուկ իր քոյրը չոքած.
Մօսին՝ փայլկըտուն խանչալը ձեռին՝
Ուզում էր մորթել նրան աչքը բաց։
—Դէ իմ անունով երդւիր, անզգամ,
Որ էլ Սարօին դու չես սիրելու,

Թէ չէ՝ տեսնում ես խանչալը հանած,
Մինչև դաստակը սիրտդ եմ խրելու։
—Քու ոտի հողն եմ, Մօսի ջան, Մօսի,
Դու քու եսիրին երդում ես տալիս...
Ես էլ Սարօին չեմ սիրում՝ ասի,
Տեսնում ես չոքած ինչպէս եմ լալիս...
—Դու խաբում ես ինձ, սուտլիկ խաբեբայ.
Չե՞ս սիրում ասիր. էն ինչ է հապա,
Էն ինչ է հապա, որ տեղն ենք մտնում՝
Հեկեկում ես դու գիշերայ մթնում.
Էն ինչ է հապա, որ դու երազում
«Սարօ ջան, Սարօ, Սարօ» ես ասում...
—Մօսի ջան. Մօսի, գլխովդ շուռ գամ.
Ինձ մի սպանիր, ինձ թող էս անգամ.
Էլ չեմ սիրիլ ես, երբ դու չես ուզում,
Էլ չեմ կանչիլ ես նրան երազում...
Ինձ մի սպանիր, դամէդ տար հեռու...
Քու քոյրը չեմ ես... իմ Մօսին չե՞ս դու...

XVI

Ու էն հարսանքից թշնամի դարձան
Ախպէր տղերքը էս դէպքի համար.
Ընկեր, բարեկամ գնացին, եկան,
Կրկին հաշտութեան չեղաւ մի հնար։
Անկոտրում Մօսին էլ ո՞ր Մօսին էր,
Որ աչքը դեռ բաց, էս լուս աշխարքում,
Իրեն հարազատ քրոջը տեսնէր
Նամարդ ընկերի՝ Սարօի գրկում։
Գուցէ գիշերս էլ՝ իր հերսից անքուն՝
Ուզում է ՝ջահել քրոջն ըսպանի,
Սարօի անունն ու սէրը թաքուն
Խանչալի ծէրով սրտից հանի։
Ով գիտի, գուցէ հենց էս գիշեր էլ
Իգիթ ոսոխներն, անհաշտ ու յամառ,
Մէկմէկու հօտից ոչխար են քշել,
Մէկմէկից վրէժ առնելու համար։
Կարող է նոյնպէս պատահել յանկարծ,
Որ մէկի դէզը, արդիւնքը հնձի,
Գիշերայ ժամին հրով բռնկած՝
Երկնահաս բոցով աստղերը խանձի։

ՅՈՐՔՈՐՎԻ ԵՐԳ

XVII

Ամպերը գանգաղ ուզտերի նման՝
Նոր են ջուրը խմած ձորից բարձրանում.
Քարտ Թիկունքից Զաթինդաղ լերան
Նոր է արևը պռունգը հանում։
Գիւղում ագմուկով իրար են անցնում
Գառեր ծէրերին կանայք հաւաքած,
Տղերքը դէպի քարափն են վազում՝
Հրացանների կիսերից բռնած։

XVIII

Եկաւ վիթխարի ծերունի մի մարդ,
Կանգնեց վրդովւած տղերանց միջին.
Մառը դէպի ձոր մեկնելով հանդարտ՝
Էսպէս նա պատմեց զօր տալով չիթխին։
—Էս գիշեր, կէսը կըլնէր գիշերւայ,
Դեռ չէի կպցրել աչքս տեղի մէջ.
Քունս էլ է կորել, ջանս էլ էն վազւայ,
Ամեն մի բանից մնացել եմ խեղճ...
Հա, հալալ կէսը կըլնէր գիշերւայ,
Շունը վեր կացաւ էս կռան վրայ.
Հէյ-հէյ կանչեցի, ձէն տուող չէլաւ.
Շունը գազազեց, շունը վեր կալաւ...
Հէյ գիդի, ասի ինքս իմ միջում,
Ի՞նչ է մնացել առաջւան տղից։
Քնում էի վաղ մենակ արխաջում,
Մի ձէն լսելիս՝ վեր թռչում տեղից...
Էն էի ասում, քնել չէի դեռ.
Կը լինէր դառը գիշերւան կէսը,
Երկու մարդկային սև կերպարանքներ
Շան առջև փախած՝ ցած իջան դէսը...
Էս որ լսեցին, դէս ու դէն ցրւած
Տղերքը ճեպով ձորը ներս մտան,
Ու մոր տակին, ճամբիցը ծռւած
Երկու մարդու թարմ ոտնատեղ գտան։

XIX

Ամբողջ մի ամիս խումբը զինավառ
Սարեր ու ձորեր ոտնատակ տուեց՝
Զորքն Սասրոյն գտնելու համար,
Որ սարերից իջաւ Անուշին փախցրեց։
Մի ամիս յետոյ տղերքն եկան տուն,
Գովելով նրա արարքը ճարպիկ.
—Հալալ է տղին, այ իդիթութիւն,
Ահա թէ ինչպէս կը փախցնեն աղջիկ։
Մենակ Անուշի ախպէրը Մասրն
Մնաց հանդերում. երդում կերաւ նա,
Ուր որ էլ լինեն՝ նրանց միասին
Գտնի, կոտորի, սիրտը հովանայ։
Մնաց հանդերում։ Եւ ահա մի օր,
Քաղուր կանանց մէջ, մթան հետ, թաքուն,
Շորերը պատռած, տխուր, գլխակոր
Անուշը ձորից եկաւ հօրանց տուն։

XX

—Աղջի, Վարդիշաղ, թէ հոգիդ սիրես,
Մի գարիդ գցիր, տես ինչ է ասում.
Աչքս խաւարի, տեսիլք դառնամ ես,
Տեսիլք եմ տեսել գիշերս երազում։
Մի մութ ձորի մէջ, մի նեղ ձորի մէջ
Անբախտ Սասրոյ ոչխարը կանգնած,
Լեզու էր առել ու խաղ էր կանչում,
Ու խաղ էր կանչում ձէն ձէնի տուած...
Մի գարիդ գցիր, թէ որդով խնդաս,
Էս երազն իսկի ես լաւ չեմ փորձել.
Ողորմած Աստուած, Քու դուռը բանաս,
Քու ոտի հողն ենք, Դու ես ստեղծել...
Անբան գառները մութ ձորի միջին
Խաղ էին կանչում ու ձէնով լալիս,
Սասրոյ նանն էլ նրանց առաջին
Աղլուխ էր առել ու պար էր գալիս...
—Աղջի, Մանիշակ, վատ բան ես տեսել,
Գարիս էլ, ահա, էնպէս դուրս եկաւ.
Էս չարն, էս բարին... Սասրն է էս էլ...
Տէ՛ս, ահա, Սասրն սև ճամբէն ընկաւ...
Աստուած խնայի Ջահել-Ջիւանին,
Աստուած խնայի իր անբախտ նանին...

XXI

Ու մեն է գալի սարերըն ընկած
Սարօն փախցրած եղջերուի նման,
Օրհասն առաջին, գնդակն ետևից,
Հանդերը՝ դժոխք, ընկերը՝ դուշման։
Եւ երբ երեկոն հանդարտիկ ու լուռ
Սարերից իջնում, խաւարն է պատում,
Նրա բայաթին ողբում է տխուր,
Ընկեր սարերին խօսում, դանդաւում։

«Բարձր սարեր, այ սարեր,
Ձէն եմ տալի «վայ», սարեր,
Դուք էլ ինձ հետ ձէն տուէք,
Իմ դարդերի թայ սարեր։

Որս եմ՝ բութէս ձեզ արած,
Ձեր ձորերին, ձեզ արած.
Կուզեմ կորչեմ անդիման,
Էս աշխարքից բէզարած։

Կորչեմ բէզար դադարգուն,
Քար-սարէսար դադարգուն,
Մեռնեմ պրծնեմ էս օրից,
Բալքի առնեմ դադար, քուն։

Ա՜խ, կը մեռնեմ, ամա նա
Վայ թէ յանկարծ իմանայ,
Ես ազատւեմ էս ցաւից,
Աչքը լալով նա մնայ։

ՀԵՏԵՎԵՔՔՔԻ ԵՐԳ

XXII

Լալիս է Անուշն երեսին ընկած,
Կանգնած են շուրջը կանայք հարևան,
Ու խօսք չեն գտնում, ասեն անարդած,
Տարած, ետ բերած, անբախտ աղջկան։
Ասուած խնայեց՝ կոպիտ ախպէրը
Հեռու հանդերից դեռ տուն չէր դարձել,

Իսկ խոժոռադէմ, ալևոր հէրը
Սկսաւ փրփրած թքել, անիծել։
—«Դուրս գնա, կորի, այ լիրբ, անզգամ,
Սև ու սուգ լինի թագ ու պսակդ.
Կորի, չերևաս աչքիս միւս անգամ,
Գետինը մտնի երկար հասակդ։
Տեսար, որ նրան ատում է Մօսին,
Չեն ուզում, տեսար, նրան հէրն ու մէրդ,
Դու քանի գլուխ ունիս քո ուսին,
Որ վեր ես կենում, փախչում նրա հետ»։
Խռնուած գիւղացիք կտուրից իջան՝
Մեղմելու կոպիտ բարկութիւնը հօր,
Յայտնուեց նոյնպէս գիւղի քահանան,
Մի պատկառելի հսկայ ալևոր։
—Դուրս գնացէք. դուրս, դոչեց տէրտէրը,
Անուշը թողէք ուղիղն ինձ ասի,
Թողէք նա յայտնի իր միտքն ու սէրը,
Նրանից յետոյ բանը կը պարզի։
Մի լար, իմ աղջիկ, ինձ խոստովանիր,
Սիրում ես նրան, քու կամքով փախար...
Եթէ սիրում ես՝ էլ դարդ մի անիր,
Պիտի պսակեմ ես ձեզ անպատճառ...
—Ի՞նչ են հառաչում... էն ո՞վ էր, մի տես,
Որ դուրսը յանկարծ աղմկեց էսպէս...
Ո՞վ է սպանել... Մօսի՞ն... ո՞ւմ... ո՞ւր...
—Անո՞ւշ, հէյ Անո՞ւշ... ջո՞ւր հասցրէք, ջո՞ւր...»

XXIII

Ինչպէս մի հեղեղ վեր կենալ յանկարծ,
Երկնքի մթնած ամպերից իջնէր,
Ինչպէս փոթորիկ սաստիկ սրընթաց,
Գիւղից սլացան մի խումբ կտրիճներ։
Ցաւից տաքացած էլ բան չեն հարցնում,
Թռչում են, ասես, ահից հալածուած,
Ու նրանց առջև ահռելի բացւում,
Թշղում է ձորը արիւնով լցուած։
Գիւղը դատարկւեց մի ակնթարթում,
Քարափի գլխին կանգնած անհամբեր,
Լռւռ, սրտատրոփ ականջ են դնում,
Նայում են ներքև... ձէն չի գալի դեռ.
Դեբեղն է մենակ անդնդում՝ յուզուած՝
Խլաձայն ողբով սողում դէպի ցած։

XXIV

Ու մարդասպանը դուրս եկաւ ձորից,
Դէմքը այլայլուած, քայլուածքը մոլոր.
Սարսափ է կաթում արնոտ աչքերից,
Եւ կերպարանքը փոխուած է բոլոր։
Առանց նայելու մարդկանց երեսին,
Առանց խօսելու, սևակնած, դաժան,
Մօտեցաւ սրահին, կախ տուաւ սրնին
Սև հրացանը՝ սև օձի նման։
Պապանձուեց նոյնպէս ամբոխը մեխուած,
Ոչ ոք ծպըտալ չի համարձակւում,
Մենակ մի հոգի անզուսպ կատաղած՝
Հարայ է կանչում, երեսը պոկում։
Մեռած չորանի պառաւ նանն է նա՝
Ցաւից խելագար բառաչում, լալիս.
Տարաբախտ ծնող, վազում է ահա,
Ձորիցն է տխուր գտոցը գալիս։

XXV

Սգաւոր կանայք նրա ետևից
Հարայ կանչելով ձորը վազեցին,
Իրենց կորցրածն էլ յիշելով նորից՝
Դիակի շուրջը կարգով շարուեցին։
Լպիթին վայել սրտառուչ ողբով
Լաց ու կոծ արին՝ ձէն ձէնի տուած.
Տղերքն էլ մթին, լուռ ու գլխակոր,
Մնացին մօտիկ քարերին նստած։
Ողբացին անշունչ դիակի վրայ՝
Անտէր մնացած ոչխարի մասին.
Անսիրտ անէծքով յիշեցին նրա
Անճար մնացած խեղճ եարի մասին։
Եւ նրա մասին, որ ընկերները
Հանդը գնալիս՝ Սարօ կը կանչեն,
Որ սարից փախած սոված շները
Կտերը պիտի ոռնան, կլանչեն։
Ծանր չոմբախը, գլուխը մեխած,
Օճորքում դրած պիտի մրոտի,
Երկար խանչալը, պատիցը կախած,
Պատենում մնայ ու ժանգը պատի...
Որ հով սարերի սովորած նանը
Էլ սար չի գնալ առանց Սարօի,
Սև շորեր հագած կը նստի տանը,

Անցած օրերը միտը կը բերի,
Եւ ամեն մի խօսք, մի յիշողութիւն
Կտրատում էին սիրտը ծեր նանի,
Եւ աղաչում էր նա մեռած որդուն՝
Մի անգամ խօսի, աչքը բաց անի։
—Ընչի՞ չես խօսում, ընչի՞ չես նայում,
Իմ օր ու արև, կեանք ու ջան՝ որդի,
Դու իմ գերեզմանն ընչի՞ ես խլում,
Թշնամի՞ որդի, դաւաճան որդի...»
Բայց չէին բացւում աչքերը փակւած,
Շուրթերը սառել, չորացել էին,
Երանց արանքից ատամները բաց՝
Սիպտակ շարքերով երևում էին։
Ու նա կատաղած՝ յանդուգն անէծքով
Մառս եղաւ դուշման երկնքի դիմաց.
Եւ հայհոյում էր, և կուրծքը ծեծում,
Եւ լալիս էին ձէն ձէնի տւած...
«Կարմիր արևից ընկած, Սարո ջան,
Կանանչ տերևից ընկած, Սարո ջան...
Արևս հանգաւ, Սարո ջան,
Գիշերս ընկաւ, Սարո ջան...»
Գիշերը իջաւ, թանձրացաւ մութը,
Եւ նւաղեցին ձէնները տրտում,
Ցոգնեցին, հանգան... Ծերուկ Դերեզը
Սգում էր մենակ խաւար անդնդում։

Սգւոր գետը՝
Ծեր Դերեզը,
Սիրտը քրքրած,
Ջուրը փրփրած,
Քարոտ ափին,
Լեռ քարափին
Դեռ ծեծում է,
Հեծեծում է...

XXVI

Եւ մի քանի ընկեր տղերք
Ջորում, գետի եզերքին,
Փոս փորեցին ու սրտաբեկ
Հողին տւին հովի դին։
Մառ ու ծաղիկ սրւսրւալով՝
Բոյը խնկեցին դիւրեկան,
Ծեր Դև-բեդն էլ ահեղ ձէնով
Երգեց վսեմ շարականն։

Ու տղերքը տխուր ու լուռ
Վերադարձան դէպի տուն,
Զորում թողած մի սև բլուր,
Մի գերեզման անանուն։

ԱԾՑԵՐՈՐԴ ԵՐԳ

XXVII

Գարունը եկաւ, հաւքերը եկան.
Սարեր ու ձորեր ծաղիկներ հագան.
Մի աղջիկ եկաւ, մի մենակ քաղուր,
Գետի եզերքին շրջում է մոլոր,
Շրջում է մոլոր, խնդում ու լալիս,
Երգեր է ասում ու մանն է գալիս։

—Սիրուն աղջիկ, ինչ ես լալիս
Էդպէս մենակ ու մոլոր,
Ինչ ես լալիս ու մանն գալիս
Էս ձորերում ամեն օր։
Թէ լալիս ես՝ վարդ ես ուզում,
Մայիս կը գայ, քիչ էլ կաց,
Թէ լալիս ես՝ եարդ ես ուզում,
Ա՜խ, նա գնաց, նա գնաց...
Արտասուելով, լալով էդպէս
Ետ չես դարձնի էլ գերիդ,
Ինչու՞ իզուր հանգցնում ես
Ջահել կրակն աչքերիդ։
Նրա անբախտ շիրմի վրայ
Պաղ ջուր ածա աղբիւրի,
Դու էլ գնա նոր սէր արա,
Էսպէս է կարգն աշխարհի։

—Շնորհակալ եմ, անցեալը ախպէր,
Աստուած պահի քու եարին.
Ճամբիդ վերջում կ՚անգնած է դեռ
Անուշ ծիծաղն աչքերին...
Ուրախ սրտով դուք ձեր սէրը
Վայելեցէք անթառամ,
Ինձ արցունք է տուել Տէրը,
Ես պիտի լամ, պիտի լամ...»

Ու ման է գալիս,
Երգում ու լալիս։
Երգերը անկապ, երգերը տխուր,
Արցունքի նման հոսում են խզուր.
Բայց լալիս է նա ու երգեր ասում,
Ու միշտ էն անմիտ տրտունջն է խօսում,
Թէ ինչպէս յանկարծ աշխարքը փոխուեց,
Ինչպէս դատարկուեց կեանքում ամեն բան,
Սարերը մնացին որը ու անչոքան,
Թէ ինչպէս յանկարծ նա գնաց հեռու,
Էլ չի՛ դառնալու, էլ չի՛ դառնալու...

«Ե՛տ դառ, նետ, խզիթ,
Ե՛տ դառ, անիրաւ,
Կարօտած եարիդ
Աչքը ջուր դառաւ։
Ոչխարդ էն տարով
Շո՛ւռ տուր, տո՛ւն արի,
Փախիր գիշերով
Ու թաքուն արի...

Ա՛խ, էն կանանչ սարի լանջին
Ո՞վ է քնած էն տղէն,
Վրէն քաշած սև եաֆնջին,
Կուռը հանած էն տղէն...
Ջա՛ն, իմ եարն է, ջանին մեռնեմ,
Ծաղկի հոտով նա հարբել,
Սարի լանջին, հովի միջին
Մուշ-մո՛ւշ, անուշ մրափել։

Վեր կաց, վե՛ր, խզիթ,
Վեր կաց, անիրաւ,
Ոչխարդ բեր կիթ,
Օրը ճաշ դառաւ...
Արի՛, ջա՛ն, արի՛,
Քու դալուն մեռնեմ,
Թո՛ւխ չորան, արի՛,
Կարօտս առնեմ...

Տեսէք, տեսէք, դալ ու դուռնով
Ի՞նչ հարսնիք է գուրս գալի,
Մարդիկ ուրախ, թոն ու ձիւնով
Չի՛ են խաղում, չափ տալի...
Աղջի՛, աղջի՛, մտիկ արէք,
Էս ի՞նչ տեսիլք ես տեսայ.

Մ՞վ էր տեսել էսպէս հարսնիք—
Մ՞չ հարս ունեն, ո՞չ փեսայ...

Բերում են հրէն,
Ամա՛ն, մեր տան դէմ...
Վէր դրէք, վրէն
Հիւսերս քանդեմ...
Ես էլ եմ գալիս,
Էդ ո՞ւր էք տանում...
Ինձ էլ թաղեցէք
Իր գերեզմանում...

Ա՜խ, չէ՞, ամա՛ն, ասում են դա
Մի դիակ է լո՞ւռ, սառած,
Արիւնը չոր դէմքի վրայ,
Աչքերն անթա՛ր, սիպտակած։
Նա սիրուն էր, անուշահոտ,
Աչքերը լի ծիծաղով,
Նա գալիս էր ցողոտ, շաղոտ,
Հանաքներով ու խաղով...

Արի՜, ջա՛ն իգիթ,
Արի՜, անիրա՛ւ,
Կարօտած եարիդ
Աչքը ջուր դառաւ։
Էլ մի՞ ուշացնի,
Ես շատ եմ կացել,
Էլ մի՞ լացացնի,
Ես շատ եմ լացել...

Տե՛ս, կը խռովե՛մ,
Լաց կըլեմ ես էլ...
Չեմ խօսիլ քեզ հետ...
Չեմ սիրիլ քեզ էլ...»

XXVIII

Անլռելի վըշվըշում է
Պղտոր ջուրը Դեբեդի,
Նրա ափին կանգնում է
Մենակ շիրինն իգիթի։
Նրա շուրջը հէգ սիրուհին
Թնդացնում է ողբ ու լաց,
Զէն է տալիս իր Սարօին
Ու պըտըտւում մոլորուած։

Ու հոսում է գիշեր-ցերեկ
Արցունքն անբախտ աղջկայ,
Բայց իր սիրած տղան երբէք
Չը կայ, չը կայ ու չը կայ...
Վըշվըշում է գետը—վուշ, վուշ,
Ու յորձանք է տալիս յորդ,
Ու կանչում է՝ «Արի՛, Անո՛ւշ,
Արի՛, տանեմ եարիդ մօտ...»
—Անո՛ւշ, այ աղջի՛, Անո՛ւշ, տո՛ւն արի...»
Կանչում է մէրը վերևից, կանչո՛ւմ.
Լո՛ւռ են ձորերը, լո՛ւռ են ահռելի,
Դուշման Դեբեդն է մենակ մըռընչում։

Վուշ-վուշ, Անո՛ւշ, վուշ-վուշ, քուրիկ,
Վո՛ւշ քու սէրին, քու եարին,
Վուշ-վուշ, Սարո՛, վուշ-վուշ, իգիթ,
Վո՛ւշ քու սիրած սարերին...

XXIX

Համբարձման գիշեր, էն դիւթիչ գիշեր,
Կայ հրաշալի, երջանիկ վայրկեան.
Բացւում են ոսկի երկնքի դռներ,
Ներքև պապանձում, լռում ամեն բան,
Ու աստուածային անհաս խորհրդով
Լցւում բովանդակ Նրա սուրբ գթով։

Էն վեհ վայրկենին չքնաղ գիշերի՝
Երկնքի անհո՛ւն, հեռու խորքերից
Անմուրաղ մեռած սիրահարների
Աստղերը թռած՝ իրար են գալիս.
Գալի՛ս՝ կարօտով մի հեղ համբուրւում՝
Աշխարհքից հեռո՛ւ, լաղուր կամարում։

Յով. Թումանեան

ԴԵՌ

Մ. Լերմոնտով

Հատուածներ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Տխրագին Դևը, արտաքսված հոգին,
Թռչում էր օդում մեղապարտ երկրի,
Եւ նրա մտքից անցանում էին
Յիշատակները այն քաղցր օրերի,
Երբ Քերովբէի պէս՝ էր նա լուսաւոր
Աշխարհի անմեղ բնակարանում,
Երբ որ գիտութեան փափագով լցուած՝
Նայում էր մռայլ տարածութեան մէջ,
Ինչպէս բազմաթիւ աստղերի ցրուած
Կարաւանները շրջում են անվերջ.
Երբ նա երջանիկ ու երանելի
Նախածին էակը ստեղծագործութեան
Ունէր սուրբ հաւատ և սէր դորովի,
Չը գիտէր կասկած, ոչ ոխ չարութեան.
Ունայն դարերի շարունակութիւնը
Չէր նրա միտքը տարտափեցնում...
Եւ այլ շատ ու շատ այսպիսի յուշեր...
Ամեն բան յիշել չէր կարողանում։

Վաղուց մերժուած, այնտեղ շրջում էր
Նա անապատում անծայր աշխարհի.
Մէկմէկու յետնից անցաղին դարեր
Անցանում էին նման բոպէի։
Մի հնչին երկրի տիրապետելով,
Ակամայ կամքը չարիք էր թափում,
Բայց ոչինչ ընդդէմ իր չը տեսնելով,
Նա չար գործերից դադարեցաւ իսկոյն։

Եւ Կովկաս լերան գագաթի շրջով
Արտաքսուած հոգին անա թռչում էր.
Կազբեկը նրա տակ մշտապատ ձիւնով
Ադամանդի պէս փայլատակում էր.
Եւ անա Դարեալ գետը գալարուն,
Մի օձաբնակ ճեղքուածքի նման,
Լեռների ներքև խորին անդնդում
Ներկում է սև սև մի շերտիկ երկայն.
Իսկ Թերեքն ասես, մի առիւծի պէս,
Թաւամազ բաշը թիկնով ծաւալած,
Վեր վայր ոստնելով մեծապանծ ու վէս՝
Գոռում էր, թնդում սաստիկ կատաղած.
Թէ ժայռերի վրայ լեռնային գազան,
Թէ կապոյտ երկնում պտոյտող թռչուն
Ուշ էին դնում սրտով բերկրութեան
Նրա ջրերի անոյշ ձայներուն։
Ոսկի ամպերը հարաւի կողմից
Կարծես ձայներուն ուղեկից էին,
Ժայռերը խմբով խորին լռութեամբ
Փայլուն ալիքներ նկատում էին.
Աշտարակները ժայռերի ծայրին
Խիստ նայում էին ամպերի միջով.
Կովկասու ասես դրան մօտ կային
Պահապանները բարձր հասակով։
Ամենայն կողմով Աստծոյ աշխարհը
Ե՛ւ վայրենի էր, և՛ հրաշալի,
Բայց անարգանօք նայում էր դէպ
Արարչութիւնը իր Ստեղծողի։

Գուդալն ալեոր շինեց իր համար
Մի տուն բարձրաշէն, մի բակ շրջակայ...
Շատ ջանք, արտասուք թափել են երկար
Նրա ճորտերը այն շէնքի վրայ։
Նրա պատերը ձգում են ուժեր
Լեռների վրայ վաղ առաւօտուն,
Ժայռից կտրած են տաշած սանդուղներ,
Որ աշտարակից գետափ են տանում։
Իշխանի դուստրը՝ մատաղ Թամարը,
Երեսը ծածկած սպիտակ քողով,
Գնում է հանել Արագւի ջուրը,
Այն սանդուղներից վայր իջանելով։

Միշտ բոցաժայռի ժայռերից դէպի ձոր
Այն խաւար տունը նայում էր յոռի,
Բայց այնտեղ մի մեծ խնջոյք կայ այսօր,
Հնչում է զուռնան, լցուում են գինիք,
Իր մի հատ դուստրը Գուդալ նշանեց,
Ուրախ խնջոյքի իր ողջ ընտանիք.
Տան յարկի վրայ՝ գորգապարդ ու մեծ,
Հարսի հետ նստած են ընկերուհիք.
Ուրախ խաղերով, անոյշ երգերով
Անցանում է շուտ օրը կարճատև,
Արդէն արևի կէս բոլորակը
Ծածկած է հեռու լեռների յետև։
Երգում են նրանք ծափ հարկանելով,
Եւ մատաղ հարսը իր դափն է առնում՝
Ու գլխի վրայ պտոյտ բերելով՝
Թուշունից թեթև վեր վայր է ոստնում.
Կամ յանկարծ կանգնում,
Զորս կողմն է նայում,
Եւ նախանձայոյզ արտևանց տակից
Արտօսրով թրջած աչքերն են փայլում.
Մերթ շրջեցնում է իր սև յօնքերը
Եւ մերթ դէպի վայր կորանում է նա,
Եւ չնաշխարհիկ նրա ոտները
Սահում, սլանում են այն գորգի վրայ,
Եւ մի մանկական բերկրութեամբ լցուած՝
Ծիծաղում է նա։
Սակայն գողգոջուն ջրի երեսին
Լուսնի նշոյլը խաղալով հեզիկ,
Հազիւ կարող է այն նրա ժպտին
Լինել հաւասար, այնպէս գեղեցիկ.
Կեանքի պէս ժիր էր
Քաղցր ժպիտն այն,
Առոյգ ու զարթ էր
Մանկութեան նման։

Վկայ է աստղը՝ կէս գիշերային,
Վկայ են ելքն ու մուտքն արևու,
Որ ոչ մի իշխան պարսից աշխարհին
Չէ տեսել համբոյր նման աչերու։
Տաք օրերի մէջ, ոչ մի ժամանակ
Հով շատրւանը Շահի հարեմում
Չէ զովացրել այդպիսի հասակ
Մարգարտանման ցօղոմն իր փայլուն.
Դեռ ոչ մի անգամ երկրային ձեռներ

Զնն հիւսել նման գեղեցիկ մազեր.
Քանի որ դրախտը աշխարհից գնաց,
Երդւում եմ, որ դեռ ոչ մի ժամանակ
Այդպէս գեղեցիկ մի կոյս չէ ծաղկած
Հարաւոյ կողմի արեգակն տակ։

Դեռ նայում էր... յանկարծ իր սրտում
Զգաց խռովութիւն մի անմեկնելի.
Դատարկութիւնը անդդայ հոգում
Լցւեցաւ ձայնով մի շնորհալի.
Նորից իմացաւ սէր ու սրբութիւն,
Գեղը և բարին ճանաչեց նորից,
Եւ զմայլում էր երկար ժամանակ
Պատկերի քաղցր երևութներից։
Իր անցած բաղդի յիշատակները
Անընդհատ կարգով ու երկարատև,
Գլորւում էին առաջը նրա,
Կարծես թէ աստղեր մէկ մէկու յետև։
Անտեսանելի զօրութեամբ կապւած՝
Մի նոր այլ վշտի նա ծանօթացաւ,
Զգացողութիւնը նրա մէջ յանկարծ
Հարազատ լեզուով կարծես խօսեցաւ։
Վերածնութեան արդեօք նշան էր.
Նա այլ չէր կարող գտանել մտքում
Փորձանք պատճառող նենգութեան խօսքեր.
Թէ մոռացել էր.
Չէ, մոռանալը Աստուած չէ տուել,
Տւած իսկ լինէր, նա այդ չէր առել։
. . . . . .

Իր հաւատարիմ նժոյգը տանջելով,
Արևի վերջին շողերն հանգչելիս՝
Ահա անհամբեր և շտապելով
Փեսան հարսանեաց ինջոյք է գալիս...

Երկու մարդկային սև կերպարանքներ
Նրա առաջը յանկարծ երևցան,
Եկան բազմեցան յետոյ ուրիշներ,
Զգւեցաւ իսկոյն սաստիկ հրացան...
Ի՞նչ եղաւ արդեօք... Իշխանն անվեհեր
Ասպանդակների վրայ կանգնած էր,
Յօնքերի վրայ փափախը քաշած,

Ամենայն անբարբառ, ապշած նայում էր.
Փայլեցաւ ձեռքին հզկգն հրացանի,
Մարմինը շաչեց և արձի նման
Տառաջ արշաւեց ուժով սոսկալի,
Բայց դարձեալ անա թնդաց հրացան.
Իսկոյն մի գոռիւն, խորին հառաչանք
Հնչեցին բոլոր ծորձորի միջում,
Երկչոտ վրացիք փախչել սկսան,
Վերջացաւ կռիւն այն իսկ միջոցում։

Այժմամից արագ ձին սլանում է,
Եւ փնչացնելով
Ու կտրտելով
Դէպի պատերազմ կարծես դիմում է.
Երբեմն յանկարծ
Ռունգերը բացած,
Դանդնում լսում է հողմի շնչումները.
Երբեմն էլ ասես
Կայծ ու հուր դարձած՝
Դեռնին զարկելով հնչող պայտերը,
Բաշն է թօթափում,
Եւ առանց խելքի յառաջ է վազում։
Ձիաւորը լուռ վրան է նստած,
Եւ բաշի վրայ գլուխը դրած,
Վեր վայր է ընկնում.
Ասպանդակներում ոտները բռնած,
Ոտնձերը ձիու կարծես չէ վարում։
Եւ գլխիցն ասես
Մի աղբիւրի պէս՝
Արիւնի առատ հեղեղ է թափում։
Թռչունն երիվար, դու քո տիրոջը
Թռուցիր կռւից մի նետի նման,
Բայց Օսէթինի ահեղ գնդակը
Հասաւ քամակից խուսափումն անդամ։

Գուդալի տանը տիրեց սգը ու լաց,
Լցաւ ամբոխը դաւթում անհա.
Որի ձին արդեօք այդպէս կատաղած,
Եկաւ ու ընկաւ քարերի վրայ։
Եւ ով է անշունչ այն ձիաւորը,
Համեղերձն ու գէնքը արիւնաթաթախ,
Որի խորշոմած դէմքը թխագոյն
Արտայայտում է զարհուրանք ու վախ։

Վաղուց չէր, ով հարս, որ քո աչքերը
Սպասում էին փեսայի դալուն,
Վաղուց չէր, ով հարս, որ քո թարմ սիրտը
Ուրախությունից երկինք էր թռչում,
Կատարեց իր խոսքն իշխանը մատաղ,
Ճեպեց ձիընթաց հարսանեաց ինջոյք,
Բայց այսուհետև, աւաղ, բիւր աւաղ,
Էլ չի հեծնելու նա ոչ մի նժոյգ։

Կայծակի նման պատիժն երկնի
Ընկաւ այն անհոգ ընտանեաց վրայ.
Կիսաշունչ ընկած վրան անկողնի՝
Դառն լալիս է թամարը թշուառ.
Բղխում է արտօսր աչքերից նրա,
Շնչում է կուրծքը ծանր ու երկար...

ՄԱՅՆ ԵՐԿՐՈՐԴ

Թող, հայր իմ, ով հայր, քո սպառնալիք,
Մի յանդիմանիլ քո խեղճ թամարին,
Տես, լաց եմ լինում։ Եւ այս արտասուք,
Որ դու տեսնում ես՝ դա չէ առաջին։
Իմ խօսնայրներուն ասա դու միայն,
Որ ես ոչ ոքի կին չեմ լինելու.
Մոնաւ երկիրը խլեց իմ փեսան,
Էլ ես ուրիշին սիրտս չեմ տալու։
Այն օրից յետոյ, երբ մենք լերան տակ
Թաղեցինք նրա դիակն արիւնոտ,
Վատ ցնորքներով հոգին խորամանկ
Ինձ պատրաստում է աղմուկ ու շփոթ.
Լուռ գիշերի մէջ վրդովում են ինձ
Անթիւ երազներ տարօրէն, տրտում,
Միտքս հեռու է բառի հնչիւնից,
Օրէ ցօր մաշւում և թառամում եմ.
Հոգիս կրում է ասատիկ տառապանք...
Գթա ինձ վրայ, հայր իմ, խնդրում եմ.
Անմիտ աղջիկդ տար դու մի տուրբ վանք։
Փրկիչն ինձ այնտեղ պաշտպան կը լինի.
Սրտիս անձկութիւն կը յայտնեմ նրան.
Արդէն այս կեանքում ունայն աշխարհի
Խնդութիւն, բերկրանք ինձ համար չը կան...
Թող նախ առաջուց
Ինձ մատյլ մի խուց
Ընդունէ իր մէջ՝ իբրև մի դագաղ,
Պահէ ինձ անբիծ, հանգիստ ու խաղաղ։

Մեռոզը նրան տարան մենաստան,
Դուրսը ծածկեցին ջուրձով կուսական.
Բայց գարնանալ այնպէս սիրտը բաղխում էր
Ձմեռ միանձնական պատանեկի տակ,
Եւ չէին պատկաս ամօրէն մարմիր,
Ինչպէս հագնելիս ճամկաւոր դիպակ։
Սնդանի առաջ մոմերը ողջ վառ,
Երգեցողութեան փառաւոր ժամում
Լսում էր նա մի շատ ծանօթ բարբառ՝
Շատ ու շատ անգամ աղօթքի միջում։
Մռայլ տաճարի կամարի տակով,
Անձայն և անխօս մի ծանօթ պատկեր
Աչքի առաջից յանկարծ սահելով,
Նոյն այդ բոպէին անհետանում էր.
Եւ ամուշահոտ խունկերի ծուխում
Ասդի պէս մեղմիկ փայլատակում էր,
Հրապուրում էր նրան, և իր մօտ
Կանչում... բայց թէ ուր։

Զովաշունչ տեղում,
Բլրապատ ձորում
Կար մի մենաստան աչքից թաքուցած,
Որ սօսիների,
Կաղամախիների
Խիտ-խիտ դասերովն էր շրջապատած.
Երբ որ ձորի մէջ բաղմում էր գիշեր,
Ծառերի միջից միշտ երևում էր
Այն մատաղ կուսի
Լոյսը կանթեղի,
Որ լուսամուտում փայլատակում էր։
Եւ լսում էին թոչունի երգեր
Հով սուերներում նշենիների,
Ուր կարգով շարած կան տխուր խաչեր,
Լուռ պահակները գերեզմանների.
Սառն աղբիւրները խոխոջիւն տալով,
Քարերի վրայ ոստոստում էին,
Եւ մի ժայռի տակ ողջն հաւաքելով,
Թուփերի միջով յառաջում էին։

Շատ անգամ թամար զողզող ու տրտում
Լուսամուտի մօտ միայնակ նստած՝
Ցարակուսանքով նայում էր հեռուն
Եւ խոր հառաչում հոգով վհատած։

«Կը գայ նա շուտով», կարծես ասում էր
Մի անյայտ էակ նրա ականջին.
Ահա ինչու էր, որ շատ երազներ
Ցնորքով նրան փաղաքշում էին.
Ահա ինչու էր, որ ամեն բոպէ
Նրա առաջն էր գալիս մի պատկեր,
Արդէն վաղուց է նա սառապում է.
Բայց ինչու արդեօք՝ ինքը չը գիտէր.
Երբ որ սուրբերին աղօթել կամէր,
Սիրտը նրան էր դառնում աղօթքով։
Երբ որ վաստակած անկողին կընկնէր,
Բարձը այրում էր՝ նրան ճնշելով։
Տխրում էր նրան սարսափ ահագին,
Վէր թռչում տեղից, նեղքին յուզումով.
Կուրծքն և ուսերը բորբոքում էին,
Ոյժը հատնում էր, շունչը ծանրանում,
Մթնում էր աչքն ու գլուխը խանդակաթ
Անցորդ էր խնդրում,
Եւ հալում էին այրող համբոյրներ
Նրա շրթունքում...

. . . . . .

. . . . . .

Երեկոն արդէն ծածկել էր բոլոր
Թանձր մռայլի օդեղէն քողով,
Թռաւ վանքի մէջ դևը նենգաւոր
Իր սովորութեան հնազանդելով։
Բայց նա խռովել չէր համարձակում
Խաղաղութիւնը սուրբ օթևանի,
Եկաւ այն բոպէն, երբ կարծես իսկոյն
Պիտ թողնէր շարքը իր չար մտքերի։
Մոլոր շրջում էր պարսպի առջև
Խոժոռ ու թախիծ,
Առանց մի հոգմի դողում էր տերև
Նրա քայլերից։
Եւ դարձոյց ահա դէմքը սոսկալի.
Տեսաւ, որ սիրուն աչքերը կուսի
Կանթեղի լոյսից փայլատակում են,
Եւ կարծես նրանք մէկի գալստեան
Վաղուց սպասում են այնպէս անհամբեր։
Յանկարծ ընդհանուր լռութեան ժամին
Մեղմով հնչեցին չոնգուրի ձայներ,
Մի անույշ երգի մեղմիկ հնչիւններ։
Ձայներն անընդհատ լցւելով լցան

Մեկ մեկու յետնից՝ արտասուքի նման,
Հիսուր մեղեդին այնքան քաղցր էր,
Եւ այնպէս ապրու հնչմունքը ձայնի,
Դարձեալ երկնքում յորինուած լինէր՝
Թովիչու համար սիրտը աշխարհի,
Հրաշալանքն արքայական ծաղուկ պատցու՝
Որ հին ընկերոջ նորից տեսնելու,
Թէ անցած բաներն երգել սկսու՝
Նրա տանջանքը փորը ինչ մեղմելու...
Առաջին անգամն էր, որ դեռ զգաց
Սիրոյ վշտերը, նեղքին վրդովմունք...
Հեռանալ կամէր անաբեկ եղած,
Բայց չէին շարժուում թեւերը նրա,
Եւ ինչ հրաշք էր, որ աչքիցն ազատ
Իսկոյն թափեցան այրող արտասուք...
Եւ մինչև ցայժմ նոյն այդ խուցի մօտ
Դայ արտասուքից այրուած մի քար...

Սիրելու պատրաստ դեռը մնում է,
Մինչև բարութեան հոգին նուիրած,
Մաքուն ասելով. արդէն հասել է
Նոր կեանքի ժամը վաղուց ցանկացած...

ԹԱՄԱՐ

Մի՞թէ դու, ասա, խօսքերդ բոլոր
Սարսափելի են.
Եւ ո՞վ քեզ ինձ մօտ ուղարկեց այսօր,
Դժոխք, թէ Եդեմ.
Ի՞նչ ես կամենում:

ԴԵՒ

Դու գեղեցիկ ես...

ԹԱՄԱՐ

Բայց ո՞վ ես, ասա՝

ԴԵՒ

Ես նա եմ ահա,
Որին դու ահով ուշ էիր դնում
Կէս գիշերային անդորր ժամերին,
Որի պատկերն էր միշտ քո երազում,
Որի վշտերը քեզ յայտնի էին.
Ես նա եմ ահա,
Որի հայեացքն է յոյսեր կործանում,
Երբ որ այն յոյսը դեռ նոր է ծաղկում,

Որ ոչ ոք նրան չէ սիրում այսօր,
Որ անիծում է աշխարհը բոլոր։
Տարածութիւնը, տարիներն անբաւ,
Բոլորն ինձ համար ոչինչ են բնաւ.
Իմ երկրային հպատակների
Խաղաղանն եմ ես,
Եւ ապաւութեան, գիտութիւնների
Թագաւորն եմ ես.
Երկնի թշնամին, բնութեան չարը,
Բոլորը ես եմ.
Բայց դու տեսնում ես, այժմ քո ուրն եմ
Ես եկել ընկել։
Ընկել եմ ահա խամեղաղատաղին
Իմ մեղսախառն սիրոյ խնդիրը,
Քեզ արտասուքս բերել առաջին,
Եւ իմ առաջին երկրային կիրքը։
Ո՜հ, գթա՛ վրաս և ականջ դիր ինձ,
Դու կարող էիր քո մի հատ խօսքով
Ինձ դէպի երկինք դարձնել նորից
Եւ դէպի բարին ուղղել շատ շուտով.
Եւ ես արդէն իսկ կերթայի այնտեղ
Զգեստաւորուած քո սիրոյ քողով,
Եւ իբրև մի նոր հրեշտակ շքեղ՝
Կը շողշողայի նորափայլ լուսով.
Ո՜հ, աղաչում եմ, լսիր ինձ միայն,
Ես քո ստրուկն եմ, ես քեզ սիրում եմ.
Երբ որ քեզ տեսայ առաջին անգամ
Այդպէս գրաւիչ և գեղեցկադէմ,
Յանկարծ ես իմ մէջ կարծես առեցի
Անմահութիւնն իմ և իշխանութիւն.
Եւ նախանձեցայ՝ ընդդէմ իմ կամքի՝
Ուրախութեանը անկատար երկրի։
Զապրելն ինձ համար ցաւալի թւաց,
Ապրելն առանց քեզ ահեղ երևաց։
Անարիւն սրտումս նորից վառեցաւ
Անապառելի կայծը ջերմութեան,
Եւ թախծութիւնը շարժիլ սկսաւ
Իմ հին խոցի տակ մի օձի նման։
Ի՞նչ է առանց քեզ յաւերժութիւնը,
Ի՞նչ է տէրութեանս անվերջ լինելը,
Եթէ ոչ դատարկ բառեր հնչական,
Եթէ ոչ տանջար առանց սրբութեան։

ԹԱՄԱՐ

Թող ինձ և լռիր, ով հոգիդ խարդախ,
Ես իմ թշնամուն չեմ ինչ հաւատում.

Աբաբիչ Աստուած... վայ ինձ և աւաղ,
Արդէն աղօթել չեմ կարողանում։
Ո՜հ, սարսափում եմ, մահաբեր թոյնով
Թուլացած միտքս շրջապատած են.
Ո՜հ, ինձ կը սպանես հոգով և մարմնով,
Քո ողջ խօսքերը թոյն ու կրակ են...
Բայց ասա, ինչու
Սիրում ես ինձ դու։

ԴԵՒ

Ասում ես ինչու, ով գեղեցկուհի,
Աւաղ, չը գիտեմ պատճառը դրա,
Միայն այն գիտեմ, որ յանկարծակի
Մի նորահրաշ կեանքով լցուեցայ,
Եւ գոռոզաբար իսկոյն հանեցի
Մահապարտ գլխիցս պսակը փշեայ,
Բոլոր ունեցածս ոտնակոխ արի,
Կամայ ակամայ ողջը մոռացայ։
Իմ դրախտն ու դժոխք աչքերիդ մէջ են.
Այնպէս կաթոգին ես քեզ սիրում եմ,
Ինչպէս դու երբէք սիրել կարող չես.
Անմահ մտքի և երևակայութեան
Բոլոր զօրութեամբ սիրում եմ ես քեզ.

ԹԱՄԱՐ

Ինձ ինչու է պէտք վշտերդ լսել,
Ի՞նչ է ա ինձ բերել զանգատ ու մորմոք.
Դու մեզք ես գործել...

ԴԵՒ

Քո առաջ արդեօք։

ԹԱՄԱՐ

Տես, մեր խօսածը կարող են լսել...

ԴԵՒ

Մենք միայնակ ենք, և չը կայ ոչ ոք։

ԹԱՄԱՐ

Իսկ Աստուած ի՞նչ է։

ԴԵՒ

Նա զբաղուած է երկնով ու երկրով
Եւ մեզ նայելու ժամանակ չունի։

ԹԱՄԱՐ

Իսկ դժոխային տանջանքը անեղ։

ԴԵՒ

Ոչինչ, դու ինձ հետ կը լինես այնտեղ։

ԹԱՄԱՐ

Ընկեր իմ անկարծ, ով դու և լինես,
Հանգստութիւնս առ միշտ մերժելով,
Ո՛վ դու վշտահար, լսելու եմ քեզ՝
Կամայ ակամայ գաղտնի բերկրանքով։
Բայց թէ խօսքերդ լի են նենգութեամբ,
Եւ եթէ ինքդ դու խաբէութեամբ...
Ո՜հ, խնայիր ինձ... ինչ փառք ինձ համար,
Քեզ ինչու է պէտք իմ հոգին թշուառ.
Մի՞թէ երկնքին թանգ եմ առաւել,
Քան թէ այն բոլոր հոգիներ արդար,
Որոնց վրայ դու ուշ չես դարձուցել.
Աւաղ, և նրանք սիրուն են ծնած.
Քանի այստեղ են, դեռ ոչ մի անդամ
Մահկանացուի ձեռք չէ մօտեցած
Անկողիններին նրանց կուսական...
Չէ, տուր ինձ երդում սաստկապէս... ասա,
Դու լաւ ես տեսնում, թախծում եմ ահա,
Տեսնում ես կնոջ երևակայութիւն
Ունայն ցնորքը երազի նման,
Բայց դու ամեն բան լաւ ես հասկանում,
Եւ դու, ի հարկէ, ինձ կը խնայես.
Երդւիր ինձ... խօսք տուր, որ այս բոպէում,
Ողջ չար գործերից հրաժարւում ես։
Մի՞թէ այլ չը կայ մեր այս աշխարհում
Մի անդրժելի երդում կամ խոստում։

ԴԵՒ

Երդւում եմ ահա ստեղծագործութեան
Առաջին օրով,
Երդւում եմ ահա նրա կատարման
Եւ վերջին օրով,
Նշանակութեամբ մեղապարտութեան
Տալիս եմ երդում,
Եւ յաղթանակը սուրբ ճշմարտութեան
Վկայ եմ բերում.
Երդւում եմ անկման գառն կսկիծով
Եւ յաղթանակի կարճատև ցնորքով,
Քեզ հետ տեսութեամբ երդւում եմ նոյնպէս,

Եւ հրաժեշտով, որ գալոց է մեզ.
Ողջ հոգիներիս ժողովարանով
Եւ իմ հպատակ միաբանների
Ճակատագրով,
Անաչառ և սուրբ հրեշտակների,
Այն է՝ իմ արքուն թշնամիների
Սուրբ սուտերով.

Երկինքը ու գժոխքը վկայ են խոսքիս,
Երկրի սրբությունը երդում եմ նորից.
Երդում եմ և քո վերջին հայեացքով,
Եւ քո առաջին ջերմ արտասուքով.
Ենչասությունը անչար բերանիդ,
Եւ մեռաքանդէն քո գանգուրներով.
Երդում եմ երկնի երանությունով.
Երդում եմ նոյնպէս դառն տանջանքով,
Վերջապէս և իմ բորբոքված սրտով.
Հրաժարեցայ ես հին վրէժից,
Հրաժարեցայ շար խորհուրդներից.
Այլ այսուհետև թոյնը նենգության
Ոչ ոքի միտքը չունի շփոթել,
Այլ այսուհետև ես միանգամայն
Կամիմ երկնի հետ հաշտություն կապել,
Կամիմ ես սիրել, ազօթել կամիմ.
Եւ զղջում տալով ես արտասուաթոր,
Քո ջինջ ճակատից քեզ արժանաւոր
Երկնային հրոյ հետքը կը սրբեմ.
Եւ թող առանց ինձ աշխարհ համօրէն
Մաղկի իր խաղաղ անդիտության մէջ:
Ո՜հ, հաւատա՛ ինձ, ես միայն այսօր
Քեզ ճանաչեցի, գնահատեցի:
Եւ քեզ ընտրելով սրբուհի ինձ նոր,
Իշխանությունն իմ ոտքիդ տակ դրի:
Քեզանից պարգև սէրդ եմ ապառում,
Նրա բոպէին կը տամ յաւիտեան.
Հաւատա, որ ես հաստատուն եմ միշտ
Նոյնպէս սիրոյ մէջ, ինչպէս չարության:
Ես, որ եթերքի ազատ որդին եմ,
Քեզ աստղերից վեր կը թռուցանեմ,
Այնտեղ աշխարհի կլինես թագուհին
Եւ նախամեծար իմ ընկերուհին.
Առանց գթության և մատնակցության
Կը սկսես նայել դու երկրի վրայ,
Ուր ոչ ճշմարիտ բաղդ կայ կենսական,
Եւ ոչ յարատև գեղեցկություն կայ.
Ուր կան պատիժներ ու մեղք լիուլի,

Ուր կեանքն անցնում է փոքրիկ կլոքերով.
Եւ ուր չը գիտեն առանց երկիւղի
Ո՛չ արհամարհել, ո՛չ սիրել հոգով,
Դուցէ չը գիտես, թէ արդեօք ինչ է
Կարճատեւ կեանքը մարդկային սեռի.
Միայն արիւնի նա վրդովմունք է,
Օրերը կանցնին, և այն կը սառի.
Ո՞վ կարէ տանել հրաժարումը,
Հրապուրանքը նոր գեղեցկութեան,
Ծանր վաստակը և անվերջ ձանձրոյթ,
Կամակորութիւնն երեւակայութեան,
Չէ, իմաստա՛ս դու, ընկեր քաղցրուհակ,
Ճակատագիրը չէ սահմանել քեզ,
Որ նախանձաւոր բրտութեան ներքոյ
Իբրև մի տորուկ, անցայտ թառամես,
Կեղծ ընկերների, թշնամիների
Կամ թէ փոքրոգի և սառ մարդոց մէջ,
Ունայն և ծանր աշխատանքների,
Անպտուղ յուսոյ երկիւղում անվերջ.
Դու չես շինված առանց կրքերի
Բարձր պատի տակ՝ լուռ և թախծալից,
Ազօթք անելով մարդկանցից հեռի,
Նոյնպէս և հեռի Աստուածութիւնից.
Ո՞հ, չէ, անմահն արարած սիրուն,
Այն չէ քեզ համար գրել օրհասը,
Քեզ ուրիշ կիրք է այնտեղ սպասում,
Ուրիշ ցնծութեան խորունկ զգացմունք.
Ճակատագրին թող դու ուրնին
Թշուառ աշխարհը, իղձերդ նախկին,
Եւ քեզ կը բանամ, նոցա փոխարէն,
Բարձր գիտութեան անդունդը խորին,
Եւ սպասաւոր իմ հոգիների
Բոլոր ամբոխը ոտքդ կը բերեմ.
Թեթեւ նաժիշտներ և սրանշելի,
Ո՛վ իմ գեղեցիկ, քեզ կը պարգեւեմ.
Եւ արեւելեան աստղից կը խլեմ
Քեզ համար շքեղ պսակը ոսկի,
Եւ բոլոր շուրջը նրա կը ցանեմ
Փայլուն ցօղովը թարմ ծաղիկների,
Արեւամոր կարմիր նշոյլով
Ժապաւէնի պէս մէջքդ կը պատեմ,
Բաղցրահոտութեան մաքուր բուրմունքով
Բոլոր շրջակայ օդը կոռոգեմ,
Եւ հիանալի նւագ հնչելով,
Նուրբ լանջերդ միշտ կը փաղաքշեմ,

Եւ մեծ պարտեզներ փոսուսուր շէնքով
Ոգեսանդուղներից կը ֆոսուցանեմ.
Եւ նա մերթ կիջնեմ ծովի յատակը,
Եւ մերթ կը թռչեմ աստղերից վերև,
Ոչնչը ըմբռ կը տամ, ոչնչը հրկրային,
Միայն սիրերը քնձ... ոչ ոք պարզև։

Եւ նա հանգարտիկ եռանդուն բերնով
Մոտեցաւ գոգդոջ նրա շրթունքին,
Եւ հրապուրական անոյշ խօսքերով
Պատասխանում էր նրա խնդիրքին։
Նրա քաջազօր ազգու հայեացքը
Կուռքն աչքի մէջ խորունկ թափանցում
Ու խորը այրում։ Ուղիղ առաջը
Դաշոյնի նման՝ հուր փայլատակում։
Եզուկ, չար հոգին արդէն յաղթել էր։
Մանարեր թոյնը նրա համբոյրի
Թամարի կուրծքը սուզուեց, վարակից...
Մի ձայն վշտագին և սարսափելի
Դիշերի խաղաղ անդորրը խախտեց...
Եւ այդ ձայնի մէջ կար ամենայն բան,
Սէր, կիրք, նախատինք և աղերս վերջին,
Եւ անյոյս ողջոյն հրաժարական
Դեռահաս կեանքին...

. . . . . .

Ահա դառ ի վեր պարսպի շրջով
Լուռ պահապանը կէս գիշերային,
Միայնակ, թափառ, հանդարտ քայլերով
Կոչնակի հետն էր շրջում միասին.
Թամարի խուցին արդէն մօտ էր նա,
Երբ որ չափաւոր քայլերը կարճեց,
Եւ երկաթեղէն տախտակի վերայ
Ազմկեալ հոգով իր ձեռքը դրեց.
Եւ շրջակայի խոր լռութեան մէջ
Կարծես լսում էր իրրև արձագանգ
Երկու շրթունքի համբոյրի մի ձայն,
Կարճ աղաղակներ և թույլ հեծեծանք.
Սաստիկ տարակոյս ամբարշտութեան
Մտաւ ծերունու սրտի մէջ խսկոյն...
Բայց երբ որ անցաւ մի քանի վայրկեան,
Բաղմեցաւ կրկին խորին լռութիւն.
Միայն թէ հեռից հողմը բերում էր

Խիտ տերևների հանդարտ սոսափիւն,
Մխայն վհատեալ ձայնով շրջում էր
Լեռնապատ գետը մթին ափերով։
Շտապում է նա արտով անաւոր
Կարդալ աղօթքը մի սուրբ վկայի,
Որ հեռացնէ մարից մեղաւոր
Փորձութիւնները չար սատանայի։
Խաչակնքում է դողդոջուն ձեռքով
Մտածումներից կուրծքը վրդոված
Եւ լռիկ, մեղմիկ, շարունակում է
Իր ճանապարհը քայլով շուտընթաց։

Իբրև մի քնած սիրուն հրեշտակ,
Կոյսը դադարում հանդարտ պառկած էր,
Նրա ճակատն էր առաւել ճերմակ,
Քան թէ այն քողը, որով ծածկած էր։
Արտաքնութիւնքը նրա սիրուն
Փակած են արդէն մինչև յաւիտեան...
Բայց ով չէր ասիլ, որ դեռ նոցա տակ
Սիրուն աչքերը քնած են միայն,
Որ սպասում են միակ համբոյրի
Եւ կամ ծագմանը վաղ արշալոյսի։
Բայց ի զուր օրւայ շողերը առատ
Նոցա վրայով ոստոստում էին,
Եւ ի զուր նոյնպէս շրթունք հարբաստ
Նրանց վշտալից համբուրում էին.
Չէ կարող խլել այժմ ոչ մի բան
Մահու կնիքը յաւիտենական.
Եւ այդ եռանդուն կեանքի փոխանակ,
Որ ձայնակից էր միշտ զգացմունքին,
Մնացել է արդ մի չնչին գիակ,
Որ դառնալու է հող բոլորովին։
Մի ժպիտ ազօտ և զարմանալի
Սառել էր այնպէս կոյսի շրթունքին,
Բայց և իմաստը նրա վշտալի
Ասես գերեզման էր խաւարային,

Դրացիք նրանց և ծնողները
Մէկտեղ ժողոված բոլորը տրտում,
Լալով ողբալով թամարի մահը՝
Ճանապարհի են հանդերձանք տեսնում։
Վերջին անգամը Գուգալ ձերունին
Փնտելով անխնայ ալիքը գլխի,

Կուրծքը ծեծելով նստում է իր ձին,
Գնում է խումբը սպաւորների։
Եւ երեք օրւայ, երեք գիշերի
Ուղին գնալու նրանք ճանապարհ,
Դամբարանումը նախահայրերի
Փորած է շիրիմ Թամարի համար։

Կապոյտ եթերքի տարածութիւնով
Սուրբ հրեշտակը անմեղ աշխարհի
Թռչում էր արագ ոսկեայ թեւերով,
Տանում էր գրկած մեղաւոր հոգի։
Եւ մխիթարիչ անոյշ խօսքերով
Կասկածը նրա ցրում էր մտքից,
Վրայից սրբում էր արտասուքով,
Մնացած հետքը մեղք ու կրքերից։
Արդէն եդեմայ անոյշ ձայները
Հեռից նրանց հասանում էին,
Երբ որ կտրելով բաց ճանապարհը,
Ելաւ անդունդից դժոխքի հոգին։
Մրրկի պէս էր թռում զօրաւոր,
Փայլում էր սաստիկ կայծակի նման,
Եւ յանդգնութեամբ մի խելացնոր՝
«Նա իմն է» գոռաց՝ ձայնիւ խստութեան։
Եւ իր պահպանչի կրծքին սեղմած
Խեղճիկ Թամարի մեղաւոր հոգին,
Աղօթք անելով դէպի մեծն Աստուած,
Վախն էր աշխատում ցրել անագին։
Վճիռն օրհասի լցում էր հիմա,
Նրա առաջև դևը կանգնած էր.
Բայց ո՞վ կարող էր ճանաչել նրան,
Ի՞նչ չար աչքերով վրան նայում էր,
Ի՞նչպէս լցած էր ոխակալութեան
Անապառելի թոյնով մահաբեր,
Եւ ի՞նչ սառնութիւն դիրեզմանական
Անշարժ երեսից նրա փչում էր։
«Կորիր դու խաւար, հոգիդ անարժան,—
Սուրբ հրեշտակը պատասխանում է.—
Որչափ պանծացիր, շատ է քեզ և այն,
Արդ դատաստանի ժամը հասել է»...
Եւ հրեշտակը սաստող աչքերով
Այն փորձիչ դևի վրայ նայեցաւ
Եւ ուրախ ուրախ թևը թափ տալով,
Երկնի շողերում խոր ընկղմեցաւ։
Անիծեց իսկոյն դևը յաղթւած՝

Բոլոր մտքերը իր ցնորական,
Եւ ամբարտաւան դարձեալ նա մնաց
Աշխարհիս վրայ առաջւայ նման.
Դարձեալ միայնակ և առանց սիրոյ,
Եւ դարձեալ առանց մխիթարութեան։

Թարգմ. Մ. Յասարեան

ԱԲՈՒ ԼԱԼԱ ՄԱՀԱՐԻ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Աբու Լալա Մահարին,
Հռչակաւոր բանաստեղծը Բաղդադի,
Երեք տասնեակ տարի ապրեց Խալիֆաների հոյակապ քաղաքում,
Ապրեց փառքի և վայելքի մէջ.
Հզօրների և մեծատունների հետ սեղան նստեց,
Դիտունների և իմաստունների հետ վէճի մտաւ,
Սիրեց ու փորձեց ընկերներին.
Եղաւ ուրիշ-ուրիշ ազգերի հայրենիքներում, տեսաւ և դիտեց մարդկանց և օրէնքները.
Եւ նրա խորաթափանց ոգին ճանաչեց մարդուն, ճանաչեց և խորագին տեսաւ մարդուն և նրա օրէնքները։
Եւ որովհետև նա չունէր կին և երեխաներ՝ իր բոլոր հարստութիւնը բաժանեց աղքատներին,
Վերցրեց իր ուղտերի քարաւանը և մի գիշեր, երբ Բաղդադը քուն էր մտել Տիգրիսի նոճիածածկ ափերի վրայ,—գաղտնի հեռացաւ քաղաքից...

Առաջին Սուրան

Եւ քարաւանը Աբու Լալայի աղբիւրի նման մեղմ կարկաչելով
Գայլում էր հանգիստ նիրհած գիշերով, հնչուն զանգերի անուշ զողանջով։

Հաւասար քայլով չափում էր ճամբէն այն քարաւանը ոլոր ու մոլոր,
Եւ զողանջները ծորում քաղցրալուր, ողողում էին դաշտերը անդորր։
Մեղկ փափկութեան մէջ Բաղդադն էր նիրհում ջէննաթի շքեղ, վառ երազներով,
Դիւլատաններում բլբուլն էր երգում գազելներն անուշ՝ սիրոյ արցունքով։

Շատրւանները քրքջում էին պայծառ ծիծաղով աղամանդեղէն,
Բոյր ու համբոյր էր խնկարկւում չորս կողմ Խալիֆաների քէօշքից բիւրեղէն։

Եւ քարտուղարը պրոֆը ու շրջանը փնտրում էր առաջ ու ետ չէր նայում,—
Ելեմուտը նստած էր Արու. Հարային իրիւր հրապոյրով կանչում, փայ-
փայում.

—Գնա, միշտ գնա, իմ քարտուղար, և ետ մի դարձիր, քայլէ, կանգ
մի առ.
Աշխարհս էր խոստում իր արտի խորքում Արու Մանարին, մեծ բանաս-
տեղծը։

Գնա մենաւոր վայրերն ամայի, ազատ, կոյս և սուրբ, զմրուխտեայ
հեռուն.
Դէպի արևը ալացիր, գնա և սիրտս այրիր արևի սրտում։

Ա՛խ, մեռաք բարև չեմ ասում ես ձեզ, իմ հոր դերեզման, օրրոցք մայ-
րական,
Իմ հոգին յաւէրժ խառով է ձեզ հետ, հայրենական յարկ, յուշեր ման-
կական։

Ես շատ սիրեցի իմ ընկերներին և բոլոր մարդկանց՝ հեռաւոր, մօտիկ.
Եւ սէրս հիմա իմ դարձաւ թունաւոր, խայթում է սիրտս հուր ատելու-
թեամբ։

Ատում եմ ինչ որ սիրել եմ առաջ, ինչ որ տեսել եմ մարդու հոգու
մէջ.
Մարդու հոգու մէջ համբել եմ հազար նոզկանք ու գարշանք՝ գազիր ու
նանիր։

Բայց ես փախչում եմ գարշանքի հազար ու մէկերրորդից—կեղծիքից
սարսր,
Որ զարդարում է երեսը մարդու անմեղ սրբերի լուսապսակով։

Մարդկային լեզու, դու որ երկնային լազուր շղարշով, բոյրով համ-
բոյրով
Ծածկում ես մարդու դժոխքը հոգու—թոթվե՛լ ես արդեօք ճշմարիտ
մի խօսք։

Մարդկային լեզու, թունաւոր սլաք, մեղրի ծորանքով սիրտս խոցեցիր.
Իմ հոգում մեռաւ սիրոյ մի երկինք, մի վառ արևդակ, և՛ յոյս, և՛ հա-
ւատ։

Գնա անապատ, իմ քարտուղա՛ր, վանքի, ամայի անապատն այրող,
Եւ իջևանիր այն պղնձացած շէկ ժայռերի տակ, գազանների մօտ։

Մտնեմ վրանս, ած-կարիճների բների վրայ խփե՛մ վրանս,
Այնտեղ բիւր անդամ, և՛ ապահով է, և՛ քաղցր ու անդորր, քան թէ
մարդկանց մօտ.

Քան թէ ընկերի կուրծքը խարուսիկ, ուր գնում էի գլուխս սիրով,
Կուրծքը ընկերի, որ շղարշում է անդարձ կորստեան անդունդը սև։

Այնքան ժամանակ, որքան արևը կայրէ Սինայի ճակատը խրոխտ,
Եւ անապատի դեղին շեղջերը ալիքների պէս յորձանքներ կը տան,

Ես չեմ ցանկանայ տեսնել երեսը մարդկանց, ընկերի, հարազատների,
Ես չեմ ցանկանայ տեսնել ու լսել նրանց գործերը՝ չար, ունայն պատիր...»

Եւ վերջին անգամ Աբու Մահարին ետ դարձաւ նայեց նիրհած Բաղդադին,
Գարշանքով շրջեց ճակատը կնճռոտ և փարեց ուղտի թաւ պարանոցին:

Սիրով գուրգուրեց, ջերմ շրթունքներով համբուրեց ուղտի աչքերը վեր,
Եւ թերթիչներից նրա կախեցին անզուսպ արցունքի երկու այրող շիթ.

Անուշ զնգոցով, հանդիստ, միաչափ մեղմ օրօրում էր այն քարաւանը,
Գայլում էր առաջ դէպի անապատ, կուսական ափերը, անյայտ հեռուները...

Երկրորդ Սեւրան

Եւ ոլորում էր այն քարաւանը բարձր արմատների շարքերի միջով,
Փոշի էր հանում, փոշու քարաւան, և բարակ քամին վարում էր փոշին:

—«Գնա՛, քարաւան, ինչ ենք մենք թողել, որ ափսոսանքով նայենք մեր ետև.
Այսպէս էր խօսում իրեն սրտի հետ Աբու Մահարին, մեծ քանասաստեղծը:

Ի՞նչ կայ մեր ետև, որ մենք կարօտով ետ դառնանք նոքին, իմ քարաւան.
Թողել ենք ընկերը, կին ու բարեկամ, փառք ու ընտանիք և հարստութիւն,

Թողել ենք մարդկանց, համայնք, հայրենիք, օրէնք, իշխանութիւն և արդարութիւն.
Գայլէ, կանգ մի առ. թողել ենք միայն շղթայ ու կապանք, կնդրիկ ու պատրանք:

Եւ կինն ի՞նչ է որ... խորամանկ, խաբող, արքունարքու սարդ, յաւիտեան նանիր,
Որ հացդ է սիրում, համբոյրի մէջ թոյն և քո գրկի մէջ ուրիշին ծանաւում

Խաբեալ մակոյկով յանձնելիր ծովին, քան թէ հաւատա կնոջ երդումին,
Նա—կաւատ, վարար, մի չքնաղ դժոխք, նրա բերանով Իբլիսն է խօսում։

Դու երազել ես աստղը հեռաւոր, հրեշտակաթեւ շուշանը մաքուր,
Որ քո վէրքերին բալասան լինի, կեանքի ցաւի տակ ոսկեշող երազ։

Դու տենչացել ես լոյս-ափերի մէջ՝ քեզ իրեն կանչող աղբիւրի երգին,
Անուշ արտասուել երկնային կրծքին և անմահութեան ցօղն ես երազել,

Բայց սէրը կնոջ ծարաւած հոգուդ աղ-ջուր է տալիս, որ միշտ տոչորւիս,
Հուր տոփանքի մէջ յաղթական կնոջ մարմինը լիդես և չը յաղենաս։

Օ՜, կնոջ մարմին՝ պագշոտ, օձեղէն, դիւական անօթ չարի, ոճիրի,
Դու, որ մանեղէն դառն հաճոյքով խաւար ես դարձնում արևը հոգու։

Ատում եմ սէրը՝ յաւիտեան խոցող, յաւիտեան այրող ովկիանը կրքի,
Այդ քաղցր թոյնը, որով արբողը ստրուկ է դառնում և կամ բըռնակալ։

Ատում եմ սէրը՝ մահի պէս անգութ, միշտ ըեղմնաւորող չարիքը անսանձ,
Աղբիւրն անսպառ, որ կուտակում է աշխարհի վրայ տիղմը եղեռնի։

Ատում եմ կնոջ, համբոյրը նրա, գարշում եմ շողում, պիղծ գգւանքներից,
Փախչում եմ նրա ճահիճ-մահիճից և անիծում եմ երկունքը նրա։

Երկունքը դաժան և յաւէրժական, որ հեղեղում է վտառն իժերի,
Որոնք խայթում են, ըզկըտում իրար, տոփանքով ժահրոտ աստղերը պղծում.

Սրիկայ է նա, ով հայր է լինում, ով երջանկաւէտ ոչնչութիւնից
Դոյութեան կոչում թշւառ հիւլէին և գլխին վառում Գեհենը կեանքի։

«Իմ հայրը իմ դէմ մեղանչեց, սակայն ես ոչ ոքի դէմ չը մեղանչեցի».*)
Այս իմ կտակը թող գրի շիրմիս, եթէ ունենամ շիրիմ լուսնի տակ։

Այնքան ժամանակ, որքան որ ծովը կը փարէ դմբուխտ ափերն Հէջազի,
Ես եւ չեմ դառնայ կնոջ մօտ երբէք, ես չեմ կարօտնայ թովչանքին նրա։

Կը գգւեմ վայրի տատասկը դժնեայ և կը համբուրեմ փշերը նրա,
Գլուխս կը դնեմ այրուող ժայռերին և կուլամ նրանց ջերմ կրծքի վրայ...»։

---

*) Այս տողը գրուած է բանաստեղծի շիրիմի վրայ։

Եւ քարաւանը մեղմիկ զոգանջով չափում էր ճամբէն ոլոր ու մոլոր,
Հանգիստ ու անդորր գնում էր առաջ՝ դէպի անապատ, ուր կեղէն հեռոն։

Զանգակներն, ասես, հեկեկում էին և ծորում հատ-հատ հնչուն արցունքներ,
Քարաւանն, ասես, լալիս էր անուշ, ինչ որ Մահարին սիրել, թողել էր։

Եւ գեփիւռների սրինգները մեղմ գեղգեղում էին Շարգիներն անուշ,
Սիրոյ վէրքերի, վշտոտ կարօտի և երազական քնքուշ թախծանքի։

Եւ Աբու Լալան խորհում է մռայլ, և նրա վիշտը անծայր և անվերջ,
Ինչպէս իր ուղին, որ գալարում է, ձգում է անծայր և վախճան չունի։

Իր հոգու խորքում թախծում էր անյոյս Աբու Մահարին օրէր, գիշերներ.
Հայեացքը յառած անյայտ աստղերին՝ հիւսելով անծայր ճանապարհի հետ։

Եւ ետ չէր նայում անցած ճամբէքին և չէր ափսոսում թողած անցածին,
Ողջոյն չէր վերցնում, ողջոյն չէր տալիս անցնող ու դարձող քարաւաններին...

Ստեփան Սաւրան

Եւ քարաւանը Աբու Լալայի աղբիւրի նման մեղմ կարկաչելով,
Հեզ լուսնկայի շողերի միջով քայլում էր առաջ հանգիստ ու անդորր։

Եւ լուսինն, ինչպէս ջէննաթի մատաղ փէրիի կուրծքը՝ պայծառ, լուսափայլ,
Մերթ ամաչելով պահւում էր ամպում և մերթ թրթռուն շողում էր չքնաղ։

Ծաղկունքը բուրեան նիրհ էին մտել՝ զարդավառ շքեղ ոգամանդներով,
Գուրգուրում էին քնքուշ մրմունջով ծիածանաթև հաւքերը իրար։

Մեխակի բոյրով հոմֆ էր փրսփրսում հէքեաթներն հազար ու մէկ գիշերուայ,
Արմաւն ու նռնին անուշ քնի մէջ օրօրւում էին ճամբէքի վրայ։

Հովի զրոյցին ականջ դնելով Աբու Մահարին խօսում էր անձայն.—
«Աշխարհն էլ, ասես, մի հէքեաթ լինի՝ անսկիզբ, անվերջ, շքեղ, գիւթական։

Եւ ձվ է հիւսել հէքեաթն այս վսեմ, հիւսել աստղերով, բիւր հրաշք-
ներով,
Եւ ձվ է պատմում բիւր-բիւր ձևերով՝ անդուլ և անխոնջ՝ այսպէս
թովչանքով։

Ազգեր են եկել, ազգեր գնացել և չեն ըմբռնել իմաստը նրա,
Բանաստեղծներն են փոքր ինչ հասկացել և թոթովում են հնչիւններն
անմահ։

Ոչ ոք չէր լսել սկիզբը նրա, և չէ լսելու վախճանը նրա,
Ամէն հնչիւնը դարեր է ապրում, ամէն հնչիւնին վերջ, սկիզբ չկայ։

Բայց ամէն մի նոր ծնւածի համար նորից է պատմւում հէքեաթն այս
շքեղ,
Նորից սկսում և վերջանում է՝ ամէն մի մարդու կեանքի հետ մէկտեղ։

Գեանքը երազ է, աշխարհը՝ հէքեաթ, ազգեր, սերունդներ— անցնող
քարաւան,
Որ հէքեաթի մէջ, վառ երազի հետ քայլում է անտես դէպի գերեզ-
ման։

Կոյր ու խուլ մարդիկ, առանց երազի, առանց լսելու հէքեաթն այս
ոսկի,
Իրար կոկորդից պատառ էք հանում և իրար հրում դէպի գերեզման։

Ձեր օրէնքները—լուծ ու խարազան և անխելք մի ցանց խօլական
սարդի,
Եւ որոնց ժահրով թունաւորում էք երազն այս գողտրիկ, հէքեաթն
այս վսեմ։

Եղկելի մարդիկ, փոշի կը դառնան ձեր չար սրտերը, ձեր գործերը
սին,
Եւ ժամանակի ձեռքը անտարբեր կը սրբէ, կ'ուլէ ձեր հետքերն
արնոտ։

Եւ ունայնաշունչ հողմը կը շաչէ ձեր գերեզմանի քարերի վրայ,
Իսկ վայելելու դուք միշտ ապիկոր՝ երազն այս չքնաղ, հէքեաթն այս
շքեղ...»

Գոհար աստղերի քարաւանները թափառում էին երկնի համբէքով,
Եւ զոդանջում էր ողջ երկինքն անհուն՝ աստղերի շքեղ անշէջ զնգոցով։

Եւ արար աշխարհ լցւած էր, դիւթւած զոդանջիւններով յաւէրժ երկ-
նային,
Եւ վերասլաց լսում էր հոգով Աբու Մահարին վսեմ զոդանջին։

—«Գնա, քարաւանս, մեղմ հնչիւններդ հիւսելով երկնի լոյս զոդանջի
հետ,
Վիշտս տուր հովին, քայլէ բնութեան ծոցը մայրական և մի նայիր
ետ...»

Տար ինձ լուսազգեստ մի հեռու եզերք, անյայտ, հեռաւոր, մենաւոր ափեր,
Սուրբ մենակութիւն, դու իմ օազիս, դու երազների աղբիւր զովաշունչ։
Լռութեան երկինք, խօսիր դու ինձ հետ աստղերիդ լեզուով և ամոքիր ինձ,
Գուրգուրիր հոգիս՝ աշխարհից խոցուած, մարդուց խայթուած հոգիս վիրաւոր։

Իմ մէջ այրւում է մի անյագ կարօտ, յաւիտեան լացող կարեկից մի սիրտ,
Եւ իմ հոգում կայ մի շքեղ երազ, և սուրբ արտասուք, և սէր անսահման։

Ոգիս ազատ է, ես չեմ հանդուրժում իմ վրայ իշխող ոչ մի զօրութեան,
Եւ ոչ մի սահման, և ոչ մի օրէնք, ոչ չար ու բարի և ոչ դատաստան։

Իմ գլխու վերև չը պէտք է լինի ոչ մի հովանի, ոչ մի իրաւունք,
Եւ իմ կեանքից դուրս ամէն ինչ բանդ է, և ստրկացում, և բռնադատում։

Ես կուզեմ լինել անսահման, ազատ, անպարտք, անիշխան, այլ և անաստուած,
Հոգիս տենչում է միայն, միմիայն անհուն, անպարփակ մեծ ազատութեան։

Եւ քարաւանը քայլում էր առաջ, և նրա վերև շողշողում էին
Մանկան ժպիտով աստղերը պայծառ—այն յաւէրժավառ աստղերը ազատ։

Զուլալ գիշերին դիւթական ցոլքով փայլում էր ճամբէն փերուզեայ հեռում,
Եւ քարաւանը օրօր ու շորոր քայլում էր անդորր փերուզեայ հեռուն...

Զարարդ Սուրան

Գիշերն ահարկու և՛ սև, և՛ հսկայ՝ մի թռչունի պէս թևերը փռեց,
Անծիր թևերը իջան, ծածկեցին քարաւանն, ուղին և դաշտերն անափ։

Եւ հորիզոնից մինչ հորիզոններ մռայլ ամպերով երկինքը լցուեց,
Չէին շողշողում լուսին ու աստղեր, խաւարն, ասես թէ՝ խաւարով պատած։

Եւ հողմերն ահեղ նժոյգների պէս՝ սանձարձակ վայրի արշաւում էին՝
Ցորձանքներ տալով, և հողմն ու փոշին այրւած դաշտերից խառնում ամպերին։

Հազար ձայներով և մանատարուս շառաչում էին և պղտղակում,
Ահա, վիրաւոր գազաններ էին, մոնչում-ոռնում հոգմերի բերնով։

Եւ ձորերի մէջ գալարուում էին և արմաւենու անտառների մէջ՝
Շնչեցնում էին հոգմերը տխուր, տսես թէ՝ մի սիրտ ողբալիս լինէր։

—Գնա, քարաւան, հոգմերի դիմաց աննկուն գնա, քայլէ, կանգ մի առ.
Այսպէս էր խօսում իր սրտի խորքում Աբու Մանարին, մեծ բանաստեղծը։

Շառաչէք գլխիս, ամենի հոգմեր, դուք, մրրիկներ, պայթեցէք գլխիս,
Ես բաց ճակատով ձեր դէմն եմ կանգնած, զարկեցէք ճակտիս, ես վախեցող չեմ։

Ես եռ չեմ դառնայ պիղծ քաղաքները, ուր բազմաժխոր կրքերն են եռում,
Քաղաքներն արնոտ, ուր մարդը դաժան յօշոտում է միշտ իր նմաններին։

Իմ անտուն գլուխ, դու տուն չես դառնայ, ինքդ մարեցիր օճախդ հայրերի,
Վայ նրան, ով որ տուն ու տեղ ունի, կապուած է շան պէս իրեն տան շեմքին.

Աբշաւէք, հոգմեր, իմ հօր տան վրայ, քանդէք, աւերէք հիմքերը նրա,
Եւ փոշին ցրուէք մեծ աշխարհով մէկ.—անծայր ճամբէն է իմ տունը հիմա։

Մենակութիւնն է իմ հայրենիքը, երկինքն աստղաբիր—յարկս հայրական,
Եւ քարաւանն է իմ տունը հիմա, և իմ հանդիսաը—ճամբէս անկայան։

Դու կախարդ ճամբայ, յաւիտեան անյայտ, յաւիտեան դիւթող իմ հոր հայրենիք,
Ցաւ ինձ, իմ սիրտը յաւիտեան լացող, այնտեղ, ուր աչքը չի տեսել մարդու։

Բաբելոնիներից հեռու տար դու ինձ, որոնք անկշտում մոծակների պէս՝
Հետևում են քեզ, երբ արիւն ունես, իսկ երբ ցամաքես, կը մոռանան քեզ։

Իմ ընկերներից հեռու տար դու ինձ, նրանց սուտ սիրուց դու պաշտպանիր ինձ,
Ես ոտքներիս լաւ եմ ճանաչում, դիտեմ պաշտպանուել նրանց դաշոյնից։

Իմ բիւր վերքերը ով կը նիւթէր ինձ, թէ չը լինէին ընկերը, բարեկամ,
Որոնք համբոյրով սիրտս բացեցին, որոնք համբոյրով խայթեցին
նրան։

Ի՞նչ է ընկերը—յաւէտ բամբասող, միակ խուզարկու հետքիդ,
քայլերիդ,
Ծանօթ շները չեն հաչում վրադ, ծանօթ մարդիկ են հաչում քո վրայ։

Ի՞նչ է ընկերը—լաւիդ նախանձող, նենգ ու չարակամ, մահիճդ պղծող,
Իմ ազնիւ ծոցում ես օձ սնուցի... թոյր, քարաւան, էլ ետ մի դարձիր։

Եւ ուր որ կերթաս, այնտեղից նորէն գնա ու գնա առանց հանգրւան.
Ի՛մ բարի ճամբայ, տար ինձ, կորցրու, չքւիմ, տանջանքս ոչ ոք
չը տեսնի։

Ի՞նչ կայ մեր ետև, որ մենք կարօտով ետ դառնանք նորից, իմ
քարաւանս.
Թողել ենք մենք փառք, գանձ ու հայրենիք, թողել ենք օրէնք և
արդարութիւն,

Թողել ենք մարդկանց, համայնք ու ամբոխ, դատ ու իրաւունք և
իշխանութիւն.
Քայլէ, կանգ մի առ—թողել ենք միայն շղթայ ու կապանք, կեղծիք
ու պատրանք...

Եւ ի՞նչ է փառքը.—այսօր քեզ մարդիկ կը բարձրացնեն եղջիւրներից
վեր,
Վաղը նոյն մարդիկ քեզ վայր կը նետեն՝ սմբակների տակ ճմլելու
համար։

Ի՞նչ է պատիւը, յարգանքը մարդկանց.—պատուում են ոսկուց և վախից
միայն,

Իսկ երբ սայթեցիր, կոշիկիդ փոշին մեծ մարդ է գառնում և քեզ
հարուածում.

Եւ ի՞նչ է դանձը, որով յիմարը տիրում է մարդկանց, և սէր և
հանճար.—
Բիւրաւորների քամուած արիւնը, որբի արտասուք, մեռելների միս։
Հայրենիքն ի՞նչ է—յաւէրժական բանդ, պատերազմի դաշտ, նախճիր
ու արիւն,

Եւ նրա համար անխիղճ հզօրը բիւր կառափներից բուրգեր է
կանգնում։

Ատում եմ, ատում, և՛ հայրենիքը, պերճ արօտավայրն լիքը հարուստների,
Որի հողն արնոտ անդուլ հերկողը չոր բար է կրծում իր հացի կողքին։
Ատում եմ, ատում ամբոխին ոամիկ, մեծ յիմարն է նա, ստրուկ
բռնակալ,
Ոգին հալածող, բռնութեան խարիսխ, յիմարութեան մէջ զօրաւոր
գազան։

Ի՞նչ է համայնքը—թշնամու բանակ և մարդը այնտեղ շղթայած գերի,
Ե՞րբ է հանդուրժել հոգուդ թռիչքին և սլացումին նա վեհ մտքերի։

Նողկալի համայնք, հեղձուցիչ օդակ, քո չարն ու բարին—ահեղ
խարազան,
Մի անհուն մկրատ բոլորին խուզող՝ միահաւասար և միանման։

Ի՞նչ է օրէնքը՝ բիրտ ուժեղների այդ սուրը դաժան՝ մարդկանցից
օրհնած,
Անգօրի գլխին կախուած յաւիտեան, խեղճին խողխողող, հզօրին
պաշտպան։

Բոլոր զայրոյթով զզու�եմ, ատում մարդկանց օրէնքը և իրաւունքը.
Օրէնքով մորթում, բռնաբարում են և իրաւունքով լկում,
կեղեքում։

Տար ինձ, ազատիր, ծածկիր ինձ անհետ մարդկանց արիւնոտ
արդարութիւնից.
Թող որ վագրերը իմ սիրտը պատռեն, արդարութիւնը քան թէ
փրկէ ինձ։

Զզուում եմ, ատում իշխանութիւնը—պատերազմների յաւէրժ յերիւրող,
Անյագ վաշխառու, անկուշտ ձրիակեր, արեան բաղանիք, սերունդներ
լափող։

Անցած դարերի, գալիք դարերի մեծ դահիճն է նա և մեծն աւազակ,
Սարսափներ վիժող, ոխակալ վոհմակ, հազարաճիրան մոլի բորենի։

Նա փշրում է միշտ մեր ուսերը վար, ամէն ուր հանում ճգմում է
մարդուն,
Եւ հրէշի պէս կրծքիս է նստել, բռունցքն է ահեղ սղմել ճակատիս։

Եւ ամեն ինչ է իշխանութիւնը—իրաւունք, օրէնք և արդարութիւն,
Նա ինքն է խիղճը, և չարն ու բարին, իսկ դու—գերազման, դու—
ոչնչութիւն։

Մեր ամէն քայլին շղթայ է դրել, փականք է դրել մեր լեզուին, մտքին,
Եւ արդարութեան դաժան անունով կոխում ու մաշկում ծերին,
մանուկին։

Ապիկար մարդիկ, ստրուկ ու վախկոտ, ո՞վ տուեց սուրը նմանիդ
ձեռքին,
Ո՞վ տուեց նրան վրէժի իրաւունք՝ իշխել, խողխողել իր նմաններին։

Տար ինձ, քարաւան, իժերին յանձնիր, թաղիր հէգ սիրտս աւազների
տակ,
Տար ինձ, ազատիր իշխանութիւնից, ազատիր նրա հովանուց վայրագ...»

Մոլ կայծակները հրեղէն սրով ծւատում էին վաշտերն ամպերի,
Եւ արշաւասոյր՝ փշրում էին հեռաւոր, անտես լեռների ճակտին։

Եւ մրրիկները մռնչում էին, արմատն ու նոճին շաչում, շառաչում,
Եւ քարաւանը արագ, սրընթաց, դիլ, քառատրոփ վազում էր, թռչում։

Վազում էր, թռչում, զրը՛նգ հա զրը՛նգ, փոշու ամպերով ծածկելով
ճամբէն,
Ասես, փախչում էր չար իշխանութեան քինոտ բռունցքից, որ
չհասնի իրեն...»

Հինգերորդ Սուրահ

Եւ միջօրէի բարկ արևի տակ խիստ բուրում էին նարճիս ու զաթար,
Եւ քարաւանը փոշու մէջ կորած, քրտնաթոր, յոգնած քայլում էր
դանդաղ։

— «Գնա՛, քարաւան, խորշակ ու մրրիկ ճեղքելով անցիր, մտիր
անապատ.
Այսպէս էր խօսում զայրացած սրտում Աբու Մահարին, մեծ
բանաստեղծը։

Թող անապատի տաք հողն իմ դէմ գայ, աւազի վրայից հետքերս ջնջէ,
Որ մարդը երբէք տեղս չը գտնի, իմ շնչած օդը մարդը չը շնչէ։

Այնտեղ մարդկանցից ապահով կըլնեմ, էլ ո՞ւմից միթէ ես երկիւղ
սնեմ,
Թող որոտընդոստ մռնչիւններով վագր ու առիւծ արշաւեն իմ դէմ։

Տեսնում եմ ահա շէկ առիւծներին դեղին շեղջերից աչքիս են նայում.
Տեսնում եմ նրանց, որոնց ոսկեղէն բաշերից հողմը կայծեր է պոկում։

Արի՛ք, կանչում եմ, ես փախչողը չեմ, արի՛ք, լափեցէ՛ք սիրտս վիրաւոր,
Ես ետ չեմ դառնայ մարդկանց մօտ երբէք, դուռը չեմ բաղխի մարդու
նենգաւոր։

Մարդկանց մօտ պէտք է աչալուրջ լինիս, միշտ ոտքի վրայ և սուրը
ձեռքիդ,
Որ քեզ չը լըկեն, քեզ չը յօշոտեն՝ թէ բարեկամդ և թէ թշնամիդ։

Մարդիկ ի՞նչ են որ... դիմակաւոր դևեր, ժանիքներ ունեն, անտես
ճիրաններ,
Սմբակներ ունեն և որոճող են, և նրանց լեզուն— թունաւոր սուսեր։

Եւ ո՞վ են մարդիկ.— մի պատառ հացի՛ւ հազար աչք ձգող, քրտինքդ
լափող,
Անկումիդ ուրախ, մատնիչ, ուրացող, աղէտների հօտ և դահի՛ճ, դահի՛ճ,

Թշուառութեան մէջ, աղքատութեան մէջ փոքրոգի՛, քծնող, վաճառող,
քսո՛ւ,
Հարստութեան մէջ անգութ, մեծամիտ և՛ ամբարտաւան և՛ վրիժառու։

Համբուրելով մէկ մէկ անթիւ քայլերը իմ քարաւանի, իմ անծայր ճամբու,
Անթիւ քայլերը չեն հասնում չափին մի օրում գործած յանցանքին մարդու։

Ասում եմ ահա և արևելքին, հիւսիս հարաւին և արևմուտքին,
Որոնց հողմերը՝ իրար հետ ներհակ՝ լսում են մէկտեղ իմ արդար խօսքին։

Լսէք ու տարէք խօսքս հրեղէն, թող ծովերից ծով աշխարհն իմանայ,
Որ աւելի վատ, աւելի զազիր, քան մարդը դաժան՝ այդ մարդն է նորից։

Սիրում եմ, սիրում գայլին, չախկալին, բայց մարդուն սիրել չեմ կարող երբէք։
Ո՞վ է ինձ տանջել նրա չափ անգութ, և ո՞վ է լակել նրա չափ արիւն։

Լաւերն աշխարհում գոհւում են, մեռնում վատերի համար և վատերն յաւէրժ
Տանջում են, լրկում մի բուռ լաւերին,—և կեանքի արտում որոմն է աճում։

Ապիրատ աշխարհ, ուր հզօր ոսկին դարձնում է գողին պատուաւոր, ազնիւ.
Ապուշին՝ հանճար, վախկոտին՝ կտրիճ; տգեղին՝ չքնաղ և պոռնիկին՝ կոյս։

Մարդկային աշխարհ, ուր ամենուրեք հզօրի առաջ թոյլը մեղաւոր,
Եւ մարդը տգեղ՝ ինչ որ անում է այս գարշ աշխարհում սոսկ նիւթի համար։

Սոսկ նիւթի համար, նրան միշտ գերի, և թաթն արիւնոտ սատուածացնող.—
Ահա մարդը միշտ՝ պատկերն Աստծու, սակայն իրապէս Շէյթանի վիժուածք։

Այնքան ժամանակ, որքան աստղերը անշէջ թարթում են լուռ անսպատին,
Եւ գալարում են շեղջերն աւազի, շչում ու ճչում նման օձերին,—

Ես չեմ ուզենայ ողջունել մարդկանց, դէպի համայնքը ես ետ չեմ դառնայ,
Բորենիները թող ինձ յօշոտեն, բոցոտ հողմերը շաչեն ինձ վրայ։

Փախիր, քարուան, այդ պոռնկութեան լպիրշ ու արբշիռ, ցոփ խնճոյքներից,
Ստի և կեղծի հրապարակներից և վաճառանքի պիղծ շուկաներից։

Կնոջից, սիրուց, համայնքից փախիր, արդարութիւնից, վրէժից փախիր,
Փախիր ընկերից և հայրենիքից, փախիր, կանգ մի առ մարդկանց աչերից.

Գնա, քարաւան, ամբակներիդ տակ տրորիր, կոխիր օրէնք, իրաւունք,
եւ ճանապարհիդ փոշիով ծածկիր, թէ չարն ու բարին, թէ
իշխանութիւն...»

Իրենց ադեղի պարանոցները՝ ուղտերը լարած նետերի նման,
Զիլ վազում էին և իրենց յետքից թողնելով անծայր փոշու քարաւան։

Զիլ վազում էին խանձուած դաշտերով դէպի անյայտը, դէպի հեռաստան,
եւ ծածկում էին փոշու ամպերով անծիր դաշտերը, բաղաք ու աւան։

Կարծես՝ վախեցած փախչում էր արագ, առանց հանգրուան, Աբու
Մահարին,
Կարծես՝ օրէնքը, կինն ու համայնքը նրան կրընկկոխ հետևում էին։

Եւ քարաւանը գրընդ հա գրընդ՝ առանց նայելու անցնում էր անդարձ
Բուրդերի տակով մեծ քաղաքների՝ հացի ու կրքի ժխորով լցուած։

Վազում էր արագ՝ յիմարութեան մէջ դարեր քարացած գիւղերի մօտով,
Վազում էր անդուլ դէպի անապատ ոսկեշող աստղի անզուսպ կարօտով։

Քարաւանն հերստա՝ օրեր—գիշերներ չափում էր ճամբէն ոլոր ու մոլոր,
Եւ հոգու խորքում Աբու Մահարին խորհում էր ցասկոտ՝ ճակատը
խոլոր։

Եւ լալիս էր նա առանց արցունքի, և նրա վիշտը անհուն ու անվերջ,
Ինչպէս իր ուղին, որ գալարուում է, ձգուում է անծայր և վախճան
չունի։

Եւ նա չէր նայում անցած ճամբէքին և չէր ափսոսում թողած, անցածին,
Ողջոյն չէր վերցնում, ողջոյն չէր տալիս անցնող ու դարձող
քարաւաններին...

Վիցերարդ Սուրան

Եւ քարաւանը Աբու Լալայի Արաբիստանի մեծ անապատի
Դարբասների մօտ կանգ առաւ յոգնած...

Եւ անապատի հորիզոնների հեռու ափերը հրդեհուում էին,
Մութն հաւաքում էր փէշերը թաւշեայ, բոցերով բոսոր երկինք էր
ծփում։

Եւ Աբու Լալան քարաւանի մօտ նստեց մենաւոր, հանդիստ և պայծառ,
Ոսկի ժայռերին գլուխը յենած՝ հայեացքը սուզած լուսեղէն հեռուն։

— «Օ՛, ինչ ազատ եմ, անսահման ազատ, միթէ կարող է անապատը
մեծ
Պարփակել, գրկել իր ափերի մէջ ազատութիւնս՝ անեզր, անհուն։

Ո՛չ մի մարդկային ձեռք ինձ չի հասնի, ոչ մի մարդկային աչք ինձ
չի տեսնի,

Օ՜, ազատութիւն, դու դրախտային չքնաղ վարդերի լուսեղէն
բուրմունք։

Քո լոյս վարդերով դու պսակիր ինձ, վառիր ջահերդ իմ տխուր
հոգում.
Օ՜, ազատութիւն, դու դրախտային վառ բլուրների անմահ Ալ Կօրան։

Չքնաղ անապատ, դու միայնութեան ոսկեղէն աշխարհ, քեզ հաղար
ողջոյն.
Անաբիծ հոգեր, ուր մարդը մարդուն չէ լսելիկ երբէք, օրհնեալ
լինիք դուք։

Տարածուիր անծիր, փռիր աւագիդ անափ ծովերը աշխարհի վրայ,
Ծածկիր ողջ մարդկանց, քաղաքները ժանտ, ծածկիր աւաններ, քէօշք
ու խրճիթներ։

Վիշապ-հողմիդ հետ ազատութիւնը թող գահակալէ աշխարհի վրայ.
Եւ ոսկեվառէ վսեմ արևը աշխարհասփիւռ ազատութիւնը։

Հազար ու հազար հրաշալիքներով և հրաբորբոք հրապոյրներով
Ոսկի վարսերը անծայր տարածած՝ Շէմս Արևն ելաւ, Աստծուց հզօր։

Եւ վեհ արևի աչքերի առաջ փուեց, ծաւալեց անապատը մեծ,
Վառ վառ հուրհրաց, ինչպէս տիտանեան, հսկայ առիւծի ոսկեղէն
մորթի.

— «Սալամ քեզ, Արև՛, շիւքրը բիւրաբիւր, դու՛, իմ անմահ մայր,
մայրակա՛ն դու գիրկ,
Դու՛ միակ բարի, դու՛ յաւէտ գթոտ, դու՛ միակ իմ սէր, դու՛ միայն
սո՛ւրբ, սո՛ւրբ,

Դու, որ հիացքով և անմահութեամբ լցրեցիր հոգին մեծ Զօրօաստրի,
Ա՛հա իմ հոգին—մի ծարաւ բողբոջ, թափիր նրա մէջ քո պուրպուր
գինին։

Տիեզերական դու անհո՛ւն բաժակ՝ ոսկի արբեցման և երանութեան,
Դու՝ անհուն բաժակ հրապոյրների և հրճըւանքի անմահ գինով լի։

Հարբեցրո՛ւ ինձ, հարբեցրո՛ւ ինձ, քո անմահ գինով հարբեցրո՛ւ ինձ,
Մոռանամ մարդուն, վիշտն ու չարիքը, սուտն ու մոայլը մոռանամ
յաւէրժ։

Տիեզերական հաղարահանդէս դու մեծ խրախճանք, դու՛, բարի արև,
Խաւարների դէմ անյաղթ տխոյեան, դու Աստծուց հզօր, դու՛
ուրախութիւն։

Քո երջանկութեամբ, քո յաւէրժութեամբ, քո պայծառութեամբ
հարբեցրո՛ւ ինձ,
Եւ քո բուրալից լոյս անուրջներում տո՛ւր ինձ անցեալի անդարձ
մոռացում։

Դու միակ բարի, դու յաւէտ գթոտ, դու միակ իմ մայր, դու միայն սուրբ, սուրբ,
Մահը խորտակող, դարուններին մայր, դու գերահրաշ, միակ գեղեցիկ։

Ես սիրում եմ քեզ, ես սիրում եմ քեզ, կիզիր, խոցիր ինձ հրեղէն սիրով.
Եւ ոսկեճաճանչ վարսերդ շքեղ փռիր ինձ վրայ և գուրգուրիր ինձ։

Եւ արիւնոտիր իմ շրթունքները քո հրդեհավառ լոյս համբոյրներով,
Երջանկաբերիւռ քո հուր գիրկը բաց, ես սիրաբորբոք թռչում եմ քեզ մօտ։

Իմ աղնիւ ուղտեր, ոտքի կանգնեցէք, դարձաւ Մահարին իր քարաւանին,
Եւ թօթափեցէք ձեր սրունքներից սարուկ աշխարհի զաղրելի փոշին։

Օ՜, վերջին անգամ լսէք իմ խօսքը.—ատում եմ ես ձեզ, հեռաւոր մարդիկ
Դարշում եմ, ատում ձեր կրօնները, ձեր լաւն ու վատը, ձեր չարն ու բարին։

Որոնք միմիայն շղթայ են կռում և ստրկութեան գնդաններ կոփում.
Օ՜, վերջին անգամ ատում եմ ես ձեզ, և յաւերժ, յաւէրժ ատում եմ ես ձեզ։

Եւ թող խլանան իմ ականջները՝ յաւէտ չը լսեմ աղմուկն աշխարհի,
Ցաւէտ կուրանամ աշխարհի համար, և ետ չը նայեմ տեսնելու մարդկանց։

Շարժուիր, քարաւան, դարձ՛ը և դարձ՛ը թռիր, սլացիր արևը դէպի,
Նրա լուսեղէն, բոցեղէն գրկում, որ արևանամ և յաւերժանամ։

Օ՜, իմ մայր արև, քո ոսկեփրփուր ծիրանիդ ձգիր ուսերիս վրայ,
Որ ես յաղթական, լոյս-փառքերիդ մէջ սլանամ յաւէրժ դէպի, դէպի քեզ...»

Եսրնեարդ Սուրան

Եւ ուղտերն, ասես, ոսկի մակոյկներ, հուր ալիքները ծով-անապատի
Ճեղքելով արագ սլանում էին դէպի բոցեղէն, ոսկեղէն հեռուն։

Եւ ոչ մի սամում հրաշունչ թևով չէր կարող հասնել նրանց արշաւին,
Նրանց թռիչքին չէր կարող հասնել սլաքը նետի վայրի բեդուինի։

Օազիսներից մայր արմաւենին վառ հէրեաթների լոյս փէրիներից
Համբոյր էր բերում, սիրոյ ողջոյններ, անուշ դայլայլում նրա ականջին։

Բայց Աբու Լալան չէր ուզում լսել քնքուշ սօսափին, սիրոյ ողջոյնին,
Թռչում էր անդուլ դէպի արևը, և ինքն էլ պայծառ արևի նման։

Նրա ձեռքում լոկ անանպատն էր փուած հոլանի լոյսի գրկի մէջ,
Իսկ գլխի վերև արևն էր նայում շափիրգնայ վարսով և լուսափթիթ,

Ընդանիքը արդեն պարուսանձներով հուժկու, մուլեգին, այնպէս խօրական,
Պրանում էին, դիր թոչում էին հրեղէն թափով խենթի ու խելագար։

Եւ արնգաթան վառ ցնցուղի տակ բոցկլտում էին ուղտերը գարթ,
Եւ բարձրագոգանջ ֆայլակում էին դանդաղկոտերն ապտա, պայծառ,
ցնծագին։

Եւ ամենքիրքուր ծիրանին ուսին Արու Մանարին յաղթական և վեհ՝
Թոչում էր աննին, թոչում էր անխոնջ դէպի արևը, անմահ արևը...

Ակ. Խաչատրեան

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ

Քասիա.—երկտողանի, երկայնաձիգ գրուած պոէմ, արաբերէն.
Սուրան.—գլուխ, հատուած.
Գաղէլ.—սիրոյ երգ.
Իբլիս.—դև, սատանայ.
Հէջազ.—արաբական ծովեզերք, նահանգ.
Շարքի.—երգ.
Նարճիս.—Նարգիս. (ծաղիկ).
Զաթար.—ծէթրոն (բոյս անանպատի).
Շէմս.—արաբերէն արև.
Մալամ.—ողջոյն.
Շէ՛քբր.—Փառք, գոհութիւն.
Սամում.—անանպատի տաք հողմ, խորշակ.
Ալ-Կօրան.—Ղուրան։

ՆՈՐ ԱՌԱՒՕՏ

Հաստատներ

Ահա իմ մուզան կեանք առաւ նորից
Եւ պատանեկան աշխոյժով-եռուն
Խօսեց սրտիս հետ անցած օրերից—
Անցած օրերի հմայքը սիրուն.
Օրեր՝ որ անցան ծաղիկների մէջ,
Լի վայելքներով անգիտակցական,
Օրեր՝ որ անցան շարեշաւ, անվերջ,
Բուռն յոյզերով պատանեկական։
Եւ ի՞նչ է կեանքը...մի երգ դիւթական,
Որ կրկնւում է հիասքանչ, թովիչ
Ելևէջներով, եղանակներով,
Որը հնչում է այնպէս գրաւիչ
Ու մարում ցաւի արձագանքներով...
Կեանքը մի նկար, որը հիւսւում է
Հազար գոյներով, հազար ցոլքերով,
Կեանքը հոկայ ծով, որ փոթորկում է,
Նաւեր խորտակում ու վերջը մնում
Մենակ ու տխուր իրա խոհերով։
Ահա իմ մուզան տեսնում եմ նորից
Տանջւած անցեալի ծանր երկունքից,
Պոէտիս ծնեց կեանքի նոր գարուն—
Մի պատկեր սիրուն...

Եթէ իրաւ է, նազելի սիրուն,
Որ քո աչքերը կեանքի ջերմ կարօտ
Մի նոր, իրական աշխարհ են փնտրում
Եւ ինձ խոստանում մի նոր առաւօտ՝
Արի տանեմ քեզ իմ սիրածի մօտ.
—Դէպի գործարան
Արի տանեմ քեզ, ուր մարդիկ այնտեղ
Չեն ապրում միայն ցաւով անձնական,
Այլ ցաւը քաշում հանուր մարդկութեան.

Ուր գորգ և կուլ մէջ են որոնում
Հմուշը-բանաստեղծին բազպուտությանն,
Ոգեստեղ միտքին և ընկերվի
Իրար քեռ կը տանը, նենգուկ կը լինենք,
Որ ցաւ ու գրկանք հեշտությամբ տանենք.
Ես ինչ կը սիրեմ ոչ լոկ սիրելու—
Հանճարի համար,
Այլ սնգամ ձուլելով քո մատաղ հոգում,
Որ դու ասելի լինես դիմացկուն
Այս դաժան կեանքում.
Ա՜խ, մանկությունից ընկեր սիրելու
Ցելագարն եմ ես,
Սիրտը Աստուած է, սրտին թէ լսես՝
Կը գաս միասին,
Էլ չես մտածիլ անհատիդ մասին.
Երանի նրան,
Ով կանցնի քեզ հետ կեանքի նեղ ուղին։

Գնանք գորգարան...
Բայց լսիր ասեմ, սիրելի ընկեր,
Որ չը կան այնտեղ ծառ ու ծաղիկներ,
Բաղեղ ու խոտեր,
Հաւքերի նւագ, գուլ-գուլ աղբիւրներ,
Եւ ոչ ալ վարդեր.
Չես տեսնիլ այնտեղ լուսնեակ գիշերի
Լուսաշաղ ամպեր,
Ոչ էլ սիրահար ջահէլ արևի
Կրքոտ համբոյրներ.
Այնտեղ ծառի տեղ ցցած են խրոխտ
Երկաթի սիւներ,
Բաղեղ-խոտի տեղ ցանցերի փշոտ
Պողպատի լարեր.
Դեղախոտ թռչնոց երգի փոխարէն
Կը լսես այնտեղ
Ճախարակների ունգայն որոտ՝
Եւ խենթ փոկերի համերգը ահեղ.
Այնտեղ խեղդուում են շոգու ամպերէն.
Պաղ աղբիւրի տեղ՝ քրտինք ամեն օր,
Վարդի փոխարէն
Ծորում, քամուում է արիւն սրտերէն,
Եւ շուրջդ բոլոր
Շոմնդ ու ժխոր...
Կը տեսնես, ինչպէս թանձրացած մխով
Ծխնելոյզները

Երկինք են կառչել ագահ երախով
Մրոտ ամպերը,
Կարծես հրաշունչ վիշապի նման
Ուզում են շնչել,
Ու իրենց քարշել
Անհուն բարձունքից փայլուն աստղերը,
Որ նրանց թաղեն մշուշ-ծխի մէջ.
Կը տեսնես շաբաթ ապաւոր ու խեղճ
Արհեստանոցի աղիւս-պատերը՝
Խոնաւ ու թաց-թաց,
Կարծես բանւորի քրտինքով թրջւած...

Եւ դու կը մտնես այն գործարանի
Կամարների տակ,
Որտեղ եռում է թափով աշխատանք.
Կը տեսնես այնտեղ արհեստանոցի
Հարազատ զաւակ կաղնի-բանւորին,
Կարծես Բահալը նստել է նրա
Կորացած մէջքին։
Ա՜խ, շատ եմ տեսել նրան, իմ ընկեր,
Մեացած երես, ծխի մէջ կորած,
Ու դեռ հասակը երեսուն չառած՝
Կամ մեքենան է ճխլում իր թաթում—
Ոտքերը փշրում, բազուկը հատում,
Կամ ալ հեղուկը այրում, փոթորթում...
Ես տեսայ նրան, սիրելի ընկեր,
Մի մթին գիշեր
Քուրան էր վառում, փնչում կատաղած.
Ամեն անկիւնից, որպէս վիշապներ,
Կարմիր կրակը լեզուներ հանած՝
Օդը լիզելով երկաթն էր ծամում—
Ծուփ-ծուփ շիկանում,
Եւ նրա դիմաց դարբինը կանգնած,
Ալ բոցի գոյնից թափ, եռանդ առած՝
Զորցած մատներով երկաթն էր կռում
Եւ պողպատ մէջքով յամառին ծռում,
Կռում ու կռւում...
Եւ մինչ մի նոր ձև, մի կեանք չէր տալիս
Անշունչ մետաղին — չէր հանգստանում։
Եւ խորհում էի... ահա թէ ուր է
Զգում բանւորի ստեղծող ոգին,
Ահա թէ ինչու կարմիր ալ գոյնը
Նա սիրեց այնպէս խանդաղատագին.
Ու թէև կաթ-կաթ քրտինք է ծորում

Մրուտ ճակատից,
Բայց էլի մի իր, մի գործ է ձուլում
Անշունչ երկաթից,
Մի գործ հոյակապ,
Որով կոփում է իր կամքը երկաթ,
Մնում ու բռվում հաւատն անյաղթ,
Մի ուրիշ անգամ այս տիտանների
Ես տեսայ, ընկեր, մեծ ձուլարանում.
Դոյլեր ու ձողեր ձեռքերը առած՝
Եռուն հնոցի շուրջը բոլորած՝
Թուջ էին հալում,
Կաթսան ամեհի կարմրել էր, փափկել,
Ուզում էր պայթել...
Եւ ահա մէկը անվեհերներից
Սուր ձողը ձեռքում
Կաթսայի կուրծքն է զայրոյթով մխում,
Երակը խայթում.
(Կարիքն է կռել զայրոյթ ու վրէժ
Նրա մեծ սրտում).
Կարմիր հալոցքը արիւնի նման
Վիժում է ուժգին,
Կարծես յոխորտում կլանել նրան,
Ով որ խիզախեց վէրք տալ իր կրծքին.
Բայց բանւորը քաջ սովոր է նրան,
Ծաղրում է, հեգնում ջեռուն հեղուկին,
Հալոցքի մէջ է մնում, մեծացել
Նրա յաղթ հոգին։

Այդպէս շարժելու նրանք միշտ սովոր,
Այդպէս անհանգիստ, եռուն ամեն օր
Գալիս են անվերջ՝
Հազարը մէկի պէս, մէկը՝ հազարի—
Մի ալիքից յետ՝ բիւրաւոր ալիք,
Զուլում է ես-ը հզօր մենք-ի մէջ՝
Եւ մեռած կեանքի յուզում փոթորիկ։
Նրանք գալիս են արդարութիւնը
Ոտքի հանելու,
Նրանք պայքարում ողջ մարդկութեանը
Հանդիստ բերելու.
Նրանք տանջւում են ոչ ինձ, քեզ, միւսի,
Զորբորդի համար,
Նրանք մեռնում են ինձ, քեզ, երրորդի —
Շատերի համար.
Եւ հակայական մի ցաւով տարուած

Զգում են առաջ, անցնում խուβերից՝
Եւ սիրան է β նդում այդ մութիւնից։
Տես, այդ նրանք են, ուր ամեն մէկը
Մի քար է քաշում մրջիւնի նման
Ապագայ շէնքի կռելու հիմքը.
Եւ երբ տեսնում է պատերը ելան,
Ելան բարձրացան և գործն է կենդան՝
Ոգևորւում է առուծի նման։
Գնանք գործարան,
Դէպի կարիքի, քաղց ու տանջանքի
Այն եռուն քուրան.
Այնտեղ կը տեսնես գրկանքի որդուն,
Ուր ինքն աշխատում, ուրիշն է ուտում.
Այնտեղ կարող ես հասկանալ մարդուն,
Լանալ վէրքեր սրտիդ արիւնով,
Հրեշտակային այդ բարի դէմքով,
Քնքոյշ, նրբազգաց կանացի հոգով
Այնտեղ կարող ես ցաւեր ամոքել
Եւ վհատեալի սիրտը բորբոքել,
Որ լքման ժամին
Վշտին դիմանալ նա կարողանայ,
Մինչ մի լաւ օրի նա կը մոռնայ...
Մոռնայիր նրան, այ իմ սիրելի,
Տանջելիր նոյն ցաւով.
Նա, օվ շատ տանջւում՝
Ամենից լաւ է կեանքը հասկանում...

Յակ. Յակոբեան

ՀԱՐՃԸ

Հատուածներ

Գարնանամուտ երեկոյ մ'իր պալատին մէջ մարմար
Բակուր, Սիւնեաց Նահապետ, շքեղ հանդէս մը կուտար։
Երբ ուղևոր մը յանկարծ մրրկարշաւ կը հասնի
Լուսընկափայլ ճամբայէն՝ մեծ դռան քով արքենի։
Ձին կը հևայ, ու բերնին փրփուրն՝ հողմէն միշտ խլուած՝
Կը թրջէ թամբն համօրէն, ասպանդակներն ոսկեմած։
Հեռուներէն ան կու գայ, գայս կը մատնէ թէ փոշին,
Որ դիզուեր է խաւերուն մէջ թիկնոցին թաւիշին,
Թէ նժոյգին վրընջիւնն աստեղացունց մաքրութեամբ՝
Որ կը խնդրէ ախոռին գոլուտ հանգիստը անթամբ։
Բակուր այդ հիւրն իր անձէն և անունէն կը ճանչնայ,—
Բագրատունին Տրդատն է, հզօր իշխան, ու փեսայ
Տիրան հայոց արքային, որ կը փախչի Մարաստան.
Կը փախչի ան՝ զի կինն իր, Տիրանի դուստրն անմման,
Գանակոծեր էր խստիւ, պալատէն դուրս արտաքսեր,
Խուզելով, իրր անարգանք, անոր խարտեաշ գանգուրներ։
—«Տրդատ, կ'ըսէ Նահապետն, այս գիշեր քուկդ է իմ տուն.
Մարաց աշխարհն հեռու է, և դու անշուշտ պարտասուն.
Մտիր սրահը տօնին, թող իրարու դէմ փշրին
Մեր բաժակներն, ու մեր սէրը մկրտէ թող գինին»։—
Եւ կոչունքի կը բազմի Բագրատունին վտարանդի
Աջ կողմը ճիշտ Բակուրին՝ որ իր կարգին կը նստի
Գահի մը վրայ՝ որուն լայն թիկնատեղն է քանդակուած
Բագուսը՝ եզ մորթերով պսակելու զրաղած։

—«Ամենք, ըսաւ, ու տօնենք Արշակունի գահերուն
Թաւալումներն անդունդի և մեղկանքի մէջ փցուն»։—
Եւ հազիւ հազ շրթներուն դրաւ գաւաթն հրահոսան՝
Վերնատան մէջ աչքերն իր զոյգ մ'աչքերու դիպեցան։
Կին մը իրեն կը նայէր, կզգար սրտին մէջ շմոր.
Իր կազմին վրայ հիանար, առնադեղ, խրոխտ և հզօր։
Հզօր՝ վիզովն առիւծի, և բիբերով աստղայեռ՝
Որոնց բոցէն այրելու համար անգամ մ'իսկ բաւ էր,
Որ անոնց մէջ յանդգնէր առնաբաղձ կին մը նայիլ։

Վերնատան կինը սարսռաց։ Տրդատ մէկ ձեռքը յենած
Սեղանին վրայ, միւսով տաշտը բերնին, գլխիբաց,
Անոր կապոյտ աչքերուն յառած աչքերն իր մթին
Ամեց երկար—փրփուրէն մինչև մրուրն—իր գինին։

Հազիւ Տրդատ սեղանին դրաւ գաւաթը թափուր՝
Լոյսերու հոծ ծովուն մէջ թնդաց սրահն ընդհանուր.
—«Վարձակն ահա, տեղ բացէք, վարձակը, վարդ տեղացէք.
Մազերուն մէջ, ոտքին տակ մարգարիտներ լեցուցէք»։—
Սանդուխներէն վերնատան վար կիջնէր կին մը խաժակ.
Կը թրվռային գլխուն շուրջ աղաւնիներ սպիտակ։
Ճաճանչաւուխտ քօղին մէջ աստղ մ'էր ան՝ որուն մեծ
Աչքերուն մէջ սևեռուն Տրդատ գինին իր խմեց։
Այն ժամանակ սրահ մտան հինգ ծերունի գուսաններ,
Ուսերնուն վրայ վիժանուտ գանդուրներով լուսահեր.—
Ոլորակեց տաւիղն հեշտ, փանդիռն հնչեց փառակոչ,
Նման արծաթ կարկուտի երգ ջաղրեց դափը դողդոջ.
Եւ եօթնաղի քնարին որոմայնին մէջ տօսախ
Նւագի ծով մ'ըսկսաւ մրրկոտիլ աղերսախ։
Ցեռոյ յանկարծ միացած բոլոր լարերն իրարու՝
Պանծացուցին անգամ մ'ալ փառքերը հին դարերու,
Երգը հզօր դիքերուն, Դիցուհիի ոսկեմայր,
Երգն աստղահմայ քուրմերուն՝ որոնք բագնին վրայ մարմար
Վզան օձեր այրեցին բոցերուն հետ ծառացող.
Երգն՝ ասպետի մը զարմիկ, դիւցազներու զինաշող,
Որոնք նման կայծակի տէգերն՝ իրենց պիրկ ձեռքին՝
Փաղանգներուն կազմը կուռ արիւնառուշտ ճեղքեցին.
Հնչեցուցին երգերն հուսկ մեհենական պարերու,
Սէրն հայկազուն կոյսերուն և հարճերուն գինարբու՝
Որոնք այգւոյն զովալից հովանիին տակ պառկած՝
Լոյս ծոցն իրենց կը թողուն սեղուհներուն համար բաց։
Կոչնականները համուռ դէպ գուսանները դարձան,
Որոնց մէջ տեղ սկսած էր պարել կին մը դեղձան։
Վարձակն էր ան, Նազենիկ նազելագեղ անունով։
Հասակն ամբողջ կը թրթռար բարտիի պէս հողմախառով.
Դաշներգը իր ջիղերուն դաշներգին հետ լարերուն
Կը միանար, կը սիրէր համանուագ մ'յարաճուն։
Եօթն հարճեր հերքը խարտեաշ մաւուներով նախանձոտ
Արաբական իւղի մէջ օծաներ են քաղցրահոտ.
Եւ գլխուն շուրջը պսակ մ' վարդերու հիւսեր են՝
Որոնք եթէ ճզմին, անշուշտ արիւն կը ծորեն։
Կը շողշողան ունկերուն ծայրը օղեր փողփողէջ՝
Աստղերու նման ցոլալով անբակներուն փոսին մէջ.
Արմուկէն վեր աջ բազուկը կը խաժնէ սեղմօրէն
Լուրթ մարգրիտով յեղուզած ապարանջան մ'ոսկեղէն։

Կը դիտեն զինք։—Նազենիկ նախ կօրօրէ մեղմօրէն
Ալապաստրէ ուսերուն վրայ գլուխն հրեղէն՝

Ներքեւանները՝ շրջելով գոյգ մը աչքերը ապուր՝
Ուր ի՛ընկերի մարդ հեշտին, բայց դուրս կելնէ վիրաւոր։

—«Ահաւասիկ, ո՞վ է—ըսաւ—վարձակը այս լուսաստինք։
Եթէ ասոդիկ երկնի մէջ Վահագնի օր մ՚յանձնէր զինք,
Ու կաթիլները սերմին ըլլային նոյն իսկ աստղեր՝
Դարձեալ այսքան չքնաղ ծնունդ մը երբէք չէր բողբոջեր։
Այս կինն ինձ տուր, եթէ չէ՝ օրէն՝ որ մենք ընենք վէճ.
Արշալոյսին թող մեկնիմ արշալոյսն այս գրկիս մէջ»։—
Բազմականներն սկսան նախանձայոյզ բրբջալ.
Բակուր ծածուկ մախանքէ մ՚ակռաներն իր ձիւնափայլ
Սեղմեց. և նուռ մ՚որ ձեռքին մէջ բռնած էր այն ատեն,
Հակրծանքէն սկսաւ ճմլել։ Ըսաւ.—«Իշխան քաջազէն,
Վրաց երկրէն, ուր կիները կը ծաղկին վարդի պէս,
Ջայն նիզակով եմ շահեր, մարտիկներու ընդդէմ վէս
Մղելով երկար պայքարներ։ Այժմ ներէ որ ըսեմ
Թէ իմ հարսն է, և չ՚ըլլար քեզ աղախին մը նստեմ։
Եթէ կուզես՝ որ մեր գոյգ բաժակներն այս մտերիմ
Հազիւ թափուր գինիէ, չը լեցուին արեամբ ոխերիմ՝
Թող զայն, իշխա՛ն»։ Բնաւ չանսաց Իագրատունին սրարբած,
Սեղանէն վեր բարձրացուց դաշխուրանն իր գինեմած
Ու ձեռքովն իսկ զայն խմցուց, ծունգին վրայ, վարձակին՝
Որ կը ժպտէր ըմպելու ատեն ժպտով մ՚հեշտագին։

—«Այս յարկին տակ, ո՞վ ասպետ, ալ բաժինս է զան ու ծեծ.
Դուն որ գիտցար զիս վառնգել, ազատէ արդ շուտափոյթ,
Երբ ես յօժար խմեցի ձեռքէդ գինին քու սիրոյդ՝
Հարկ է ասկէ վերջ խմեմ Բակուրի թոյնն ոխութեան.
Դուն հոս արիւն թափեցիր, և պիտի ես քաւեմ զայն։
Զիս հեռացուր այս երկրէն, եթէ չէ գործ մ՚արքունի
Որ ասպետի մը վրիպած հարուածը կին մ՚ընդունի»։—
Ու աւելի ցած ձայնով յարեց.—«Ես քեզ կը սպասեմ
Արշալոյսին՝ որ մօտ է։ Մեծ դռան քով արեզդէմ
Կայ թուզի ծառ մը՝ որուն սաղարթներուն ընդմէջէն
Պատուհանիս հրադն ասկայծ համբորդներն յար կը տեսնեն։
Հոն կը սպասեմ ես քեզի վարդենիի մը նման,
Որ կոկոններն իր բանայ պիտի կուրծքիդ վրայ տիտանս»։—
—«Զիս ուս առջի խրխինջէն պատրաստ եղիր, Նազենիկ,
Դեռ հրադդ արփւոյն շառայլէն չը նւադած՝ կը մեկնինք»։
Ըսաւ Տրդատ։ Թուրը մերկ միշտ ափին մէջ շողարձարձ,
Տալով կամայ երևոյթը մեկնումի մը անդարձ,
Գնաց թամբեց երիվարն ու խաւարին մէջ, անտես,
Անհետացաւ քառատրոփ, փայլակնացայտ ամպի պէս։

Կոչնականներն ահաբեկ, կոչնականներն հիւազարհուր,
Գիմեմ ու վանտ, մի առ մի պարպեցին սրահն ընդհանուր.

Լոկ կոյր գուսան մ'երգին մէջ անվերադարձ տեսլացած՝
Դեռ լռութեան մէջ կը նաւագէր սիւնի մը յաղթ կոթնած։

Ահա առուան շողերէն հագեր է վարդ ու սուտակ
Պատուհանին առջևի թզենի ծառն ընդարձակ՝
Որուն ետև հարճն արթուն.—«Ինչո՞ւ չեկաւ, կը խորհի,
Արտոյան ահա արձակեց կալին մէջ երգը բարի.
Եւ պալատին պահապան շունն արթնցած ման կու գայ
Բակին մէջ՝ մերթ միզելով պատերն ի վեր շրջակայ։
Ինչո՞ւ չեկաւ, ո՛վ Երկինք»։— Հորիզոնէն յեղակարծ
Արփւոյն ճաճանչն անդրանիկ սլացաւ ինկաւ շողարծարծ
Նազենիկի խուցին մէջ.—դալկացաւ լոյսը ճրագին։
Օ՜, ի՜նչ խրխինջ, ի՜նչ դոփիւն, ի՜նչ վոթորկում թանկագին...
Կու գայ իշխանն ազատել զինք Բակուրի նախանձէն։
Պատուհանին ներքև՜ է Տրդատ ձիուն վրայ արդէն։
Բերկրանքէն հարճը խայտաց. զեղան աչքերը վրդով
Անպատմելի խնդութեամբ, ինչպէս երկինք՝ արևով։
Գիշերն ամբողջ ինք հոն էր, զով խաւարին մէջ արթուն,
Հանդերձներովը պարի, բամբիռներն ալ՝ մատերուն.
Ատղերուն տակ աղօթող բագոսունոյ մ'էր նման՝
Վարդերը դեռ հանդէսին մազերուն մէջ ցիրուցան,
Եւ լանջքը մերկ՝ որուն վրայ թափուած գինին խրախին
Տակաւին միշտ կը ափոէր իր զարթ բոյրը չորս գին։
—«Զեռքդ երկարէ, 'սաւ Տրդատ»։—Դու գիրկդ բաց, կը ցատկեմ՝
—«Գլուխդ գգո՛ւշ, չը փշրես լանջապանիս զրահին դէմ»։—
Եւ Նազենիկ անհամբեր հեղեղին հետ վարսերուն
Ասպետին մռայլ ծոցին մէջ նետեց ինքզինքը սարսռուն,
Եւ զայն հեղ մ'ալ ողողեց մազերովն իր դարալիր։
Դափրեց նժոյգն և ոռնգերը փեռեկած լայնալիր՝
Հորիզոնին դարձուց գլուխն ու մտրակի մ'հարուածով
Թաղուեցաւ իր արշաւին ամպրոպին մէջ փոշեծով։

Փառք մեծազօր կենցաղին ասպետական դարերուն՝
Ուր պաշտուեցաւ Գեղեցիկն ու Զօրութիւնը արբուն,
Եւ խորհրդանիշը անմահ Գեղեցիկին, Զօրութեան՝
Փրփուրներու Դիցուհին ըստինքներով ոսկեական։
Փառք ձեզի միշտ, գանգրահեր ո՛վ ասպետներ արդընկեց։
Որոնց զրահով վերուած լանջքերուն տակ բաբախեց
Սիրտ մը յաւէտ անձնուէր՝ տկարներուն, ընկճուածին,
Եւ գեղանի կիներուն, անոնց մարմնոյն բիւր գանձին։
Փառք ձեզի միշտ ձիամարտեր, մկունդխաղեր շանթասլաց՝
Որոնց օդին մէջ շաչուն տէգերն յանկարծ բռնկած՝
Կայծակներու խաղն եկան երկրիս վրայ փոխադրել.
Վիշապասպան սուսերներ, ժանգոտելու անընդել,
Կառաբշաւներ փոշեմուղ, գուպարայաղթ ոգորներ։

Շատագնացիներ տեղ տեղի, ֆուռն ֆուռնի գէմ ոսկեյեռ։
Փանդ ձեզի միշտ, ով գրուեր քրքիւռն ձայնով շեփորին,
Երբ ցոլն քով վիրաւոր ի՛ինչպէս ծպնիկն ոգրապին,
Եւ փարագներ արքնանոր կը քաւոյին մարդին վրայ՝
Որոնց ֆոդին արիւնն յորդ կրակի պէս կը միսայ։
Փանդ ձեզի միշտ սուարներ, նոպիապուսներ կինեբու՝
Որոնք տուին իրենց տարին ու նամիոյները ապու
Ռուսիներու քաջուքեան, և ոչ ոսկի հորքերուն,
Որոնց սիրտերն տուաւ չոկ տուրքերու ծայրը փաղփուն։
Փանդ ձեզի միշտ, ով գարեր ասպետական կենցաղին,
Որ մարդիկ հզօր և անկեղծ էին նման գինիին։
Ռուսքինի քաջուքեան տեղ նենգն այս օր կը տիրէ.
Փոխան տեղին հոլանի՝ պատեանի մէջ դաշոյնն է՝
Որ կը շոգայ մուքին մէջ, կը ժանգոտի արևին.
Ոնիրներն այդ խաւարի լուքեան մէջ կը դարփնուին
Մխոտ հրապի լոյսին տակ ծռած գունատ մարդերէն։
Երբ արեգակը ննջէ՝ մեզքերն յայնժամ կը գործեն։
Ջեն պաշտեր կնոջ մարմինին դաշն ձևերն հրահրուած՝
Լոգցուած բիւր ջահերու շառայլներով հոսանուտ։
Կինը մարդուն միացնողը Աստղիկի սիրայօղ
Լուսեղ մատերը չեն բնաւ, այլ շանսխուրը ցեխոտ։
Գեղեցկուքիւնը ծնունդն է Զօրութեան յորձանքին՝
Ինչպէս մարգրիտն ովկիանի անդունդներուն մոլեգին։
Բայց այսօր չեն քանդակեր սուսերներով կորովի
Գեղեցկուքեան սուրբ բագինն՝ ուր իդուքիւնը խնկի։
Բաւական է լի գաւաթ մը Մլունիխի գարեջուր
Որ ամուրդի հանուած սէրը գնեն մարդիկ քրէիրուր.
Սէր վաճառուած, ոչ նուիրուած՝ ինչպէս պսակ սարդենի
Զոր հերոսին համար սուրն ասուածներէն կ՚ընդունի։
Եւ այժմ մարդն այս դարուն, մարդն ըղեղին տակ կքած,
Ո՞վ ասպետներ հեթանոս, եթէ բաղխէ ոտքն յանկարծ
Ձեր բազուկի մէկ ոսկրին՝ որ հողին տակ ճերմկած է,
Անոր հսկայ զանգուածէն կը սարսափի, կը կարծէ
Ձեզ առասպել դարերու առասպելեալ գազաններ,
Ո՞վ ասպետներ հեթանոս, ո՞վ ասպետի ոսկորներ։

Ցուլ դղրդիւն մ՚հեռուէն եղաւ յանկարծ լսելի,
Կարծես գետնին ընդերքէն անցնէր ամպրոպ մ՚ահռելի։
Տրդատ շրուշակը դարձուց, և երիվարը խոկուն
Ծամծմելէ դադրեցաւ պահ մը լկամը փրփրուն։
Վարը, դէմի հովիտէն դէպի գագաթ ծառացան
Ձիաւորներ զինավառ մրրկարշաւ ու դաժան։
Ոմանք աղեղ ունէին և ոմանք լախտ ու տապար,
Ոմանց տէգերն ուղղաձիգ արեգակին տակ փարփառ՝
Ցանկարծակի սարէն վեր փայլատակներ ճայթռեցին.

Բակուր մէջտեղն էր անոնց աշտարակած անեղ ձին.
Կու գար լուծել իշխանէն վրէժ, պատժել հարճն անխիղճ՝
Մորթելով հոն փոխանակ զայն փրկելու ապծապիղծ.
Կոչնականները բոլոր գինեւած էին արդ իր հետ՝
Երէկ գինեւով յոգեցած, այս օր արեան հակամէտ։

—«Ասպե՛ւ, ասպե՛ւ, մանն հասաւ մեր թիկունքէն, կը շչայ։
Օ՜, կը վախնամ, կը վախնամ. ուստի վրայէն նետ մ'անա
Հրախայթոց օձի պէս շըշըչալով ելացաւ։
Վայրկեանն մըն ալ և անոնք կու գան կը հասնին մեծարշաւ.
Ագեղներէն լայնալիճ կարծես արիւն կը կաթի
Եւ կը ներկէ ձիերուն յորդ յորդ բաշերը կաթի։
Ասպե՛ւ, ասպե՛ւ, մի մատներ դիս անոնց խեղ մոլուցքին,
Ես քու գերին, ձիդ ըլլայ թող գերին քու մարակին»։—
Այսպէս ըսաւ Նաղենիկ. լայ սկսաւ դառնահեծ,
Եւ Տրդատի կուրծքին վրայ գլուխը այնքան սեղմեց՝
Որ գրահին մէջն իսկ կը լսէր տրոփը սրտին։
Գանգուրներն իր հողմածուփ ձիուն բաշին կը խառնին.
Ինք կը սարսռայ վարսին ինկած աղաւնիի մ'հանգունակ։
Սարսափելի էր տարափը նետերուն մահարձակ,
Որոնք ջուրի նման օդն եռանդնայորձ ճեղքելով՝
Կերթային մահը երգել փախստական զոյգին քով։

Հազիւ թէ ծոցն անտառին կընդդոգէր զոյգը փախչող՝
Բակուր իր նետը վերջին, հերձակ մ'ամբողջ ժահրաշիթ,
Արձակեց այնքան զօրեղ, թիրախին այնքան ճշգրիտ,
Որ օձի նման շչալով թունոտ լեզուովը սաղաղ
Տրդատէսի անուշին տակէն սողոսկ անցաւ թափ,
Ու մխեցաւ վարձակին ծոծրակին մէջ լուսաբուխ
Եւ հոն մնաց՝ յորդառատ մազերուն մէջ խորամուխ։
Երեք անգամ սրնըփաց զարնուած աղուոր աղաւնին,
Երեք անգամ չուզելով կարծես թողուլ իր հոգին։
Այս բանը ոչ Տրդատէս նկատեց, ոչ ալ Բակուր,
Իրենց անզուսպ մոլուցքին փոշիներէն դարձած կոյր.
Բնաւ չը տեսան թէ ինչպէս կը փշրուէր ու կ'իյնար
Դաշնակութեան ու գեղի ասուածակերտը գոհար.
Միայն նժոյգը վրնջեց, ու երեք հեղ սարսռաց.
Երբ սառեցաւ փորին վրայ զարնուող ոտքը յանկարծ։

Իջեան մ'է կառուցուած սահմանին վրայ Շիրակին,
Գործ արքունի ճոխութեան, մեծազանգուած, ահագին։
Լայն դռներն իր կը բացին ճամբուն վրայ հրատոչոր՝
Դուրս շնչելով զովութիւն և աղբերուն հոտը չոր։
Արևուն դէմ կիզանուտ ապաստան մ'է մշտազով

Ճամբորդներն հոն կը հասնին տօթէն թխացած ծոցերով
Եւ յօնքերնին բեռնաւոր փոշիներով տապախարշ...

Բարտի մը կար հինաւուրց՝ զոր ձեռքերովն իր բարի
Իջևանին քով տնկեր էր Դիցանոյշ մ'անտառի.
Սակայն այդ օրն ոստ առ ոստ ան կը չորնար տրտմօրէն
Տերևներն իր դալկահար հողին վրայ ողբալէն,
Ո՛վ գիտէ ո՞ր մրբրկածուփ գիշերուան մէջ Արամազդ
Զարկեր պատռեր էր անոր սիրտն իր շանթով մեծասաստ.
Եւ գլուխն իր գեղուղէշ՝ որ կը հասնէր արևին՝
Արդ սօսափներ չէր երգեր, կը նիզակէր դէպ երկին;
Հոն, ահա այդ բարտիին շուրջը եկան հաւաքիլ
Անտառաբնակ չորս քուրմեր հագած կնգուղ և ջանջիլ,
Ու Տրդատի հրամանով անոր բունին ճիշտ ներքև
Միահամուռ փորեցին Նազենիկի փոսը սև.
Ու երգեցին Աստղիկին։ Տրդատ սրտէն շանթահար՝
Անոր դեռ թարմ դիակն առած գրկին մէջ կու լար։
Եւ զայն փոսին յանձնեցին՝ մաղերուն մէջ շաղապատ
Դեռ Բակուրի նետն ոսկի կը փայլակէր լուսացայտ։
Իջևանին քով տնկուած վաղնջական այն բարտին
Վերընձիւղում մ'ըստացաւ՝ բուժելով վէրքն իր սրտին՝
Երբ որ Հարճին լոյս մարմնոյն աւիշներով կենսայորդ
Թաթախուեցան հողին տակ արմատներն իր խորդուբորդ։
Եւ ըսուեցաւ թէ անոր տերևուտքին մէջ դողդոջ
Զքնաղ հոգին վարձակին բնակեցաւ դար մ'ամբողջ,
Լուսնկային ժպտեցաւ, ծոծրակին վէրքը ուսաւ ցոյց,
Հովերուն հետ պար եկաւ, բամբիռներն իր հնչեցուց։

Դ. Վարուժան

ԱՄԲՈԽՆԵՐԸ ԽԵԼԱԳԱՐՈՒԱԾ

Հեռու, մօտիկ ընկերներին,— աշխարհներին, արևներին,—
Հրանման հոգիներին։
Բոլոր նրանց, ում որ հոգին վառուում է վառ,—
Բոլոր նրանց հոգիներին արևավառ։—
Կեանքի, մահի այս ամեհի աղջամուղջում
Ողջակիզուող հոգիներին ողջոյն, ողջոյն...

Իրիկուն էր, հրակարմիր մի իրիկուն։
Արևը բորբ մայր էր մտնում արևմուտքում։
Դաշտի վրայ փռուել էր մուժ արիւնամած՝
Թոյն էր կարծես՝ բորբ արևի սրտից բամած։
Արևը թէժ մայր էր մտնում արևմուտքում,
Ու արիւն էր դաշտի վրայ, թոյն էր թքում։
Հորիզոնում վառել էր մի կարմիր քուրա—
Ու արնավառ փայլ էր սփռում դաշտի վրայ։
Ու արտերը ալեծածան վառուել էին
Արեգակի կարմիր փայլով իրիկնային։
Դաշտը անծայր ու անսահման, լայնատարած՝
Հրակարմիր տարածուել էր նրանց առաջ։
Ծով էր կարծես, որ սկիզբ ու սահման չունի—
Ծով էր կարծես մշուշի մէջ իրիկունի...

Արևի տակ իրիկնային, իրիկնային հրով վառուած՝
Այդ հին դաշտում կուում էին ամբոխները խելագարուած։
Բաղաքներից ու գիւղերից, ստեպներից հեռու ու մօտ՝
Եկել էին նրանք նորից՝ յուսավառուած ու կրակոտ։
Ով քաղաքից էր հեռացել—նա թողել էր մշուշը ծեր,—
Մշուշը, որ կեանքի վրայ միխաշաղախ ամպ էր դարձել։
Ով եկել էր գիւղից հեռու—նա թողել էր հողը խոնաւ,
Որի վրայ կեանքը հլու ու չէ մի ոսկի հասկ չը ծնաւ։
Ով եկել էր ստեպներից, նա թողել էր անծայրածիր

Լայնութիւնը հորիզոնի, որ իր համար բանտ էր դարձել։
Ով քաղաքից էր հեռաւոր, ուր մառախուղ էր անորոշ—
Նա բերել էր թոքախտաւոր սիրտը, որպէս կարմիր գրոշ։—
Ով եկել էր, թողած հեռուն անծայրածիր ուրբը դիւղի՝
Բերել էր իր մկաններում բեղմնաւորուած ուժը հողի։
Ով եկել էր ստեղներից, ուր ապրում էր որպէս գերի—
Բերել էր իր լուրթ աչքերում լայնութիւնը ստեղների...
Ամբոստացած, խելագարուած, չը տանելով հին կեանքը էլ՝
Անծիր դաշտում այդ հաւաքուած նրանք կուլի էին ելել։

...Մայր էր մտնում իրիկնային արևը թէժ լոյսով վառուած։
Ու երգելով կուում էին ամբոխները խելագարուած։
Դաշտն իր դէմը փուած էր նա շառագունուած ու արևուն,
Ու հեռում ճամփի վրայ հսկայ քաղաքն էր երևում։
Ծոյլ նազանքով, իրիկնային արևի տակ անփոյթ փուած՝
Պսպղում էր քաղաքը հին հազարերանգ մի զանգրուած։
Հեռու, հեռու, անծայր ու լայն տարածուել էր քաղաքը հին,
Լողանում էր կարծես մարմանդ մշուշի մէջ իրիկնային։
Ցաղթ շէնքերը բարձր ցցուած կարծես կախուած կարմիր օդում
Հետզհետէ մթնում էին, անգունանում ու աղօտում։
Հեռու հրով միայն վառուած պատուհանները տպակի
Փայլում էին արիւնամած վերջին հրին արեգակի.
Արևի դէմ փայլում էին հրաբոսոր՝
Բռնկուել էր նրանց սրտում տագնապը սուր։
Ու երկնահուպ գմբէթների ոսկի խաչերը հրագոյն
Հետզհետէ մարում էին իրիկնային լուրթ երկնքում։
Եւ երկնքի սիրտը մխուած բևեռների պէս արնաքամ
Փայլում էին արիւնամած ծխնելոյզներն հսկայական։
Ծուխ չէր ելնում նրանց փողից, չէին փնչում երկինքն ի վեր.
Զէր կարծրանում նրանց ծուխից իրիկնային երկինքը էլ...
Լոկ մշուշը իրիկնային թանձրանում էր հետզհետէ,
Ու մշուշում կորչում էին ծխնելոյզները երկաթէ։

Իսկ քաղաքից դէպի հարաւ՝ գուղձերի մօտ քանդած հողի
Երևում էր հսկայական կայարանը երկաթուղու։
Լաւում էր մերթ շոգեկառքի սուլոցը՝ սուր հեռու մուժում,
Մորթում էին կարծես այնտեղ խելագարուած մի անասուն...
Ճչում էր սուր, յուսակտուր, ու յուսահատ ձայնը նրա,
Որպէս անդարձ մահի մի լուր տարածուում էր դաշտի վրայ։

Ցցուած էր նա, կայարանը, հսկայ ու յոգի՝ նրանց առաջ։
Ու հանգոյցից կայարանի դաշտումը մէկ լայնատարած՝
Դէպի հիւսիս, դէպի հարաւ, ու արևմուտք, ու արևելք
Ուղիները երկաթագիծ ձգուել էին ամենուրեք։

Երակների պէս երկաթէ քաղաքամօտ կայարանից
Հեռու, հեռու ձգուել էին ուղիները երկաթագիծ։
Երակների պէս երկաթէ՝ ամուր գրկած կուրծքը հողի՝
Սեղմելով հետզհետէ փախչում էին գաղտագողի։
Ու ցցած էր ուղիների խաչակնքման սեղմ հանդոյցում
Կայարանը, որպէս մի հարց, որպէս հսկայ մի քարացում։
Ուղիների ճամփամիջում հանդոյց էր նա կարծես կապուած,
Ու անդիջում կուում էին ամբոխները խելագարուած։
Փչում էր մեղմ, մարմանդ մի հով՝ բարակ սուրում էր հարաւէն,—
Գնում էին կուռվ, երգով, որ կայարանը գրաւեն։

Կուում էին։ Սուրում էր մի իրիկնային մարմանդ քամի։
Դէմը քաղաքն էր տարածուել՝ հազարամեայ մի թշնամի։
Սֆինքսի պէս հսկայական, շէկ ծծերը դրած հողին
Նա կտրել էր արևակամ ամբոխների կարմիր ուղին։
Ու կայարանը յաղթանդամ իրիկնային կարմիր մուժում
Յաղթ նստել էր նրա առաջ, որպէս նրան հսկող մի շուն։
Յաղթ նստել էր նրա առաջ ու տիրուհու կամքին պերի՝
Երթն էր հսկում գետնատարած երկաթագիծ ուղիների։
Ու քիչ մօտիկ կայարանին խաչաձևած երկայնքն ուղու՝
Դաշտի վրայ ձգուած կային երկայն շերտեր բանդած հողի.
Թշնամին էր սպասել այնտեղ, ուր հողը թաց խոնաւ էր դեռ՝
Փորել էր նա դէմը, այնտեղ երկայնաձիք խրամատներ։
Փորել էր ջերմ կուրծքը հողի, հողի սրտում դարան մտած՝
Դրակում էր գաղտագողի ննդ ձեռքերով արիւնոտած։
Փորել էր և իրա առաջ հող էր դարսել, ու ցեխ ու քար—
Բայց ոչ մի դիրք հողում փորած չի պաշտպանի ժարդուն երկար...

...Կուում էին, ու կուելով անցնում էին նրանք առաջ։
Ու դաշտերում իրիկնային մանն էր քրքջում համատարած։
Երգում էր նա՝ երգը խառնած հրանօթի զրնգունին,—
Անցնում էին նրանք առաջ ու կրակած կուում էին։
Երգ էր սիրտը ամեն մէկի, երգ էր հայեացքը կրակոտ,
Վառուում էր սիրտը ամենքի որպէս կարմիր մի առաւօտ։
Երգ էր կարծես արևը հին, իրիկնային լոյսով վառուած,—
Ու երգելով կուում էին ամբոխները խելագարուած։

...Դիշերի դէմ գիշեր է մութ խաւարման նրանց հոգին,
Որ կարօտով մի կրակոտ սպասում է առաւօտին։
Խաւար է մեծ սիրտը նրանց, բայց խաւարում անծայրածիր
Երկինքներ կան կապուտաչեայ, հորիզոններ՝ անծայր, անծիր։
Ու աչքերում նրանց կապոյտ, ուր իջել է գիշերը մութ
Հազար բողբոջ կայ կրակոտ ու արշալոյս, ու առաւօտ։
Նրանց ձգուած մկաններում ուժն է նստել խոնաւ հողի,

Եթէ ուզեն՝ արևներին նոր տեմպ կը տան ու նոր ուղի...
Եթէ ուզեն՝ արեգակներ կը շպրտեն երկինքն ի վեր.
Եթէ ուզեն՝ վար կը բերեն երկինքներից արեգակներ...
Եթէ ուզեն՝ կամքով արի ու աշխարհի հրով վառուած —
Ինչեր միայն չեն կատարի ամբոխները խելագարուած...

...Լուսաբացին, երբ կարմրածուփ հորիզոնում հրաշուշան
Կարմիր վառուեց արևը հուր, որպէս կուի ազդանշան,
Երբ բռնկուեց արևելքում արևը նոր լոյսով վառուած,
Դուրս նետուեցին կայարանից ամբոխները խելագարուած...
Դէմը դաշտն էր անծայրածիր, ուր մշուշ էր արևագոյն,
Ու մշուշում շոգիացող առաւօտի մարմանդ միդում,
Կրկէսի պէս մի վիթխարի, խայտաբղէտ, խայտանկար
Եզերքի մօտ ճանապարհի երևում էր քաղաքը քար...
Աչքերն յառած հեռու-հեռուն կարմիր վառուող արեգակին՝
Արևավառ հեռուներում նրանք կուում էին կրկին.
Հոծ խմբերով հազարանուն, արեգակի հրով վառուած՝
Դէպի Արևն էին գնում ամբոխները խելագարուած...

. . . . . .

Եղիշէ Չարենց

ԱՄԵՆԱՊՕԷՄ

ՍԿԻԶԲ

Ես —
Հայաստանի պոէտ —
(երկիր, ուր մշուշ է ու մահ) —
բոլորի՛, բոլորի՛ համար
երգում եմ
նորից
հիմա։

Բայց ինչո՞ւ
միայն ես
երգեմ. —
միայն ես — և ոչ մի ուրիշ
Կարապետ,
Մարտիրոս,
Մարկոս —
Ներանք, որ
հիւանդ,
յուսահատ
թափառում են փողոցից-փողոց...

Ինչո՞ւ
չը պիտի
երգեն
էն բոլոր
խմբերը
յոգնած,
որ ծծում են քրտինքը խոնաւ
օրերի,
մշուշի,
մուժի —
որ փախել են,
եկել են մի օր —
Բիթլիսից,
Բաղդադից,
Մուշից։

Ներանք, որ
փոշոտ,
արևոտ,
օրերի խոնաւ մշուշում,
գալարուում են,
ծեծուում,
գրաւուում —
ու կորչում աշխարհի փոշում։

Որ հոսում են—
ջրտիկների նման—
աշխարհի երեսն ի
վայր—
ու սրբում է,
տանում է
քամին—
ու խոսնում է նրանց—իրար։

Եւ դուք չէ՞ք գիտէք
մթէ,
որ ամեն մի գրաստ
Գաբօ,
կամ ուրիշ մի
Թաթոս,
Մարգար,
կամ Եղօ, կամ համալ
Սեթօ—
իր խոնաւ թոքերում ունի
բիւր Տէրեան,
ու Վէրլէն,
ու Պօ...

Եւ
մթէ
դուք
չէ գիտէք,
որ ամեն մի անյայտ
Մարգար,
որ մէջքով թրիք է կրում—
հազար
պօէմներ
ունի—
իր խոնաւ, մգլած թոքերում։

Չէ գիտէք...
—Իմացէք հիմա։

(Ականջներդ—լայն—բացէք։)—

—Ուրիշ
հանճարներ
չէ կան
աշխարհում—
նրանցից բացի...

Եւ
գիտէք
ինչո՞ւ են երգել...
(Չը կարծէք, որ չնչին մի
«Կայէն»,
«Լիր-Արքայ»,
«Ֆաուստ» մի յիմար.—
—Նրանք
ժամանակ
չունեն
այդպիսի երգերի համար...)

Երգել են—
և երգը
նրանց—
դարերի—
սարսափից
անահ
կանգնել է—
վիթխարի,
հաստատ—
Նրանց երգը—

ԱՇԽԱՐՀԸ—
ա հ ա։

Աշխարհը—
—քաղաքները բոլոր,
ճամփաները,
վերջին
արտաքնոցը
քարէ—
ու. բոլոր բերքերը հոգի...

—Ինչպիսի լազմալար երգեր...
Ու հրանգ,
Հէքեանթ,
Հիացմունք։
—Ողջոյն, բիւրհանճար ընկեր,—
Կիրակոս,
Բարսամ,
Բարթուղ...
. . . .

Ելա՛
Բնչու՞ միայն նա։
—Քոզ բոլորը, բոլորը երգեն։
—Բոլորին։
—Բոլորին։
—Բոլորին։
—Երգեն։

Եւ
բնչու՞
միայն նա
երգի.
միայն նա.—
Յովակիմը,
Կարօն,
Սողոմոնը,
Մարգարը,
կամ մի
Բիթլիսցի,
Վանեցի
Պօղոս—

—Իսկ Իվանը,
ԻւաՀիքը,
Զունկ-ՖՀուն—
որ իրար
ճանաչում են—
վաղուց...

Եւ մի՞թէ
դուք
չը գիտէք,
որ կարող է այսօր
Տիքէթից
մի
Խուն-Իւն
ինքնիրեն
թռչել—
Ռաշտ,
Պեարոդրաղ,
Բիթլիս...

Կամ աշնան տերևի նման
կարող է
թռչել
Կարօն—

(Կուզէք՝ թող լինի Յաղթ)—
Բիթլիսից—
Մարսէլ—
Երևան—
Պեքին—
Գահիրէ—
Չիքագօ։

(Օ, վաղուց է աշխարհը դարձել
մի փոքրիկ-փոքրիկ փողոց...
Վաղուց—դեղնաւուն Պեկինից
մինչև Մուշ իր ձեռքը պարզած—
մի
Չինկ-Ֆու
կարող է
ասել—
—բարի լոյս,
Կարապետ,
Պօղոս...

Էլ
ինչու
միայն նա
երգէ...

Թող երգեն,
ինչքան մարդ
որ կայ։—
Թող
աշխարհը
ամբողջ
երգէ—
զրնգան,
զնգան,
զնգան...

Գ. Ա.

914. Յուլիս, Երեւան

. . . . . .

Երեւան։
Աստաֆեան փողոց։

Փողոցի մէջտեղով,
դանդաղ,
բեռի տակ ծանր կքած
անցնում է մի մուշա—
Պողոս։

Նստել է, ծանր, մէջքին
բեռը։ Հրում է նրան։
Նեւում է ուղեղը մէջքի,
ասում է. գնա, գնա։

Տօթ է։
Ամառւայ կէսօր։
Արեւը—կարմիր շաֆրան։
Արեւը—դրել է հինա...

Անցնում է—
ծանր,
դանդաղ։
Բեռը հրում է—
—գնա։

Ամեն ինչ—գորշ, առօրեայ։
Ինչպէս միշտ—գորշ, փոշոտ փողոց։
Սառը ջուր։
Խաղող։
Գինի։
Մարդիկ,
կառքեր,
մարդիկ։
Եւ ոչ-ոք չը գիտէր, որ հիմա
Աստաֆեան
փողոցի
վրայ—
հրաշք պիտի լինի...

Եւ հրաշքն... այնպէս պարզ եղաւ...

—Յանկարծ
մշակի
ճակատից—
(տօթ էր. բեռն ասում էր.—գնա)—
մի կաթիլ
քրտինք
ընկաւ—
փողոցի
փոշու
վրայ։

Ընկաւ—ու մնաց մի պահ։
Որ ցոլաց
Նրա մէջ
յանկարծ—
երկնքի անսահմանն հեռուն
ու արևը—հերո՞ւ մի առկայծ...

Ու յանկարծ
այնտեղից—
փոշուց—
ուր քրտինքը մնաց մի պահ—
բիւրաւոր
բանակներ
ելան—
վիթխարի,
համարձակ,
անահ...

Ելան—
բիւրաւոր
մարտիկներ,—
զինուորներ
երկաթէ
բրոնզէ—
նրանք,
որ չը կան,
մեռան—
խեղճ,
անխմաստ,
անգէն...
Ելան,
սահեցին յանկարծ
փողոցի ամառուայ փոշում—
բիւրաւոր
բանակներ
անահ—

պրանոպատ
բանակներ
ուժի.

Շողացին
ուլիններ,
արևը,—
երգեցին—
կրծքեր հզոր.—

դրոշներ
ծփացին
արնավառ—
դրոշներ
կարմիր,
բոսոր...

Եւ
նրանց—
բոլորի առաջից
մի դրոշ արնաքամ ուսին—
աբշաւում էր Պօղոսը
հաստատ—
ելնում էր փողոցի փոշին...

Ելնում էր
փողոցի
փոշին—
ծփծփում էր
բանակը
հոծ,—
—անցնում է դարերի միջով
մի հսկա,
բիւրանուն
Պօղոս...

Գնում էր—
Աստաֆեան փողոցով...
Աչքերը—
յառել էր հեռուն.
վառում էր արեւ՝ մի բոսոր
Պօղոսի
խոնաւ
աչքերում...

Ոչ-ոք,
ոչ-ոք չը տեսաւ—
Միայն մի վայրկեան էր—վառ,

Ցեռոյ—
անիւներ անցան.—

դորշ,
փոշոտ—
փողոցի ճանապարհ։

. . . . . .

Երևան։
Աստաֆեան փողոց։
—Ֆնթաթախ։ Աչքերին—
փոշի։

Խաղաղ—խաղողդ—քաղաք։

Ու գոռոցը.—«Ա՜-ի, ա-ի, ա-ի»—
իշու,
էշան,
էշի...

Ծոյլ,
դանդաղ,
մի քնած էշի
երջանիկ երազի նման—
տօթ,
արև,
ամառուայ փոշի—
Երևան,
Երևան,
Երևան...

Իսկ
իրա
խանութի առաջ
նստած՝ խանութպան Համօն
գանգատուում էր.
—ինչու չը կայ—
մի անուշ, գարնան քամի։

Թուում էր նրան,
Համօին,
որ աշխարհը—
փոշոտ մի փողոց,
ուր ապրում են
ողջ
աշխարհում—

Համոն,
մի կարօ,
մի Պօղոս...

Երազ էր թւում
Համօին—
փողոցի արևոտ հեռուն.
արևի վրայ
նստել է—ինքը Համոն,
Ոտքերը կախել է
վար
ու մռռում է դանդաղ մի երգ...
Հաշւում է տօթ ուղեղում.
—տասնըմէկ, տասերկու,
տասերեք...

Հոսում է արևի
գինին...
Իակ
էսօր
առևտուր
չը կայ...

Շաւտով
իրիկուն
կը լինի—
կը գնա—
նորից
կը գայ...
Կեանէ
արևը
նորից—
կը վառի,
յիմար ու
շոգ,—
էդ
շոգին
էլ
ով կը լինի—
գինի, կամ կոնեակ ուզող...

Երազում էր Համոն կիսաքուն։
Օրօրւում էր
մեղմիկ
հոգում—
աշխարհը—շոգ մի

անկիւն.—
Առաւօտ,
կէսօր,
իրիկուն...

Էլ
ինչ
հրաշքներ տեսնէր
խանութպան Համօի հոգին.
Էլ
ինչու
շարժուէր
տեղից...

Երբ եկան, ասին՝
«Պ ա տ ե ր ա զ մ»—
—Չ'դողաց անգամ ծայրը... բեխի։

Չը լսեց։
Չզգաց։
Չիմացաւ։

Թւաց թէ—
հարսանիք է մի...
Ու պիտի յորդէ... այնտեղ—
անհաշիւ...
կարմիր...
գինի...

Եւ
երբ
իրիկուն
եղաւ—
և եկաւ,
որ գնա
վրաց—
մինչև տուն լսեց բոլորից.—
—Պատերազմ։
—Պատերազմ։
Պ Ա Տ Ե Ր Ա Զ Մ...

Գլ. Բ.

Լսեցիք—
եկան—
—բանակներ հսկա, երկաթազրահ,
Լսեցիք—
եկան.
—աշխարհի բոլոր գաշտերի վրայ։

Եկան,
գնացին—
Ուրալից—դէպի կարպատները լուրթ,
ու կարպատներից—
մինչև էրզրում,
ու էրզրումից—
Տրիպոլի—
Հռոմ...

Բոլոր
կողմերից
հաւաքւած
եկան.—
—Թուրք,
իտալացի,
հնդիկ,
վրացի,
ռուս,
շոտլանդացի—
հայ,
խունխուզ,
Թաթար,
կիրգիզ,
չինացի,—
Նիւ-Եօրքից եկան,
Տաիտի կղզուց,
հեռու Բաղդադից—
եկան,
ձեր եկան,—
բոլորը—
բանւոր—
մուշա—
գիւղացի...

Եկան—
ձեր եկան.—

Լոնդոնից—
Պեկին—
Ղարս—
Մարբկամիշ.—
փոշի
բարձրացաւ՝
արձիձէ բամի...
. . . . . .

Ու ոռնում էին.
«վ՛ռ-վ՛ռ-վ՛ռ»—«վ՛ռ-վ՛ռ»
Թնդանօթների կոկորդները չոր.
«—վ՛ռ-վ՛ռ-վ՛ռ—»
«վ՛ռ-վ՛ռ—»
գիշեր,
ցերեկ,
կէսօր:
. . .

Ու ոռնում էին՝
—դաշտերի,
ցանքսերի,
արտերի վրայ։—
ծ՛ռ-ռռ-ռռ—
ռումբ.
—բռում, բռում, բռում,—
—էլ ոչինչ—
կարմիր արձիձից բացի...
. . . .

Ու ոռնում էին.
—ռումբն էր
հողմավար,
վարար
անձրևում—
բաղաքներ
քանդում
դաշտերը
ձևում...

Ու լուսարձակներ հազարաչքանի—
լոյս էին
սփռում
դաշտերի միջում—

՝ որ—արձիձն իր գործն անվրէպ անի։
. . . . . .

Իսկ քաղաքներում. —
Բերլինում,
Փարիզում,
Նիւ-Եորքում հեռու—
արնաքամ
տենդով,
ահով վարակված—
աշխատում էին գործարաններում։

Գործարաններում վիթխարահսկա,
որոնց
երկաթէ
շչակները բիւր—
անասունների նման խելագար—
իրենց
երկաթէ
խորխն էին փնչում հորիզոնն ի վեր—
գործարաններում
աշխատում
էին—
անտուն
խեղճերի
բիւրաւոր խմբեր..
Խեղճ—
կռում էին,
ու կոփում
ռումբեր—
թէկուզ գիտէին՝ ուր սլիտի ճամբեն.
խեղճ—
կռում էին,
ու կոփում
ռումբեր—
որ միլիոն,
միլիոն
թնդանօթների
անկուշտ, անյագուրդ ծարաւը չամբեն։

Եւ ովքեր էին
նրանք.
—կիսամեռ
ռուս,
հրէա,
թաթար,
դալլ,
իրլանդացի—

բոլորը—
բանուոր,
մուշա,
գիւղացի։
. . . .
Իսկ
իրենց
ոսկի կաբինետներում
նստած՝ գիտուններ—
խելքեր վիթխարի—
կովի պէս
դանդաղ
որոճում էին—
երազներ
մահի,
արիւնի,
հրի։
Նրանք—
ոսկեպատ կաբինետներում—
հանճարում էին—
հեղձուցիչ գազեր—
որպէսզի
Մահի ոտքերի առաջ—
մի ակնթարթում կանգնել կարենան
դիակի
բերդեր
ու բուրգեր
—մսէ։
. . . . . .
Եւ այսպէս—
եկան,
եկան դէմ դէմի—
բանակները բակում ու բազմամիլիոն.
եկան—
Բաղդադից—
Բերլին,
Պերեմիշլ,
Բերլինից—
Կալէ,
Դուվր,
Վերդեն,
Լիոն...

Աշխարհից—
աշխարհ—
ժամից—
ժամ—
եկան.

—Նիւ-Եորքից—
Գեքին—
Ուրալից—
Միլան...

Գլ. Գ.

Այսպէս էր։—

Խառնուեց իրար
աշխարհը—
եպերքից—եզերք—
ու բոլոր
դաշտերի
վրայ—
կանգնեցին քաղաքներ մեկ։

Հնամեայ
արևին
մօտիկ—
արևի հարազատը միակ—
քայքայուում էր կարծես տօթից
աշխարհը—
նեխած մի դիակ...

Ու խելառ,

սարսափից երբ,
յաւերժի մուժում անուղի—
տանում էր ժամանակը ծեր
դիակը իր նեխած տղի...
Տանում էր—
նեխած մի դիակ,—
փախչնում էր—
ամօթը իրա.
ու հոսում էր
արիւնը
տաք—
յաւերժի
ճամբէքի
վրայ...

Հեռու—
Սատուրնի վրայից—
կարելի է տեսնել
գազիր—
արնահոս վէրքերի նման—
լոյսերը Բեբլինի,
Փարիզի...

Դեղին—
ամպերի նման—
աշխարհի նեխած երեսին—
կուտակւել էին արնահամ
ամպերը
հեղձուցիչ
գազի...

. . . . . .

Այսպէս էր։

Եւ դուք
չիմացաք.
չը տեսաք ձեր մութ հոգում—
թէ ինչ
բանակներ մեռան—
հազարը մի սև իրիկուն։
Որ
նորից—
խաչելու համար—
ինչպէս նա, որ դնաց
Հոռմ—

Հաղորդիչը
անխոս
գնացին —
Վերջին
Պերիմիչ.
Էրզրում...

Երևան:
Ասոյաֆեան փողոց:

Նստած է խանութպան Համօն:

Աշուն է:
Անձրև:
Մշուշ:—
Թաց, խոնաւ—անձրևոտ քամի:

Փողոցը—
լիքն է հիմա.
դարձել է—լեփ լեցուն մի բերան.
Թափւել են մարդիկ
խմբերով—
անձրևոտ մայթերի վրայ:

Յօրանջում է փողոցը—
թաց.
որոճում է—
թէն, անատամ.—
ծամւում են—
մշուշում ընկած—
հազար ու հազար գաղթական:

Իսկ
այնտեղ —
կիսամերկ ընկած—
ժամերի
հիւրընկալ
բակում—
կինները—
շների նման—
ցկնում են...
ամեն...
իրիկուն...
Ցկնում են—

ժամերից նայող
գիտաստ
Աստծու
համար—
քոռոտ
Յիսուսներ
հայու—
Յիսուսներ—
հիւանդ,
յիմար...

Նայում է ժամերից
Աստուած.
ուրախ է. քիչ մնա... երգի.
—հոսում է
թուքը
նրա
ճերմակ
դարաւոր
մի բքին...

Դարաւոր աչքերի առաջ
ծնւում են Յիսուսները
հոծ.
—գիտէ, որ—
Նիւ-Եօրքից կը գան—
կը բանան հազար որբանոց...

Յորդում է ժպիտը լուսէ.
ամօթխած պառաւի նման
ուզում է... լայց... քաշւում է ասել.
իմ Որդին
անկողին
չունէր—
իսկ նրանք—
գիտէր—
կունենան...

. . . . . .

Այսպէս էր

Խանութի առաջ
նստած՝ խանութպան Համոն
մտածում էր՝ ինչու չը կայ

մի փոքրիկ-փոքրիկ քամի...

Մառաջում էր՝
«—Բաղդատ են հասել
գորքերը անպահման Ռուսի
էլ
սրանք
ինչու են փախել—
Բիթլիսից,
Բաղդադից,
Մուշից,
«—Ինչու են մնացել թափված,
թող դնան—
Բիթլիս,
Բասէն,—
էլ
ինչու
Էրզրումն առաւ
անյաղթ Անդրանիկ փաշէն...

Եւ էս մեծ մտքերից յոգնած—
գնաց տուն, որ...
փաստոն խաղա.
Իսկ նրա խանութի առաջ—
մեռնում է մի հիւանդ տղա...

. . . . .

Այսպէս էր։

Խանութպան Համօն—
հաւատում էք՝
այն էլ չը տեսաւ,
որ Պօղոսը
դնաց
կամաւոր...
Պօղոսը
դարձաւ—
«Ջանրէզը»...

Բայց երբ առաւօտը
չը կար—
որպէսզի ձանձրոյթից չը քնի—
Համօն երկար-երկար
երգում էր— «Մեր
Հայրենիք...»

Գլ. Դ.

Երևան։
այսինքն—Նաիրի։

. . . .

Այսինքն՝
այստեղից սկսած՝
գնում է դարերի հեռուն՝
հնամեայ,
հին մի
երազ.—

երկիր մի՝ դարերի ուրու։

Աշխարհի ճամբէքի մէջտեղում,
—ուր գալիս են
խառնուում իրար —
արևմուտքն ու արևելքը հին,—
կանգնել է դարերի ուրու—
հնամեայ
երկիրը—
Նաիրին...

Որպէս արիւնոտ հարցանիշ՝
դարերի մէջ մխուած վաղուց՝
կանգնել է—
երազի նման—
և չը կայ Նաիրի ուրիշ...

. . . . .

Աշխարհի այն ահեղ
օրերին,
աշխարհի ճամբէքի մէջտեղում—
ուր եղել է հին Նաիրին—
կանգնել էր
խանութպան
Համոն...

Կանգնել էր—
խանութի առաջ.
Նաիրի պէս հզօր, անմասան—
գնացել էր արնոտ ռազմադաշտ
Գողոսը—անյաղթ ջանրէզար։
Իսկ նրանց—
երկուսի մէջտեղում—

ակնոցը Նաիրեան քթին—
կանգնել էր
վարժապետ
Սողոմ—
Նաիրի հանճարեղ որդին...

Դարերի
մշուշից
ելած՝
ձեռքին հնամեայ մի նետ—
դարերի
մշուշի
վրայ
գրում էր՝ «Վեց վիլայէթ...»

Ո՞նց
իմանար
Սողոմ—
կամ Պօղոսը—«դարիր մշեցի»—
թէ ինչու—
Կարապետներն առան
ու Ռէյմսի տաճարն
այրեցին...

Էն էլ նա հազիւ հասկացաւ,
որ երբ ոուսը քաշուեց Վանա—
ուզեց որ՝ երկրի երեսին
«խայու անուն չը մնա...»

...Ողբալով Նաիրն հարազատ,
աշխարհի
ճամբէքի
մէջում—
վարժապետ
Սողոմ
յուսահատ՝
հարցնում էր՝ «—Ինչու, ինչու...»

. . . . .

Իսկ այնտեղ—
դէմ առ դէմ կեցած—
վէթխարի, անպարտ կռուում—
արնաքամ զարնվում էին—
Պօղոսը,
Իւսուֆը,
Լա-Օ-Նու—

Իվանը,
Հանսը,
Ժանէն—
Մոսկովցի,
Փարիզցի,
Բերլինցի—
բոլորը—
մի հակա,
բիւրանուն—
բանուոր,
մուշա,
գիւղացի։—

Եւ
նրանց
դիերի
վրայով—
Բաղդադից մինչև Լիոն—
անցնում էր
երկաթէ
քայլով—
մի հրէշ՝ անունը Միլիոն...

Գալիս էր—
Բերլինից,
Փարիզից.—
գալիս էր—
Մոսկովից դեղին...
Անցնում էր—
Նափոլի վրայից—
բռնել էր Բաղդադի ուղին...

Գլխի տեղ—հսկայ մի բերան,
գլխի տակ—անսահման մի փոր,—
կանգնում էր
դիերի
վրայ—
խմում էր արիւնը բոսոր...

Հագել էր—
պուրպուր,
ոսկի.
շողում էր արևի ներքոյ...
Ժպիտը ճարպոտ երեսին՝
անցնում էր յաղթական երգով...

Եւ նրա երգին
գերի—
Բաղդադից մինչև Լիոն—
արնաքամ կուում էին—
գօրքերը—
միլիոն,
միլիոն...

. . . . .

Արնահոս կռիւն այդ անեզ
վերջ պիտի
չունենար
գուցէ—
բայց Իվանը
յանկարծ
բղաւեց.
—Կանգնեցէք...
—Կանգնեցէք...
—Կանգնեցէք...

Առաւ—ու դարձաւ իր
ատեանները անծայր ու լէն...
Ու վառեց
դաշտերի
վրայ—
մրրիկներ անեզ, հրեղէն...

Պարզեց—
դրօշներ կարմիր,
կանչեց—
աշխուժով հրձիգ.
—Բանուորներ ամբողջ երկրի—
Միացէք։
Միացէք։
Միացէք։

Վառեց նրա կանչն ամբողջ
աշխարհը, ինչպէս մի
հրդեհ.
Ծփացին
բանակները
հոծ—
ու ծփանքը անեզ
յորդեց...

Մոսկովը
ծփաց
փողփողուն—
ինչպէս մի բոսոր դրօշակ—
պարզեց
արնավառ
աշխարհին—
մի կարմիր խնդութեան նշան։

Ու ելած
իրենց
տեղից—
հրահրած արնավառ ոսկով—
նորից
բանակները
դեղին
շարժուեցին դէպի Մոսկով...

Եւ
որպէս մի դաժան հրաց—
կարմիր
զօրքերի
հանդէպ—
Փարիզի մշուշից ելած—
կանգնեց
գնդապետ
Գալիֆէն...

Երկաթէ քայլերով
նորից
շարժուեց—
որպէս չար բազէ—
որ կարմիր Մոսկովում փորի

մի հակա, նոր Պէր Լաշէզ...

. . . . . .

Գլ. Ե.

. . . . . .

Աշխարհի
Հանդիսքի
մեջտեղում,
ուր գալիս են, խառնվում իրար
արևմուտքն ու
արևելքը հին —
ուր եղել է հին Նաիրին —
կանգնել էր —
վարժապետ
Սոզոն.
Մի հսկա յորձանքով անեզ —
գորգերը անսահման ոուսի —
վարարած գետերի նման
քաշվեցին Բասենից,
Մուշից...
Նորից —
խուժեց Թշնամին.
եկավ —
մինչև կարս հասավ...
Նորից
գարձավ Նաիրին —
բարբարոս
սրերի
յեսանի.

Նորից
տաճարներն հնամեայ
դարձրին
հողին
հավասար.
դաշտերում
անթաղ մնաց —
Գողոսը —
քաջ ջանբէգարի.

Նորից —
անվրդով նստած —
որպէսզի ձանձրույթից չը քնի —
Համօն երկար-երկար
երգում էր — «Մեր
Հայրենիք...»

Չէ որ—
Երևան քաղաքում—
հնամեայ
Մասիսին
մօտիկ—
Մասիսի պէս հզօր, կանգուն—
եղել էր նախիջևան
Ոգին...

Եղել էր—
հզօր, անյաղթ,
պարզել էր—
երկրպագոյն դրօշ...
Յառնում էր—
անկաշկանդ, ազատ,—
ու չը կար
Նախիջի
ուրիշ...
Աչքերը—
դարերի հեռուն,
ակնոցը—
նախիջևան քթին,—
կանգնել էր
վարժապետ
Սողոն—
Նախիջի
հնամեայ
Որդին։

Դարերի
մշուշից
եկած—
ձեռքին՝ հնամեայ մի նետ—
դարերի
մշուշի
վրայ—
գրում էր. «Վեց վիլայէթ...»
. . . . . .

Իսկ այնտեղ—
Կարմիր Մոսկովից—
դէպի աշխարհները բոլոր—
անթել
հեռագիրը
նորից
կանչում էր ձայնով ահաւոր։

Կանչում էր—
երկրից-երկիր,
ձայնում էր—
խանդով բոցավառ.
—Ելիր,
սովալլուկ
մարդկութեան
անէծքով
գերուած
աշխարհ...
Հիւսիսից—մինչև արևելք,—
մինչև Հինդ,
Հաբաշ,
Հնդուչին—
կանչում էր՝
—«Եղբայրնե՛ր,
ելէք։—
Սա է մեր կռիւը
վերջին»։
Եւ ահա—
այդ ահեղ կանչին—
Շիրակի դաշտերից—
յանկարծ—
Զրահապատը
խանդով առաջին—
Նախիրի
դաշտերում
գնդաց...

Զրահապատը գնդաց
գնդուն,
Շիրակի դաշտերից
կանչեց...
Նախիրի
հնամեայ
երկրում
կարմրավառ,
ահեղ
հնչեց...

Ու կարմիր—
հրդեհի նման—
մրրիկներ
անցան
սրընթաց,—

ու ելած
ընից
հնամեայ—
Արևելքը
կարմիր
խնդաց,
. . . . . .

Դու հիմա,
երկիր Նարրի,
աշխարհի
ճամբէքի
միջում—
կանգնել ես՝
խնդավառ էլի,—
յառնել ես՝
երկաթէ թռչուն...

Աշխարհի
ճամբէքի
միջում,
ուր գալիս, խառնւում են իրար
արևմուտքն ու արևելքը հին—
դու յառնել ես
նորից
բոցավառ—
վառել ես—
կրկին,
կրկին...
Պարզել ես՝
ճամբէքի միջում—
արնավառ, կարմիր մի
դրոշ—
ու նորից բո խօսքը
հնչուն
դրնդում է
խնդութեամբ
որոշ...

Դարերի
մշուշից
ելած—
հիմա Պօղոսը մշեցի—
կրում է—նոր մի երակ՝
վիթխարի,
անսահման,
անծիր...

Դանգնել է—
ճամբէքի միջում,
ու սրտում—երկաթէ մի երգ՝

աշխարհի
խնդությամբ
անհուն—

Նայում է դէպի Արևելք...
. . . . . .

ՎԵՐՋԱԲԱՆ

Հիմա—
ամեն տեղ—
լսում ես—
զնգոց...
երկաթի գրգիռ

Օրերը—հրեատանի...
Ու կեանքը—
հին կեանքը հիմա՝
յիշում ես—
«Տիտանիկ...»

Յիշում ես՝
եղաւ—ոչն.—
լոյսի ու երկաթի մեծափառ հանդէս.
Ջրերի վրայ—վիթխարի մի առաջ.
—օրօր...
շփոթում...
Մարսելիեզ.—
—անտես...

Ու ճչաց —
սո՞ւր ճչաց —
կանչեց հոգեվար —
ռադիօն...
կանչեց։
Դէպի բաղաքները բոլոր
դէպի կայանները բոլոր —
ճչաց,
սո՞ւր ճչաց,
կանչեց...
Ու մեռան...
գնացին...
Ո՞ւր...

—Օրերը թռչում, թռչում են արագ,
օրերը—կրակ,
պուրպուր...

Ուզում եմ՝
բռնեմ հոգիդ հաշմանդամ—
ու ծանր—
երկաթէ մի դիսկի նման—
նետեմ—
ո՞ւր նետեմ—
ո՞ւր...
—Դէպի կեանքը գալիք,
պուրպուր...
. . . . .

Շինւում է՝
գալիքը
հիմա—
շինում են,
փողոց առ փողոց —
Մոսկովցի
բանւոր մի Իվան,
մի Զինկ-Ֆու,
մի Հանս,
մի Պօղոս։

Ես ասում եմ՝
աշխարհը կը դառնա—
մի հաւր
խնդութեան
փողոց

ու Ջինկ-Ֆուն
Գերինում
կը խմէ—
քու կենացը,
Բարիՙ ուղ,
Գոգոս...

Իսկ
եթէ
յոյսերէդ իմ այս վառ—
իմ սրտում
պիտ մնան
վէրքեր—
ես էլի
քո փառքը
կերգեմ,
իմ հզօր,
երկաթէ
եղբայր։

Կերգեմ
քո կռիւը
մեծ—
աշխատանքդ—
հզօր,
անծիր—

այս տողերս—քո կամքը երգեց,—
այս տողերս—դու երգեցիր։

...Թէ խարեն
օրերն այս
հրկէզ—
սրտով մինչ
քեզ պէս ու
քեզ հետ—
ես էլի
քո փառքը
կերգեմ—
ես—
չնչին,
վերջին
պոէտ...

Եղիսէ Չարենց

ԲԱԼԼԱԴ

Բալլադը միջնադարեան ծագումն ունի և պրովանսալեան երգիչների (XII—XIII դարը) սիրած բանաստեղծական ձևն է։ Balada-ն երգւում էր պարի ժամանակ, ուստի դրա բառացի իմաստը պարերգութիւն է, որ համապատասխան է հին իտալական ballata-ին և ֆրանսիական balete-ին։ Դա սակայն նրա սկզբնական ձևն է եղել, որը յետագայում ընդունել է վիպերգական բնոյթ, գլխաւորապէս անգլիական և գերմանական դրականութեան մէջ՝ XVIII—XIX դարերում։

Նորագոյն բալլադը չափական գրաւածք է, որի նիւթը պատմական, կենցաղական, աւանդական անցքերն են կազմում, կամ հերոսական-աստիճանական սխրագործութիւններ, յաճախ ունենալով իր մէջ գերբնականի և հրաշալիի տարրերը։

ՓԱՐԻԱՆԱ

I

Բարձրագահ Արույն ու Մթին սարեր
Մէջք մէջքի տուած կանգնել վեհափառ,
Իրենց ուսերին՝ Ջաւախքից էլ վեր՝
Բռնած պահում են մի ուրիշ աշխարհ։

Ասում են, էնտեղ ամրծրլի նման
Միծղուն, կապուտակ երկնքի ծոցում
Նստում էր էն սէգ սարերի արքան՝
Իրեն Փարեանա ճերմակ ամրոցում։

Փարեանայ արքան մի աղջիկ ունէր,
Ու ոչ մի որսկան դեռ իրեն օրում
Էնքան գեղեցիկ եղնիկ չէր տեսել՝
Իր որսն անելիս Մթին սարերում։

Աշխոյժ ժանկութեամբ զարգարում էր նա
Ծերութեան օրերն ու սարերն իր հօր,
Ու ապրում էր ծեր արքան Փարեանայ
Իրեն էն քնքուշ ծաղկով բախտաւոր։

Մեծ բախտը սակայն առաջեն էր դեռ,
Եկաւ էն օրն էլ հասաւ երջանիկ.
Ու դրկեց արքան ուրախ դեսպաններ
Ամեն մի ամրոց, ամեն արքունիք։

— Ո՞րտեղ է, ասաւ, էն քաջը թէ կայ,
Իմ չնաշխարհիկ դատերն արժանի,
Թող առնի իր ձին, իր զէնքն ու գրահ,
Գանչ, ցոյց տայ իրեն, իր բախտը տանի...

II

Հագած, կապած զէնք ու գրահ,
Ձիաներ հեծած ամենի,

Ահա եկել, հաւաքել են
Կտրիճները Կովկասի։
Ծեր Փարեանայ Թագաւորի
Ապարանքի յանդիման
Կազմ ու պատրաստ սպասում են
Մօտիկ ժամին մրցութեան։
Սպասում է ողջ աշխարքը՝
Եկած կլուսած Փարեանա,
Թէ ո՞ր կտրիճն արդեօք պիտի
Էն սիրունին տիրանայ։

Հնչեց փողը։ Ահա փունջ-փունջ
Դրանիկներ, նաժիշտներ,
Ահա աղջիկն իր նազելի
Ու Թագաւորն ալեհեր։
Հայրը ինչպէս մռայլ մի ամպ,
Աղջիկն անուշ մի լուսին,
Ամպ ու լուսին իրար փաթաթած՝
Դուրս են գալիս միասին։
Հառաչում է ողջ աշխարքը.
Կտրիճները քարացած
Երազների մէջ են ընկնում՝
Էս աշխարքից վերացած։

—Նայէր, դատրիկ, իշխանազուն
Էս բաջերին լայնալանջ,
Այժմ պիտի հանդէս դուրս գան,
Պայքար մտնեն քո առաջ.
Մէկը իրեն ոյժը ցոյց տայ,
Միւսը՝ շնորհքն իր բազկի,
Ո՞րը՝ հարպիկ ձիաբշաւը,
Ո՞ն էլ Թափը իր վազքի։
Իսկ երբ կռիւն ասնի պատրաստ,
Յայտնի լինեն քաջն ու վատ,
Ու երբ անցնեն մեր առջևից
Կտրիճները պայազատ,
Ընտրիր, զարկիր ձեռքիդ խնձորն
Անյաղթներից անյաղթին,
Որ ողջ աշխարհ մայիլ մնայ
Անզուգական քո բախտին։

Ասաւ սրբան, ձեռքը ձգեց,
Նշան տուաւ պայքարին,
Այն ինչ աղջիկն առաջ եկաւ՝
Դարմիրը խնձորն իր ձեռքին։
—Գուցէ, հայրիկ, տկար լաւին
Յաղթի մի վէս տամարդի,
Բայց չի կարող լինել երբէք
Նա տիրելին իմ սրտի...
—Է՛յ Փարւանայ չքնաղ փէրի,
Ի՞նչն է հաւան քո սրտին.—
Առնում են կտրիճները,
Մնդրում կրկին ու կրկին։—
Դանձ ես ուզում, ոսկի՞, արծաթ,
Անգին քարեր ու գոհար,
Ա՞սող ես ուզում, մենք երկնքից
Վէր կը բերենք քեզ համար։
—Ինչի՞ են պէտք ոսկին, արծաթ
Եւ կամ աստղը երկնքի,
Ոչ էլ գոհար եմ պահանջում
Սէր-ընկերից իմ կեանքի։
Ես նրանից հուր եմ ուզում,
Անշէջ հուրը սրբազան,
Ով կը բերի անշէջ հուրը,
Նա է ընտրած իմ փեսան...

Ասաւ աղջիկն. իրար անցան
Կտրիճները քաջարի,
Զիանք հեծան, թռան հապճեպ
Դէպի չորս կողմն աշխարհի։
Թռան, շուտով դարձան, բերին
Անշէջ հուրը աղջկան.
Բայց... տարիք են գալիս, գնում,
Նրանք չկան ու չկան։

III

—Հայրիկ, ինչո՞ւ ետ չը դարձան
Էն քաջերը սիրատենչ.
Մի՞թէ, հայրիկ, ինձ մոռացան,
Էլ չեն բերի հուրն անշէջ։
—Ո՛չ, իմ զատրիկ, կը դան անշուշտ
Ու կը բերեն էս տարի.
Կռիւներով արիւնքրուշտ
Լիքն է համբէն քաջերի։
Ո՛վ իմանայ, պէտք է անցնեն
Մութ աշխարքից, Սև ջրից
Ո՛վ իմանայ, պէտք է փախցնեն
Եօթգլխանի դևերից։

Անց է կենում դարձեալ տարին.
Նայում է կոյան ամեն օր.
—Ո՞ւր է, հայրիկ, ե՞րբ կը գայ նա՝
Սարից թռած ձիաւոր։

Միշտ երազում ես տեսնում եմ
Էն հերոսին ապագայ՝
Հուր կարօտով թռած իմ դէմ,
Լուսանում է... ու չը կայ։

—Կը գայ, զատրիկ իմ թանկագին,
Հեշտ չի բերում հուրն անշէջ.
Շատ-շատ անգամ բերող հոգին
Ինքն է էրում նրա մէջ...

Անց է կենում դարձեալ տարին,
Նայում է կոյան ամեն օր.
Ոչ մի սալից, ոչ մի ճամբում
Չի երևում ձիաւոր։

—Հայրիկ, հայրիկ, մի՞թէ չկայ
Էս աշխարքում անշէջ հուր.
Թառամում է սիրտս անա,
Պաղ է էս կեանքն ու տխուր...

Էլ չի խօսում. մռայլ, տրտում,
Լուռ է արքան ալևոր,

Սև-սև ցաւերն իրեն սրտում,
Միտք է անում գլխիկոր։

IV

Էսպէս անցան շատ տարիներ,
Տխուր աղջիկն արքայի
Նայեց, նայեց սարերն ի վեր,
Ճամբաներին ամայի,
Յոյսը հատաւ... ու լաց եղաւ.
Էնքան արաւ լաց ու կոծ,
Որ լիճ կտրեց արտասուքը,
Ծածկեց քաղաքն ու ամրոց։
Ծածկեց, կորան, ինքն էլ հետը...
Այժմ էնտեղ տրտմաշուք
Մոր Փարւանայ լիճն է ծփում
Ցատանկ, ինչպէս արտասուք։
Ու էն վճիտ ջրերի տակ
Ցոյց են տալիս մինչ էսօր
Մեր արքայի ճերմակ ամրոցն
Ու շէնքերը փառաւոր։

* * *

Ասում են՝ էն թիթեռները,
Որ գիշերւայ խաւարում,
Որտեղ ճրագ, որտեղ կրակ,
Որտեղ լոյս է երևում,
Հաւաքւում են, շուրջը պատում,
Մէջն են ընկնում խելագար,
Ասում են, թէ էն փարւանայ
Ջահիլներն են սիրավառ։
Շտապելուց թև են առել,
Դարձել թևթև թիթեռներ,
Ու տակաւին հուր տեսնելիս՝
Մէջն են ընկնում անհամբեր։
Ջանք է անում ամեն մինը
Շուտով տանի, տիրանայ...
Ու էրւում են, էրւում անվերջ
Կտրիճները Փարւանայ...

Յով. Թումանեան

ԱԽԹԱՄԱՐ

Միծաղախիտ Վանայ ծովի
Փոքրիկ գիւղից առափնեայ
Ծովն է մտնում գաղտագողի
Ամեն գիշեր մի տղայ։

Ծովն է մտնում, առանց նաւակ,
Բազուկներով առնացի,
Ջուրը ճողփում, լող է տալի
Դէպի կղզին դիմացի։

Խաւար կղզուց պարզ՝ ու պայծառ
Մի լոյս կանչում է նրան,
Մի վառ փարոս նրա համար,—
Զը մոլորի իր ճամբան։

Սիրուն Թամարն ամեն գիշեր
Այնպէս կրակ է անում,
Եւ սպասում է անհամբեր
Այնտեղ՝ մօտիկ դարանում։

*
* *

Ծփում է ծովն ալեծածան,
Ծփում է սիրտը տղի.
Գոռում է ծովն ահեղաձայն,
Նա կուում է կատաղի։

Եւ Թամարը սրտատրոփ
Արդէն լսում է մօտիկ
Ջրի ճողփիւն, ու ողջ մարմնով
Սիրուց այրւում է սաստիկ։

Լռեց։ Ծովի խաւար ափին
Կանգնեց սև-սև մի ստուեր...
Ահա և նա... իրար գտան...
Կասկածաւոր լուռ գիշեր...

Միայն ալիքը Վանայ ծովի
Մեղմ դիպչում են ափերքին,
Հըրհըրելով հեռանում են
Շշունջներով անմեկին։

Նրանք ասես փըսփըսում են...
Ու աստղերը կամարից

Ակնարկելով բամբասում են
Լիրը, անպատիվ Թամարից...

Բամբասում են կոյսի սրտում...
Ժամ է արդեն... ու կրկին
Մինն ալեկոծ ծովն է մտնում,
Միւսն աղօթում եղերքին...

* * *

Բայց միանգամ չարկամ մարդիկ
Նրանց գաղտնիքն իմացան,
Լոյսը հանգցրին սև ու սատանիկ
Մի մութ գիշեր գիւղական։

Մոլորուեցաւ խաւար ծովում
Լուղորդ տղան սիրահար,
Ու բերում է հողմը, բերում
Հառաչանքներն—«Ա՜խ, Թամար»...

Մօտ է ձայնը. խօլ խաւարում,
Ժայռերի տակ սեպացած,
Ուր ամեհի ծովն է գոռում,
Մերթ կորչում է խլացած
Ու մերթ լսւում ուժասպառ՝
«Ա՜խ, Թամար...»

* * *

Առաւօտեան ծովը ծփաց,
Ափը ձգեց մի դիակ,
Նրա շուրթին, պաղ, կարկամած,
Ասես, մեռած ժամանակ
Սառել էին երկու բառ.
«Ա՜խ, Թամար...»

Այն օրուանից սրա համար
Կղզին կոչուեց «Ախթամար»։

Յով. Թումանեան

ԱՍՊԵՏԻ ՍԷՐԸ

Հին ժամանակ իր ամրոցում ոսկեղէն
Կը բնակուէր հուր ու հրաշք մի աղջիկ.
Ու կապատէր, որ հեռաւոր տեղերէն
Իր երազի ասպետը դար գեղեցիկ։

Եւ ձին հեծած՝ բանակներով յաղթաղէն՝
Եկաւ մի օր կանաչ-կտրիճ մի իշխան։
Սանձը գցեց ու քար կտրեց հիացքէն,
Երբ որ տեսաւ պատշգամբում աղջկան։

«Հրաշք-աղջիկ, թագաւորիս զօրքերով
Կէս-աշխարհը դրօշակիս տակն առայ.
Քեզ սիրեցի. սիրաղ տուր ինձ, քո սիրով
Միւս կէսն էլ սիրեմ, բերեմ քեզ ընծայ»։

«Այդ չէ սէրը, ասաց աղջիկն ասպետին,
Քաջ ես, գիտեմ. գիտեմ, չկայ քեզ նման,
Դու կարող ես տիրել արար-աշխարհին.
Բայց այդ երբէք հզօր սիրու չէ նշան»։

«Ի՞նչպէս յայտնեմ արտիս հուրը, նազելիս.
Կուզէ՞ս՝ պատռեմ կուրծքս հիմա այս սրով,
Ոտներիդ տակ նետեմ սիրտս սիրով լի,
Մեռնեմ ուրախ ու բախտաւոր քո սիրով»։

«Այդ չէ սէրը, ասաց աղջիկն ասպետին,
Գիտեմ՝ քաջ ես, բայց շատ վախկոտ թոյլեր կան,
Որ յուսահատ քաջի նման կը մեռնեն.
Բայց այդ երբէք անշէջ սիրու չէ նշան»։

Ու կտրիճը մնաց մոլոր ու շուար,
Աչքերն հանդած՝ լոյս-երեսին աղջկայ.—
«Ինչ որ կուզես, ասա՝ անեմ քեզ համար.
Արևի տակ իմ սիրուս պէս սէր չկայ»։

«Թէ կը սիրես, թող ինձ հիմա ու գնա,
Ու ականջ դիր, մի օր դուռդ կը բաղխեմ»։
Այսպէս ասաց ու իր ծոցէն մարմարեայ
Նետեց նրան մի հատիկ վարդ հրեղէն։

Ասպետն ասաս՝ վարդը ջնջուչ համբուրեց,
Վերջին անգամ նայեց, նայեց սիրածին,
Միրտս վարդը պահեց այրուզ ծոցի մէջ,
Ու խիստանեց, ու պատցաս նժոյգ-ձին։

Եւ նստել է ամրոցի մէջ մէն-մէնի
Այն իշխանը երազներում երջանիկ.
Վարդը ծոցում ու ականջը մի ձէնի,
Եւ թե ասան, թուան օրեր ու տարիք։

Աչքերը գոց՝ պատած ոսկի մշուշով,
Ուր կը ժպտար հուր-աղջիկը աննման,
Այն ասպետը ծով-կարօտով, լի յոյսով,
Սիրտը ձէնի լուռ սպասեց աղջկան...

Եւ թե ասան, թուան օրեր ու տարիք,
Քաջ կարիճը դարձաւ գողգողջ մի ծերուկ.
Ու երբ մահը գուռը բաղխեց զարհուրիկ,
Հանեց ծոցէն վարդը խամրած ու դալուկ։

Վերջին անգամ աչքին դրեց փսփսգով՝
Վարդն համբուրեց ու համբուրեց ու...մեռաւ՝
Հոգին լցուած բլբուլների երգերով...
Եւ գրոյցս էլ այսպէս տխուր վերջացաւ...

Ա. Խասիակեան

ՅԱՒԵՐԺԱԿԱՆ ՍԷՐԸ

I

Լուսակերտ է ապարանքը Թագմորի,
Անապատում, որպէս երազ ոսկեհիւս.
Եօթն հարիւր սիւնի վրայ մարմարի
Սլանում է աշտարակը երկնատոյգ։

Շուրջը նազուկ արմաւենու պուրակներ,
Ու երգում են հրաշք-հաւքեր կաթսոով,
Շատրւանները հուրհուրում են կրակներ,
Ծաղիկները պճնազարդում արծաթով։

Գահի վրայ երիտասարդ էլ-Սաման
Մեղմ գրկել է հրաշագեղ Բամբիշին.
Հիւսքը նրա կրծքի վրայ կը ծփան,
Հանց նունուֆար լոյս-ադրիւրի երեսին։

Փերուզ ծովը, որ փարում է մշտաթոր
Սեպ ժայռերը Լիբանանի փեշերի,
Զունի այնպէս, այնպէս փրփուր ձիւնաթոյր,
Ինչպէս կուրծքը լուսապայծառ Բամբիշի։

Արքայական գոյգի շուրջը զուարթուն
Մանկաւիկներ և նաժիշտներ ոսկեհեր
Նստում են, կաքաւում են ու երգում,
Գիշերները, առաւօտից մինչ գիշեր։

II

Երբ հանգչում են ապարանքի ջահերը,
Եւ արծաթեայ կարապի պէս լուսնկան
Փայփայում է շատրւանի ջրերը՝
Շշնջում է սիւգի նման էլ-Սաման։

Շշնջում է լուսաթաթախ Բամբիշի
Ականջն ի վար այնպէս քնքուշ, հեզասան,

Ինչպէս լուսնի շողակաթը թաւիշի,
Այն հոյակապ սիւներն ի վար մարմարեայ։—

«Բարձր են երկնի ձեղունները, նազելիս,
Բայց իմ սէրը բարձրաբարձր է նրանցից.
Խոր են երկրի հիմունքները, նազելիս,
Բայց իմ սէրը խորախոր է նրանցից։

Արուսեակը, որ ներկում է ծիրանի
Գառնուկների շրթունքները Տիւրոսի,
Այնքան կարմիր, այնքան կարմիր բոց չունի,
Ինչքան որ քո համբոյրները անդուսի։

Կը խորտակուի ապարանքս գեղանի,
Եւ կը ծածկուի անապատի շնչի տակ.
Կը բարձրանայ անհուն ծովը Սիդոնի
Եւ կը գերէ անապատը ծագէ ծագ։

Ժամանակը իր վախճանին կը հասնի.
Եւ արևը մի բուռ մոխիր կը դառնայ.
Բայց իմ սէրը վախճան չունի, ափ չունի,
Նա յաւերժ է, նա անշեղ է, նա անմահ»։

Զէացնող համբոյրներում դիւթական,
Հանց հինաւուրց հեքիաթական գինու մէջ
Թալկանում է, և հալաչում է Էլ-Սաման...
Ժամանակը դառնում վայրկեան ու յաւէրժ...

Ապարանքի եփենոսեայ դռներից
Երազանուշ մուշկ ու կնդրուկ է բուրում,
Մանկլաւիկներն ու նաժիշտներն ցնծալից
Նւագում են, ու երգում են, ու պարում...

III

Լուսինը մահուան թևով ծաւրած՝
Առկայծում է կանթեղն աղօտ, մենաւոր.
Եւ մեռնում է հեղ Բամբիշը դալկացած՝
Էլ-Սամանի կրծքի վրայ սգաւոր։

Նա մեռնում է, ինչպէս ցօղը բողբոջում,
Մանկիկն, ինչպէս սուրբ գրկի մէջ մայրական.
Եւ հծծում է, աղօթքի պէս շշնջում
Հէգ Բամբիշի ականջն ի վար Էլ-Սաման։

«Կը խորտակեմ կամարները երկնային,
Ես չեմ թողնի, ես չեմ թողնի դու մեռնիս.

Եւ կը վանեմ, և կը յաղթեմ չար մահին,
Ես չեմ թողնի, ես չեմ թողնի դու մեռնիս...»։

Եւ դրկել է դժգունացող Բամբիշին,
Մահուան հանդէպ սուր ու վահան է շարժում.
Եւ Բամբիշի սառած-լռած շրթներին
Իր հրեղէն շունչն ու սէրը ներարկում։

IV

Լուսիններ են եկել-անցել, ու կրկին
Մեռած Բամբշին ամուր դրկած Էլ-Սաման
Շշնջում է ականջն ի վար մեղմագին,
Իշպէս դեղին սիւներն ի վար լուանկան։

Եւ լքել են ապարանքը սարսափից
Մանկլաւիկներն ու նաժիշտներն ոսկեհեր,
Արմաւներն են լուռ սօսաւում թախծալից,
Եւ մարել են վառ ծաղիկներն ու ջահեր։

Շատրուաններն հեծկլտում են ու լալիս,
Եւ սիւնից սիւն սարդը ոստայն է հիւսում.
Անապատի հողմն է միայն այց գալիս
Եւ դահի շուրջ կաղկանձում ու փսփսում։

Օձն է սրբում սառն ու փայլուն կողերով
Էլ-Սամանի ոսկորների լուռ փոշին.
Բայց Էլ-Սաման կմախքային ձեռներով
Պիրկ գրկել է նորից հիւծած Բամբիշին։

Եւ քայքայուն ականջն ի վար լռելեայն
Մեռած-սառած շրթունքներով Էլ-Սաման
Շշնջում է յաւերժաբար ու անձայն,
Ինչպէս խարխուլ սիւներն ի վար լուանկան։

Պուրակները չորացել են, չքացել,
Եւ շիջել է լոյս-երազը սիւնների.
Անապատը փեղին քղանցքն է փռել
Եւ ծածկել է ապարանքը թաղմոցի։

Եւ աւազուտ շիրմի վրայ մենաւոր
Աշտարակն է մնում կանգուն ու վկայ,
Որ իմանան վառ աստղերը հեռաւոր
Էլ-Սամանի սէրը հզօր ու անմահ։

Որ աշխարհին պատմեն սէրը յաղթապանծ,
Էլ-Սամանի սէրը անանց, յաւէրժող,
Կարաւաններն ու ճամբորդներն երկիւղած՝
Հեռուներից հեռուն եկող-գնացող...

Աւ. Իսահակեան

ԵՐԳՉԻ ԱՆԷԾՔԸ

(Ռ ա ֆ ա ել ի)

Դարեր առաջ կար բարձրաբերձ պարիսպներով մի դղեակ—
Հոյակապ էր, փառքն հասել էր մինչ ովկիան կապուտակ.
Շուրջը փուած ծաղկապսակ անուշաբույր պարտէզներ,
Թարմ գովաշունչ շատրուանքներ ցայտում էին վառ շիթեր։

Եւ բազմայարկ այնտեղ նստող գոռոզ արքան հողաշատ
Բազմած էր իր գահի վրայ՝ մուայլ դէմքով ու գունատ.
Ամեն խորհուրդն արհաւիրք էր, կատաղութիւն աչքերում,
Նրա ամեն խօսքը—կորիւստ, արիւն էր նա միշտ գրում։

Այս ամրոցը երկու ազնիւ երգիչ գնացին մի անգամ.
Մէկն ալեզարդ, մին պատանի ոսկեգանգուր ու փարթամ.
Տաւիղն ու�ին, մի գեղեցիկ նժոյգ հնձած ծերունին,
Նրա կողքին ընթանում էր ծաղկահասակ պատանին։

Ծերունին ասաց իր ընկերին. «Պատրաստ եղիր, իմ որդեակ,
Մեր սրտառուչ տաղերն յիշիր, երգիր ազատ, համարձակ.
Երգիր և վիշտ, և խնդութիւն մատաղ ձայնով դու հզօր,
Գոռ արքայի քարէ սիրտը պիտի շարժենք մենք այսօր»։

Արդէն շքեղ և սիւնազարդ նրանք սրահումն են կանգնած.
Գահի վրայ թագաւորը և թագուհին են բազմած.
Նա սիգապանծ, ինչպէս փայլը արիւնավառ հիւսիսի,
Իսկ թագուհին քնքուշ՝ նման արուսեակին լուսալի։

Չարկեց ծերունին սգեղուած նուրբ լարերին մատներով,
Ճոխ արձագանգ տուին նրանք լիահնչիւն ձայներով.
Եւ դեղգեղեց տաղ երկնարժան չքնաղատես պատանին,
Ինչպէս համերգ ոգիների և խլաձայն ծերունին։

Նրանց երգն է զարուն և սէր, երանաւէտ ոսկեդար,
Ազատութիւն, խօսք ճշմարիտ, արիութեան գործ արդար,
Եւ հեշտութեան ամեն վայելք, որ ուզում է սիրտ մարդկան,
Եւ այն ամենն, որ կարող է մարդուն տալ տիպ վեհութեան։

Պալատական ասպետները ծաղու խոսքեր մոռացան,
Եւ անվեհեր զինուորները հոգոր երդից յաղթեցան.
Իսկ թագուհին՝ սիրտը շարժուած, աչքին արցունք բերկրալից,
Ահա հանեց ձգեց երդչին չքնաղ մի վարդ իր կրծքից։

«Գայթակղեցիր դուք իմ ազգը, կամիք խլել և իմ կին»,—
Ահեղ գոչեց, դողաց մարմնով թագաւորը մոլեգին.
Զգեց սուսերն, օդում ցոլաց, մատաղ կուրծքը պատառեց,
Ոսկենչիւն երգերի տեղ կրծքից արիւն դուրս ցայտեց։

Ասես մրրիկն խակոյն ցրուեց այն ունկնդիր ամբոխին.
Իր վարպետի գրկումն հոգին փչեց դժբաղդ պատանին.
Ծածկեց մարմինն նա թիկնոցով, նստեցրեց երիվար,
Ամուր կապեց և ամրոցից նա հեռացաւ վշտահար։

Եւ դուրս եկաւ, կանգնեց բարձր դարպասի դէմ ծերունին
Եւ ձեռքն առաւ տաւիղն, ամեն տաւիղներից մեծագին.
Զարկեց նրան կճեայ սեանը, փշուր-փշուր խորտակեց,
Դէպի ամրոցն ու պարտէզներ սոսկալի ձայն արձակեց.

«Վայ քեզ, խրոխտ դու ապարանք, թող ոչ մի ձայն քաղցրութեան,
Լաբի հնչիւն, երգ չը լսի քո յարկի տակ յաւիտեան,
Այլ ստրուկների երկչոտ քայլեր և հառաչանք, հեծութիւն.
Մինչ չար ոգին վրէժխնդրութեան քեզ դարձնէ սև ամիւն։

Վայ ձեզ, և դուք, անուշաբոյր, գարնանագեղ պարտէզներ.
Տեսէք ահա մանուկ երգչի դէմքին սառած տանջանքներ.
Թող սրա տեղ դուք թառամիք, աղբիւրներդ ցամաքեն,
Գալ օրերին թող բար կտրած և ամայի ձեզ տեսնեն։

«Վայ քեզ, նզովք երդիչների, վայ քեզ, անարդ մարդասպան.
Արիւնալակ փառքի համար մարդ լինի թող ունայն.
Թող մոռացուի քո անունը մշտագիշեր խաւարում,
Ինչպէս մանուան վերջին հառաչք, սին ձայն, ցնդի թող օդում։

Ծերունին ասաց, և երկինքը լսեց նրա պատգամը.
Պարիսպները փոշի դարձած, կործանուած է ապարանք.
Բարձր մի սիւն դեռ վկայ է անցեալ աւուրց փառաւոր,
Այն էլ շուտով պիտի լինի մի փլատակ սգաւոր։

Չկայ բուրմունքն այգիների, շուրջը միայն անապատ.
Չկայ վտակ, սաղարթախիտ չկայ մի ծառ սուլթաշատ,
Եւ չէ յիշում մի տարեգիր կամ երգ անունն արքայի։—
Այսպէս ահա կատարուեցաւ անէծքն ահեղ ծեր երգչի։

Թարգմ.՝ Յով. Յովհաննիսեանի

ԱՌԱԿ

Առակը այլաբանական մի գրուածք է, որի մէջ հանդէս է բերուում մարդու պակասաւոր գծերը, ծաղրուում նրա այլանդակ կողմերը։

Առակի նախնական ձևը կենդանական էպոսն է եղել, երբ մարդը տակաւին կեանքի ամենապարզ աստիճանի վրայ էր՝ իր նախնական խելքով ու պարզութեամբ, իսկ աշխատանքի ձևը՝ անասնապահութիւնը։

Կենդանական էպոսը առակ է դառնում այն ժամանակ, երբ մարդկային կենցաղը մտնում է աւելի բարդ շրջան և կենդանական աշխարհի պատկերները ստանում այլաբանական իմաստ, ծառայելով խրատի ու մերկացման նպատակներին։

Մարդկային կեանքի կուլտուրական զարգացման հետ ընդլայնուում է և մարդկային դիտողութեան սահմանները, և առակը՝ բացի կենդանականից՝ ընդգրկում է նաև բուսական աշխարհը, սպա առհասարակ բնութիւնը և մարդուն։

Այս կամ այն կենդանուն բնորոշող կողմերի և մարդու բնաւորութեան յատուկ գծերի միջև՝ դիտող մարդը նկատել է նմանութիւն, որով այս կամ այն կենդանին առակի մէջ դարձել է մարդկային դրական կամ բացասական գծերի այլաբանական դէմք։

Ժամանակակից առակը ունի երկու յատուկ կողմ. առաջինը՝ նրա այլաբանական պատմուածքն է, որ պիտի ամփոփուած լինի բանաստեղծական ձևի մէջ. երկրորդը՝ առակի իդէան, դաղափարը։ Դաղափարից զուրկ գեղարուեստական առակ չը կայ, ինչպէս դաղափարից զուրկ գեղարուեստական ստեղծագործութիւն չը կայ։ Առակի դաղափարի մասին սակայն հեղինակը չը պէտք է խօսի. դա պիտի բղխի առակի պատկերաւոր բովանդակութիւնից։ Գեղարուեստական առակը պիտի օժտուած լինի պատկերաւորութեամբ, կենդանագրութեամբ, և հանդէս բերուած կենդանիների, մարդկանց և անշունչ առարկաների տիպականութեամբ ու բնորոշ գծերով։

Սուրխաթեան

ՄԻՋՆԱԴԱՐԵԱՆ ՀԱՅ ԱՌԱԿՆԵՐԻՑ

1

ԱՂԻԷՍ ԵՒ ԿԱՔԱՒ

Աղէս էառ կաքաւ մի ի բերանն և կամէր ուտել զնա։ Եւ ասէ կաքաւն. Օրհնեալ է Աստուած, որ կոչեաց զիս յիւր արքայութիւն. զի գերծանիմ ի յայս չարեացս. և ապա դու, աղէս, գոհացիր զԱստուծոյ և ապա ուտես զիս. քեզ մեծ վարձք է։

Եւ աղէսն կկոգեցաւ և հայեցեալ յերկինս և բացեալ զբերանն՝ ասէ. Գոհանամ զքէն, Աստուած բարի, որ պատրաստեցեր ինձ սեղան բարութեան։

Եւ կաքաւն գերծաւ ի բերանոյն և թռաւ։

Եւ ասէ աղէսն. Ո՛վ անմիտս և յիմարս, յառաջն պարտ էր ինձ ուտել և ապա գոհանալ զԱստուծոյ։

2

ԳԱՅԼ ԵՒ ԷՇ

Գայլն էգիտ էշ մի գէր և կամեցաւ ուտել զնա։ Եւ ասէ էշն. Աղաչեմ զքեզ, ով գայլ, հան զայս խոցս ի յիմ սրտէս և ապա ուտես զիս. զի Աստուած եաս զիս ի ձեռս քո կերակուր. քանզի բեռս չար հասաւ յոտս իմ և տանջէ զիս։

Եւ անցեալ գայլն յետոյ կողմանէ, զի հանցէ զբեռն։ Եւ էշն ամենայն զօրութեամբն իւրով կիցս եհար զբերան գայլուն, և ջախջախեցան խամծերք նորա։ Եւ գայլն լար գառնապէս և ասէր. Ցիրաւի կրեցի զայս ամենայն վիշտս. զի ես ի սկզբանէ մտադրած էի. և արդ ոչ արար զիս պայտար։

3

ԱՌԻԻԾ ԵՒ ԱՂԻԷՍ

Առիւծ մի կորիւն ծնաւ։ Եւ ժողովեցան կենդանիքն ի տես և յուրախութիւն։ Գայ աղէսն ի մէջ բազմամբոխին և մեծահանդիսին նախատեաց զառիւծն յատեանն բարձր ձայնիւ և անարգեաց, թէ ա՛յդ է քո կարողութիւնդ. զի մի մի կորիւն ծնանիս և ոչ բազում։

Պատասխանի ետ առիւծն հանդարտաբար և ասէ. Այո՛, մի կորիւն ծնանիմ, բայց առիւծ ծնանիմ և ոչ աղէս քան զքեզ։

4

ԻՇԱՏԷՐ ԵՒ ԳԱՅԼ

Ասի յառակաց, թէ այր մի զէշ իւր կորուսեալ էր և խիստ աղէտալի ի շուրջ գայր և խնդրէր։ Եւ տեսեալ գայլուն ասէ. Ա՛յր դու, զի՞նչ խնդրես։

Ասէ այրն. Ո՛վ գայլ, զիմ իշուկս կորուսեալ եմ և չեմ գտնուլ։

Ասէ գայլն. Ո՛վ այր, զքո էշն ես գտի։

Ասէ այրն. Բե՛ր զէշն, որ տամ զքո գտնելէն։

Ասէ գայլն. Ո՛վ այր դու, զքո էշն ի չամուռն էր անկեր և ես երեք օր ի հետն եմ դառեալ, և ապա կարացի ի դուրս քաշել, և ի վարձին տեղն զէշն կերի. գիտէի, որ աղքատ մարդ էիր և ինձ վարձ չը կարէիր տալ։

5

ԳԱՅԼ ՅՈՒՍՈՒՄՆ

Ասի յառակաց, թէ գայլին ձագն բռնեցին ու գրեցին զէր, թէ կարդա։ Եւ ասեն, թէ ասա ա՛յբ։ Եւ նա ասէ՝ այծ։ Եւ ասեն, թէ ասա զի՛մ։ Եւ նա ասէ՝ գառն։ Եւ ասեն, թէ ասա դա՛։ Եւ ասէ՝ դմակ։ Եւ ասեն՝ ասա ե՛չ։ Նա ասէ. Ես կու երթամ, զիս անցաւ, այլ չեմ ի հասանիլ։

ԿՌԻԼՈՎ

1

ՍՏԱԽՕՍ

Իշխանաւոր մարդուն մէկը
Շատ տեղեր ման գալէն ետքը
Հայրենիքը դարձեր էր.
Օր մը ճանչուրին մէկը հետն առած
Ու թեւէն մտած՝
Դաշտին մէջ կը քալէր.
Պատմելէն չէր կշտանար դուրսը տեսած բաները,
Եւ պարծանքով լի էին իր ամեն մէկ խօսքերը։
Այնպիսի խոշոր խոշոր սուտեր կըսէր համարձակ,
Որ բնաւ կարելի չէր դանագանել ծուռն ու շիտակ.
«Ինչե՞ր, կըսէր, ինչե՞ր տեսայ ես՝ մդդեսի՛ բարեկամ.
Եւ մէկ մ՚ալ ե՞րբ արդեօք անոնք պիտի տեսնամ։
Այս ձեր երկիրն ալ երկի՞ր է, աղբար.
Շաբթով ամսով արև չեր՛ևար.
Ա՜խ, դրախտ ըսածդ, սուտ արքայութիւն՝
Հոն է. հոն չը կայ ո՛չ մրրիկ, ո՛չ ձիւն.
Ո՛չ մուշտակ և ո՛չ ճրագ պէտք է հոն.
Ձերինը ոչ թէ կեանք է,
Տանջանք է.
Այն տեղը միշտ ցնծում ու ուռն։
Հոն դիշերը ցորեկ է, ցուրտ ըսած բանըդ չը կայ.
Տարին տասներկու ամիս մայիս է հոն մշտակայ.
Այն կողմերը ծառ տնկել կամ ցանք ընել չէ լսուած,
Սակայն ինչպէս ամեն բան միշտ ծլած է ու ծաղկած։

Զոր օրինակ. ես Հռոմ քաղաքը մէկ վարունգ մը տեսայ,
Բայց ի՞նչ վարունգ... ո՞րքան ըսեմ... գլուխս վկայ...
Կարծես աչքիս առջև է այն մինչև հիմա...
Կը հաւատա՞ս, մը՛ղդեսի, սա դիմացի լեռան չափ կայ»։
Պատասխանեց բարեկամը թէ «Զարմանք չէ,

Բայց աշխարհիս ամեն կողմն ալ հրաշք ու ցուցանք պակաս չէ.
Բանն այս է որ ամեն մարդ ալ ֆարդին չերթար.
Ասոր վրայ երկար խօսք պէտք է որ ադբար.
Ահա հիմա մենք ալ ելեր տեղ մը կերթանք,
Որ ամենուն պէտք է բերէ արմանք զարմանք.
Գլուխս կուտամ՝ որ նմանը դուն տեսած չես.
Սա դիմացի գետին վրայ ձգուած կամուրջը կը տեսնես.
Կը նայիս որ դրսէն կամուրջ է կամրջի պէս,
Բայց ինչ հրաշալի յատկութիւն ունի, այն ալ լսեր ես.
Մէկ ատաիսօս մը չը կայ այս աշխարհիս երեսը,
Որ վրայէն բալելով անցնի մինչև միւս կէսը։
Մինչև մէջտեղը հասած չհասած՝
Կը գլորի կիյնայ ջուրը անկասկած.
Իսկ ով որ ընաւ սուտ մը չէ խօսած,
Անվտանգ կանցնի դիմացէ դիմաց,
Ոչ միայն այսպէս ոտքով կամ ձիով,
Այլ և կառօք,
Առօք փառօք։

—«Գետին խորութիւնն արդեօք ընտոր է։
—«Է՛հ, ծանծաղ չ՚ըսիր, բաւական խոր է.
Խօսքս ինչ, աշխարհս ինչեր չը կան արդեօք, ով բարեկամ.
Հռոմի վարունգը շատ մեծ է կըսես, պէտք է հաւատամ.
Ո՞ր քան ըսի՞ր, սա լեռան չափ. շատ բան. բայց պէտք է ըլլայ»։
—«Լեռանը չափ չը կայ ալ ոչ՝ սա տանը չափ կայ ու կայ»։
—«Դարձեալ հաւատալս չի՛ գար,
Բայց շատ ալ չեմ զարմանար.
Գիտնաս որ մեր անցնելու կամուրջն ալ վար չը՛ մնար.
Ատաիսօս մարդ վրայէն անդին անցնիլ չը՛ կրնար։
Դեռ այս տարի էր, գարնան օրերը,—ամենքը գիտեն,—
Քաղքիս երկու մեծ սուտ խօսողներէն,
Մէկը լրագիր կազէթա հանող,
Իսկ միւսը դերձակ, հագուստներու զող,
Գլորեցան ընկան ջուրն այդ կամրջէն,
Երկուքն ալ ամենքը կը ճանչեն.
Բայց շիտակը՝ խօսք չունիմ. տան չափ վարունգն ալ շատ բան.
Զարմանք, աշխարհս ինչեր կան»։
—«Է՛հ այնչափ ալ զարմանալու ինչ կայ որ...
Բանին իսկը լաւ գիտնալն է հարկաւոր.
Տուն որ կըսեմ՝ պէտք չէ որ միտքդ դնես
Ահագին բան՝ մեր դղիրին տունին պէս.
Ամենևին.
Վարունգին մէջ երկու հոդի հազիւ թէ կը մեկնէին,
Այն այլ ոչ նստիլ կրնային, և ոչ ոտքի վրայ կենալ»։

—«Թող այնպէս լինի, և սակայն դարձեալ
Խելքս չը հասնիր. խիստ մեծ վարունգ, խի՜ստ,
Որ երկու հոգի մէջն առնու հանգիստ.
Բայց խօսք ունիս դուն արդեօք մեր լսած կամրջին ալ.
Ստախօս մարդն հազիւ թէ կառնու չառնուր հինգ-վեց քայլ,
Թաւալգլոր կընկնի վար,
Ազատելուն չը կայ ճար։
Բայց իրաւ՝ Հռոմի վարունգն ալ վարունգ չէ, հապա ցու-
ցանք»։
—«Քեզի բան մ'ըսե՞մ, ըսաւ իշխանը, շատ առաջ չերթանք.
Սա կամրջէն անցնելու տեղ, մը՛ դդեսի,
Ծանծաղ տեղէն անցնինք նէ՝ վտանգ չի։

2

Է Շ

Գիւղացւոյն մէկն էշ մը ունէր.
Այն էշն անանկ շէնքով կը վարուէր,
Որ տէրն ալ անոր գովեստը տալէն չէր կշտանար.
Բայց որպէսզի անտառին մէջ կորսուիլ չը կարենար,
Զանգակ մը կախեց տէրն անոր վիզը։
Ասոր վրայ հպարտացաւ մեր էշը.
Գոռոզանալ սկսաւ այն պարոնը.
Կերևի թէ լսած էր ապեռոյթեանց անունը.
Միտքը դրաւ թէ մեծ պատուոյ հասեր է,
Երկու երեք թուղով փաշա դարձեր է։
Բայց շուտով այն պատիւը եկաւ խեղճին քթէն բերնէն։
Այս բանս կընայ իրաւ ըլլալ անոնց, որ էշ ալ չեն.
Այս ալ ըսեմ առաջնէ.
Առաջ իշուն պատիւն իրաւ այնքան չէր,
Բայց և ամեն կողմանէ
Կարծես թէ բաղդը բաց էր.
Թէ ցանք մտնէր, թէ ցանկ և թէ պարտիզիկ,
Կուտէր նա կերածին չափ, կելնէր կերթար սուսիկ փուսիկ.
Զանգակէն եռև փոխուեցաւ բանը.
Ուր որ մտնէր մեր անուանի պարոնը,
Կը զարնուէր վզէն կախուած նշանը.
Մէկ մ'ալ տէրը կը վազէր՝ ձեռքը հաստ դաւազանը,
Կը հալածէր, կը քշէր էշն արտերէն, պարտէզներէն։
Գարիին մէջ լսելով դրացին ալ անդիէն,
Ահագին փայտը ձեռք առած կը փրթէր.

Գարոն իշուն ոսկորները կը ջարդէր։
Ջերմնցընեմ, մեր խեղճ իշխանաւորը
Մինչև աշնան օրերը
Այնպէս չորցաւ վատացաւ,
Որ ոսկոր ու կաշի մնաց՝ կոնճեցաւ։

3

ՃԳՆԱՒՈՐ ԵՒ ԱՐՋ

Մէկ մարդ մը կար այրի մը մէջ ճգնաւոր,
Մշ ազգական ունէր և ոչ մերձաւոր.
Անտառին խորը միա-մինակ քաշուած էր,
Տարիներով մարդու երես տեսած չէր։
Ճգնաւորական կեանքը գովէ դուն ուրչափ որ ուզես,
Միա-մինակ ապրիլ սիրող մարդ հազիւ երբէք կը գտնես.
Մարդս կուզէ միշտ ունենալ իրեն ցաւին ցաւակից,
Ուրախութեան ուրախակից։
Զբաէ մէկը թէ, հապա ինչ կըսես այն հովիտներուն,
Մութ անտառներուն, լուսաղբիւրներուն, սար ու ձորերուն։
—Ամենն ալ աղուր, ամենն ալ սիրուն,
Անոր խօսք չը կայ.
Բայց դարձեալ շուտով մարդ կը ձանձրանայ՝
Երբ հետը մէկ խօսք առնող ու տուող մըն ալ չունենայ.
Ուստի և մեր ճգնաւորը վերջապէս
«Քանի մէկ մինակ կենամ բուի պէս,
Կըսէ օր մը ինքն իրեն,
Ա՛լ ձանձրացայ այս կեանքէն»։
Կելնէ կերթայ ներսերը՝ դրացիներ գտնելու,
Մէկու մը հետ ճանչուրութիւն ընելու։
Իսկ անտառին մէջ դէմը ով պիտի ելնէր,
Թէ ոչ գայլեր ու արջեր։
Իրաւունք դիմացէն արջ մը չելնէ՞ ահագին.
Բայց փախչելու ճար չը կար. ծունցաւ մինչև գետին,
Այն ահռելի դրացիին բարև տուաւ.
Դրացին ալ թաթն երկնցուց՝ բարեն առաւ՝
«Ի՞նչպէս ես.—Փառք Աստուծոյ, աղէկ եմ.
Դուն ինչպէս ես.—Ծառայ եմ»։
Ասոնց նման խօսքերով իրարու հետ ճանչուրեցան,
Ու կամաց կամաց բարեկամացան.
Այնքան որ այնուհետև մէկմէկէ չէին զատուեր,
Մէկմէկու հետ կանցնէին շատ օրեր ու շաբաթներ։

Իսկ թէ ինչ էր երկուքին իրարու հետ խօսածը
Կամ իրարու պատմածը,
Կամ թէ ինչ կերպ զարհալի կատակներ,
Շախա շէլլաՁ ու խաղեր
Երկու կողմէն կընէին—էր,
Շիտակը՝ մինչև հիմա չեմ գիտեր.
Ճգնաւորը չարախօս չէր,
Արջ ըսածդ ալ ընութեամբ շատ զրուցել չը՛ սիրեր.
Բայց այդ ՁԼսաս չէ, օգուտ ալ ունէր,
Որ տունին սրոը դուրս չէր զուրցներ։
Ի՛նչ և իցէ, ճգնաւորին ուրախութեանը չափ չը կար.
Արջը արջ չէր, անգին գանձ էր իրեն համար.
Արջուկն ուր էր, ինչ ընէր, անպատճառ հոն էր և նա.
Առանց արջուն՝ սիրտը խեղոյն կը նեղանայ։
Այն երկու բարեկամները մէկ անգամ մը խօսք ըրին.
«Երթանք ըսին՝ այս ամառուան տաք օրին
Քիչ մը քալենք անտառները, լեռները,
Տեսնենք ինչեր կան սարերն ու ձորերը»։
Յայտնի է, որ մարդս տկար է, քան զարջ,
Ուստի և մեր ճգնաւորն ալ
Յոգնեցաւ արջէն առաջ,
Ու սկսաւ ետև մնալ։
Այն որ տեսաւ արջուկը, ըսաւ մարդուն. «Բարեկամ,
Արի դուն պառկէ այստեղ, քիչ մը հանգչիր,
Եթէ կուզես՝ քունն ալ եղիր.
Ես պահապան կը կենամ»։
Ճրգնաւորը յոգնած դադրած,
Հնազանդելու ալ սովրած,
Երկնցուց ոտքները՝ պառկեցաւ.
Յանկարծ ճանճ մը եկաւ նստաւ
Ճգնաւորին քթին վրայ.
Արջուկը այն որ տեսաւ,
Թաթովը մէկդի, քշեց որ երթայ.
Կը նայի՝
Ճանճը նորէն կը թռչի,
Կիջնի մարդուն քթին վրայ.
Նա կը քշէ, նա տը՛ղ կընէ՝ նորէն կուգայ։
Այն ատեն մեր արջուկը ուսուլիկով
Պալապան քար մը առաւ երկու թաթով,
Եկաւ նստաւ մարդուն քով,
Սուսիկ փուսիկ՝ մինչև շունչն ալ բռնելով,
Ըսաւ մտքէն. «Կեցիր կեցիր, անդգամ,
Ես քու հախէդ հիմա կուգամ»։
Ճանճն ընկերին ճակտին մէկ մ՛ալ որ եկաւ,
Արջը բոլոր ուժովը

Ձեռքի խոշոր քարովը
Երա՛խ ըրաւ
Ճգնաւորին ճակտին զարկաւ.
Մէկէն ի մէկ տրորեցաւ
Արջուկին բարեկամին գլուխը,
Եւ մարեցաւ խեղճին մուխը։

4

ԽՈԶ

Խոզին մէկը օր մը կերթայ կը մտնէ
Մեծ պալատի մը ընդարձակ ագբարը,
Սրտին ուզած ադտն ու կեղտը կը գտնէ
Ախոռներուն, խոհանոցին քովերը.
Կը թաւալի, կը թաթխըւի մէջերը,
Խոզին խոզը տուն կը դառնայ մեր հիւրը։
«Էհ, ինչ նոր բան տեսար նայիմք հոն, խոզիկ»,
Հարցուց անոր իր խոզարած հովիւը.
Հարուստներուն տունն է, կըսեն, ոսկւով լիք,
Գոհարներուն, մարգարիտներուն չկայ թիւը։

Ամենեց, խորդաց խոզն ու ըսաւ. «Դորդն ըսեմ,
Ես հոն բնաւ հարստութիւն չը տեսայ.
«Մ՚ը դին նայիս՝ ադտ ադբ կելլէ քեզի դէմ.
Ես դունչիս ալ չմնայեցի, հաւատա,
Տանն եռեի ագբարը
Մայրէն մինչև ի ծայրը
Տակն ու վրայ դարձուցի,
Ադտոր բան մը չը տեսի։

5

ԹԱԹՈՒԼԻՆ ԳԱԼԱԺՕՇԸ

«Հոգիդ սիրես, կնքահայր,
Անուշ ըրէ, հրամէ, կերա։
—Խիստ շատ կերայ, սանահայր,
Մինչև սրտեղս է հասեր։

«Հոգ չէ, պնակ մ՚ալ հրամէ.
Ասի չուտելու բան չէ։
—Բայց, սանահայր, գիտցածս,
Երեք պնակ է կերածս։
«Թող, մարդ, համբել ինչ պէտք է.
Բանն ախորժիդ վրան է.
Կեր կերածիդ չափ անուշ,
Ասոր կըսեն գալաճոշ.
Եղն երեսին կը ծփայ,
Տես՝ սաթի պէս կը ցոլայ.
Կեր, կնքահայր, մի՛ քաշուիր,
Այսպէս բան միշտ չի գտնուիր.
Սա ոտքը կեր, սա մինն ալ,
Մէկ կտոր մ՚ալ, մէկ գդալ։
Օրհնեալ է ձեռքն եփողին,
Օրհնած լինի տանտիկինս։
Այս կերպով Թաթուլը՝ Խեչո աղբօր հարկիք կընէր.
Այլ բանալու առեն չէր տար, երկու խօսքին մէկն էր՝ կեր։
Խէշոն վաղուց արիւն քրտինք էր մտեր,
Բայց ինչ ընէր, պէտք էր պնակ մ՚ալ ուտէր.
Բոլոր ուժը մէկ ըրաւ,
Ետքի պնակն ալ կերաւ։
«Ապրիս, կանչեց Թաթուլը, ա՛նքդ սիրեմ,
Ես բարեկամիս տնա այսպէս կը սիրեմ.
Իսկ կոտրուող նագելին
Ի՛ իմ առաջի ատելին.
Մէկ պնակ մ՚ալ, կնքահայրս։

Խեղճ Խեչո աղբար.
Այս որ լսեց, ինչ ընելը չը գիտցաւ,
Գտակն ու գօտին առնել փախչելը մէկ ըրաւ.
Շունչը հազիւ տունն առաւ,
Իսկ Թաթուլին տունն ոտքը մէյ մ՚ալ, չը դրաւ։

Թարգմանեց՝ Գ. Այվազովսկի

1

ԳԱՅԼՆ ՈՒ ԳԱՌԸ

(Լաֆոնտէնից)

Մի օր գառը հեռանալով տնակից՝
Ջուր էր խմում սարից հոսող առուակից.
Բայց կանգնած էր նրանից վերև քանի քայլ
Մի որս պլտռող սոված գայլ,
Որ կատաղած գոչեց.—Ա՛յ դու անբարեկ,
Քիչ իմ ջուրը պղտորեա։
Մինչ պիտի քեզ նորէն
Դաս ու խրատ տամ խստօրէն։
—Ա՛խ, տէր,—խեղճ-խեղճ գառն ասաց,—
Ես քեզ երբէք չեմ տեսած։
Բացի դրանից այսօր էլ
Ես չեմ կարող խմելուդ ջուրը պղտորել
Այն պատճառով պարզապէս,
Որ քեզանից վար եմ ես,
Առուի ակն էլ վերև է։
—«Բարբաջանքդ դերև է։
Յիշում եմ, որ դու հերու
Ինձ շան բաժին կը շինէիր՝ չը փախչէի թէ հեռու։
—Այդ ես չեմ, տէր,
Դէս տարեկան չեմ էլ դեռ։
—«Բաս եղբայրդ է արել դա։
—Եղբայր չունեմ՝ հաւատա։
—Մօրեղբայրդ էր, կամ մի ուրիշ հարազատ։
—Մեռած մայրս ոչոք չունէր ինձնից զատ։
Մեղաւոր չեմ
Ես քո դէմ։
—Լռեա,
Գլխացաւանք մի տալ զուր.
Հենց նրանով ես մեղաւոր,
Որ իմ սոված փորին կեր է հարկաւոր։
Ասաց, բռնեց խեղճ գառնուկին յօշոտեց։
Իզուր թոյլը ուժեղից գութ պաղատեց։

2

ԷՇ ԵՒ ՍՈԽԱԿ

(Կրիլովից)

Մի օր էշը պատահելով սոխակին՝
Ասաց.—Ընկեր թանգագին,
Լսել եմ թէ դու ինձ պէս՝
Երգիչների ցեղից ես,
Բայց տակաւին քեզ մօտիկուց չեմ ծանօթ,
Ուստի արի շնորքդ ցոյց տուր դու ինձ մօտ։—
Ու սոխակը սկսեց սուլել, գեղգեղալ,
Երգը ինչպէս շող մարգարտի ցող տեղալ։
Դաշտ ու անտառ լուռ ու մունջ,
Թէ շնչաւոր, թէ անշունչ՝
Ականջ կտրած լսում էին այն հմուտ
Երաժշտի դայլայլիկը սրտամուտ։
Ու երբ երգը վերջացնելով նա լռեց,
Էշը դունչը վեր ցցելով բարբառեց.
—Է՛հ, խօսք չըկայ, վատ ձայն չունես, բայց ափսոս,
Չես ճանաչում մեր աքլորին քաղցրախօս.
Իսկ թէ նրանից կարաս առնել չորս-հինգ դաս,
Այն ժամանակ
Մի աջողակ
Երգիչ անշուշտ կը դառնաս։—
Երբ սոխակը լսեց այսպէս պատասխան,
Թևին տուաւ, թռաւ գնաց հեռաստան։
Հեռու պահի Աստուած մեզ
Քննադատից մի այդպէս։

3

ԱՌԻԾԸ, ԳԱՅԼԸ ԵՒ ԱՂԻԷՍԸ

(Աղուէսագրքից)

Գայլն, աղուէսը և առիւծը միապետ
Եղբայրացան իրար հետ,
Որ ինչ ճարեն—թանգ, էժան—
Հաշտ վայելեն կենակցելով անրաժան։
Մի օր որսի դուրս գնալով անտառը,
Գտան մի խոյ, մի մաքի և մի դառը։
Այդ ժամանակ գայլ եղբօրը բարեբարք՝
Առիւծն արաւ առաջարկ.
Ոչխարներին բաժանի,
Ով ոնց ուզի՝ ճաշ անի։

—Առիւծ եղբայր,—վճռեց գայլը,—խոյը՝ քեզ,
Գառն՝ աղէսին, մաքին էլ թող վերցնեմ ես։
Առիւծը գայլի գլխին այնպէս պինդ խփեց,
Որ աչքերը դուրս թափեց։
Ապա դարձաւ աղէսին,
Որ նա էլ իր վճիռն ասի։
Աղէսն ասաց.—Հզօր արքայ,
Բաժանելու մեզ ինչ կայ.
Չեմ իմանում այդ առաջարկն ինչու դրիր.
Խոյը ձեզ ճաշ, մաքին՝ հրամինք, գառն՝ ընթրիք։
Ի՛մ բարեկամ—ուղղադատ,—
Բացականչեց վեհ առիւծը խանդաղատ.—
Բայց քեզ այդ ոմ գլխի քցեց, որ այդպէս
Արդարացի վճիռ կտրես։
—«Այդ դուրս թափած աչքերը խեղճ գայլ եղբօր,
Պատասխանեց աղէսը մեր սինլքոր։

4

ԾԵՐԱՑԱԾ ԱՌԻՒԾ

(Լամոնտէնից)

Առիւծը հզօր
Ծերութիւնից դարձաւ անզօր.
Եւ զառամեալ ահեղ արքան անատոպատի
Ու երբեմնի ահ ու դողը շրջապատի
Տկար ու թոյլ՝
Կուչ էր եկել, շնչում ծոյլ-ծոյլ։
Հպատակները ոգևորուած
Հասցնում էին հիբացեալին մի-մի հարուած.
Ո՛րը խածնում, ոնն աքացում, կամ խեթկում,
Ո՛րը բաշը բզքտում։
Իսկ նա ընկած անպատասխան, անմռունչ,
Սպասում էր մահուան գալուն անտրտունջ։
Բայց երբ էշն էլ եկաւ որ նրան աքացէր,
Նա բարձրացրեց գլուխը ծեր,
Ու մընչաց վաղուայ պէս.
—Այս ինչ օրի հասայ ես,
Որ էշն անգամ երկարականջ ինձ մատ գայ,
Իշավարի քացի տայ։

Նիկ. Մամիկոնեան

ՀՈՎԻԵՐԳՈՒԹԻՆ

(Իդիլիա)

Հովերգությունն բառի իմաստը համապատասխանում է գրական տեսության մեջ ընդունված իդիլլիային։

Իդիլլիա կամ իդիլլիոն յունական բառ է և բառացիորեն նշանակում է պատկեր, տեսարան։

Հովերգությունը էպիքական բանաստեղծության այն ճյուղն է, որ անդրադարձնում է սովորույթներով և վաղեմի տրադիցիաներով ապրող շինական ժողովրդի կեանքը։ Հովերգական գրուածքի նիւթը կազմում է նահապետական անպաճոյճ միջավայրը իր պարզամիտ սիրավեպերով, որոնց դասային, դասակարգային և ընտանեկան յարաբերությունները վաղուց հետէ հաւասարակշռուած՝ ունին խաղաղ և անկռիւ ընթացք։

Քաղաքի ազմկալի ժխորը և հոգեկան փոթորկալի ընդհարումները հովերգության բովանդակությունը չեն կազմել մինչև հիմա։

Ժամանակակից իդիլլիան չէ սահմանափակւում հովւական կամ բացառապէս գիւղական միջավայրով. բացի այդ, նա ցուցադրում է ոչ միայն կենցաղի դրական, այլ և մութ կողմերը։

ՎԱՀԱՆ ՄԻՐԱՔԵԱՆ

(Ծնն. 1875 թ.)

Վ. Միրաքեանը յայտնի է դարձել աւելի քան երկու տասնեակ տարի առաջ գրած իր Հալլաարի որսը միակ պոէմով։ Լոռւայ լեռնականի հովւական պարզ, պրիմիտիւ կեանքն է նրա ստեղծագործութեան առարկան։ Պոէմի առանցքը մի ողբերգական սիրոյ պատմութիւն է։ Իդիլլիկ կեանքի պատկերներ ու բնութեան գունեղ տեսարաններ գծելու մէջ Վ. Միրաքեանը ցուցադրել է մեծ շնորհք։ Պատմում է էպիքական սառնասրտութեամբ, լեզուն ճարուստ է, պատկերները ճոխ։ Հեղինակի աշխարհայեացքը իր պատկերած գիւղական միջավայրի աշխարհայեացքն է։ Մի միջավայր, ուր թագաւորում են նահապետական կենցաղի հետ կապւած տնտեսութիւնը, սովորոյթները, ադաթները, մանր սեփականատիրական հոգեբանութիւնը և երկու հարևան ցեղերի հակադրութիւնից (հայի և թուրքի) բղխող նացիոնալիզմը։

Քաղաքի բուրժուական կուլտուրան ոչ մի բեկում չէ առաջացրել բանաստեղծի հոգեբանութեան մէջ։ Նրա Հալլաարի որսը տեղական շրջանակից այն կողմը չի անցնում։

Վերջերս յայտնի դարձաւ, որ Վ. Միրաքեանը մի նոր պոէմ է գրել Ղազնիկի Փերին վերնագրով, որի բովանդակութիւնը այլևս տեղական բնոյթ չի կրում և, որքան մեզ յայտնի է, տոգորւած է համամարդկային իդէաներով։

Սուրխաբեան

ՔՈՉԸ

(Հատւած «Հալլաարի որս»-ից)

Ծագում է մանուկ արևը գարնան
Կովկաս լեռների ձիւնի պատնէշից,
Զարթնում են մէկ-մէկ սարերն անմահ

Զմրան անվրդով քնի մշուշից.
Ահա Լալաբի վիթխարի ուսին
Բազմում է արփին թարմացած ոյժով,
Սարեր ու ձորեր իրար երեսին
Նայում են, ժպտում ամպի մշուշով...
Վերջին ձիւներն էլ արդէն հալ ընկան,
Արտասուեց խակոյն լեռների հսկան.
Ամեն մի ձորից աղբիւր է հոսում,
Ամեն մի թփից բիւլբիւլ է խօսում.
Եւ դալար հովիտ և՛ ժայռի կրծքեր,
Արձագանք տալով, գարուն են հնչում.
Զմրան փարախից հովւական երգեր
Զեփիւռի թեւով սարերն են թռչում։
Ծաղկալից աշխարհ անվերջ ձորերի
Բացւում է ժպտում կոկոնից զւարթ,
Փարթամ գեղուքեան ոգին Գուգարքի
Շնչում է գարնան բոյրով անաղարտ.
Ամպերն էլ իրար համբոյրներ տալով,
Զւում են կայտառ, Լալաբը գրկում,
Առաջին անգամ խիստ որոտալով,
Գուգարք աշխարհին ողջոյն են երգում.
Եւ հայրենիքում փայլակ-կայծակի
Գիշերուայ դրոշմած գաղտնի համբոյրներ
Երգում են երկրին սէրը երկնքի,
Դողում են սիրուց սարեր ու ձորեր։
Եւ խորհրդաւոր մի թովիչ ձայնով
Խօսում են նրանք, իրար հետ փարւում,
Երգում են, խնդում, հազար բերանով
Լալաբի վիթխար հասակը գովում։
Ահա գարնան հետ և շարան-շարան
Դաշտավայրերից դէպի զով սարեր
Զգւեց սայլերի, ուղտերի քարւան—
Փախչում են շոգից թէ թուրք, թէ հայեր։
Թնդում են ձորում զանգի հնչիւններ,
Ձիերի խրխինջ, պայտերի դոփիւն,
Մէկ-մէկի կցած անվերջ քարւաններ
Քաշում է նաւը, ահեղ մռնչում.
Ո՛րը տանում է ալաշխի քեչան,
Կուժն ու խնոցին, ճիպոտն ու շաթան,
Ո՛րն էլ զարդարւած գիր ու փնջերով՝
Օրօրւում, անցնում լեռան լանջերով։
Բայց նաւն ինքնագոհ քայլում է հանդարտ՝
Բոժոժ ու զանգեր վզին ու կրծքին,
Եւ օրօրելով կապերտներ ու զարդ,
Գեղեցիկ հարսն է տանում իր մէջքին.

Մերթ բարձանալով կանգնում է հպարտ,
Մերթ փրփուր թափում կատղած բերանով,
Մերթ երկար շուրթը կախելով բարդ-բարդ,
Նա պարծենում է գեղեցիկ բեռով։
Բանել է ճամբէն խիստ իրարանցում,
Դոփում են ձիեր, սանձերը կրծում—
Ազնիւ մետաքսից ոսկեթել գործած,—
Աղաջարիներ թամբերին ձգած,
Հուժկու կրծքերից կապած թալիսման,
Արևելեան ճոխ արծաթն ու ոսկին,
Ծերժակ զաթիբան, քող ամպի նման
Փռփռում են սիրուն հարսների դէմքին։

Լեռների տօնն է. մարդ ու անասուն
Ուրախ երգելով դիմում են սարեր,
Մոռնալով ձմրան քաշած վայնասուն,
Ծաղիկ փնջերով անցնում են ձորեր։
Անցնում են արագ քոչ-քոչի միջով.
Գարնան արևից փայլում են զէնքեր,
Եւ թարմ կենսաբոյր թաւիշ կանաչով
Բացւում են ժպտում սարւորի դէմքեր։
Փոքրիկ երեխան պինդ մէջքին կապած՝
Խեղճ հովւի կինն էլ վազում է ոտքով,
Օգնում է մարդուն գոհ և սրտաբաց,
Բախտի որոշած ծանր վիճակով։
Մայում են, բայում գառնուկն ու մաքին,
Թնդում կովերի, հորթերի բառաչ.
Իսկ տրտնգալով գոմէշը ձագին
Կանչում է դանդաղ վազելով առաջ։
Վազում են յոգնած շները հօտի
Եւ լեզուն հանած թանչին են տալիս.
Լսւում է յանկարծ ձայնը լակոտի,
Որ քոչից ընկած՝ կալանչ է գալիս։

Քարւանի ծայրը սարերը հասաւ,
Հասաւ ու ձուլւեց թուխ ամպերի հետ.
Վրան-վրանի յետևից բաւ
Ծաղիկների մէջ գոյն-գոյն սիրաւէտ.
Ալաչուխ, դաղա, անվերջ վրաններ,
Շրջան կազմելով սառն աղբրի ափին,
Ինչպէս ծեր արծւի կարկատած բներ,
Ցենեցին մէկ-մէկ բարձր քարափին։
Դաշտեցի հայն էլ սառ ջրի կարօտ՝
Եկել է, դրել բինէն այս ամառ
Լօք, Լալւար, Լեջան աղբիւրների մօտ,
Շոքերից ազատ ապրելու համար։
Գուգարք սարերի սիգաւէտ լանջին

Բազմել են հայի, թուրքի բինամներ,
Բայց դարձեալ խառնված քոչ-քոչի միջին՝
Դեռ երերում են ուղտի քարաւաններ.
Աբրխընջում է ձին, կովը բառաչում,
Բոլորն էլ իրենց իւրդն են ճանաչում.
Մայում է անուշ ամլիկը դառան,
Սարեր ու ձորեր նորից կեանք առան։
Գիշերը հասաւ. մթին է ճամփան.
Մարում է կամաց աղմուկը քոչի.
Առաւկի ափին քարաւաններն իջան,
Կանչում են՝ «տղերք, աղբանք չը կորչիք։
Ձիերի ջոկեր, ուղտերի քարաւան,
Սայլերի ճլռռոց, ոչխար ու տաւար
Դանելով ձորում գիշերն իջևան,
Հանգիստ են առնում միւս օրուան համար։
Կրակի վրայ, առաւկի ափին
Մի տեղ ընթրիք են շտապ պատրաստում,
Մի տեղ էլ կորած գառանն ու հորթին
Սար ու ձոր ընկած հովիւն է կանչում.
Մի այլ տեղ ուրախ շրջան բոլորած՝
Ուտում են նրանք կաթն ու խորոված։
Գիշերն էլ արդէն մնջում է, լռում,
Ցոգնած քոչւորին՝ հանգիստ քուն բերում.
Միայն մի կով է դարձեալ բառաչում
Եւ քունը կտրած հորթուկին կանչում.
Լսելով նրան գիշերն անդադար,
Հեռում է տխուր ծերունի անտառ։
Ամպի փէշերը կախած մի ծայրին՝
Լալարն էլ կարծես նոյն վիշտն է զգում,
Ինչպէս վիրաւոր առիւծը ժայռին,
Թեները փռած քոչւորին հսկում։
Բայց լաք սարերի կանաչ լանջերում
Մի բինա էլ կայ, որ դեռ չի քնում.
Այնտեղ խարոյկի շուրջը բոլորած՝
Տեսած ու լսած արկածն են պատմում,
Եւ մեծ ու փոքրը ականջներ լարած՝
Աշուղ-Գիքորի երգերն են լսում։
Պատմում է երգում աշուղն անցեալից,
Ձորերում տեսած հին իգիթներից,
Կրակին գցած կապնի մեծ գերան՝
Սարերն էլ արթուն լսում է նրան։
«Լսէ՛լ էք, տղերք, ում ալաչուքն է
Լալարին բազմած արծրւի նման.
Լսէ՛լ էք՝ էն ում օջախի ծուխն է

Անդն ու նաչարին միշտ լինում գարման.
Լանել էք՝ ինչպէս բարդէն ինքնանկած
Նրանից ոչառ ոչ չի պլտրբուում.
Նրա մի ձէնը, անունը անգամ
Մարդուն հարամուն սարսափ են ազդում։
Եւ ուզում է միշտ ամէն մի սարուոր
Էն ալաչուխին լինել գրացի,
Տիշելով նրա տիրոջն ալեոր,
Առանց օրնելու չի նստում հացի։
Տղերքն գմայլած աչուքի տակով
Փարունցան նրա գառամած վզով.
—Շատ բան ենք լսել Աւագի մասին,
Բայց գեռ կարօտ ենք նրա երեսին.
Ինած թէ արքուն, թէկուզ երազում՝
Ամենքն էլ նրա մասին են խօսում.
Պատմում են անով դաշտին ու սարին,
Թէ ինչպէս է նա պատժում միշտ չարին,
Թէ ինչպէս էրէն փախչելիս հովտում՝
Հեռից էլ նրա ձէնն է ճանաչում։
Բայց, ապի, ապի, չենք տեսել նրան,
Երգիր Աւագից մի քանի բերան.
Մենք կը տանք առաւ քեզ եղ ու պանիր,
Դու իգիթներին լաւ գովաբանիր։
Եւ նա լարելով նորից սիմերը,
Երգում է՝ որքան քաջ են հները.
«Աւագ-որսկանի անունն է մենակ
Սարերին յայտնի ամեն մի մարդու.
«Աւագ-որսկանի գոչիւնն է մենակ
Լալաբի գոռող որոտից ազդու.
Մանուկ օրերից նա որբ մնալով,
Ապրել է ինչպէս սև ամպը սարին.
Օրօր է երգել բամին սուլելով,
Եւ նա ննջել է մամռոտած ժայռին.
Մթին ձորերի ահաւոր կիրճում
Սիրել է թանձր վտռոդի ամպեր.
Ուր փայլակ-կայծակ մահ են շառաչում,
Դրկել է կայտառ սլաք ու շանթեր.
Ընկերն է եղել մի հին հրացան,
Իսկ անուշ երգը՝ գնդակի բզզոց,
Թշնամու ջարդը ահից ցիրուցան,—
Հարան-տարանը և տուր ու դրմփոց։
Թէև նա ծեր է, ութսուն տարեկան,
Բայց նրա նման չկայ մի որսկան.
Աչքի լուսի պէս դեռ զէնք է սիրում,
Երկնքի ծոցից էլ որս է բերում.

Դեռ հեծնում է նա ձին արագավազ,
Սև ամպերի հետ թռչում սար ու ձոր,
Դիտելով լուսնի սահը նազելագ,
Ցիշում իր թափած արիւնը ծարծար.
Անցնում է ձգած անտառի խորքում
Նեղ օձապտոյտ ժայռոտ կածանը,
Որից հոսում է, առուն աղմկում
Կամ թէ գղրդում խուլ հրացանը,
Ուր միշտ ծարաւի թշնամու արիւն՝
Նա թափառելով գիշերը անահ,
Մռայլը դէմքին գժոխքի նման՝
Նամարդի համար պատրաստել է մահ»...
Զիրուխի վրայ կրակ դնելով,
Աշուղը կարեց իր երգի թելը։

ՈՉԽԱՐԻ ԿԻԹԸ

Արևը չելած՝ սարուորն արթնացաւ,
Նորից ձորերում աղմուկ բարձրացաւ,
Նորից սայլի տակ ճրռռում է ճամփան,
Փըռփըռում հարսի քողն ու դաթիպան.
Դալար իւրդերը ամպերի տակին
Աչքերը ձգած քոչւորի ճամփին՝
Ժպտալով յակինթ ցողերով առատ,
Կանչում են կարծես բոյրով անարատ։
Կանաչի վրան սեթաւան ձեռքին՝
Կրօնասէր՝ թուրքը չոքեց նամազի,
Ձեռները զգոյշ տանելով մէրքին՝
Աղօթք է անում Աստծուն մեկուսի։
Կէսօր է արդէն. կանաչ Լալաբից
Իջնում է հանգիստ ոչխարը կթի.
Կթելով մաս-մաս, անցնում է բերից,
Լսւում է անուշ փըշշոցը կաթի։
Հովիւ, հովուհի նստած շարքերով՝
Կթում են ուրախ և անհոգ խնդում,
Երբեմն էլ այրուած անուշիկ երգով
Սէր են դարթեցնում մէկ-մէկի սրտում։
Վերջացաւ արդէն ոչխարի կիթը,
Կաթսաներ տարան թարմ կաթնով լիքը.
Մէկն էլ գդակը շարժելով օդում,
Դեռ գառնարածին՝ «էկ, էկ» է կանչում.
Երկար չանցնելով, սարի գագաթին
Գառների կայտառ հօտը երևաց,

Քառնելով նրանք մայրերի հօտին,
Բնրիչքների յոյզով մայում են ցրուած.
Ցանչում են, բայում գառն ու մաքին
Ամուշ ձայներով փնտռում են միմեանց.
Մէջը գտնելով իրա գառնուկին,
Մրջնել է տալիս, փայլելով արտանց.
Մէջը խաղում է մօր հետ կուշտ փորով,
Մէն էլ մտնում է ախուր մայելով.
Եւ ամեն անգամ գառը մէջ տալիս,
Գարձեալ մէջ անուշ համբոյց են տալիս։
Բայց շուտ ջոկելով մայրերը գառներց,
Հովիւը քշեց նրանց դէպ արօտ.
Մնաքն էլ ուսին՝ գառները բինից
Տարաւ գառնարած սառն աղբիւրի մօտ։

ՋԱՀԵԼ ՍԱՐԻՈՐՆԵՐԸ

Հովիւ գառնարած մի տեղ խմբւելով,
Լախտի են խաղում, առոյգ թռչկոտում.
Հրճւում են նրանց կայտառ խաղերով
Շերեները, ծածկւած գառան մուշտակում.
Ամեն մի նրանց ճարպիկ թռիչքով
Ցիշում են վաղուց կորած մանկութիւն,
Շոյելով ճերմակ միրուքը ձեռքով,
Կանչում են՝ «նամարդ, նամարդ ծերութիւն»։
Մէկն իր մուշտակը մի կողմն է ձգում
Եւ դիտմամբ խառնւում տղերանց խաղին,
Մի լախտ է խլում, ոլորում ձեռքում
Եւ առիթ տալիս անվերջ ծիծաղին.
Կանչում են «Աթօ, լախտը թողրու,
Մեր պապի մէջքը մի լաւ տաքացրու»...
Մի տեղ ձիերը ոտրտրնդի տալով,
Փըռռացնում են, սարերը փախչում.
Ջահել տղերքը քամանդ բռնելով,
Նրանց յետևից սիւրաթ են թռչում.
Մի խաւ, չը նստած վայրի քուռակի
Ամեն կողմից էլ կալմէջ են անում.
Ով նրան մենակ բռնի ու թամքի,
Նա մի քալաղի նամառ է տանում.
Բայց տաքացել է, կատաղել խաւ ձին.
Տղերանց վրայ ծառս-ծառս է լինում.
Երկար քամանդը քաշելով վզին,

Խեղդում են նրան և թաքը գնում.
Չուռնան էլ՝ թոգած մի կողմը լախտին,
Փչում է արդէն տաք-տաք ջիրիդին.
Տղերքը միմեանց առաջ են քշում,
Մերերը դարձեալ խոր ախ են քաշում,
Իսկ հարս ու աղջիկ սափորը ուսին՝
Գնում են խումբ-խումբ աղբիւրը ջրի.
Դողում են նրանց ժպտուն երեսին
Բոլոր գոյները գուզաբք լեռների.
Եւ բիւր ծաղկանիշ նախշուն շորերով
Անցնում են նրանք ուղին հոտաւէտ,
Եւ թարմ կուսական համայիշ բոյրով
Մրցում են սաթի ծաղիկների հետ։
Եռում է խաղը հարսների դիմաց,
Նայում են միմեանց աչքերի տակով,
Կարմրում են, ժպտում կոյսերը կամաց,
Անցնելով անուշ սիրոյ տրրոփով։

Վ. Միրաքեան

ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ՏՕՆԸ

(«Ցօս եւ Վարդիթեր» վէպից)

Համբարձման շաբաթի օրը ամեն տան էլ պատրաստութիւն կայ. որոնք ձիան են ճարել, պիտի գնան Ծաղկեվանք ուխտ, որոնք էլ չեն ուզում գնալ, պտի գնան ծաղիկ քաղելու։ Թունդրներիցը անուշ գաթի հոտը հէնց ա վեր էլել, որ աշխարքս բռնել ա. պաշար ա, որ կապում են. խաչալաց գինի ա, որ տակերի մէջն են լցնում։ Ըխտաւորի տուտը գետի կամուրջն անց ա կացել։ Անուշին էլ իրա քեռակինը հետը տարաւ Ծաղկեվանք, որ իրանց ուրախացնի, ջանպիլումով ծաղիկ գովի։ Ամեն ձիու վրայ նստած էին երեք հոգի. մի կնիկ մի աղջիկ թարքին, մի երեխայ էլ առաջին։ Ըխտաւորները գնացին. ճանապարհները ամեն կնիկ իրա թոբունն (խումբ) առած՝ գնացին մի նոր պսակուածի տիրոջ տուն, որ էրթան յիգանիքը (այգիները), ձորերը, եւ Պատռելակոնդը ծաղիկ քաղելու։ Էլ յետ յիգանիքը լցուեցին քօմնա (բոլորը), կարմիր ու սաղրի մաշկներով, պառաւ կնանիքն իրար մօտ հաւաքուած քչփչացին, գրից աւին, որտ՝ նրա վրայ բամբասանք արին, համա ջահել աղջկէքն ու հարսները կանաչ ու կարմիր շորերով, վազէվազ անելով, ընկան յիքանոնց թմբերի, եւ թէ չէ դռերի (քարոտ տեղեր) մէջը։ Մինը վազում ա մի ծաղկի վրայ, որ քաղի, մէկէլը տեսնելով նրան, ինքն էլ գառանման թռչկոտելով գալիս ա նրա մօտն ու նրա ձեռքիցը չմրում (կորզել, խլել), ինքը քաղում, որ ասի, թէ ես շատ եմ քաղել։ Ծաղիկ ա, որ գոգերը լցրած բերում են։ Մինը փշատու ճուղը կոտրած՝ նրա ծաղիկներն ա ճղրով կոտրատում. մէկէլը դեղին ու կարմիր խնկածաղիկը փէշը լցրած՝ ծիծաղելով պարծենում ա ընկերի կշտին, թէ իմ քաղածը լաւն ա քու-

նիցը. մինը բացենալուկի ծաղիկ ա խոխտ արած բերում, որն էլ բուլի-բուլի ծաղիկ, ետ թէ չէ տատաշի ծաղիկ գոգն ածած՝ բերին ափումը կնանոնց կշտին կիտեցին, էլ յետ դառան ուրիշ ծաղկի։ Վարդիթերն էլ մի քանիսի հետ ծաղիկ քաղելու էր գնացել, նա էլ իրա քաղած ծաղիկները բերուց ընտեղ։ Ծաղիկը քաղելուց յետոյ, էկան, բոլորանքի (շուրջանակի) նստեցին։ Ամեն աղջիկ իրա բերած ծաղիկը քաշեց առաջ ու սկսեցին փունջ-փունջ կապել, կանանչ խոտի վրայ կիտել։ Վարդիթերն էլ ծաղկամէրը ձեռն առաւ, մի օրինաւոր հազար թուռլու (բազմերանգ) ծաղկից կապեց։ Ծաղիկը գովեն սկսեց եալլիբաշի Խանումը, որ մէկէնների էլ լիզուն բացի.— Աղջկէք, ասեց, դուք ձէն պահեցէք, ես ասում եմ ջան գիւլումը.—Ասեց ու վեր կալաւ բարակ ձէնով։

Խնձոր ունիս կծած ա,
ջան գիւլում՝ ջան, ջան,
Զորեք կողմն էրծաթած ա,
ջան ծաղիկ՝ ջան, ջան.
Ախպէրս ուզեց չի տի,
ջան գիւլում՝ ջան, ջան,
Ասի եարի ղրկած ա,
ջան ծաղիկ՝ ջան, ջան։
Ա՛յ աղայ, հիլ անիլ տուր—
մատնաչափ գիր անիլ տուր,
Ինձանից էլ քեզ ճար չի կայ—
քաքուլդ վէր անիլ տուր։

Ես աղջիկ եմ, ալ կուզեմ—
միջքինս չալ չալ կուզեմ.
Երբ ես եկայ ձեր տունը—
ոսկին սարէսար կուզեմ։
Ամպել ես ամպի նման—
շաքար ու զանդի նման.
Իմ դանն ինձ ինց ա պահել—
ծալած գիւլբանդի նման։
Ամպել ա, ձիւն չի գալիս,
մթնել ա, տուն չի գալիս։
Էս անտէր բարձի վրայ—
առանց եար քուն չի գալիս։

Ծաղիկը գովեցին պրծան, բերին սուփրէն փռեցին կանանչ խոտի վրայ, ամեն կնիկ իրա բոխչի միջինը լցրուց մէջ-

տեղ։ Գինու գաւը ձեռն առաւ Խանումը, հարսներին ու աղջկերանց էլ ասեց, որ երևանները դէն արած՝ նստեն, ինքն էլ կոտրած գթալի պէս մէջ ընկած՝ նրանց էլ հաց, խորակ տուաց, մին էլ թէրմունի գաւը։ Կնանիքը ջոկ նստեցին քեֆ արին, հարս ու աղջկէքը ջոկ։ Վարդիթերի մէրը մի երեխի ձեռով մի սուփրա էլ շինեց աղաղ տղէքանցը, որ յիքու մէկէլ դիմը հաւաքւած էին։ Իրիկուան ժամը ուին ու հացից վեր կացան. էս թօրունը գնաց Վարդիթերենց տունը, չունքի նրանք նորահարս ունէին, նրա ծաղկաքաղն էր։ Մի քիչ դէսից դէնից զրից արին ու Վարդիթերը մէջտեղ բերուց ծաղիկը, որ յիքումը գովել էին՝ ծաղկամէրն էլ մէջտեղը դրած։ Հիմի կարգին նստեցին՝ նորից նոր գովել. էն թաւը չէր (անընդունելի էր), օրէնքը հիմի աւ

Իմ միջկինս քամար ա—
քու ունքերդ կամար ա.
Ա՛յ տղայ, ինչ ես միտք անում—
իմ ջանս քեզ համար աւ
Գութանը հաց եմ բերել—
բերանը բաց եմ բերել.
Տես քեզ ինչքան եմ սիրում—
ձկնով տապկած եմ բերել։
Էրթկի վրէն թինգնել ես—
էրթկի կոճը բռնել ես.
Հէրս քեզ աղջիկ չի տալ—
ափսոս քունդ կարել ես,

Յետոյ խանումը սկսեց հաւկիրը շուռ տալ։ Տեփուրն ձառաւ ձեռը ու շուռ տալով սկսեց.

Սկլա՜, սկլա՜, պատին տուր,
հաւկիրը շուռ տուր,
Վախում եմ՝ ընթիմ, քունս տանի,
չարտաւս տանել տամ։

Մին էլ շուռ տուց տեփուրն ու ասեց.

Սկլա՜, սկլա՜, պատին տուր,
հաւկիրը շուռ տուր,
Վախում եմ՝ ընթիմ, քունս տանի,
շարս տանել տամ։

Ամեն մի հետ տեփուրը շուռ տալումը, մի հետ «սկլա»

էր ասում, ու գլխաշորիցը բռնած՝ ընչանք մաշկները մի մին տանիլ տալի. վերջին էլ ասեց.

Սկլա, սկլա, պատին տուր,
հաւկիրը շուռ տուր,
Վախում եմ քնիմ, քունս տանի
մաշկներս տանիլ տամ։

Յետոյ մի քաղցր ձէնով, աղջկէքն էլ հետը ձէն ձէնի ուած, ասեցին.

Համբարձում, եայլա,
եայլա ջան, եայլա,
Համբարձումն էկել ա,
մեր բաշին կաննել.

Լաչաք ա քցել մէկ մէկի վրայ,
Մինը տակևանց, մինը վերևանց.
Քա խաթուն Գիւլազ, հունարդ երևաց.
Համբարձում եայլա, եայլա ջան և այլն։

Խանումը, հենց որ հաւկիրը շուռ տին պրծան, վեր կաց։ Վարդիթերի մօրը, թէ—Ինամի ջան, աչքդ լիս, փառք Աստծու, անշառ, անխաթա անց կացրինք էս հաւկիրը, Աստուած մին էլ ուրախ սրտով, ցամաք աչքով էս օրը հասցնի։

—Աղբիւրդ անապառ, ինամի ջան, շնորհակալ ենք, լաւ ուրախութիւն արիր, մեր աչքի վրայ, մեր գլխի վրայ. բարեկամներ, դուք էլ բարով հազար բարի, Աստուած էս ուրախութիւնը ամենիդ տանն էլ ռաստ բերի (հանդիպեցնի)։ Իրար շնորհակալութիւն արին, Աստծուն փառք տին, պրծան։—Դէ բերէք, Վարդիթեր ջան, վիճակի բղուղը, ասեց Խանումը, որ առաջ էր կաննել ամեն բանումը։

Մէջտեղ եկաւ վիճակի բղուղը լցրած մի քիչ ջուր, մի երկու բուռը խոժոռ ու

Ռուսածանից խնդրեցին, որ խէրով բարով վիճակ ընի ու տարան պահեցին, որ առաւօտուանց գան բանան, ամենքն իրանց վիճակն իմանան։

— Մուրոյթ կացէք (գգուշացէք), ձէն ուուց Խանումը, ազատ տղէքանց էլմը-ֆէլմը (հնարագիտութիւն) ուշով չի իմանալ, էր գոգանան, իսազը ու առակ կըլնինք. աման, վարդիթեր ջան, տար հէնց տեղ գիր, որ ախպէրանցդ չիմանան, մեր խեզմ երեխի (Թէլլիգարի) բախտը ես գիտեմ, նրա խաթէն իր հետ ա. ուղուրը լաւ չի, թէ որ գոգանան. ջանէլ ազիկէք, դուք էլ էկէք, էս ծաղիկը տարէք, պահեցէք, որ էքուց ման պտի ածի. էգ ձեր բանն ա։

Մեր քէյվանքին էս իրիկուն բաէնց անց կացնելուց յետոյ, Ճանք բարով ասին վարդիթերի մօրն ու ամենքը գնացին իրանց տները։ Արի հիմի Սօսիցը հարցրու. հենց որ յիքանոնց խիզանը ցրուեցին, իրիկւայ ժամն էլ տին, Գարեգինը բաց թողուց Սօսին, գնաց ժամ. նա էլ ջոկուեց հեռի տղէքանցիցը, մեն մենակ յետ դառաւ, էկաւ քարափի գլխին նստեց, աչքերը քցեց գետի խշխշան տեղը, մի քիչ միտք անելուց յետոյ մին էլ վառեց ու ջունուն դառած՝ վեր կալաւ ջան գիւլումը էապէս.

Քու սիրուդ ինձ կը սպանեմ—
աղջիկ, քու չարը տանեմ.
Դու իմ խօսքիս կամ արի—
նանիդ ոտդի կանեմ,
Չիթ մինթանէթ հնամաշ ա—
ունքերդ գալամքաշ ա.
Աղջիկ, ինչ ես միտք անում—
իմ ջանս քեզ փէշքաշ ա։
Աղջիկ, ինչ լաւ մազ ունիս—
սոխակի փարուազ ունիս.
Խօսքիս ջուղաբ չես տալիս—
ինչ շատ էշիս ու նազ ունիս։

Սօսը «ջան գիւլումով» քարափ գոդացնելով, բան չի շինեց. գիժ մոգու պէս վեր թռաւ տեղիցը, եկաւ իրանց տունն ու լուռ ու մունջ նստեց. ոչ պռօշը կպցրուց, ոչ բերանը մանանայ դրուց։ Մէրը, ախպէրոնքը ինչքան էլ զօռ տրին, էա բան հարցրին, հօ նրանց ասած՝ հօ սար ու քարին՝ մին ա. թէ դու ձեր տանիցը ջուղաբ տուիր, նա էլ քեզ հետ Խեզմ

մէջն ու ախպէրտիքը տեսան, որ էլ չի խօսում, իրանք էլ սուս կացան. իմացան, թէ ընչի համար էր նրա լալանալը (համբառնալ)։ Հացից յետոյ մէջը տեղերը գցեց, տղէքանցը քնացրուց, Սօսին էլ ասեց, որ մաքի դրածքցը յետ կենայ. գիտէր, որ պարի քշերս տղէն անքուն մնայ, վախենում էր, թէ գլխին մի փորձանք չի գայ։ Համա Սօսը քառի (խուլ) պէս քառացել, լալի պէս լալացել էր. ոչ լսեց, ոչ էլ ծպտաց։ Խեղճ մէջը, որ անջախ կրակներումն էր էրում ու շաքներումը չէր հավանում, մատաւ տեղը ու տարդ արուց (լռեց)։ Չուզեց քնի, որ տեսնի, թէ տղէն ինչ ա բրնում. համա ինսան (մարդ) էր, քնի գալու վախտը աչքերն իրանց իրանց խփուեցին։ Սօսը նստել ու տեղումն աչքերը բաց էր պահում. քուն ու երազ իրանից փախել են։ Միտք ա անում, թէ երբ մաքի դրածը կատարի։ Մին էլ, կը լինէր կէս քշեր, տեսաւ, որ քշերը ցերեկ դառաւ. արևի շողերը երթկիցն ընկաւ տուն. ինքն էլ, սաքի թէ, Ապարանում մի դաշտ տեղ կանգնած ա. էն դաշտի ծաղիկների խշխշացը, նրանց ռանգը, հոտը, սիրուանութիւնը, էնտեղի հազար տեղից վազող աղբիւրների հայրու պէս պարզ ջրերն իրա սիրտը հէնց ուրախացրին, որ էլ չէր կարծում, աշխարհքումս ընի։ Էս տեղը մի հարիր հետ տեսած կը լինէր, բակի միտը չէր գալի, թէ մի օր ըսէնց տեսած ա. պապերիցն էլ չէր լսած, պեղացել էր ճնացել։

Մին էլ տեսաւ, որ մի սատանիկ քամի Մասիցը գալ Ալազեազը գալով՝ ձէն ա տալի.—Պատրաստ կացէք, դաշտեր, քոլեր, ծաղիկներ, խոտեր, ձեր տէրն ու տիրականը, էս աշխարհքի մէրը գալիս ա։ Էս ասելով, քամին անց կացաւ ու քամակիցը Մասիսն եկաւ։ Նրա առաջին սիրուն ջահել աղջկէքն իրանց քաղցը ձէնով ջան գիւլում ասելով՝ գալիս էին, ձեռներին մի-մին փունջ ծաղիկ բռնած։ Մասիսը հասաւ Ալազեազին ու նրա ճառին ընկաւ, փաթաթուեց ու ասեց.—Ախպէր ջան, էսօր թող ուրախանան ամեն սիրեկաններ, որ իրանց մուրազին հասնիլ պտեն։ Վերջը իրանց գլխին ինչքան ծաղիկներ կար, հրամայեց, որ լեզու ընին ու ասեն, թէ ընչի համար են։ Մինն ասեց, էս գլխացաւի դեղ եմ, մէկէլը՝ որտեղ ինչ ցաւոտ մարդ ընի, էս նրան կը սաղացնեմ. մէկը՝ թէ ով որ իմ ջուրը ծծի՝ էլ մեռնիլ չի. մէկէլը՝ թէ ով որ իմ տերևիցն ուտեցնայ կշտին, ինչ մուրազ անի՝ կը կատարի ու ամենը մի տեսակ բանի պէտք գալն ասեցին։ Սօսը հէնց որ էս վերջինի խօսքը լսեց, վրայ թռաւ,

որ մի տեղ էլա գոգի նրանից. նստա էն սնաթը Մասիսն ու Ալագյազը իրարից չոքնեցին, Սասը ձաց էլ յեկա Արարատու գագաթը։ Սրանից յետոյ տեսաս, որ մի սուփրա բաց էլաս էգ շատը-չիմանի (սիգաուէտ տեղ) վրայ. աշխարհքումս ինչքան կենդանիներ ու անուշեղէններ կային, էդ սուփրի վրէն շարեցին։ Մին էլ էն տեսանիս, էկան Լէյլին ու Մաջլունը՝ կուռկուռի բռնած՝ ուրախ-ուրախ ծիծաղելով, նստեցին սուփրի վրայ, հաց կերան, ուրախութիւն արին. Լէյլին գինին ածում էր տալիս Մաջլունին, նա էլ՝ Լէյլուն. յետոյ մի թաս գինի տրեց Լէյլին ու տուեց Մաջլունին, ասելով.—Սիրելիդ իմ, մենք ըսէնց ուրախութիւնի միջի ենք, ըսկի էլ չենք ասում, թէ էս որ մի մարդ կայ, որ քանի իմ ու քու քեֆը տեսնում ա, սրտի եարէքը նորանում են, մեր առաջին զուլ գառած կանանել ա. ուզում ա, որ իմանայ իր գլխի գալացուկը. ինչ ես ասում, նրան ինչ ջուղաբ տանք. բեր էս ուրախութիւնից նրան էլ գամաթ անենք, թող գնայ իր մուրազին հասնի։—Սիրելի Լէյլի, ասեց Մաջլունը սրտմելով, գինու թասը ձեռին բռնած. էրնէկ մարդի սիրտը իմանայիր, նոր ասէիր. օրհնուիս դու, բանի տակը չիմացած՝ խօսում ես, լեղի կը խմեմ ու ես էլ էն գինին չեմ խմիլ, ասեց ու թասը տուեց գետնովը, ձեռը քցեց Լէյլու ճառվը ու աներևոյթ էլաս։ Սասը էս թասի չբիկոցիցը վեր թռաս, տեսաս որ նստած տեղը քունը տարած ա էլել. համա աշխարայ իմացաս իր միջումը, որ սրտինը չի ընում. սիրտը կոտրած՝ երեսի վրայ ընկաս բարձին ու էլ իրան իմացաս ոչ. մին էլ աչքերը բաց արուց, տեսաս, լիսն էրթիկովը տուն ա ընկել։ Սասծու լիսը բացուեց, կարմիր արևը ոսկու պէս պսպղին տալով Մասիսի վրէցը սաղ աշխարհքը բռնեց. տասը տարեկանից ցած աղջկէքը մի-մին տեսիս գլխներին՝ ծաղկի փունջերով լիքը, դոնէ դուռը ման են գալի, ամեն տան մի փունջ տալի ու ասում.—«Ծաղկամօր փայը ուէքա։ Նրանք էլ կաթն ու ձու են տալի կամ բրինձ, որ տանեն իրանց համար կաթնով փլաս եփեն. ընչունքի էս օր ամեն աղքատ տան էլ պաի կաթնով կերակուր էփի. ունևորը չունևորին կը դրկի։ Ծաղկամէրն էլ, ծաղիկ բաժանելուց յետոյ, տանում են Կարմրաւոր եկեղեցու դուռը համբուրում ու ընտեղ վեր դնում վարդիթերի մէրն էլ Համբարձում հինգշաբթի քշերհանայ վեր կացաս տեղիցը, կաթնուին եփեց ու դրկեց իրիկուան վիճակ քցողներին, կանչել տուեց, որ գան վիճակը

հանեն։ Վարդիթերի սիրտը արբփ-արբփում էր, թէ ՝ երբ պատ վիճակը հանեն, որ իր բախտը փորձի։

Մալիք հաւաքեցին ու Ամանումը, որ աղաջբաշին էր (գլխաւոր դերասանն էր), ըներուց մի պատ հինգ տարեկան անմեղ աղջկայ, որ խէր ու շառը չէր ճանաչում. նստացրուց նրան մէջտեղը, գլխին քցեց մի կարմիր քող ու վիճակի բղուղը աւեց ձեռը, որ հանի։ Ինքն էլ վեր կացաւ ու ասեց.

Սիրել եմ՝ սերն երեսին,
Ոնհան թերն երեսին.
Ով իմ սիրածն ինձ չի տայ,
Ատծու կրակն երեսին։

Երեխէն ձեռը տարաւ ու հանեց մի աղջկայ մատանիք։ Ամեն տեղից ձէն տուին.— աշքդ լիս, լաւ կըլնի բանդ, վիճակդ լաւ դուս եկաւ։ Յետոյ Ամանումը մի տուն էլ բան ասեց, մինն էլ դուս եկաւ, համա չի սազեց։ Խեղճ վիճակի տէրը սկսեց նոթերը կլտիլ ու հոգէց քաշելով յետ քաշուիլ դրաղ. համա քէյվանի կնանիքը ասին, որ մէկէլ քցեն բղդի մէջը, բալքի սխալուեց։ Յետոյ ամեն կնիկ մի մին դռից մի բան ասեցին. ոբի վիճակը լաւ դուս եկաւ, որինը վատ. վերջը Ամանումն ասեց.

Երթիկ երթիկ բռնել ես,
Երթկատակին կանչել ես,
Իմ նանը քեզ աղջիկ չի տալ,
Անուշ քունդ կարել ես։

Արի քօր թալանը (կոյր բախտը) տես, վայ նրան, ինչ Ատուած չի յաջողի. էս վայը Վարդիթերի գլխին եկաւ. էգուսը դրա մատանիքը դուս էկաւ։ Ամենն էլ մտիկ տուին խեղճ աղջկայ երեսին, որ հենց տեսաւ իր մատանիքը թէ չէ, աչքերից գլորվալով վէր ածեց ու հենց ուզում էր առնիլ գնալ յետ, մէրը մին էլ քցիլ տուեց, թէ ինչ ա, բալքի Ատծու աչքը վրէն քաղցրանայ, աղջկայ սրտին ըլնի վիճակը։ Մի քանիսից յետը մին էլ ասեցին.

Ծաղիկ ունիմ ալայ ա,
Ալայ չի՝ ալուալայ ա.
Նար լռնիլը լաւ կըլի,
Բաց թողալը բալայ ա։

Էլի երկինքն ձեռը տարու, բզզիցն էլի իրանը դուս էկաւ։ Ցլիս սիրտը կոտրած, աչքերը գետինը քցած՝ ասեց մեր էլ քցածը, հանդն իրեքումն ա, բայց էլի մի պիտայ, իմ վիճակն բանէն ա։ Վերջը մեր էլ ասեցին.

Էս որ ուրբաթ ա, պատ ա,
Մոցինդ էրծաթէ քաս ա,
Հոգին դատի, վարդապետ,
Թէսա իր տատմ չընաս ա։

Մարդի բան որ մի հետ թարուի, օխտը տարի էլ չարչարուես, չես կարող գլուխի։ Էս էլ մեր խեղճ աղջկանը դուս էկաւ։ Ամենքը ջուր դառան ու սառած ճնացին իրար երեսին մարիկ տալով։ Սեսան, որ աղջիկը ռանգը գցեց, սկսեցին ամենքը մի գէնից սիրտ տալ։ Միսն ասեց. վիճակն ինչ ա, որ ուտում ես. մէկէլը՝ թէ սարքովի բան ա, կնանոնց խելքից դուս էկած ու գնա ուրիշ ըսէնց խօսքերով՝ ուզեցան վարդիթերին ուրախացնեն։ Վիճակը որ պրծան, բղղի ջրիցը ածեցին մի թասի մէջ ու երկու կնիկ իրանց բթերովը բոշ բռնեցին. մէկէլը սրտումը մի մուրազ արեց ու ձեռը ջրի երեսին քսելով ասեց.—թէ աջ պտուի, խէր դայ։ Թասը էն սնաթը առանց ժաժ տալու՝ պտտեց աջ. էս դէնիցը աշքալիս խօսացին, որ նրա սրտի մուրազը կատարուեց։ Ցետոյ ամեն կնիկ էլ սրտումը մի մուրազ առնելով՝ ձեռները քսեցին. որինը աջ էր պտտում, աշքալիս էին խօսում, որին ձախ՝ ասում էին՝ սուտ բաներ են, սրտի ումուտներ են, ուրիշ ոչինչ։

Մեր վարդիթերն էլ մոքուն էս դրուց. Սօսին թէ կարողանամ էս աշունք ուրախացնել, աջ պտտի։ Համա ինչ օգուտ, նրանը ձախուելուցն էր վեր կացել էս օր։ Կնանիքը սեսան, որ նրա բանը չի յաջողեց, ասին.—էս օր քու օրը չի, էս օր քեզ վրայ չէկաւ, օրիցն ա, թէ չէ մի հետ էլ ա լաւ կըլնէր վիճակդ, համա նա իր գլուխը հենց առաջի վիճակումը լաց էլաւ, բատանք աւելորդ էին։ Ամեն բանը երբ որ վերջացաւ, սուփրէն բերին քցեցին. պատուները ջոկ նստեցին, հարսն ու աղջիկները ջոկ, կաթնովի ամանները առաջ քաշեցին, կերան ու վրէն էլ խորոված, նրա վրէն էլ ոսկու ռանգ գինին մին-մին խմեցին ու օրհնեցին էս օրուան վիճակը, որ ումը աւ դուս էկաւ՝ լաւ. ումն էլ վատ դուս էկաւ, Աստուած տայ, որ լաւանայ։

Պ. Պուշեան

ԱԼԱԳԵԱԶԻ ՄԱՆԻՆԵՐԻՑ

Հովակաց

Ալագեազը աստղերու մէջ
Ազամանդէ թագը գլխին.
Սարերէն վեր, ամպերէն վեր,
Թիկն է տուել զմրուխտ գահին։

Սիրամ հաւքի թևեր ունիմ,
Թռնիմ կերթամ Ալագեազ.
Ճակտիս աստղէ պսակ ունիմ,
Սրտիս մէջը դուռ երազ։
Սրտիս մէջը դրախտ ունիմ,
Վարդ ու բլբուլ, սէր ու սազ։
Աբի գիրկս մարմառ Զարօ,
Թռնենք երթանք, Ալագեազ։

. . . .

Երկինք անամպ, անուշ լուսին,
Աստղերի մէջ ման կուգայ.
Հարսները սօսին-սօսին,
Հովը-հովառում կը հևայ։

Լուռ քարայրի էն մութ ծոցում
Հովը տխուր կը շրուայ.
Հովի հանդը սիրաս է ծորում,
Առաւէն անուշ կը մեջայ։

Նխշուն հաւքեր թեւին տալով
Մանթաշ իջան էս իրիկուն.—
Էս ինչ լաւ է, իրարու քով
Նստենք խօսենք ես ու դուն։

—Տես, էն հաւքը, ինչ մեղմօրօր
Զէնը քցեց, ախպէր ջան,
Բիկնի ձորն է ձէնը էնոր,
Դուն երգ ասա, Աւօ ջան.

. . . .

Երեկոյեան ծաղկոտ սարից
Հովիւն հօտը տուն կը բերէ.
Յոգնած հօտը մթին սարից
Քնքուշ եարիս քուն կը բերէ։

Էսօր եարս շատ է խաղցել
Արեգակի շողերի հետ.
Աբեի պէս շատ է խաղցել
Շող մատներով իմ սրտի հետ։

Շող-մատներով, վարդ-մատներով
Իմ սրտի հետ շատ է խաղցել,
Հիմի յոգնել եղնիկի պէս,
Գրկիս միջին քուն է մտել։

Յոգնած հօտը սար ու քարից
Սիրուն եարիս քուն կը բերէ.
Աղբիւրների, ծաղիկների
Երազներով քուն կը բերէ։

Նազան աղջիկ, մախմուր-Զարօ,
Տես մութն ընկաւ, հոգին ընկաւ.
Ցոլցլալով աստղերն ելան,
Քունն աչքերիդ ցած իջաւ։
Մի-մի հաւքերն կտուց կոցի՝
Մաղկունքի մէջ քուն մտան.
Երկնուց փէրին-լուսնակն ելաւ,
Քունն աչերիս ցած իջաւ։
Սիրուն եղնիկ, թող գիրկ գրկի,
Հաւքերուն պէս քուն մտնենք.
Վառ աստղերին լուռ նայելով
Աստղերուն մէջ քուն մտնենք...

Աղօթրանէն արև ցողաց,
Սուսան սարէն հոգին ելաւ.

Քանի՜ շրջուրջի հրդեհը գնդաց,
Շատրաց վիարդի նուան ընկաւ։

Դու նստանց ես ազիրդաս-ակինն,
Շատը ծառանդ կը թիրնի.
Ալ-շրթունքդիդ, լալ-շրթունքդիդ
Շատրաց ջուրը կը պաշնի։

Շուղինի ազնիկ, չեմ գիմանում,
Միրաս կառնի ու կուտայ.
Նուռ-պաչ կուգիմ, նուշ-պաչ կուգիմ,
Ալիսարը ձէնիս ձէն կուտայ...

Ալինի ակէս գնօգում Զարօ,
Շափանի տարով դուրս եկար.
Էն մուք ձորին, իմ խոր արտին
Շոգեր տարով դուրս եկար։

Ալ վարդերը կրծքիդ նստան,
Ցօգերն իջան ոտներիդ.
Զով հովերը ծամերդ տարան,
Մեռնեմ ծով-ծով աչերիդ.

Արի գիրկս, մարալ-աղջիկ,
Ալամ-աշխարհ թող արի.
Նազ մի արա, նստի մօտիկ,
Անսէր սրտից վանդն արի։

Ալագեազի ալով-լալով
Գոհար սէրս զարդարեմ,
Սէրս ու սիրտս պտակ հուսած՝
Արար աշխարհ զարդարեմ։

Ալագեազի ծաղիկ-ծաղկունք
Իմ վարդ սիրուց բոյր կառնեն.
Զառ Մանթաշի հաւք ու թռչունք
Իմ բլբուլից ձէն կառնեն.
Հէյ ջան, հա՛ ջան, —ցօղն ու ակունք
Սրտիս խորքէն ակ կառնեն...

Շարմաղ-Զարօն ձորի միջին
Վարդ ու նարգիզ էր քաղում.
Ալ-թշերին, լալ-շրթունքին
Մէկ էլ նստաւ խէտ-ժեղուն։

—Ինտրին ազջիկ, հանգիստ թող ինձ,
Մի վախենար, չեմ կծում։
Հոգի-ազջիկ քու շրթունքից
Անուշ մեղրը եմ ծծում։

Վառ վարդերից հարուր անգամ
Ալ-թշերդդ բոյր ունի,
Ջառ նարգսից հազար անգամ
Լալ շրթունքդդ մեղր ունիս։
Վայ ինձ, ինձնից բիւր-բիւր անգամ
Մեզուն արդ ու յարդ ունի...

Շող-շափագին եկայ անցայ
Իմ Զարօի բողտիկով,
Էնոր ուլեր ու գառներդ
Գառկեր էին իրար քով։

Ուլ ու գառներն ինձ որ տեսան՝
Անուշ ձէնով մայեցին.
Եարաք ինձի դուք ճանչցաք,
Ջան-ջան... մեռնիմ ձեր ձէնին։

Ասէք Զարօիս, թող ջրի գայ,
Մեծ ուռու տակ, ձորի մէջ,
Գիշերըս գէշ երազ տեսայ,—
Սիրտս ընկաւ ցաւ ու ցեց...

Երազիս մէջ երկինք տեսայ,
Աղօթարան ցոլալիս,
Որսորդի հետ եարիս տեսայ՝
Արտ ու արօտ ման գալիս։

Եարս ձեռին ծաղկունք ունէր,
Վարդը որսորդին տուեց.—
Եարաբ չըլնի՞, օրօր հովեր,
Եարս սիրու խօսք տուեց։

Որսորդը հմայիլ ունէր,
Եարիս վզէն կախ արաւ.—
Եարաբ չըլնի՞, շորոր հովեր,
Մարալ եարիս որս արաւ...

Ա. Խաչիկեան

ՄԻԶՈՑԻ

Այս այն ժամն է՝ երբ կայլին մէջ Աշխատանքն առած կանգ՝
Արևուն տակ կը հևայ,
Կը ճնշէ մէն մի մշակ,
Քարայրին մէջ հեռակայ
Հնծեծագին կը մեռնի զով Զեփիւռը ամբափակ։

Միջոցին սիրտն՝ հրեղէն ցանցի մը մէջ սեղմուած՝
Կը բաբախէ հաղիւ հազ։
Լռութեան մէջ շողարձարձ
Իւնչ հրծծիւններ, ինչ երազ։
Եւ ինչ բոյրեր առտուան եղէգներուն կը տարբուած։

Կը քնանան անտառներ թուխ կողերուն վրայ սարին՝
Արծաթահիւս քօղի տակ
Կապոյտին մէջ, առանձին,
Կերթայ ամպ մը կաթնորակ՝
Փափուկ բուրդէն ծըւէններ թողլով ժայռի կատարին։

Կ'ընդունի հողն իր սրտին մէջ՝ իր սրտէն ճեղքուելով՝
Լոյսին նիզակն արիւնոտ։
Աղբիւր մը հոն, ծառին բով,
Կը հնծեծէ նուազկոտ՝
Իր ոսոգած ծաղիկին վրայ մեռնիլ շուզելով։

Դոմէշներ՝ լուծը լքած՝ ճահիճին մէջ կը պառկին,
Իրենց բերնէն հոսելով
Թելերն արծաթ շողիքին։
Սայլերն, անդին, դէգին բով,
Հակայ ցուկները ցցած՝ դատարկութեան կը նային։

Այս այն ժամն է, ով հոգիս, որ ճգուռին պէս մինակ՝
Կատարներուն վրայ մընաս.
Անդորրին մէջ անապակ
Դուն քու երգով արբենաս՝
Ինչպէս արևն իր լոյսով, իր լոյսին հետ մի՛ս-մինակ։

Դ. Վարուժան

ՅՈՐԵԱՆՆԻ ԺՈՎԵՐ

Հովը կ'անցնին.—
Ու ցորեանները յուշին յուշին կարքը ընեան,
Իրենց խորքին կը հոսի գոգ մ'անուշահան։
Գնդակաձեւոր ֆոդերն ի վար ըլուրին
Հովը կ'անցնին։

Հովը կ'անցնին.—
Ամբան կ'յորդի, կը կապի դաշտը յուռթի՝
Որ պիտի հոն աբաժող ուլը խեղդի։
Գոգին մէջէն ալեսասան հովիտին
Հովը կ'անցնին։

Հովը կ'անցնին.—
Ու ցորեանին պատմուճանները ծփուն
Մերթ կը պատռին, մերթ կը կարուին փողփողուն։
Սաւերի մէջ, լոյսերու մէջ փրփրագին
Հովը կ'անցնին։

Հովը կ'անցնին.—
Քիստերուն տակ կ'ալեծփին եղինները՝
Ուր լուսնակն իր սափորին կաթն է հոսեր։
Կալերէն գիւղ, գիւղէն մինչև աղօրին
Հովը կանցնին։

Հովը կ'անցնին.—
Զմրուխտներով կը ծփայ դաշտը անհուն։
Միտը կ'երգէ թառած հասկի մ'օրօրուն՝
Մինչ իր տակէն ցորեաններու մոլեգին
Հովը կ'անցնին,
Հովը կանցնին։

Դ. Վարուժան

ԿԱԼԵՐ

Կալերուն մէջ ես կը նստիմ երազուն
Հովանիին տակ էշիս՝
Որ քովը սա կոճղին կապուած՝ կը շըփէ
Աղու ծնօտը՝ ուսիս։

Տափաստանին վրայ, խաղաղ կը փքուի
Ձերմակ ալիք մ'արևու՝
Որուն մէջ լիւղ կուգան դէղերն, և կրնան
Եկեր է հոն տաքնալու։

Թեր հովին, ծանրացած դաղջ բոյրերով,
Հաղիւ ծոյլ-ծոյլ կը շարժի։
Կովին աուերը փառահեղ լոյսին վրայ՝
Ու կարկլատան մ'է լայնշի։

Շինականն իր կանն ու կազմածը բերած՝
Հոն հիմնեի է նոր դիւղակ...
Հեռուն՝ լքուած իր մամռապատ շեմին վրայ
Կը հակէ գամփռը մենակ։

Կալերուն մէջ դէղը՝ ծեփուած արևով՝
Կարծես տնակ մ'է ոսկի։
Տերևախիտ ծառին գով շուքը կը ապայ
Առագաստ մը նոր հարսի։

Ու ես նստած հովանիին տակ էշիս՝
Կ'երգեմ քաջերը հողին,
Որոնք մանգաղն հազիւ կախած պատն ի վար՝
Կը կրթեն ցուլը՝ կամին։

Կ'երգեմ հօտաղն՝ որ կը հարթէ կալատեղ
Լողքարին գինքը լծած,
Մինչ քրտինքով կը թրջէ շապիկն իր
Կուրծքին վրայ՝ պատռտած։

Կ'երգեմ հարսերն, որ հինան գեռ մատներնուն՝
Կը մաղեն ժիր ժիր գարի.
Կը թափթփին իրենց մաղին ծակերէն
Կարծես շիթեր գոհարի։

Կ'երգեմ մշակներն, որ սայլերուն կատարին
Ասուածներու պէս կանգուն՝
Երկժանիով կատաղօրէն կը քանդեն
Ճակատն հսկայ դէղերուն։

Կամը կ'երգեմ, որ կը նաւէ շուրջն հունձքին
Իբրև հրադոյն լիճի վրայ,
Յետոյ ցորենն աշխարհածուփ, որ արդէն
Յարդերուն մէջ կը լողայ։

Օ՜, ինչ քաղցր է երթալ խառնվիլ էութեամբ
Այդ սրբազոյն վաստակին.
Տրեխներդդ մինչև մազերդ համակվիլ
Մղեղներուն մէջ դեղին։

Փուռի կայծին, դաշտի հացին ի խնդիր
Ելլալ գանը կալերուն,
Վերադարձնել ջաղացքներուն սրտին մէջ
Իրենց երգերը անհուն։

Դ. Վարուժան

ՀԱՍՈՒՆ ԱՐՏ

Արտը ոսկուն է...
Նման բոցերու.
Ցորենն է բուրմնկեր՝
Առանց այրելու։

Արտը ոսկուն է...
Երկինքն է կըրակ.
Հողը խորխորած
Ծղոտներուն տակ։

Արտը ոսկուն է...
Քառաշար հասկեր
Քառաշար սաթով
Արևի՝ են հագեր։

Արտը ոսկուն է...
Բոռ, մեղու, պիծակ,
Ցիստերուն մէջէն
Կանցնին զերթ փայլակ։

Արտը ոսկուն է...
Մերթ կ'ելլէ, հովէն,
Դեղձանիկ մը, թիռ,
Ոսկեծուփ ծովէն։

Օրցը, ոսկուն արտ,
Օ՜ր տուր, հասուն արտ,
Դամ ոսկիդ հրնձեմ
Մանպատով արծաթ։

Դ. Վարուժան

ԵՐԳԻԾԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Գրական այն վաստակը, որի մէջ ծագրուած ու հնգնուած է հասարակական կեանքում արմատացած այս կամ այն չարիքն ու աղտաւորը, կոչւում է երգիծաբանութիւն։ Ծագրը, հնգնանքը, կատակն ու մերկացումը այն միջոցներն են, որոնցով երգիծաբանը ցուցադրում է տիրող ապականութիւնն ու բարքերի անկումը հասարակական, անհատական կեանքում և գծում իր իդէալներին համապատասխանող նոր ուղիներ։

ՅԱԿՈԲ ՊԱՐՈՆԵԱՆ

Արևմտահայ տաղանդաւոր երգիծաբան Յակոբ Պարոնեան,—միակը հայ գրականութեան մէջ,—ծնուել է 1842 թ. Աղբիւանոպոլսում, ուր և ստացել է իր նախնական կրթութիւնը։ Տիրապետելով յունարէն և ֆրանսերէն լեզուներին, նա ուսումնասիրել է Արիստոֆանի ու Մոլիերի ամբողջ ստեղծագործութիւնների բնագրերը։

Պարոնեանը իր գրական գործունէութիւնն սկսեց «Արևելեան Աստղիկ»-ում գրուածքով, որ ուշադրութեան չարժանացաւ։ Նա յայտնի դարձաւ միայն 1872 թուականից, երբ ստանձնեց Կ. Պոլսում «Մեղու» երգիծաբանական հանդէսի խմբագրութիւնը։ Սկզբունքներով դեմոկրատ՝ Պարոնեանն իր խայթող, ծաղրող գրչով անխնայ մերկացնում էր «հասարակութեան սիւներին»—բարձր հոգևորականութեան և ունևոր դասակարգի ներկայացուցիչների, ժողովրդի անունը շահագործողների, մասնաւոր իրաւունքները ոտնահարողների արատները։ Այնուամենայնիւ նրա կենդանի երգիծանքից, հոգևորականութեան և բուրժուազիայի ներկայացուցիչները հարկադրեցին թուրք կառավարութեանը՝ փակել Պարոնեանի պարբերական հանդէսը։

Չը նայած հալածանքներին և հետապնդումներին, Պարոնեանը հրատարակում է «Թատրոն» հանդէսը, որ սակայն շնորհիւ հոգևոր և աշխարհիկ ջոջերի՝ միևնոյն փախճանն է ունենում։ Պարոնեանը գտնում էր նեղութեան ամենածանր պայմանների մէջ, գրեթէ քաղցած, բայց հենց կեանքի այդ շրջանում էլ նրա տաղանդը հասաւ փայլուն զարգացման։ «Ազգային Ջոջեր», «Մեծապատիւ Մուրացկաններ», «Բազդասար Աղբար» և «Հոսանք Ջեռատեսիլ» գրուածքների մէջ Պարոնեանը երբեմն մի քանի գծերով բնութագրում է՝ ինչպէս որևէ անհատի, այնպէս էլ հասարակական մի շարք երևոյթներ։

Իր գոյութիւնը պահպանելու համար՝ նա պարապում էր մերթ փերեզակութեամբ, մերթ հաշուապահութեամբ և միևնոյն ժամանակ հրատարակում իր նոր հանդէս «Խիկար»-ը («Իմաստուն»), այդ հրատարակութեան մէջ կատարելով թէ խմբագրի և թէ ցրիչի պարտականութիւնները։ Պարոնեանը փախճանուեց Թոքահարից 1891 թ., բացարձակ չքաւորութիւնից հիւծուած ու բայրայուած։

Սուրբարեան

ԻՄ ԶԵՌԱՏԵՏՐՍ

Պարոններ, այս վերնագիրը կարդալով չը կարծէք, թէ ոնոնկացած վաճառական մ'եմ և կուզամ հաշիւներս հաստատութեան ներկայացնելու։ Պատիւ ունիմ յայտարարելու, որ կեանքիս մէջ վաճառական եղած չեմ երբէք և լինելու ալ սրամադրութիւն չունիմ, վասն զի խիղճս չի ներեր մէկ ուրիշ մարդու ուրիշի վաճառել այն ապրանքը, զոր ես մէկ ոսկուց գնած եմ։

Առանց վաճառական լինելու՝ սրոշեցի սակայն ձեռաւոր մ' ունենալ, անոր մէջ նշանակել օրուան գէպքեր և, երբեմն այս գէպքերուն առթիւ՝ մահկանացուներու թերութիւններու վրայ ծիծաղիլ։ Թող Հերակղիտի աչքերէն հոսած արտասուքով գետեր ձևանան, թող ազգային բանաստեղծներ Ներսէսն ու Տիգրիս Հայասատանի երկու աչեր ներկայացնեն և լան, թող Պ. Զուխտաճեանին ալ եղանակներ յօրինել տան և եղանակով լան.—Ես, պարոններ, կը ծիծաղիմ և ծիծաղելու համար ոչ եղանակի կարօտութիւն ունիմ և ոչ դաշնակի։ Թերութիւններու վրայ լալն թերութիւններու մեծագոյնն է. խեղճութեան վրայ արտասուք թափելն ապացուցանել է թէ արիւն չունիմք թափելու։ Արտասուքը մանուկներու և կիներու բաժին է. կարդաշեմ, մի՛ գպիք ազնց բաժինս։

Ես չէք կարող երևակայել, թէ որչափ բերկրութիւն պիտի զգամ, եթէ յաջողիմ ձեզմէ ծիծաղներ կթել այն գէպքերու, իրերու և անձերու վրայ, որոնց պիտի հանդիպիք ձեռաներս մէջ։ Մարդիկներու վրայ ծիծաղիլն առաքինութեան ճամբուն մէջ գտնուիլ կենթադրէ և, այս հաշուով որչափ շատ ծիծաղ քաղեմ, այնքան նաև մարդիկ պիտի գտնեմ։ Գէտք չէ մոռանալ սակայն այն դաս մը մարդերն, որք ուխտ և երդում բրած են բնաւ չը խնդալու։ Այդպիսիներու հետ գործ չունիմ, վասն զի ազնց երեսէն ժպիտ քաղելն աւելի

դժուար է, քան թուրք կառավարութենէ բարենորոգում յուսալն, մանաւանդ երբ նկատողութեան առնէք, որ ճնշում բանեցնելու համար չունիմ ես ոչ ծանուցագիր, ոչ դեսպանաժողով և ոչ նաւատորմիղ։

Անկողմնակալութեան վրայ վստահացնելու համար կը յայտնեմ թէ՝ այնպիսի կացութիւն մ' ունիմ, որ չ'ստիպեր զիս աշառութիւն ընելու։ Փառք Նախախնամութեան, բարեկամ չունիմ, որ աշառութիւն ընեմ։ Բայց մի՛ կարծէք թէ կիրքով պիտի խօսիմ, քա՜ւ լիցի... Փառք ատանային, թշնամի ալ չունիմ։ Մի զարմանաք, պարոններ. աշխարհս երեսը այնպէս կապրիմ, ինչպէս դուք կապրիք երբեմն թատրոնի մէջ. միայն հանդիսատես կը լինիմ ներկայացման, առանց դերասանների գործոյն խառնելու։ Ընկերութիւններէ ընդհանրապէս հեռի կապրիմ, և այս է միակ պատճառ իմ երջանկութեանս։

2 յունիս

Ես այսօր համոզուեցայ, որ թատրոնը մեծ մարդերու դպրոց մ'է։

Բայց մեծ մարդիկ ինչ կուանին այդ դպրոցին մէջ։ Խնդիրը հոս է։

Թող ուրիշները պնդեն թէ բարոյականութիւն կուանին հոն. ես կը պնդեմ և եթէ հարկ լինի՝ երկու տաճիկ վկայ ալ կը բերեմ,—որովհետև քրիստոնէի վկայութիւնը ընդունելի չէ,—որ թէպէտ և բարոյականութիւն դաս կը տուին հոն, բայց աշակերտները մարմնակազմութեան դաս կառնեն, վասն զի հանդիսատեսները դերասանուհւոյ մը սուլի թեներուն, պարանոցին, արունքներուն կը դարձնեն իրենց ուշն, քան թէ անոր արտասանած խօսքերուն. և եթէ դերասանուհւոյ թեներն գեղեցիկ գտնեն՝ կասեն.

— Շատ սքանչելի ներկայացում մ'էր։

Խեղճ հեղինակներ... կը կարծեն թէ իրենց գործը կը ծափահարուի... մինչդեռ շատ անգամ դերասանուհւոյ հեղինակն է, որ կը ծափահարուի...

7 յունիս

Անատոլուի սովելոց համար վիճակահանութիւն մը պիտի լինի... գալ տարի։

Յիշեալ վիճակահանութեան գործադիր ժողովն շրջաբերական պիտի ղրկէ գաւառները՝ յորդորելու համար սովեալները, որ համբերեն և անօթութենէ չը մեռնին, մինչև որ իրենց հաց ղրկուի։

Կը յուսանք, որ մեր ազգայիններն կը համակերպին այս շրջաբերականին։ Քաջ գիտեն արդէն նոքա, որ այս սովն եթէ Եւրոպա լինէր՝ շատ աւելի զոհ կը տանէր իւր հետ. փառք տալու ենք, որ թուրք բարեխնամ կառավարութիւնը շատ տարիներէ հետէ նախատեսած լինելով այս սովն՝ ազգու միջոցներ ձեռք առած էր՝ իւր հաւատարիմ հպատակներն անօթութեան վարժեցնելու։

Մայրաքաղաքիս մէջ բժիշկներուն թիւն օր ըստ օրէ աւելնալու վրայ է. նոյն իսկ այսօր մէկ մարդու երկու բժիշկ կիյնայ։

Իրաւ է որ շատ ապրատներ առանց բժշկի կը մեռնին. բայց ճշգրտի բժիշկներ ալ կան, որ առանց հիւանդի կը մեռնին։

5 օգոստոս

— Ժը մանժ, թիւ մանժ, իլ մանժ, նու մանժոն, վու մանժէ, իլ մանժ...

— Այդ ինչ է, Կարապետ ագա, քառասունէն ետքը նոր բաներ կը հանես։

— Ի՞նչ ընեմ, Յակոբ ագա, Հայաստանի մէջ բարենորոգումներ պիտի ըլլան եղեր, թերևս մենք ալ պաշտօն մը ձեռք անցունենք...

— Ի՞նչ կը սերտես։

— «Ուսեմ» բային ֆրանսերէնը կը կարդամ...

— Ֆրանսերէնի ե՞րբ սկսար։

— Ժամ մը առաջ։

— Մէկէն ի մէկ այդ բայն ինչպէս եկար հասար։

— Առաջին դասս է այս, Յակոբ ագա. ինչ ընեմ, թուրքիոյ մէջ պաշտօն վարողներն ամենէն առաջ այս բայը կը սորվին։

18 հոկտեմբեր

Իւրաւ դասագիրք մ՝ այնչափ քննադատութեան նիւթ եղած

չէր, որչափ որ կըլլայ Եղիշէ վարդապետ Դուրեանի հրատարակած «Ընթացք ի գրոց բարբառոյ»։

Երկու ամիս է, որ մէկ կողմէն ամեն օր սխալներ կը գտնեն այդ դասագրքին մէջ, և միւս կողմէն արժ. վարդապետը իւր գրքէն սխալ քաղողներուն սխալները կը գտնէ։ Որչափ ալ հայը Եղիշէ համոզիլ չուզէ և ուզած կերպով մեկնէ քերականական կանոնները՝ յայտնի է թէ իւր դասագիրքը ունի սխալներ և թերութիւններ։ Սակայն մենք իւր ընդդիմախօսներուն պէս չենք ուզեր իւր դասագրքին պատիւը կոտրել և զայն բոլորովին անօգուտ համարել. իւր դասագիրքն ամեն դպրոցներու մէջ կրնայ աշակերտներուն տրուիլ իբրև վարժութեան գիրք. և ուսանողները՝ քերականութեան կանոններուն համեմատ՝ անոր մէջ գտնուած սխալները կուղղեն։ Արդէն քերականութեան շատ հեղինակներ այս դրութեան կը հետևին, դիտմամբ սխալ կը գրեն, որպէս զի աշակերտները՝ կանոններուն համաձայն՝ զանոնք ուղղեն։ Հայր Եղիշէի դասագիրքը մեծ յարմարութիւն ունի այս մասին... Իրար անցնելու ինչ կայ։

27 Նոյեմբեր

Սուրբ Մկրտիչ Կաթողիկոսն մայրաքաղաքս հասած է։ Հակաթոռութեան խնդիրն քիչ օրէն երևան կելնէ։

Աղթամարայ Կաթողիկոսն աթոռի խնդիրը չը յարուցաներ, վասն զի նատած չունի, որ աթոռի վրայ խորհի. ամեն օր կուտէ, կը պառկի և կը քնանայ։

2 Հոկտեմբեր

Միայն կիները չեն, որ միշտ նոր ձևով հագուիլ կուզեն. հրապարակի վրայ ալ կը գտնուին քննադատներ, որ նոր ձևով խօսիլ կուզեն։

Կը ներկայացնեմ ձեզ պ. Գրաէր Ատոմն, որ «Մասիս»-ի մէջ նոր կամ հին հրատարակութիւններ քննադատելու պաշտօն կը վարէ։ Ճաշակը կիրթ է, և քննադատի մը հարկ եղած դրամագլուխն ունի. բայց շատ անգամ գիրք մը քննադատած միջոցին կ'ակի իւր ցաւերը մեզի պատմել։ Երբեմն ալ ինքը խօսած ատեն, Լիթրէն ալ խօսքի մէջ կը նետուի։ Սա խօսքը չը լմնցուցած՝ Վիկտոր Հիւգօ, Վոլթէր, Լամարթին և ուրիշ

հարիւրաւոր հեղինակներ կուգան՝ խօսքին մէջ կը խառնուին, այնպէս որ ընթերցողն կը ստիպուի ըսել.

— Կամ ամենքդ ալ լռեցէք, կամ մէկիկ մէկիկ խօսեցէք, որ հասկնանք։

Քանի քանի անգամներ ըսած եմ պ. Գրասէր Ատամին. «Պ. Ատամ, թող տուր սա մարդերուն օձիքն և դու խօսելիքդ ըսէ»։

Օրինակի համար, ես կըսեմ.

«Արշալոյսին արթնցայ, հագուստներս հագայ և քիչ մը հաց կերայ»։

Տուր այս տողը պ. Ատամին և հետևեալ օրը քեզի պիտի ըսէ։—

«Արթնցայ արշալոյսին, զոր Վարդամատն կանուանեն դաստականք և հագայ հագուստներս, որք ոձևութիւն ծածկելու միայն ծառայելու են, կըսէ Ժան Ժաք Ռուսօ, և կերայ քիչ մը հաց, թէպէտև Աւետարանը կըսէ, թէ՝ «Ո՛չ միայն հացիւ կեցցէ մարդ, այլ և բանիւ Տեառն»։

Ինչու համար մարքին ուղղութեան դէմ ապստամբիլ և ընթերցողներդ չարշարել, ո՛ Ատամ. շիտակ ճամբադ գնա. ինչ հարկ կայ ամեն քայլափոխիդ մէյ-մէկ հեղինակի դուռն ափ առնելու.

ՊՏՈՅՏ ՄԸ ՊՕԼՍՈՅ ԹԱՂԵՐՈՒՆ ՄԷՋ

ՓԵՐԱ.

Փերայի սահմանն է՝ արևելքէն խաղամոլութիւն, արևմուտքէն պճնասիրութիւն, հարաւէն շռայլութիւն և հիւսիսէն խարդախութիւն։

Ա՛լ ասանկ սահմանակիցներ ունենալէդ ետքը, հանդարտ սրտով կեանք անցուր։

Այս թաղը Պօլսոյ Փարիզն է—եթէ Փարիզն իրեն նաստուութիւն չի համարեր իւր անունն Փերայի վրայ տեսնելը։

Անուանի են հասարակաց պարտէզները, որ դրախտ ալ կը կոչուին և ուր կը գտնուի ծառ գիտութեան բարոյ եւ չարի. բարոյ ծառը դեռ պտուղներով բեռնաւորուած է, իսկ չարի ծառին վրայ ոչ թէ պտուղ, այլ տերև անգամ չեն կրնար գտնել։

Փողոցները բաւական լայն են, միայն թէ առաւօտներն այդ փողոցներէ անցնելու չը գար, վասնզի ամէն առաւօտ կարբին և փոշեղէն մառախուղ մը չորս կողմը կը պատէ։

Ունի զեղեցիկ իսնարանները, որոնց մէջ երգեցիկ աղջիկներ մինչև առաւօտ եղանակով՝ կը խօսին այլեայլ նիւթերու վրայ։ Ունի նաև համալսարանները, որոնց մէջ ապէկ թուղթ խաղալու, վարպետութեամբ գիմացինդ կողոպտելու գիտութիւնը կաւանդի՝ դիւրուսոյց եղանակով։

Տուներուն գրեթէ երեք մասը քարուկիր է։ Այս տունները շատ քաջ են, կրակէ բնաւ չեն վախնար, բայց կայրին։

Ջեռագործները մեծ կատարելութեան հասած են. զեղեցիկ սեռէն անոնք, որ զոդ կըլլային, եթէ արական սեռին վերաբերէին — հոս խանութներ բացած՝ մեր ազգին աղջիկներուն և տիկիններուն գրպաններէն ամէն օր, ամէն ժամ, ամէն վայրկեան, ամէն բոպէ բազում դրամ կը քաշեն։

Փոքրիկ գլխարկի մը համար երկու ոսկի կուզեն, իսկ զայն շտկելու համար, այսինքն վրան ծաղիկ մը կապելու համար — մէկ ոսկի կը պահանջեն։ Փարիզէն եկած կարգապարին համեմատ շապիկներ կը կարեն, զոր առաջին անգամ կոճկելուդ՝ կոճակները կը փրթին. եթէ քիչ մը երկար շունչ առնես — կարները կը քակուին. այսպէս հանկացիր բոլոր հագուստներուն համար։ Սա տեղէն շապիկ կամ զգեստ ծախու առնողն ուշադրութեամբ և որոշեալ չափով շունչ առնելու է։

Նշանաւոր է իւր լիճն, որ ձմեռ ատեն կը գոյանայ Թագսիմէն մինչև Ղալաթիոյ — Սէրայը։ Ընկերութիւն մը այդ լճին վրայ նաւակներ բանեցնելու արտօնութիւնն խնդրեց, բայց չը կրցաւ ստանալ։

Եթէ արտօնութիւն տրուած ըլլար, այդ մարդը մեծ գումարներ կը շահէր. սակայն այս արտօնութեան հակառակեցան կիներէն ոմանք, որք բարեպաշտ առիթ կը համարէին սոյն լիճն՝ իրենց խոշոր արտունքներն արդոյ հասարակութեան ցոյց տալու համար. վասնզի երբ այդ լճակէն անցնէին՝ մինչև ծունկերը վեր կառնէին իրենց շրջազգեստներ։ Գալով այն կիներուն, որք նիհար արտունքներ ունէին, ատոնք բաւական աշխատեցան, որ շնորհի այդ արտօնութիւնն, որպէսզի իրենք ալ ձմեռուան եղանակին մէջ կարողանային դուրս ելնելու ազատութիւնը վայելել, վասնզի ատոնք կրզգուշանային իրենց տկար արտունքներն ուրիշներու ցուցնելէ, միանգամ ընդ միշտ հաստատելու համար

այն ճշմարտութիւնն, թէ կիներն իրենց ոգեղ կողմերը ծածկելու համար՝ միշտ մեծ դժուարութիւններ կրնեն։

Այս թաղին ազգայիններուն վրայ կատարեալ տեղեկութիւն տալու համար՝ պարտաւոր ենք շատ մասերու բաժանել զանոնք։

Մաս մը կայ, որ բնմկ Փերացի չէ, այլ կամ Հասպիւղցի կամ Ենի-Քափուցի է, որ ժամանակաւ շատ հարուստ ըլլալուն պատճառաւ, այս թաղն եկած է և մնանկացած է, որպէս թէ Հասպիւղի կամ Ենի-Քափուի մէջ մնանկանալն մեծ դժուարութիւններ ունենար։ Արդ, մնանկացած բոլոր ամիրաներն գրեթէ այս թաղին մէջ կը բնակին։ Եւ արդարև, այս թաղը շատ դիւրութիւններ կընծայէ այն անձերուն, որք հաստատապէս որոշած են դադարեցնել իրենց վճարումներն և ասոր համար է, որ շատ վաճառականներ հոն կերթան՝ երբ մնանկանալ փափագին։ Շատերն ալ մնանկանալէ վերջը հոն կերթան՝ իրենց ծանօթներէ հեռու մնալու համար. վասնզի մնանկութիւնն ժամանակաւ այնքան անպատիւ բան մը նկատուած էր, որ մնանկացող մը նորընծայ քահանայի մը պէս քառասուն օր ապաշխարանք կը քաշէր և տունէն դուրս չէր ելներ։ Հիմա, փառք լուսաւորութեան, մնանկութիւնը թէպէտև սովորական բան մը դարձած է, բայց դարձեալ կը գտնուին խաւարեալ մարդեր, որք իրենց փոքրութիւն և ամօթ կը համարին ուրիշին իրաւունքը կլլելը։ Ահա այս խաւարեալներն են, որ Փերա կը դադթեն։ Այս մարդիանք իրենց համար, որպէսզի նախապաշարումն մէկդի թողով՝ հանդարտ խղճով մնանկանան և իրենց մեծ պատիւ համարին ուրիշներու ստակներն ուտելը։ Արդէն հարստանալու համար ամենէն կարճ ճամբան է սա. և այն բոլոր հարուստներն, զորս այսօր կը տեսնենք, բայց տեսնել չենք ուզեր — այդ ճամբով հասած են իրենց նուաճանդիսաբ։ Ահա մարդ մը, որ իւր կեանքին մէջ բնաւ վաճառականութեամբ չէ զբաղած և այսօր Վոսփորի երկու ափերուն վրայ բարձրացած հոյակապ շէնքերու տէր է։ Ի՞նչպէս կառուցած է զանոնք. մի՛ հարցուներ, յափշտակութեամբ կառուցած է։ Ասդին դարձիր և կը տեսնես այնպիսի անձեր, որք իրենց կեանքին մէջ հաղիւ ապրելու համար դրամ վաստակած են. բայց այդ անձերն այսօր, չը գիտեմ ո՞ր կողմն մէջ, տէր են այնչափ գեղիներու, որոնցմէ Նոյ նահապետին օրէն ի վեր մաս-մաս կը ծախեն և այդ գեղիները չեն սպառիր, այլ որքան ծախուին՝ այնքան կընդարձակուին։ Ի՞նչպէս — մի՛ հարցուներ, վասնզի

պատասխանը գողութիւն է և այս գողերը մեծ յարգ ու պատիւ կը վայելեն հասարակութեան մէջ, որ կրսէ անոնց համար։

— Շատ խելացի, շատ ճարպիկ մարդեր են. կանխաւ պատրաստած են իրենց ապագայն։

Եթէ ասոնք ուրիշ հոգի մը վրայ դնուէին՝ ցմահ բանտարկութեան կը դատապարտուէին։

Դաս մ'ալ կայ, որ ոչ գործ ունի, ոչ եկամուտ և ոչ ալ հող՝ ապրելու համար։ Այս մասին վրայ եթէ ակնարկ մը ընես՝ կը զարմանաս, թէ ինչու անօթութենէ չը մեռնիր. բայց երբ իր ընթացքը քիչ մը քննես՝ կը զարմանաս, թէ ինչու միլիոնի տէր չըլլար։ Այս մարդուն բոլոր դրամագլուխն է իւր կրած հագուստն, զոր կը շինէ՝ բարեկամներէ նախ փոխ առնելով և յետոյ չը վճարելով։ Բոլոր հարստութիւնն իր վրայ կը կրէ. Պիտսի աշակերտներէն է։ Այդ հագուստին տէր ըլլալուն պէս, բարեկամէ մը քանի մը դահեկան կը գտնէ և կերթայ թաղին ամենէն նշանաւոր սրճարանին մէջ կը նստի, աչերը կը յառէ սրճարանին դրանը, ուսկից անծանօթի մը մտնելուն կրապասէ ճիշտ այն ձկնորսին պէս, որ կարթը կը ձգէ ջուրին մէջ և ձուկի մը գալուն կրապասէ։

Ուրիշ մաս մը իւր բոլոր ժամերը խաղամոլութեամբ կանցունէ, նարտ, թուղթ և կամ ուրիշ տեսակ խաղ մը իւր արհեստն է. ասով իւր ընտանիքը կը կերակրէ, կամ անօթութենէ կը մեռցունէ։ Այս խաղամոլներն ալ երկու կարգի կը բաժանուին. հարուստներն ոսկիով կը խաղան, աղքատներն արծաթով։

Մաս մ'ալ կայ հոս, որ միջնորդ է կամ տան, կամ սիրոյ և կամ երբեմն երկուքին մէկէն։

Չը մոռնանք յիշել, որ ընդհանուր կանոն մ'է հոս շարաթ մը անօթի մնալ և դարձեալ հին հագուստներով չը պարտիլ. քսան փարա չունեցողն Ռօչիլտի տղուն պէս կը հագնուի, և ասկից է, որ Փերան ուրիշ թաղերէն աւելի հարուստ կը կարծուի։

Այս թաղին մէջ կը բնակին ազգին ամենէն նշանաւոր հարուստ ազգայիններն, որք վերջին տարիներս իրենց քսակը բացած են բարենպատակ գործերու համար... միայն այն տեսակ բարենպատակ գործերու համար կուտան, որոնց շնորհիւ իրենց անունները լրագիրներու մէջ կը հրատարակուին և իրենք

ալ կը փառաւորին. իսկ լումա մը չեն տար այն բարենպաստակ գործերու համար, որոնք ազգին պատիւը և փառքը կը կազմեն. վասնզի այդ լուման լրագիրներու մէջ պիտի չը հրատարակուի և մեծ անխելքութիւն է, որ մէկն ազգին երկու դահեկան տայ և անունը լրագիրներու մէջ չը հրատարակուի։ Բացառութիւնները մոռանալու չէ։

Կայ երիտասարդութիւն մը, որ հինգ տարին անդամ մը կը սթափի և մտքէն կանցունէ կազմել ընկերութիւն մը՝ եթէ չը կայ, իսկ կործանել՝ եթէ կայ։ Ատենօք Համակամ ընկերութիւն մը կար, այժմ չիք։ Կազմուած էր նաև Օժանդակ ընկերութիւն մը, որու նպատակն էր աղքատ հիւանդներու ձրիաբար բժիշկ ղրկել և դեղ տալ։ Այս ընկերութիւնն բաւական դրամ հաւաքեց. բայց ետքը անոր քանի մը անդամներն, որ աղքատ էին, հիւանդացան և իրենց հիւանդութիւնն ալ ծանր ըլլալով, ընկերութեան դրամով ինքզինքնին դարմանեցին, որով ընկերութիւնն ալ իւր նպատակին հասած համարուեցաւ։

Հոս կը ընակին ազգին ամենէն երևելի բժիշկներն։ Հոս կը գտնուին ընդհանրապէս ազգին ամենէն նշանաւոր հիւանդութիւններն, ինչպէս են՝ կալուածոց հոգաբարձութեան խնդիրը, Հասունեան խնդիրը և այլն։

Բարակէօղեան եղբայրներուն շինելիք վարժարանը այս թաղին գերեզմանատան մէջ պիտի բարձրանայ, եթէ... բնակիչները բարեհաճին բարձրանալ։

Հոս ալ թաղեցին իւր թաղականէն գոհ չըլլար երբէք և այս պատճառաւ թաղականի կռիւները պակաս չեն։

Թաղային վարժարանը, Նարեկեան անուն, ուրիշ թաղային վարժարաններու հետ բաղդատելով՝ շատ խեղճ է. հրաբուխէ բռնուած է աս, մինչդեռ միւսները տենդէ կը տանջուին։

Թաղիս մէջ չորս եկեղեցի կայ—ս. Ներսիսին, Խոր Վիրապ, Ոսկեբերան, ս. Յարութին և այս չորս եկեղեցիներու մէջ չորս բարեպաշտ քրիստոնեայ չը կայ։

Թաղեցին շատ զբօսասէր է. ամառուան եղանակին մէջ հասարակաց պարտէզը կամ մասնաւորաց պարտէզները կերթան և ձմեռն ալ թատրոններ, պարահանդէսներ և ուրիշ զբօսարաններ կը յաճախեն։

Իգական սեռն ինքզինքը բոլորովին հայելիներուն տուած է. ժամերով, օրերով, շաբաթներով, ամիսներով, տարիներով և դարերով հայելիներու առջև կը կանգնի և ինքզինքը կը գե-

դեցկացունէ։ Բացառութիւնը խիստ քիչ է այս մասին։ Կիներէն շատերն այն ատեն միայն կը հագնին, երբ դուրս ելնել կամ հիւր ընդունիլ հարկ ըլլայ. իսկ եթէ այս հարկ չը ներկայանայ, տան մէջ գիշերազգեստով կը պտըտին։

Կիներուն բամբասանքը հոս քիչ է. եթէ երբեմն բամբասանք մը ընել պէտք ըլլայ՝ խիստ քաղաքավարութեամբ կը վարուին։

Ամառուան եղանակին մէջ այս թաղին մէջ ջուր չը գտնըւիր և թաղեցին կը ստիպուի առանց ջուրի անցունել... իւր օրին։

Օդն աղէկ է, բայց կերևի որ ամառն օդ ալ չը գտնուիր, վանդի հարուստները գիղերը կերթան օդ առնելու։

ԱԲԻՍՈՂՈՄ ԱՂԱՆ ԵՒ ԲԱՆԱՍՏԵՂԾԸ

Աբիսողոմ աղային ներկայացաւ երիտասարդ մը, որ վաճառականի չէր նմաներ, սեղանաւորի ալ չէր նմաներ, արհեստաւորի ալ չէր նմաներ, գործաւորի ալ չէր նմաներ, և վերջապէս անանկ բանի մը կը նմանէր, որուն նմանը չը կայ։ Հագիւ երեսուն երկու տարեկան կը թուէր։ Կապոյտ աչերով, գեղին մազերով զարդարուած ըլլալով՝ ունէր նաև երկու մատ մօրուք, որ մայրաքաղաքիս մէջ կամ սգոյ նշան է և կամ չքաւորութեան։ Հագուստներն այնքան հին էին, որ հնախոյզները գանոնք գնելու համար մեծաքանակ դրամ մը կուտային։ Սակայն եթէ հագուստի մասին վանդրական էր, դէմքի մասին քաշողական զօրութիւն ունէր այս անձը։

— Ծառայ եմ մեծապատուութեանդ, մեծապատիւ տէր,— պոռաց երիտասարդն սենեակէն ներս մտնելով և մօտենալով Աբիսողոմ աղային։

— Ի՞նչ կայ, ի՞նչ կուզէք,— հարցուց Աբիսողոմ աղան վախենալով։

— Վաեմափայլ տէր, ձեր դալուստն լսելով, փութացի հոս գալ՝ իմ խորին մեծարանացս հաւաստին ձեր ոտքերուն տակը դնելու։

— Ոտքերո՞ւս տակը. շատ աղէկ, դիր, ըսաւ Աբիսողոմ աղան, որ կը կարծէր, թէ մուճակ բերած էր իրեն։

— Շնորհակալ եմ, բարձրապատիւ տէր, ըսաւ երիտասարդը, գլուխը բացաւ և սեղանին վրայ ելաւ կանգնեցաւ։

Աբիսողոմ աղան այս սեւաթանին առջև բոլորովին շւարած՝ անհամբեր սեանել կուզէր, թէ ինչ պիտի ընէր այս պարոնը սեղանին վրայ։

Երիտասարդը ծոցէն թուղթ մը հանեց և աչերն Աբիսողոմ աղային մեկելով, բոլոր ձայնովը պոռաց.

— Տեսէք և տիկնայք...

Աբիսողոմ աղա այս ահարկու ձայնէն վախենալով, նստած տեղէն երկու կանգուն վեր ցատկեց և չը կրնալով ինքզինքը զսպել, պոռաց.

— Ո՞վ է աս մարդը. յիմարանոցէն փախած խենթ է, թէ յիմարանոց երթալու յիմար։

— Հայ ազգն, շարունակեց երիտասարդը ձայնը քիչմ՝ իջեցնելով. այսօր այնպիսի հանդէս կը կատարէ, որ մեր հայրենեաց ամենէն քաջ դիւցազնին նւիրուած է...

— Միտքդ ինչ է, եղբայր...

— Կար ժամանակ մը, երբ խաւարը լուսոյ դէմ կը կռուէր, տգիտութիւնը գիտութեան դէմ, անցեալն ապառնիին դէմ, հրամայականը սահմանականին դէմ, սուրը գրչի դէմ, ատելութիւնը սիրոյ դէմ, կրակը ջուրին դէմ, միսը բանջարեղէնին դէմ. իսկ հիմա անցան այն ժամանակները. անոնք անցեալ են՝ մենք ապառնի, անոնք խաւար են՝ մենք լոյս, անոնք տգէտ են՝ մենք գիտուն, անոնք սուր են՝ մենք գրիչ, անոնք ատելութիւն են՝ մենք սէր, անոնք կրակ են՝ մենք ջուր, անոնք միս են՝ մենք բանջարեղէն, անոնք վարունգ են՝ մենք խնձոր, անոնք փուշ են՝ մենք վարդ։ Անցան, անցան այն դարերը, ուր մարդկութիւնը տգիտութեան օրօրոցին մէջ մէյմ՝ ասդին, մէյմ՝ անդին կերթար կուգար...

— Միտքդ ինչ է, եղբայրս, ես քեզի բան մը չըրի. ինչ կուզես ինձմէն, գնա քեզի բարկացնողին դրուցէ այդ խօսքերը...

— Այո, մարդկութիւնը կը չարչարուէր, կը նախատուէր անգութ բռնաւորներուն ձեռքէն և չէր գիտեր որու երթալ և որու բողոքել։

— Տէր ողորմեա... Տէր ողորմեա, ըսաւ ինքն իրեն Աբիսողոմ աղա. քաշելիք ունինք եղեր... ես կրնամ հիմա զինքը սեղանէն վար առնել, բայց կը վախնամ, որ ծոցէն ատրճանակ

մը հանէ և գարնէ ինձի, վանդի խիստ բարկութեամբ կը խօսի։

— Իսկ երբ գիտութիւնն եկաւ,—շարունակեց ատենաբանը,—և վանեց տգիտութիւնն, ինչպէս լոյսն՝ խաւարը, սէրն՝ ատելութիւնը, գրիչն՝ սուրը, ապագայն՝ անցեալը, այն ատեն, ահ, այն ատեն... այո՛, այն ատեն, այո՛ կըսեմ, այն ատեն միայն հասկցուեցաւ, որ մարդկութիւն, ազգ և հայրենիք բառերը բառարաններուն լեցնելու համար շինուած բաներ չէին, այլ ամեն մարդու մտքին մէջ, սրտին մէջ, հոգւոյն մէջ երկաթեայ տառերով և անջինջ կերպով դրոշմելու բառեր էին...

— Եղբա՛յր, կապաշեմ, վա՛ր իջիր և այնպէս դրուցէ ցաւդ...

Ատենաբանը կայնած տեղը այնպէս կը դողար, որ Աբիսողոմ ազգային սիրտը կը հատնէր՝ թէ լամբան գետինը պիտի իյնար։

Ուստի չուզելով այլևս համբերել, պոռաց ինքնակոչ ատենաբանին երեսն ի վեր.

— Վա՛ր իջիր սրկէ։

— Կապաշեմ, մի՛ սաստեր դիս։

— Վա՛ր իջիր, ապա թէ ոչ...

— Մի կոտրեր իմ սիրտս, որ ազգին համար կը բաբախէ։

— Ինչ ըսելիք որ ունիս, եկուր քովս, մարդու պէս նստէ և ըսէ. հոն տեղւանքը երթալու ինչ պէտք կայ։

— Կապաշեմ, թող տուր վերջացնեմ. ահ, չես գիտեր, թէ որչափ կը յուզիմ, երբ ճառ կը կարդամ։

— Վա՛ր իջիր։

Ատենաբանը բեմէն կիջնայ և կերթայ աթոռի վրայ կը նստի։

— Հիմա դրուցէ, միտքդ ինչ է,—կըսէ Աբիսողոմ ազան բարկութեամբ։

— Կապաշեմ, մի՛ բարկանար։

— Ի՞նչ կուզես, դրուցէ, շուտ, հիմա։

— Բարկութեամբ մի՛ վարուիր հետս, ուզդ պագնեմ. սիրտս լեցուած է, հիմա կսկսիմ լալ։

Եւ ատենաբանը կսկսի լալ։

— Լալու ինչ կայ, ազբարա։

— Ծառայ կը փափագի դրականութեամբ ազգին ծառայել, բայց այս ազգը շատ ապերախտութեամբ կը վարուի իր գրագէտներուն հետ։

— Ատոր մէջ ես ինչ յանցանք ունիմ։

— Դուք յանցանք չունիք և թերևս իրաւունք ունիք... Ռոմանաւորներ ունիմ գրած հայրենիքի վրայ. սքանչելի կտորներ, պատուական տողեր, որոնց մէջ երևակայութիւնը, աւիւնը, խանդն, հուրն ու բոցը սաւառնաթև կը պտտին։

— Շատ ապէկ, ատոր համար լալու է։

— Մեր ազգն անոնց յարգն ու պատիւը չը ճանչնար. գոնոնք տղայական բաներ կը կարծէ և թող կուտայ, որ զանոնք գրողը անօթի մնայ։

— Ես ի՞նչ ընեմ.

— Կաղաչեմ, քաղցրութեամբ վարէ հետս։

— Ի՞նչ ըրած ունիմ քեզի.

— Ձեզի պիտի աղաչէի որ...

— Ի՞նչ, շուտ ըսէ...

— Մի՛ պռաբ երեսս ի վար, հոգիդ սիրես, հիմա կսկսիմ լալ...

Նորէն սկսաւ լալ գրագէտը։

— Տէր Աստուած, դուն համբերութիւն տուր ինձի, - ըսաւ Աբիսողոմ ագան մեկուսի։

— Մեղիրքս սա էր, որ կուզէի տպել տալ քիչ մը առաջ կարդացած ճառս...

— Գնա տպել տուր. քու ձեռքէդ բռնող կայ։

— Պիտի խնդրէի ձեր մեծապատուութենէն, որ տպագրութեան ստակը դուք տայիք։

— Ինչու... ի՞նչ պատճառ կայ, որ քու ճառիդ համար ես դրամ տամ։ Լաւած բան է, որ մէկը իրեն շահուն համար գիրք տպէ և ծախքն Աբիսողոմը տայ...

— Կը խնդրեմ, սիրտս արդէն խոցուած է, դուք ալ նոր վէրք մը մի՛ բանաք հոս։

— Ի՞նչու վէրք պիտի բանամ եղեր. գնա՛ բանը դ, եղբայր, փորձանք եղար գլխուս։

— Գիտէք ո՞րքան ծանր է գրագէտի մը սանկ խօսքեր լսելը...

— Ձեմ գիտեր և գիտնալ չեմ ուզեր։

— Բանաստեղծի մը սիրտ շատ փափուկ է, ամենաթեթև խօսքէ մը կը վիրաւորուի։ Այս նիւթին վրայ ռոմանաւոր մը գրած ունիմ, կարդամ, մտիկ ըրէք։

— Ռոմանաւոր մտիկ ընելու ժամանակ չունիմ։

— Կաղաչեմ, ռոմանաւորիս հետ խստութեամբ մի՛ վար-

ւիք. այն ոտանաւորին համար, զոր դուք չէք ուզեր մտիկ ընել, երկու ամիս աշխատած եմ ես. և երբոր անոր նախաբանը տեսնեմ, արժանապատուութիւնս կը վիրաւորուի։ Կաղաչեմ, ոտանաւորիս համար գէշ մի՛ զրուցէք... Կը խնդրեմ թոյլ տուէք ինձ կարդալ զայն անգամ մը...

— Ես ոտանաւոր մտիկ ընելու չեկայ հոս։

— Շատ լաւ. ողբերգութիւն մը գրած եմ, անոր վրայէն անցնինք։

— Չեմ ուզեր, ես անօթի եմ, հիմա կերակուր պիտի ուտեմ։

— Շատ լաւ, ուտելիքի վրայ ատենաբանութիւն մը ընեմ։

— Ժամանակ չունիմ մտիկ ընելու։

— Կաղաչեմ, այդ խօսքը ուրիշ անգամ մի՛ ըսեր. ատկէ աւելի ծանր խօսք չը կայ հեղինակի մը համար՝ որ իր մէկ աշխատասիրութիւնն ուրիշի կարդալու փափագ կը յայտնէ։ Կը խնդրեմ, բարձրապատիւ տէր, քաղցրութեամբ վարուեցէք հեղինակներու հետ։

— Գլխուս վրայ նստեցունեմ քեզի։

— Ոտքդ պաղնեմ, մի՛ ծաղրէք զիս. ինչու ձեր գլխուն վրայ նստեցունէք։

— Ի՞նչ ընեմ հապա. քսակս քեզի՞ տամ՝ հեղինակներու հետ քաղցրութեամբ վարուած ըլլալու համար։

— Ո՛չ, միայն ճառիս տպագրութեան ծախքը։

— Քանի՞ ոսկիով կը լմննայ գործդ։

— Չորս ոսկիով կը լմննայ. բան մը չէ. իմ Մեկենասս պիտի ըլլաս, ես ալ քու անունդ ոտանաւորով մը դրքոյկին ճակատը պիտի դնեմ։

— Ճակատը դնես պիտի։

— Այո։

— Ինչու համար։

— Որպէսզի ամեն մարդ գիտնայ, թէ ձեր ստակովը տպուած է այն գիրքը։

— Շատ լաւ, պատասխանեց Աբիսոգոմ աղան և քսակէն չորս ոսկի հանեց տուաւ։ Հեղինակն հազար յարգանք մատուցանելով՝ դուրս ելաւ։

Աբիսոգոմ աղան եռանէն կանչեց գինքը և հարցուց.

— Չը կրնաս ըլլալ, որ գրքին ճակատը ապատաւորներուս ալ անունները դնես և իմացունես ազգին, որ Աբիսոգոմ աղան

կովեր, ոչխարներ, էշեր և ագռաւակներ ունի իր քաղաքին մէջ։

— Ատ ձեր բաներուն հովուերդութեան ճիւղին կը վերաբերին։

— Չեմ հասկնար։

— Առանց վրայ ոտանաւորներ կը գրի. եթէ կը փափագիք՝ ոտանաւոր մը շինեմ։

— Ի՞նչ ընեմ ոտանաւորը։

— Լրագրի մը մէջ տպել կուտաք։

— Կը տպեն։

— Ինչո՞ւ չը պիտի տպեն. եթէ կէս ոսկի տալու ըլլաք՝ քառասուն անգամ կը տպեն։

— Շատ աղէկ. ատ բաներդ գրէ։—

— Գլխուս վրայ։

— Բայց աղուոր բան մը ըլլայ։

— Շատ լաւ։

— Այնպէս որ տեսնողը հաւնի։

— Հարկաւ։

— Վաղը առաւ. կը բերէք։

— Վաղը առաւ... ինչ կըսէք... մէկ ամիսէն հազիւ կրնամ պատրաստել։

— Մէկ ամիսէն։

— Հազիւ. ոտանաւոր կարդալը դիւրին է, բայց գրելը դժուար։ Գեղեցիկ ոտանաւորի մը համար քիչէն քիչ երկու ամիս պէտք է։

— Ի՞նչ կըսէք...

— Այո՛, բայց ես կաշխատիմ ամիս է մը լմնցունել։

— Ատ ինչ դժուար բան է եղեր։

— Ի՞նչ կարծեցիք հապա, երկու ամիս պիտի սպասեմ, որ Մուսաս գայ և ներշնչէ ինձի, որպէսզի գրեմ. առանց Մուսայի ոտանաւոր չը գրուիր։

— Եթէ այդ Մուսան գալու չըլլայ...

— Անպատճառ կուգայ։

— Չը կրնար ըլլալ, որ նամակ մը գրես և ապաշխես իրեն, որ շուտ մը գայ և դուն ալ երկու ամիս չ՝սպասես։

— Անիկա ինքնիրեն կուգայ, նամակի պէտք չունի, մենծապատիւ տէր։

— Ո՞ւր կը նստի.., շատ հեռուն է։

— Այո՛, շատ հեռու է, բայց կուգայ։

— Ցամաքէն, թէ ծովէն։

— Չէ, մեծապատիւ տէր, չէ։

— Ո՞վ է ուրեմն սա գետնին տակը անցնելու մարդը... ուսկից պիտի գայ... ըսէ, որ ճամբայ մը մտմտանք ու բերել տանք... Եթէ մէկ-երկու ոսկի ուզէ՝ այս շարաթ կուգայ։

— Այո՛, երկու ոսկի տալուդ պէս՝ գործը կը դիւրանայ և Մուսան այս շաբաթ վագելով կուգայ,— պատասխանեց անմուսա բանաստեղծը, ոսկի բառը լսելուն պէս։

— Գրէ՛ ուրեմն իրեն, իմ կողմէս ալ յատուկ բարևներ ըրէ և ըսէ, որ Աբիսողոմ ագան քեզի տեսնել կուզէ։

— Գլխուս վրայ։ Մնաք բարեաւ, տէր. շնորհակալ եմ ձեզմէ. ծառայ եմ ձեր մեծապատուութեան և կաղաչեմ, որ ընդունիք...

— Ո՛չ, ըսաւ Աբիսողոմ ագա բարկութեամբ.— մի երկար ըրիր. ահա ինչ որ ըսիր՝ ընդունեցի, և դեռ ի՞նչ կուզես, որ ընդունիմ...

— Խորին յարգանացս հաւատիքը, տէր... որով ճնամ ձեր մեծապատուութեան ամենախոնարհ ծառայ։

— Շատ ազէկ։

— Մեկնեցաւ բանաստեղծն, երկու ոսկով բերել տալ խոստանալով Մուսային, զոր ոմանք աւելի աժան գնով բերել կուտան։ Մուսայի մ՚օրականն հիւանի մ՚օրականէն աւելի չէ այժմ։

ԻՄ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՍ

Ո՞վ օր ազէտաբեր... ո՞վ գիշեր անձրևաբեր... ո՞վ սոսկալի տաք ցերեկ... ո՞վ ընթերցողներ... պատիւ ունիմ ամենուդ ծանուցանելու, որ ես բանաստեղծ մ՚եմ եղեր։

Առջի գիշեր երազիս մէջ մուսաներ տեսայ. ազուորիկ ազուորիկ աղջիկներ էին։ Մուսաներն են եղեր... Ասոնք ըսին թէ ես բանաստեղծ մ՚եմ եղեր։ Եթէ Ռուսինեան էֆէնտին ըսած ըլլար՝ չէի հաւատար։

Երազիս մէջ Նարպէյի բանաստեղծական սուերն ալ տեսայ. Հայր Արսէնի Հայկն ալ տեսայ, որ Նարպէյը խղդել կաշխատէր։ Այս ամենը տեսայ, բանաստեղծ եղայ և սկսայ անանկ

նկարագրութիւններ ընել, որ բոլոր մուսաները մատերնին խածին։

Ապշեցայ մեծի քանքարաթաքոյցութեանս վրայ. ուստա-ւոր մը գրեցի «Թէ ես թագաւոր ըլլայ»-ի հետևողութեամբ և մուսաներուն արբագրել ուի։

Ո՛վ բանաստեղծներ, լսեցէք բանաստեղծութիւնս և անոր հետևեցէք։

Մուսայք, օգնեցէք յիշողութեան.—

Թէ պատրիարք ըլլայի,
Կաթողիկոսն Խաչատուր
Շուտ մը թեւէն բռնէի,
Էջմիածին դրկէի։

Թէ ես խնդիր ըլլայի,
Վարչութիւնը գիս կառնէր.
Կը դարձունէր, դարձունէր,
Մինչև հոգիս գուրս տայի։

Երեսփոխան Թ՚ըլլայի,
Ժողովին մէջ քուն քաշէի,
Ձեռքերս միայն վերուցած՝
Առատ քէֆ կուտայի։

Իսկ Քասագեան Թ՚ըլլայի,
Երեսփոխան հայհոյող,
Կը բռնէի օձիքէն,
Դուրս կընէի ժողովէն։

Թ՚ապակեդրոնացակա-
Նութիւնն երբէք ըլլայի,
Խաղաղութիւն ազգին մէջ
Չէի թողներ, տանէի։

Թ՚արծաթ, ոսկի ըլլայի,
Ազգ. մտուկին կուտայի,
Վարժապետաց մի գպրոց
Շուտ մը կանգնել կուտայի։

Եթէ հարուստ ըլլայի,
Պոլսոյ բոլոր փողոցներն
Ագուռ շինել կուտայի,
Ագռեռն մաքրել կուտայի։

Օրիորդ մը Թ'լլայի,
Եղբօրս փալթօն ու լաթեր
Իրարու հետ կապկապած՝
Մեծ խըշլըխ կը շինէի։

Թէ թաղական ըլլայի,
Թաղին անտուկ պարպէի,
Կրկնատոմար շինելով,
Հաշիւները շտկէի։

Թէ Իզմիրցի ըլլայի,
Եղեսեանին ձեռք տայի,
Եւ քաշելով քաշելով,
Հարկաւ Իզմիր տանէի։

Համամճեանի Թէ Սարգիս
Ես ըլլայի Ապուչեխ,
Փիւզին հարիւր հազարնոց
Սերկին ազգին յանձնէի։

. . . .

Կանգ առ, ով աւիւն, կանգ առ... հանգստացիր քիչ մը... Քանի որ ասոնց և ոչ մին պիտի չը կրնամ ըլլալ, այդ բարեկարգութիւններն ալ չը պիտի ըլլան։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՏԷՐՈՅԵՆՑ

Յովհաննէս Տէրոյենց կամ Յովհաննէս պատուելի, կամ Պրուսացի Յովհաննէս Տէր-Կարապետեան, կամ Զամուրճեան Յովհաննէս, օգնական Պետրոս առաքելին, աստուածաբան, մատենագիր, փաստաբան գլեերու, լեզուագէտ, մաթեմատիկոս, խմբագիր, դասատու, կրօնագէտ, ծնած է 18-րդ դարուն վերջերը, Պրուսայի գիւղերէն մէկուն մէջ։ Իւր ծննդեան հետևեալ գիշերը ծնան գլեերն, որոնց գոյութիւնն այն թուականէն ի վեր հաստատուած ճշմարտութիւն մ' է։

Թուրանական հաշուով պարտ էր իրեն կիրակի օր մը գալ աշխարհ, բայց Ջերմեռանդ ու բարեպաշտ ըլլալով, ուզեց սուրբ պահել հանգստեան օրն և այս պատճառու քսանըչորս ժամ երկարաձգելով իւր ծնունդն, հետևեալ օրը բարեհաճեցաւ

ի լոյս գալ։ Ականատես և հաւատարիմ պատմագիրներ կա-
ւանդեն, թէ երբ մայրն եկեղեցի կերթար իւր սովորական ա-
ղօթքն ընելու՝ ինքն ալ մօրն արգանդին մէջ երկրպագու կըլ-
լար Պետրոս առաքեալին պատկերին։ Ոմանք այս աւանդութիւ-
նը կը հաստատեն, պատմելով թէ՝ ամեն անգամ որ դիպուածով
այս առաքեալին խօսքը կը բացուէր, մօրը ցաւը կը բռնէր և
չէր անցներ, մինչև որ եկեղեցին չերթար և այն պատկերէն
կտոր մը... չուտէր։ Դրացի կիներու այն զուշակութիւններն՝
որով կը մարգարէանային յայտնելով իւր մօրը թէ՝ տղայ կամ
ձկնորս պիտի ըլլայ, կամ ուրացող, լիովին կը վաւերացուցեն
պատմագիրներուն խօսքերուն ստուգութիւնը։ Տէրոյենցին բա-
րեպաշտութիւնը այսօր առած դարձած է, վկայութիւններու
կարօտութիւն չունի։ Ծնած օրէն սկսաւ պահեցողութեան.
չորեքշաբթի և ուրբաթ օրերը երբ մայրը ծիծն անոր բերանը
կը դնէր, Տէրոյենց կը մերժէր՝ նեստելով իւր մօրը վրայ այն-
պիսի նայուածք մը՝ որ կը թարգմանուէր. *ինչո՞ւ կը ստիպես զիս
պահքս աւրել, մայրիկ.*— այս թարգմանութեան ճշտութեանը
կը վկայենք, որովհետև Տէրոյենցինը չէ։— Ծոմապահութեամբ
ալ ոչ նուազ նշանաւոր է Պաուելին. եթէ այսօր դաստառու մը
կամ խմբագիր մը դրամ չունենայ հաց առնելու և մինչև իրի-
կուն անօթի մնալ ստիպի, *Տէրոյենցի պէս բարեպաշտ է կը-
սեն։*

Զեմուրճեան Պրուսա անցուց իւր մանկութեան և պատա-
նեկութեան օրերը։ Ամեն առաւօտ կանուխ եկեղեցի կերթար։
Իւր աղօթքին մէջ թէպէտև երկնից արքայութիւն կը խնդրէր,
սակայն հարուստ ամիրաներ ալ խնդրելու չէր մոռնար։ Նե-
դութեան ժամանակները կըստիպուէր երբեմն մարդուս սխա-
լական ըլլալը հաստատել ըսելով.— «*Արքայութիւն խնդրենք,
բայց հացագործը դրամ կուզէ, ամիրաներ տուր ինծի, Աստուած,
եւ ամեն բան ունեցած կըլլամ*»։ Աղօթքն աւարտելէն ետքը,
շապիկ կը հագնէր ու ձայնաւորութիւն կընէր։ Զայնն այնչափ
բարձր էր, որչափ իւր ոճը, այնչափ անուշ՝ որչափ իւր յօդ-
ուածները և այնչափ բարակ՝ որչափ «Երեսակին» թուղթը։

1832-ին Պոլիս եկաւ Տէր-Կարապետեան իւր ձեռքն առ-
նելով պայուսակ մը, որ կը պարունակէր չորս շապիկ, վեց
վարտիք, քանի մը հայերէն գրքեր, քիչ մը դրպարտութիւն,
ծրար մը կոխ, չորս թաշկինակ, կտոր մը պանիր և կտոր մ'ալ
վեհանձնութիւն։ Առնցմով կրնամ, կըսէր, քիչ մը ժամանակ
ապրիլ։ Արդարև երեք չորս ամսի չափ Պոլսոյ փողոցները

քննելէն ետքը, ներկայացաւ Յովհաննէս զալֆային, որ իւր գաւակներուն և աղբատներու համար մասնաւոր վարժարան մը բացած էր Իճատիէ, զոր քանի մը տարի առաջ Մխսաքեան Խաչատուր, երևելի դրագէտ, Հնարաւանի փոխեց՝ գրականութեան փոքրիկ ծառայութիւն մը մատուցանելու նպատակով։ Այս վարժարանին դասատու—տնօրէնութիւնը ստանձնեց Զամուրճեան։ Նախ աշակերտներուն սկսաւ սովորեցնել թէ ինչ գիրք առնելու է մէկն՝ աղօթելու ժամանակ, թէ ինչ գգուշութեամբ ծռելու և գետինը համբուրելու է մէկը՝ գայթակղութեան տեղիք չը տալու համար և այս ուսումն կամ գիտութիւնը լաւ տպաւորելու համար աշակերտներուն մէջ, առաւօտէ մինչև երեկոյ այնչափ երկրպագութիւն ընել կուտար, որ խեղճերուն փանթալօններուն ծունկերը երկու օրը անգամ մը կը բացուէին։

Աշակերտներուն ծնողքը տեսնելով իրենց վիճակը, կաշի կտոր մը կարեցին փանթալոններուն ծունկերուն վրայ։ Այս ալ օգուտ չըրաւ, և աշակերտներն սկսան իրենց փանթալօնը վեր առնելով աղօթք ընել։ Այս ալ չը յաջողեցաւ և վերջապէս որոշեցաւ, որ աշակերտներն իրենց փանթալօնը հանեն և այնպէս աղօթեն։ Այս եղանակով քանի մը տարուան մէջ աղօթք ընելու գիտութիւնն անոնց սորուեցունելէն ետքը, սկսաւ դասախօսել այն բաներու վրայ, զորս չէր գիտեր։— Այո՛, չէր գիտեր, բայց սորուելու մեծ փափագ ունէր։ Ինքը ժամանակին յարգը լաւ գիտէր. ինքնիրմէ կաշխատէր գիշեր-ցերեկ և անշուշտ այս անդուլ աշխատութեան շնորհիւն է, որ այսօր բաւական լեզուներ գիտէ, կըսեն։ Եթէ այսօր լեզուները խառնելու պէտքն զգացուի, կարծենք իրմէ աւելի արժանաւոր և յաջողակ մէկը չը պիտի կրնան գտնել։— Եւ երբ այդ աշակերտները եկեղեցի կերթային և դասուն ետևը շարուելով երկրպագութիւն ընէին՝ ժողովուրդը կըսէր.—Ապրին, ապրին, ինչ ուսումնական տղաներ են. և Զամուրճեան ինքզինքը փառաւորուած կը կարծէր՝ ազգին այսպիսի ծունկ չոքող աշակերտներ հասցնելուն վրայ։

1838-ին ապաշնեցաւ Ճեմարան մտնել իրրև փորձառու և իրրև ուսումնապետ։ Հոն մտնելուն հետևեալ օրը ծրագիր մը պատրաստեց և սկսաւ գործադրել։ Այս ծրագրով աշակերտ մը ինը տարուան մէջ պիտի սորուէր հայերէն լեզուն, այսպէս.—

Երեք տարի քերականութիւն.

Երեք տարի ճարտասանութիւն.

Երեք տարի տրամաբանութիւն։

Քերականութիւնն ալ երեք տարիի բաժանեց.—

Մասն առաջին՝ բառագիտութիւն.

Մասն երկրորդ՝ զուգադրութիւն.

Մասն երրորդ՝ շարադրութիւն։

Այս քերականութեան վերջին երկու մասերը արժանի չեղան լոյս տեսնելու, բայց առաջինը մեծ, խիստ մեծ ընդունելութիւն գտաւ... Նպարավաճառներէն, որոնք յիշեալ քերականութեամբ սորուեցան թէ ինչպէս պանիր կը փաթաթի թուղթերու մէջ։ Յետքին ութը մասերուն մէջ զգալի փոփոխութիւններ ըրաւ. Անունին պաշտօնը Մակբայի տուաւ, Մակբայինը՝ Դերանունին, Դերանունին — պաշտօնը Շաղկապին և այսպէս վարելով բարեկարգեց Հայաստանը... Քերականութիւնն ըսել պիտի ուզէի։ Վարժարանին յառաջադէմ աշակերտները սկսած էին այն քերականութեամբ սխալ խօսելու և սխալ գրելու վարժիլ, երբ անոնցմէ մին անոր սխալները Պաուելիին ցոյց տուաւ։ Այն օրէն ետքը յիշեալ քերականութիւնն իրրև վարժութիւն տուեցաւ աշակերտներուն, որ միջի սխալներն ուղղելով՝ կանոններուն համեմատ գրեն։ Պաուելին հոն ալ չը կրցաւ երկար ատեն մնալ, վանդի ճեմարանը գոցուեցաւ։

1846-ին լրագրական ասպարէզին դուռը բաց գտնելով՝ ներս մտաւ։ Թուղթ մը գտաւ, առաւ և վրան Հայաստան գրեց—Քիւրդիստան ըսէ, Քիւրդիստան, կը պօռայ Սբը Լէյբրա— և սկսաւ հրատարակել։ Հայաստանով սկսաւ Հռովմի գահը գովաբանել, որով քիչ ժամանակի մէջ այնպիսի ջարդ մը տուաւ ընթերցողներուն, որ իրմէ զատ «Հայաստան» կարդացող չը մնաց։

1848-ին տեսնելու բարեբախտութիւն ունեցաւ Ֆէրիէրի կարդինալին հետ, որ Հռովմէն հոս գրկուած էր մոլորեալ և հերետիկոս քրիստոնեաները համոզել, որ ս. Պապին հողաթափը համբուրեն։ Սկսաւ պատմել Տէրոյենց թէ՝ ինչպէս եղեր է որ Նաթուրա բառը Նաշնրէն եկած է, թէ՝ փրօշէտէրէ բառը փրօ և շէտէրէ բառերէ ծնած է—փրօ էրիկն, իսկ շէտէրէ կնիկն անշուշտ—թէ՝ փուրկաթօրում՝ փուրկա բառէն կելնէ—փիւրկաթիֆն ալ մոռանալու չէ—թէ հայերը Քրիստոսի վրայ երկու Նաթուրա չեն ճանչնար, թէ՝ Հոգւոյն Սրբոյ համար միայն ի հօրէ փրօշէտիդ կըսեն. թէ՝ ի յորդւոյ փրօշէտիդ ըսելը չեն

ընդուներ հայերը, թէ՝ Հայաստանեայց եկեղեցւոյ գաւանանքը Հռովմայեցւոց պէս է և թէ՝ հայերը Հռովմայ նախագահութիւնը կընդունեն և կը փափագին, որ սէր և միութիւն հաստատեն Հռովմայ աթոռին հետ։ Զամուրճեան՝ Հատունի պէս ոչ մէկ հայ չէր ուզեր արքայութիւն տանել, այլ կը փափաքէր, որ բոլոր հայերն մէկէն տանի արքայութիւն՝ Հռովմի ճանրոջ Սակայն չը յաջողեցաւ, և եթէ այսօր հայերը դժոխք երթան՝ Գաւելին յանդիմանելու իրաւունք չունին։

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Գրիգոր Արծրունի, պատմագէտ, թատրոնագէտ, ինքնուկ-ոնի խմբագիր դէղուկտոր Մշակի, ծնած է Մոսկուա 1845 թուականին։

Հայրն, ապա Երեմեա Արծրունի, իմանալուն պէս որ գաւակ մ ունեցած է, անմիջապէս տուն վազեց և Գրիգորին դէմքը գիտելէն ետքը, դուրս եկաւ իր ծանօթներուն ըսելու.

— Եթէ տղաս տեսնէք, ինձի ողորմիս պիտի հանէք։

Մանկական հասակէն փորձով ցոյց տուաւ Արծրունին, որ խմբագրական ասպարէզին մէջ մեծ անուն պիտի հանէր օր մը, վասն զի նոյն հասակին մէջ իսկ մեծ կոչում ունէր... չը հանգչելու։ Օրօրոցին մէջ ժողովրդականութիւն կը քարոզէր. ամէն անգամ որ ազնուական դասէն հիւր մը կը գտնէր սենեակին մէջ, շտեղը փոխելու կրտսիկը մայրն այն նշանները՝ զոր երեխաներ կուտան նոյն իսկ բարձրագոյն անձերուն ուղղ։

Պատանեկութեան օրերը Մոսկուա անցուցեալէն ետքը, Գերմանիա գնաց, ուր քանի մը տարիներ աշխատելով՝ հակայարգ յառաջադիմութիւններ բրաւ իր դասերուն մէջ. ծայրագունութեան տարեան ատ պատմութեան մէջ և եկեղեցականութեան տարեանին բարձրագոյն յանմանութեան մէջ։

1868-ին Վենետիկ գնաց, ուր մէկ ամիս մէջ հայերէն տպելով հայր Գլեոդէն՝ հայկարանութեան դաս տալ ուզեց Հայր Արսէն Բագրատունոյ։

Գրական ասպարէզը մտնելու համար գլխուն մէջ բաւական պաշար ամբարելէն ետքը, Տփխիս գարձաւ Երբ տեսաւ

հոն որ հայերու մէջ մեռած է ամեն կեանք և ոգի, սաստիկ բարկացաւ, և եթէ գինուորական եղած ըլլար՝ տարակոյս չը կայ, որ ոմբակոծել կուտար այդ քաղաքը։ Քանի մը ամիսներ խորհելէն վերջը թէ ինչ եղանակաւ գրնայ կենդանութիւն տալ ազգայիններուն՝ որոշեց լրագիր մը հրատարակել այն լեզուով, զոր չէր գիտեր։

Երբ գրաքննիչին ներկայացաւ լրագրի մը արտօնութիւն խնդրելու համար՝ գրաքննիչն հարցուց իրեն.

— Լրագիր հրատարակելու չափ գիտէք հայերէն լեզուն։

— Ես չեմ գիտեր, պատասխանեց Մշակին տէրը, բայց ընթերցողներս շատ աղէկ գիտեն... բարեկամներս ալ գիտեն։

Արտօնութիւնն առնելուն պէս՝ տուն վազեց Արծրունին և հարիւր քառասուն նամակ գրեց՝ հրաւիրելով իւր ծանօթներն, որ հաճին Մշակի խմբագրութեան մասին նպաստել իրեն։ Բարեկամներն ընդունեցին այս հրաւէրն և 1872-թ. ի լոյս եկաւ Մշակն, որ բաժանորդէն աւելի խմբագիր ունէր։ Խմբագրութեան կանոնագրութիւնը կը պահանջէր, որ ամեն յօդուած ամբողջ խմբագրութեան համաձայնութեամբ հրատարակուէր։ Այս կանոնագրութիւնը շատ նպաստաւոր չէր Գրիգորին, որուն ամեն յօդուածները մէկի դէմ հարիւր երեսուն և իններ քուէով կը մերժուէին, և եթէ երբէք լոյս տեսնէին՝ մեծ փոփոխութիւն կը կրէին։ Այսպէս Մշակը, որուն ամսագիրն ինքը կը վճարէր, փախանակ իրեն ծառայելու, ուրիշներու կը հնազանդէր։ Այս կէտն իրեն ծանր եկաւ և օր մը ինքն իրեն ըսաւ.

— Պէտք է որ իմ Մշակս միայն ինծի ծառայէ և ոչ ուրիշներու։

Այս վճռոյն վրայ բարեկամները կամաց-կամաց քաշուեցան խմբագրութենէ, և Մշակն ալ սկսաւ իւր տիրոջը միայն ծառայել։ Մշակն այս պարագային մէջ իւր պարտքը կը կատարէր, որովհետև պ. Ամբակումին մշակն ալ չերթար պ. Կիրակոսին սեղանը դնելու կամ կերակուրն եփելու։

Արծրունին իւր բարեկամներէն ազատուելուն պէս, յարձակողական դիրք մը առաւ։ Սկսաւ հարուածել բոլոր այն անձերն, որոնք պատիւ չունէին Մշակի բաժանորդ ըլլալու, ձագկել երիտասարդութեան անտարբերութիւնը, ազգային խեղճ մասունքն, որ աւելի խեղճ կացութեան մէջ ինկած էր Մշակին երեսամբը. կղերն, որ միայն որովայնին կը ծառայէ և ազգա-

սիրուքիւնը միշտ իւր կոկորդին մէջ կը փնտռէ, կղերն, որ շատ հեռաւոր դարերէ ի վեր սկսած է արդելք դնել ամեն յառաջադիմութեան՝ հալածելով իմաստասէր մը, որ յանդգնած էր բանալու թէ արեգակը Պետրոսանէն մեծ է։ Արծրունւոյ այս յարձակումները բոլորովին ապարդիւն չը մնացին, ծնունդ տուին կուսակցութեան մը, որ «մեղուական խումբ» անուանեցաւ։ Վիճաբանութիւնն սկսաւ Մշակի և Մեղուի մէջ։

Ցաւոնի է, որ մեր մէջ ո և է խնդիր մը լուսաբանելու համար երբ վիճաբանութիւն մը բացի՝ բանակուոյ մէջ իրրև փաստ մեծ տեղ կը բռնեն վիճաբանողներու մօրուքը, հասակը, հագուստը, ծնած քաղաքն և մինչև անգամ այդ քաղաքին բերքը։ Եթէ կեսարացիի մը հետ վիճաբանութեան բռնուիս՝ ինչ հարկ երկար բարակ տրամաբանել. պարզապէս գրուցէ իրեն. «բարեկամ, որովհետև կեսարիայէն պատուական ապուխտ կելնէ և որովհետև ժամանակաւ կեսարացի մը էշ մը ներկած է՝ ըսել է թէ իրաւունքը իմ քովս է»։ Ադրիանապօլսեցիի մը հետ է վէճդ, ասկէ աւելի ինչ դիւրին բան կայ. յաղթանակը միշտ քուկդ է։ Ինչու։ Հարցունելդ աւելորդ է, վասն զի Ադրիանուպոլսէն քաշէը (պանիր) կելնէ, և քաշէրէն աւելի ինչ գօրաւոր փաստ կարող ես մէջ բերել գինքը համոզելու համար։ Վառնացի է ընդդիմաբանդ՝ հաւկիթի մէջ պնա փնտռել փաստերդ անմիտ։ Իզմիրցի է, չամիչով և թուզով կրնաս բերանը գոցել։ Եթէ ասոնք բաւական չեն, ազատ ես քթէն կտոր մը փաստ փրցունել. քիթը պզտիկ է—հասակին վրայ ցատկէ. եթէ հասակը բարձր է՝ հագուստէն բռնէ. եթէ հագուստ չունի՝ մերկութիւնը ծաղրէ և վստահ եղիր որ պիտի փառաւորուիս անմիտներու առջև։ Քանի որ այս է մեր ազգային տրամաբանութիւնը՝ բնական է որ Մեղու և Մշակ լրագիրներն ալ գոնէ ազգասիրութեան համար ընդունին զայն, ինչպէս որ ընդունեցին։ Առնց մէջ այնչափ տաքցաւ վիճաբանութիւնն, որ եկաւ անձնականութեան յանգեցաւ։ Արծրունւոյ կարմը Տէքարթի մէթոդէն աւելի գօրաւոր փաստ մ՚էր՝ Մեղուի խմբագրին գերշին ծայրը. Սիմէոնեանի ամուրիութիւնը աւելի արժէք ունէր, քան Քանթի մէկ վկայութիւնը։ Անհրաժեշտ հարկ էր, որ այս երկու պարոնները կամ իրենց լեզուն փոխէին և կամ իրենց կարմը, որպէս զի վիճաբանութիւնն օրինաւոր ըլլար և շարժանային ուրա լրագրի մը յանդիմանութիւններուն։ Արծրունին երեք չորս տարի շարունակ Մեղուի հետ հոգեւորական վիճաբանութիւն ընելէն ետքը ուխտ ըրաւ, որ Մեղուի անունը

բերան չառնէ և սկսաւ հրատարակել այնպիսի յօդուածներ, որոնք բոլորովին հակառակ էին առաջին գրուածներուն։ Եթէ երբեմն յօդուածը պակէր՝ Մշակը լեցնելու համար, իւր բաժանորդներուն թիւը կը ծանուցանէր և պակասը կը լեցնէր։ 1877-ին Մշակ սկսաւ շաբաթ երկու անգամ հրատարակուիլ, և Արծրունի ամեն օր կը գոռէր գերմանական ուսումը և դրօշակը։

1878-ին Արծրունւոյ թերթը ամեն օր կը հրատարակուէր այլանդակ գաղափարներով։ Կը յանդիմանէր պատրիարքն թէ ինչու Պատրիարքարանն ու երեսփոխանական ժողովն Կարին չը փոխադրեր, որպէս զի ուժը հոն միանայ։ Կը կարծէր անշուշտ, թէ Կարին նամակ գրկելու չափ գիւրին բան է։ Պատրիարքարանն ու Երեսփոխանական ժողովն Հայաստան գրկելն և թէ՝ Պատրիարքն այս մասին անտարբեր է։ Կ. Պոլսոյ ազգայիններն, որ Մշակի այս տեսակ կարծիքները կը կարդային, իրարու ականջն ի վայր կը փսփսային.

— Մշակ վաղը պիտի առաջարկէ, որ կամ Պոլիսը Կարին փոխադրենք կամ Կարինը Պոլիս։

Եւ Արծրունին Պոլսեցիներուն այս անտարբերութեանը վրայ սրդոզելով՝ կը մկրտէր զանոնք թերթեն, կեղծ ազգասէր, շուներու եւ զողերու խառնուրդ և ուրիշ այնպիսի ածականներով, դուս լրագրի մէջ հրատարակելու համար՝ մարդս անպատճառ գերմանական դրօշակ ունենալու է։

Վերջերս երբ պատրիարքն հայերու Հայաստանի մէջ ունեցած մեծամասնութիւնը կը հաստատէր, Մշակ իւր սովորական լեզուով կը խրատէր պատրիարքն, որ էշերու և կովերու վիճակագրութիւնն ալ ընէ, եթէ մեծամասնութեան վրայ էր խնդիրը։ Մարդերու, — կըսէր, — մտաւորական և բարոյական հանգամանքը նկատողութեան կառնուի, և ոչ թէ անոնց թիւը։ Բայց երբ Եւրոպան մեզմէ թեւաբանութիւն կը պահանջէ, մենք չենք կարող իրեն փիլիսոփայութիւն ներկայացնել։ Ամեն մարդ կը փափագի, որ Մշակ-ի կարծիքն յաղթանակէ, բայց ինչ օգուտ, քաղաքագիտութիւնը դեռ ոգէտ ըլլալով՝ չէ կարող ըմբռնել պ. Արծրունւոյ բարձր գաղափարները։

Երբեմն այլանդակ կարծիքներ կը յայտնէ այնպիսի այլանդակ լեզուով, որ ընթերցողն կը շարի, կը մնայ թէ երկու այլանդակութիւններուն որուն վրայ խնդայ և որուն վրայ լայ։ Ութը տարիներէ հետէ կուզէ իւր աշխարհաբարը, զոր Ֆրան-

տոցի մը ասելի չուտ կը հասկնայ այսօր, քան հայ մը։ Եւ որպէս զի պրպտուքիւն չը հատարուի մեր բուաժը՝ հոս հեռագիր մը կը թարգմանենք իւր լեզուով.

«Բէյնալ պատերազմական մինիստրին պախարակեց որ խիստ մեզուրաներ չը գործադրեց մի սէնատորի դէմ, որ լէրիդիանական ցուցմունքներն արաւ։ Կարինեանը կամենում է գէմիսիոն տալ։ Բիւդժէի ոսմանները ընդունուած են սենատից. եպիսկոպոսաններին էրէդիտը մերժեց և ժողովի սէսիան փակուած է յայտնուելու։ Բիւլղարէնը ծանուցանում է թէ կայսրունին գլուխը ունիր։

Եւ երբ եւրոպական լեզուի մը ծանօթ չեղող մէկը կարդայ այս տողերը ու բան մը չը հասկնայ, պ. Արծրունին՝ կը սրտմտի և հեռանալ օրը Մշակ-ին մէջ շանթ և հուր կը թափէ այն ամէն ընթերցողներուն գլխուն, որոնք իւր լեզուն չեն հասկնար։ Ինդիր մը իմաստասիրելու առեն՝ որոշ ուղղութիւն մը չունի. ամառը պատճառէն արդիւնք կերթայ, իսկ ձմեռը արդիւնքէն պատճառ. ինչպէս որ կաթողիկոսն ալ ամառը էջմիածնէն Բիւրական կերթայ և ձմեռը նոր կը դառնայ։

Այս ընթացքով յաջողած է վերջապէս իրականացնել իւր փափաքն, որ էր Մշակը կարևոր թերթ մը ընել և զինքն ալ կարևորութիւն ունեցող խմբագիր մը։ Տփխիսու մէջ կառավարութիւնը հայ լրագրապետներու խորհուրդ չէր հարցուներ, իսկ հիմա պ. Արծրունին կը հրաւիրի այն ժողովներուն, ուր քաղաքի մասին կարևոր որոշում մը պիտի տրուի։ Ռուս թերթերն երբեմն հատուածներ կը թարգմանեն Մշակէն։ Եւրոպայի թերթակիցներն «Հայաստանեայց եկեղեցւոյ հայ Յակինթոս» կամ «հայ մամլոյ էմիլ տը Ժիրարտէն» կը կոչեն զինքն և ինք բնաւ բողոք չը բառնար այս զրպարտութիւններուն դէմ։

Տփխիսու մէջ առաջին անգամ ինքը հասատաց լսարանն, որու մէջ ինք ըրաւ առաջին ատենախօսութիւնը։ Թէպէտև ատենախօսութեան նիւթն «Հայաստանի տնտեսական դրութիւնն» էր, բայց ատենախօսին ձևերէն և շարժուձևերէն սա կը հասկցուէր, թէ մարդս ատենաբանելու ժամուն լայն թևոցներ գնելու չէ, որպէս զի ատենախօսն ժամանակ ունենայ իւր նիւթին զբաղելու և ոչ թէ թևոցներովը։

Ունկնդիրները կը սորուէին նաև թէ հազը ատենաբանութեան մէջ ստորակէտի տեղ կը ծառայէ և թէ ներելի է այնչափ հազալ, որչափ որ կը նեղէ ունկնդիրներուն երկայնա-

մուրթիւնը կամ ատենաբանին անդիմութիւնը։ Իսկ երբ երկրորդ անգամ ժողովրդեան առջև երևելու պատիւ ունեցաւ, իւր յուզումները դադար և ճարտասանի մը պէս ատենախօսեց։

Ժողովուրդը կրթելու համար խմբագրութեամբ և ատենախօսութեամբ չը շատացաւ. իւր ծախքովը թատրոն մ'ալ հիմնեց, որպէս զի հոն ալ բիշ մը ծառայէ ազգին։ Սակայն չը յաջողեցաւ այս ասպարէզին մէջ. վասն զի գնոյ մասին չը կրնալով համաձայնիլ դերասաններուն հետ՝ հարկադրեց զանոնք որ ուրիշ տեսարանի մը վրայ ներկայացնեն իրենց խաղերը, մուկերու թողով խաղալ իրենց դերն ալ. Արծրունւոյ թատրոնին մէջ։ Մշակի խմբագիրն այս անյաջողութեան վրայ սկսաւ ձաղկել այս դերասաններն և ատոնց ներկայացումներն։

Քրիստոնեաներու անկախութեանը համար օգնելն իրեն նուիրական պարտք մը համարելով՝ վիրաւորեալները քաջալերելու համար բացաւ անոնց իւր հիւրանոցները, որպէս զի անոնք կուգ վիրաւորուին և երթան հիւրանոցներու մէջ դարմանուին։ Այս ծառայութեանը փոխարէն՝ կայսրուհիէն շնորհակալութեան գիր ստացաւ։

Պ. Արծրունին, ինչպէս ըսինք, ժողովրդական մարդ է և այնչափ ատեն կը սիրէ իր ծանօթները, որչափ ատեն որ ատոնք միջակ աստիճանի մէջ ըլլան. իսկ բարև տալը դադարեցուցած է այն անձերուն, որոնք ստորագրութիւն չեն տուած իրեն թէ իրմէ աւելի հարուստ չը պիտի ըլլան։ Իւր ծանօթներուն հետ—ծանօթ կըսենք, վասնզի մեզ տրուած տեղեկութիւններուն նայելով՝ բարեկամ չունի—հեզ և բարեբարոյ է. զանոնք շողոքորթելու կը գիջանի երբեմն, բայց ազնւապետականներն և հարուստները միշտ կարհամարհէ. և այս է պատճառն, որ Տփխիսու ազնւապետականներու հետ չէ կրցած երկար յարաբերութիւն ունենալ։

Առատաձեռն է, երբ մէկը շողոքորթէ զինքը. վարպետորդի մը երկու շացուցիչ ածականներով կարող է անոր քսակն դրպանէն առնել։

Իբրև հայ՝ ազգասէր է և իբրև խմբագիր՝ անխոնջ գրող և կուռող Արարատեան ընկերութեան մատուցած ծառայութիւններն զինքը շատ սիրելի ըրած են ազգայիններուն, որոնք միշտ կըսեն թէ, «եթէ Տփխիսու մէջ Արծրունւոյ պէս ուրիշ աշխատողներ ալ գտնուէին, Արարատեան ընկերութիւնն այսօր աւելի մեծ դրամագլուխի տէր կըլլար»։

Կրօնափանները ոչ աստիճան հակառակ է, որ երբ փոքրոյկ մը մէջ ասոնցմէ մին տեսնէ, ետ կը դառնայ և ուրիշ փոքրոյկ մը ձամբան կը շարունակէ։ Իւր հօրը թաղման ժամանակ, երբ կղերական դասը կուգէ որ ըստ սովորութեան մեծ հանդիսաւոր կատարէ յուղարկաւորութիւնը, պ. Արծրունին կը դառնայ քահանաներուն և կըսէ.

— Դուք գէշ մարդեր էք, ես ձեզի պէտք չունիմ։

Վերջին աստիճան ուղիղ մարդ է, և ժողովուրդը վստահութեամբ հազար բուբլի կը յանձնէ իրեն, որ ընկերութեան մը ղրկէ։ Գօլսոյ մէջ չէ տեսնուած մէկը, որ բուբլի մը վստահի Գօլսոյ բոլոր խմբագիրներուն։

Վիճաբանութեան մէջ պնդագլուխ է։ Այնպէս համոզուած է թէ այն մարդն, որ վկայական մ՚ունի ծոցը, ազատութիւն ունի յանուն գերմանական դատարակութեան ծիծաղաշարժ կարծիքներ յայտնել և ստիպել ուրիշներն՝ ընդունելու իւր խօսքերը, իսկ երբ առանձին կը մնայ՝ խելքի, բանականութեան կը վերադառնայ և կը համոզուի թէ այսօր մարդս աւելի իւր գործերէն կը դատուի, քան թէ իւր ծոցի վկայականէն...

Ընկերութեան մը մէջ երբ պ. Արծրունին չը վիճաբանիր, զարճալի խօսքեր կընէ, փոքր վէպեր կը պատմէ և լսողները խնդալէն կը մաթեցունէ. սակայն իրեն հետ տեսնուողը միշտ զգուշանալու է հպարտ դիրք մը բռնելէ. զարթութիւնն իսկոյն բարկութեան կայլափոխուի։

Գրեթէ ամեն երեկոյ քաղաքին հրապարակին վրայ կը ճեմէ և օտարական մը տեսնելուն պէս, հետը կը տեսակցի, քանի մը կարծիքներ կը յափշտակէ վարպետութեամբ և հետևեալ օրը գանոնք ոսկեզօծելով՝ կը հրատարակէ առաջնորդող յօդուածի մէջ։

Երբ հրապարակի վրայ ժուռ կուգայ, միշտ պրպտած է շոկելու իւր շապիկն, փողպատն, թիկնոցն, բաճկոնն ու գլխարկն, որ առաջնորդող յօդուածներուն գլուխը գրուած վերնագիրներէն շատ փոքր է։ Եթէ շարադրութիւնը լաթերէ շինուէր՝ Մշակի լեզուն այսօր բաւական կոկիկ լեզու մը պիտի ըլլար՝ կտրցնելով իրեն տգեղ և ոչ կոպիտները։ Քիչ մը ժամ գալէն ետքը կը նստի դրօսարանի մը մէջ, ուր քանի մը գաւաթ միայն գարեջուր խմելով, հետևեալ աւուր հրատարակելիք յօդուածներուն վրայ կը սկսի խորհիլ։ Քաղաքին մէջ գրեթէ միշտ կառքով կը շրջապտի. եթէ սանդուխէն վեր կառք հանելը կա-

բելի ըլլար՝ մինչև անկողին կառքով պիտի երթար, այնքան կը սիրէ չը քալելը, թէպէտև անկէ նւազ չը սիրեր դեղեցիկն, ինչպէս նաև բարոյականութիւն քարոզելը։

Պ. Արծունին, ինչ որ ալ ըլլայ, իւր թերութիւններովն աւելի ծառայած է ազգին, քան իւր հմտութիւններովն։ Ժողովուրդ մը իւր թմրութենէն սթափեցնելու համար՝ կծու յանդիմանութիւններն և խորհրդածութիւններն ուշիմ և խոհեմ գրութիւններէն շատ աւելի օգուտ կրնեն. և ասոր քաջ համոզած ըլլալուն համար է, որ խրատելու տեղ կը նախատէ և շոյելու տեղ՝ կը խածնէ։

— Քանի որ նպատակս սուրբ է, կըսէ Արծրունին, միշտ իրաւունք կունենամ հայերուն ծոյլ, շուն, գող, անառակ, լիրբ, աւանակ և այլն ըսելու։ Թէև այս լեզուն հակառակ է մամլոյ ազատութեան, բայց համաձայն ըլլալով հայրենեաց ազատութեան, կը հրաւիրենք մեր ազգայիններն չը զայրանալ պ. Արծրունւոյ յանդիմանութիւններու դէմ, որքան ալ անմարսելի ըլլան անոնք, վասն զի առանց հայհոյութեան՝ չիք փրկութիւն։

Զինքն անձամբ ճանաչելու պատիւը չունենալով՝ չենք կրնար անոր կազմութեանը վրայ գաղափար մը տալ մեր ընթերցողներուն. իսկ եթէ հաւատանք մեզի տրուած ծանօթութիւններուն՝ կը պարտաւորինք ըսել թէ պ. Արծրունւոյ կազմը նոյն ուղղութիւնն ունի, ինչ ուղղութիւն ունի Մշակը. և անշուշտ փառք մ'է իրեն՝ եթէ ոչ Մշակին մէջ, գոնէ իւր անձին վրայ Եզոբոսն ներկայացնելը։ Դարձեալ մեր քաղաք տեղեկութիւններուն յենլով՝ պ. Արծրունին պէտք է ունենայ այն դէմքը, զոր կունենայ մարդ, երբ սխալմամբ գաւաթ մը նաւթ խմէ։

ԿԱՐԱՊԵՏ ՊԷՅ ԵՐԱՄԵԱՆ

Կարապետ Պէյ Երեմեան ծնած է 1830-ին։ Կազմով բարեձև, ուռ աչերով և սև ընքուինեերով մարդ մ'է։

Մղկիթ մը շինել տուած է։

Յ. Պարոնեան

ԵՐՐՈՐԴ ԲԱԺԻՆ

ՔՆԱՐԵՐԳՈՒԹԻՆ

Քնարերգությունը կամ քնարական բանաստեղծությունը գրական հինգական տեսակներից մեկն է, որով բառերի ռիթմիկ ու երաժշտական ներդաշնակությամբ բանաստեղծը արտայայտում է իր միտքը, ցանկությունը, զգացմունքը։ Քնարական բանաստեղծության արտաքին ձևը չափազանց սերտ շաղկապված է նրա ներքին բովանդակության հետ։ Ռիթմը, երաժշտականությունը, յանգը, չափը նույնը կերպով հիւսված են արտայայտված մտքերի ու զգացմունքների ընդհանուր բնույթի և բովանդակության հետ։ Քնարական յոյզի վառ ու զօրեղ արտայայտության չափը և արտաքին ձևի պայմանները մի անբաժան գեղարվեստական ամբողջություն են կազմում։

Լիրա յունական բառ է և նշանակում է քնար։ Հին յոյների երգն ու արտասանությունը կատարվում էր նվագի հետ քնարով։

Քնարերգությունը դիրքազանցօրէն սուբյեկտիվ բանաստեղծություն է, անհատական ապրումների անմիջական արտայայտություն։ Նրանով բանաստեղծը արտայայտում է իր վերաբերմունքը դէպի արտաքին աշխարհի երևույթները։ Սակայն դա պիտի հասկանալ պայմանական իմաստով։ Բացարձակ մտքով անհատ չը կայ. իր հոգեկան աշխարհի բոլոր կողմերով, իր ստեղծագործական քնարի բոլոր լարերով նա կապված է իր հասարակական միջավայրին. ամենասուբյեկտիվ մենաւորի խոհերի ու զգացմունքների աղբիւրն անգամ պիտի որոնել նոյն միջավայրի հասարակական այս կամ այն խաւի մտորումների ու ապրումների շրջանակի մէջ։ Ըստ որում և որչափով լայն խաւերի ու շրջանների մտքի ու զգացմունքի խորունկ արտայայտիչը լինի քնարերգու բանաստեղծը, այն չափով էլ կը բարձրանայ նրա քնարերգության գեղարվեստական արժանիքը, ընդունելով երբեմն համընդհանրական բնույթ։ Քնարերգության մէջ կայ և էպիկ տարր, սակայն այն չափով, որչափով բանաստեղծը ապրելով որևէ անցքից կամ դէպքից, դրանց նկարագիրն է տալիս, պատմում, որով բացատրում է հերոսի հոգեկան դրության պատճառը կամ առիթը։

Քնարական բանաստեղծութեան պայմաններն են. զգացմունքի արտայայտութիւնը բնաբոյ գծերով, գոյներով ու երանգով և ոչ լուսանկարչական մանրամասնութիւններով. արտայայտութիւնը պիտի լինի անկեղծ, այլապէս զգացմունքի ճշմարտութիւն չի լինիր։ Բանաստեղծութիւնը կեղծիք չէ ընդունում. զգացմունքը արտայայտել սեղմ՝ զերծ ձգձգումներից ու շատախօսութիւնից. վերջին հանգամանքը զբաղում է նրան ապդելու, տպաւորելու այժիցս։ Ապա՝ պատկերաւորութիւն և երաժշտականութիւն կամ երկուսից մէկի գերակշռութիւնը, սակայն երբէք մէկը առանց մեւսի։ Բացի այդ բանաստեղծը պիտի ունենայ վառ, ուժեղ երևակայութիւն՝ թափանցելու համար թէ իր և թէ հոգեպէս հարազատ իր նմանների հոգու մէջ։ Ինչ որում վերջինի ներքին պայմանները պիտի համարել՝ նրա համամարդկային նշանակութիւնը, անկեղծութիւնը, մաքրութիւնը, արտայայտած զգացմունքի խորութիւնը։ Արտաքինը՝ լիրիկ գրուածքների գեղարուեստականութիւնը, զգացմունքների արտայայտութեան պատկերաւորութիւնը, լեզուի բարեհնչիւնութիւնը, երկի սեղմ ամփոփումը։

Միայն այս բոլոր պայմաններին յայտնի չափով կամ լիովին գոհացում տուող չափական կամ արձակ քնարական փաստակը կարող է կոչել բանաստեղծութիւն։

Քնարական բանաստեղծութիւնը լինում է՝ սիրային, եղերերգական, ներբողական, երգիծական, ռազմական, յեղափոխական, աշխատանքի, սոցիալական, փիլիսոփայական և այլն։

Սիրային բանաստեղծութիւնը, որ համաշխարհային պոէզիայի մէջ խոշոր տեղ է բռնում, արտայայտում է սիրոյ զգացմունքի բազմազան երանգաւորումները, հոգու նուրբ շարժումները, սիրոյ առարկայի հետ տեսակցելու տենչը, երջանիկ սիրոյ ցնծագին ուրախութիւնը կամ անջատման կարօտն ու անձկութիւնը, խանդն ու խորտակուած սէրը և կամ սիրածի անդառնալի կորստի դառն կսկիծը։

Սուրխատեան

ԿԴԱՆԵԿԱՐԵՆ ՏԵՂԵԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՄԻՋՆԱԴԱՐԵԱՆ ՀԱՅ ՔՆԱՐԵՐԳՈՒԹԻՒՆԸ

Հայ ժողովրդի բանաստեղծական ստեղծագործութեան ընագաւառում հայկական միջնադարի քնարերգութիւնը կազմում է ամենաբարձր և գերազանցօրէն ինքնուրոյն արտադրութիւն։ Միջնադարեան հայ քնարերգութիւնը գրեթէ ոչ մի կախում չունի եւրոպական բանաստեղծութիւնից։ Եւ քնարական ստեղծագործութեանը XIII—XVI-րդ դարերում ինչ կարող էր տալ արևմտեան-եւրոպական բանաստեղծութիւնը, որ դեռ միայն սաղմնաւորում էր բոլոր երկրներում, նոյնիսկ առաջնութեան պատիւը վայելող Իտալիայում։ Ընդհակառակը, դեռ մի բան էլ աւելի սովորեցնել կարող էր արևելեան ժողովուրդների՝ արաբների, պարսիկների բանաստեղծութիւնը. ժողովուրդներ, որոնք վաղուց էին մշակել իսկական քնարերգութիւն։ Մատնանշում են հայ տաղերգուների զանազան փոխառութիւններ՝ իրենց արևելեան հարևաններից, առանձնապէս արտայայտութեան ձևերի ընագաւառում։ Այդպէս օրինակ՝ միջնադարեան հայ տաղերգուները արաբականի նըմանողութեամբ յօրինում են մի շարք նմանայանգ ոտանաւորներ. ընդհանրապէս երգում են վարդ և սոխակ, ինչպէս պարսկական երգիչները, կիրառելով «գազել» (սիրոյ երգ) կոչուած բանաստեղծութիւնների յատկանշական, ուրոյն ձևերը և այլն։ Այնուամենայնիւ նախընթաց շրջանում ապրող տաղերգուների, ինչպէս և «շարական» օրհներգութեան հեղինակների ստեղծագործութեանց մէջ արդէն մենք գըտնում ենք՝ թէ անների ընտիր հիւսուածք, թէ յաճախակի կրկնութիւն միևնոյն յանգի և թէ մանաւանդ ներքին ներդաշնակութեան, վերջավանկ նմանահունչ ձայնաւորների, իրար յաջորդող մի շարք տողերի սկզբում միևնոյն տառի գործածութեան խաղերը. կարճ՝ այն ամենը, որ համարում է փոխ առած։ Միւս կողմից հայ տաղերգուները բանաստեղծութեան մէջ մտցրին «արևելեան» իւրայատուկ ստեղծագործութեան ոգուց տաբբերուող մի նոր ոգի. նրանք ժխտեցին շլացուցիչ երանգաւորումը, գոյների խճողումը և պատկերների անչափ ծանրաբեռնումը, որ կազմում է արևելեան բանաստեղծութեան կարևոր յատկանիշը։ Ահա թէ ինչու վերջին տարիներս՝ հակառակ մինչև այդ տիրող կարծիքի՝ գիտութեան մէջ իշխում է այն տեսակէտը, թէ հայկական բանաստեղծութիւնն աւելի քիչ է ենթարկուել Արևելքի անմիջա-

կան ազդեցութեանը, թէ Առաջաւոր Ասիայի քաղաքակիրթ ժողովուրդները, որոնց թւում և հայերը, միասին են ստեղծել այն ոճը, որ յատուկ է ինչպէս արաբական ու պարսկական, այնպէս էլ հայկական միջնադարի քնարերգութեան։

Բայց գրականութեան փոխազդեցութեան վերաբերեալ չը լուծուած հարցերը կարելի է մի կողմ թողնել։ Վերջապէս դա այնքան էլ էական չէ, որովհետև ոչ մի բարերար «ազդեցութիւն» չի կարող զեղարուեստ ստեղծել այնտեղ, ուր նրա սաղմը գոյութիւն չունի։ Մ՚բքան էլ պարարտացնեն ու ոռոգեն հողը, բայց և այնպէս արմատ այնտեղ հասակ չի տալ, եթէ հողի մէջ ձգուած չեն պէտք եղած սերմերը։ Կուլտուրական էվոլիւցիայով բոլորած դարերը հայ ժողովրդի հոգու մէջ ձգել են այդպիսի սերմեր, և միջնադարը բեղմնաւորեց այդ ցանքը, հատունացրեց ու տուաւ տատասարդի, հարիւրապատիկ արդիւնք։

Միջնադարեան հայ քնարերգութիւնը,—որ փայլում է ծիածանի եօթներանգ գոյներով, որ կրում է բոլոր թանկագին քարերի շողքը, որ դաշտային ծաղիկների դուրեկան և անուշ բոյրն ունի, մերթ խոխոջուն՝ անտառային առուակի նման, մերթ ամպագոռ, ինչպէս լեռնային վտակ, որ ունի քնքոյշ սիրոյ անուշաբոյր բառեր և յաղթական տենչանքի այրող խօսքեր, միշտ համաչափ ու ներդաշնակ, որ գիտէ առանձին մասերը հնազանդեցնել ընդհանուր միտումին,—համաշխարհային գրականութեան մէջ՝ իսկ որ մի յաթանակ է հայկական ոգու։ Տաղերգուների այն մեծ շարքը,—որ ժառանգաբար պահպանել է իր նախորդների տրադիցիաները (աւանդները), իր ստեղծագործութիւնների բովանդակութեան մէջ աստիճանաբար մտցրել է նոր տարրեր և շարունակ կատարելագործել տեխնիկան,—գալիս է XIII-ից և հասնում մինչև XVI-րդ դարը։ Այսինքն՝ ծաղկման ամենաբարձր շրջանը միջնադարի քնարերգութեան, որը յետոյ մասամբ ազատանում է իր փայլից XVII-րդ դարու ստեղծագործութեանց մէջ, մասամբ վերածնւում յանձին աշուղական երգերի։

(«Պոէզիա Արմենիի»)

ՄԻՋՆԱԳԱՐԵԱՆ ՀԱՅ ՏԱՂԵՐԳՈՒՆԵՐԸ

Ջնանգելով «Պուէզիա Արմենիի» գրքից միջնադարեան հայ լիրիքայի մասին նախորդ հատուածը, անհրաժեշտ ենք համարում մեր կողմից մի քանի յատուկ նկատողություններ անել։ Այդ հատուածում խոսված է միջնադարեան հայ քնարերգության գլխաւորապէս արտաքին կողմերի մասին, իսկ բովանդակության բնույթը որոշող պատկերների, գրոզների աշխարհայեացքի մասին՝ ոչինչ։

Այլ խօսքով անօթի մասին շատ բան է ասուած, բայց նրա պարունակության մասին՝ ոչինչ. մի երևոյթ, որ յատուկ է բուրժուական իդէալիզմով տոգորուած բոլոր քննադատներին։

Միջնադարեան հայ քնարերգությունը, որ ծնունդ է առել թաթարական արշաւանքների դաժան դարաշրջանում, արժանի է յատուկ ուշադրության։ Մանաւանդ նրա արժէքը մեծանում է այն հանգամանքով, որ մի բուռն գրողներ յանդգնել են հրապարակ գալ աշխարհիկ լեզուով և աշխարհիկ բովանդակությամբ այն ժամանակ, երբ գրագէտի համար պարտադիր լեզուն սրբազործուած գրաբարն էր, իսկ ստեղծագործության առարկան՝ եկեղեցին ու կրօնական-բարոյական խառնուրդ ներկայացնող պատմական նկարագրությունները։

Միջնադարեան տաղերգուները թողել են մի կողմ անհասկանալի գրաբարը ու գրել կենդանի աշխարհաբարով։ Հրաժարուել են վանական-կրօնական նիւթերից և միանգամայն աշխարհիկ բովանդակություն դրել իրենց երգերի մէջ։

Այս տեսակէտից արդէն նրանք արժանի են յատուկ ուշադրության։ Պատճառը սակայն ինչ է, որ նրանք հակադրել են իրենց՝ տիրող պայմաններին։ Եկեղեցուն ու քաղաքական-սոցիալական դժնդակ պայմաններին հակադրուած միջնադարեան լիրիքայի ծագման արմատները պիտի որոնել նոյն դարաշրջանի միջավայրում։ Ինչի՞ արդիւնք է դա։ Անշուշտ չի կարող գրական մի ամբողջ հոսանք ծնուել յանկարծ, առանց նախապայմանի, ինչպէս Զևսի գլխից Աթենաս Պալլասը։

Միջնադարեան քնարերգությունը՝ դա մի ռէակցիա էր դարերով տիրող եկեղեցական սխոլաստիկ գրականության դէմ, խրոնիկական դարձած քաղաքական անակնկալների դէմ։ Դա հետևանք էր մի տեսակ քաղաքական ապատիայի, որով համակուում են մեծ կռիւների կամ անվերջ սրածությունների մրցադաշտում յոգնածները ու պարտուածները։

Ո՞ր պիսի միջավայրից են վերցնում միջնադարի տաղերգուները իրենց պատկերները ու գոյները, գծերն ու հնչյունները։ Սա էական է, որովհետև մեծ առնչություն ունի այս կամ այն տաղերգուի աշխարհայեացքի հետ։

Միջնադարեան տաղերգուների լիրիզմը շատերը փորձում են վերացականացնել, բնորոշելով այն որպէս «մաքուր» լիրիզմ, որը իբր թէ տեղի և ժամանակի հետ ոչ մի առընչություն չունի, ոչնչով չէ պայմանաւորուած։ Մինչդեռ մատերիալիստօրէն, բէալիստօրէն մտածողը կը տեսնի պարզապէս, որ միջնադարեան հայ քնարերգությունը արդիւնք է նոյն դարաշրջանի տրամադրությունների ու գոյություն ունեցող պայմանների։

Այդ դարերում տիրող կարգերի տնտեսական-սոցիալական բազիսը Հայաստանում եկեղեցական և աշխարհիկ ֆէոդալիզմն էր։ Այդ կարգերի հարազատ ծնունդն են նաև միջնադարեան տաղերգուները իրենց հասկացողություններով, գաղափարներով և պատկերացումներով։ Իրանք ֆէոդալական հասկացողություններով մարդիկ են եղել, տիրողի հլու հպատակը և եկեղեցու բարեպաշտ սպասաւորը։

Սէրը ինչ է։ Մի զգացմունք, որը կարծես ոչ մի առընչություն չունի՝ ոչ ֆէոդալիզմի և ոչ եկեղեցու հետ։ Այո, սէրը չունի։ Բայց տիրոջն ունի։ Եւս առաւել, եթէ այդ տիրոջն իր սէրը բանաստեղծությամբ է արտայայտում, այսինքն պատկերներով։ Նա անպատճառ կը մատնի ինքն իրեն, թէ՝ որ դարաշրջանի մարդ է ինքը և թէ ինչի է նման իր տիրոյ զգացմունքը։ Մատնողը այն պատկերների շարքը կը լինի, որոնցով նա պիտի արտայայտի իր սէրը։ Օրինակ, միջնադարի ամենամեծ տաղերգուն՝ Նահապետ Քուչակը երգում է՝

Քո ծոցդ է ճերմակ տանար,
Քո ծծերդ է կոնքեղ ի վառ.
Էրքամ ես ժամկոչ ըլլամ,
Լինիմ տանրիդ լուսաբար,—

սա արդէն պարզապէս ցոյց է տալիս, որ Քուչակը կամ տէրտէրացու է, կամ տիրացու, կամ հասարակ ջերմեռանդ քրիստոնեայ։ Նշանակում է, որ ժամանակի պատկերացումների համար վանական-եկեղեցական կուլտուրան զօրեղ է եղել, և Քուչակն էլ նրա հարազատ զաւակը։

Մի այլ բանաստեղծ, Յովհաննէս անունով, գրել է Վասն թռչնոց խորագրով մի բանաստեղծություն։ Կարելի է հարց տալ, թէ ինչ կապ, օրինակ, երկնքի թռչունների և ֆէոդալիզմի կամ հոգևոր նուիրապետության շրջանակում ստեղծուած պատկերների միջև։

Դուրս է գալիս, որ այս դէպքում էականը թռչունը չէ։ Էականը թռչնոց երգիչն է, որ երգում է.

Արտոտիկն ճռնչայր
Առաւօտուն, երբ լուսանայր,

Անդորր փառարանէր
Ջառաուծոյ քո՝ն ճն, յիրկինն որ կոչի։

Բանաստեղծն ուզում է ասել, թէ արտուտը առաւօտեան հոմնելի ձուագում էր. բայց պատկերը՝ իր տեսակէտից լրիւ գարձնելու համար՝ թռչունին աստուածութեան ու փառաբանութեան գաղափարի հետ է կապել։

Յիշեցնում գոյր, ընդէր
Զիւր հայրենի տուն և տանար
Ե՛ւ ի վերայ այն տանարին
Սաղմոս երգէր գոր՝ անդադար։

Պատկերը նորից Աստուածաշունչն է տուել, թէև թռչունները ոչ մի կապ չունին Սուրբ Գրքի հետ։ Կապ ունեցողը գարձեալ ինքը բանաստեղծն է, որ իր բանաստեղծութիւնների մէջ ցուցադրում է այդ միջավայրի հարազատ գաւակ լինելը՝ իր կրօնական-վանական հասկացողութիւններով։

Դա գարգապէս սաղմոս քաղող մի կրօնական անձ է, որի գլխում օրօրում են պատկերներ եկեղեցական իրականութիւնից, իսկ պէտք եղած սիմվոլների ազբիւրը նրա համար՝ բիբլիական բառարանն է։

Մի այլ բանաստեղծ, Մուրադ Եիկար անունով, գարուն է երգում, տաղի վերնագիրն էլ Տաղ գարնան է։ Բայց պատկերների բնոյթի շնորհիւ տաղը դուրս է եկել Հայոց գատկի գովքը։

Տաղերգուներից Ղազար Սեբաստացին՝ իր սիրուհուն ուզում է հաւատացնել, որ նրա սէրը սրբութիւն սրբոց է իր համար։ Եւ հոգեկան այդ վիճակը արտայայտելու համար նա հետևեալ պատկերներով է երգում.

Քեզ ես թուշ եղա, գոբերս անցուցի,
Լալով ի շուրջ գամ, թէ գինչ տի լինի.
Քո սէրն յիմ սրտիս զէտ սէր Սաղիմու,
Քրիստոսի գերեզմանն, որ լոյսն ի հոն կայ։

Իսկ եթէ սիրուհին յամառ է, չի պատասխանում իսկ դարձած սիրահարին, այդ դէպքում բանաստեղծը տղամարդութիւն ունի ասելու, թէ՝

Երթամ սուրբ-Սարգիս մանում,
Անիծեմ, որ գուն իմանաս.
Ո՛չ կաղնաս ու ո՛չ կուրնաս...

Այս դէպքումն էլ բանաստեղծի լեզուով տիրող եկեղեցին է խօսում, որի հարազատ որդին է յիշուած Սեբաստացի Ղազարը։ Սուրբ Սարգսով է ուզում ահաբեկել նա իր սիրուհուն, եթէ սա իր սիրտը չտայ սիրուց տոչորուող սիրահարին։

կամ իր սիրուհու անմահն գեղեցկությունը երգելու համար բանաստեղծը պատկերներ է վերցնում նույն եկեղեցական-վանական միջավայրից, սիրուհուն տանար դարձնելով, իսկ իրեն ուխտաւոր ու աղօթող.

Էլուսին քո տաքեր երոխտախյանք,
Խունկ ու մոմ տանք քեզ ուխտ եմ եկեր.
Ձեռքս ի վեր տարեր, աղօթք եմ արեր,
Շնորհդ է հասեր, ցաւս է փարատեր։

Միջնադարեան եկեղեցին զօրեղ ֆակտորներից մէկն է եղել իր ծանր դրոշմով՝ ժամանակի մարդու մտքի և զգացմունքի վրայ. և եթէ մեր տաղերգուները աշխարհիկ կեանքը երգել են, արտաքուստ նմանելով պարսիկ ու արաբ բանաստեղծներին, ապա վերոյիշեալ եկեղեցական-վանական պատկերներով երգելու հանգամանքը նրանց դարձնում է բուն ամենայնի ինքնուրոյն։

Միւս ֆակտորը՝ ֆէոդալ իշխանաւորը՝ միջնադարեան տաղերգուների համար բացարձակ ճշմարտութիւն է եղել.—մի երևոյթ, որ նոյնքան բնական էր նրանց աչքում, որքան բնութիւնը։

Մէկը այդ լիրիքներից ներբողում է Նազարէթ խոջային, որ «Քեօշկ է շիներ, ու բարձր սարայ», «անապատում օրդու ունի, եկեղեցին իրեն սիւն ունի», (որքան ճիշտ բնորոշումն) և «իմաստուն է քան Սողոմոն։ Ինչու։—Որովհետև, շարունակում է բանաստեղծը,—

Իսպահանու վարդն դու ես,
Շահ Աբասին ցանկալին ես...
Վայ մին Նազարէթ, հան Նազարէթ,
Խան էր ու Սուլթան Նազարէթ...

Այս տողերը խիստ բնորոշ են միջնադարեան լիրիքի գաղափարական աշխարհի համար՝ խոջաներ, խաներ և սուլթաններ պաշտող ու նրանց երկրպագող ֆէոդալի պասսիւ հպատակի համար։

Մի ուրիշ բանաստեղծ իր սիրուհու գեղեցկությունն ու արժէքը երկինք բարձրացնելու համար՝ նրան համեմատում է թագուհիների ու նման մեծանուն տիկնանց տիկիններին կամ բիբլիական անուանի կանանց հետ.

Կամ Եսթեր ես դու և կամ Բերսաբի,
Կամ Ոլիմպիա, Հռութ Նազելի...

Այսպիսով անհասանելի, անմատչելի մեծութիւններ են միջնադարեան տաղերգուների համար ժամանակի երկու տիրական ոյժերը՝ եկեղեցական միջավայրը, հոգևոր և աշխարհիկ միապետական իշխանութիւնները, որոնց «պարտէզներից» են ծաղիկներ քաղել մեր քնարերգուները իրենց փնջերի համար։

Միջնադարի տաղերգուների նկատմամբ մի հանգամանք պէտք է ընդունել. այդ այն է, որ պատկերներով ու համեմատութիւններով երգող տաղերգուները զարմանալի իրար նման են գրելու ձևերով։ Պարսիկ

բանաստեղծների պէս անունքն էլ սիրուհուն վարդի են նմանեցնում, իրենց՝ բլբուլին, սիրահու «ակռան՝ մարգարտի», շրթունքը՝ «շարպաքի», ոտքը՝ մի ամբողջ գիւլիստանի, կամ բախչայի, որի «մէջն է բուսեր նարինջ, թուրինջ, նուռ»... Բացի այդ՝ սիրուհին կարծես միայն աչաքին ունի, իսկ ներքին, հոգեկան՝ ոչ։

Դա խիստ բնորոշ է մինչնոգարեան կնոջ համար, որը միանգամայն կրաւորական, ստորադաս լինելով՝ չէր կարող յանդգնել ազատօրէն արտայայտելու իր յուզական վիճակը։ Այդ է պատճառը, որ բանաստեղծն էլ միմիայն կնոջ արտաքին բարեմասնութիւններն է երգել, լռելով նրա ներքին արժանիքների մասին։

Սուրիապետն

Փ Ր Ի Կ

(XIII—XIV)

ԳԱՆԳԱՏ

Աստուած արդար և յիրաւի,
Եւ ողորմած յամենայնի,
Հանդէս ունիմ բան մի վէճի,
Թէ դու լսես քո ծառայի։

Այս է զարմանք հիանալի,
Որ դա լինի վերայ երկրի.
Եւ հիացումն ազգի ազգի,
Զոր տեսանեմք ի աշխարհի.

Դէմ մէկ Ադամ էր ի դրախտին,
Եւ մէկն Եւա իր նմանին,
Եւ մէկ բարբառ համազգային,
Մինչև կերեալ սղոյ ծառին։

Արդ այս բանս է հիանալի
Եւ առաւել զարմանալի,
Թէ մէկ Ադամ և յԵւայէ
Ո՞րքան ազգեր ծնան յերկրի։

Ուրիշ լեզու ամեն մէկի,
Որ մէկ-մէկի ոչ հաւանի,
Որ մէկն է հայ, մէկն վրացի,
Մէկն տաճիկ, մէկն ասորի։

Մէկն է ջհուդ երրայեցի,
Եւ մինն արար հագարացի.
Մէկն է Ալան Արևորդի,
Մինն է Թուվիչ և Աբխազի...

Ո՞րքան տանջեն զմեզ յաշխարհի
Եւ կեղեքեն զկեանս մեր յայտնի.
Եւ դու ներես յամենայնի,
Ու անտես առնես զմեզ ի վշտի։

Տէր, ոչ խնդրես վրէժ յայտնի,
Եւ ոչ ցուցանես ակն ամենի.
Գիտես՝ մարմին ենք մսեղի,
Դէմ արձան չեմք ինչ երկաթի։

Եղէգն չեմք կամ խոտ վայրի.
Որ խանձ արկեալ ես կրակի,
Քան զանդաստանս փշաբերի.
Կամ մացառաց ինչ պրակի։

Որ բարկացար հայոց ազգի,
Որպէս հրէիցն Իսրայէլի,
Զինչ բարկութիւն ի քէն Թափի,
Նա ի վերայ մեր գայ կուտի։

Արդ եթէ չենք ինչ պիտանի,
Եւ կամ չունինք գործ ինչ բարի.
Կամ քո սրտիդ ենք ատելի,
Որ չարչարաք ըստ հրամանի,

Նա դու ջնջէ զմեզ մէկ հետի,
Որ քո բարի սիրտդ հանդչի,
Թէ այս կամօքդ քո կու լինի,
Ամենակալ Աստուած բարի։

Նա մեք տանեմք օրշափ պիտի.
Եւ համբերեմք ամենայնի.
Այլ որ վատուժն է Թող կորի.
Եւ օր կամիս Թող այն լինի։

Այս ամենայն Թող գայ անցնի,
Զոր ասացի վասն իմ ազգի.
Եւ այս էր բան քո հրամանի,
Արդար իրաւ դատաւորի։

Որ մէկն ապրի տասը տարի,
Մէկն հարիւր այլ աւելի.
Մէկն ոչ ի տասն հասանի,
Երկու երեք ամսոց մեռնի։

Մէկինն մէկ որդի լինի,
Անօր անժամ նա մեռանի.
Մէկն այլ ունի շատ մի որդի,
Անտի ոչ մազ մի չպակսի...

Մէկն ի պապանց պարոնորդի,
Մէկն ի հարանց մուրոդ լինի.
Մէկինն հազար ձի և ջորի,
Մէկինն ոչ ուլ մի, ոչ մաքի։

Մէկինն հազար դեկան ոսկի,
Մէկինն ոչ փող մի պղնձի.
Մէկինն հազար հատ մարգարիտ,
Մէկինն ոչ մի ուլնի ապկի։

Մէկինն հազար գառնով մաքի,
Մէկինն ոչ մէկ չորքոտանի.

Մէկինն բեհեզ և ծիրանի,
Մէկինն բրդէ շալ մի չանկնի։

Մէկինն ատլաս և դումդի,
Մէկինն շապիկ մի չի հասնի.
Մէկինն հարամն յաջողի,
Մէկինն հալալն կորուսի...

Զտօլվաթն ասա թէ ո՞ւր լինի,
Եւ բաղդաւոր ո՞ւր գտանի.
Որ ի շուրջ գամ տասն տարի,
Եթէ կաթիլ մ'ինձ հանդիպի։

Զի թէ թագաւոր է ի թախտի,
Կամ քահանայ է ի խմբի.
Եւ կամ իշխան է արքունի,
Կամ որդի մեծ թագաւորի,

Եւ նա տօլվաթ և բաղդ չունի,
Եւ ոչ շնորհ խօսքից կարգի,
Նա թող հեղեղն գնա տանի,
Քարէ կարկուտն այլ աւելի։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՐԶՆԿԱՑԻ

(Յովհաննէս Պլուզ)

(XIII—XIV)

ՔԱՌԵԱԿՆԵՐ

Երկուս ի մէկտեղ բերած,
զերդ ընկեր կասեն թէ պահէ.
Ու չորս բնութիւնս օտար,
հետ իրաց կասեն թէ սազէ.
Զայս չորս յիրար ոնց պահեմ,
ամեն մէկ յինքն կու քաշէ.
Զիս հոգս ի յայսոց միջին,
զերդ կրակ զմոմ կու հալէ։

Հոգս չոր խուշկիկ առնէ.
ջուրս գէճ կու ցրտացնէ,
Քամին զիս յերերք ունի,
կրակին բոցն կու վառէ։
Հանցեղ սիրելի չարկամ
մէկտեղ ով իսկի տեսեր է.
Հոգիս թէ ի վեր քաշէ,
հոգս ծանր ի վայր կու հակէ։

Վախեմ թէ հոգոյս լսեմ,
նա հոգոյս բանն դժար է.
Եւ հետ հոգոյն ով թռչի,
երբ նորա տունն հեռի է։
Հինգ դուռն է ի բաց թողած,
թէ փակէ որ դող չի մտնէ,
Ըզդողս ես տանէս ունիմ,
որ զդոներս ի բաց կու պահէ։

Շաղուած ես ի չորս իրաց,
այդ ցեխս շէնքդ ամուր չի լինի,
Օդն հաղուն ինչ նման,
հուրն ու ջուրն են խիստ ատելի։

Ի հակառակ է ստեղծած,
և եղած ես մարդ կենդանի.
Վերնայ օդն ու հուրն ու ջուրն,
և մարմինդ դառնայ փոշի։

Աւաղ, մեզ հայիլ պիտի,
յայն արևն որ լոյս կու ծագէ.
Շատ կայ ի յարև նման,
ի պնչէն օձն կու վագէ.
Գիտուն մարդն յարև նման՝
խօսքն լուս պայծառ կու ծագէ.
Անգէտ մարդն օձուն նման,
հանապազ զմարդ կու խոցէ։

Մարդ կայ որ հազար արժէ,
հազար կայ որ մէկ մի չարժէ,
Ան մարդն որ հազար արժէ,
անգէտին մօտ փող մի չարժէ։
Բազան ի անտառ մորին,
թէպէտ րու թէպէտ բազա է.
Ճոհարն ի ծովուն միջին
թէպէտ քար թէպէտ ճոհար է։

Խելօքն ի յանգէտն ի մօտ
միտք արա թէ ինչ նման է.
Ճրագն ի յառջև կուրին,
կու վառի և ինքն չի գիտէ։
Խելօքն է ի ծով նման,
որ քանի չափես՝ կու տանի.

Անգէտն է ի տիկ նման,
փառչ էւել ընուս նա՝ պատոի։

Աշխարհս է ի տոլապ նման,
որ ի վեր ի վայր թաւալի.
Վերինն ի վայր դառնայ
և վարինն վեր ոլորի.
Մտիկ դու հիւսանն արա,
որ թապութ ւ՝ օրոցք շինէ նա.
Մէկն գայ և մէկն երթայ,
նա իր բան պակաս չի մնայ։

Աշխարհս է ոչինչ նման,
շատ դատին դառնան փոշիման.
Հալալ ու հարամ անեն,
հոս թողուն ւ՝ ի հոն կու գնան.
Ջան արա գործէ բարի,
որ յետոյ չլնիս փոշիման.
Թէ չէ Ադամայ դրախտէն
քեզ կանանչ տերև մի չի տան։

Աշխարհս է կանանչ մարդեր,
մենք ի մէջն ենք կաքու ձագեր,
Հրեշտակնին արծիւ դարձեր՝
կու տանին զմեզ մէկ-մէկ ի վեր.
Մանկտիքդ, երբ ի հաց նստիք,
ձէնեցէք աղքատք ձեզ ընկեր.
Մեռնիք ւ՝ ի յանդէն երթայք,
կու նստէք քանց մէկ-մէկ մ՝
այլ ի վեր։

Ելայ ժողվեցի զիմ մեղքն
ու դրի առջեւս ու լացի.
Յանդէնն քարվան կերթար,
շալկեցի ՝ւ ի հետ գնացի.
Հրեշտակն այլ ի դէմս եկաւ,
թ՝ ուր կերթաս ողորմ ու լալի,
Այդ շալիկդ որ դու ունիս,
անդէնին քեզ տեղ չի ընկնի։

Երնէկ ես նորա ասեմ,
որ աշխարհս աւդ կուգենայ,
Ջիւր մեղքն ի յիշումն ածէ,
զօրն ի բուն նա նստի ու լայ.

Արտասուք սապոն լինի,
սեւութիւնքն սպիտականայ.
Թէ չէ օր հարսնիցն գայ,
նա հանդերձ հարսին չունենայ։

Աշխարհս է ի ծով նման,
ով որ գայ անթաց չի մնայ.
Յայս ծովս ես ի նաւ մտայ,
գնաց նաւս և ես չիմացայ։
Եղեր մօտեցեր է նաւս,
վախեմ թէ քարի դիպենայ,
Փակդի իմ աղուր շինուածս
ու տախտակս մէկմէկանայ։

Մարդն որ օտար տեղ երթայ,
գատ մի խելք կու պիտի նորա.
Ամեն մարդոյ ցած կենայ,
ապա իւր բանն լինենայ.
Մտիկ դու ծառին արա,
որ քանի ճղեր կայ ի նա,
Այն ճիւղն որ գպտուղն ունի,
քան զդարտակն ի ցած կու
կենայ։

Լաւ մարդ ես նորա ասեմ,
որ բանայ զբերանն համով.
Հանցեղ լեզուն զին չունի,
զինչ ընուն տան մի ճոհարով.
Աստուած երբ զաշխարհս արար,
զօդն ու զհուրն ու զհողն ջրով,
Մսխալ մ՝ աւելի չարար,
այլ կշռեց զամենն չափով։

Շատ թապաւորայ մնաց,
յիմաստնոց ասանց լսեցի,
Թ՝այնչափ չկշտանայ մարդն
ասանաւորով ինչ որ մեռանի.
Տանին զերեզման գնեն
և հողով իւր աչքն լեցի.
Ապա փոշիմնայ և ասէ
Թէ հերիք է ՝ւ այլ չի պիտի։

Մէկ մարդ մի ճուհար ունէր,
ի խելաց շահել չկարաց.

Զինչ խելքն ի վերայ եկաւ,
նա գնաց ճուհարն ի ձեռաց.
Գնաց նա ի վայր նստաւ
ողորմիկ ու շատ մի իլաց,
Նրա լացն այլ ինչ շահ է,
երբ գնաց ճոհարն ի ձեռաց։

Դաւիթ արքային որդի Սողոմոն,
զայս մեզ կու ասէ.
Զխրատ իմաստնոյն դու տուր.
աւելի նա զքեզ սիրէ.
Թէ անգէտ 'ւ անմիտ մարդոյն
խրատ տաս նա զքեզ ատէ,
Ու թուր սւ դանակ առնու,
թէ կարէ նա զքեզ սպանէ։

Հոգին հողվրքովն անցաւ
ու զմարմինն ի հողն անիծեց.
Թէ մեղքն ես դու արաք,
յանդէնն իմ երեսն ամաչեց.
Մարմինն ի հողուն ի դուրս
այսպէս խօսք զհոգին վճարեց.
Թ' ես հող էի հող դարձայ,
քո ամայն է զքեզ բռնեց։

Է՞ գերվար մարդ ու տխմար,
յէր չես երթար ի միտք ի
վայր.
Կորուսիր զաղատ հոգիդ,
'ւ ադ հողեղէն մարմնոյդ հա-
մար.
Ի կեր 'ւ ի խում ես հետ մեղաց,
ի ժուռ կուգաս զօրն անդա-
դար.
Առնուս ու տաս մարմնոյդ ի կեր,
գիրացնես որդանց համար։

ՏԱՂ ՍԻՐՈՑ

Այս ինչ կրակ էր զիս այրեց,
կամ ինչ խաւար, որ զիս պատեց.
Ես վէմ անխախտ էի, խախտեց.
Պողպատ ամուր, զէտ ջուր հալեց։

Եկաւ անցաւ ու ճոխք քայլեց.
Ճօճաց ու զմէջքն կոտորեց.
Դարձաւ ի յետ, խոշոր նայեց,
Զանձս տեսաւ ու զաչընդեց։

Օրն շաբաթ լոյս կիրակի՝
Վերի վանացն ի վայր կուգի.
Բուրվառ ի ձեռս ու խունկն ի լի,
Սաղմոսարանս անդս ունէի։

Հետ կուգայի, հետ կարդայի,
Երթամ հասնիմ ճաշու ժամի.
Եկի առի հանց կրակի,
Ոչ գրէի, ոչ կարդայի։

Մէկ մ'է հեծեր պօղ պէտաւի.
Եկաւ անցաւ քաջ մուղալի.
Աչեր ունէր՝ Թաւրէզ տալի,
Ընքին զխելքս կու տանի։

Խնձոր ձգեց, մտիկ չարի.
Մէկ մ' այլ ձգեց, ցածցայ ու առի.

Սէն մուսուրման մօլլայ ղըզի,
Պէն Յովհաննէս՝ քէշիշ օղլի,
Խնձորդ ի յիս ինչ բան ունի։

Եօրու, եօրու գնաւուր օղլու.
Գէօթուր պիզդէն մուհալ սոզու.
Սէն Յովհաննէս քէշիշ օղլու,
Պէն միւսիւրման մօլլայ ղըզի
Զիրար սիրենք, խոշ կու լինի։

Յովհաննէսին մայրն է, տղա.
Հագեր վալա վրան ճուպայ,
Վերի վաներացն ի շուրջ կուգայ
Ու խունկ ու մոմ կու խոստանայ։

Հարեղաներ, ասէք մեղայ,
Սարկաւագներ, տէր ողորմեա.

Մինչէ իւր խելքն ի վերան գայ,
Թ'իմ Յովաննէսն ի տուն դառնայ։

Մէկ մի շասաց թէ Տէր մեղայ,
Ամէնն Ալլահ ու շէյտուլայ.
Յետոյ գայս ճուղապն ասացին.
Այլ Յովաննէսին ճար չկայ։

Ծօ Յովաննէս, ծօ իմ տղա,
Դարձիր ի տունն, ասա մեղայ.
Հոնկայ տէրտէրդ կու ճորայ,
Թէ Աշան ընկեր է ի հետ նորա։

Հայ իմ մարիկ, ես քեզ ծառայ.
Թէ իմ տէրտէրն զիս ճորայ,
Նա ես զԱշան ցցնեմ նորա,
Քան զիս ու այլ խև կու լինայ։

Ծօ Յովաննէս, ծօ իմ տղա,
Դարձիր ի տունն, ասա մեղայ.
Դու մէկիկ ես, այլ ճար չկայ,
Այլ լինալու ճարակ չկայ։

Հայ իմ մարիկ, ես քե ծառայ.
Զկաթդ, որ կերայ, հալալ արա.
Զխելքս առին ու խև եղայ,
Յիսնէ ի քեզ այլ ճար չկայ։

Ծօ Յովաննէս, ծօ իմ տղա,
Դարձիր ի տունն, ասա մեղայ.
Քեղի բերեմ հայու դըստրիկ,
Զքեզ օրհնել տամ քահանայ։

Հայ իմ մարիկ, մի տխմարնար.
Չկայ նման գէմ Աշային.
Լեզուն պիւլպիւլ, ձայնն դումբի,
Մէջքն բարակ՝ դէտ Ֆուանկի։

Աշան նստեր էր փէնճէրէն.
Ամէն երեսին էր, խիստ կուլար,
Թ'այսօր ծեծեց իմ հայր Ղատին,
Թ'էր կու սիրես հայուն որդին.
Տես թէ կելնէ, մէկ մի կուգայ,
Ականջն խուլ Յովաննէսին։

Խև Յովաննէսն, երբ զայն լսեց,
Բռնեց զճամբան ի Եղընկին,
Գլխիբաց գտակն ափին,
Գնաց կանգնեցաւ յաղջև խանին։

Բարև երես թագաւորին.
Նոքա շուտով զբարևն առին.
Բռնեց զպօղ ձիուն ագին,
Դաֆայ ասաց ամէն ձարին։

Աշան կանգներ ի վերայ բերդին.
Մտիկ կանէր Յովաննէսին.
Քուշն է կանգներ դեղին հագնողն,
Ինքն զկանանչն ու զծիրանին։

Ծօ Յովաննէս, մտիկ արա,
Թ'ի վերայ բերդին թ'ինչ կու խաղայ.
Դեղինուորին ես եմ ծառայ,
Կանանչուորին զանունն ասա.
Թէ չէ լինիմ շահին բաղայ,
Թունեմ նստեմ թևիդ վերայ,
Պապուս անունն ասեմ մօլլայ,
Աղբօրս ասեն քաղքի շահնայ,
Եւ զիմ անունն ասեն Աշայ,
Մէկալ քրոջս Ղուզուքա,
Իմ մօրս անունն ասեն Ֆաթմայ,
Ու հօրս ասեն Ղատի մօլլայ։

Խև Յովաննէսն ի քո ծառայ,
Շուտով դէրդիս դէրման արա.
Թէ չէ՝ խևցայ, լեռներն ընկայ,
Զէտ մոմ ի տեղս հալեցայ։

Ծօ Յովաննէս, մկկիթ մտնուլ պիտիս,
Մատնիկդ ի վեր կալնուլ պիտիս.
Հետ մօլլանուն շուրջ գալ պիտիս,
Ապա ծոցուս տէր կու լինիս։

Աշա, սէրդ ինձ հարամ լինայ.
Թէ այդ բաներդ հանց կու լինայ.
Աշա, դոնուս յօրդ ի մահուն,
Զինչ ջանացիր հետ իմ հաւտուն։

Ութը կանուն սաղմոս ուսայ,
Զան ալ ի քո սիրուդ մոռցայ.
Օր մը չասի՝ թէ տէր մեղայ,
Ամէնն Ալլահ ու շէյտուլահ*)։

*) Գուէմը թերի է։

ԿՈՍՏԱՆԴԻՆ ԵՐԶՆԿԱՑԻ

(XIII—XIV)

ՏԱՂ ՍԻՐՈՑ

Այ սուրաթ պայծառ ու պատկեր լուսատես՝
Զիմ աչերս ի քո սիրուդ յէր կու զատես.
Դու պարնան բամի, ես ծաղիկ ծաբաւած,
Իմ ծաբաւ սրտիս համար հողմը հնչեց։

Ի յերկրի ինչ կայ նման քեզ օրինակ,
Դու յերկնից լուսեղէնքն ես նմանակ.
Քու տեսովդ ես դու լուսին պատրի թամամ,
Որ իմ սրտիս խաւարեալ լուս կու ծագես։

Դու սուլթան ես, պէհլսապ շատ ծառանով,
Ջծառայիս ձայնն գիտեմ որ կու կանչես.
Դու քանի՞ հեռացեալ ես այս քո գերուս,
Արտասուքն ի վայր թափես ի յաչերուս։

Թէ լինէր որ զքեզ տեսնի առ յիս գալով,
Եւ խնդութեամբ ի դէմ գալի քեզ սիրով.
Ի յերկրի երես դնի քեզ կոխելով,
Ու զհոգիս անդ հանէի յոժար կամով։

Ասեն՝ եղուկդ տար սիրով Ջերմային,
Երբ որ դուն յորդորելով մանրաքայլես,
Ասեն արև ծագեցաւ ի մէջ գիշերիս,
Երբ քայլես յանկարծակի յերկրին երես։

Ով ընկեր, ի քո սիրուդ բանտ ի զնդան՝
Հաղեղէդ և անմահութեանդ է նա տես.
Ով որ ունի ի քո սիրուդ իրք մի նշան,
Կենդանի մարդ հոգևոր դու զնա գիտես։

Ով չունի սիրելի սիրով հետ քեզ վառ,
Դու անբան և անասուն զնա կոչես.
Դու յակապ քաղցր ու լատիֆ ես խօսելով,
Որ շաքար ի քո շրթանցդ կը ծախես։

Բուրաստանք ծաղկով ի լի տես թէ վառես,
Որ ի յիս անմահութեան հոտ կու բերես.
Դու ծաղկանց ես թագաւոր վարդի գունով,
Զիս ի քո դիմացդ ի փուշն յէր կու դատես։

Դու հուքմով փադիշահ ես քու եասիրով,
Եասիր կամ քո ծառայ զինքն ազատես.
Ես ազատ եղեալ եմ այսօր յերկրի վրայ,
Թէ ծառայ սրտի կամով զիս տեսանես։

Այլ չը կայ քեզ Կոստանդին, կեանք մուրատով,
Երբ ի յիւր քաղցր տեսուն հանց կարօտ ես.
Է՛ սուրաթ պայծառ ու պատկեր լուսատես,
Զիմ աչերս ի քու սիրուդ յէր կու դատես։

ՏԱՂ ԳԱՐՆԱՆ

Այսօր եղև պայծառ գարուն,
Հոտն բուրեաց անուշ վարդուն.
Զայնն քաղցր գար պլպուլու,
Եւ եղանակն հաւերուն։

Ծաղկանց դաշտերն գունդգուն,
Սփոին տերևքն ծառերուն,
Յորդորեցաւ ջուր գետերուն,
Լողան ձկունքն ի մէջ ծովուն։

Պլպուլն նստաւ ի վրայ վարդին,
Նա հարբեցաւ անուշ հոտուն.
Առաւօտէ մինչ իրիկուն՝
Եղանակէր ի հետ վարդուն։

Տերևն սփոին առաւօտուն,
Ցօղն իջեալ ի վրայ ամպոյն.
Նա պլպուլն ի մեր սիրուն՝
Կամ քանց գալին ի մէջ ծովուն։

Զինարուեան ու նունուֆարն,
Նարգիս ծաղիկն խայտաղուն,
Մուրտ ու շուշանն ու բրաբիոն
Եւ բոահեանն էր խիստ սիրուն։

Հանց ողորմուկ ի վարդն ասայ,
Թ՚առանց քեզ ինց էլնեմ ի հուն.
Հանց քակեցիր շունչս ու հոգիս,
Այլ չի մնաց երեսս տուն։

Հանց ողորմուկ ի վարդն ասայ,
Իմ լուսատու արևն դու,
Ատդն զոհալ և մուշտարին,
Շամս ու զամար, իմ թագս դուն։

Տպազիոն կամ շափիրդայն,
Ակն սուտակ և շիկագոյն,
Դու ես քաղաք Զինուսաչին,
Մարդիկ ի քեզ յուշ կու մանուն։

Եկայք մանկունք ի բաղչանին,
Ծաղկունքն ի մէջ վրան զարնեմք։
Ղումբին երդէր մեզ եղանակ,
Այսօր եղև պայծառ գարուն։

Այսօր մարդիկ ուրախանան,
Որ գեղմին ընկէր սիրուն.
Նոքա ի սէր մեր ժողովին,
Քաղցրի խմեն անուշ գինին։

Տերև սփոեն առաւօտուն,
Կանաչ կարմիր և գունդգուն.
Թռչնուկ ի յօդս վերանան՝
Օրհնեն զաստուածն ամենեցուն։

ՄԿԲՏԻՉ ՆԱՂԱՇ

(XIV—XV)

ՈՒՆԱՅՆՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՐՀԻՍ

Երազ է սուտ, եղբարք,
աշխարհիս բաներն ի լման.
Ո՞ւր են թագաւորք, իշխանք,
պարոնայք և սուլթան ու խան։
Շինեցին քերդ ու քաղաք,
դարպասնի ու շատացան.
Յետոյ գէմ անտէր թողին,
Ու մտան ի հող և ի գնդան։

Նաղաշ, մի խարիր, մեզօք,
մի դատիր անտանոց նման.
Մի գիրկ աշխարհիս ածեր,
մի կարծեր, թէ քեզ տի մնան։
Շուտով քեզ խնդիր կու գան,
ու խոցեն զհոգիդ մահուան.
Հոգիդ բաժանի ի բէն,
ու մնայ մարմինդ ի գնդան։

Աշխարհս գէմ պաֆա չունի,
ու չար է մարդ ու բարի.
Օրիկ մի խնդալ կու տայ,
բայց յետոյ է դառն ու լեղի։
Աշխարհիս մի հաւատար,
զօրն ի բուն գէմ սուտ կու խօսի.
Զինչ որ խոստանայ մարդուն,
չի պահել գիւր խօսքն ի տեղի։

Շատոց խոստանայ հանդիսաս,
ու պահէ զօրն յերերմանի.
Շատոց մեծութիւն ասայ,
ու պահէ աղքատ և անօթի.
Խաբէ թէ ուրախ պահեմ,
ու առնեմ զօրիդ ու բարի,
Ի վերջոյ ծովուն տանի,
ու պահէ ի տարտարոսի։

Ամուրք մի վերայ անցնի,
լուկ մահուն օրն հասանի,
Յարևուն դատարկ հանէ,
և առնէ ողորմ ու լալի.
Աւաղ, դայն աղուր մանկտիքն,
որ դարձան ի հողն և ի փոշի,
Իրեանց ժամանակն անցաւ,
Ձերդ գերազ մութն գիշերի։

Երբ դայդ գիտէիր, գերի,
որ քո սէրդ ի սուգ տի փոխի,
Զաշխարհս գու մի սիրիր,
առաւել քան զկարն աւելի.
Մալի հասրաթ մի լինիր,
մեծութիւն քեզ չի պիտի.
Մեխս կերակուր, հանդերձ,
աւելին քեզ ցաւ կու լինի։

Է՛, ողորմելի Նաղաշ,
դու ջանա ու գործէ բարի.
Զքո գիրատան դու լսէ,
որ այլոց ի գործ անցնի.
Գիտի, թէ լողորդ էի,
նա մեզաց գեան կու տանի.
Ի հոգս աշխարհիս դատի,
շահ չունի քան զէնն աւելի։

ՏԱՂ ՍԻՐՈՅ

Ես քո սիրուն չեմ գիմանար, հալալ արա, հանսը մեռայ,
Առի հետ այլ զոսկի փէտաա, եկո փորէ ինձի Թուրպայ։

Թող գիս երեն տառայպուլով, որ իմ սրտիս բոցն գոռայ,
Շատ մարդ ի յոյս կրակն ընկնի, չորների գալարն ի վրայ։

Թող լանան ըզիս գինով, ժորուպ բերեն ինձ քահանայ,
Կանանչ տերևն Թող պատնեն՝ տանին Թաղեն ի նոր պաղչայ։

Հայ հարամի ու մարդասպան, ճալատն ի քովդ աշկերտ կուգայ,
Շատ դրեր ես սիրու զնդան, գուռն ու գռունքդ է զանարայ։

Զսիրտս էրեցիր ու սղկեցիր ու քաշեցիր յաչքդ սուրմայ,
Դարձար գարիւնս վաթեցիր 'ւոտվընիդ դրիր հինայ։

Քարկոծեցիր գիս խնծորով, քաղցր լեզուով խոցոտեցայ,
Անուշ գինով գիս խև արիր՝ որ ի ծոցդ գնտանեցայ։

Աս գիշեր ի յերազիս կըտրտեցին տիքայ տիքայ,
Գազանք արիւնս կշտացաւ ու Թոչունք ի լաշիս վրայ։

Վրաս բերան Ղ առիւծու, արիւնս դէտ ջուր կը բխայ,
Ով արիւնէս է ծարաւեր՝ Թող գայ խմէ որ լիանայ։

Կտրճվորացն յոտիցն ի հող, մէկ հոգիկ մը ունիմ ֆեռայ,
Իմ ճիկարս քաղաղ հերիք, արուս Թող գինի լինայ։

Գլուխս ամպերն ի վեր իջեր ի սրտիս լեռներուն վրայ,
Մաղձն սրտիս մշուշ կապեր, արևան արցունքս կը ցօղայ։

Կերակրեցաք ի մի սեղան, ու խմեցաք ի մի կըթխայ,
Մէկտեղ ելաք, մէկտեղ նստաք, ան ժամանակն ուր է հիմայ։

Ո՞ւր է դավլդ, ուր է երդումն, որ բռնեցաք զԱստուած վկայ,
Ի զատ ընկաք օտարացաք, չարկամն եղև մեզ մահանայ։

Աստուած մեր չարկըմին չար տայ, որ իւր չարուն լիանայ,
Բարեկամացն տայ բարի, մեր բանն ալ գայ բարի լինայ։

Աստուած ճամբայ տայ իմ սրտիս, ծառն ծաղկի ու կանչանայ,
Կամ իմ սրտիս ծառն բուանի, ձագն խօսի ու ճըվըլտայ։

Համբերելով գործք կատարի, խև Յովհաննէս, դու համբերէ,
Ատեն լինի գայ իւր կամաւ զինչ հեռաւոր զինք համբուրէ։

ԳԻՒՂՔ ԸՂԹԱՄԱՐՑԻ

(XVI)

ՎԱՍՆ ՎԱՐԴԻ ԵՒ ՊԻՒԼՊԻՒԼԻ

Ցեռ գնալոյ վարդին եկ պիւլպիւլ յայգին,
Եռեռ թափուր զվրանն, քաղեցաւ հոգին.
Երջէր և հարցանէր ըզիւր սիրելին.
Կանչէր զար և ֆիղան [1]) ի մէջ գիշերին։
Այգի՛, ընդ քեզ ասեմ, տո՛ւր ինձ պատասխան.
Ընդէ՞ր ոչ պահեցեր զվարդն իմ պատուական,
Որ էր ամեն ծաղկանց սալվար ու սուլթան,
Գունովն գեղեցիկ, հոտ անմահութեան։
Փակէ՛ քո ամուր պատն, դառնաս ետերակ,
Զորնա ճիւղն և տերևն ծառերուդ շիտակ,
Ամեն ոտն խաղայ ի քեզ համարձակ,
Վերնայ բոյսն և բանջարն 'ւ ամեն կանաչ տակ.
Ակունք յորդախաղաց, մի՛ գնայք յառաջ.
Ծառեր, թօթափեցէք զտերև ձեր կանաչ.
Խոսիմ պարզ և խստակ 'ւ ասեմ անամաչ,
Զի տարան ի յինէն զսիրելին իմ քաջ։
Զիմ վարդն յինէն տարան 'ւ արին զիս շիւար,
Առին զլոյս աչացս, տիրեց ինձ խաւար.
Զտիւ զգիշեր ողբամ անդադար,
Դարձեր եմ մաղասկաթ և չունիմ զրար [2])։

Լինի՞ թէ այգեզործն արար զայս ընդ իս.
Տարաւ զվարդն յինէն, ցաւեցոյց զհոգիս,
Այլ գնա ոչ տեսանեմ, զի՞նչ լինիմ գերիս,
Փոխան ուրախութեան ողբամ ասեմ վարդիս։
Վախեմ հողմն սաստիկ եկաւ ահագին,
Վասն այն թառամեցաւ տերևն վարդին.

---

[1]) Սուգ և շիւան։
[2]) Գլխաւոր։

Եւ կամ խորշականոր տապն արևին
Ընար քարշամեցոյց գգեղն վարդին։
Կարծեմ, եթէ ծաղկունքն արին հետ ինձ քէն,
Տարեալ հեռացուցին զվարդն յինէն.
Եւ կամ կարկուտ եկաւ սատրկ ի յամպէն,
Ընար գնա անոգարմ, կարեաց ի թփէն։

Մաղկունքն ասին ասեն նորա միտքան,
Եթէ բնաւ չունիմք ի վարդէն կուսման.
Մեզմէ քեզ թէսէլի, ոչ հաղարդաման,
Եկ մա նոգան բրոֆթ արոր ու փինման [1]։

Գնաց պիւլբիւլն առ թռչունքն և ենարց
զվարդն ի նոցանէ։

Պիւլբիւլն վերացաւ ի յոգին թեով,
Ասաց թէ հարցանեմ թռչնոցն սրբով.
Եթէ գիտեն նորա, յայտնեն ինձ փութով,
Թէ չէ հանեմ յաշաց արտասուք քան գծով։

Թռչունք, այսօր գիտէք, թէ ինչ գործեցաւ.
Զի վարդն վայելուչ յայգոյն վերացաւ.
Զգիտէք, թէ ուր գնաց կամ ով գողացաւ,
Մինթէ տեսեր էք դուք, լսեր էք զհամբաւն։

Ասեն թէ Արարիչ Տէրն գիտակ է,
Ամեն ծածուկ սրտի նա տեսանող է.
Գնա, շրջիր, այլ տեղ գնա որոնէ,
Զքո վարդն չենք տեսեր, Ասուած վկայ է։

Գլպուլը գառնացաւ, ասաց՝ զինչ լինիմ.
Գիշերն մինչի լուս ես մոաք տանջիմ.
Վախեմ թ՝ առանց վարդին յանկարծ մեռանիմ,
Կարօտով բաժանեալ ի հոգ իջանիմ։
Թէ զարարածս ամեն վարդին փոխան տան.
Նա ինձ անարդ թէ՝ ոչինչ անպիտան
Կամ գաք երգեցողաց երաժշտական
Գաղցրիկ եղանակեն, ինձ գուժ է և գան։
Ո՞ւր տարան գրեզ յինէն կամ ուր թագուցին.
Զիմբրդ մոռանամ ես զէրն քոյին։
Ցոցեցաւ սիրտս ու լերդս կսկծագին.
Մաղկունքն հաւատար այսօր թառամին։
Իմ կեանքս երազ՝ ես յերիսմանի,

---

[1]) Մեզնից յանկարծ հեռացաւ։

Եւ լոյս արեգակն ինձ խաւար թուի.
Յաւար և դառնութեամբ աւուրքս անցուցի,
Որ և ի քիւ կենաց իմ ոչ համարի.
Վարդէն բաժանեցայ ոգորմ ու լալի,
Եւ բան մարդարէին առ իս կատարի,
Քան զհաւատացեալն իմ յանուգտի,
Եղէ ես որպէս բուն ի յաւերակի.

Գնաց այգեգործն, խուսեցաւ ընդ պլպուլն և աւաց.
Եկեալ այգեգործին, մխիթարեաց զնա.
Ասաց. Մի լար, պլպուլ, քո վարդն կուգայ.
Եկել է մանուշակն վարդին փոխարէ [1])
Քուրա խաղաղ ամառ՝ սէրամ ու տուա [2]).
Խակոյն ուրախացեալ, և օրհնեաց զնա.
Խաղաղութեամբ կենաս յաշխարհս վերայ.
Պարեսպն նորոգի, 'ւ ի մէջն բրդայ,
Ամէն արմատք և ճիւղքն գալարանան,
Ամենուն շաղն ի յանգէն և պայծառանան,
Շարժին քաղցրիկ հոգմով, վայելուչ ճաճան
Եւ զհոտն տարածեն ի քիմս մարդկան.

Ապա գրեաց թուղթ պլպուլն առ վարդն, և վարդն ժողովեաց ծաղկունքն և նա ընթեռնուլ զնա առաջին ամենեցուն, որ ունէր օրինակ զայս.

Առեալ տարան զնամակն ի դուռն վարդին,
Զհաղրէվարդն տիւռն կարդացող.
Կանգնաւ վերայ ոտիցն և թուղթն ի յափին,
Ընթերցաւ բարձրաձայն ի լուր ամենին.
Եւ քեզ ողջոյն գրեմ, սրտով սիրելի,
Եւ հարցանեմ զանձնէդ, ով երանելի.
Յուսամ ապենիաց Աստուծն ամենի,
Որ անարատ մարմնով ես դու կենդանի.
Զօրն բազկատարած կամ ի յաղօթի,
Մնդրեմ ի յԱստուծոյ՝ քո կեանքն յերկարի.
Ծաղկանցն հաւատար գլուխն դու ես,
Որպէս գարքայն և տէր ամենուն տիրես,
Գունովդ վայելուչ, հոտովդ անուշ ես,
Ամէն առաւօտ քան զարև փայլես.
Երանի այն պահուն, որ տեսանեմ զքեզ,
Զի դու ես բնութեամբ անարատ և հեզ,

---

[1]) Յառաջընթաց.
[2]) Քեզ լուր եկաւ՝ ողջոյն և օրհնութիւն.
[3]) Ասպան.

Ոնարհաբար հնուստ երկրպագեմ քեզ,
Զգարձն քո խնդրեմք, քաղցրացիր ընդ մեզ։
Թէ զիմ նեաստութիւնս հարցանես դուն,
Զունիմ խելք ու փառաբ և ոչ իմաստութիւն,
Զառնում տուբ և գաղաբ և ոչ լինեմ բուն,
Նա գարամ թաղաթ, նա էք մսխալ խուն[1]),
Զի առանց քո տեսուզ իմ ես երերուն,
Գիշերն քուն չը գայ, այլ կենամ արթուն,
Նեղեալ և փղձկիմ, երբ լինի գարուն։
Հալեբ եմ և մաշեր ի քո կարօտուն,
Սատկասատոյց ձմեռն էանց, անցուցի,
Շատ ցաւ և շատ ցնոր դէմ քեզ բաշեցի,
Զիս նախատէին 'ւ ասէին՝ գերի,
Եթէ վարդն բնաւ հետ քեզ սէր չունի։

Լսեց վարդն զպատգամ պլպուլին, դարձոյց առ նա զպատասխանին.

Վարդն պատասխանի նորա թղթոյն տայ.
Ասաց. բազում ծաղկունք առաքեմ առ նա.
Ծաղկեն զլերունքդ ու զդաշտ, ու զամեն սարայ,
Ի հոն ուրախութեամբ պլպուլն կենայ։
Ինձ գալու ատեն այժմ անպատեհ է.
Պլպուլն սակաւիկ մի թող համբերէ.
Թէ կատարեալ իւր սէրն ի հետ ինձ է,
Ասացէք, թէ ի դրախտն գնա որոնէ։

Գնացին և տարան զնամակն առ զպլպուլն. և նա բացեալ զբերանն ուրախութեամբ և ասէ.

Ուրախացաւ պլպուլն ընդ ասել բանին.
Ասաց թէ աւետիք ինձ այսօր բերին.
Զի վարդն վայելուչ գայ այլուի յայգին,
Զի արարած ամեն կարմիր վարդին գին։
Երբոր արևն ի խոյն եկեալ ժամանեաց,
Ամպն ի վերուստ ցօղով յանկարծ որոտաց.
Բուսան ծաղկունք յերկրի հազարք հազարաց.
Վարդն չէր ի միջի, պլպուլն որոնեաց։
Յետոյ տեսաւ կանաչ գտերեն վարդին,
Այլ պատուական պայծառ որպէս գառաջին,
Վարդն էր վարագուրով ի մէջ գահոյին,
Ծաղկունքն հաւասար երկրպագեցին։

---

[1]) Կարողութիւն չունեմ, ոչ էլ մի մսխալ արիւն։

Պլպուլն զայն տեսաւ, ասաց գոհութիւն,
Ցամենայն բերանոյ օրհնաբանութիւն,
Թագաւորին երկնից փառաբանութիւն,
Տեսայ աչօք զվարդն ի մէջ թփերուն։
Յիմար Ադթամարցի, զքեզ ժողովէ,
Զի սէր այս աշխարհիս հաւատաւոր փուշ է.
Սակաւ խնդալ կուտայ, յետ դառն և դուժէ.
Ի՞նչ է բո խնդալդ, երբ վերջն սուգ է։

ԱՐԻ ԵԼ ԱՅԳԻՈՅՍ

Ցամեն առաւօտ և լոյս,
Պիւլպիւլն էր նստել յայգուոյս.
Բաղցրիկ ձայնէր վրայ վարդոյս.
Կասեն, թ'արեկ ել այգուոյս։

Մարդիկք Ադամայ զարմոյս,
Ականջ դրէք իմ խրատոյս,
Դէմքն է ծաղկեր իմ այգուոյս,
Այս իմ Նորատունկ այգուոյս։

Բար եմ բերեր գետերոյս,
Փուշ եմ բերեր սարերոյս,
Ցանկ եմ շիներ այս այգուոյս.
Կասեն, թ'արեկ ել այգուոյս։

Զեմ ելներ ես այս այգուոյս,
Այս իմ Նորատունկ այգուոյս,
Ցայս ուրախարար տեղուոյս
Եւ այս Նորաշէն տներոյս։

Պրքայ եմ շիներ յայգուոյս,
Յերկնից ցօղն է մէջ պրքոյս,
Բաղցր և բարեհամ ջրոյս,
Բոլորն է ծաղկունք և բոյս։

Դեռ չեմ տեսեր կեանք և լոյս,
Կասեն, թէ արեկ ել այգուոյս.
Ի՞նչպէս ելնեմ ես այգուոյս,
Այս իմ Նորաշէն տներոյս։

Տունկ եմ տնկեր այս այգուոյս,
Սպիտակ ու կարմիր վարդոյս,
Կանաչ բարունակ որթոյս,
Ողորմ եմ նստեր յայգուոյս։

Դեռ չեմ կերեր այս պտղոյս,
Կասեն, թ'արեկ ել այգուոյս.
Ինչպէս ելնեմ ես այգուոյս,
Այս իմ Նորաշէն տներուս։

Մէջն է ծաղկեր այս այգուոյս
Կարմիր ու սպիտակ վարդոյս.
Դեռ հոտ չեմ առեր վարդոյս,
Կասեն, թ'արեկ ել այգուոյս։

Զեմ ելներ ես այս այգուոյս.
Այս իմ Նորատունկ այգուոյս.
Այս ուրախարար տեղուոյս
Եւ այս Նորաշէն տներոյս։

Հնձան եմ շիներ այգուոյս,
Կարաս եմ շիներ գինուոյս,
Դեռ չեմ խմեր յայս գինուոյս.
Կասեն թ'արեկ ել այգուոյս։

Բաղեմ փունջ մի վարդ այգուոյս,
Դնեմ մէջ կարսի գինուոյս.
Ուրախանամ այս հոտոյս,
Կասեն, թ'արեկ ել այգուոյս։

Ղումբին է նստեր այգուոյս,
Գարուն է հասեր ծաղկոյս.
Պլպլուկն է բացեր վարդոյս,
Պիտէր տեսնեմ կեանք և լոյս։

Վարդն է խռով պիւլպիւլոյս,
Զայնս է կտրեր ի յանձնոյս,
Հոգիս ելեր է մարմնոյս,
Աւաղ ասացէք զգերուոյս։

Եկն ի խնդիր այս վարդոյս,
Հրեշտակն է կանգներ հոգւոյս,
Յահէն կապեցաւ լեզուս,
Եհան զհոգիս ի մարմնոյս։

Տարան ի յեզեր հողոյս,
Դրին զիս ի մէջ գրոյս,
Ահա որ եկայ յայգւոյս,
Այս իմ նորաշէն տներոյս։

Ծաղկունքն վերացան յայգւոյս,
Վարդն թափաւ իմ այգւոյս,
Ցանկն քակեցաւ յայգւոյս,
Ահա որ եկայ յայգւոյս։

ՏԱՂ ՎԱՍՆ ՎԱՐԴԻ

Գարունն է բացւեր վարդն ի պաղչանին,
Քաղցր եղանակեն Պիւլպիւլն ու Ղումրին.
Սիրով են վառեալ ի կարմիր թփին,
Կանաչ ու կարմիր տերև կու հադնին։

Դինով եմ գինով, հարբեր եմ սիրով.
Դինով եմ գինով ցերեկս արևով,
Դինով եմ գինով գիշերս երազով։

Է շէմս ու դամէր*), ասող առաւօտին,
Պայծառ արուսեակըն լուսով ի լին,
Լալ ակն ու գոհար ես դու մեծագին,
Ծիրանի ծաղիկ գոյն մանուշակին։

Դինով եմ գինով, հարբեր եմ սիրով.
Դինով եմ գինով ցերեկս արևով,
Դինով եմ գինով գիշերս երազով։

Դու նշդարենի ծաղիկ շուշանին,
Դու կանաչ պրքայ ի մէջ շուկային.
Քաղաքն Խաթայ Զինուսաչինին,
Խորասան բոլոր չէ քու տեսուգ գին։

Դինով եմ գինով, հարբեր եմ սիրով,
Դինով եմ գինով ցերեկս արևով.
Դինով եմ գինով գիշերս երազով։

Մոմեղէն մատունք հոտ պալասանին,
Դու նուշ ու շաքար, տուփ անուշ խնկին,
Ծաղկեալ բուրաստան և ցող անձրևին,
Դու կարմիր խնձոր ի մէջ տերևին։

---

*) Արև և լուսին.

Գինով եմ գինով, հարբեր եմ սիրով,
Գինով եմ գինով ցերեկս արևով.
Գինով եմ գինով գիշերս երազով։

Տարազ կարմրացեալ, կայծ կարկէհանին,
Սարդիոն շինեալ, լալ պատաշխանին,
Պայծառ մարգարիտ յատակըս ծովին,
Որ գայ ի ցաճաք ձեռամբ լուզորդին։

Գինով եմ գինով, հարբեր եմ սիրով,
Գինով եմ գինով ցերեկս արևով.
Գինով եմ գինով գիշերս երազով։

Նուէնուֆար ծաղիկ գոյն ըռահանին,
Մուրտ ու պալասան փառօր շուշանին,
Համասփիւռ ծաղիկ ես բուրաստանին,
Բրաբիոն պայծառ ի յատին դրախտին։

Գինով եմ գինով, հարբեր եմ սիրով,
Գինով եմ գինով ցերեկս արևով.
Գինով եմ գինով գիշերս երազով։

Զոհալ, մուշքարի, աստղ առաւօտին,
Զոհրա, լուսաբեր, դամպար և լուսին,
Պայծառ արեգակն յերկնից կամարին,
Թուխ ամպի նման ցող ես անձրևին։

Գինով եմ գինով, հարբեր եմ սիրով,
Գինով եմ գինով ցերեկս արևով.
Գինով եմ գինով գիշերս երազով։

Ծառ կանաչ տերև դու պտղով ի լին,
Բողբոջեալ ծաղկով ոստ արմաւենին.
Ծաղկեալ բուրաստան հոտով շուշանի,
Դու վարդ, մանուշակ, ծով ես ծիրանի։

Գինով եմ գինով, հարբեր եմ սիրով,
Գինով եմ գինով ցերեկս արևով.
Գինով եմ գինով գիշերս երազով։

Կանաչ բուրաստան, ծաղկեալ նշենի,
Դու մուշկ ու ամբէր, բուրումն ամենի.
Ծառ նարնջենի, ծաղիկ ծովային,
Դու սելվի, չինար, տուն պալասանին։

Գինով եմ գինով, հարբեր եմ սիրով,

Գինով եմ գինով ցերեկս արևով,
Գինով եմ գինով գիշերս երազով։

Հանապազորեան ծարաւիկ անքնանումիկ,
Հոգէր ի ապէտ, ցմրիչ ասմնիկ,
Մէջս կանգուն կենալս, քան գինիցիկ,
Ջնոգ քո սիրուն սրտես արժանիկ։

Գինով եմ գինով, հարբեր եմ սիրով,
Գինով եմ գինով ցերեկս արևով,
Գինով եմ գինով գիշերս երազով։

Գաղջրանման ճաշակ, բաժակ բերկրալի,
Տարարերգի շէնքէր, ծառ արմատնիկ,
Հոգիդէն պատէր, քան գինիր վարդի,
Ջնոգ քո սիրուն արա արժանիկ։

Գինով եմ գինով, հարբեր եմ սիրով,
Գինով եմ գինով ցերեկս արևով,
Գինով եմ գինով գիշերս երազով։

Գեղեցիկ պատկեր և տիպ հրաշալի,
Լոյս ծագեալ ի քեզ ոման հրեշտակի,
Բերանդ է խորան և տուփ խնկալի,
Սգիտակ առամունքն ի շար մարգարտի։

Գինով եմ գինով, հարբեր եմ սիրով,
Գինով եմ գինով ցերեկս արևով.
Գինով եմ գինով գիշերս երազով։

Ի յամեն գինոց բղխէ քեզ բարին
Եւ քեզ հովանի նշան սուրբ խաչին.
Գահապան լիցի աչն հայրենին,
Եւ փրկէ զքեզ ի շար վտանգի։

Գինով եմ գինով, հարբել եմ սիրով,
Գինով եմ գինով ցերեկս արևով,
Գինով եմ գինով գիշերս երազով։

ԵՐԵՀՈՊԵՑ ՔՈԻՉԵԿ

(XV)

ՍԻՐՈՅ ԵՐԳԵՐ

Ան առաւօտուն լուսուն ձայնն գայ գարնան ձագերուն,
Ա՛յ իմ փոքրիկ ձագեր, ձայն անուշ է քանց ամենուն.
Զաղ մի կայ՝ պուլպուլ կասին, զինչ կասէ՝ ամէնն սիրոյ,
Զայնիկն ակնջովս ընկաւ, չի դադրեր աչերս ի լալու։

Ա՛յ իմ նուռ ու նուշ բերան, նուռ ու նուշ ծաղիկ 'ւ քուսան,
Դու հաղրեվարդի նման, մարքն չէ բերել քեզ նման.
Պակունքդ է լիմոն նման, կու բանաս դու մարդու մատան.
Լեզուդ է պլպուլ նման, կու գովէ զինչ գարնան նման։

Հայ իմ փոքրիկ շամամ, քո ծոցուդ, ամ, երբ տիրանամ.
Քո ծոցդ է ի ծով նման, ծովն դեղ կասին ի ջերման.
Փոքրիկ մտերմիկ՝ լինամ ու մանում ի ծոցդ ու լողամ.
Ծովերուդ ալ ի դուրս ելնում՝ ունեցուդ շուքն քնանամ։

Կարօտ կարօտովդ էի, հարբաթովդ ի ժուռ կուգայի.
Արկած ինձի դէմս ելար՝ ես ատոր կուման չունէի.
Զինչ մէկ մ'որ ծարուած լինի 'ւ ինքն ի պաղ աղբիւր հանդիպի.
Դնէ զդնչիկն ու խմէ, որ սրտին թաւլուքն անցընի։

Աչերս երեսէս ի վար լօք գանգատ արաւ ի սրտիս,
«Երթաս սիրոյ տէր լինիս, զան հազար չարի ածեն զիս».
Սրտիկս աչերուս ասաց. «Կուրանամ թէ սուտ կու խօսիս,
Ինչ որ աչք չի հաւնէր, չի խարէր հազար լեզու զիս»։

Ջուր, գըլգըլալէն կուգաս, գետի թոր ակնէն կուգաս,
Երթաս այդ ձորերդ ի վայր, ձայնդ կայ ու դուն չերևաս.
Գիտեմ՝ սիրու տէր ես դուն, ի օտար աշխարհ կու գնաս,
Երթաս ու սիրուդ հասնիս, գիշերն ի քուն չի լինաս։

Գիշերս ես ի քուն էի՝ իմ սրտիս ականջն էր ի բաց,
Սիրու հաւն ի ձայն էած, լօք լսեց սրտիկս ու դողաց.

Դու քունէր՝ իմ ծոցին յենգուն ան հուրին բերանն էր գրած,
Մ՚ալ իմ սրտին գրանգոտին ան հուլուն հասկցուցած։

Ի՞նչ անեմ կամ ի՞նչ չինեմ, ինքը նոյին որ գուն չերեխս,
Մրուխս ալ ինց տամ համբերը, յիրը լենգուվդ ի յիս չի խոսիս։
Ծուլամ նու՝ կուտաս ծուղտագ՝ «Մոնդա տրա, սիրուս հասնիս»։
Մեռ տարգս, սեմ, քանի՞ անեմ, ինքիցս ճիկտրս ի փորիս։

Մ՚ուր էիր, ուսկիցդ ելար, անծանօթ, գիս սիրեցիր,
Ելրանի՞ ի քէնդիրդ ունիր, ի ծոցիդ ի վար թափեցիր։
Ֆո սէրդ ալ ոսկի տրիր, իմ սրտիս քուրան հալեցիր,
Գարձար գան հալիտոյ տրիր՝ և իմ սրտիս ականջն անցուցիր։

Մուրտի ու ճրագ դրիր, գիս ի քո լուսդ ձէնեցիր,
Ջնդ ի քո ծովուդ ելի, լոր գարկիր ճրագն անցուցիր։
Ա՞ռ էր քո ասէն ուսէան, սեյ հոգեկ, որ ինձ կուտայիր,
Ճրագդ, սեմ, ալ ի՞նչ վառած՝ երբ բոգկիս ուժն հատուցիր։

Քանի՞ ու քանի կասեմ՝ մի կենար գուն խամ լաքեբով,
Գնա ապրշում հոգիր, որ նախշած է ոսկի թելով։
Ուրենկ լուկ առջևս անցիր, լոր քալէ՝ քալդ համբով,
Ցոյնեմամ ինձ ապուր թուխս, քան զուսի սրբէն խաղոգով։

Գարմիր ու ոպիտակ երես, սեմ, քանի՞ գիմ սիրաս աչքրես,
Գերթաս ի թուխ ամպն ի ներս, ամպու գոլ կանես գիս կէրես։
Գոնկիկդ ալ արձակ անես ու ճերմակ ծոցդ ցուցանես,
Ասկի գիս մահրում հանես, թող գփոզուն ձայնն չի լսես։

Գարմիր ու կանանչ հագնիս, գէդ նուան հատիդ նմանիս,
Այժմ ինձ ապուր թուխս, երբ ի ձեր գուն կանգնիս։
Գուն ալ կիսաբաց անես, ցած հայիս մանար ծիծաղիս,
Աչօքդ ունովդ անես, գիմ տխմար խելքս կու տանիս։

Աղա՛ր, իմ հազար ապուր, դրախտին բեհեշտի խնծոր,
Շարբէ եղէգին մէջէն ես քաշած, քանց գլատիգդ ապուր,
Ջուներդ ես ապեղ արել, ու գաշերդ ուզօշ նեստուր։
Ատով խոցեցիր գու գիս, ես դարիպ եմ, երթամ ի ընգար։

Իմ հին սէր՝ և առջի յորդոր, իմ արև և իմ ասանուր,
Իմ մանկութենէ սիրած, մի կենար հետ ինձ նենգաւոր։
Երթամ թուխ ու լուրջ հանգնիմ՝ ի սարերդ ընկնիմ սևաւոր,
Ձինչ ես եմ՝ թող գու լինաս, սիրող սև ի բազդէդ մոլոր։

Ես երկու եար կու սիրեմ, չեմ գիտեր թէ հաւնիմ որուն,
Մէկն է ի լուսին նման, մէկ նման է բարկ արևուն։

Լուսին, ես քեզ չեմ սիրել, դու սոսկալ ես խոռ կենալու,
Արև, զքեզ կու սիրեմ, որ ծագիս հետ լուսանալուն։

Թուխ աչք ու ունքեր ունիս, լայն հակաս ու կարմիր երես,
Այդ ճերմակդ որ դուն ունիս, դշամամ ծիծերդ որ ի ներս,
Մեռնիս այլ անդին երթաս՝ դայդ ճերմակ ծոցիկդ ինչ առնես.
Զամէն որդերն ուտեն, դու էր դիս մահրուտ կու պահես։

Գիշեր ու ցերեկ կու լամ, անապ իմ եարն կու լէ.
Անչափ ողորմուկ կուլամ, աչերուս արիւն կու կաթէ.
Ա՜յ, իմ հեռացած եարէն ով ինձի խապար մի բերէ,
Հաշէ դիմ եկած հոգին զարդուցեր ։ ինձի կու բերէ։

Ա՜յ սարեր, ձոր ձորեր, գիտացէք, եար իմ կորուսել,
Ա՜յ քարեր, ձոր ի՛ձեր, անապ ի ձեզ չէ՞ եկել,
Ա՜յ քարէ կարմրընգնի, ի ձեզ չէ՞ անցել,
Զիս ի քուն ի՛ զարեր, եկեր գնացեր։

Երեսդ է լուսին նման ու գիշերդ ի զատեր գիշեր.
Ունքեր բեհեշտի խնձոր ։ ։ ի ծոմուն ուռած քեզ աչեր.
Ուներ կեռումեռ ունիս, թուխ աչեր, թարթիչդ է նետեր,
Բերանդ է լալէ գիրգան՝ մէջն ի լիր է մարգարիտներ։

Ա՜յ իմ ադբերանց արիւն, յաղուռաժ քարն կենաս դուն,
Աչերդ ուռնայի նման, ոչ ի քուն ես և ոչ արթուն.
Վախեմ թէ զքեզ որսան ու գրկեն գիս ի քո տեսուն,
Առանց քեզ ես ինց ապրիմ կամ իմ աչերս տանի քուն։

Սիրեմ զայդ սիրուն երեսդ, որ լուսին ի մոտն է գերի,
Պաղնեմ զայդ բարկուկ պուկունքդ, որ շէքէրն ի մոտն է լեղի.
Թուխ աչք ու կամար ունքերդ, քան գծանքն կու զարնէ ալի,
Բերնիկդ է ի շիշ նման, որ վարդին ջրոնքն է լի։

Հառչեմ նա՝ կուգայ արիւն ադուրին իր շատ արեուն,
Հառաչս ի յերկինք ելել՝ երկնուց ի վայր կուգար ձիւն.
Ամոով ձիւն ով է տեսել, որ կուգայ ի մանուկ մարդուն,
Զի գիտեմ թէ ինձ մէն կուգայ, թէ կուգայ հաւատաք ամէնուն։

Աչկունք, ծրարեմ զքեզ կրակով, որ երթաս էրիս,
Լեզու, ալ կտրեմ զքեզ սուր դանակով, որ ալ չի խօսիս.
Սրտիկս, ալ դանակ ածեմ, արիւնին մէջն թաղլտիս.
— Երբ սապռ ու համբեր չունիս, սիրոյ ատէր ինչու կու լինիս։

Իմ եար բաձրագնայ լուսին, յուր կերթաս գիշերդ անհուն,
Շատ յերդիք ի վար հայիս, կու տեսնես շատ կիւզէլ ի քուն.

Եւ գկոնկիկս ալ արձակ արեր, լոյս գիպեր ի մէջ ծծերուն,
Շառաւիղ յերկինս տուեր, խաւարեր լոյսն աստղերուն։

Երնէկ ես անոր կուտամ, որ առեր իւր եարն է փախեր,
Ոնց որ գկամուրջն անցեր, ջուրն էլեր գկամուրջն է տարեր,
Ցնիկ, եղեմնիկ եկեր գոտնուն հետքն է կորուսեր,
Ուռեր ի պաղչան մտեր, ցորեկով գդնչիկն է պագեր։

Ա՛մ, երեսդ էր է դեղնել 'ւ երեսիդ գունն գնացեր,
Գէմ քո մանչն չէ մնուել կամ օտար երկիր գնացեր,
Թէ ես լամ նա՝ հազ ունիմ, որ գիտեմ ինչ եմ կորուսել.
Գորել է իմ հոգուս հոգին, 'ւ անհոգիկ ես եմ մնացել։

Քո ծոցդ է ճերմակ տաճար, քո ծծերդ է կանթեղ ի վառ,
Երթամ ես ժամկոչ ըլլամ, գամ լինիմ տաճարիդ լուսարար.
— Գնա՛, ծո՛ տղա տխմար, չի վայլես տաճարիս լուսարար,
Երթաս դուն խաղով լինաս ու թողուս տաճարս ի խաւար։

Քանի մարն գիս բերեր, քահանի չեմ խոստովաներ,
Ուրտեղ քահանայ տեսեր նա՝ ծռեր ճամփուս ու ելեր,
Ուրտեղ մէկ աղուր տեսել, գիրկ ու ծոց 'ւ ի դէմ գնացեր,
Ծոցիկն եմ ժամտուն արել, ծծերուն եմ խոստովաներ։

Հիւանդ եմ ի քո սիրուդ, ա՛ռ խնձոր արեկ գիս տես,
Արեկ նիստ ի բարձիս վեր, ու ձեռքդ տար ու գիմ սիրտն տես.
Զիմ ցաւուն դեղն դու գիտես, ինձ օտար հեքիմ չի բերես,
Թէ նեղ է նա՝ դեղ արա, թէ չէ՝ լից գնոր սէրդ ալ ի ներս։

Գիշեր, դու յերկան կեցիր, թէ կարես՝ տարեկ մի եղիր,
Իմ եարն ինձի հետ եկեր, գէմ հազար տարու՝ թէ գիտես.
Առաւօտ, դու ի զատ կեցիր, որ զմեր խաղն կաւերես,
Գաս գլոյսն ի վրայ բերես, գիս իմ եարէս բաժանես։

Ով որ ճերմակ ծոց ունի, թող կապուտ շապիկ հագնի,
Կոճակն այլ արձակ թողու, ով տեսնու՝ սրտիկն արուսի.
Երթամ աղաչեմ զԱստուած՝ լեղակին հունտն հատնի,
Ո՛չ նա այլ կապոյտ հագնի, ոչ մանկան սիրտն արուսի։

Սէրն երբ ի յաշխարհս եկաւ, եկաւ իմ սիրտս թառեցաւ,
Հապա իմ սրտէս ի դուրս՝ յերկրէ յերկիր թափեցաւ.
Եկաւ ի գլուխս ելաւ, և յըղեղս ելաւ թառեցաւ,
Աչիցս արտասունք ուղեց նա, արիւն ի վար վազեցաւ։

Այս առաւօտուս լուսուն գայր ջրէն ձայնիկն զըղզըղուն,
Այն իմ պէօֆայ եարին ձայն անուշ էր, քան գամենուն.

Բարակ սիրոյ տէր մարդուն՝ ինքն ու իր եարն մէն ի քուն,
Պաղ տան ու պաղ առնուն, գոլայն էն մէկալ գիշերուն։

Այդ ամ է երդիքս եկել, որ օտար հողն կու սարայ,
Թէ ինն ես նէ՝ վար արի, թէ օտար ծաղիկ նա՝ գնա։
— Մ՚չ քուէն եմ ի վար գալ, ոչ լերան ծաղիկ՝ գնալու.
Եկեր եմ սիրուդ առեր, ոչ գալու եմ, ոչ գնալու։

Ես աչք ու դու լուս, հոգի, առանց լուս՝ աչքն խաւարի,
Ես ձուկ ու դու ջուր, հոգի, առանց ջուր՝ ձուկն մեռանի.
Երբ ձուկն ի ջրէն հանեն՝ ջուր մրն ալ ձգեն, նա ապրի.
Երբ գիս ի քենէ զատեն՝ քանց մեռնիլ այլ ճար չի լինի։

Իմ եարս, դու յերդիկն ի բուն, ծոցդ լոյս տայր աստղներուն.
Կամ ան գիս ծոցդ ի քուն, կամ ալէսթուր տուր երթամ ի տուն.
— Մ՚չ կառնում ի ծոցս ի քուն, ոչ ալէսթուր տամ երթաս ի տուն.
Հանցեր երերուն պահեմ, մինչ որ գայ լոյսն առաւօտուն։

Այս առտուրիս վերայ, դու մառնի, ես ակն ի վերայ,
Դար որ պաղ աղբիւր մի կայ, դու կանանչ, ես ցօղն ի վերայ.
Ինձոր ես ծառին ճղին, ես կանաչ թփիկ ի վերայ,
Վախեմ թէ աշունն գայ, գրեպ քաղեն, թուխս չորանայ։

Ես մեռնիմ ի քո վերայ, դու գրո ծամդ կարես,
Կարես մաշալա վառես, ձեռքդ առնուս ու գիս փնտռես,
Կամ ի հողմերօրս անցանես, հետ ինուս գաչերդ ու թափես,
Գրկիկ մի վզիս ածես, գապառաժ վէմդ համբուրես։

Ինձորն ի ծառին ճղին, ի ճղին ներքև տերևին,
Հնցկուն իմ եարին ծծերն ի ծոցին ներքև շրմաթին.
Արեգակն ի ջուրն ինչել լուսնեկան, ու կուժն ի յուսին,
Նա քալէր ճոճկտար մէջին, լօք եկնէր շամանն ի ծոցին։

Ա՜յ իմ նշենի ծաղիկ, գեղնեցար ու դարձար ի նուշ,
Բերանդ է փոքրիկ անուշ, պուկներդ է ամպրաւ ու նուշ.
Այն օրն ի մօրէդ ծնար, դուն լայիր 'ւ ամէն խնդային.
Հանց մաքուր եկ ի յաշխարհէս, թ՚երկիր լայ նա՝ դու ծիծաղիս։

Այս ծովական գիշերս ի բուն՝ ես երկու շրջան մանեցի.
Խօշ եարս այլ ի միտս ընկաւ՝ թէզ մ՚ելայ ղջանրաս վերուցի.
Փարշիկ մ՚ալ անուշ գինի առի, խօշ եարիս դուռն գնացի.
«Խօշ եար, ամ, դդուռն բաց, ձիւն եկեր՝ ոտիս կու մրսի»։

Ամուր եմ քարիդ նման, որ մարճիկն ի յիս չի բանի.
Բարձր եմ թուխ ամպիդ նման, որ ոչ ով յիս չի հասնի.

Ոչ ոչ ոչնչի չինի ու չարն ի վերայ գալինի,
Քաշողն բաշխողի չինի, հապա թէ իմ սիրուն հասնի։

Պիւլպիւլն ի յէգին մտաւ, ի վերայ վարդին թառեցաւ,
Երաց գիւր բարի բերան, և ասաց մինչ որ լուսացաւ.
Վարդն ալ իր փշի միջին, սուտ ի քուն էր՝ զայն խմացաւ,
Ոչ ասաց գիւր կանանչ շապիկն, գկարմիր մի շուտով հագաւ։

Էկին ու բերին խապար պիւլպիւլին՝ թէ վարդն մեռաւ,
Պիւլպիւլն ի վարդին սիրուն սև ներկեց գշապիկն ու հագաւ.
Շուտով մի բերին խապար պիւլպիւլին՝ թէ վարդն եկաւ,
Պատռեց գիւր սևուկ շապիկն, գկարմիր մի շուտով հագաւ։

Պիւլպիւլն ի ծովին միջին ի օձուն բերանն ու կասէր.
— Թող ես եմ ի յայս հալիս, թող իմ վարդն գէշ չը քաշէ։
Վարդն ալ ի փշի միջին սուտ քուն էր՝ զայն կու լսէր,
Լուկ իւր շարեզէն շապիկն ի չորեք դիմաց կու խզտէր։

Անցայ ու տեսայ իմ եարն ի վերայ խալուն նստած,
Ասի՝ «կու սիրեմ զքեզ». նա ալ իր պռունկն իխած.
— Կարիմ, կու սիրե՞ս դու զիս, մի աներ շատ խալխի իմաց,
Թէ չէ նէ կելնես գլխուդ, արևուդ ու ալ շատ իրաց։

Փոդոցովդ ի վար կուգի ծուռ ու մուռ հազար ասխասով,
Իմ եարս ինձ դէմս ելաւ՝ լօք բարով երեսս հէճապով.
Գիրկ ածի ու պինդ պագի գիր աչերն ի խիստ կարօտով.
Կերթար ու կասէր լալով թէ՝ «ի խաղք եղաք ցորեկով»։

Վաղուընէ քնից վեր ելայ, թէ երթամ յիմ եարն ի բարև,
Խօշ եարս ալ ի դէմս ելաւ, իւր երեսն էր վարդ ու տերև.
Վարդն ալ խօշ լեզէթ ունի՝ վաղուէնէքն երբ դպչի արև,
Հանէ գիւր կանանչ կապան, լուկ հագնի գկարմիրն ի վերև։

Մահալօքս ի վար կուգի նա՝ տեսայ մոմեր դատբուած,
Ի յայն մոմերուն տակն սիրոյ տէր մանուկ մ'էր պառկած.
Մոմն ալ գէմ հայրէն ասաց ողորմած ու սրտէն իլաց.
— Սէրն կտրիճն ունէր, կրակն իմ գլուխն է վառած։

Շիրին է լեզուդ անուշ, պլբուկներդ է արմաւ ու նուշ.
Բերանդ է փոքրիկ 'ւ անուշ, չարկմիդ աչքն հազար փուշ.
Իմ եարն ի յինէ գնաց, լեռ ու ձոր հաւասար հետն լաց,
Երկինք ու գետինք թնդաց, աստղունք մէկ մըն չը մնաց։

Մահալօքս ի վար կուգի նա՝ տեսի լաթեր լըւացած,
Ի յան լաթերուն մէջէն լըւացած շապիկ մ'էր փըռած.

Իր կուրծքն է զալէմ քաշած ու թեղնիքն է մատնեհարած.
Ատոր տէրն ի յիս պիտէր, զիս հազար դէկան տա գնաց։

Մահալօքս ի վար կուգի, իմ եարին շունն զիս ի խած,
Իմ եարն ի զոնէն ի դուրս չէիր՝ մ՚ուրու

Ես պռնչ ի գետէն ելուգամ, յոր ի քո տեսպ եմ կարօտել։
Իսկի էս էարնուս գիտնալ, թէ քանի ինձ ես պիտայել,
Երկարը գուն չեմ բերել ու ամօթուս աս հալն եմ ընկել։
Ղարսել եմ ու խօրք տաել նա՝ խոյեալ է քեզ թուցել,
Իմ վերայ գամ մի բռնել, քո սէրդ ինձ խելք ելրբ է թողել։

Ես ձագ ծիծեռնիկ պիտէի, գօրն գքո տուն մանուի,
Ես բարձր ճչտան չարտախպ ես ի հոն բուն մը շինէի.
Ոնց որ մուքն մթանայը, ցաժնայի ծոցդ մանուի,
Ոնց որ լուսն լուսանայը, բարձրանայի բունս մանուի.
Ես ապրշմէ խուշախ, գօրն գքո միջոց գիրկ ածէի,
Գամ քաղցը նուան գինի, գօրն գքո փարչդ պիտէի.
Ամնիր ու բերնիգ գնիր, ցաժնայի՝ գունչդ պագնէի,
Գամ ապրշմէ կոճակ, որ շլինցդ գիրկ ածէի։

Իմ եաբ, գրել եմ գրկել, ասա կարդա թէ ինչ է գրած,
Բոլոր գիրկ ու ծոց գրած, մէջըյմէջ պագեր կարօտած.
Ա՜յ իմ նոր սիրուն սիրած, նոր սիրուն սրտով հաւբնած,
Առած ու սիրով տարած 'ւ ի ծոցուն տէր մի է գրած.
Իր ծոցն է լուսով լցած և իր նման իսկի չէ ծնած,
Աշխարհս օրինակ առած 'ւ իր նման իսկի չէ գտած.
Իմ եաբ, գրել եմ գրկել, ասա կարդա, թէ ինչ կայ գրած,
Բարև եմ սիրով գրած ու տեսուն խիստ եմ կարօտած։

ԳԼԽԱՐ ՍԵՓԱՍՏՈՒԹԻՆ

(XVI)

ԾՈՎ ԱՉՔ

Ծով աչք, ամ քանի դայխս խոլորով,
Գաս դատխս, զաչերդ անեաս խնճերով.
Երբ որ գաս անցնիս, ճեմիս դազերով,
Տանիս զշուշչս ու խելքս և զհոգիս ճորով։

Ծով աչք, զէտ ճրագ ի յանց եկեալ եմ,
Քո սաստիկ սիրուդ հիւանդացեալ եմ,
Հէքիմ ու բժիշկ զքեզ լսեր եմ,
Քո գալդ ինձի մօտ խիստ կարօտեր եմ։

Ծով աչք, թէ սիրով դու զիս կու կամիս,
Կամ ուզես երթայ հասրաթն արտիս,
Առ ի քո թևին ներքևն պինդ պահէ զիս,
Մազովդ սրբէ զքրտունքն ճակտիս։

Լուսին, արեգակ առ քեզ եկեալ են,
Սիրով ի մազերդ ի վայր կախեալ են,
Աստեղք քո ճակատն բոլորեալ են,
Զէտ հարբան ի քո սիրուդ վառեալ են։

Երեսդ է պայծառ, ճակատդ է զէտ սաթ,
Ակռադ մարգարիտ, շրթունքդ է շարպաթ.
Տուր պաղ մ'երեսէդ, գէմ չէ ղիյամաթ,
Թէ չէ կու մեռնիմ, կու մնամ հասրաթ։

Երեսդ է կարմիր քան զիւայտ խնձոր,
Բերանդ է փոքրիկ, դնչիկդ է բոլոր,
Դերձան մազդ արեր քո վզիդ ոլոր,
Քո սէրդ արեր զիս շոլոր մոլոր։

Երգով վառի քան գկայծ կարմիր,
Ինձ քո ծառայիգ բիչ մի մնա կիցիր,
Ուռնում և պոգնում, գու ի սուս կիցիր,
Սրտով կու սիրում, գու գքեզ իմացիր։

Երգով է կարմիր քան գնոնենի,
Յունգերգ է կամար, այլ ի մուգալի.
Քո գէրգէգ բոներ սրտիկս ու կէրի,
Հարբած ու մէնլուն քան գհայտարի։

Ես խև եմ գարձեր ի քո շատ սիրուն,
Հալեր ու մաշեր ի քո կարօտուն.
Ինձ ճարակ մ'արա քո խաս արևուն,
Թէ չէ կու մեռնիմ, կրակ է քո հոգուն։

Բարակ նայելուդ այլ չեմ դիմանար,
Սիրաս կու ճեղքեմ, արիւնս քեզ հալալ.
Կամ կերթամ, կընկնեմ ես ծովերն ի վայր,
Ինձ ճարակ մ'արա քո հոգուն համար։

Կամ Եւա ես գու, կամ հարան Նոյի,
Կամ Եսթեր ես դու, և կամ Բերսարի.
Կամ Ոլոմպիա, Հռութ Նազելի,
Քեզ նման չկայ յազգս հոգածնի։

Քեզ նման չկայ ի յորդիս մարդկան,
Դու ծով ես պահրին, աչերդ է մէնտան.
Բոլորեալ լուսին, տեսդ արեգական,
Երբ գքեզ տեսնում, աչերս լոյս գան։

Հայ իմ անմման, խիստ անմման ես,
Ոտից մինչ ի գլուխդ հաւասար ես.
Զինչ որ կու հագնիս նէ, կու վայելես,
Կարօտ մի պահեր, քո ծառայն եմ ես։

Հասրաթ մի թողուր, քո ծառայն եմ ես,
Մահրում մի հաներ, քո գերին եմ ես.
Ինձ դեղիկ մ'արա, քո հիւանդն եմ ես,
Ծերիս ողորմեա, ով իմ լուսերես։

Լուսին քո ծծերդ երախտախաչեր,
Խունկ ու մոմ առեր քեզ ուխտ եմ եկեր.
Ձեռքս ի վեր տարեր, աղօթք եմ արեր,
Շնորհքդ է հասեր, ցաւս է փարատեր։

Քու անուշ լեզուդ ես խև եմ դարձեր,
Միտքս է մոլորեր, ու խելքս կորեր.
Իմ սէգ անելու քունս է հատեր.
Վախեմ թէ լեռներ ընկնեմ ու սարեր։

Դու ես նոնոֆար ծաղիկ ծովային,
Շուշան վայրենի, հոտ պալասանին.
Անգին մարգարիտ ի մէջ սատաֆին,
Բոլորեալ լուսին, ասող առաւօտին։

Աչերս է կարօտ ի քո շատ տեսուդ,
Սիրտս է տարեկուս՝ քովանց նստելուդ.
Մէկ ափդ երեսիդ գաղտուկ նայելուդ,
Ձլոյս երեսդ բաց, ողորմէ գերուդ։

Երբ զքեզ կու տեսնամ, սիրտս կու մաքի,
Անկրակ բռներ լերդիկս կէրի.
Շատ ոք ազատեր են զիւրեանց գերին.
Մէկիկ մի խօսէ, գերիդ ազատի։

Ի՞նչ խրատ կուտաս, ով հոգու հանող,
Լէր ինձ դատաւոր՝ ճարտար ու քննող.
Այլ չունիմ ճարակ 'ւ ոչ եմ համբերող,
Քո սէրդ է ածեր զիս երկաթի օղ։

Խրատ այլ մի կենար դու յինէ ի փախ,
Որ չի մեռնիմ գնամ, հառչես ւ՝ ասես՝ մնա.
Ես խիստ կու գիտեմ թ'ուատի ունես վախ,
Թող երթայ վառի քան զբարկ քացախ։

Զէտ զսիրամարգ կամկարգնաց ես,
Գունդգուն գեղով պայծառացեալ ես.
Կաքաւ քաղցրաձայն՝ հեռուստ կու ձայնես,
Կնամ արեկ ան զիս կամ տար զիս առ քեզ։

Խորասան ու Հինդ, Պաղդատ ու Փարսին,
Մարա, Արապնին և Հռոմ, Լաչին,
Կոստանդին մեծին և Թէոդոսին,
Թէ միարանին, չեն քո տեսուդ գին։

Հայ իմ անմանն, չկայ քեզ նման՝
Ո՛չ ի Խորասան, ոչ ի Հնդուստան,
Ո՛չ ի Ֆրանկիստան, ոչ ի Պարսկաստան,
Ո՛չ ի Շամաստան, ոչ ի Հայաստան։

Մեր տէրն է բազմեր ի բարձր աթոռին,
Աջումն օրիներ զպատկեր քոյին.
Զայնիդ հաւասար չէ տուտի դումբին՝
Ձերմակն ի ներքոյ կարմիր վրանին։

Քեզի կու ձայնեմ, դուստր Զալամայ,
Լուսատու պատկեր յաղգէն Արամայ,
Քաղցրահամ աղբիւր բղխեալ յաղբնայ,
Զուր տուր հիւանդիս, որ կենդանանայ։

Իմ սէրն է դատարկ, բեռնակս է անհակ,
Յոր տուն որ գնամ, դռնակն է անփակ,
Ի քենէ չուզեմ ոչ սագ և ոչ բադ,
Քու անուշ լեզուդ կարօտ եմ հասրաթ։

Ծով աչք, ամ լսէ դու գանգատնիս,
Լեր միխիթարանք ծարաւած սրտիս,
Զինչ որ ես անկայ բորբոք կրակիս,
Աղաչեմ զԱստուած՝ դու այլ հանդիպիս։

Հայ իմ գեղուդէշ արմաւենի ծառ,
Նոնենի դրախտ ու սէյրի չինար.
Ակամբ զարդարեալ ես ոսկի խանչար,
Չիս մի սպանաներ, մէդէթ զէնէհար։

Շիրին է լեզուդ, որ կու բարբառէ,
Նէշքարգուն երեսդ զիս կու խոցէ.
Մէկ խօսքդ բոլոր քաղաք մի աժէ,
Զէրէ քեզ նման իսկի ծնեալ չէ։

Մազերդ փայլուն՝ զէտ ծիծռկան թև,
Ցունքերդ է քաշած՝ զէտ խայալի թև.
Աչքերդ է պայծառ՝ զէտ ոսկի կանթեղ,
Շրթունքդ է բարակ՝ զէտ աղեղուն թև։

Քո ծոցդ սիրուն, ճերմակ՝ զէտ բամբակ,
Ծծեր մէջ ծոցոյդ կախած է գանգակ.
Լոյս ծագէ ծոցոյդ՝ զէտ բարկ արեգակն,
Կիսովդ է լուսին, կիսովդ արեգակն։

Առանց քեզ հոգի չունեմ ու չեմ կենդանի,
Կրակ կայ իմ սիրտս, անանց կու վառի.
Քեզ ես թուշ եղայ, զօրերս անցուցի,
Լալով ի շուրջ գամ, թէ զինչ տի լինի։

Քո սէրն յիմ սրտիս զէտ սէր Ծաղիմայ,
Քրիստոսի գերեզման, որ լոյսն ի հոն կայ.
Բոյդ կու նմանի եղէգն ի շամբայ,
Քո հոտդ յիս անոյշ քան զխնկան կուգայ։

Ամ քանի՞ կանչես ողորմ ու լալի,
Երբ ճարակ չկայ, ոչ ողորմ ունի.
Անկրակ բոներ լերդիկս ու կայրի,
Քո բանն ի Աստուած մնաց, ա՛յ գերի։

Քանի՞ ախ քաշես, ա՛յ խեղճիկ Ղազար,
Քանի որ հասար իսկի չի հանգար.
Գիշեր ու ցորեկ սիրով վառեցար,
Տէր մեղա՛յ ասա՛, դնա՛ նիստ ի վայր։

ՆՈՎԵՐ ՏՈՎՆԵՐԸ

ՏԱՂ Ի ՎԵՐՈՅ ԳԻՒՐՋԻՍՏԱՆԻ ԳՕՋԱԼՆԵՐԻՆ

Գովեմ սրտիս ուրախական
Թիֆլիս քաղաքն պատուական,
Տոյժ գեղեցիկ են սիրական
Գիւրջստանայ գօզալներն։

Ինքնագոյ ջերմեռանդ համամ,
Մէջի խաթունները թամամ.
Սիպտակ բողազ, բոլոր շամամ,
Վրացտանայ արմաղաններն։

Կարմիր երես նման վարդի,
Ինչպէս ծաղիկ ծաղկազարդի.
Ուշ ու խելք կու տանեն մարդի,
Գուրջստանայ գօզալներն։

Ղալամ ունքեր կապած կամար,
Աչքերն վառ շամի դամար,
Կապեր են մուրասայ քեամար,
Վրացտանայ արմաղաններրն։

Վարսերն դաստայ ոլորած,
Երեսն լուսին է բոլորած,
Շատ մարդ է տեսած մոլորած,
Գուրջստանայ գօզալներն։

Տեսօք են ամեն հասարակ,
Պօյն ու ջամալն է մուբարակ,
Բատանն լայն, մէջքն բարակ,
Վրացտանայ արմաղաններն։

Զօրեղ ապդին պարթևական
Զար և ժառանդ արքայական.
Արժանի թագաւորական,
Գուրջստանայ գօզալներն։

Մէջլիս նստեր սագով դամով,
Լեզուն քաղցր, խօսքն համով,
Գինի խմեն ոսկէ ջամով,
Վրացտանայ արմաղաններն։

Սիրամարգի նման քայլեն,
Տեսողքն զարմանան մայլին.
Աստղանման գունով փայլին,
Գուրջստանայ գօզալներն։

Հագել են զումաշ ու խարայ,
Ունեն շատ զարաւաշ ծառայ.
Ախատ են կանանչ թազայ թառայ,
Վրացտանայ արմաղաններն։

Ատլաս են հագել հաւասար,
Սամուր վալափուշ սարէ սար,
Ամեն պարոն են աղասար,
Գուրջստանայ գօզալներն։

Ես Նաղաշ եմ, մեղաց ծով եմ,
Նոցա սիրուվ գինով եմ.
Խապար չեմ թէ ինչպէս գովեմ,
Վրացտանայ արմաղաններն։

ՏԱՂ ՍԻՐՈՅ

Նոր գարուն է, հնչեաց հարաւ,
Իմ սիրելւոյն խիստ եմ ծարաւ,
Այսօր տեսայ, խելքս տարաւ.
Աչքս ելաց, խելքս գնաց։
Խիստ եմ կարօտ, ինսաքի արա,
երեսդ բաց։

Աչքերդ է շամսի գամար.
Կապել ես մուրասայ քեամար.
Քանի մէկ պաղ տալոյ համար
Ինձ պահես եաս, քարէքար տաս.
Այս գիշեր դուն բաց թողնեմ
մեր տունն գաս։

Ղալամ ունքերդ կու խաղայ,
Կու տեսնեմ սիրտս կու դողայ,
Կարմիր երեսդ կու շողշողայ.
Բանդիւանն եմ ինչպէս անեմ,
Հոգիդ սիրես, ինձ մէկ պաղ
տուր, քեզ զուրպան եմ։

Առաւօտուց վարդ կու քաղես,
Ինձ լաց կանես՝ դու ծիծաղես.
Թէ մեր տունն գաս՝ ինձ զօնաղ ես.
Հապար բարի ինձ մօտ արի.
Բարև չես տալ, խաբար չեմ թէ
քեզ ինչ արի։

Շամամներդ նոր է հասել,
Ծամերդ եկել վրայ գասել.
Այսօր տեսայ՝ խելքս պակսել.
Կանչեմ հարայ, ըռահմ արա.
Թեղմէ խնդրեմ որ մի անիլ ինձ
աւարայ։

Նոր փուած վարդի նման ես,
Ափսոս որ խիստ շատ նազ կանես.
Գնաց դովրան՝ կու փոշմանես,
Հոգւոց հանես, իմ սուլթան ես,
Թողեմ կերթամ՝ ով որ տեսնաս՝
կու հարցանես։

Էյ իմ սիրամարգ, ոսկեհան,
Բաղցրախօս և նախշուն կաքաւ,
Մարդու սրտ չասես վատ և լաւ.
Երես անդուլ շէյտաս բլբուլ.
Թող ես կանչեմ, որ դուն բանվաս, ղըրմըզի դիւլ։

Ադէկ խալվաթ է օթախն,
Տօշամայ է արած թաղտն,
Քեզ գրկելոյ էս է վախտն,
Գինի պիտի, ոչ խմում ես, ոչ
բերում ես։

Սուտ քնած ես, դու արթուն ես,
Դիտեմ, սարը ու գարար չունես.
Խապար եմ քեզ էլ միտք ունես.
Էր նազ կանես, հոգոց հանես,
Իմ գրած տաղն կու կարդաս ու
սաղ կանես։

Արի միմեանց գիր ուղարկենք,
Թօմաթ թահր անելն թարկենք.
Ցուրտ է, արի մէկտեղ նստինք,
Որ տաքանանք գինովանանք,
Սերկևիլ մաղայ պէտք կուգայ՝
գիրկը բանանք։

Ցաւոտ սիրոյդ ես հիւանդ եմ,
Ես քան գքեզ տարտիմանտ եմ.
Նազլու, ես սիրտս ինց քանդեմ,
Սիրական ես, պատուական ես.
Մաթ կու մնամ թէ էր նահախ
ինձ կու սպանես։

Ես մայիլ եմ ծով աչքերիդ,
Սուսամբար կայ մէջ վարսերիդ,
Կու նայիմ խալ խալ պատկերիդ,
Ապուշ մնամ, ձեռաց գնամ,
Ծիծաղելով աչօք կանես՝ կու
զարմանամ։

Ահա գարուն, եկաւ մարտն,
Կու շատանայ սիրոյ դարդն,
Մէջ կընկնի փախիլ նամարդն,
Լաւ իմացիր դայիմ կացիր,
Քո խօսքն ինձ հետ մէկ արա,
ուրախացիր։

Լաւ է քո պարոն կենդան չի,
Քեզ տեսնողն ինց ամանչի,
Քանի քո սկեսուր տան չի,
Եկ այվանն, բեր սեղանն,
Քեզ հետ խմի, տաղեր կանչի
Ցուշնաթանն։

ՏԱՂ ՍԻՐՈՑ

Նազու տիլպէր, գալըմ քեաֆիր, Թուխ աչեր,
Ցէր չես իգար, օրիկ մի զիս հարցաներ.
Շատ եմ քաղեր տէրտ ու զահըր քեզ համար,
Սպիտակ ճակատ, բարակ ուներ դ է կամար։

Աչերդ ծով, ես խեղճ եղայ նաւավար,
Ղարզ եմ եղեր, ծովուդ ելնել չեմ կարնար.
Գիշեր ցորեկ քունս է հատեր յաչերուս.
Ա՜յ անօրէն, ականջ արա՛ քո գերուս։
Հէքիմ կասեն քեզ՝ դեղ արա խոցերոյս,
Այլ չեմ կարեր ընդդիմանալ կրակոյս։

Գիշեր ցորեկ քո սէրն արեր զիս վարամ,
Ա՜յ անօրէն, գէմ քար չեմ որ դիմանամ.
Քունս չի գար՝ երթամ պառկիմ քնանամ.
Երթամ պահ մի լալով ժուռ գամ, այլ 'ւ ի գամ։

Գիշեր ցորեկ ես քու դարդէն հառաչեմ.
Կուզեմ զանուանդ այան կանչեմ, կամաչեմ.
Այլ չեմ կարեր գաղտուկ ապրել, կու կանչեմ.
Ա՜յ անօրէն, դու միտք արա, դէմ քար չեմ։

Գոհ եմ քեզնէ, Յիսուս անմահ միածին.
Նասիպ արիր զաղէկն ինձի դրացին.
Շատ խև տեսայ, որ աղէկնին պահ կածին.
Յետոյ զամէնն անտէր թողին գնացին։

Իսկ Ստեփաննոս, դու զքեզ խելօք կուկարծես,
Զբարին թողիր, կամաւ դշարն կու դործես.
Զաստուած թողիր, զանդէտ կինն կաղաչես.
Զահեղ դատաստանին օրն չամաչե՞ս։

Ստեփաննոս

ՏԱՂ ԳԱՐՆԱՆ

Աշուն էր, եղև գարուն,
Ցամաքեցաւ ձիւն սարերուն.
Ծառերն ամեն փըթըթան,
Ու տերև հագան գոյնզգոյն։
Բլբուլն ի վարդին սիրոյն
Գիլ կերթայ զինչն մարդն ի գինոյն,
Գիշերն ի լոյս կու ձայնէ
Վաղուընէքն մինչ 'ւ իրիկուն։

Աշուն էր, եղև գարուն,
Ձայն անուշ երեկ հաւերուն,
Մանկտիքն ի սարերն ելան
Ու նստան վեր ծաղկներուն,
Միրամարգ հաւի նման
Հագեր են հալաւ գոյնզգոյն,
Հետ զարնեն ու հետ խաղան
Ու խմեն ի յանուշ գինոյն։

Աշուն էր, եղև գարուն,
Կանաչան երես դաշտերուն,
Հաւերն ամեն պար առին
Ու վայրի երէքն 'ւ անասուն։
Օրհնեմք զարարիչն Աստուած,
Իուն մտած ծիծառն ու մեղուն
Թռչին ի բարձր սարերն,
Քաղեն զնիւթ ի ծաղկներուն։

Գարուն էր, եղև աշուն,
Ու թափաւ թուփն ծառերուն.
Ուռաւ ամպն ի յարևելք,
Ձձիւնն եբեր ի վեր սարերուն.
Բարև գայ այլ 'ւ ի դարուն,
Աւետիս տանեն բլբլուն,
Գայ նստի ծառի ճղին,
Արտասուէ դէմ քաֆուլը վարդին։

Գարուն էր, եղև աշուն,
Վերացաւ վէրքն ադամորդոյն,
Հոգիս սևացեր մեղօք,
Կարօտ եմ հարաւ քամուն.
Ողորմելի Ստեփաննոս,
Վայ է քեզ ու վայ քո մահուն,
Աստուած բարեխօս անկիր,
Տէր առնէ զքեզ անճառ լուսոյն։

Գարուն էր, եղև աշուն,
Ցէ՞ր կաս դու անհոգ ի քուն.
Քո կեանքդ ի պակսիլ առաւ,
Ու հասաւ քո օրն մահուան.
Հերիք արա, Ստեփաննոս.
Վայ 'ւ եղուկ կարդա զօրն ի բուն.
Մի՛թէ ողորմի Աստուած
Ու չառնէ զքեզ կեր գեհենոյն։

ԳԵՂԵՑԻԿ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹԻՒՆ

ԳԱՎԱՌԱՅՆՔ ԾԱՂԿԱՆՑ

Գարուն տարի, ամիսքն են ճիւղ, սնաւ ու սպիտակ պտուղ շարուն,
Երկուասան ամիսք որ կան, մարտն է իարիսխ հինն տարուն.
Տարեսկզբան մարտին ամիսն գոյ, տէրն հրաման կուտայ հողոյն,
Հոգն ի քնոյն նոտ կու գարթի, ջարտ կուտայ բոյս և տնկոյն։
Բուսնին, գնանին ի վեր կուգան, կանանչ հագնին բոյսքն բիթուն.
Ապա տարին հրաման կուտայ, որ կը թափէ գցողն ի յատպոյն,
Տարէ, աշխարհս ցնծուցանէ, գաստուր լինի ծաղկներուն,
Ուրախանայ երկինքը, գնային բուրէ հոտն անմահութեան։
Ծաղիկանք բուսանին հարիւր հազար, ցեղ ցեղ ներկած և գունդգունդ։
Թիւրլիւ թիւրլիւ հոտեր ունին, մինն քանց միւսն սիրուն.
Նախ ձնծաղիկն և ջրիկտամ, բարդն ու խոժուակն յառաջագոյն,
Ոչքա չորան միաբանին ու ձայն ածեն ծաղկներուն.
Ծաղիկանք, գարթիր ի քոր քնոյն, քանի պառկիր ներքև հողոյն,
Զարթիր, աշխարհս ծաղկեցուցէր, բիւրք և բիւրոց անթիւ անհուն։
Ապա բուսանին ծառք և տնկոյք, ծաղկին ծառերն և պտղատոյն,
Տեսոյ բերրգոչն ու քրքրուոջն կուշանաուին ի հետ ամպոյն.
Տինկն դեղին ծաղկի, ցնծայ, փայլէ, ժպտայ մէջ ջրերուն,
Ջուրն ու չայիր չիման ծաղկունք ցնծան ի հետ ձնաբերոյն։
Լեռն ու մարմանդ ծաղիկ դառնայ, ծաղկունք ծաղկին ի սարերուն.
Միծաղին սարն ու ձոր ծաղկօք, ծափ զարնեն, ծփան բիւրագոյն.
Գարմիր կակաչն, ալ ու դեղին, մոռ ու մախմուր է զարդարուն,
Սումբուլն մանաւուշ է հագել, ղբրմբզ է եօթնագրբանց արիւն։
Հոռոմ ծաղիկն է փոշոտել, բուսել հետ մոշին մորենուոյն.
Գուտն ու պուտվարդն ու մատուտիկն և այլ ծաղկունք բացին սիրուն.
Եզան ծաղիկն է խիստ դեղին, գոյնն է գունով քանց ծիրանուն՝
Անջրդի տեղն կու բուսնի, կու ժրանայ ամռան չորոյն։
Ծափն ու ծափծալն ու ծափկոտրուկն կը բուսնի կարգն խնկուկոյն,
Նաֆաֆն, չինարն ու բռեհան հոտերն անոյշ քանց ամենուն,
Ղատիֆան ալ է ներկուել՝ նման բեհեզ ու ծիրանուոյն,
Ղարաֆիլն մոռ է հագեր, գոյն գեղեցիկ է նարկէզոյն։
Այլ մանր ու մեծ ծաղկունք գովեմ, թուրն ու շահէն հետ մշկերոյն,
Աւգեր ծաղիկն ու մամխոպոպ կու բացին հետ առուեզերուն.

Մարիամն ծաղ տայ, ծիծաղ, ծիծաղի ծլոյն թիտեղուն,
Մայիսին ծաղկի ծիրանի, խիստ գեղեցիկ է, շատ սիրուն։
Կաթնուկի ծաղիկն է գեղին, գոյն է գլուխ գեղմնեներուն,
Կոճղէն ներկած դանակուց, հատան չի լի միւս գունեներուն.
Մարիամին ապիտակ է հագել, գեղին քաշել վերայ գլխուն,
Բոլորն ամէն շատ են շարել, հայելիք ի ապիտակ շարուն՝
Մէջն ու ծիլանն ու ծաղրիկն սուրմա են քաշել աչերուն,
Շատ գոյնգոյն ներկեր ունին, նման գերձանի ծաղրոյն,
Հարսա մարսան ճաւի ներկած մանկաւոր նման սուրմայուն,
Հիմի ծաղկունքն գարնանն, շեմ գիտել ինչ է հետ որուն։
Հասել են յիրար, կու ցնծան և փառք կուտան Տէրանց Տէրուն.
Տուգան ու թորթն ու մեղրիկ ծաղիկն նման են ծաղկած ծառերուն.
Սուտ վարդն բամբասել յերամէն, խաբեալ յերամ մասերուն,
Հաշխաշն թաց է բոլորել, գեղեցկացեր հետ թանխարուն։
Բոլոր գլխուն ալ է կապեր, մոտ է քաշել վերայ փորուն,
Հոգնդատն ծաղկել ծառոյն յընկեր եղել հետ գոջմէրուն.
Ծաղկունքն ամէն յերամ ժողվել, ծաղիկ կուտան մեղուներուն։
Բարձէնակին գոյն է պակաս, հոտիկն անուշ է բէջարուն՝
Բանց ամէնն խնամարհ կու կենայ, կու բուսնի ծաղկունանց հետուն.
Լեզուակ անուն ծաղիկ մի կայ, որ կու բացի մէջ մարգերուն՝
Ծաղիկն մոտ մանուշակ է, նորա երանգն է երկնագոյն.
Շերման ծաղիկն է ապիտակ, մարդն բուսնի հետ մրբանուն,
Հոլորձն ջահանի թիթին, պայծառանայ առաւօտուն,
Սինձն, երիցուկն և եղրիաղն կու ապասին արևորդուն։
Նոցա երանին ուրիշ է, որ կը շրջին հետ արևուն,
Կամոտաշն ու չատր ծաղկին կոհակն կու ծաղկի արևուն,
Կանկուկն ու կակվեղիկն խիստ կու բուսնին մէջ քարերուն,
Ակնջուկն ու դառնի դմակն կարօտ են մանուշկին տեսուն.
Հասրաթ են իրար տեսնելու մուրան ու շուշան ու բրաբիոն։
Սուսանն կուհաղ է ներկած, գոյնն է գլուխ կարմիրներուն,
Միշտ գեղեցիկ է խիստ պայծառ, բուսնի պաղ աղբիւրներուն.
Սաժն ու խալինճն ու լալազարն հոտիկն անուշ և զարդարուն։
Վարդն ու դուլվարդն ու հազրէ վարդ երամ ծանր է վարդերուն։
Ոսկեծաղիկն սուրաթ առեր գեղեցկացել լաւուն լաւուն,
Բոլոր գլխոյն ճղայ շարել, սա է ծաղկանց ենիչարուն.
Շարշարուրիկ ծաղիկ մի կայ գեղին հագել հետ ընկերուն,
Թիթերն ամէն պաղամ ներկել, նորա ոլորքն որպէս առրոն.
Գուլխասպահ ծաղիկ մի կայ, որ չի բացուիր զօրն արևուն,
Արևմտեան յետ կու բացի, պայծառանայ մէջ գիշերուն.
Գուզէլ անուն ծաղիկ մի կայ, որ դեղ է ամէն անբժիշկ ցաւերուն։
Փէնահ ծաղիկն ու լոշտակն Աստուած դեղ տունալ դարդերուն,
Խազալն թուփն է բոլորել, բուսել է հետ ճշնարօրուն.
Գինարբին հոտն է գովական, շատոնք հասրաթ են նորա հոտոյն,
Ծաղիկն փունջ-փունջ է եղել, մարդ չի յագել իւր կարօտոյն.
Ճաշքինթ ծաղիկն է խիստ հոտով, դեղին է նման զաֆրանոյն,

Բարձր լեռներն կու բուսնի գազիրանն հետ ֆնչուտրոյն։
Ջանիվուշ ծաղիկն հոտուքն անուշ, ինքն սպիտակ է ֆարեհիրոյն։
Նարգիս ծաղիկն ու ֆինտանան լցուել են Աստուծոյ բարոյն։
Մանուշակիս ծաղիկն որ կայ՝ ձեռքն չի գալ ջանահնարուն,
Ամէն տանմանը չի գտնուիր, գիշմաքի չունի ինքն իւր տեղոյն։
Ալի տոգուտան ծաղիկն որ կայ՝ իսկի վար չի գալ լեռներուն,
Հատ կարգուտ է, հոտն տոգու, արմատն գեղ է եկեղերուն,
Ալի անիքատամ ծաղիկն որ կայ՝ ծաղիկ ծաղկել ծաղիկներուն՝
Ամառ ձմեռ չի չորանալ, հինն է պայծառ՝ նման նորոյն։
Ալի նարնուֆար ծաղիկն որ կայ՝ բուսնի յատակս ծովերուն,
Ինքն գիշերն կու պառնի, մարդ չի քաշել նոցա անուն։
Ալի բուրգաղան ծաղիկն որ կայ, վարդ է շարեր հետ խնկերուն՝
Ծարմիր խնձոր Քաղաւորաց, ոսկի բուրվառ՝ խնկով լեցուն.
Ալի բաղատան ծաղիկն որ կայ, երանի շատ է,
Սուրբ մեռնի մահարդն այն է, որ կարդան ի մէջ գրելոյն։
Ալի գոնար վարդ ծաղիկ որ կայ՝ գեղեցկացել պայծառագոյն,
Երբոր բացի վերև Քֆին, գեղեցիկ է և խիստ սիրուն.
Ալի համասֆիւռ ծաղիկն որ կայ՝ ծաղկել ծառով հաղարագոյն,
Նոյը աչքուն լոյս կու բուրէ, Քէ Տէրն տայ ապատարդոյն.
Երկուսասան արմատ ունի, բուսնի երկուսասան տարեւոյն,
Ամէն Քֆին գոյն մի ծաղիկ, մարդ կու մայլի անուշ հոտոյն։
Արքայիկ օձն է Քաղաւոր, ինքն սպիտակ որպէս գձիւն,
Համասֆիւռին կու հետևի և զօրութիւն կառնու հոտոյն։
Սալնաձորցի սարկաւագ որբ Դաւիթն եմ անգէտ գրոց բաներուն,
Գեանքս նման ծաղիկներուն, որ կու բացի առաւօտուն և չորանայ
մինչ իրիկուն.
Շատ գատեցայ Քէ գլուխն առնում ծաղկներուն,
Ծաղկունք որ զարդ են աշխարհիս, օրինակ երկնից ատղերուն,
Սակաւ ծաղկունքս գովեցի, բազումն մնաց վարպետներուն։

ԲԱՎԻՆՆԷՍ

ՎԱՍՆ ԹՌՉՆՈՑ

Կամիմ գովել զհաւքերն հաւատար
Ուրախութեան մարդկան համար։

Արտօրեին հռնչայր
Առաւօտուն, երբ լուսանայր,
Անդադար փառաբանէր
Զաստուածութիւնն, յերկինս որ կայր։

Սարեկիին սարսափէր՝
Զինչ զՇերմուտ կամ զդիւահար,
Որպէս գուսան չափարաղան՝
Ինքն զարկէր, ինքն խաղայր։

Ծիծեռնակն գայր, շինէր
Զիւր հայրենի տուն ու տաճար,
Եւ ի վերայ այն տաճարին
Սաղմոս երգէր զօրն անդադար։

Մանրիկ հաւն աւետաբեր
Ինքն կածէր, ինքն ցնծայր,
Երթայր, նստէր վերայ վիմին,
Գուշակ լինէր գարնան համար։

Կուկուն զամէն գարուն կուգայ.
Ի յիւր գլուխն փետուր մի կայ,
Զինչ Հերովդէս կամ զՊիղատոս
Կամ զանհաւատն հաւատար։

Թուխակ պարնոց տունն կենայր,
Զթողոյր, խաթունն որ շնանայր,
Զինչ որ տեսնոյր կու թոնթորայր,
Պարոնն որ գայր, նա տայր խապար։

Ծգնաբնակին հաւն էր տրուտը,
Հետ ագռաւին ձրկիտայր ու գոյր,
Որոնք քսաներկու գոմէշն հաւատը,
Մէջ մի չկիսոգոյր ամպուն համար։

Հեծելոցն ի շուրջ գուգոյր,
Ճիանոցն խրատ գուտոյր,
Հեծ լեծ գոսէր ճարտոր,
Ինչ գնատոց գամ գնորէվար։

Անձանգիցն ի վեր վարգից,
Հոգաբարոյցաս յիւր միտքն ի վոյր,
Թէ իմ փնտուրս ան ու սպիտակ,
Ազգիս քան գոյլ հաւուցն յերկար։

Քրիստիցն ճրտվըտայր,
Ամէն ցորեկ իւր ձայնն գոյր,
Ինքն ասպրի տարին հարգար,
Ով գինքն ուտէ, խիստ շնանայ։

Շահին-բազէն էր շանարար,
Զօրն ամիրատց թեն կենայր,
Նա կու թռչի սարէ ի սար,
Որսունք առնէ տիրոջ համար։

Մեղուաքաղի մեղքն է գրժար,
Զթողոյր մեղուն որ շատանայր.
Տարին բոլոր կու աշխատի
Վասն մեղրի՝ մեզի համար։

Հաւալատան հաւն էր արդար,
Ինքն Դաւթի սաղմոսն կայր,
Զօրն յանապատն բնակէր,
Օրինակէր Քրիստոս արդար։

Ագաւնի ոսկի փետուր
Քան զամենայն հաւքերն արդար.
Նոքա կապեն երամք հազար,
Ի շէնն ի շար երթան հաւատար։

Խօսողն ի թառն իջնոյր, կենայր,
Հետ հաւերին ի շարուէշար,
Երբ հրեշտակաց ձայնն լսէր,
Ծափուց կուտայր, կուկուկլուզայր։

Ուրուրն աւան էր զինչ զթաթաբ.
Ոչ ոք զմոէր ի շէնն երթայր,
Անոյր զհաւի ձագն գնայր,
Թէ հազար մարդ յեռանն գոռայր։

Ամէն յարօտ երթայր ու գայր՝
Զինչ անասուն կամ զոչխար,
Խարտոց ունէր զինչ գանկարար,
Գոգն որ գայր, նա տայր խաղար։

Կռակրանէն կու ցնծայր,
Հագեր կապուտ, կու պարծենայր.
Թէ զայդ հաւքերդ որ գովեցիր.
Մէկ մ'իմ փեսուրս խակի չէ կայ։

Ը Ջ Ա Ի Ջ Տ Ի Ր Տ Ի Ր

ԱՌԱՒՕՏՈՒՆ ՔԱՄԵԿՆ

Առաւօտուն քամեկն ելեր, մտպէ գիս,
Քա աչքդ ելեր, կրակ եղեր, դատէ գիս.
Պուլպուլն ի վարդն հուր է ձգեր, դու հասիր,
Մէջ թափիր, վարդ, մի թափիր,
Նազլուս, մի թափիր։

Առաւօտուն ամպեկն իջեր թացուած,
Քրիստոսի ողորմութեանն լացուած.
Հայրիկ ափսոս, խորհրդի ձեռքն բացուած.
Մէջ թափիր, վարդ, մի թափիր...
Նազլուս, մի թափիր։

Ղարիպութիւնն եկաւ, իմ սիրտն առաւ, հայ.
Ահա գիս վարդն պաղչէն առին տարան, հայ.
Այնոր համար սուգ եմ մտեր, կուլամ, հայ.
Մէջ թափիր, վարդ, մի թափիր,
Նազլուս, մի թափիր։

Ահա եկան արքայութեան հովերն,
Սէրդ այլ մնայ ի յանանուակ ծովերն,
Զարկեր չատրը պիւլպիւլ վարդին բովերն.
Մէջ թափիր, վարդ, մի թափիր,
Նազլուս, մի թափիր։

Օքսիգ տէրտէրն զայս բանս ասաց իւրեանն, հայ.
Ահա եկին գիս եարս առին, տարան, հայ.
Այնոր համար սուգ եմ առեր, կուլամ, հայ.
Մէջ թափիր, վարդ, մի թափիր,
Նազլուս, մի թափիր։

ԸՆՏԵՑՔ ՑՈՂԵՐԳՈՒՆԵՐ

1.

ԵՐԳ ԵԱՐՈՋ

Գիշերս ես ի դուրս եկայ,
Թուխ ամպեր և անուշ կու ցօղայ.
Չիմ եարն այլ կանկնուկ անայ,
Չիւր կանաչ կապան կուքանայ.
Ձեռքս բռնեց, տուն տարաւ,
Զդուռն եղէր, գիսակն ի վերայ.
Մանուկ ես նորա կասեմ,
Որ առնու գրարնին ու բանայ.
Բանայ՝ ի բախչան մտնի,
Վարդ քաղէ ու ցօղն ի վերայ.
Եւ փունջ մի եարոջն տայ,
Որ գնէ գերեան ի վերայ.
Ճերմակ ծոց ու լայն ճառպն,
Ի ծոցիկդ ի վայր սահեցայ.
Այդ խակ թևերուդ միջին
Դիրկ ածի, պահիկ մ՝ արգելցայ.
Ձեռկուքս այլ ի վեր կալայ,
Տէր արա զմահիկս ի հոսայ.
Զմահիկս ու մատղիկս արա
Աչկեկան կրծոցն ի վերայ.
Այս արնուորի շահէն,
Անշահէն ես ինչ շահեցայ.
Առի գրագաս որս եկայ,
Թուցի, զինչ մաղպուն եղայ.

Բազմ, տնաւէր, բազա,
Գնացած տեղն ինձի ասա.
Ես այլ հետ քեզի կուգամ,
Հանց հաշուեց թէ օր մի չեղայ.
Դիժար հիւրընդունկ եմ ես,
Ա՛ռ խնծոր, արի՝ եկ գիս տես.
Հազար զենեհար կուտամ,
Որ օտար հաքիմ չը բերես.
Օտար հաքիմն ինչ անեմ,
Ամէն դարդս դու գիտես.
Եկո տամ ծոցուս բարնին,
Բաց արտիս դուռն, մուտ ի ներս.

Եարամ եարարամ կասեմ,
Ձեմ եկեր, քո սէրն է բերեր.
Քո սէրն իմ սրտիս միջին
Ցուն շիներ՝ ի ներս կու կենայ.

Բազմ, երբ բաղցած լինի,
Զորմն առնու, այնով զբմպաղի.
Մանուկ սիրու տէր լինի,
Պաք առնու, կարօտն անցնի.
Եմ ինչ լինենամ, թէ պաքնեմ,
Նա ինձ կու պիտի.
Հիմի ի ծոցուդ եկայ,
Դեռ աչերս ի հետ կու նայի
Հանց եղեմ ի քո սիրուդ,
Ինչ ամուսն առայն, որ կայրի.
Զօրն ի բուն երկինքն ի վեր
Կու հայի կաթիկ մ՝ անձրևի.

Ցանչափ ջանացի իւր հետն,
Որ իւրմէն պաքիկ մ՝ առի.
Ի քաղցրութենէն, եղբայրք,
Բռներ է սրտիկս, որ կայրի.

Պաքնեմ, զքո լան հակատդ,
Որ աչքեր ունիս զաղալի.
Գրկեմ զքո ուռ միջկունքդ,
Որ հաքեր ես շատ կապանի.
Քանի՛ ու քանի՛ ասեմ,
Զիմ եարին կապան կաբեցէք.
Արևն իւր երեսք արէք,
Զլուսնկան աստառ ձևեցէք.
Թուխ ամպն այլ բամպակ արէք,
Ու ի ծովէն դերձան քաղեցէք.
Աստղերն այլ կոճակ արէք,
Զիս ի ներս ողկիկ շարեցէք.

2.

ՎԱՐԴՆ Է ԲԱՑՒԷՐ

Վարդն է բացուէր առաւօտուն գոյնզգոյն,
Հոտն բուրէր անմահութեան զօրն ի բուն,
Ախտ գեղեցիկ նման ծաղկի նոճենւոյն.
Մի թափիր, վարդ, մի թափիր,
Ախտ այրեցայ ես քո հոտուն.
Մի լափիր, վարդ:
Առաւօտեան ժամուն ելայ հայեցայ,
Յորժամ տեսայ զքեզ բացուած, զարձացայ.
Քո անուշահոտութենէդ զմայլեցայ,
Մի թափիր, վարդ, մի թափիր...
Բամից հանուրց ազգաց ի մէջ ծաղկունաց,
Գերագոյն վարդ, դու ցանկալի ես մանկանց,
Մի պակասիր միշտ հանապազ իմ ձեռաց.
Մի թափիր, վարդ, մի թափիր...
Դու բարունակ պայծառ և ծիրանագոյն,
Բուրաստանաց մէջն փայլես աստղագոյն.
Իմ գեղեցիկ, իմ սիրական անուշահոտ կարմրագոյն,
Մի թափիր, վարդ, մի թափիր...
Առաւօտուն հողմն փչէր մեղմագոյն.
Պիւլպիւլ հաւիկն վայր իջնոյր մէջ այգւոյն,
Քաղցրիկ խօսէր, ուրախանայր հետ վարդոյն,
Մի թափիր, վարդ, մի թափիր...
Նոր առաւօտ արեգական ծագելոյն,
Յայնժամ ի շուրջ գալով մէջն վարդենւոյն,
Եղանակօք շարադրեցի քաղցրագոյն.
Մի թափիր, վարդ, մի թափիր...
Ի հասանել երրորդի ճաշու ժամուն
Կրկին անգամ ընթացայ մէջ կոկոնոյն,
Վարդ քաղելով ոչ յագեցայ ի հոտոյն,
Մի թափիր, վարդ, մի թափիր,
Ախտ այրեցայ ես քո հոտուն.
Մի լափիր, վարդ:

Վարդան

3.

ՏԱՂ ՍԻՐՈՅ

Քո սէրդ իմ սիրտս պաղչայ գուլիստան,
Կարծեմ դու մին բազկիդ շահրիստան,
Դու քաղաք վաստան պաղչայ գուլիստան,
Չի կայ քեզ նման յաշխարհս Հայաստան։

Քո մազդ է քնքուշ ապիրշում նման,
Որ ճերմակ վզիկդ առեր մանէման,
Զուռնայ հոդածին զաւակ քեզ նման,
Զամէնն ես լինում մայ քեզի դուրբան։

Ձծոցդ կու սիրեմ ճերմակ զէտ զանգակ,
Ստինքդ ի միջին կախած զէտ զանգակ.
Ցայտէ լուսն յիւրմէն զէտ բարկ արեգակ,
Մէկն է լուսին և մէկն արեգակ։

Ես հոգի չունիմ ու չեմ կենդանի,
Կրակ կայ սրտիս, անանց կու այրի.
Քանի քեզ տիւշ եղայ, զօմրիկս անցուցի,
Լալով շուրջ կու գամ, թ'ինչպէս տի լինի։

Քո սէրդ իմ սրտիս աղօթք ու ժամ կայ,
Քո ծոցդ կուհար ակն, շամամ կայ.
Պօյիկդ է նման եղէգն ի շամպայ,
Երբ զքեզ տեսնում նա՝ կառնում տալզայ։

Խօսք մ'ասեմ, լսէ, լսելին ունիս,
Քաղցր աչօք հայէ անգին ծառայիս,
Քան ի լաց պահես զայս խղճուկ գերիս,
Զգէ խեղճ ի մտիս, գէմ Աստուած ունիս։

Կու սիրեմ զքեզ, իմ սէրն դու ես,
Թէ բուն թէ արթուն, իմ եարն դու ես.
Երբ չես սիրեր զիս, ընձիկ յէր չասես,
Գնամ մէկ մ'ալ սիրեմ, հաշեմ թէ դու ես։

4.

ԱՍԻ ԹԷ ՍԻՐԵՄ

Ասի թէ սիրեմ գքեզ,
Ֆու ի քեզ ի նապտեր եկար.
Քանի ալ թէ անցաւ աշխարհս,
Որ այլ տեղ չը կայ սիրոյ ճար։
Երթամ մենկնիմ, այլ սիրեմ,
Ոչ աչուերնի քեզ նմանի.
Ջանուանդ նորա դնիմ,
Որ լսեա, սիրտդ նուազի։
Թէ նուշ էրն՝ աչայս եկար.
Թէ շաքարն՝ ինձ անպիտանացար.
Թէ դուն սիրելու խնձորն՝
Այլ իմ աչքիս մի երևնար։

Երթամ տուրբ Սարգիս մտնում,
Անիծեմ որ դուն իմանաս.
Ոչ կաղնաս ու ոչ կուրնաս,
Սարկաքաան մնաս քանը գիս։
Քանի ու քանի ասեմ,
Վարդն մի սիրեր փուշ ունի.
Գնա, մանուշակ սիրէ,
Փուշ չունի, անուշ հոտ ունի։
Վարդն բացուած մի սիրիր,
Որ գայ ի ծոցդ թառմի,
Վարդն պուլպուլիկ *) սիրէ,
Որ գայ ի ծոցդ բացի։

---

*) Ժողովրդական բուլբուլիկ՝ կոկոնած։

ԵՐԳԻՉՆԵՐ

Վանական մեծագոր քնարերգության տեղը հետզհետէ բռնում են աշուղական երգերը։ Ժողովրդական երգիչները, աշուղները, Հայաստանում գոյություն են ունեցել անյիշելի ժամանակներից. նրանց մասին խօսում է դեռ Մովսէս Խորենացին։ Հայերը սիրում էին բոլոր ազգերը կատարել երգով։ Ընտանեկան հանդէսներին, ինչպէս հարսանիքն է, մկրտությունը և այլն, ժողովարաններում, շուկաներում և սրճարաններում միշտ էլ ցանկալի հիւր են եղել երգիչները, որոնց պատուաւոր տեղ էին յատկացնում խնջոյքների ժամանակ. պատուաւոր տեղ էին տալիս յատուկ նշանակուած դարակներում և նրանց երաժշտական գործիքներին (քամանչայ, սաղ, թառ և այլն). երգը հնչում էր թէ՛ չէ՛ ամենը լռում էին, ուշադրությամբ ականջ դնելով։ Դեռ վաղ ժամանակներից գոյություն ունէր նաև մրցության սովորոյթ երգիչների միջև. աշուղները հերթով երգում էին իրենց յօրինած երգերը, և պարտուածը սովորաբար իր քամանչան դիջում էր յաղթողին։

Միայն XVIII-րդ դարում մշակուեց նոր տիպ ժողովրդական աշուղ-երգչի, որ դնահատելով իր ներշնչումները, ցանկանում է պահպանել այդպիսիք։ Միաժամանակ այդ տիպի աշուղը որոշ չափով արդէն դրքի մարդ դարձաւ. այսինքն՝ ծանօթ անցեալի բանաստեղծությանը։ Իր ստեղծագործություններն իրրև աւանդ թողնելով յետնորդներին՝ նա սկսաւ հետաքրքրուել անցեալով։ Վերջապէս մասամբ էլ ժողովրդի պահանջները բարձրացան։ Երգի աւանդական տարրերի հետ մէկտեղ սկսեցին երգչից մի փոքր աւելին պահանջել. այն է՝ ձևի ինքնուրոյնություն և խստություն, բովանդակության խորություն։

Հենց իրենց երգիչների և ժողովրդի կուլտուրական մակարդակի աստիճանի բարձրացման հետ մէկտեղ՝ ստեղծուեց աշուղ-երգչի տիպ, որը պինդ բռնեց միջնադարեան հայ քնարերգությունը և առաջ տարաւ այն նոր ուղիներով։

Աշուղական բանաստեղծությունը իր բարձրության վրայ դնող երգիչը Սայեաթ-Նովան էր՝ իր ներքին ինտուիցիայով և բանաստեղծական հանճարով։ Կարելի է անվերապահօրէն ասել, որ Սայեաթ-Նովայի նախորդների բոլոր արածներն աննշան էին նրա խոշոր քայլերի նկատմամբ և կարծես աղօտանում էին նրա լուսաշող փառքի հանդէպ։ Սայեաթ-Նովան իր օրինակով ապացուցեց, թէ որպիսի ոյժ ու հմայք է թաքնուած ժողովրդական երգչի ձայնի մէջ. նա ցոյց տուաւ, որ այդ երգիչը խնջոյքներում ոչ միայն ուրախություն պատճառող է, այլ և

ուսուցիչ, որքան և թեթեւամիտ լինէին նրա երգերի նիւթերը։ Սայեաթ-Նովան իւրացնելով իր նախորդների ձեւը, նրան հաղորդեց կատարելութեան գագաթ, և մէկէն ի մէկ ակներև դարձաւ, թէ ինչ ճոխութիւն է թաքնուած աշուղական երգի մէջ, որին շատերը չափազանց մակերեսային վերաբերմունք էին ցոյց տալիս։ Այն միջոցին, երբ մեռել էր ուսեալ վարպետների վանական բանաստեղծութիւնը, Սայեաթ-Նովան գալ աւաւ, թէ կենդանի է հայ բանաստեղծութիւնը, որ վանքերից անցաւ դէպի ժողովուրդը և թրքախօս աշուղների ապատերզերի մէջ. աշուղներ, որոնք երգում էին պալատներում, շուկաներում, հրապարակներում, ընտանեկան հանդէսներին և համեստ տներում։

Սայեաթ-Նովան իր կեանքը բոլորեց XVIII-րդ դարում. ծնուել է 1719 թ. Թիֆլիսում, վախճանուել է (սպանուել է) նոյն տեղը 1795 թուին։ Երգչի իսկական անունը Արութին է եղել. Սայեաթ-Նովա կեղծանունն է, որ նշանակում է «երգերի թագաւոր» կամ «երաժշտապետ»։ Նրա ստեղծագործութիւնների մէջ շօշափւում են բաւական բարդ հարցեր, յիշւում են զանազան երկրներ ու ժողովուրդներ, միաժամանակ զգացւում արձագանքներ պարսկական բանաստեղծութեան, որից նա՝ ի միջի այլոց՝ փոխ է առել ձեւերը։ Բացի այդ Սայեաթ-Նովան գիտէր շատ լեզուներ և իր բանաստեղծութիւնները գրում էր ոչ միայն հայերէն, այլ և վրացերէն ու թիւրքերէն։ Սայեաթ-Նովայից հասել է մեզ 115 թիւրքերէն ոտանաւոր, իսկ հայերէն՝ միայն 46։ Եբիսկոպոսական տարիներն արդէն անցել էին, երբ Սայեաթ-Նովան թողեց վրաց պալատում իր ունեցած փայլուն կեանքը և քաշուեց Հաղբատի վանքը. երգչի այդ վճիռը կապում են 1770 թ. իր Մարմար կնոջ մահուան հետ։ Բայց վանական պատերի մէջ անգամ նա չը կարողացաւ խեղդել իր մէջ դէպի բանաստեղծութիւնը տածած բուռն սէրը։ Նա շարունակում էր ոտանաւորներ գրել և հրապարակային մրցութեան կարօտը քաշել։ Ասում են թէ Նորընծայ եպիսկոպոսը, երբեմն աշուղի զգեստով ծպտուած, գաղտնի հեռանում էր վանքից, մի կերպ իրեն ձգում Թիֆլիս և ժողովրդի առաջ մրցութեան բռնւում՝ իբրև երգիչ։ Իմանալով որ Թիֆլիսում լոյս է ընկել ճնացած բոլոր աշուղներին նսեմացնող մի նոր աշուղ, ծերունի Սայեաթ-Նովան նրա հետ չափւելու զօրեղ ցանկութեամբ՝ մէկ անգամ հագաւ շրջիկ աշուղի իր հին շորերը, վերցրեց քամանչան և, մրցութեան դուրս գալով, յաղթեց երիտասարդ ախոյեանին։

1795 թ. Պարսից Ագա-Մահմադ-խանը պաշարեց Թիֆլիսը։ Ազգաբնակութիւնը գտնւում էր սրածութեան սպառնալիքի տակ։ Սայեաթ-Նովան Թիֆլիսումն էր այն օրը, երբ պարսիկ հրոսակախմբերը գրաւեցին քաղաքը։ Ժողովրդի բազմութեան հետ Սայեաթ-Նովան ապաստան էր գտել եկեղեցում։ Պարսիկները պահանջեցին բոլորից, ինչպէս և Սայեաթ-Նովայից, դուրս գալ եկեղեցուց, ընդունել մահմեդականութիւն։ Սայեաթ-Նովան թիւրքերէն մի երկտող բանաստեղծութեամբ պատասխանեց.

Զրխմանամ քիլիսադան,
Դեռնմանամ Իսադան.
(Զեմ գուրս գայ եկեղեցուց,
Զեմ ուրանայ Քրիստոսին)։

Այդ լակոնական կարուկ պատասխանից յետոյ թիւրքերը ծերունուն զօռով դուրս բաշեցին եկեղեցուց և սպանեցին դուռն շեմքին։ Այժմ այդտեղ՝ Մէյդանի տուրը Գէորգ եկեղեցու պատին փակցուած է մարմարեա մի տախտակ, որի վրայ փորագրուած են Սայեաթ-Նովայի ծննդեան ու մահուան թուականները և իր ստեղծագործութիւններից հետևեալ տողերը.

Ամեն մարթ չի կանա խըմի իմ ջուրըն՝ ուրիշ ջրէն է.
Ամեն մարթ չի կանա կարդա իմ գիրըն՝ ուրիշ գրրէն է.
Բունեթաթս աւազ չիմանաս՝ քարափէ քարուկրէն է։

Սայեաթ-Նովան սկիզբ դրաւ ու նուիրագործեց բանաստեղծական ուրոյն մի ձև աշուղական երգերի համար, որոնք մօտենում են պարսկական «գազել»-ներին։ Այնուհետև այդ ձևը դարձաւ կիրառելի բոլոր երգիչների կողմից։ Սայեաթ-Նովայի երգերը կատարելութեան են հասած՝ վերջավանկ նմանահունչ ձայնաւորներով, իրար յաջորդող մի շարք տողերի սկզբում նոյն տառի կրկնութիւններով և արտաքին ու ներքին յանգերով։ Նա մէկն է ամենայայտնի «հնչիւնաբան» վարպետներից, որոնք պատուաւոր տեղ են գրաւել համաշխարհային բանաստեղծութեան մէջ։ Սայեաթ-Նովայի շնորհիւ աշուղական բանաստեղծութեան զարգացումը բնականաբար պէտք է կեանքի կոչէր շատ հետևորդներ ու նմանողներ։ Շատ չանցած ստեղծուեց «Սայեաթ Նովայի դպրոց», և իսկապէս մինչև մեր օրերը հայ աշուղները բոլորն էլ գտնուել են մեծ երգչի ազդեցութեան տակ ու ընթացել նրա գծած շաւղով։

Դրանց մէջ աչքի դարնող տեղ գրաւեց յատկապէս նորագոյն շրջանի աշուղներից մէկը՝ Ջիւանին, որի ստեղծագործութեան մոտիւները բազմապիսի են ու բազմակողմանի.—Սիրոյ երգիչը հետզհետէ դառնում է բարոյախօս, երգում իր ժամանակուայ անցքերը, օրուայ չարն ու բարին, դրում սեղանի երգեր և այլն։ Ջիւանու լեզուն արդէն ընդհանուր առմամբ մօտենում է ժամանակակից գրական լեզուին և կրում վերջինիս ազդեցութիւնը։ Անտարակուսելիօրէն Սայեաթ-Նովայի և մասամբ նոր բանաստեղծների նմանողութեամբ հիւսուած երգերի շարքում Ջիւանին թողել է մի քանի գեղեցիկ ստեղծագործութիւններ, որոնք հայ բանաստեղծութեան մէջ կը մնան անմեռ։

(«Պոէզիա Արմենիի»)

ՍԱՅԵԱԹ ՆՈՎԱ

(1719—1795)

Այն նկատողություններդը, որ մենք արել ենք վերը միջնադարյան տաղերգուների մասին, խոշոր չափով վերաբերում է նաև աշուղական երգերին և նրանց հեղինակներին։ Տաղերգուներին սնած միջավայրը հարազատ է և աշուղներին ու նրանցից ամենատարողունակներին՝ Սայաթ Նովային, որի ստեղծագործությունը յատուկ ուսումնասիրություններին նիւթ է դարձել հայ և օտար գրականության մէջ։

Սայաթ Նովան ապրել է ֆէոդալիզմի կլասիկ երկիրներից մէկում՝ Թաւադական Վրաստանում և եղել պալատական երգիչ։ Որքան էլ ծագումով գենմոկրատ լինէր, այնուամենայնիւ միջավայրն իր գրոշմը դրել էր նրա հոգերանության վրայ։ Թաւադը, սուլթանն ու խանը նրա համար ճշմարտություններ էին, որոնց մասին կասկածի նշույլ անգամ չէ ծագել նրա գլխում։ Դա նոյնքան բնական է եղել նրա համար և իբրև հասկացողություն՝ յաւիտենական, որքան երկինքը, արևը, լուսինը և այլն։ Նոյնպիսի բացարձակ ճշմարտություններ էին նրա աչքում եկեղեցին, սուրբ հայրերը, Աստուած ու հրեշտակները, որոնց նկատմամբ նա երկիւղած ու բարեպաշտ քրիստոնեայ է։

Սիրով տարուած, սէրը երգող, իր սիրուհու սարուկը դարձած, նրան բարձր մակդիրներով մեծարող Սայեաթ Նովան իր սիրած կնոջ գովքն անելիս՝ ի միջի այլ բարձր ածականների՝ «սուլթան» ու «խան» բառերով է որակում նրան.

... Զարբաբ վերան իս ինձ համ,
... Սուլթան ու Խան իս ինձ համ։

Իսկ նրա սիրածը գիտէ համեմատել իր սիրեկանին Թանգագին քարերի հետ, բայց ամենաթանգ քարը «Թագաւորի լայեղ» քարն է, ըստ Սայեաթ Նովայի.

Թագաւորի Թագի լայեղ քարն իմ,
Շէրինի պէս փահլաղի դիդարը՝ն իմ,—

երգում է նա։
Կամ մի այլ երգի մէջ՝

Աշխարհումս դուն իմ ջան իս,
Դուն իմ Շահ իս, Սուլթան, Խան իս,
Ի՞նչ կուլի միզ մարիկ անիս,
Հազարէն մէ ջէր, նազանի։

Ֆէոդալական դարաշրջանի, ազնվական միջավայրի հասկացողություններ են սրանք, որոնք իրը պատկերներ որևէ բանաստեղծության գործը դառնալով՝ բնորոշում են ամենից առաջ բանաստեղծության հեղինակին։

Վանական-ֆէոդալական միջավայրի տիրական ազդեցությունը Սայաթ-Նովայի վրայ ակներև է դառնում նրա «Անի համով դուլլուղ ուրա» բանաստեղծության մէջ, ուր բանաստեղծի աչքում մարդու գլուխը (օրինակ, «Ասպետու համբարքը») արժէք չունի, եթէ նա «Հարանց վարքն սիրուն» չը գիտէ։

Թէդուդ իմանաս գիտնաս ասպետու համբարքն սիրուն,
Անքարի գործն կորած է՝ կարդա Հարանց վարքն սիրուն։
Աւետարանի խօսքիրն՝ մարգարէսէ կարդն սիրուն։
Մի ածի խուզի առչիվն լայ ու գոված, Սայաթ-Նովա։

Բնորոշ են վանական ազդեցությունը կրող աշուղի համար նաև հետևեալ տողերը։

Հուսդ աշխարհքս բռնել է՝ քալասանի ծառ բացարած,
Թխտիրդ ոսկէ վարագով Համավուք իս՝ ճառ բացարած...

Այսպէս ուրեմն, պատկերներով գրող բանաստեղծի գեղարվեստական բառարանում բնորոշ են՝ սուլթան, խան, շահ, աւետարան, յայսմաւուրք, հարանց վարքը, Թագաւորի թագի լայեղ քար և այլն բառերը, որոնցով բնորոշում է հեղինակը իր աշխարհայեացքով ու հոգեբանությամբ։

Հայ ամենամեծ աշուղի մասին այդ պատկերները մի բան են ասում, որ նա վանական-ֆէոդալական միջավայրի հարազատ զաւակն է։

Սակայն այդ հանգամանքը չի խանգարում բարձր համարել Սայաթ-Նովայի արուեստը։

Սարգսյան

ՔԱՄԱՆՉԱ

Ամէն սազի մէջը գոված գուն թամամ դասն իս, քամանչա,
Նաբաղ մարթ քիզ չի կանայ տէսնի գուն նրա պասն իս, քամանչա.
Ղասա աբա՝ էլ լավ օրէրուն էդիվը հասնիս, քամանչա.
Քիզ ինձնից ով կանայ խլի՝ աշուղի բասն իս, քամանչա։

Անգամը էրձաթէն պիտի, գլուխը ջավահիր բարած,
Կութը շիրմայէմէն պիտի, փուրը սատափով նախշ արած,
Սիմը օսկէն քաշած պիտի, երկաթը փանջարա արած.
Օշ ով ղիմէթը չի գիտի՝ լալ ու ալմասն իս, քամանչա։

Ծիպուտը վարդնած պիտի՝ թանր ունենայ հազար ռանգով.
Զարը ռաշի կուդէն պիտի՝ վուր գուն խօսիս քաղցը հանգով.
Շատին զարթուն կու լուսացնիս, շատին կու քընէցնիս բանգով՝
Անուշահամ գինով լիքը գուն օսկէ թասն իս, քամանչա։

Ածողիդ էրկու կու շինիս, առաչ շայի դափա գ'ուդիս,
Կու մէնքըվիս այիվնումը, պարապ վախտի բափա գ'ուդիս.
Եփ վէր գու քաս մէջլիսումը բաղդը զող ու սափա գ'ուդիս.
Բոլորքը գոզալնիր շարած մէջլիսի կէսն իս, քամանչա։

Շատ ալիսուր սիրտ կու խընդացնիս, կու կըտրիս հիվընդի դուղը,
Եփ քաղցը ձայնը վի կ'օնիս՝ բաց կու'լի հիդը խաղողը.
Խալխին էս իլթիմազն արա՝ ասին. «Ալլի՛ քու ածողը»,
Քանի սաղ է Սայեաթ-Նովէն, շատ բան կու տէսնիս, քամանչա։

ԲԼԲՈՒԼ

Ուստի՛ կուգաս, դարիր բըլբուլ,
Դու մի՛ լաց՝ լի, ես իմ լալու.
Դու վարթ պըտուէ, ես գոզալին—
Դու մի՛ լաց՝ լի, ես իմ լալու։

Արի՛, բըլբուլ, խօսի՛ բառը,
Օխնըվի՛ քու էկած սարը.
Քի՛ վարթն էրից, ինձ իմ եարը,—
Դու մի՛ լաց՝ լի, ես իմ լալու։

Մանն իմ դալի դիդաքի հիդ,
Վուռնց դարիբ բըլբուլ խաբի հիդ.
Դու վարթի հիդ, ես նաբի հիդ,—
Դու մի լաց՝ լի, ես իմ լալու։

Սալբուի նըման կանանչ իմ,
Ես կ, խոսի, ձայնըդ ճանանչիմ.
Դու վարթ կանչէ, ես նաբ կանչիմ,
Դու մի լաց՝ լի, ես իմ լալու։

Դարիբ բըլբուլ, ձայնիդ մալում,
Ես ու դու էրվինք մի հալում.
Սայեաթ-Նովէն ասաց՝ դալում,—
Դու մի լաց՝ լի, ես իմ լալու։

ԱՇԽԱՐՈՒՄՍ ԱԽ ՉԻՄ ՔԱՇԻ

Աշխարումըս ախ չիմ քաշի, քանի վուր ջան իս ինձ համա,
Անմահական ջըրով լիքըն օսկէ փընջան իս ինձ համա.
Նըստիմ վրէս շըվաք անիս, գարբաբ վըրան իս ինձ համա.
Սուչա իմացի, էնէնց ապանէ՝ Սուլթան ու Խան իս ինձ համա։

Մէջբըդ սալբու չինաբի պէս, ռանգըդ փըռանդի ատլաս է.
Լիդուդ շաքար, պռոշըդ դանդ, ակռէքըդ մարգարիտ ալմաս է.
Օսկու մէջըն մինա արած աչքիրըդ ակնակապ թաս է.
Պատվական անգին ջավայիր, լալ Բադէշխան իս ինձ համա։

Ես էս դարդին վո՞ւնց դիմանամ՝ մագամ սիրտըս ունիմ քարած,
Արտասուքս արուն շինէցիր, խիլքըս գլխէս ունիմ տարած.
Նու բաղ իս, նուր բաղչի միչըն բոլորքըդ վարթով չափարած.
Վըրէդ շուռ դամ բըլբուլի պէս՝ սիրով սէյրան իս ինձ համա։

Քու էշխըն ինձի մասա արաւ. ես զարթուն իմ, սիրաս է քընած.
Աշխարս աշխարով կըշտացաւ, իմ սիրտըս քնկնից սով մնաց.
Եար, քիզ ինչո՞վ թարիֆ անիմ՝ աշխարումըս բան չը մընաց.
Կրակէ ծովէմէն դուս էկած՝ ռաշ, ջէյիրան իս ինձ համա։

Ի՞նչ կու՛լի մէկ հիդըս խոսիս՝ թէ վուր Սայեաթ-Նովու եար իս.
Շուխքըդ աշխարըս բըռնիլ է՝ արէգագի դէմըն փար իս.
Հուտով՝ հիլ, միխակ, դարիչին, վարթ, մանուշակ, սուսանքար իս.
Կարմըրաւուն դաշտի ծաղիկ, հովտաց շուշան իս ինձ համա։

ՎՈՒՆՑ ՕՐ ՎՈՒՐ

Վունց օր վուր գարիր բուլբուլը մէ տարով բաղին կարօտ է,
Էնէնց կու լայ բու սիրողը՝ ձեռիդ արաղին կարօտ է.
Դուն ուրիշի հիդ մի խօսի, քու ճուրան աղին կարօտ է,
Հասիլ է ծուցիդ շամամը՝ օսկէ թաբաղին կարօտ է։

Մէ գաղ չը կայ՝ գուման ածիմ, ասիմ՝ էն նման է գունքըդ.
Անդալամ անգարնիշ քաշած օսկու պէս է փայլում ունքըդ.
Բոյէմէդ չուրս մատն աւելի լցիլ է դօշդ ու թիկունքդ.
Զարով արբէշումով հուսած մազիրըդ՝ շաղին կարօտ է։

Դուն խօմ էն գլխէն գոված իս, ես քիզ նուրմէկ գովիմ արի.
Ծուցըդ վարաղնած հուշքա է, հուտ ունէ մուշկ ու ամբարի.
Երեք հարուր ու վաթսուն ու վից ամէն անդամդ գարարի.
Կուռըդ շիմշատ, մատնիրըդ մում՝ ըրբօլէ ճաղին կարօտ է։

Ես էլ ուրիշ եար չիմ սիրի, աշխարհումըս դուն իս իմըն.
Թէ մէ շարաթ քիզ չիմ տեսնի, կու կտրիմ քամանչի սիմըն.
Թէգուզ թագաւորը կանչէ, թէգուզ Լօղըման հէքիմը՝
Վուր մէ դարդս կու հասկանա նա, դուդունըս դաղին կարօտ է։

Գիշեր ցերեկ ման իմ գալի էշխէդ եանա եանա, գօզալ.
Անգաճ արա, մատաղ իմ քիզ, մէ քիչ կամաց դընա, գօզալ.
Աշխարհըս ուսին է ճեացի՝ վուր ինձ ու քիզ մընայ, գօզալ.
Մանգամ մեռաւ Սայեաթ Նովէն՝ անդաճըդ խաղին կարօտ է։

ԴՈՒՆ ԷՆ ԳԼԽԷՆ

Դուն էն գլխէն իմաստուն իս, խիլքդ յիմարին բաբ մի անի,
Էրազումըն տեսածի հիդ միդի մէ հէսաբ մի անի,
Ես խօմ էն գլխէն էրած իմ, նուրմէկանց քաբաբ մի անի,
Թէ վուր, դիդիմ, բէզարիլ իս, ուրիշին սարսար մի անի։

Զը կայ քիզ պէս հուքմի հէքիմ՝ դուն Բօսուսի Զալ թաքաւուր.
Ասկըդ ասկէրումըն գոված, համ դուն իս գօզալ թաքաւուր.
Թէ էսանց էլ սուչ ունենամ՝ գլուխս արա տալ, թաքաւուր.
Մըտիկ արա քու ստիղծողին՝ նահախ տիդ դազաբ մի անի։

Եարալուն հէքիմն էնդուր գուզէ՝ դիզ տալու է ցաւ տալու չէ.
Քանի գուզէ արբաբ ըլի՝ դուլբն աղին դաւ տալու չէ.
Դու քու սիրտըն խատակ պահէ, եաղի խօսկըն աւտալու չէ.
Աստուծու սէրն կանչողի պէս դըռնեմէդ ջուզար մի անի։

Ամէն մարթ չի կանա խըմի իմ ջուրըն՝ ուրիշ ջրէն է.
Ամէն մարթ չի կանա կարթա իմ գիրըն՝ ուրիշ գրրէն է.
Բուն իարթա աւազ չիմանաա՝ քարտի է քարուկրէն է՝
Սէլաւի պէս՝ առանց ցամքիլ, դուն շուտով խարար մի անի։

Քանի գուզէ քամին տանէ՝ ծովեմէն աւազ չի պակսի.
Թէգուզ ըլիմ, թէգուզ չըլիմ՝ մէջլիանեերուն ազ չի պակսի.
Թէ կու պակսիմ, բիզ կու պակսիմ՝ աշխարհս մէ մազ չի պակսի՝
Սայեաթ Նովու գերեզմանըն Հինդ, Հարաշ, Արար մի անի։

ԻՆՁ ՍԻՐԵՑԻՐ

Ինձ սիրեցիր, էշխըն նըրնդար, խաղի դաւթար իմ քիզ ամա.
Մի բաշի Փըշի ծաղիկըն՝ վարթ ուստամբար իմ քիզ ամա.
Չիմ թողնի արեգագումըն՝ բաղչի սաջար իմ քիզ ամա.
Ես քու մահըն վրէնց կու խընդրիմ՝ նուզի ու շաքար իմ քիզ ամա։

Էլ քու բաղին մտիկ արա, ուրիշ բաղէն վարթ չին տա քիզ.
Ազ ու հացըն մի դէն դրցի, շափթէնը մէկ մտիկ տու միզ.
Թէգուզ աշխարհըն պըտուտ գաս՝ չիս տեսնի ինձի պէս ազիզ.
Թաք ուրիշ գոգալ չը սիրես՝ խղբարով եար իմ քիզ ամա։

Թաք ես մօրէս չէի ծընի. վայ էն օրին՝ ես քիզ տէհայ.
Դու բուլբուլ իս, ես կարմիր վարթ, չասիս, թէ՝ վարթըն ջալդ կէհայ.
Մէ փուքըր էտէնց դիմացի, շուտով Հընդբստան մի էհա.
Անգօրձիլ, անխարջ ու քըրիհ՝ մանդիլի գար իմ քիզ ամա։

Աստուած վրկայ, դիմիշ արած գըլուխըս քիզ մատաղ ըլի.
Ե՛կ քիզիզ սիրով դամ անիմ, ում գուզէ բէդամաղ ըլի,
Ես քու խօսկէն չիմ անց կենա, թաք քու դամաղըն չաղ ըլի.
Թէգուզ անմահութին ուզիս՝ սիրով կու ճարիմ քիզ ամա։

Քու դարդըն ինձի պառեցուց. ումըն ասիմ, Սայեաթ-Նովա,
Մի գրցի ձեռնեմէն ձեռըն՝ օսկէ թաս իմ, Սայեաթ-Նովա.
Փառնգբստանու միջէն էլած՝ զառ առլաս իմ, Սայեաթ-Նովա,
Ծալէ դաւթարըդ, դութին դի, ռանգ ու բուքար իմ քիզ ամա։

ԻՆՉ ԿՕՆԻՄ

Սայեաթ-Նովէն

Ինչ կանիմ հէքիմքն, ինչ կանիմ ջարէն՝
«Քու տբուածն ուրիշ գիր է, ուրիշ գիր.
«Էրում է մընլամքն, չէ լաւնում եարէն.
«Քու տբուածքն ուրիշ գիր է, ուրիշ գիր։

Սիրեկանն

Ասաց թէ. «Հիռացի, գըլխեմէս գնա,
«Քու ասածքն ուրիշ տիր է, ուրիշ տիր։
«Էտ քու արարմունքսքն, քիզի չի մընա,
«Քու ասածքն ուրիշ տիր է, ուրիշ տիր»։

Սայեաթ-Նովէն

Ասի թէ. «Էշխեմէդ չիմ հանդչում տանըս,
«Զեռնիրըս Թըլացաւ՝ չէ շինում բանըս,
«Էրեցաւ ջիգարըս, մաշեցաւ ջանըս՝
«Քու տբուածն ուրիշ գիր է, ուրիշ գիր»։

Սիրեկանն

Ասաց. «Իմ գիրեմէն քիզ չը կայ չարա,
«Գընա թէ խիլք ունիս՝ գըլխիդ ճար արա.
«Թէ չէ՝ անիլ կու տամ փարա փարա.
«Քու ասածքն ուրիշ տիր է, ուրիշ տիր»։

Սայեաթ-Նովէն

Ես բըլբուլ իմ, վարդըս ճնաց խաբումքն.
Կըրակ դըրիր սըրտես խուցի եարումքն.
Վունց գըրանքումքն կայ, վունց դաւթարումքն՝
Քու տբուածն ուրիշ գիր է, ուրիշ գիր։

Սիրեկանն

Ասաց թէ. «Քի դարար՝ շինեցիր շահըդ.
«Կըտրեցիր ադաբըդ, կըտրեցիր ահըդ.
«Մի վիթի արունըդ, մի շանց տա մահըդ,
«Քու ասածքն ուրիշ տիր է, ուրիշ տիր»։

Սայեաթ-Նովէն

Ասի թէ. «Մաղիրբդ սուրմա իս անում,
«Հենց գիդիս՝ չիմ գիդի, եար, չիմ իմանում.
«Սէրբդ ինձ մահ դառաւ՝ էլ չիմ դիմանում,
«Քու տրւածքն ուրիշ դիդ է, ուրիշ դիդ»։

Սիրեկանն

Թարաւուրի թագի լայկ քարքն իմ,
Շիրինի պէս Փահրադի դիդարքն իմ,
Ես էն գըլխէն Սայեաթ-Նովա եարքն իմ,
Քու ասածքն ուրիշ տիդ է, ուրիշ տիդ։

Սայեաթ-Նովէն

Հիդըս խօսի, մի կէնա խառվի պէս.
Տալդա տըւիր՝ դէմիս տարար ծովի պէս.
Կու մեռնիմ,—չիս տեսնի Սայեաթ-Նովի պէս.
Քու տրւածքն ուրիշ դիդ է, ուրիշ դիդ։

ԱՆԳԱՃԱՐԱ

Անգաճ արա բարիթաւուր,
Գընա հիդքն խաղ մի անի,
Եարի սիրաքն դաղ մի անի,
Էդ կըրակքն չաղ մի անի.
Զաղ շուռ արի
Եարսուն տարի,
Եարին բեզամաղ մի անի։

Բէդամաղ չ'ըլի միպանից,
Զը հիռանայ անմիդ բանից.
Եարքն նազով հօքիս հանից.
Հանած ծառ է,
Էշխով վառ է,
Զի վախէնա Սուլթան Խանից։

Խանի պէս դիւան իս անում,
Շահզադի պէս սան իս անում,
Էդ ինչ թաւուր բան իս անում.
Բանըդ բանդ է,
Գուշըդ դանդ է,
Քաղցըր լիզուով ջան իս հանում։

Ջան չունիմ եարի ձեռնեմէն,
Հիւանդ իմ էշխիդ կըռնեմէն,
Դիդ անիս ծոցիդ նըռնեմէն.
Նըռիդ օսկով,
Քաղցըր խօսկով,
Կրակ իս վէր ածում բերնեմէն։

Բերնիդ մէջքն լալ է, գօզալ.
Հաքիդ դաբքն ալ է, գօզալ,
Էդ ինչպէս խիալ է, գօզալ,
Էդ խիալով նազ իս անում. Եար,
ամա՛ չ

Նոյնպէս իս անուշ ինքնակոչին,
Հիրդ աշխարհին ցաւերը իս,
Հիմարդս ինկած դաղանքը իս.
Ղաղում ցաւած,
Ջանս է մնացած,
Ջանս հանձնելիս ցաւերը իս.

Ցաւերը իս փնտր ու փնտրով,
Ճիգերդս շուրջս իս գանգով,
Ինքնիրանդ իս խոնարհանգով.
Ջամ հաղիս,
Լաց ու թիւս,
Ջանս հանձնելիս էդ փբրանգով.

Էդ փբրանգով համ իս անում,
Դատաստանդը համ իս անում,
Աչս խաղերդը ջամ իս անում.
Ջամ իս Ջինի,
Դոշդ է սինի,
Շամանիերդը գամ իս անում.

Դամու գաւրան իս հատնաշա,
Դատաս գատաս մարդը քաշ ա,
Հաքածը գար ու գուսաշ ա.
Ղուսաշ գարով
Կու լայ տարով
Ով քիվի գու քայ թամաշա.

Թամաշա իս՝ վարթի ռանգ իս,
Ծով տեսած օսկու մահանգ իս.
Սանթուր ու քամանչա չանգ իս՝
Բարակ ձէնով սազ իս անում. Եար,
ամանն.

Սազ իս անում, դուր իս գալի.
Բաղչի մէջը ջուր իս գալի.
Փունջ մանիշակ նուր իս գալի,
Նուր գովիմ քի,
Անպատմելի,
Վարթի մէջը շուռ իս գալի.

Շուռ իս գալի բըլբուլի պէս,
Հուտը գու քայ սընբուլի պէս,
Սուփրի մէջը թայգուլի պէս.

Դատաս ֆատան,
Թէ հնին ֆըրան,
Քանց իս էլի գուն գուլի պէս.

Գուլ իս ֆոֆոր տերեւակալ,
Չիս թառամի, արեւակալ,
Թարաւուր իս բարեւակալ.
Բարով ասում քիզ,—
Մըտիկ գու միզ
Չէ թէ ասում,—Օրեւակալ.

Օրն ի օրն շատանում իս,
Էշխի մէջը մոգանում իս,
Սրտի գարդը հիդ անում իս.
Հիդ արա, տէս
Թէ թարիր իս,—
Խիլքը գըլխէս հատանում իս.

Տարար խիլքըս հէյրան արիր,
Բարակ միջէկը ակէյրան արիր,
Էդ կըրակով բիրեան արիր.
Հալրաթ մահիս հաղ իս անում.
Եար, ամանն.

Հաղ չունիմ խային եարիմէն,
Չիս ջոգում անգին քարիմէն.
Թաք չ՝անցկէնաս իղրարիմէն.
Ի չղրար անիս,
Հօքիս հանիս,
Գըրծընիմ ան ու գարիմէն.

Ան ու գար իմ քաշում, ամանն.
Քիզնից ուրիշ չունիմ գումանն.
Ծուցիդ մէջը չայիր չիմանն.
Չիմանն ասիմ.
Մուրախաս իմ,
Սըրտումս ունիմ իղրար իմանն.

Իղրար իմանէն չ՝անցկէնամ,
Առանց քիզ մին օր վուանց կէնամ.
Բէրնումըս դընիմ սանձ՝ կէնամ.
Սանձահարիմ,
Սիրտըս վառիմ,
Անհընանալու գանձ կէնամ.

Դանձ իս սիրով ու սիրելիան,
Դիմէք ունիս անպիտանին,
Լալ ու ցաւանիր պատուական.
Պատիւ անիմ
Քանի ցան իմ՝
Ձուն աշխարհս է անցողական։

Անց մի կէնա՝ թէ հարայ իս.
Մի մար ծընած, մի մար դալ իս.
Դարուլ անիմ թէդուզ հալիս՝
Ձունքի իլթիմաղ իս անում. Եար,
ամեն։

Իլթիմաղըս Էս է, ցանիմ.
Օրըս հիդրդ կէս է, ցանիմ.
Էշխին էսդու պէս է, ցանիմ.
Ցանիմ, ցան իս,
Անիմանն իս.
Աշխարհս ուս ու տիս է, ցանիմ։

Ուս ու տիս արա, իմացի.
Մըտիկ արա աղ ու հացի.
Թաք իդրարին դիրուստ կացի.
Կաց իդրարին
Ամի շարին՝
Էր մեռանիմ, վերէս լացի։

Լաց ելիս՝ աչկերդ դայ անիս,
Դաստա ուէհան փայ անիս,
Արտասուքդ՝ հայ անիս.
Ցաու ցուր իս,
Խիստ սրխուր իս.
Աղալաթերդ Շահի անիս։

Շահի զուրիաթ թաքաղին
Ձի հարցընի դուդուն դաղին.
Վայ թէ էլ չը խօսիս վաղին.
Վաղին կու լամ,
Նստիմ ու լամ,
Ասիմ բարիթաուր խաղին։

Խաղ իս էլի, Սայեաթ-Նովա.
Դաղ իս էլի, Սայեաթ-Նովա.
Բաղ իս էլի, Սայեաթ-Նովա.
Գլուխդդ փիանդաղ իս անում,
Եար, ամեն։

ԽԱԼԽԻ ՆՕՔԱՐ ՍԱՅԵԱԹ-ՆՈՎԱ

Արի համով դուլուդ արա, խալխի նօքար Սայեաթ-Նովա.
Ամէն մարդ չի կանա ճանդի շահով շրքար, Սայեաթ-Նովա.
Ով քիզի լեղի պարքիվէ, դուն տու շարքար, Սայեաթ-Նովա.
Դաստ արա շուշէդ չը կօտրին, չը խրփին քար, Սայեաթ-Նովա։

Թէդուզ գրպրատանքն պահ տաս՝ ծիծով չի խրբատի խիվքն,
Իսչրու անձնէն չը դուս էհայ անախատէլի էն չար դիվքն.
Բէդասլքն ասել չի դառնայ, թօլով չի սիպտակի սիվքն.
Ծուռը փէտքն չի դրրբստի ռանդան, դուրգար Սայեաթ-Նովա։

Թէդուզ իմանաս, գիդէնաս աստղէրու համբարքքն սիրուն.
Անբարի գուրձքն կօրած է՝ կարթա Հարանց վարքքն սիրուն.
Ավիտարանի խօսքիրքն՝ մարգարիտէ կարքքն սիրուն.
Մի ածի խօզի առչիվքն լալ ու գօվար, Սայեաթ-Նօվա։

Թէ էս կինաց փառքն չուզիս՝ էն կինաց ալմասն կու տան.
Թէ հոքուդ խաթիր շալ հաքնիս՝ պոր քաշած առլասն կու տան.
. . . . . .
Մօտովանիս արած միխքըդ, չանիս ինքար, Սայեաթ-Նովա։

Վուր տիդ հանիք, վուր տիդն սուք, վուր տիդ սոյրաթ խաղ է ըլում.
Վուր տիդ ժամ, վուր տիդ պատարաք, վուր տիդ սիրով տաղ է ըլում.
Թէ վուր հոքուդ կամքն իս անում, մարմինդ բէդամաղ է ըլում.
Վուր մէ դարդին կու դիմանաս, դուն ջըրատար Սայեաթ-Նովա։

Ջ Ի Ի Ա Ն Ի

(1846—1909)

ԿՈՒԳԱՆ ՈՒ ԿԵՐԹԱՆ

Ձախորդ օրերը ձմրան նման կուգան ու կերթան,
Վհատելու չէ, վերջ կունենան, կուգան ու կերթան.
Դառն ցաւերը մարդու վերայ չեն մնայ երկար,
Որպէս յաճախորդ՝ շարուէ շարան կուգան ու կերթան։

Փորձանք, հալածանք և նեղութիւն ազգերի գլխից,
Ինչպէս ճանապարհի կարաւան կուգան ու կերթան.
Աշխարհը բուրաստան է յատուկ, մարդիկը ծաղիկ,
Որքան մանուշակ, վարդ, բալասան, կուգան ու կերթան։

Ո՛չ ուժեղը թող պարծենայ, ո՛չ տկարը տխրի,
Փոփոխակի անցքերը զանազան, կուգան ու կերթան.
Արևը առանց վախենալու ցայտում է լոյսը,
Ամպերը դէպի աղօթարան կուգան ու կերթան։

Երկիրը ուսեալ զաւակին է փայփայում ժոր պէս,
Անկիրթ ցեղերը թափառական կուգան ու կերթան.
Աշխարհը հիւրանոց է, Ջիւան, մարդիկը հիւր են,
Այդպէս է կանոնը բնական՝ կուգան ու կերթան։

ԸՆԿԵՐԸ

Բարի գեղեցիկ, առաքինի ընկերը՝ մարդուն
Փայլեցնում է արևի պէս պատկերը մարդուն.
Ինչ մարդ ունենայ իր մօտը հաւատարիմ ընկեր,
Ցերեկի նման անցնում է մութը գիշերը մարդուն։

Կեանքդ նուիրես ընկերի լաւին՝ քիչ է դարձեալ,
Այնպէսն է հոգեկան լուսատու լապտերը մարդուն.
Ընկեր եմ ասում՝ ասուածալախ, ճշմարիտ ընկեր,
Որ բարձրացնէ աստիճանը միշտ վերը մարդուն։

Ծշնամինները իր վերայ գալուն ժամանակը,
Զարկին, հարստացան ընչերն է սուտերը մարդուն,
Թվ որ ունենայ մանկրիմ ընչեր, Ջիւան աշրպ,
Ջի սպիտակիր ասենեն մէկ հերը մարդուն։

ԱՅՍ ԳԻՇԵՐ

Մատուռակ, ինչ, ինձ գինի տուր այս գիշեր,
Մոռնչում եմ, սիրտս է տխուր այս գիշեր.
Ինձ մի բաժով ուրախացուր այս գիշեր,
Գանձ չանցնեն ժամերս գուր այս գիշեր։

Ճանրնչ տարա, մի ձանձրանար, գեղանի.
Լեր իմ ցաւիս դու ցաւակից, գովանի.
Թեր, մատուռակ, թեր գինին հին մատանի,
Վատ կրակիս սրբարկէ ջուր այս գիշեր։

Տուր թեզ ինձ, գեղեցիկս, սիրուն,
Անուանդ հետ պիտի կապեմ անուն.
Արդէն գիտես, որ չի տանիր իմ քունս,
Ելլ գրօանենք, օդն է մաքուր այս գիշեր։

Հոգայս հատար, բաւ է կրեմ քո ցաւը,
Գերի գառնամ ու վառեմ քո կամաւը.
Ինձ սիրում ես, թէ ոչ, ասա իրաւը,
Տուր ինձ շուտով վճռական լուր այս գիշեր։

Լուր իմ խօսքս, խնդրում եմ խոնարհաբար,
Մի այլայլիր, ես չեմ խօսում անկատար.
Եթէ լինելու ենք մէկ մէկու համար,
Արի կապենք պայման ամուր այս գիշեր։

ԱԲԵԼ-ՔԱՀԱՆԱ

Կեղծ-գաստական գրականութիւնից մի այլ նմուշ գտնուած է սոյն հատորի Էպոսի բաժնում. տես Աբել. Բագրատունու Հայկ Դիւցազն-ի հատուածները։

Ի ՓԱՄԲԻՌՆ ՀԱՅԿԱԶՆԻ

Բամբիռն փառապոշ յաւիտենից հակայապանց,
Յարփիսակիրզն յաղեղնալոյսն ի բնագաւառ մարդկան գրոհի,
Ի մարմն արանց քաջազեղանց անձնապեղից և հերապանծ,
Յամենազանն յերանափառն յաստուածազարդ ծայրն աշխարհի՝

Փոքունչեանց ի բարձր ի Հայկաբան,
Յազատ լերանցն յարտեան.
Ի լրառնիստ խորանդընդոց
Մեծամեռացն ամանակի՝
Կոչել ըզփառս Մեծաց Հայոց,
Զհայրենին հուր կոչել նախկիս։

Ի բամբ և բոմբ երկնագաշնակ սրտայաբոյց բամբռանդ Հայկին,
Դուպարեցան Մասիք, Կովկասք, արկեալ ի ձորս ըզսոնք Տիտան.
Ընդ չորք հողմունս վարդեալ վաղէր յաղթանակաւ Արամն արին.
Զիմն անարի պայթուցանէր յոտին Մասեաց խարտեաշ Տիգրան.

Թափեալ դափին սահմանք Հայոց
Յազատութեան ընդարձակ ծոց.
Իւղոյ մեղու խաղան հոսանք,
Մերք պարարին, պնդին արուորք,
Գեղեցկագոյն նազեն կուսանք,
Եւ բողբոջեն մանկութիւնք նորք...

Բամբիռն Հայոց, բամբիռն անմահ, օճան ազանց 'ւ երկնից անգամ,
Ըզմէջ լուութիւնք և մոռացօնք, և դարք դանդաղք և անափետ...
Սթափեաց, փոքունչեաց, տուր զպատուէր Տեառն և Հայութիւն հակայանգամ
Եռանդն ի սիրտ, հուր ի բազուկ, երգ ի բերան՝ դիմեսցէ զհետ.

Ոստիցէ բազդ ի կառս Հայկին
Ընդ լուսածիր հետս Յարդդոդին.
Եւ ծանիցէ յապուշ աշխարհ՝
Թէ միշտ հակեն փառք հայրենի.
Վերասլանայ և սիրտ խոնարհ
Եւ զոինչ Բամբռանըն Հայկազնի։

Հ. Ղ. Ալիշան

ԵՏՅՈՒՆԵՏ ԶՐԱՆԵՏ

Անցման շրջանը XIX-րդ դարի սկզբում բնորոշվում է նրանով, որ գրաբարի բովանդակությունը աշխարհիկ է, իսկ լեզուն մնում է գրաբար՝ մինչև Խաչ. Աբովեանի «Վէրք Հայաստանի»-ի հրապարակ գալը։

Ճ. ԱԼԱՄԴԱՐԵԱՆ

(1796—1834)

ԱՆՈՒՐՋՔ

Յառաւօտուց ի յանկողնի
Սէր նազելւոյս գիս խորովէր.
Անքուն զգիշերն ես անցուցի,
Զի տանջէր գիս նորա պատկեր։

Լեղուս ցամաք, հոգւով վհատ,
Տկար մարմնով կայի անկեալ.
Անուրջք անոյշք ի նինջ կիսատ
Զթաց աչօքս կային սփռեալ։

Միշտ մտատանջ, միշտ կաթոգին,
Ալեկոծեալ նաւու նման.
Դեղն իմ ցաւոց սէրն էր անգին,
Բայց չերեւէր նորայն նշան։

Այգին ցնցուղ ցայտեալ յիմ տուն՝
Մերժեաց յինէն զմէգ ընոյն.
Բառեմ զիմ ուշ, լսեմ զդոփիւն
Ոտնաձայնի իմ նազելւոյն։

Երգ է այդ, ճնչեմ մեղմով,
Հոգւոյս տանջող և յարթնութեան.
Աւաղ գլխոյս, գոչեաց ճեպով,
Ընդէ՞ր մաշիս, սրտիս իշխան»։

Նազելւոյս ձայնն յունկն իմ հնչեալ՝
Ցիս արծարծեաց զկայծ կենաց.
Ցնծութիւն ինչ հանրածաւալ
Հոգւոյս մարմնոյս խակոյն ախրեաց։

ԳԱՐՈՒՆ

Ցամսավերջն ապրիլի զպատուհանս բացի,
Զձիւնաթաղ դաշտորայս ծաղկազարդ տեսի.
Արտասուք եռանդունք զայտս իմ այրեցին,
Զիմ անդարձ դերութիւն յուշն իմ մուտ ածին։

Լեղուապէս դառնացան քիմք վհատ հոգւոյս,
Զմրեցան զգայարանքս, հատան ելք շնչոյս։
Ափսոս ինձ, ասացի քիւր անպամ յայն օր,
Շատ անէծս թափեցի ի ծննդեանս վատ օր։

Մաշեցայ, թոշնեցայ, մոր խոր ի քուն,
Չչար կսկիծ հէք այրուոյս արկի ծով յանհուն։
Դշխոյն մեծ անմահից էջ ինձ յայց տեսելեամբ,
Որպէս թէ ի փոսոյ զիս ելոյզ ձեռամբ։

Աներկմիտ մօտ մատեայ ի համբոյր ոտին,
Գերբնապէս սքանչելեօք զիս աղատողին։
Բամբ ձայնեղ թոչնակաց ճոխ դայլայլեցին,
Կենսածին տիրամօրն փառս վերերգեցին։

Երանի՜ ասացէք կարմրացայս վարդիս,
Քաջալերս տուք նմա ի գով պաշտպանիս։
Աւա՜ղ ինձ, նեղսիրտ կարճամիտ լալոյս,
Զիարթ զիս կարծեցի կորուսեալ անյոյս։

Նախատինք իմ նեղչաց՝ նետք եղեն ինքեանց,
Նանրացան ցաւք նոցա, անկան իւրեանց ցանց։
Յաւագնեալք, օրհնեցէք զանուն տեառն յաւէտ,
Դիք զյոյս ձեր յօգնութիւն խաչին փրկաւէտ։

ՅԵՐԿՈՒ ՁԵՌԻՆ

Յերկու ձեռին երկու մոմ՝
Ինձ ընդ առաջ էլ յիւր տան.
Մի հարցանէք ով էր դա,
Հրեշտակ, թէ կոյտ լուսագեղ։

Ամօթն գնա վարդ արար,
Ես հիացեալ զարձայ քար.
Այն զինչ օր էր և զինչ ժամ,
Յորում տեսի ես կեանք նոր։

Լիաձրագ յայնմիկ տան
Ի մարդաշատ բազմութեան
Ի մէջ աղջկանց և հարսանց
Յոտին կայր ոմն անդ յանկեան։

Այն օրիորդն էր պարկեշտ,
Ինձ պատահեալ առ դրամբ տան.
Զոգիս գրաւեաց յիւր ի սէր,
Ի նմա տեսի ես կեանք նոր։

Մարգարտափայլ մարմինն էր,
Հասակն էր յոյժ վայելուչ.
Զոտիւքն իւր վարսք քաշ գային,
Ի գոյն քրքմոյ փայլէին։

Դիմացն շքեղ երևոյթ
Յօնից, աչաց, այտից զեղ,
Շրթանց լեզուին համ անոյշ՝
Խոստանային ինձ կեանք նոր։

Ա՜խ, ասացի թմրեցայ,
Սիրտս սկսաւ գողդողալ.
Զաշխարհ համայն մոռացայ,
Ի գեղ կուսին ապշեցայ։

Բամբ կոչելոցն յայն հանդէս
Անդ իմ մեծ բաղդ ոխային.
Զի ժերձաւորք այն կուսին,
Փեսայ զանձն իմ ձայնէին։

Եթէ զաշխարհ լի գանձուք
Ինձ ոք բաշխէր ի պարգև՝
Ոչ տեսանէր այնքան բախ,
Որքան ի գոլս առ կուսին։

Արդեօք գուցէ՞ յաշխարհի
Սիրոյ նման իր հզօր.
Սէրն ի ձեռաց Արարչին
Մեզ մահացուացս է ձիր նոր։

Նանրախորհուրդ ոգդ մարդկան,
Շատ մի՛ սիրեր դու զաշխարհ.
Նա թշնամի է անզութ,
Զար քան զբարք մահաթոյն։

Ցանցիւ սիրոյն զքեզ կալթէ,
Ի հաղր անել ըմբռնէ.
Ապա զսիրոյդ առարկայ,
Ի քէն արտաքոյ կոդոպտէ։

ՈՂՋՈՅՆ ՀՐԱԺԵՇՏԻ ԶԱՒԱԿԱՑ ԻՄՈՑ

Հայր

Հօր համայն որբոց, փրկչին Քրիստոսի,
Ցանձն առնեմ զձեզ՝ դստերք նազելի.
Սուրբ աջոյ նորա անտես հովանի,
Ի գլխոց ձերոց մի՛ պակասեսցի։

Երթամ ես յաշխարհ՝ ի ձէնջ յոյժ հեռի,
Երթամ որոնել զայն, զոր կորուսի.
Արտասուօք, ողբովք՝ ձայնիւ սրգալի,
Խնդրեցից զնա յամենայն երկրի։

Մարիամ

Զի՞նչ խօսիս, հայրիկ, զի՞նչ դու կորուսեր,
Եւ զի՞նչ գտանել յանծանօթ երկիր
Կամիս, ասա մեզ, մի՛ թաղուցաներ,
Տա՛ր և զմեզ ընդ քեզ, հա՛յր, մի՛ արտասուեր։

Աննա

Հայր մեր, ես գիտեմ, զմայր մեր ողբայ,
Զմահ նորա յիշեալ՝ մորմոքի, սրգայ.
Ե՞րբ սա մոռասցի զանուն, զկերպ նորա,
Ե՞րբ հանգիստ տեսցուք մեք զհոգի սորա։

Կատարինէ

Մի՛ արտասուեր, հայր, մի՛ սգար, ողբար,
Արտասուք զքեզ մաշեցին խպառ.
Զիս ո՞ սիրեսցէ՝ զկատեայս քո թշուառ՝
Թէ զքեզ Տէր տարցէ յիւր երկնից դասառ։

ԱՐԵՎԵԼԱՀԱՅ ԵՎ ԱՐԵՎՄՏՅԱՀԱՅ ԵՂՈՒԱԳՈՅՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆ

ՈՒՓՍԻԼ ՊԱՏԿԱՆԵԱՆ

(1830—1892)

1.

ԱՐԱՔՍԻ ԱՐՏԱՍՈՒՔԸ

Մայը Արաքսի ափերով
Քայլամոլոր կնում եմ,
Հին հին դարուց յիշատակ
Ալեաց մէջը պտրում եմ։

Բայց նոքա միշտ յեղյեղուկ,
Պղտոր ջրով եզերքին
Դարիւ դարիւ խփելով,
Փախչում էին լալագին։

—Արաքս, ինչու՞ ձկանց հետ
Պար չես բռնում մանկական,
Դու դեռ ծովը չը հասած՝
Սգաւոր ես ինձ նման։

Ինչու՞ արցունք ցայտում են
Քո սէգ, հպարտ աչերից,
Ինչու՞ արագ փախչում ես
Այդ հարազատ ափերից։

Մի պղտորիլ յատակդ,
Հանդարտ հոսէ խայտալով,
Մանկութիւնը քու կարճ է,
Շուտ կը հասնիս դէպի ծով։

Վարդի թփեր թող ըլնին
Քո հիւրընկալ ափի մօտ,
Սոխակները նոցա մէջ,
Երգեն մինչև առաւօտ։

Մշտադալար ուռիներ
Սառ ծոցի մէջ քու ջրին,
Ճկուն ոստն ու տերև
Թող թաց անեն տապ օրին։

Ափերիդ մօտ երգելու
Հովիւք թող գան համարձակ,
Գառն ու ուլը քո վճիտ
Ջուրը մտնեն միշտ արձակ։

Մէջքը ուռցուց Արաքսը,
Փրփուր հանեց իր տակից,
Ամպի նման գոռալով,
Էսպէս խօսեց յատակից.

«Խիզախ, անմիտ պատանի,
Նիրհես ինչու՞ դարևոր
Վրդովում ես, նորոգում
Իմ ցաւերը բիւրաւոր։

Սիբելիի մահից յետ
Ե՞րբ ես տեսել, որ այրին
Ոտքից գլուխ պճնի
Իր զարդերով թանգագին։

Որի՞ համար զարդարեմ,
Որի՞ աչքը հրապուրեմ,—
Շատերն ինձ են ատելի,
Շատերին ես օտար եմ...

Կար ժամանակ, որ ես էլ՝
Շքեղազարդ հարսի պէս
Հազար ու բիւր պչրանքով
Փախչում էի ափերէս։

Յատակս պարզ ու վճիտ,
Կոհակներս ոլորուն,
Լուսաբերը մինչև այդ
Ջրիս միջին էր լողում։

Ի՞նչս ճեաց այն օրից,
Ո՞ր ջրատօտ գեղերս,
Ո՞ր իմ շէն քաղաքից,
Ո՞ր բերկրալի տեղերս...

Քանի որ իմ զաւակունք
Այսպէս կրա ճեան պանդուխտ,
Ինձ միշտ ագուր կը տեսնէք,
Այս է անխաբ իմ սուրբ ուխտս...

Էլ չը խօսեց Արաքսը,
Յորձանք տուեց ահագին,
Օղակ օղակ օձի պէս
Առաջ սողաց մոլեգին։

2.

ՆԿԱՐԻՉ

Ակնապիշ անձայն, խորհուրդ ճակատիդ,
Պատանի, ո՞ւր ես մտքով մոլորած.
Ներկ ու վրձիններ ցիր ցան առաջիդ,
Վշեայ կտաւը քո հանդէպ փռած։

Շուռ տուր աչերդ, նայէ դէս ու դէն,
Տես քեզ ծաղրում է անմիտ ամբոխը.
Զարթիր, սիրելի, այդ անուշ քընէն,
Գոնէ մի անգամ հանէ քո ոխը։

Բայց դու ներում ես նոցա վեհ հոգով,
Քուլ ես աշխարհի ունայն շշուկին...
Յանկարծ աչերդ փայլեց սուրբ շնորքով,
Հսկայի սիրտդ թնդաց խիստ ուժգին։

Առիր վրձինը, թաց արիր ներկով,
Շունչ տուիր անշունչ կոպիտ կտաւին.
Երկնից խորհուրդը մեկնեցաւ քեզմով,
Քեզ անկարելին անյայտ է բնաւին։

Սէր, ատելութիւն, հանճար, բարկութիւն
Տուիր պատկերին մատիդ շարժուածքով,
Ինչ որ չի յայտնեց ճարտարի լեզուն,
Դու պարզ յայտնեցիր անձայն խօսուածքով։

Ապշեց ամբոխը, վազեց, յառաջեց
Քո կենդանագիր պատկերի դիմաց,
Ծնկաչոք զմուռս ու հալուէ խնկեց,
Գոչեց մեծաձայն, «դու է իմ Աստուած»։

Բայց, ա՜խ, քո անքուն ժամերու ճիգը
Քանի մի արծաթ հազիւ դին դրին.
Ստեղծողդ դարձաւ քո խեղճ խրճիթը,
Ակեր շարեցին շուրջ քո պատկերին։

ՄԻՔ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆ

(1829—1866)

ԵՐԳ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ

Ազատն Աստուած այն օրից,
Երբ հաճեցաւ շունչ փչել,
Իմ հոգանիւթ շինուածքին
Կենդանութիւն պարգևել,
Ես անբարբառ մի մանուկ՝
Երկու ձեռքս պարզեցի
Եւ իմ անզօր թևերով
Ազատութիւնն գրկեցի։

Մինչ գլուխը անհանգիստ
Օրօրոցում կապկապած
Լալիս էի անդադար,
Մօրս բունը խանդարած,
Ինդրում էի նրանից
Բազուկներս արձակել,
Ես այն օրից ուխտեցի՝
Ազատութիւնը սիրել։

Թոթով լեզուս մինչ կապերը
Արձակուեցան, բացուեցան,
Մինչ ծնողքս իմ ձայնից
Ինդացին ու բերկրեցան,
Նախկին խօսքն, որ ասեցի՝
Զէր հայր, կամ մայր, կամ այլ ինչ.
Ազատութիւն, դուրս թռաւ
Իմ մանկական բերանից։

«Ազատութիւն», ինձ կրկնեց
Ճակատագիրն վերևից.
«Ազատութեան դու զինուոր
Կամիս գրուել այս օրից։
Ո՜հ, փշոտ է ճանապարհդ,
Քեզ շատ փորձանք կսպասէ.
Ազատութիւն սիրողին
Այս աշխարհը խիստ նեղ է։

—Ազատութիւն,— գոչեցի,—
Թող որոտայ իմ գլխին
Փայլակ, կայծակ, հուր, երկաթ,
Թող դաւ դնէ թշնամին,
Ես մինչ ի մահ, կախաղան,
Մինչև անարգ մահու սիւն
Պիտի գոռամ, պիտ կրկնեմ՝
Անդադար—Ազատութիւն։

Դ. ԴԱՐԲԻՆՅԱՆ

ԾԻԾԵՌՆԱԿ

Միծեռնակ, ծիծեռնակ,
Դու գարնան սիրուն թռչնակ.
Դէպի ուր, քնձ ասա,
Թռչում ես այդպէս արագ։

Ա՜խ, թռիր, ծիծեռնակ,
Ծնած տեղս՝ Աշտարակ.
Ասդ շինիր քո բունը
Հայրենի կտուրի տակ։

Ասդ հեռու ալևոր
Հայր ունիմ սգաւոր,
Որ միակ իր որդուն
Սպասում է օրէ օր։

Երբ տեսնես դու նրան,
Ինձնից շատ բարև արա,
Ասա՝ թող նստի լայ
Իւր անբաղդ որդու վրայ։

Դու պատմէ, թէ ինչպէս
Ասա անտէր ու խեղճ եմ ես,
Միշտ լալով, ողբալով
Կեանքս մաշել, եղել է կէս։

Ինձ համար ցերեկը
Մութ է շրջում արեգը,
Գիշերը թաց աչքիս
Քունը մօտ չի գալիս։

Ախէր, որ չի բացուած
Թառամեցայ միացած,
Ես ծաղիկ գեղեցիկ,
Հայրենի հողից դրկուած,

Դէհ, սիրուն, ծիծեռնակ,
Հեռացիր, թռիր արագ
Դէպի հայոց երկիրը՝
Ծնած տեղս—Աշտարակ։

ՕՄԲՈՍ ՇՈՒՇԱՆԻՑ

(1840—1907)

1.

ԵՐԱՉ

Ես լսեցի մի անուշ ձայն—
Իմ ծերացած մօր մօտ էր.
Փայլեց նշոյլ ուրախութեան,
Բայց ափսոս, որ երազ էր։

Կարկաչահոս աղբիւր այնտեղ՝
Թաւալում էր մարգարիտ.
Նա յատակ էր, որպէս բիւրեղ.
Այն երազ էր ցնորամիտ։

Եւ մեղեդին տխուր, մայրենի՝
Ցիշեց մանկութեան օրերը.
Մօրս համբոյրն ես զգացի.
Ա՜խ, ափսոս, որ երազ էր։

Կուրծքին սեղմեց կարօտագին,
Աչքերը սրբեց շատ՝ թաց էր.
Բայց արտասուքս գնում էին...
Ա՜խ, այդ ինչու երազ էր։

2.

ԳԻՇԵՐ

Սիրուն պատկեր։ Պարզ գիշեր էր։
Եւ օդեղէն ովկիանում
Փայլում էին անթիւ աստղեր,
Եւ ուրախ էր սիրտս զարկում։

Ամբրոսական ծաղիկներ վառ
Անուշութիւն էին բուրում,
Եւ երկնքի յօդ կենարար
Բնութիւնն էր զովացնում։

Եւ ես անխռով երգում էի,—
Եւ իմ երգս խիստ մաքուր էր.
Ազատութիւն էի երգում,
Հայրենիքի պարծանք ու սէր։

3.

ՕՐԻՈՐԴԻ ԱՐՑԱԹՈՒՔԸ

Հանգիստ իմ անոյշ, անցաւ, գնացիր,
Միայն վէրք անբոյժ սրտումս թողեցիր։
Սոխակ գեղեցիկ կանաչ պարտիզում,
Երգելով քաղցրիկ ինձ չէ գրաւում։
Թեզանով միայն երջանիկ էի,
Տիկին ինքնիշխան ինձ կարծում էի։
Ցերեկը մենակ փակուած սենեակում՝
Ողբում եմ անյաղ—ոչ ոք չի լսում։
Գիշեր է գալիս—մահիճ եմ մտնում,
Տրտում է հոգիս, քունս չէ տանում։
Ո՜հ, սիրտս այրուած, ողջ քեզ է կանչում,
Ողջ քո անմոռաց անունդ է յիշում։
Մազեր թուխ երկայն, աչեր գրաւիչ,
Ինչ հասակ, ինչ ձայն, ինչ հոգի կտրիճ։
Անգութն ինձ խաբեց, ուրիշին սիրեց.
Ա՜խ, նա ինձ դեռ վաղ պատրաստեց դագաղ։

4.

ՄԵՌԱՒ ԻՄ ՄՈՒՍԱՆ

Մեռաւ իմ մուսան, հանգաւ և կրակ,
Անտառը լցուեց չոր տերևներով.
Երկինքը ծածկուեց, փախաւ արեգակ,
Էլ ես չեմ ապրում ուրախ երգերով։
Այժմ ինձ մնաց միայն փշրանքներ,
Մայր մտաւ ահա և նշոյլ վերջին։
Հանում եմ գրանս, և՛ գէն, և՛ գարդեր,
Ցանձնում եմ գորան մանուկ սերունդին։

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԱՀԱԶԻԶ

(1840—1911)

ՃԱԽԱՐԱԿ

Մանիր, մանիր, իմ ճախարակ,
Մանիր սիպտակ մալանշներ,
Մանիր թելեր հաստ ու բարակ,
Որ ես հագամ իմ ցաւեր։

Զէք եմ ածել ականջներդ,
Նոր շինել եմ շրաբուիկ,
Գէջ, շուտ շարժիր լայն թևերդ,
Ոստեր շինիր սրուլիկ։

Մանիր, մանիր, իմ ճախարակ,
Լիսեռնիկդ պատիր,
Մանիր թելեր հաստ ու բարակ,
Իլկիդ վրայ փաթաթիր։

Տիգրանիկա գուլպայ չունի,
Հանդ է գնում ոտաբաց,
Գաբրիէլս չուխա չունի,
Միշտ անում է սուգ ու լաց։

Մանիր, մանիր, իմ ճախարակ,
Մանիր սիպտակ փաթիլներ,
Մանիր թելեր հաստ ու բարակ,
Որ ես հագամ իմ ցաւեր։

Զրուալ չունինք, չաթու չունինք,
Ո՛չ սամոուէն, ո՛չ պարան,
Այսպէս աղքատ դեռ եղած չենք,
Կարուել է ամեն բան։

Դեռ հարս էի, որ գործեցի,
Քանի կարպետ խալիչա,
Բայց դրանցից շուտ զրկուեցի,
Հիմա չունիմ մի քէչա։

Կարմիր օրս երբ անցաւ
Եւ պարտք մնաց թէև քիչ,
Պարտատիրոջ սիրտն էլ անցաւ—
Եկաւ տարաւ ամեն ինչ։

Մանիր, մանիր, իմ ճախարակ,
Մանիր սիպտակ քուլաներ,
Մանիր թելեր հաստ ու բարակ,
Որ ես հագամ իմ ցաւեր։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

(ծնվ. 1864 թ.)

Ժամանակակից հայ քնարերգության մեջ առանձնակարգ տեղ է գրաված Յովհաննէս Յովհաննիսեանը։ Հրապարակախոսական բնույթ ունեցող չափական գրուածքներից յետոյ (Ռ. Պատկանեան և Մ. Շահազիզ) Յ. Յովհաննիսեանի բանաստեղծութիւնները հիմք դրին հայ նորագոյն քնարերգության զարգացմանը։ Մինչև ժամանակ ապաստրոֆ դարձան այն պատմական օրէնքի, որ դասակարգային պայքարի տրամրին բանաստեղծութիւնն առանում է քաղաքական, հրապարակախօսական բնոյթ։ Եւ պատմական ապարդէք թիւրեալ նոր դասակարգի յաղթանակից յետոյ միայն այդ դասակարգի գրականութիւնը դառնում է գեղարուեստական, կեանքի նոր բովանդակութիւնը անդրադարձնող արուեստի նոր ձևեր գտնելով։

Հայ բուրժուական կենսունակ լիբերալիզմի պայքարի տրամրին ընդդէմ ֆէոդալիզմի աւանդական կարգերի՝ Պատկանեանի և Շահազիզի գրուածքները մարտական—քարոզչական և քաղաքացիական բնոյթ ունէին։ Մինչդեռ պայքարի շրջանին յաջորդած յաղթանակի շրջանը, այն է 80-ական թուականները հրապարակ հանեցին Յով. Յովհաննիսեանին, որը ժամանակի լիբերալ քաղաքացու յոյզերի ու ոգեշնչերի արտայայտութեան համար գտաւ նոր ձևեր։

Սկզբնական շրջանում նա կրել է հայ և օտար բանաստեղծների ազդեցութիւնը. ըստ որում հայ ազդեցութիւնը քաղաքացիական-հրապարակախօսական բնոյթ էր կրում (գլխաւորապէս Շահազիզ), իսկ օտարը՝ գեղարուեստական (Նեդսօն, Լերմոնտով, Հայնէ)։

Յով. Յովհաննիսեանի քնարը սուսկ անհատական մոտիւներին զուգընթաց արձագանքել է հայ իրականութիւնից բղխող հասարակական գրեթէ բոլոր տրամադրութիւններին։ Նա հանդէս է եկել մերթ իր յուզիչ սիրային երգերով, ուրախ և յոռի տրամադրութիւններով, մերթ «ազգի» ցաւն ու տառապանքը արտայայտող ողբերով կամ մերթ որպէս ջատագով «սուրբ ճշմարտութեան» ու «վեհ գաղափարների», որոնց մէջ սակայն շատ յաճախ կարելի է գտնել Գրիգոր լուսաւորչից ու սուրբ Էջմիածնից բղխող «ճշմարտութիւններ» ու գաղափարներ։ Յով. Յովհաննիսեանը, ճիշտ է, Էջմիածնին նուիրած ներբողների կոդքին դրել է նաև աղքատների ու խեղճերի վիշտն ու տառապանքը լա-

ցող, եղբայրասիրութեան պատգամներ քարոզող երգեր, սակայն դրանք ամեն մի բարեսիրտ լիբերալի և բարեպաշտ քրիստոնեայի յատուկ երգ ու ողբեր են։ Իբրև հայ լիբերալ, իսկ երբեմն-երբեմն իբրև ազգային դեմոկրատ՝ նա խարազանել է օտարացող հայ բուրժուային, հարուստին։

Յով. Յովհաննիսեանին պէտք է համարել խօսքի և ձևի վարպետ։ Իր անհատական ու հասարակական յոյզերի մարմնացման համար գոյներ ու պատկերներ նա մեծ հմտութեամբ ու ճաշակով քաղել է նաև ժողովրդական բանաստեղծութիւնից։ Նրա ժողովրդական մոտիւներով գրած բանաստեղծութիւններն այնքան են հարազատ ու մօտ ժողովրդական քնարերգութեան սկզբնաղբիւրին, որ յաճախ դժուար է լինում տարբերել բանաստեղծի անհատական ստեղծագործութիւնը ժողովրդականից։

Հայ յետագայ լիրիքները այդ տեսակէտից շատ բան են սովորել նրանից։

Յով. Յովհաննիսեան յայտնի է նաև իր թարգմանութիւններով ռուս և օտար բանաստեղծներից։

Սուրխաթեան

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

1.

ՓԱՓԱԳ

Կուզէի լինել կարկաչուն վտակ,
Վճիտ ալիքը դրախտի բուրմունքով,
Եւ առաւօտեանն, ինչպէս ցող յատակ,
Երեսդ ոռոգել գոհար շիթերով։

Կուզէի լինել սօսի հովասուն,
Համարձակ փուած կանաչ սաղարթով,
Եւ միջօրէին այդ դէմքիդ սիրուն
Հովանի լինել հեգիկ շրշիւնով։

Կուզէի լինել ծաղկոցում բացուած
Քաղցրաբոյր մի վարդ, երկնից արժանի,
Եւ սիրոյ ժամին, խանդից արբած,
Զարդարանք լինել կրծքիդ գեղանի։

Եւ շող դառնալով դարձեալ արևի՝
Կուզէի պայծառ աչերումդ վառել,

Կամ ինչպէս քնքոյշ ոսկեվառ գօտի՝
Զքնաղ իրանիդ փաթաթուել, փարել։

Լուսափայլ աստղիկ կուզէի դառնալ,
Քաղցր մանկան պէս ծիծաղն երեսին,
Ինչպէս ադամանդ շողշողալ, ցոլալ,
Ո՛վ իմ թագուհի, քո բաց ճակատին։

Կուզէի լինել լուսին ամօթխած,
Արծաթի փայլով մազերդ շոյել,
Այտերդ գգուել սիրուց բորբոքուած,
Դողդոջ շրթունքիդ համբոյրներ դրոշմել։

Կուզէի լինել սիրահար սոխակ
Եւ ձեռիդ գերի, վանդակում փակուած,
Ականջիդ հնչել հրաշալի նուագ,
Մեղմ օրօր ասել քո հոգուն զմայլուած։

Եւ կախարդական տաճարում կանգնած՝
Կուզէի տեսնել ես քեզ Անահիտ,
Եւ երկրպագել՝ առաջիդ չոքած՝
Սուրբ գեղեցկութեան անմահ տիպարիդ։

2.

ՄՆԱՔ ԲԱՐՈՎ

Մնաք բարով, արև, գարուն
Եւ խնկաբոյր ծաղիկներ,
Կարկաչահոս վտակ սիրուն,
Կանաչազգեստ բլուրներ։

Մնաք բարով, համբոյր և սէր,
Դէմքով հրեշտակ կոյս չքնաղ,
Վայելչութեան պայծառ ժամեր,
Քաղցր ժպիտ, կեանք մատաղ...

Աղքատութիւն ես սիրեցի,
Խեղճի լացը, հառաչանք,
Ես քնարս նուիրեցի
Վիշտ երգելու և տանջանք։

3.

ԱՐԱՋԸ

Արագն էկաւ լափին տալով,
Ժէռ քարերին, ափին տալով.
Ո՞ւրտեղ թաղեմ ես իմ դարդը,
Զոր գլուխս տափին տալով։

Ա՛յ իմ Արազ, ջուրդ վարար,
Սիրուն եարիս եարաբ տեսար.
Ես չը հասայ իմ մուրազին,—
Արազ, եարաբ կարօտս առար։

Ամպերն ընկան Մասիս սարին,
Կարօտ մնացի ես իմ եարին.
Աստած սիրես, էրւած սրտիս
Ջուղար բերես էկող տարին։

Գիշերն անքուն գիր կը գրեմ,
Արտասուքս ջուր կը շինեմ.

Արազ, ծէգը ջրիդ շառած՝
Իմ սև դարդը քեզ կը բերեմ։

Կասես՝ շողքը քարին ընկաւ,
Կրակը իմ սրտին ընկաւ.
Կամաք ունքից, թուխ աչքիցը
Ցաւն իմ ջիւան ջանին ընկաւ։

Արազն էկաւ լափին տալով,
Ժէռ բարերին, ափին տալով,
Ո՞րտեղ թաղեմ ես իմ դարդը,
Զոր գլուխս տափին տալով...

4.

ՍԱՐՆ Ի ՎԵՐ

Դէպի վե՛ր, սարն ի վե՛ր... Անվերջ է ուղիս.
Յոգնեցան բազուկներս՝ այս կռուոմն անզօր,
Սպառեցաւ և վերջին ոյժն էլ ծնկներիս—
Դէպի վե՛ր, սարն ի վե՛ր, քաջասիրտ գինուոր։

Աւելի կարծրանան թող այս սև ժայռեր,
Աւելի թող սպառնայ անդունդն սոսկաւոր,
Դեռ շունչ կայ բերնումս, շարժում են ձեռքեր—
Դէպի վե՛ր, սարն ի վե՛ր, ով արի գինուոր։

Դեռ հեռու է կատարն անամպ ու յստակ,
Բայց եթէ չը հասնենք այնտեղ մենք այսօր,
Վաղն այնտեղ ենք անշուշտ, մերն է յաղթանակ.
Դէպի վե՛ր, սարն ի վե՛ր, անվեհեր գինուոր։

5.

ԱՆՑԻ՛Ր, ՍԵՒ ԱՄՊ

Անցի՛ր, սև ամպ, դու իմ սրտից.
Բացւի՛ր, երկի՛նք կապուտակ.
Տխուր, խաւար թուխպի միջից
Ցոլա՛, գարնան արեգակ։

Թող պատռուի այս ցուրտ ձմրան
Սգոյ հանդերձ տաղտկալի,
Եւ շողշողայ մանուկ բնութեան
Ոսկէ ժպիտ ցանկալի։

Եւ բերկրութեան արտասուքներ
Այս լեռներից թող հոսեն.
Թարմ կանաչին ջինջ առուակներ
Քաղցր աւետիք թող խօսեն։

Թէ մայր երկիրն ազատուեցաւ
Իր կուռ ճնշող կապանքից.
Նոր ցնծութեան երգ լսեցաւ
Հէք արտուտի բերանից...

ԱԼԷՔՍԱՆԴՐ ԾԱՏՈՒՐԵԱՆ

(1864—1917)

Երգել է բոլոր հայ ժամանակակից բանաստեղծների մոտիվներով, չունենալով իր սեփական, ինքնայատուկ արտայայտութեան ձևերը։ Իր երգերի առարկան եղել է սէրը, բնութիւնը, ապա շատ յաճախ ազգը, երբեմն եկեղեցին և այս երկուսից բղխող բոլոր «ճշմարտութիւնները»։ «Սիրոյ բաղդրութեան» և «կուսի պատկերին» զուգընթաց՝ նա երգում է անկաշառ մարդկանց մեծաշուք «գործերը», այն մարդկանց, որոնք ընդունակ էին, օրինակ, իրենց հարուստ սեղանից փշրանքներ հանել «ազգի» համար, մի ծիսական կամ գիւղատնտեսական վարժարան շինելով կամ մի տուն նուիրելով «ազգին» և այլն։ Ազգային դեմոկրատի աշխարհայեացք է ունեցել Ծատուրեանը, խղճալով իր երգերի մէջ աղքատին, թշուառին ու տգէտ ամբոխին։ Ինչպէս հայ գրողներից շատերը, նա չէ կարողացել նման սոցիալական երևոյթների հանդէպ բարձրանալ մեշչանական ճախճախուտի մակերևոյթից։ Վհատութեան ու չուսալքման բոպէին նա խորհուրդ է տալիս աղօթել Աբարչին, որովհետև նրա ասելով «աղօթքի մէջ կը գտնես ցանկալի անդորրութիւն»։ Այդ տեսակէտից Ալ. Ծատուրեանը բառի բուն իմաստով հայ քրիստոնեայ է։

Ծատուրեանը գրել է շատ և թարգմանել շատ։ Սովորել է շատերից, բայց չէ սովորեցրել ոչ ոքի։ Եւ եթէ նա թողել է որոշ հետք հայ գրականութեան մէջ, ապա դրա պատճառը պիտի փնտռել հայ և հայ գրականութեան մէջ, ապա դրա պատճառը պիտի փնտռել հայ և օտար ժամանակակից բանաստեղծներին շնորհալի կերպով արձագանքելու մէջ։

Սուրխաբեան

ԵԼԻՔՍԵՆԳՐ ԹԱՏՈՒՐԵՆ

1.

ՊՈԷՏԻՆ

Պոէտ, դու հպարտ սէգ արծուի նման,
Բարձրից մի նայիր տգէտ ամբոխին.
Եւ կծու երգով մի ծաղրիր նրան,
Շանթեր մի թափիր խղճուկի գլխին։

Ինչով է, ասա, ամբոխն յանցաւոր,
Որ խորթ են նրան քո հոգու ձայներ.
Դու վարդ ես երգում, պոէտ բաղդաւոր,
Երբ նրա կեանքին պատած են փշեր...

Ի՞նչ անէ ամբոխն, ինչպէս հասկանայ,
Քո գողտրիկ տաղերն, երբ թեւեր առած՝
Դու միշտ ապրում ես ամպերի վրայ,
Կեանքից անջատուած, եթեր վերացած...

Ամբոխը, պոէտ, զաւակ է երկրի,
Լուսազուրկ զաւակ, քրտնաթոր մշակ,
Նա միշտ կարօտ է կեանքի երգերի—
Երգիր նրան հաց և արդար վաստակ։

Երգիր նրան լոյս, բարիքներ ուսման,
Եղիր ամբոխին ուսուցիչ ընկեր.
Նստիր նրա հետ մի ճաշի սեղան,
Շօշափիր մօտից դու նրա վէրքեր...

Ապրիր նրա հետ, նրա տանջանքով,
Մի զգիր նրան ձեռքդ պարզելու.
Դու ոյժ ներշնչիր նրան քո երգով,
Խաւարի կապանքն անվախ փշրելու...

Եւ տես, ով պոէտ, քեզ այն ժամանակ,
Ո՛րպէսի սիրով կը սիրէ ամբոխ.
Սէրն, այո՛, կը հիւսէ քեզ դափնեայ պսակ,
Սէրն այդ կը կանգնէ քեզ յաւէրժ կոթող...

2.

ՎԱՐԴ

Ա՛յ վարդ, լսի՛ր աղաչանքիս,
Թոյլ տո՛ւր թփից քեզ քաղեմ.
Եւ քեզանով սիրած կուսիս
Փափուկ կուրծքը զարդարեմ։

Մի՛ վախենար, նրա կրծքին,
Չես թառամիլ, քնքո՛ւշ վարդ,
Այնտեղ մատաղ կրծքի տակին
Կեանքի աղբիւր կայ առատ...

3.

ՄԻ ԼԱՐ, ԲԼԲՈՒԼ

Մի լար, բլբո՛ւլ, քեզ մի տանջիր,
Որ փոթորիկն անիրաւ
Վարդդ սիրուն, վարդդ կարմիր
Թփից պոկեց ու տարա՛ւ...

Բայց վա՛յ կեանքի այն խեղճ երգչին,
Որ վաղաժամ որբացած,
Իր սիրելի, խօսուն վարդին
Յուրտ հողին է նա յանձնած...

Կանցնեն օրեր... կը գայ կրկին
Մի նոր գարուն վարդաբեր.
Եւ մոռացած քո վիշտը հին՝
Նորից կերգես վարդին սէր։

Երգչի համար գարուն չի գայ,
Ո՛չ նա նոր վարդ կը սիրէ.
Նա պէտք է լայ, պէտք է սգայ,
Մինչ յաւիտեան կը լռէ...

4.

ԵՍ ՉԵՄ ԵՐԳՈՒՄ

Ես չեմ երգում։ Իմ երգերում վշտալի
Այն թշուառն է՝ անարգ բախտից հալածուած՝
Իր վիճակը անվերջ սգում ու լալի,
Իր ցաւերը երգով պատմում նա մարդկանց...

Ես չեմ երգում։ Իմ երգերում ցաւատանջ
Այն հարազատ իմ տառապեալ խեղճ եղբօր
Դուք լսում էք խուլ հեծեծանք ու հառաչ
Եւ կարդում էք ագդիս վիշտը դարևոր...

Ու չեմ ձրգուտ իմ ձրգիրը լայտգին
Ակռանգանը ձեռ մնրգիանց վշտի, գանդուքեան,
Գեանչիս ձայնով արգտրատգատ երգիրդին
Բոգդուտ ձեռ անանց գոհեր չարուքեան...

Երբ կը գայ օր, մի օր վանի, փրկարար,
Որ խորտանգի չարն աւերիչ ու քուռնատ,
Եւ քշուտը օրհնելով բախտն ու աշխարհ
Որ ոգջուռնէ մի նոր կեանքի առաւօտ...

Երբ չարանենգ, խաւար ոգին բռնուքեան
Ծ՝ատրգանամբ, որպէս անգօր մի գերի,
Եւ արգարի ազատ ձայնը անխափան
Որ խլացնէ խուլ շաչիւնը շղթայի...

Երբ համաշուռնչ եղբայրական սուրբ սիրով
Որ հալածուի չար Բահալը աշխարհից,
Եւ այդ սէրը, այդ մեծ սէրը վեհ փառքով
Քաջ յաղթուքեան կառնէ պսակ երկնքից.—

Ցայնժամ տխուր, լացող երգչի շրթունքից
Դուք կը լսէք ուրախուքեան երգ ու տաղ.
Ցայնժամ միայն նրա երգում վշտալից
Դուք կը կարդաք և՛ խնդուքիւն, և՛ ծիծաղ։

Ցայնժամ երգիչն անհոգ, ուրախ, բախտաւոր
Լի ցնծուքեամբ նա ձեռք կառնէ իր քնար,
Եւ կը երգէ յաղթանակդ փառաւոր,
Ով դու վսե՛մ եղբայրուքեան գաղափար...

5.

ԿԱՐՄԻՐ ՕՐԵՐԻՑ

ԲԱՆԻՈՐՈՒՀՈՒ ՕՐՕՐԸ

Մի լար, որդիս, որ չես լսում
Էլ մայրական քաղցր օրօր.
Ես մեծ կուի երգ եմ հիւսում
Օրոցքիդ մօտ ամեն օր։

Կուզեմ երգս աղօթք դառած՝
Ցաւէրժ յուզէ քո հոգին.
Աչքդ անխուփ, ուշքդ լարած՝
Ականջ արա իմ երգին։

Դու լսում ես այնտեղ, դրսում
Շանչ ու շառաչ, լաց ու կոծ.—
Մեր արիւնն է այնտեղ հոսում,
Ներկած և՛ տուն, և՛ փողոց...

Այնտեղ գնդեր խառն ու ցրիւ,
Բանեւոր գնդեր անարկու,
Քաջ մղում են մի մեծ կռիւ—
Աշխատանքի և ոսկու...

Այնտեղ ոսկին տէր-տիրական,
Որպէս դահին դմբապէմ,
Սուր է պարզում մեր օրական
Թոյնով շաղախ հացի դէմ...

Այնտեղ հայրեր, այնտեղ որդիք
Մի նոր կեանքի եղերքում,
Որպէս մի մի հերոս-մարտիկ
Մահն են գրկում ու երգում...

Եւ թնդում է երգը ահեղ
Պատնէշների շարքերում,
Որպէս լեռնից վազող հեղեղ,
Որպէս որոտն ամպերում։

Այնտեղ է և մի աչքի լոյս,
Մեր օջախի վառ ճրագ—
Հայրդ կուում՝ սիրտն ալեյոյզ,
Սրտում և թոյն, և կրակ։

Մի լար, որդիս, որ չես լսում
Էլ մայրական քաղցր օրօր.
Ես մեծ կռիւ երգ եմ հիւսում
Օրոցքիդ մօտ ամեն օր։

ՅՈՎՀԱՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆ

1.

ՀԱՄԵՐԳ

Վտակը ժայռից ներքև է թռչում,
Թափ առած ընկնում քարերի գլխին,
Զարկում աւազին, շաչում է ճչում,
Ճչում անհանգիստ, փրփուրը բերնին։

Ինչպէս ծերունին ձայնով պառաւած,
Ձայնակցում է ժիր թոռնիկի երգին,
Այնպէս էլ ծերուկ անտառը կամաց
Արձագանք տալի ջրի աղմուկին։

Սակայն բնութեան գեղեցիկ համերգի
Ունկնդիրն անխօս, յաւիտենական՝
Ժայռը մտախոհ իր մռայլ մտքի
Ետևից ընկած լսում է նրան։

2.

ԳՈՒԹԱՆԻ ԵՐԳԸ

Արի, գութան, վարի, գութան,
Օրն եկել է, ճաշ դառել,
Առը շուռ տուր, խոփիդ զուրբան,
Օրհնեալ է Աստուած, հորովէլ։

Քաշի, եզը, ուսիդ մատաղ,
Քաշի, քաշենք, վար անենք.
Ճիպտին արա, քըշի, հօտաղ,
Մեր սև օրին ճար անենք։

Պարտքատէրը գանգատ գընաց,
Քէօխվէն կը գայ, կը ծեծի,
Տէրտէրն օրհնեց, անվարձ մընաց,
Կը բարկանայ, կանիծի։

Էն օրն եկան թովջի արին,
Հարկ են ուզում տէրութեան.
Ի՞նչ տամ կռոին ու բէգեարին...
Վարի, վարի, իմ գութան։

Զեռքս պակաս, ուժքս հատած,
Հաղար ու մի ցաւի տէր,
Ինձ են նայում մերկ ու սոված
Մի տուն լիքը մանուկներ։

Աբի, գութան, վարի, գութան,
Օրն եկել է ճաշ դառել,
Աքը շուռ տուր, խոփիդ դուրբան,
Օրհնեալ է Աստուած, հորովէլ։

3.

ՀԻՆ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ

Կանաչ, վիթխարի ընկուզենու տակ,
Իրենց հասակի կարգով, ծալապատակ
Միասին բազմած,
Մի շրջան կազմած
Քեզ էին անում
Եւ ուրախանում
Մեր հակայ պապերն ու մեր հայրերը՝
Գիւղի տէրերը։

Մենք՝ առոյգ ու ժիր գեղջուկ մանուկներ՝
Երեք դասընկեր,
Նրանց առաջին գլխաբաց կանգնած,
Զեռքներս խոնարհ սրտներիս դրած
Զիլ, ուժեղ ձայնով նրանց սպասում—
Տաղ էինք ասում։

Երբ զարթաձայն մեր երգը լռեց,
Մոայլ թամադէն բեխերն ոլորեց,
Նրա հետ վերցրին լիք բաժակները
Բոլոր մեծերը
Ու մեզ օրհնեցին. «Ապրէք, երեխէք,
Բայց մեզ պէս չապրէք»...

Ժամանակ անցաւ, նրանք էլ անցան,
Զարթ երգերս վշտալի դարձան.
Եւ ես յիշեցի մեր օրը լալիս,
Թէ մեզ օրհնելիս՝
Ինչու ասացին. «Ապրէք, երեխէք,
Բայց մեզ պէս չապրէք»...

Խաղաղութիւն ձեզ, մեր անբախտ պապեր,
Ձեզ տանջող ցաւը մեզ էլ է պատել։
Այժմ, տխրութեան թէ քեֆի ժամին,
Մենք էլ օրհնելիս մեր զաւակներին,
Ձեր խօսքն ենք ասում. «Ապրէք, երեխէք,
Բայց մեզ պէս չապրէք»...

4.

ԻՄ ԵՐԳԸ

Գանձեր ունեմ անտակ, անծէր,
Ես հարուստ եմ, ջան, ես հարուստ.
Ծով բարութիւն, շնորհք ու սէր
Ձոխ պարգև եմ առել վերուստ։

Անհուն հանքը իմ գանձերի
Սիրտս է առատ, լէն ու ազատ,
Ինչքան էլ որ բաշխեմ ձրի՝
Սէրն անվերջ է, բարին անհատ։

Երկիւղ չունեմ, ահ չունեմ ես
Գողից, չարից, չար փորձանքից.
Աշխարհքով մին ահա էսպէս
Շտապ եմ տալիս իմ բարձունքից։

Ես հարուստ եմ, ես բախտաւոր
Իմ ծննդեան պայծառ օրէն,
Էլ աշխարհ չեմ գալու հօ նոր՝
Իր տուածն եմ տալիս իրեն։

ՔԱՌԵԱԿՆԵՐ

Քանի՞ մահ կայ իմ սրտում,
Թափուր գահ կայ իմ սրտում.
Զէ՞ դու էլ ես մահացու,—
Մահի՞ ահ կայ իմ սրտում։

Ո՞ւր կորան,
Մտիկներս ո՞ւր կորան.
Ինչքան լաց, ձէն ածի՝
Ձէն չի տուին, լուռ կորան։

Ետ եկէք,
Գարնան վարար գետ եկէք.
Անցած օրեր, խինդ ու սէր՝
Դարձէք, իրար հետ եկէք։

Ետ չեկաւ,
Գնաց, գնաց, ետ չեկաւ.
Անդարձ կապով սև հողում
Կապուեց, մնաց, ետ չեկաւ։

Անց կացան,
Օրերս թռան, անց կացան,
Ախ ու վախով, դարդերով
Սիրտս կերան՝ անց կացան։

Բերանն արնոտ Մարդակերը էն անբան
Հազար դարում հազիւ դառաւ Մարդասպան.
Ձեռքերն արնոտ գնում է նա դեռ կամկար,
Ու հեռու է մինչև Մարդը իր ճամբան։

Մի հաւք դարկի ես մի օր,
Թռաւ, գնաց վիրաւոր։
Թռչում է միշտ իմ մտքում
Թևը արնոտ ու մոլոր...

Երկու շիրիմ, իրար կից,
Յաւերժական լուռ դրկից,

Թախծում են պաղ ու խորհում,
Թէ ինչ տարան աշխարհքից։

Արևելքի եղեմներին իջաւ պայծառ իրիկուն,
Հէքիաթական պալատներում ըսպասում են իմ հոգուն.
Ի՞նչ եմ շինում էս ցեխերում, աղմուկի մէջ վայրենի...
Ա՜խ, թէ նորից գտնեմ ճամփան՝ դէպի էնտե՛ղ, դէպի տո՛ւն...

Երնէկ էսպէս անվերջ քեզ հետ—իմ կեանքի հետ լինէի,
Հազար երնէկ դաշտում մենակ՝ երկնքի հետ լինէի։
Բայց ո՞վ կը տայ էն վայելքը՝ ինքս ինձ էլ չը զգայի
Ու հալէի, ծաւալէի, ամենքի հետ լինէի։

Ամեն անգամ Քո տաւածից երբ մի բան ես դու տանում,
Ամեն անգամ, երբ նայում եմ, թէ ի՞նչքան է դեռ մնում,—
Զարմանում եմ, թէ՝ ո՞վ Շուայլ, ի՞նչքան շատ ես տուել ինձ,
Ի՞նչքան շատ եմ դեռ Քեզ տալու, որ միանանք մենք նորից։

Աղբիւրները հնչում են ու անց կենում,
Ծարաւները տենչում են ու անց կենում,
Ու երջանիկ ակունքներին երազուն՝
Պոէտները կանչում են ու անց կենում։

ԱՒԵՏԻՔ ԻՍԱՀԱԿԵԱՆ

(Ծնե. 1875 թ.)

Ա.ե. Իսահակեանը հայ նորագոյն քնարերգուների համաստեղութեան մէջ առաջնակարգ տեղերից մէկն է գրաւում։ Նա դուրս է եկել նոյն նահապետական գիւղական աշխարհից, որտեղից ելել է հայ գրողների ամենամեծ մասը։

Ա.ե. Իսահակեանի հոգեբանութեան ու աշխարհահայեացքի աղբիւրը նահապետական ժողովրդական միջավայրն է՝ իր մանր բուրժուական հասկացողութիւններով, իր սեփական օջախով, «Արազի ափին ունեցած բոստանով», իր եզ ու դութանով և «արտով սիրած Շուշիկով»։

Մի միջավայր, որը նախորդ դարավերջին արդէն կորցրել էր իր նահապետական կենցաղի հրապոյրը և կապիտալիստական նորամուտ կարգերի մղումով՝ սկսել էր բայքայուել։ Այս երևոյթը, որպէս արդիւնք երկու աշխարհների բախման և որպէս տեսական պրոցես, ցաւոտ արտայայտութիւն գտաւ հայ գրականութեան մէջ, առանձնապէս քնարերգութեան։ Եթէ Ա.ե. Իսահակեանի աւագ նախորդի՝ Յով. Թումանեանի ստեղծագործութեան առարկան՝ նահապետական կուսական միջավայրն է եղել իր իդէալականացրած պատկերով, ապա Ա.ե. Իսահակեանի անհանգիստ, ջղայնոտ քնարը արտայայտել է՝ բուրժուական նոր կարգերի դէմ ապստամբողի հոգեկան աշխարհը։ Որով վերջինս հայ գրականութեանը բերել է ափսոսանքի, անէծքի ու խարանման մոտիւներ՝ նոր կացութեան հանդէպ։

Ա.ե. Իսահակեանը գերազանցապէս լիրիք է։ Նրա լիրիզմը խորունկ է։ Նրա հոգու ողբերգութիւնն սկսւում է անաջող սիրուց։ Երգել է սէրը և սիրոյ ողբերգութիւնը։ Թեման սովորական է և բացմիցս երգուած։ Սակայն բանաստեղծը երգել է այդ «յաւիտենական» թեման վառ, գիւնեղ պատկերներով, վերցնելով ներկերն ու գոյները ժողովրդական ստեղծագործութեան հարուստ սկզբնաղբիւրից։

Նրա սիրոյ երգերը բաղմերանգ են, խորը, յուզիչ, երբեմն ցընցող։ Իր թանձր, շքեղ պատկերներով Ա.ե. Իսահակեանը յաճախ երփներանգ Արևելքն է երգում կամ միջնադարեան փանդիռը խօսեցնում։ Մերժուած սէրը մանաւանդ՝ խորը հիասթափութիւն է պատճառում բանաստեղծին՝ թէ ընկերոջ, թէ կնոջ և թէ առհասարակ բոլոր

մարդկանց վերաբերմամբ։ Միայն մեր սէրն է առանձին տեղ գրաւում Ա.. Իսահակեանի համար մայրը պաշտամունքի առարկայ է. նահապետական ընտանիքի սիրառատ և զարգուռ մեր պատկերն է նա գծել իր մի շարք բանաստեղծութիւնների մէջ։

Նրա քնարը արձագանքել է հայ մանր բուրժուական նացիոնալիստական շարժմանը։ Լինելով ազգային-հայդուկային «ըմբոստացումների» ջատագովներից մէկը, Ա.. Իսահակեանը ունեցել է նացիոնալիստական թանձր մոտիւներով երգեր յօրինելու մի շրջան, ուր ակտիւ շովինիզմի տարրերը գերակշռող են եղել իր երգերի մէջ։ Նրա Մեր Ճակատագիրը բանաստեղծութիւնը մի պատմական զոկումենտ է, ուր զարմանալի շեշտականութեամբ արտայայտել է ակտիւ ազգամոլութիւնը, ազգային սին մեծամտութիւնը, մանր բուրժուայի բաղքենիական ճղճիմ տեսակէտը՝ թէ ուրիշ ազգերի համար արդէն «հասել է օրը բարեոյ, արդարի և ազատութեան», մինչ միայն հայի երկնքում «գիշեր է խաւար»։ Որպէս թէ ուրիշ ազգերի նման «մենք դաւաճան չեղանք», ընդհակառակը՝ դարեր շարունակ իբրև «լոյսի, ճշմարտի նախակարապետ՝ մենք շատ կուսեցինք»։ Որ մենք իբր թէ Պրոմեթէյ ենք, մեր սիրտը՝ ովկիան, և ազգերը պիտի գան ու մեզ վրայով ընթանան դէպի անմահ իդէալը...

Շովինիստական այս մոտիւները սակայն հիմնական չեն Ա.. Իսահակեանի քնարի համար։ Դա նրա բերած կուսակցական տուրքն է եղել սուրբ Դաշնակցութեանը։

Նրա քնարի հիմնական լարերը՝ սիրոյ և սոցիալական մոտիւներն են, ուր և պիտի փնտռել նրա պոէզայի գեղարուեստական արժէքը։

Նա երգել է նոյնպէս գիւղական պարզ իրականութիւնից դուրս եկած ինտելիգենտի հոգու ողբերգութիւնը,—ինտելիգենտի, որը յանկարծ ընկնելով կապիտալիստական դաժան կոնկուրենցիայի էգոիստ ու անհիւրընկալ աշխարհը, իրեն միանգամայն մենակ ու անօգնական է զգացել։ Նահապետական անպաճոյճ, պրիմիտիւ միջավայրից յետոյ, տարակուսանք, ապա և յուսալքում առաջ բերեց բանաստեղծի մէջ քաղաքի սոցիալական անողոք մրցման ու հակասութիւնների այն միջավայրը, ուր աշխարհի տէրերը առաջնորդում էին միմիայն «մարդը մարդու համար գայլ» նշանաբանով։

Կեանքի կուռում ամենքը դէմ ամենքին՝
Սուր են սրում ամենքը դէմ ամենքին.
Սուրը ձեռքէս՝ կուի հանած ընկաւ վար,
Ես չեմ կարող մտնել պայքար անարդար—
Ելել բերնից արնոտ հացը աղքատի,
Վառ քրտինքը ծծել տանջած ճակատի...

Բանաստեղծը դիտել է կապիտալիստական հասարակակարգի սոցիալական հակասութիւնները, սակայն այդ դաժան իրականութեանը մօտեցել է քաղքենու մտայնութեամբ։ Նա «գիշեր-ցերեկ» լսել է անվերջ ողբ ու հեծեծանքի ձայներ՝ անապատներից, հեռու ծովերից և դարբասներից, տեսել արցունք՝ ժպտի հետ հիւսած, հացի հետ

արիւն, վիշտ համատարած,—սակայն այդ հակայական տանջարանի հանդէպ չէ կարողացել բարձրանալ քաղքենիական ճահճի մակերևոյթից։

Ա. Իսահակեանի հոգեբանութեանը խորթ էր պրոլետարական մասսաների մղած խուլ պայքարը,—մի բան, որ յատուկ էր մեր բոլոր մանր-բուրժուական ազգայնական տարրերին։ Այդ էր պատճառը, որ նրա գիտողութեան դաշտից հեռու մնաց պայքարի դրօշը պարզած ըմբոստ դասակարգը, որի կուռ հարուածների տակ բուժական աշխարհը այսօր ճարճատում է իր կործանման նախօրեակին։

Սուրը ձեռքս՝ կուի հանած ընկաւ վար,
Ես չեմ կարող մտնել պայքար անարդար—
Ելել քերնից արնոտ հացը աղքատի...,—

ասում է բանաստեղծը։ Եւ նա հաւատացած է եղել, որ բուրժուական կարգերի սոցիալական անարդարութիւնը յաւիտենական ճշմարտութիւն է։

Կեանքն է պայքար՝ գոռ ու դաժան,
Ձգմիր մարդուն և թռիր վեր.
Իրաւունքը ուժն է միայն,
Վա՛յ յաղթուածին, հապար վայեր...
Տէր կամ սարուկ պիտի լինիս,—
Ճշմարտութիւն չը կայ ուրիշ...
Մուրճ ու գնդան պիտի լինիս,—
Ճշմարտութիւն չը կայ ուրիշ...

Ինչով է տարբերւում Ա. Իսահակեանը իր այս տողերով մի սովորական քաղքենուց, որի կարծիքով «աղքատն ու հարուստը միշտ եղել են և կը լինեն», «աշխարհը էդպէս եկել է, էդպէս էլ պիտի գնայ»։

Ուստի և սուր ունեցողը, բանաստեղծի կարծիքով, կամ պէտք է իր սուրը իջեցնէր աղքատի, այսինքն շահագործուողի գլխին՝ իր եսական շահերի համար, կամ ցած դնէր այն։ Սոցիալական չարիքը պայքարով վերցնելու գաղափարը օտար էր Ա. Իսահակեանին։ Նա չէր հասել այն մտքին, թէ իր սուրը շատ հեշտութեամբ կարելի էր միացնել բոլոր ապատամբ շահագործուողների սրին և միևնոյն աջողութեամբ իջեցնել աշխարհի «արունքտէր» հզօրների գլխին։

Բայց Ա. Իսահակեանը տիրողների, շահագործողների դէմ էր։ Ցասկոտ զայրոյթով, բողոքի բուռն զգացմունքով էր լցուած նրանց դէմ։ Հին «արունքտէր աշխարհի» հանդէպ նա անհաշտ ըմբոստներից էր։ Սակայն հոգեբանութիւնը նրա՝ անիշխանական-ինդիվիդուալիստի հոգեբանութիւն էր, ուստի և նման ըմբոստացումը ճակատագրական եղաւ բանաստեղծի համար, անպտուղ դարձնելով նրա ոգորումները։ Սոցիալական յենարան նա չունեցաւ։

«Շուրջս ապրում են բիւր-հազար մարդիկ, բիւր-հազար սրտեր բաղխում են կեանքով. և ինչպէս սիրտս մենակ ու մոայլ՝ չի հալւում,

ձուլում այդ հակայ, այդ ծով բիւր սրտերի հետ... Ա՜խ, ես չեմ կարող, անզօր եմ, անուժ...»։

Ա.ւ. Իսահակեանը ապրեց «ճակատագրից» հալածւած թափառականի հոգու ամբողջ ողբերգութիւնը։ Իր «չոր գլուխը» դնելու տեղ չունենալով, լի զայրոյթով նետեց իր բողոքի սրասլաք խօսքերը աշխարհին ու ապա փարեց իր մենութեան անձուկ մթնոլորտին։

Սարանեց, մերկացրեց բուրժուական աշխարհի աղտն ու կեղծիքը, կոպիտ եսապաշտութիւնն ու նենգ տիրատենչութիւնը։ Անիծեց «բիրտ ուժեղների օրէնքը», որ «մարդկանցից օրհնւած մի դաժան սուր է»՝

Անզօրի գլխին կախւած յաւիտեան, խեղճին խողխողող, հզօրին պաշտպան։

Ատեց իշխանութիւնը, փառքը, զանձը, որ «բիւրաւորներից քամւած արիւն է, որի արտասուք, մեռելների միս»։ Ատեց կնոջը, ընկերոջը, ամբոխը, համայնքը, այլ և հայրենիքը,—մի կուռք, որի դաղափարը այնքան սուրբ է եղել նացիոնալիստական հովերի խենթ շրջանապրած բանաստեղծի համար։

Հայրենիքն ինչ է—յաւերժական բանդ, պատերազմի դաշտ, նախճիր ու արիւն,
Եւ նրա համար անխիղճ հզօրը բիւր կառափներից բուրգեր է կանգնում։
Ատում եմ, ատում, և հայրենիքը, պերճ արօտավայրն լիրք հարուստների,
Որի հողն արնոտ անդուլ հերկողը չոր քար է կրծում իր հացի կողքին։

Այո, անիծելով, խարանելով այդ աշխարհը, բանաստեղծը՝ նման Բաղդադի հռչակաւոր կէս-երևակայական պոէտ Աբու Լալա Մահարիի՝ վերցրեց իր «քարաւանը» և ճանապարհ ընկաւ դէպի կիզիչ անապատը՝ Շամս-Արևի բոցեղէն գրկում «արևանալու» և «յաւէրժանալու» համար։ Այլ խօսքով՝ դէպի բոմանտիկական անորոշն ու հեռուն, հեռու կեանքի անողոք պայքարից, հեռու մարդու յամառ ոգորումներից։

Պիտի ընդգծել, որ Աբու Լալա Մահարին Ա.ւ. Իսահակեանի գլուխ գործոցն է և իր բոլոր մոտիւների խտացումը, սինթէզը։ Արուեստը մի քանի սուրաններում հասել է բարձր կատարելութեան։

Պատկերների Արևելեան վառ գոյները, անապատի ջերմաշունչ բոյրը, գրւածքի դանդաղ չափը՝ նահապետական Արևելքի քարաւանը յիշեցնող, պատկերների ճոխութիւնն՝ ու երփներանգութիւնը, բնութեան աքանչելի պատկերացումը՝ հիւսւած արար բանաստեղծի հոգեկան յուզումների հետ՝ պոէմը դարձնում են եզակի իր արժէքով՝ հայ և օտար գրականութեան մէջ։

Եւ այսպէս՝ Ա.ւ. Իսահակեանը ամփոփում է ինքն իր մէջ, առանձնանում իր միզանտրոպիայի հասած մենութեան մէջ։ Մենութիւնը ամենամեծ աղբիւրն է պեսիմիզմի։ Բանաստեղծի վրայ պակաս չէ ազդել եւրոպական այսպէս կոչւած նէորոմանտիզմը, անիշխանական-ինտիվիդուալիզմի ըմբոստացման պոէզիան, որը բուրժուական

իդեալիզմի կործանման սխալ մայրամուտի մութ ազդիւրներից է բղխում։ Աւ. Իսահակեանը նոյն պէսիմիզմն է ապրել, ինչ եւրոպական նէօրոմանտիկները։ Յիշատակելի է, որ նա Եւրոպայում չէ նկատել ոչ Էմիլ Վերհարնին և ոչ էլ նրա ստեղծագործութեան առարկան՝ ապագայ յաղթանակի իդէալներով տոգորուած պրոլետարական աշխարհի շլացուցիչ պատկերը։

Ելք չը գտնելով իր սիրտը յուզող ու տանջող սոցիալական հակասութիւններից, բանաստեղծը նահանջը դիմաղատեց պայքարից և ամփոփուեց «հպարտ» մենութեան մէջ։

Աւ. Իսահակեանը սակայն սպառուելուց դեռ հեռու է։

Մեր օրերում ամենայն յամառութեամբ ծաւալող յեղափոխութեան ահեղ պայքարը, որի որոտմունքը պղրդեցնում է համայն աշխարհը, չէ կարող, մեր կարծիքով, անարձագանք մնալ հին աշխարհի դէմ բուռն դատավճիռ արձակող բանաստեղծի համար։

Սուրխաթեան

ԵՒՍԾԻՔ ԻՄԱՀԱԿՍԸՆ

1.

ԵՍ ԵՐԳԻՉ ԵՄ

Ես երգիչ եմ—երկնի թիթեռ,
Ես զանձ չունեմ լեռ ու բեռ.
Ես սիրում եմ ծաղիկ, աղջիկ,—
Ծաղկի բուրմունք, կոյսի սէր։

2.

ԳԻՇԵՐՆ ԵԿԱՒ

Գիշերն եկաւ, զով-հովն ընկաւ,
Աստղունք լուսին ձէն տուին,
Լուսնեակն ելաւ, մով-ծովն ընկաւ,
Հաւքերն ինձի ձէն տուին։

Ես վեր ելայ ոգի առած՝
Զարկի սրտիս լարերին։

Սիրտս թնդաց, կուրծքս թնդաց,
Եւ լարերը կտրուեցին...

—Մենակ սիրոյ լարը մնաց
Սրտիս անհուն խորքերում,
Ու վառ սիրոյ երգը շողաց
Կեանքիս ամեն ծալքերում...

3.

ԻՄ ՓԷՐԻՆ

Կէս գիշերին գետի ափին
Ես նստած եմ սիրավառ.
Գետն հոսում է—և հոսանքին
Ես նայում եմ միալար։

Ո՞վ է խաղաղ մէջ-գիշերին
Փնած գետը վրդովում.
Ալիքները խփում ժայռին,—
Ծերուկ ժայռը լռանում։

—Ո՞վ է աստղոտ զով գիշերին
Լուսնի շողով զարդարուում.
Շուշան կրծքին սև մազերին
Գոհար-ցողեր սրսկում։

—Ո՞վ է չքնաղ բարի-լուսին
Ծաղիկները համբուրում.
Փրփուրի մէջ մշուշային
Արշալոյսին ողջունում։

—Նա հեզ գետի լուռ փէրին է,
Ցնորքներիս սիրելին.
Նա իմ սրտի դիցուհին է,
Վառ երգերիս նազելին...

Եւ մինչև լոյս գետի ափին
Ես նստած եմ քարացած,
Գետն հոսում է—և հոսանքին
Ես նայում եմ շւարած...

4.

ՄԱՅՐԻԿԻՍ

Հայրենիքիս հետացեր եմ,
Ինչպէ պանդուխտ եմ, տուն չունիմ,
Ագին մօրէս բաժանուեր եմ,
Տխուր-տրտում քուն չունիմ։

Սարէն կուգաք, նրբիշուն հաւքեր,
Ա՜խ, իմ մօրս տեսեր չէք.
Ծովէն կուգաք, մարմանդ հովեր,
Ախր, բարև բերեր չէք։

Հաւք ու հովեր եկան կշտիս,
Անձէն գիպան ու անցան.
Գոպակ սրտիս, փափագ սրտիս
Անիսօս գիպան ու անցան։

Ա՜խ, քու տեսքին, անուշ լեզուին
Կարօտցեր եմ, մայրիկ ջան.
Երնէկ, երնէկ երազ լինիմ,
Թռնիմ մօտդ մայրիկ ջան։

Երբ քունդ գայ լուռ գիշերով,
Հոգիդ գրկեմ, համբոյր տամ.
Սրտիդ կպնիմ վառ կարօտով
Լամ ու խնդամ մայրիկ ջան...

5.

ԱՐԱԶԻ ԱՓԻՆ

Արազի ափին բոստանս լինի
Սալվի ու տնկեմ, վարդեր ու լալայ.
Հով ուռենու տակ քօղտիկս լինի,—
Օջախիս մէջը կրակ բոցկլտայ։

Ու սրտով սիրած Շուշանս լինի,
Օջախիս կողքին գուրգուրենք իրար.
Արազի ափին բոստանս լինի,
Ծով քրտինք թափեմ Շուշիկիս համար։

6.

ՕՐՕՐ

Բալէս ունի հնգու-մաթայ,
Ոսկի օրոցք, ատլաս ծածկոցք,
Պուպուշ դարդար, նխշուն բալայ,
Պաճիկ կէնես... օր, օր, լա՛, լա՛,
Նանիկ-կէնես, նանի՛, դա՛ր-դա՛ր,
Աչքդ ու ունքդ ասող ու կամար։

Ցորեկ եղաւ, ոչխարն եկաւ,
Ագիզ բալէս քնած մնաց.
Վէր ելլ, բալայ, անուշ ճըղա՛,
Տիտիկ արա՛, ծիծիկ մամա՛,
Պիծիկ-միծիկ տուտիկ արա՛.
Հոպպա, բալիկ, քունդ անուշ,
Շաքա՛ր ու նո՛ւշ թուշդ անո՛ւշ։

7.

ԵՍ ՈՐ ՍԵՌՆԻՄ

Ես որ մեռնիմ, ինձի թաղէք
Ալագեազի լանջերում,
Որ Մանթաշից հովերը գան,
Վրաս հևան ու երթան...

Գերեզմանիս չորս դին փուեն
Ցորնի արտեր-ծփծփան
Եւ ուռիներն՝ մագերն արձակ
Վրաս ընկնեն, անո՛ւշ լա՛ն...

Ջ.

ԿԵԱՆՔՍ ԴԱԼԱՐ

Կեանքս գալար ու լալագար,
ոսկի օրերս ուր գնացին.
Իմ գարունքայ, դառ գարունքայ
վառ ծաղիկներս ուր գնացին.
Արտիս լարերն մէկ մէկ կտրան,
բլբուլներս ուր գնացին.
Երազներս կանանչ-կարմիր,—
արեգակներս ուր գնացին։

Գոհար աստղունք իմ արտի մէջ
շողք տուին ու շուտ մարան,
Հովերի հետ վարդեր զգուող
խաս թևերս մատաղ կոտրան.
Խորունկ սիրտս հուր-հնոց էր,
սէրս ու երգս բոցի նման,
Հիմի կեանքս մութն ու ձմեռ,—
արեգակներս ուր գնացին։

Արտի մէջն է կեանքը մարդուս,
սիրան որ կորաւ, կեանքն թնչ պէտք է.
Սէրը մարաւ, աստղը արտիս,
աստղս մարաւ, սիրտն թնչ պէտք է.
Ազիզ մի սիրտ սէրս կուզէր,
փուչ աշխարհը անկամորդ է.
Մանկուց ապրայ ծարաւ-պապաք,—
արեգակներս ուր գնացին։

Ա՜խ, աշխարհը տուն է սգի,
հիմքը նրա մահի վրայ.
Մարդն հոգեղէն խեղճ ճիճու է,
միշտ պիտ սողայ հոգի վրայ
Թէ թագաւոր անյաղթ լինի,
տերևի պէս միշտ պիտ դողայ.
Խելքը մարդուս ցաւ ու ցեց է,—
արեգակներս ուր գնացին։

Ա՜խ, սարէ սար ու դարբէդար՝
դարդս առնեմ մենակ ման գամ.
Ընկեր գտնեմ, սիրտս բանամ,
դարդս ասեմ ու կուշտ մի լամ,
Ընկերներս վաղ են մեռեր...
արեգակներս ուր գնացին...

Երթամ, մտնեմ անապատը,
ժեռ քարը չոր սիրեմ, գրկեմ,
Սև քարերին գլուխս չոր
թեքեմ անյոյս, խոր միտք անեմ.
Ու պատանքս հետս ման տամ,
գերեզմանս ինքս փորեմ,
Կեանքս թռաւ, օրս հասաւ,—
արեգակներս ուր գնացին...

9

ԵԱՐ ԱՉԵՐԴ ԱՐԵԳԱԿԱՆ

Եար, աչքերդ արեգական
շողքով վառած ծովի նման,
Աբրեշումէ մաղերդ արձակ
ծուփ-ծուփ կուտան ծովի նման.
Վար կը նայես խղճուկ գերուդ
պարզ երկնքի մովի նման,
Սիրաս կտարես քնքուշ շնչով
անմարելի լովի նման։

Եար, աչքերուս լուսը մարաւ
քու կարօտով-սիրով լալէն,
Ոգջ աշխարհի մալը կուտամ,
չեմ զրկուի անգին լալէն.
Եար, գութ արա, կեանքիս գնով
թող մի քաղեմ թշիդ լալէն,
Շեմքդ եմ ընկած, եար խիղճ արա,
հոգդ եմ լիզում սովի նման։

Եար, թէ մեռնիմ ոտներուդ տակ,
շահին-շահի թախտ է ինձի.
Փէշդ քսի գերեզմանիս՝
փափագելի բաղդ է ինձի.
Վրաս թէ լաս, արտասուքդ
անմահական դեղ է ինձի,
Սիրաս նորէն կալեկոծի
Հնդստանու ծովի նման։

10.

ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՁԱՆԳԸ

... Եւ ես ապատում և անապատում
Լուռ թափառում եմ հոգիս ծանրացած,
Հոգիս մտորուն, վշտով տոգորուն
Եւ յանկարծօրէն՝ պարզ ու անտեսեմ՝
Ես իսկ զգում եմ, ահա տեսնում եմ՝
Տիեզերքը ողջ—մի մեծ, անհուն զանգ
Եւ հոգիս—նրա լեղուակը վսեմ...

Եւ հրաշքներով վեհ լռութեան մէջ
Տիեզերքն անծիր՝ զօրանջում է խոր
Երգն անհունութեան, և յաւէրժութեան,

Եւ ճշմարտութեան, և գեղեցկութեան.
Եւ զօրանչում է տիեզերքն ամէն.—
Եւ իմ հոգումն է, իմ Ոգին է այն,
Որ զօրանչում է—ես մարգարէ եմ...

Եւ ահա այնտեղ՝ ամբոխն է ծփում
Մանր ու թանձր՝ ովկիանի նման,
Եւ գոռշ, հարթ է նա—զանգուած մի հսկայ.
Եւ հոգուս խորքից բարբառ եմ լսում—
Ղօրանչը զանգի տիեզերական.
Եւ դէպի ամբոխն իջնում եմ ահա
Նոր կտակներով, նոր պատգամներով.
Դէպ նրա հոգին գահավիժում եմ
Նրան խայթելու, և քարոզելու,
Եւ արտասուելու, և այրուելու...

ՅԱԿ. ՅԱԿՈԲԵԱՆ

(ծնն. 1869 թ.)

Յակ. Յակոբեանը տարիների ընթացքում երգել է պրոլետարական մոտիվներ, երբէք չը նահանջելով իր դիրքից, չը թուլանալով անգամ ամենաթանձր ռէակցիայի օրերին։ Նրա երգելու ձևը քարոզչական է գերազանցապէս. իր գրելու ձևով Յակ. Յակոբեանը պատկանում է քաղաքացիական հրապարակախօսական գրողների շկոլային։ Ապրելով պրոլետարական պայքարի ու նրա սոցիալական վերելքի շրջանում, տոգորուած նրա իդէալներով ու տենչերով, նա թարգման է հանդիսացել պայքարող ու յաղթանակող պրոլետարիատի քաղաքացիական վշտի ու նրա յամառ ձգտումների։ Յակ. Յակոբեանի մասին խօսելիս, չէ կարելի երբէք աչքաթող անել պատմական երևոյթների արժէք ունեցող այն հանգամանքը, որ քաղաքացիական մոտիվները բանաստեղծութեան մէջ անխուսափելի ու գերակշռող են դառնում պատմական այն շրջաններում, երբ մի դասակարգ կամ հասարակական տարբեր խմբաւորումներ իրենց պայքարի ու սոցիալական վերելքի շրջանն են ապրում։ Հին յունական կլասիք լիրիքների շարքում յայտնի է իբրև նման բանաստեղծ Սոլոնը, որը երգել է յունական պայքարող դեմոկրատիայի քաղաքացիական վիշտը, ռուս բանաստեղծներից՝ Նեկրասովը և նրան հետևողները, հայերից՝ Ռ. Պատկանեանը, Ս. Շահազիզը և շատ ուրիշները։

Յակ. Յակոբեանը այսպէս է բնորոշել իր դիրքը քաղքենիական նախապաշարումներով լճացած հին մամուլի հանդէպ.

Նման չեմ ես ձեր սիրելի պոէտներին,
Ձեր քուրմերին երգս օտար—մի խորթ հնչիւն.
Ես չուզեցայ հաճոյանալ ձեր սրտերին,
Այս տօրեայ մեղկ ու թունոտ մղձաւանջում։

Ես երգեցի գործարանի սև աշխատանք,
Եւ ճարճատուած պողպատ մէջքերն անիւի տակ։
Ստեղծագործ հրաշքները կոշտ ձեռքերի,
Յաղթանակող թափը նրանց վեհ պայքարի...

Տողեր, որոնք իրենց արտայայտութեան ձևով նախորդ քարոզող բանաստեղծների գրիչն են յիշեցնում։

Յակ. Յակոբեանը մեր գրականութեանը բերել է նոր մոտիվներ՝ պրոլետարական մոտիվներ, հարկաւ առանց նոր ձևերի։

Պրոլետարական մեծ յեղափոխութիւնը շատ շուտով հանդէս կը բերի նոր երգիչներ, որոնք պրոլետարիատի վերելքն ու յաղթանակը երգելու համար կը գտնեն նոր պատկերներ ու գոյներ, նոր հնչիւններ ու ձևեր։

Սուրխաբեան

ՑԷԿՈՐ ՑԷԿՈՐԻՆՆ

1.

ՔԱՂԱՔԸ

Ահա քաղաքը... հսկայ բուրգերի
մի զարդուած է այն,
Թէ միապաղաղ պողպատից ձուլուած
լեռների շարան,
Ուր թրամների, հեռախօսների
ցանցերը անխոնջ
Շարժի են բերում, աղմկում կեանքի
երակները ողջ։

Ահա փողոցը... մեծ, երկար ու լայն—
գետի է նման,
Ուր ոլորտներով ծփում է եռում
հոսանքը շարժման
Եւ ուր վիթխարի շէնքերը քարէ
երկնահուպ շարքով՝
Կապոյտ մի ճամպայ եզրել են վերից
անհուն լազուրքով։

Այստեղ ցուլի պէս բառաչում է, տես,
կառքը ինքնաշարժ,
Այնտեղ աղմկում հանրակառքերը,
թրամները վարժ,
Սրանց արանքից ծիծեռնակի պէս
սուրում են ճարպիկ
Հեծանիւները՝ շալակն առած
կին, աղամարդիկ...

Եւ այս ամենը, և՛ կառք, և՛ թրամ
վագքով խուռներամ
Հզօր, դիւթակոն դաղտնի մի ձեռքով
ալիքանման՝
Պտոյտ են գալիս որպէս համաչափ
թէմպը սլաքի,
Ու չեն խանգարում թանչը քաղաքի,
հնքը քաղաքի։

Եւ դուն է այստեղ մարդը այսօրուան—
ոյժի ու փառքի,
Որ այս ժխորում ծծում է առողջ
հիւթերը կեանքի,
Ծծում է, քամում բոյը ու հրապոյը,
յափրում, արբենում,
—Ու չէ յագենում... ու չէ յագենում...

Օ՜, այս խնճոյքի ուրուականներին, լոյս փո-
ղոցների հնչիւն երգերին
Անմաս է միայն ստեղծողն այն,
Որ շնչք է տուել նրա վերամբարձ բազմա-
յարկերին,
Իսկը ծնացել է մոռացուած, մենակ,
որպէս խորթ զաւակ։

Եւ բանակ դրած քաղաքածայրում—
որպէս գոռ ալիք,
Այստեղ ձուլուում է գործարաններում
սերունդը գալիք.
Օ՜, հեռանցէք նրա փոթորկող
սրտի բաբախման,
Նա էլ իր խոհերն, իր յոյզերն ունի,
իր գեր-նպատակ,
Որի ծով-թափին չի դիմանալու
ոչ մի ամբարդակ...

2.

ԿԱՐՄԻՐ ԳԱՐՆԱՆ

—Ապրել...
—Ապրել միայն կարմիր գարնան,
Երբ ջրերն են իրար խառնում,
գետեր դառնում,
Երբ կանաչն է հասակ առնում—
փարթամանում.
Ապրել միայն կարմիր գարնան։

—Կուել...
—Կուել միայն կարմիր գարնան,
Երբ որոտն է ահեղ թնդում,
Երբ կայծակն է երկինք քանդում,

Գոբելենների քացում քաոս,
Ցարերգմների խալ ոսկեմոս։

—Մեռնել...
—Մեռնել մեռած կաղմիք գարնան,
Երբ հեղեղն է լեռների խոցում,
Երբ սեղանն է ուղի քացում,
Ինչ կայ անպէտք տանում իր հետ,
—Անցած կեանքի՝ և շկայ հետք...

3.

ՀԱՑԻԱՆ «ՀԱՒԱՍԱՐՈՒԹԻՒՆ» ՊՈԷՄԻՑ

Եւ ես հէքիաթի շեմքին խոնարհած
Հիանում եմ լոկ այս նոր աշխարհով,
Մի աշխարհ չքնաղ, որ ալիք առած
Ծփում է, շարժում, որպէս եռուն ծով.
Է՛յ, հազար հազար աւտոմոբիլներ,
Որ այդպէս արագ թռչում էք, սլանում,
Ո՞ւմ էք պատկանում.
—Հանրապետութեան...
Է՛յ, հազար-հազար լոյսեր էլեքտրական,
Որ դիշերները արև էք վառում,
Ո՞ւմ էք պատկանում.
—Հաւասարութեան...
—Եւ դուք աշխարհի գեղեցկուհիներ—
Ցաղթ մեքենաներ ու գործարաններ—
Որ քար ու հողից բարիք էք ծնում,
Ո՞ւմ էք պատկանում.
—Բանւոր մարդկութեան...
—Դուք նաւեր, ջրեր, երկաթուղիներ,
Հանքեր ու ցանքեր ազատ աշխարհում,
Ո՞ւմ էք պատկանում.
—Հանրաւոր մարդկութեան...
—Համալսարաններ, աստեղկայաններ,
Չքնաղ թատրոններ, հանճարի տներ,
Որ այս հէքիաթի պարծանքն էք կազմում,
Ո՞ւմ էք պատկանում.
—Մէկին, ամենքին—իրար հաւասար—
Ուր հազարն է մէկ՝ և մէկը՝ հազար...

Տեսել էք, արդեօք, վաղ արշալուսին
Նորաձին կանաչ ցօղը երեսին,
Կամ ծով-եթերում լուսաշաղ ամպեր,
Անրիծ, անաղարտ, ինչպէս կարապներ։
Կանաչների մէջ և վարդերի մէջ
Ես տեսայ այստեղ մի աւան սիրուն,
Քաղաքից հեռու շարէշար անվերջ
Միայարկ տներ—շուրջը ողջ դարուն։
Տները այստեղ բիւրեղից է ողջ,
Հոյլերի հեղեղ արևն ընտանի,
Այստեղ ծլում է մի սերունդ առողջ
Գեղ մանուկների։
Ինչպէ՞ս միաձև ու պարզ են հաղնուած
Այս զաւակները Նորեկ Աշխարհի,
Եւ ինչպէ՞ս սիրով և ինչպէ՞ս ազատ,
Աղջիկ ու տղայ իրար հարազատ,
Կարծես ամենքը մի մօրից ծնուած,
Մի օր մեծացած ու մի տեղ սնուած,
Խաղում են կայտառ, ծիվլում սրտանց,
Նախանձ չարութիւն օտար է նրանց.
Երգում են, որպէս գարնան թռչուններ,
Ոչ ոք նրանցից հոգս ու ցաւ չունէր...
Սակայն ինչո՞ւ այս դեղ ծաղկանոցում—
Բնութեան ծոցում—
Տեղ-տեղ փթթել են ծաղիկ հասակներ
Պատանիների.
Ծաղիկ հասակներ, ինչպէս պսակներ,
Որ շուք են տալիս դաշտերի միջին
Թաւիշ կանաչին.
Ովքե՞ր են սրանք, ինչո՞ւ են այստեղ,
Այս մանկանց միջին.
—Նորեկ Աշխարհի օղակներն են այն—
Համերաշխութեան,
Որ ամեն անդամ իրենց հմտութեամբ
Օգնեն, աջակցեն դեռ ևս անփորձ
Այս մանուկներին.
Օգնեն, աջակցեն և ուսուցանեն
Մէկը ամենքին,
Որ այս հասակից մատաղ սրտի մէջ
Հաւասարութեան և Եղբայրութեան
Զարգանայ ոգին...

Ահա և նրանք՝ գործարանները
Նոր սերունդների,
Ահա և նրանք՝ ստեղծողները
Այս Նոր Աշխարհի.

Հոյակապ, սիրուն, ողջը ապակեայ—
Լոյսերի աղբիւր,
Յատակը յղկուն, հարթ, ճենապակեայ,
Օդը համասփիւռ.
Մտել եմ նրա կամարէ դռնով—
Նման տաճարի.
Այստեղ է ծնուել, այստեղ սաւառնում
Ոգին հանճարի...
Ահա և նրանք ճախարակները
Զուգահեռ շարքով,
Որպէս տիտաններ՝ մարմար հիմքերին
Բազմել են կարգով.
Գործում են թափով, մրրկում արագ,
Տենդային հնքով
Եւ լսելիքդ շոյում միանւագ
Յաղթական երգով.
Այստեղ չէ լսւում առաջւայ նման
Շռինդ ու շառաչ,
Ողջը խոնարհւել, ողջը զսպւել է
Հանճարի առաջ.
Եւ մարդու համար մեքենան անսաս
Մի զսպւած գազան,
Որ ինչ ուղղութիւն և ինչ ընթացք տաս՝
Կը լսի անձայն։
Օ՜, գիտակցութիւն,
Որ խենթ մեքենան
Դարձել է խոհուն ընկերը մարդկան։

4.

ԼՈՒՍԱՓԱՅԻՆ

Նորից եկայ այցելութեան
Գործարանի պարիսպներին,
Երկաթակուռ այն շենքերին,
Որոնք մի օր շունչ տուեցին իմ երգերին։

Ահա մտայ նրա շեմքով,
Ինձ ողջունեց արթուն սուլիչ,
Մեքենաներն ուրախացած
Ու խենթացած՝ արձակեցին երկաթէ ճիչ։

Իրար անցան ճախարակներ,
Ժիր փոկերն ու պլտուտակներ,

Շոգեմուրճը հպարտ թնդաց
Ու որոտաց՝ դեռ չեմ յոգնել, դեռ չեմ յոգնել։

Նրան խմբով ձայնակցեցին
Զարաճճի հազար մուրճեր.
Ծլուլալով կլոլընգացին,
Կլկլացին՝ որպէս ուրախ դեղձանիկներ։

Եւ այս ժխոր համերգի մէջ
Մեծ քուրայից ժայթքեց ոստնում.
Այդ անհանգիստ կայծն էր անշէջ—
Առաւօտեան՝ նոր կեանքի երգն էր պատ-
րաստում։

5.

ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ

Տեսնել ես, ընկեր, ալեկոծումը
ահեղ ովկիանի,
Ուր երկու ալիք շարժուն սարի պէս
Իրար են վազում.
Իրար են վազում փրփուրը բերնին
յովազի նման
Ու յոխորտալով զարնւում, փշրւում
աւազի նման...
Իսկ երբ անցնում է վրէժի բոպէն—
յուզումը վայրի,
Տեսնել ես ինչպէս հանգստանում է
Հսկան ջրերի,
Մեղմանում է նա... մանուկի նման
ժպտում է ալիք,
Ալիքի միջից մի երգ աննման,
Ծփալով մեղմիկ—
Շոյում լսելիք...

Լսնել ես, ընկեր, ըմբոստ երկնքում
կռիւը որոտի,
Որ դղրդում է, որպէս մի պայթիւն
մեծ թնդանօթի.
Տեսնել ես, ինչպէս ամպերի կրծքին
կայծակը դիպ-զադ
Իր լինդն է մխում փութկոտ, շեշտակի
ու ցնցում աշխարք.

Կամ ինչպէս թափով ծառս-ծառս է լինում
ցասկոտ փոթորիկ,
Հսկայ ծառերին չոքէ-չոք անում,
Դարձնում խաղալիք,
Մինչ որ տեղում է հեղեղը վայրագ
և ինչպէս փրկանք՝
Ծանր երկունքից ազատում աշխարք.
Բնութիւնը յաղթ ժպտում է ապա
պայծառ արեգին—
Որպէս պատասխան չար արհաւիրքին...

Լաճ՝ ես, ընկեր, ծնողականի հիշը
յուսահատ,
Որ գալարելով, արգանդի ցաւից
պոռայ անընդհատ...
Վիրաւոր ընկած այն էգ առիւծն է
այնպէս մոնչում,
Երկունքի ժամին մեծ ազատութեան
օգնութեան կանչում.
Կեանքի և մահու պայքարը մղող
Այն մայրն է տանջւող...
Իսկ երբ հասնում է յուսոյ բախտաւոր
ժամը փրկաւէտ,
Տեսնել ես ինչպէս այդ խորհրդաւոր
վեհ պայթումից յետ,
Մի վսեմ, խաղաղ մայրական ժպիտ,
որպէս վառ յակինթ,
Փայլում է նրա արնոտ շուրթերում՝
դէմքը զարդարում։

Այդպէս էր ահա և այն վեհ ժամին
Յեղափոխութեան,
Երբ որ բաղխուեցին իրար հակառակ
երկու ախոյեան.
Ալիքի նման խուլ մռընչացին
երկու հզօր ոյժ,
Աշխարհը ցնցուեց... ու եղան կործան
կարգերը վատոյժ.
Վայրագ հեղեղին, շանթ ու փոթորկին
Հետևեց թափով հեղեղ ցնծութեան.
Երկունքի միջից մանուկը ծնուեց
Մեծ ազատութեան.
Ընկեր իմ, ընկեր, ահա մանուկը
Յեղափոխութեան.
Փորձութեան ժամին երդւիր կրծքովդ
պաշտպանել նրան։

ԴԵՐԵՆԻԿ ԴԵՄԻՐՃԵԱՆ

Ժամանակակից հայ քնարերգութեան աւագ ներկայացուցիչների անընդհատ է պատկանում Դ. Դեմիրճեանը։ Մինչև վերջին տարիները Դեմիրճեանը համեմատաբար քանակով քիչ բան է տուել, բայց որակի առնչակէտից նա արժանի է լուրջ ուշադրութեան։

Իր բանաստեղծութիւնների շարքով, իր արձակներով ու դրամաներով, Դեմիրճեանը, ինչպէս մեր բոլոր քնարերգուները, պատկանում է անցեալին։ Նրա պոէզիան զարմանալիօրէն սիրում է անկուռ անդորրը, խուսափում ամեն աղմուկ ու շփոթից։ Նշանակալից է, որ իր բանաստեղծութիւնների ժողովածուի մէջ արտայայտութիւն են գտել իր ապրումները մինչև 1905 թուի յեղափոխութիւնը և ապա 1907-ից յետոյ սիրող բէակցիայի շրջանում։

1905-ի յեղափոխութեանը ոչնչով չէ արձագանգել նրա քնարը։ Այդ է պատճառը, որ նրա մոտիւները երկու մութ ու մռայլ շրջաններին են պատկանում։ Նրա մտքերն ու խոհերը յղացումն են կեանքի գառն տառապանքի. նրա երազներն ու պատրանքը արգասիք՝ կեանքի մռայլ ժխորից անկուռ ազատուելու տենչանքի։ Դեմիրճեանը մենութեան մղձաւանջը երգել է մինչև Տէրեանը։ Նրա շատ, լի տարակուսանքով մենութիւնը սակայն յետագայում անբոյժ չէ մնացել։ Բայց մինչ այդ՝ որպէս ինդիվիդուալիստ՝ գոյութեան կուի ծանր տապարէզում նա ելք չէ գտել. վհատուել ու լքուել է, մխիթարութիւն փնտռելով երազական աշխարհում։ Իր մի քանի գրուածքներում՝ Կեանքի տեսիլը և Ոչ այս աշխարհից՝ Դեմիրճեանը շնորհիւ իր հոգեկան խիստ մեկուսացման աւելի խորհող է, քան զգացող, որով գրուածքներն ստացել են սխեմատիկ հիւսուածք։

Դեմիրճեանը աջող փորձեր է արել միջնադարեան տաղերգուների ձևով քառեակներ գրելու, որ զետեղուած է նրա Գարուն խորագրով տետրակի մէջ։

Փորձել է իր ոյժերը դրամայի մէջ և տուել աւարտուած գործեր, ինչպէս, օրինակ, Դատաստանը իր հոգեբանական նուրբ հատուածներով։

Սուրխաթեան

ԳԼԽԱՆԻԿ ԳԼՈՒԽՔԵՐԸ

I.

ՀԻՆ ԵՐԳԵՐԻՑ

Ի՞նչ մեղմ են երգում սատղերն երկնքում,
Սորճունկ, ներդաշնակ...
Թէ՞ անտառի մէջ բամբին է ձգում
Իր անուշ ջուխտակ...
Թէ՞ աղբիւրն անուշ սաղմոս է երգում
Սառցէ կտրի տակ...
Ո՛չ, սիրտս է երգում, իմ սիրտս է քեզում,
Անուշ գաղտնիքով եկել է գարուն։

Կարող է լսել մարդ գարնան հնչն առաջին.
Ո՞վ լսի նրա լուռ ծլելը առաջին.
Ո՞վ պիտի ունկ դնի սրտիս խոր հառաչին
Քեզանի՞ց զատ, որ միայնդ լսում ես ու լռում։

Ինչքան ծի՛լ, կոկոն վարդ ծնեցին այս գիշեր,
Ինչքան վառ ծաղիկներ զարթնեցին այս գիշեր,
Ինչքան թարմ տնակներ բացուեցին այս գիշեր,
Դուրս ելան շուշաններ, անուշներ, մեղուշներ,
Ինչքան զի՛լ ոլոռաց սիրոյ ձայնն այս գիշեր,
Մի ձայն էլ ինձ հասաւ... աչքս թաց այս գիշեր...

Դու մի վե՛հ գիշեր ես՝ լուսընկայ, կաթնաթոյր,
Ունքերդ կախուել են երկու շուք սևաթոյր.
Մի վէրք տալ գիտես դու, որ ինչ խոր՝ այնքան սուր,
Որ ինչ սուր՝ այնքան հուր ու այնքան սրտին դուր։

Այդ քո վարդ շուրթերդ ի՞նչ, երբ մի շուրթ չեն
այրում,
Այդ քո վառ աչերդ ի՞նչ, երբ մի պագ չեն հալում.
Ի՞մ անհաս, ի՞մ հրաշք, եկ մի օր, կատարի՛ր,
Եկ, սատ չասելուդ, մէկ մահն էլ թող մեռնի։

Լսիր, ջան, չերթաս ժամ՝ պատկերս, իմ մատաղ.
Մարդ չանես ամուսին, որ չանես հազար ախ.
Մի մանի ոսկէ բանտ՝ գառնաս հաւք անուրախ.
Սիրով էլ չը կապես, թէ հրեշտակ կապի քեզ։

Այդ քո ծաւ աչերիդ ինչքան եմ կարօտել,
Այդ անգութ հեռու տեղդ ինչքան եմ ես ատել.
Ո՞ր գարնան պիտի գաս, իմ թուչնիկ անընտել,
Ի՞մ դժուար, իմ երբէք, իմ մի օր չըլնելու...

Էլ ինչով ապրեմ ես իմ հատակն այս աշուն,
Ի՞մ վճիտ երեքաչ, իմ ջահէլ, իմ նախշուն.
Դու աղբիւր լուսեղէն՝ սերած թարմ ձիւներից,
Ես պղտոր մի սև գետ՝ եկած մութ ձորերից։
Էլ չունեմ քեզնից յոյս, իմ մանկուց երազած,
Ի՞մ գարնան որոնած, իմ աշնան գտնուած...

Աստ, մի՞թէ երեկ չէիր աղջիկ պատիկ ու նազանի.
Ե՞րբ էլ այդպէս հատակդ եկաւ վառ դրախտի նոճու
նման.
Կրծկ ես գառել, քանչլ ես փոխում ուաշի նման մեծ-
սրտանի,
Քեզ տեսնելիս՝ սիրտս է թռչում, վախեմ սէրդ հոգիս
հանի...

Լսիր, ջան, ափսոս իմ, իմ ձեռից գնացած,
Մի աչքիս երևայ՝ երբ հնարդ էլ չը կայ.
Սրի վրա երազում, որ հնարն հեշտանայ,
Քեզ ասեմ չասելուս, որ ոչ ով չիմանայ։

Եկան ասին՝այց ես արել բարեկամիդ գերեզմանին,
Վրան գարնան փունջ ես դրել լոյս մատներով
դրախտային.
Էրնէկ չէ՞ր ինձ՝ շիրմումն էի, ձեռդ մի վարդ սրտիս
դնէր,
Որ երբ շունչդ հողիս դիպչէր՝ հառաչանքս ուրիդ
ընկնէր։

2.

ԱՂՔԱՏ ՄԱՆՈՒԿ

Իր մոր աղքատ դրկում վատահ,
Մանկութեան մէջ անուշօրօր,
Քնած է նա իբրև արքայ՝
Իր պետութեան ծոցումն անդորր։

Մինչդեռ վշտից ծեծուած ու կոր,
Լքուած արդէն, շուքի նման՝
Աղերսում է մայրը անպօր
Անցորդներին անպատասխան։

Բայց ինչ փոյթն է քնած մանկան
Այս աշխարհի ցաւն ու աղէտ.
Եւ ինչ ունի մանուկ արքան
Անարբատ բախտի խաղերի հետ։—

Երբ ոսկեհոյլ թիթեռներով
Լի է երկինքն իր մանկութեան,
Երբոր լուսով, ծաղիկներով
Իր Աստուածն է ժպտում իրան։

Քնիր, մանուկ, և չարթնանա,
Քեզ էլ աշխարհ պիտ չը ժպտայ.
Լ՛հ, մի զարթնիր, որ չիմանաս
Ինչքան տխուր, ինչ դառն է նա։

3.

ՀԱՆԳԱՒ ԵՐԱՋ

Հանգաւ երաց... Ահա կրկին գունատ օր
Նայում է ինձ աչքով իր թաց ու պղտոր.
Ափսոս, հանգան զարթուններն հրաժին,
Որ գորշ կեանքիս պերճ երազում ծաղկեցին։

Եւ ուր եկար, տխուր ցերեկ, այսպէս վաղ,
Ինչու այդ պաղ ձեռքով բերիր արթնութիւն...
Գնա, գնա, ինչպէս ընկերդ անուրախ
Հանգաւ երեկ՝ քեզ պէս տխուր, ապարդիւն...

ԾՈՒԾԱՆԻԿ ԿՈՒՐԳԻՆԵԱՆ

(Ծնե. 1876 թ.)

Իբրև գրական դէմք՝ Ծուշանիկ Կուրղինեանը արդիւնք է ռուսական առաջին յեղափոխութեան (1905 թ.), 1907 թ. լոյս տեսած Արշալոյսի Ղօղանջները ժողովածուն մի փայլ շնորհեց բանաստեղծուհուն, գիւտագրի պէս շուտով անյայտանալով գրական երկնակամարից։ Ռուսական Առաջին Յեղափոխութեան օրերին Ծ. Կուրղինեանին ոգևորել են պրոլետարիատի ըմբոստացումները, բռնապետութեան դէմ մղած նրա օրհնական պայքարը։ Յեղափոխութեան ալիքները մի պահ բարձրացրին բանաստեղծուհու յեղափոխական տրամադրութիւնը, և նա տուեց իր Հանգցրէք ջահերը, Ցետ տար քո խաչը և մի շարք ուրիշ բանաստեղծութիւններ։ Սակայն յեղափոխութեան իջնող ալիքների հետ թուլացաւ բանաստեղծուհու քնարը։

Ծ. Կուրղինեանի քնարը լռեց։ Իսկ յետագայ տարիներում հատ հատ երևացող ստանաւորները ոչինչ նոր չաւելացրին նրա Արշալոյսի ղօղանջների մոտիւների վրայ։

Ունի նաև վաթանին, հայրենիքին, բնութեանը նուիրուած կտորներ։

Սուրխաթեան

ՍՈՒՐԵՆԻԿ ԿՈՒՐՈՒՆԵՑ

I.

ՅԵՏ ՏԱՐ ԶՈ ԽԱՂԸ...

Անձնայր տափարակ... գետինը սառած,
Զեռն կարծր շերտի հիւրընկալ դրկին
Դէմքը ցաւագար խնամքով ծածկած՝
Լռեալ մառում է վիշտին ամենկին...
Բրաշունչ քամին վազում տանձարձակ—
Ոռնում է, հչում... կամ պաղ թևերով
Ծեծկում է գետինը և իր անգունակ
Հին ոկիծներից երգում է լալով։
Գորշ մառախուղը տրձև փեշերի
Ծալքերն երկնում համարձակ ձգել։
Ճածկել է չքնաղ լուսնի, աստղերի
Լուսաբեր ցոլքը—ազատ, անարգել...
Եւ ահա հեռից ինչ որ մութ գծեր
Սեին են տալիս, ճօճում անհաստատ,
Ճօճում, երերում՝ կասես ագռաւներ
Քաղցից շւարած, ծարաւ կամ քնատ։
Եւ դաշտավայրի ըսպիտակ կրծքին
Որպէս չորացած վէրքի սպիներ—
Այն սև գծերը լուռ են մոլեգին՝
Տագնապ են ազդում, սարսուռ ահաբեր...

Ահա կանգ առան... խառնուեցին իրար...
Մի խուռ հարուածից տնքաց ու դողաց
Ամայի դաշտը... քամին թեւահար
Պինդ փարուեց երկրին, քարացած հնաց։
Եւ մի սոսկալի խուլ հեկեկանքի
Խեղդած հեծկլտանք տարածուեց դաշտում,
Մի ամօթապարտ, մեղսոտ պատրանքի
Դիւային քրքիջ շշնջաց օդում։
Ու աղեկըտուր լալագին վշտի

Հոգոց գուրս թռան երկրի երեսից,
Եւ անէն ուրց սև յաղթանակի
Գարշելի փառքին պատրաստուած մի ցից...

Ամենքը լուռ են... Մի լուռ պատմութիւն,
Մարդկային կեանքի մի հսկայ հոսանք,
Ապրածի՝ վերջը, նորի՝ յայտնութիւն,
Դարերի ճնշման պոռթկումի թափից
Ըմբոստ վիժուածքը տոտապանների,
Անարգ բռնութեան սուր ճիրանների
Նրաժիլ ապտիը ազնիւ մարդերի,
Հաստատութեան միտկ փրկարար
Վէս գիտակցութեան ծնունդն հսկայ—
Օրհնիրուն փրտոդ, անվերջ հոգեհար
Տիրող կարգերի լուծն արձիճեայ՝
Կանգնեցին անխօս, դէմ առ դէմ այնտեղ—
Այդ ոչնչացման տխուր հանդէսի
Սոսկալի ժամին... այն ժամին ահեղ,
Երբ սոսկ մարմնացած դաղրը կը խօսի...

Քամին դողալով շոյում է, գրգռում
Այն լուռ դէմքերին. և իր վշտահար,
Մենակ, անընկեր կեանքից անխնդում
Պատմում է նրանց, լալիս անդադար։
Նա մերթ քծնելով սև ֆարաջայի
Երկար փեշերն է վախկոտ փողփոդում,
Եւ այն ծեր ձեռքում բռնած սառ խաչի
Շուրջը գարմացած գալարում, խաղում։
Նա մերթ այն դաժան դէմքերից ցասկոտ
Թռչում է հեռու և սիւնին դիպչում,
Այրուող ճակատը պաղ թեով շփում։
Թշուառ էակի... նրան վերցրին
Մի պայթած ռումբի փշրանքների մօտ՝
Որտեղ փորուել էր—իր ջահել կեանքին,
Ջախջախուած մարմնին—առանց ձեռ ու ոտ,
Բռնութեան ճընշող հաճոյքին յարմար
Մի անդարձ անդունդ—ըմբոստի համար...
Եւ ահա ինքը՝ մարդկութեան որդին,
Տառապանքների, անարգ բռնութեան
Ըմբոստ մարտիկը—իր նմաններին
Փրկելու համար ելաւ կախաղան։
Ի՞նչ հոգ խաւարի սև հոգիներին,
Որ նա կէս մարդ է... որ նա ստրուած
Արիւնաշաղախ մի վիրուտ մարմին,

Ապիներին մի ցանց, ձեռք-ոտք կոթգրած...
Չէ՞ որ թշուառ խեղճս կրծքի տակ
Դեռ պրոֆուում են դարերը վերջին,
Այն բմբռատ հոգու տենչն անխորտակ,
Յաղեցած վրէժի ցոլք կայ աչերին
Չէ՞ որ արնաքամ, շորցած շրթերում
Արհամարհանքի խաղում է ժպիտ,
Ու մի բատանակ, զոհուեստակ խնդում
Տիրում այլանդակ մարմնին փոխ...
Հա՛, կատարել է... պէտք է մեռցնեմ
Բախտաւորներին՝ արհամարհողին,
Պէտք է շուտ խեղդել, արմատից խլել
Ամբռատ խլրտման ծիլերը վերջին...
Եւ ահա թշուառ դատապարտեալին
Լուռ մտնում է ծերուկ քահանան՝
Ստրուկի շղթան փշրել ուզողին—
Համբուրել տալու հաւատի շղթան...
Յնա՛ տար քո խաչը...

Յնա՛ տար քո խաչը—դոքծիքն յարմար
Անվերջ կեղծիքի, լպիրշ քսութեան։
Անխախտ պատճառը—արւած ոտնահար
Ամեն մի տենչի թշուառ մարդկութեան։

Յնա՛ տար ազգերի տիտան կապանքի—
Վեհ ձգտումների, սուրբ ճշմարտութեան,
Գիտակից մտքի—ազատ վայելքի,
Շաղկապ իդէալի—հաւասարութեան,
Եւ սասանակոն անվերջ ջարդերին,
Անմեղ զոհերի անգութ ըսպառման՝
Վաղուց կեղծւած ժանգոտ բանալին...

Յնա՛ տար մոլեռանդ, անմիտ ու անհամ
Կեղեքիչների զէնքը քաւաթե՝
Որ պաշտուեց երկար, երբ ամեն անգամ
Տրնքում էր մարդը—մոքով կոյր, անթե՛...

Յնա՛ տար... նրանից արիւն է ծորում,
Վազում արցունքի, շարաւի հեղեղ,
Բիւրաւոր, անթիւ, զոհերի լքում—
Ղօղանջում մահւան նզովքով ահեղ...

Յնա՛ տար—տրոբւած ըմբռատ գանգերի
Տաք-տաք, բարախուն—արիւնաշաղախ
Թարմ ուղեղներից—հաւատողների

Կոփանքի սալը — և խաչդ՝ աւանդ...
Ահա մեր խաչը — սև սիւնը անարդ
Փրկութեան համար հանուած Գողգոթա,
Ահա և ինքը՝ նոր լոյսի զաւակ,
Որ ազատութեան հարթում է ճամփայ...

Բքաշունչ քամին վշտից կարկաւած
Ոռնում է, ճըչում, իր պաղ թեւերով
Ծեծկում է թմբին, կոյտերի սառած,
Արնոտ փշրանքը գուրգուրում լալով...

2.

ՀԱՆԳՑՐԷ՛Ք ՋԱՀԵՐԸ

Խաւար է... գիշեր... հեռու ղենիտում
Մշուշի միջից դալուկ դէմքերով
Նիրհում են անգոյն աստղերը տրտում,
Սոսկումով պատած մարմըրում շուտով։
Տընքում է հողը. շնչով մահահոտ
Վիշտն է գալարում երկրի երեսին,
Օդի թեւերին կըսկիծի լացոտ
Մրմունջն է հնչում, չկայ և լուսին...
Բայց դուք կամեցաք մրցել երկնային
Վառ կանթեղների լոյսի հետ նսեմ,
Եւ ձեր բազմաթիւ լապտեր ջահերին
Մի ակնթարթում կեանք տուիք վսեմ։
Եւ ահա մռայլ, անմարդ փողոցում
Մէջ կէս գիշերին ձեր պալատներից
Շողում են լոյսեր մթութեան ծոցում՝
Շքեղ զարդարած պատուհաններից։
Դուք տօն էք տօնում ու զարճանում
Այնտեղ՝ հոյակապ մտքի, հանճարի,
Ոսկու, արծաթի, վայելքի գրկում—
Ու բարեմաղթում ամենքին բարի...
Դուք տօն էք տօնում ու զարճանում,
Ուր ամեն քարը ունի պատմութիւն
Իր տակը ճըզմած թշուառ գանդերի,
Ուր որ աղիւսը ծծել է արիւն
Ու կաթիլները աղի քըրտինքի...
Դուք տօն էք տօնում, խրոխտ թնդացնում
Ուրախ քրքիջով բարձր պատերը,
Որոնց վրայից քաղցած անխնդում
Ընկաւ թշուառը, փշրեց ոտքերը...

Եւ լապտեր-ջահեր շողում են պայծառ
Ու լոյս տարածում ձեր կուշտ դէմքերին,
Մինչդեռ խիղճերդ կարծր է՝ ինչպէս ժայռ,
Մշտական խաւար՝ սրտերիդ բաժին։
Հանգցրէք ջահերը...
Եւ թող շարէշար ձեր ճոխ սեղանի
Շուրջը հաւաքեն քաղցած ու տկլոր
Անտէր որբերը այն թշուառների,
Որոնց դուք թողիք առանց հոր ու մօր։
Եւ թող շարէշար գծուած, ոտաբաց
Շեմքերդ լիզող հաւաքեն մայրեր,
Որ փողոց ընկան մուրալու չոր հաց
Ու ձեր պալատում փընտռեն շիրիմներ
Այն բանուորների—ում կեանքի գնով
Երկինք բարձրացան շքեղ տներիդ
Բարձր պատերը՝ ճարտար քանդակով՝
Վարդակ լինելու փարթամ կեանքերիդ։
Եւ թող շարէշար, արնոտ, ուշաքաղ
Յոշոտուած մարդկանց սև ուրուականներ
Խոնաւ փոսերում թողած չոր դագաղ՝
Ձեզ այցի ելնեն տեսքով մահաբեր...
Ձեզ հետ տօն տօնեն ու զարճանան
Այլանդակ կեանքի վայրագ քըրքիջով,
Երգեն գրկանքի երգը հոգեհան—
Զոր հացի երգը—մահւան մրմունջով։
Եւ խաւարի մէջ խաւար գործերիդ
Պատմեն արգասիք թշուառ անցքերի
Ու հանեն ահեղ դղորդ ու շռինդ—
Անարդարութեան սև կապանքների...
Հանգցրէք ջահերը...

3.

ՏՐՏՈՒՆՋ

Իմ մրմուռ, միշտ անլուր ցաւերգով,
Ա՜յ անդին, քո հոգին ձանձրացաւ,
Որ անդարդ ու հանդարտ եզերքով
Հեռացար քեզ համար առանց ցաւ։

Իսկ ես հեզ, փրփրադէզ ծովի մէջ
Պիտ դողամ ու լողամ մինչև լոյս.
Մինչ ծագի նոր այգի լուսաէջ
Վառ արփին սև ափին արշալոյս։

Հուսաշատ, յուսաշատ ջիղիդ շոգին,
Անհասանչ ընդարատաջ քս ֆիրքատմ,
Ու պտակի ու գրոշակի յապքոգին
Ոչ հիսանմ ձս վանմ ու փոթքատմ։

Դու խոշնուկ, գամանցուկ յիտ կը գաս,
Ոչ ձգանս գոգի պէս ինձ սիրեկ,
Իմ ոյժից, վրէժից յետ կիրքատ՝
Տարքնած և ապուած անտրգիկ։

ԲԼԲՈՒԼԻՆ

Արի, բլբուլ, մէկտեղ դատենք,
Չէն ձէնի տանք ու երգենք.
Էս օրուանից գառնանք ընկեր,
Իրար խառնենք մեր ցաւեր։

Անցաւ գարուն, աշուն կուգայ,
Շատ հեռու չէ և ձմեռ,
Լաց ընկեր ջան, էլ վարդ չը կայ,
Թուփը մնաց կիսամեռ։

Երգենք, ընկեր, ցաւը երգենք—
Դու՝ քո մեռած սիլ վարդի,
Երգենք, ընկեր, ցաւը երգենք—
Ես՝ իմ աւեր վաթանի...

Անցաւ գարուն, արնոտ գարուն,
Մօտ է աշուն, ցուրտ ձմեռ,
Ա՜խ, ախպէրս մնաց անտուն,
Քոյրս քաղցից կիսամեռ...

Արի, բլբուլ, ցաւը երգենք
Վարդի, աւեր վաթանի,
Արի, ընկեր, իրար խառնենք
Մրմուռ ցաւը մեր սրտի...

ՎԱՀԱՆ ՏԷՐԵԱՆ

Մեր նորագույն գրականության մեջ Վահան Տէրեանը վառ դէմք է. հայ բանաստեղծութեան զարգացման ընթացքի մէջ նա կարևոր էտապներից մէկն է ներկայացնում։ Տէրեանի տաղանդը նրանց միջանդամից. իր ստեղծագործական առաջին թափով նա դրաւեց հայ գրական ասպարէզը։ Նոր մոտիւներով, նոր խօսքերով և արտասովոր կատարելագործման փորձերով ստեղծեց գրական դպրոց, որին հետևեց սկսնակ բանաստեղծների մի ամբողջ խումբ։

Տէրեանը վերջին տարիներս կոմմունիստ էր իր աշխարհայեացքով, բայց պրոլետարական բանաստեղծ չէր։ Դա հասկանալի և միանգամայն բնական պիտի համարել մեր ժամանակի այն քոլոր բանաստեղծների համար, որոնք իրենց ստեղծագործական թափով մինչև բուրժուական շրջանին են պատկանում։ Նրանց իդէոլոգիան կարող է լինել պրոլետարական, սակայն հոգեբանութիւնը՝ ոչ։ Պրոլետարական բանաստեղծ լինելու համար պիտի ունենալ պրոլետարական հոգեբանութիւն և արտայայտութեան, ստեղծագործութեան ուրոյն նոր ձև։ Սրանով չենք ուզում ասել, որ մեր յիշած ժամանակակից բանաստեղծները, թէկուզ կոմմունիստ, նոր ոչինչ չեն կարող գրել։ Ոչ գրեն, դուցէ և գեղարուեստական բարձրարժէք բանաստեղծութիւններ, որոնք իրենց մէջ կանդրադարձնեն մեր ապրած տենդոտ շրջանի հոյակապ էպոպէան և դուցէ հարազատ՝ պրոլետարական տրամադրութիւններին։ Սակայն դրանք պրոլետարական չեն լինի բառի իսկական իմաստով։ Պրոլետար բանաստեղծը պիտի դուրս գայ պրոլետարական նոր կուլտուրայի ծոցից, մարդկութեան սոցիալական կեանքը յեղաշրջող այդ դասակարգի ստեղծագործական աշխատանքի բովից, կապուած նրա հոգեկան աշխարհի հետ իր ապրումների բոլոր թելերով։

Վահան Տէրեանին կարելի է բնորոշել իբրև մենութեան ծանր մղձաւանջը երգող երգչի, տոգորուած մեծ քաղաքի ներքին մենաւոր ինտելիգենտի հոգեբանութեամբ, դժգոհ բուրժուական սոցիալական կացութիւնից, «լուսէ-հոլիտներ» որոնող, արշալոյս տենչացող, ինդիվիդուալիստական գերակշռող մոտիւների հետ սոցիալական ընազդի զարթնումի սակաւաթիւ, բայց զօրեղ մոմենտներ ունեցող և ապա «մենութեան խաւար զնդանից» հայեացքը դէպի կոլեկտիւիզմ սևեռող երգչի։

Մի ընդհանուր գիծ կայ Յովհ. Թումանեանի, Աւ. Իսահակեանի

և Վահան Տէրեանի միջև։ Յովհ. Թումանեանը հայ նահապետական կեանքի երգիչն է, որը գրական գոյներով է պատկերել այդ իդիլլիկ բնաշխարհը, որը տակաւին զերծ էր կապիտալիստական տնտեսակարգի բոլոր «հրաշալիքներից»։ Յովհ. Թումանեանի ստեղծագործական աղբիւրը եղել է բնական տնտեսութեան շրջանը մաշող հայ նահապետական ժողովրդի կենցաղը և փիլիսոփայութիւնը։ Նրա յաջորդն է Աւ. Իսահակեանը, որի հոգեկան կեանքում հայ միջավայրը բեկուել է արդէն ոչ որպէս նահապետական անարատ կենցաղ, այլ կապիտալիզմի հետևանքները ճաշակող մի միջավայր, որը սակայն տակաւին ոչ կապիտալիստական է եղել և ոչ էլ հին՝ դերազանցապէս նահապետական։ Եւ Աւ. Իսահակեանը չընդունելով բուրժուական հասարակակարգի բերած բայքայումը՝ նահապետական համայնական պարզ կեանքին, բերած մրցութիւնն ու սոցիալական սուր հակասութիւնները, անկարող եղաւ սակայն հեռու մնալ նոր կուլտուրայի ազդեցութիւնից։ Նա չընդունեց քաղաքը, քաղաքի բուրժուական կուլտուրան, բայց չը մնաց նաև քայքայող գիւղի, այլ ևս իդիլլիկ ընոյթը կորցրած նահապետական միջավայրի սահմաններում։ Աւ. Իսահակեանը անէծքի և խարանման մոտիւներ բերեց հայ բանաստեղծութեանը, և ինչպէս ասել ենք քանիցս, իրար բաղխող երկու աշխարհների միջև գլուխ դնելու տեղ չունենալով, իր Արու Լալայի քարաւանով հեռացաւ այդ նոր հասարակակարգի բերած միջավայրից։

Վահան Տէրեանը նոյն երևոյթի բնական զարգացման արտայայտիչը եղաւ։ Նրա հոգեբանութեան մէջ նահապետական կենցաղը այլ ևս բեկում չունեցաւ. իբրև քայքայող միջավայր, նա հմայք ունենալ բանաստեղծի աչքում չէր կարող։ Ուստի Տէրեանը շարունակեց Աւ. Իսահակեանի կիսատ թողած ճանապարհը, խզեց կապը հայրենական նահապետական տան հետ և ընտելացաւ քաղաքին, սակայն այստեղ մենակ զգաց իրեն։ Մենակ զգաց, որովհետև Տէրեանն ևս դժգոհ մնաց բուրժուական քաղաքի տարտարոսից, ուր homo homini lupus-ը *) ընդհանուր նշանաբան էր՝ շահագործող, էգոիստ, տիրակալ դասակարգի համար։ Տէրեանը շարունակելով, վարանումով ու տարակուսանքով կանգնեց այդ ծանր իրականութեան հանդէպ։ Եւ որովհետև նրա գրական ստեղծագործութեան առաջին շրջանը զուգադիպեց ռուսական առաջին յեղափոխութեանը յաջորդած ծանր ռէակցիային, երբ պրոլետարիատի ժամանակաւոր նահանջը թուլամորթ ինտելիգենցիային ձգել էր մռայլ յոռետեսութեան ու կատարեալ լքման մէջ, Տէրեանը նոյնպէս ապրեց անդեկ ինտելիգենտի մենութեան ծանր մղձաւանջը։ Առաւելապէս ծանր եղաւ նրա մենութիւնը, որովհետև դժգոհ լինելով բուրժուազիայից, նա տակաւին չէր հասել պրոլետարական կազմակերպուած կոլլեկտիւին յարելու գիտակցութեանը։

Տէրեանի քնարը հայ գրականութեանը բերեց համաշխարհային վշտի ու թախիծի բանաստեղծութիւն. նրա քնարը հնչեցրել է և՛ մայրենի իրականութեանը հարազատ մոտիւներ, և՛ հանրամարդկային։

---

*) Մարդը մարդու համար գայլ։

Տէրեանը զուտ լիրիք է, բայց նրա լիրիզմը խորն է և յուզիչ։ Այդ հանգամանքը մեծարժէք է դարձնում նրա քնարի նաև հասարակական նշանակութիւնը։ Իր յուզական աշխարհը արտայայտելու համար բանաստեղծը որոնում է համապատասխան ձևեր։ Առհասարակ բանաստեղծի հոգեկան բեկման հայելին չէ միայն, որ գրածը դարձնում է գեղարուեստական։ Զգալու և ըմբռնելու կարողութիւնը չէ գրողին ճշմարիտ բանաստեղծ դարձնողը։ Յոյզերի ու մտայղացումների համապատասխան ձևով արտայայտելու ոյժն ու կորովն է, որ գրողին դարձնում է ստեղծագործող։

Վահան Տէրեանը մեր այն բանաստեղծներից է, որ բանաստեղծի տաղանդով օժտուած լինելով հանդերձ՝ գիտակցօրէն որոնել է արտայայտելու մշակուած, նրբին ձևեր։ Իր մթնշաղի անուրջները, գիշերն ու յուշերը, ռոմանտիկի պատրանքն ու երազանքը, ճանապարհների բաժանումի առջև կանգնած մենաւորի յոյզերն ու տենչերը, տիրող մայլ կացութեան հանդէպ ունեցած վիշտն ու թախիծը արտայայտելու համար՝ Տէրեանը գտել է նուրբ գծեր, մեղմ գոյներ, տարբեր երանգներ, ճոխ յանդաւորում, ըստ մեծի մասին կանոնաւոր տաղաչափութիւն և յաճախ աքանչելի երաժշտականութիւն։

Տէրեանի գրելու ձևը գունեղ պատկերներով չէ. նրա ստեղծագործական տարերքը, եթէ կարելի է այսպէս ասել, արտայայտելու ձևը գերազանցօրէն խօսքի ներդաշնակութիւնն է, երաժշտականութիւնը։ Թէպէտ խօսքի վարպետի վրձինով նա տուել է և պատկերների թեթև շտրիխներ, սակայն դրանք ըստ ամենայնի էպիզոտիկ բնաւորութիւն են կրում նրա բանաստեղծութիւնների շարքում։

Տէրեանի քնարական լեզուն չունի իր նմանը հայ քնարերգութեան մէջ։ Իր երաժշտականութեամբ ու նրբին երանգներով Տէրեանի լեզուն բարձր է իր լիրիք-ուսուցիչների ու նախորդների մշակած ու յղկած լեզուից։

Արդեօք նորից երազնե՞ր են թափառում,
Սիրոյ անուշ նւագնե՞ր են ինձ կանչում.
— Դալուկ աշնան տխուր շողերն են մարում,
Սարից իջնող աղբիւրներն են կարկաչում։

Տէրեանի այս սոնէտի մէջ մենք չենք գտնում Աւ. Իսահակեանի խտացրած պատկերները, բայց գտնում ենք բանաստեղծի հոգեմայլ անրջանքի տխրութեամբ համակող հնչիւնները՝ նրբին, օրօրող նւագայնութեամբ։

Ես լսում եմ հիացմունքի մի շշուկ,
Արդեօք դո՞ւ ես նորից հոգիս մեղմ յուզում.
— Այն գիշերն է, այն յուշերն են տրտմաշուք,
Այն աստղերն են ցուրտ երկնքում երազում։
Ես ընկած եմ անծայր դաշտում միայնակ...

Սա մուզիկա է, երաժշտութիւն, որ համապատասխան տրամադրութեամբ լցնում է լսողի հոգին և իր հնչիւնների ոյժով ստիպում սեփական երևակայութեամբ ստեղծել լրացուցիչ պատկերը։

Տէրեանի ստեղծագործական կորովը իր ապրած հոգեկան վիճակի ցայտուն, շեշտուած արտայայտութեան մէջ է. նա դիտէ ստեղծել բառերի այնպիսի հոսանք, որտեղ ոչ միայն բառերը, այլ մի տառահնչիւնն անգամ ընդունակ է դառնում արտայայտելու բանաստեղծի յուզական դրութիւնը։

«Անուշ նեւադներ», «դալուկ աշնան տխուր շողեր», «հիացմունքի շշուկ», «գիշերն ու յուշերը տրտմաշուք», «անծայր դաշտում միայնակ» բառաշարքի մէջ «շ» հնչիւնը դառնում է տիրական՝ բանաստեղծի վշտոտ ու թախծուտ հոգու գաղտնարանից նրա հառաչանքը դուրս կորզելու, գերազանցօրէն արտայայտիչ և յուզիչ դարձնելով բանաստեղծութիւնը։

Մի ուրիշ օրինակ.

Մթագին գիշերում, աշխարհում մթամած, խաւարում
Ը վառենք չըմեռնող, չըմարող կրակը մեր հոգու,
Մեր ողջոյնը սիրով կը նետենք և մարդկանց և երկրին և հեռուն ես ու դու։

Տխուր մենութեան ոլորտում դեղերող բանաստեղծի եռանդի թափի զարթնումի արտայայտութիւնն ենք գտնում Տէրեանի այս բանաստեղծութեան մէջ, արտայայտուած յատուկ նուրբ ոտանաւորով։

Այս բանաստեղծութեան մէջ, մանաւանդ վերջին տան, տիրականը ը և ո հնչիւններն են։ Բանաստեղծը պիտի արտայայտի եռանդի թափի զարթնումի մոմենտը։ Եռանդ և առնականութիւն արտայայտող հնչիւնը ռ-ն է, որին և դիմում է բանաստեղծը։ Սակայն իբրև խօսքի վարպետ՝ Տէրեանը գիտէ նուրբ երանգաւորում հաղորդել իր խօսքին, ուստի և ռ հնչիւնը ունեցող բառերի հետ խառն նրա հոգուց դուրս են հոսում նաև փափկաձնշիւն ը-ով բառեր, որոնք մեղմում են եռանդի թափի արտայայտութիւնը, քանի որ եռանդը զարթնել է ոչ կուռող ու պայքարող հերոսի մէջ, այլ տխուր մենութեան ոլորտում դեղերող բանաստեղծի, որ կամենում է «մթամած աշխարհում» վառել իր հոգու չըմեռնող, չըմարող կրակը և իր ողջոյնը սիրով նետել «մարդկանց, երկրին և հեռուն»։

Սրանից եզրակացնում ենք, որ բանաստեղծի համար կենդանի արժէք ունի ոչ միայն դարձուածքն ու բառը, այլ և նոյն իսկ մի որոշ հնչիւն, տառ։ Այդ բանը լաւ են իմացել ոչ միայն ժամանակակից բանաստեղծներից ամենաշնորհալիները, այլ և հնում յոյները, լատինները, նրանց հետևողները։ Տէրեանը ուսումնասիրել է նրանց գործերը, բայց ինքը անմիջական կերպով ազդել է խօսքի ժամանակակից վարպետներից։

Օրինակ Բալմոնտի մի ոտանաւորը, որ „Челн томления“ վերնագիրն է կրում, հրապարակ է հանում խօսքի երաժշտական հնարաւորութիւնները։

Вечер. Взморье. Вздохи ветра.
Величавый возглас волн.
Близко буря. В берег бьется
Чуждый чарам черный челн.

Чуждый чистым чарам счастья
Челн томления, челн тревог,
Бросил берег, бьется с бурей,
Ищет светлых снов чертог...

Տէրեանի «Շշուկ ու շրշիւն» բանաստեղծութիւնը յիշեցնում է նման խօսքի վարպետների գործերը և ցուցահանում հայ լեզուի նրբահիւս արտայայտութիւնները։

Անտես ու յուշիկ իմ շուրջը շրջում
Եւ շշնջում ես և անուշ շրշում,
Պայծառ տրտմութեամբ ինձ ես անրջում
Ու գաղտնի սիրով սիրում ու յիշում...
Ջրերն են անվերջ միգում հեկեկում,
— Իմ սիրտն է լալիս կարօտով անհուն,—
Թւում է, որ դու տխրութեամբ անքուն
Ինձ ես որոնում աղօտ աշխարհում։
Եւ ժպտում ես ինձ, ակնարկում քնքոյշ
Ու գաղտնի սիրով սիրում ու յիշում
Ե՛ւ շշնջում ես և՛ շրշում անուշ։
Անտես ու յուշիկ իմ շուրջը շրջում։

Ահա Տէրեանը իր արուեստով, գրելու նրբին ձևերով, իր հոգու արտայայտութեան հմայիչ գործիքով։

Այս գիտողութիւնը սակայն չը պէտք է ձևականօրէն բացատրուի այն մարդկանց կողմից, որոնք կարող են հարց տալ։ Մի՞թէ բանաստեղծը ոգևորութեան վայրկեանին բառերի մասին պիտի մտածի։— Առանց մտքի չկայ ստեղծագործութիւն, սա պիտի լաւ իմանալ։ Բանաստեղծութիւնը իբրև յոյզերի ու մտայղացումների ներդաշնակ արտայայտութիւն՝ լաւած մտքի գիտակցական ստեղծագործութիւն է։ Ապա բանաստեղծութեան գործիքն ու տեխնիկան՝ արտայայտութեան ձևերն են։ Սա ստեղծագործելու նախապայմաններից մէկն է։ Որքան կատարեալ է մի բանաստեղծի գործիքն ու մշակուած նրա տեխնիկան, այնքան պեղեցիկ ու տպաւորիչ կը լինի նրա ապրումների անդրադարձումը։ Եթէ այլ կերպ լինէր, հանճարներն ու տաղանդները աշխատանքի ոյժով զարգանալու, կատարելագործուելու կարիք չէին ունենալ։ Տէրեանը հայոց լեզուի նրբութիւններին տիրել է և աւելի կատարելագործել, հմայիչ դարձրել իր խօսքը ոչ երկնքից ստացած պատրաստ ձևերով, այլ տակաւին ուսումնասիրութեամբ ու գիտակից վերաբերմունքով դէպի իր կոչումը։ Տարբերութիւնը տաղանդաւոր բանաստեղծի և սովորական մարդու միջև այն է, որ առաջինը ընդունակ է աւելի շուտ ըմբռնելու ու իւրացնելու և, որ գլխաւորն է, ցուցահանելու այն։

Մենք խօսեցինք միայն Տէրեանի արուեստի կողմերից մէկի՝ ալիտերացիաներով գրելու (նմանահունչ բառերով) շնորհի մասին։

Տէրեանի բանաստեղծութիւնների մէջ նաև տաղաչափութեան օրինակելի նմուշներ ենք գտնում, և համարձակ կարելի է ասել, որ մեր դպրոցներում գրական տեսութիւն անցնելիս՝ հայ լեզուին յատուկ բո-

լոր չափերի մասին գաղափար հնարաւոր է տալ դլխաւորապէս Տէրեանի բանաստեղծութիւններով։

Հայ լեզուին յատուկ են եամբ, անապեստ և ամֆիբրաքոս և շատ սակաւ քորէյ չափերը։ Տէրեանը տալիս է դրանց դլխաւորապէս առաջին երեքի շատ կանոնաւոր նմուշները, յաճախ բարդ խառն չափերով, որով աւելի ներդաշնակ ու երաժշտական է դառնում բանաստեղծութիւնը։

Անապեստով (վերջատանջով) գրած մի նմուշ.

Ես ընկայ անդունդները խաւար,
— Իմ ցնորք, նորից քեզ եմ կանչում.
Մոռացայ ուղիներս պայծառ,
Իմ սրտում դաւը մութն է շնչում։

Կամ՝

Ինձ թաղէք, երբ կարմիր վերջալոյսն է մարում,
Երբ տխուր գգւանքով արեգակը մեռնող
Սարերի արծաթէ կատարներն է վառում,
Երբ մթնում կորչում են ծով ու հող...
Ինձ անլաց թաղեցէք, ինձ անխօս թաղեցէք.
Լռութիւն, լռութիւն, լռութիւն անսահման...

Եամբով (մեծավերջով) օրինակ.

Հեռու երկրի լուսէ հովտում
Օրերն ուրիշ երգ են երգում.
Կեանքից յոգնած սիրտս տրտում
Այն երկիրն է միշտ երազում։

Ամֆիբրաքոս կամ քողաղոտ (վերջում եամբ).

Կարծես թէ դարձել եմ ես տուն,
Բոլորն առաջւանն է կրկին.
Կրկին դու հին տեղը նստում,
Շարժում ես իլիկը մեր հին։

Խառն չափերով՝ անապեստ, եամբ, ամֆիբրաքոս.

Իմ անզարդ օրւան, անտուն իմ կեանքին
Դեռ շատ է գալու և բօթ և աղէտ,—
Մինչև որ գտնի մրրկէդ իմ հոգին,
Յարութիւն առնէ մոխրից առ յաւէտ։

Կամ՝ քորէյ, եամբ, անապեստ.

Գուցէ այստեղ պիտ գանէք
Սիրտս շրջիկ ու մոլոր
Ե՛ւ խնդութիւն անսուեր
Ե՛ւ քնքշութիւն և օրօր։

Տէրեանը ունի և հայկական չափով գրած մի բանաստեղծութիւն՝ «Հրաժեշտի գազելը», որ մի սքանչելի քնարական գործ է։ Դա Տէրեանի անժամանակ հրաժեշտի խօսքն է աշխարհին, որի մէջ չկայ Ա.

Իսահակեանի ցասկոտ բողոքը, Դուրեանի անէծքն ու տրտունջը, բայց կայ ճնշող թախիծ, մորմոք ու վիշտ։

Ամեն վայրկեան սիրով, տրտում ասում եմ ես Ձեզ բարով,
Բոլոր Արևին իմ բոց սրտում ասում եմ ես Ձեզ բարով։
Մնաք բարով ասում եմ ես բոլոր մարդկանց շար ու բարի,
Տանջող ու որբ Ադամորդուն ասում եմ ես Ձեզ բարով...

. . . . . .

Մարգարտաշար իմ յուշերին, իմ գիշերին, իմ փշերին
Արտուտներին ոսկէ արտում ասում եմ ես Ձեզ բարով։

. . . . . .

Գնում եմ ես մի մութ աշխարհ, հեռու երկիր, էլ չեմ դառնայ,
Բարի յիշէք ինձ ձեր սրտում, Ձեզ բարով, Ձեզ բարով։

Շատ երիտասարդ մեռաւ Տէրեանը, ընդամենը 34 տարեկան հասակում։ Նրա տաղանդը իր զարգացման բարձր շրջանն էր թեւակոխել։ Նա պատրաստում էր գեղարուեստի աւելի աքանչելի օրինակներ տալու մեր գրականութեանը։ Նրա տուած նմուշների մէջ յղկուած, կերտուած գոհարներ կան։ Եւ որքան խորն էր նրա լիրիզմը, նոյնքան նուրբ նրա քնարը։

Նուրբ էր Տէրեանի քնարը էոլեան տաւիղի նման։ Կարող էր նա յեղափոխութեան լեռնացած ալիքների հանդէպ չը հնչեցնել իր զգայուն տաւիղի լարերը։ Համաշխարհային յեղաշրջող կեանքի ազդակները ցնցել էին բանաստեղծին, որովհետև նրա ապրած միջավայրը ցնցող էպօպէա էր ապրում, որը շանթել էր բոլոր բանաստեղծների երևակայութիւնը այնպէս, ինչպէս մի ժամանակ Տրոյայի պատերազմը՝ յոյն բապսոդներինը։

Տէրեանը կոմմունիստ էր, բայց, ինչպէս ասել եմ գրութեանս սկզբին, պրոլետարեան բանաստեղծ չէր։ Սակայն նա օպպոզիցիոն էր հին աշխարհին, նա երգիչն էր ապագայ հեռանկարների, վառ արշալոյսների, երգիչը՝ ծագող կարմիր արևի շլացուցիչ ճառագայթների, որոնց առաջին օրինակները նա արդէն տուել էր իր ապագրած և անտիպ հատորների մէջ։

Եւ Տէրեանը՝ իբրև այդպիսին՝ ազգակից, սիրելի երգիչը պէտք է համարուի մարդկութեան ապագայ կեանքը դարբնող պրոլետարիատի։

Տէրեանը դեռ պիտի խորունկ յոյզերով արտայայտէր ալեկոծ կեանքում յեղաշրջուող ժամանակակից, այս անցողական շրջանի մարդու հոգեկան բարդ ապրումները, եթէ մահուան մանգաղը այնքան շուտ չը կտրէր նրա ծաղիկ կեանքի թելը։

Սուրխաթեան

ՎԵՀԱՆ ՑԷՐԵՆՑ

1.

ՏԽՐՈՒԹԻՒՆ

Սահուն քայլերով, անաղմաւոր, որպէս ընքոյշ մութի թև,
Մի ստուեր անցաւ ծաղիկ ու կանաչ մեղմիւ շոյելով.
Իրիկնաժամին, թփերն օրօրող հովի պէս թեթև՝
Մի ուրու անցաւ, մի գունատ աղջիկ ճերմակ շորերով...

Արձակ դաշտերի ամայութեան մէջ նա մեղմ շշնջաց,
Կարծես թէ սիրոյ ընքոյշ խօսք ասաց նիրհող դաշտերին.—
Ծաղիկների մէջ այդ անուրջ կոյսի շշուկը մնաց,
Եւ ծաղիկները այդ սուրբ շշուկով իմ սիրտը լցրին...

2.

ԱՇՆԱՆ ՄԵՂԵԴԻ

Աշուն է, անձրև... Ստուերներն անձև
Դողում են դանդաղ... Պաղ, միապաղաղ
անձրև՝ ու անձրև՝...
Սիրտս տանջում է ինչ որ անուրախ
անհանգստութիւն...
Սպասիր, լսիր, ես չեմ կամենում
Անցած յոյսերից, անցած յոյզերից
տառապել կրկին.
Նայիր, ահա, նայիր, ցաւում է նորից
իմ հիւանդ հոգին...
Անձրև է, աշուն... Ինչու ես յիշում,
Հեռացած ընկեր, մոռացած ընկեր,
ինչու ես յիշում.
Դու այնտեղ էիր, այն աղմկահեր
կեանքի մշուշում...

Դու կեանքն ես տեսել, դու կեանքն ես յիշում—
Ոսկէ տեսիլներ, անուրջների լոյս...
Ես ցուրտ մշուշում.
Իմ հոգու համար չը կայ արշալոյս—
անձրև՞ է, աշո՞ւն...

3.

ՀՐԱԺԵՇՏ

Դու գնում ես՝ չը գիտեմ ուր,
լուռ ու տխուր,
Հեզ գունատուող աստղի նման։

Ես գնում եմ տրտում—մենակ,
անժամանակ
Ծաղկից ընկած թերթի նման։

Դու գնում ես՝ չը գիտեմ ուր
սրտակտուր,
Լացդ պահած իմ հայեացքից։

Ես գնում եմ լուռ—անտրտում,
բայց իմ սրտում
Ցաւ է անվերջ, մահու կսկիծ...

4.

ՄԹՆԵԱՂ

Ես սիրում եմ մթնշաղը նրբակերտ,
Երբ ամեն ինչ երազում է հոգու հետ,
Երբ ամեն ինչ խորհրդաւոր ու խոհուն,
Ցնորում է կապոյտ մութի աշխարհում...
Չը կայ ոչ մի սահման դնող պայծառ շող,
Աղմուկի բեռ, մարդկային դէմք սիրտ մաշող.—
Հիւանդ սիրտս չի տրտնջում, չի ցաւում,
Որպէս երազ մոռացումի անձաւում.
Եւ թւում է, որ անեղը է ամեն ինչ,
Որ ողջ կեանքդ է մի անսահման քաղցր նինջ...

5.

ՄՈՌԱՆԱԼ

Մոռանալ, մոռանալ ամեն ինչ,
ամենին մոռանալ.
Չը սիրել, չը խորհել, չափսոսալ —
հեռանալ...
Այս տանջող, այս ճնշող ցաւի մէջ,
գիշերում այս անշող
Արդեօք կայ երեկւայ մոռացման,
մոռացման ոսկէ շող...
Մի վայրկեան ամենից հեռանալ,
ամենին մոռանալ.
Խաւարում, ցաւերում քարանալ
մին միայն...
Մոռանալ, մոռանալ ամեն ինչ՝
ամենին մոռանալ.
Չը սիրել, չը տենչալ, չը կանչել,
հեռանալ...

6.

ԻՆՁ ԹԱՂԷՔ

Ինձ թաղէք, երբ կարմիր վերջալոյսն է մարում,
Երբ տխուր գգւանքով արեգակը մեռնող
Սարերի արծաթէ կատարներն է վառում,
Երբ մթնում կորչում են ծով ու հող...

Ինձ թաղէք, երբ տխուր մթնշաղն է իջնում,
Երբ լռում են օրւայ աղմուկները զւարթ,
Երբ շողերն են մեռնում, ծաղիկները՝ ննջում,
Երբ մթնում կորչում են լեռ ու արտ։

Իմ շիրմին դալկացող ծաղիկներ ցանեցէք,
Որ խաղաղ ու հանդարտ մահանան.
Ինձ անլաց թաղեցէք, ինձ անխօս թաղեցէք.
Լռութիւն, լռութիւն, լռութիւն անսահման...

7.

14 ՏՈՂ

Արդեօք նորից երազնե՞րն են թափառում,
Սիրոյ անուշ նըւագնե՞րն են ինձ կանչում.
— Դալուկ աշնան տխուր շողերն են մարում,
Սարից իջնող ադբիւրներն են կարկաչում։

Ես լսում եմ հիացմունքի մի շշուկ,
Արդեօք դո՞ւ ես նորից հոգիս մեղմ յուզում.
— Այն գիշերն է, այն յուշերն են տրտմաշուք,
Այն աստղերն են ցուրտ երկնքում երազում։

Ես ընկած եմ անծայր դաշտում միայնակ,
Երազնե՞րս, երազնե՞րս որ անցան,
Արդեօք դո՞ւ ես գիշերի պէս հերարձակ,
Գիշերի պէս խորհրդաւոր դիւթական.
— Դալուկ աշնան մերկ անտառն է շառաչում,
Լոյս յուշերի վտակներն են կարկաչում։

8.

ԱՆՏՐՏՆՋՈՒԹԻՒՆ

Արծաթաշող առուն առին
Ջայն է տալիս ու երգում,
Անտրտունջ է լալկան ուռին,
Ուռին առի եղերքում...

Շուրջդ ահա գիշեր ու երգ—
Հանգի՞ստ, հէքիաթ ու երազ.
Կոյս ամպերը ճերմակ ու մերկ,
Աստղերն անո՞ւշ, հեզանազ։

Սիրտ իմ յոգնած, մեղմ օրհներգիր,
Հնազանդ ու ցնորուն,
Երկինք ու ծով, ամպ ու երկիր,
Այս մարգերն ու այս առուն։

Եղիր դու էլ պայծառ ու հեզ.—
Հէքիաթ, հանգի՞ստ ու երազ,
Ծաղկանց ու կոյս ամպերի պէս,
Աստղերի պէս հեզանազ...

Արծաթաշող ասուն ասուին
Ցայգ է տալիս ու ելկում,
Անտրտունջ է լալկան ասուն,
Ասուն ասուի ելկելում...

9.

ԵԵՈՒԿ ՈՒ ԵՐԵՒԻՆ

Աշնան մշուշում շշուկ ու շրշիւն,
— Բարկիներն են բաց պատուհանիս տակ, —
Դու ես, որ գարձեալ թախիծով յիշում,
Կանչում ես ներքից կարօտով յուսակ։

Անտես ու յուշիկ իմ շուրջը շրջում
Եւ շշնջում ես և անուշ շրշում,
Գայթաղ տրտմութեամբ ինձ ես անրջում
Ու գաղտնի սիրով սիրում ու յիշում։

Ամպերը ճերմակ երամով անցան
Թռչունների պէս, — լուսեղէն երազ, —
Դու ես, որ գարձեալ ժպտացիր անձայն՝
Քո հեռու հեռից, անյայտ ու անհաս։

Ջրերն են անվերջ միգում հեկեկում,
— Իմ սիրտն է լալիս կարօտով անհուն, —
Թւում է, որ դու տխրութեամբ անքուն
Ինձ ես որոնում աղօտ աշխարհում։

Եւ ժպտում ես ինձ, ակնարկում քնքոյշ
Ու գաղտնի սիրով սիրում ու յիշում,
Եւ շշնջում ես և՛ շրշում անուշ,
Անտես ու յուշիկ իմ շուրջը շրջում։

10.

ԴՈՒ ԿԸ ԳԱՍ

Դու կը գաս կրկին հեքիաթով կը գիւթես,
Լուսերես կը ցրես ժառախուղն իմ հոգու,
Ոսկեշող հայեացքով և քնքոյշ խօսքերով, որ գիտես միայն դու։

Կը փոքրանա մեզմաբեն, կը փոխա, կը վառեա անթեատամ
Կուսական աշխարհիդ ճաղիկներն անանուշ,
Կը նստանք իրար մոտ, և նեռու կը լմնի առոգանն մթամաքն ու ապրա։

Սև թախիծն իմ սրտեդ, մութ խոհերն իմ հոգուդ կը գնան,
Լոյսիդ դէմ կը ցրուին ըստուերներդ մռայլ։
Ցառապանքը քեզ հետ՝ քաղցր յուշ և խոսքերդ խորհուրդ կը դառնան,
Կը հոգնին ուրիշ գարայլ։

Մթագին գիշերում, աշխարհում մթամած, խաւարում
Կը վառնք չը մեռնող, չը մարող կրակդ մեր հոգու,
Մեր ողջոյնը սիրով կը հասանք և մարդկանց և երկրին և հեռուն
Եա ու գու։

11.

ԱՐԵՒԱՑԱԳ

Ես կանգնած եմ վայրի ժայռի կատարին,
Բարձր, բարձր,—հեռաւոր ու մենաւոր։
Այնտեղ ցածում դեռ նիրհում են դաշտ ու ձոր,
Դեռ խաւար է այնտեղ դաժան ու լռին։
Սակայն շուտով կատարներից հեռանիստ՝
Արևն այնտեղ հուր կը թափէ և ոսկի,
Եւ կը ցնծայ դաշտերը լուռ ու հանգիստ,
Երկիրն անհուն կարօտ կեանքի ու խօսքի։
Եւ դու կերգես, զարթնած աշխարհ, իմ առաջ,
Կարձագանքես իմ ողջոյնին սիրառատ,
Կը լսեմ ես դարձեալ աղմուկ ու շառաչ։
Ու կը սիրեմ հէքիաթային առօրեադ։
Լռութիւն է, մութ է այնտեղ, սակայն իմ
Սրտում արդէն արշալոյս է՝ յարութիւն։
Ողջոյն ձեզ մութ ուղիներում երկրային,
Իմ եղբայրներ, հեռուներում ու բանտում։

12.

ԵՐԿՈՒ ՍՈՆԷՏ

1.

Իջնում է գիշերն անգութ ու մթին,
Եւ այգը բացւում դառն ու մահահոտ։
Բայց հրկէզ հոգիս մորմոքում այս տօթ,
Հաւատում է դեռ քո առաւօտին։

Թող կիտուի խաւարն առաւել խրթին
Եւ չար խենդ ճնշէ հոգն իմ արիւնոտ,
Ու թող դայ, թէ կայ աւելի չար բոթ
Մեխուի զոհ-երկրիս անարգուած սրտին,
Ուխտաւոր անդուլ, դարերի ժառանգ,
Մի հէք նայիրցի գնում եմ անկանգ.
Թող դուժկան գիշերն ահասարս դաւէ,
Որքան մութը սև՝ այնքան ես յամառ.
Այլուիր, երկիր իմ, հաւատով անմար,
Սուրբ է քո ուղին և պսակդ վեհ...

2.

Հայրենիքում իմ արնաներկ
Մայիսն իջաւ անլոյս ու լուռ.
Այնտեղ, ուր կար այնքան սիրերգ
Եւ վարդի բոյր, և սրտի հուր,
Ամեն մի միտք՝ հիմա մի վէրք,
Ամեն հայեացք՝ հառու մի սուր.
Արնոտ դիերն են համբ ու մերկ
Նայում երկինք՝ անզօր ու դուր,
Մի օր ինչ վառ ծաղկեց մոգուած
Մեր նախիրեան սիրտը բեկուած,
Հրով որքան խորհրդաւոր...
Ահա, որպէս ծաղիկ թեքուած,
Մեր հին հոգին համբ ու մոլոր,
Ա՜խ, և անզօր, և անարգուած...

13.

ՎԵՐԱԴԱՐՁ

1.

Մենութեան խաւար գնդանից կրկին
Ես վերադարձայ հզօր ու հպարտ,
Եւ ինձ ողջունեց աղմուկը զարթ,
Ու նոր ինդութեամբ այրեց իմ հոգին...

Անխօս տանջանքիս գիշերում անքուն
Իր հուրը վառեց մի պայծառ կարօտ,—
Նոր սիրով լեցուն՝ դարձայ ես ձեզ մօտ,
Եւ նոր երգեր են հնչում իմ հոգում:

Եկայ, որ այստեղ ձեզ համար այսօր
Հրեղէն խօսքեր կռեմ և խնդում,
Լսեմ յաղթական մարտի ցնծութիւն,
Տեսնեմ շարքերը ձեր հզօրապօր։

Եւ լուսաբացին, երբ յոգնած լինէք,
Երբ քնած լինէք՝ թշնամուց խաբուած,
Արեւածագի ցնծութեամբ արբած,
Կանչեմ ձեզ, ճչամ՝ եղբայրներ, ելէք...

2.

Միշտ նոյն խոհերի շղուկին հլու,
Միշտ նոյն կարօտի կսկիծը պահած՝
Ես դուրս եմ գալիս նորից շրջելու
Նեղ փողոցներն ու կրկէսները բաց։

Շփոթ նւագով աղմուկ ու սուլոց
Շարժում են առաջ օրը ժրաջան—
Բոցոտ խնջոյքում, ձուլուած խինդ ու կոծ
Հիւսել են կեանքի կախարդուած շրջան։
Հապճեպ հոսանքում և՛ մարդ և՛ անիւ
Սլեկոծութեամբ մի խայտանկար
Ամենի փողոցների բաւիղներն անթիւ
Ջրերի նման խառնւում են իրար։
Ամենի ձայնով երկաթն է խօսում,
Պողպատն է ճչում շաչիւնով դողդոջ—
Եւ բազմաղաղակ օրերի լեզուն
Հնչում է այստեղ, որպէս մարտակոչ։

Այս աղմկահիւս կեանքի խենթ բոցում
Այրում է սիրտս սրբազան մի դող,
Յուզում է հոգիս մի վեհ հիացում,
Եւ սարսափելին թւում է դիւթող...
Մաշւած է կեանքս վշտում անադարտ
Եւ տառապանքի օրերում յամառ,
Բայց ցաւած սիրտս բացել եմ հպարտ
Նորից ու նորից սիրելու համար։
Ուզում եմ, վաղուայ ցնծութեան գուշակ,
Կարօտս նետած լուսեղէն հեռուն,
Վառել երգերս, որպէս գրօշակ,
Ու մեռնել, որպէս հերոսն է մեռնում...

Զարթէք, հրգիր իմ, ժամ է հնչելու,
Զինելու նորից գնդիրը ցրիւ,
Մեռած սրտերը կեանքի կոչելու
Եւ բորբոքելու գայրոյթ ու կռիւ...

14.

ԼԻՆԷԻ ՁՈՒԱՆ

Լինէի չորան սարերում հեռու,
Գայիր անցնէիր վրանիս մօտով,
Իրար նայէինք անուշ կարօտով,
Քնքոյշ ժպտայինք յանկարծ իրարու։
Գնայիր աղբիւրն ու յետ դառնայիր
Թեթև, որպէս վիթ ելնէիր ձորից,
Մի ջուր տայիր ինձ քո լի սափորից
Ու վրանիս մօտ հանգստանայիր։
Եւ վերջալուսին մի օր, ճ, մի օր,
Մանիշակագոյն սարերի լանջին
Բացէինք իրար խօսքերով շնչին,
Բայց ուխտը լինէր անխարդախ ու խոր։
Ու երբ գնայիր՝ գիշերս անքուն
Դառնար դալիքի մի թովիչ խոստում,
Ու վառէր հոգիս պարզ ու իմաստուն՝
Իմ վրանի տակ սարերի գրկում։

15.

ՏԵՍԱՑ ԵՐԱՋ ՄԻ ՎԱՌ

Տեսայ երազ մի վառ,
Ոսկի մի դուռ տեսայ,
Վրան փերուզ տեսայ,
Սիւնները հուր տեսայ.
Տեսայ ծաղկած այգին,
Սօսի սուրբ ծառ տեսայ.
Մի հրեշտակ անգին
Սօսից պայծառ տեսայ։

Ոսկի դինին էր վառ,
Երկու նիզակ տեսայ,
Երկու անգին գոհար,
Սիրտս խոցուած տեսայ,
Վէրքիս արիւնն էր վառ,
Դահիճս կանգնած տեսայ.
Ասի՝ արևս ո՛ւ

16.

ԿԱՐԾԵՍ ԹԷ ԴԱՐՁԵԼ ԵՄ

Կարծես թէ դարձել եմ ես առէն,
Բոլորն առաջւանն է կրկին,
Կրկին դու հին տեղը նստում,
Շարժում ես իլիկը մեր հին։
Մանում ու հէքիաթ ես ասում,
Մանում ես անվերջ ու արագ.
Մթում եմ պարզկայ քո լեզուն,
Ձեռներդ մաշած ու բարակ։
Նայում եմ մինչև որ անդոր
Դլուխս ծռկիդ է թեքում.
Ներքից ես մանուկ եմ այսօր,
Դրախտ է ներքից իմ հոգում։
Արևը հանդչում է հեռում,
Գետից բարձրանում է մշուշ,
Հէքիաթդ անվերջ օրօրում,
Իլիկդ խօսում է անուշ...

17.

ԿԱՆԳՆԵԼ ԵՍ ԴՈՒ

Կանգնել ես դու ներքահասակ,
Ժպտում ես ինձ, գերում ես ինձ.
Պարզել ես ինձ երկու նիզակ,
Երկու հրով այրում ես ինձ։
Նազով ներքին ասում ես՝ եկ,
Այնպէս անուշ նայում ես ինձ.—
Ուրձ-խուրձ թափած՝ մի սև արեգ—
Շող մազերով այրում ես ինձ։
Պարզւում ես ինձ, սիրուց գինով
Քնքոյշ ձայնով կանչում ես ինձ,
Արբած եմ ես անուշ թունով,
Ա՜խ, ինչ անուշ տանջում ես ինձ...

18.

ԱՌՆՊԷՍ ՆԱՋԻԿ

Այնպէս նազիկ, այնպէս թեթեւ, այնպէս օրօր
Փայլում ես դու։
Ոսկելուսիկ, ճ, հրաթեւ, այնպէս բոսոր
Փայլում ես դու։
Դու վիթ ահռռ, դու խուսափուկ, այնպէս անոյշ
Նայում ես դու։
Եւ այնպէս ոսկի, այնպէս փափուկ, այնպէս քնքոյշ
Փայում ես դու։
Նայուածքդ սէր, ժպիտդ նեռ, օ, խնայիր,
Մայթում ես դու։
Ինքդ արեգ, սէրդ ագէտ, օ, մի նայիր,
Դիւթում ես դու։
Աշխարհն ամեն քո ոտքի տակ՝ թագուհու պէս
Տիրում ես դու։
Օ, հրեղէն, շար արեգակ, ում որ նայես՝
Այրում ես դու։

19.

ՍԻՐՏԴ ՈՐՊԷՍ

Սիրտդ որպէս վառ ատրուշան պահիր վառ,
Սիրտդ հրկէզ մթնում դաժան պահիր վառ։

Սիրտդ խանդոտ, հրաբորբոք պահիր վառ,
Խինդդ տենդոտ, սէրդ վահան պահիր վառ.

Շար աշխարհի խաւարի դէմ պահիր վառ,
Որպէս դրօշ արնանման պահիր վառ։

Հեռում անտուն, եղիր խնդուն, պահիր վառ,
Սիրտդ բորբոք—վարդդ վառման պահիր վառ։

Որպէս խարոյկ եղնդ վկայ պահիր վառ։
Արևի պէս սիրտդ վառման պահիր վառ...

20.

ԹՈՂԻ ԵՐԿԻՐՆ ԻՄ

Թողի երկիրն իմ հայրենի,
Անան անցայ Արաբ ու Հիմդ,
Տեսայ մարդիկ չորս դլխանի,
Տեսայ հազար ազէտ ու խիստ,
Հասայ մինչև Զմրուխտաշին,
Հասայ մինչև Ծովը ճերմակ,
Տեսայ երկրի ծայրը վերջին,
Եւ դրախտի դուռը կրակ։

Հարդար անդամ ծագեց արև,
Եւ մայր մուտ հարդար անդամ,
Տեսայ ծառեր հրատերև,
Տեսայ ակունքն արեգակեան,
Եւ փերիներ քնքոյշ ու սև,
Աչքերը լաց, իրենք խաւար,
Եւ փերիներ տեսայ քնքշ
— Փրփուրի պէս ճերմակ ու վառ։—

Բոլորը ծանէ, բոլորն աւանդ,
Բոլորն աւար Չուր ու քամուն.
Չը կայ քեզնից դերիչ երազ,
Քո անունից անուշ անուն...

21.

ՀՐԱԺԵՇՏԻ ԳԱՋԷԼ

Ամեն վայրկեան սիրով սրտում ասում եմ ես ինաս բարով.
Բարի Աբեին իմ լոց սրտում ասում ես ինաս բարով։

Մնաք բարով ասում եմ ես բոլոր մարդկանց չար ու բարի,
Տանջող ու որբ Ադամորդուն ասում եմ ես ինաս բարով։

Մնաք բարով ասում եմ ես ընկերներիս մօտ ու հեռու,
Ոսոխներիս չար ու արթուն ասում եմ ես ինաք բարով։

Երկնի մովին, կանաչ ծովին, անտառներին խոր ու մթին,
Գարնան ամպին լոյս-ոլորտում ասում եմ ես ինաս բարով։

Մարգարտաշար իմ յուշերին, իմ գիշերին, իմ փշերին,
Աստուծներին ոսկի արտում ասում եմ ես ինաք բարով։

Ծաղիկներին դեռ չը բացուած, հոգիներին դեռ չը կիզուած,
Մանուկներին վառ-խլրտուն ասում եմ ես ինաք բարով։

Գնում եմ ես մի մութ աշխարհ, հեռու երկիր, էլ չեմ դառնայ,
Բարի յիշէք ինձ ձեր սրտում, ինաք բարով, ինաք բարով։

ԸՆՁԵՆԱՒՈՐԻ ՆԱԽԵՐԳԱՆՔԸ [1]

Շարա Ռուսթաւելի

Նա որ ոյժով ամենազօր հաստեց երկնի կամարն անհուն,
Շնչեց վերուստ և տուեց շունչ ամեն շնչի տիեզերքում,
Պարգևեց մեզ հոգն ու տէր ենք անեղբուխեան այս բազմագոյն,
Նա է կարգում երկրում արքայ ի պատկեր իր և իր հանգոյն։

Տէրդ միակ, որ կերտեցիր կերպով հաստատ ամեն մարմին,
Տուր զօրութիւն, լեր օգնական, որ տապալեմ սատանային,
Տուր խենթութիւն սիրահարի, հուր-սէր անշէջ մինչև շիրիմ,
Տուր թոռութիւն այն աշխարհում անթիւ, անթիւ իմ մեղքերին։

Առիւծին է վայել վահան, նիզակ ու սուր. ահա արքադ՝
Թամար-արև՝ արքայուհի, ում այտն է լալ, ում վարսն ագաթ,
Կը յանդգնեմ արդեօք գովել քեզ իմ երգով, արևի հատ,
Քեզ, ում նայողն արդարապէս վայելում է շաքար ու կաթ։

Երգենք Թամար արքայուհուն՝ լալով արիւն արցունք առատ,
Նրան ձօնած երգըս՝ ընտիր և ինձ թանաք լճերը սաթ
Ու գրիչ ինձ՝ դողդոջն եղէգ, երգըս որպէս սուրսայր մի խայթ՝
Թող լսողի սիրտը մեխի, ճեղքէ որպէս տէդ մի պողպատ։

Պատուիրեց որ գովեմ իրեն երգով անուշ ու ոլորուն,
Իր յօնքն աղեղ, թերթիչը նետ, սաթ-վարսն ու լալն իր շուրթերում,
Ատամնաշարն իր գեղանի՝ բիւրեղներից հիւսուած սիրուն,
Չէ՞ որ արճիճ գնդանին էլ մուրճը կարծր քար է փշրում։

Արդ պէտք է ինձ երգիս համար սիրտ, լեզու և արուեստ ճարտար,
Թող ոյժ տայ ինձ, նա թող օգնէ, իր ձեռքին է միտք ու հանճար,—
Այնժամ կօգնենք Տարիէլին. յիշելու ենք երեք պայծառ
Հակայ-հերոս միմեանց եղբայր որպէս գերի իրար խոնարհ...

Ում աչքերը չեն ցամաքում՝ լալով ցաւից դառն ու անճար,
Եկէք, ում որ բախտ է ընկել Տարիէլի բախտը դժուար,
Կը նստեմ հէգ Ռուսթաւելիս՝ կերգեմ խոցուած ես չարաչար,
Եւ ինչ որ ցարդ զրոյց էր պարզ, պիտի դառնայ մարգարտի շար։

---

[1] Վահան Տէրեանի այս թարգմանութիւնը, որ դուրս էր եկել Էպոսի բաժնում, զետեղուած «Ընձեռնաւորդ»-ի սկզբում, մեր ձեռքը ուշ հասած լինելու պատճառով դրւում է այս բաժնում։

Սիրահարը պիտի լինի արևի պես շքեղ ու վառ,
Առատաձեռն և ունևոր, ազատ գիւղացին ու գոբավար,
Կուռում յաղթող, երկաթամիտ, մտքով հարուստ, լեզուով ճարտար.
Ում լիովին չի ուած այս—չի կարող լինել սիրահար.

Սէրն է գիւթիչ և սքանչելի, խորախորհուրդ է և գժուար,
Չը պէտք է նոյն դասը դասել և՛ ցանկասէր և՛ սիրահար.
Սար ու ձոր կայ երկուսի մէջ, տարածութեան ովկեան անծայր.
Լսու լսեցէք դուք իմ խօսքը և մի խառնեէք դրանք իրար...

Սիրահարը շնացող չէ, նա հաստատ է, հաւատարիմ.
Ախ է քաշում եարից բաժան և անդադար յիշում եարին.
Թէկուզ լինի խիստ ու դաժան՝ եարն է տէրն իր, ինքը գերին.
Ի՞նչ են գլուանք, զրկանք, համբոյր, երբ չը կայ սէր, սիրտ մտերիմ.

Թարգմ. Վահան Տէրեան

ԵՂԻՇԷ ՉԱՐԵՆՑ

Վերջին տասնամեակի հայ քնարերգութեան զարգացումը ընթացել է, եթէ կարելի է այսպէս արտայայտել, տէրեանական դրօշի տակ։

Իբրև ներկայացուցիչ մի նոր շկոլայի, Վահան Տէրեանը իր նոր թափով ու բովանդակութեամբ, նոր մոտիւներով ու առանձնայատուկ արտայայտութեամբ, համամարդկային վշտի իր քնարով դարձաւ տիրող՝ հայ երիտասարդ քնարերգուների մտքի ու զգացմունքի վրայ։

Եղիշէ Չարենցը առաջ է եկել այդ սերնդից։ Սակայն նա առանձնակի տեղ ունի նորերի մէջ։

Լինելով արժանի ժառանգը Վահան Տէրեանի, նա միևնոյն ժամանակ իր սեփական ուղին է հարթում՝ ինքնուրոյն մտայղացումներով ու ստեղծագործական նոր օրիեկտով։

Արտայայտութեան ձևերով շատ նման Վահան Տէրեանին՝ Չարենցը իր բանաստեղծութիւններին հաղորդում է հոգեբանօրէն իրեն հարազատ կոլլեկտիւի շունչը։

Վահան Տէրեանի ազդեցութեան հետքերը մեր նորագոյն քնարերգութեան մէջ շատ աւելի խորն են, քան ենթադրում են շատերը։ Չարենցը, որ ինքնուրոյն ուղի է հարթում մեր լիրիք գրականութեան մէջ, անկարող է եղել հեռու մնալ նրա տիրող ազդեցութիւնից։ Եւ դա նոյնքան բնական է, որքան և հոգեբանական։ Տէրեանի տպրած մենութեան մղձաւանջը հոգեբանական-սոցիալական իր պատճառներից է բղխում։ Նրա վիշտը, որ համամարդկային շրջանակում է արտայայտել, բղխել է ապագայ երազելի կեանքի խորին կարօտից։ Եւ դա էր պատճառը, որ առաջին յեղափոխութեանը յաջորդած ռէակցիայից յետոյ Տէրեանը ազատագրուեց մենութեան մղձաւանջից, ողջունելով ապառող Արեւածագը, որպիսի խորագիր ունէր նրա բանաստեղծութիւններից մէկը։ Նոյն պատճառից է բղխում և նրա իր ամբողջ էութեամբ նեռուելը պրոլետարական մեծ յեղափոխութեան մէջ, մինչև վերջին շունչը հաւատարիմ մնալով իր դաւանանքին։

Եղիշէ Չարենցը Տէրեանի բնական շարունակութիւնն է։ Եթէ Տէրեանը իր երազած կեանքի կարօտն առաւ յեղափոխութեան ալիքների մէջ նետուելով, ապա Չարենցը դարձաւ այդ ալեկոծումների ոգեւորուած երգիչը, յանուն աւելի կեանքի պայքար մղող կոլլեկտիւի հարազատ արտայայտիչը։

Բանաստեղծի ստեղծագործական օրիեկտը յեղափոխության գոռ գրոհներն են, ուր երկու ընդհարող ոյժերը կեանքի և մահուան անողոք պայքար են մղում միմեանց դէմ։ Բանաստեղծը ճիշտ է ըմբռնել յեղափոխության շարժիչ ոյժերի տարերային բնոյթը, որի պատկերը նա տալիս է վառ ու ուռուցիկ գծերով։

Զարենցի ստեղծագործութիւնը վերջին երկու-երեք տարուայ ընթացքում բղխում է նրա այն հոգեբանական անօթից, որի բովանդակութիւնն ու բնոյթը 18—19 թ-ի համառուսական շարժման ալեկոծ տարերքն են կազմել։ Տարերքը միշտ անկազմակերպ ու յախուռն է։ Զարենցի այդ շրջանի բանաստեղծութիւնները՝ նրա անդրադարձումը։

Լցուած է անհուն իմ հոգին հիմա
Շփոթ երգերով ու աղմուկներով.
Լցուած է սիրտը իմ՝ ելեքտրական
Բորբ հոսանքներով։

Շփոթ ու աղմկահար պիտի լինէին երգերը, որովհետև մեծ յեղափոխության ծառացած ալիքները մինչև յատակը շարժեցին կեանքի ովկիանը։

Համաշխարհային մասշտաբով կատարուող դէպքերն ու անցքերը, յեղափոխութիւնն ու հակայեղափոխութիւնը, պրոլետարիատի գերազանցօրէն լարուած պայքարն ընդդէմ կատաղի բուրժուազիայի՝ ծայր աստիճան լարեցին զգայուն յեղափոխականի ներաները, նրա սիրտը լցնելով «ելեքտրական բորբ հոսանքներով»։

Եւ բանաստեղծը իր զգայուն հոգին ռադիո-կայան է համարում, որի մէջ արձագանք են գտնում բոլոր դէպքերն ու երևոյթները։

Բայց շրջապատի այդ աղմուկ ժխորի, յանուն նոր կեանքի մղուող ահարկու պայքարի մէջ բանաստեղծը իր եաը տիեզերքի առանցք չի համարում, ինչպէս ռոմանտիկ ինդիվիդուալիստ բանաստեղծները։

Զարենցը իրեն զգում է որպէս մասնիկը մի մեծ կոլլեկտիւի։ Նա իր էութիւնը տարրալուծել է համայն մարդկութեան կեանքը յեղաշրջող յեղափոխական մասսաների հետ։

Կոլլեկտիւը բանաստեղծի ոգևորութեան աղբիւրն է։

Եւ նրա երգը յաղթական է ու «յաւերժի նման յամառ ու հաստատ», որովհետև հզօր է ու յաւիտենական իրեն հարազատ կոլլեկտիւը։

Նրա հոգին չի մնում անամէջ ու ինքնագոհ ինդիվիդուալիզմով, չի պարփակուում վտիտ խխունջի մէջ։ «Հեռագրատուն» չէ նրա հոգին, այլ «ռադիո-կայան», որի ալիքները հաղորդակից են համաշխարհային շարժման բոլոր ելևէջներին։

Զարենցը, նման ժամանակակից պրոլետարական բանաստեղծների, իր երգի նիւթ է դարձնում մեր ելեքտրական - մեքենական, աւտոմոբիլների, աէրոպլանների տենդոտ դարաշրջանը, այլ և համաշխարհային յեղափոխական, քաղաքացիական կռիւների հետ կապուած առարկաները։

Ցաղթ կայանները ռադիո-գրի,
գոց, գրահապատ փնացքներն շտապ
ու շչակները գործարանների,
սաւառնակների թեները շաչող,
թնդանօթների ամբոխները ծոյլ,
որ հիմա արնոտ ռազմադաշտերից,
գործադուլ արած բանւորների պէս,
տուն են շտապում քայլերով տարտամ...
տանկերը արնոտ ռազմադաշտերում...

Եւ կեանքը դարձել է եռացող ովկիան, ու պայքարողների յամառ կամքով է «այդպէս» շղթայւել աշխարհը համակ»։

Օրերը երկաթ ու պղինձ են հագել. նման ռումբաձիգ սաւառնակների, օրերը, որոնք թէժ ռումբեր են նետում ու թռչում դէպի կարմիր Ապագան...

Ու բանաստեղծը դեռ շատ բան ունի ասելու մինչև այդ Ապագան, քանի մեր պայքարը տեւական է, անողոք, լի խորհուրդներով, ծանր փորձերով։

Չարենցը հայ բանաստեղծութեան համար նոր ճանապարհ հարթելու բոլոր տեւալներն ունի։

Նոր կեանքը երգելու համար նորանոր ձեւեր պէտք է նա փնտռի, որ իր սուբիեկտով դառնայ արտայայտիչը բոլոր այն պայքարող, ապագան տենչող մարտիկների, որոնք նոյն խոհերն ունին ու նոյն ապրումները։

Իր սուբիեկտը պիտի ընդունակ լինի բեկելու իր մէջ օբիեկտիւ կեանքը՝ բազմերանգ հնչիւններով ու գոյներով, անդրադարձնելու բազմաթիւ համանման ապրումներ ունեցողների հոգեկան աշխարհը։

Ներկայ համարում գտնում ենք նրա Ամենապոէմը, որը Չարենցի գրական գործունէութեան նոր էջն է կազմում, որով նա իրաւամբ կարող է յեղափոխական լայն թափի բանաստեղծ համարւել ոչ միայն գրուածքի նոր բովանդակութեամբ, այլ ապագայ պրոլետարական պոէզայի նոր ձեւերի տարրերով։ Արդասաւոր է Չարենցի գրիչը, կարելիութիւններով լի նրա ստեղծագործական գաղտնարանը։

Հեռու չէ այն օրը, երբ նա կը դառնայ նոր շկոլայի հիմնադիրը հայ քնարերգութեան մէջ՝ իբրև ըմբոստ պրոլետարիատի յեղափոխութեան երգիչը։

Սուրխաբեան

ԵՐԻՑԼ ՉԸՐԵՆՑ

1.

ԴԷՊԻ ԱՊԱԳԱՅ

Լցուած է անհուն իմ հոգին հիմա
Շփոթ երգերով ու աղմուկներով.
Լցուած է սիրտը իմ՝ ելեքտրական
Բորբ հասանքներով։

Ռադիո-կայան է իմ հոգին հիմա
Ամբողջ աշխարհի ու մարդկանց հանդէպ.
Ու բարձր է, բարձր է կայանն իմ հոգու—
Մասխի նման բարձր է ու հաստատ—
Հզօր, ահարկու։

Օրերում այս վառ, հոգմավար, շփոթ—
Հեռու ու մօտիկ միլիոն սրտերի
Երգն է վիճակուել ինձ երգել այսօր.
Իմ բազմամիլիոն, բիւր ընկերների
Խինդը այսօրուայ ու թռիչքը մեծ
Գալիք օրերին նեռնէն է երգի
Վիճակուել այսօր։

Ահա թէ ինչու է երգս յաղթական,
Ահա թէ ինչու է իմ ձայնը այսօր
Յաւերժի նման յամառ ու հաստատ։

Ահա թէ ինչու
Վիթխարահսկայ, որպէս էյֆէլեան
Աշտարակը մեծ
Անցած ու գալիք դարերի շէմքին
Հզօր, բարձրաբերձ՝
Կանգնել եմ ամբողջ հասակով մէկ
Եւ երգում եմ ես։
Եւ հոգիս հիմա՝ ռադիո-կայան՝

Իր հրակարմիր երգն է ուղարկում
Հեռու ու հեռու
Բոլոր սրտերին, որ ապրում են, կան
Բոլոր կողմերում։

Երգում է հոգիս հրեղէն, հնչում,
Գիտեմ՝ այսօրուայ իմ երգի առաջ—
Իմ հոգու կարմիր կայծերի հանդէպ—
Ռադիո-կայան է ամեն մի հոգի
Ուր էլ նա լինի.
Ամեն մի հոգի, որ ապրում է, կայ
Եւ կրում է իր թևերի վրայ
Նոյն խորհուրդը մեծ, խորհուրդը հակայ
Օրերի այս վառ,
Այս վառ օրերի խորհուրդը պայծառ։
Ամեն մի հոգի,
Որ իր երկաթէ թևերով այսօր
Ջնգում է շաչում
Եւ փնտռում է նոր հանգիստ ու օրոր
Միլիոն թևերի ըմբոստ շառաչում...

Գիտէք, որ հիմա
Այստեղ—Նայիրի իմ երկրում աւեր
Ու հեռու—հեռուն—
Կարմիր Մոսկովում,
Տիրէթում դեղին,
Սան-Ֆրանցիսկոյում, Լոնդոնում հակայ
Ու Սինգափուրում—
Բոլոր վայրերում, բոլոր կողմերում
Աշխարհը մի նոր երգով է յղի։

Հէյ, հեռու—մօտիկ
Հանքահորերում,
Գործարաններում,
Լայն ստէպներում ու անտառներում—
Բոլոր վայրերում, բոլոր կողմերում
Երկաթի, բրոնզի, հողի ու հանքի
Երգով օրօրուած իմ բիւր եղբայրներ։
Ո՞վ ունի այսօր կամքը մեր հրէ,
Ուժը մեր բոսոր
Ու վառ բախտը մեր
Տիեզերական։
Ո՞վ ունի այսօր...
Մենք ենք, որ նոր ենք, հազար ենք ու բիւր։

Երկաթէ հսկայ մի դիսկի նման
Բիւր եղբայրների կամքը մեր արի,
Տիեզերական։
Նետել ենք արդէն թափով վիթխարի
Դէպի հողմերը գալիք օրերի,
Դէպի Ապագան...

2.

ԲՐՈՆՋԷ ԹԵՒԵՐԸ ԿԱՐՄԻՐ ԳԱԼԻՔԻ

Շաչում է աշխարհը, զնգում է հիմա,
Շաչում ու զնգում են աշխարհի վրայ
Բրոնցէ թեւերը Կարմիր Գալիքի։

Որպէս երկաթէ մի մրրկահաւ՝
Թռչում է կարմիր մեր կամքը հիմա
Աշխարհի հեռուն
Ու շաչում է յաղթ, երկաթ թեւերով
Հեռու ու մօտիկ ռազմադաշտերում։

Փողփողում է վառ արեւի առաջ
Մեր կամքը հիմա, որպէս վիթխարի
Մի կարմիր դրօշ,
Որի արնագոյն, կարմրավառ փայլից
Հնաւանդ զաղիր քաղաքները քար
Ցուլերի նման վիթխարահակայ,
Վախից խելագար,
Կանգնում են յետին ոտքերի վրայ,
Փորում են հողը ոտքերի տակի
Ու սարսափահար
Իրենց վայրենի վախն են մռնչում
Աշխարհովը մէկ,
Վախը վայրենի, որ հնչում է մեր
Բոլոր սրտերում, որպէս յաղթութեան
Ու փառքի մի երգ։

Օ, բառաչը այդ խելագար վախի,
Օ, սարսափահար ճիչը հոգեվար
Ու տագնապը սուր՝
Հին, հազարամեայ, քար քաղաքների
Տագնապը զաղիր...

Օ, սարսափը այդ յուսահատական
Մեռնող ցուլերի բառաչը վերջին

Կրկէսների մէջ հակավիթխարի,
Օ, սարսափը այդ նրանց յուսահատ,
Որ մեր սրտերում, կրծքերում երկաթ
Փոխուում է կարմիր, խնդացող հրի...

Ճչում են հիմա
Թերթերը բոլոր մայթերի վրայ,
Յաղթ կայանները ռադիո-գրի,
Գոց, զրահապատ գնացքներն շտապ
Ու շչակները գործարանների,
Սաւառնակների թեները շաչող,
Աղմուկը մաշող աւտոշինների,
Թնդանօթների ամբոխները ծոյլ,
Որ հիմա արնոտ ռազմադաշտերից,
Գործադուլ արած բանուորների պէս,
Տուն են շտապում քայլերով տարտամ՝
Ֆանտաստիքական ահեղ առօրեան
Ճչում է հիմա
Նրանց անամոք, նրանց հոգեվար
Տագնապի մասին յուսահատական,
Ճչում է խռպոտ իր ձայնով վերջին
Ու հասնում է այդ ճիչը յուսահատ
Լոնդոնից Փարիզ—Ցէյլոն—Հնդուչին...

Զգում են ցանցեր,
Երկաթէ անտես ցանցեր ու ցանցեր
Աշխարհում անծիր,
Սրտից սիրտ հիմա, քաղաքից քաղաք
Վառ, կարմիր ցանցեր...

Մեր կամքն է այդպէս հզօր շղթայել
Աշխարհը համակ,
Մեր կամքը՝ թռչող, որպէս փոթորիկ
Ու տոկուն, յամառ, որպէս ժամանակ.—
Ե՛ս եմ—եղբայրս—ընկերս—օ, ոչ.
Կամքը իմ, կամքը քո—ու էլի էլի
Կամքեր նոյնազօր—հազար ու հազար։
Ու էլի, էլի,
Ու էլի, էլի.
Զգում ես հոգիս, հոգիդ ու նրա—
Հեռու, անծանօթ ընկերոջ հոգին—
Նոյն արեգնական խորհրդով է լի։
Ու էլի, էլի,
Ու էլի, էլի,
Ամեն տեղ հիմա, բոլոր կողմերում՝

Մոսկովից—Փարիզ, Լոնդոնից—Հռոմ...
Մինչև—Հնդուչին...

Թնդանօթների բառաչը վերջին։
Տանկերը արնոտ ռազմադաշտերում
Կէտերի նման երկաթագրահ...
Գնդացիրների ծարաւը ագահ
Գործարանների շչակները լուռ...
Օրերը՝ երկաթ ու պղինձ հագած
Սաւառնակների նման ռումբաձիգ
Օրերը, որ թէժ ռումբեր են նետում
Եւ թռչում են—
Ո՞ւր...

Անծիր դաշտերում—բանակներ կարմիր։
Քաղաքներ մեռնող ու գիւղեր անմարդ։
Օրերի միջում—տագնապ ու դրդիռ։
Ոսկի ու բռունցք, արիւն ու երկաթ։
Ու տագնապը մութ, անկուշտ ու ագահ,
Հրէշի նման գեղին, հազարաչ,
Ու բազմամրրիկ աշխարհի վրայ
Բրոնզէ կարմիր թեւերի շառաչ։
Ու երգը իմ նոր պիտի աւետի
Վաղը աշխարհին առաջին անգամ
Թռիչքի մասին անկուշտ կարօտի
Մեր յաւերժական։

Եւ նրանք, որ դեռ աշխարհում չըկան,
Որ դեռ նոր պիտի ապրեն աշխարհում,
Դեռ նոր պիտի գան,
Կարող են՝ թող մեր թռիչքն այսօրուայ
Անձկօրէն չըզգան...
Նրանք, որ պիտի ապրեն աշխարհում
Կարմիր Ապագան։

Նրանք, որ դեռ նո՛ր, դեռ նո՛ր պիտի գան...

3.

ԳԻՇԵՐԸ ԱՄԲՈՂՋ

Գիշերը ամբողջ հիւանդ, խելագար,
Ես երազեցի արևի մասին։
Շուրջս ո՛չ մի ձայն ու շշուկ չը կար—
Գունատ էր շուրջս՝ գիշեր ու լուսին։

Ես երազեցի արևի ոսկին,
Տեսնչացի նրա հրաշքը խնդուն՝
Ուզեցի սիրել շշուկն իմաստուն
Արևանման, արնավառ խօսքի։

Բայց շուրջս այնպէս դունատ էր, տկար,
Խօսքեր չը կային ու արև չը կար...

4.

Ո՞Վ ԿԸ ՀԱՆԴԻՊԻ

Ո՞վ կը հանդիպի, ո՞վ կը բարևի,
Ո՞ւմ հոգեհամբոյր խօսքը կը լսեմ.
Ո՞ւմ ուրախացած դէմքը կարևի՝
Բարեկամական հրճւանքով վսեմ։

Ո՞վ կը համբուրի, ո՞վ կը հեկեկայ,
Ո՞վ կը հիանայ անսուտ հրճւանքով.
Գուցէ աշխարհում, դուրսը, մէկը կայ,
Որ ապրում է իմ անուրախ կեանքով։

Գուցէ իմ սրտում, երգերում իմ մութ,
Խօսքերում՝ ասւած իմ հոգու մասին
Հեռաւոր մէկի անրջանքն եմ սուտ՝
Նետւած աշխարհի անսուտ երազին։

Գուցէ՝ ապրելով նրա երազում՝
Երգում եմ նրա տագնապները խոր—
Եւ թւում է ինձ աշխարհի մուժում,
Որ ինձ եմ երգում, կեանքս մենաւոր։

—Ողջո՛յն քեզ, անյայտ, անծանօթ ընկեր,
Խաղաղութի՛ւն քեզ, հեռաւոր եղբայր.
—Ողջո՛յն ձեզ, վաղւայ չը ծնւած կեանքեր։

—Ես՝ եղբայրօրէն ու մտերմաբար՝
Ողջունում եմ ձեզ անցած խաւարի
Իմաստուն, տխուր ժպիտով բարի...

5.

ԻՆՉՔԱՆ ՈՐ ՀՈՒՐ

Ինչքան որ հուր կայ իմ սրտում—բոլորը քեզ.
Ինչքան կրակ ու վառ խնդում—բոլորը քեզ.
Բոլո՛ր տամ ու նւիրեմ, ինձ ո՛չ մի հուր թող չը մնա՝
Դո՛ւ չը մրսես ձմրան ցրտում,—բոլո՛ր քեզ...

6.

ԱՄՌԱՆ ԱՆՈՒՇ

Ամռան անուշ, հուրհրատող տօթ ես, ջան,
Նախշուն՝ նռան ու նարնջի հոտ ես, ջան.
Երբ խստադէմ ինձ ես նայում դու յանկարծ,
Ասես սրտիս մահուան դաժան բօթ ես, ջան...

7.

ԵՐԱՋ ՏԵՍԱՅ

Երազ տեսայ, Սայեաթ-Նովէն մօտս եկաւ սազը ձեռին,
Հրի նման վառման գինու օսկէջրած թասը ձեռին,
Նստեց, անուշ երգեր ասաւ՝ հին քամանչի մասը ձեռին,
Ինպէս ասաւ՝ ասես ունէր երկնքի ալմասը ձեռին։

Ու էն երգին օրօր-շորոր, ինչպէս հուրի, ատլաս ու խաս,
Երազիս մէջ գոգալն եկաւ՝ ինքն էլ վառման քաղցր երազ.
Նազանք արաւ, Սայեաթ-Նովի սիրտը լցրեց միրգ ու մուրազ,
Կանգնեց-մնաց՝ դէմքից քաշած օսկէկարած խասը ձեռին։

Նայեց-նայեց Սայեաթ-Նովէն, ամպի նման տխուր մնաց.
Ասաւ՝ Զարենց, էս գոգալից սրտիս մէջ հին մրմուռ մնաց.
Սիրտս վառեց, մոխիր դարձաւ՝ ինքը կրակ ու հուր մնաց.
Դու էլ նրա գովքը արա, որ գայ օսկէ մազը ձեռին։

Էսպէս ասաւ Սայեաթ-Նովէն ու վեր կացաւ, որպէս գիշեր,
Գնաց նորից տխուր ու լուռ՝ սիրտը հազար մուրազ ու սէր.
Երազն անցաւ, դու մնացիր, պատկերը քո մնաց լուսէ,
Մէկ էլ իմ խեղճ սիրտը մնաց՝ Սայեաթ-Նովի սազը ձեռին։

8.

ԱՇՈՒՂ ՍԱՅԵԱԹ-ՆՈՎԻ ՆՄԱՆ

Աշուղ Սայեաթ-Նովի նման ես երգ ու տաղ պիտի ասեմ,
Երգեմ պիտի գիշեր-ցերեկ ու սրտի խաղ պիտի ասեմ,
Եւ էն սրտին, որ իր խորքում սիրոյ երգեր ունի ու սէր՝
Ես էն սրտին դրախտային մրգերի բաղ պիտի ասեմ։

Ասող ու նկար շորեր հագած՝ դէմս ելար երազի պէս,
Էշխաղ՝ կրակ՝ սիրտս էրեց անհամանելի մուրազի պէս,
Անուշ հոտով սիրտս լցրեց Վարդատանի, Շիրազի պէս,
Ինչ էլ ըլի էշխաղ, գոգալ, երգս ուրախ պիտի ասեն։

Աշխարհը մի բաղ է, գոգալ, նստել ես դու բաղի մէջը,
Վարդ ես բացուած՝ առաւօտայ դրախտային շաղի մէջը,
Ժամ ես դարձել տեսքով ու սուրբ՝ Հաւլաբարի թաղի մէջը,—
Սրտիս անուշ արտասուքին երկնային շաղ պիտի ասեմ։

Ինչքան ըլի մէ մէ անգամ տեսքդ տեսնեմ՝ վարդ ես, գոգալ,
Էս փուչ կեանքում սրտիս ուած անմահական գարդ ես, գոգալ,
Ինգէս աբա, որ քեզ չասեմ՝ գոռ էլ ինձ պէս մարդ ես, գոգալ,
Թէ լի Ճնայ սիրտս քեզնով՝ ափսոս ու ախ պիտի ասեմ։

9.

ԿՈՒԶԵՄ ՀԻՄԻ

Կուզեմ հիմի փչէ զուռնէն, հարբած ըլիմ մինչև էգուց,
Ամեն մարդու ընկեր ըլիմ ու բաց ըլիմ մինչև էգուց։

Ծայռոն նստած՝ անցնեմ բուչով, պատուհանից վրէս նայես՝
Էշխդ անքուն սիրտս ընկնի, ու լաց ըլիմ մինչև էքուց։

Խելքս քամուն, հովին ուած՝ երթամ ընկնիմ դուքան ու բաղ՝
Ընկերների սուփրին գինի ու հաց ըլիմ մինչև էգուց։

Երթամ ուրիշ գոգալների գիրկը դնեմ գլուխս տաք՝
Քո էդ անուշ, ագի՛զ տեսքով հարբած ըլիմ մինչև էգուց։

10.

ԵՍ ՄԷ ՀԱՐԲԱԾ

Ես մէ հարբած դուքանդար եմ, դուքանիս մէջ բան չը մնաց,
Ամենքի հետ սեղան նստա՝ սուլթան, վէզիր խան չը մնաց,
Ամենայն տեղ գովքդ արի, տաղեր ասի դրախտային,
Էլ ի՞նչ ասեմ սիրեկանին՝ գոգալ, հոգի, ջան չը մնաց։

Թողի ամենն, ինչ ունէի՝ կեանքս դարձաւ հովի նման,
Էշխդ եկաւ, ճամբէս կտրեց՝ Հնդստանի ծովի նման,
Հարբած՝ խալխի նոքար դարձայ աշուղ Սայեաթ-Նովի նման,
Կարօտ կեցայ հրամանիդ՝ ուրիշ հրաման չը մնաց։

Ես մէ հարբած դուքանդար եմ, դուքանիս մէջ բան չը մնաց,
Էլ ի՞նչ ասեմ սիրեկանին. գոգալ, հոգի, ջան չմնաց։

11.

ԻՆՉՔԱ՞Ն ԿԱՆՉԵՍ

Ինչքան կանչես ու տաղ ասես, խելքի արի՝ բաւ է, էլի,—
Առանց անգին գոգալի էլ աշխարհը լէն, լաւ է էլի։

Ինչքան էլ խաս, ատլաս հագնի, երեսը ալ, գոգալ անի՝
Աքլորների հոգի հանող սիրեկանդ հաւ է էլի։

Ինչքան էլ ֆանդ, զար ունենաս, ինչքան էյթիբար ունենաս՝
Սիրող սիրտը ծովը ընկած անօգնական նաւ է էլի։

Թէկուզ սիրի, գիրկդ ընկնի, դնես օսկէ դափաղի մէջ—
Կնկայ էշխը հոգի հանող անհանդչելի ցաւ է էլի։

Վայ քեզ, Զարենց, լաւ իմացի, խելքդ Թող միշտ գլխիդ ճիա՞
Ամենասուրբ խօսքը կնկայ արիւնաքամ դաւ է էլի։

11.

ԵՐԲ ԷՍ ՀԻՆ ԱՇԽԱՐՀԷ

Երբ էս հին աշխարհը մտայ ես տաղով, սազով-քամանչով
Ի՞նչ պիտի անէ աշխարհում էս անմիտ-անճարը ասին։

Սակայն երբ խալխի քէֆերին ես անուշ տաղերս ասի՞
Ամառւայ մրգերի նման անհուշ է քո բառը, ասին։

Բայց խալխի անսիրտ քէֆերին ես տխուր, մենակ ճնացի,
Ուզեցի Թողնեմ—հեռանամ՝ հպարտ է ու չար է, ասին։

Եւ սրտի ցաւից յուսահատ ես մէ Թաս օղի խմեցի—
Զարենցը ցնդած—գինեմոլ, հարբեցող-յիմար է, ասին։

Ու ձմռան բուքերի միջին ես բոբիկ ու մերկ ճնացի.—
Դուրսը ցուրտ, ձմեռ է, սակայն հոգուդ մէջ ամառ է, ասին։

Ասի Թէ՝ մարդ էք ախար դուք, չէ՞ք տեսնում մարմինս ծատ.
Զարենցի հոգին տաղերում աննկուն, յամառ է, ասին։

Ինդացին, քրքջացին միայն, որ այդպէս ճնացել եմ մերկ.—
Դարերի հիացմունքը վսեմ տաղերիդ համար է, ասին։

12.

ԵՍ ԻՄ ԱՆՈՒՇ

Ես իմ անուշ Հայաստանի արևահամ բառն եմ սիրում,
Մեր հին սազի ողբանուագ, լացակումած լարն եմ սիրում,
Արնանման ծաղիկների ու վարդերի բոյրը վառման,
Ու նայիրեան աղջիկների հեզաճկուն պարն եմ սիրում։

Սիրում եմ մեր երկինքը մուգ, ջրերը ջինջ, լիճը լուսէ,
Արևն ամռան ու ձմեռայ վիշապաձայն բուքը վսեմ,
Մթում կորած խրճիթների անհիւրընկալ պատերքը սև
Ու հնամեայ քաղաքների հազարամեայ քարն եմ սիրում։

Ուր էլ լինեմ—չեմ մոռանայ ես ողբաձայն երգերը մեր,
Չեմ մոռանայ աղօթք դարձած երկաթագիր գրքերը մեր.
Ինչքան էլ սուր սիրտս խոցեն արիւնաքամ վէրքերը մեր—
Էլի ես որը ու արնավառ իմ Հայաստան-եարն եմ սիրում։

Իմ կարօտած սրտի համար ոչ մի ուրիշ հէքեաթ չը կայ.
Նարեկացու, Քուչակի պէս լուսապսակ ճակատ չը կայ.
Աշխարհ անցիր, Արարատի նման ճերմակ գագաթ չը կայ.
Ինչպէս անհաս փառքի ճամբայ՝ ես իմ Մասիս սարն եմ սիրում։

ՉԵՐՈՆԴ ԸԼԻԾԸՆ

(1820 - 1901)

1.

ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԻԿ

(Հատուած)

Հայոց աշխարհիկ, գարունդ է հասել,
Ահա գեղեցիկ գարուն քո եկել.
Ո՞վ դու վաղուց մոռցած հայրենիք,
Ո՞վ դու իմ սրտիս անմոռաց տեղիք.
Ահա գարունիկդ եկել է եկել,
Աւագ Մասեաց ծայրն
Ընդ քեզ հաշտ նայել։

Այն սև սև ամպերն դարձել են ի փախ։
Այն ճերմակ ճերմակ սարերն են անվախ,
Ձնիկն ի ծոցին բացեր է ճանապարհ,
Քաղցրիկ կլրկլչով գլորէ գետս հազար.
Ցայն բարձր ժայռից
Որ երկնուց են մօտ,
Կենաց օրհնութեան ծագէ առաւօտ...
Այլ ես Նահապետ ցամքած ծերունիս՝
Երթամ մեր հին հարցըն տամ աւետիս,
Ասեմ, թէ գարուն երեկ տանս Հայոց,
Դուք Նահապետիս ասացէք՝ հոգւոց։
Ծեր Նահապետիդ՝ տուր կակուղ հողիկ,
Որ զքեզ պինդ սիրեց, Հայոց աշխարհիկ։

2.

ՊԼՊՈՒԼՆ ԱՒԱՐԱՅՐԻ

(Հաստատ)

Ո՞նց գաս իմ լուսնակ հեզիկ ու հանդարտ
Համասփիւռ լուսովդ ի լեռ, ձոր և արտ.
Եւ ի Նահապետս, որ մտօք մոլար
Դիշերաժամիկ ժուռ գամ յԱւարայր,
Ուր քաջ ու անվնասման
Իմ հարք Հայկազունք
Ընկան զէտ հսկայ,
Ելան զէտ զւարթունք.
Մթթէ գաս սփռել ոսկեբաց սրբոց
Զիւնափայլ ամպէդ ոսկեթել ծածկոց,
Թէ՞ ճերմակ ճակտիդ՝
Թէպէտ և պայծառ՝
Քաջացս արենէն ուզես կարմիր վառ.
Թէ՞ լուիկ մինչիկ ափշիս տակաւին,
Թէ ինչպէս ընկաւ Վարդանն ահագին,
Մահու սև ստւերն
Ի սիրտ թշնամեաց,
Զհոգին ձգելով յերկին առ Աստուած։
Դու այլ ո՞վ Տղմուտ,
Տրտում՝ և արիւնոտ,
Որ գաս կամկար լաս ի մէջ շամբերուտ.
Եւ հովիկդ որ գաս ի Մակեայ քարէն
Կամ ի ծեր Մասեաց սրբազան սարէն,
Դու այլ ինձ նման դողդող ու երեր,
Թոյլ թեւօք անցնիս սարեր ու ձորեր,
Անտառէ անտառ, տերևէ տերև
Կոծկոծելով գաս ի դաշտիս վերև.
Զայս մաշած շնչիս վերջին հառաչանք
Զգել, ի հայոց սրտից արձագանք։
Ո՜հ, դու բարեկամ այրած սրտերու,
Խոնարհ գիշերոյ, հոգեակ վարդերու.
Երգէ պլպուլիկդ, երգէ ի սարէդ
Զանմահ քաջն Հայոց
Երգէ հոգւոյս հետ։

ՄԿՐՏԻՉ ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ

(1829—1868)

Մկրտիչ Պէշիկթաշլեանը վենետիկեան շկոլան անցած արևմտահայ բանաստեղծ է։ Տասնեւիններորդ դարի արևմտահայ քնարերգութիւնը երկու յայտնի անուններ ունի, մէկը Պետրոս Դուրեանն է, միւսը՝ Պէշիկթաշլեանը։ Երկուսն էլ ծագումով մանր-արհեստաւորական խաւերին են պատկանում իրենց հասկացողութիւններով ու գաղափարներով, այն տարբերութեամբ միայն, որ Պէշիկթաշլեանի մէջ ազգայնական տարրը աւելի զօրեղ է և ազդեցիկ։ Նրա քնարը գրեթէ ամբողջովին նուիրուած է ազգային մօտիւներին։ Գրել է գեղեցիկ ու սահուն լեզուով։ Արտադրել է նաև մի քանի պատմական - ազգային պիէսներ, որոնք սակայն զուրկ են գեղարուեստական արժէքից։

ՄԿՐՏԻՉ ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ

(1829—1868)

1.

ԵՂԲԱՅՐ ԵՄՔ ՄԵՔ

Ի բիւր ձայնից բնութեան շքեղ
Թէ երգք թռչին սիրողաբար,
Մատունք կուսին ամենագեղ
Թէ որ զարնեն փափուկ քնար—
Զունին ձայն մի այնքան սիրուն,
Քան զանձկալի Եղբայր անուն։

Տուր ինձ քու ձեռդ, եղբայր եմք մեք,
Որ մրրկաւ էինք զատուած,
Բաղդին ամեն ոխ չարանենդ

Ի մի համբոյր ցրվին ի բաց.
Ընդ աստեղօք ինչ կայ սիրուն,
Քան զանձկալի Եղբայր անուն։

Երբ ալեոր Մայրն Հայաստան
Տեսնէ զորդիս իւր քովէ քով,
Սրտին խորունկ վէրքն դաժան
Քաղցր արտասուաց բուժին ցօղով.
Ընդ աստեղօք ինչ կայ սիրուն,
Քան զանձկալի Եղբայր անուն։

Մէկտեղ լացինք մենք ի հնում...
Եկէք դարձեալ յար անբաժան
Խառնենք զարտօսր և զինդում,
Որ բաղմածնունդ ըլլայ մեր Ջան.
Ընդ աստեղօք ինչ կայ սիրուն,
Քան զանձկալի Եղբայր անուն։

Մէկտեղ յոգնինք, մէկտեղ ցանենք,
Մէկտեղ թափին մեր քրտինքներ.
Ըզհունձ բարեաց յերկինս հանենք,
Որ կեանք առնուն Հայոց դաշտեր.
Ընդ աստեղօք ինչ կայ սիրուն,
Քան զանձկալի եղբայր անուն։

2.

ԳԱՐՈՒՆ

Ո՜հ, ինչ անուշ և ինչպէս զով
Առաւօտուց փչես, հովիկ,
Ծաղկանց վրայ դուրգուրալով
Եւ մազերուն կուսին փափկիկ.
Բայց չես, հովիկ, իմ հայրենեաց,
Գնա, անցիր սրտէս ի բաց։

Ո՜հ, ինչ ազու և սրտապին
Ծառոց մէջէն երգես թռչնիկ,
Սիրոյ ժամերն ի յանտառին
Զմայլեցան ի քո ձայնիկ.
Բայց չես, թռչնիկ, իմ հայրենեաց,
Գնա երգէ, սրտէս ի բաց։

Ո՜հ, ինչ մրմունջ հանես վտակ,
Ականակիտ և հանդարտիկ,
Քու հայելւոյդ մէջ անապակ
Նային զիրենք վարդն ու աղջիկ.
Բայց չես, վտակ, իմ հայրենեաց,
Գնա հոսէ, սրտէս ի բաց։

Թէպէտ թռչնիկն ու հոմն հայոց
Աւերակաց շրջին վերայ,
Թէպէտ պղտոր վտակն հայոց
Նոճիներու մէջ կը սողայ,—
Նոքա հառաչք են հայրենեաց,
Նոքա չերթան սրտէս ի բաց։

3.

ԱՌ ՋԵՓԻՒՌՆ ԱԼԷՄԴԱՂԻ

Դու փափկաթև մանկիկ զեփիւռ,
Աղբերց վրայէն լուսակարկաջ,
Անուշ հոտով ծաղկանց ըսփիւռ,
Ինչպէս թռչիս ինձ ընդառաջ,
Ու խունկ և զով ընծայելով,
Զիս ողջունես հեզիկ շնչով։

Ո՜հ, կը սիրեմ ըզքեզ, հողմիկ,
Երբ դու փութաս ինծի գալու՝
Ի պար, ի թռիչ, ի սոյլ մեղմիկ
Այրած ճակտիս իմ այցելու,
Ծաղիկ հոգւոյս քև զովացած,
Բացւի ի լոյս ախորժ կենաց։

Սլացիր փափկիկ դու սուրհանդակ,
Լուր տար հովտին ու ծործորին
Ու անտառաց բարձրադիտակ,
Ուր երամով սոխակք թառին,
Թէ մըտերիմն իւրեանց եկաւ՝
Իւր ըզմայլմանց յիշատակաւ։

Ո՜հ, կորսւած իմ հաճոյքներ,
Հոս վերատին գտնեմ զձեզ,
Ծառոց շքով էք ծածկըւեր
Ու փըրփըրով առւակին հեզ.
Ահա կայտառէք ի յայս ծմակ,
Ի յայս թփուտ հովանոցակ։

Հոս դառն հոգեր մէկիկ մէկիկ
Ճակատէս ի բաց հեռանային,
Ու փունջք ժամուց գեղապարիկ
Սիրտս թեթև օրօրէին,
Եւ բնութիւն՝ մայր որդեսէր՝
Քնքուշ գրկայ մէջ զիս գրգռէր։

Հոս ճեմէին երեկոյեան
Ի զով ստուեր պար մի կուսից,
Մազերն հովուն բազմաբուրեան,
Սիրտք ընծայած հեշտ վայելից.
Շող լուսնեակին, կոյսն ու ծաղիկ
Զիրար շոյեն սիրատարփիկ։

Մտերմութիւն, սէր կրակ ու բոց,
Ի՜նչ անուշ էք յայս տեսարան,
Ուր բիւր դալարք ձեզ հանգըստաց
Ու անհուն դաշտք գրօսարան.
Մտերմութիւն, ինձ երանի՜,
Թէ հոս ծոցէդ հոգիս թըռնի։

Դու փափկաթև մանկիկ գեփիւռ,
Աղբերց վրայէն քաղցրակարկաչ,
Անուշ հոտով ծաղկանց ըսփիւռ
Թըռիր ՝՝ թըռիր ինձ ընդ առաջ.
Ու խունկ և զով ընծայելով
Գաբէ չորս դիս հեզիկ շնչով։

ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐԵԱՆ

(1851—1872)

Մանր արհեստաւորի ընտանիքի զաւակ է Դուրեանը, ծնուել է Պոլսում, ապրել ծանր աղքատութեան մէջ, տառապել է թոքախտից ու տանջուելով մեռել քսան մէկ տարեկան հասակում։ Յայտնի է իր քնքոյշ լիրիզմով, ռոմանտիկ խառնուածքով։ Իր ստեղծագործութիւնը՝ դա մի տուրք է պատանեկան շրջանի ապրումներին։ Դուրեանի ապրումները խորն են և յուզիչ, մանաւանդ նրանք ծնունդ են առել հիւծող թոքախտի տանջանքների րոմում։ Դատիարակուել է ազգային ոգով։ Դուրեանը գրել է թատերական գործեր, սակայն անարժէք։ Նրա նշանակութիւնը իր քնարական գործերի մէջ է, որոնք թուով սահմանափակ են, բայց բարձր են որակով։ Երգել է երազկոտ և յուսահատ սէրը, որ անարձագանք է մնացել սիրած առարկայի կողմից, որովհետև բանաստեղծի գլխին շատ վաղ է սկսել սաւառնել մահուան ուրուականը։

Մոխիր դարձան երազներն յիս,
Ճակատագիրս խնծղաց ի վեր.
Յորշ մը կար, որ գիս կը ծաղրէր.
Այն լուռ փոսն էր գերեզմանիս...

Գոյութեան կռիւ մեծ բեռան տակ ճնշուեց բանաստեղծի վտիտ մարմինը և լուռ հանգաւ։ Անգիտակից մնաց իր դառն վիճակի պատճառներին։ Զգաց միայն, որ իր տանջալից գոյութեան նկատմամբ անարդար է եղել ինչ-որ մի անյայտ զօրութիւն։

Այդ զօրութեան դէմ նրա կրծքից դուրս թռան անէծքի ու բողոքի ձայներ, սակայն նրանք ուղղուած էին ոչ երկրի, այլ երկնքի անորոշ Աստծու դէմ, որին նա «Աստուած ոխերիմ» է յորջորջում իր «Տրտունջք»-ի մէջ։

Անհատական վշտից ու հեծեծանքներից դուրս Պետրոս Դուրեանը գրել է նաև «ազգասիրական» երգեր, հարկաւ զուրկ գեղարուեստական արժէքից, որոնք սակայն բնորոշ են իր վիշտն ու տանջանքը երգող բանաստեղծի համար։ Նա չէ երգել մեր «ազգային» երգիչների ակտիւ նացիոնալիզմը։ Նրա մեղմութիւնն ու քնքշութիւնը այստեղ էլ ակներև է։ Դէմ է վառօդի, ազգային սրի, նիզակի, նաև թագի. թագի, որի համար մեռած էին մեր ազգայինները սահմանից ադին և անդին.

Հաբիկ չեն մեզի նիզակ
և սուր ու վառոդ.
Իրաւունքի, սիրոյ,
լուսոյ ենք կարօտ.
Ողբայլուքեանն հայն կը յենու,
ոչ թագի.—
Բռնէ ձեռքէն, որ շունչ առնու
և հոգի։

Իր քսանամեայ հասակում Դուրեանը աւելի հեռատես է եղել, քան ափ մը վառօդով հայ երկիրը ազատելու ձգտող իմաստունները։

Դուրեանի քնարական գործերից գտնում ենք այստեղ ընտիրները։

Սուքիասեան

ԳԵՏՐՈՍ ԴՈՒՐԵԱՆ

1.

ԻՆՁ ԿԸՍԵՆ

Ինձի կըսեն.—«Ինչո՞ւ լուռ եաս.—
Ո՞հ, մի՞թէ բառ կամ խօսք ունի՞
Արշալոյսը, որ կը բռնկի,
Չի անհուն է ան ալ ինձ պէս։

Ինձի կըսեն.—«Միշտ տխուր եաս».—
Ի՞նչպէս չըլլամ, մէկիկ մէկիկ
Թօթափեցան գլխուս աստղիկք...
Արշալոյս մը չանցաւ սրտէս։

Ինձի կըսեն.—«Կրակոտ չես,
Լճակի մը պէս ես մեռած,
Դալկահար՝ ղէմքդ ու նայեցուածդ։—
«Ո՞հ, յատակն են իմ փրփուրներդ։

Ես ինձ կըսեմ.—Ժամդ է հասեր.
Քու երկրորդ սև մօրդ գնա գոգ—
Գերեզման, հոն գտնես դու գոգ,
Վարդեր, թրթռում, թռիչ ու աստղեր...

2.

ՍԻՐԵԼ

Բոյլ մը նայուածք, փունջ մը ժպիտ,
Գուրայ մը խօսք դիւթեց իմ սիրտ։

Ես ուզեցի լուռ մենանալ,
Սիրել փթիթք, խորշեր թաւուտ,
Սիրել կայծերն երկնի կապուտ,
Առտուան շաղն, իրիկուան բալ,
Ճակատագրիս սև գիծ կարդալ,
Խոկալ, սուզիլ, զմայլիլ սուտ։

Ո՜հ, խուրձ մը վարս, եղեմ մը շունչ,
Շրջազգեստ մը շրշեց իմ շուրջ։

Ես ուզեցի լոկ ու մինակ
Սրտակցիլ ջինջ վտակին հետ,
Յիշատակի չունի նա հետ,
Սիրտ մ՝ որոյ մինչ սուգիմ յատակ,
Գտնեմ զիս հոն գժգոյն յատակ,
Գաղտնիք մ՝ ունի—այն՝ անթիւ վէտ։

Եթեր մը տրոփ սրտի լսեցի,
Հծծեց.—«Կուզե՞ս սիրտ, ելլ ինձի»։

Ես ուզեցի սիրել զեփիւռ,
Որ երկնքէն թռչի բեկ-բեկ,
Նա չը սիրեր խոցել երբէք,
Հոգի մ՝որոյ գաղտնիքն է բոյր,
Երկնի բոյրն յուշ կածէ առ հէք։

Ո՜հ, փունջ մը բոց, փրսփրսաց ինձ.
—«Կուզե՞ս պաշտել հոգի մ՝ անբիծ»։

Ես ուզեցի քնարով մի
Լոկ սիրել հոս՝ դալկահար,
Պաշտել՝ գրկել միայն քնար,
Սիրող էակ ճանչել զանի.
Ըստ իմ քրմաց լարել աղի,
Եւ սրտակցիլ սիրողաբար։

Նէ մօտեցաւ յուշիկ՝ ըսաւ.
—«Քնարդ է ցուրտ սիրտ, և սէրդ՝ ցաւ»։

Թօթուեց թևերն հոգիս մոլար,
Ճանչեց ըզնէ, գեղ ու կրակ՝
Սիրտն անապակ, ինչպէս վտակ,
Անմեղ՝ ինչպէս սիւգ դալկահար,
Հաւատարիմ, ինչպէս քնար,
Հրաժեշտ տուաւ կեանքի մենակ։

Բոյլ մը նայուածք, փունջ մը պիտ,
Քուրայ մը խօսք դիւթեց իմ սիրտ։

3.

ԼՃԱԿ

Ինչո՞ւ ապշած են, լճակ,
Ու չեն խայտար քու ալեակք,
Միթէ հայլուոյդ մէջ անձկաւ
Գեղուհի՞ մը նայեցաւ։

Եւ կամ միթէ կըզմայլին
Ալեակքդ երկնի կապոյտին,
Եւ այն ամպոց լուսափթիթ,
Որք նմանին փրփուրիդ։

Մելամաղձոտ լճակ իմ,
Քեզ հետ ըլլանք մտերիմ.
Սիրեմ քեզի պէս ես ալ
Գրաւիլ, լռիլ ու խոկալ։

Որքան ունիս դու ալի,
Ճակատս այնքան խոկ ունի.
Որքան ունիս դու փրփուր,
Սիրտս այնքան խոց ունի բիւր։

Այլ եթէ գոգդ ալ թափին
Բոյլքն աստեղաց երկնքին,
Նմանիլ չես կրնար դուն
Հոգւոյս՝ որ է բոց անհուն

Հոդ աստղերը չեն մեռնիր,
Ծաղիկներն հոդ չեն թառմիր,
Ամպերըն չեն թրջեր հոդ,
Երբ խաղաղ է դու և օդ։

Լճակ, դու ես թագուհիս,
Զի թ'հովէ մ'ալ խորշոմիս,
Դարձեալ խորքիդ մէջ խռով
Զիս կը պահես դողդոջով։

Շատերը զիս մերժեցին,
«Քնար մ'ունի սոսկ»,—ըսեն.
Մին՝ «դողդոջ է, գոյն չունի»—
Միւսն ալ ըսաւ.—«Կը մեռնի՞»։

Ոչ ոք ըսաւ.—«Հէք տղայ,
Արդեօք ինչո՞ւ կը մխայ։
Թերևս ըլլայ գեղանի,
Թէ որ սիրեմ, չը մեռնի»։

Ոչ ոք ըսաւ.—«Սա տղին
Պատռենք սիրտը տրտմագին,
Նայինք ինչէ՞ր գրած կան»...
—Հոն հրդեհ կայ, ո՛չ մատեան։

Հոն կայ մոխիր... յիշատակ...
Ալեակք յուզին թող, լճակ,
Զի քու խորքիդ մէջ անձկաւ
Ցուսահատ մը նայեցաւ...

ՍԻԱՄԱՆԹՕ

(1877—1915)

Սիամանթօն արևմտահայ երիտասարդ գրողներից է, նորագոյն քնարերգութեան աւագ ներկայացուցիչներից։ Նա մեծ պատերազմի օրերին նոյնպիսի զոհ է եղել տաճկական վայրագ բռնութեան, որպիսին և Դ. Վարուժանը։

Սիամանթօի ստեղծագործութեան առարկան տաճկահայ դաժան իրականութիւնն է, արեան, կոտորածի, սրածութեան մահաշունչ աշխարհը։ Նրա հիմնական մոտիւը արեան մղձաւանջն է, ջարդերի սոսկալի ուրուականը։ Նրա երգերը հիւսւած են ջարդի ենթակայ ժողովրդի անլուր տառապանքներից և այդ տառապանքներից ծնւող ցասման, ըմբոստացման, վրէժի ու խորը զայրոյթի զգացումներից։ Ո՛չ մի պատմութիւն, ո՛չ մի ուսումնասիրութիւն չի տայ կոտորածների այնպիսի ցնցող պատկերներ, որպիսին ընդունակ է տալու Սիամանթօի բանաստեղծութիւնների շարքը, որ կարծես ծածկւած է արիւնագոյն թանձր շղարշով։ Նրա գրւածքների խորագրերն անգամ բնորոշ են. Մահւան Տեսիլք, Զարշարանքի Երազ, Հոգեվարքի Իրիկուն, Անդրշիրիմեան Աղաղակ և այլն։

Սիամանթօն արևմտահայ անցեալ ազատագրման շարժման այն գործիչներից է, որոնք տոգորւած մանր բուրժուական ագրեսիւ նացիոնալիզմով, հաւատացած էին, թէ հայ մի բուռն ժողովրդի ազատութիւնը իրենց «կայծակնափայլ սուրի» ծայրին է։ Եւ եթէ Սիամանթօի քնարը առաջինը ինքը չէ հնչեցրել նախայարձակ բարբարոսութեան երգը, ապա պաշտպանողական բարբարոսութիւնը եղել է նրան ոգևորող ու առաջ մղող զօրութիւնը։

Սիամանթօի բանաստեղծութիւնների հատորը, Ամբողջական Գործը, յիշեցնում է միջնադարեան մռայլ ու խաւար էպոխան։ Եւ պատմութեան այդ մռայլ շրջանը յիշեցնողը ոչ միայն անգութ թշնամու սուրն է, այլ և հենց իր՝ բանաստեղծի և իր դասակարգի մարդկանց սուրը, որ յարմար պարագային նոյնքան թունալից, նոյնքան արիւնածարաւ դառնալու ընդունակութիւն ունի (որ և ունեցաւ յետագայում), որքան վայրագ ու բարբարոս թշնամունը։

Սիամանթօի բանաստեղծութիւններն իրենց վրայ կրում են եւրոպական մոդեռն ու դեկադենտ բանաստեղծների ազդեցութիւնը։ Գրել է տաղաչափութեան նորատիպ ձևով։ Ունեցել է հետևողներ ոչ միայն արևմտահայ, այլ և կովկասահայ մի քանի երիտասարդ գրողների մէջ։

Սուրխաթեան

ՍԻՄՊԹՈ

ԴԵՌ ՔՆԱՐԻՍ ԼԱՐԵՐԸ ԹԱ՛Ց ԵՆ...

(Որբերուն համար)

Դուն դառնապէս տրտում քոյր, և դուն
պատուհասեալ պատանի,
Բաղցրօրէն երկուքդ մէկ, բանաստեղծի
շրթունքներուս յառաջացէք.
Վասն զի անսուտ բերանս այսօր ձեր
ճակտին որբ վարդերուն վրայ՝
Հեռուներէն հասնող եղբօր մը հուրէ
կարօտն է՝ որ պիտի համբուրէ...

Տարիներով և արտմօրէն ձեր մահացու
ցաւն իմ կարմիր ցաւս եղաւ.
Ու տառապանքիս տիեզերքին մէջ՝ ձեր
արցունքն իրը անձրև հոգիիս
վրան կը տեղար...
Ձեր հեծեծանքներն մահուան հովերուն
պէս՝ մենաւորի լուսամուտիս
փեղկերը կոտրտելու եկան,
Եւ անհնարին սոսկումներ ապրեցայ
ձեր հայրերուն ոսկորներէն
բարձրացած անտառներուն մէջ...

Թշնամիներէն թափուած արիւնը, կեանքիս առջև,
այն աւազանն էր ալեկոծ,
Որուն խորերը, քանի՜ անգամ, մաքառումի
և ուխտի արդար ընկերներուս հետ,
Ես ապատավարժ քնարս, գրիչս, սուգերու սրինգս
և անոնք իրենց սուրերն կայծակեղէն
Եկանք, եղերականօրէն, անաւոր երդումի մը համար,
անոր մէջը թաթախելու...

Այսպէս, իմ հայրենասէր հոգին, ձեր անեղ ցաւին համար
կարմիր մատեաններու մէջ ընդվզեցաւ...
Բայց քանի՜ քանի՜ արեգակներ մեռան. և քնարիս լարերը
դեռ թաց են. եղբայրներ, դեռ իր լարերը թաց են.
Ա՜հ, գթացէք մատուրներուս... և թող երգերս մրրկին,
և թող շեփորս հերոսներուն իր հրաւէրը որոտայ.
Ճշմարիտ կըսեմ, Արդարութեան առաւօտը դեռ դաժանօրէն
հեռու է, և Ապագաներուն աստեղածուռն անյատակ...

2.

ՀԱՐՍԻՆ ԵՐԱԶԸ

—Ու տարիներով մենաւորիկ՝
պատուհանիս առջև նստած՝
Ես քու ճամբուդ կը նայիմ, իմ սրտահատոր
հեռաւորս,
Ու այս դրովս կուզեմ քեզի իմ մարմինիս
ու մտքերուս
Անտէր սարսուռն անգամ մըն ալ
երգելու...
Ա՜հ, մեկնած օրանդ արեգակը չե՞ս
յիշեր,
Արցունքիս չափ առատ էր և համբոյրիս
պէս հրաշունչ,
Խոստումներուդ չափ բարի էր և քու դարձիդ
չափ արագ.
Մեկնած օրանդ արեգակը և աղօթքներս
չե՞ս յիշեր,
Երբ ջրին կուժն ես քու ձիուդ շուքին
վրան սրսկեցի...
Որպէս զի քու առջևէդ ծովերն յետ
դառնային,
Եւ ցամաքը ոտքերուդ տակը ծաղկոտէր...
Ա՜հ, մեկնած օրանդ արեգակը սև՜
գիշերի փոխուեցաւ...
Ու սպասումիս արցունքները տարիներու
տարափին տակ,
Աչքերէս, այտիս վրան աստղերու պէս հոսելով՝
Անոնց վարդերն ահաւասիկ որ այրեցին։

Ա՛լ կը բաւէ, քու ծարաւէդ ես իմ ծամերս
փնտռել կուզեմ,
Քու բաժակիդ գինիէն դեռ գինով եմ...

Ու բացակայ պերճ հասակէդ սգաւոր.
Ցիշատակիդ ետնէն հովերուս պէս կը հառաչեմ...
Եւ ժամուն դուռը ծնկաբներս խոցոտելէն
Արևմուտքին կը պաղատիմ...

—Ծովերն օր մը ծայրէ ի ծայր թող
ցամաքին,
Ու ակնթարթ մը, երկու աշխարհը թող իրարու
մօտենան,
Այնուհեան արքայութեան ու արևի ալ պէտք
չունիմ.—
Վերադարձիր, մեր տնակին սեմին վրայ
ես քու ճամբուդ կը սպասեմ,
Ձեռքս պարապ քու ձեռքերէդ, սևերովս
քեզ կերազեմ...
Վերադարձիր, մեր պարտէզին
պտուղներուն պէս անուշ,
Սրտիս սէրը քեզի համար իր համբոյրը
կը պահէ։
Իսկ կաթնաթոյր կողերս դեռ մայրութիւն
չի ճանչցան...
Եւ հարսանեկան իմ ոսկեթել
քօղերովս՝
Դեռ չի կրցայ խանձարուր մը գարդարել...
Ու օրօրանի մը առջև նստած դեռ չերգեցի, դեռ
չերգեցի
Հայ մայրերուն մաքուր օրերն երկնային...
Վերադարձիր, ալ կարօտս կատար չունի,
Երբ սև գիշերն այսպէս կուգայ իր պատանքները
քակել,
Երբ բուերը բագին մէջը իրարու դէմ կը վայեն,
Երբ հեծեծանքս կը հառնի և արցունքներս
կարիւնին.
Լքուած հարսի երազներուս մէջ մենաւոր,
Ես իմ ձեռքովս, դևի մը պէս, ալ կակսիմ
Գլխուս վրան՝ իմ մօտաւոր գերեզմանիս
հողը մաղել...

ԴԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԺԱՆ

(1884—1915)

Արևմտահայ նորագոյն քնարերգութեան մէջ ամենայայտնի դէմքը Դանիէլ Վարուժանն է, որ մեծ պատերազմի օրերին զոհ գնաց տաճիկ բարբարոս կառավարութեան դաւադրանքին։ Կարճատև եղաւ նրա կեանքը գրական ասպարիզում, բայց թողած գրական ժառանգութիւնը՝ մեծ։ Մանր բուրժուական ազգային մասուրից ելած, մխիթարեանների մօտ ուսած, ապա արդիւնաբերական Բէլգիայում բանուորական շարժումները տեսած՝ Դ. Վարուժանը իր վրայ կրում է այդ երեք տարրերի ազդեցութիւնը։

Յայտնի դարձաւ 1912 թ. հրատարակած իր Հեթանոս Երգերով, ուր նրա քնարը վերոյիշեալ երեք տարրերից ստեղծագործւած մի բազմերանգ հիւսւածք է ներկայացնում։

Երգել է ազգային մոտիւներ, արձագանգել մանր-բուրժուական ազգային շարժմանը, վերջինի հետ կապւած երևոյթներին և ներբողել նրա ղեկավար հերոսներին։ Վանական ճգմիչից ազատագրւած՝ երգել է «գինին, կինը, բագիններուն ծիծաղը և խորաններուն արիւնը»։

Անձնատուր եղած սոսկ մարմնականին, նա մի պահ երգել է միմիայն «հրապոյրը կնոջ», «տուիփները հեշտին»։ Ապա շնչելով Վերհարնի պոէզիայի բոյրը և ականատես՝ դասակարգային պայքարի ելեւէջներին, Վարուժանը գրել է Գողգոթայի ծաղիկները, որոնց շարքում յայտնի են՝ Բանուորուհին, Մեռնող Բանուորը, Մեքենաները, Դաղարը, Մայիսի Մէկը և այլն։ Այդ երգերի մէջ սակայն Դ. Վարուժանը պրոլետարական բանաստեղծ չէ։ Երևոյթների վրայ նա նայում է ինդիվիդուալիստական տեսակէտից։ Բանաստեղծը դժգոհ է տիրող կարգերից, նա համակւում է սոցիալական մոտիւների տխուր տրամադրութեամբ։ Տեսնում է դժգոհներից ամենաբմբուստին՝ բանուորական մասսային, երգում է նրա տառապանքը, մեծութիւնը, սակայն նրա երգը՝ հեռից դիտողի երգ է։ Չի յարում նրան, խորթ է նրա հոգեբանութիւնը պրոլետարիատին։ Նա բողոքող է, բայց բողոքող է որպէս մենաւոր, և ոչ որպէս մեծ կոլլեկտիւի ակտիւ մասնիկը։ Այդ է պատճառը, որ փրկութեան խարիսխ չունենալով, որպէս մենաւոր՝ նա լքւում է, յուսահատւում։

Հեթանոս Երգերից յետոյ Դ. Վարուժանը գրել է Հացին Երգը, որ հրատարակւեց նրա մահից յետոյ։

Դա հայկական Մշակականքն է, ուր բանաստեղծը երգում է շաբաշ հողագործի աշխատանքը, տալիս է նրա կեանքից իդիլլական գողտրիկ պատկերներ։

Սուրխաբեան

ԴԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԺԱՆ

— I. —

ԼՈՅՍԸ

Կերթամ աղբիւրը լոյսին...
Ուղին երկար է. սալարկուած է ուղին
Կայծքարերով, ցանկուած մուրուի փուշերով.
Ուղին շեղ է ճառագայթի մ' հանգուցակ։
Անկէ կելլեմ՝ յենլով գողդոջ ծունգերուս,
Եւ ծունգերէ, զոր գամեցին եղբայրներս,
Արիւնս տաք կը ցոլի։
Հեքն է՝ կուրծքիս, թարթիչներուս վրայ՝ փոշին։
Սիրտս սափորն է դատարկ,
Ու ես կերթամ դէպի աղբիւրը լոյսին...

Լոյսն աղուոր է, բարձրութեան մէջ՝ հոսանուտ,
Խոնարհումին մէջ՝ արդար։
Օր մը տեսայ էութենէն մաս մը սուրբ
Մօրս հոգւոյն մէջ ճաճանչագեղ, և ցաթած
Մեր գիւղացին մէկ վաղեմի հերոսին
Հողակոյտին վրայ դալար։
Միջօրէին զայն տեսայ,
Որ նման մեծ թիթեռնիկի մ' սպիտակ՝
Կը քալէր դաղջ պատուհանիս քարին վրայ,
Որ մայթերէն կամ աղծապիղծ ճամբայէն
Ներողամիտ գթութեամբ։
Կը հոսէր նոր կթեած կաթի մը պէս եղկ,
Որ իրիկունն, հորիզոնէ հորիզոն,
Կերիզանաբ գետերու պէս յակինթի
Կամ կը կազմէր երկինքներուն վրայ խաղաղ
Անրջական աւազաններ, որոնց մէջ
Կը բռնկէին նուռնուֆարէ կղզեակներ։
Զայն ես տեսայ,—և հոգւոյս մէջ արթնցաւ
Պանդուխտի տենչ մը անորոշ և ակնէ

Դէպի գաւառ մ՝ անծանօթ լի արևով.
Եւ արդ կերթամ դէպի աղբիւրը լոյսին...

Լոյսն է մաքիս հարսը, ապջիկն՝ ասաուծոյ.
Ան գինին է սիեղերքի բերկրութեան,
Որ իրիկուն մը կողէն դուրս Յիսուսին
Հեղեղօրէն հոսեցաւ,
Ներումի պէս հոսեցաւ վարը Մեղքին
Սեղանին շուրջը հաւաքուած մարդերուն
Անյուսութեան սկիհներուն մէջ դատարկ։
Լոյսը արիւնն է բնութեան,
Գիշերուան թագն ու պատմուճանն է օրուան.
Աստուածային Ակնին է՝
Որ երկունքի մէջ մեռած մօր մը նման
Կը՞ստեղծէ իր վախճանելու ժամանակ,
Ակնին՝ հրեղէն բիբերով,
Որուն հոգին ամեն գարուն կը տրոփի
Հիւլէին մէջ և մարդկային մտածման,
Որուն համար զոհերով դեռ կը մխան
Նիբրական ափերը յորդ Գանգէսին.
Ու ես կերթամ դէպի աղբիւրը լոյսին...

Լոյսը մարմարն է երկնային հանքերուն,
Որով Արուեստն անմահական երազով
Կը քանդակէ ձեռնամարմին աստուածներ։
Իր ծոցին մէջ կը ծնին
Մռայլ Տանդէներն ու Հոմերները հսկայ,
Իր ծոցին մէջ իմաստութիւնը երգ մ՝է,
Զոր գիշերուան մէջ խորին
Բանաստեղծները կը խմեն աստղերէն,
Որ նուագեն ցերեկուան մէջ Մարդերուն։
Ան ամենուն գինքը կու տայ, ամենուն
Կը բաժնուի և կը մնայ անբաժան
Նշխարքին պէս.—ան նշխարքն է, որ կիջնէ
Ամեն առտու սեղաններուն վրա մեր,
Մարդեղութեան արիւնլուայ խորհուրդին.
Ու ես կերթամ դէպի աղբիւրը լոյսին...

Քանի՞ հազար, քանի՞ հազար տարիներ
Պէտք է որ այսպէս քալեմ.
Քանի՞ անգամ պէտք է իյնամ կարեվէր
Ճանապարհիս վրայ բացուած
Նպատակիս ժայռափշուր մուրճերով.
Չը գիտեմ ես.—միայն թէ, ո՞վ եղբայրներ,
Ո՛վ խաչ հանող եղբայրներ,

Թողուցէք դիս համբորդութեանս մէջ միմնակ,
Ա՛յնքան միմնակ և այնքան լուռ, որ լսեմ
Տրոփը սրտիս, զոր ընտրած նւագս է
Նւագներուն մէջէն բիւր։
Արեւով լի և արեւներէն ոսկեղ
Ուղիս վրայ մի՛ սփռէք
Ձեր շուքը մռայլ թեւի մը պէս ուրուրի։
Եւ ոչ ալ դիս կանչեցէք
Խնճոյքներուն ձեր զւարթ,
Ուր ցոփութիւնը կը զարնէ նւագարան։
Ընդունայն է խոսանոտ
Սրտիս կոյսեր,—սիրտս տարփոն է դատարկ։
Ու ես կերթամ դէպի աղբիւրը լոյսին...

2.

ՄԵՌՆՈՂ ԲՈՆԻՈՐ

Քամին կոռնայ ու տնակն իր հիմերէն կը ցնցէ
Իբրև ահեղ դամբարան։
Հիւծախտաւոր բանւոր մ՝ հոն կը վախճանի մազկոփնչ՝
Խարին վրայ հոտեան։
Յանուն պատառ մը հացի՝ գործատան մէջ թաղեց ան
Ճառագայթներն հոգիին.
Տւաւ փերթ փերթ որ ուտեն մեքենաները վիշապ
Միսերը հուժկու կռնակին։
Անիւներուն ակռաներն ողնածուծովն օծանեց
Եւ սրբեց իր մազերով.
Հնոցին դէմ՝ մերկալանջ, ժահրոտ օդին մէջ՝ մղձկուկ
Ապրեցաւ միշտ մեռնելով։
Արդ տապալող նոճիի հանգոյն բան մ՝է այդ տղան,
Այդ յաղթ ռամիկն որբենի։
Երկաթներու հետ՝պայքար մ՝եղաւ իր կեանքն յարատև.
Արդ կը փշրի զերթ վանի։
Գերեզմանին դեղին հողն իր աչքերուն վրայ կապոյտ
Սփռեր է Մահն անժպիտ.
Մեղրամոմի պէս մարմինն ահաւասիկ կը հալի
Մատերն է վար շիթ առ շիթ։
Ի զուր գարունն երազեց և հովերուն մէջ ազատ
Կաղնիացումն հասակին.
Ի զուր տենչաց երգով լի շրթունքներն իր երկարել
Աղբիւրներու ջինջ ակին։
Արևուն տեղ՝ դալկութիւն, շուշաններու տեղ՝ մրուր
Պատկեցին ճակատն իր։

Սիրոյ երգին փոխարէն՝ եկաւ փրփրիլ շրթունքին
Հրատապ հազ մը կարմիր։
Արդ կը հազայ, կը հազայ իր գոհի գլուխը դրած
Ծոցին մէջ մօրն աղեկէզ.
Որուն կուրցած աչքերէն իսկ արտասուք կը բղխին՝
Հոգէն պղտոր ջուրին պէս։
Վար կը կախուի մնարէն Յիսուսի խաչը կարմիր,
Բայց ճակատին վրայ չինկած
Շիթ մ՝Արիւնէն փրկութեան — որ սառեր է խաչին վրայ —
Ինք կը մեռնի վաստակած։
Քամին կոռնայ և տնակն իր հիմերէն կը ցնցէ
Իբրև ահեղ դիմբարան...
Ու սև կատուն տնակին կը մլաւէ խելայեղ
Ճանկռթելով շեմքը դռան։

3.

ԲԱՆԻՈՐՈՒՀԻՆ

Պատուհանիս տակէն ամեն առաւօտ,
Ուրուականի պէս կ՝անցնիս.
Եւ կուսաղեղ գլուխիդ վրայ կ՝արտասուէ
Տերևաթափ վարդենիս։

Լուռ թաղին մէջ կը լսեմ քայլդ, ու գարթնող
Շունն՝ որ վրդով կը հանչէ.
Կամ կը լսեմ քունիս մէջէն ձայնն հազիդ՝
Որ ծոցդ ապուր կը տանջէ։

Եւ կը խորհիմ թէ քնատ ես և նօթի,
Իրանդ հովէն կը դողայ.
Եւ կը նստի գանգուրներուդ վրայ, քոյր,
Եղեամն իբրև շափիւղայ։

Կամ մուճակներդ են պատռուած, փողոցին
Ջուրն անոնց մէջ կը ճողփայ.
Կամ ետևէդ շայտօրէն կը սուլէ
Փուչ սրիկայ մ՝անոպայ։

Եւ կը խորհիմ թէ, տան մէջ, մայրդ է հիւանդ.
Ցամքած է ձէթն ալ ճրագին.
Ու դուն կ՝երթաս գործատան մէջ աշխատիլ
Լոյսին համար ու կեանքին։

Ես կը խորհիմ—և խենթի պէս կը բաղձամ
Վար իջնել, քոյը դալկադէմ,
Քովդ իջնել, համբուրել ձեռքդ նիհար,
Եւ հծծել.—«Քեզ կը սիրեմ».

Կը սիրեմ վիշտդ՝ որ իմ վիշտս է գերագոյն,
Կը սիրեմ կուրծքդ քանդուած՝
Որուն մէջ դեռ կը յամառի Սէրդ երգել
Արտոյտի պէս սրարբած։

Կը սիրեմ քու անօթութիւնդ ու ծարաւդ,
Եւ ոակորներդ ուժասպառ.
Ես կը սիրեմ կոյս աղիքներդ ցամքած,
Մաղերուդ սուգն՝ ուսէդ վար։

Եւ ես կ'ուզեմ ամփոփել քեզ սրտիս վրայ
Տատրակի պէս տարագիր,
Տալ ուժս քեզ, մրցանակներս փառքի,
Եւ ազգանունս անբասիր։

Կուրծքս վահան ընել կուրծքիդ նշաւակ,
Եւ քոզն ըլլալ պատիւիդ,
Կրանիթէ բազուկիս տակ պաշտպանել
Սեռդ ու գեղդ անժպիտ։

Կ'ուզեմ քեզ տալ ինչ որ պարտքն ինձ տուաւ,
Ինչ որ խլեցի մարտերով.
Քեզ պսակել արիւնիս գոյնն ունեցող
Յաղթանակիս վարդերով։

Միայն թէ դուն չըլլաս տժգոյն ու քաղցած,
Արևուն տակ չհազաս,
Մօրդ վերև չմարի ճրագն, ու, ով քոյր,
Դուն գործատուն ալ չերթաս։

4.

ԸՆԿԵՑԻԿԸ

Բուքը կը մռնչէ շքեղ տան մ՚ առջև.
Կէս գիշերին, հոն, մայրը առաւ կանդ,
Յոյզէն կը դողայ սիրտը, գերթ տերև,
Մարմինը ձիւնէն հագեր է պատանք։

Կը նիրհէ գրկին մէջ դեռ երեխան,
Գուցէ անօթի, գուցէ նուազած...
Կաթէն կաթիլ մը, մարգարտի նման,
Բերանին վրայ ցուրտէն է պաղած։

Պէտք է լքել հոս։—Ի՞նչ նկուղի մէջ
Ծնաւ ծաղիկն այդ՝ զարնուած եղեամէն...
Ունեցաւ շապիկ, կամ օրոցք մը գէջ...
Հրեշտակ մ՚իջաւ վար՝ ժպտելու իրեն։

Հայր մ՚հաւատարիմ ունեցաւ արդեօք,
Որ խառնէր քրտինքն իր արտասուքին.
Թէ կոյս մը խաբուած սիրով մը բորբոք
Անոր մայր եղաւ՝ նախ չեղած դեռ կին։

Չը գիտեմ.—միայն այդ մայրն է ուժգոյն՝
Ծոնաւ քարին տակ բուսնող սէզին պէս։
Ոտքերն են բոպիկ, հասակը նկուն,
Զոր պիտի փշրէ ցուրտ քամին կարծես։

Թոշնած են ծիծերն՝ ուրկէ ըղխեցուց
Սէրը՝ կաթի տեղ՝ շիթ մը շարաւիղ,
Մերթ թափը հովին կուրծքը կուտայ ցոյց,
Ուր վիշտն է պառկեր, ձիւնը կը մաղուի։

Պէտք է լքել հոս.—կը դնէ տղան
Ծածքին տակ քիւին, տանը շեմին վրայ...
Իր կանեփ շալով կը սքողէ վրան,
Ինք երկնքին տակ մերկ կը դողդողայ։

Զայն կը համբուրէ և կուզէ փախչիլ...
Բայց սիրտը քայլին չի հպատակիր,—
Ո՜հ, ինչպէս բաժնել, փեսաՀ հոգեխիլ
Իր աղիքն որդւոյն աղիքէն կարմիր։

Եւ հոն կը սպասէ մինչև արշալոյս,
Խելայեղ ուրուն կըլլայ գիշերուան,
Ու երբ որ տղան կուլայ սրտայոյզ
Մարմար շեմին վրայ մերթ կ՚օրօրէ զայն։

Կը խորհի.—գուցէ ունենայ որդին
Վաղը այս կեանքէն կեանք մը լաւագոյն.—
Դրսի օրօրան, ծիծերն ստընտուին
Իրեն աւելի առատ կաթ մ՚հեղուն։

Ունենայ գուցէ նոյն իսկ խաղալիք.—
Պուպրիկ մ'իրեն պէս բնհեղներ հագած.
Մարդիկ զայն կարծեն իշխան մը փոքրիկ.
Եւ զայն իր հրեշտակն ընդունի ասուած.

Այպէս կը խորհի մայրը զոդոջուն,
Մայրը՝ հոն հագած պատանքը ձիւնին...
Այգը կը ծագի. փողոցներն համբուն
Կեանքը շշուկով տակաւ կը լեցուին.

Կ'երգէ աքաղաղն, որդին կը ճչայ,
Չի կոպերն անուշ շոյն է համբուրած,
Մայրը խելացնոր, մայրը ակամայ
Ընտապ կը փախչի... սիրտը հոն թողած.

5.

ՀԻՆ ՍԷՐԸ

Մամ ու ծերուկ, երկու թարշամ հոգիներ,
Եկան նստիլ շուքին ներքև ծիրանուոյն՝
Որուն քնքոյշ ծաղկներն էին զարդարեր
Օր մը գլուխը հանուոյն.

Անոնք սաստիկ կը զոդոջեն՝ իբր ըլլան
Սիրահարներ յանկարծ իրար հանդիպած.
Բայց քովերնին՝ ցուպերն իրենց լոկ կը մնան
Խոտին վրայ գրկուած.

Չունին այլևս հրդեհումներն արիւնին.
Անոնց հոգին համբոյրի երգը չունի,
Ոչ ալ յոգնած կողերնուն մէջ կը ծաղկին
Սերմերը նման շուշանի.

Պապուն նայուածքն աչքերնուն մէջ մամուն
Կը նստի՝ չը թափանցած դեռ սրտին,
Եւ կը մընի գաղջ ճառագայթն արևուն
Անոնց ծոցին մէջ ցրտին.

Եթէ փորձեն իսկ տարփանքի փորձ մ'անմեղ
Գարնան դրդիչ բուրումներէն սրտաբաց՝

Եվ փշրվ սիրան՝ իրրև բաժակ մը բիւրեղ
Ցանկարծ կրակին դէմ ճաքեան։

Վարդերն անցան, անցան բոլորն այտերէ,
Սէրն անոնց կայծ մ՚է մութերին մէջ թաղուած՝
Զոր յիշատակն իր շունչով խակ կը մարէ
Վայրկեան մը հոգիս արծարծած։

Ու հիմակ այս գարնանային իրիկունն՝
Երբ կը բուրեն կինամոնները բլրան՝
Կիյնայ անոնց միտքը հին սէրս յանկարծոյն՝
Հին ապօթքի մը նման։

Եւ կը յիշեն, շուքին տակ նոյն ծիրանւոյն,
Մեռած գարունքն, իրենց տարփանքը հեզտին,
Յետոյ համբոյրն ու յետոյ ճիչը մահուն՝
Եւ իրարու կը ժպտին...

ԴԱԴԱՐ

Միջօրէի դաղարն է գեհենամաուն գործատան.—
Ինչպէս վիշապ մը թրմրած՝ կը նիրհէ հնոցը տիտան,
Բուխերիկին կլափին մէջ պահ մը ծուխն է խեղդուեր.
Ներսը գլանները արշաւ, և անիւներն ընդհոլով
Ցանկարծ կեցեր են՝ իրենց ընթացքին մէջ խակալով.
Այդ անդորրին մէջ միայն կարծես կըլլան լսելի
Մեքենական ճախարանքին յոգնած հեքերն ահռելի։
Ընկեր, թոյլ տուր շողշողայ, երկաթներուն գագաթին
Բանուորներուն քրտան առատ, գոհարն իրենց ճակատին.
Թոյլ տուր որ ներս մացառուող արևուն մէջ, թաշկառուն,
Զմրուխտ ճանճերը բզզան՝ հեգնելով կեանքը մարդուն,
Կանգնէ դուն մայր-դրան քով.—

Տես, պատուան շապիկով
Անոնք փոզոց կը խուժեն, և կ՚ընդլայնին իրրև ծով.
Ոամիկ ուժին բանանկն է, և հանճարն է վաստակին,
Որ կը բերէ գարերու կոթողն իր յաղթ քամակին.
Սա փոշիով և կուպրով ծեփուած գլուխները տիտան,
Որոնց վարսերը երբէք աստղերուն մէջ չը լոգցան՝

Կը կարկառուին խենդի պէս դէպ ի հովերը քաղցրիկ,
Գարնան բոյրով կ'ողողեն իրենց բիբերը հրձիգ.
Ծերերն ունին կռնակներ ծալլուած մինչև գերեզման՝
Որոնց խորէն կը լսուին ճարճատիւններ ոսկրակոն
Ճամբորէն վար թաւալող ոգեայն փուռ սիւներու։
Եւ կոյսերն են գալիսնաբ, կմախքներ թոռնած վարդերու,—
Թիթեռներուն թեւին վրայ գէր կը շողայ թանկ փոշին,—
Հնոցին մոխիրն է ցանուած իրենց երկար թարթիչին։
Ահա մայրերն ողճաւուած, և արդանդներէն անոր,
Ուր սերմի հաւնան արցունքի կաթիլներու փոխուեցաւ.
Ահա ծիծերը, քամուած ողկոյզներու հանդուռնակ,
Որոնցմէ բիւր սերունդներ խմեցին մաղձ ու պատրանք։
Հարիւր հազար են անոնք.—բանակներ են գոհերու,
Զոր կը տանին միշտ Ոսկի Հորթին առջև մորթելու.
Ունին գազուած գառատակներ, և կռնակներ ոստեան.
Ծուխերուն մէջ լողացող մեծ բիբերնին աստղայեն,
Այժմ միայն թիթեղի կարձակեն փայլը ապօտ.
Իրենց սրտին ծաղիկներն են խամրած, ձղատ առ ձղատ,
Ճակատնե՛ր լի խորշոմով, խորշոմնե՛ր լի քրտինքով.
Արիւնոտ հաց մ'են կերեր՝ իրենց հոգին ծախելով։
Գիտեն որ այդ վաստակով պատանք մը լոկ կը ստանան.
Բախտ մ'է տակայն ունենալ կուշտ փոր մը օրը մահուան։
Հարիւր հազար են անոնք.—անոնք են որ կանգնեցին
Անմահութիւնն բուրգերուն, և խորհուրդներն սփինքսին։
Կմախներն, մարմար առ մարմար, սանդուխ եղան գահերուն՝
Ուրկէ Դենդեան ու Արքան եղան մինչև աստղերուն,
Մինչև այսօր հիմին տակ պալատներուն կը գտնես
Շուշանն անոնց կրծոտկրին, անոնց սրտերն ողջակէզ.
Անոնց արեան շաղտին են պատերը մոայլ Եբրտրդին.
Վատիկանի կամարներն, հողաթափերը Պապին
Անոնց լուսեղ քրտինքին մարգրիտներով են ծեփուած.
Անոնց խոփին նախ յանձնեց կորդ բնութիւնը՝ աստուած.
Կուռքերն անոնք դրոշեցին և նոյն անոնք զոհ եղան,
Խաչն անոնցմով ճաճանչեց, բայց ուրիշներ փրկուեցան.
Յղկեցին միշտ իրենց յաղթ ոսկորներով կարծրացած
Յաղթողներու նժոյգներուն լայնշի պայտերը արծաթ.
Փեռեկաեցան պարիսներն անոնց ուժին դէմ ռամիկ՝
Եւ հոսեցին ոսկի և արիւնի ջերմ ալիք։
Եւ մեր դարուն Յաղթութեան կամարն այսօր կը հանդչի
Հարիւր հազար բանուորի ուսերուն վրայ արճիճի։
Ու երբ այս օր եկեղով գործատունէն կը ցրուին
Կորագլուխ, մերկալանջ, անոնք նման են գերիին,
Զոր աճուրդի կը հանեն ուսնամաճառ օրերուն։
Նման գետին, որ ակէն դուրս ժայթքելով փրփրուն
Կը բաժնուի արընթաց առուակներու անհամար,

Անոնք կերթան ծաւալիլ գահերուն մէջ հազար.
Բիւրապատիկ գլուխներու անընդհատին ալիքով
Քաղաքն ամբողջ կողոզին՝ ամեն անկիւն յորդելով,
Բոլոր քաղցած են, քաղցած քոսոտած շան մը նման,
Զոր լաշնարածը հօտէն հալածեր է անպուման,
Սակայն իրենց է ինչ որ կ'իյնա կուռցէն վար ցինին,
Իրենց է խիւսը թեփին, բայց ոչ նկանն ալիւրին.
Ասնապուրներն իրենց են զոր գլխահակ կը լակեն
Ճակատներէն վար անոնց մէջ քրտինքներ հոսելէն.
Ներսած միսերն իրենց են ու բորբոսները հացին,
Զոր կը գնեն ումպ մը ջրով կրպակներէն փողոցին.
Երշիկն իրենց է, յեցած ճարպովը ծեր ջորիի,
Ցեռոյ ծխամորճը սեցած,—միակ սիրտն հոգիի։
Ահա բոլոր յոյսն անոնց, երազն անոնց փորերուն՝
Զոր կ'երազեն գործատան միջօրէի հեշտ ժամուն...

Ու կը քալեն, կը քալեն, փոշւով, կուպրով միշտ ծեփուած
Նեղ կու գան այդ ուղիներուն պողոտաներ լայնարաց։
Իրենց յորձանքը կարծես խուլ գայրոյթով կը փորէ
Դղեակներու հիմունքներն ու սալարկներն որձքարէ։
Կարծես մեռեր են Քաղքին մէջ միւս կեանքերն ինքնագոհ,
Միայն Սարսափն այդ ահեղ բանակներուն կու տայ գրոհ։
Սիրտերն հզօր կը տրոփեն, և միշտ կըլլան լսելի
Սովալլուկ կոդերու բաբախիւններ ահռելի.
Կը կճքրտին ակռաներ ու կը ծամին լեզուներ.—
Քաղքը ինքզինք կը կրծէ, գազանի պէս շաղդակեր։
Ախորժակներն աւելի դրդուած եղկ արեւէն
Կը գայրագնին, ու քարէն իսկ հացի հոտը կ'առնեն։
Դուն կը լսե՞ս, ով Ընկեր գոռներէն բիւրաւոր
Մշտաղալար փորերու խուլ ապաղակն անաւոր։
Բիրերն յանկարծ կ'ընդլայնին, և ըղեղները կ'եռան,
Կը սեղմին բռունցքներն՝ ուր կը ձուլի Ապագան։
Ճարճատիւնին ընդմէջէն կմախներու որոտագին
Աստուածային ոճիրներ կանչող ձայներ կը լսին։
Օ՜ այդ սիրտերը հսկայ, որոնց տրոփները, նման
Փոսապեղի մը բրիչին հարուածներուն, կը թնդան.
Օ՜ բազուկներն այդ սարուկ, խարանուած բորբ երկաթով,
Որոնք կարմի՛ր պիտ ըլլան օր մը դանակներ դարբնելով.
Օ՜ այդ քայլերն, որոնց բիրտ սանդալներուն հունչը գոռ
Փողոցներուն թէ երգն է, թէ մահագանգն անաւոր.
Օ՜ իրաններն այդ ռամիկ, այդ մարդակներն որոնք ցանգ
Աշխարհը վեր են բռներ ու փտեր են անոր տակ...
Ատոնք բոլոր մրրիկ են, ատոնք բոլոր կայծակ են,
Որոնք գոռան պիտի օր մ' ու Մարդկութիւնը սարսեն։
Վաղն, ով Ընկեր, պիտի այս ամբարտաւան Քաղքին վրայ

Ճայթի Ամպրոպն, ու վառէ հազար ջահերն իր հակայ.
Չի կը տեսնե՞ս գունդերն, յոյր աղիքներն անոր,
Գետնայարկերը խոնաւ, կոյուղիներն աղբաթոր.
Եւ կը տեսնե՞ս անոնց մէջ Քաղցին ճիւաղն յոգնահեռ՝
Որ բինայոյզ կը սողայ, կուշտին կը կրէ կայծակներ.
Վաղն, ով Ընկեր, ով Ընկեր, Քաղաքին վրայ այս գոռոզ
Պիտի Ամպրոպը ճայթի, վառէ ջահեր բարբարոս։

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ

Ափ մը ցորեան ափերուդ մէջ
Թող լեցընեմ, կտրիճ Որդիս,
Կտրիճ Որդիս՝ գօտին մէջքիս...
Թող մաճակալ բազուկներէդ
Քսան ցուլի արիւն անցնի,
Եւ եղնի քու հասակէդ
Քսան տունի սիւնը կանգնի.
Ու երբ թիւովը մատերուդ
Սեր՞մանես քու սերմընցուն՝
Հնձես թիւռ՞ն ասպղերուն։

Ափ մը ցորեան գլուխդ ի վար
Թող որ թափեմ, Թոռնիկ սիրած,
Թոռնիկ սիրած՝ ցուպս ծաղկած.
Թող ճակատիդ վրայ գրի
Հարիւր սաղմոս իմաստութեան,
Եւ ուսերուդ վրայ դրի
Տապանակը զգաստութեան.
Ու երբ հօտիդ օր մ՚այցելես՝
Թող քու ափիդ գարիին
Հազար ոչխար երկարին։

Ափ մը ցորեան մազերուդ մէջ
Թող որ տեղամ, վարդ Թոռնուհիս,
Վարդ Թոռնուհիս՝ պանկ շիրմիս.
Թող այտերուդ վրայ շողան
Ամէն գարուն նոր կակաչներ,
Եւ աչերուդ մէջը լողան
Ամէն ամառ նոր ճաճանչներ.
Ու երբ տնկես ճիւղ մ՚ուռիի
Ամէն ապրիլ դուն տեսնես
Իր շուքին տակ կանանչ քեզ։

Ափ մը ցորեան ծոցերուդ մէջ
Թող որ ցանեմ, Հարսըս աղուոր,
Հարսըս աղուոր՝ սէրս հեռաւոր.
Թող անկողնիդ ակօսին մէջ
Հասակ մը ծլի՝ լրման շաբթով,
Եւ օրօրած օրոցքիդ մէջ
Արշալոյսներ ննջեն փառքով,
Ու երբ կթես քառասուն երինջ՝
Դոյլերուդ մէջ մակըրդի
Կաթը՝ արծաթ, դալն՝ ոսկի։

Ափ մը ցորեան, ափ մը ցորեան
Այ՜ իմ պառաւ, այ իմ Աննա,
Մեր գլխուն ալ թող որ տեղայ.
Թող չը սառի արևն աշնան՝
Մեր մազերուն ձիւներուն մէջ,
Զը մարի՞ մեր մոմն իրիկուան
Ժամին մարմար սիւներուն մէջ՝
Ու երբ դրլինք ալ գերեզման
Մեր ներքև հողը, Աննա,
Քիչ մը կակուղ թող ըլլայ։

ՄԻՍՔ ՄԵԾԵՐԵՆՑ

(1885—1908)

1.

ԱՇՆԱՆ ԾԱՂԻԿՆԵՐ

Կը խամրին աշնան ծաղիկներ դժգոյն,
Լքուած, անտէրունչ հոգիներու պէս,
Կը ցնցի անոնց բոյրն անուշ ու վէս,
Հոգեվարք սրտի հուսկ շունչին հանգոյն։

Գոս տերևներուն հետ արագ արագ
Կը խամրին աշնան ծաղիկներ դժգոյն.
Սիրագեղ բոյրն ու թովքն իրենց հոգւոյն
Կը մեռնին, հովուն հեծքերէն վայրագ։

Արևուն վերջին ցոլքերն անշոյլ
Կը մարին գոգը ամպին մթագոյն.
Կը խամրին աշնան ծաղիկներ դժգոյն,
Օր մն ալ ձիւնէն սառելով բոյլ բոյլ։

Եւ յուզած սիրտն ալ սիրատանջ մարդուն
Անզգայութեան ձիւնին տակ, աւաղ,
Կը սառի օր մն ալ, ինչպէս որ գեղ վազ
Կը մեռնին աշնան ծաղիկներ դժգոյն։

2.

ԵԿՈՒՐ

Եկուր, սաղտկալից կեանքս խաղաղէ,
Զգալ տուր ինձի գորովանքն ու յոյս.
Պիտի գայ օր մ'որ հոգիդ աւաղէ
Երագ խուսափումն երազին այս լոյս։

Եկուր, վաղը դուն գուցէ թաքշամիս,
Եւ գուցէ տենդով մը մեռնի հոգիս,
Մի խամրեցնէր յոյզը պաշտումիս։

Թող որ նայուածքիդ ըմպեմ բոցը ջինջ,
Մօտեցիր, քնքոյշ ծաղիկը կեանքիս,
Համբոյրի մը մէջ մեռնում ամեն ինչ։

Ա՜հ, այս կեանքն ապուր որքան դանդաղ է.
Եկուր ձանձրոյթը հալեցուր հոգւոյս.
Լոյս երակի մը մէջը դիս թաղէ,
Բեր ինձի սիրոյդ պուրգուրանքը կոյս։

ԸՐԾԵԿ ՉՈՊԵՆԵՆ

(Ծնն. 1872 թ.)

1.

ԿԸ ՎԵՐԱԾՆԻ ՀՈՒՐՆ

Կը վերածնի հուրն ոչնչին արգանդէն.
Կը կարմրին կատարները լեռներուն.
Կը հագնի ծովը ծիրանի սարսռուն.
Այգուն սլաքներն են, որ գիշերը կը քանդեն։

Կը կարմրին կատարները լեռներուն.
Բոցեր կը ժայթքին երկընքին մռայլ անդունդէն.
Այգուն սլաքներն են, որ գիշերն կը քանդեն,
Պատռելով մութն ու վանելով զայն հեռուն։

Բոցեր կը ժայթքին երկընքին մռայլ
անդունդէն.
Կը ցընդի սուերն ալիքներով գալարուն։
Պատռելով մութն ու վանելով զայն հեռուն,
Արևը դուրս կը նետուի խոր իր բանտէն։

Կը ցընդի սուերն ալիքներով գալարուն.
Կարթընկայ սիւքն ու թռչուններն կը քերթեն.
Արևը դուրս կը նետուի խոր իր բանտէն.
Գաղջը պահն է. կեանքի զարթօնքն է սիրուն։

2.

ԵՂԵՐԵՐԳ

Սև ջուրերուն վրայ սև խաղեր կանչեցէք,
Սև սև խաղեր կանչեցէք, վարդ աղջիկներ.
Վարդ աղջիկներ, դուք այն կտրիճն ողբացէք,
Այն խեղճ կըտրիճը, որ կորաւ վաղամեռ։

Մըրիկը չէ որ սպաննեց դանիկա.
Զայն սպաննողը սէրն էր, սէրը վայրագ.
Սէրը վայրագ, որուն բերնին մէջ թոյն կայ,
Բերնին մէջ թոյն և աչքերուն մէջ կրակ։

Ան ալ ձեզի պէս թարմ էր ու գեղեցիկ,
Գեղեցիկ ու թարմ՝ ինչպէս այգ մը գարնան.
Գարնան այգու պէս մարեցաւ վաղանցիկ,
Անցաւ ինչպէս երազ մը խոր գիշերուան։

Անլոյս գիշեր մը, ցաւէն սիրտն ընկճուած,
Սիրտն ընկճուած, գնաց ծովուն մօտ մթին,
Գնաց ծովուն մօտ և անձայն ու անլաց,
Անլաց, անձայն նետուեցաւ ծոցը ջուրին։

Սև ջուրերուն վրայ սև խաղեր կանչեցէք,
Սև սև խաղեր կանչեցէք, վարդ աղջիկներ.
Վարդ աղջիկներ, դուք կտրիճն ողբացէք,
Այն խեղճ կտրիճը, որ կորաւ վաղամեռ։

ԵՂԵՐԵՐԳՈՒԹԻՒՆ։—ԷԼԷԳԻԱ

Եղերերգը՝ խորտակուած յոյսերի, վշտի, լքման, յուսահատ ապրումների բանաստեղծութիւն է։ Այդ կարգի զգացումներն ու խոհերը, որոնք առաջ են գալիս մտածող ու զգացող մարդու հոգում և գտնում ցայտուն արտայայտութիւն՝ երբեմն ընդունում են «համաշխարհային թախիծի» բնաւորութիւն։

Քնարական նորագոյն բանաստեղծութեան մէջ եղերերգը մեծ տեղ է բռնում։

ՏՐՏՈՒՆՋՔ

Է՜հ, մնաք բարով, աստուած և արև,
Որ կը պլպլաք իմ հոգւոյս վերև...
Աստղ մ՚ալ ես կերթամ յաւելուլ երկնից,
Աստղերն ի՞նչ են որ եթէ ոչ անբիծ
Եւ թշուառ ոգւոց անէծք ողբագին,
Որք թռին այրել ճակատն երկնքին.
Այլ այն աստուծոյն՝ շանթերու արմատ՝
Յաւելուլ զէնքերն ու զարդերն հրատ...
Այլ, ո՜հ, ի՞նչ կլսեմ... շանթահարէ զիս,
Աստուած, խոկն հսկայ փշրէ հիւլէիս՝
Որ ժպրտի ձգտիլ՝ սուղիլ խորն երկնի,
Ելնել աստղերու սանդուխքն անալի...
Ողջո՜յն քեզ, աստուած դողդոջ էակին
Շողին, փըթթին, ալւոյն ու վանկին,
Դու որ ճակտիս վարդն ու բոցն աչերուս
Խլեցիր թրթռումս շրթանց՝ թռիչն հոգւոյս,
Ամպ տուիր աչացս, հեք տուիր սրտիս,
Ըսիր մահւան դուռն ինձ պիտի ժպտիս.
Անշուշտ ինձ կեանք մը պահած ես հոքի,
Կեանք մը անհուն շողի, բոյրի աղօթքի։
Իսկ թէ կորնչի պիտի իմ հուսկ շունչ
Հոս մառախուղի մէջ համր անշշունչ.
Այժմէն թող որ շանթ մ՚ըլլամ դալկահար,
Պլլտիմ անուանդ, մոնչեմ անդադար,
Թող անէծք մ՚ըլլամ ու կողդ խրիմ,
Թող յորջորջեմ քեզ. «աստուած ոխերիմ»։

Ո՜հ, կը դողդոջեմ, դժգոյն եմ, դժգո՜յն,
Փրփրի ներքս դժոխքի մ՚հանգոյն...
Հառաչ մ՚եմ հեծող նոճերու մէջ սև,
Թափելու մօտ չոր աշնան մէկ տերև...
Ո՜հ, կայծ տուէք ինձ, կայծ տուէք ապրիմ...

Ի՜նչ, երազէ վերջ գրկել ցուրտ շիրիմ...
Այս ճակատագիր ի՜նչ սև է, աստուած,
Արդեօք դամբանի մրուրո՞վ է գծուած...
Ո՜հ, տէջ հոգւոյս կրակի մի կաթիլ,
Սիրել կուզեմ դեռ, ե՛սալրիլ ու ապրիլ։
Երկնքի աստղեր, հոգւոյս մէջ ընկէք,
Գայծ տէջ, կեանք՝ ձեր սիրահարին հէք։
Գարունն ոչ մէկ վարդ ճակտիս դալկահար.
Ո՛չ երկնի շողերն ժպիտ մ՚ինձ չեն տար.
Գիշերն միշտ դաղաղ, աստղերը ջահեր,
Լուսինն յալ կուլայ խուզարկէ վհեր.
Կըլլան մարդիկ, որ լացող մը չունին,
Անոր համար է, որ նա դրաւ լուսին։
Եւ մահամերձն ալ կուզէ երկու բան.
Նախ կեանքը, վերջը լացող մ՚իր վրան։

Իզո՞ւր գրեցին աստղերն ինձի «սէր»,
Եւ իզո՞ւր ուսոյց բուլբուլն ինձ «սիրել»,
Իզո՞ւր սիւգեր «սէր» ինձ ներշնչեցին.
Եւ զիս նորատի ցուցուց ջինջ աւին,
Իզո՞ւր թաւուտքներ լռեցին իմ շուրջ,
Գաղտնապահ տերևք չառին երբէք շունչ,
Որ չըխռովին երազքս վսեմ.
Թոյլ տուին որ միշտ գնէ երազեմ,
Եւ իզո՞ւր ծաղկունք փըթիթներ գարնան՝
Միշտ խնկարկեցին խունկանցս խորան...
Ո՜հ, նոքա ամենքը զիս ծաղրե՛ր են...
Աստուծոյ ծաղրն է աշխարհն ալ արդէն...

Պ. Դուրեան

ԻՄ ՄԱՀԸ

Եթէ դժդոյն մահու հրեշտակ
Անհուն ժպտով մ՚իջնէ իմ դէմ,
Շոգիանան ցաւքս ու հոգիս,
Գիտցէք որ դեռ կենդանի եմ։

Եթէ սընարս իմ տիպար
Մում մը վտիտ ու մահադէմ,
Ո՜հ, նշուլէ ցուրտ ճառագայթ,
Գիտցէք որ դեռ կենդանի եմ։

Եթէ ճակտովս արտօսրաղօծ
Զիս պատանի մէջ ցուրտ դէրթ վէմ
Փաթթեն գնեն սև դաղաղը,
Գիտցէք որ դեռ կենդանի եմ։

Եթէ հնչէ տխուր կոչնակ,
Թրթռուն ծիծաղն մահու դժխեմ,
Դագաղս առնէ իւր համբ քայլ,
Գիտցէք որ դեռ կենդանի եմ։

Եթէ մարդիկն այն մահերգակ,
Որք սև ունին ու խոժոռ դէմ
Համասփռեն խունկ ու աղօթք,
Գիտցէք որ դեռ կենդանի եմ։

Եթ՚ յարդարեն իմ հողակոյտ,
Եւ հեծութեամբ ու սըգալէն
Իմ սիրելիքը բաժնըւին,
Գիտցէք որ միշտ կենդանի եմ։

Իսկ անանշան եթէ մնայ
Երկրի մէկ խորշն հողակոյտն իմ,
Եւ յիշատակս ալ թառամի,
Ա՜հ, այն ատեն ես կը մեռնիմ։

Պ. Դուրեան

---

26 ԱՊՐԻԼԻ

Անպտուղ կեանքիս քսաներկու գարուն
Անցան գնացին որպէս մի վայրկեան...
Ինչու՞ ապրեցայ, ինչու՞ եմ ապրում—
Միտքս չէ կարող տալ ինձ պատասխան։

Եւ իմ մանկութեան սէրը ցնորամիտ,
Եւ անկեղծ սրտի ողեորութիւն,
Եւ քաղցր արտասուք, և ոսկէ ժպիտ,—
Ա՜խ, ո՞ւր էք, ո՞ւր է ձեր անուշութիւն։

Գիտութիւնն ինչպէս մի թոյն դանդաղկոտ
Անանկատելի վարակեց հոգիս,
Ինչպէս ցուրտ ձմեռ միտքս կասկածոտ
Քաղեց, խորտակեց ծաղիկը կեանքիս...

Իբրև երերուն եղէգն առւակում,
Տեսնում եմ պատկերս և սարսափում եմ.
Լսում եմ մարդկան երգերը արտում,
Անմիտ ու դատարկ, և տաղտկանում եմ...

Եւ երջանկութիւնս թէ անդարձ կորաւ,
Փշրւած ինչպէս տխուր փլատակ,
Թէ անհոգ տաւղի ձայնը մարեցաւ,
Եւ մնաց ինձ մօտ նրա յիշատակ։

Գոնէ սրտիցս հիմա չհեռանար
Նոր ցնորքներիս տիպար սիրելի,
Տանջւած հոգուս մէջ կենդանի մնար
Բուռն փոթորիկ ազնիւ կրքերի։

Յով. Յովհաննիսեան

ԵՐԳ

Սիրուն գարուն, կանաչ գարուն,
Քեզ ի՞նչ սրտով ողջունեմ.
Դու մեզ բերիր լաց ու արիւն—
Էլ ես ուրախ երգ չունեմ։

Երգում էի ջերմ կարօտով,
Գովքդ անում ամեն օր,
Երբ մեր երկրում քո քաղցր հոտով
Միշտ լցւած էր սար ու ձոր։

Երգում էի քնարս լարած՝
Մեր կեանքի լոյս օրերում,
Երգում էի բլբուլ դառած,
Քանի վարդ կար մեր երկրում։

Ա՜խ, ի՞նչ սրտով երգեմ հիմիկ,
Քեզ ի՞նչ սրտով ողջունեմ.
Փուշ են դառել վարդ ու ծաղիկ,
Էլ ես ուրախ երգ չունեմ։

Մեր տուն ու տեղ, հողն աւերակ,
Մեր լոյս օրեր խաւարել.
Մեր յոյսերը սև մոխրի տակ,
Մեր դարդերը ծով դառել...

Ամպ ու թուխպ է եկել, պատել
Իմ եղբօրս սև կեանքին.
Երկնքը լալուց աչքը ցաւել,
Էլ վերջ չկայ տանջանքին...

Սիրուն դարուն, կանաչ գարուն,
Քեզ ինչ սրտով ողջունեմ.
Դու մեզ բերիր լաց ու արիւն,
Էլ ես ուրախ երգ չունեմ։

Ակ. Պատուրեան

ՕՐՍ ՏՐՏՈՒՄ

Օրս տրտում, սև է անցնում,
յոյսս է վաղուան օրուան վրայ.
Վաղուան օրն էլ սև ամպի պէս
եկաւ նստաւ սրտիս վրայ.
Հիմա դարձեր, ափսոս կասեմ,
անցած օրին էրնէկ կուտամ.
Ափսոս կասեմ դալար կեանքիս,
որ շուտ ընկաւ չարքաշ ճամբայ։

Ու օրերիս քարաւանը
տխուր տրտում առաջ կերթայ.
Հազար ցաւով, մարդկանց ցաւով
ծանր բեռնած ճամբայ կերթայ.
Ա՜խ, օրերիս քարաւանը
աչքը՝ կարօտ, սիրտը՝ կարօտ,
Ու աշխարհիս ցաւով բեռնած
էս աշխարհով կանցնի, կերթայ։

Ու մի օր էլ չոր չօլի մէջ
քարաւանս կիջնի դադրած,
Վար կըդնէ մէջքի բեռը,—
կեանքս, կեանքս մոխիր դարձած.
Ա՜խ, օրերիս քարաւանը
աչքը՝ փափագ, սիրտը՝ պապակ,
Փուչ աշխարհիս ցաւով բեռնած
էս աշխարհով կանցնի կերթայ։

Քարաւանս երբ որ իջնի,
ես ինձ ու ինձ հաշիւ կանեմ,
Թէ ո՞ւր հասայ, թէ ի՞նչ տեսայ,
ինչո՞ւ եկայ էս մեծ ճամբէն.

Շատ դաղրեցայ, շատ չարչարուայ,
հաշիւ անեմ, շահս ինչ էր.
Ախր ինչու ոտ դրեցի
էս սուր ու փուշ դժար ճամբէն։

Ծովը ընկած մարդու նման
նամարդ օձից կախ ենք ընկել.—
Նամարդ օձը էս աշխարհն է,
—ու աշխարհին աչք ենք քցել.
Ա՜խ, աշխարհից մի յոյս չըկայ,
ճիճուների ենք կերակուր,
Մի բուռ հողն է բաժինը մեր՝
թէ ուէր դառնանք աշխարհին էլ։

Ա՜խ, մէրիկներ, հող պիտ դառնաք
ինչքան սրտեր հող են դարձեր,
Ազիզ սրտեր, խորունկ սրտեր
սիրով վառուեր, հող են դարձեր.
Ձեր բալէքը, ընկերներս,
Մեր սրտերէն եկան թռան,
Ա՜խ, ամենքն էլ էս աշխարհի
անգութ կամքով հող են դարձեր...

Էս աշխարհը արունքտէր է,
ոչ գութ ունի, ոչ խիղճ ունի,
Է՜հ, աշխարհն էլ ցաւող չունի,
մահացու է ու վերջ ունի.
Ու մեզի պէս հողեղէն է,
ու մեզի պէս մահկանացու.
Մեր գերեզմանն ինքն է հիմի,
ու գերեզման ինքն էլ ունի։

Հազար ափսոս ծաղկունանցը,
նազուկ լուանին,—պիտի թոռմին.
Մով ծովերը, մով սարերը
սև ծխի պէս պիտի անցնին.
Վառ արևը պիտի մարի,
դառ աստղերուն հազար ափսոս,
Հրեղէն ձին, բլբուլ, մարալ,
հէյ վախ, պիտի մեռնին, անցնին։

Թէ աշխարհը, թէ ամեն մարդ
ծնաւ—եկաւ, մեռնի— կերթայ.
Թէ անցորդ ենք, չարքաշ ճամբորդ,
երերմընի, փշի վրայ.

Ո՞ւմ հարցնենք՝ մեզի ասէ,
—Էս երազ է, թէ արթուն բան,
Որ մենք եկանք, հիմի կերթանք.
—Խաբար չըկայ, խաբար չըկայ։

Է՜յ անցաւոր ցաւի աշխարհ,
ցաւդ բարձած մէկ մէկ կերթանք.
Ինչու եկանք, ինչու կերթանք...
մեզ հարցրէք, մենք խաբար տանք.
Ցաւերու տակ մեռանք, մեռանք.
երնէկ էնոր, որ չի զգայ.
Հազար ափսոս, որ ծնուեր ենք,
չըծնուածին երնէկ կուտանք։

Ա՜խ, խոր կըզգամ, որ աշխարհում
մարդն է մենակ, որ դարդ ունի.
Մարդու վէրքը, մարդու ցաւը
ոչ տակ ունի, ոչ չափ ունի.
Է՜յ անցաւոր, անսիրտ աշխարհ,
քեզի հազար երնէկ կուտանք.
Որ չես զգայ քու մեծ վէրքը,
որ տակ չունի, որ չափ չունի։

Մեր խեղճ երգն է մենակ ճարը
անմխիթար սրտի համար.
Մեր խեղճ երգն է քու մեծ վէրքի
խոր մրմունը, ունայն աշխարհ.
Երազի պէս եկանք—կերթանք,
երազի պէս դուն էլ կերթաս.
Մարդուս կեանքն էլ ցաւիդ երգն է,
մարդս երգ է, երազ-աշխարհ...

Ա. Խաչիկեան

ԾՈՎԸ ՅՈԳՆԱԾ

Ծովը յոգնած փրփուր բերնին
Ափին ընկած կը հեւայ.
Ժեռ ափերից մէգը մթին
Ծովի վրայ կը սողայ։
Վէրքը սրտիս անքուն անտուն
Կեանքից հեռու եմ փախեր.
Կուգեմ ապրիմ վայրի ափում,—
Ապրիմ մենակ, անընկեր։

Աստղունք մէկ-մէկ ելան-բացման
Երկնի փէրուզ—աթոռքում.
Աստղերի պէս երգերս ելան
Հոգուս մռայլ խորքերում։
Սրտիս լարերն տրտում-տրտունջ
Կեանքս թոշնած՝ երգեցին.
Հովը հեաց մունջ ու մրմունջ,
Աստղունք վրաս լուռ լացին։

Ամպերն ընկան ծովի վրէն
Հազար բերնով ջուր խմին,
Թռաւ որորն խոլոր ծովէն,
Ծուաց, նստաւ Թուխ քարին.
—Ես էլ քեզ պէս, մենիկ որոր,
Աչքերս՝ արցունք ու տրտում.
Կը Թափառեմ ոլոր-մոլոր
Կեանքի հեռու ափերում...

Աւ. Իսահակեան

ԹԱՓՈՒԵՑԻՆ ՏԵՐԵՒՆԵՐԸ

Թափուեցին տերևներն դժգոյն ծառերից,—
Թօշնած ու դալուկ.
Թափուեցին երգերս ջարդուած սրտից,—
Լալուկ ու Թալուկ։
Թափուեցին աստղերն անհուն երկնքից,—
Տխուր ու անփայլ,
—Թափուեցէք, արցունքներս, սրտիս խորքերից
անյոյս ու մռայլ...

Աւ. Իսահակեան

ՀԱՏՈՒԱԾ

Յոգնատանջ սրտով նստեցի մենակ
Աշխարհում աղօտ,
Անյայտ կողմերի մութ ճանապարհին,
Աւեր շէնքերի մոխիրների մօտ,
Աշնան օրերի գունատ մահացող
Ծաղիկների մէջ, ցուրտ հողի վրայ,
Ծանր երկնքի տաղտկօրէն լացող
Անձրևների տակ.—
Մոռացայ բոլոր հոգսերն առօրեայ,
Ցանկութիւններս ապարդիւն ու սին,
Անմիտ ու ունայն տենչերիս ուղին,
Սուտ վարդերն ու սուր փշերը նրա
Անպարծ մոռացայ...
Եւ խաւարն անհուն, գիշերն անթափանց
Իր լայն թևերը փռեց ինձ վրայ...

Լուսեղէն և սուրբ սիրոյ երազը
Աւարշտին կեանքում
Եւ երջանկութեան ցնորքներս հին,
Եւ տառապանքի գիշերներն անքուն
Իմ սրտին ընդմիշտ օտար թւացին,
Օտար թւացին...
Եւ չը կար ոչինչ, որ սիրտս դիւթէր.—
Ոչ սիրոյ կարօտ, ոչ բախտի ծարաւ.
Ոչ հարստութեան և մեծութեան քեռ,
Ոչ ապարդիւն փառք և ոչ փայփայող
Ու սրբազան ցաւ—
Զարշարանքի և ինքնազոհութեան։

Եւ այնպէս անգոյն, անմիտ, ապարդիւն
Տաղտկալի և սին
Թւաց ամեն ինչ աշխարհում անհուն,
Եւ ամենքն ընդմիշտ օտար թւացին
Եւ անդարձ հեռու...
Քար էր իմ սրտում և ծանր և ցուրտ,
Եւ աշխարհն էր քար՝ սառն ու անխորհուրդ...
Երկինքն էր լալիս պաղ արցունքներով,
Լալիս էի ես մերժւած ու խռով,
Եւ ցուրտ աշխարհում
Ինքս իմ սրտին հարազատ չէի—
Ու ծաղը էր թւում հեկեկանքս շոր...

Ես լալիս էի,
Բայց օտարի պէս էի ունկնդրում
Ինքս իմ հոգուն, ինքս իմ լացին...
Ու մութ էր շուրջս և խաւար անհուն,—
Իմ խաբւած սրտում՝ մթամած գիշեր,
Եւ պաղ և ծանր, ծանր, որպէս քար
Եւ տաղտկութեամբ լի և անվերջ երկար,
Անծիր ու անհուն—
Ու ոչ մի հեռում լոյս չէի փնտրում...
Եւ համր էր ընդմիշտ աշխարհն ինձ համար—
Եւ օտար և մութ.—
Ես ընկած էի անզօր ու մոլոր
Եւ յաւէտ մենակ և անդարձ մենակ,
Անանուն, անյայտ, անծանօթ հեռում...

Ո՞վ ազատութիւն յաւիտենական,
Մահ, ՀՀնջացին շուրթերս տկար,
Եւ այդ ՀՀուկը դառը չը թւաց.
Գրկեցի հոգը մի ցուրտ ցանկութեամբ,

Եւ նա իմ առաջ բացեց իր գիրկը
Անսուտ գգւանքով.
Եւ գերեզմանի խորշը ցրտաշունչ
Անուշ թւաց ինձ,
Որպէս մայրական գիրկը սրտամոր
Պայծառ օրերում,
Որպէս հեռաւոր երկրում մոռացւած,
Մայրական երգի սիրով օրօրող
Թովիչ օրօրան...
Մահ, շշնջացի, և սիրտս նրան
Ընդունեց սիրով, որպէս գթառատ
Հեկեկանքը մօր նուրբ կարեկցութեան.
Եւ հեռացայ ես ու հեռացայ ես
Մի անյայտ կամքի զօրութեամբ անուշ
Հեռուն ու հեռուն.—
Ողջը մոռացայ օտար աշխարհում,
Անդարձ աշխարհում...

Ու խաւարն անհուն գգւանքով թեթև
Ծաւալւեց շուրջս ու փուեց վրաս,
Եւ կեանքս բոլոր մի երկարատև
Ինչ թւաց հոգուս, մի տխուր երազ,—
Նրբին մի համբոյր հեռու օրերում,
Մանկական մի երգ, որ չունի անուն
Որ չունի անուն..
Ինձ անեղ թւաց տխրութիւնս նոր,
Կարծես մի վերին և նուրբ հրաշքով
Լուսացաւ իմ մէջ առաւօտն անհուն—
Ու թեթև թւաց կեանքս երկրային
Որպէս առւակը սարերից իջնող,
Որպէս ամպերի շարքը ոսկեղէն
Գարնան արևող երկնքում չւող...
Ու թւաց յանկարծ, որ չը կան, չը կան
Անցեալն, ապագան...
Թւաց որ մի սիրտ իմ վիշտն է գգւում,
Հանգիստ է ասում բոլոր յոյզերին,
Բոլոր յոյսերին օրօր է ասում,
Օրօր է ասում,
Բաբախուն սիրտս գրկել է ուզում,
Գգւել է ուզում
Անխաբ խնդութեան ոսկէ երազում...

Թւաց, որ մէկը իմ ցաւն է երգում,
Իմ լացն է լսում,
Իմ լռութիւնն է գգւում իր գրկում.

Եւ իր մեծ հոգում,
Իր անհուն հոգում՝
Իմ սրտից խորն է թախիծս զգում...

Ճիշ հանեցի ես սիրով լուսեղէն,
Աղաղակեցի օրհներգու ձայնով,
Սիրտս նետեցի քարին ու ջրին,
Խառնեցի հոգիս աստղերի երգին,
Պարզեցի կեանքս պարզ ու խնդագին
Յաւիտենութեան,
Յաւիտենութեան...

Վ. Տէրեան

ԱՇՆԱՆ ՏՐՏՄՈՒԹԻՒՆ

Կրկին իմ հոգում
Իջաւ մշուշոտ, արցունք անձրևող
Տրտում իրիկուն.
Իմ սրտում անցաւ
Մահացող ծաղկանց բոյրը ցաւ
բերող,
Համբոյրը խոնաւ.
Կրկին պաղ միգում
Ամպոտ երկինքը մեռած լոյսերի
Թաղումն է ագում։
Հողմը սրարշաւ
Հոգուս դալկացած ծաղիկ յոյսերի
Թերթերը տարաւ...

Անջատման ցաւոտ
Ձայներ ոռոգացին ու հեզ դալ-
կացան
Հեռուում անծանօթ.
Կրակներն անձայն
Լացող ամպերի միջում անսահման
Թոշնեցին, անցան...
Անձրև անընդհատ
Մաղում է վհատ թաղումի
կոծով,—
Իմ հոգու մէջ էլ
Աշուն է իջել անամոք լացով,
Իմ հոգու մէջ էլ...

Վ. Տէրեան

ՍԵՆԵԱԿՍ

Սենեակս ունայն
Քնել՝ շիրմի պէս,
Արթուն ենք միայն
Ժամացոյցն ու ես։
Եւ սա իր մուրճով
Ծեծում է երկար,
Տաշում իր ոճով
Մի սառ շիրմաքար։
Ա՛խ, տաշում է նա,
Որ դնի հանգիստ
Իմ կեանքիս վրայ,
Իմ անուշ կեանքիս։

Դ. Դեմիրճեան

ԳԻՇԵՐ Է

Գիշեր է, չար բու՝
Իմ գլխիս վերև.
Դանդաղ, ձանձրալի
Մաղում է անձրև։

Զարթնել եմ, լսում,
Լսում... բայց ինչու.
Էլ ո՞ւմ եմ սպասում,
Էլ ի՞նչ է գալու։

Ինձ համար ոչինչ
Էլ գալու չը կայ
Այս տխուր, աշուն
Աշխարհիս վրայ։

Մաղում է անձրև,
Վերջ չունի, երբէք.
Ցաւեր է հաշւում,
Բիւր ցաւեր մէկ-մէկ։

Դ. Դեմիրճեան

ՄԻ ԴԱՏԱՐԿ ՍԵՆԵԱԿ

Մի դատարկ սենեակ,
Ես մէջը մենակ...
Ինչպէս մի անուրջ յանկարծ եկար ներս՝
Մի երգ շրթունքիդ անուշ աղբրի պէս,
Աչերդ լցւած ծիծաղ ու եղեմ,—
Գարուն իմ աղջիկ, աշուն սիրտս դէմ։

Դեռ խակ թևիդ մէջ մի փունջ խտտած,
Բազեղ գանգուրով ճակատդ պատած
Եւ պարզ աչերումդ այնքան հոգի կար՝
Անունդ տուի... բայց դու լուռ հանգար։
Մի դատարկ սենեակ
Ես մէջը մենակ...

Դ. Դեմիրճեան

ԼՔՈՒՄ

Կորիցէ օրն յորում ես ծնայ։

Յովբ.

Իրիկուն է. մեր տան դրան առջևի
Պարտէզին մէջ բարտիներուն ստուերներն
Անհունօրէն կերկարին։
Իրիկուն է. այնտեղ մենակ և տրտում
Ջրհորին եզրն արմբկած՝
Վար կը նայիմ, կը նայիմ խորն և կու լամ։

Ներսը տան մէջ հանդարտաւէտ երգելով՝
Հանիւս հետ մայրս խաղող կը կոխէ,
Ու եղբայրներս իր չորս դին
Ողկոյզներուն բոյրէն արբշիռ
կը կայտռեն...
Ոչ ոք, ոչ ոք գիտէ վիշտն
Որ թոքերուս մէջ գերտ խաշխաշ
թունաբեր
Արագորէն կուռճանայ.
Ոչ ոք գիտէ թէ ինչ կերպ
Ցուահատութիւն օրէ օր զիս մահուան հետ
Կընտելացնէ, թէ կերթամ ինչ ճամբայով
Կեանքիս մոխիրն ես իմ ափին մէջ
կշռել.—
Մահկանացու նայուածքներու վարագոյր
Պիտի ըլլայ սարդի ոստայնը՝ զոր ես
Լռութեամբս հոգւոյս աւերին վրայ
կը հիւսեմ։
Դու գիտես լոկ ճակատագիրս ահաւոր,
Ո՜վ լուսնկայ ուրուադէմ,
Որ հորին մէջ տրտմաթախիծ կը ժպտիս
Եւ զիս քեզի կը կանչես.

Դու գիտես լոկ թէ ինչ հոգով թունաւոր
Թրծուած է բաժակն այն՝
Որով կեանքս ես խմելու եմ սահմանուած.
Ու կը խոկաս բախտիս վրայ, կը գթաս.
Ուրաքանչիւր շիթն արցունքիս՝ որ կիյնայ
Խորութեան մէջ ջրհորին՝
Կայլայլէ դէմքդ ու հառաչել կուտայ քեզ։
Կանուխ է դեռ. իմ ձեռքերս իմ արեան մէջ
Թաթխելու դեռ կանուխ է։
Երբ շիրմաբոյը իմ գոյութեանս կարօտ
Սքտերուն մէջ, սրտերուն հետ նախ մեռնիմ.
Եւ յանձնեմ քնարս աստուածներուն ոլիմպեան,
Որ կը դարձնէ դեռ հաճոյ
Իմ կեանքս ուրիշ արեգնամոլ կեանքերու.
Երբ յոյսի Ուղտն, ալ խոնջ, ծալլէ
ծունկերն իր
Անապատին մէջ օրերուս անծաղիկ,
Այն ժամանակ, մտերիմ հոր,
Ամեն անոնք՝ որ ինձ դափնի կը քաղեն,
Պէտք է դառնան, թող դառնան
Քու եզերդ շուրջ մեռելապանակս հիւսել.
Քանզի այն օրն, անիծելով հայրական

Համբոյրը կոյր՝ որ եղաւ
Իմ սև սերմիս առաջնորդ,
Ես պիտի գամ դարձեալ քեզ.
Լուսապայծառ, նիրանական ջրերուդ,
Ուր ճակատէն կը արբուի արևուն
Խարանը պիղծ, կը լացուի ամեն տարր
Ու ամեն յօդ կը յաղթուի, կը թողու
Հոգին ազատ, հոգին մաքուր, մտնելու
Գիրկն հանգստրան։—Ես պիտի գամ
դարձեալ քեզ,
Այսպէս խաղաղ իրիկուն մ'երբ տնակին մէջ
Մայրս կերգէ, զբաղած։
Մահուան սատանիկ ծարաւէն,
Զը դնելով ուշ եզերքիդ բաղեղին
Որ գթութեամբը պիտի կառչի
քղանցքիս,
Պիտի նետեմ մարմին այս խոնջ
կարիվէր
Խորհուրդիդ մէջ... իմ յետին ճիչս
օրհասի
Խորութեան մէջ դարձդարձիկ
Պիտի գանգիւն տայ քարերուդ միջև թուխ,
Որուն ի լուր՝ մերձակայ
Դոնէն մայրս իմ լեղապատառ պիտ վազէ.
Բայց քնացած ալիքներդ այդ պիտ դարթնուն
Եւ գիս ընդհուպ ընկլուզեն.
Յետոյ իրենց սովորական պշնումով
Ադէտաւոր գահավիժման ամեն հետք
Պիտի ջնջեն. լռութիւնն իր պատուած
Պատանքը վրաս պիտի հիւսէ վերստին
Եւ լուսնկան (որ պիտ փշրի անկումէս
Ծնունդ տալով հազարաւոր աստղերու)
Յետոյ դարձեալ խաղաղիկ
Պիտի առնէ նախկին ձևն իր. պիտ ըլլայ
Ջուրերուդ վրայ իմ անձնասպան հոգիէս
Բողբոջած մեծ արիւնլայ նունուֆար
Որուն արմատն ոչ ոք գիտէ թէ ուր է։

Դ. Վարուժան

ԱՐՑՈՒՆՔՆԵՐՍ

Եւ մաքրաթև երազիս հետ մենակ էի հովիտներուն մէջ հայրենի,
Քայլերս էին թեթև ինչպէս քայլերը խարտիշագեղ եղնիկին,
Եւ զարթուքեամբ կը վազէի կապոյտէն և օրերէն բոլորովին գինով,
Աչքերս ոսկիով և յոյսով՝ և հոգիս աստուածներով լեցուն...

Եւ ահա բարեբեր Ամառն իր պտուղները զամբիւղ առ զամբիւղ
Մեր պարտէզին ծառերէն դէպի հողը և դէպի գիս կը նծայէր,
Եւ ես լուքեամբ՝ գեղուղէշ ուռիին ներդաշնակ հասակէն,
Երգերս ստեղծելու համար խորհրդաւոր սրինգիս ճիւղ կը կտրէի...

Կերգէի... Ադամանդեայ առուակն և թռչունները հայրենագեղ.
Աստուածային աղբիւրներն յատակահոս մեղեդիներն անդադրում,
Եւ առաւօտեան զեփիւռը, քրոջական գորովներու անչափ նման,
Այս բոլորը իմ երջանիկ երգերուս թոթովումին կը ձայնակցէին...

Այս գիշեր երազիս մէջ ձեռքս առի զքեզ, ով բաղցրախօս Սրինգ.
Շրթունքներս զքեզ ճանչցան՝ ինչպէս համբոյր մը հին օրերու,
Բայց շունչս՝ յիշատակներու զարթնումէն յանկարծօրէն մեռաւ,
Եւ երգիս տեղ՝ շիթ առ շիթ, շիթ առ շիթ արցունքներս էին որ
ինկան վար...

Սիամանթօ

ՔՈՒՆ

Ցուրտ աշուն մը սարսռագին
Կը հևայ իմ հոգւոյս մէջ.
Կիջնէ գիշերը. կեանքին
Գիրքը կուլայ էջ առ էջ։

Սրսփանքներ տենդագին,
Ու հծծիւններ հիւանդոտ
Հոն կը յածին, կը յանգին
Եղերերգի մը տենդոտ։

Ու,—ձիւնապատ հէք քնար,—
Իմ վէս սիրտս կը լռէ,
Ու հոն հեծքն ալ չի մնար.
Լոկ սարսուռն հոն կը բերէ։

Իր վիշտերէ խօլական.
Ու տենչանքիս իմ հիւանդ՝
Ծաղիկները ալ չը կան,
Չը կան անոնց բոյրն ու խանդ...

Միսաք Մեծարենց

ՄԱՐԳԱՐԷ

Այն օրից, երբ տէրն յաւէրժ, երկնաւոր
Ինձ մարգարէի պարգևեց շնորհ,
Ես խոր կարդում եմ, կարդում էջ առ էջ,
Արատ ու չարիք մարդկանց աչքի մէջ։
Ես սկսեցի քարոզել մարդկան
Ե՛ւ սէր, և՛ ուսմունք սուրբ ճշմարտութեան.
Բայց զինուած իմ դէմ իմ մերձաւորներ
Մոլեգին վրաս նետեցին քարեր։
Մոխիր ցանեցի գլխիս—ու աղքատ՝
Էս քաղաքներից փախայ անապատ.
Այնտեղ ապրում եմ գոհունակ կեանքով,
Որպէս թռչուններ—տիրող բարիքով։
Այնտեղ բարձրեալի պատուէրը պահած,
Ինձ խոնարհւում է ամեն արարած.
Այնտեղ և աստղեր եթերի միջից
Խնդագին փայլով ունկնդիր են ինձ։
Բայց երբ անցնում եմ արագ քայլերով
Ես աղմկալից քաղաքի միջով,
Ցոյց տալով վրաս՝ ինքնասէր, սիգանց
Ծպտում են ծերերն ու ասում մանկանց.
«Նայեցէք, ահա ձեզ լաւ օրինակ,
Գոռոզ էր. մեզ հետ չը վարեց հաշտ կեանք.
Անմիտն ուզում էր համոզել մարդկանց,
Որ նրա լեզուով խօսում է աստուած։
Նայեցէք, որդիք, դուք նրա վրա,
Ինչպէս և՛ մռայլ, և գունատ է նա,
Ինչպէս նիհար է, մերկ, անօգնականն,
Ինչպէս ամենքն էլ ատում են նրանց։

Լերմոնտով

ՆԱՒԱՍԱՐԴԻՆ

Հանճարդ հայկեան, Նաւասարդեան սա տօներուն
Արևափառ՝
Ա՛լ վերածնէ փլատակներէն, և փառագոչ
Քնարդ ահա։
Ցանո՛ւն ոյժին, յանո՛ւն գեղին, մտիր մեհեանն
Աստուածներուն.
Զահը ձեռքիդ՝ բազնէ բազին համասփռէ
Հուր ու արիւն։
Եւ բարձրացուր Անահիտի ծիծերն ի վեր
Բաժակդ նուռ,

Ցետոյ զոհուող քերթողներուն սիրտին վրայ
Լեցո՜ւր, լեցո՜ւր։
Զի մենք յանուն սէրին, սերմին, քու հին ցեղիդ
Մարմարէն կոյս,
Մենք՝ զաւակներդ օգոստափառ պիտի կերտենք
Նոր արշալոյս։

Դ. Վարուժան

ԵՂԵԳՆԵԱՅ ԳՐՉՈՎ

Եղեգնեայ գրչով երգեցի փառքեր.
— Քեզի ընծա՜, իմ հայրենիք —
Սօսեաց անտառէն էի զայն կտրեր...
Քեզի ընծա՜յ, հին հայրենիք —
Եղեգնեայ գրչով երգեցի քուրմեր.
Ընդ եղեգան փող՝ լոյս ելանէր։

Եղեգնեայ գրչով երգեցի կարօտ.
— Քեզի ընծա՜յ, հա՛յ պանդուխտներ —
Ան տարաշխարհիկ բոյսի մ՚ էր ծլչօտ...
— Քեզի ընծա՜յ, հէ՛ք պանդուխտներ —
Եղեգնեայ գրչով երգեցի հարսեր.
Ընդ եղեգան փող՝ ողբ ելանէր։

Եղեգնեայ գրչով երգեցի արիւն.
— Քեզի ընծա՜յ, սո՛ւրբ զոհեր —
Ան ծլած էր մոխրի մէջ իբրև կնիւն...
— Քեզի ընծա՜յ, կրակի՛ զոհեր —
Եղեգնեայ գրչով երգեցի վէրքեր.
Ընդ եղեգան փող՝ սիրտս ելանէր։

Եղեգնեայ գրչով որբ տունս երգեցի.
— Քեզի ընծա՜յ, հա՛յր ալեհեր —
Ցամքած աղբիւրէն մեր զայն յօտեցի...
— Քեզի ընծա՜յ, մա՛յր կարեվէր —
Եղեգնեայ գրչով օճախս երգեցի.
Ընդ եղեգան փող՝ ծուխ ելանէր։

Դ. Վարուժան

ԱՐՁԱԿ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

1.

«Ի՜ՆՉ ԳԵՂԵՑԻԿ, Ի՜ՆՉ ԹԱՐՄ ԷԻՆ ՎԱՐԴԵՐԸ»

Տուրգենեւ

Վաղուց, շատ վաղուց, տարիներ առաջ, մի ինչ որ տեղ ես կարդացել եմ մէկ ոտանաւոր։ Ամբողջը մոռացուեց... բայց առաջին տողը մնաց յիշողութեանս մէջ.

«Ի՜նչ գեղեցիկ, ի՜նչ թարմ էին վարդերը...»

Այժմ ձիւն-ձմեռ է, սառնամանիքը եղեամի շերտով ծածկել է ապակիները լուսամուտների. մութ սենեակիս մէջ վառուում է մի հատիկ մոմը։ Ես նստած եմ՝ անկիւնում փակուած, իսկ ականջիս հնչում է միալար, անվերջ.

«Ի՜նչ գեղեցիկ, ի՜նչ թարմ էին վարդերը...»

Եւ քաղաքից դուրս, ռուսական մի տան ցածր լուսամուտի հանդէպ կանգնած եմ ես։ Ամարային երեկոն մեղմիւ հալչում է ու գիշերը վրայ հասնում. ջերմ օդի մէջ յափրուկի և լորենու բոյրն է տարածուած։— Իսկ լուսամուտին, կոթնած ձեռների վրայ ու գլխահակ՝ նստած է աղջիկը և անշշունջ ու ակնդէտ նայում երկնքին, կարծես առաջին աստղերի յայտնելուն սպասելով։ Ո՜րքան միամիտ ոգեւորութիւն են. արտայայտում խելացի աչքերը, ի՜նչ սրտառուչ անմեղութեամբ են բացուած նրա հարցական շրթները, ի՜նչ կանոնաւոր է շնչում նրա դեռ բոլորովին չը փքթած ու դեռ ոչնչով չը յուզուած կուրծքը, ո՜րքան անարատ, քնքուշ է նրա մանկական դէմքի արտայայտութիւնը։ Ես չեմ յանդգնում խօսել նրա հետ, բայց և ինձ համար ի՜նչքան թանկ է նա, ի՜նչպէս ուժգին է բաբախում սիրտս։

«Ի՜նչ գեղեցիկ, ի՜նչ թարմ էին վարդերը...»

Իսկ սենեակիս մէջ խաւարը թանձրանում է ու թանձրանում... ճրթճրթում է մոմը, թեթեւ սուերները տարուբերուում են ցածր առաստաղի վրայ, սառնամանիքը ճռնչում ու մոլեգնում է պատի յետեւը— կարծես լսում եմ անցած-գնացած տապտակալի շշունջը...

«Ի՜նչ գեղեցիկ, ի՜նչ թարմ էին վարդերը...»

Երևում են առջևս ուրիշ պատկերներ... Լուռում է ընտանեկան, գեղջուկ կեանքի զարթ ադմուկը։ Երկու խարտեաշ, փոքրիկ գլուխներ՝ յենուած իրարու՝ համաբձակ կերպով նայում են վրա՝ իրենց լուսաւոր-պայծառ աչքերով, բաց կարմիր այտերը թրթռում են գոգուած ծիծաղով, ձեռները ընդշօրէն հիւսւում են իրար, նորից նորմէկանց հնչում են մատաղ, ախորժ ձայները։ Իսկ փոքր ինչ հեռու, ամփոփ ու յարմար սենեակի խորքում, նոյնպէս գեղատի ձեռներ՝ անվարժ մատներով սահում են հին դաշնամուրի ստեղների վրայ, և Լամներովեան վայրկան անդօր է խլացնել նահապետական հեշտանոի ջրլիջրլիթոց-թանչոցը...

«Ի՜նչ գեղեցիկ, ի՜նչ թարմ էին վարդերը...»

Մոմը պլպլալում է ու հանգչում... Այդ ո՞վ է այնտեղ հազում այդպէս խուլ-խռպոտ ձայնով։ Պառաւած շունչ է՝ իմ միակ ընկերը, սեղմուում է ու ցնցուում՝ կծկուած ոտներիս մօտ... Ցուրտ է... մրսում եմ... և նրանք մեռան... ամենքը մեռան...

«Ի՜նչ գեղեցիկ, ի՜նչ թարմ էին վարդերը...»։

ԾԵՄՔԸ

Տուրգենեւ

Տեսնում եմ ահա մի վիթխարի շէնք։ Առջևի պատին գտնուած նեղ դուռն ամբողջովին բացուած է, և դռան յետևը թանձր մառախուղ։

Բարձր շեմքի առաջ կանգնած է աղջիկը... ռուս աղջիկը։ Սառնամանիք է շնչում այդ անթափանց մառախուղը և ցրտաշունչ հոսանքի հետ խորքից հասնում է յամր ու խուլ մի ձայն.

«Օ՜, դու, ինչո՞ւ ես ուզում այդ շեմքն անցնել. գիտե՞ս արդեօք ի՞նչ է սպառնում քեզ»։

— Գիտեմ, պատասխանում է աղջիկը.

«Ցուրտ, քաղց, ատելութիւն, ծաղր, արհամարհանք, վիրաւորանք, բանտ, հիւանդութիւն և անգամ մահ.

— Գիտեմ... Ես պատրաստ եմ։ Պատրաստ եմ կրելու բոլոր տանջանքները, բոլոր հարուածները։

«Ո՛չ միայն թշնամիներից, այլև հարազատներից, ընկերներից»։

— Այո... և՛ նրանցից։

«Լաւ. դու պատրաստ ես զոհաբերութեան»։

— Այո։

«Անորոշ զոհաբերութեան։ Դու կը խորտակուես,—և ո՞չ ոք... ո՞չ ոք չի դիտնալ, թէ ո՞ւմ յիշատակն է ինքը յարգելու»։

— Ինձ հարկաւոր չէ՝ ոչ երախտիք, ոչ գաւակցութիւն։ Ինձ պէտք չէ անուն։

«Պատրաստ ես արդեօք յանցագործութեան»։

Աղջիկն իր գլուխը խոնարհեց գետին.

— Պատրաստ եմ նաև յանցագործութեան...

Փոքր ինչ յետոյ ձայնը վերսկսեց իր հարցումները։

«Գիտես արդեօք,—վրա բերաւ նա կախարդիչ տոնով,—որ դու կարող ես համոզումդ փոխել այն բանի հանդէպ, որին ներկայումս հաւատ ես ընծայում, կարող ես ըմբռնել, որ խաբուել ես և գեռատի կեանքդ իզուր խորտակել»։

— Ես այդ էլ գիտեմ. բայց և այնպէս ուզում եմ մոռնալ։

«Մտիր»։

Աղջիկը շեմքն անցաւ—և ծանր վարագոյրն ընկաւ յետևից։

— «Յիմար», ասաց մէկը նրա ետքից՝ ատամները կրճատացնելով։

— «Անբիծ», լսեց ինչ որ մի տեղից իբրև պատասխան։

3.

ՄԲՐԿԱՀԱՒԻ ԵՐԳԸ

Մախիտ Դորկի

Ծովի սպիտակաւուն հարթութեան վրայ մբրիկն ահա ամպեր է դիզում։ Եւ մբրկահաւը՝ նման սև շանթի՝ հպարտ ճախրում է ծով ու ամպի մէջ։

Մերթ ալիքներին թեւը բախելով, մերթ որպէս ոլաք դէպի ամպերը թռիչք գործելով, ճչում է հաւը,—և ամպերը վերից հրճուանք են լսում թռչունի յանդուգն, խիզախ կանչի մէջ։

Այդ կանչի մէջ է մբրկի տենչանքը։ Թափը ցասումի, հուրն ըղձանքի ու երաշխիքը գալոց յաղթութեան՝ այդ կանչի մէջ են լսում ամպերը։

Ձայները հեծում են մբրկից առաջ,—հեծում, սլանում են ծովի վրայով և նրա խորքում պատրաստ են թաղել իրենց սարսափը մբրկից առաջ։

Հեծում են նոյնպէս և ջրասուզակները, որոնց խորթ է ու անհասանելի կուռով վաստակած կեանքի հաճոյքը, շանթ ու որոտից սարսում են նրանք...

Տխմար թեւաւոր երկիւղով բռնուած՝ խութերի մէջ է իր դէր ու ճարպուտ մարմինը թաքցնում...

Միայն վէս, հպարտ Մբրկահաւն է ճախրում համարձակ ու խիզախօրէն՝ փրփրադէզ, ճերմակ ջրերի վրայ։

Ամպերը նախկինից աւելի մռայլ ու մթնշաղ դէպի ցած՝ ծովի վրայ

են կախ ընկնում, դիզում, և ալիքները երգով, շուրջպարով դէպի վեր ձգտում՝ շանթ ու որոտին ընդառաջելու։

Ճայթում է ամպրոպը։ Ցասման փրփուրի մէջ հնծում են ալիքները հոդմի հետ։ Մրրիկն ուժգին գրկախառնումով անա որսում է երամն ալիքի ու մոլեգնօրէն ահարկու թափով շպրտում նրանց ժայռերի վրայ, ուր գերթ մանրամասն փոշու, ցնցուղի է փոխում, փոխարկում զմրուխտի շեղջեր։

Մրրկահաւը՝ նման սև շանթի՝ ճախրում է կանչով և որպէս սլաք՝ ճեղքում է ամպերն ու իր թևերով փրփուր է կորզում։

Եւ նա խելայեղ անա տարուում է՝ որպէս չար ոգի,—հպարտ, սէւաթոյր, մրրկի ոգի,—և քրքջում է, և հնծեծում է... Ամպերի վրայ նա հրհռում է, անհուն բերկրանքից նա հնծեծում է։

Շանթ ու որոտի ցասման մէջ վաղուց՝ զգաստ ոգու պէս՝ խոնջանք է լսում. նա համոզուած է, որ չեն բողարկի ամպերն արևին, ոչ չեն բողարկի։

Հոդմը ոռնում է, ամպրոպը ճայթում... Կապոյտ բոցերով հուրհրատում են ամպի երամները ծովի անյատակ անդունդի վրայ։ Ծովը որսում է շանթի սլաքներն ու իր յորձանքում հանգցնում նրանց։ Այդ որոտների արտացոլումներն՝ իբրև հուր օձեր՝ շողում են ծովում, անհետ կորչելով։

— Մրրիկ, շուտով մրրիկ կը պայթէ ասատիկ։

Դա խիզախ ու վէտ Մրրկահաւն է հպարտ ճախր առնում ցասկոտ ոռնացող ծովի երեսին ցիր ու ցան եղած շանթերի միջև. և յաղթանակի Մարգարէն անա կանչում է, գոչում.

— Փոթորիկն ահեղ թող ուժգին պայթէ։

4.

ԲԱՋԷԻ ԵՐԳԸ

Մաքսիմ Գորկի

Ա.

Բարձրաբերձ սարերն ի վեր սողաց Իժը ու փուեց այնտեղ խոնաւ կիրճի մէջ և կծիկ դարձած՝ դիտում էր ծովը։

Բարձր երկնակամարի վրայ փայլում էր արևը, ու լեռները տոթագին շնչում էին երկինքն ի վեր, և ցածրում ալիքները զարնուում էին ամրակուռ քարին...

Եւ ձորակով, խաւարի ու ցնցուղի մէջ, հեղեղատն ընդառաջում էր, նետուում դէպի ծով, քարերի բաշից թռիչք գործելով։

Գլխովին ճերմակ փրփուրի փոխուած, ալեզարդ-հուժկու, ճեղքում էր սարը և ծովը թափում՝ ցասկոտ կականով։

Ցանկարծ այդ նոյն կիրճը, ուր Իժը կուտապուեց, երկնից գահավէժ վայր ընկաւ Բազէն՝ փշրուած կրծքով, արիւնաշաղախ թևերի վրայ. . .

Կարճատև կանչով նա ընկաւ գետին, անզօր ցասման մէջ՝ կրծքով զարնուեց ապառաժ քարին...

Իժը զարհուրեց. յետ սոզաց շտապ, բայց շուտ ըմբռնեց, որ թռչնի կեանքը կը տևէ միայն մէկ-երկու վայրկեան...

Նա սոզաց մօտիկ վիրաւոր թռչնին և շաչեց ուղիղ նրա աչքի մէջ.

— Մեռնո՞ւմ ես, ինչ է։

— Այո, մեռնո՞ւմ եմ,—շշնջաց Բազէն՝ խոր հառաչանքով։—Ես ապրեցի փառաւոր կեանքով... Ես ըմբռնում եմ երջանկութիւնը... Ես մաքառեցի խիզախ-անվհատ... Տեսայ երկինքը... Իսկ դու չես տեսնի նրան մօտիկից... Ա՜յ թշուառական։

— Բայց ինչ է երկինքը... Դատարկութիւն... Ես ինչպէս սոզամ դատարկութեան մէջ։ Այստեղ ինձ համար հրաշալի է... և՛ տաք և՛ խոնաւ։

Այդպէս առարկեց Իժն ազատ թռչնին և խնդաց իր մէջ Բազէի վրայ՝ նրա խենթ-խելառ մտքերի համար։

Եւ մտածում էր. «Թուչես թէ սոզաս, վերջն ակնյայտ է. ամենքն էլ պիտի գետին անցնեն, ամեն ինչ նորէն փոշի պիտ դառնայ»...

Բայց արի Բազէն յանկարծ ցնցուեց. բարձրացաւ փոքր ինչ և աչքը կիրճի շորս դին շուռ ածեց։

Մոխրաւուն ժայռից ջուրն էր սոզոսկում, և հեղձուցիչ էր մթին ձորի մէջ, ուր տարածուած էր գարշահոտութիւն։

Եւ ճչաց Բազէն անձկակարօտ ու կսկծագին, ճիգ գործ դնելով։

— Օ՜, թէ որ գէթ մէկ էլ ես կարենայի երկինք բարձրանալ.... կրծքիս վէրքերուն կը սեղմէի ես իմ ախոյեանին... և նա կը խեղդուէր արիւնուս անշուշտ։

— Օ՜, երջանկութիւն կուի-պայքարի։

Իսկ Իժը խորհում էր. «Երկնքում, անշուշտ, պէտք է որ ապրելը հաճելի լինի, քանի որ այդպէս հառաչում է նա»...

Եւ յորդորեց նա ազատ թռչունին. «Մօտեցիր ուրեմն ձորաբերանին ու ցած նետիր քեզ։

Գուցէ թէ թևերդ քեզ բարձրացնեն և տարերային ուժիդ մէջ դեռ ես մի փոքր էլ ապրես»։

Եւ ցնցուեց Բազէն. նուաղկոտ ճիչով շարժուեց դէպ անդունդը, և մագիլներով սըլլաց ու սահեց քարի լպրծուն մակերևոյթին։

Եւ մօտեցաւ նա, ուղղեց թևերը, խորը հառաչեց, փայլ տուին աչքերը ու... գահավէժ՝ անդունդը գլորուեց։

Եւ ինքն, ինչպէս քար, սահեց ժայռերից, վայր ընկաւ արագ, փշրելով թևերը, փետուրները ցիր-ցան . . .

Ալիքը հեղեղատի նրան ընդգրկեց և լանալով արիւնը բռատր, փրփուր հագցրեց, խաղաց դէպի ծով։

Ծովի ալիքները թախծոտ ոռնոցով՝ գալիս քարերին էին զարնուում։ Եւ թռչունի դին՝ էլ չէր նշմարուում ծովային անծիր տարածութեան մէջ։

Բ.

Կիրճի մէջ փուած՝ Իժը խորհում էր երկար ու բարակ՝ թռչունի մասին և դէպ երկինքը նրա ունեցած կրքոտ ու անդուսպ ամենի մասին։

Եւ ահա նա աչքի անցրեց այն տարածութիւնը, որ շոյում է աչքը յաւիտենապէս՝ բախտաւորութեան քաղցր իղձերով։

— Իսկ ինչ էր տեսնում նա՝ մեռնող Բազէն՝ անտակ անդունդի ամայութեան մէջ։ Ինչու են ինքն ու իր նմանները մեռնելու պահին յուզւում հոգեպէս՝ առ երկինքն ունեցած թռիչքի սիրով։ Ի՞նչն է արդեօք, որ նրանց այնտեղ յայտնի է դառնում։ Իսկ չէ՞ որ ինքս էլ՝ թէկուզ կարճատև երկինք թռչելով՝ կը կարենայի պիտակ ամեն ինչ։

Առաց ու արաւ։ Օդակ դառնալով նետուեց օդի մէջ և, յար ու նման նեղ ժապաւէնի, փայլեց, պլպղաց վառ-արեւի տակ։

Սողալու ծնուածը՝ թռչել չի կարող... այդ մոռանալով, ընկաւ քարերին, բայց չը տատակեց, այլ խնդաց քան-քան...

— Ահա թէ ինչն է առ երկինքը տածած հրապոյրը թռիչքի։ Այդ հրապոյրն անկումի մէջ է... Ծիծաղելիներ։ Երկրին անդիտակ, ձանձրացած այստեղ, նրանք ձգտում են վեր՝ դէպի երկինք և կեանք որոնում խանձող-տոչորող անապատի մէջ։ Այնտեղ իշխում է լոկ դատարկութիւն։ Լոյսը շատ է այնտեղ, բայց մնունդ չը կայ. և ոչ իսկ նեցուկ՝ կենդանի մարմնին։ Ինչու համար են՝ սին գոռոզութիւնն ու նախատինքներ։ Նրա համար, որ անմտութիւնն իրենց ցանկութեանց ծածկել կարենան. և նրանց յետև բողարկեն իրենց ապիկարութիւնը՝ կեանքի գործերում։ Ծիծաղելիներ... Բայց նրանց ճառերն այժմ այլ են։ Նրանք երբէք չեն կարող մոլորեցնել ինձ։ Ես ինքս արդէն գիտեմ ամեն ինչ... Տեսայ երկինքը... և թռայ այնտեղ, չափեցի նրան, իմացայ անկումը, բայց չը ջարդուեցի. և այժմ միայն աւելի ևս հաստատ-անները հաւատում եմ ինձ։ Թող այն ամենքը, որ անկարող են երկիրը սիրել, ապրեն պատրանքով։ Ես ըմբռնեցի ճշմարտութիւնը։ Եւ նրանց կոչին չեմ հաւատայ ես։ Երկրի ստեղծած՝ երկրով էլ կապրեմ։

Եւ նա կուտապուեց ժէռ քարի վրայ՝ հպարտ ինքն իրմով։

Փայլփլում էր ծովը համակ-անպարփակ պայծառ լոյսի մէջ, և սպառնացող ալիքը հուժկու՝ ափերին էին գալիս զարնւում։

Առիւծամռունչ նրանց ձայնի մէջ թնդում էր երգը վէս թռչնի մասին, գողում էր ժայռը նրանց գաբկերից, գողում էր երկինք գոռ-խրոխտ երգից։

Քաջերի խենթութեանը՝ մենք փառք ենք երգում։
Քաջերի խենթութիւնը՝ իմաստն է կեանքի։

«Օ՜, խիզախ Բազէ։ Ոտիների հետ մղած կռի մէջ արնաքամ եղար... Բայց կը գայ օրը, և կաթիլները արեան քո բոսոր՝ կայծերի նման պիտի բորբոքեն կեանքի խաւարում ու շատ համարձակ սրտեր պիտ վառեն՝ ազատութեան, լոյսի խելառ ծարաւով։

«Թող մեռած լինեմ... Բայց հոգով ապի՝ քաջերի երգում դու միշտ կը մնաս կենդանի տիպար և հպարտ մի կոչ—դէպ ազատութիւն ու դէպի լոյսը։

«Քաջերի խենթութեանը՝ մենք գովք ենք երգումք...

Թարգմ. Գ. Մելոյեան

5.

ՉՓԱՒՈՐՆԵՐԻ ԱՂՓԵՐԸ

Բոդլէր

Ա՜հ, դուք ուզում էք իմանալ, թէ ինչու եմ այսօր ձեզ այսպէս ատում։

Անտարակոյս ինձ համար աւելի հեշտ պիտի լինի այդ բացատրելը, քան ձեզ համար նոյնը հասկանալը, որովհետև իմ կարծիքով դուք կանացի անթափանցողութեան մի փայլուն նմուշ էք ներկայացնում։

Մենք իսօք էինք ուել, որ մի միտք ու մի հոգի լինենք այսուհետև, մի հատարակ ցնորք, որը փայփայում են բոլոր մարդիկ և որը սակայն դեռ ոչ ոքի համար իրականութիւն չի դարձել։

Երեկոյեան մի փոքր յոգնած էիք դուք և առաջարկեցիք նստել նոր բուլվարում՝ նորաշէն կաֆէի առաջ, ուր դեռ (!) դեռ մնում էր դէս ու դէն կիսուած։ Սակայն կաֆէն արդէն ցուցադրում էր իր անաւարտ շուքն ու փայլը։ Գազը դերիւռի եռանդ էր ցոյց տալիս և իր բոլոր ոյժով լուսավառում էր պատերի կուրացնող սպիտակութիւնը, անագին հայելիները, բազէտների ու կարնիզների ոսկին, լուսավառում ուռուցիկ թշերով մակլաւիկներին, որոնց առաջ է մղում շների վոհմակը, ծիծղուն տիկիններին, որոնց ձեռքի վրայ թառել է բազէն, իրենց գլուխների վրայ մերգ, խմորեղէն ու որս կրող նիմֆաներին ու դիցուհիներին, Հեբեբին ու Գանիմէտներին, որոնք ձեռքերով բռնած պարզում են բաւարիկով լի բաժակներ, կամ երկգոյն պաղպաղակի օբելիսկներ, ամբողջ պատմութիւնն ու դիցաբանութիւնը, որ այստեղ են կոչել որկրամոլութեանը սպասաւորելու։

Ուղիղ մեր դէմուդէմը, մայթի վրայ, մի քառասունին մօտ կորիճ տղամարդ էր կանգնած՝ յոգնած դէմքով և սպիտակող մերուքով։ Նրա հետ երկու մանուկ կար, որոնցից մէկը նրա ձեռքն էր բռնել, իսկ միւսին նա գիրկն էր առել, որովհետև այդ փոքրիկ էակը շատ էր թոյլ, որպէսզի կարողանար մոն գալ։ Այդ մարդն իր երեխաների համար նաժիշտ էր դարձել և դուրս էր բերել նրանց իրիկուայ զբօսանքի։ Երեքն էլ ցնցոտիներ էին հագած։ Երեքի դէմքն էլ արտակարգ լրջութիւն էր արտայայտում, և վեց աչքերն էլ նոր կաֆէն էին զբն-

նում հաւասար հիացմունքով, որը սակայն նուրբ տարբերութիւններ ունէր՝ ըստ նրանց տարբեր հասակների։

Հօր աչքերն ասում էին. «Ինչ գեղեցիկ, ինչ սիրուն է, կարծես բոլոր չքաւորների ոսկին եկել է այս պատերը զարդարելու»։ Փոքրիկ տղայի աչքերը. «Ինչ գեղեցիկ է, ինչ սիրուն, բայց այս տունը կարող են մտնել միայն այն մարդիկ, որոնք մեզ նման չենք»։ Իսկ ամենափոքրի աչքերը՝ նրանք այնպէս էին դիւթած, որ չէին կարող արտայայտել մի այլ բան, բացի խոր և անմիտ ուրախութիւնից։

Երգիչներն ասում են, որ խնդումը բարի է դարձնում հոգին և փափկացնում սիրտը։ Եւ դա ուղիղ դուրս եկաւ իմ նկատմամբ այն երեկոյ։

Ոչ միայն սիրտս շարժեց աչքերի այդ ընտանիքը, այլ ես մի քիչ ամօթ իսկ զգացի մեր բաժակների ու շիշերի համար, որոնք աւելի մեծ էին, քան մեր ծարաւը։ Ես հայեացքս դէպի ձերը դարձրի, անգին իմ սէր, որ այնտեղ իմ միտքը կարդամ, ես ընկղմեցի ձեր այնքան գեղեցիկ և այնքան անուշ, ձեր կանաչ աչքերի մէջ, ձեր լուսնից կախարդուած աչքերի մէջ, ուր քմահաճոյքն է բնակուած, երբ դուք ասիք ինձ՝ «այդ մարդիկ անտանելի են իրենց դարբասների նման լայն բաց արած աչքերով, արդեօք չէի՞ք կարող խնդրել կաֆէի տիրոջը, որ նրանց հեռացնէր այստեղից»։

Ահա թէ որքան դժուար է միմեանց հասկանալը, անգին իմ հրեշտակ, և որքան անհաղորդելի է միտքը նոյն իսկ այն մարդկանց մէջ, որոնք միմեանց սիրում են։

Թարգմ. Վ. Տէրեան

6.

ԴՈՒ ԿԱՐՏԱՍԻԷԻՐ

Դու, վտարանդի Ծնող խաչակիր՝ Մեծ Տառապանքի արնոտ Գողգոթան ապրած ժողովուրդ, քո անծայրածիր մրմունը սրտիս՝ ճանապարհ ընկայ դէպի հեռաւոր, խորթ հորիզոններ, որոնց հանդէպ թախիծն ու վիշտը՝ կեանքիս անբաժան զոյգ ընկերներն՝ արթընցան նորէն—չարատանջ հոգուս կսկծանքները բիւրապատկելու...

Եւ վերջալոյսի վարդագոյն ցոլքերը մինչ կը հալչէին հեղիկ ու նազիկ,—շողերու միջէն դու կարտասուէիր։

Ծիրանեգոյն ժապաւէնները հանգան մահամերձի նուազկոտ հեքով. խաւարի քողն իջաւ ծալ-ծալ, համբ, անշշունչ՝ պարուրելու երազներս չքնաղ, յուշերս անմեռ։ Դարատանջ, յոգնած ու կարաւանիդ զօրանջը տխուր թրթռոաց կրկին անծանօթ ճամբիս...

Եւ տիեզերքի արծաթ ջահերը մինչ կը վառէին պայծառ շողերով,—խաւարի միջէն դու կարտասուէիր։

Շուրջս ամեն ինչ լուռ էր և անդորր. դէպի հեռուներն ինձ նետող ցաւը կը մաշէր հոգիս, որ աստղերու հետ իր զրոյցը կընէր՝

նոյնպէս լուռ-անձայն. գիշերուայ մարմանդ զեփիւռի թեւով յօշոտուած սրտիդ հառաչանքները կը ծաւալէին դաշտերու վրայ...

Եւ մինչ ծաղիկներն օրօր ու շօրօր գրկախառնումով կը համբուրէին,—զեփիւռի միջէն դու կարտասուէիր։

Ծովը ծփացող ծփուն կոհակները դէպի անորոշ հեռուն կը մղէր՝ խենթ ու խօլական քրքիջ-մրմունջով. գոհար ցնցուղներն անդրանիկ օրի կը թաւալէին ափերը զգուող աւազի վրայ։

Եւ մինչ ջրերի ճղփոցն ու քրքիջը կը լուծէր մեղմիւ,—անյայտ ափերէն դու կարտասուէիր։

Հողմավայը, լքուած սև կարաւանիդ զօղանջը ծանօթ՝ մարեցաւ հանդարտ. և զօղանջի հետ իմ անտակ ճամբին դու, որպէս երազ, հէքեաթ ոսկեհիւս՝ ելար կանգնեցիր քո ծանր խաչով ու ստուերի պէս անցար, գնացիր...

Եւ մինչ ջահերը տրտմաշուք կեանքիդ կը մարմրէին դալուկ ու թալուկ,—դարերու խորքէն դու կարտասուէիր։

Գ. Մելոյեան

ԶՈՐՐՈՐԴ ԲԱԺԻՆ

ԴՐԱՄԱ

1.

ԴՐԱՄԱ ԵՒ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ

Դրամա՝ յունական բառ է և նշանակում է գործողութիւն։ Իբրև գրական հիմնական տեսակներից մէկը, դրաման ամենաբարձր և կատարեալ ձևն է գեղարուեստական ստեղծագործութեան. նա իր մէջ ամփոփում է գեղարուեստի մի քանի ճիւղերը, նաև գրական միւս հիմնական տեսակների՝ էպոսի և քնարերգութեան՝ տարրերը։ Դրամայի մարմնացումը բեմի վրայ կատարւում է գործողութեան և դրամախօսութեան միջոցով։ Եւ որովհետև կեանքի բնորոշ երևոյթների արտացոլումն է հանդիսանում ոչ միայն գեղարուեստական գրականութեան բովանդակութիւնը, այլ և նրա տեսակը, ձևը, ուստի դրաման իբրև գրական բարդ ձև հանդէս է եկել և զարգացել այն ժողովուրդների կեանքում, որոնց կուլտուրական մակարդակը եղել է համեմատաբար բարձր։

Դրաման անդրադարձնում է մարդուն՝ իր հոգեկան ընդհարումների վիճակում, հանդէս բերում մարդկային ներքին աշխարհի լարուածութեան բարձր աստիճանը, նրա հոգեկան կեանքի ողջ շտեմարանը։ Դրաման հանդէս է բերում հերոսին գործողութեան մէջ։ Եւ սակայն հեղինակը իր կողմից ոչ մի մեկնութիւն, բացատրութիւն չէ տալիս անցքերին, չէ միջամտում հերոսի դրամատիզմի զարգացմանը և գործողութեան ընթացքին։ Նա ի նկատի ունի հանդիսատեսներ, որոնց աչքի առջև կատարուող գործողութիւնների բնական զարգացումով պիտի ցուցադրուեն հերոսի հոգեկան ապրումներն ու տանջանքները։

Դրաման գործ ունի իր հերոսի ներկայի հետ։ Հանդիսատեսի առջև խորացող դրամատիզմը հերոսի վիճակը դարձնում է բարդ, լարում նրա նեարդերը, և այդ լարման մէջ գործողութիւնները ընթանում են արագ, յախուռն, առանց ընդմիջումների, մինչև դրամայի կատարեալ լուծումը։

Էպոսից դրաման տարբերվում է նրանով, որ առաջինը պատմում է արդեն կատարված-անցածը և նրա հայեացքը ուղղված է միշտ դեպի անցեալը, մինչ դրաման պատկերացնում է ընթացիկ կեանքը, նրա ներկան։

Դրամայի հրատապ ներկան ցուցադրելու հրապարակը թատրոնն է, որը դրամայի լրացուցիչ և անհրաժեշտ տարրն է, որովհետև երկուսի միացումով միայն իրականանում է գործողությունը և մարդկային հոգեկան ապրումների պրոցէսի դրսևորված ու տեսանելի զարգացումը։

Դրաման երկու գլխաւոր ձիւղ ունի. բուն դրաման (նաև ողբերգութիւն) և կատակերգութիւն։ Բուն դրաման՝ դա նոյն ողբերգութիւնն է ըստ էութեան, սակայն մի տարբերութեամբ, որ ողբերգութիւնը դրամայի գերագանց արտայայտութիւնն է, նրա գագաթնակէտը։

Դրաման կամ ողբերգութիւնը անդրադարձնում են այն, ինչ էական է և բնորոշ մարդկային կեանքում, այն, ինչ որ վազանցիկ չէ, ժամանակաւոր և պատահական բնոյթ կրող։ Դրամատիկ ստեղծագործութիւն է այն պիէսը, որի բովանդակութեան և ձևի ներդաշնակ հիւսուածքը պայմանաւորուած է հերոսի հոգեկան դրդիչների ու գործողութիւնների ներքին անհրաժեշտութեամբ, այլ խօսքով՝ բղխում է հերոսի կամ նրան շրջապատող գործող անձերի հոգեբանական պատճառներից։

Դրամայի կամ ողբերգութեան գործողութիւնները պիտի ներսօրէն շաղկապուած լինեն միմեանց հետ, կազմեն մի անբաժան ամբողջութիւն, իրրև անհրաժեշտ մասերը մի ընդհանուր հիւսուածքի։

Դրաման սոցիալական կամ անհատական ընդհարումներից առաջացած պայքարի անդրադարձումն է, որի հանդէպ թատրոնի հանդիսատեսը սառնասիրտ չէ մնում. պայքարող ու տանջուող հերոսի և հանդիսատեսի միջև առաջանում է յայտնի չափով ապրումների փոխյարաբերութիւն, որով դրամատիկ հերոսի ապրած վիճակը հանդիսատեսի մէջ առաջացնում է սարսափի, կարեկցութեան, խղճահարութեան և այլ զգացմունքներ։

Դրաման բէալ կեանքի, կենդանի իրականութեան, այլ և կրքերի ու տանջալից ապրումների մակընթացութեան ու տեղատուութեան վերարտադրութիւնն է։

Սակայն դրամայի, նոյն և ողբերգութեան հերոսը (անհատ կամ մասսա) անպայման պէտք է օժտուած լինի հաւաքական, տիպական տյս կամ այն արժանիքներով։ Սովորական, կոպիտ չարագործն ու մարդասպանը չեն կարող դրամայի հերոս լինել։ Այդպիսի հերոսները գեղարուեստական հաճոյք պատճառել կամ տպաւորութիւն թողնել չեն կարող։ Զը պէտք է մոռանալ, որ դրամայի պաթոսը՝ դա հերոսի ապրած հոգեկան տառապանքն է, որպէսի ապրումներից միանգամայն դուրկ է հասարակ, կոպիտ մարդասպանը, չարագործը։

Հերոսն ունի իր թէ ներքին և թէ արտաքին պայքարը. ներքին՝ երբ նա պայքարում է ինքն իր հետ. արտաքին՝ երբ դրսի խոչընդոտների դէմ է հանդէս գալիս։

Այն դարաշրջաններում, երբ հասարակական կեանքի պատմական դեկը գտնուում էր բացարձակ թագաւորների և արտօնեալ ազնուական արիստոկրատիայի ձեռքին, դրամայի կամ ողբերգութեան հերոսներ հանդիսանում էին թագաւորները, իշխանները, պալատական մարդիկ և զօրավարները։

Ներազդեցութեան դրամատն, գերազանցապէս բուրժուական է, թէև հասարակական կեանքի ընդհանուր դեմոկրատացման շնորհիւ, աշխարհի տէրերին զուգընթաց հրապարակ են հանուել հերոսներ նաև հասարակական միջին և երբեմն բանւորական խաւերից, ցուցադրելով միայն թշուառութեան և շահագործման պայմաններում պայքարողի ու տառապողի հոգեբանութիւնը։

Դրամատն ունի իր ներքին ռիթմը. դա նրա հանգոյցն ու լուծումն է. որովհետև այն հանգամանքների ու պայմանների վերարտադրութիւնը, որոնց մէջ հնարաւոր է դառնում դրամատիկ գործողութիւնը մինչև նրա կատաստրոֆիկ վախճանը՝ դրամատն շարժւում է համաչափ ընթացքով, ունենալով իր ներքին չափը, ռիթմը։ Դրամայի հանգոյցը՝ դա դրամատիզմի զօրեղացումն է, բարձրացումը։ Լուծումը՝ թուլանալն է ու էջքը։ Իսկ բարձրագոյն կէտը՝ հերոսի զահավիժումն է կամ ծանրագոյն կացութիւնից ազատագրելը։

Պրոլետարական մեծ յեղափոխութեան օրերին հին թատրոնը ապրում է ճգնաժամային ծանր տագնապ, մինչ նորը ծնունդ է առնում եռանդուն որոնումների տեսակտն պրոցէսում։

2.

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ

Կատակերգութիւնը դրամայի մի ճիւղն է, որի նպատակն է գործողութիւնների միջոցով ցուցահանել մարդկային արարքների ծիծաղելի և արատաւոր կողմերը, հանդիսատեսի մէջ առաջ բերելով ծիծաղ՝ միացած մերթ զայրոյթի, մերթ տխրութեան կամ կարեկցութեան զգացմունքի հետ։ Կատակերգութիւնն ունի իր տեսակները։ Եթէ կատակերգութեան համար ինքնանպատակ են դառնում սոսկ ծիծաղն ու կատակը, ապա բեմական նման արտադրութիւնը չի կարող լուրջ բնաւորութիւն ունենալ։ Կատակերգութիւնը ձգտում է ծաղրի միջոցով ցուցադրել տիպական հերոսների պակասաւոր կողմերը, հանդէս բերելով տարբեր դասակարգերի ու խմբակցութիւնների կեանքն ու հասարակական-քաղաքական դաղափարները. օրինակ, Արիստոֆանի և Մոլիէրի, Պարոնեանի և Սունդուկեանի և շատ ուրիշների կոմէդիանները։ Կատակերգութեան թեթև տեսակին են պատկանում ֆարսն ու վոդեվիլը, որոնց նպատակը սոսկ ծիծաղն ու թեթև կատակն է. հեղինակը չի ձգտում որևէ լուրջ նպատակի, թէպէտ լուրջ կատակերգու-

թիւններն էլ զերծ չեն ծաղրանկարից ու չափազանցութիւնից՝ զօրեղացնելու համար կատակերգութեան կոմիքական տպաւորութիւնը։

Լուրջ կատակերգութիւնը բաժանւում է՝

Բնաւորութիւնների կատակերգութեան, երբ հեղինակը հանդէս է բերում իր հերոսների արատներն ու պակասաւոր գծերը։

Սոցիալականի՝ երբ ծաղրի են ենթարկւում հասարակական դասակարգի կամ որևէ խմբակցութեան սոցիալական չարիքը կամ մի ամբողջ հասարակական կազմակերպութեան քննադատելի կողմերը։

Քաղաքականի՝ երբ ծաղրւում են քաղաքական որոշ տեսակի գործիչներ կամ քաղաքական անընդունելի կարգեր։

Սուրխաթեան

ՍՈՖՈԿԼԷՍ

Յունական ողբերգութեան ամենափայլուն ներկայացուցիչը Սոֆոկլէսն է։ Նրա երկարամեայ՝ մինչև ինը տասնեակ տարիներ ունեցած կեանքը զուգադիպում է յունական դեմոկրատիայի հասարակական զարգացման ամենաթարմ շրջանին։ Հինգերորդ դարի կեանքը Ք. ա., որ ոսկեդարն է եղել հասարակապետական Աթէնքի առաջադիմութեան ու բարգաւաճման, այլ և ոսկեդարը յունական գիտութեան և արուեստի, ահա այդ դարի կեանքը գրեթէ ամբողջովին Սոֆոկլէսի աչքի առջևն է ընթացել։

Սոֆոկլէսը ծնուել է 595 թուին Ք. ա. Աթէնքից կէս ժամ հեռաւորութեան վրայ գտնուող Կոլոնոս գիւղաքաղաքում։

Նրա հայրը՝ Սոֆիլէսը, որ մի բանիմաց աթենացի էր, իր տաղանդաւոր որդու զարգացման համար չի խնայել ոչ մի միջոց։ Նրա գլխաւոր ձգտումն է եղել ներդաշնակ զարգացնել որդու մտաւոր և ֆիզիքական ընդունակութիւնները։ Սոֆոկլէսը չափազանց գեղեցիկ ու գրաւիչ արտաքին է ունեցել. մի հանգամանք, որ յոյների աչքում աստուածային պարգևի նշանակութիւն ունէր և պակաս չէր նպաստում երիտասարդ բանաստեղծի արագ ժողովրդականութեանը։ Սոֆոկլէսը սովորել է բանաստեղծութիւն, երաժշտութիւն, փիլիսոփայութիւն։ Գրական փորձերը, ամենայն հաւանականութեամբ, Սոֆոկլէսն սկսել է շատ վաղ, սակայն հրապարակական մրցութեան է դուրս եկել միայն քսանեօթը տարեկան հասակում, հանդէս բերելով իր լաւագոյն ողբերգութիւններից մէկը։ Նրա հրապարակ գալն սկսւում է մի նշանաւոր մրցումով, որ տեղի է ունենում վաղուց հռչակ վայելող վաստակաւոր Էսքիլէսի և նոր միայն երևացող երիտասարդ բանաստեղծի միջև։ Աւանդութիւնը պատմում է, թէ այս մրցումը ճակատագրական է լինում բազմիցս գնահատուած ու փառքի գագաթնակէտին հասած Էսքիլէսի համար, որովհետև մրցումը տանում է Սոֆոկլէսը։

Սոֆոկլէսի գրական գործունէութիւնն ընդգրկում է մօտաւորապէս վեց տասնեակ տարի, որի ընթացքում նա արտադրել է աւելի քան 110 թատերական գրուածք, գլխաւորապէս ողբերգութիւններ, որոնցից սակայն ժամանակը միայն եօթին է խնայել։ Մեզ հասած ողբերգութիւններն են՝ Անտիգոնէ, Էդիպ Արքայ, Էդիպը Կոլոնում, Էլեքտրա, Տրախինուհիք, Այաս եւ Փիլոքտետէս։

Սոֆոկլէսը մեռնում է մօտաւորապէս 405 թ. Ք. ա., ինն տարեկան հասակում։

Սոֆոկլէսի կատարած դերը խոշոր է յունական տրագեդիայի զարգացման պատմութեան մէջ։ Նախ աչքի է ընկնում այն բարեփոխութիւնը, որ մտցրել է նա յունական պիէսների ներկայացման մէջ։ Խօրը, որ գերակշռող դեր ունէր Էսքիլէսի պիէսներում, այժմ ստանում է երկրորդական նշանակութիւն և նրա տեղը բռնում է գործող անձերի կենդանի խաղն ու շարժումը։ Սոֆոկլէսի ժամանակ ողբերգութեան հեղինակն ազատւում է գլխաւոր դերակատար լինելու պարտաւորութիւնից։ Սոֆոկլէսին է վերագրւում երրորդ դերասանի հանդէս բերելը յունական բեմի վրայ։ Այս արտաքին բարենորոգութիւնները միանգամայն փոխեցին բեմի ներքին պատկերը. բեմը դարձաւ գործողութեան և հոգեկան շարժումների անդրադարձման վայր։ Խօրի լիրիքական արտայայտումների փոխարէն հերոսի անհատական հոգեբանութիւնն ու ապրումներն էին արտացոլւում։ Ողբերգութիւնը աստիճանաբար ազատագրւում էր հին կրօնական-էտիքական բովանդակութիւնից։ Կեանքը, միջավայրը խոշոր թափով ներս է խուժում բեմ, և աստուածների ու տիտանական հերոսների տեղ ողբերգութիւնների նիւթը իրական մարդն ու կեանքի երևոյթներն են դառնում։ Մարդու հոգեբանութիւնը, հերոսների ընաւորութիւնների զարգացումը, նրանց ընդհարումը այս կամ այն երևոյթի հետ՝ ստեղծագործութեան գլխաւոր օբիեկտն են դառնում ողբերգակների համար։ Տրիլոգիայից միանգամայն հրաժարւում է Սոֆոկլէսը։ Նրա ողբերգութիւնները, ճիշտ է, որոշ առընչութիւն ունեն միմեանց հետ և արտաքին կողմից որոշ չափով նման տրիլոգիային; ինչպէս օրինակ՝ Էդիպին նուիրուած երեք ողբերգութիւնները, բայց որպէս պիէսներ՝ նրանցից իւրաքանչիւրը անկախ և աւարտած գործ է։ Պարզ ու հասկանալի լեզուն, պատկերաւոր ոճը, դրամատիկ գործողութեան աստիճանական զարգացումը, հերոսների գործելու շարժառիթների ու հոգեկան համապատասխան արտայայտութիւնների սերտ շաղկապումը՝ Սոֆոկլէսի տաղանդի բարձր յատկանիշներն են։

Ա Ն Տ Ի Գ Ո Ն Է

Բովանդակութիւն

Սոֆոկլէսի լաւագոյն ողբերգութիւններից է «Անտիգոնէ»-ն, որ այնքան մեծ գնահատութիւն է առացել Աթէնքում, ապա եւրոպական բեմերում ունեցել բազմաթիւ նմանողներ՝ հռոմէական, իտալական և ֆրանսիական գրականութեան մէջ։

Էդիպի մահից յետոյ նրա աղջիկները՝ Անտիգոնէն և Իսմէնը վե-

բաղառնում են Թեբէ՝ հաշտեցնելու համար երկու եղբայրներին, որոնք օրհասական կռիւ էին բռնել իրար հետ գահի համար։ Եղբայրներից մէկը՝ Էթէոկլէսը պաշտպանում է Թեբէն, իսկ միւսը՝ Պոլինիկոսը արդիվացիների զօրքով պաշարում է քաղաքը։ Մենամարտի են բռնուում եղբայրները և երկուսն էլ ընկնում կռիւի դաշտում։ Գահն անցնում է հպարտ ու բռնակալ Կրէոնին։ Նա հրամայում է Էթէոկլին թաղել վայելուչ ծէսերով, իսկ Պոլինիկոսի մարմինը՝ մահապատժի սպառնալիքով՝ թողնել անթաղ. թող գիշատիչ թռչուններն ու շները յօշոտեն նրա դիակը։ Այդպէս է ուզում անարգել նրան նոր բռնապետը, ամենածանր պատիժ նշանակելով արդէն մեռած մարդուն։ Ցունական տրադիցիոն ըմբռնումով ամենամեծ անարգանքն ու պատիժը՝ մեռածին անթաղ թողնելն էր. նա զրկւած էր մնում նոյնիսկ հանդերձեալ կեանքում տեղ ունենալուց։

Կրէոնի դաժան կարգադրութիւնը խորապէս վիրաւորում է Անտիգոնէին. նա չի կարողանում հաշտւել այն մտքի հետ, որ մարդկային բարոյական զգացումը կարող է թոյլ տալ այդպիսի վայրագութիւն դիակի նկատմամբ։ Եւ նա որոշում է ընդդիմանալ Կրէոնին ու անպատճառ թաղել եղբօր դիակը. որոշել է արհամարհել թագաւորի յայտարարած պետական, քաղաքացիական, հասարակական բոլոր «սկզբունքները» և լսել միայն իր սրտի թելադրանքին։ Նա խորապէս գիտակցում է այն, որ իր բայլը պիտի համարւի ըմբոստութիւն, պիտի ինքն ևս դատապարտւի մահւան պատժի։ Սակայն բարոյական պարտքի զգացումը նրա մէջ աւելի զօրեղ է, հրամայական, քան երկիւղը բռնակալ և վրէժխնդիր իշխանաւորներից։ Թանելով իր եղբօր դիակը, նա գաղտնի կատարում է անհրաժեշտ ծէսը և միանգամայն հանգստացնում իր խիղճը։ Զայրանում է Կրէոնը ըմբոստ չարագործի վրայ. հրամայում է սպասաւորներին գտնել յանցաւորին։ Ձերբակալում են Անտիգոնէին, և Կրէոնը, չանսալով Թեբէացիների աղերսանքներին, նրան դատապարտում է մահւան պատժի։ Թեբէացիներին միանում է և Կրէոնի որդին՝ Հեմոնը՝ Անտիգոնէի նշանածը, բայց բռնապետը մնում է անողոք։ Անմեղ աղջկայ կողմն է նաև ամբողջ ժողովուրդը, սակայն երկիւղը դողցել է բոլորի բերանը։ Հեմոնը բորբոքւած է, դառն ճշմարտութիւններ է ասում հօրը. նա պահանջում է փոխել վճիռը։ Անմիտ հպարտութիւնն ու կամակորութիւնը,—ասում է նա,—ոչնչութիւն է դարձնում մարդուն, նրա կատարած գործը անարդար է ու անհիմն։ «Իսկական իմաստունը երբէք չի յամառի իր մոլորութեան մէջ»,—աւելացնում է նա։ Կրէոնը անուղղելի է, յամառ, և այդ յամառութիւնը նրան հասցնում է ողբերգական վախճանի։ Նա հրամայում է բանտարկել Անտիգոնէին գետնայարկ զնդանում, որ այնտեղ գտնի իր դանդաղ ու տանջալից մահը։ Անտիգոնէի բանտարկութիւնից յետոյ Կրէոնի մօտ է գալիս Տիրեսիաս գուշակը և ծանր հետևանքներ է գուշակում նրան։ Սարսափը սրտում՝ նա կամենում է ազատել Անտիգոնէին, սակայն լրաբերը հաղորդում է, որ թշւառ աղջիկը «խաւար դամբարանի խորքում կախւել է, բարակ ծածկոցի թելերից թոկ հիւսելով»։ Կրէոնը իջնում է «դամբարանը», բայց տեսնում է իր որդուն՝ Հեմոնին՝ ընկած Անտիգոնէի

գիտակի վրայ, նրա մահը ողբալիս։ Հետոնը՝ սուրը ձեռքին յարձակւում է նոր վրայ, բայց հարուածը վրիպում է. այն ժամանակ սուրը խրում է իր կուրծքը և վերջ տալիս իւր կեանքին, ընկնելով Անտիգոնէի կողքին։ Կրէոնի կինը՝ Եւրիդիկէն լսելով որդու ողբերգական մահը, անկարող է լինում տանել այդ ծանր վիշտը և նոյնպէս անձնասպանութիւն է գործում։ Կրէոնն այժմ ընկճւած է, զղջում է, բայց նրա զղջումն ուշացած է։ Ողբերգութեան վերջում խօրը երգում է. «Եթէ դու ձգտում ես երջանկութեան՝ նախ իմաստուն եղիր և անմահների կամքի դէմ, ով մահկանացու, մի յանդգնիր յոխորտալ. հաւատա՛, որ յանդուգն խօսքերի համար անմիտ մարդու գլխին մեծ աղէտ կը պայթի, և իմաստութիւնն ուշացած կերևայ»։

Այս բարոյական խրատի մէջ Սոֆոկլէսի աշխարհայեացքն է նկատւում, որ միևնոյն կերպ արտայայտել է նա «Էդիպ արքայի» մէջ։

Ողբերգութեան կենդրոնական հերոսի անունը՝ բովանդակութեան տեսակէտից՝ աւելի համապատասխան կը լինէր պիէսի խորագրի համար, բայց Անտիգոնէ անունը, ըստ երևոյթին, հեղինակը դրել է հերոսուհու անուան հետ կապւած դրական գաղափարի համար։

Անտիգոնէն ոչ միայն հանանուն ողբերգութեան մէջ է կանացի գեղեցիկ պատկերներից մէկը, այլ հելլէն ամբողջ գեղարուեստական գրականութեան մէջ։ Անտիգոնէի տրագեդիան բղխում է իշխանութեան բռնութեան ու մարդկային բողոքող զգացումների ընդհարումից։ Կրէոնի բռնակալ ձգտումների հանդէպ Անտիգոնէի պարզ ու դրական հասկացողութիւններն են հանդէս գալիս։ Եթէ Կրէոնի շահերի ոխերիմ թշնամին է եղել Պոլինիկոսը, եթէ նա պետական կազմի դէմ իսկ գործել է մի ոճիր, ապա Անտիգոնէի համար նա այլևս յանցաւոր չէ, քանի որ դադարել է շնչելուց, ուրեմն և այս աշխարհին պատկանելուց։ Էլ ինչո՞ւ էին դիակն անարգում ու յոխորտում նրա դէմ։ Անտիգոնէն պարզ ըմբռնել էր այդօրինակ սրբապիղծ վերաբերմունքի ամբողջ անհեթեթութիւնն ու մարդկային արժանապատուութիւնն ստորացնող տենդենցը։ Եւ Անտիգոնէն պատրաստ է պայքար մղելու մարդկային բռնի «օրէնքների» դէմ՝ զոհելով նոյն իսկ իր կեանքը։

«Քո օրէնքը,—ասում է նա Կրէոնին,—չի գրւած ոչ Աստծու և ոչ էլ արդարութեան ձեռքով, որ թագաւորում է անդրշիրիմեան կեանքում։ Ո՛չ, ես չը գիտէի, որ դու երկրային թագաւորների աշխարհիկ օրէնքներով կարող ես դանց առնել աստուածային օրէնքների պահանջները, որոնք չեն գրւած, բայց յաւիտենական են, որոնք նոր չեն ծընւած, բայց յաւէտ տիրող են»... Անտիգոնէն չի վախենում թագաւորի նոյնիսկ ամենաեղերելի վարմունքից, նա արհամարհում է Կրէոնին, որովհետև արհամարհում է մահը։ Ի՞նչ արժէք ունի նրա աչքում մահապատժի սպառնալիքը, երբ նա անելիքից ու ներքուստ ազատ է նայում նրա աչքին։ «Իմ մահուանից աւելի ի՞նչ ես ուզում»,—հարցնում է աւելի ևս մոլեգնող Կրէոնին։

Բռնապետի վճռի հանդէպ նա միանգամայն սառնասիրտ է։ «Դու,—ասում է Անտիգոնէն իր քրոջը,—ընտրեցիր կեանքը, իսկ ես գերադասեցի մահը»։ Այլ տիպ է նրա քոյր Իսմէնը. ըմբոստութիւնը

նրա էութեանն օտար է. իսկ սեռին յատուկ մտավախութիւնն ու թուլամորթութիւնը յետ են կանգնեցնում նրան քրոջ յանդուգն ձեռնարկին մասնակցելուց։ Մենք՝ կանայքս չենք կարող անհաւասար կռիւ մէջ մտնել տղամարդկանց հետ,—ասում է նա։ Անտիգոնէի համար օտար են այդ խօսքերը, որովհետև նա տրամադիր չէ դիջելու իշխանութեամբ և ոյժով օժտուած բռնակալին. «Մարդու կամքից աշխարհում ես չը պէտք է վախենամ»,—ասում է նա։

Անտիգոնէն սակայն կենդանի տիպ չէր լինի, եթէ Սոֆոկլէսը նրան հոգեկան տարբեր դրութիւնների մէջ հանդէս չը բերէր։ Անտիգոնէն զօրեղ կամքի տէր կին է. նա ընդունակ է պայքար մղելու արտաքին երևոյթների դէմ, բայց նա ինքն իր մէջ ամփոփուած, կղզիացած, անսիրտ տիպ չէ։ Նա նոյն մարդն է իր ջերմ զգացմունքներով, ապրելու տենչով։ Նրան օտար չէ կեանքի երջանկութիւնը. նա նշանուած է Հեմոնի հետ. ապագայ կեանքի տենչերը նա կապել է սիրելի մարդու անձնաւորութեան հետ. նա ուզում է ապրել, ուզում է զգալ, ուզում է վայելել կեանքի ցնծութիւնը։ Բայց մուայլ իրականութիւնը դուրս է կորզում նրա սրտից կեանքի տենչը և տեղը դնում մահուան ցուրտ գաղափարը։ Համաշխարհային գրականութեան մէջ Անտիգոնէի տիպը կանացի սքանչելի տիպերից մէկն է, որ յանուն գաղափարի, յանուն իր դաւանած սկզբունքների ոչ միայն պատրաստ է զրկանքների ենթարկուել, այլ և կախաղան բարձրանալ։ Անտիգոնէի տիպը Սոֆոկլէսի ապրած միջավայրի սինթէզն է. կանացի ազատ պահանջներն ու ձգտումները նա ամփոփել է իր Անտիգոնէի մէջ։ Աթէնքի հասարակապետական կարգերը անկախ ու ազատ մտածելու հնարաւորութիւն էին շնորհել նաև յոյն կնոջը, որ դարերի ընթացքում ըբռնութեան կնպանքների մէջ էր գեգերում։ Դեմոկրատիայի բարձրացման դարաշրջանում ազատ կնոջ տիպը մարմնացումն է գտել Սոֆոկլէսի և ապա Եւրիպիդէսի մի քանի հերոսուհիների մէջ։

Բացի այդ, Սոֆոկլէսը որպէս հասարակապետական կարգերի ջատագով, ցայտուն գծերով է պատկերել միապետ բռնակալի տիպը, որ «ոչ Աստծուց է վախենում և ոչ մարդկանցից ամաչում»։ Նրան հակադրել է Անտիգոնէին։

Ինքը Սոֆոկլէսը, համեմատելով իրեն իր յետնորդ՝ բէալիստ Եւրիպիդէսի հետ, ասել է, որ ինքը մարդկանց պատկերացնում է այնպէս, ինչպէս նրանք պէտք է լինէին, իսկ Եւրիպիդէսը պատկերացնում է այնպէս, ինչպէս նրանք կան իրականութեան մէջ։ Միանգամայն ճիշտ բնորոշումն։ Սոֆոկլէսի մարդիկ, այսինքն հերոսները շատ են հեռու էսքիլէսի տիտանականութիւնից. նրանք այլևս աստուածներ ու տիտաններ չեն. նրանք մարդիկ են իրենց տենչերով ու զգացմունքներով։ Բայց հերոսների ընդհանուր բնոյթն աւելի իդէալական է, աւելի ռոմանտիկ, քան ռէալական։ Նրանք աւելի վեհ ու մեծ են, քան սովորական մարդիկ։ Սոֆոկլէսը կեանքի վրայ նայում էր իդէալիստական տեսակէտից. նրա գաղափարական տենչալի աշխարհը չէր հաշտուում իրական մուայլ աշխարհի հետ։ Նա ուզում էր տեսնել մարդկանց այնպէս, ինչպէս նրանք պատկերանում էին իր երևակայու-

թեան մէջ։ Էսքիլէսեան բանաստեղծութիւնը նա երկնքից երկիր իջեցրեց, սակայն իրական կեանքից վերցրած իր հերոսներին «աստուածներին» մօտեցրեց։ Օրինակ նրա Էդիպը իր վեհ ու ինքնագոհ կերպարանքով, իր տիտանական զօրութեամբ ու տոկունութեամբ աւելի մօտ է բանաստեղծի իդէալին, քան իրական աշխարհին։

Ճակատագրի գաղափարը Սոֆոկլէսի մէջ բարոյական վճռական օրէնքի զօրութիւն ունի։ Ճակատագիրը մարդկային կեանքում այն տիրագլուխ ոյժն է, որ ընդունակ է անդորրութիւն ու ներդաշնակութիւն մտցնելու մարդու բարոյական աշխարհում, ընդունակ է զսպանակ դնելու սահմանափակ մարդու ինքնամոռաց դոռոզութեանը և սանձարձակութեանը։ Տենչալի մարդը, ըստ Սոֆոկլէսի, ճակատագրի ոյժը ճանաչող մարդն է։ Այդ ոյժը չը ճանաչողը պատժւում է, ինչպէս Էդիպը։ Այս հանգամանքը ցոյց է տալիս, որ Սոֆոկլէսի բանաստեղծութիւնը ևս խոշոր չափով շղարշւած է այն իդէալիզմով, որով տոգորւած է եղել նրա նախորդ շրջանի դրամատիկական բանաստեղծութիւնը։

(*Սուրխաթեան*, «Հին-Յունական Գրականութիւն»)

Ա Ն Տ Ի Գ Ո Ն Է

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

Անտիգոնէ . .
Իսմենէ . . } *Էդիպ արքայի աղջիկները*
Կրէոն, Թեբէի նոր արքան
Պահապան
Հեմոն, Կրէոնի որդին, Անտիգոնէի փեսացուն
Տիրեսիաս, գուշակ
Սուրհանդակ
Եւրիդիկէ, Կրէոնի կինը
Գուժկան
Ղումբը (Թեբէի տասնեհինգ ալեւորներից)։
Արքայի շքախումբը, Անտիգոնէի պահապանները, Տիրեսիասին մանածող տղան, Եւրիդիկէի նաժիշտները, ժողովուրդ։

(*Գործողութիւնը կատարւում է Թեբէում*)։

Հատուածներ

ԵՐԵՔԱՆԻ ԵՐԵՔԻՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՏԵՍԱՐԱՆ

Հրապարակ Թեբէի միջնաբերդում, արքունիքի առջև։ Ձախ կողմից փոշոտ դաշտ՝ կուի վայրը առնող շաւղով։ Հեռուում երևում է Կիթերոնը, միւս կողմից՝ Թեբէ քաղաքի պարիսպը՝ Սկէյեան դարպասով։ Արքունիքը երեք դռնանի, միջին դուռը երկփեղկանի. մի մի դուռ երկու կողքից. երեքն էլ պինդ փակած։ Արևածագի ժամանակն է։

Աջակողմից երևում է Անտիգոնէն սգազգեստ, սափորը ձեռքին։ Մօտենում է աջ կողքի դռան ու ծեծում։ Դուրս է գալիս մի նաժիշտ, որի հետ կամաց խօսում է։ Նաժիշտը հեռանում է։ Անտիգոնէն անցնում է բեմի մէջտեղը։ Մի քիչ անց՝ նոյն աջակողմեան դռնից դուրս է գալիս Իսմենէն։ Անտիգոնէն արագ քայլերով գնում է դէպի նա։

ԱՆՏԻԳՈՆԷ և ԻՍՄԵՆԷ

Անտիգոնէ. Քոյր իմ հարազատ, Իսմենէ։ Գիտե՞ս արդեօք մի աղէտ, որին մատնուած չը լինէր Զևսը մեզ՝ ի պատիժ մեր հօր մեղքերի։ Կա՞յ աշխարհում մի վիշտ, տառապանք, ամօթ, անարգանք, որ տեսած չը լինենք մեր թշուառ կեանքում։ Եւ ահա այժմ էլ ինչ անլուր հրաման է արձակել, ասում են, արքան բոլոր քաղաքացոց առանց խտրութեան։ Գիտե՞ս կամ լսե՞լ ես որևէ բան այդ հրամանի մասին, թէ՞ քեզնից ծածուկ են մնացել թշնամեաց դաւերը մեր սիրելիների դէմ։

Իսմենէ (յուզուած) Ոչ մի լուր, ո՛չ քաղցր և ո՛չ դառն, չեմ լսել, քոյր իմ, մեր սիրելիների մասին այն պահից ի վեր, երբ մենք զրկուեցինք մեր զոյգ եղբօրից, որ ընկան միևնոյն օրը միմեանց սրերից։ Գիշերուան այս ժամից ի վեր, երբ ի փախուստ դարձաւ զօրքն արգոսացոց, ոչինչ չեմ լսել՝ ո՛չ ուրախառիթ և ո՛չ բօթաբեր։

Անտիգոնէ. Այդպէս էլ գիտէի, ուստի պալատից քեզ դուրս կանչեցի, որպէսզի հետդ խօսեմ միայնակ։

Իսմենէ. Ի՞նչ կայ։ Ի՞նչ խորհուրդներ են խոովում սիրտդ։

Անտիգոնէ. Այն՝ որ Կրէոնը պատուիրել է թաղել մեր եղբայրներից մէկին, իսկ միւսին զրկել է վերջին յարգանքից։ Էթէոկլը, ասում են, արժանացել է օրինավայել թաղման կարգին և փառօք իջել ստուերների աշխարհը ստորին, իսկ անփառունակ Պոլինիկի դիակը, ասում են, հրամայել է թողնել անթաղ, արգելել է սուգ անել վրան և պատուիրել, որ այդպէս անլաց ու անթաղ թողնեն դաշտում, իբր անուշ պատառ՝ համեղ որս փնտռող թռչունների համար։ Ահա թէ ինչ է հրամայել, ասում են, քաջն Կրէոն քեզ և ինձ... (զայրոյթով) այո՛ և ինձ։ Եւ ահաւասիկ գալու է այստեղ իր այդ պատուէրը յայտնելու նրանց, որոնք դեռ ևս հաստատ չը գիտեն։ Եւ վայրիվերոյ չէ այդ հրամանը, ըմբոստացողը քարկոծելու է քաղաքի մէջին։ Ահա թէ ինչ էի ուզում քեզ ասել։ Այժմ մնում է, որ ցոյց տաս, արդեօք ազնիւ հոգի՞ ես քաջատոհմիկ, թէ՞ վատարի սերունդ վեհ նախնիքների։

Իսմենէ. Եթէ այդպէս է, քոյրիկ իմ թշուառ, ինչ կը գայ ձեռքս՝ ուզեմ թէ չուզեմ։

Անտիգոնէ. Միտք արա, տես, չե՞ս կարող արդեօք օգնել ինձ, աջակցել մի կերպ...

Իսմենէ. Ի՞նչ վտանգաւոր բան ես ուզում անել։

Անտիգոնէ. Օգնիր ինձ դիակը վերցնել։

Իսմենէ. (վախով) Չը նայած ընդհանուր հրամանին, դու ուզում ես թաղել նրան։

Անտիգոնէ. Այո, թաղել իմ և քո եղբօրը։ Դու կարող ես հրաժարուել նրանից, բայց ես՝ երբէք։

Իսմենէ. Ցանդուգն... Չէ՞ որ Կրէոնը արգելք է դրել...

Անտիգոնէ. Ի՞նչ իրաւունք ունի նա արգելել ինձ սիրել հարազատներիս։

Իսմենէ. Օ՜հ... Յիշիր, քոյր իմ, թէ ինչպէս ամենքից ատուած ու անարգուած մեռաւ մեր հայրը, սեփական ձեռքով հանելով իր երկու աչքը, երբ իմացաւ իր գործած ոճիրները։ Ու ինչպէս յետոյ նրա մայրը, որ և նրա կինն էր, կախուեց, տխուր վերջ տալով իր սև օրերին։ Եւ այնուհետև ինչպէս մեր երկու խեղճ եղբայրները միևնոյն օրը մենամարտի մէջ միասին ընկան միմեանց ձեռքից։ Այժմ մենք երկուսս ենք մնացել միայն։ Մի լաւ մտածիր, թէ ինչ սոսկալի մահ է սպասում մեզ, եթէ խախտելով օրէնքը, արհամարհենք արքայի կամքն ու հրամանը։ Այն էլ միտք արա, որ մենք, կանայքս, այնքան ոյժ չունենք, որ կռիւ մղենք տղամարդկանց դէմ. երբ իշխանութիւն կայ մեր գլխին, պիտի հնազանդենք նրա պատուէրներին, անգամ վատթարներից վատթարին։ Ես պատրաստ եմ այս մեղքիս համար թողութիւն հայցել ուրուականներից, բայց չեմ կարող ըմբոստանալ իշխանաւորի դէմ։ Յիմարութիւն է մարդուս կողմից այնպիսի բան բռնել, որ վեր է ուժից։

Անտիգոնէ. (յետ քաշուելով՝ սառն ու հպարտ) Ես քեզ չեմ ստիպում, և եթէ նոյն իսկ ցանկանաս էլ այժմ աջակցել ինձ, ուրախ չեմ լինի քո օգնութեանը։ Դու վարուիր, ինչպէս կամենաս, իսկ ես, ինչ էլ լինի, կը թաղեմ նրան և այնուհետև ուրախութեամբ կընդունեմ ամեն տեսակ մահ։ Սուրբ յանցաւորս կը պառկեմ նրա հետ մի դագաղի մէջ, սիրուած քոյրս սիրած եղբօրս կողքին. չէ՞ որ մեռելներին աւելի երկար ժամանակ պիտի հաճոյանամ, քան ողջերին, որովհետև հողի տակ հանգչելու եմ յաւիտեան։ Իսկ դու, քո բանն է, արհամարհիր այն, ինչ որ աստուածները սուրբ են համարում։

Իսմենէ. (վախով) Ես չեմ արհամարհում դից օրէնքները, բայց ոյժ չունեմ այնքան, որ հակառակեմ ամբողջ քաղաքին։

Անտիգոնէ (կրքով) Ինչ ուզում ես՝ պատրուակ բռնիր. ես գնում եմ հող ածեմ հարազատներիս վրայ։ (Ուզում է գնալ. Իսմենէն կրտրում է ճանապարհը)։

Իսմենէ. Խեղճ կա։ Սիրտս դողում է քեզ համար։

Անտիգոնէ. (հպարտ) Ինձ համար վախ մի զգայ, դու քո գլխի ճարը տես։

Իսմենէ (Անտիգոնէի ձեռից բռնելով) Դեռևս բան մի ասա ոչ որի։ Ո՛չ մի խօսք։ Ես էլ նմանապէս։

Անտիգոնէ. (ձեռն ազատելով) Օ, ոչ, ասա։ Ես աւելի սաստիկ կատեմ քեզ, եթէ լռես, քան եթէ պատմես ամբարշտութիւն։

Իսմենէ. (կանգնած է անշարժ ու գլխակոր. արտասուախառն) Դու տաքանում ես այնտեղ, ուր պէտք է դառել սառնասիրտ։

Անտիգոնէ. Ո՛չ, ես լաւ գիտեմ, որ կը հաճոյանամ նրանց, ում ամենից աւելի պիտի հաճոյանամ։

Իսմենէ. Այո՛, եթէ կարենաս։ Բայց անհնար բան է քո ցանկացածը։

Անտիգոնէ. Երբ ուժս չը զօրի, կը հրաժարուեմ անշուշտ։

Իսմենէ. Պէտք չէ սկսել մի բան, որ անհնար է։

Անտիգոնէ. (տաքացած) Եթէ այդպէս խօսես, աւելի կը դառնաս և՛ ինձ և՛ մեռելին։ Թող ինձ, խնդրեմ, թոյլ տուր՝ կրեմ դաժան պատուհասս՝ խենթութեանս համար։ Ինչ էլ որ լինի, ոչ ոք չի կարող զրկել ինձ փառաւոր մահով մեռնելու բախտից։ (Արագ քայլով գնում է դէպի դաշտը. Իսմենէն խորին վշտով նայում է նրա յետեւից)։

Իսմենէ (Անտիգոնէի յետեւից) Որ այդպէս է՝ գնա, բայց գիտցիր, որ գնում ես թէև խելակորոյս, սակայն սիրառատ ու անգաւաճան սրտով։ (Ցիսուր վերադառնում է արքունիք աջակողմեան դռնով։ Բեմը պահ մի մնում է դատարկ։ Լռութիւն է)։

ԵՐԿՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

Քաղաքի կողմից երևում են տասնեհինգ ալեւորներ՝ Թեբէի մեծամեծներից։ Նրանց երեւալուն պէս ծագող արեւի առաջին ճառագայթները լուսաւորում են արքունիքը։ Հանդիսաւոր և յաղթական երաժշտութիւն։

ԱԼԵՒՈՐՆԵՐԻ ԽՈՒՄԲԸ

Ղեումքը. Արեւի շողեր, աւելի ուրախ, քան երէկ՝ լուսաւորեցիք դուք եօթնադուռ Թեբէն։ Վերջապէս ծագեցիք դու, զարթուն աչքդ ցերեկւան։ Երբ ոսկեղէն ցոլքերդ առաջին դիպան Դիրկէյ վտակի ջրին, ի փախուստ դարձաւ Արգոսից եկած սպառազէն զօրքը ճերմակավահան։ Երբ դու ծագեցիր, կրկնապատկուեց նրանց տագնապը։

Թագի ծարաւ Պոլինիկը բերել էր նրանց մեզ նւաճելու։ Որպէս մի արծիւ սպիտակաթև ու սրաճիչ՝ սլացել էր նա դէպի Թեբէ, առաջնորդելով բիւրաւոր զօրքեր ձիաբաշ փայլուն սաղաւարտներով։

Վերեւում թառած՝ նա շրջապատեց եօթնադուռ Թեբէն մահաբեր բիւր նիզակներով, բայց յետ նահանջեց առանց յաջողելու խմել մեր արիւնը իր սրած կտցով և ոչ էլ այրել քաղաքն օղակող աշտարակները ջահերի բոցով։

Կռիւ բռնկեց նրա թիկունքում. պաշտպանել սկսեց վիշապն անպարթ։

Առելով ատում է Զևսը մեծաբերան պարծենկոտներին։ Նա նայեց տեսաւ, թշնամիները բուռն յորձանքով խուժել են մեր երկիրը, յոխորտալով իրենց ոսկեզարդ զէնքի շառաչով, և շանթն արձակեց այն արգոսացու վրայ, որ բարձրանալով պատնէշի ծայրը, հոչակել էր ուզում իրենց յաղթանակը։

Գետինը թնդաց, երբ հրձիգ ջահը ձեռին՝ դիտապատաս ընկաւ շանթահար հսկան, որ փոքր ինչ առաջ մոլեգնում էր Բաքոսի քրմուհու նման ու մռնչում, որպէս մրրկաշունչ կատաղի քամի։

Այդպէս եղաւ այդ մէկի վերջը, իսկ մնացեալներին խորտակեց ու հալածեց մեր հովանաւոր Արէսը հզօր։

Եօթ զօրավարներ, որ կարգուած էին եօթ դռների մօտ Թեբացի եօթ զօրավարների դէմ, թողեցին պղնձաձոյլ շքեղ զրահները Յաղթաբար-Զևսին ու փախան բոլորը։ Եւ միայն երկու սեւարախտ որդիք մի հօր ու մի մօր մնացին դաշտում։ Ճօճելով նիզակները, երկուստեք անվրէպ, յարձակուեցին նրանք իրար վրայ և դիտապատաս ընկան երկուսը միասին։

Սակայն ժամանեց Յաղթութեան ասաւածուհին մեծափառ, ժպիտ բերելով կառաշատ Թեբէին։ Մոռանանք ուրեմն անցած պատերազմը։ Այցելենք դից բոլոր տաճարները ու պար գանք այնտեղ գիշերը մինչ լոյս։ Եւ թող Բաքոսը լինի մեր պարագլուխը։

Բայց ահա գալիս է այստեղ յանկարծահաս դէպքերի բերմամբ, կամօքն ասաւածոյ, երկրիս նոր արքան, Մենեկէյի որդի Կրէոնը։ Ի՞նչ խորհուրդներ են յուզում իր սիրտը, որ այսպէս հապճեպ ժողովի կանչեց ալևորներիս, մունետիկի բերնով յայտարարելով ի լուր ամենքի։

ԵՐԿՐՈՐԴ ԱՐԱՐԱԾ

ԱՌԱՋԻՆ ՏԵՍԱՐԱՆ

Կրէոնը թիկնապահների շքախմբով երևում է դաշտի կողմից։ Դէմքի վրայ տանջանքի գրոշմ։ Հաւասարելով իր արքունիքին, լուռ երախտագիտական աղօթքով ողջունում է արքունիքի ասաւածներին և յետոյ դիմում ալևորներին։

ԽՈՒՄԲԸ ԵՒ ԿՐԷՈՆԸ

Կրէոն. Քաղաքացիներ։ Ծանր փորձանքի ենթարկեցին ասաւածները մեր քաղաքը, բայց դարձեալ փրկեցին... (Կարճատեւ լռութիւնից յետոյ, աշխատելով յաղթահարել տխուր խոհերը) Ես միմիայն ձեզ հրաւիրեցի մունետիկների միջոցով, որովհետև լաւ գիտեմ, որ դուք սիրով հպատակուել էք Լայոսի տոհմին ու հաւատարիմ մնացել նրան և՛ էդիպի օրով, որ փրկելով երկիրը հրէշից՝ արքայ հոչակուեց, և՛ նրա եղերական մահից յետոյ, երբ որդիները ժառանգեցին գահը։ Այժմ, երբ նրա որդիները երկուսն էլ մահացան միմեանց ձեռքից, ես, իբրև նրանց ամենամօտիկ ազգականը, գահ բարձրացայ լիակատար իշխանութեամբ։ Մարդուս հոգին, հայեացքներն ու դիտումները ար-

տայայտում են լրիւ՝ նրա իշխանաւոր և օրէնսդիր դարձան այն ժամանակ միայն։ Այն թագաւորը, որ երկիրը կառավարելիս չի իրագործում այն, ինչ որ լաւագոյնն է համարում, այլ ահից դրդուած նստում է լուռ ու մունջ, ինձ թւում է՝ արժանի է արհամարհանքի, և այդպէս է եղել միշտ իմ կարծիքը։ Իսկ այն մարդը, որ բարեկամին դերադասում է հայրենիքից, չնչին արարած է իմ աչքում։ Վկայ է Զեւսն ամենատես, ես չեմ լռի երբէք, եթէ տեսնեմ, որ մեր քաղաքին փառքի փոխարէն ապէտ է ապատում, և ոչ էլ բարեկամութիւն կանեմ հայրենի երկրիս թշնամիների հետ։ Այս է մեր փրկութեան խարիսխը։ Բարեկամներ մենք միշտ կը գտնենք, միայն թէ մեր նաւը չը շեղի ճամբից։ Հետևելով այս կանոններին, ես կը շէնացնեմ մեր քաղաքը։ Եւ ահա, այդպէս մտածելով, ես փոքր ինչ առաջ այս հրամանը արձակեցի քաղաքացիներին էդիպի որդուց նկատմամբ. Էթէոկլին, որ ընկաւ իբրև կատարեալ հերոս, պաշտպանելով քաղաքն հայրենի, պատիւներով թաղել այն բոլոր մեծարանքներով, որոնք տրւում են բաջարի հանգուցեալներին, իսկ նրա եղբօրը՝ Պոլինիկին, որ աքսորից վերադառնալով, ուզում էր հիմնիվեր այրել իր հայրենիքը, կործանել հարազատ դէց մեհեանները, խմել եղբօր արիւնն ու գերի տանել ամբողջ ժողովուրդը, ես արգելեցի հողին յանձնել և կամ լալ վրան։ Թող անթաղ մնայ ու այլանդակ գէշը շան ու թռչունի կերակուր դառնայ։ Այս է իմ կամքը։ Անօրէնը երբէք չի ստանայ ինձնից արդարին վայել յարգը, իսկ նրանք, որոնք ուղիղ սրտով են վերաբերւում մեր քաղաքին, միշտ կարժանանան պատւի՝ ողջ թէ մեռած։

(Լռութիւն։ Ալեւորները խորհրդակցում են իրենց մէջ մտահոգութեամբ ու երկիւղով։ Ոմանք ձեռները բարձրացնում են դէպի երկինք, կարծես վկայ կանչելով աստուածներին. միւսներն աշխատում են համոզել դրանց. դրանք յակամայից համաձայնում են։ Հետզհետէ յաղթանակում է Կրէոնին նպաստաւոր տրամադրութիւնը։ Խօսք է առնում առաջին ալեւորը)։

Առաջին ալեւորը. Այդպէս է քո վճիռը, Կրէոն, որդիդ Մենեկէյի, մեր քաղաքի բարեկամի ու չարակամի մասին։ Դու անշուշտ իրաւունք ունես ինչ որ ուզես՝ օրէնք հաստատել թէ մեռելների, թէ ողջերի համար։

Կրէոն. (որ անախորժութեամբ դիտում էր ալեւորների տատանման լուռ տեսարանը) Ուրեմն լաւ հսկէք, որ հրամանս ի կատար ածւի։

Առաջին ալեւորը. Երիտասարդներին յանձնիր այդ բանը։

Կրէոն. Դիակի մօտ արդէն կարգւած են պահապաններ։

Առաջին ալեւորը. Ի՞նչ ես հապա պատւիրում մեզ։

Կրէոն. Թոյլ չը տալ, որ խախտեն հրամանս։

Առաջին ալեւորը. (խուսափողաբար) Ո՞վ այնքան յիմար կը լինի, որ մահ փնտռի իր համար։

Կրէոն. Այո, այդ է իմ ընտրած պատիժը, բայց շահասիրութիւնը շատ անգամ է կորուստի մատնել մարդկանց։

ԵՐՐՈՐԴ ԱՐԱՐԱԾ

ԱՌԱՋԻՆ ՏԵՍԱՐԱՆ

ԱՆՏԻԳՈՆԷ, ԽՈՒՄԲԸ ԵՒ ՊԱՀԱՊԱՆԸ

Պահապանը. (արագ ներս է մտնում բեմը) Ահա յանցաւորը. թաղելու վրայ էր, որ բռնեցինք. բայց ո՞ւր է Կրէոնը...

Առաջին ալեւորը. (տխուր նայելով Անտիգոնէին) Ահա ի գէպ գալիս է և նա (Կրէոնը դուրս է գալիս պալատից)։

Կրէոն (Անտիգոնէին) Է՛յ, դո՛ւ։ Ի՞նչ ես քաշ գցել գլուխդ... Խոստովանո՞ւմ ես յանցանքդ, թէ ոչ...

Անտիգոնէ. (հանգիստ, առանց դիրքը փոխելու) Այո՛, խոստովանում եմ, չեմ ուրանում։

Կրէոն. (պահապանին) Դու ազատ ես. գնա, ուր ուզում ես։ Դու արդարացար ծանր մեղադրանքից. (պահապանը վազելով հեռանում է։ Անտիգոնէին՝ խստիւ) Իսկ դու ասա ինձ կարճ ու կտրական, առանց պատէպատ ընկնելու, գիտէ՞ր արդեօք, որ ես արգելել էի դիակը թաղել։

Անտիգոնէ. Ի՞նչպէս կարող էի չիմանալ, երբ արգելքը յայտնի էր ամենքին։

Կրէոն. Բայց և այնպէս յանդգնեցի՞ր խախտել հրամանս։

Անտիգոնէ. Ո՛չ Զեւսից էր այդ հրամանը տրուած ի վերուստ և ոչ էլ այդպիսի օրէնք է սահմանել Արդարութեան դիցուհին, յարկակիցը ստորերկրեայ դից։ Եւ չէի կարծում, թէ այնքան սուրբ են քո պատուէրները, որ դու, մարդ տեղովդ, կարող ես խախտել աստուածների թէպէտ և անգիր, բայց յաւիտենական օրէնքները, որոնք ոչ այսօր են երևան եկել և ոչ երէկ, այլ եղել են միշտ և որոնց սկիզբը անյայտ է մարդկանց։ Ի՞նչ նշանակութիւն ունէր վախը մարդկանցից, երբ չէի ուզում ենթարկուել դից դատաստանին, իբր զանցառու այդ օրէնքների։ Առանց քո ասելուն էլ ես լաւ գիտէի, որ պէտք է մեռնեմ, և ո՞վ է անմահ։ Իսկ եթէ վիճակւի ինձ մահ վաղաժամ, երջանկութիւն կը համարեմ ես այդ ինձ համար։ Կարո՞ղ է միթէ մահ չը բաղձալ նա, ով ինձ պէս ապրում է ծով տանջանքի մէջ։ Ուստի և ցաւ չի պատճառում ինձ այս վիճակը. բայց եթէ անտարբեր սրտով անթաղ թողնէի իմ մօր զաւակի մարմինը, ահա այն ժամանակ պիտի մղկտար հոգիս, և ոչ թէ այժմ։ Իսկ եթէ դու անմիտ բան ես համարում իմ արածը, պէտք է քեզ ասեմ, որ իսկական անմիտը ես չեմ, այլ նա, ով ինձ հանդիմանում է իբր անմիտի։

Առաջին ալեւորը. (տխուր) Կամակոր հօր կամակոր աղջիկ։ Գլուխ չի թեքում աղէտի առաջ։

Կրէոն. (ալեւորներին, աշխատելով հանգիստ ձեւանալ) Բայց լաւ իմացէք, որ ինչքան աւելի յամառ է մարդս, այնքան աւելի հեշտ է ընկճւում։ Շատ անգամ անշուշտ տեսած կը լինէք, ինչպէս փշուրփշուր է լինում կրակում մնացած կարծր երկաթը, և այն էլ գիտէք, որ ըմբոստ ձիանց զսպում են փոքրիկ սանձերով։ Վայել չէ խոպան

խրոխտանքը նրանց, որոնք ստորադրեալ են ուրիշ մարդկանց։ (Ցույց տալով Անտիգոնէի վրայ) Սա անարգեց ինձ դեռ այն ժամանակ, երբ չը կատարեց իմ ուած հրամանը։ Այժմ կրկին անգամ անարգում է ինձ, պարծենալով իր արածովը և ծաղրելով ինձ։ Եթէ անպատիժ թողնեմ այդ յանդգնութիւնը, տղամարդը ես չեմ լինի, այլ դա։ Թէև քրոջս աղջիկն է դա, ամենամօտիկը աղջականներից, որոնց պաշտպան է Զևսն ընտանեպահ, բայց և այնպէս չեն ազատի չարաչար պատժից ոչ դա, ոչ էլ իր բոյրը, որ անշուշտ նոյնպէս մասնակցել է թաղման։ Կանչեցէք նրան։ (Երջապատողներից մէկը գնում է Իսմենէին կանչելու)։ Ես մի փոքր առաջ տեսայ նրան պալատում։ Յուզմունքի մէջ էր մոլեգնի նման։ Ով պաղատագրի չարիք է նիւթում, առհասարակ մատնում է դաղտնիքը ժամանակից վաղ։ (Դէմ նայելով Անտիգոնէին) Բայց ատելի է ինձ նաև նա, ով բռնելով յանցանքի տեղում, ճգնում է արդար ձևանալ։

Անտիգոնէ. Բռնելուցս յետոյ ինչ պատիժ ես տալու ինձ աւելի վատթար, քան մահը։

Կրէոն. Ոչ մի ուրիշ պատիժ. բայց երբ ձեռիս է մահդ, ձեռիս է ամեն ինչ,

Անտիգոնէ. Էլ ինչ ես սպասում։ Ինչպէս հաճելի չէ ինձ և ոչ մէկը քո խօսքերից, և տայ աստուած, որ երբէք հաճելի չը լինի, այնպէս էլ քո սրտովը չեն իմ ասածները։ Սակայն ինչով կարող էի ես աւելի փառք ժառանգել, քան նրանով, որ թաղեցի հարազատ եղբօրս։ (Ցույց տալով ալեւորների վրայ) Սրանք էլ բոլորը կը գովէին իմ արարքը, եթէ վախը չը կապէր լեզուները։ (Դառն հեգնանքով) Ուրիշ շատ առաւելութիւնների հետ այն առաւելութիւնն էլ ունեն իշխողները, որ կարող են անել և ասել, ինչ որ կամենան...

Կրէոն. Թեբացիներից միմիայն դու ես քեզ արդար համարողը։

Անտիգոնէ. Սրանք բոլորն էլ համամիտ են ինձ, բայց չեն համարձակում բերան բանալ քո առաջ։

Կրէոն. Եւ դու չե՞ս ամաչում, որ չես վարւում դրանց պէս։

Անտիգոնէ. Օ՜, ոչ։ Ինչո՞ւ պիտի ամաչի նա, ով մեծարում է իր հարազատին։

Կրէոն. Բայց մի՞թէ հարազատ եղբայրդ չէր և նա, որ ընկաւ սրա ձեռից։

Անտիգոնէ. Եղբայրս էր մի մօրից և մի հօրից։

Կրէոն. Հապա ինչո՞ւ ես անարգում նրան։

Անտիգոնէ. (խօսքը կտրելով) Ինքը հանգուցեալն այդ բանը չի ասի։

Կրէոն. (շարունակելով) Համահաւասար մեծարանք տալով նրան և ոճրագործին...

Անտիգոնէ. (վիշտ ու զայրոյթով լի) Սա էլ ստրուկ չէր, այլ իր եղբայրը։

Կրէոն. Բայց սա աւերում էր մեր երկիրը, իսկ նա պաշտպանում...

Անտիգոնէ. Այո։ Բայց մահը պահանջում է, որ իր օրէնքները կատարուեն ամենքի նկատմամբ առանց խտրութեան։

Կրէոն. Բայց և այնպէս չի կարելի ամբարիշտին հաւասարեցնել ազնիւ մարդուն...

Անտիգոնէ. Ո՞վ գիտէ, արդեօք, անսխալ են համարում քո հասկացողութիւնները այն աշխարհում։

Կրէոն. Թշնամին, թէպէտև մեռած, թշնամի է դարձեալ և ոչ բարեկամ։

Անտիգոնէ. (բուռն զգացմունքով) Ես ծնուել եմ միասին սիրելու և ոչ թէ միասին ատելու համար։

Կրէոն. (ձեռը մեկնելով դէպի գետինը) Գնա ուրեմն մեռելներիդ մօտ և եթէ պէտք է սիրել, սիրիր նրանց, իսկ ես, քանի դեռ կենդանի եմ, չեմ թողնի, որ մի կինարմատ տէր լինի գլխիս։ (Պալատի աջակողմեան դռնից դուրս է գալիս Իսմենէն՝ արցունք թափելով։ Երբ նա երևում է, սկսում է մեղմ երաժշտութիւն, որի նուագակցութեամբ երգում է առաջին ալեւորը)։

Առաջին ալեւորը. Ահա և Իսմենէն դուրս է գալիս դռնից, հարազատի բախտը լալով։ Թոխիծի ամպը մռայլել է ճակատը և այլայլել վարդագոյն դէմքը։ Զքնաղ այտերի վրայով հոսում են արցունքի շիթեր։

ՉՈՐՐՈՐԴ ԵՐԵՐԻՑԹ

ԱՌԱՋԻՆ ՏԵՍԱՐԱՆ

ԽՈՒՄԲԸ, ԿՐԷՈՆ ԵՒ ՀԵՄՈՆ

Կրէոն. (որ մինչ այդ տխուր մտածմունքի մէջ էր խորասուզուած, վեր է կենում տեղից եւ դժգոհ կերպով դիմում ալեւորներին) Իսկոյն կիմանանք, առանց գուշակներին դիմելու։ (Հեմոնին) Որդեակ իմ, իմացել ես անշուշտ վերջնական վճիռս քո հարսնացուի մասին։ Զայրացած ես արդեօք իմ դէմ, թէ՞ այժմ էլ սիրելի եմ քեզ։

Հեմոն (մեղմ ձայնով) Ես քոնն եմ, հայրիկ, հոգով ու մարմնով։ Խոհեմ խորհուրդներով դէպի բարին ես առաջնորդում ինձ և ես պատրաստ եմ հետևել քեզ։ Եթէ դէպի բարի նպատակ ես մղում ինձ, այդ բարձր է ինձ համար ամեն պսակից։

Կրէոն. (թեթեւացած սրտով) Այո, որդեակս, մի՛ մոռանայ, որ հայրական կամքը ամեն բանից վեր պիտի դասես միշտ։ Մարդ նրա համար է ուզում հլու զաւակներ ունենալ ընտանիքում, որպէսզի նրանք վրէժ լուծեն իր թշնամիներից և յարգեն բարեկամներին իր պէս։ Իսկ ով վատ զաւակների տէր է, նրա մասին կարելի է ասել, որ ծանր բեռ է ծնել իր համար և ծաղր ու ծանակի առարկայ դարձել թշնամու բերնում։ Ուստի խորհուրդ եմ տալիս քեզ, սիրելի որդեակս, խելքդ երբէք չը կորցնել կնոջ սիրոյ համար, լաւ իմանալով, որ սառը կը լինի տանդ մէջ բոյն դրած չար ու անզգամ կնոջ գիրկն ու գգւանքը։ Ի՞նչ կարող է լինել աւելի վատթար, քան վատ ազգականը։ Վանիր ուրեմն քեզնից այդ ապշկան, թող նոր փեսացու փնտռի

իր համար այն աշխարհում։ Քանի որ ամբողջ քաղաքում միմիայն դա գտնուեց իմ հրամանը խախտող, չեմ ուզում ստախօս դուրս գալ համայնքի առաջ և կը պատուիրեմ մահուան մատնել դրան, թէպէտև օգնութեան կանչի ընտանեկան իրաւանց պահապան Զեսին։ Ի՞նչ հնազանդութիւն կարող եմ ապասել օտարներից, երբ ըմբոստներ սնուցանեմ սեփական տանս։ Նա միայն կարող է անաչառ լինել հանրային գործում, ով կառավարում է ընտանիքը խոհեմ խստութեամբ։ Եւ կարելի է վստահ լինել, որ նա և՛ իշխել կիմանայ և՛ հնազանդել ու բարի և արի զինակից կը լինի դռռ մարտի ժամին։ Իսկ նա, ով անձնապաստան՝ խախտում է օրէնքը և ձգտում հրամաններ տալ թագաւորներին, թող դովասանքի խօսք չսպասի ինձնից։ Ժողովրդի ընտրեալին պէտք է հնազանդել ոչ միայն այն ժամանակ, երբ հրամանը թեթև է ու արդար, այլ և ներհակ դէպքում։ Զը կայ մի չարիք աւելի վատ, քան անիշխանութիւնը։ Նա կործանում է ամբողջ քաղաքներ, քանդում, աւերում շէն ու լի տներ, ի փախուստ դարձնում զինընկերներին։ Իսկ հնազանդութիւնը փրկում է մարդկանց։ Ուրեմն պէտք է օրէնքը պաշտպանել և ոչ թէ տեղի տալ կինարմատի առաջ։ Եթէ պէտք է մարդ պարտի, թող ընկնի տղամարդու ձեռքից և ոչ թէ լինի կնոջից էլ կնատ։

Առաջին ալեւորը. Եթէ ձերութիւնը չի խաբում մեզ, թւում է մեզ, թէ արդար է ասածդ։

Հեմոն. Ասուածները, հայրիկ, մարդուս օժտել են խելքով, որ գերագոյնն է բոլոր բարիքներից։ Ես չեմ ասում, թէ անարդար են խօսքերդ, ես չեմ կարող հաստատել այդ և լաւ է, որ չեմ կարող. բայց չէ՞ որ ուրիշներն էլ կարող են ողջամիտ դատել։ (Կրէոն ցնցւում է։ Որդու խօսքերի շարունակութիւնը լսում է աւելի ու աւելի դժկամակութեամբ առ այն, թէ որդին իզուր է աշխատում փարատել իր խօսելու անկեղծ ու սրտագին եղանակով) Ինձ անշուշտ աւելի հեշտ է իմանալ, քան քեզ, թէ ինչ են խօսում մեր շուրջը, կամ ինչ անում, և կամ ինչ պարսաւում։ Դու դաժան հայեացքով սաստում ես նրանց, որոնց ասածը ախորժ չէ սրտիդ, իսկ ես առանց ինձ մատնելու կարողանում եմ լսել, թէ ինչպէս քաղաքացիք խղճում են այդ թշուառ աղջկան։ «Բոլոր կանանց մէջ ամենից անմեղն է նա, ասում են նրանք, և ամենևին արժանի չէ մահուան իր անպայման ազնիւ արարքի համար։ Եթէ նա չի կամեցել անթաղ թողնել ի կեր շների ու թռչունների մենամարտում ընկած հարազատ եղբօրը, մի՞թէ արժանի չէ նա փառաւոր պատուի այդ բանի համար»։ Ահա ինչ խուլ շշուկ է տիրում ամբողջ քաղաքում։ Ինձ համար, հայրիկ, ամենից բանից վեր է քո երջանկութիւնը։ Ինչո՞վ կարող են աւելի պարծենալ որդիք, քան իրենց երջանիկ հօր բարի անունով և հայրերը՝ իրենց որդոց։ Արդ՝ մտքումդ մի դնի, թէ այն է միայն ճշմարիտ, ինչ որ դու ես կամենում և ոչ ուրիշները։ Նա, ով միմիայն իրեն է համարում և՛ խելօք, և՛ պերճախօս, և՛ բարեբարոյ՝ իբր բացառութիւն բոլոր մարդկանց մէջ, երբ լաւ քննում ենք, սովորաբար պարծենկոտի մէկն է դուրս գալիս։ Մարդու համար, թէպէտև լինի շատ իմաստուն,

երբէք ամօթ չէ նոր բան սովորել և իր ասածի վրայ միշտ չը յամառել։ Տեսնում ես, ինչպէս են փրկում իրենց ճիւղերն այն ծառերը, որոնք գետերի յորդացած պահին ճկւում են ներքև, մինչդեռ ցից կանգնածներին արմատախիլ արած տանում է յորձանքը։ Այդպէս և նաւը, երբ առագաստը չեն ծալում փոթորկի ժամին, կործւում է գլխիվայր, և նաւորդները նրա բեկորների վրայ են փրկում իրենց կեանքը։ Մեղմիր ուրեմն ցասումդ և փոխիր արձակած վճիռդ։ Եթէ կարողանայի պատանի տեղով յայտնել իմ կարծիքը, ես կասէի, որ լաւ կը լինէր, եթէ ամեն մարդ ի բնէ ամենագէտ լինէր։ Բայց այդպիսի դէպքեր շատ են հազւադիւտ, ուստի լաւ է ուսանել նրանցից, որոնք խելօք են խօսում։

Առաջին ալեւորը. Տէր արքայ, եթէ արդար բան կայ սրա խօսքերում, լսիր ասածին, (*ցոյց տալով Հեմոնի վրայ*) դու էլ հօրդ լսիր, երկուսդ էլ խելօք խօսեցիք։

Կրէոն. Ի՞նչ. այս ձեր տեղով պատանիներից պիտի խելք սովորեմ։

Հեմոն. (*հանգիստ*) Սովորիր միայն այն, ինչ որ ազնիւ է, հայր։ Ի՞նչ անենք, որ պատանի եմ։ Դու արարքիս նայիր և ոչ տարիքիս։

Կրէոն. Ո՞ր գովական արարքիդ, այն, որ յարգում ես անզգամներին։

Հեմոն. Ոչ, ես երբէք չէի պահանջի յարգ մատուցանել անզգամ մարդկանց։

Կրէոն. Այս աղջկանից էլ լաւ անզգամ։

Հեմոն. Ոչ մի թեբացի չի ասի այդ։

Կրէոն. Մի՞թէ քաղաքացիք են սովորեցնելու ինձ իմ անելիքը։

Հեմոն. Չե՞ս զգում, որ այժմ դու խօսեցիր երեխայաբար։

Կրէոն. Ասա խնդրեմ, ե՞ս եմ իշխելու իմ երկրում, թէ՞ մի ուրիշը։

Հեմոն. Ո՞վ կարող է ասել, թէ երկիրը գոյութիւն ունի միայն մի մարդու համար։

Կրէոն. Բայց չէ՞ որ երկիրը արքայի սեփականութիւնն է համարւում հասարակաց կարծիքով։

Հեմոն. (*դառն հեգնանքով*) Ի՞նչ լաւ թագաւոր կը լինէիր անապատ երկրում։

Կրէոն. (*ալեւորներին աւելի ու աւելի բարկացած*) Տեսնում էք, ինչպէս է պաշտպանում սա անզգամին։

Հեմոն. Այո, եթէ անզգամը դու ես, որովհետև ես քո մասին եմ հոգում։

Կրէոն. Ախ, անպիտան, դու հակաճառում ես հօրդ...

Հեմոն. Տեսնում եմ, որ մեղանչում ես արդարութեան դէմ։

Կրէոն. Ինչպէ՞ս ես մեղանչում եմ... պաշտպանելով իմ իշխանութիւնը...

Հեմոն. Դու ամենևին չես պաշտպանում քո իշխանութիւնը, եթէ թոյլ ես տալիս քեզ խախտել դից օրէնքները։

Կրէոն. Սատ՞ր արարած։ Կինարմատ սարուկ։

Հեմոն. Յամենայն դէպս, սարուկ չեմ պարութեան։

Կրէոն. Բայց դու միմիայն նրա մասին ես խօսում։

Հեմոն. Այո, բայց և՛ քո, և՛ իմ, և՛ Մահուան դից մասին։

Կրէոն. Մի քծնի իմ առաջ, թշուառ կնամոլ։

Հեմոն. Դու ուզում ես խօսել և խօսում ես անարդար, բայց ուրիշներին լսել չես ուզում։

Կրէոն. Ոչ, քո կինդ չի լինի նա, բանի դեռ կենդանի է։

Հեմոն. (ցնցւում է եւ ցաւագնօրէն ձեռով իր սիրտը բռնում։ Լուսթիան ապա խուլ ձայնով) Բայց եթէ նա մեռնի, մի ուրիշին էլ հետը կը տանի։

Կրէոն. (սխալ հասկանալով որդու երկիմաստ խօսքերը, կատաղի զայրոյթով) Օ՜օ, այնքան յանդգնացել ես, որ նոյն իսկ սպառնում ես ինձ։

Հեմոն. (հեգնանքով) Մի՞թէ սպառնալ է նշանակում, երբ մարդ պատասխանում է անմիտ խօսքերի։

Կրէոն. Տես, որ վայ չը տաս քո յիմար դլխին, երբ խելօքանամ։

Հեմոն. Եթէ իմ հայրը չը լինէիր, կասէի որ խելքդ դլխիդ չէ։

Կրէոն (կատաղած) Հա՜... ծեռները դէպի երկինք բարձրացնելով) Ուրեմն իմացիր, երդւում եմ Օլիմպով, որ քեզ թանկ կը նստի ինձ այդպէս ծաղրելդ ու հայհոյելդ։ (Ստրուկներին) Այստեղ բերէք այդ արարածին։ Թող խկոյն և եթ մեռնի իր այս վեսացուի աչքի առջև, սրա ներկայութեամբ, սրա կողքին...

Հեմոն. (մոայլ վճռականութեամբ յետ է քաշւում) Ո՛չ, ոչ իմ աչքի առջև։ Չը յուսաս, որ այդ կարող է լինել երբ և է։ Նա չի մեռնի իմ կողքին, ինչպէս դու չես տեսնի ինձ այլևս։ Կարող ես մոլեգնել բարեկամներիդ հետ, որոնց սրտին, ինչպէս տեսնում եմ, ախորժելի է այդ։ (Վազելով հեռանում է դէպի դաշտը, երկրպատեւ լուսթիան)։

ՀԱՆԴԵՊՈՒԹԻՒՆ ԱՐՔԵՔԱՆ

ԵՐԿՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

ՆՈՅՆ ԱՆՁՐԵՎ ԵՒ ԿՐԷՈՆԸ

Կրէոն. (տեսնելով, որ Անտիգոնէին դեռ չեն տարել, ցնցւում է եւ բարկութեամբ ասում, դիմելով ալեւորներին) Լաւ իմացէք, որ եթէ մեռնելուց առաջ յանցաւորներին իրաւունք տուէր լալ ու սրբարնջալ, ոչ մի վերջ չէր լինի դրան։ (Դիմելով ստրուկներին եւ ցոյց տալով Անտիգոնէի վրայ)։ Շուտ արէք, տարէք դրան ու փակեցէք, ինչպէս հրամայեցի, քարանձաւի մէջ, բոլորովին մէն-մենակ. թող այնտեղ մեռնի կամ ապրի կոյր բուի նման։ Իմ ձեռները մաքուր կը լինեն դրա արիւնից, բայց դա չի մնայ այս լոյս աշխարհում։

Կրէոնի հրամանից յետոյ ստրուկները ուզում են տանել Անտիգոնէին, բայց նա դուրս է պրծնում նրանց ձեռից։ Ստրուկները տարակուսած նայում են պետերից ոմանց, որոնք Կրէոնից ու Անտիգոնէից անկախ՝ նշան են անում հրանց, որ չը խանգարեն Անտիգոնէին)։

Անտիգոնէ. (բեմի մէջ տեղն անցնելով) Ո՞վ շիրիմ, ո՞վ իմ

հարսնարան, դեռնափոր տուն յաւիտենական։ Գնում եմ այնտեղ, հարդապանների մօտ, որոնցից շատ շատերին է ընդունել արդէն Պերսեֆոնէն։ [1]) Նրանցից վերջինն եմ ես վաղամեռիկս, և իմ մահը աւելի է սոսկալի, քան նրանցը, որովհետև ես գնում եմ նրանց մօտ դեռ ես կենդանի։ Բայց գնալով այնտեղ, ես ջերմ յոյս ունեմ, որ սիրով կը հանդիպի ինձ իմ հայրը, քաղցրութեամբ կընդունես ինձ և դու, իմ մայրիկ, և դու, իմ անգին եղբայր։ Երբ դուք մեռաք, ես իմ ձեռքով լուցի ձեր դին ու հաղցրի և դամբանական զեղումն կատարեցի ձեր յիշատակին։ Պոլիդեվկ, այժմ մահի են մատնում ինձ այն բանի համար, որ ես թաղեցի քեզ, թէպէտ մեծարելով քո դիակը, ես ազնիւ մարդկանց աչքում կատարեցի միայն իմ սրբազան պարտքը։ Եթէ հարազատ զաւակս մեռնէր կամ մեռած ամուսնուս դիակը նեխուէր, ես երբէք յանձն չէի առնի այդպիսի մի ծանր հոգս, բոլոր քաղաքացոց կամքին հակառակ։ Ահա թէ ինչն է իրաւունք տալիս ինձ այսպէս գործելու։ Եթէ ամուսին ունենայի և մեռնէր, կարող էի մի ուրիշը գտնել, և եթէ անզաւակ մնայի առաջին ամուսնուցս, կարող էի զաւակ ունենալ երկրորդ պսակից, բայց հօր ու մօր մահուանից յետոյ ոչ ոք չի կարող նորից եղբայր ունենալ։ Սակայն յարգ մատուցանելով քեզ, ես, սիրելի եղբայր, մեղաւոր և ոճրագործ հանդիսացայ Երէոնի աչքում։ Նա ձերբակալեց ինձ ու բռնի տանում է դէպի գերեզման, և գնում եմ ես, կոյս թշուառականս՝ չարժանացած քաղցր պսակի, չը ճաշակած գգւանքն ամուսնու և ոչ համբոյրը հարազատ մանկան։ Գնում եմ Մահուան աշխարհը՝ լքուած իմ բոլոր մտերիմներից, կենդանի մեռած... Բայց ինչ ասուածային օրէնք եմ խախտել ես... (լռութիւն) Ի՞նչ հարկ կայ ուրեմն այլևս, որ ես, թշուառս, հայեացքս ուղղեմ դէպի աստուածները և օգնութիւն հայցեմ նրանցից, երբ բարեպաշտ արարքիս համար ամբաստիշտ անուն շահեցի... (բուռն զգացմունքով) Բայց եթէ այդպէս է աստուածների կամքը, այն աշխարհում ես մեղայ կը գամ, իսկ եթէ ընդհակառակը, մեղաւոր են իմ թշնամիները, աւելին չեմ ցանկանում նրանց. թող նրանք էլ այնպէս տանջուեն, ինչպէս յանիրաւի սպիտում են ինձ տանջել։

ԵՐԿՐՈՐԴ ԱՐԱՐԱՆՔ

Առաջին ալեորը. Ահա գալիս է ինքն արքան՝ ձեռին բռնած, սարսափելի է ասել, մի պերճախօս ապացոյց ոչ այլոց մեղքի, այլ իր անմտութեան։ (Խաշի կողմից գանգատ ու գլխակոր վերադառնում են Կրէոնն ու սուրակները, որոնցից մեռած կիներ ունեն ձեռներին։ Կրէոնը գրկել է Հեմոնի դիակը։ Ետևից գալիս են մի խումբ սուրակներ, բերելով պատգարակի վրայ Ամֆիզոնի դիակը։ Երբ զգերը կրեում է, ակում է երաժշտութիւն, նախ՝ գերեզմանի եղանակով, այնուհետև սառնիկ ոգեշունչ, իսկ ոգեզուրեան վերջում՝ կրկին գերեզմանի)։

---

[1]) Մահուան աշխարհի (դժոխքի) դիցուհին։

ՉՈՐՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

ԽՈՒՄԲԸ ԵՒ ԿՐԷՈՆ

Կրէոն. Վա՜յ իմ մահաբեր մեղքին, որ գործեցի անմիտ յամառութեանս մէջ։ (Ալեւորներին) Նայեցէք, աղջկանները են ապառնոն ու ապառուածը։ Վա՜յ իմ անխմաստ հրամաններին։ Որդեակս, դու մեռար ծաղիկ հասակում վաղաժամ մահով։ Վա՜յ ինձ, վա՜յ ինձ, արեգ մարեց ոչ քո, այլ իմ ամառութեան շնորհիւ։

Առաջին ալեւորը. Աւա՜ղ, շատ ուշ հասկացար ճշմարտութիւնը։

Կրէոն. Աւա՜ղ, ես, թշուառակս հասկացայ ճշմարտութիւնը։ Մեծ պատուհաս եկաւ իմ գլխին. ասուած խեղդս առաւ ու դրդեց գնալ անմտութեան ճանապարհով։ Նա խլեց ինձնից ու ոտնահարեց կեանքիս հրճւանքը։ Ո՜վ մահկանացուի ապարդիւն վաստակ։ (Լռութիւն. պալատից շտապով քեմ է գալիս Կրէոնի ստրուկներից մէկը)։

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

ՆՈՑՆ ԱՆՁԻՆՔ ԵՒ ԴՈՒԺԿԱՆԸ

Գուժկանը. Տէր արքայ, աղէտն անպակաս է քո տնից։ Ապացոյցներից մէկը ձեռիդ է, իսկ միւսը կը տեսնես, երբ ներս մտնես։

Կրէոն. (դողդոջուն ձայնով) Ի՞նչ աղէտ է մնացել աւելի վատ, քան այս աղէտը։

Գուժկանը. Մեռաւ տիկինը, որ կատաբեալ մայրն էր (ցոյց տալով Հեմոնի դիակը) հանգուցեալի կսկծից։

Կրէոն. Օ՜, ո՜, անողոք Մահ, ինչո՞ւ ես կոխուտի մատնում ինձ, ինչո՞ւ։ (Գուժկանին) Այդ ի՞նչ բօթ է, որ բերում ես ինձ։ Վերջին հարուածն ես ուզում տալ կիսամեռ մարդու։ Ի՞նչ ես ասում, ստրուկ։ Նոր աղէտ է եկել գլխիս. որդուս յետոյ կնոջս եմ ողբալու (պալատի միջին դուռը բացւում է, բակում, մուտքից մի քիչ հեռու, երեւում է Եւրիդիկէի դիակը. կերոնների քոցը պայծառ լուսաւորում է դիակը. նաժիշտներն ու ստրուկները լալիս են)։

Գուժկանը. (ցոյց տալով դիակը) Ահա երեւում է դռան արանքից։

Կրէոն. Վա՜յ ինձ, թշուառիս։ Մի նոր աղէտ էլ եկաւ գլխիս։ Էլ ի՞նչ նոր փորձանք պիտի սպասեմ որդուս դիակը ձեռիս, կնոջս դիակը առջեւս։ Վա՜յ քեզ, խեղճիկ մայր։ Վա՜յ քեզ, խեղճ որդեակս...

Գուժկանը. Սուսերահար գլորուեց բազինի առաջ ու աչքերը փակեց ընդմիշտ։ Նախ քան մեռնելը նա սգաց, աւելի վաղ կորած որդու, Մեգարէի մահը, ապա (ցոյց տալով Հեմոնի վրայ) սրա մահը և ի վերջոյ անիծեց քեզ, որդեսպանիդ։

Կրէոն. Վա՜յ ինձ, վա՜յ ինձ, զարգանդում է հոգիս։ Ինչո՞ւ ոչ որ չի խրում սուրը իմ կուրծքը։ Վերջ չը կայ ծով թշուառութեանս։

Գուժկանը. Այո, հանգուցեալ տիկինը քեզ վրայ էր բարդում... իր երկու որդոց և իր մահուան մեղքը։

Կրէոն. (աչքերը յառած նայում է Գուժկանին) Բայց ինչպէս վերջ տուեց իր կեանքին:

Գուժկան. Երբ իմացաւ որդու մահուան բոթը, ինքն իր ձեռով սուրը խրեց իր սիրտը:

Կրէոն. Աւաղ. ճիշտ է այդ։ Ես եմ մեղաւոր և ոչ ոք, բացի ինձնից։ Ես եմ քեզ սպանողը, իմ բերանով խոստովանում եմ այդ, Թշուառականս։ Ստրուկներ, տարէք ինձ իսկոյն այստեղից։ Հեռու տարէք ինձ այստեղից։ Իմ հաշիւը վերջացաւ այս աշխարհի հետ։

Առաջին ալեւորը. Քո ուզածը ձեռնտու է քեզ, եթէ ապէսը կարող է ձեռնտու լինել։ Զարիքներից լաւն այն է, որ կարճ է տեւում։

Կրէոն. Եկ, եկ, վերջին բաղձալի ապէտդ ինձ համար։ Եկ, եկ, իմ օրհաս։ Չեմ ուզում այլեւս տեսնել արեւի լոյսը։

Առաջին ալեւորը. Այդ ապագայի բան է։ Աւելի լաւ է այժմ հոգ տանես (ցոյց տալով դիակները) սրանց մասին։ Գալիքի մասին հոգացողներ կան ու կան։

Կրէոն. Սրտիս խղձն եմ յայտնում աղօթքով։

Առաջին ալեւորը. Զուր մի աղօթիր։ Փրկութիւն չը կայ ճակատագրի ձեռից։

Կրէոն. Հեռացրէք այստեղից ինձ, անմիտս, որ յակամայից սպանեցի քեզ, որդեակս, և (ցոյց տալով Եւրիդիկէի դիակը) քեզ։ Վա՜յ ինձ, թշուառականս։ (Ցոյց տալով Հեմոնի եւ Եւրիդիկէի դիակները) Չեմ կարող այլեւս նայել ոչ մէկիդ և չը գիտեմ ո՞ւր ուղղեմ քայլերս։ Կեանքս խորտակուեց. անլուր ապէտ եկաւ իմ գլխին։

(Ամբողջ սգերը, գլուխ ունենալով Կրէոնին, միջին դռնով մտնում է պալատը. բեմում մնում է պարը)։

Առաջին ալեւորը. (գնացողներին ուղղելով խօսքը) Իմաստութիւնն է երջանկութեան գրաւականը։ Պէտք չէ ամբարտաւան լինել աստուածների հանդէպ։ Գոռոզ խօսքերը, դառն ապէտներ բերելով մեծամիտների գլխին, թէպէտեւ ուշ, սովորեցնում են նրանց համեստ պահել իրենց։ (Միջին դուռը փակւում է. ալեւորները ցրւում են)։

Թարգմանեց Տ. Յովհաննիսեան

ՎԻԼԼԻԱՄ ՇԷՔՍՊԻՐ

(1564 –1616)

Շէքսպիրը XVI դարու մեծագոյն դրամատուրգն է։ Համաշխարհային գրականութեան մէջ հաւասար է իր արժէքով Հոմերոսին և Դանտէին։

Ռազմիկ-հողատիրական արիստոկրատական կուլտուրայի դարաշրջանը անդրադարձել է նրա ստեղծագործութիւնների մէջ բազմերանգ ու լիամփոփ։ Շէքսպիրի հմայքը՝ դա նրա հանճարեղութեան այն լուսափառ լապտերն է, որով նա ընդունակ է եղել խորապէս թափանցելու իր հոգեբանութեան ու աշխարհայեացքին հարազատ հերոսների մարդկային հոգեկան աշխարհը, լուսաւորելու նրա ապրումների հեռաւոր խորշերը։ Որոնք էին այն յատկանիշները, որ Շէքսպիրին դարձրին գեղարուեստական հանճար։ Նրա մէջ հաւասարապէս զօրեղ էին կեանքը իր բէալ կողմերով ու գոյներով ըմբռնելու, դիտելու և այն լիամփոփ կերպով ցուցադրելու, անդրադարձնելու շնորհները։ Շէքսպիրը գեղարուեստական բէալիզմի մեծագոյն ներկայացուցիչներից մէկն է համաշխարհային գրականութեան մէջ։ Նրա ստեղծագործութեան առարկան իւր ժամանակի տիրող մարդն է իր հոգեկան աշխարհով։ Նա պատկերացրել է մարդկային հոգեկան ապրումները բոլոր այն պարագաներում, որոնք բնորոշում են նրա հասարակական միջավայրի բովանդակ պատկերը։ Որպէս մի ամբողջ դարաշրջանի գեղարուեստական արտայայտիչ, Շէքսպիրը նոյն դրական շրջաններն է ունեցել, ինչ իր անդրադարձրած դարաշրջանը։ Շէքսպիրը՝ վերածնութեան դարի ամենամեծ բանաստեղծը՝ թուով մօտ չորս տասնեակ դրամաների մէջ տուել է դարի բոլոր ելևէջները, իր սիրած արիստոկրատ դասակարգի պայքարի, վայելքի և անկման կամ յառնեսութեան տրամադրութիւնները, նրանց մէջ տիրող, ձգտող, պայքարող ու դիմադրող մարդու տենչերն ու յոյզերը, մտորումներն ու ձգտումները։

Շէքսպիրը ծնուել է անգլիական Ստրէդֆօրդ անունով գաւառական փոքրիկ քաղաքում 1564 թ.։ 23 տարեկան նա գնում է Լոնդոն բաղդ որոնելու։ Այստեղ նա սկզբում դառնում է ձիապան քաղաքի թատրոններից մէկի մօտ՝ Լոնդոնի շրջակայքի թատրոն յաճախող ազնուականների ձիաները պահող, ապա լինում է գրաշար, յետոյ կրկին

մտնում թատրոնին, կատարում բեմյարդարի օգնականի պաշտոն, ստանձնում է աննշան դերեր։ Լոնդոնում նրա անցկացրած առաջի 5—7 տարիների մասին հաստատ տեղեկություն չը կայ։ Հաւանական է, որ նա այդ տարիներում նուիրուած էր անգլիական դրականության ուսումնասիրութեան, նուիրուած էր բեմին, փորձում էր իր դրական ոյժերը, դրամատիկական զանազան քրոնիկներ գրելով։ 1590-ական թուականներից Շէքսպիրը միանգամից հռչակւում է որպէս դրամատուրգ և դերասան, հետզհետէ արտադրելով իր յայտնի կոմեդիաները և այնպիսի ողբերգութիւններ, որպիսիք են «Համլէտը», «Օթէլլօն», «Լիր Արքան», «Մակբէթը» և այլն։

Իր կոմեդիաների մէջ Շէքսպիրը ցուցադրել է «բընեսանսի» կենսուրախ տրամադրութիւնը։ Այդ տրամադրութիւնը զուգադիպել է հեղինակի անհատական կեանքի այն շրջանին, երբ շրջապատի և աշխարհի վրայ նա նայում էր լաւատես աչքով, ընտրեալ «մարդկութեան» վրայ ազազայի մեծամեծ յոյսեր ունենալով։ Իր կոմեդիաներում նա տալիս է այն ամբողջ յեղաշրջման պատկերը, որ կատարուել էր միջնադարեան վանական-ֆէոդալական մղձաւանջի ախրապետութեան դարերից յետոյ։ Միջնադարեան եկեղեցու կաշկանդիչ հեղինակութեան տապալումից յետոյ առաջացած նոր միջավայրը, դա իսկապէս նոր ժամանակների նորագոյն քաղաքակրթութեան առաջին շրջանն է, որի պատկերացումը գտնում ենք Շէքսպիրի ստեղծագործութիւնների մէջ։ Մեծ դրամատուրգը նշանաւոր է ոչ միայն նրանով, որ տուել է արիստոկրատ հասարակութեան կեանքի մի յայտնի շրջանի անդրադարձումը, այլ և նրանով, որ իրրև հանճար՝ ըմբռնել ու խորացել էր նորագոյն ժամանակների հետ օղակուած երևոյթների ու մտքերի մէջ։

Եթէ պահ մի ընդհանուր հայեացք ձգենք Շէքսպիրի բոլոր դրական վաստակների վրայ, կը տեսնենք, որ նրանց մէջ պատուաւոր տեղ ունեն գրաւած մի յայտնի դարաշրջանի գեղարուեստական գրեթէ բոլոր տիպերը, բացի հարկաւ խոնարհ խաւերի։ Սոսկ մարմնականի, սոսկ կենդանականի երկրպագուներից մինչև անգործ կապկութիւնները, ծանծաղամիտ, միամիտ քաղքենիներից մինչև տիեզերական պրոբլէմներ լուծելու ճգնող փիլիսոփաները՝ զարմանալի երանգաւորումներով տեղ են գտել այդ գրուածքներում։

Իր աշխարհայեացքով Շէքսպիրը արիստոկրատ ինդիվիդուալիստ է։ Նրա բոլոր հերոսները արքաներ ու ազնուականներ են՝ իրենց զօրեղ կամքով, առ իշխանութիւն ունեցած անդուսպ տենչով, դէպի «ամբոխը» տածած արհամարհանքով ու անվերջ արիւնային գործողութիւններով։ Պատմութեան անիւը դարձնողը, ըստ Շէքսպիրի, զօրեղ անհատն է։ Պատմութեան մէջ դեր չունի մասսան, որի ըմբոստութիւնը «ամբոխային» բունտն է, որ պէտք է ճնշի իշխանութեան գահին բազմած տիրոջի կողմից։

Իր ժամանակի արիստոկրատական կուլտուրայի ջերմ երկրպագուն էր Շէքսպիրը։ Առևտրական-բուրժուական նոր դասակարգի հանդէս գալը միանգամայն բացասական վերաբերմունք էր ստեղծել ան-

գլխական մեծ դրամատուրգի մէջ։ Հին արիստոկրատիայի գլխին սաւառնող մահուան ուրուականը աւելի շուտ տեսաւ նախատեսութեամբ օժտուած հանճարեղ բանաստեղծը։ Այդ եղաւ պատճառը, որ նա իր յետագայ ողբերգութիւնների մէջ դարձաւ յոռետես։ Հարազատ դասակարգի անկումը տխուր խորհրդածութիւնների դուռ էր բաց անում Եէքսպիրի համար։ Բուրժուական նոր դասակարգը, որ պատմական ուղիներ էր հարթում իր ստեղծագործական վերելքի համար, յամառ էր, անտաշ, կոպիտ, թշնամի կենսուրախ պալատական նուրբ արիստոկրատիզմի, նրա ճաշակի և արուեստի։ Արիստոկրատիայի անկումը հաւասարազօր էր, ըստ Եէքսպիրի, աշխարհի կործանման։ Եւ նա իր լաւագոյն դրամաների մէջ ծայրայեղօրէն տխուր զգացմունքներով է համակւում ու յոռետես մտքերով ասդրում (Լիր Արքա, Համլէտ և այլն)։

Եէքսպիրն իր հերոսների հոգեկան աշխարհը թափանցելու համար՝ մի ամբողջ լաբորատորական աշխատանք է կատարել։ Մորանալով իր ստեղծագործած տիպերի մէջ, նա գիտել է իր դարաշրջանի մարդուն արտաքին տարբեր ազդակների շրջանում, գիտել է նրա հոգու ամենանուրբ երերումները և ապա ցուցադրել մարդկային հոգին իր ողջ մերկութեամբ։ Իբրև գեղարուեստական ռէալիզմի մեծագոյն ներկայացուցիչ՝ նա տեսել է իր ժամանակի կենդանի անդրադարձումը, և մարդու ներքին խորութեան ամենահեռաւոր խորշերի աննկատելի շարժումները, դնելով իր ստեղծագործութիւնների մէջ համամարդկային բովանդակութիւն։

Ուրբաթեան

ՀԱՄԼԷՏ

Բովանդակութիւն

Դանէմարքայի արքայազն Համլէտը, որ սովորում էր Վիտտենբերգի համալսարանում, վերադառնում է հայրենիք այն միջոցին, երբ նրա հայրը նոր էր զոհ գնացել պալատական դաւադրութեան։ Հօր մահուան օրից չէր անցել երկու ամիս՝ Համլէտի մայրը ամուսնացել էր Կլաւդիոսի՝ իր ամուսնու եղբօր հետ։ Մոռացած էր դաւադրութիւնը, կատարուած ոճիրը, իսկ սպանուած թագաւորի ուրուականը կարծես դեռ «թափառում էր» պալատի շուրջը։ Նոր դահակալը սպաւոր պալատը դարձրել էր խրախճանքների, շռայլութեան ու արբեցողութեան վայր։ Հօր ուրուականը «երևում է» Համլէտին և պատմում սարսափելի դաւադրութեան մանրամասնութիւնը։ Հօրեղբայր Կլաւդիոսը, գայթակղեցնելով Համլէտի մօրը, մի առաւօտ պարտիզում, քնած թագաւորի ականջը թոյն լցնելով՝ վերջ է տալիս նրա կեանքին։ Ուրուականը «պահանջում է» Համլէտից վրէժխնդիր լինել, չարաչար պատժել գայթակղիչ մարդասպանին։ Համլէտը երդւում է մոռանալ ամեն ինչ և յիշողութեան մէջ պահել միմիայն իր հօր վրէժի

խօսքերը։ Այդ օրից Համլէտն սկսում է հեռամուտ լինել ապացոյցներ գտնելու՝ կատարուած ոճրագործութեան համար։ Նա իրեն ձևացնում է խելագար. նրա տարօրինակ գործողութիւններն ու չարագուշակ ակնարկներն սկսում են անհանգստացնել Կլաւդիոսին և թագուհուն։ Աւագ պալատական Պոլոնիուսը Համլէտի խելացնորութիւնը համարում է արդիւնք նրա սիրահարութեան իր դուստր Օֆէլիայի վրայ։ Կլաւդիոսը կամենալով իմանալ Համլէտի տարօրինակ վարքի պատճառները, ուղարկում է նրա մօտ Պոլոնիուսին ու երկու այլ պալատականների՝ Գիլդենշտերնին ու Ռոզենկրանցին, բայց Համլէտը հեգնական ակնարկներով մերկացնում է նրանց յեռին մտքով իր մօտ գալու պատճառները։ Վերջապէս Կլաւդիոսն ու Պոլոնիուսը վճռում են սարքել մի անակնկալ տեսակցութիւն Համլէտի և Օֆէլիայի հետ՝ ստուգելու համար նրա իրը թէ խելացնորութեան հասնող սիրահարութեան չափը։ Սակայն Համլէտը յանկարծակիի բերելով միամիտ Օֆէլիային, հարցնում է՝ մաքո՞ւր է արդեօք նա, և ապա խորհուրդ է տալիս մըտնել կուսանոց, որ չը դառնայ «մայր մեղապարտների»։ Օֆէլիան համոզուած էր, որ Համլէտը ցնորուել է։ Հենց այդ ժամանակներում պալատ են գալիս մի խումբ դերասաններ։ Համլէտն ստիպում է նրանց պալատի շէնքում խաղալ այնպիսի մի պիէս, որի մէջ անդրադարձուած լինէր իր հօր թունաւորուելու պատկերը։ Ներկայացման ժամանակ, Կլաւդիոսը տեսնելով իր կատարած ոճրի ճշգրիտ վերարտադրութիւնը, սարսափով հեռանում է դահլիճից։ Համլէտը չարախնդաց ճանապարհ է դնում նրան։ Կլաւդիոսը որոշում է Համլէտից ազատուել, տեսնելով, թէ ինչպէս նա աւելի ու աւելի սպառնական է դառնում։ Նա որոշում է ճանապարհ դնել Համլէտին Անգլիա, որ այնտեղ դաւադրութեան զոհ դարձնի նրան։ Սակայն Համլէտը իր երկու ուղեկիցներից ծածուկ բաց է անում կնքուած ծրարը, որով Կլաւդիոսը խնդրում էր Անգլիայի թագաւորին՝ անմիջապէս մահուան պատժի ենթարկել Համլէտին, և ոչնչացնելով նամակը, փոխարէնը դնում է մի այլ նամակ, խնդրելով մահապատիժ տալ իր դաւաճան ուղեկիցներին։ Համլէտը վերադառնում է Դանիա։ Մինչև Անգլիա ուղևորուելը Համլէտը թիւրիմացութեամբ սպանած է լինում Պոլոնիուսին, որը թագաւորի պատուէրով Համլէտի և մօր տեսակցութեան դաղտագողի վկան էր ուզում լինել վերջինիս սենեակում։ Համլէտը կարծում էր, թէ վարագոյրի յետևը թաքնուածը Կլաւդիոսն է։ Այդ կորուստն անկարող լինելով տանել՝ դիւրաբեկ Օֆէլիան խելագարուում է և ջրի մէջ խեղդուում։ Համլէտի դէմ լարուում է Օֆէլիայի եղբայր Լաէրտը. նրան գրգռում է Կլաւդիոսը։ Լաէրտը պատրաստ է վրէժխնդիր լինել, արեան մէջ խեղդել Համլէտին։ Կլաւդիոսը չը կամենալով ոտի հանել իր դէմ Դանիայի ժողովրդին, խորհուրդ է տալիս Լաէրտին սուր խաղացնելու մրցման հրաւիրել Համլէտին և թունաւոր սրով խոցել նրան՝ իրը անզգուշաբար։ Դա էլ անյաջող անցնելու դէպքում, պատրաստել է տալիս մի բաժակ թունաւոր խմիչք, որպէսզի այդ հեղուկով կարողանայ կտրել վտանգաւոր երիտասարդի կեանքի թելը։ Սակայն ամեն ինչ այլ կերպ է դասաւորում։ Թունաւոր հեղուկը սխալմամբ խմում և թունաւոր-

ւում է Համլէտի մայրը։ Լաէրտի թունաւոր սուրը, Համլէտին խոցելուց յետոյ, ընկնում է ձեռքից և անցնում Համլէտի ձեռքը, որով վերջինս վիրաւորում է Լաէրտին։ Սա զգալով մահուան անխուսափելիութիւնը, անկեղծօրէն խոստովանում է Համլէտին մենամարտի շարժառիթը։ Համլէտը յարձակւում է Կլաւդիոսի վրայ և սպանում նրան։ Մեռնում է թունաւորուած մայրը, մեռնում են Համլէտն ու Լաէրտը։

Շէքսպիրի ամենամեծ գրուածքն է «Համլէտը»։ «Համլէտի» մասին գոյութիւն ունի անհագին գրականութիւն։ «Համլէտը» յետագայ սերունդների բանաստեղծներից շատերի համար եղել է ոգեշունչ ոգեւորութեան։ Մեծ է նրա նշանակութիւնը այն տեսակէտից, որ Շէքսպիրը իր այս ողբերգութեան մէջ անդրադարձրել է վերածնութեան շրջանի բովանդակ իմաստը։ Դարաշրջանի վերջալոյսի վառ արտացոլումն է «Համլէտը» իր յոռետես փիլիսոփայութեամբ ու երկմտութեամբ։ Համլէտ և համլէտականութիւն բառերը դարձել են ընդհանուր ընդունելի հասարակ անուններ։ Չը կայ փոքր ի շատէ գործունեայ մարդ, որ իր մասնաւոր կամ հասարակական կեանքում ունեցած չը լինի «լինել թէ չը լինել» տարակուսելի վայրկեանները։ Ողբերգութեան հերոսը հանճարեղ երիտասարդ է՝ իւրացրած իր ժամանակի քննող ու վերլուծող միտքը։ Ապագայի նկատմամբ վարդագոյն յոյսերով տոգորուած՝ վերադառնում է Դանիա Վիտենբերգի հռչակաւոր համալսարանից, որի պատերին մի ժամանակ պապականութեան թշնամի Լիւտերն իր թէզիսներն էր կպցրել, իսկ Ջորդանո Բրունո փիլիսոփան կատածի էր ենթարկել միջնադարեան սխոլաստիկ գիտութիւնը։ Վարդագոյն յոյսերն ու լաւատեսութիւնը Համլէտի՝ միանգամից խորտակւում են, երբ նա գալով Դանիա, իմանում է, որ իր սիրելի հայրը բնական մահով չէ մեռել, այլ դարձել մի ստոր ոճիրի զոհ։ Նրան սպանել է իր եղբայրը՝ գահին և կնոջը տիրելու համար։ Իմանում է նոյնպէս, որ այդ ծանր ոճրագործութեանն աջակցել է նաև իր մայրը։ Համլէտի հոգին միանգամից սկսում է ալեկոծուել. նա վճռում է վրէժինդիր լինել հօրեղբօրից։ Սակայն համոզուելու համար՝ նա կամենում է ստուգել փաստը և ապա գործադրել պատիժը։ Բոլոր գիտողութիւններն ու փաստերը հաստատում են նրա ենթադրութիւնը, սակայն Համլէտը այնուամենայնիւ դանդաղում է։ Ինչու։ Որպէս հանճարեղ միտք, նա ամէն մի մասնաւոր դէպք ընդհանրացնում էր, ամէն մի հարց խոր անալիզի ենթարկում. նրա համար առաջնակարգը մի հատիկ փաստը չէր, այլ ամբողջ երևոյթը։ Մտնելով կեանք, նա իր առաջին քայլում ընդհարուեց շրջապատի հետ և դարձաւ յոռետես։ Մասնաւորից ընդհանրացրած դէպքերը Համլէտի մէջ յարուցանում են համամարդկային հարցեր, որոնց լուծման համար նա հսկայական ջանք է գործ դնում։ Համլէտի սեփական ողբերգութիւնը նրա հոգեկան ոյժերի և նրանց հանդէպ դրուած պարտքի անհամապատասխան լինելու մէջ էր։ Զօրեղ էր այդ գիտակցութիւնը նրա մէջ, և նա աւելի ևս խորացնում էր նրա յուսահատ հոգու տանջանքները։ Շէքսպիրը նուրբ երանգաւորումներով է նկարել այդ մտածող հերոսին։ Դա գիւրազգաց, կրքոտ, տպաւորուող, գիւրաբորբոք, շուտ ոգեւորուող, տատանուող մի

բնաւորութիւն է։ Նրա յոռետեսութիւնը աշխարհայեացք չէ, այլ տրամադրութիւն։ Համլէտը յոռետես է դառնում, երբ ծանօթանում է աշխարհում տիրող չարի, անարդարութեան հետ։ Այդ երևոյթը դարձնում է նրան մելանխոլիկ. կորցնում է իր հաւատը դէպի մարդիկ, դէպի մերձաւորներն անգամ. նա հիասթափւում է կեանքից, որովհետև իր գուրգուրած վարդագոյն յոյսերը բոլորը չքացան և նրանց տեղ իր հանդէպ կանգնեց մռայլ ապագայի հեռանկարը։ Համլէտի ներքին ողբերգութիւնը զարգանում է առաւելապէս նրանով, որ ինքն անընդունակ է համարում իրեն որևէ վճռողական քայլի դիմել։ Նրա մէջ զօրեղ է ինքնաանալիզը, նա անողոք է իր անձի դէմ և անխնայ ինքնագանակոծում է իրեն։ Արտաքին աշխարհի և իր իդէալի միջև եղած վիհը նրան հասցնում է «լինել-չը լինելու» երկընտրանքին։ Համլէտը փիլիսոփա է։ Իր անհատական դժբաղդութիւնը նա համարում է մասնիկը մարդկային ընդհանուր դժբաղդութեան։ Իր շրջապատը մի մռայլ անկիւն է խաւար աշխարհում. Դանիան բանտ է։ Սեփական դժբաղդութիւնը նրա համար միայն մի դրդիչ է, որ ստիպում է նրան խորհել աշխարհին վիճակուած ծանր ճակատագրի մասին։ Կեանքի հակասական ժխորի մէջ Համլէտի միտքը գործում է զարմանալի լարուածութեամբ։ Նրա ուղեղը մաշում են համամարդկային պրոբլէմները. նա խորացել է իրական աշխարհի բացասական երևոյթների մէջ, նա լցուած է «համաշխարհային թախիծով», բայց նա այն դարաշրջանի արիստոկրատ հերոսն է, որին վիճակուած չէր գտնելու տիրող սոցիալական անարդարութեան իրական պատճառներն ու նրանց վերացման միջոցները։ Սրանք այն հիմնական գծերն են, որով օժտուած է Շէքսպիրի ունիվերսալ գեղարուեստական տիպը, որին բանաստեղծը հանդէս է բերել մի այնպիսի միջավայրում, որը Համլէտի շօշափած բոլոր պրոբլէմների ու նրա մռայլ տրամադրութիւնների համար անապատ աղբիւր է եղել։

Սուրխաբեան

ՀԱՄԼԷՏ

ՊՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ ՀԻՆԳ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ.

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ԿԼՈԴԻՈՍ, *Դանեմարքի թագաւորը։* ՀԱՄԼԷՏ, *նախկին թագաւորի որդին և ներկայ թագաւորի եղբօրորդին։* ՊՈԼՈՆԻՈՍ, *լորդ սենեկապետ։* ՀՈՐԱՑԻՈ, *Համլէտի բարեկամը։* ԼԱԷՐՏ, *Պոլոնիուսի որդին։* ՎՈԼՏԻՄԱՆԴ, ՌՈԶԵՆԿՐԱՆՑ, ԳԻԼԴԵՆՇՏԵՐՆ, *պալատականներ։* ՕՍՐԻԿ, *մի պալատական։* ՄԻ ԱՅԼ ՊԱԼԱՏԱԿԱՆ։ ՄԻ ՔԱՀԱՆԱՅ։ ՄԱՐՍԵԼԼՈՍ. ԲԵՌՆԱՐԴՈ, *պաշտօնակալներ։* ՖՐԱՆՍԻՍԿՈ, *մի զինուոր։* ՌԷՅՆԱԼԴՈ, *Պոլոնիուսի ծառան։* ՄԻ ՀԱՐԻՒՐԱՊԵՏ։ ՄԻ ԴԵՍՊԱՆ։ ՀԱՄԼԷՏԻ ՀՕՐ ՈՒՐՈՒԱԿԱՆԸ։ ՖՕՐԹԻՆԲՐԱՍ, *Նորվեգիոյ իշխան։* ԳԵՐՏՐՈՒԴ, *Դանիայի թագուհին և Համլէտի մայրը։* ՕՖԷԼԻԱ, *Պոլոնիուսի աղջիկը։*

Բաձրաստիճան պարոններ և տիկիններ, պաշտօնակալներ, զինուորներ, դերասաններ, գերեզմանափորներ, նաւավարներ, պատգամաւորներ և այլ սպասաւորներ։

Տեսարանը Էլսինոր։

ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ԱՌԱՋԻՆ

ՏԵՍԱՐԱՆ Բ.

Թագուհին։ Թող քեզ զուր չաղերսէ քո մայրդ, Համլէտ.
Խնդրում եմ, կաց մեզ մօտ. մի գնայ Վիտտենբերգ։
Համլէտ։ Ես ջանք կանեմ, տիկին, ձեզ հնազանդ լինել։
Թագաւորը։ Ահա մի սիրալիր ազնիւ պատասխան։
Եղիր մեր անձի պէս Դանիոյ մէջ։—Տիկին,
Այս հեզ, անբռնադատ հաւանութիւնը
Մեր Համլէտի կողմից՝ ժպտում է սրտիս,
Ի ցնծութիւն որի Դանիայի արքան
Պիտի չըմպէ այսօր խնդալից բաժակ,
Թէ մեծ թնդանօթը ամպերին չասէ այդ,
Եւ երկնի կամարը չը տայ արձագանք
Արքայի խնջոյքին, անդրադարձնելով
Երկրային որոտի ահեղ շռինդը։
Դէհ, եկէք, երթանք։

(Գուրս են գնում բոլորը՝ բացի Համլէտից)։

Համլէտ։ Ախ, երանի՜ այս պինդ, խիստ պինդ մարմինը
Հալուէր, լուծուէր կազմից, փոխարկուէր ցօղի.
Կամ Անվախճան Տէրը ուղղած չը լինէր
Անձնասպանի ընդդէմ իր պատուիրանը։
Ո՜հ, Աստուած իմ, Աստուած. ինչպէս տաղտկալի,
Ունայն, անհամ, անշահ թւում են աչքիս
Բոլոր այս աշխարհի վայելչութիւնքը։
Չգւում, զգւում եմ ես։ Խոպան պարտէզ մ'է այս,
Ուր վատ խոտեր աճում, հասնում են սերմի.
Եւ լոկ կոպիտ բաներ, որ բնութեամբ բիրտ են,
Միայն տիրում են անդ։ Վա՜հ, այստե՞ղ հասնի,
Երկու ամիս միայն իր մահից անցած.
Ո՜հ, չը կայ այդքան էլ, դեռ ո՛չ իսկ երկու։
Ի՜նչ ազնիւ մի արքայ. նա սորա մօտ այն էր,
*Ինչ որ Հիպերիոնը մի Սատիրի մօտ *)։*
Նա այնպէս ջերմ սիրով սիրում էր մօրս,
Դողում էր՝ մի գուցէ երկնքի հողմունքը
Շփեն նորա դէմքը անքնքոյշ կերպով։
Երկի՜նք, երկի՜ր. հաճ՞ երկ է որ դեռ ես յիշեմ։
Վա՜հ, նա իմ հօր վզից այնպէս կախւում էր,
Կարծես՝ ախորժակը որքան սնւում էր,
Այնքան քաղցր էր զգում։ Եւ սակայն, մէկ ամսում.
Թող մոռնամ. թուլութիւն, անունդ կին է։

---

*) *Սատիր ասելով ուզում է ակնարկել Պան աստծուն. և Հիպերիոն միևնոյնն է, ինչ որ Ապոլլոնու Պան և Ապոլլոն եղբայր էին։*
Թանօթ. Բ.

Մի կարճ ամիս միայն. և դեռ չեն մաշված
Այն իսկ կոշիկները, որոնցով տանում էր
Իմ հոր խեղճ մարմինը գերեզման դնել,
Որպես մի նոր Նիոբէ, արտասուք դարձած։
Վա՜հ, ինքը՞. նույն ինքը՞. երկի՞նք։ Մի գազան,
Մի անբան գազան իսկ աւելի կողբար։
Նա՜, կի՞ն իմ հօրեղբօր, իմ հծրս եղբօր.
Բայց հօրս չէր նման, որքան որ չեմ ես
Հերկուլլէսին նման։ Մէկ ամիս միայն.
Նախ քան իր նենգաւոր արցունքի աղը
Ջնջէր բորբոքած նորա աչքերից՝
Ամուսնացաւ արդէն։ Օ՜հ, չար, չա՜ր եռանդ։
Թուչի՛լ այդչափ արագ դէպ ազգապիղծ մահիճ։
Այդ լաւ չէ և ոչ էլ կարող է լաւ լինել։
Բայց խորտակուիր, սիրտ. պէտք է դապեմ լեզուս։

ՏԵՍԱՐԱՆ Ե.

Համլէտ։ Շուտ յայտնիր այդ ինձ,
Որ ես թևեր առնեմ, արագ քան միտքը,
Քան թէ սիրոյ խոհեր, և սուրամ դէպի վրէժ։
Ուրուական։ Պատրաստ ես դու, գիտեմ, և թոյլ կը լ՚նէիր
Քան այն պարարտ խոտը, որ մեղկութեան մէջ
Լեռէի *) ափի վրայ հանդիստ փտում է,
Թէ այս քեզ չը յուզէր։ Արդ, Համլէտ, լսիր.
Այնպէս լուր են սփռած, որ պարտիզիս մէջ,
Երբ ես քնած էի, մի օձ ինձ խայթեց։
Այսպէս, ամբողջ Դանիան շինծու պատմութեամբ
Ստոր փարէութեան զոհ է գնացել։
Բայց իմացած կացիր, դու, ազնիւ պատանի,
Հօրդ խայթող օձը հիմա կրում է
Նորա գլխի թագը։
Համլէտ։ Ո՜վ մարգարէ հոգիս. իմ հօրեղբա՞յրը։
Ուրուական։ Ա՜յ, այդ շնացող, ազգապիղծ հրէշը՝
Իր խելքի հմայքով, իր նենգ ձիրքերով,
(Օհ, անիծեմն այն խելքն և այն ձիրքերը,
Որոնք այս ստոլճան պատրել կարող են)
Իր վաւաշոտ կրքին ոճրակից արաւ
Իմ կեղծ-առաքինի կնոջ թոյլ կամքը։
Օ՜հ, Համլէտ. ինչ անկում, ինչ անկում էր այդ.

---

*) Լեռէ նշանակում է յունարէն «մոռացութիւն». Լեռէ մի գետ է Ափրիկէի մէջ, որ շատ մզոններ գետնի տակից է հոսում. այդտեղից է ծագում այն առասպելը, որով այդ գետը դժոխքի գետերից մէկն էր համարւում, և որովհետև անունը նշանակում էր մոռացութիւն, կարծում էին, թէ ով որ նորա ջրից խմէը, բոլոր անցեալը կը մոռանար։

Թան. Թ.

Ինձնից, որի սէրը այնքան վսեմ էր
Եւ այնպէս անբաժան այն իսկ սուրբ ուխտից,
Որ իր հետ կոեցի խորանի հանդէպ.
Ինձնից սառրանալ մինչ այն թշուառը,
Որի բնական ձիրքերն այնպէս նուաստ էին,
Բաղդատելով ինձ հետ.
Բայց, ինչպէս ողջախոհն անդրդուելի է,
Թէև ցոփութիւնը մի երկնային դէմքով
Քծնի նորան, նոյնպէս շայտութիւնը,
Թէև մի լուսափառ հրեշտակի հետ զուգի,
Շուտով կը յաղթեայ երկնային մահճից
Եւ աղտեղութեան մէջ ճարակ կը պտուէ։
Բայց, յո՜ւշ, շնչում եմ ես վաղորդեան սիւգը.
Կարճ ասեմ.—ննջելով մրգաստանիս մէջ,
Ինչպէս սովոր էի ամեն միջօրէին,
Իմ ապահով ժամիս, քո հօրեղբայրը
Ծածուկ մօտեցաւ ինձ՝ ձեռքում մի սրուակ,
Այն անիծեալ բանգի հեղուկով լեցուն,
Եւ թափեց ականջիս նրբանցքների մէջ
Բորոտաբեր հիւթը, որի արդիւնքը
Այնպէս թշնամի է մարդուս արեան հետ,
Որ՝ անդկի պէս արագ՝ ներս է արշաւում
Մարմնի բաւիղներով և բնական անցքերով,
Եւ իր կտրուկ ոյժով նա մակարդում է,
Ինչպէս թթու կաթիլք կտրում են կաթը
Եւ թանձրացնում հեղուկ, առողջ արիւնը։
Այդպէս արաւ իմս, և բոպէապէս
Դուրս ժայթեց զազրելի մի բորոտութիւն.
Եւ Ղազարոսի պէս՝ դարշ և զզուելի
Պալարներ պատեցին ողորկ մարմինս։
Այսպէս՝ ննջած պահուս՝ մի եղբօր ձեռքը
Թէ կեանքս, թէ թագս, թէ թագուհուս խլեց.
Եւ նա յանկարծ խզեց իմ կեանքիս թելը,
Երբ ծաղկի մէջ էին դեռ իմ մեղքերը,
Առանց հաղորդութեան, առանց պատրաստութեան,
Առանց վերջին օծման, առանց քաւութեան.
Այլ ես ուղարկուեցայ տալ իմ համարը,
Բոլոր յանցանքներս գլխիս վրայ դիզած։
Համլէտ։ Սոսկալի, սոսկալի, ճշ, խիստ սոսկալի։
Ուրուական։ Թէ քո մէջ դեռ սիրտ կայ, մի տանիր դորան.
Մի թոյլ տար Դանիայի արքունի մահիճը
Ազգապիղծ ցոփութեան անկողին դառնայ,
Բայց որևէ կերպով որ վրէժդ լուծես,
Մի աղարտիր միտքդ, և մի թոյլ տար հոգուդ՝
Դաւ դնել մօրդ դէմ։ Երկնքին թող նրան,

Եւ այն փշերին, որ՞ իր կրծքի մէջ կան,
Որ խայթեն և տանջեն նրան յաւիտեան։
Մնաս բարև ընդ միշտ. ահա փայլուն որդը
Արդէն ցոյց է տալիս՝ որ լոյսը մօտ է,
Եւ իր անզօր բոցը նաեմանում է։
Մնաս բարև, մնաս բարև. և յիշիր դու ինձ։

(Հեռանում է)։

Համլէտ։ Ո՛վ երկնային ոգիք, ո՛վ երկիր. ի՞նչ ուրիշ.
Դժոխքին էլ հայցե՞մ։ Վա՛յ. բռնիր քեզ, սիրտ,
Եւ դո՛ւք, իմ նեարդեր, մի՛ ծերանաք խսկոյն.
Այլ ինձ պինդ բռնեցէք։ Ի՞նչ. յիշե՞մ ես քեզ.
Այո, դու խեղճ ոգի. կը յիշեմ ես քեզ,
Քանի յիշողութեան մի նշոյլ մնայ
Այս մոլորուած գանգում։ Յիշե՞մ ես քեզ։
Այո, յիշողութեանս իմ տախտակներից
Պէտք է ջնջեմ խապառ բոլոր փուչ դէպքեր,
Պէտք է ջնջեմ գրեանց բոլոր սին հետքեր,
Բոլոր կերպարանքներ, անցեալի տիպեր,
Որ պատանութիւնը և դիտող աչքը
Արտագրած են այնտեղ. և քո պատուէրը
Բոլորովին միայն անջինջ պիտի մնայ
Ուղեղիս հատորի և մատեանի մէջ,
Առանց խառնուելու նուաստ նիւթի հետ։
Այո, գիտէ Աստուած։ Օ՜, ամենանենգ դու կին.
Սրիկայ, սրիկայ, ժպտող, նզովեալ սրիկայ.
Տետրե՞ս.—յարմար է, որ գրեմ այնտեղ
Թէ մարդ կարէ ժպտել, ժպտել, և սակայն
Սրիկայ լինել։ Գոնէ, վստահ եմ ես,
Այդ կարելի բան է Դանեմարքայում։

(Գրելով)

Այսպէս, հօրեղբայր իմ, ահա այստեղ ես.
Այժմ գանք իմ բառիս՝ այդ պէտք է լինի.
Մնաս բարե, մնաս բարե, եւ յիշիր դու ինձ.
Ես այդ երդուեցի։

ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ԵՐԿՐՈՐԴ

ՏԵՍԱՐԱՆ Ա.

(Մտնում է Օֆէլիա)

Պոլոնիուս։ Ի՞նչ կայ, Օֆէլիա, ի՞նչ լուր։
Օֆէլիա։ Օ՜հ, հայր իմ, հայր իմ, որքան վախեցայ...
Պոլոնիուս։ Ի՞նչ կայ, Աստուած սիրեսա։
Օֆէլիա։ Սենեակումս նստած
Կարում էի. յանկարծ իշխան Համլէտը՝
Կոճակները բացած, գլուխը՝ անգլխարկ,
Գուլպաները կախուած, առանց կապերի,

Մինչև գետին ընկած. դաճի պէս դունատ,
Ծնկները յուզմունքից իրար զարկելով,
Եւ այնպէս սրտաշարժ ակնարկ աչքի մէջ,
Որ կարծես դժոխքից արձակուած լինէր՝
Նորա արհաւիրքը պատմելու համար,
Եկաւ իմ առաջ։
Պոլոնիուս։ Արդեօք քո սիրուց
Այսպէս խենթացել է։
Օֆէլիա։ Տէր իմ, չը գիտեմ,
Բայց վախենում եմ։
Պոլոնիուս։ Նա քեզ ի՞նչ ասաց։
Օֆէլիա։ Դաստակիցս բռնեց և շատ խիստ սեղմեց.
Յետոյ իր բազկի չափ հեռացաւ ինձնից,
Եւ միւս ձեռքը այսպէս ճակատին դրած՝
Այնպէս խորասուզուեց դէմքս զննելով,
Կարծես թէ ուզում էր պատկերս գծել։
Երկար այսպէս մնաց. յետոյ քնքշութեամբ
Բազուկս շարժելով և երեք անգամ
Իր գլուխը այս կերպով վեր վայր թոթուելով՝
Այնպէս ողորմելի խոր հառաչ հանեց,
Կարծես դա ջախջախեց իր մարմնի կազմը
Եւ կեանքին վերջ տուաւ։ Ապա թողեց ինձ.
Եւ գլուխը ուսի վրայ դէպի յետ ձգած՝
Կարծես քայլում էր նա առանց աչքերի,
Քանզի առանց նրանց դռնից դուրս եկաւ
Եւ նրանց մինչև վերջ իմ վերայ յառեց։

ՏԵՍԱՐԱՆ Բ.

Համլէտ։ Դէհ, Ասուած ձեզ հետ։—Հիմա ես մենակ եմ։
Օհ, ի՞նչ անպիտան, ռամիկ ստրուկ եմ ես։
Հրէշաւոր չէ՞ այս, որ այս դերասանը
Շինծու մի պատմութեամբ, կրքի մի երազով,
Կարող է իր հոգին՝ երևակայութեան
Մինչև այն աստիճան համակերպացնել,
Որ նրա յուզմունքից երեսը վառուում է,
Արտասուք՝ աչքի մէջ, ցնդում՝ դէմքի վրայ.
Մի ձայն կերկերուած, և բոլոր շարժմունքը
Այնքա՞ն ճիշտ յարմար կեղծեալ վիճակին։
Իւ այդ բոլորը ո՞չնչի՞ համար։
Հեկուբի՞ համար։
Հեկուբ նորա ի՞նչն է կամ նա Հեկուբի,
Որ նա նրա համար այնպէս լաց լինի։
Վա՜հ, ապա ի՞նչ կանէր, եթէ ինձ նման
Կրքերը յուզելու առիթ ունենար.
Արցունքի հեղեղով նա ամբողջ բեմը

Ջրասոյզ կանէր. ունկնդրաց ականջը
Ահաւոր պատմութեամբ նա կը յօշոտէր։
Ցանցաւոր մարդուն խելագուրկ կանէր,
Եւ նոյն իսկ անմեղին կը սարսափեցնէր,
Տգէտին կապշեցնէր և կահարեկէր
Մինչև իսկ աչքերի և ականջների
Ունակութիւնքը։
Իսկ ես.
Թոյլ, կաւեայ զանգուածով մի թշուառական,
Երազող Ջոնի պէս, դատիս անտարբեր,
Պապանձուած՝ չեմ կարող ոչ մի բառ ասել.
Ոչ, մինչև անգամ մի արքայի համար,
Որից նորա թագը, թանկագին կեանքը
Այնպէս ժանտ մի դաւով յափշտակուած են։
Միթէ երկչոտ եմ ես. ո՞վ կը յանդգնի
Ինձ ստոր անուանել, գլուխս ջարդել,
Մօրուքս փետել և փշել երեսիս,
Քթիցս բռնել և խրել սուտս
Կոկորդիս մէջ խորունկ մինչև թոքերս։
Ո՞վ կը համարձակուի. հա՜, հա՜, և սակայն
Ես կը հանդուրժէի. քանզի անհնար է,
Որ իմ մէջ չը լինի մի աղաւնու լեարդը.
Պէտք է մաղձ չունենամ, որ անարգանքը
Ինձ դառն չէ թւում, թէ ոչ, մինչև այժմ
Այդ սատկած ատրուկի գարշելի գէշը
Երկնքի անգղերին յագուրդ կը տայի։
Արնախում, լիրբ սրիկայ. անխիղճ, անհաւատ,
Անառակ, դաւաճան, հրէշաւոր սրիկայ։
Վա՜հ, ինչ աւանակ եմ. ինչ քաջութիւն է այս,
Որ ես, մի սպանած՝ սիրելի հօր որդիս,
Ում երկինք և դժոխք 'ի վրէժ են կանչում,
Սիրտս սփոփում եմ մի պոռնիկ կնոջ պէս
Սին բառերով միայն և անիծելով,
Որպէս ճիշդ մի լիրբ կին, փողոցային մի մարդ։
Թո՛ւհ, թո՛ւհ։
Դէ՜հ, գործիր, ուղիղ։ Հա՜, ես լսել եմ,
Որ ոճրագործ մարդիկ թատրոնում նստած՝
Տեսարանի հնարքից այնպէս յուզուել են
Մինչև հոգու խորքը, որ անմիջապէս
Իրենց յանցանքները նոքա յայտնել են։
Քանզի սպանութիւնն, թէև չունի լեզու,
Հրաշալի օրգանով նա լեզուի կը գայ։
Այս դերասաններին ես պատուէր կը տամ՝
Հօրեղբօրս առաջ խաղալ այնպէս մի բան,
Որ հօրս սպանութեան նմանութիւն բերէ.

Իսկ ես կը գիտեմ նրա ծրագրը.
Մինչև խորը նրան կը հետաքրքրվեմ.
Եթէ նա սարսի, ես գոթիս գիտեմ.
Այն ոգին, որ տեսայ, մի գեղ է գուցէ.
Եւ գեղը կարող է մի գրաւիչ ձեւ առնել.
Այո, կարելի է, իմ թուլութիւնից
Եւ մաղձոտ ոգուց նա օգուտ է քաղում՝
(Եւ նա խիստ գօրեղ է այդպէս մարդկանց վրայ)
Ինձ գէպի փորձութիւն գրաւելու համար.
Ինձ պէտք են փաստեր աւելի հաստատուն,
Եւ ներկայացումն այն ժուզակն է,
Որի մէջ կը բռնեմ արքայի խիղճը.

ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ԵՐՐՈՐԴ

ՏԵՍԱՐԱՆ Ա.

Համլէտ. Լինե՞լ, թէ չը լինել, այդ է խնդիրը.
Ո՞ր մէկն է ազնիւը մեր հոգու համար,
Հանդուրժել ժանտ բաղդի սուր սլաքներին,
Թէ զինուիլ ցաւերի մեծ ծովի ընդդէմ
Եւ դիմադրելով՝ վերջ տալ բոլորին.
— Մեռնիլ,—ննջել.— ոչինչ աւելի.
Եւ մի նիրհով, ասել, մենք վերջ ենք տալիս
Այս սրտմաշուկ ցաւին և բիւր վշտերին,
Որոնց ժառանգորդ է մեր հէգ մարմինը.
Այդ մի վախճան կըլ՝նէր սրտանց բաղձալի.
Մեռնիլ,—ննջել.—ննջե՛լ. գուցէ երազե՛լ.
Ա՜յ... ցաւը այդ է. Զի մահուան այդ քնում
Ի՞նչպիսի երազներ կարող են մեզ գալ,
Երբ մենք թափ ենք տուած մահացու պատանը.
Ա՛յս է մեզ կասեցնում. այս է դարձնում
Այսչափ երկար կեանքը մի պատուհաս միայն.
Այլապէս ո՞վ արդեօք կուզէր հանդուրժել
Ժամանակի ծաղրին և մարդկանց
Հարստահարողի անարդարութեանց
Եւ գոռոզ մարդկանց անարգանքներին,
Արհամարհուած սիրոյ գալարումներին
Եւ օրէնքների դանդաղութեանը,
Պաշտօնեաների անզգամութեանը,
Բոլոր թուք ու մուրին, որ անարժանից
Կրում է համբերող արժանաւորը.
Այն ինչ՝ նա կարող էր մի մերկ դաշոյնով
Ազատուիլ յաւիտեան։
Ո՞վ կը զիջանէր բեռան տակ ճնշուիլ
Եւ տաղտուկ կեանքի տակ հեծել քրտնաթոր.

Բայց ահը մի բանի՝ մահուանից յետոյ,
Անծանօթ երկիրը, որի սահմանից
Ոչ մի ճանապարհորդ չէ դառնում այլ ևս,
Խախտում է մեր կամքը և հարկադրում է
Մեր տեսած ցաւերին յօժարելի նորից,
Քան թռչել թէպի նոր և անյայտ ցաւեր։
Հոհականութիւնը այսպէս բոլորիս
Երկչոտ է դարձնում. և այսպէս անգ
Բնածին ծաղիկը վճռականութեան
Թօշնում է մտածութեան դժգոյն երանգից,
Եւ մեծ ու կարևոր գործեր ձեռնարկներ
Շեղում են այս կերպ իրենց հոսանքը
Եւ «գործ» իսկ կոչուելուց զրկւում են... բայց յո՛ւշ...
(տեսնելով Օֆէլիային)

Սիրուն Օֆէլիա։—Նիմֆայդ գեղեցիկ,
Քո աղօթքներիդ մէջ թող յիշեն նաև
Իմ բոլոր մեղքերը։

Օֆէլիա։ Իմ ազնիւ իշխան,
Ի՞նչպէս է արդեօք Ձեր բարձրութիւնը
Այս վերջին օրերը։

Համլէտ։ Շնորհակալ եմ. լաւ։

Օֆէլիա։ Իմ ազնիւ իշխան, դուք ինձ տուած էք
Մի քանի յիշատակ, որ վաղուց ի վեր
Ես կամեցել եմ ձեզ յետ դարձնել,
Եւ ահա խնդրում եմ յետ առէք նրանց։

Համլէտ։ Քաւ լիցի. ես երբէք ձեզ բան չեմ տուած։

Օֆէլիա։ Յարգելի իշխանս, դիտէք, տուած էք,
Եւ նոցա հետ բառեր, այնքան անուշիկ,
Որոնք այդ իրերը դարձնում էին
Աւելի թանկագին. իսկ արդ, երբ արդէն
Անոյշ բոյրը թռաւ, յետ առէք նրանց.
Ազնիւ մարդու համար ճոխ պարգևները
Անարժէք կը դառնան, երբ պարգևատուք
Անտարբեր դառնան։ Ահա, իշխանս...

Համլէտ։ Հա, հա, պարկեշտ ես դու։

Օֆէլիա։ Իշխան...

Համլէտ։ Գեղեցիկ ես։

Օֆէլիա։ Ի՞նչ կամիս ասել Ձեր բարձրութիւնը։

Համլէտ։ Որ եթէ դու պարկեշտ ես և գեղեցիկ, ապա չը պէտք է թոյլ տաս, որ որևիցէ բան յարակցութիւն ունենայ քո գեղեցկութեան հետ։

Օֆէլիա։ Կարող է գեղեցկութիւնը, իշխան, աւելի լաւ յարակցութիւն ունենալ, քան թէ պարկեշտութեան հետ։

Համլէտ։ Այո՛, իրաւ է. քանզի գեղեցկութեան զօրութիւնը աւելի շուտ կարող է պարկեշտութիւնը կերպարանափոխել դէպի անաւա-

կութիւն, քան թէ պարկեշտութեան զօրութիւնը կարող է բարեփոխել գեղեցկութիւնը և իրեն նմանացնել. այս մի ժամանակ տարօրինակ միտք էր թւում, բայց հիմա ժամանակը ապացոյցներ տուեց։ Կար ժամանակ, երբ ես քեզ սիրում էի։

Օֆէլիա։ Իրաւ է, իշխան. դուք ինձ այդպէս հաւատացնում էիք։

Համլէտ։ Իսկ դու չը պիտի հաւատայիր ինձ. որովհետև առաքինութիւնը չէ կարող այնպէս պատուաստուիլ մեր փտած ծառաբունի վրայ, որ մի համ մնացած չը լինի մեր բիմքում։ Ես քեզ չէի սիրում։

Օֆէլիա։ Ուրեմն ես աւելի խաբուած եմ եղել։

Համլէտ։ Մտիր կուսանոց. ինչու՞ ես կամենում մեղաւորներ ծնել։ Ես ինքս քիչ թէ շատ պարկեշտ մարդ եմ, և սակայն ես կարող եմ ինձ յանցապարտ համարել այնպիսի մեղքերով, որ աւելի լաւ կը լինէր մայրս ինձ բնաւ ծնած չը լինէր։ Ես շատ հպարտ եմ, քինախնդիր, փառասէր, աւելի շատ չարութիւններ ունիմ գագաթիս մէջ՝ քան թէ մտքեր նորանց բացատրելու համար, երևակայութիւն՝ նորանց ձև տալու, կամ ժամանակ՝ նորանց իրագործելու։ Ի՞նչ օգուտ, որ ինձ նման էակներ սողան երկրի և երկնքի մէջտեղ։ Մենք բոլորս անպիտան թշուառականներ ենք. մեզնից ոչ մէկին հաւատ մի՛ ընծայիր. գնա՛ մտի՛ր կուսանոց։ Ո՞ւր է հայրդ։

Օֆէլիա։ Տանն է, իշխան։

Համլէտ։ Թող դռները փակեն նորա վերայ, որ տան մէջ միայն խաղայ խելագարակի դերը։ Մնաս բարով։

Օֆէլիա։ Ո՜հ, օգնիր նորան, բարերար Աստուած։

Համլէտ։ Եթէ ամուսնանաս՝ ես քեզ այս անէծքը կը տամ որպէս օժիտ. եղիր զգաստ, որպէս սառուցը, ջինջ, որպէս ձիւնը, դարձեալ դու ազատ չես մնալ զրպարտութիւնից։ Մտիր կուսանոց, մնաս բարով. կամ եթէ անպատճառ քէզ պէտք է ամուսնանալ, ամուսնացիր մի յիմարի հետ, որովհետև խելացի մարդիկ լաւ գիտեն, թէ դուք նորանց ինչ հրէշներ էք շինում։ Օ՜ն, դէպի կուսանոց. գնա, և շատ շուտ, մնաս բարով։

Օֆէլիա։ Երկնային զօրութիւնք, բժշկեցէք նորան։

Համլէտ։ Ես ձեր ներկարարութեան մասին էլ լսած եմ։ Աստուած ձեզ մի դէմք է տուել, դուք ձեզ համար մի այլ դէմք էք շինում. դուք թռչկոտում էք, կոտրատուում էք, կակաչում էք, Աստուծոյ արարածներին մականուններ էք կպցնում և ձեր գժութիւններին ազիտութեան ձև էք տալիս։ Գնացէք, ես էլ չեմ ուզում մտածել դորա վերայ. դա ինձ խենթացրեց։ Լսիր, մենք այլ ևս ամուսնութիւն չենք ուզում։ Նոքա, որոնք արդէն ամուսնացած են՝ բացի մէկից, պէտք է ապրին. իսկ մնացեալները պէտք է մնան, ինչպէս որ են։ Կուսանոց, գնա՛։

(Գնում է Համլէտ)

Օֆէլիա։ Ո՜հ, ինչ ազնիւ հոգի այսպէս փչացաւ.
Զինուորի, գիտունի, պալատականի
Սուրը, աչքը, լեզուն, պետութեան յոյսը,
Նորա փառքի վարդը, տարրալի հայելին.
Ձևի գեղատիպը, ամեն դիտողների

Դիտման առարկան. անցաւ ամեն ինչ...
Եւ ես, տիկինների ամենադժբաղդս,
Ամենից չւառս, որ ճաշակեցի
Իր քնքոյշ ուխտերի առաջին մեղրը,
Տեսնում եմ իր ազնիւ գերագոյն միտքը,
Իբր անոյշ զանգակներ՝ խառնաձայն դարձած,
Հնչիւնը կորցրած և աննկարագրելի,
Եւ իր անզուգական հասակն ու դէմքը
Ծաղկափթիթ օրերի՝ խենթութեամբ խամրած։
Օ, վայ ինձ, որ տեսայ այն, ինչ որ տեսայ,
Եւ ահա տեսնում եմ այն, ինչ տեսնում եմ։

(Ներս են գալիս Թագաւորն եւ Պոլոնիուս)

Թագաւոր։ Սէր, ո՛չ. իր միտքն այդ կողմ չէ հակուած.
Ոչ էլ իր խօսքերը, թէև քիչ անձև,
Խենթութեան խօսքեր են։ Բայց կայ մի այլ բան՝
Մի բան իր հոգու մէջ, և որի վերայ
Իր մաղձոտութիւնը թուխսի է նստած,
Որի արգասիքը, ես երկնչում եմ,
Մի մեծ վտանգ լինի, որ կանխելու համար՝
Շուտափոյթ որոշմամբ՝ ես այս վճռեցի.
Պէտք է շտապով նա Անգլիա երթայ՝
Անվճար տուրքերը դանձելու համար,
Եւ գուցէ ծովերը, օտար աշխարհները,
Նորանոր առարկայք վանեն իր մտքից
Նորա մէջ բոյն դրած այն խանգարումը,
Որի վրայ ուղեղը մշտապէս բաղխելով՝
Այսպէս շփոթած է նորա առողջ միտքը։
Դու ինչ ես կարծում։

Պոլոնիուս։ Դա օգտաւէտ է.
Եւ սակայն տակաւին ես համոզուած եմ,
Որ վշտի պատճառը և բուն ծագումը
Իր դժբաղդ սէրն է։—Ի՞նչ կայ, Օֆէլիա,
Հարկ չը կայ որ պատմես իր ասածները,
Բանդի այդ բոլորը արդէն լսեցինք։
— Տէր, արէք ձեր կամքը. բայց, թէ յարմար դատէք,
Տեսարանից յետոյ՝ թողէք, առանձին
Իր մայրը՝ թագուհին խնդրէ նորանից
Յայտնել իր վիշտը. թողէք աղաս կերպով
Իր որդու հետ խօսի. իսկ ես, եթէ կամիք,
Մի տեղ կը թաքնուիմ, որ լսեմ նորանց։
Թէ նա էլ չը գտնէ նորա դաղտնիքը,
Ապա Անգլիա ուղարկեցէք նորան,
Եւ կամ բանտարկեցէք, ուր յարմար դատէք
Ձեր խմաստութիւնը։

Թագաւոր։ Այդպէս թող լինի.
Մեծերի խենթութեան լաւ հսկել պէտք է։

ՏԵՍԱՐԱՆ Դ.

Համլէտ։ (Իր մօրը) Դադարիր գալարել այդպէս ձեռքերդ.
Սուա, նստիր այստեղ, և թող սիրտդ կծկեմ։
Այո, պիտի կծկեմ, միայն թէ այդ սիրտը
Թափանցուող զանգուածից կազմուած լինի,
Եւ եթէ անիծուած սովորութիւնը
Չէ քարացրած նորան, այնպէս պնդացրած,
Որ ամեն զգացման անթափանց է այլ ևս։
Թագուհի։ Ի՞նչ եմ արել ես, որ յանդգնում ես
Այսպէս բուռն ժխորով որոտալ իմ դէմ։
Համլէտ։ Մի գործ այնպէս ժանտ, որ նսեմացնում է
Համեստութեան շնորքը և քնքշութիւնը.
Առաքինութեանը կեղծիք է անուանում,
Եւ անարատ սիրոյ գողտրիկ ճակատից
Անմեղութեան վարդը յափշտակում է
Եւ տեղը դրոշմում է մի տգեղ պալար.
Ամուսնութեան ուխտը նոյնչափ կեղծ է դարձնում,
Որչափ խաղամոլի սուտ երդումները.
Օհ, այնպիսի մի գործ, որ դուրս է քաշում
Սուրբ դաշինքի մարմնից նորա նոյն իսկ հոգին
Եւ փոխարկում է քաղցր ու սուրբ կրօնը
Դէպի սին բառերի մի երգասացութիւն։
Երկնքի երեսը շառագունում է։
Այո, այս կարծր գունտը, այս բարդ զանգուածը
Տխրամած երեսով այդ դժնեայ գործից,
Որպէս դատաստանից, մելամաղձուած է։
Թագուհի։ Վա՛յ ինձ. ի՞նչ գործ է այդ, որ մռնչում է
Այդպէս ահեղ ձայնով և որոտում է։
Համլէտ։ Նայիր այս պատկերին, և սորան նայիր.
Երկու եղբայրների պատկերքն են սոքա։
Տես, ինչ շնորհ է նստած այս ճակտի վրայ.
Հիպերիոնի գանգուրք, ճակատն Արամազդի.
Աչքը՝ Արէսի աչք, սարսափ և հրաման.
Եւ կեցուածքը նման Հրեշտակ *) Հերմէսին,
Նոր իջած երկնամբարձ մի բլրի վրայ.
Մի կերուած, մի կազմուած, որի վերայ, իրաւ,
Իւրաքանչիւր աստուած իր կնիքն է դրած,
Վկայել աշխարհին, որ մի մարդ էր նա։
Ա՛յս էր ամուսինդ։ Հիմա սորան նայիր.
Ա՛յս է ամուսինդ. բորբոսած մի հասկ,
Որ վարակում է իր առողջ եղբօրը։
Աչքեր ունի՞ս դու.

---

*) Հրեշտակ «սուրհանդակի» մտքով։ Ծ. Թ.

Կարող ես հրաժարվել այս սիրուն լեռնից
Եւ գալ պարարտանալ այս գարշ ճահճի մէջ։
Հա, աչքեր ունիս։
Ո՛չ, դու չես կարող այդ սէր անուանել.
Քանզի քո հասակում արեան աւիւնը
Հլու է ու խոնարհ և խելքին հնազանդ։
Եւ ինչ խելք կը քայլէր սորանից սորան։
Դատողութիւն անշուշտ պէտք է ունենաս.
Թէ ոչ, չէիր կարող շարժում իսկ ունենալ։
Բայց անշուշտ այդ խելքը կաթուածահար է.
Քանզի խենթութիւնը այդչափ չէր սխալուի,
Ոչ էլ խելքը ցնորքին այնքան կենթարկուէր,
Որ գոնէ չը պահէր ընտրութեան մի չափ՝
Այդչափ տարբերութիւն զանազանելու։
Ի՞նչ դև էր այն դևը, որ այսքան խաբեց,
Որպէս աչքակապուկ *) աչքերդ կապեց։
Աչք՝ առանց զգացման. զգացում՝ առանց աչքի.
Ականջ՝ առանց ձեռքի, առանց աչքերի,
Կամ հոտառութիւնը առանց բոլորին,
Կամ զգայարանքի մէկ հիւանդ մասը
Ը պիտի կարենար այդքան յիմարուիլ։
Օհ, ամօթ, որտեղ է շառագունիլդ։
Ո՛վ ապստամբ դժոխք, թէ կարող ես դու
Պառաւի ոսկրերում ըմբոստ հուր վառել,
Թող ապա բոցավառ պատանութեան դէմ
Առաքինութիւնը լինի որպէս մոմ.
Եւ թող որ հալուի նա սեպհական բոցով.
Եւ յայտնիր, որ այլ ևս ոչինչ ամօթ չէ,
Երբ որ գրոհ է տալիս անզուսպ եռանդը,
Երբ նոյն իսկ սառուցը այդպէս վառում է,
Եւ դատողութիւնը լինում է կամքի
Լրբութեան միջնորդը։

Թագուհի։ Օհ, Համլէտ, բաւ է։
Դու աչքս դարձնում ես հոգուս խորքերը,
Եւ այնտեղ տեսնում եմ լիծեր այնպէ՞ս սև,
Այնպէս խոր վարակուած, որ անջինջ են այլ ևս։

Համլէտ։ Օ, ոչ, բայց ապրել գարշ քրտնքի մէջ
Շնական անկողնի, լրբութեան մէջ բուսած,
Ֆծնել, սէր անել գարշ ոլջի վերայ...

Թագուհի։ Օհ, մի խօսիր այլ ևս։
Բառերդ մտնում են ականջներիս մէջ,
Որպէս մէկ մէկ դաշոյն. բաւ է, անուշ Համլէտ։

Համլէտ։ Մի ժանտ մարդասպան. մի արիկայ, մի ստրուկ,

---

*) Ակնարկում է այդ անունը կրող խաղին։ Ծ. Թ.

Որ նախորդ տիրոջդ մէկ տասանորդի
Ոչ իսկ քսանորդն է.—թագաւորաց կեղտը,
Կայսրութեան և գահի մի բաղկանաս,
Որ թանդ ազամանդը արկղից գողացաւ
Եւ դրեց գրպանը...

ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՏԵՍԱՐԱՆ Ա.

Ա. գերեզմանափոր (Երգում է փորելով)

Պատանութեան մէջ, երբ սիրում էի,
Ոհ, ինչպէս այդ ինձ անոյշ էր թւում,
Եւ ժամանակը ինչպէս թռչում էր
Ուրախ և անհոգ և կարճ էր տևում։

Համլէտ։ Այս մարդը ոչինչ չէ՞ զգում ուրեմն իր գործից. գերեզման շինելիս երգե՞լ։

Հօրացիո։ Սովորութիւնը նորան ընտելացրել է դորա հետ։

Համլէտ։ Ճիշդ այդպէս է. ձեռքը որչափ քիչ գործէ, այնքան նուրբ զգացողութիւն կունենայ։

Ա. գերեզմանափոր (Երգում է փորելով)

Բայց ծերութիւնը գաղտուկ քայլերով
Եկաւ բռնեց ինձ իր ճիրաններով
Եւ ինձ ուղարկեց այս հողում պառկել,
Որպէս թէ աշխարհ բնաւ չէի եկել։

(Դուրս է ձգում մի գանգ)

Համլէտ։ Այս գանգը ժամանակով լեզու ունէր և կարող էր երգել։ Ինչպէս այս անպիտանը գետին է շպրտում, կարծես կայէնի ծնօտը լինէր, նորա, որ առաջին սպանութիւնը գործեց։ Այս գուցէ մի քաղաքագէտի գագաթն է եղած, որ այժմ այս աւանակը ոտքով հրում է. այնպիսի մի մարդու, որ Աստծուն անգամ կը խաբէր. կարելի չէ՞ միթէ։

Հօրացիո։ Կարող է լինել, իշխան։

Համլէտ։ Կամ մի պալատականի գլուխը, որ կարող էր ասել. «բարի լոյս, ազնիւ տէր. ինչպէս ես, բարեգութ տէր»։ Այս կարող է լինել միլորդ այսինչը, որ գովասանում էր միլորդ այսինչի ձիուն, որովհետև միտքը դրած էր նորանից մուրալ այդ. կարելի չէ՞։

Հօրացիո։ Ի՞նչու չէ, իշխան։

Համլէտ։ Վա՜հ, անշուշտ. և այժմ դա պատկանում է ազնուաշուք տիկին որդնին, միտը թափուած, և որի գագաթին բաղխում է փոս փորողի ըրիչը։ Այստեղ կատարւում է մի սիրուն յեղափոխութիւն, եթէ մենք բաւական իմաստութիւն ունենայինք տեսնելու համար։ Ա՞յնքան դիւրութեամբ են գոյացել այս ոսկորները, որ հիմա այսպէս գնտախաղ խաղան նորանցով. իմ ոսկորներս ցաւում են, երբ մտածում եմ դորա վերայ։

Ա. գերեզմանափոր (երգում է)

Մի փորիչ միայն և մի բրիչ, մի բրիչ,
Եւ իր պատանը մի քիչ սաւան է,
Մի ծակ այս հողում իբրև գերեզման,
Այսպիսի հիւրի վայել այնքան է։

Համլէտ։ Ահա մէկ ուրիշը։ Ի՞նչու չէ կարելի որ սա մի փաստաբանի գանգը լինի. ուր են հիմա նորա երկայրաբանութիւնքը, նորա բառախաղերը, նորա արձանագրութիւնքը, նորա կալւածագրերը և նորա հնարագիտութիւնքը, ինչու է հանդուրժում, որ այս կոպիտ թշուառականը խփէ նորա գլխին մի ցեխոտ բահով, և նորա դէմ դատ չէ բաց անում գանահարութեան մեղադրանքով։ Հը՞մ. այս մարդը գուցէ իր ժամանակին մի մեծ կալւած գնող է եղած, իր կալւածագրերով, իր ապահովագրերով, իր դաշնաթղթերով, իր կրկին երաշխաւորներով, իր ընկալագրերով։ Ա՞յս է արդեօք իր դաշինքների դաշինքը և ընկալագրերի ընկալումը, որ հիմա նորա փափուկ գագաթը լեցւի փափուկ հողով. արդեօք իւր երաշխաւորները և իր կրկին երաշխաւորները կարողացան նորա բոլոր կալւածներից երաշխաւորել նորա համար աւելի քան մի կտոր գետին, ոչ աւելի լայն և երկայն, քան մի զոյգ դաշնաթուղթ։ Նոյնիսկ նորա կալւածաթղթերը հազիւ կը տեղաւորուեն այս սնտուկի մէջ, և նորա ժառանգորդն էլ նորանից աւելի չի տանի իր հետ. այնպէս չէ՞։

Հորացիո։ Ո՛չ մի ըթաչափ աւելի, իշխան։

Համլէտ։ Մագաղաթը ոչխարների կաշուց չեն շինում միթէ։

Հորացիո։ Այո, իշխան, երբեմն էլ հորթի կաշուց։

Համլէտ։ Ոչխար և հորթ են նոքա, որոնք յոյս են դնում այդ մագաղաթների վրայ։ Ես ուզում եմ խօսել այս պարոնի հետ։—Այս ո՞ւմ գերեզմանն է, բարեկամ։

Գերեզմանափոր։ Իմս, պարոն։ (Երգում է)։

Մի ծակ այս հողում իբրև գերեզման,
Այսպիսի հիւրի վայել այնքան է։

Համլէտ։ Իրաւ՝ կարծեմ այդ քոնն է, քանի որ դու դորա մէջ պառկած ես։

Գերեզմանափոր։ Դուք սորա մէջ պառկած չէք, պարոն. ուրեմն սա ձերը չէ. իսկ ես, ես սորա մէջ պառկած չեմ, բայց դարձեալ սա իմս է։

Համլէտ։ Դու սուտ ես ասում, քանի որ դու դորա մէջ ես, և ասում ես դա քոնն է, դա մեռած մարդու համար է, ոչ թէ կենդանի մարդու. ուրեմն դու սուտ ես ասում։

Գերեզմանափոր։ Դա մի թեթեւաթռիչ սուտ է, պարոն. դա կը թռչի ինձանից դէպի ձեզ։

Համլէտ։ Ի՞նչ մարդու համար ես փորում։

Գերեզմանափոր։ Ոչ մի մարդու համար, պարոն։

Համլէտ։ Ուրեմն ի՞նչ կնոջ համար։

Գերեզմանափոր։ Ոչ էլ մի կնոջ համար։

Համլէտ։ Ո՞վ պէտք է թաղւի դորա մէջ։

Գերեզմանատիրոջ։ Մէկը, որ ժամանակով մի կին էր, պարոն. բայց Աստուած հոգին լուսաւորէ. հիմա մեռած է։

Համլէտ։ Ինչպէս նրբամիտ է թշուառականը. պէտք է սրա հետ կողմնացոյցով խօսել, եթէ ոչ՝ երկայրաբանութեամբ՝ սա մեր հոգին կը հանէ։ Գիտէ Աստուած, Հօրացիօ, այս երեք տարիների ընթացքում ես նկատել եմ, մեր դարը այնպէս սրամիտ է դարձել, որ գիւղացու ոտքի մատը մօտեցել է պալատականի գարշապարին այն աստիճան, որ նորա ոտքի պալարը ցաւացնում է։—Ո՞րքան ժամանակ է, որ դու գերեզման փորող ես։

Գերեզմանատիրոջ։ Տարուայ բոլոր օրերից ես այն օրն սկսեցի, երբ մեր վերջին թագաւոր Համլէտը Ֆօրթինբրասին յաղթեց։

Համլէտ։ Ո՞րքան ժամանակ է այդ օրուանից։

Գերեզմանատիրոջ։ Ա՞յդ էլ չը գիտես. ամեն յիմար կարող է ասել. այդ նոյն այն օրն էր, երբ Համլէտ իշխանը աշխարհ եկաւ, նա որ խելագար է և որին Անգլիա ուղարկեցին։

Համլէտ։ Լաւ, ասա տեսնենք, ի՞նչու Անգլիա ուղարկեցին նորան։

Գերեզմանատիրոջ։ Վա՜հ, որովհետև խելագար էր. նա այնտեղ խելքի կը գայ. կամ եթէ չը գայ էլ, այնտեղ այնքան վնաս չունի։

Համլէտ։ Ի՞նչպէս։

Գերեզմանատիրոջ։ Այնտեղ նորա խենթութիւնը նկատելի չի լինի. այնտեղ մարդիկ նորանից պակաս խենթ չեն։

Համլէտ։ Ի՞նչպէս պատահեց, որ նա խելագարուեց։

Գերեզմանատիրոջ։ Ասում են շատ տարօրինակ կերպով։

Համլէտ։ Ի՞նչպէս տարօրինակ կերպով։

Գերեզմանատիրոջ։ Ես իմ հոգիս, հենց այն կերպով, որ խելքը կորցրեց։

Համլէտ։ Ի՞նչ հիման վրայ։

Գերեզմանատիրոջ։ Վա՜հ, այստեղ, Դանեմարքայի հիման վրայ։ Ես այստեղ ժամահար եմ եղած, տղամարդ և պատանի, երեսուն տարի։

Համլէտ։ Ո՞րչափ ժամանակ մի մարդ կարող է հողի տակ մնալ առանց փթելու։

Գերեզմանատիրոջ։ Անկեղծը, եթէ նա մեռնելուց առաջ փտած չը լինի (ինչպէս որ շատ բորոտ դիակներ ենք ունենում այս օրերում, որոնք գետին չը դրած քայքայւում են), ութը ինն տարի կը դիմանայ. մի կաշեգործ անպատճառ ինն տարի կը դիմանայ։

Համլէտ։ Ի՞նչու մի կաշեգործ, և ոչ մի այլ ոք։

Գերեզմանատիրոջ։ Ի՞նչու. նորա համար որ նորա կաշին այնպէս հաստացած է իր արհեստից, որ երկար ժամանակ ջուրը նորա մէջ չէ կարող թափանցել. և այդ ջուրը սարսափելի կործանիչ է այդ շանսատակ դիակին։ Ահա մի գանգ, որ հողի տակ մնացել է ամբողջ քսան և երեք տարի։

Համլէտ։ Որի՞ գանգն է այդ։

Գերեզմանատիրոջ։ Մի շուն շան որդի խելագարի. ո՞րի գանգն է, եթէ կարող ես ասել։

Համլէտ։ Ի՞նչ գիտենամ։

Գերեզմանատիրոջ։ Ժանտախտը տանէ այդ կատաղած շանը. մի անգամ մի սրուակ Հռենոսի գինի թափեց գլխիս։ Այս գանգը, պարոն, Եորիկի գանգն էր, թագաւորի խեղկատակի։

Համլէտ։ Ա՞յս։

Գերեզմանատիրոջ։ Հենց այդ։

Համլէտ։ Վա՜յ քեզ, խեղճ Եորիկ։—Ես նորան ճանաչում էի, Հորացիո. անասելի կերպով սրախօս մարդ էր. ինչ լաւ երևակայութիւն ունէր. հազար անգամ նա ինձ մանչ է ածել իր ուսերի վրայ, և հիմա որքան զզուելի է դա. սիրտս խառնում է։ Այստեղ էին կախուած այն շրթունքները, որ չը գիտեմ քանի քանի անգամ համբուրած եմ։ Ո՞ւր են քո կատակները, քո ծաղրածութիւնքդ, քո երգերդ, քո ուրախ սրախօսութիւնքդ, որոնք բոլոր սեղանի նստողներին ծիծաղից ճայթեցնում էին։ Չը կայ դորանցից ոչ մէկը հիմա, որ ծաղրէ քո սեպհական կրճատող առաձիներդ, ծնօտը ցած ընկած։ Հիմի գնա տիկին այսինչի սենեակը և ասա նորան, որ եթէ մի մատնաչափ շպար քսէ երեսին, դարձեալ վերջ 'ի վերջոյ այս շնորհքին պիտի հասնի, և այսպէս ծիծաղացրու նորան։—Խնդրեմ, Հորացիո, մէկ բան հարցնեմ քեզնից։

Հորացիո։ Ի՞նչ բան, իշխան։

Համլէտ։ Կարծում ես, Աղէքսանդրն էլ այս շնորհքն ունէր հողի մէջ։

Հորացիո։ Անշուշտ։

Համլէտ։ Եւ այսպէս գարշելի հոտ ունէր, փո՜ւհ։

(Դէն է ձգում գանգը)։

Հորացիո։ Անպատճառ։

Համլէտ։ Ի՞նչ ստոր գործածութեանց ենք վերադառնում, Հորացիո։ Մթէ երևակայութիւնը չէ կարող պատկերացնել իր առաջ Աղէքսանդրի ազնիւ փոշին մինչև այն բոպէն, երբ դա ծառայում է մի տակառի ծակը խցելու։

Հորացիո։ Այդպէս քննելը նշանակում է շատ հետաքրքրութեամբ քննել։

Համլէտ։ Ոչ, ես իմ հոգիս. ընաւ երբէք. մենք կարող ենք բաւական պարկեշտութեամբ հետևել նորան մինչև այն կէտը և առանց չափազանցութեան հասցնել նորան մինչև այնտեղ. օրինակ. Աղէքսանդր մեռաւ, Աղէքսանդր թաղուեցաւ, Աղէքսանդր փոշի դարձաւ. փոշին հող է. հողից ցեխ են շինում, և ինչու այդ ցեխից, առ որ փոխարկուած է Աղէքսանդրը, չէ կարելի խցել մի դարիջրի տակառի ծակը։

Մեծափառ կեսարը մեռաւ, հող դարձաւ
Եւ մի ծակ խցելու նա խցան դարձաւ.
Այն հողը, որ աշխարհ սարսում էր շուքից,
Գոցում է պատի ծակ ձմեռայ բուքից։

ՄԵՆԱՄԱՐՏ

Լաէրտ։ Ահա ձեզ մի զարկ։

(Լաէրտ Համլէտին խոցում է. յետոյ մեկնումարտելիս նոցա արերը փոփոխւում են, և Համլէտ վիրաւորում է Լաէրտին)։

Թագաւոր։ Բաժնեցէք դորանց.
Դոքա բորբոքուած են։

Համլէտ։ Ոչ, կրկին սկսենք։
Օզրիկ։ Թագուհուն նայեցէք. վա՜ռ...
(Թագուհին բնկնում է)։
Հորացիո։ Երկու կողմերն էլ արբեցուած են։
— Ի՞նչ բան է այս, իշխան։
Օզրիկ։ Ի՞նչ բան է այս, Լաէրտ։
Լաէրտ։ Վա՜ռ, որպէս մի թռչուն, հենց իմ ցանցիս մէջ
Ահա գոհուում եմ ես, և այդ արդար էր,
Այն դաւաճանութեան, որ ինքս եմ նիւթել։
Համլէտ։ Ի՞նչպէս է թագուհին։
Թագաւոր։ Ուշից գնում է,
Տեսնելով որ սոքա արբեցուել են։
Թագուհի։ Ոչ, ոչ, բաժակը, այն ժանտ բաժակը.
Ով սիրելի Համլէտս. բաժակը, բաժակը։
— Ես թունաւորուած եմ։
(Թագուհին տուն է փչում է)։
Համլէտ։ Օ, ոճրագործութի՜ւն։—Հա, փակեցէք դուռը։
Դաւաճանութի՜ւն. գտէք մատնիչը։
Լաէրտ։ Նա այստեղ է, Համլէտ։ Համլէտ, դու ապանուած ես։
Չը կայ դեղ աշխարհում, որ քեզ օգուտ տայ.
Հազիւ թէ կայ քո մէջ մի կէս ժամու կեանք։
Մահաբեր զէնքը ահա ձեռքդ է,
Անբոյթ, թունալից. իմ լարած դաւը
Այժմ իմ դէմ դարձաւ. տես, այստեղ ընկած եմ,
Եւ էլ չե՞մ կանգնելու։
Քո մայրդ, Համլէտ, թունաւորուած է.
Էլ չեմ կարող խօսել. թագաւորի մեղքն է,
Թագաւորի մեղքը։
Համլէտ։ Եւ ծայրը թունալից!
— Դէհ, թոյն, ներգործիր։
(Հարուում է թագաւորին)։
Համենքը։ Դաւաճանութիւն, դաւաճանութիւն։
Թագաւոր։ Պաշտպանեցէք ինձ դեռ, իմ բարկամներ.
Ես վիրաւորուած եմ շատ թեթև կերպով։
Համլէտ։ Ախ դու պիղծ, մարդասպան, նզովուած Դանիացի.
Ամիր այս բոլորը, ո՞ւր է մարգարիտդ։
Դէհ, հետևիր մօրս։
(Թագաւորը մեռնում է)։
Լաէրտ։ Դա իր արդար վարձն է։
Նա ինքն է շաղախել այդ նոյն իսկ թոյնը։
Թող մենք ներենք միմեանց, ով ազնիւ Համլէտ.
Իմ և հօրս արիւնը չը լինի քո գլխին,
Եւ ոչ քոնն իմ գլխին։
Համլէտ։ Աստուած ներէ քեզ։ Ես քեզ հետևում եմ.
— Մեռնում եմ, Հորացիո։—Ով թշուառ թագուհի,

Մնաս բարով։
Ո՜վ դուք, որ նայում էք այդպէս գունաթափ
Եւ զողում այս դէպքից, որ պապանձել էք,
Լուռ հանդիսատես այս եղելութեան.
Ա՜խ, թէ ունենայի ժամանակ պատմելու,
(Բայց այս անողորմ ժանդ ոստիկանը,
Մահը, իր վճռի մէջ միջոց չէ տալիս)
Օ, ես կարող էի ձեզ պատմել... բայց մնայ։
— Հօրացիո, մեռնում եմ. և դու ապրում ես.
Պատմիր դու իմ անցքս և արդար դատս
Անտեղեակներին։

Հորացիո։ Մի կարծիր այդպէս։
Առաւել ես մի հին Հռովմայեցի եմ,
Քան մի Դանիացի։ Այս գաւաթի մէջ
Դեռ կայ մի քիչ հեղուկ։

Համլէտ։ Թէ մի մարդ ես դու,
Տուր ինձ այդ գաւաթը. թող ինձ, 'ի սէր Աստծոյ,
Այդ ինձ պէտք է տաս։ Ով Աստուած։—Հօրացիո,
Ի՜նչ աղարտուած անուն պէտք է թողնեմ ես,
Երբ այսպէս իրերը անծանօթ մնան։
Եթէ երբէք դու ինձ տեղ ես տուած սրտիդ մէջ,
Հեռու կացիր պահ մի երանութիւնից,
Եւ այս բիրտ աշխարհում շունչ քաշիր ցաւով,
Որ իմ անցքս պատմես։

(Մի մարշ հեռից, և զրմուկ հեռից)։

Այս ի՞նչ ռազմի ձայն է։

Օզրիկ։ Այդ Ֆօրթինբրասն է, որ Լեհաստանից
Յաղթութեամբ յետ դարձած՝ Անգլիոյ դեսպաններին
Տալիս է այսպիսի ռազմական ողջոյն։

Համլէտ։ Օհ, մեռնում եմ ես, ո՞վ իմս Հօրացիո։
Արդէն ահեղ թոյնը խեղդում է ոգիս.
Այնքան կեանք չունիմ, որ Անգլիոյ լուրերը
Կարենամ լսել. բայց գուշակում եմ,
Ընտրութիւնն ընկնում է Ֆօրթինբրասի վրայ.
Ես նորան եմ տալիս մահամերձ ձայնս։
Պատմիր այս նորան այն դէպքերի հետ,
Որ իմ դիխով անցան... մնացորդը լռութիւն։

(Մեռնում է)։

ԳԱԲՐԻԷԼ ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆԸ ԵՒ ԻՐ ՊԷՊՕՆ

(1825—1912)

Գաբրիէլ Սունդուկեանը հայ առաջնակարգ դրամատուրգն է, սկզբունքներով դեմոկրատ, ըէալիստական ուղղութեամբ գրող։ Իր մի շարք կոմեդիաներով նա անդրադարձել է նոր-նոր միայն տնտեսական նուաճումներ անող հայ բուրժուազիայի կենցաղն իր բոլոր մութ ու մռայլ կողմերով։ Սունդուկեանի պիէսներում ցուցահանուել են հայ նահապետական տրադիցիաներից քաղքցու «լուսաւոր» ձևերին անցնող դասակարգի կեանքի երևոյթները։ Նրա պիէսներով կարելի է դիտել հայ առևտրական դասի վերելքը դէպի բուրժուական անողոք, միջոցների մէջ խտրութիւն չը դնող դասակարգի տիրապետութիւնը, իր անբաժան զէնքերով՝ արշինով ու կշեռքով։

Սունդուկեանը սակայն չէ սահմանափակուել առևտրական դասով։ Նա հակադրել է այդ դաժան ու կեղեքիչ դասին սեփական աշխատանքով ապրող ընչազուրկ աշխատաւորին, որի բարոյական պատկերը հեղինակը բոլորել է մի փայլուն լուսապսակով։

Սունդուկեանի հռչակ ստացած պիէսը «Պէպօն» է։ Պէպօն նրա գլուխ գործոցն է, և միաժամանակ հայ գրականութեան պարծանքը։ Դա սոցիալական մի պիէս է, ուր հեղինակը՝ անկախ իր տեսակէտներից ու նպատակից՝ յանձին հակադիր գեղարուեստական տիպերի տուել է դասակարգային խմբաւորով սոցիալական ընդհարման մի ցայտուն փաստ։ Գեղարուեստական մի փաստ է դա,—որի սոցիալական հայելու մէջ անդրադարձել է համանման երևոյթների շարքը,—որը ընդունակ է միանգամից բնորոշելու հայ իրականութեան մէջ նոր զարթնող բուրժուազիայի և սրանից կախման վիճակ ունեցող ընչազուրկ մասսայի միջև եղած հակամարտութիւնը։ Մի կողմից սոցիալական անարդարութեան բարձր ճիչն է լսւում պիէսի մէջ, միւս կողմից՝ դաժան կեղեքիչի դիւային ծիծաղը իր զոհերի երկար շարքերի հանդէպ։

Պէպօի մէջ Սունդուկեանը մարմնացրել է շահագործուող դասից բարձրացող խրոխտ բողոքը՝ ընդդէմ անարդար ու անհաւասար կարգերի։ Նրա կեղեքուող ու շահագործուող հերոսը խորապէս զգում է, որ ինքը և իրպէսները կոյր զոհեր են աշխարհի այն կարգերի, որոնք Արութին Զիմզիմովի նման աւազակներին սոցիալական սանդուղքի ամենաբարձր աստիճանին են հասցնում, երկրային բոլոր բարիքները նրանց շնորհելով։ Պիէսը հրապարակ է հանում մի հերոսի, որ զգում է,

բայց չի գիտակցում այդ երևոյթի պատճառները, ինչպէս չէր գիտակցում հենց ինքը Սունդուկեանը։ Պէպօն զգում է և տեսնում, թէ ինչպէս հալալ աշխատանքով ապրողը գետին է լիզում, Զիմզիմովների նման կեղեքիչների գարշապարն է համբուրում։—Էս ինչ, ինչ մարթութիւն է,—բացականչում է Սունդուկեանի Պէպօն, տեսնելով, թէ ինչպէս Աստուած իր նման մարդկանց ստեղծել է իբրև «կերակուր» հարստահարիչների համար։ Էդպէս հօ շներն էլ են ապրում... Մինչդեռ «մարդ» դառնալու համար՝ պէտք է Աղա Արութինի նման մարդիկ թալանել, գողութիւն անել, Պէպօի նման խեղճերին զրնել, ամեն տեղ արցունք թափել տալ, էն արցունքները փող շինել ու էն փողով էլ ոսկէ տներ։ Սունդուկեանը իր Պէպօի հետ միասին չէր կարող չը տեսնել, թէ ինչպէս ուրիշի հալալ աշխատանքը իւրացնող, կեղեքող, շահագործող Աղա Արութինին օրէնքն էլ էր պաշտպանում, Աստուած էլ։

«Գնա, գնա, հիմի,—ասում է ինքն իրեն «Պէպօն»,—նատի բիրթումը ու լաւ բարաթ փիքը արա աշխրքի բանիրը... Ո՞վ է ասում քիզ, վուր օխչրի երիշով մանգաս... Չիս գիդի՞, վուր բուրթդ կու գլին... Չիս գիդի՞ վուր գառնի վիրչը դասաբխանէն է...

Եւ Պէպօն Զիմզիմովի հետ ոչ մի կոմպրոմիսի, զիջման չի գնում։ Նա մտնում է բանտ, որ մտածի աշխարհի «բանների» մասին ու բանտից դուրս գալուց յետոյ արժանի պատիժը տայ շահագործողներին ու կեղեքողներին։

Սունդուկեանի պիէսի վախճանը որքան բնական իր ժամանակի համար, նոյնքան սիմվոլական է մեր յախուռն ժամանակների համար։ Խորհրդաւոր էր Պէպօի քայլը։ Նա անհետաշտ բաժանուեց իր ախոյեանից և գնաց բանտ։

Անցան ժամանակներ։ Անցաւ Զիմզիմովների տիրապետութեան մեղրամիսն ու յաղթական վերելքի շրջանը։ Հաւաքական Պէպօների ընդհարման առաջին օրից անցել է աւելի քան կէս դար, որի ընթացքում անթիւ, անհամար Պէպօներ են բանտ մտել Զիմզիմովների պատճառով։ Պէպօներ, որոնք նատան «բիրթումը ու լաւ բարաթ փիքը անելուց յետոյ «աշխրքի բանիրը», կէս դար վերջը խորապէս գիտակցեցին իրենց թշուառութեան պատճառները, ըմբոստացան, քանդեցին բանտի պարիսպները, դուրս եկան զնդաններից ու արժանի պատիժը տուին բոլոր Զիմզիմովներին, որոնք «բազմաթիւ շատերի» դժբաղդութեան վրայ էին հիմնել իրենց երջանկութիւնն ու անխռով վայելում աշխարհային բարիքները, համոզուած, որ իրենց պաշտպանութեան համար «տանմանուած» մարդկային և «աստուածային» օրէնքները յաւիտենական են...

Իր Պէպօի համար Սունդուկեանը առաջինն է հայ հեղինակներից, որոնք,—չը նայած իրենց իդէալիստական աշխարհայեացքին, բայց կեանքը գեղարուեստական ճշմարտութեամբ վերարտադրելու պատճառով,—մեծ արժէք են ստանում պրոլետարական մատաղների աչքում։ Մանաւանդ այժմ, երբ այդ մատաղների տնարկու պայքարի ոյժով իրար հետից խորտակւում են այլոց աշխատանքը շահագործող արտօնեալ դասակարգերը և նրանց հովանաւորող անարդ կուռքերը։

Սարգսեան

ՊԷՊՕ

ԳԱՐԵՆՈՎՈՒԹԵԱՆ ԵՐԵՔԱՆ

ՏԵՍԻԼ ՀԻՆԳԵՐՈՒԹ

Պէպօ, մենակ, մի փոքր լուսնի լոյսով։

Ուրիշ ախչիկ գ'ուզէ՞ս. բաս Պէպօն մնաս էլի... Տեսնում ինձ ոնց իս ուզում... (Ծորից լուսնին)։ Զէ, Պէպօ, դուն հալալ տղայ իս. հալալութինը սիրում իս, քու բանումն էլ հալալ կաց։ Ինչով է սատ քի մոդ քու փեսէն. խոստացիլ իս, պիտիս կատարի քու խօսքը... Թէ գլխիս գդակ ունիս, պիտիս տա. թէգուպ կաշիս պլոկվի, թէգուպ հագիս դուս գայ, պիտիս տա... Ամա վանրդի ճարիմ էն գանդուռմար փուղը... Ո՞վ կու տայ ինձ էնդ'ադա... (Նայում է պատանին)։ Ո՞վ ինչ կուտայ էատուրը. դիփ մէտի վուր գրաս դնիմ, դիփ մէտի վուր ծախիմ տուն, տիղ, շուր... ինչ կու տան... կիսի կէսն էլ չի դուս գա... Է՛ս էր վիրչն, Էլի. էս էիր ուզում, Էլի, Աբուքին. էատու համա էիր չարչըրում, Էլի, ինչրու հիմի... Աշխարքումը պիտի խայտառակ ըլիմ, Էլի... Էլ իմ ենգրտերանց երեսին վանց մտիկ անիմ. ինչ կ'օսին։ (Գլխարկը յատակին է խփում)։ Փու քու նամուսին...

ՏԵՍԻԼ ՏԱՄՆԵՐՈՐԴ

Շուշան, Պէպօ

Շուշան. Տօ, ախար, ջեր մէ թիրա հաց կ'ուտէիր։

Պէպօ. Հաց չէ, դանրուսմար ուտիմ... Ինչ կ'անիմ հաց, գանա հանցի արժանի իմ... (Գօտիկը կապելով)։ Հացը վուր ատիղծած է, գանա ինձ համա է ատիղծած. հացը վուր ես ուտիմ, ադա Աբուքինը ինչ ուտէ։ Նա էլ հաց ուտէ, ես էլ հաց ուտիմ... (Դասը ծիծաղով)։ Հրա՜, հրա՜, հրա՜...

Շուշան. Սիվցիլ էր իմ օրը, ահրա՜։

Աչքերը սրբելով դուրս է գնում ձախ դռնից։

ՏԵՍԻԼ ՏԱՄՆԱՄԷԿԵՐՈՐԴ

Պէպօ, մենակ, արխալուխի կոնակները մէր գցելով։

Գնա, Պէպօ, գեղին լէ, խալխի վուանտերուն պոչ ասա, նրանց վուտի ցիխը լէ... Ո՞վ իս դուն, ինչ իս դուն, ինչ մարթանէսա-

բուն իս դուն, ինչ անում ունիս դուն... 'Եվոր գ'ուզին, վուտի տակը կու գցին քիզ, վրէտ կու ման գան, գեղնի հիդ կու հաւաքին... ինչ հաջաթ, ջիանձվէլի վրայ ինչով իս աւել... Դու իսօ մարթ չիս, մարթ-կերանց համա կերակուր է սաեղծի քիզ Աստուած... Գիշիր չարչրրվի, ցերեկ չարչրրվի, 'երդնքի տակը լուսացրու, անձրրվի ու քամու հիդ կռիւ տու, ձմեռը ցրտէմէն կոնկոռնա, ամառը արեգակի շուքումն էրվի ու խորվվի... գնա էնէնց մէ թիքա հաց ճարէ ու էն թիքա հացով դէդիտ ու քվիրդ պահէ... էս ինչ, ինչ մարթութին... էսէնց շունն էլ է ճարում մէ թիքա, վուր տունը պահում է... Միթամ դուն էլ շուն իս... քանի աշխրքիս էրէսին ման իս գալի, դուն էլ շան պէս կերակրվի... էս ինչ մարթութին է... (Դադար). Մարթ էիր ուզում դառնա. կ'էհէիր մարթիք կու թալնէիր, գուղութին կօնէիր, ինձ նման խղճերուն կու գբնէիր. քանուհինգ հազար տիպ արէն արտրսունք կու թափիլ տէիր, էն արտրսունքնիրը փուղ կու շինէիր ու էն փուղով օսկէ տնիր... Մէշը փառաւուր ման գու քէիր... դրօշկա, կալասկա, ձիանիր կու սարքէիր, քանուհինգ ինձպէսին գլխիտ գ'արաւաշ կու կանգնեցնէիր... Ա՜յ, էն չախը կ'օսէի քիզ՝ մարթ իս, Պէպօ, ինչ մարթուն պիտի... ինչ քէվդ գ'ուզէր, էն սահաթին կու ճարէիր... էն չախը դիփունքը բիզ գլուխ կու տէին, կու մնձրէին, պատիւ կու տէին ու մէկս մէկու գլուխ կու կոտրէին, վուր քու աճկը նրանց վրայ քաղցր ըլի։

ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ԵՐԿՐՈՐԴ

ՏԵՍԻԼ ՏԱՍՆՄԷԿԵՐՈՐԴ

Արութին Զիմզիմովի տանը. Եփեմիա, Գիգոլի, Պէպօ

Պէպօ, ներս մտնելով դիմացի դռնից, գլխարկը ծածկած եւ զարդի հագուստով: Փրէ... Գլուխ է տալիս։

Էփէմիա. Ի՞նչ իս ուզում. ո՞վ իս։

Պէպօ. Ո՛վ իմ. գ'օնաղ իմ, վա՛.

Էփէմիա. Դո՞ւն՝ միր գ'օնաղ։

Պէպօ Հէնց 'ես։

Էփեմիա, ծիկայ տալով։

Ա՜ա... Օտկեցէք, օտկեցէք, ո՞վ է բրիստոնայ։ Դուրս է վազում ծախ դռնից։

ՏԵՍԻԼ ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ

Պէպօ, Գիգոլի

Պէպօ, առաջ գալով, առանձին։ Ա՛յ, քնթեմէն դուս գայ էն հացը, ինչ մարթ ձիր հացն ուտէ, հրա։

Գիգոլի. Ի՞նչ իս ուզում, ախպէր, ի՞նչ բան ունիս։

Պէպօ. Հալբաթ բան ունիմ, վուր էկիլ իմ, էլի՛, վա։

Գիգոլի. Զի ըլի՞, վուր մենք էլ իմանանք։

Պէպօ. Ի՞նչ կու աւելնայ քիզ. դուն գնա ադա Արութինին իմաց արա, վուր 'ես էստի իմ։

Գիզուլի. Ախար, դուն ով իս։

Պէպօ. 'Ես... (Նստելով ընկողմարանի վրայ)։ 'Ես իմ։

Գիզուլի. Վա՜...

ՏԵՍԻԼ ՏԱՄՆԵՐԵՔԵՐՈՒԹ

Ներսէ՛ս, Արութին

Արութին, ներս վազելով ձախ դռնից։ Ի՞նչ խարար է։ Ի՞նչ խարար։ Տեսնելով Պէպօին, մնում է սառած։

Պէպօ, վեր կենալով տեղից, գլխարկը վեր է առնում եւ գլուխ տալիս։ Բարի աչոդում, աղա Արութին։

Արութին, Գիզուլուն ցաւծը։ Դուն գնա բանդ տիս։

Գիզուլի, առանձին. Դուրթ, հալիլէբը։ Դուրս է վազում դիմացի դռնից։

ՏԵՍԻԼ ՏԱՄՆՁՈՐՍԵՐՈՒԹ

Պէպօ, Արութին

Արութին. Հը, ուր իս էկի, ախպէր։

Պէպօ. Ա՜, համեցէք նստի։ Ինքը մօտ քաշելով մի աթոռ նստում է։

Արութին, նստելով ընկողմարանի վրայ, առանձին։ Իմ տանը սա է մօհրաթ անում ինձ։ (Պէպօին) Ախար, էս չախն ուր իս էկի։

Պէպօ. Կուշտը քաղցածին ի՞նչ է հարցնում... Բօղազս մի դուռ կտրի, աղա Արութին. թէ էս սնաթիս չիս տայ, վարցկ կ'օնիս, վուր ինձ սպանիս էստի էլէտ.

Արութին. Թէ իմքին պարտ իմ, ախպէր, բան գէմարթլէբի։ Ո՞ւմ փուղն իմ կէրի, վուր քու փուղն ուտիմ... Ինչոր բարաթ էիր ասում... Գիթաք, բերիլ ի՞ս։

Պէպօ, առանձին կրծքին խփելով։ Ը՞մ... (Բարձր)։ Բարաթը չը կայ, խօ գիդիս. դուն քու դաւթըրներումը գիթաք թէ չէ։

Արութին. Իմ դաւթըրներումը շատ պառտեցի, հնիս Աստծու, ամա մէ ասօ էլ չգիթայ ձիզ համա։

Պէպօ. Բաս ի՞նչ անինք հիմի։

Արութին. Ի՞նչ պիտի անինք. դուն քիզ համա, 'ես ինձ համա։ Գրպանից հանում է սաթի համրիչը եւ գցում։

Պէպօ. Վա՜ղնց թէ՝ դուն քիզ համա, 'ես ինձ համա։ Բաս քու մտկումը պա՞ռտ չիս ինձ։

Արութին. Ախպէր, ի՞նչ պիտի պարտենամ. բարաթ դուն չունիս, դաւթրումս 'ես վունչիչ չունիմ գրած, ի՞նչ պիտի պարտենամ քիզ։

Պէպօ. Բաս քու սրտի դաւթրումն էլ վունչիչ չը կայ գրած։

Արութին. Սրտի դաւթարը վուրն է։

Պէպօ. Բաս քու խնամտանքը վունչիչ չէ ասում քիզ, էլի. խօ գիդիս, վուր պարտ իս։

Արութին. Վուր գիդենամ խօ կու տամ, էլի՛. էլ ուր իմ խոսեցնում։

Պէպօ. Բաս Գիքօն ուր է ասում... Նրա հալալութինը գիփունքը գիդին։

Արուլթին. «Մէլամ», ասում է, «թալիսի կուդի մօրդ'վանա մօ-ծամէթ» *)։

Պէպօ. Աղա Արուլթին, վերիւը խօ Աստուձ կայ ու քու սիրտն էլ է կարթում, իմ սիրտն էլ, ամի Աստձէմէն ձեռը մի վիկալնի։

Արուլթին. Ի՞նչ շառիր իս մօգօնում գլխիս, ախպէր. օմքին լսէ, հէնց կու գիդենայ դուրթ իս ասում։

Պէպօ. Դուն գիդիս վուր դուրթ իմ ասում։ Քու վուրթկերանց արիւ սաղաղա խղճա միդ։ Էս փուղը 'ես ինձ համա չիմ ուզում...

Արուլթին, խօսքը կտրելով։ Տէր օղորմած Աստուձ։

Պէպօ, շարունակելով։ Մուլափ, մուլափ, ինչրու վիրշն ամնգաճ դի. էտ փուղով իմ քուրը նշնած է, խոստացիլ ինք, պիտինք տա, ու թէ էս սահաթիս չտուինք, քվիրս թողնում ին, ուրիշ ախչիկ ին ուզում էս գիշեր։ Ախար, մէ Աստձու այնաղ դաղաստանը մի՞տդ բի է... խօ քիզ էլ կու խօսեցնին էնդի, ինձ էլ. ի՞նչ ջուղաբ կու տաս, վուր չիս տալի։

Արուլթին. Փի՛է... (մտածմունքի մէջ է ընկնում)։ Այնաղ դաղաստանը գիդենայ վուր դրուստ միտս չէ էտ պարտկը։

Պէպօ. 'Ես ասում իմ դրուստն, էլի՛. ինձ չիս աւտում։

Արուլթին. Վա՛, էտ վունց կու'լի, Պէպան. ամեն մարթ վուր գայ ու էտէնց խօսի, տասը միլիօն էլ վուր ունենամ, մէ օրումը կու հատնի։ Չէ, ախպէր, միր առուտրի հէսաբը էտէնց չէ։

Պէպօ, վեր կենալով տեղից եւ գլխարկը ծածկելով։ Բաս չիս տալի, էլի։

Արուլթին. Պարտկով կի վունչիչ տալացու չիմ, ախպէր. ամա քուր իս մարթու տալի՛, ջուխտ աճկիս։ (Ծոցից հանում է պօրտմոնէն)։ Ը՛հա, (թղթադրամ տալով)։ Վարցկ բան է, ախպէր։

Պէպօ, Գլխարկը վեր առնելով, գլուխ է տալիս։ Ա՛յ, Աստուձ վուրթիքդ զօրացնէ։ Առնում է փողը։

Արուլթին. Է՛ա հինգ թումանն... համբրէ, (Պէպօն գունատում է)։ Դրուստ հինգ թումանն է... Հինգ թումանն էլ, դուքնովս ամնց կացի, էնդի կու տան, էս սահաթիս օմքին կու դրգիմ։ Գնա՛, ախպէր, Աստուձ բարի վայելումը տայ։

Պէպօ, փողին նայելով եւ շփոթված։ Հինգ թումանն ու հինգ թումանն... (Արուլթին. յետոյ գլխարկը ծածկելով)։ Մնացածը... Ախար, իմ քվիր համա հարուր թումանն ինք խոստացիլ։

Արուլթին. 'Ես ի՞նչ անիմ, վուր խոստացիլ իք. բէհէսաբ նամադուլ իք արի, վուր խոստացիլ իք. ում փուղն էիք խոստանում, վուր խոստացիլ իք։ Մարթ իր լէհէրի զօրա կու ձքէ վունը թէ չէ։ Դուք էլ վուր հարուր-հարուր թումանիր իք խոստանում, էլ ուրիշն ի՞նչ անէ։ Էս ի՞նչ խարաբ էլաւ աշխարհքն, ախպէր. էլ օչովու համա չաւիս ու ձիւ չը կայ։

Պէպօ. Միր բանը մինք գիդինք, պարուն, ձիր բանը դուք. խոստացիլ ինք, մի՞ր փուղն ինք խոստացի, քիզ ի՞նչ դաւի։

Արուլթին. Խոստացիլ իս ու տար իրան տու., էլի. էլ ի՞նչ իս ուզում։

---

*) Վրացերէն է.—Աղէքսն իր պոչը բերեց վկայ։

Պէպօ. Ի՛նչ տու, վուր տամ, է. սխալ էս վուր տալիս իս, մատխարա իս գցում, թէ ինչ խարար է։

Արուլթին. Ա՛յի ու սրապէնեբուն վարցկ արա։ Տօ, ինչով չիս իմանում, վուր վունչիչ պարտ չիմ 'ես ձիգ ու էտ էլ ինչ որ տալիս իմ, հոքուս համա բախշում իմ։

Պէպօ. Բախշում ի՞ս... Դանա 'ես ախկատ իմ, էկիլ իմ օգորմութին իմ ուզում քիմէն. 'ես իմ հախն իմ ուզում, իմ հաթը. ինչ կոնիմ 'ես քու բախշիշը։

Արուլթին. Չիս ուզի ու էստի տու, ինձ պէտկը գու քայ։ Ախկատ ու հմպարտ, վուր կ'օսին, էս է, այ։ Բի, էլի, բի. ինչ իս թամաշա անում։

Պէպօ. Բաս թամամ չիս տալի, էլի։

Արուլթին. Տօ, գժվիլ ի՞ս, թէ ինչ խարար է. ինչ իս ուզում ինձմէն։ Զօռով պարտկ կու'լի աշխրքումը՝ շլինքս իս գցում։

Պէպօ. առաջ գնալով։ Արա օրթում կի թէ պարտ չիս, օրթում կի, էլի. մարթ կու'լիս՝ օրթում կու'տիս։

Արուլթին. Օ՛րթում, հաւատ, Ա՛ստուած, (Պէպօն գարնուրանք է արտայայտում։ 'Երգինք, իմ վուրթկերանց արիւը գիգենայ, վուր վունչիչ պարտ չիմ...

Պէպօ, զայրացած։ Ա՛յ, Աստուած ու 'Երգինք խառով կենայ գլխիս։ (Ծփելով փողը Արուլթինի երեսին)։ Հը՛, բռնէ, ածկդ դի, կնգատ համա իմքին կունենաս առնելու։

Արուլթին աղաղակելով եւ տեղից վեր թռչելով։ Օտկեցէք, գ'ապաւ. սպանեցին, մորթեցին... Ո՞վ կաք էտի...

Ներս են թափում՝ ձախ դռնից Էփէմիան, աջ դռնից Սամսօնը, հագնուած եւ զարդարուած, ինչպէս պատրեալ էր Էփէմիան երրորդ տեսիլում, իսկ դիմացի դռնից երկու ծառայ փրակով եւ ոպիտակ ձեռնոցներով։ Տեսարան։

ՏԵՍԻԼ ՏԱՍՆԵՒՀԻՆԳԵՐՈՐԴ

Ներսի, Էփէմիա, Սամսօն, երկու այլ ծառայ։

Պէպօ, ձախ ձեռքով ցոյց տալով ծառաների վրայ։ Է՞ս է քու մարթութինն էլի... (Երկար լռութիւն)։ Ա՛յ, հաւատ ըլի քիզ բու հարատութինը։

Արուլթին, սաստիկ շփոթուած, ծառաներին։ Տօ, օտկեցէք, է. ինչ իք թամաշա անում. տեսնում իք՝ ուզում է սպանի ինձ։ Սամսօնը եւ ծառաները մօտենում են Պէպօին։

Պէպօ, ծառաներին մղելով։ Մուլափ, դէնը... (Արուլթինին) էս օսկէ պատիրը, վուր սարքիլ իս, ուամ փուղով... Հազար ինձ պէտնեբուն թանկիլ իս, դանա. քար ու կիրը միր արնով իս շաղրդի, դանա. դիփունանց ածկիրը արլանդվա իս արի ու հիմի ծանդր ու բարակ քիզ համա նատած քէփ իս անում, էլի։

Էփեմիա. Դուս արէք, դուս արէք։

Արուլթին. Դուս, դուս, ասում իմ։ (Ծառաներին)։ Դուս արէք. չիք իմանում։ Ծառաները յարձակւում են Պէպօի վրայ։

Պէպօ. Դուս... (Ծառաներին նորից մղելով)։ Դէնը, դէնը։

ծառաները փոքր ինչ հեռանալով, կանգնում են դիմացի դռան առաջ։ Արուքինին)։ Փուղերս հաշա իս ուտում, ու դուս էլ իս անում, էլի... (Լռություն)։ Դուս կ'էհամ, դուս կէ'համ. չարէս ինչ է, զօրը քունն է, տէրը դուն իս էատի... Ամա լաւ դիդացի, պարուն Արուքին, էս արարմունքը քիզ չի մնա... վերիմը Աստուած կայ, ընթէմէտ կու հանէ քու անօրէնութինը... (Ծառաներին հրելով), Դէնը, դէնը... Դուրս է գնում դիմացի դռնից։

Արուքին, Պէպօի ետեւից ծառաներին։ Գնացէք, գնացէք հիդը, վունչիչ չտանէ, վունչիչ չփախցնէ։ Ծառաները դուրս են վազում Պէպօի ետեւից։

ՏԵՍԻԼ ՏԱՍՆԵՒՈՒԹԵՐՈՐԴ

Արուքին, ժենակ, երկար լռությունից յետոյ։ Տօ, դուրթ, ինչ օյին էկաւ դլխիս էն լօթի պաժարնին... էլ մինձ ու պստիկ չը կայ աշխրքումը... էն հանգի ախկատ դադօն վրէս էնէնց լդաւի. (մանդալով)։ էն հանգի խօսկիր ասէ... (Հայելումը ուղղում է)։ Բօշացաւ, բօշացաւ աշխրքի բանը... (Հեռանում է հայելիից)։ Պարտ իս, կ'օսէ... Գժվիլ է... Ինչ պարտկ, ինչ փլաւ, ինչ փստան... Ո՞վ ասաւ, վուր պարտ իմ... ՀՎ գիդէ, վուր պարտ իմ... Թէ պարտ իմ, ինչի՞ ինչկլի էսօր յիդ չիմ տվի... Եա նրան վուր տամ, մէկէլնելրուն ինչ ասիմ... նրանք ինչ գէթ ին արի... Զէ, (նստում է)։ Վունչիչ պարտ չիմ... սուտ շառիր ին մօգօնում... Թէ պարտ իմ, ինչի՞ բարաթ չունէ... Վուրդի է... ՀՎ ունէ... ինչ բարաթ... Բարաթ չկայ... գնացիլ է... ՁՆՁՎԻԼ է... թէ չէ էլ ինչ օրուքին է... Ամա էն լօթի պաժարնին պիտի ամեն տիդ բդաւի, վուր փուդ իմ պարտ ու յիդ չիմ տալի... (Վեր է թռչում տեղից)։ Զէ, չէ, էփէմիէն դրուատ է ատում... Պիտի 'ես բդաւիմ, 'ես պիտի հարայի տամ, ճշիտարք ու 'երդիր դարթեցնիմ, վուր ինձ՝ ինձ պէս ադա մարթուն էսէնց ինպատիւ արին, էսէնց շառիր ին դցում վրէս... Մուլափ, 'ես քիդ կու շանց տամ, լօթի պաժարնի։ Դուրս է գնում ծախ դռնից։

ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ԵՐԿՈՐԴ

ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

Եկեղ., մենակ, տախտի վրայ նստած, լուռ կարում է, ապա մուքամի վրայ դրած կարի բոխչից վերցնելով մի կտոր, շարունակում է կարը եւ հետն էլ երգում.

«Սիրելիդ, ինձ ատել ես,
Ատել ես, նախատել ես,
Ջիդարքս կտրատել ես,
Արնաշաղաղ ես արել»։
(Աչքերը սրբում է)։
«Ինձ տեսնելիս տուր բարով,
Ծերհուրդդ ասա գրով»։
(Լացի ձայնով)։
«Ինձ իս մոքթել չես արով՝
Անտուր մատաղ ես արել»։

(Կարդ բոցնելով՝ լաց է լինում)։

Ա՛խ, Ա՛ստուած, 'ես էլ կ'ասիմ թէ ապիմորթի իմ... Ինչի ստիպեցիր ինձ, ինչացու իմ աշխարքումը. անմիտ գիդնի էրեսին տիպ իմ բռնում... էն ուփրս լաւ չի ըլի, վուր գիդնի տակն ըլիմ ու գիրեգմանս վուտի տակը կոխշրտում ըլի՞ն... Ինչի չիս ազատում ինձ, Ա՛ստուած... Դուն խօ լաւ գիդիս, վուր մանն ուփրս հիշտ է ինձ համար, կանց շունչ քաշիլը... (Լռութիւն)։ Զուրը ծնգնիմ, թոկով խիխտվիմ, գանակ ցցիմ սրտումս. ինչ ջուղար տամ գիդ... (Լաց է լինում)։ Ա՛ստուած, Ա՛ստուած, ես կէծակ վէր գցէ գլխիս, ես կարմանջի վրայ անց կենալիս կարմունջը փուլ ածա վուտիս տակը, ես գիդնին մանգալիս, գեդինը պատռէ ու ինձ դէվէր տար... Լաց է լինում։

ՏԵՍԻԼ ԵՐԿՐՈՐԴ

Նոյն, Շուշան

Շուշան, ներս մտնելով ծախ դռնից։ Էլի լաց իս ըլում, Ղէկէլ։

Ղէկէլ, աչքերը սրբելով։ Զարթնի լացը՝ ինչ է ճնացի ինձ, դէդի... Էս արտըսունքն էլ վուր չըլի տվի Աստուած, սիրտս ինչով հովցնիմ։ Կարը զցում է տախտի վրայ։

Շուշան. Ախար, էտղ'ադա արտըսունք կ'ուլի, վուրթի. խօ քամվեցար իստակ։

Ղէկէլ. Բաս ինչ անիմ. դօշիս հէնց գիդիմ ադաքար է պառկած... Էս արտըսունքն է ինձ օտկում մէ քիչ, թէ չէ դարդու խիխտվում իմ։

Շուշան. Դարդ ցաւի դայ ու Աստձու պատիժի էն սիվ-արտովը։ Աժէ՞, վուր էտղ'ադա դարդ իս անում նրա համար։

Ղէկէլ. Աշխարքումը բէդնամ էլայ, գլուխս դուս կորվեցաւ, էլ տօլի ու ՝ածօրի էրեսին չիմ կանացի մտիկ տայ. էս ապրիլ է։

Շուշան, նստելով Ղէկէլի մօտ աթոռի վրայ։ Մի դարդ անի, Ղէկէլ ջան, մի դարդ անի. Աստուած օղորմած է, կու'լի նրա վրա լաւ մարթու է ռաստ բերում քիզ։

Ղէկէլ. Մարթու աճկն էլ կարիմ. նրանք խնգատանք ունին, նրանք հոքի ունին... Ինձ պաչ արաւ ու իմ պաչը տարաւ ուրիշին էրիտ... (Գլխին խփելով)։ Գեդինը պատռէ ու ինձ դէվէր տանէ։ Էլ 'ես 'երգնքի էրես վո՞ւնց պիտի տեսնիմ։

Շուշան. Աբա, դուն վուր էտունք իս անում, Ղէկէ՞լ. 'ես ինչ անիմ... (Լաց լինելով)։ Միխկը չի՞մ. բաս 'ես վո՞ւնց դիմանամ՞ իմ սիվ ու մութ օրին՝ մէ կուռը, քիզ՝ մէկէլին... Էտ հանգի օրինակներ շատ է էլի, վուրթի. մենակ միզ համա իսօ չէ ստիպած աշխարքը։ Քանի միզպէսները կան, քանի միզ վրայ վատթարն ասա, հացի հասրաթ ածած ին, մէ թիքա հացին էրնէկ ին տալի, գոնէ դուռը աթկըտուրթին ին անում ու էն թիքա հացը՝ թէ հազրէնը մէկը տալիս է, ճնացածնիրը կի՞նծումը խփելով դուս ին անում... Միզ իսօ Աստուած մէ թիքա տվիլ է. փառք Իրան, ինչ անիս, հալրաթ միր ճակտին էս էր գրած։ Էլի փառք տանք Իրան, ադանչանք անինք, վուր էտու վրայ վատթար օրին չը ռաստ բերէ միզ. Իմ Պէպոին ջան տայ, վուր ինչ թիքա միզ տալիս է նրա ձեռով, էն թիքէմէն էլ չը զրդէ միզ։

Դէկէլ. Էրնէկ Աստուած ինձ մահ տայ, ուրիշ վունչիչ չիմ ուզում։
Շուշան, մօտենալով եւ գրկելով Դէկէլին։ Մի ասի, մի ասի, Դէկէլ ջան. (Նստելով կողքին)։ Միխկ է Աստուծու մօտ, գենացվալօս դէդէն։
Դէկէլ Շուշանի գրկում։ Ախ, դէդի ջան... Լուռ լաց են լինում։ Տեսարան։

ՏԵՍԻԼ ՈՒԹԵՐՈՐԴ

Պէպօ. Մենակ ներս է մտնում դիմացի դռնից գլխարկով ու զարդի հագուստով։ Էնէնց էլ աշխարը... (Վերցնում է գլխարկը, աջ ձեռքի ցուցամատով ճակատի քրտինքը սրբում եւ գլխարկը կրկին ծածկում)։ Մարթ գլխէմէն ինչրու վուտը դուրթ ըլի ու էլի ինքը սուտ դուս դա՛յ... Պատժելու մագիէր ինքը պատրժվի... Գնա՛, գնա՛ հիմի, Պէպօ, նստի բիրթումըն ու լաւ բարաթ փինքը արա աշխրքի բանիրը... Դուն հալալուբթենի էդնէն մանն արի, տեսնիմ ինչ է տալի քիզ քու հալալուբթինը... Մտիկ իս անում ս

քաղաքը գիլաներով լեցվիլ է. ո՞վ է ասում քիզ, վուր օխչրի 'երիշով մանն դաս... Չիս գիդի՞, վուր բուրթդ կու գգի՞ն... Ինչ ո՞վ էր ասում ձէնդ բացբացնիս. ո՞ւմ վրայ իս ձէնդ բացբացնում, ինչո՞վ... ինչ կայ ձեռիտ... Փո՞ղ ունիս ջիբումը՞դ, խի՞լք ունիս գլխումը՞դ, ղ՞ալամ ունիս ձեռումը՞դ. ինչ ունիս, ինչ, տո՛ օղորմելի, վուր գառնի պէս բռնչում իս... Չիս գիդի՞, վուր գառնի վիրչը ղ՞ասաբխանէն է... Էն է բու բինէն, Պէպօ, էն... Գնա՛ պառկի, վուր բօղազդ դուս կորին... Մի վախենա, մէ դանկի մագիէր տանը դանակ կու լուս ենգնի քիզ համա։ Նստում է սեղանի մոտ ապուի վրայ եւ ընկղմելով մտածմունքի մէջ՝ գլուխը շարժում։

ՏԵՍԻԼ ՏԱՍՆԵՐՈՐԴ

Արութին, Գիրօ. երկուսն էլ գլխարկով.

Գիրօ, ներս գալով դիմացի դռնից։ Ա՛յ, թէ սուտ իմ ասում։
Արութին, հետեւելով։ Աբա՛, Աբա՛։
Գիրօ, Առաջ գալով. Մուլաթ, հանեցէք նստի, մէ տէրն էլ դայ։
Արութին. Դիփ մէկ է։ Գիրօ, մէ տեսնիմ թէ էս ինչ թուխտ է։
Գիրօ. Ա՛յ, ինչ թուխտ է, ապա Արութին։ (Ձեռքը գրպանն է տանում եւ հանում բթախոտի տուփը)։ Չէ, էս չէր. ամա դիփ մէկ է... (Քաշում է)։ Հը՛մ... Ա՛յ, (Պահում է բթախոտի տուփը եւ մուրհակը հանում)։ Դուն մէ քիչ հիւռու կանգնի, ապա Արութին։ Ինքը հեռանում է դէպի տախտը։
Արութին. Վա՛. վախենում իս, վուր չիպլի՞մ. աշխարքն ալան թալան իս չէ։
Գիրօ. Չէ չէ, ապա Արութին, էս վունց կ'օնիս. գնա դուն էս հանգի մարթ ի՞ս. ամա էս թուխտը խիստ փաթէրակաւոր իմքին է։ Ասում իմ ձեռդ չգիրչի։ (Բաց անելով մուրհակը)։ Ա՛յ, տիա։ (Հեռից ցոյց տալով)։ Էս է։
Արութին, գլուխը մօտեցնելով մուրհակին։ Աբա՛, աբա՛։
Գիրօ, մատնացոյց անելով։ Վա՛, ա՛յ «չէմի վալիա,*) Արութին Զիմզիմովիչ։ Զարմանք։ Տեսարան։

---

*) Վրացերէն՝ իմ պարտքն է։

Արուքին, շփոթվելով եւ կատաղելով։ Է՛տ... Էտ... (Ձեռքը մեկնելով)։ Իմ... իմ... ձեռքն է։

Գիքո, մատնացնելով մուրճակը։ Բաս իմն է։

Արուքին, նանաչելով մուրճակը, առանձին։ Էս ինչ ելրգնուց պատիժ էր... (Ձեռքերը առաջ տանելով)։ Մէ լաւ տեսնեմ...

Գիքո, մուրճակը ետուացնելով։ Մուչափ, ապա ջան, է։ Ախար, էնդ՛ադա վուր ասում էի թէ 'ես վկայ իմ. վուր պարտ իս, սուտ էի ասում. ամա վուր քու օխտէմէն չէկայ, 'ես ինչ անիմ։ (Աղաղակելով)։ Գոնանամ Քու գագաստանին, Ա՛ստուած։

Արուքին, կամենալով մուրճակը խլել։ Մէ տեսնիմ, ասում իմ...

Գիքո, զրպանը դնելով մուրճակը։ Է՛, ապա Արուքին, ձեռը վիկալ, քու հօրն օգորմի։ Ասում իմ վուր փոքէրակի թուխտ է, է։ Էս սահաթիս գու քայ Պէպոն, կակուլին մէ նամուսումը կու գինէ նրան։ Դուն էսաթի մուլափ ստ., մէ գնում ենուշանին իմաց անիմ։ ձանապարհից յետ նայելով Արուքինին, դուրս է գնում ձախ դռնից։

ՏԵՍԻԼ ՏԱՍՆԱՄԻՆԵՐՈՐԴ

Արուքին, մենակ. երկար ժամանակ ապառած կանգնած է, յետոյ ուշքի գալով։ Է՛ս հանգի էլ օյին... Շատ բան է ելի գլուխս, ամա էս թահաթը չէ էլի... Վուրդ՛անց լուս ենգաս էս անիծած բարաթը... վունց լուս ենգաս... Է՛բաղ է... Չէ, վուրդ՛անցի էբաղ է... Թէ էբաղ է, (Շուրջը նայելով)։ Էսաթի ինչ իմ շինում... էս... Պէպոյի տունը ու 'ես... (Շօշափում է իրան)։ Արուքին Զիմզիմով էսաթ... Չէ, դրուստ Աստուծ պատիժ է... Չէլաս, էլի... Էնդ՛ադա բանիրը մարսեցի ու կուժը էս մէկի վրայ է կոտրվում, էլի. Էս էր վիրջն էլի... Խալխը վուր իմանայ, ինչ կ՛օսին... Էլ ով կու տստայ ինձ... Ագահութինը աճկիրս կապից, էլ սիվ ու սիպտակ չչոգեցի... Հէնց էս սահաթիս էլ էնդ՛ադա խալխումն ասի... վուր 'ես վունչիչ պարտ չիմ, ասի... Հիմի գնա, սիվցաս էրեսդ... Ա՛մութ քիզ, Արուքին, ամութ քիզ. էս վունց բերիր բանդ, վունց... (Ներկար լռութիւն)։ Չէ, ուրիշ չարայ չկայ, վունցոր ըլի պիտի էսաթի էէտ ապատիմ բարաթս... թէգուզ տաս թումանն էլ գլուխ գնամ... թէգուզ քսան, թէգուզ հարիւն, թէգուզ մէկն էրկու... Իմ հաթն է, թող ջանս դուս գայ։ Ընկնում է աջ կողմի աթոռի վրայ։

ՏԵՍԻԼ ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ

Նրանք, Գիքо, Կակուլի

Գիքо, դիմացի դռանը, Կակուլուն. Կարիլ ին, կարիլ օչով չկան։

Կակուլի, ներս գալով, Գիքոին։ Տօ, ամ Պէպոն, ինչ իս ասում։

Արուքին, տեսնելով Կակուլուն առանձին։ Է՛լի էս պաժարնին։

Գիքо, ներս գալով։ Էս վունց էկար, Պէպան, վուր չտեսայ։ (Արուքինին)։ Ա՛յ, ապա Արուքին, հիմի կու տամ, (Մատանացոյց անելով Պէպոին)։ Թէ կ՛օսէ։ Է՛տ դուն, էս սա։

Պէպо. Էս ինչ խարար է, չիմ իմանում։

Կակուլի, Վա՛, ապա Արուքինի մօտ դուն իս խօսում ու մէկ իս հարցնում։ Գիքոն անցնում է բեմի ձախ կողմը։

Պէպօ, Սրա ասածը խօ ուփրօ չիմ իմանում։ (Հեգնօրէն)։ Էկիլ է՝ բարիշինք կ'օսէ։

Կակուլի, ծաղրելով։ Հա... (Հեգնօրէն գլուխ տալով Արութինին)։ Բաս մէ լաւ շնորհակալութին անինք։

Արութին, առանձին, շփոթւած։ Մարիկ էս լրփին։

Կակուլի, Պէպօին։ Տօ, թէ՝ ասում էիր, թէ լաւ մարթ չէ, կ'օսէ, ազա Արութինը։

Արութին առանձին։ Անակամ։

Պէպօ, ժպտալով։ Ի՞նչ գիդիմ, խճպտանքը զարթիլ է։ Գիքօն շարժում է գլուխը։

Կակուլի, Պէպօին։ Իժում՝ վռունց է բարիշում, կէսը տալիս է։ (Մօտենալով Արութինին)։ Ե՛ս քու մարթ ասողին... (Բռունցքը բարձրացնելով)։ Դէ, հոգիս պան տու ու սէրթուկդ հանէ։

Պէպօ, Կակուլի, Կակուլի։

Գիքօ, Պէպօին։ Տօ, բան-հոքի չանէ։

Կակուլի, Արութինին, ձախ ձեռքով բռնելով նրա օձիքից։ Ը՛, քու.. (Աջու բռունցքը ցոյց տալով)։ Դէ՛, գնա հիմի՝ գանդատ արա...

Արութին. Տօ, գժվիլ ի՞ս, էյ։

Պէպօ, հեռացնելով Կակուլուն Արութինից։ Մուլափ, Կակուլի, էս մարթութին չէ։

Արութին, շորերը ուղղելով։ Արի՛ ու ձիդ պէտներուն լաւութին արա։

Կակուլի, Պէպօի ձախ կողմը կանգնած, Արութինին։ Լաւութին... (Պէպօին) Ի՞նչ պտուղ է... Դիփ հոքու էդնին է ման գալի, այ. գանա չիմ գիդի,.. (Նայելով Արութինին, գլուխը շարժում է. յետոյ կրկին դառնալով Պէպօին)։ Աբա բարաթը չէր լուս ննգի, տեսնիմ թէ վռունց էր լաւութին անում։

Պէպօ, Ի՞նչ բարաթ։

Կակուլի նոյն դրութեամբ։ Վա՛, բաս ջեր չիս գիդի՞. այ. էս ազա պարնի բարաթը)։ (Դնալով դէպի Գիքօն)։ Տօ, բի՛, է։ Պէպօին)։ Էս անաթիս ճամփին վուր իմացաւ, ռանդ ու ռունգը գնաց խղճինը... Ուզում էի էնդի էէդ դրա ժամը դուս բերի, ամա վուխտը չէր. քու կուռն էի շտապում... (Գիքօին)։ Դէ, չուսա արա, Գիքօ ջան, է։

Գիքօ, գրպանից հանելով մուրճակը։ Մուլափ, մուլափ, տիրուչը տամ։ Մուրճակը մօտեցնում է Պէպօին։

Կակուլի, մուրճակը խլելով Գիքօի ձեռքից եւ տալով Պէպօին։ Վռունց է, վռունց, լոթին։

Պէպօ, զննելով մուրճակը, հետզհետէ զարմանում է։ Տեսարան։ Էս էրաղ է...

Կակուլի, էրաղ ու կէս է։

Գիքօ, Ղուրթ վուր էրաղ, Պէպօ ջան։ Ջիս գիդի թէ...

Արութին, առանձին։ Է՛ազ՝ազա էլ խայտառակութին։

Կակուլի, մատնացոյց անելով Գիքօին։ Սրան թէ խօսեցրիր, Պէպօ, օխտը դիվի հէքիաթի վրայ էրգար է էտ բարաթի առակը։

Պէպօ, Ախար, էս վռերդ՝անց լուս ննգաւ։

Գիքո, նստելով տախտի վրայ եւ պատրաստելով պատմելու։ Ա՛յ, Պէպան ջան, վունց էր...

Կակուլի, Գիքոի բերանը ձեռքով ծածկում է։ Սու, սու, դուն սուս, Գիքո ջան... (Պէպոին)։ Էտ վունցոր լուս ննգաս, իժում կ'օսինք. ամա դուն էտ անասուձուն թամաշա արա.

Արուքինը սարսափելի դրութեան մէջ է:

Պէպո, բերեւ նայում է Արուքինին եւ իսկոյն դարձնելով հայեացքը մուրհակի վրայ, վերցնում է գլխարկը եւ դէպի երկինք աղաղակում:

Գոհանամ Քի, Տէր. գիփունի դաղասանի վրայ Քու դաղասանն է էլի դուրթ... (Գլխարկը ծածկելով, Գիքոին): Սիրաս իմանում էր ախար, է...

Գիքո. Գիդէ Աստուձ, վուր 'ես միդ չունիմ, Պէպո ջան... Կակուլին ձեռքով իր բերանը ծածկելով, յարդարում է Գիքոին լռել:

Պէպո. Իմ բարի հրեշտաքն իս դուն էս անաթիս, Գիքո ջան, ինչա ասում։ Լուռ եւ անշարժ նայում է Արուքինին երկար ժամանակ:

Գիքո, նոյն միջոցին, ցածր ձայնով։ Բարի հրեշտաքն ըլի քու քամանգը, վուրթի։ Երկար լռութիւն։ Պատկեր։

Պէպո, ծանր մօտենում է Արուքինին եւ մուրհակը ցոյց տալիս։ Էս կու ճանչնաս, ապա Արուքին... (Երկար եւ լուռ նայելով երեսին, գլուխը շարժում է)։ Հիմի իմ իմանում քու էստի գալը.. Լայիզ արիր, հա... թէ կ'օսէ վունչիչ պարտ չիմ, թէ վուր օրթում հաւատ արիր, թէ վուր վուրթկերանցով օրթում կերար... Է՞տ է քու օրթումն, էլի. Է՞տէնց իս ամեն օր օրթում ուտում, էլի. Է՞տով իս աշխարհքին խափում, էլի... Է՞տ օրթումներովս իս մոդ արի էտղ'ապա փուղն, էլի... Ա՛յ, խռով կենայ քիզ քու օրթումներդը... Ամեն մի քու օրթումը օրթունք կտրվի ջանումտ ու ջանդ ծակծկվի, վուր հոգիտ էգէրա 'երգնքի լուս տեսնէ... (Աւելի մօտենալով)։ Զէ, չիս ամանչում... Խճպըտանքը իսօ գարդակ քամի է քիզ համա. (Մուրհակը նորից ցոյց տալով): Է՛ս ինչ է, ինչ. էստուրն ինչ կ'օսիս։ Է՛ստումէն էլ չիս ամանչում, էս քու կոտրած ձեռով չիս գրի... Ասա չէ, էլի, ասա. քիզ համա իսօ հաշա ուտիլը հիշտ է... Ա՛յ գէ՞գինը մոնիս էտ քու պատվական շուրբերով։ Արուքինը սաստիկ ուռում է:

Կակուլի, որ գտնում է բեմի ծախ կողմը, գլխարկը վեր առնելով բացականչում է... Հա-ջան, հա-ջան, ապա Արուքին... (Գլխարկը նորից ծածկելով եւ ձայնը փոխելով)։ Թօրա, թէ 'ես ուզենամ քու տիղն ըլիմ։

ՏԵՍԻԼ ՏԱՄՆՎԵՑԵՐՈՐԴ

Պէպո, Արուքին, Գիքո, Կակուլի, Շուշան

Արուքին, Շուշանին։ Խիլքի արի, խիլքի, ինչի՞ր իս ասում, դէդի։

Շուշան, շարունակում է, դառնալով միւսներին։ Ո՞ւր է. սիվցրիք երէսը՞. ո՞ւր է էն սիվ ու մութ բարաթը։ (Արուքինին)։ Հիմի էլ կ'օսիս, վուր վունչիչ պարտ չիս մի՞զ։

Արուքին. Պարտ իմ, պարտ իմ ու տալիս իմ, ուրիշ ի՞նչ իք ուզում։

Շուշան. Բաս բիրթն էլ ո՞ւր իս դրգիլ տալի։

Արուքին. Բիրթն էլ չդրգիլ տամ, փուղն էլ տամ, մէ իմքին էլ

աւելցնիմ. ամա վուր չէ բարիշում, 'ես ինչ անիմ։ Շուշանը զարմացած նայում է։

Պէպօ, Արութինին։ Հիմի բարիշինք, հիմի... (Մօտենալով կէկէլին)։ Իժում սրան ինչ իս ասում... (Ձախ ձեռքով բռնում է Կէկէլի աջ ձեռքը եւ առաջ քերում)։ Սրա մօդ վռնց իս բարիշում։ Սադ-սադ գերեզմանը դրիր, օրն ու ումրը խաւրեցրիր, կինքը հարամ արիր. վռնց իս բարիշում սրա հիդ, վռնց... Վռնց իս յիդ տալի սրան, ինչոր խլեցիր սրամէն, վռնց։ Քու վուխչ հաբատութինն էլ չի կանա լաւցնի էն եարէն, ինչ եարա բաց արիր դուն սրա սրտումը... Գնա, գնա. էլ մինք բարիշելու վունչիչ չունինք։ Գնա, քանի սադ իս աշխարքումը, սրա արտըսունքնիրը միտդ բի, վուր էգէրա էլ մէկէնեբուն չանիս, ինչ սրան արիր։

Կէկէլ, աշխատելով ազատել ձեռքը։ Թող, Պէպօ ջան, թող... (Պէպօն թողնում է նրա ձեռքը)։ Իրան սիվցրու իր բարաթը։ Անցնում է Պէպօի աջ կողմը։

Գիքօ, Պէպօին։ Տօ, հաղիր բարիշէ։

Կակուլի Շուշանին։ Աա, դէդի, վուր բարիշի, հաղիր աւել է տալի։

Շուշան, Իր ճակը դնէ աւելին, թաք Պէպօիս ձեռը չտայ։

Կէկէլ. Բարիշի, Պէպօ ջան, բարիշի։

Արութին. Ա՛րի կոտրուի, Պէպան, Բարիշինք։

Պէպօ. Ա՛րի բարիշինք, արի... Ա՛րի գնանք, վուրդիոր ինձ էս սահաթիս ստեցիր, արի մէկ էնդի էս բարաթը շանց տամ, մէ էրեայ վուր սուտը 'ես չիմ, թէգուշ գլըխէմէն էլ մէ իմքին քիզ փէշքաշ... Ա՛րի, էլի, արի։

Շուշան, Արութինին։ Գնա, գնա, վունցոր միր էրէսը սիվցրիլ իս, թող հիմի քու էրէսը սիվնայ։

Պէպօ. Ա՛րի, էլի։

Արութին. Էս վուր ուզենամ, իսօ էսդ'ադա էլ ադաչանք չիմ անի։

Պէպօ. Ը՛ը, գոռ աւազակ...

Կակուլի, Առանձին, կիսաձայն եւ կրծքին խփելով։

Վա՛յ մէ... (Գիմացի դուռը դռից բաղխում են։ Լռութիւն։ Մօտենալով դռանը եւ փոքր ինչ բաց անելով, որպէս թէ մէկի ձեռ խօսում է)։

Հա՜, էստի է։ (Առաջ վազելով, Պէպօին։) Տօ, գժվիլ իս, քութահ արա, պրիստաւն է։

Կէկէլ, Պէպօ, Շուշան, (միասին)։ Պրիստաւը՞։

Գիքօ. Պրիստաւը՞։

Պատկեր։

Արութին. Ի՛ս տու բարաթս, Պէպան, թէ չէ բիրթն ին տանում։

Պէպօ. Հաջաթ չէ, կ'էհամ բիրթը, կու նստիմ. էնդի իսօ չիմ մեռնի... Մէ օր կու ազատվիմ ախաբ, էլի՞. վադէն հիռու չէ... Շատին իս խատի էսէնց, շատի գլխին իս օյին էկի էսէնց, շատի բօղազն իս դուս կտրի էսէնց, ու 'ես Պէպօն չիմ ըլի, թէ դիվուանանց ջիդրը չիմ հանի... Սադ աշխարքումը էրեսդ մուր կու շինիմ... Մնաս բարով, դէ-

դի... Մի լաց ըլի, Կէկէլ, Աստուած օղորմած է, խղճի ճակտին էսէնց է գրած։

Պակուլին կամաց-կամաց գնում կանգնում է դռան մոտ եւ հեռգհեռ սպառնալի դիրք ընդունում։

Արութին. (սաստիկ շփոթված եւ առանձին)։ Ի՞նչ անիմ հիմի։

Կէկէլ. փաթաթելով Պէպոին։ Մի գնա, Պէպո ջան, մի գնա։

Շուշան. Պէպոին միւս կողմից։ Ի՞նչ իս անում, Պէպո, իրան սիվցրու էտ սիվ ու մութ բարաթը։

Պէպո. Իրան տամ, վուր սրա մնախարէն դառնամ... վուր խալիի աճկումը սուտը 'ես էրևամ, դուրթը սա... բիրթի ահու գլուխս ծախիմ... Չէ, դէդի, էս բարաթը Աստուած թուր է դէվէր դրդի ինձ համա... Էստով պիտի կտրիմ 'ես սրա գլուխը... Քանի քի պէանիրն ին էրվում սրա ձեռնէմէն, քանի (Մատնացույց անելով Կէկէլին) սրա պէանիրն ին լաց ըլում, քանի ինձ պէանիրն ին տանջվում... Մէկն էլ է չիմաց անէ աշխարքին սրա արարմունքը՝, մէկն էլ հարայի չըկանենայ տանյ, վուր էս մարթը, վուրին դիփունքը գլուխ ին տալի, դիփունքը յարգում ին ու պատվում ին, դիփունքը մինձացնում, փառաւորում ու 'երգինք բացրացնում... սա էն մարթն է, վուրի համա վունչիչ բան սուրփ չըկայ աշխարքումը... Հիմի լաց ըլէք, ինչդ՝ ադա դուզիք... Խղճի լացը հալրաթ էնդուր է ստիղծի Աստուած, վուր հարուստի արարմունքը լվացվի։ (Դուռը կրկին բախում են)։ Մնաք բարով... (Գնում է բերդը)։

ՀԻՆ ԱՍՏՈՒԱԾՆԵՐ

Շաճի

Գործողությունը կատարվում է մի ամբողջ հազարամյակ սրանից առաջ՝ Սևանայ վանքի կառուցման շուրջը։ Սևանայ կղզին, որ հին աստուածների, հեթանոսական կենսուրախ կյանքի վայրերից մեկն էր, այժմ քրիստոնեական ասկետիզմի ազդեցությունն է ենթարկված։ Այնտեղ, ուր առաջ «կյանքի մեհյանն» է թագավորել, այժմ մուտք է գործում ճգնավորների մի մռայլ ամբոխ, որ թշնամի է ամեն ոյժի ու ծնունդի, ամեն զեղեցկության ու կյանքի։ Եվ պայքարն սկսվում է այդ երկու հակոտնյաների միջև. մի կողմը կանգնած է ճգնարանի վանահայրը, իսկ միւս կողմը՝ հին աստուածության ներկայացուցիչ ձերմակաւորը։ Գորգինի Սատանայի նման, ձերմակաւորն ազդարարում է վանահորը իր հզոր թագավորության մասին։ Սակայն վանահայրը ուշք չի դարձնում նրա վրայ և կառուցանում է Սևանի նշանավոր մենաստանը, որի շինքը սակայն բարձրանում է վանահոր և բարեբար Մարիամ իշխանուհու վաղեմի փոխադարձ զգացմունքների հիմունքի վրայ։ Մենաստանի կառուցումը արդասիք է սիրոյ սկզբունքի, որի դեմ սակայն այնքան պայքարում է այժմ ինքը վանահայրը։ Նա ճգնում է արմատախիլ անել կղզուց աշխարհիկ կյանքի ամեն արտայայտությունն. նա յուսահատական ջանք է գործ դնում՝ վերջնականապէս խզելու արտաքին աշխարհի հետ ունեցած ամեն կապը։ Բայց ի զուր են երևում նրա ջանքերը. մենաստանում աշխարհն էր թագավորում իր սովորական պահանջներով, վանահորը գնելով ներքին խոշոր հակասության մեջ։ Վանահայրը չէր ըմբռնում իր դրության ողբերգությունը. նա յենված իր հաւատի սկզբունքին՝ հոգեկան կորովի մեծ ջանք է թափում միաբանության մեջ գտնվող երիտասարդ աբեղայի վրայ, որպէսզի մտքի բարձր թռիչքներով օժտված աբեղային կարողանայ իրեն արժանավոր յաջորդ պատրաստել։ Բայց կյանքի լոյսը թափանցում է աբեղայի պարզ հոգու մեջ, դալիս է նրան տիրելու Սէդայի հրապուրիչ կերպարանքով և իր հետ տանում նրան կյանքի ալեծուփ ծովի խորքը։ Վանահոր և աբեղայի ուղիները բաժանվում են. մեկը գնում է գտնելու իր և նմանների մեջ աշխարհախառն հոգին, միանգամայն ամփոփելու ինքն իր մեջ, միւսը վառ ենչերով ու ձգտումներով՝ նեռվում է կյանքի կուլ հրապարակը։

Սակայն ո՞ւր էր գնում վանահայրը և ո՞ւր աբեղան, որոնք էին այն թագավորությունները, որտեղ պիտի կանգ առնէին միապաղաղ, տափակ միաբանական միջավայրից հեռացող այդ երկու ախոյեանները։ Երկուքն նրանք գնում էին նոր աստուածություններ գտնելու, թէ՛ եղածներին երկրպագելու համար։

Շանթի վանահայրը միջնադարեան հայ իրականութեան մոլեռանդ կրօնաւորն է, սակայն ոչ իրրև շարլան կրօնաւոր։ Աշխարհի կեանքի անյաջողութիւնից յուսահատուած՝ նա ընտրել է անապատականութիւնը, սակայն նրա մէջ զգացմունքների վաղեմի բոցը դեռ ևս վերջնականապէս չէ մարել։ Այն տառապանքն ու գառնութիւնը, որ առել է նրան այժմ Սևանայ վանքը կառուցանող իշխանուհին, անաջող սիրոյ այն կրակը, որ ջարդ ու փշուր է արել նրա կեանքը,—խորտակել են նրա երիտասարդութիւնը, հացրել նրան ծայրայեղ յուսահատութեան և նետել նրան մենութեան գիրկը, ծնեցնելով նրա մէջ յանցանքի մեղքի գաղափարը։ Նման քրիստոնէութեան արշալոյսի ապաշաւիչների մէկին՝ երանելի Օգոստինոսին, վանահայրը երկրի թագաւորութեանը հակադրում է երկնքի թագաւորութիւնը։ Ամեն աշխարհայինը — յանցաւոր, մեղապարտ տարը. ամեն երկնայինը — արդարութեան, մաքրութեան և վեհութեան խորան։ Սևանայ կղզին, որտեղ վանայրը պիտի հիմնէ իր ճգնութեան խորանը, այլ ևս չը պէտք է մուտք ունենայ աշխարհային կեանքի ոչ մի արտայայտութիւն, մարդկային մարմինը պէտք է այստեղ տարկանայ հոգուն, բնազդներն ու զգացմունքները պիտի սեղմուեն, կաշկանդուեն ու մեռնեն։ «Հոս կրքեր չկան,—ասում է վանահայրը,—հոս բնազդներ չկան, հոս սուրբ հոգին է միայն, հոս միտքն է միայն, վեր թռչացող միտքը պէտք ճշմարտութիւնը, դէպի Աստուած»... Նա կառուցանում է իր տաճարը՝ սաւառնելու համար անելևոյթ եթերներում. նա ամրացնում է իր ճգնարանը՝ «ներքնատոյզ խոհականութեան» մէջ ամփոփուելու համար։

Եւ սակայն աշխարհը մուտք է գործում այնտեղ։ Վանականները զբաղուած են անհատական կեանքի անդորրութեամբ, զբաղուած են գործութեան խնդրով, աշխատում են աշխարհի հետ իրենց յարաբերութիւնները պահպանել, տալով աշխարհին իրենց ապրանքները, փոխարէնը հաց ստանալով. այդ մի կողմից. իսկ միւս կողմից արեղան, որ իր անհատական արժանիքներով, երազուն հոգով՝ վանահօր պարծանքն է եղել միայն, այդ արեղան ևս յուսահատուում է վանականի կեանքից ու, հրապուրուած կեանքի թափով, թողնում հեռանում է փափուկ ու տաղտուկ ճգնարանից։ Եւ վանահայրը տեսնում է այդ իրականութեան առջև։ Նման Իբսէնի Բրանդի, նա հասկանում է, որ իր կառուցած տաճարը աշխարհին է նուիրուած եղել. նա ըմբռնում է այժմ, որ այն տաճարը, որով նա երազել է իր վեր խոյացող մտքով հասնել երկնքի գոռոզ բարձրութիւնները, իր կարճատեսութեան արդիւնքն է եղել, որ այդ տաճարը կրկին նուիրուած է եղել «հին» աստուածներին, որ նրան շինողը «ծածուկ, քողարկուած յուզումներն» են եղել, «ներս ապրդած աշխարհի մի կտորն» է եղել։ Եւ ահա վանահայրը վրճռում է քանդել այդ նոր կառուցուած տաճարը, որ իսկապէս իշխանուհու և իր վաղեմի սիրոյ տաճարն է եղել. նա որոշում է քարը քարի վրայ չը թողնել այդ կղզում՝ ոչնչացնելու համար աշխարհից եկած ամեն մի կեանք։ «Պէտք է քանդենք ու շինենք նորը»,—ասում է նա։ Այդ նորը պէտք է լինի մի վերացական տաճար, որի ձևը նոյն իսկ վանահօր համար դեռ ևս պարզ չէ. բայց ինչի՞ վրայ պէտք է հիմնուի

այդ նորը. բանականությունն կանքի և հաստատի վրայ։ Եւ վանահայրը թողնում է տաճարն ու միաբանությունը և գնում իր նոր եկեղեցին կառուցանելու։

Անշուշտ շատ սխալ էր հասկացել վանահայրը բրիստոնէական վարդապետությունն էությունը, ինչպէս նաև բոլոր միստիկները, որովհետև աշխարհային կեանքից խաղաղ հրաժարելու գաղափարը երբէք չէր համապատասխանում այդ վարդապետության հիմնադրի սկզբունքներին. վանահօր կարծիքով իր նոր ճամբան՝ «առաքեալների ճամբան է. այդ ճամբով է անցել ինքը Քրիստոսը»։ Սխալը ակներև է, քանի որ Քրիստոսը «խաչ բարձրացաւ» միմիայն ժողովրդի համար, աշխարհի համար։

Վանահօր պատմական կերպարանքն անտիճանարար նօսրանում է և առանում ժամանակակից բուրժուական ինդիվիդուալիստի իդէալականացրած կերպարանք։ Ինչպէս բուրժուական դասակարգի մայրամուտի մոդեռնիստական պոէզիայի հերոսները, որոնք որպէս մենաւորներ՝ ձգտում են դէպի անորոշ «բարձրութիւններ», արտասանելով անորոշ խօսքեր, այնպէս էլ Շանթի վանահայրը դիմում է դէպի բոհեմական անապատն ու բարձունքները, առանց պարզ ու որոշ նպատակ ունենալու։ Յանձին վանահօր արտայայտել է հեղինակի տարակուսանքի մատնուած քաղքենական մտքի դեգերումները։ Դա ցոյց է տալիս, որ տիրող սոցիալական հակասութիւններից մանր-բուրժուական իդէոլոգիայով տոգորուած հեղինակը ելք չի գտնում։

Շանթի այս դրամատիկ պոէմի միւս առանցքը արեղան է, որի շուրջը պատում է գործողութիւնների որոշ մասը։

Շանթի արեղան միանգամայն ժամանակակից է իր էությամբ։ Պատմական ոչինչ չը կայ նրա մէջ։ Բանաստեղծն օգտուել է պատմական սիւժէտից շատ քիչ չափով և նրա վրայ կառուցել իր ժամանակակից «փիլիսոփայությունը»։

Արեղան տիպական գծերի խտացումն չէ. իրրև սիմվոլիկ պատկերացումն՝ նրա մէջ մարմնացել են բանաստեղծի մտքերն ու տենչերը։ Եթէ Շանթը ուղենար տալ արեղայի մի տիպ, նրա գրուածքը կը դառնար մի դժգոյն ու անարժէք գործ. որովհետև արեղայական կեանքը մի աղքատացած, մնանկացած կեանք է. որովհետև այդ անցած ու հնացած կեանքը գեղարուեստական ճշմարտության համար այլ ևս ոչ գոյներ և ոչ էլ հնչիւններ ունի։ Այդ է պատճառը, որ արեղայի ամբողջ կերպարանքը սիմվոլիկ է. այդ է պատճառը, որ նրա ներքին խռովայոյզ պայքարը նոյնպէս թխպոտ է ու մշուշով պարուրուած։

Ո՞րն է սակայն արեղայի ձգտման նպատակակէտը, ո՞րն է այն «նոր» կեանքն ու «նոր» գոյությունը, որը մեզ աւետելու համար՝ որպէս թէ հանդէս է եկել Շանթի արեղան. որո՞նք են այն «հին» աստուածները, որոնց երկրպագելու է գնում նա։

Արեղայի երազած ու տենչած հին աստուածները, որոնք իրրև «միշտ հին, միշտ նոր ու միշտ յաւիտենական» են, ոչ այլ ինչ են, եթէ ոչ ժամանակակից բուրժուական հասարակական կարգակերպության բոլոր «հրաշալիքները»։

Արեղայի երգերի ու ձգումների մէջ ոչինչ նոր չը կայ, ոչ մի նոր ասուածութիւն չը կայ, ապագայի հետ կապուած ոչ մի իդէալ չը կայ։ Արեղայի երգած «կեանքի մեհեանը»—գա բուրժուական հասարակութեան «որբագան» կարգերն են, որոնք ապրում են իրենց կործանման նախօրեակը։ Նրա երգած «կեանքի մեհեանում» անոգորմ կռիւ, յաղթանակ, անխնայ մենամարտ է քարոզուում, և գրանք կապիտալիստական այն կազմակերպութեան հիմունքներն են, որոնք արդէն ապագայ կեանքի ապմերով օժտուած պրոլետարական գանգուածների գրոհից երերում ու տատանուում են։

Հայ կեանքի արեղան սակայն ուշացել է...

Նրա «մեհեանում» նոր են սկսում քարոզել bellum omnium contra omnes. Բուրժուական դասակարգի վաղեմի երթի տրոփիւնն է լսուում այդտեղ, որտեղ խնայելու մասին խօսք լինել չի կարող, որտեղ թոյլը միշտ յաղթուած է, որովհետև «խնայելը թուլութիւն է, մեղքնալը պարտութիւն»։ «Զարկէք, ով ձեր դէմն է, ով ձեր ճամբան կը գոցէ»,—ասում է արեղայի նոր մեհեանի իշխանը։ Շանթի այդ իշխանն էլ ոչ այլ ոք է, քան եթէ ժամանակակից տիրող դասակարգի տիպիկ ներկայացուցիչը, դէպի որը ձգտում է արեղան։ «Քաջն Վանագնի» ու «փրփրածին Աստղիկան» մէջ արեղան տեսնում է յաղթողի կեանքի ու վայելքի մարմնացումը։ Դեռ գաղափարը կապուում է յաղթանակի հետ, և արեղան այդ կեանքում տեղ ունենալու համար ներքև է գլորում առաջին գատանոցին ու խլում նրանից նրա տուրն ու կոչումը։ Այդպիսով արեղան կեանքի թասից արժանանում է խմել այն ժամանակ, երբ գործադրում է ժամանակակից տիրող դասակարգի bellum omnium contra omnes լոզունգը։ Արեղան հեռու է ապագան գարբնող դասակարգի նոր ասուածութիւնից այնչափ, որչափ երկինքը երկրից. նրա համար օտար է ապագայ հասարակութեան գաղափարը այնպէս, ինչպէս ինդիվիդուալիզմի փիլիսոփայութեան համար՝ գիտական սոցիալիզմը։ Արեղայի երգած «կեանքի մեհեանը» հենց այդ անհասկանութիւնն է, մեր ժամանակակից կեանքի սոցիալական անարգարութիւնը, որտեղ թագաւորում է ուժեղի կամքը, որտեղ անհաւասարութիւնը, շահագործումն ու իշխելասիրական տենչը պաշտամունքի առարկաներ են դարձած։ «Դուրսը աշխարհին մէջ՝ ով ինչ վերցուց, վերցուց»—այս է կեանքի այդ «մեհեանի» փիլիսոփայութեան ընդհանուր սինթէզը։

Եթէ վանահօր մէջ հեղինակը ելք չէր գտնում իր երևակայած քաոսից, ապա արեղան նրան դուրս է բերում և հասցնում ուղիղ բուրժուական հրաշալիքների նաւահանգիստը։ Իր «փիլիսոփայական» ու սիմվոլիկ դրուածքով Շանթը յետ է նայում։ Նրա բոլոր պատկերների, բոլոր սիմվոլների, մտքերի ու ձգտումների ապրիւրը մեշչանական ժառանգարի խորքերից է բղխում։ Այդ տեսակէտից էլ պիտի մտնեալ նրա «Հին աստուածներին», որոնք իրենց էութեամբ խակական հին աստուածներ են։

Սուքիասեան

ՀԻՆ ԱՍՏԻԱԾՆԵՐ

ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ԱՌԱՋԻՆ

Ա. ՏԵՍԱՐԱՆ

Սեւանի գագաթը. ժայռերու մէջ աւերակ մը. իրիկնամուտ

Վանահայրը նստած է քարի մը, ձեռքը ծնօտին ու մտախոհ կը նայի վար։ Դիսափուլ կամարի մը տակէն կամաց դուրս կ'ելնէ Ծերմակաւորը։

Վանահայրը՝ բարձրահասակ, թաւ ու ալեխառն, դլխաբաց։ Ծերմակաւորը նոյնպէս դլխաբաց, երկար սև մազերով, ասորական ձևի հիւսուած սև ու շքեղ մօրուքով։

Վայրկեան մը երկուքն ալ լուռ կը նային իրար։

Ծերմակաւորը—(Հեգնոտ) Կը դիտես. կը դիտես թագաւորութիւնդ։

Վանահայրը—(Ցուժոտ) Ո՞վ ես դուն։

Ծերմակաւորը—Դիտէ, դիտէ։ Տես, այդ երկու-երեք խարխուլ խցիկները, չէ՞ որ դուն ես շիներ. հապա այն մատուռը, որ քու աճապարանքն է կառուցեր. և վերջապէս, նայէ, քու այդ նոր եկեղեցիդ, որուն գմբէթը օր-օրի կը բարձրանայ վեր և որու գլխուն շուտով քու իսկ ձեռքովդ խաչը պիտի տնկես։

Վանահայրը—Այո՛, եթէ Տէրը կամենայ։

Ծերմակաւորը—Նայէ ու հպարտացիր։ Չէ՞ որ այդ բոլորը քու կամքիդ ծնունդն է։

Վանահայրը—Ո՞վ ես դուն։

Ծերմակաւորը—Ա՜յ սեաւոր, ինչու ես ժոպեր դլխուդ այդ սեապդեստ ու սեահոդի մարդիկը, ինչու ես եկեր այս սրբազան հինաւուրց կղզին։

Վանահայրը—Ո՞վ ես դուն։

Ծերմակաւորը—Ելէ՛ր, ելէ՛ր. քշէ նորէն դուրս դէպի կեանքը այդ թշուառ ու մռայլ ամբոխը։ Ելէք դուրս, դուք, որ զգայարանքները չորցընել կ'ուզէք ու կրքերը մարել։ Դուրս այս կղզիէն, դուք, որ թշնամի էք ամեն գեղեցկութեան, ամեն կեանքի ու շարժումի, ամեն ուժի ու ծնունդի։ Դուրս, մի աղաղակէք իմ աստուածներուս այս սուրբ դրախտը։

Վանահայրը—Հոս դրախտ չկայ։ Այս ժայռի կատարին վրայ ես իմ վանքս հիմնեցի. ահա՛ եռքը հոս անապատ պիտի կոչուի։

Ծերմակաւորը—Անապատ... այս ծիծղուն ծովակի ծոցին, այս թարմ արևուն դէմ։ Հեռո՛ւ, կոխած տեղդ հին տաճար է աստուածներու. հեռո՛ւ, հին աստուածներու շեմքէն է, որ կը խօսիմ քեզի։

Վանահայրը—Հին աստուածներու աւերակներէն։

Ծերմակաւորը—Աւերակը այս քարերն են, որ քեզի պէտներն են դարսեր. քանդուեր է անոնց դարսածը։ Բայց ինքը կեանքի մնեռանը խորտակում չունի, ինչպէս և ինքը կեանքը։ Կը թափին քարերը, կը փոխուին անունները, բայց իրենք աստուածները կան ու կը մնան։

Վանահայրը—Հոս մեռան քու աստուածներդ։

Ծերմակաւորը—Հոս ու ամեն տեղ, ուր մարդ իր ոտքը կը դնէ, հոն են անոնք՝ յաւերժ ու անմահ։

Վանահայրը—Հոս մեռան քու աստուածներդ, և անոնց աւերակներուն վրայ ես իմ Աստծուս տաճարը կառուցի։ Նայէ, մուքին մէջէն դեռ կը նշմարուի զմբէթին արդէն կազմուող սրուքիւնը։ Հոն կը թագաւորէ միայն Աստծու շունչը...

Ծերմակաւորը—Հոն կը թագաւորէ տանջանքի գործիքն ու մահը։

Վանահայրը—Տանջանքն է, որ կը բարձրացնէ հոգին, տառապանքն է, որ կը մաքրէ։ Եւ կեանքի ամենէն խոր բանը մահն է։

Ծերմակաւորը—Տառապանքը կեանքի խոցն է, իսկ մահը՝ կեանքի քայքայումը։

Վանահայրը—Քու բերնով կը խօսի մանուկ մարդկութիւնը։

Ծերմակաւորը—Քու բերնով կը խօսի ցաւագար մարդկութիւնը։

Վանահայրը—Հերիք է. ո՞վ ես դուն, որ կը հայհոյես։ Հեռացիր, այս կղզիին վրայ ալ տեղ չկայ քեզի ու քու աստուածներուդ։

Ծերմակաւորը—Այս կղզին ալ նոյն աշխարհն է, ինչպէս ամբողջ աշխարհը։ Երկրպագէ, մոլորուած՝ յաւերժ աստուածներուն։

Վանահայրը—Հեռացիր։

Ծերմակաւորը—Խոստովանէ. մոլորուած, ու երկրպագէ։

Վանահայրը—Հեռացիր։

Ծերմակաւորը—Կու գայ օրը ու կը խօսատովանիս։ (Աներեւոյթ կըլլայ)։

Վանահայրը—(Կը նայի շուրջը, անհանգիստ) Ո՞վ էր։ Զքացա՞։ Տեսի՞լը, կասկա՞ծ... (Յանկարծ վճռական) Ա՜, երբէք։ Աշխարհքը մուք չունի այս կղզին։ Աշխարհքը մուք պիտի չունենա՞ այս կղզին։ Ո՛չ։

Բ. ՏԵՍԱՐԱՆ

Կը մտնեն Անտոն, Մովսէս ու Ծերունի վանականները։

Մովսէս վանական—Է՜, ե՞տքը, ե՞տքը։

Անտոն վանական—Թո՛ղ, թո՛ղ բիչ մը շունչ քաշեմ։ «Ետքը, ետքը», հարցնելը դիւրին է. ետքը սարսափելի էր։ Վա՛յ... կարծես թեւերս ջարդուած ըլլան։ (Կը նստի բարձր քարի մը)։

Ճաշէրդ պատանեաթեան մէջտեղին նոր նկարները կը մտնեան պատմողին, այլ և խուզան քանի մը բանուոր, Ղազար, Դաւիթ, Զաքարիա վանականները ու կաւելնան ունկնդիրներուն։

Մովսէս վանական—Խոսէ, խոսէ։

Ծերունի վանական—Թող, տղա, թող որ ուշքի գա։

Անտոն վանական—(*Պահ մը դէմքը կը ծածկէ ձեռքերովը եւ յանկարծ բանալով*) Կէսէն արդէն անցեր էինք։ Մէյ մը վեր կելնէինք ալիքներուն ծայրը, մէյ մը կ'իջնէինք անդունդը, ամենքն ալ լաստին վրայ փակեր էին իրենց տեղը, սպրդներ ու չորցեր։ Ես ու աբեղան կը քաշէինք թիերը՝ որքան ուժ ունէինք։ Կամաց մը գլուխս դարձուցի, տեսա՝ կը մօտենայինք ափին, բայց ի՞նչ ափ. ալիքները, որ կու գան ու կը զարնեն ժայռերուն, կարծես փրփուրի սար ըլլան դէմդ կեցած։ Ի՞նչ մեղքս պահեմ, սիրտս հալեցաւ, ըսի՝ վերջացաւ։ Բայց յուսահատ ուժ տուի նորէն թիերուս՝ «Եա, Յիսուս, Քրիստոս», ըսի՝ պինդ նստեցէք, չը վախնաք։ Աս ըսելուս մէյ մը ալ տեսնեմ ահագին վիթխարի ալիք մը, կարծես հեռուն ցամաքէն փրթեր կու գար շիտակ մեր վրայ... (*Ոտքի ելնելով*) Ալ մնացածը... ալ ի՞նչպէս ըսեմ. գիտեմ որ լաստը յանկարծ սաստիկ թեքւեցաւ, կախ ինկաւ անդունդի բաց շրթունքին. յանկարծ սուր ճիչ մը ու կարծես բան մը փրթաւ մեր լաստէն ու սահեցաւ այդ փոսը։ «Աղջիկս, աղջիկս...» Բարձրացաւ աղմուկ, իրարանցում. ես դեռ հազիւ էի հասկցեր, որ կողքէս վեր թռաւ աբեղան, արագ նետեց վրայէն կապան, ցատկեց ջուրը։ Լաստը ուժով ճօճւեցաւ, մնացի մէկ թիով, լաւ է՝ ալիքը ինքը կը քշէր, բայց գիտէի նորէն ետ է գալու։ Եւ եթէ դուք ժայռերուն վրայէն թոկը ժամանակին չը հասցնէիք՝ կորած էինք մենք բոլորս ալ. կէս վայրկեան մը և վերջացաւ...

Ծերունի վանական—Աստծու հրաշքը։

Աղամ վանական—Իսկ օրիորդը։

Անտոն վանական—(*Հպարտ*) Մեր աբեղան ազատեց։

Աղամ վանական—Լողալով։

Դաւիթ վանական—Այո. լողալով. հանեց ափը։

Մովսէս վանական—Մի՞թէ աբեղան լող տալ գիտէր։

Դաւիթ վանական—Ո՞ւրտեղէն. ով էր լսեր։

Մովսէս վանական—Ուղղակի հրաշք է։

Ծերունի վանական—Ձեզի կըսեմ՝ Աստծու մատը կա հոստեղ։

Կը մտնեն Աբեղան Սիմոն վանականի ու դպիրի մը ընկերակցութեամբը։ Աբեղան մոայլ է, դէմքը անշարժ, աչքերը միշտ գետին. տեսակ մը անկամ։

Իշխան—(*Քիչ մը դիտելէն ետքը*) Ի՞նչ գեղեցիկ տղա ես դուն և ի՞նչ երիտասարդ։

Վանահայրը—Միաբանութեան մէջ կրասերն է, իշխան։

Իշխան—Է՞, վրադ պիտի չըլլար այդ սև վերարկուն և ես գիտէի իմ ընելիքս։ Ձեզի կու տայի իմ տակիս հեծոյգը, կու տայի քեզի, ա՛յ, իմ սեփական սուրս, որ երեսուն տարի ծառայեր է ինծի հաւա-

տարբեր, և գտնելի քեզի իմ պարտատու, իրրև իմ հարազատ որդիս։ Իմ ան ծծողդ քու այդ ֆիրպարանդրիդ տգեղ պիտի վոյլէր, իսկ ձեռքդ կը տանեմ, շուտով պիտի տարվէր սուրիս։ Ջիս ու սուրս քիչ հերիք չեն քու, գուտայի քեզի և ապչիկս...

Վանահայրը—Իշխան։

Իշխան—... Որուն գնածը այսօր տպատիցիր։ Անիկա տրդէն քանը կըլլար բան տրիմի։ Դուրս աշխարհին մէջ ով ինչ վիրցուց, վիրցուց։

Վանահայրը—Իշխան։

Իշխան Գիտեմ, գիտեմ, այս սուրբ մենաստանին մէջ ալ խոսքերուն տեղը չէ։ Բայց ինչ ընեմ, կուզէի բան մը տամ, կուզէի բան մը ընեմ, կուզէի բանով մը հրախտապէտ ըլլամ այս անձնուէր, այս քաջ կտրիճին։ Ափսոս, ափսոս, այդ սև վերարկուն կը կոչկանդէ իր թևերը։ (Մօտենալով արեղային) Տգնաս, քու իշխանդ քու տունն շատ աղքատ է ու շատ անպէտ՝ քեզի փոխարէն մը ընելու, ինչ որ ըսել կըրնամ հոս ներելի չէ, ինչ որ տալ կրնամ՝ քեզի պէտքը չէ։

Վանահայր—Մեզի պէտք է քու ու գաւակիդ հրկոր արիք։

Իշխան—Աղէկ. ես քեզի պարտական մնացի, տգեղ գգուցում չէ։ ես սովոր չեմ եղեր պարտական մնալու։ Ինչ և է, տուր ձեռքդ. տես իմինս. ասիկա երբէք տկար չէ եղած մեր թշնամիներուն դէմ ու երբէք ալ անարդար գործ չէ տեսած. արժանի է որ սեղմես այդ քու ձեռքովդ, որ այսօր ազատեց ապչիկս ալիքներէն։ (Փինդ կը սեղմէ արեղային ձեռքը)։ Մտնենք, վանահայր, տաճարին ներսը։

Իշխանը, Վանահայրը, հետևորդները և վանականներէն շատերը կը մտնեն եկեղեցի։

Սիմոն վանական—(Կամաց մը բռնելով Արեղայի թևէն) Երթանք, մենք ալ երթանք ու քիչ մը հանգստացիր։ Դեռ ուժգոյն ես բոլորովին և կըզգամ մարմինդ, որ դեռ կը դողայ։

Կէս մը գրկած կը տանի դուրս։

Ղազար վանական—(Մօտենալով Ադամ վանականին, խորհրդաւոր կերպով) Հիմա ճրքան ժամանակ պէտք է սպասիարէ արեղան, որ տաճարին մուտքը նորէն բացուի իրեն համար։

Ադամ վանական—Սպասիարէ. ինչու համար։

Ղազար վանական—Չէ՞ որ ձեռք է տուեր կնկան։

Ադամ վանական—Բայց... բայց այս տեսակ դէպք...

Ղազար վանական—Ատիկա միենոյնն է, մեղքը մեղք է միշտ։ (Աւելի խորհրդաւոր) Ես տեսայ, երբ իրարու փաթթուած դուրս եկան ալիքներուն մէջէն։ Իշխանի մարգիկը գրեթէ բռնի խլեցին ապչիկը անոր թևերուն մէջէն։

Ադամ վանական—(Զայրոյթով) Անմիտ բաներ կը խօսիս։

Դ. ՏԵՍԱՐԻԱՆ

Արեղայի խուցը. գիշեր

Աբեղան նստած է մահճակալին ծայրը, ձեռքերը կրծքին ծալած եւ աչքերը շիշա յառած գետին. Անոր քովը փայտէ ցած աթոռակի մը վրայ նստած է Կոյր վանականը. շէտակ. անշարժ, երկու ձեռքը գաւազանին ու գլուխը բարձր պահած.

Կոյր վանական—Ո՞ւր են մտքերդ, աբեղա։

Աբեղան (Կը ցնցուի ու կը բարձրացնէ գլուխը)։

Կոյրը—Նորէն, նորէն...

Աբեղան—Այո, այո, մեղք է, գիտեմ, մեծ մեղք։ Ո՛չ, ալ չեմ մտածելու, ալ պէտք չէ մտածեմ. երբէք, երբէք. պէտք է ջնջեմ գլխէս այսօրը, բոլորը, բոլորը. ծովը, հովը, լաստ, ալիք... ա՜խ, այդ ալիքները... (Ցանկարծ վեր կը թռչի թատիով) Բայց ի՞նչ հրաշալի բան է եղեր կռիւը անոնց հետ, երբ անոնք իրենց լոյծ կուրծքը դէմ կուտան քեզի, երբ իրենց փրփուրը կը զարնեն երեսիդ ու աչքերուդ, որ կուրցնեն քեզի. մէկը կը ցատկէ ուսիդ, միւսը կը գալարի լանջիդ. մէկը կը հրէ, միւսը կը քաշէ, կը ճնշէ. ու բոլորը, բոլորը ընկճել կուզեն քեզի. իսկ դուն միշտ երեսին, անոնց ելևէջքին հետ կը տարուբերիս՝ բաղկիդ զարկերուն տակ անոնց բոլոր ճիգերը յաղթահարելով. ա՜, այդ կռիւը...

Կոյրը—Կռիւը կեանքի համար է, աբեղա, հոս անապատ է։

Աբեղան—(Կոտրուած) Այո, անապատ։ Մեղայ քեզ. Աստուած իմ, մեղայ։

Կոյրը—Զգո՛ւշ։ Լաւ հակէ ինքզինքդ, աբեղա, ադօթէ։

Աբեղան—(Աջին առջեւ ծունր իջնելով) Ես կորսուած մեղաւոր մըն եմ, փրկէ ինծի, Տէր. ես ինկած յանցաւոր մըն եմ, օգնէ ինծի, Տէր. մեղքի մէջ խեղդուող մըն եմ, բռնէ ձեռքէս, Տէր։ Տես, մեղքի ծովուն մէջ... մեղքի ծովուն մէջ... ծովուն... ծովուն... (Երկու ձեռքով դէմքը բռնած կ'ելնէ ոտքի)։

Կոյրը—Ըսէ, ըսէ։

Աբեղան—(Ցանկարծ դէմքը կը բանայ ու շեշտ կը նայի անոր արծանի նման անշարժ դէմքին)։

Կոյրը—Ըսէ, ըսէ։

Աբեղան—Ըսեմ... ի՞նչը։

Կոյրը—Ա՜ն, ինչ որ հոս խորքը, խորքը։

Աբեղան—Խո՞ր քը, խո՞ր քը...

Կոյրը—Ըսէ, ըսէ։

Աբեղան—Ո՞վ կրնայ տեսնել այդքան խորքերը, ո՞վ կրնայ ըսել այդքան խորքերը։

Կոյրը—Իսկ ես կը տեսնեմ, ես կըսեմ։

Աբեղան—Դո՞ւն. կո՞յր։ (Զրգիծանքով) Հապա ըսէ նայիմ, ինչ որ կը տեսնես։

Կոյրը—(Հատիկ-հատիկ) Լաստին վրայ, երբ ձեռքիդ թին ջուրը կը պատռէր, ո՞վ էր հոգիիդ մէջ։

Աքեղան—(Վախցած) Լռէ։

Կոյրը—Որովհետև համար այնպէս կը թփրտար պիրտ, չրթունքիդ ինչ բան էր փսփսած, երբ շուրջդ ամենքը նստած կը կուլնէին, երբ դէմդ փոքրիկն էր, որ կը ժատանար։

Աքեղան—(Սարսափահար)—Երանէ՛ի բաց ըսէիր ոչինչ, որ չտեսնէիր, չտեսնէիր...

Կոյրը—Երբ բոլոր հայհոյքները հրիքնոր էին վերցուցած, երբ ամենքը կը սպասէին վերին օգնութեան, ուր էին սեղմած քու ոչինչդ։ Ով էր ան, որուն առջևը հոգիդ ծունր էր իջած։

Աքեղան—Լռէ, լռէ. դուն իրաւունք չունիս ամեն բան տեսնելու. կարելի չէ ամեն բան տեսնել։

Կոյրը—(Անողոք) Ըսէ, ինչ էր ուզածդ, ինչ կը փրնտռէիր։

Աքեղան—(Աղերսով) Չգիտեմ, ոչինչ չգիտեմ. հնարիր է։

Կոյրը—Իսկ ծովուն մէջ, երբ ան ոձի մը պէս վրդիդ փաթթուած, մարմինը մարմնիդ, շունչը շունչիդ, երբ դուն ամեն ինչ մոռցած ոչինչները կը պատռէիր, ըսէ, նորէն չգիտես, թէ ինչ կուզէիր։

Աքեղան—(Երազկոտ) Ո՛չ, կը յիշեմ։ Կը յիշեմ, ամբողջ հոգիս կը ցանկայի՝ որ ալ վերջ չունենար այդ կոիւը, ոչ վերջ չունենար այդ թաց ճամբան, ալ վերջ չունենար այդ վազքիկները։

Կոյրը—Ամբարիշտ։

Աքեղան—(Ծորտակուած) Բայց ունեցաւ իր վերջը։

Կոյրը—Ու հասար ափը։ Եւ երբ ասին քու ընդդէմ թնդրնդ ու դուն ուժասպառ ինկար աւազին, արդէն դիակ մը էիր անկենդան։

Աքեղան—Ճշմարիտ է. ինծի այդպէս գգացի։

Կոյրը—Դիակ մը ես դուն և հիմա։ Մարմին մը, ուրիշ ոչինչ է Աստծու շունչը։

Աքեղան—Ա՜խ, Աստուած իմ, կորուսի հոգիս։

Կոյրը—(Ոտքի ելնելով) Ինկիր գետին ու կոծէ. քուրձ հոգիր ու ապաշխարէ. իսկ ամենէն առաջ գնա իսկոյն վանահօր մօտ ու խոստովանէ։

Աքեղան—Խոստովանի՞մ, վանահօրը, ինչ, ինչու։ Ա՜խ, ամեն, ամեն բան, բայց այդ մէկը երբէք։ Երբէք։ Եւ դուն ալ, հայրուս, չըլլա թէ...

Կոյրը—Ես կոյր եմ, խուլ ու համր. բայց գնա ինքդ վանահօր մօտ ու ինքնակամ խոստովանէ։

Աքեղան—(Կտրուկ) Վանահօրը երբէք։

Կոյրը—Կը վախնա։

Աքեղան—Ո՛չ։ Բայց... բայց...

Կոյրը—Ինձրկէ. դուն կուզէիր պահես թաքուն սրտիդ մէկ հեռաւոր խորշին մէջ քու այդ փոքրիկ նոր սրբութիւնդ, պահես ու երկրպագես ծածուկ։

Աքեղան—Գթա՜, գթա՜ ինծի, անողոք։

Կոյրը—Իսկ դուն քեզի կը գթա՞ս, կոտորիչ։ Ցիշէ պատուիրանը. «Մի եղիցին քեզ այլ աստուածք, բաց յինէն»։

Աքեղան—(Կակազելով) Մի եղիցին... մի եղիցին...

Կոյրը—(Շեշտելով) «Մի՛ արասցես քեզ կուռս ըստ ամենայն նմանութեան որ ինչ յերկինս ի վերս է և որ ինչ յերկրի ի խոնարհ և որ ինչ ի ջուրս ի ներքոյ երկրի...

Աբեղան—(Դողդոջ) Եւ որ ինչ ի ջուրս ի ներքոյ երկրի։

Կոյրը—(Կամաց-կամաց երթալով դէպի դուռը) «Զի ես եմ տէր Աստուած քո, Աստուած նախանձոտ, որ հատուցանեմ զմեղս յերիս և ի չորիս...» (Դուրս)։

Աբեղան—(Կ'երթայ ծունկի կու գայ խաչելութեան առջեւը բազկատարած ու շերմեռանդ) «Կեցո՛ զիս, Աստուած, զի հասին ջուրք յանձն իմ, ընկղայ ես ի խորս անդնդոց, ուր ոչ գոյ ինձ հանգիստ։ Եկի ես ի խորս, ի խորս... ծովու... և շրջանք... ընկղմեցին... զիս...» (Քիչ-քիչ կը թուլնայ, կը նստի ծունկերուն եւ գլուխը կը կախէ կրծքին)։

Աչքն ու սեղանը կամաց կ'ըսկսի մշուշապատիլ, ամեն ինչ կը խառնուի իրարու, և այդ մշուշի ֆոնին վրա հետզհետէ կը պարզուի աղջկան կերպարանքը։ Ամբողջապէս սպիտակ հագած, հագուստը պարզ, նուրբ ու ձիգ, կարծես ջրէն հանած. մազերը արձակ, խոնաւ ու վրան մէկ-երկու թել ծովու խոտ։

Աբեղան թեթև մը գլուխը կը բարձրացնէ, յանկարծ կը տեսնէ ու սարսափահար կը ցատկէ տաքի։

Աբեղան—(Ետ-ետ երթալով) Դուն... դուն...

Աղջիկը—Այո. ես. մի՞թէ չէիր սպասեր։

Աբեղան—Աստուած իմ։

Աղջիկը—Մինակ ես։

Աբեղան—Ես... ես մինակ եմ միշտ։

Աղջիկը—Ա՜յ. եկայ քեզի ընկեր. և եկայ այսպէս կէս-գիշերին, որ մինակ ըլլանք ես ու դուն։ Դուն, իմ քաջս, իմ արեւս, իմ լուսորդս...

Աբեղան—Հերիք է։

Աղջիկը—Ինչո՞ւ։ Զէ՞ որ ես քեզմով է, որ հիմա կապրիմ, չէ՞ որ դուն նորէն կեանքս տուիր ինծի. և ինչ քաղցր է այդ կեանքը, որ դուն տուիր ինծի։ Այս քանի՞, քանի՞ տարի ապրեր եմ ես, ամբողջ տասնըեօթը տարի, և ես չգիտէի, ընաւ չգիտէի, որ չէի ապրեր։ Մի՞տքդ է ցերեկը, հոն, ալիքներուն մէջ. նայէ՛, մազերս խոնաւ են դեռ, բռնէ՛, բռնէ՛, շօշափէ՛։

Աբեղան—(Ետ-ետ կ'երթայ յափշտակուած՝ աղջկան նայելով)։

Աղջիկը—Բայց գիտե՞ս դուն ինչ ուժեղ թեւեր ունիս և ինչպէ՞ս ճկուն. իսկ ես դեռ այնպէս յուզուած եմ, դեռ այնպէս յոգնած (կուզէ նստի Աբեղայի անկողնին)։

Աբեղան—(Արգիլել ուզելով) Օրիորդ։

Աղջիկը—(Կը նստի անկողնին ծայրը)։ Ես օրիորդ եմ ծառաներուս համար, ես օրիորդ եմ մեր հպատակներուն համար. իմ տէրս ինծի այլ կերպ պիտի կանչէ։

Աբեղան—Սեղա։

Աղջիկը—Վա՜յ, գիտես անունս։

Աբեղան—Հայրդ քեզի այդպէս կանչեց։

Աղջիկը—Այո՛, Սեղա է անունս։ Իսկ ինչ է քու անունդ։

Աբեղան—Ինձի արեղա կը՞ կանչեն։

Աղջիկը—Իսկ առաջ, առաջ, երբ դուն աշխարհն էիր դեռ ու աշխարհինը։

Աբեղան—Իմ աշխարհքս վանքն է եղեր միշտ, քանի խելքս կը հասնի։

Աղջիկը—Ախկա՛։ Ա՜, ինչ սառն է հոս, ինչպէ՞ս կը մրսիմ։

Աբեղան—Կը մրսի՞ս։

Աղջիկը—Բան մը տուր վրաս, որ հոգիս տաքնայ։

Աբեղան—Ես ոչինչ չունիմ։

Աղջիկը—(Առանց գլուխը դարձնելու, ետեւը պատէն կախուած վերարկուն մատնանիշ ընելով) Ա՜յ։

Աբեղան—Վերարկո՞ւս։

Աղջիկը—Ինչպէ՞ս կը մրսիմ։

Աբեղան—Վերարկո՞ւս։

Աղջիկը—Կը վարանի՞ս։ Բայց չվարանեցար կեանքդ ինձի տալու, չվարանեցար, երբ ետեւէս կատղած ալիքներուն մէջը նետեցիր բեզի։

Աբեղան—Ո՛չ, չվարանեցայ։ Ան ուրիշ էր։

Աղջիկը—Այո՛, ան ուրիշ էր։ Հոն կոիւ էր ու փոթորիկ, իսկ հոս լուռ է ու խաղաղ, ինչպէս գերեզման։ Ա՜, ինչ սառն է հոս, ինչպէս կը մրսիմ։ (Կ՚ելնէ ոտքի)։

Աբեղան—(Կը վազէ դէպի վերարկուն, ձեռքը կ՚երկարէ ու նորէն վարանած կանգ կառնէ)։

Աղջիկը—(Խնդրանքով) Բե՛ր, բե՛ր...

Աբեղան յանկարծ կը խլէ վերարկուն ու կը գառնայ դէպի աղջիկը, որ արդէն անհանգիստ է եղած։ Աբեղան կը ճնայ քարացած, վերարկուն բռնած ձեռքը առաջ պարզած։

Դուրսէն կը լսի ժամկոչին ձայնը, որ մելամաղձուտ ու միալար երգով մը ժամ կը կանչէ։ Ձայնը հեռագնեակ կը մտնայ։ Աբեղայի ձեռքէն կ՚իյնայ վերարկուն։

Աբեղան—(Շրթունքներուն մէջէն) Յիսուս... (Կուզէ նորէն շոքի խաչին դէմը, ու խելառի պէս ետ կը ցատկէ)։ Ո՛չ, ո՛չ։ Եթէ յանկարծ նորէն երևնայ... (Դէմքը կը շրջէ անկողնին կողմը) Ա՜խ, Աստուած երես դարձուց ինծմէ։ (Հեծկլտանքով կ՚իյնա մահճակալին ոտքը ու դէմքը կը թաղէ անկողնին մէջ)։

Դուրսէն կը լսի միւս ժամկոչին երգը, որ հեռագնեակ հեռու ու հեռու, կը թուլնայ, կը նուազի ու կը հալի։

ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ԵՐԿՐՈՐԴ

Գ. ՏԵՍԱՐԱՆ

Իշխանուհին—Այո՛, կեանքիս ամենաքաղցր վայրկեանները. չեմ քաշուիր կրկնելու, ինչ որ ճշմարիտն է. չեմ ուզեր քաշուիլ։ Ինչո՞ւ աչքդ կը ձգես գետին. ո՛չ, պէտք չէ որ գետին ձգես։ Ես ամբողջ կեանքս

շիտակ եմ նայեր ամենուն երեսին և կ'ուզեմ որ ամենքն ալ, որոնց համար սրտիս խորքը յարգանք ունիմ, շիտակ նայեն իմ երեսս։

Վանահայրը—Չեմ հասկնար ինչ կը խօսի Իշխանուհին։ Ես պատճառ չունիմ ոչ-մէկուն առջևը աչքերս գետին ձգելու։

Իշխանուհին—Բայց ճշմարտութիւնն ան է, որ ես ու դուն կը վախնանք իրարու աչքի մէջ խոր ու շիտակ նայելու։

Վանահայրը—Իշխանուհի։

Իշխանուհին—Թող, թող, մինչև հիմա։ Ալ լեցուեր է բաժակը։ Ինծի համար սաստիկ ծանր է ատիկա ու վիրաւորիչ։ Ինչու, ինչ յանցանք ենք գործեր։

Վանահայրը—(Ոտքի ելնելով) Իշխանուհին թող ինծի ներէ, պէտք է մեկնիմ։

Իշխանուհին—Ո՛չ, ոչ, հայր սուրբ, մի փախչիր։ Եւ ինչ օգուտ փախուստը. դուն քու հոգիէդ չես կրնար փախչիր։ Նստէ, նստէ, պէտք է որ խօսիմ։ Ամբողջ տարի մըն է, որ ես հոս եմ, ամբողջ տարի մըն է շրթունքիս է այդ հարցը և որ շարունակ վախցեր եմ տալու. իսկ այդ վախը խոր կը վիրաւորէ իմ արժանապատուութիւնս. կարծես երկու մեղաւոր ըլլանք դէմ-դէմի կեցած, որոնք ստիպուած են ամօթով իրենց հոգին ծածկելու։

Վանահայրը—Ես չեմ հասկնար, ինչ ըսել կուզէ Իշխանուհին։

Իշխանուհին—Չես հասկնար...

Վանահայրը—Ըսածներէդ չհասկցա ես ոչինչ։

Իշխանուհին—Ոչինչ, Յովհաննէս։

Վանահայրը—(Այլայլած նման կը ցնցի) Իշխանուհի... (Ու ծանր կելնէ ոտքի)։

Իշխանուհին—(Նոյնպէս ոտքի ելնելով) Մի՞թէ դէ արքունի ամարանոցը, մեր փոքրիկ աւազանի եզերքին, վերջալոյսի այն իրիկունը ասկէ ուղիղ քսանհինգ տարի առաջ։

Վանահայրը—Եւ այդ քսանհինգ տարիներուն ետեւէն դեռ կը յիշէ Իշխանուհին այն քանի մը հատարակ խօսքերը, որ փոխանակեր ենք հոն իրարու հետ։

Իշխանուհին—Յիշեր եմ ես միշտ։

Վանահայրը—Երախտապարտ եմ, Իշխանուհի։ Մեծ պատիւ մը, որ ես բնաւ չեմ յանդգնած երևակայելու։ (Քիչ մը լուռ. վերջը հետզհետէ զլուխը բարձրացնելով) Միայն... միայն այն Յովհաննէսը, որուն անունը այդքան զարմանալի կերպով դեռ չէ մոռցեր Իշխանուհին, այն Յովհաննէսը, ան մեռած է վաղուց։ Իսկ հիմա հոս կեցած է վանական մը, գրեթէ ծերունի մը, հեռու արքունիքէն ու ամենքէն, որ եկեր է քեզի հետ կառուցող շէնքի ծախքերուն մասին խօսելու։

Իշխանուհին—Յովհաննէսը մեռեր է քեզի համար, չգիտեմ, բայց ոչ ինծի։ Ան միշտ կենդանի է եղեր հոգիիս մէջ և կենդանի ալ կը մնայ։ Անոր պատկերն է, վանահայր, միակ պայծառ կէտը իմ ամբողջ կեանքիս մէջ։

Վանահայրը—Բայց ան բաղը կին մըն է, որ ամուսին է ունեցեր։

Ոշխանուհին—(Մեռած մը ընդհատելով) Եւ խիստ ապրեցուցուր ամուսին մը, որ ես միշտ յարգեր եմ խորապէս եւ խորապէս ալ տանջուեր, որ յարգանքէ տարբեր բան մը ունոր տուչս ունկընդրել եմ ինձ։

Վանահայրը—Բայց տո բոլոր կին մըն է, որ զուարճներ է ունենար։

Ոշխանուհին (*Ոգիան*) Ես կատարեր եմ իմ պարտքս։ Ես շատ ծանր է ինձեր արտիս, որ պարտաւորութիւնէս ուրիշ ոչինչ չեմ կրցեր տալ զաւակներուս։ Ունեցեր եմ ամեն ինչ և ամեն ունեցածս տուեր եմ իմ հարազատներուս. բայց բոլոր ունեցածս ոչ-մէկուն չեմ տուեր և ոչ-մէկէն ալ չեմ ստացեր։

Վանահայրը—(Կեցած է լուռ եւ ունկընդիր կիտուած)։

Ոշխանուհին—Լսէ. պէտք է ըսեմ բոլորը, որ մեր մէջէն վիճաբանս այս անախորժ լարումը մի անգամ ընդ միշտ նայէ. ես պատրաստ կինիկ մըն եմ, և դուն ինքդ ըսիր քիչ մը առաջ, որ ժերուեր ես ապրիլ-վախնալու ոչինչ չունինք, քաշելու ալ ոչինչ չունինք, քանի որ մաքուր է մեր խիղճը։ Այս քողարկումը, գգացումներու այս խնդրութիւնը վայել չէ մեր դէմքին, ոչ քու և ոչ ալ իմ։ Լսէ, ինչ որ շրջուեցար երբէք չէ արտասաներ և ինչ որ սակայն լեցուցեր է իմ ամբողջ էութիւնս։ Իմ կեանքիս գորշ երկնքին դուն ես եղեր ինձի համար չոյսի աստղը, ապրելու իմաստը, առանց այդ լոյսին, առանց այդ վիճիքարութեան, ես չգիտեմ, ինչու էի ապրելու։

Վանահայրը—(Հոգոյվը ճակատը սեղմած) Հերիք է, հերիք է...

Ոշխանուհին—Քու պատկերդ է եղեր իմ դէմս մենութիւնս փոյրկեանններուն։ Ինքս ալ ոչէկ մը չգիտեմ՝ այն ջերմ ապօիքները, որ արտէս դուրս են յորդեր, աւելի խաչելին նկարին ներ ուղղած եղեր, թէ քու պատկերիդ։ Իրաւ է, ես պաշտեր եմ քու պատկերդ իմ Աստուծոյս հետ միասին։

Վանահայրը—Եւ չես վախցեր Աստուծմէ։

Ոշխանուհին—Աստուած։ (Բարձրացնելով սեղանէն սանտրոնը) Աստուած սէր է, վարդապետ։

Վանահայրը—(Մտածկոտ զուխը շարժելով) Այդպէս... (Յանկարծ) Իսկ հիմա։

Ոշխանուհին—Հիմա։ Հիմա ալ, տես, այս լուսամուտը, որ քու կողիդ կը նայի ու քու լուսամուտիդ, այն քու փոքրիկ լուսամուտիդ, որ մինչև կէս գիշեր անմար է ճրագը։ Դուն երեւի կը կարդաս ու կաղօթես. ես ալ հոսկէ կաշխատիմ քու մարիդդ կարդամ ու քու ապօիքներդ։ Միթէ այս բոլորը հոգիդ չէր գիտեր։

Վանահայրը—(Կտրուկ) Ոչ, բնաւ։

Ոշխանուհին—Իրաւ։ Միթէ քու հոգիդ նոյնպէս լիքը չէ եղեր ինձմով, ինչպէս որ իմինս քեզմով։

Վանահայրը—(Լուռ է)։

Ոշխանուհին—Պատասխան տուր, ուրախ չէիր, միթէ հոգիդ ուրախ չէր, երբ հոս այս մենութեան մէջ դէմ-դէմի նստած՝ կը խօսէինք ժամերով ու կը ծրագրէինք։ Պատասխան տուր։

Վանահայրը—(Անհանգիստ) Չգիտեմ. ես ոչինչ չգիտեմ։

Իշխանուհին—Չգիտե՞ս։ Ես գիտեմ. և միշտ ալ վստահ գիտցեր եմ, որ կ՚ապրիմ միշտ քու հոգիիդ մէջ, թէև տարիներու այս երկար շարքին մէջ հազիւ ութը-տասը անգամ պատահած ըլլանք իրարու՝ մինչև հոս գալս. և շատ աւելի նւազ մէկ-երկու խօսք փոխանակած ըլլանք իրարու, միշտ տափակ, միշտ անգոյն ու միշտ կողմնակի բառեր։ Ըսէ. ճիշտ չէ՞ ինչ որ կ՚ըսեմ։

Վանահայրը—Թող, իշխանուհի. հին, անցած-գացած օրեր, ինչ իմաստ քրքրելը։

Իշխանուհին—Հայր-սուրբ, եղիր շիտակ ու պատասխան տուր։ Այսօր պէտք է մաքրուին հին հաշիւները։

Վանահայրը—Ի՞նչ կուզես, կլին, ինչ կուզես դուն ինծմէ։ Ամբողջ կեանքիս կէսը տառապանք ուիր ինծի, տառապանք ու դառնութիւն, ջարդեցիր կեանքս, խորտակեցիր երիտասարդութիւնս, հիմա ալ մոխիրը քրքրել կ՚ուզես։

Իշխանուհին—Իմ խե՜ղճ Յովհաննէս...

Վանահայրը—Արդէն կեանքը տառապանքէ գոտ ուրիշ ինչ է ուեր ինծի... և քեզմէ առաջ և քեզմէ հաքը։

Իշխանուհին—Ա՜խ, ես զգացեր էի...

Վանահայրը—Վերջ տանք։ Ի՞նչ միտք այդ հին ու մարած յիշողութիւնները խառնելը։

Իշխանուհին—Մարա՞ծ...

Վանահայրը—Այո՛. այդ բոլոր անողոք յուշերն ալ միւս բոլոր աշխարհային ցաւերուս հետ մէկտեղ սրտէս դուրս քամեցի այն օրը, երբ վրաս առի այս վերարկուն։

Իշխանուհին—Սրտէդ դուրս քամեցի՞ր...

Վանահայրը—Այո՛, երբ մարեցան բոլոր աշխարհիկ կայծերը։

Իշխանուհին—Ո՛չ, չմարեցան այդ կայծերը։

Վանահայրը—Իշխանուհի։

Իշխանուհին—Ո՛չ. կ՚ըսեմ քեզի. չմարեցան այդ կայծերը։ Աշխատեցար որ մարես, աշխատեցար, որ խաբես քեզի, օրօր ըսիր հոգիիդ ու համոզեցիր քեզի, թէ մարեր ես, բայց չմարեցիր. չէիր կրնար։

Վանահայրը—(Խիստ) Իշխանուհի։

Իշխանուհին—(Ցաւծ ձայնով) եթէ մարեցիր, հապա ի՞նչ է այս եկեղեցին, հապա ի՞նչ է այս մեր եկեղեցին։

Վանահայրը—(Սարսափած ետ քաշելով) Լռէ, լռէ, իշխանուհի։

Իշխանուհին—Ճշմարտութիւնը, վարդապետ։ Մենք այդ եկեղեցին չենք շինած քու բարձրեալ Աստծուդ համար, ինչպէս որ միշտ կրկներ ես. մի՛ խաբեր քեզի. այդ եկեղեցին շիներ ենք մենք մեզի համար, մեր սիրու Աստծուն համար։

Վանահայրը—(Խորտակուած) Մարիա՜մ...

Իշխանուհին—Այո՛, այդ քու եկեղեցին նւիրուած է ոչ թէ Մարիամ Աստուածածնին, ան նւիրուած է քու Մարիամ իշխանուհիիդ։ Ըսէ, ճիշտ չէ՞։

Վանահայրը—(կեցած է լուռ ու զլխահակ)։

Իշխանուհին—Ըսէ, ճիշտ չէ՞։

Վանահայրը—(Լուռ է ու գլխահակ)։

Անկիւնը յանկարծ կ'երևնա ծերմակաւորը։

Ծերմակաւորը—Ըսէ, ճիշտ չէ՞։

Վանահայրը—(կը ցընցուի, կուղղուի, ու հայեացքը ծերմակաւորին յառած կը քարանայ)։

Իշխանուհին—Ի՞նչ եղաւ քեզի։

Ծերմակաւորը—Ըսէ, որո՞ւն է նուիրուած այն եկեղեցին, այն քու նոր շինած եկեղեցին։

Վանահայրը—(Լուռ է)։

Ծերմակաւորը—Ըսէ,- պէտք է որ ըսես, պէտք է խոստովանիս։

Վանահայրը—(խորտակուած) Այո՛։ ճիշտ է։ Այդ... այդ եկեղեցին նուիրուած է... հին աստուածներուն։

Ծերմակաւորը—Ի՛մ աստուածներուս։

Վանահայրը—Քո՛ւ աստուածներուդ։

Ծերմակաւորը—(Կ'աներևոյթանայ)։

Վանահայրը—Ճիշտ է։ Ես ողորմելի ու մեծամիտ մարդ մըն եմ. գոցեր եմ աչքերս ու կը կարծեմ թէ կը թռչիմ, պարզեր եմ թևերս գոռոզ վեր և կարծեր եմ՝ թէ հասա երկնքին։

Իշխանուհին—Մի՛ խօսիր այդպէս։ Մեր սրտերուն այդ կապը, մեր այդ ամրողջ սէրը եղեր է սուրը, ջերմ ու ազնիւ, ինչպէս ջերմեռանդ աղօթքի մը մրմունջը, ինչպէս ընտիր կրնարուկին բոյրը, որ դէպի երկինք կը մխայ։

Վանահայրը—(Աչքերը միշտ յառած դէպի ծերմակաւորին երևցած կողմը) Ո՛չ, ո՛չ։ Ճշմարիտ է այս բոլորը, բայց դեռ մի՛ յաղթանակեր. կանուխ է դեռ. դեռ կը տեսնենք... (Ու արագ դո՛ւրս, առանց Իշխանուհիին կողմը նայելու)։

Իշխանուհին—(Շատ ու վախով) Յովհաննէս, Յովհաննէս, հայրսո՛ւրբ... (Թուլցած կ'իյնայ իր աթոռին)։

ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ԵՐՐՈՐԴ

Բ. ՏԵՍՈՒՄՈՒՆ

Մեհեանի մը գաւիթը

Վառ է միայն երկու ջահ բագնին երկու կողմէն, խորբը. այնպէս որ անագին բարձր շէնքը գողգոջուն կէս մութի մը մէջ է։

Սեղա—(Ձախ կողմի առջեւի սիւներուն ետեւէն ետ-ետ ներս կը մտնէ, միշտ նոյն հաւգուստով, թեքուած քիչ մը դէպի առաջ ու երկու ձեռքովը սրտանց կանչելով) Եկո՛ւր, եկո՛ւր,..

Աբեղան—(Ծրեւնալով) Սեղա՛, Սեղա՛...

Սեղա, եկուր:

Աբեղան—Տուր ինձի իմ հանգիստս, տուր ինձի իմ աղօթքներս. տուր իմ վստահութիւնս ըրածիս, կեանքիս, ուժիս: Ամէն, ամէն ինչ կը փլի շուրջս:

Սեղա—(Միշտ ետ-ետ ղէպի աջ երթալով) Եկուր, եկուր:

Աբեղան—Ալ չկայ ինձի հանգիստ ոչ խուցիս մենութեան մէջ, ոչ դուրսը, ոչ ալ եկեղեցիին կամարներուն տակը: Սաղմոսներուն մէջէն քու ձայնդ կը լսեմ, մութ կամարներուն տակէն քու աչքերդ ինձի կը ժպտին, խունկի հոտին մէջէն քու թաց մազերուդ բոյրը կ՚ըզգամ... Ինչու, ինչու կը տանջես ինձի:

Սեղա—Եկուր, եկուր:

Աբեղան—Ե՛տ տուր ինձի իմ հպարտութիւնս, իմ մեծամիտ խորհրդածութիւններս. Ետ տուր ինձի իմ հաւատքս, իմ Աստուածս. տուր, Ետ տուր ինձի իմ Աստուածս...

Սեղա—Եկուր, եկուր...: (Ու կը քաշուի, կ՚աներեւոյթանա աջ կողմի սիւներուն ետին):

Աբեղան—Գնաց նորէն: Նորէն մինակ... (Շէնքի մէջտեղն է. կը կենայ, գլուխը կը բարձրացնէ, կը նայի շորս դին ու զարմանքով) Ա՜ռ ուր եմ ես: Ա՜ռ ուր բերաւ ինձի:

Ձախ կողմի խորքի սիւներուն մէջէն ներս կը մտնեն Իշխանը իր զէնքնկիրներուն հետ՝ երեսուն հոգիի չափ. այդչափ մըն ալ մեհենական աղջիկներ. այլ և խումբ մը զինակիր պատանիներ՝ ջահեր բռնած: Շէնքը կը ողողուի լոյսով: Այրերը սաղաւարտ ունին, վահան, մէջքերնուն սուր: Պանայք հագած են թեթև ու սպիտակ. մազերնուն մէջ կարմիր զարդ խրած ունին սատղ մը:

Ամենէն առաջ ներս կը մտնեն քանի մը ջահակիր ու խումբ մը աղջիկներ ուրախ ու ոգեւորուած: Ետքը Իշխանը՝ շրջապատուած իր մեծերէն: Անոնց ետեւէն ալ զինուորականներն ու աղջիկները խառն. ուրախութեան բացականչութիւններով. ջահակիրներ քովերէն ու ետեւէն:

Աղջիկներու առաջին խումբը—(Սիւներէն ներս ոտք դնելնուն պէս) Կեցցէ՛ն յաղթողները... Կեցցէ՛ն քաջերը...

Բոլոր կանայք—Կեցցէ՛ն, կեցցէ՛ն յաղթողները:

Իշխանն ու իր զէնքնկիրները կը հանեն սաղաւարտները ու վահանները, կուտան զինակիրներուն, որոնք կ՚առնեն ու սիւներուն մէջէն կը տանին դուրս: Աղջիկներուն մէկ մասը կը վազէ ձախ ոլորներէն դուրս, կը բերեն ծաղիկներ, առատ շաղ կուտան քարէ սեղանին, կը բերեն սեղանի բաղմաճիւղ աշտանակներ և գինիով լեցուն արծաթէ աւազաններ. կը բերեն ոսկի ու արծաթ թասեր, բաժակներ և եղջիւրէ գալարուն բմպանակներ:

Այդ պատրաստութեան միջոցին է, որ կը խօսի.

Երիտասարդ զօրական մը—(Առաջ գալով) Բայց կռիւ էր, տա՛ք կռիւ:

Հասակաւոր մը—Թող անպակաս ըլլա կեանքէն սուրը կռիւը:

Երիտասարդը—Սարսափելի ջարդ կերան:

Ուրիշ մը—(Կատակով) Կը մեղքնամ. Թող խնայէիր:

Իշխանը—Ա՛ռ ո՞վ է, որ խնայելու մասին կը խօսի: Երբէք, որդիներս. կեանքի կուին մէջ չխնայէք երբէք և ոչ-ոքի: Խնայելը թուլութիւն է, մեղքընալը պարտութիւն: Զարկէք, ով ձեր դէմն է, ով ձեր ճամբան կը կոցէ: Ով որ քեզի կարդիլէ, քու թշնամիդ է:

Երիտասարդը—Զարկէք, յաղթողը մենք ենք։
Ուրիշ մը—Ի՞նչ լաւ է յաղթող ըլլալը։
Երիտասարդը—Յաղթող ըլլալ ու կուէն դառնալ։
Իշխանը—(Երթալով սեղանին գլուխը) Դէ՛, հիմա եկէք, նստինք Տիրոջ սեղանը. արդար հատուցում մեր դաժան կուին։

Աղջիկ ու զօրական խառն կը նստին։ Աղջիկներէն շատերը կը ծնան ոտքի, կը մօտենան ու կը ծառայեն մէկուն-միւսին. մէկ-երկուքը կ'երթան կուգան։ Զինակիրները կը շարուին իրենց տէրերուն ետևը ու կտրձանանան։
Բազմութեան կէսը նստած է արդէն, կէսը դեռ ոտքի, որ կը խօսի։

Զօրական մը—(Բաժակը վերցնելով) Կեցցէ կռիւը։
Կողքի աղջիկը—Կեցցէ կուողը։
Դէմի զօրականը—Կեցցէ գեղեցկութիւնը։
Ուրիշ մը—Կեցցէ սէրը։
Աղջիկները—Կռիւը կեանքն է աշխարհի։
Զօրականները—Սէրը վայելքն է աշխարհի։
Իշխանը—(Ծիծաղելով) Կեցէք, կեցէք. մի՛ շտապէք, էյ, դուք, կռիւ, էյ, դուք սէր։ Մի՛ բռնկիք այդպէս շուտ. նստեցէք հանգիստ, հպատակեցնք հին կարգին։ Թասերը պատրաստ, մեր մեծ Աստծուն ձօն եմ ձօնելու։

Աղջիկները գինի կը լեցնեն թասերը մէջտեղի գինիի աւազաններէն։

Խոր լռութիւն։

Իշխանը—(Վերցընելով գինիի մեծ եղջիւր մը՝ կ'երթա կը կենա բազնին առջևը, դէմքը դէպի վարագոյրը դարձուցած ու գինին բարձր պահած) Քեզի, ով մեծդ Աստուած, Վահագն արի, դուն արևը աշխարհի, դուն կեանքն ու աշխուժ, դուն կռիւ և ուժ, դուն լոյս ու գնող, ազնիւը զատող, փառքը ազատող, դուն որ յաղթեր ես վարի, խաւարի, ամեն մռայլի, այլ և երկնքին սև ամպ ու թաւխպին, դեին, վիշապին աշխարհի ափին, քեզի, այգածին, ճառագայթածին, քեզի կը ձօնեմ այս վայելքի եղջիւրը՝ լիքը ազնիւ արբեցնող գինիով, դուն, որ ապրելու ու կուելու արբեցումը կու տաս մեզի։ Տէր, ընդունէ՛ մեր ձօնը։ (Մէկ-երկու կաթիլ կը թափէ կրակին. ուժեղ ու պայծառ բոց)։
Ձայներ ամեն կողմէն—Ընդունուած է... ընդունուած է... ընդունուած է...
Իշխանը—(Դառնալով իր տեղը) Յաղթողի ձօնը յաղթողի բազնին վրայ միշտ է ընդունուած։ Խմենք։ Կեցցէ կեանքն ու իր կռիւը։
Բոլորը—(Աղմուկով ու իրարանցումով, նստած, կեցած, թասերը իրարու բախելով) Կեցցէ կեանքն ու իր կռիւը։

Կը խմեն ու կը նստին. լռութիւն։

Աբեղան—(Դողդոջուն քայլերով առաջ կու գա, ամբշկոտ վա-

բանքով, հայեացքը գետին, ձեռքը առաջ մեկնած) Տէր թաս մըն ալ ինծի: Ես ալ կ'ուզեմ խմեմ:

Ընդհանուր զարմանք ու խոր լռութիւն։

Իշխանը—Դուն հոս ինչ գործ ունիս, սեազգեստ:

Աբեղան—Տուր թաս մըն ալ ինծի. ես ալ կ'ուզեմ խմեմ:

Իշխանը—Այս եղջիւրէն խմել ուզողը կուէն պէտք է որ գա:

Աբեղան—(Աղաչաւոր) Մէկ թաս մը միայն, իշխան, ինչ մեծ բան է որ: Անգամ մը միայն, մէկ ումպ մը միայն քու այդ վայելքի եղջիւրէդ:

Իշխանը—(Արհամարոտ) Տիրոջ սեղանին վրա, ա՛յ թշուառ, ոչինչ չի ստացուիր աղաչանքով. գնա մուրացիկներուն սեղանը:

Զօրական մը—(ծաղրով) Է՜յ, բարեկամ, ո՞ր հովերն են քեզի այս կողմը նետեր:

Երիտասարդ մը—Գինիի հոտ է ընկեր ծում պահողին քիթը։

Իշխանը—Տարին տասը չան ցորեն նուիրեր եմ ես իմ կալերէս ձեր անապատին. գնա նստէ ու կեր։

Հասակաւոր մը—(ծաղրով) Ու ազօթէ քու աստուածներուդ մեր մեղքերուն համար։

Հաստ զօրական մը—Մեղք... (Փորը բռնած սաստիկ կը խնդա) Ազօթէ, ազօթէ մեր մեղքերուն համար... մեր անթիւ մեղքերուն...

Իշխանը—Թողէք. թողէք կորչի։ Ես ձօն ունիմ ձօնելու։ Առէք թասերը։

Բոլորը կը լեցնեն։

Իշխանը—(Եղջիւրը առած կերթա նորէն բազնին առջեւը ու գինին վեր բարձրացնելով) Ո՜հ, ո՜վ վեհդ դիցուհի, ո՜վ փրփրածինդ Աստղիկ, դուն որ անարատ ես ու սքանչելի, քու եւած փրփուրիդ նման. դուն վերին գեղեցկութիւն, դուն գերագոյն հմայք ու քնքշութիւն, քու տուած լոյսիդ նման. դուն, որ աղբիւրն ես սիրու, յոյսերու ու յուզումներու, քեզի օրօրող ալիքներուն նման. քեզի, ծովածին, քեզի կը նուիրեմ այս վայելքի եղջիւրը՝ լիքը ազնիւ ու արբեցնող գինիով, դուն, որ գեղեցկութեան ու սիրու վայելքը, հեշտանքը ու արբեցումը կու տաս մեզի։ Ընդունէ, դիցուհի, իմ ձօնս։ (Մէկ-երկու կաթիլ կը թափէ կրակին. ուժեղ ու պայծառ բոց):

Իշխանը—(Դառնալով իր տեղը) Ցաղթողի ձօնը միշտ է ընդունուած գեղեցկութեան բազնին վրա։ Խմենք։ Կեցցէ գեղեցկութիւնն ու սէրը։

Բոլորը—(Աղմուկով, ծիծաղով, կատակներով ըմպանակները իրարու բախելով) Կեցցէ գեղեցկութիւնն ու սէրը։

Կը խմեն ու կը նստին. լռութիւն։

Աբեղան—(Դուրս կ'ելնէ իր անկիւնէն եւ վճռական կը մօտենա հաստ զինուորականին, ձեռքը կը դնէ անոր ուսին ու կտրուկ) Տեղ տուր ինձի։

Ընդհանուր գարմանք։

Հաստ զօրականը—Նորէն, այ մուրացկան։

Աբեղան—(Աւելի կտրուկ ու խէթ) Ե՛ս ալ կուզեմ նստիմ այս սեղանին։

Հաստ զօրականը, Քեզի տեղ չկա այս սեղանին։

Աբեղան, (գրգռուած ու ղողալով) Ես պէտք է նստիմ այս սեղանին։

Հաստ զօրականը—Տեղ չկա՝ ըսինք քեզի, տուր չունեցողին հոս տեղ չկա. ի՞նչ ես կպեր, ձիու ճանճ։

Աբեղան—(Ցանկարծ կը փաթթուի Հաստ զօրականի մարմնին, կը վերցնէ նստարանէն, կը գլտորէ գետին)։

Նախ ընդհանուր անբարեհաճ յուզում ու իրարանցում, որը սակայն յանկարծ տեղի կու տայ բուռն ու միահամուռ ծիծաղի մը։

Աբեղան—(Ծունկը կը դնէ նստարանին եւ բռունցքը սեղանին զարնելով) Ես պէտք է նստիմ այս սեղանին։

Հաստ զօրականը—(Վեր կը թռչի կատղած, կը քաշէ սուրը ու կը վազէ Աբեղային վրայ) Անդին, անզգամ, չեմ ուզեր պղծեմ այս սուրբ մեհեանին գաւիթը քու պիղծ արիւնովդ։

Աբեղան—(Հաստատ ու ծանր քայլերով կը մօտենայ անոր։ Վայրկեան մը շեշտ կը դիտեն իրար մոլեգին։ Ցանկարծ Աբեղան բոլոր ուժովը կը զարնէ դիմացինի թեւին, որուն սուրը կ'ինա վար։ Աբեղան իսկոյն կը խլէ ու նորէն ծունկը դնելով նստարանին)։ Ահա, իշխան, և իմ սուրս։

Ընդհանուր ոգեորութիւն, աղմուկ, հիացում։

Աղջիկները—(Իրարու) Ի՜նչ ուժ, ի՜նչ ուժ...

Աղջիկ մը—Ի՜նչ երկաթի ձեռք։

Հաստ զօրականը—Ո՛չ, իշխան, դուն տեսար բռնութիւնը, դուն բոլորը տեսար. իմինս է այդ սուրը։

Ձայներ—Ո՛չ, ո՛չ, ալ ո՛չ։

Երիտասարդ զօրական մը—Քու մէջքդ դպաւ դեռին։

Իշխանը—Սուրը անոնն է, որու ձեռքը որ է։

Բոլորը—Ապրի՛ մեր արդար իշխանը։

Ձայներ—Ապրի՛ մեր նոր ընկերը։

Մէկը—(Մօտենալով պարտուածին) Կը ներես, բարեկա՛մ, բայց կը տեսնես, որ քեզի այլ ես տեղ չկա հոս։

Հաստ զօրականը—Աղէկ, ես կերթամ, բայց մենք դեռ կը պատահինք, սեղդենա. կամ սուրս կուտաս ինծի, կամ կեանքդ։

Աբեղան—Կեանքս՝ դուցէ։

Ձայներ—Դինի՛ տուէք յաղթողին։

Երիտասարդ մը—Վերջուր անոր թասը։ Հիմա ան ալ քուկինդ է։

Աբեղան—(Պառնէ Հաստ զօրականի ըմպանակը ու կը նետէ անոր ետեւէն) Ես չեմ ուզեր ուրիշին խմուկը։

Աղջիկ մը—(Թեւը երկարելով) Ա՛ռ, բա՛ջ, իմ թասս։

Աղջիկները—(Երկնցնելով իրենց թասերը) Ա՛ռ իմ թասս... ա՛ռ իմ թասս... ա՛ռ իմինս...

Աբեղան—Իշխա՛ն, քիչ մը առաջ ես քու եղջիւրդ խնդրեցի, այն եղջիւրը, որով ձօնդ ձօնեցիր։

Իշխանը—(Եղջիւրի մէջինը կը թափէ ու կու տա մօտի աղջկանը, լուրջ ու հանգիստ) Լեցո՛ւր ու տուր իրեն։

Աղջիկը—(Կը կատարէ ու կու տա ընքշանքով. խորապէս սըրտանց) Ա՛ռ։

Իշխանը—Առաջին թասը, նորեկ, գիտցիր, միշտ վահագնինն է. այդպէս է աշխարհի հին օրէնքը։

Աբեղան—Առաջին թասը... ձեր այս կեանքի սեղանին առաջին թասը ես կը խմեմ... կեանքի ու աշխարհի օրէնքովը... ես կը խմեմ կուռ կենացը. կուռ, որ վերն է խաւարին ու ամպերուն մէջը, ինչպէս որ կ՚ըսէք. կուռ, որ դուրսն է, աշխարհի վրա, ուրկէ դուք կու գաք. կուռ, որ հոն է, ծովուն մէջ, փոթորկի առեն, ուրկէ ես կուգամ։

Աղջիկները—(Սաստիկ հետաքրքիր, փսփսուքով իրարու) Ծովէն... ծովէն...

Աբեղան—Թող օրհնուած ըլլա կեանքի կռիւը։ (Կը խմէ)։

Ձայներ—Անո՛ւշ, անո՛ւշ... Ցաջողութիւնը, յաղթանակը միշտ քեզի...

Իշխանը—Ապէկ։ Լեցո՛ւր երկրորդ թասը։

Աղջիկները—(Իրար անցած) Գինի՛, գինի՛։

Աղջիկը—(Ստրէն կը լեցնէ ու կու տա սրտանց) Ա՛ռ։

Իշխանը—Երկրորդ թասը, նորեկ, գիտցիր, միշտ Ատոդիկինն է. Այսպէս է աշխարհի հին օրէնքը։

Աբեղան—Երկրորդ թասը... այո, Ատոդիկինն է. ան, որ ինչպէս կ՚ըսէք, ծնաւ գեղեցիկ յորդ փրփուրէն, դուրս եկաւ սիրաբծաթ՝ յուզող ու եռացող ալիքներէն. ան, որ փոթորկի անդունդներուն մէջ կը գալարի ու կը յափշտակէ քեզի։ Իշխա՛ն, այս թասը ես կը խմեմ քու ազնիւ կենացը։ (Կը խմէ)։

Աղջիկները—Սեղա՛ն... Սեղա՛ն...

Իշխանը—Աղջի՛կս...

Ռոլորը—(Սաստիկ յուզուած, վախով ու ապաստղական դիրքով կը նային իշխանին կողմը)։

Հաստակազմ զօրական մը—Իշխա՛ն, քու ազջիկդ...

Իշխանը—Կեցի՛ր, այ ագա, կարծես քու գէմքդ ծանօթ է ինձի։

Աբեղան—(Թեթեւ հեգնանքով) Հիմա, իշարկէ, իշխա՛ն, հիմա պէտք է որ ճանչնաս։

Աղջիկները—(Իրարու փսփսուքով) Ո՞վ է, ո՞վ է, ո՞վ է որ։

Ռուբմը—(Կերեւա վարագոյրին առջեւը) Պատրաստ եղէք, յաղթողներ, ու թողէք սեղանը։ Արեւելքը շիկներ է, ծովը ծիրան է հագեր ու թարմ քնութիւնը թափ կու տա քունը աչքերէն։ Մեծ Ատոմուն

երկրպագելու։ Լուսատուն ու լուսատուդը գրկելու են հինա իրարու պատրաստ եղէք դուք ալ երկրպագելու։

Ամենքը—(Խսկոյն վեր կը գտնին իրենց տեղերէն, գինովցնող տաղ կը գնեն ադամատներու ու վանականներու իրենց տերեսան, սոսկ կը նային ու կերպան բոլորին առջեւը նրկու զուգանոր տաղտար կը կոպմին՝ ներսնին փարապոլին, ոչ՝ բարեմնեներ, ոնա՝ ադջիկներ)։

Ոշխանը—(Մ՚օտենալով Աբեղային) Տուք թնդի ձեռքդ ու եր թանք երկրպագելու մեր վեհ ասուածներուն։

Աբեղան—Երկրպագելու... Ձեր ասուածներու։

Ոշխանը—Հին ասուածներուն. միշտ հին ու միշտ նոր ու միշտ յաւիտեան։ Եկուք։

Աբեղան—(Անշարժ ու յամառ կծցած է. աչքերը գնտին)։

Ոշխանը—Եկուք, կ՚ըսեմ քեզի. շուտ. գուն, որ խանցիր Կուրի կնոջը. գուն որ խանցիր իմ Սեղայիս կնոջը, պէտք է որ գան։ Տուր ձեռքդ ինձի։ (Կը բռնէ ամոր բեռնն ու տնակ մը կը հատնոյ կը տանի առաջ դրան տարտարին մէջէն Բաղեին մէկ կողմ իմիր կանցնի, միւս կողմ կը մնայ Աբեղան)։

Քուրմը—(Ամամբին մէջէն, ահեղ) Երկրպագէ, գուն, շարուած։

Աբեղան—(Անշարժ է)։

Ոշխանը—(Սարսափահար ու կիսաձայն) Երկրպագէ, անմիտ։

Աբեղան—(Անշարժ է)։

Սեղա—Ե՚նեւա յանկարծ բարձր բեմի ասնդուղներուն փրա, նանպան ասուչ կու գա, կը կենա ուղիղ Աբեղային դէմ՝ ճեռու ու հրամայական։ Երկրպագէ. երկրպագէ ծովուն ու իր ասուծուն։

Աբեղան— (Նախ գլուխը կը թեքէ, եմբ ծանրերը հիշ-հիշ կը ծալին ու յանուած կ՚իյնայ գետին)։

Ասատիկ դղրդիւն մը. և մէկ անգամէն կը կոչէ ասնն բան. կը ոչնչ իրարի մութ ու լուսիւն։

Երբ թանձր մութը կըսկսի փարատիլ՝ տեսարանը փոխուած է։ Հնագոյնաց բացուող ադամ լոյսին մէջէն կը նշմարուի հատա ու ցած սիւներու դղրդ շարքը մը ասարանին ներշա մէջտեղը։ Եկեղեցի է։ Ամբքը կ՚երեւայ մինաղ ներկու փառ մեն, դրան առջեւ երկու վանական ադամա կը կարդան փոխնիփոխ։ Ասանց նուռը կիսաշրջանով կեցած են վանականները՝ երեսնին դէպի խորանը։

Մռայլ ու մութ. ընթերցումը տխուր ու միալար։

Լոսիկ ադամոր վանականներուն շարքին մէջ յանկարծ խլրտում մը կ՚ելնա։

Վանական մը—(Մ՚իւաներուն կռնակէն ծանրով դէպի ետ՝ փսփսուքով) Ջուր, ջուր, երեսին ջուր։

Ձախ կողմի խորքի սիւներուն մէջէն կերեւան երկու վանական, որոնք Աբեղայի թեւերը մատ ու բարձրացուցած կը բերեն առաջ։ Աբեղան թոյլ ու անդրդիւ։ Մոսէս վանականը կու գայ անոնց ետեւէն՝ օգնելով։

Ադամ վանական—(Առաջ դուրս կելնէ ադամի սիւներուն մէջէն։ Կը մոտենա Մոսէսին, երբ Աբեղան արդէն անցուցած են, եւ կիսաձայն) Ինչ է. ինչ կա. ինչ եղաւ։

Մոսէս վանական—(Միշտ կիսաձայն) Աբեղան մարեցաւ։ Գնցեր էր առջեւս կ՚ադօթէր, մէյ մըն ալ տեսա՝ գլուխը կախեց։ Ինչ մը ծանցաւ ու բոլոր ուժովը ինկաւ գետին։

Առաջ վանական—Մեզ ոչ ոք արեցաւ. եթէ գիշերը շատ է ճգներ։ Տարէք ապրիւրը, տարէք ապրիւրը։ (Ու ինքը կը դառնայ ետ իր նախորդ տեղը)։

Մուսէս վանական—(Կ՚ըշտապէ գացողներուն ետեւէն)։

Ու նորէն ամեն ինչ հանգարտ է, ու նորէն որոշ կը լսի սաղմոսասացներուն միալար, թաթծոտ ու ձանձրացած ձայնը։

Առաջին սաղմոսասաց—«Ո՞չ գոյ բժշկութիւն մարմնոյ իմոյ յերեսաց բարկութեան քո»։

Երկրորդ սաղմոսասաց—«Ո՞չ է խաղաղութիւն ոսկերաց իմոց յերեսաց մեղաց իմոց»։

Առաջին սաղմոսասաց—«Անօրէնութիւնք իմ բարձրացան քան զգլուխ իմ, որպէս բեռն ծանրացան ի վերայ իմ»։

Երկրորդ սաղմոսասաց—«Նեխեցան և փթեցան վէրք իմ յերեսաց անզգամութեան իմոյ»։

Սաղմոսի միջոցին կամաց-կամաց, շատ հանգիստ, տեսարանը կը գոցուի, այնպէս որ վերջին քանի մը բառը կը լսի դեռ գոցուելէն ալ ետքը։

ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ՉՈՐՐՈՐԴ

ՏԵՍԱՐԱՆ Ա.

Վանահայրը—(Կը մտնէ տխուր ու կլքած) Ողջո՞յն ձեզի։

Կոյր վանականը—(Կ՚ելնէ ոտքի)։

Վանահայրը—(Մօտենալով անկողնին) Ցո՞նչպէս ես։ Նոր եկա ցամաքէն. ըսին՝ ինծի կանչեր ես։

Աբեղան—Այո, կ՚ըզգամ ծովուն թարմութիւնը, որ հագուստներէդ կը բուրէ։

Վանահայրը—Նոր եկա լաստէն։

Աբեղան (Հիացումով) Լաստէն... լաստէն...

Վանահայրը—(Զոժոռած) Ինչու՞ ես կանչեր ինծի։

Աբեղան—(Քիչ մը լուռ)։ Հայր, ես երկրպագեցի հին աստուածներուն։

Վանահայրը—(Դաժան ու խիստ) Շատ բնական է։

Աբեղան—Ի՞նչ...

Վանահայրը—Անշուշտ, անշուշտ. կ՚ըսպասէի։ Չէ՞ որ քեզի խոստացաւ իր տակի ձին, իր ձեռքի սուրը ու իր սեփական աղջիկը. գուցէ և օր մը ալ, ով գիտէ, իր իշխանական ցուպը։

Աբեղան—(Սաստիկ վիրաւորուած) Հայր...

Վանահայրը—Անշուշտ, շատ բնական է։ Այդ բոլորի համար արժէ աստուած մը ուրանալ։ (Ցանկարծ ու քարկոծեալ) Բայց ինծի՞, ինծի՞ ինչու ես կանչեր հոս։

Աբեղան—(Ցանդիմանօրէն) Հապա ով կանչէի, վանայր...

Վանահայրը—Սխալուեր ես։ Կանչէ Հայր Անտոնը։

Աբեղան—Վանահայր...

Վանահայրը—Հայը Աստուծին լաւագոյն վիճակն կը հանէ քեզի համար, ուր քու սիրտդ է։

Աբեղան—Ինչ վնասս ինձի դուրս։

Վանահայրը—Ես կը դրկեմ քեզի քու անձնապահ աշխատաւորը։

Աբեղան—(Դառն ու հանգիստ) Ինչ դրկես ինձի իմ աշխատաւորը... Իսկ ով իրաւունք տուաւ քեզի՝ ուզած ժամանակդ դուրս քաշես ինձի ազատութենէս, ուզած ժամանակդ նոր ենուան աշխատաւոր։ Մի՞ քեզի իրաւունք տուաւ, որ կապես հոգիս, կապիկես զգացումներս։ Մի՞ քեզի իրաւունք տուաւ, որ հիմա ելնես ու ուրիշ յանդգնութիւնները կը կատարես։

Վանահայրը—(Զարմացած) Իրա՞ւ նոյն ես։ Ես ուզեր եմ անկախութիւն։ Ես ուզեր եմ ազատեմ քեզի այն ելիկը գայթակղութենէն, որոնք դատաւորներուն ու տասնապետներուն մէջէն վիճակն կը հանեն մարդիկ այս տարի մենաստանը։ Ես ուզեր եմ անկախութիւն։ Հանեմ քարոզներդ ու գնա։

Աբեղան—Երթամ. ինչու. և ուր։

Վանահայրը—Աշխարհ։

Աբեղան—Աշխարհ... (Անիրաւ գլուխը կը շարժէ. ես տարտամ շարադրանքով) Ո՛չ, վանահայր, հոս է իմ աշխարհս։ աշխարհիս մէջ, ուր կիրքերն է. ես հոս ճանչցա հին ասուածները, հոս ալ պիտի ելիկը պաշտեմ։

Վանահայրը—(Տարտամ զարմանքով կը դիտէ. վիճիշը ժամը ու վճռական) Ո՛չ, այդ մէկը չեմ թողներ, աբեղա։

Աբեղան—Կը թողնես. դուն ես այդպէս կամենաս։ Ես ուրիշը աշխարհ չեմ տեսած, ես հոս եմ շիներ իմ աշխարհս։

Վանահայրը—(Կտրուկ) Լաէ։ Հոս մենաստան է ու պարտաւորութիւն, ուր այլ ես աշխարհիկ հիւր մըն ես դուն, պատահական ուխտաւոր մը։ Իսկ ուխտաւորներուն իրաւունքը, գիտես, ե՞րբ օր է մինչև (Ինքզինքի դուռը)։

Կոյր Վանականը—(Ծտուէն) Վանահայր, շնա՞ ես ինչ։

Վանահայրը—(Կիսովին ետ նայելով) Ո՛չ, հանգստացիր, հիւանդ էր ու զիջող եղայ։ Զի լսեցիր, ամբողջ ե՞րբ օր տուի ինձեն։ Բայց ե՞րբ օրը չի լրացած պէտք է որ Հայը Աստուծին լաւագոյն տիրը հանէ տարիկա։ (Դուրս)։

Գ. ՏԵՍԱՐԱՆ.

Աբեղան—(Ծայրերուն մէջէն խանգաղար կը նայուի նոր, մազերը խուր, հագուստը խառնակ, աչքերը մոլար) Եկա՞, եկա՞... (Ոչ յանկարծ կը կենա, կը շփէ ճակատը, կը նայի ետ ու կը սկսի բարկացած շեշտով մ՚ը) Դէ՛, Ինաս-բարով, կղզի, Ինաս-բարով, անապատ. Ինաք-բարով դուք ալ մութ-մութ կամարներդ տանջարին. Ինաք-բարով իմ աղօթքներս ու խնկումը հոգիս. Ինաս-բարով և դուն, ով անողոք ու վրէժխնդիր Աստուած, որուն ուզեր եմ իմ անձնիս ու աղօթքներս։ Դուն ալ Ինաս-բարով, խցիկս, իմ մենաւոր ու լռիկ խցիկս,

ալ չեմ դառնալու քեզի։ Ա՜յ, դեռ կը վառի հոտ՝ ծոցիդ մէջ՝ ճրագիս աղօտ լոյսը. առուան դէմ մինակը-մինակը մարի պիտի ու ալ երբէք չի պիտի վառի։ Թող մարի։

Հովի ուժեղ թափը։

Աբեղան—(Կը ցնցի, կը դառնա ծովուն ու թեւերը կարօտակէզ առաջ պարզելով) Դէ՛, բա՛ց գիրկդ, Սեդա՛, բա՛ց թեւերդ. ահա յոյզքը ջրերուն, ահա՛ վազքը փոթորկին. բա՛ց թեւերդ ու նորէն փարած քու խնկելի մարմնիդ, նորէն շունչդ շնչիս, ալիքներուն ծեծկլուքին մէջէն, անցնիմ այն նո՛ր ու մե՛ծ անծանօթին, նո՛ր գոյութեան ու նոր կեանքի. Ան, որ խոստացեր ես ինծի։ (Քայլ մը ընելով առաջ) Բա՛ց գիրկդ, Սեդա՛...

Սիմոն վանական—(Վերի ժայռին վրայէն շիտակ անոր առջեւը կը ցատկէ ու կը կտրէ ճամբան. հեւալով) Կեցէ՛ք։ (Կուրծքը սեղմելով) Շունչս.. շունչս....

Աբեղան—(Ցանկարծակիի եկած ու խոժոռ) Մէկդի՛ ճամբէս։

Սիմոն վանական.—Կեցէ՛ք, դժբաղդ, կեցէ՛ք։ Վախեցէ՛ք Աստուծմէ։

Աբեղան—(Դուի պատրաստելով) Մի՛ կտրեր առջեւս։

Սիմոն վանական—Քու առջեւդ մութ է ու անդունդ։

Աբեղան—Ե՛տ քաշուէ, մարդ։

Սիմոն վանական—Վախցէ՛ք այդ մութէն ու անդունդէն։

Աբեղան—(Դատղած) Է՜, հերիք է, հեռո՛ւ գացէք ձեր անդունդներովը ու մութերովը, հեռո՛ւ ձեր անվերջ վախերովը։ Վա՛խ լոյսերէն ու բերկրանքէն, վա՛խ մութէն ու տանջանքէն. վա՛խ աստուածներէն, վա՛խ դժոխքէն։ Հեռո՛ւ, բա՛ց ճամբաս։ Հոն ո՛չ մութ կա, ո՛չ անդունդ։ Ծովն է միայն ու փոթորիկը իմ առջեւս։

Սիմոն վանական—Մահն է քու առջեւդ, թշուառակա՛ն։

Աբեղան—Մահն ալ ձեր վախն է ու ձեր վախի հնարածը։

Սիմոն վանական—Աստուա՛ծ իմ, խելագար է։

Աբեղան—Մահը ա՛ն է, հոս, ա՛յ, աս ձեր անապատը, աս վախի ու մեռելութեան կեանքը. իսկ հոն ազատն է, յոյզն ու շարժումը. հոն կեանքն է, և ես կ՚ուզեմ կեանքին գիրկը... (Ցանկարծ ուժով մը կը հրէ, կը նետէ գետին) Հեռո՛ւ ճամբէս։ Ես կ՚ուզեմ ապրիմ, ապրիմ. Սեդա՛... (Կը նետուի ծովը)։

Սիմոն վանական—(Կէս մը գետնէն բարձրանալով, սարսափահար ու խեղդուած ձայնով) Կորա՛ւ, կորա՛ւ իր հոգին...

Լռութիւն. ալիքներուն աղմուկը։

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ

ՅՈԴԻԵՍՆԵՐԻ ԵՎ ՀԵՏԻԵՍՆԵՐԻ ՋԵՆԵԶԵՆ ՆԻՒԹԵՐԻ ՄԵՍԻՆ

ՄՏԱԾՈՒՄՆԵՐ ԱՐՒԵՍՏԻ ՄԱՍԻՆ

Երբ մի արուեստագէտ, ընութիւնը գեղեցկացնելու դիտաւորութեամբ, կանաչ է աւելացնում գարնան վրայ, բոսոր գոյն՝ արշալոյսին, ծիրանի՝ մատաղ շրթներին,—ապա դրանով տգեղութիւն է ստեղծում միայն, որովհետև ստում է։

Նոյնիսկ տառապանքի, սիրած էակների մահուան և որևէ բարեկամի մատնութեան մէջ էլ մեծ արուեստագէտը,—և ես այս բառի տակ հասկանում եմ բանաստեղծը նոյնչափ, որչափ նկարիչը կամ քանդակագործը,—գտնում է սքանչացումի ողբերգական հաճոյք։

Արուեստագէտի կոչմանն արժանի մարդը պարտաւոր է արտայայտել ընութեան ողջ ճշմարտութիւնը, ոչ թէ միմիայն արտաքին, այլ և մանաւանդ ներքին ճշմարտութիւնը։

Արուեստը մարդկանց ցոյց է տալիս իրենց գոյութեան իրաւունքը, յայտարերում կեանքի իմաստը, լուսաւորում նրանց ճակատագիրը, հետևաբար և նրանց համար գծում կեանքի ուղիղ ճանապարհ։

Գեղեցկութիւնն ամենուրեք է։ Ոչ թէ գեղեցկութիւնն է պակասում մեր տեսողութեան առջև, այլ, ընդհակառակը, մեր աչքերն են, որ չեն նշմարում գեղեցկութիւնը։

Մարդկային մարմինը դերազանցապէս նրա հոգու հայելին է, և հենց այստեղ էլ պիտի փնտռել ամենամեծ գեղեցկութիւնը։

Օգիւստ Ռոդէն

ԱՐԻՍՏՈՏԷԼԸ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Բանաստեղծութեան ծագումը պիտի որոնել մարդկային երկու յատկութիւնների մէջ. նմանելու և ներդաշնակութեան ու րիթմի զգացման մէջ։ Ներդաշնակութիւնը, րիթմը, նմանելու արուեստը դեղարուեստի էութիւնն են կազմում, նրա յատուկ տարրերը։ Այդ տարրերը մենք գտնում ենք արտայայտուած թէ բանաստեղծութեան, թէ քանդակագործութեան, թէ նկարչութեան և թէ արուեստի միւս ճիւղերի մէջ։ Արուեստի տարբեր ճիւղերը տարբեր միջոցներով էլ գտնում են իրենց արտայայտութիւնը. դրանցից մի քանիսի միջոցներն են՝ ներդաշնակութիւնն ու րիթմը, բանաստեղծութեանը՝ խօսքը։

Ըստ Արիստոտէլի, կոմեդիայի նպատակն է ընդհանրապէս պատկերացնել մարդկային բացասական տիպերը, ողբերգութեան նպատակը՝ դրական, նոյն իսկ իդէալական տիպեր։

Ողբերգութիւնը ամբողջացրած ու աւարտուած գործողութեան նմանողութիւնն է կամ արտայայտութիւնը։ Գործողութեան արտայայտութիւնը կամ նմանողութիւնը պէտք է ունենայ ծաւալ, բովանդակութիւն։ Նրա գլխաւոր յատկանիշը գործողութիւնն է և ոչ խօսքը՝ պատմութիւնը։ Ողբերգութիւնը մարդկային հոգին ազնուացնում և սրբագործում է երկիւղի ու խղճահարութեան զգացումների միջոցով։ Ողբերգութեան հերոսը դժբաղդութեան զոհ է դառնում, թշուառութեան ու տառապանքների ենթարկւում ոչ իր արատների ու պակասութիւնների շնորհիւ, այլ մի ողբերգական սխալի, մի մոլորութեան, որի մէջ յաճախ նա ընկնում է անգիտակցաբար, ինչպէս օր. Էդիպ Արքան, Սոֆոկլէսի համանուն ողբերգութեան հերոսը։

Իւրաքանչիւր ողբերգութիւն պէտք է ունենայ հետեւեալ բաղադրեալ մասերը. ֆաբուլա, բնաւորութիւններ, որոշ մտքեր, խելամտութիւն, բեմյարդարութիւն, խօսք և երաժշտութիւն։ Ողբերգութեան հիւսուածքը, լինելով աւարտուած և ամբողջացրած գործողութեան նմանողութիւնը, պէտք է օժտուած լինի միութեամբ և ներդաշնակութեամբ։ Հիւսուածքի միութիւնը երևում է այն ժամանակ, երբ նրա բոլոր մասերն էլ սերտ և բնական կապերով են միացած իրար հետ։ Ողբերգութեան «անցքերի մասերը պէտք է դասաւորուած լինեն այնպէս, որ նրանցից որևէ մէկի փոփոխութիւնը կամ վերացումը շարժման մէջ դնէր ամբողջ գործողութիւնը։ Այլապէս՝ անցքի այն մասը, որի բացակայութիւնը կամ ներկայութիւնը մեռում է աննկատելի, չէ կարող համարուել ամբողջութեան օրգանական մասը»։

Որևէ դիպուածային անցք կամ պատահական դէպք չի կարող ողբերգութեան նիւթ լինել։

Թատերագիր-բանաստեղծը չէ պէտք է իրական անցքի նկարագիրը տայ այնպէս, ինչպէս պատմագիրը։ Բանաստեղծը պէտք է ցոյց

տալ, թէ ինչպէս են գրականում անցքերը՝ հանձնելն անհրաժեշտութեան և հաւանականութեան օրէնքի։ Բանաստեղծի և պատմագրի միջև եղած տարբերութիւնն այն է, որ մէկը ցուցադրում է անցքերի ի՛նչպէս տեղի ունենալը, միւսը արձանագրում կամ նկարագրում է այդ անցքերի անցեալը։

Իր հերոսին հանգէս բերելիս՝ բանաստեղծը պէտք է նկարագրի ուներայ մարդկային բնութեան յատուկ գծերը, ցուցադրելով բնական ու իրական գոյներով. հերոսի բնաւորութիւնը պիտի համապատասխան լինի այն միջավայրին ու շրջապատի պայմաններին, որոնց արդիւնքն է հանդիսանում ինքը հերոսը։

Ողբերգութեան հանգոյցը չը պէտք է արհեստական լինի. նա պէտք է անմիջական կերպով բղխի կատարուող գործողութեան ներքին էութիւնից։

ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ ԾԱԳՈՒՄԸ ԵՒ ՀԻՆ ՅՈՒՆԱԿԱՆ ԹԱՏՐՈՆԸ

Դրաման գրական ձևերից ամենարտրդն է և իր գործադրումն առաջաւ դիւցազներգութիւնից և ընտերգութիւնից յետոյ։ Դրամայի ծագումը սակայն հին է. նրա առանձին տարրերը մենք գտնում ենք և էպիքական, դիւցազներգական, և խմբական ընտերգութեան մէջ։ Օրինակ՝ Հոմերոսի հերոսների՝ Ագամեմնոնի և Ակիլլէսի, Թերսիտէսի և Ոդիսևսի, Ակիլլէսի և Հեկտորի, Հեկտորի և Անդրոմաքէի միջև տեղի ունեցած դիալոգները ինքնըստինքեան պարունակում են իրենց մէջ դրամատիքական գրուածքի այս կամ այն տարրը։ Նոյնը կարող ենք ասել խմբական լիրիքայի մասին. օրինակ՝ Պինդարի ներբողների մէջ արդէն որոշ չափով նշմարւում էին դրամատիքական բանաստեղծութեան առանձին գծերը։ Հինգերորդ դարը, որ այնքան հարուստ էր հոգեկան-մտաւոր կեանքով, աւելի լայն շրջանակի մէջ դրեց բանաստեղծութիւնը, և յունական ստեղծագործական հանճարն ընդգրկեց մարդկային հոգու բոլոր խորշերը՝ ձգնեց լուծումն տալ ժամանակի սոցիալական մի շարք պրոբլեմների և անդրադարձրեց ժամանակի հասարակութեան տենչերի ու զգացմունքների բովանդակ ուշադրութիւնը։ Եւ դրամատիքական բանաստեղծութիւնը, լինելով գործողութեան, երաժշտութեան և խօսքի ներդաշնակ հիւսուածք, գարձաւ գրական ձևերից ամենահամապատասխանը և մարդու բարդ հոգու արտայայտութեան ձևերի անհրաժեշտ պայմանը։

Դրամատիքական բանաստեղծութեան ծագման ու զարգացման արտաքին նախապայմանը պէտք է փնտռել հին յոյների Դիոնիս աստծու պաշտամունքի մէջ։ Ողբերգութիւնն ու կոմեդիան բղխում են միևնոյն պաշտամունքից։ Յունական դրաման իր ծագման մէջ կրում էր զուտ կրօնական բնոյթ։ Դիոնիսը գինու աստուածն էր և, նախնական յոյնի հասկացողութեամբ, իր մէջ էր ամփոփում բնութեան գաղտնի ոյժերը, որոնց շնորհիւ, հին յոյնի հասկացողութեամբ, բոյսն ու ծաղիկը վերակենդանանում էին գարնանն ու թառամում աշնանը։

Յունական աստուածներից Դիոնիսը բռնում էր միջին տեղը մարդկանց և գերագոյն ոյժերի միջև։ Լինելով բնութեան անձնաւորումը, նա իր գարթնումի հետ (գարնանը) անչափ մեծ ուրախութիւն էր բերում մարդկութեանը, անյայտացման հետ (աշնանը)՝ տրտմութիւն։ Գարնանը Դիոնիսին նուիրուած ուրախ հանդէսները ապագայ կոմեդիայի սաղմերն էին կազմում, իսկ աշնանը՝ տխուր հանդէսները—ողբերգութեան։ Ինչու առաւելապէս Դիոնիսի պաշտամունքն է համարում դրամայի աղբիւրը։

Ժողովրդական աւանդութիւնը գինու և ուրախութեան աստուած Դիոնիսի մասին պատմում է հետևեալը. Զևսից և Պերսեֆոնէ աստուածուհուց («երկրի մայր» Դեմետրի աղջիկը) ծնւում է Զագրէոս «եղջիւրաւոր մանուկը», որին՝ Զևսը անչափ սիրելով՝ որոշած է եղել իր գահը յանձնել։ Սակայն չար նախանձով է լցւում մանկան դէմ Զևսի գլխաւոր կին Հերան և տիտաններին միջոցով սպանել է տալիս նրան։ Խաղի միջոցին տիտաններն սպանում են Զագրէոսին, բաժանում նրա մարմինը կտորների, թողնելով միայն սիրտը, որը աստուածուհի Աթենասը տանում հասցնում է Զևսին։ Զայրացած Զևսը տիտաններին գլորում է տարտարոս, իսկ Զագրէոս մանկան սիրտը տալիս է իր սիրած Սեմելային՝ Կադմոսի աղջկանը, որ և ծնում է մի նոր մանուկ, երկրորդ Զագրէոսին, անուանելով նրան Դիոնիս։ Տեսնելով իր մանկան վերակենդանացումը, Զևսը՝ անչափ ուրախացած՝ օժտում է նրան յաւիտենական պատանեկութեամբ, դարձնում ուրախ և ցնծագին կեանքի աստուած, զարդարելով նրա գլուխը խաղողի ողկոյզների պսակով։ Մանուկը մեծանում է իր մայր-բնութեան՝ Դեմետրի ծոցում՝ իր անմիջական սնունդը նրանից ստանալով։

Եթէ առասպելի լեզուն վերածենք մեր սովորական լեզուին, կը տեսնենք, որ նախնական մարդու հասկացողութեամբ տարեայ երկու եղանակները՝ ամառն ու ձմեռը՝ արդիւնք են լուսաբեր ու խաւարային ոյժերի իրար յաջորդող տիրապետութեան։ Բնութեան այդ երկու մոմենտների վերարտադրութիւնը—թառամելն ու վերածնւելը—մենք պատնում ենք Դիոնիսեան ուրախ և տխուր հանդէսների մէջ։ Այսպիսով առասպելի մանուկը՝ դա խաղողի որթի անձնաւորումն է, նրա սպանութիւնը տիտանների ձեռքով՝ աշնանային այգեկութն է, երբ որթը բաժանւում է մասերի՝ տրորւում է խաղողը, թափւում է նրա կարմիր արնագոյն հիւթը, բայց խոպան չի մնում։ Նրա սիրտը մնում է անմեռ՝ գարնանը վերստին ծնելու, վերստին իր ճակատը պտուղներով զարդարելու համար։ Ի պատիւ մեռնող և վերածնւող աստծու՝ հանդէսներին երգւում էին ներբողներ, որ դիթիրամբ անուանւում էին կրում։ Երգերը երկու տեսակ էին լինում. դաժան ձմեռուայ ուրուականը տխուր ու մռայլ մտքեր էր ծնեցնում բնութեան առաջ տակաւին անճար մարդու մէջ, և այդ ժամանակ նրա երգերը՝ մեռնող Դիոնիսին նուիրած՝ տխուր ու յուսահատական էին։ Իսկ գարնանային երգերը զուարթ ու առոյգ էին հնչում, քանի որ կեանքի վերածնունդն աւետող նոյն Դիոնիսը եռանդ և ոգևորութիւն էր ներշնչում մարդկանց։

Դիոնիս աստծու կեանքը սակայն, ըստ առասպելի, ծնունդից

մինչև մահը և ընհակառակը, ընթանում էր զանազան արկածների և անակնկալների մէջ։ Իր երթի մէջ նա մենակ չէ. «եղջիւրաւոր մանուկ» և «յաւերժ պատանի» ասածուն ուղեկցում են այծոտն եղջիւրաւոր սատիրներն ու յաւերժահարսները, որոնք բնութեան գաւակներն են ու անտառի մշտական բնակիչները։ Ուստի և դիոնիսեան պաշտամունքին նուիրուած թափորներին մասնակցում էին այծեմորթով պարուրուած տղամարդկանց խմբեր, որոնք իբր թէ Դիոնիսի անզուսպ ուղեկիցների դերն էին կատարում։ Թափորի այս խմբերը ապագայ ողբերգութեան էական տարրերը կազմեցին։

Տրագեդիա յունարէն բարդ բառ է՝ τραγος և ᾠδή բառերից բաղկացած, որ նշանակում է «այծի երգ», այսինքն՝ զոհաբերուող այծի շուրջը երգուող երգ։ Զոհարանի վրայ վառում էր խարոյկը, յանուն աստծու զոհաբերուում էր մի այծ, իսկ վերջինիս շուրջը բոլորած տղամարդկանց խումբը երգում իր դիֆիրամբը։ Դիֆիրամբը տարբեր ձմերային էր լինում։ Յետագայում դիֆիրամբի բովանդակութիւնը հետզհետէ լայնացաւ ու խորացաւ։ Դիոնիսին յատուկ աղէտների և արկածների պատմութիւնների հետ նրա մէջ մուտք գործեցին նաև այլ առասպելներ, որոնք այս կամ այն նոր գաղափարն էին հաղորդում դիֆիրամբին։ Վերջինիս նոր և աւելի բարդ բովանդակութիւն ստանալու հետ խմբի այծեմորթով պարուրուող սատիրների կարևորութիւնը համարեց աւելորդ, ըստ որում դիֆիրամբն ստացաւ ողբերգութեան բնոյթ։ Սատիրական տարրի վերացումով ողբերգականը պէտք է ինքնուրոյն զարգանար, իսկ կոմիքականը բաժանուէր առանձին մասի, որ և յետոյ կոչուեց կոմեդիա։ Յունական հին ողբերգութիւնը, Արիստոտէլի ասելով, առաջ է եկել դիֆիրամբի ղեկավարի մենախօսութիւններից, որոնց մէջ նա զարգացնում էր այս կամ այն պատահարը Դիոնիսի կեանքից, կամ, ինչպէս յետագայում եղաւ, հերոսական շրջանի առասպելներից։ Խմբի վերոյիշեալ ղեկավարը, որին կորիֆէյ անունն էին տալիս, պատմում էր հերոսների կեանքի արկածները, իսկ խումբը արտայայտում էր իր մտքերն ու տպաւորութիւնները՝ պատմող անցքերի մասին։ Ձմերային տխուր դիֆիրամբի այս յուրջ և որոշ գաղափարական բովանդակութիւն պարունակող տարրերից յետագայում առաջ եկաւ ու զարգացաւ յունական ողբերգութիւնը։

Այս գրութեան մէջ դիֆիրամբը հասաւ Թեսպիս անունով հեղինակին (վեցերորդ դարում Ք. ա.), որին համարում էին հին ողբերգութեան հիմնադիրը։ Թեսպիսը դիֆիրամբի կատարման մէջ դրամատիքական գործողութիւն է մտցրել յանձին մի նոր գործող անձի՝ դերակատարի, որ պէտք է զրուցատրութեան մէջ մտնէր խմբի ղեկավար կորիֆէյի հետ։ Դրանով Թեսպիսը գործողութիւն և դիալոգ մտցրեց, որով դիֆիրամբը հետզհետէ պէտք է վերածուէր դրամայի՝ ողբերգութեան։ Կորիֆէյը պատմելիք նիւթի և կատարելիք գործողութեան շուրջը մի նախաբան էր անում, հանդիսականներին նախապատրաստելու համար, զրուցում էր խմբի հետ, վերջինս էլ պատասխանում էր, ապա բեմ էր գալիս դերակատարը, և ներկայացումն սատանում

էր որոշ կենդանություն։ Ըստ որում՝ անցքերն աստիճանաբար ստանում էին ժամանակակից բնույթ. բեմի համար մշակվում էին առասպելները, ստանալով պատմական-կենսական արժեք։ Սա է եղել այն կարևոր նորամուծությունը, որ վերագրվում է Թեսպիսին։ Այնուամենայնիվ թատրոնական զարգացման գործի տեսակետից հիմնական յեղաշրջում չէր սա, որովհետև Թեսպիսի ժամանակ ևս գերակշռող դերը ներկայացման մեջ խմբի ձեռքումն էր, խմբական երգի շնորհիվ քնարական տարրը աւելի զօրեղ էր, քան գործողությունն ու դիալոգը։ Թեսպիսին վերագրվող պիէսների վերնագրերն են միայն յիշվում, առանց յիշատակություն իսկ ունենալու նրանց բովանդակության մասին («Պենթէուս», «Ալքեստիդէ»)։

Թեսպիսի գործը շարունակել են նրա յետնորդները՝ Խորիլէս, Պրատին և Ֆրինիքոս. մանաւանդ վերջինը, որի մասին պատմվում է, թէ նա իր գրած պիէսներին ժամանակակից բնույթ է հաղորդել։ Նա Ա.թէնքում ներկայացրել է իր նոր գրած ողբերգությունը «Միլէտի անկումը» խորագրով, որի նիւթը միանգամայն ժամանակակից է եղել։ Ներկայացման ժամանակ, Հերոդոտի վկայությամբ, ամբողջ թատրոնն սկսել է բարձրաձայն հեկեկալ՝ պատմական այդ դառնագէտ անցքը պատկերացնելով։ Դէպքից յետոյ աթենացիք արգելում են ներկայացնել այդ պիէսը և հեղինակի վրայ հազար դահեկան գումարի տուգանք են դնում՝ մտրիկ անցեալի այդ դժբախտ դէպքը յիշեցնելուն համար։

Նախ քան անցնելը յունական ամենամեծ ողբերգու-գրամատուրգներին՝ Էսքիլէսին, Սոֆոկլէսին ու Եւրիպիդէսին, անհրաժեշտ է ուրվագծել հին յունական թատրոնի մասնավոր պատկերը։

Ի՞նչ էր ներկայացնում յունական թատրոնը՝ գրամատիկական բանաստեղծության ծագած շրջանում։

Թատրոն կամ թէատրոն յունական բառ է և նշանակում է հանդիսականներին յատկացված տեղ։ Յունական թատրոնը բաղկացած էր երեք մասից. բեմ, օրքեստր և հանդիսատեղ։ Հանդիսականների համար յատկացված տեղը, իսկական թատրոնը, կառուցվում էր մեծ մասամբ ժայռամածերի կամ բլուրների լանջին, ամֆիթատրոնի ձևով՝ կիսաշրջանների ու աստիճանների։ Նստարանները յցված քարից էին շինվում։ Թատրոնը բացագծայ էր։ Հանդիսականների տեղերի և բեմի միջև գտնվող կիսաշրջան տարածությունը կոչվում էր օրքեստր, որի կենտրոնում գրված էր բագինը ի պատիվ Դիոնիսի։ Օրքեստրը խմբին էր յատկացված, որ ներկայացման ժամանակ հանդես էր բերվում շուրջը։ Օրքեստրին կից էր բեմը, որ մի քանի աստիճանով բարձր էր առաջինից։

Ներկայացումները տեղի էին ունենում գարնանը, երբ հարավային փարթամ ու շքեղ բնությունը ինքնին մի հրաշալի պճնազարդ էր հանդիսանում յունական թատրոնի համար։

Յունական թատրոնը հսկայական կառուցված էր ունէր, տեղի քան 30,000 հանդիսական էր տեղավորվում նա։ Իր ամֆիթատրոնում Դիոնիսոսները Յունաստանում փայլում էին յարգանք ու պատիվ։ Նրանք գրամատի գարգացման սկզբնական շրջանում իրենց մէջ էին ամփոփում և՝ հեղինակին, և՝ գերասանին, և՝ ներկայացումը կազմակերպող-

դին։ Յետագայում միայն, երբ թատրոնական ներքին կեանքում ախտանիշը բաժանուեց, դերասանն ու հեղինակը տարբեր նշանակութիւն և դեր ստացան։ Թատրոնական դրդիչը Յունաստանում պետական անհրաժեշտութիւն էր համարուում. ներկայացումները կազմակերպում էին պետութեան նախաձեռնութեամբ և ծախքով։ Դերասանները համարուում էին անձեռնմխելի։ Եւ սակայն որքան ժողովուրդը յարգանք ու պատկառանք ունէր դէպի տաղանդաւոր ու բարեխիղճ դերասանը, նոյնքան խիստ ու անխնայ քննադատ էր ապիկար ու անշնորհք դերասանների նկատմամբ։ Հաւանած արտիստներին նա ծափահարում էր, իսկ վատերի հասցէին սուլոցներ ուղղում և յաճախ պահանջ դնում պատժի ենթարկել նրանց։ Դերասանուհիներ չեն եղել. կանանց դերերը տղամարդիկ էին կատարում։

Ներկայացումները տեղի էին ունենում ցերեկով և տևում էր ամբողջ օրը, ուստի ժողովուրդը լցուում էր թատրոն առաւօտեանից, տնական զգեստներ հագած և հետն էլ օրւայ պարէնը բերելով։ Թատրոնական հասարակութիւնը բաղկացած էր սոսկ ազատ քաղաքացիներից։ Տիրող «դեմոկրատիան» ստրուկներին արգելում էր ներկայացումներին յաճախել. իսկ կանանց թոյլ էր տրւում ներկայ լինել միմիայն ողբերգութիւններին, բայց երբէք՝ կոմեդիաներին։ Յաճախելը ձրի էր բաղաքացիների համար։ Յունական բեմը եղել է վերին աստիճանի անպաճոյճ։ Նրա դիմացի դեկորացիան ներկայացնելիս է եղել պարզուկակն որևէ շէնքի ճակատը՝ երեք դռներով։ Բայց յունական թատրոնը ունեցել է մի տեսակ մեքենաներ, որոնցով նա՝ անհրաժեշտ դէպքում՝ վերևից իջեցնելիս է եղել աստուածներին՝ դրամայի հանգոյցը միանգամից լուծելու համար (deus ex machina)։ Դերակատարները հանդէս էին գալիս բեմ իրենց պրոֆեսիոնալ զգեստներով և խոշոր դիմակներով։ Վերջին հանգամանքը սերտ կապ է ունեցել թատրոնի և բազմութեան մեծութեան հետ։ Միմիկան առանձին դեր չէր կարող խաղալ, քանի որ թատրոնի կէսից աւելին չէր կարող խաղացողի դիմագծերը պարզ տեսնել։ Դիմակները բազմատեսակ էին. ողբերգական և կոմիքական։ Տեղական և օտարական հերոսների համար գործ էին ածւում տարբեր դիմակներ։

Ներկայացումները դրւում էին մեծ հանդիսաւորութեամբ։ Ամբողջ չորս օր էին տևում նրանք, ըստ որում երեքը յատկացւում էին ողբերգութիւններին, իսկ մէկ օրը՝ կոմեդիային։ Ներկայացումները ծառայում էին նաև իբրև բանաստեղծական մրցման ասպարէզ, որին մասնակցում էին երեք ողբերգուներ, նոյնքան էլ կատակերգուներ։ Ողբերգուները հանդէս էին գալիս իրենց տրիլոգիաներով, այսինքն երեք իրար հետ որոշ առնչութիւն ունեցող պիէսներով, ինչպէս, օրինակ, Էսքիլէսի գրած ողբերգութիւնները Պրոմեթէուսեան առասպելի շուրջը։ Ազատագրուած Պրոմեթէուսը, Շղթայուած Պրոմեթէուսը և Ազատագրուած Պրոմեթէուսը։ Ներկայացումներին դերասանները պատրաստւում էին մեծ եռանդով։ Յուշարարի կարիք չէր զգացւում, քանի որ դերերը պէտք է անգիր իմանային դերակատարները։ Մաքուր և պարզ արտասանութեան, մտքի որոշ ու ներդաշնակ արտայայտութեան նկատմամբ՝ չա-

փաղանց խստապահանջ է եղել թատրոնական հասարակությունը, ուստի և այդ կողմի վրայ չափազանց մեծ ուշադրություն են դարձնելիս եղել թէ հեղինակները և թէ դերակատարները։

Հին-յունական թատրոնը անմահացել է շնորհիւ իր երեք խոշոր մեծությունների, որպիսիք են՝ Էսքիլէսը, Սոֆոկլէսն ու Եւրիպիդէսը։ Նրանք հանդէս եկան յունական գրականության ոսկեդարում (V դ. Ք. ա.), դառնալով իրենց ժամանակակից սերունդների տենչերի ու յոյզերի գեղարուեստական արտայայտիչները։

Սուրխաթեան՝ «Հին-Յունական գրականություն»

ՄԻՋՆԱԴԱՐԵԱՆ ԴՐԱՄԱ

Հեթանոս աշխարհի անկման դարաշրջանում թատրոնը ներկայացնում էր մի տխուր պատկեր բարոյական սանձարձակության և վայրենացումի։ Մոռացած էին յունական թատրոնի վաղեմի տրագեդիաները, աւանդական վեհությունն այն թատրոնի, որը, ըստ Արիստոտէլի, իրրև գեղարուեստի տաճար, ընդունակ էր մեղմելու ու «մաքրելու» մարդկային աւերիչ կրքերը։ Կայսերական Հռոմում թատրոնն այլևս տաճար չէր, այլ կրկէս, որը ձգտում էր միանգամայն հակառակ նպատակների, գարթացնելով ու խրախուսելով ամբոխի ֆոպիտ բնազդները։ Փայլուն ապացոյց է գրան այն ողբերգությունների մէկը, որ գրուած է առաջին դարում Քրիստոսից յետոյ և որի խորագիրն է «Հերկուլէսը Էտուսմ». պիէսի գլխաւոր գերակատարը պիտի լինէր մանուած դատապարտուած մի ոճրագործ, որին, համաձայն ողբերգության հանգոյցի, պէտք է կենդանի այրէին հանդիսականների առաջև։ Զարմանալի չէ, որ նախնական քրիստոնէութիւնը նման վայրենի տեսարանների մէջ գրական ոչինչ չէր տեսնում, և եկեղեցական հայրերն արգելում էին հաւատացեալներին յաճախել հեթանոս թատրոնները, համարելով նրանց «բնակավայր սատանաների և գայթակղության»։

Սակայն քրիստոնէական աշխարհում այնքան էլ հնչուն չէին անհետանում հեթանոս սովորությունները, որոնք արմատացել էին դարերի ընթացքում։ Հին թատրոնի մէջ հեթանոս աշխարհը իր կեանքի անդրադարձումն է տեսել, և դա նրա հոգեկան անհրաժեշտ պահանջներից մէկն է եղել։ Ոչնչացնել այն անհնարին էր։ Միասի անհրաժեշտ էր մարդկ, գոնէ այդ պահանջները՝ բարքերը կոպտացնող կողմերից, յարմարեցնելով քրիստոնէական հայեացքներին։ Նման հարմարումը դրդեց մտածելու հոգևոր գրականի մասին, որի նպատակը պիտի լինէր «կրքերի գտումն ու մաքրագործումը», սակայն քրիստոնէական իմաստով։ Այդ գրական ձևերը առաջ եկան գարգացման ժամանակաշրջանից, գլխաւորապէս պատարագից, որը ոչ այլ ինչ է, եթէ ոչ մեղքերից արբնելու խորհրդի սիմվոլիկ արտայայտություն։ Սակայն պատարագի և այլ արարողությունների սիմվոլիկ անգամ գործողություններն՝ առանց մեղքերի՝ հասկանալի չէին հաւատացեալների

համար, ուստի անհրաժեշտ գտան լրացնելու եկեղեցական արարողութիւնները առանձին գործողութիւններով, որոնք ժամերգութեան շրջանակից դուրս էին և ընդունված չէին մաշտոցում։ Նման լրացուցիչ արարողութիւններ արդէն գոյութիւն ունէին մինչև եկեղեցիների լրացումը։ Եւ ասենալուի ձէսի մէջ մենք պարզապէս տեսնում ենք նման արարողութիւններից մէկը։

Արևմուտքում այդ արարողութիւնները կոչում էին միստերիաներ (յունարէն μυστήριον—խորհուրդ, գաղտնի, խորհրդաւոր պաշտամունք աստծուն)։ Սկզբնական շրջանում նրանց գերակայողները էին եկեղեցու սպասաւորները, քահանաները և այլն։ Լեզուն լատիներէն էր, որ եկեղեցական լեզու էր համարւում։ Սակայն նրա միստերիայի երկրորդական դերերի համար թոյլատրուեց աշխարհականների մասնակցութիւնը, լատին բնագրի մէջ մուտք գործեց նաև ժողովրդական կենդանի լեզուն։ Աստուածպաշտական արարողութիւնները աստիճանաբար ստացան թատրոնական տեսարանների բնոյթ։ Հասնելով դարի սկզբում Ֆրանսիայում միստերիաներին մասնակցելու եղել նաև ժոնգլեոր ձեռնածուները՝ ֆոկուսնիկները։ Այս հանգամանքը ի վերջոյ յայտարարեց տաճարների սրբութիւնը խախտող, առաջ բերեց կշտամբանք ու մերկացումն, և միստերիաները նոյն գարում տաճարներից վտարուեցին։ Վտարումը տեղի ունեցաւ աստիճանաբար։ Սկզբում ներկայացումները փոխադրուեցին եկեղեցիների գաւիթը, ապա եկեղեցիների բակը, իսկ յետոյ՝ փողոց և հրապարակ։ Բաց երկնքի տակ, շրջապատուած ամբոխով՝ նրանք բռնեցին յետագայ զարգացման ուղին։

Միստերիաները տօնական ներկայացումներ էին, ուստի և նրանց բովանդակութիւնը համապատասխան էր լինում այն տօնին, որի առիթով տրւում էր ներկայացումը։ Հասկանալի է, որ աւելի հարուստ ու բովանդակալից պիտի լինէին ծննդեան ու յարութեան միստերիաները, որոնք նուիրված էին քրիստոնէութեան գլխաւոր հերոսի ծննդեան ու յարութեան հետ կապված սրտաշարժ ու նշանակալից անցքերի յիշատակութեանը։

Դրանով սակայն չէին սահմանափակւում հոգևոր գրամանների հեղինակները. աւետարանական մեծագոյն անցքերից աւելի հեռուն էին գնում նրանք, անցնելով մարգարէների և նահապետների ամբողջ պատմութեան միջով՝ մինչև Ադամի մեղապարտութիւնը։ Շատ յաճախ միստերիաներին առատ նիւթ էր մատակարարում նաև քրիստոնէական ուսմունքի տարածման պատմութիւնը, որ սրբագործված էր նահատակների արիւնով և սրբերի ու արդարների հրաշքներով։ Այդ հրաշքների վերարտադրութիւնը միստերիաներ կազմողներին հնարաւորութիւն էր տալիս մտցնելու կենցաղագրական մանրամասնութիւններ իրենց ժամանակակից կեանքից։ Այդպիսի միստերիաները կոչւում էին միրաբլի։

Իրականութեանը աւելի մօտ էին այն միստերիաները, որոնց գլխաւոր առանցքը բարոյականութիւնը, մօրալն էր։ Դրանք սկզբում վերացական գաղափարների, օր. առաքինութեան և արատների դրամատիկ արտայայտութիւնն էին ներկայացնում։ Բեմ էին հանւում,

օրինակ, պատուազգացութեան, զղջման, հեզութեան անձնաւորումները մի կողմից, փառասիրութեան և գոռոզութեան՝ միւս կողմից։ Եւ սովորաբար առաքինութիւնը միշտ պայքարի մէջ էր լինում արատների հետ՝ մարդու հոգու փրկութեան համար։ Առաքինութիւնը կամ նրա անձնաւորումները անհրաժեշտօրէն պէտք է խորհուրդներ և խրատներ տային, իսկ արատները պէտք է գայթակղեցնէին մարդուն. և նա յաղթող կամ պարտուած էր լինում, նայելով թէ օժտուած էր արդեօք նա առողջ դատողութեամբ և ուժեղ կամքով։ Որքան էլ թոյլ լինէին իսկական դրամայի յատկանիշները, բայց նրանք այս կամ այն չափով գոյութիւն ունէին։ Զարի և բարու միջև եղած պայքարի բարոյական արժէքի գաղափարը, որ յատուկ է բոլոր տեսակի դրամաներին, յատուկ էր և միստերիաներին։ Բայց բարոյագիտական դրամաների՝ մօրալիտէների մէջ պայքարը տեղի էր ունենում հոգեբանական հողի վրայ։ Ճիշտ է, այդ պիէսների մէջ տակաւին չկային ամբողջացրած բնաւորութիւններ, այլ երևան էր հանւում մարդկային բնութեանը յատուկ գծերից միայն մէկն ու մէկը, սակայն գլխաւորն այն էր, որ դրամայի մէջ հետաքրքրութեան առարկան հետզհետէ մարդն էր դառնում իր աշխարհիկ կեանքի բազմազան երևոյթներով։ Նրանց մէջ, որպէս անխուսափելի, անհրաժեշտ գործող անձ, հանդէս էր գալիս սատանան, որը կամ կոմիքական տարր էր մտցնում գործողութիւնների մէջ կամ մարդուն գայթակղեցնողի ու դէպի չարագործութիւն հրողի դերը կատարում։

Անցնելով միջնադարեան բեմի արտաքինին, պիտի ընդգծել նրա եռայարկ եռաբաժանները։ Վերևինը ներկայացնում էր արքայութիւնը, միջինը՝ երկիրը, ստորինը՝ դժոխքը։ Աստուածաշնչի ցուցմունքների համաձայն, արքայութիւնը փարթամ պարտէզի կերպարանքն ունէր, երկիրը բաժանուած էր միջնապատերով, որոնց վրայ գտնւում էին քաղաքի անունները կամ գործողութեան վայրը։ Բոլոր երեք յարկերն էլ իրար հետ միացած էին սանդուխներով, որոնցով մեկը բարձրանում, մեկը իջնում էին արդարները ու մեղաւորները։

Հանդիսականների տեղերը երկու տեսակ էին՝ պատուաւորների և հասարակ յաճախորդների։ Առաջինների համար նստարաններ էին դրւում բեմին մօտիկ, իսկ վերջինները գուրկ էին ամեն յարմարութիւնից և տեղաւորւում էին խմբերով ուսելի հեռուները, երբեմն նոյն իսկ հարևան տների կտուրներին։ Մայրերում տեղաւորուած ամբոխը յաճախ չէր լսում դերակատարների խօսքերը, ուստի և անհամբերութիւն ու անկարգապահ էր պահում իրեն։ Այդպիսիների հանգստացնողները կարգապահ հերոլդներն էին, որոնք՝ չապմեկու դէպքում հաւատացեալ հանդիսականներին երկնքի արքայութիւնն էին խոստանում։

Միջնադարեան դրաման իր այդպիսի բեմով շարունակեց գոյութիւն ունենալ մինչև յատուկ դրամատիկ խմբերի երևան գալը, որոնք յետագայում յատկապէս ներում էին նոր դրամաներ մշակելու գործին։ Նրանց մշակած կամ գրած պիէսները երկու ուղղութեան էին՝ լուրջ և կատակերգական։

Դրամատիկ խմբերից մեկը Պարիզում 1492 թ. ներկայացումները փոխադրեց յատուկ շէնքի մէջ, որով առաջին մշտական թատրոնի հիմքը դրուեց արևմտեան Եւրոպայում: Ասպարեզը պիէսները հնարաւոր ընդունում էին աշխարհիկ բնոյթ, որով ժողովրդական կենցաղի այս կամ այն կողմն էր լուսաբանւում, ընտանեկան և հասարակական բարքերից պատկերներ հանդէս բերւում:

Լուրջ պիէսները շարունակում էին կրել՝ միստերիա և մորալիտէ անունը, կատակերգականը՝ ֆարս, ուր ծիծաղելին չափազանցութեան հասցրած լինելով, ցուցադրւում էր ոչ կենդանի մարդը իր ծիծաղելի կողմերով, այլ նրա ծաղրանկարը:

Այս դրութեամբ միջնադարեան դրաման, ենթարկւելով վերածնութեան դարաշրջանի հովերի ազդեցութեանը, Ֆրանսիայում յանդաւ կեղծ կլասիկ ուղղութեամբ գրւած ողբերգութիւններին, իսկ Անգլիայում՝ շէքսպիրեան գեղարւեստական ռէալիզմին:

Եւրոպական միւս երկրներում միջնադարեան դրաման ուրոյն դծերով հանդէս չի եկել. նա նման է եղել անգլիականին կամ ֆրանսիականին, բայց աւելի թոյլ ու անկատար: Գերմանիայում, տասնեւթերորդ դարում, ամբողջ արևմտեան Եւրոպայում դրաման կրեց ֆրանսիական կեղծ կլասիցիզմի ազդեցութիւնը, երբ ֆէոդալական կարգերը ամենուրեք տեղ փոխւում էին միապետական իշխանութեան, և դրաման վերջնականապէս կորցնելով իր հոգևոր բնոյթը, ստանում է միանգամայն աշխարհիկ բնոյթ, որի վերաբտագրութեան առարկան դառնում է պալատական միջավայրը՝ իր թագաւորներով ու ազնուական բարձր հասարակութեամբ:

Գ. Ֆ.

ՇԷՔՍՊԻՐԵԱՆ ԹԱՏՐՈՆ

Ի՞նչ էր ներկայացնում անգլիական թատրոնը Շէքսպիրի ժամանակ. մի դրամատուրգի, որի պիէսներն այնքան բարդ ու բազմաձևման բեմադրութիւն էին պահանջում: Թատրոնը Շէքսպիրի ժամանակ չափազանց աղքատ ու անհրապոյր է եղել՝ ներքին տեխնիկայի և արտաքին կառուցւածքի տեսակէտից:

Վերածնութեան դարում բեմը նոր էր ազատագրւել միջնադարեան եկեղեցու ամենակարող հովանաւորութիւնից, նոր էր դուրս եկել եկեղեցական գաւիթներից, զանազան միստերիաների (հոգևոր դրամաների) դժոխքն ու արքայութիւնը ցուցադրելու, հանդիսականի մէջ միստիք-կրօնական տրամադրութիւն ստեղծելու տխուր պարտականութիւնից: Բուրժուական դասակարգի առաջ գալու հետևանքով՝ բեմն սկսել էր իրական կեանքին ծառայել, ցուցադրելով «բարձր» ու «հպարտ» դասի մարդկային արատաւոր մոլութիւնները, կրքերի աներիչ կողմերը, հրաւիրելով մոլորւածներին դէպի մաքուր կենցաղ և այլն:

Լոնդոնի թատրոնները կառուցւում էին թէմզայի ճահճոտ ափին,

շինւում էին փայտեղէն նիւթից, շինութիւնը խրամատով շրջապատում։ XVI-րդ դարի վերջում Լոնդոնի թատրոնների թիւը 19-ի էր հասնում, մինչդեռ մայրաքաղաքի բնակչութեան թիւը հազիւ 200,000-ի։ Դերասանական խմբերի գոյութիւնը յիշւում է թատրոնների կառուցումից մի դար առաջ։ Նրանք առաջ են եկել թափառաշրջիկ ձեռնածուներից, որոնք հետզհետէ կազմակերպել են նաև ներկայացումներ։ Միջնադարեան բեմի նախկին սպասաւորների՝ միստերիաներում բեմ դուրս եկող դերակատար քահանաների փոխարէն այժմ հրապարակ էին եկել դերասաններ, որոնց հովանաւորում էին զւարճութիւն սիրող պալատականները։ «Բարձրաստիճան» հովանաւոր ունենալը դերասանական խմբերի համար անհրաժեշտ էր, քանի որ կառավարութիւնը դերասանութիւնը ազատ պրոֆէսիա չէր համարում և ազատ դերասաններին աքսորի ենթարկում, իբրև շրջմոլիկների։ Եղիսաբէթ թագուհու ժամանակ գրեթէ բոլոր պալատական մեծերը մի-մի դերասանական խումբ էին պահում իրենց զւարճութեան համար, պաշտօնապէս այդ մարդկանց իրենց սպասաւորների ցանկը մտցնելով։ Միևնոյն վիճակի մէջ է եղել Շէքսպիրը. սկզբում նա եղել է կոմս Լէյսթէրին սպասաւորող խմբում, ապա 1604 թւականից՝ Յակոբ թագաւորի պալատական խմբում։

Անգլիական թատրոնը սակայն միանգամից չը գրաւեց հասարակական ասպարէզը. նա ունէր հակառակորդներ յանձին զօրեղ հոգեորականութեան և կրօնասէր խաւերի։ Թատրոնական ներկայացումներին հակառակ էին նոյն իսկ քաղաքային վարչութիւնները, երևի այն պատճառով, որ թատրոնը այն ժամանակ տակաւին տաճարի կերպարանք չունէր, այլ աւելի շուտ բալագանի բնոյթ էր կրում։ Լոնդոնի խաղաղ ազգաբնակութիւնն իսկ դէմ էր թատրոնին, երբ նա կառուցւում էր իրենց բնակարանների մօտ, քանի որ թատրոն յաճախող հասարակութիւնը վերին աստիճանի անկարգապահ էր, ազմկաբարկուտաբար։ Ներկայացման օրերին թատրոնների շուրջը այնպիսի հարահրոց էր տեղի ունենում, այնպէս էր ժողովուրդը խռնւում մերձակայ փողոցներում, որ գրեթէ ամեն շարժում նեղ ու կեղտոտ փողոցներում կանգ էր առնում։

Թատրոնները կառուցւում էին քաղաքի սահմաններից դուրս։ Երկու կարգի էին թատրոնները՝ մասնաւոր և հասարակական։ Մասնաւոր թատրոններն, ըստ երևոյթին, աւելի «ընտիր» հասարակութեան համար էին, իսկ հասարակականները՝ ստորին խաւերի։

Լոնդոնի ամենայայտնի թատրոնը հռչակաւոր ոգբեդգակ գերասան Բօրբէյջի թատրոնն էր, որ կրում էր «Գլոբուս» անունը։ Բօրբէյջը հակայական դումարներ էր ստանում ներկայացումներից, որովհետև նրա թատրոնը ժամանակի երկու մեծութիւններն էին զարգարում. մէկը ինքը տաղանդաւոր Բօրբէյջն էր, միւսը՝ հանճարեղ գրամատուրգ Վիլիամ Շէքսպիրը։ «Գլոբուսը» կառուցւած էր նոյն թէմզայի ափին, մի ընդարձակ հրապարակի վրայ։ Դա մի վեցանկիւնանի բուրգի ձև ունեցող ահագին փայտեղէն շէնք էր, որի միայն քեմը ծածկւած էր կտուրով, իսկ պարտերը (par-terre), ուր տեղաւորւում էր հասարակ

ամբոխը, բացօդեայ էր։ Գալլերիա՝ ժամանակակից մոդով գրուած չունէր։ Պարտերը գուրկ էր ամէն տեսակ յարմարութիւնից, չունէր նոյն իսկ նստարաններ։ Հանդիսականները ամբողջ ժամանակ պէտք է ոտքի վրայ մնային։ Բեմը միացած էր օթեակներին, որոնք յատկացուում էին պետական «բարձրաստիճան» անձանց։ Բեմը պատուլից բաժանուած էր երկաթէ ճաղերով։ Թատրոնի դարպասի վրայ կանգնեցուած էր Հերկուլէսի հսկայ արձանը, գլխին դրած երկրագունդի կրող խորհրդանշանը։

Ներկայացման օրերին Լոնդոնի փողոցներում մի տարօրինակ շարժում էր նկատուում,—գրում է նկարագրողներից մէկը։—Ամբոխի մարդիկ, լօրդեր, ազնուականներ՝ քառաձի կառքերով կամ ձիերով, իսկ հասարակ դասը ցեխը տրորելով, ամենքը դիմում էին դէպի Թատրոն։ Ի՞նչն էր սակայն պատճառը, որ այդքան մեծ էր իրարանցումը Թատրոնի շուրջը։ Պատճառը Շէքսպիրի նորագոյն ողբերգութիւններից մէկն էր, որի համար այնքան պատրաստութիւն են տեսել «Գլոբուսի» տնօրէնը և ամբողջ դերասանական խումբը։ Ճիշտ է, թէ՝ Շէքսպիրը հասարակութեան պաշտելին, բացակայում էր և վերջին տարիներս նա հանգիստ ու անխռով անց էր կացնում իր հայրենի Ստրատֆորդում, բայց նրա հմայքն այնքան մեծ էր, որ յաճախորդները շտապում էին ժամ առաջ Թատրոն՝ նախապէս տեղ բռնելու համար։ Ներկայացումը խոստանում էր լինել չափազանց հետաքրքրական, նրանց փայլուն, բոլոր զգեստները նոր էին, ողբերգութեան գլխաւոր դերը կատարում էր ինքը Ռիչարդ Բուրբէյջը, որի անունը միայն բաւական էր՝ խանդ ու ոգևորութիւն ներշնչելու ամբոխին։ Բուրբէյջը նոյն հեղինակութիւնն էր վայելում յաճախորդների մէջ՝ որպէս դերասան, ինչպէս Շէքսպիրը՝ որպէս դրամատուրգ։

Տեղերի գները այս անգամ կրկնապատկուած էին, բայց ինչ գներ էին դրանք. տեղերի մեծ մասի արժէքը երեք կոպէկից աւելի չէր։ Թանգ էին միայն բեմի և օթեակների տեղերը։

Թատրոնը լցուում էր հոծ բազմութեամբ. պարտերի հասարակութիւնը ոտքի վրայ էր, բեմինը մասամբ միայն նստած, որովհետև նստարանների թիւը սահմանափակ էր, և ուշացողներն, ստիպուած էին կամ կանգնել պատերի մօտ կամ նստել խարիսների վրայ։

Մոնաւ ու վատ եղանակը պարտերի բազմութեանը չէր էլ անհանգստացնում. անասելի ազմուկ ու աղաղակի մէջ՝ ոմանք կազին էին կուտրում ուտում, ոմանք խնձոր ու նարինջ, իսկ ոմանք էլ գարեջուր խմում։ Ներկայացումն սկսուում էր մօտաւորապէս ժամը 3-ին ցերեկը, և յաճախորդներից շատերը, որոնք վաղ առաւօտից եկած էին լինում, ճաշն էլ իրենց հետ էին բերում։ Տեղի համար յաճախ թիւրիմացութիւններ էին ծագում և երբեմն բանը տուր ու դմբոցի էր հասնում։ Հասարակութիւնը անհամբեր էր. աղմկում, ցեխ ու զանազան իրեր էին շպրտում դէպի բեմի վարագոյրը, որ շուտ սկսի ներկայացումը։ Բեմի «պատուաւոր» հասարակութիւնը նոյնպէս իր զբաղմունքներն էր ունենում. այստեղ թղթախաղով էին զբաղուում, ծխում, սրախօսութիւններ անում, երբեմն վարագոյրի արանքից պարտերի յանդուգն բազ-

մութեան հասցէին խօսքեր շպրտում։ Սկսւում էր մի նոր անասելի աղմուկ. պարտերից բեմ էին թռչում փտած խնձորներ, փայտեր, ցեխակոյտ, նոյն իսկ քարեր, որոնք յաճախ պատռում էին կտաւէ վարագոյրը։ Միևնոյն ձևով պատասխանելու մէջ ետ չէին մնում բեմի աղնւական ջահիլները...

Բայց երբ մօտենում էր ներկայացման սկիզբը, սպասաւորը դուրս էր բերում մի տախտակ «Լոնդոն» մակագրութեամբ և նախաբեմում ամրացնում վարագոյրին։ Դրանից յետոյ միայն հասարակութիւնը հասկանում էր, որ գործողութիւնը կատարւում է Լոնդոնում։ Բացւում է երկուսի բաժանւող վարագոյրը, և ուրիշ սպասաւորներ սկսում են «զարդարել» բեմը. պատերից կախում են մի քանի գորգ, գորգերին ամրացնում սև կարտօն՝ խաչաձև սպիտակ երիզագծով. դրանք պատուհաններ են։ «Զարդարանքը» ցոյց է տալիս, որ գործողութիւնը կատարւում է սենեակում։ Առաստաղից ցած են թողնում մի սև կտոր. նշանակում է՝ ժամանակը գիշեր է։ Բեմի յետին մասում երևում է մի փոքրիկ բարձրութիւն, ծածկւած մի այլ կտորով. դա սար է, պատշգամբ է, տախտակամած կամ տան կտուր, նայած թէ պիէսն ինչի կարիք ունի։ Այստեղ է օրինակ, տեղի ունենում Ռոմէոյի և Ջուլիէտի պատշգամբի յայտնի տեսարանը. այստեղ է նաև Մակբէթի ամրոցը։ Այդ բարձրութեան երկու կողմը դրւած են ուրիշ կարտօններ. մէկի վրայ ծառ է նկարած, որ նշանակում է անտառ կամ պարտէզ է, միւսի վրայ՝ խաչ կամ գերեզմանաքար, որ նշանակում է եկեղեցի է կամ գերեզմանատուն։

Նրանց կողքին դրւած է մի սեղան. եթէ սեղանի վրայ թանաք և գրիչ լինի, ապա բեմը դատաւորի ատեանն է ներկայացնում, իսկ եթէ շիշեր և բաժակներ՝ պանդոկ։

Բեմի աղքատութիւնը սակայն հանդիսատեսին չէր ընկճում. նա գինւում էր իր վառ երևակայութեամբ և բեմի վրայ շարժւող 5—6 գինւորներին բանակի տեղ ընդունում, և գինւորական մի թմբուկի ձայնը պատկերացնել էր տալիս Յուլիոս Կեսարի, Կօրիոլանի, անգլիական թագաւորների ռազմական շարժումները։

Բեմը պատրաստ է. ահա և դերասանները՝ մէկը միւսի ետևից անցնում են բեմով, մտնում վարագոյրի ետևը հագնւելու։ Դերասանների մէջ ոչ մի կին չը կայ. բոլոր դերակատարները տղամարդիկ են։ Կանանց դերերը, նոյնիսկ Շէքսպիրի իդէալական տիպերի,—Դէզդէմօնայի, Օֆէլիայի և Կօրդէլիայի,—կատարում էին երիտասարդ դերասանները։ Հանդէս է գալիս դերասաններից մէկը, գլխին պսակ դրած, և արտասանում դրամայի նախերգանքը։ Աղմկող ու շարժւող բազմութիւնը վայրկենապէս լռում էր և լարւած լսողութիւն դարձած՝ հետեւում ներկայացման։

Այսպէս էր տեղի ունենում ներկայացումը Շէքսպիրի ժամանակ։

Արդ՝ նման թատրոնում զարգանում ու բարգաւաճում է անգլիական դրաման, զարգացնում, բեղմնաւորում է իր հանճարը Շէքսպիրը. նման թատրոնում են ծնունդ առնում այնպիսի համաշխարհային ող

բերդութիւնները, որպիսիք էին «Համլէտը», «Արքայ Լիրը», «Ցուլիոս Կեսարը» և այլն։

Դրամատիկ գրուածքների ձևերը Անգլիայում գոյութիւն են ունեցել միջին դարերում. այդ ձևերն են եղել միստերիան՝ կրօնական բովանդակութեամբ, մորալիտէն՝ բարոյադիտական տենդենցով և ֆարսը՝ թեթև ժանրի կատակերգութիւն, որոնք իրենց զարգացման յետագայ շրջաններում հասել են ողբերգութեան և լուրջ կոմէդիայի ձևերին։ Դրամայի զարգացման գործին նպաստել է նաև մշտական թատրոնի գոյութիւնը Լոնդոնում, որի շուրջը խմբուած գործում էին թէ դերասանական խմբերը և թէ դրամատուրգները։ Վերևը մենք յիշել էինք, որ դերասանական խմբերի գոյութիւնը պայմանաւորուած էր այս կամ այն լորդի պալատին պատկանելով։ Այդ հանգամանքը որոշ սահմանափակումներ էր դնում թատրոնի զարգացման հանդէպ. դերասանական խմբերը չէին կարողանում իրաւունք ձեռք բերել ազատ ներկայացումներ տալու։ Միայն 1574 թ-ին լորդ Լէյսթէրը կարողացաւ իրաւունք ստանալ պալատից՝ իր դերասանական խմբի համար ներկայացումներ տալու ոչ միայն Լոնդոնում, այլ և գաւառներում։ Բացի այդ, թատրոնի զարգացման գործը աննպաստ պայմանների մէջ կը մնար, քանի բեմական արուեստը, կղզիացած լինելով լորդերի ու մեծատունների փակ պալատներում, պէտք է միայն աղճատման ենթարկուէր։ Այստեղ արուեստը ամենից առաջ պէտք է ծառայէր խմբի պալատական տիրոջ քմահաճոյքներին ու կամքին։ Բաւական չէր, որ դրամայի նիւթն ամբողջովին պալատական բնոյթ էր կրում, այլ և շատ անգամ արուեստի բուն «հովանաւորը» ինքն էր միջամտում բեմական ներքին ու արտաքին գործին և թելադրում փոփոխութիւններ և ուղղումներ՝ ներկայացուող պիէսների համար։ Այսպէս՝ բեմական արուեստը, ինչպէս նաև գրականութիւնն ու մամուլը առ հասարակ, զուրկ են եղել իրենց զարգացման գլխաւոր նախապայմանից՝ ազատութիւնից։

Արիստոկրատական ճղճիմ, նեղ միջավայրից դուրս եկած և հասարակական դարձած թատրոնը միայն մի որոշ ազատութիւն հաղորդեց նրան։ Այստեղ դերասանական խումբը գործում էր անկախ, աւելի սերտ յարաբերութիւնների մէջ մտնելով թատրոն յաճախող հասարակութեան հետ։ Շէքսպիրն իր գործունէութեան առաջին երկուերեքը շրջաններում գործել է անկախ ու ազատ։

Մշտական թատրոնների կառուցման առաջին տարիներում անգլիական դրաման տակաւին գտնւում էր անկերպարան վիճակի մէջ. նա տակաւին մնում էր անցեալի պատկերներով ու հերոսներով։ Բեմ էին հանւում ամեն ձևի բեմական գրուածքներ, գլխաւորապէս դրամատիքական քրոնիկներ ու այսպէս կոչուած արիւնային դրամաներ։ Պատմական արիւնալի մի փաստ, եղեռնագործութեան ամենասոսկալի օրինակը բաւական էր, որ իր անպաճոյճ ձևով ցուցադրուէր միմիայն հանդիսատեսի ջղերը ցնցելու նպատակով։ Գեղարուեստական մշակումը նիւթի՝ զանց էր առնուած միանգամայն։ Դրամատիքական քրոնիկների կամ արիւնային դրամաների յատկանիշներից գլխաւորն այն էր, որ

նրանց հերոսներից գրեթէ ոչ մէկը բեմի վրայ չը պէտք է ողջ մնար. սպանում ու սպանւում, մորթում ու մորթոտւում էին բոլորը՝ իբր թէ որոշ նպատակի համար։ Իսկ եթէ բեմի վրայ մնում էր մէկը, ապա նա ևս յաճախ ինքն էր վերջ տալիս իր կեանքին, և այդպիսով դրամայի գլխաւոր հերոսը դառնում էր արիւնը։ Դրամայի այսօրինակ հիւսուածքը այնքան տիրապետող էր անգլիական գրականութեան մէջ յիշեալ դարաշրջանում, որ այդ մեծ թերութիւններից զերծ չէ մնացել անգամ հանճարեղ Շէքսպիրի ողբերգութիւններից գրեթէ և ոչ մէկը։ Վերցնենք թէկուզ «Համլէտն» ու «Օթէլլոն», «Մակբէթն» ու «Լիր Արքան». դրեթէ բոլոր հերոսները մեռնում են, իրար սպանում, ոչնչանում, բեմը թողնելով արեան ծանր մղձաւանջի տակ։

Պատճառը հասկանալի է. թատրոնական բեմը կեանքի մի անկիւնն է, ուր անդրադառնում էր միջավայրն իր ողջ կերպարանքով։ Բռնակալ արքաների գահ բարձրանալու ձգտումը միշտ էլ արիւնով էր վերջանում. գահին տիրելու համար արքաներն իրար յօշոտում էին։ Եւ դրամայի կոպիտ կեանքը կոպիտ գծերով էլ անդրադարձնում էր, տալով արիւնալից պատկերներ։

Սուրխաթեան

ՀԱՄԼԷՏԻ ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐԸ ԴԵՐԱՍԱՆՆԵՐԻՆ

ՇԷՔՍՊԻՐ

Համլէտ.—Արտասանիր մենախօսութիւնը, խնդրեմ, ինչպէս որ քեզ ցոյց տուի, թեթև և սպաս. բայց եթէ դու որոտաս, ինչպէս մեր դերասաններից շատերը, ապա աւելի ուրախ կը լինէի, որ մուեզինները արտասանեն իմ տողերս։ Ինչպէս չափից աւելի օդը մի սղոցիր քո ձեռքով, այսպէս..., այլ թող շարժումներդ չափաւոր լինեն, որովհետև կրքերի ամենաստոր հեղեղի, փոթորկի և, այսպէս ասենք, ալեկոծման ժամանակ՝ դու պէտք է պահես բաւական ինքնիշխանութիւն, որ այդ բոլորին մի տեսակ փափկութիւն տայ։ Օ՜հ, դա հոգիս տանջում է, երբ տեսնում եմ մի յապճեռնգամ մարդ՝ գլուխը կենդանով ծածկած՝ պատառոտում է կիրքը և մաս-մաս անում՝ ստոր տգիտի ականջները ծակելու համար, իսկ խուժանը առհասարակ ընդունակ չէ մի բան հասկանալու, եթէ ոչ անբարոյական մենջկատակներ և գոռում գոչում։ Ա՜խ, ես կուզէի մտրակի տակ ձգել այդ տեսակ մարդուն, որ Տերմականդի *) դերը չափազանցում է և Հերովդէսից աւելի հերովդէսանում։ Խնդրում եմ, հեռու կաց այդ չափազանցութիւններից։

Ո՛չ էլ չափից աւելի փափուկ եղիր. այլ թող քո անփոփոխան դա-

---

*) Մի երիտասարդական էսք, որ խաչակիրների կարգերով մի մահմեդական շտապում էր. առհասարակ խաչակիրները մահմեդականներին չէին դիմադրում կռապաշտներից։ Այս մատնացոյցին անձնազոհութիւնը անգլիական հին քաջութիւնից և սովորներից մէջ շատ անգամ՝ առաջ բերուած և նրան վերագրելիս են ձգել շատ խիստ և տարտափելի բնաւորութիւն, այնպէս որ մի պոռոտախօս և ըմբշտուոց դերասանի Տերմականդի դերը շատ էր յարմարում։

Ե. Թ.

տողությունը լինի քո առաջնությունը. յարմարվեցրու գործողությունը բառերին, բառերը՝ գործողության, յատկապես ուշադրությունն դարձնելով, որ բնականի պատշաճությունից դուրս չելնես. արվեստն ինքնքան որ այդպես չափազանցված է, շեղում է նենգությունների պաշտպանից, որի նպատակը, թէ իր ծագման մէջ և թէ այժմ՝ եղած է և է հանդիսացնել իսկությամբ մի բնության հայելի. ցոյց տալ առաքինությանը՝ իր սեփական դէմքը, ծաղրելիին՝ իր երեսը, և ժամանակի տարիքին ու մարմնին՝ իր ձևը և տիպը։ Հիմա այս բանը, եթէ չափազանցես կամ եթէ թերի թողնես, թէև տգէտներին ծիծաղ կը պատճառէ, այլ հասկացողներին անպատճառ կը վշտացնէ. և դու պէտք է մէկ հասկացող մարդու կարծիքը գերադասես մի ամբողջ թատրոն տգէտների կարծիքից։ Օ՜, դերասաններ եմ տեսել (և լսել, թէ ուրիշները ինչ բարձր գովեստներ են տալիս նրանց), որոնք անպատշաճ կերպով չը խօսելու համար՝ ոչ քրիստոնէի շեշտն ու քայլուածքն ունին, ոչ էլ հեթանոսի, ոչ էլ ադամորդու. այլ այնպէս խրոխտում էին, գոռում, որ ես մտածել եմ, թէ անշուշտ բնության ստոր գործակալներից մէկը պէտք է շինած լինի մարդկանց, և այն էլ ոչ թէ լաւ շինած, քանզի մարդկության այնքան զզուելի նմանությունները էին նրանք։

Օ՜, հիմնովին վերանորոգեցէք այդ բոլորը, և թող ձեզնից նրանք, որոնք ծաղրածուի դերն են կատարում, իրենց դերից դուրս բան չասեն, որովհետև դերասաններ կան, որ իրենք ծիծաղում են, որպէսզի մի քանի տխմար հանդիսականների ծիծաղը շարժեն, այն էլ մի այնպիսի ժամանակ, երբ խաղի մի կարևոր կէտը լուրջ ուշադրություն է պահանջում. զզուելի է այդ և ցոյց է տալիս այդպիսի միջոցի դիմող յիմարի ողորմելի փառասիրությունը։ Գնացէք, պատրաստեցէք։

ՍԿՍՆԱԿ ԳՐՈՂՆԵՐԻՆ

Ա.

ՄԱՔՍԻՄ ԳՈՐԿԻ

Դրականագէտը պիտի կարենայ՝ տպաւորությունների քաոսից, ոչայմունքների խայտաճամուկ խճճուածքից ջոկել ու հանել առարկայականը, հանրարժէքն ու տիպիքականը. պիտի կարենայ դէն ձգել նեղ-անձնականն ու անհատականը, որոնք անկայուն են, յարափոփոխ, վաղանցիկ և անհետ չքացող։ Եթէ նա կարողանայ ղեկավարուել առաջին նախապայմանով, — ապա ուրեմն կստեղծի գեղարուեստական մի գործ. իսկ եթէ չը կարողանայ, այսինքն՝ դէն չը ձգի նեղ-անձնականն ու անհատականը, — այդ դէպքում նա կը գրի անեկդոտ, որը զուրկ կը լինի հանրակրթական նշանակությունից։ Իւրաքանչիւր արուեստ—գիտակցօրէն թէ անգիտակցաբար—իրեն նպատակ է դնում՝ զարթեցնել մարդու մէջ կեանքի տեսել երևոյթի հանդէպ՝ այս կամ այն վերա-

բերմունքը։ Հենց այդ նպատակն են առաջադրում «արուեստը արուեստի համար» սկզբունքի կողմնակիցները, որոնք գերազանցապէս միտուժաւոր գրողներ են։

Գրել՝ այդ նոյնն է թէ նկարել։ Պէտք է գտնել բնաւորութեան աւելի կայուն գծեր տուեալ մարդու մէջ, անհրաժեշտ է աւելի խոր ըմբռնել նրա գործողութիւնների իմաստը և գրել այդ մասին ճշգրիտ, գունագեղ բառերով, որպէսզի գրքի էջերից, բառերի հիւսուածքից ընթերցողը տեսնի մարդու կենդանի դէմքը, որպէսզի վերջինիս զգացմունքների և գործողութիւնների կապը պատմուածքի մէջ նրան թւայ անվիճելի։

Ճշմարիտ արուեստը հանդէս է գալիս այնտեղ, ուր ընթերցողի և հեղինակի միջև ստեղծւում է սրտագին վստահութիւն միմեանց նկատմամբ։ Գրողի կոչումն է՝ արտահայտել տիեզերքի ու մարդկանց վերաբերմամբ այն ամենը, որով առլցուն է նրա տպաւորութիւնների անոթը, այսինքն հոգին։ Եւ երբ գրողն «ի խորոց սրտի», որպէս իր լաւագոյն ընկերոջ հանդէպ, խօսում է մեր կեանքի խնդութեան ու վշտի, վատի ու լաւի, ծիծաղաշարժ ու ստոր կողմերի մասին—նա կը հասկացւի և ընթերցողի կողմից կը ճանաչւի իբրև մօտ ընկեր։

Բ.

Ա. ՉԵՆԻՆ.

Սկսնակ գրողի մասին կարելի է կարծիք յայտնել՝ ամենից առաջ գրուածքի լեզուն ի նկատի ունենալով։ Եթէ հեղինակը «ոճ» չունի, նա չի կարող երբէք գրող դառնալ։ Իսկ եթէ ունի ոճ, իր ուրոյն լեզուն, նա՝ իրրև գրող՝ անյուսալի չէ։ Այդ դէպքում կարելի է գտնել նրա գրուածքների միւս կողմերի մասին։

Սկսնակ գրողները յաճախ պէտք է գրուածքը ծալեն մէջ տեղից և պատռեն առաջին կէսը։

Սովորաբար սկսնակները աշխատում են, այսպէս ասած, «ներածութիւն տալ», և ստեղծագործութեան կէսն այդպիսով իզուր գրում։ Մինչդեռ պէտք է գրել այնպէս, որ ընթերցողն, առանց հեղինակի բացատրութեանց, պատմուածքի ընթացքից, գործող դէմքերի խօսակցութիւնից, նրանց վարմունքից ըմբռնի, թէ բանն ինչումն է։ Փորձեցէք կտրել ու մի կողմը նետել ձեր պատմուածքի առաջին կէսը, ձեզ կը մնայ՝ փոփոխել փորը ինչ երկրորդի սկիզբը, ու պատմուածքը միանգամայն հասկանալի կը դառնայ։ Եւ ընդհանրապէս հարիւրը չէ ոչ մի աւել բան։ Այն ամենը, ինչ որ անմիջապէս կապ չունի պատմուածքի հետ, անխնայ կերպով դուրս պէտք է ձգել։ Երբ դուք պատմուածքի առաջին գլխի մէջ ասում էք, թէ պատից կախուած է հրացան, երբորդ կամ երրորդ գլխում անպայման պէտք է տրտնջի այդ հրացանը։ Իսկ եթէ չի տրտնջում, չը պէտք է կախուած լինի։ Բացի այդ, կարևոր է պատմուածքն աւելի աշխոյժ, ֆանտազիայ դարձնել, խօսակցութիւններն ընդհատել գործողութիւններով։ Սկսնակ գրողի հերոսն ընդհանրապէս սիրում է խօսել։ Այդ ոչինչ, բայց նա չը պէտք է անընդհատ խօսի

[illegible] հրամանները։ Հիմա [illegible] պիտք է հարկադրեն, որ վերը կենալ [illegible] անի, ծիծ ու կանգնել պատուհանի մոտ...

Իսկական գրող դառնալու համար՝ պիտք է [illegible] գործին նվիրվել։ Դիլետանտությունն այսանով, [illegible] թոյլ տայ հետս գնալ։ Այս, [illegible] է ոչ միայն տարազով, այլ և աշխատանքով։ Պիտք է աշխատել, [illegible] որ հարկն է։ Եվ ամենից առաջ լեզվի նկատմամբ։ Պիտք է [illegible] անել խօսքի, բառի մէջ։ Դուք ուշադրություն տուել եք հնչյունի [illegible] Անագին պարբերություններ, խօսքեր կուտակած են իրար վրայ։ [illegible] կարծէք, թէ այդ պատահական է կամ թերություն։ Դա արվեստ է, որ ձեռք է բերում աշխատանքի շնորհիվ։ Այդ պարբերություններն [illegible] են բերում զօրեղ տպավորություն։ Անասելի կարդում ենք [illegible] Հեռաքրքիր լեզու, ուրախի հարուստ մոգության։ Ոչ գեղեցիկ [illegible] լեզու, քան Լերմոնտովինը։ Եվ այսպէս կանէր։ Կը վերցնէր [illegible] պատմածը և կը վերլուծէր ամիսներ այնպէս, ինչպէս [illegible] վեր են լուծում քար խօսքերի։ քար մասանց բանի... Այդպէս [illegible] սովորէի գրել...

Իսկական գրողը նոյնն է, ինչ որ վարպետ մարդը։ Դա [illegible] նում է աւելի պայծառ, քան սովորական մարդիկ։

Բարգմ. Ֆ. Մելքոնյան

ԹԱՓԱՌԻԿ ՍԻՒԺԷՆԵՐ

Ա. ՎԱՍԻՆԵՐ

Գրականության գիտական պատմությունն՝ ընդարձակորեն ապաւելով համեմատական-պատմական մեթոդի ձեռքից, [illegible] հաստատել է, որ գրականության նկատմամբ՝ ժողովուրդների փոխադարձության փաստն անժխտելի է։ Գրականության գիտական պատմությունն ըստ ամենայնի պարզորոշ կերպով ապացուցել է, որ հինգ միլիոնոյն գրական սիւժէները երկար ժամանակ պատուում են համաշխարհային գրականության շուրջը, հանդէս գալով գանազան ձևերի մէջ և կերպարանափոխելով ժամանակի ու տեղի պայմանների ազդեցության տակ։ Իւրաքանչիւր երկիր, իւրաքանչիւր գրաշրջան՝ իրենց անջնջելի երանգն են դրոշմում գրական երկի վրայ, իսկ սիւժէն իր հիմնական ու ընդհանուր կողմերով մնում է գրեթէ նոյնը։ Դուր չէր, որ դեռ Վալտեր Սկոտը նկատել էր, թէ գրականության շուրջը պատուող մարդկության մտաւոր կապիտալն այնքան էլ մեծ չէ, ինչպէս երևում է այդ առաջին հայեացքից։ Այն, ինչ որ մի շրջանում եղել է առասպել, յետագայ սերնդի ժամանակ ստանալի է վերածվել, իսկ էլ աւելի ուշ՝ մանկական հէքիաթի, կամ՝ հէքիաթը դառնում է ողբերգություն, յետոյ պոէմայ և պատմվածք։ Ժամանակակից հեռախոսն արդէն չի զարմանում, երբ նորտպոյն վիպասանի կամ

դրամատուրգի ժողովրդական երկասիրության մէջ նկատուում են գծեր, որոնք ընդհանուր են տիրեթական ինչ որ հէքիաթի կամ Գովկասի լեռնական ցեղերի առասպելի մէջ։ Գրական հանճարների գլուխ-գործոցները մեծ մասամբ հիմնուած են ժողովրդական այդպիսի թափառիկ հէքիաթների, լեգենդաների ու պատմուածքների վրայ, և մերօրեայ բծախնդիր, մանրակրկիտ քննադատութիւնը յաճախ որևէ թխածոյ, անճահ գրուածքի կամ հնագոյն ձեռագիր ժողովածուի մէջ երևան է բերում աղբիւրներ, որոնք տեղ են գտել Շէքսպիրի, Գէօթէի, Լև Տոլստոյի գեղարուեստական երկերում։

Այդօրինակ թափառիկ սիւժէների պատմութեան վերաբերմամբ եղած դիտողութիւնները հետախոյզի համար մշտապէս առաջ են բերում մեծ հետաքրքրութիւն։ Կարևորը այնչափ էլ ընդօրինակութեան փաստը չէ. հետաքրքիրն այստեղ գրական սիւժէի բազմապիսի վիճակն է և այն կերպարանափոխութիւնը, որպիսին նա ստանում է այս կամ այն ժողովրդի պատմուածքի մէջ, այս կամ այն հեղինակի գրչի տակ։ Թափառիկ սիւժէների պատմական ճակատագիրը նիւթ է հայթայթում ժողովրդի հոգեբանութեանը վերաբերող ընդհանուր հարցերը լուծելու և գեղարուեստական ստեղծագործութեան ձևերն ուսումնասիրելու համար... Վերջապէս հեղինակի անձնական-անհատական գծերն ամենից աւելի պարզորոշ են գուրս գալիս այդ տեսակ աշխատութեանց մէջ. գծեր, որ ընդհանուր են մի շարք հեղինակների գործերում։

Թարգմ. Գ. Մելոյեան

ՆՄՈՒՇՆԵՐ ՏԱՂԱՉԱՓՈՒԹԻՒՆԻՑ ԵՒ ՈՏԱՐԱՆՈՒԹԵԱՆ ՋԱՆԱՋԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՑ

(Կարելի է գտնել հետեւեալ հատուածների և առանձնաւորների մէջ)

Երես

1. Մակդիրներ (Էպիտետ). 6, 17, 431, 441, 466—473, 560, 562, [594, 598:
2. Համեմատութիւն կամ բաղդատութիւն. 233, 419, 431, 441, 467, [468, 475:
3. Զուգազանցութիւն (Հիպերբոլա). 233, տես՝ Էպոսի և Հեքիաթի [բաժիններում:
4. Փոխաբերութիւն (Մետաֆորա). 369, 370, 372:
5. Այլաբանութիւն (Ալլեգորիա). 5, 6, 337—348, 425, 429, 481:
6. Փոխանունութիւն. (Մետոնիմիա) 352, 353—356, 379—384:
7. Հնարք կամ խելամտութիւն (Մինեքդոխա). 353, 354, 355, 356, 561
8. Ոճի պատկերաւորութիւն
   ա. Ալեկոծութիւն. 186, 187, 211:
   բ. Տեսողական. 162, 163, 496, 506:
   գ. Շարժում. 265, 271, 272:
   դ. Անդորրութիւն. 261, 263:
   ե. Մրրիկ. 263, 266, 267:
   զ. Գոյն (Հրագոյն). 285:
9. Ոճի յուզող ոյժը (Էմոցիոնալ ոյժը). 263, 264, 265, 335, 413, [538. 592:
10. Դիմաւորութիւն. 481, 490:
11. Ծաղր և հեգնութիւն. 375—379:
12. Ոճի երաժշտականութիւն. 534, 539, 540:
13. Հնարանութիւն (արխայիզմ). 240—257, 278—284:
14. Գուսանաբանութիւն. 358—366:
15. Ալիտերացիա (Նմանահնչիւնութիւն). 210, 239, 464—473, 532, [533, 539, 540, 541, 560:
16. Բառերի կրկնութիւն. 120, 123, 464—473, 505, 507, 508, 547, [560, 561:
17. Ոտանաւորի ոլթմը. 6, 17, 45, 46, 51, 54, 61, 149, 185, 220, [257, 289, 440, 473, 508, 520, 540, 546, [556, 565:
18. Ջօրէյ-Մեծասար. 534:
19. Նամք-Մեծումերջ. 417, 534, 544, 545:
20. Անապեստ-Վիրջուսանջ. 519, 520, 534, 538, 540:
21. Ամ Ֆիբրաքուս-Ջուղաբօտ. 534, 545:
22. Խաղն շափեր. 488, 489, 493, 496, 499, 534, 536:
23. Հայկական շափ. 149, 161, 172, 200, 209, 286, 466, 507, 508, [535, 547, 548:
24. Դեղարուեստական սիմվոլիկ պատկեր. 271, 272, 611, 612, 615:
25. Սոնէտ. 541, 542, 594, 605:
26. Արական և իգական յանգ. 470, 472, 473, 481:
27. Ընդհատուած խօսք. 228, 229:

28. ԳՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹԻՒՆՆԵՐ.
   ա. Դեղարուեստական բէալիզմ.—«Համլէտ», «Պէպօ», «Անուշ»:
   բ. Ռոմանտիկական.— «Դեւ», «Աբու Լալա Մահարի», «Հարճ»:
   գ. Սիմվոլիկական.—«Հին Աստուածներ»:

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Ներկայ հատորում պէտք է գետեղէին Խորասուզուած զանգը, Պատի համար եւ Դատաստան պիէսները, սակայն տեխնիկական պատճառները և առաջինի ուշ ստացուելը՝ արգելք եղան գետեղելու յիշեալ գործերը։

2. Էպոսի տեսակներ կազմելիս՝ ի նկատի է առնուած նաև Օվսեաննիկօ-Կուլիկովսկու «Теория прозы и поэзии» գիրքը։

3. Սասունցի Դաւթի երկրորդ վարիանտի՝ («Ջոջանց տուն») վէպի հատուածը գետեղել ենք գլխաւորապէս նրա չափական կտորների պատճառով։

4. Հոմերի Իլիականը և Ոդիսականը հարկ եղաւ գրաբարից աշխարհաբարի վերածել՝ առաջինի անմատչելի լինելու պատճառով։ Այդ աշխատանքը կատարել է Դեր. Դեմիրճեանը։

5. Շահնաման, Ս. Գիւլզադեանի թարգմանութեամբ, նոյնպէս պակասաւոր է եղել հայերէնում՝ իր հնարանութիւններով ու անհարթութիւններով։ Հարկ եղաւ մշակել լեզուն։

6. Էնէականը բնագրից թարգմանել է Արսէն Դասգիկեանը արևմտահայ բարբառով։ Անհրաժեշտ համարեցինք նոյնը վերածել արևելահայ բարբառի՝ աւելի մատչելի դարձնելու համար։

7. Ընձեանուորից հատուածները թարգմանուած են «Կռունկի» մէջ Թիֆլիսի բարբառով։ Թարգմանիչն է Սարգիս Գ. Մելոյեանը վերածեց գրական բարբառի։

Ընձեանուորի նախերգանքը գետեղում ենք Վ. Տէրեանի թարգմանութեամբ։

8. Բանաստեղծներից մի քանիսի բնորոշումը դիտմամբ չենք գրել, որովհետև նրանց արժէքը լիրիք բանաստեղծութեան մէջ չենք որոնել։ Գրուած կտորներն էլ գրողի դէմքը չեն բնորոշում (Ի. Պատկանեան, Ս. Շահազիզ, Մ. Նալբանդեան, Ղ. Աղայեան և այլն)։ Նրանց արժէքը գրական այլ տեսակների մէջ պիտի որոնել՝ գրքիս երկրորդ հատորում։

9. Նորագոյն լիրիքներից միայն ընտիր և ժամանակակից բնոյթ ունեցող գրուածքներն ենք գետեղել։ Ազգայնական, կրօնասիրական և նման տրամադրութեամբ գրուածքներին տեղ չենք տուել, թէև հեղինակներին բնորոշելիս՝ ի նկատի ենք ունեցել նրանց բոլոր գրական գործերը։

10. Շէքսպիրի Համլէտը ստիպուած ենք եղել դնելու Յան-Մասէհեանի թարգմանութեամբ, որը իր անհարթութիւնների, արխայիզմի ու որոշ տեղերում ունեցած անճշտութիւնների շնորհիւ՝ կարօտ է հիմնական ուղղութեների։

ԲԱՌԱՐԱՆ

Համառոտագիրներ՝ Ռուս.-առոգներեն, յատկ.-յատկներեն, պր.-պարսկներեն, փրանս.-փրանսներեն

Ա.

Ադաբ—պր. համեստութիւն.
Ադալաթ—արդարութիւն.
Ազիզ—պր. նազելի, յարգոյ, չընաշխարհիկ.
Ալապաստր—թափանցիկ մարմարիոն.
Ալամ, ալեմ—արաբ. աշխարհ.
Ամլի—պէտք է լինի կամ անալիանեղ, կամ անթլի—թուրքդաշնաւոր.
Ամ ու զար—ահ, սարսափ.
Աղբերանց արիւն—Հայաստանում աճող կարմրագոյն ծաղիկ.
Աղծապիղծ—պիղծ, գարշելի.
Անապ—թուրք. արգեօք.
Ամա—համար, վասն.
Ամպուզոլ—«ամպշող», ամպամած օդի ջերմութիւն.
Ամպրաւ, ամբաւ—արմաւ.
Այնիքանդ—փոքրիկ հայելիներով արուեստաւոր պատած.
Անբար—բուրկէն, ambra.
Անգաճ—ականջ.
Անգործիլ—չը գործած, չ'ոստայնած.
Անդուլամ—պր. անգրիչ. դալամ քաշած—նկարած.
Անընդել—չընտելացած.
Անմիղ—անմեղ.
Անուպայ—կոպիտ, անկիրթ, տրմարդի.
Ամուլթ—թանկ տուկ.
Ամրոսկ—ներկերի վանդակը, տանելի նեռ վիճակնով վիզի տակի աջ ու ձախ տակրանները.
Ակտանակիլ—նեղնեղ, ոլորանացած վանդնեղ.
Ակրբել—նեղնել, ցաւեցնել.
Ապրշում, ապշրշում—պր. մեռոտքի թեղ.
Առնաքաղ—ոգեսոսոգ ցանկացող ելն.
Առնաքնել—ոգեսոսոգ փնտրել թուքիւն.
Ապ—պր. քաջասոնմիկ.
Ասոնուր, ասոնքնոր, ասոնուր—այս աշխարհ.
Արքաք—արաբ. մեծ, վեհագոյն, գլխաւոր. նաև՝ գրիչ. արբաբ ելել—գրուած լինել.
Արքուն—1. կարմիր հատակ, 2. հատատութիւն, ոյժ.
Արդընկէց—տէգ կամ նիզակ ձգող.
Արմաղան—թուրք. հեռու տեղից եկած ընծայ.
Աւիշ—կենդանի կամ մեռած մարմնից ծորած հիւթ.
Արփի—արեգակ.
Արքենի—պատուական, ազնիւ.

Բ.

Բաբ—համեմատ, հաւասար. բաբ անել—համեմատել.
Բաղէշխան—բեկպաշիի ակն, այսինքն, «լալ» ակն.

Բանգ — պարս. քնաբեր դեղ.
Բանդ — խաբէութիւն.
Բաս — պր. վէճ, նաև՝ վէճի գործիք.
Բարիթաւոր — արաբ. քնարական բանաստեղծութեան երկար ձև, որ կոչւում է նաև զինջիլամէ — շղթայաձև.
Բեհեշտի — պր. դրախտային.
Բէղասալ — պր. վատթարագոյն.
Բիլեան, բիլիան — պր. խորով, խորոված. բիրեան անել — խորովել, այրել.
Բունիաթ — պր. շինուածքի հիմք.

Գ.

Գանակոծել — ծեծել.
Գէմի — թուրք. նաւ.
Գիլուծոց — գիրկընդխառնում.
Գուլ (գիլ) — պր. վարդ.
Գուման — պր. կարծիք. գուման ածիլ — երևակայել, կարծել, միտը բերել.
Գունք — գոյնք.
Գուլուտ — տաք.
Գուպարայաղթ — կռուով յաղթող.
Գուրծ — գործ.
Գոեհ — փողոց.
Գոզալ — պր. սիրուն, նքնաղագեղ.

Դ.

Դալ — ծննդկանի առաջին կաթը.
Դաղ — խարան, դաղ անել — խարանել.
Դամ — պր. որոգայթ, ուռկան. դամ անել — որսալ, ուռկանը ձգել.
Դամնաղ — պր. քիմք, կամք, քէֆ.
Դաշխուրան — կուժ, փոքր կոնք.
Դաս — զանազան նուագարանների զուգակշիռ հնչումն, օրկեստր.
Դարաչիր — մինչև թումբերը, եղերքը լեցուած.
Դաւ — պր. դատախազութիւն, ամբաստանութիւն, բողոք.
Դափ — թմբուկ.
Դափրեց — դոփեց, ամբակներով գետինը փորեց.
Դեկան, դէկան — դահեկան.
Դեղձան — բաց դեղին.
Դենպետ — մոգպետ.
Դիլբար — պր. երես, դէմք, գեղեցկութիւն, սիրելի, սիրեկան. երբեմն՝ իդէալ բառի տեղ է գործ ածւում.
Դիք — չաստուածներ.
Դուզան — խոց, պալար, ուռեցք.

Ե.

Եաղ — թուրք. օտար. երբեմն նաև՝ թշնամի.
Եանա եանա — պր. տոչորուած, այրուած.
Երետ — տուս.

Զ.

Զալում — պր. անիրաւ.
Զայլ անիլ — աւերել, ջնասել.
Զար — պր. ոսկի, ոսկեթել.
Զեռ — զերդ, զերթ, ինչպէս.
Զիլֆ — պր. (գիլֆ) խոպոպիք.
Զուրխաթ — արաբ. սերունդ.
Զող, սաստիա — պր. գրօսանք, խրախճանք.

Է.

Էդիլն — յետևից.
Էյնէկ — երանի.
Էշխ — պր. սիրահարութիւն.
Էլկաթ — երկաթ.

Ը.

Ընդերք — փորոտիք.

Թ.

Թաբիբ — արաբ. բժիշկ.
Թահր — պր. տեսակ, կերպ.
Թասում պր. կատարեալ, բռվանդակ.

Թայգուլ—ծաղիկների փունջ.
Թարիկի—պր. գովասանք, ներ-
բող, պատմութիւն, թարիկի
անել,—պատմել.
Թափուր—դատարկ, պարապ.
Թեփսի—թուրք. ափսէ.
Թէզ—պր. շուտ.
Թիլա—արաբ. ոսկի.
Թիրախ—նետի նպատակակէտ,
նշան.
Թոլույ—կալաքարի ջուր, որով
սպիտակացնում են կտաւը.

Ի.

Ինթիմազ—պր. աղաչանք, հայց-
ուած, միջնորդութիւն.
Ինթիմազ անիլ — աղաչել, ա-
ղերսել.
Ինչած—խածեց.
Ինստիսալ—պր. իրաւունք, իշխա-
նութիւն.
Ինրսալ—պր. խոստում, խօսք
տալ.
Ինր ը իման—պր. երդումով
հաստատուած խոստում. դաշն
երդման.
Ինք.ր—պր. ուրացութիւն.

Լ.

Լալ—ակն, թանկագին քար.
Լ.լէ—կակաչ.
Լ.յիղ—թուրք. յարմար, վայել.
Լատիֆ—արաբ. գեղեցիկ, վայե-
լուչ.
Լկաս—իւլաբ, սանձ, պախուրց.
Լուկ, լօք—լոկ, միայն (և ահա,
յանկարծ).
Լուսաներ—լուսավարս, լուսա-
փայլ մագ.
Լուրթ—բաց կապոյտ, երկնա-
գոյն.
Լոքման—հնդկաց իմաստուն բը-
ժշկի անունը.

Մ.

Մսթաբբանդ—պր. եբենոսից և
վիդոսկրից դրուագ.
Մանիրդ ջամ իս անուտմ—երդա-
ոիքդ միատնդ ես գրու�-
բում. խաքիզ — նրդանոցի-
ջամ—գրուանոց.
Մայլ — արաբ. բարկութիւն,
ծոգովուրդ, ատելանք.
Մայնալ — արաբ. հրանգարու-
թիւն, ցնորք.
Մայլն, խայլն—թուրք. գաստ-
նան.
Մամ—պր. խանձ, տնաս, (նաստ-
բուկ, ֆոշտ).
Մար—պր. փուշ, փարդենու
փուշ.
Մար—պարս. թշնամ, անարգ-
խար անել—անարգել.
Մանգաս, խանգէս—արաբ. վան-
դակ.
Մեռ—անասնձ, խոլոր.
Մզտել—պատռել.
Մրյամէթ—արաբ. գին, արժէք.
Մխալ—պր. վատ միտք, կարծիք.
Միվ, խեռ—խելագար, գիժ.
Մնճեր (խանճէ)—արաբ.գաշոյն
Մուռ—ծուռ, թեք, շէջ.
Մուշտիռ—թուրք. գոտի.
Մօշ—պր. բարի, քաղցր.

Ն.

Նաճկտուր լինել—կանծիլ, կար-
կամիլ.
Նիզէլ (զէօզալ) թուրք. գեղեցիկ.
Նորդ—խոպան հող, կոշտ, չոր,
պինդ.
Նուդի—վրաց. պոչ.
Նուլակ—քունքերի վրայ կախ-
ուած վարսափունջ.
Նուման—պր. (կիւման, տարա-
կոյս, կարծիք)—անկանգուն-
թիւն.
Նումբ—գմբեթ, մի բանի մէջ-
տեղը գտնուած ուռուցիկ
մասը.
Նուսածի — կիսուածով զարդարա-
ուած.
Նօկօր—վրաց. նօկօրի—կոկոն.

Հ.

Հազ—արաբ. յօժարութիւն, փափագ.
Հալխա (հալքա)—Թուրք. օղակ.
Հաղ (հաքք)—արաբ. իրաւունք.
Համ—պր. եւ.
Համ—արաբ. հոգ. համ անել—սանձել (?)
Համաշա—պր. հանապազ, միշտ.
Համբուն—բնաւ, ամենևին.
Համուռ — բոլոր բազմութիւն, միանգամայն, մէկէն.
Համօրէն — բոլոր, բովանդակ, ընդհանուր.
Հանգ—պր. նուագ, եղանակ. նաև՝ տեսակ, ձև.
Հանի—մամ, տատ.
Հասնիք—հարսանիք.
Հասրաթ—կարօտ, անձկութիւն.
Հափափումն—յափշտակութիւն, ձեռք ձգիլը.
Հերճակ—ռեռ, փրփր.
Հէճապ — արաբ. ամօթխածութիւն, պատկառանք.
Հէյրան—պր. ապուշ, ապշութիւն, հիացք. հէյրան անել—ապշեցնել.
Հիլ անիլ—բաց անել. լուծել, հիլ արած—բաց արած.
Հիսրաց, ի՛սրաց—իրար հետ.
Հնգկուն, ՀՆգուն, Հանցեր, Հրնցեր—թռչակ, ոլորակ, հրման (հանդերձ).
Հոմ—իրար, իրար-իցքուն.
Հոգիմբր—գերեզման.
Հուջրա—պր. ատամնի փոքր սենեակ. նաև թիֆլիսի բարբառով tiroir (գզրոց).
Հուսկ—ամենից վերջը.
Հուրմի Հէքիմ—արար. հրամայող, տէր, մեծ.
Հրանուան—կրակ բգիրոց, կրակ հանիչոց.

Ղ.

Ղարուզ ունէ—հանիռայն է.
Ղազաբ—Թուրք. պատիժ, բարկութիւն. ղազաբ անիլ—պատժել.
Ղալամ (քալէմ) արաբ. գրիչ.
Ղալամքար—գոյնզգոյն ծաղիկներով զարդարած նուրբ կտաւեղէն.
Ղալատ—արաբ. սխալ.
Ղալտել եմ—սխալուել եմ.
Ղանր (քանր)—արաբ. ցաւ, վիշտ.
Ղամ—արաբ. ցաւ, հոգ, վիշտ.
Ղաստ—աշխատանք. ղաստ անիլ—ջանալ.
Ղաստրուած—Թաւշապատ.
Ղատիր—արաբ. յարգուած, նիբրական.
Ղարարի — յարմարած, իրար յարմար, համաչափ.
Ղիմէթ—պր. գին, յարգ.
Ղիմիշ արած—խնայած.
Ղուլլուզ—Թուրք. ծառայութիւն, պատուտրութիւն.
Ղուսուզ—պր. կերպաս.
Ղուս—Թուրք. հոգ, անձկութիւն, ցաւ.

Ճ.

Ճանճանշատիրոց — գոյնզգոյն խառնուրդ.
Ճանգ—ճանկ.
Ճրագուան—Հարուստ նուագարանի ձոգիկը, ճիրագոր, որով թրթռացնում էն լարերը.

Մ.

Մ՚ոգում՝ պր. մէջք.
Մ՚ազում՝ Թուրք. յարանք.
Մ՚ահանդ—նոխանդ (վիճակով).
Մ՚ա՚ոլլու՝ արաբ. Թոց.
Մ՚ասնանգ—արաբ՝ փոքրագոյն.
Մ՚ոնիրում՝—արաբ. գոտի.
Մ՚ազուրա (մէշուշէ)—արաբ. ցաւ.
Մ՚անդիլ mantia, mantille, նաև՝ Թոշկիանոկ.
Մ՚ասան—պր. յարմար հարգուած մասա անիլ—հարգելի.

Մատնենոցած — ասեղնոցոր-
ծած.
Մեղիանց—քուրքին, քուրք-
մոլքուքին.
Մէնբրի—մենարան, հրատարակ
խրատնանոցի.
Մինա—պր. կիսուած. շուայլ. մի-
նա անել—շուայլեր.
Մոլուցք — մոլեգնութիւն, կա-
տաղութիւն.
Մուրախաս—պր. ուրախասիրդ.
Մոգ անել—հաւաքել, կիսել
կուտել.

Ց.

Ցարտնուն—միշտ ամուլ.
Ցելուզուած—հիւսուած.
Ցեղակարծ—յանկարծ.
Ցոյր—գէր, հաստ, պարարտ.

Ն.

Նարազ—պր. ցած, վատթար,
ժլատ մարդ.
Նուղլ—շաքարով պատուած նուշ,
կաղին կամ ուրիշ շոր միրգ.
Նուր մէկ, նոր մէկանց—նո-
րոդ, նորից.
Նօքար—պր. սպասաւոր, ծառայ.

Շ.

Շալայ (ինշալլա՛)—արաբ. Աստ-
ուած տայ որ, կը մաղթեմ.
Շաղարակաս—ոլորած, փաթա-
թած.
Շանսխուր—մի շան գինը, շնու-
թեան վարձքը.
Շառայլ—ծառագայթ, շողք.
Շառափնափայլ—լոյս թափող,
լոյս տեղացող.
Շար—շղարշ.
Շրմաթ—արար. լաչակ, շապիկ(?)
Շիմշատ—տոսախ (ծառ).
Շիրմայի—պր. փղոսկր.
Շմոր—յոյզ, խլրտում.
Շրուջակ—ծոծրակ.
Շքար—պր. շքեար՝ որս, նաև՝
տոփաւոփիւտ ու թանկա-
գին, շնաշխարհիկ բան, իր.

Ղ.

Ղարիպանի—նիզակ, գրոսքար.
Ղրնանի—գինեքաղ.
Ղանանեան—ոսկեան.
Ղանշիտ—պր. շուտ.
Ղոս ու ոսկի—ասելիս ու անելիս.

Ղ.

Ղայրի—քուրդ, գիտ.
Ղայրի—քիչ.
Ղայրի շինանի—գրուրդ, նուրդ
կամանչ գրուրդ.
Ղարտ—պր. նոր, ուրիշ.
Ղէրի—չանգիանանալ.
Ղանդի չուն—պր. գրոսքիանան.

Պ.

Պաղնարդ — նոգեոր, կրկրդ
ասեն.
Պարանի—ժայռ.
Պարտաւորեան — քիչուս չարիանան
գրոսքրան.
Պէնգիա—(պենգիա) — պր. ան-
նոյնապէս.
Պիրկի—քիչուս ուժով ձգուած.
Պանդանի—շրջանանալ.

Ջ.

Ջաղուքար—պր. ֆոքիարդ.
Ջաղանց—քիչուս անձրևանալ.
Ջան — պր. նոգի գրգռանիան,
ինանք. սոքիրարար՝ նոր
առոգիութիւն.
Ջանչիլ—ոգեղեն ֆուս.
Ջարա—Վիրարդամ, ուրիշիչ.
Ջրատար—ոգորմելի, անձնարան,
ապուշ.

Ռ.

Ռանդա—տախտակ, փայտ յրկ-
կելու գործիք.
Ռաշ—Տես բաշ.
Ռոշնական—լուսաւոր, պայծառ.

Ս.

Սարար—պր. պատճառ, սարար
անել—մեղադրել.

Սալքու—պր. սէրվ, նոճի.
Սաղապ—ճօճացող, անհաստատ.
Սան—թուրք. համար. սան ա-նիլ—համարել.
Սապո(ր) — արաբ. համբերութիւն.
Սաջար—արաբ. ծառ, թուփ.
Սարդենի—դափնի ծառ.
Սաֆիա զօղ — պր. զբօսանք, խրախճանք.
Սեպուհ—ազնուական ձիաւոր, իշխանաւոր.
Սէլաւ—պր. սէյլաբ, ուղխի ջուր, հեղեղ.
Սէյր անիլ—ճեմել. նաև՝ հիացմունքով ու բերկրանքով մտիկ անել.
Սէյրան—պր. տեսարան. նաև՝ ճեմուն.
Սիմ—պողպատի կամ պղնձի թել, լար, որ գործ են ածում նուագարանների համար.
Սուչ—թուրք. մեղք, յանցանք.
Սուրմա—ծարիր. սուրմա անիլ—ծարրել.
Սօղ Սուֆիա — պարս. զբօսանք, խրախճանք.
Սօյքաֆ—արաբ. մէջլիսում նստելը, խօսակցութիւն, սիրելութիւն անելը։

Վ.

Վարճակ—երգող, պարող կին.
Վարուղնած—ոսկեզօծ.
Վիրտուած — հիւսուած գրահով գրահաւորուած.
Վիր կանիս — վեր կանես, կը բարձրացնես ձայնդ.
Վիթիլ—վայթել, փոթել (թափել).
Վիժանուտ—ջրի պէս վազող, անցնող.
Վտանգանդի — աստանդական, դաղաբդիւն, քշուած։

Տ.

Տալղա—թուրք. ալիք, կոհակ.
Տէսթուր—պր. հրաման, թոյլտուութիւն.

Ր.

Բաշ, ռաշ—պր. բաշխ. Թուստէմի հռչակաւոր ձիու անունն է։ Ըստ թիֆլիսեցոց աւանդութեան՝ բաշ—թեաւոր ձի.
Բաֆիայ—պր. բաֆ.—պատի վրայ պատակի պէս դուրս բերած տեղ, որին Վրաստանում ասում են նաև թարէք։ Բաֆիայի վրայ դնում էին թանկագին ամաններ և հազուագիւտ մրգեր։
Բուքսար—պր. ոստայնի նուրբ և հոգատար աշխատութեամբ գործած ծայրը։

Փ.

Փաղանգ—զօրագունդ, լեգէոն.
Փաղփուն—փայլփլուն.
Փանջարա — պր. լուսամուտ, պատուհան. փանջարա արած՝ ծակոտկէն սղոցած.
Փար—վրաց. փարի—վահան.
Փարչա - փարչա — թուրք. մասմաս, կտոր-կտոր.
Փարփառ — վառվռուն, պայծառ աչք.
Փոռեկել - պատռել, ճեղքել
Փէլ ու փանդ—պր. կախարդութիւն, աչքակապութիւն.
Փիանդուզ—պր. ոտի տակ փռելու դրամաշ. այն դիպակը, որ փռում են թագաւորի ոտի տակ՝ որպէս քաղաք մտնելիս.
Փնջան — պր. ըմպանակ, թաս.
Փրանդ—պր. հնարք.
Փցուն, փիծ ան—անպիտան, փչուած, բուտա.

Ք.

Քրէաքուր—քրէական յանցաւոր։

ՑԱՆԿ ՆԻՒԹԵՐԻ

Երես

1. *Յառաջաբան*, Սուրխաբեան 3

ԱՌԱՋԻՆ ԲԱԺԻՆ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՀԻՒՍՈՒԹԻՒՆ

2. *Վահագնի ծնունդը, դիցաբանական երգ, (գրաբար և աշխարհաբար)* 5
3. *Վահագնի ծնունդը (բալլադ)*, Յով. Յովհաննիսեան 6
4. *Մովսէս Խորենացի*, Սուրխաբեան 7
5. *Ի՞նչ է առասպելը*, Սուրխաբեան 8
6. *Հայկ և Բէլ, առասպել*, Մ. Խորենացի 8
7. *Տորք Մնգեպ, առասպել*, Մ. Խորենացի 11
8. *Արա Գեղեցիկ և Շամիրամ, առասպել*, Մ. Խորենացի 11
9. *Արտաշէս և Արտաւազդ, գուսանական զրոյց երգախառն*, Մ. Խորենացի 13
10. *Արտաւազդ*, Ց. Յովհաննիսեան 17
11. *Հէքիաթ*, Սուրխաբեան 18
12. *Մարդ իրա հօրդանու գնօրա պտի ոտը մեկնի* 19
13. *Սուտ-Ասան* 19
14. *Իմաստուն Ջուլհակ* 20
15. *Հազարան բուլբուլ* 21
16. *Գաջ Նազարը*, Յով. Թումանեան 24
17. *Ագա Նազար*, Ա. Խաչիկեան 31
18. *Ժողովրդական քնարերգութիւն*, Սուրխաբեան 42

ՍԻՐՈՅ ԵՐԳԵՐ

19. *Ես սարէն կուգայի* 44
20. *Հաբբրբան* 44
21. *Էս օր նորը նորել է* 45
22 *Անուշի սիրահարական* 45
23. *Վարդն ի պայուն* 46
24. *Սիրող տաք արա* 46
25. *Խալտեցայ, խալատ մ'ըրի* 47
26. *Սիամանդօն և Խըջէզարէն (պօէմ)* 47

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՐԳԵՐ

27. *Գութանի երգ* 51

Երես
28. Գուլթանի երգ 51
29. Գուլթանի երգ 52
30. Հնձուորի երգ 53
31. Քաղհան անող գեղջկուհու երգը 53
32. Սանտի երգ 53
33. Ծոյլ հնձողք 54

ԲՆՈՒԹԵԱՆ ԵՐԳԵՐ

34. Գիշերերգ 54
35. Արագիլ 54
36. Տաղ գարնան, ամրան, աշնան և ձմրան 55

ՊԱՆԴԽՏԻ ԵՐԳԵՐ

37. Կինը իր պանդուխտ ամուսնուն 57
38. Կռունկ 57
39. Կարիր եմ 58
40. Անտունի դարիպի վրայ 59
41. Հարսն առ լուսինը 59
42. Կարօտակէզ հարսն առ լուսինն 59

ՕՐՕՐՈՑԻ ԵՐԳ

43. Օրօր 60
44. Օրօր 60

ՀԱՐՍԱՆԵԿԱՆ

45. Փամէն կուգայ ջուխտ մի ֆիտան 61
46. Փեսային հագցնելիս 63
47. Հարսին 63

ՄԱՀԵՐԳ

48. Մօր մահերգը 64
49. Քոյրն ի մահ եղբօրն 65
50. Մեռած դարիպը 65

ԽԱՌՆ ՄՕՏԻՒՆԵՐ

51. Արտուտիկ 65
52. Բեկուած սիրտ 66
53. Լագլաղ 66
54. Աղէս 66
55. Ի վերայ աղէսին 67
56. Գինեմոլին 68
57. Հին երգեր 68
58. Մայրը 68

ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ

59. *Էպոս*, Սուրխաբեան . . . . . *Երես* 69

ՀԱՒԱՔԱԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

60. *Սասունցի Դաւիթ և Մհեր (Մոկաց բարբառ), գրի առաւ՝* Մ. Աբեղեան 72
61. *Սասունցի Դաւիթ (վարիանտներից մէկը), հաւաւած, «Ջոջանց տուն»*, Ս. Կանայեան 104
62. *Սասունցի Դաւիթը*, Ցով. Թումանեան 110
63. *Մուրոմցի Իլիան (բըլիւնա), թարգմ.* Ցով. Թումանեան . . . 135

ՀԱՒԱՔԱԿԱՆ-ԱՆՀԱՏԱԿԱՆ ԽԱՌՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

64. *Հոմերոս*, Սուրխաբեան 143
65. *Իլիական, բովանդակութիւն*, Սուրխաբեան՝ *«Հին յունական գրականութիւն»* 146

ԻԼԻԱԿԱՆ ՀԱՏՒԱԾՆԵՐ

66. *Դիմու

մուսային. գրաբարից աշխարհաբարի վերածեց՝* Դ. Դեմիրճեան 149
67. *Թերսիդէսի ըմբոստացումը. գրաբարից աշխարհաբարի վերածեց՝* Դ. Դեմիրճեան 149
68. *Հեկտորի հրաժեշտը Անդրոմաքէին. գրաբարից աշխարհաբարի վերածեց՝* Դ. Դեմիրճեան 151
69. *Ծերունի Պրիամոսը Աքիլէսի մօտ. գրաբարից աշխարհաբարի վերածեց՝* Դ. Դեմիրճեան 154
70. *Պրիամոսը Իլիոն է տանում Հեկտորի դիակը. գրաբարից աշխարհաբարի վերածեց՝* Դ. Դեմիրճեան 156
71. *Հեկտորի թաղումը. գրաբարից աշխարհաբարի վերածեց՝* Դ. Դեմիրճեան 158
72. *Ոդիսական, բովանդակութիւն*, Սուրխաբեան՝ *«Հին յունական գրականութիւն»* 158

ՈԴԻՍԱԿԱՆ ՀԱՏՒԱԾՆԵՐ

73. *Դիմուն մուսային. գրաբարից աշխարհաբարի վերածեց՝* Դ. Դեմիրճեան 161
74. *Նաւսիկէ. գրաբարից աշխարհաբարի վերածեց՝* Դ. Դեմիրճեան . 161
75. *Ալքինոյի ապարանքը. գրաբարից աշխարհաբարի վերածեց՝* Դ. Դեմիրճեան 162
76. *Ոդիսևս և իր խոզապան Եումէոսը. գրաբարից աշխարհաբարի վերածեց՝* Դ. Դեմիրճեան 163
77. *Պենելոպէն և հոմանիները. գրաբարից աշխարհաբարի վերածեց՝* Դ. Դեմիրճեան 165
78. *Եումէոսի հաւատարմութիւնը. գրաբարից աշխարհաբարի վերածեց՝* Դ. Դեմիրճեան 167
79. *Աքիլլէս, թարգմ.* Ցով. Թումանեան 167

Երես
80. Ֆրդուսի, Ս. Տ.-Ա. 170
81. Շահ-Նամա, Ս. Տ.-Ա. 171

ՇԱՀ-ՆԱՄԱ, ՀԱՏՈՒԱԾՆԵՐ

82. Արեգակի ծագումը, պարսկերէնից թարգմ. Ս. Գիւլզադեան . . 172
83. Ռոստամի ծնունդը, պարկերէնից թարգմ. Ս. Գիւլզադեան . . 173
84. Մանուկ Ռոստամը, պարսկերէնից թարգմ. Ս. Գիւլզադեան . 174
85. Ռոստամի առաջին կռիւը Թուրանի դէմ և իր յաղթանակը, պարսկ. թարգմ. Ս. Գիւլզադեան 174

ՌՈՍՏԱՄ ԵՒ ՍՈՀՐԱԲ, ՀԱՏՈՒԱԾՆԵՐ

86. Ռոստամ և Սոհրաբ վէպի նախերգանքը, պարսկ. թարգմ. Ս. Գիւլզադեան 176
87. Թէհմինէ գեղեցկուհին, պարսկ. թարգմ. Ս. Գիւլզադեան . . 177
88. Սոհրաբը, պարսկ. թարգմ. Ս. Գիւլզադեան 178
89. Սոհրաբի սիրահարութիւնը, պարսկ. թարգմ. Ս. Գիւլզադեան 179
90. Ռոստամի և Սոհրաբի մենամարտը, պարսկ. թարգմ. . Ս. Գիւլ. 180

ԱՆՀԱՏԱԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

91. Վիրգիլիոս, Սուրխաթեան 183
92. Էնէական, Սուրխաթեան 183

ԷՆԷԱԿԱՆ, ՀԱՏՈՒԱԾՆԵՐ

93. Էնէասի արշաւանքը և նաւաբեկութիւնը. արևելահայ բարբառի վերածեց՝ Աւր. Խոնդկարեան 185
94. Էնէասը փորձում է դիտել անծանօթ ափերը. արևելահայ բարբառի վերածեց՝ Աւր. Խոնդկարեան 188
95. Էնէասը Դիդոնէի ապարանքում. արևելահայ բարբառի վերածեց՝ Աւր. Խոնդկարեան 189
96. Մերձեցում. արևելահայ բարբառի վերածեց՝ Աւր. Խոնդկարեան 189
97. Դիդոնէի սէրը. արևելահայ բարբառի վերածեց՝ Աւր. Խոնդկարեան 190
98. Դիդոնէն իր սիրահարած լինելը յայտնում է քրոջը՝ Աննային. արևելահայ բարբառի վերածեց՝ Աւր. Խոնդկարեան . . 190
99. Դիդոնէի նուադումը. արևելահայ բարբառի վերածեց՝ Աւր. Խոնդկարեան 192
100. Դիդոնէի տանջանքը. արևելահայ բարբառի վերածեց՝ Աւր. Խոնդկարեան 192
101. Դիդոնէն մտորում է ինքնասպանութեամբ վերջ տալ իր կեանքին. արևելահայ բարբառի վերածեց՝ Աւր. Խոնդկարեան . 192
102. Էնէասի նաւատորմը շարժւում է դէպի բաց ծովը. արևելահայ բարբառի վերածեց՝ Աւր. Խոնդկարեան 193
103. Դիդոնէի հոգեկան տագնապը. արևելահայ բարբառի վերածեց՝ Աւր. Խոնդկարեան 195
104. Ինքնասպանութիւն. արևելահայ բարբառի վերածեց՝ Աւր. Խոնդկարեան 195

Երես

105. *Շոթա Ռուսթաւելի,* Սուրխաբեան 197
106. *Ընձենաւորը, բովանդակութիւն,* Սուրխաբեան 197

ԸՆՁԵՆԱՒՈՐԸ, ՀԱՏՒԱԾՆԵՐ

107. *Ռոստևան և Թինաթին. Թիֆլիսի բարբառից գրականի վերածեց՝* Գ. Մելոյեան 200
108. *Ռոստևանը իր մեծամեծներին. Թիֆլիսի բարբառից գրականի վերածեց՝* Գ. Մելոյեան 200
109. *Թինաթինը Թագուհի. Թիֆլիսի բարբառից գրականի վերածեց՝* Գ. Մելոյեան 201
110. *Ռոստևանի որդեգիր Աւթանդիլը. Թիֆլիսի բարբառից գրականի վերածեց՝* Գ. Մելոյեան 201
111. *Ռոստևանի և Աւթանդիլի մրցութիւնը. Թիֆլիսի բարբառից գրականի վերածեց՝* Գ. Մելոյեան 201
112. *Ընձենաւորի հանդիպումը Ռոստևանին. Թիֆլիսի բարբառից գրականի վերածեց՝* Գ. Մելոյեան 203
113. *Արսէն Բագրատունի,* Սուրխաբեան 206
114. *Հայկ դիւցազն, բովանդակութիւն,* Հր. Աճառեան՝ «*Պատմ. հայ նոր գրական.*» 206

ՀԱՅԿ ԴԻՒՑԱԶՆ, ՀԱՏՒԱԾՆԵՐ

115. *Մուսային,* Հ. Ա. Բագրատունի 209
116. *Տեղատարափ,* Հ. Ա. Բագրատունի 209
117. *Որսորդութիւն,* Հ. Ա. Բագրատունի 210
118. *Ալեկոծութիւն մեծ,* Հ. Ա. Բագրատունի 211

ՎԻՊԵՐԳ

119. *Ի՞նչ է վիպերգը (լիրիքական պօէմ),* Սուրխաբեան՝ 213
120. *Յովհաննէս Թումանեան,* Սուրխաբեան 214
121. *Անուշ,* Յով. Թումանեան 216
122. *Դև, հատուածներ,* Լերմոնտով, *Թարգմ.* Մ. Սասաբեան 240
123. *Աբու Լալա Մահարի,* Ա. Խահակեան 257
124. *Նոր Առաւօտ, հատուածներ,* Յակ. Յակոբեան 273
125. *Հարճը, հատուածներ,* Դ. Վարուժան 278
126. *Ամբոխները խելագարուած,* Եղիշէ Չարենց 285
127. *Ամենապօէմ,* Եղիշէ Չարենց 289

ԲԱԼԼԱԴ

128. *Ի՞նչ է բալլադը* 321
129. *Փարուանա,* Յով. Թումանեան 322
130. *Ախթամար,* Յով. Թումանեան 327
131. *Ասպետի սէրը,* Ա. Խահակեան 329
132. *Յաւերժական սէրը,* Ա. Խահակեան 331
133. *Երգչի անէծքը,* Ուլանդ, *Թարգմ.* Յով. Յովհաննիսեան 334

ԱՌԱԿ

134. *Ի՞նչ է առակը,* Սուրխաբեան 336
135. *Աղէս և կաքաւ (միջնադարեան հայ առակներից)* 337

Երես

136. Գայլ և էշ, (միջնադարեան հայ առակներից) 337
137. Առիւծ և աղուէս (միջնադարեան հայ առակներից) 338
138. Իշատէր և գայլ, (միջնադարեան հայ առակներից) 338
139. Գայլ յուսումն, (միջնադարեան հայ առակներից) 338
140. Ստախօս, Կռիլով, թարգմ. Գ. Այվազովսկի 339
141. Էշ, Կռիլով, թարգմ. Գ. Այվազովսկի 341
142. Ճգնաւոր և արջ, Կռիլով, թարգմ. Գ. Այվազովսկի 342
143. Խոզ, Կռիլով, թարգմ. Գ. Այվազովսկի 344
144. Թաթուլին գալաճօշը, Կռիլով, թարգմ. Գ. Այվազովսկի . . . 344
145. Գայլն ու գառը, (Լաֆոնտէնից), Նիկ. Մամիկոնեան 346
146. Էշ և սոխակ, (Կռիլովից), Նիկ. Մամիկոնեան 347
147. Առիւծը, գայլը և աղուէսը, (Աղուէսագրքից), Նիկ. Մամիկոնեան 347
148. Մերացած առիւծ, (Լաֆոնտէնից), Նիկ. Մամիկոնեան 348

ՀՈՎԻԵՐԳՈՒԹԻՒՆ

149. Ի՞նչ է հովւերգութիւն. 349
150. Վահան Միրաքեան, Սուրխաբեան 350
151. Քոչը, (հատուած «Լալւարի որս»-ից), Վ. Միրաքեան 350
152. Ոչխարի կիթը, (հատուած «Լալւարի որս»-ից), Վ. Միրաքեան . 355
153. Ջահել սարւորները, (հատուած «Լալւարի որս»-ից) Վ. Միրաքեան 356
154. Համբարցման տօնը, («Սօս և Վարդիթեր» վէպից), Պ. Պոլշեան 358
155. Ալագեազի մանիներից (հովւական), Ա. Խաչիկեան 367
156. Միջօրէ, Դ. Վարուժան 369
157. Ցորեանի ծովեր, Դ. Վարուժան 370
158. Կալեր, Դ. Վարուժան 370
159. Հասուն արտ, Դ. Վարուժան 372

ԵՐԳԻՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ

160. Ի՞նչ է երգիջաբանութիւնը. 373
161. Յակոբ Պարոնեան, Սուրխաբեան 374
162. Իմ ձեռատետրս, Յ. Պարոնեան 375
163. Պտոյտ մը Պոլսոյ թաղերուն մէջ (Փերա), Յ. Պարոնեան . . . 379
164. Աբիսողոմ աղան և բանաստեղծը, Յ. Պարոնեան 384
165. Իմ բանաստեղծութիւնս, Յ. Պարոնեան 390
166. Յովհաննէս Տէրոյենց, Յ. Պարոնեան 392
167. Գրիգոր Արծրունի, Յ. Պարոնեան 396
168. Կարապետ պէյ Երամեան, Յ. Պարոնեան 403

ԵՐՐՈՐԴ ԲԱԺԻՆ

ՔՆԱՐԵՐԳՈՒԹԻՒՆ

169. Ի՞նչ է քնարերգութիւնը, Սուրխաբեան 404
170. Միջնադարեան հայ քնարերգութիւնը, («Պոէզիա Արմենիի»), 406
171. Միջնադարեան հայ տաղերգուները, Սուրխաբեան 408

Երես

172. *Գանգատ*, Ֆրիկ 413
173. *Բառեակներ*, Յովհաննէս Երզնկացի 415
174. *Տաղ սիրոյ*, Յովհաննէս Երզնկացի 417
175. *Տաղ սիրոյ*, Կոստանդին Երզնկացի 419
176. *Տաղ գարնան*, Կոստանդին Երզնկացի 420
177. *Ունայնութիւն աշխարհիս*, Մկրտիչ Նաղաշ 421
178. *Վասն ագահութեան*, Մկրտիչ Նաղաշ 422
179. *Գարուն*, Յովհաննէս Թլկուրանցի 423
180. *Տաղ սիրոյ*, Յովհաննէս Թլկուրանցի 424
181. *Վասն վարդի և պուլպուլի*, Գրիգոր Աղթամարցի 425
182. *Արի ել այգւոյս*, Գրիգոր Աղթամարցի 429
183. *Տաղ վասն վարդի*, Գրիգոր Աղթամարցի 430
184. *Սիրոյ երգեր*, Նահապետ Քուչակ 433
185. *Ծով աչք*, Ղազար Սեբաստացի 441
186. *Տաղ ի վերայ Գիւրջիստանի զօրականներին*, Նաղաշ Յովնաթան . 446
187. *Տաղ սիրոյ*, Նաղաշ Յովնաթան 447
188. *Տաղ սիրոյ*, Ստեփաննոս 448
189. *Տաղ գարնան*. 449
190. *Գովասանք ծաղկանց*, Դաւիթ Սալնամորեցի 450
191. *Վասն թռչնոց*, Յովհաննէս 453
192. *Առաւօտուն բամբկն*, Օսիպ Տէրտէր 456
193. *Երգ եարոջ*. 457
194. *Վարդն է բացուեր*, Վարդան 458
195. *Տաղ սիրոյ*. 459
196. *Աւի թէ սիրեմ*. 460

ԱՇՈՒՂՆԵՐ

197. *Ո՛վքեր են աշուղները*, («Պոէզիա Արմենիի») 461
198. *Սայեաթ-Նովա*, Սուրիաթեան 464
199. *Քամանչա*, Սայեաթ-Նովա 466
200. *Բլբուլ*, Սայեաթ-Նովա 466
201. *Աշխարհումս ախ չիմ քաշի*, Սայեաթ-Նովա 467
202. *Վունց օր վուր*, Սայեաթ-Նովա 468
203. *Դուն էն գլխէն*, Սայեաթ-Նովա 468
204. *Ինձ սիրեցիր*, Սայեաթ-Նովա 469
205. *Ինչ կօնիմ*, Սայեաթ-Նովա 470
206. *Անգամ արա*, Սայեաթ-Նովա 471
207. *Խալխի նօքար*, Սայեաթ-Նովա 473
208. *Կուգան ու կերթան*, Ջիւանի 475
209. *Ընկերը*, Ջիւանի 475
210. *Այս գիշեր*, Ջիւանի 476

ԿԵՂԾ-ԴԱՍԱԿԱՆ

211. *Ի բամբիռն Հայկազնի*, Հ. Ղ. Ալիշան 477

ԱՆՑՄԱՆ ՇՐՋԱՆ

212. *Անուրջք*, Ց. Ալամդարեան 478

ԱՆՑՄԱՆ ՇՐՋԱՆ

Երես

213. *Գարուն,* Ց. Ալամդարեան 478
214. *Ցերկու ձեռին,* Ց. Ալամդարեան 479
215. *Ողջոյն հրաժեշտի զաւակաց իմոց,* Ց. Ալամդարեան 480

ԱՐԵՒԵԼԱՀԱՅ ԵՒ ԱՐԵՒՄՏԱՀԱՅ ՆՈՐԱԳՈՅՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

216. *Արաքսի արտասուքը,* Ռ. Պատկանեան 481
217. *Նկարիչ,* Ռ. Պատկանեան 482
218. *Երգ ազատութեան,* Միք. Նալբանդեան 483
219. *Ծիծեռնակ,* Դոդոխեան 484
220. *Երազ,* Սմբատ Շահազիզ 484
221. *Գիշեր,* Սմբատ Շահազիզ 485
222. *Օրիորդի արտասուքը,* Սմբատ Շահազիզ 485
223. *Մեռաւ իմ մուսան,* Սմբատ Շահազիզ 485
224. *Ճախարակ,* Ղազարոս Ագայեան 486
225. *Յովհաննէս Յովհաննիսեան,* Սուրխաբեան 487
226. *Փափագ,* Յովհ. Յովհաննիսեան 488
227. *Մնաք բարով,* Յովհ. Յովհաննիսեան 489
228. *Արագը,* Յովհ. Յովհաննիսեան 489
229. *Սարն ի վեր,* Յովհ. Յովհաննիսեան 490
230. *Անցիր սև ամպ,* Յովհ. Յովհաննիսեան 490
231. *Ալէքսանդր Ծաղուրեան,* Սուրխաբեան 491
232. *Պոէտին,* Ալէքսանդր Ծաղուրեան 492
233. *Վարդ,* Ալէքսանդր Ծաղուրեան 493
234. *Մի լար, բլբուլ,* Ալէքսանդր Ծաղուրեան 493
235. *Ես չեմ երգում,* Ալէքսանդր Ծաղուրեան 493
236. *Բանուորուհու օրօրը,* Ալէքսանդր Ծաղուրեան 494
237. *Համբերգ,* Յովհաննէս Թումանեան 496
238. *Գութանի երգը,* Յովհաննէս Թումանեան 496
239. *Հին օրհնութիւն,* Յովհաննէս Թումանեան 497
240. *Իմ երգը,* Յովհաննէս Թումանեան 498
241. *Քառեակներ,* Յովհաննէս Թումանեան 498
242. *Աւետիք Իսահակեան,* Սուրխաբեան 500
243. *Ես երգիչ եմ,* Աւ. Իսահակեան 505
244. *Գիշերն եկաւ,* Աւ. Իսահակեան 505
245. *Իմ փէրին,* Աւ. Իսահակեան 505
446. *Մայրիկիս,* Աւ. Իսահակեան 506
247. *Արագի ափին,* Աւ. Իսահակեան 506
248. *Օրօր,* Աւ. Իսահակեան 506
249. *Ես որ մեռնիմ,* Աւ. Իսահակեան 506
250. *Կեանքս գալար,* Աւ. Իսահակեան 507
251. *Եմր, աչերդ արեգակն.* Աւ. Իսահակեան 508
252. *Տիեզերական զանգը,* Աւ. Իսահակեան 508
253. *Յակոբ Յակոբեան,* Սուրխաբեան 510

Երես

254. *Բաղաքը,* Յակոբ Յակոբեան 511
255. *Կարմիր գարնան,* Յակոբ Յակոբեան 512
256. *Հատուած «Հաւասարութիւն» պոէմից,* Յակոբ Յակոբեան . . . 513
257. *Լուսաբացին,* Յակոբ Յակոբեան 515
258. *Յեղափոխութիւն,* Յակոբ Յակոբեան 516
259. *Դերենիկ Դեմիրճեան,* Սուրխաթեան 518
260. *Հին երգերից,* Դերենիկ Դեմիրճեան 519
261. *Աղքատ մանուկ,* Դերենիկ Դեմիրճեան 521
262. *Հանգաւ երազ,* Դերենիկ Դեմիրճեան 521
263. *Շուշանիկ Կուրղինեան,* Սուրխաթեան 522
264. *Յեռ տար քո խաչը,* Շուշանիկ Կուրղինեան 523
265. *Հանգցրէք ջահերը,* Շուշանիկ Կուրղինեան 526
266. *Տրտունջ,* Շուշանիկ Կուրղինեան 527
267. *Բլբուլին,* Շուշանիկ Կուրղինեան 528
268. *Վահան Տէրեան,* Սուրխաթեան 529
269. *Տխրութիւն,* Վահան Տէրեան 536
270. *Աշնան մեղեդի,* Վահան Տէրեան 536
271. *Հրաժեշտ,* Վահան Տէրեան 537
272. *Մթնշաղ,* Վահան Տէրեան 537
273. *Մոռանալ,* Վահան Տէրեան 538
274. *Ինձ թաղէք,* Վահան Տէրեան 538
275. *14 Տող,* Վահան Տէրեան 539
276. *Անտրտնջութիւն,* Վահան Տէրեան 539
277. *Շշուկ ու շրշիւն,* Վահան Տէրեան 540
278. *Դու կը գաս,* Վահան Տէրեան 540
279. *Արեւածագ,* Վահան Տէրեան 541
280. *Երկու սոնէտ,* Վահան Տէրեան 541
281. *Վերադարձ,* Վահան Տէրեան 542
282. *Լինէի չորան,* Վահան Տէրեան 544
283. *Տեսայ երազ մի վառ,* Վահան Տէրեան 544
284. *Կարծես թէ դարձել եմ,* Վահան Տէրեան 545
285. *Կանգնել ես դու,* Վահան Տէրեան 545
286. *Այնպէս Նազիկ,* Վահան Տէրեան 546
287. *Սիրտդ որպէս,* Վահան Տէրեան 546
288. *Թողի երկիրն իմ,* Վահան Տէրեան 547
289. *Հրաժեշտի գազէլ,* Վահան Տէրեան 547
290. *Ընձեռաւորի նախերգանքը,* Շորա Թուրքաւելի, *թարգմ.* Վահան Տէրեան 548
291. *Եղիշէ Զարենց,* Սուրխաթեան 550
292. *Դէպի ապագայ,* Եղիշէ Զարենց 553
293. *Բրոնզէ թեւերը կարմիր գալիքի,* Եղիշէ Զարենց 555
294. *Գիշերը ամբողջ,* Եղիշէ Զարենց 557
295. *Ո՛վ կը հանդիպի,* Եղիշէ Զարենց 558
296. *Ինչքան որ հուր,* Եղիշէ Զարենց 558

Երես

297. *Ամռան անուշ*, Եղիշէ Չարենց 559
298. *Երազ տեսայ*, Եղիշէ Չարենց 559
299. *Աշուղ Սայաթ-Նովի նման*, Եղիշէ Չարենց 559
300. *Կուզեմ հիմի*, Եղիշէ Չարենց 560
301. *Ես մէջ հարբած*, Եղիշէ Չարենց 560
302. *Ինչքան կանչես*, Եղիշէ Չարենց 560
303. *Երբ էս հին աշխարհը*, Եղիշէ Չարենց 561
304. *Ես իմ անուշ*, Եղիշէ Չարենց 561
305. *Հայոց աշխարհիկ, հատուած*, Ղեւոնդ Ալիշան 562
306. *Պլպուլն Աւարայրի, հատուած*, Ղեւոնդ Ալիշան 563
307. *Մկրտիչ Պէշիկթաշլեան*, Սուրխաթեան 564
308. *Եղբայր եմք մեք*, Մկրտիչ Պէշիկթաշլեան 564
309. *Գարուն*, Մկրտիչ Պէշիկթաշլեան 565
310. *Առ զեփիւռն Ալէմդաղի*, Մկրտիչ Պէշիկթաշլեան 566
311. *Պետրոս Դուրեն*, Սուրխաթեան 568
312. *Ի՞նչ կըսեն*, Պետրոս Դուրեան 569
313. *Սիրել*, Պետրոս Դուրեան 570
314. *Լճակ*, Պետրոս Դուրեան 571
315. *Միամանթօ*, Սուրխաթեան 572
316. *Դեռ քնարիս լարերը թաց են*, Միամանթօ 573
317. *Հարսին երազը*, Միամանթօ 574
318. *Դանիէլ Վարուժան*, Սուրխաթեան 576
319. *Լոյսը*, Դանիէլ Վարուժան 577
320. *Մեռնող բանաւոր*, Դանիէլ Վարուժան 579
321. *Բանաւորուհին*, Դանիէլ Վարուժան 580
322. *Ընկեցիկը*, Դանիէլ Վարուժան 581
323. *Հին սէրը*, Դանիէլ Վարուժան 583
324. *Դադար*, Դանիէլ Վարուժան 584
325. *Օրհնութիւն*, Դանիէլ Վարուժան 487
326. *Աշնան ծաղիկներ*, Միսաք Մեծարենց 588
327. *Եկուր*, Միսաք Մեծարենց 588
328. *Կը վերածնի հուրն*, Արշակ Չոպանեան 589
329. *Եղերերգ*, Արշակ Չոպանեան 590

ԵՂԵՐԵՐԳՈՒԹԻՒՆ

330. *Ի՞նչ է եղերերգութիւն-էլեգիան*. 591
331. *Տրտունջք*, Պետրոս Դուրեան 592
332. *Իմ մահը*, Պետրոս Դուրեան 593
333. *26 Ապրիլի*, Յով. Յովհաննիսեան 594
334. *Երգ*, Ա. Ծաղուրեան 594
335. *Օրս տրտում*, Ա. Իսահակեան 595
336. *Ծովը յոգնած*, Ա. Իսահակեան 597
337. *Թափուեցին տերևները*, Ա. Իսահակեան 598
338. *Հատուած*, Վ. Տէրեան 598

Երես
339. Աշնան տրտմութիւն, Վ. Տէրեան 601
340. Սենեակս, Դ. Դեմիրճեան 601
341. Գիշեր է, Դ. Դեմիրճեան 602
342. Մի գատարկ սենեակ, Դ. Դեմիրճեան 602
343. Լքում, Դ. Վարուժան 602
344. Արցունքներս, Սիամանթո 605
345. Քուն, Միսաք Մեծարենց 605

ՆԵՐԲՈՂ

346. Ի՞նչ է ներբողը. 606
347. Մարգարէ, Ա. Գուշկին 607
348. Մարգարէ, Լերմոնտով 608
349. Նաւասարդին, Դ. Վարուժան 608
350. Եղեգնեայ գրչով, Դ. Վարուժան 609

ԱՐՅԱԿ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

351. Ի՞նչ գեղեցիկ, ի՞նչ թարմ էին վարդերը, Տուրգենեւ, թարգմ. Գ. Մելոյեան 610
352. Շեմքը, Տուրգենեւ, թարգմ. Գ. Մելոյեան 611
353. Մրջկահաւի երգը, Մաքսիմ Գորկի, թարգմ. Գ. Մելոյեան . 612
354. Բազէի երգը, Մաքսիմ Գորկի, թարգմ. Գ. Մելոյեան . . . 613
355. Ջքաւորների աչքը, Բոդլէր, թարգմ. Վ. Տէրեան 616
356. Դու կարտաւէիր, Գ. Մելոյեան 617

ՉՈՐՐՈՐԴ ԲԱԺԻՆ

ԴՐԱՄԱ

357. Դրամա և ողբերգութիւն, Սուրխաբեան 619
358. Կատակերգութիւն, Սուրխաբեան 621
359. Սոֆոկլէս, Սուրխաբեան՝ «Հին-յունական գրականութիւն» . . 623
360. Անտիգոնէ, բովանդակութիւն, Սուրխաբեան՝ «Հին-յունական գրականութիւն. 624
361. Անտիգոնէ, հատուածներ, Սոֆոկլէս, թարգմ. Տ. Յովհաննիսեան 628
362. Վիլլիամ Շէքսպիր, Սուրխաբեան 643
363. Համլէտ, բովանդակութիւն, Սուրխաբեան 645
364. Համլէտ, հատուածներ, Շէքսպիր, անգլ. թարգմ. Յովհաննէս Խան Մասէհեան 648
365. Գաբրիէլ Սունդուկեանը և իր Պէպօն, Սուրխաբեան 667
366. Պէպօ, հատուածներ, Գաբրիէլ Սունդուկեան 669
367. Հին Աստուածներ, հատուածներ, Շանթ 686

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ

ՅՕԳԻԱՆՆԵՐ ԵՒ ՀԱՏՈՒԱԾՆԵՐ ՋԱՆԱՋԱՆ ՆԻՒԹԵՐԻ ՄԱՍԻՆ

368. Մտածումներ աբուսատի մասին, Օգիւստ Ռոդէն 707

Երես

369. Արիստոտէլը ողբերգութեան մասին, Ս. 708
370. Ողբերգութեան ծագումը և հին յունական թատրոնը, Սուքիասեան՝ «Հին-յունական դրականութիւն» 709
371. Միջնադարեան դրամա, Գ. Ժ. 714
372. Շէքսպիրեան թատրոն, Սուրխաթեան 717
373. Համլէտի ցուցմունքները դերասաններին, Շէքսպիր . . . 722
374. Սկսնակ գրողներին Ա., Մաքսիմ Գորկի, թարգմ. Գ. Մելոյեան . 723
375. Սկսնակ գրողներին Բ., Ա. Չեխով, թարգմ. Գ. Մելոյեան . . 724
376. Թափառիկ սիւժէներ, Ս. Վաrեեr, թարգմ. Գ. Մելոյեան . . 725
377. Նմուշներ տաղաչափութիւնից և ոճաբանութեան դանազան բաժիններից. 727
378. Մանօթութիւններ. 728
379. Բառարան, կազմեց՝ Գ. Մելոյեան 729

ՎՐԻՊԱԿՆԵՐ

Երես.	սիւնեակ.	տող.	տպած է.	պէտք է լինի.
8	—	վերևից 10-ը	պատկերացումն	պատկերացումն
23	—	առաջին տող	բուլբուլն	բուլբուլն
60	1-ին	վերևից 2-ը	Պէշիկաթաշը	Պէշիկթաշը
63	—	վերևից 9-ը	կուկաս	կուգաս
63	—	վերևից 10-ը	խախեմ	վախեմ
63	—	ներքևից 12-ը	հաբանուկ	հաբանուկ
64	—	ներքևից 3-ը	նմամ	նման
185	—	վերևից 10-ը	երկ	երգ
211	—	վերևից 9-ը	հողամտղք	հողամաղք
220	—	վերևից 13-ը	ջուր էր գալի	ջուր է գալի
225	—	վերևից 8-ը	գաբուիշն	դաբուիշն
232	—	վերևից 12-ը	գարդերի	դարդերի
267	—	վերևից 9-ը	հողն	հողմն
273	—	ներքևից 15-ը	հոկայ	հսկայ
360	—	վերևից 19-ը	բելել	բերել
366	—	ներքևից 2-ը	աւ	լաւ
367	1-ին	ներքևից 2-ը	քկնի	քոնի
367	2-րդ	ներքևից 2-ը	ցողաց	ցոլաց
383	—	ներքևից 12-ը	հրաբուխէ	հարփուխէ
391	—	վերևից 4-ը	ռառնաւոր	ռառնաւոր
417	1-ին	ներքևից 6-ը	կուդայի	կուզայի
428	—	ներքևից 14-ը	առ զպլպուլն	առ պլպուլն
435	—	առաջին տող	եռ	ես
457	1-ին	վերևից 8-ը	գրալնին	ղրալնին
472	2-րդ	ներքևից 15-ը	ի չզրար անխս	իզրար անխս
473	—	ներքևից 7-ը	ղիվլն	ղիվլն
483	1-ին	ներքևից 5-ը	ազատութիւն	ազատութիւն
500	—	ներքևից 9-ը	բացմիցս	բազմիցս
500	—	ներքևից 7-ը	զիւնեզ	զունեզ
502	—	վերևից 8-ը	բուժուական	բուրժուական
511	—	վերևից 2-ը	զարգուած	զանգուած
515	—	ներքևից 8-ը	շենքերին	շէնքերին
535	—	ներքևից 11-ը	պրոլետարան	պրոլետարական.
537	—	վերևից 14-ը	լացզ	լացզ
543	—	վերևից 16-ը	կախարդուած	կախարդուած

Երես.	օրինակ.	տող.	տպած է.	պէտք է լինի.
553	—	ներքևից 5-դ	շէմքին	շեմքին
555	—	վերևից 9-դ	բրոնցէ	բրոնզէ
556	—	ներքևից 4-դ	արեգնական	արեգական
569	—	ներքևից 6-դ	նայեցուած	հայեցուած
571	—	—	էջ 517	էջ 571
571	—	վերևից 7-դ	պիտ	ժպիտ
575	—	ներքևից 18-դ	դեռ	դեռ
577	—	վերևից 6-դ	ծունկերէ	ծունգերէս
577	—	ներքևից 15-դ	մեր գիւղացին	մեր գիւղակին
579	—	ներքևից 7-դ	մատերն է վար	մատերէն վար
582	—	վերևից 17-դ	թոշնած են	թօշնած են
583	—	վերևից 5-դ	այպէս	այսպէս
585	—	առաջին տող	խենդի պէս	խենթի պէս
585	—	ներքևից 21-դ	մարմառ	մարմար
585	—	ներքևից 13-դ	դրոշեցին	դրօշկցին
586	—	վերևից 2-դ	անբնդաձին	անդնդաձին
588	—	վերևից 3-դ	կը ցնցի	կը ցնդի
588	—	վերևից 5-դ	պոս	պօս
589	—	վերևից 3-դ	մի խամբեցնէր	մի խամբեցներ
593	2-րդ	ներքևից 14-դ	համբ քայլ	յամբ քայլ
593	2-րդ	ներքևից 7-դ	հեծուքեամբ	հեծեծմամբ
600	—	ներքևից 13-դ	գարնան արևոդ	գարնան արևով
601	2-րդ	վերևից 6-դ	թոշնեցին	թօշնեցին
603	—	վերևից 6-դ	զերտ	զերդ, զերթ,
604	—	վերևից 9-դ	հանգատրան	հանգստեան
618	—	ներքևից 6-դ	հողմավայր	հողմավար
633	—	առաջին տող	դարձան այն ժամանակ միայն	դարձած ժամանակ միայն
640	—	վերջին տող	ողգերգութեան	ողբերգութեան
641	—	վերևից 5-դ	ամատութեան	անմատութեան
644	—	վերևից 4-դ	տարոնեբում	տարինեբում
648	—	ներքևից 9-դ	Օչրիկ	Օզրիկ

ՍՈՒՐԽԱԹԵԱՆԻ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՏՊԱԳՐՒԱԾ ԵՆ՝

1. Հին-Յունական Գրականութիւն (256 էջ). գինը՝ 1 ր. 25 կ. ոսկով.
2. Գրական Գոհարներ (734 էջ՝) գրական տեսակների բացատրութեամբ և հեղինակների քննադատական-ընտրոշումով . . » 3 ր. — ոսկով

ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏՐԱՍՏ ԵՆ՝

1. Շէքսպիր, Գրական-քննադատական (մօտ 250 էջ).
2. Հէնրիխ Իբսէնը և Ստ. Պշիբըշեւսկի, Եւրոպական նորագոյն գրականութիւնից (մօտ 120 էջ).
3. Կինը և նրա ապագան, սոցիալ-տնտեսական էտիւդ (մօտ 300 էջ).
4. Հայ նորագոյն քնարերգութիւնը (մօտ 150) էջ):



Р. В. II.

Тираж 2000.

"Опись имущества [illegible]" — № 434. = [illegible]:

[15 Pr]

A III / 6087